Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր` հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին` աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԱՐՑԱԽԻ
# ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ 2 (8)



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2022

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏՈՐ 2 (8)

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է Արցախի պետական համալսարանի*
*հիմնադրման 50-ամյակին*

# ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՏՈՐ 2 (8)**

*Աշխատասիրությամբ և ընդհանուր խմբագրությամբ բ.գ.թ., դոցենտ, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Արմեն Յուրիկի Սարգսյանի*

Ստեփանակերտ
2022

ՀՏԴ 398
ԳՄԴ 82.3
Ա 948

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի*
*գիտական խորհրդի որոշմամբ*

***Խմբագրական խորհուրդ*** - Սարգսյան Ա. Յու. (նախագահ),
Դավթյան Ն. Ռ., Հարությունյան Ե.Լ., Հովհաննիսյան Լ. Լ.,
Մարգարյան Լ. Գ., Մինասյան Շ. Մ., Սաղյան Շ. Պ.,Սառաջյան Ջ.Գ.

***Հատորի պատասխանատուներ*** – Դավթյան Ն.Ռ.
Սաղյան Շ.Պ.

Արցախի ժողովրդագիտությունը.-Ստեփանակերտ: Արցախի պետական
Ա 948 համալսարան, 2022. Հատոր 2(8): Բանահյուսություն. - 688 էջ:

*Մատենաշարը ներառում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են 19-րդ դարի կեսերից առ այսօր կամ դեռևս ձեռագիր վիճակում պահվում են տարբեր արխիվներում ու թանգարաններում:*

*Ութերորդ՝ սույն հատորում ընդգրկված են բանահավաքներ Առաքել, Ալեքսանդր, Գրիգոր Բահաթրյանների, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի, Միքայել Տեր-Հովհաննիսյանի, Հրաչյա Աճառյանի, Սարգիս Իսրայելյանի, Մաքսիմ Մխիթարյանի, Միքայել Առաքելյանի, Ալվարդ Ղազիյանի, Գրիգոր Կարախանյանի, Քաջիկ Հարությունյանի, Աշոտ Առստամյանի՝ Արցախի տարբեր բնակավայրերից հավաքած հեքիաթները:*

ՀՏԴ 398
ԳՄԴ 82.3

ISBN 978-9939-1-1495-8

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

***«Արցախի ժողովրդագիտություն»*** մատենաշարը, որը հիմնադրվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ և նվիրվում է մայր բուհի հիմնադրման 50-ամյակին, ընդգրկում է Արցախի ժողովրդագիտության երեք բնագավառներին՝ ազգագրությանը, բանահյուսությանն ու բարբառին վերաբերող և առնչվող այն հիմնական ուսումնասիրությունները, աշխատությունները, ժողովածուները, հոդվածները, գիտական զեկուցումները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները և այլ նյութերը, որոնք գրառվել ու հրատարակվել են հայ և օտարազգի տարբեր ազգագրագետների, բանագետների ու բանահավաքների, բարբառագետների, այլ բնագավառների գիտնականների, հասարակական ու եկեղեցական գործիչների, ճանապարհորդների, գրողների, Շուշի քաղաքի և որոշ գյուղերի ուսումնական հաստատությունների ուսուցիչների ու տեսուչների կողմից 19-րդ դարի կեսերից առ այսօր:

Յուրաքանչյուր բնագավառին վերաբերող առաջին հատորի առաջաբանում տրվում է տվյալ բնագավառի նյութերի գրառման, հրատարակման և ուսումնասիրության պատմությունը, իսկ եզրափակող հատորի վերջում՝ ամբողջական մատենագիտական ցանկը՝ ամփոփ նկարագրություններով:

Նյութերը կներկայացվում են որոշակի խմբագրությամբ և սրբագրությամբ՝ ընդհանուր առմամբ պահպանելով հեղինակների տառադարձությունը: Բնօրինակներում ընդգրկված լուսանկարները, այլ բնույթի պատկերները, վերջում տրված ցանկերը հատորաշարում հիմնականում չեն ներառվում:

Մատենաշարի ութերորդ՝ սույն հատորում ընդգրկված են բանահավաքներ Առաքել, Ալեքսանդր, Գրիգոր Բահաթրյանների, Կոնստանդին Մելիք-Շահնազարյանի, Միքայել Տեր-Հովհաննիսյանի, Հրաչյա Աճառյանի, Սարգիս Իսրայելյանի, Մաքսիմ Մխիթարյանի, Միքայել Առաքելյանի, Ալվարդ Ղազիյանի, Գրիգոր Կարախանյանի, Քաջիկ Հարությունյանի, Աշոտ Առստամյանի՝ Արցախի տարբեր բնակավայրերից հավաքած հեքիաթները, որոնք հրատարակվել են ***«Հայ ժողովրդական հեքիաթներ»*** մատենաշարի ***VI*** *(Երեւան, 1973)* և ***VII*** *(Երեւան, 1979)* հատորներում:

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

## Հատոր VI

### 1.ՎԸԵՍԿԵՔՅԱՔՅՈՒԼ ՏՂԵՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա չիլա՛լ մին թաքավերու կնեգյ, վըեր օխտը ախճիգյ ա պերալ հու մին տղա չի պերալ։ Մին հետ էլ վըեր ետ ա ընգալ, էս թաքավերս տեսալ ա, վըեր էս դո՛նո՛ւմս էլ կինի ախճիգյ։ Ըստրա հետե ո՛ւրա՛ն նա՛զիր-վա՛զիրներեն կանչալ ա, կնեգյը ընդըրանց տվալ հու մարթը մին թոր էլ տվալ թա. «Տարեքյ ըստրան ըսպընեցեքյ հու թորը ըռնըթաթախ պերեքյ, վըեր տեսնամ»։

Ըստրանք էլ ասալ ըն. «Լա՛վ ա»։

Էս կընգանը տընելիս վախտը, ո՛ւրա՛ն մըեծ ըխճըկանը ասալ ա. «Ինձ նհետ եկ»։

Նա էլ ասալ ա. «Կյալ չըմ»։

Մաշնակեն հու ընդրանա պիծիններեն էլ ա ասալ, էլհա նհենց ասալ ըն. «Կյալ չընք»։

Մինակ լոխճունց պիծինը ասալ ա. «Ես կկյամ»։

Էս ախճիգյն ու կնեգյը նա՛զիր-վա՛զիրներեն ըռաչնեն ըն ընգալ՝ քյեցալ, նրանք էլ քմական։ Նա՛զիր-վա՛զիրնեն շատ խրեգյ էս կընգանն ու ըխճըկանը տարալ ըն հսցրալ մին ծմակ հու ընդեղ խղճըննեն ա եկալ թա ըսպանին, մին քչեղակ հու մին ակռավ վեր ըն քցա՛լ, մորթալ, թուրընեն ըռնըթաթախ ըրալ հու պերալ թաքավերեն կոշտը։

Թաքավերը հրցրալ ա թա. «Սպընեցե՞ք»։

Նրանք էլ ասալ ըն. «Հրամանքտ»։

Եննան նա՛զիր-վա՛զիրնեն քյեցալ ըն ո՛ւրա՛նց տեղը, ամմա մըետք ըն ըրալ, վըեր ամեն օր էն կընգանն ու ըխճըկանը հետե հաց տանին հու իստի մին քան օր հաց ըն տարալ. քանըրնջի օրումը թաքավերեն կնեգյը ցավում ա իլա՛լ, հա՛լա՛ հաց չի պերած։

Էս կնեգյը ո՛ւրա՛ն ըխճըկանը ասալ ա. «Քյինի մին տեղից կրակ օզե»։

Էս ախճիգյը քյեցալ ա մին տռն, ընդեղ տըեսալ ա, վըեր իրեք մարթ նստած խոսում ըն։

Էս ախճիգյս վեր տեսնում ա, կյուղլու ա կենըմ, թա տեսնա հինչ ըն խոսըմ։

Էս մարթուցը մինը ասալ ա թա. «Թաքավերը ո՛ւրա՛ն կնեգյը տո՛ւս ա քցա՛լ հու էն ա ծմակումը»։

Էն մի մարթն էլ ասալ ա. «Ղորթ ա, ըթհենց ա, ամմա թաքավերեն կնեգյը ծմակումը մին վըեսկեքյա̀քյո̀ւլ տղա ա պիրելու, վըեսկե չոմաղն էլ ծեռքեն. եննան մին էլ թաքավերը տնելու ա ո̀ւրա̀նց տոն հու ո̀ւրա̀ն յրան օխտն օր, օխտը քըշեր փաակե հու ամեն վախտ անց նման ո̀ւրա̀ն կնեգյ շինի»:

Իրեքընջի մարթն էլ ասալ ա. «Ղորթ ա, ըթհենց ա, ամա թաքավերեն

տղեն նհետ մին չինա̀րի ա փսնելու թաքավերեն տռանը հու ո̀ւրա̀ն նհետ մծընալու ա. թաքավերըն էլ վըեր վախտ վըեր կնեգյը, տղան ու ախճիգյը տընելու ա ո̀ւրա̀նց տոն, թաքավերեն տղան էն չինարին տսնալու ա հու քյինալու ա եր ինի, եննան վեր ա ընգնելու՝ մըեռնե»:

Էս ըսելան ետը լոխ ըսեցեն թա. «Հու վըեր մինին ասե՛նա քար տեռնա»:

Եննան էս ախճիգյը կյամ ա էն մարթուցը ասըմ ա, թա. «Մին քանե կրակ տվեքյ»:

Նրանք էլ կրակ ըն տվալ: Էս ախճիգյը կրակը եր ա կալալ, տարալ մորը քշտեն կրակ ըրալ: Մարը ըխճըկանան հրցրալ ա, թա. «Խե ը՞ս ետե կյամ»: Ախճիգյը ասալ ա. «Ըսկի՞ խե»: Մին խիլա̀ վըխտան ետը էս կնեգյը մին վըսկեքյա̀քյո̀ւլ տղա յա պերալ՝ վըեսկե չոմաղն էլ ծեռքեն. հու վըեսկե չոմաղն էլ ո̀ւրա̀ն նհետ մըծանում ա իլա̀լ:

Մին պատառ վըխտան ետը տըեսալ ըն վըեր էս ա նա̀զիր-վա̀զիրներան մինը հաց պերավ հու էս նա̀զիրը վըեսկեքյա̀քյո̀ւլ տղան վըեր տըեսալ ա, շատ ուրխացալ ա հու քյեցալ ա նա̀զիր-վա̀զիրներեն ըչկըլո̀ւսա̀նք տվալ, թա. «Թաքավերեն կնեգյը մին վըեսկեքյա̀քյո̀ւլ տղա յա պերալ»: Սրանք էլ ուրխացալ ըն:

Ըստրա էքյսը թաքավերը թախտաբա̀նդին յրան բոլթա տամ ա իլա̀լ, ծմակեն ձոխը վըեր տըեսալ ա, կանչալ ա նա̀զիր-վա̀զիրներեն, հրցրալ թա. «էն հինչ ծո՞խ ա, վըեր ծմակիցը եր ա ինըմ»:

Էս նա̀զիր-վա̀զիրներն ասալ ըն. «Գյո̀ւղո̀ւմ չընք»:

Թաքավերն էլ ասալ ա, «Քյեցեքյ տըեսեքյ էն հի՞նչ ծոխ ա»:

Նրանք էլ էն ծոխեն մտեգ ընելավ քյեցալ ըն տըեսալ էն կնեգյն ու ախճիգյը կրակ ըրած, քշտեն նստած: Եննան եկյալ ըն թաքավերեն ասալ, թա. «Թաքավերն ապրած կենա, էնա քու կնեգյը մին վըեսկեքյա̀քյո̀ւլ տղա յա պերալ, վըեսկե չոմաղն էլ ծեռքեն»:

Թաքավերը էս վըեր ըսկանում ա, շատ ուրխանըմ ա հու մին էլ կընգանը պո̀ւրո̀ւմ ա, օխտը օր, օխտը քշեր յրան հրսանեքյ անում, հու ամեն

վախտանց նման ու՛րա՛ն  կնեգյը շինում:

Էս վըեսկեքյա՛քյո՛ւլ տղան թաքավերեն տռանը չինա՛րին տեսնըմ ա, քյինում ա, թա եր ինի, էս պիծի ախճիգյս թողում չի իլա՛լ: Մարն էլ տեսալ ա վըեր տղան օզըմ ա թա եր ինի, էս ախճիգյս թողում չի, ինքյը-ինքյը ասալ ա. «էս ըխճկանը մաչին պեն կա, վըեր թողում չի, մին կանչիմ հրցնիմ»:

Էննան կանչալ ա ըխճըկանան հրցրալ, թա. «Խե չը՞ս թողըմ, վըեր եր ինի»:

Էս ախճիգյը ասալ ա. «Իսկի թա»:

Էս կնեգյը ասալ ա. «Չէ, սրա մաչին մին պեն կա, ասե»:

Էս ախճիգյը ասալ ա. «Իմ մըռնելի ամեն պենը հզրրեցեքյ, չո՛ւնքի վըեր ասեմ, քար ըմ տըռնալու»:

Ըստրանք էլ հըզըրալ ըն: Էննան էս ախճիգյը էն մարթուցը խոսկը ասալ ա հու ինքյը քար տեռալ:

Էննան էս քարը թուլուլ ըն տամ, քցո՛ւմ թաքավերեն թախտեն տակը: Էս թաքավերեն տղան էլ ամեն վախտ քյինում ա իլա՛լ հաղ անում հու կյամ մին հետ էս քարեն թխում: Մին հետ էլ հաղ ա ըրալ հու ըջըղված եկալ էս քարեն մին պենդ չումազավը թխալ, բիրդա՛ն տըեսալ ա, վըեր քարը կոտրվից հու մաչան քուրը տո՛ւս եկավ:

Էս վըեր տեսալ ըն հա՛րն ու մարը, շատ ուրխացալ ըն հու ախպորը յրան օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն ըրալ:

Ըստուծանա իրեք խնձոր վեր ինգյնե, մինն ըսողեն, մինը լսողեն, մինն էլ չլսողեն:

## 2.ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍՈՒՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին թաքավեր։ Էս թաքավերես վա՛ղին մին պառավ կնեգյ եկալ ա թաքավերեն ասալ. «Թաքավերն ապրած կենա, քու տերությունումտ մին կնեգյ մին խոխա ա պերալ, վըեր մըծանա, քու թաքավերությունտ ծեռքատ խլելու ա, շո՛ւտ ըրա ընդրա կլո՛խը կեր»։

Թաքավերն էս վըեր ըսկացալ ա, վխեցալ ա, եր ա կացալ քյեցալ էն կնգանը ասալ. «Բա՛ջի, էտ խուխետ հի՞նչ տամ»։

Թաքավերն ապրած կենա,- ասալ ա էն կնեգյը,- էս խոխան ծախու չի։

Քսան մանեթ տամ, ինձ տո՛,- ասալ ա թաքավերը։

Տալ չը՛մ, - ասալ ա էն կնեգյը։

Հազար մանեթ տամ, ինձ տո։

Տալ չը՛մ։

Էտ տղեն քշռքավը մին փող տամ, տո՛։

Տալ չը՛մ ։

Էրկու- քշռքավը մին փող տամ,- ասալ ա թաքավերը։

Լա՛վ ա, տոք, կտամ,- ասալ ա էն կնեգյը։

Թաքավերն էլ պերալ ա տղեն էրկու քշռքավը մին փող տվալ։ Էս կնեգյն էլ եր ա կալալ հու տղան տվալ թաքավերեն։ Թաքավերն էլ էս տղան տվալ ա ո՛ւրա՛ն նա՛զիր-վա՛զիրին, թա. «Տարեքյ մուրթեցեքյ հու պերեքյ փլավես յրան տիրեքյ, ես օտիմ»։

Նա՛զիր-վա՛զիրնեն էս տղան եր ըն կալալ հու մին էլ մին ղա՛մա՛ ըն տարալ վըեր ըսպանեն։ Էս նա՛զիր-վա՛զիրնեն հղըցեն մետք ըն ըրալ, վըեր ըսպանին վեչ, ամմա տանին տինին մին քոլու տակե հու մին օրիշ զատ ըսպանին։ Ըրկոքանն էլ հավան ըն կըցալ հու տարալ մին քոլու տակե տիրա՛լ։ Եննան ընղըղերքին մտեգ ըրալ, տեսալ ըն վըեր մին շնըլակուտ կա, փռնալ ըն մորթալ հու պերա՛լ տոն։ Եննան փլավը նան շնըլակուտը վըեր իփա՛լ ա պրծալ, փլավը ածալ ըն մին աման հու շնըլակուտը յրան տիրա՛լ, տարալ թաքավերեն ըռաչին տիրալ։ Թաքավերն էլ փլավը հու մին էլ շնըլակուտը իշտըհա՛լի կերալ ա պրծալ, եննան ասալ. «Ըշշա՛հ, ամմա հինչ համեղ ա»։

Էս տղեն վըեր տարած ըն իլա՛լ մին քոլու տակե տիրած, մին ճոտը ըստակած ասլան ամեն վախտ կյամ ա իլա՛լ էս տղեն ծեծ տամ։ Էս ասլանը էս տղես ամեն վախտ ծեծ ա տվալ, մնացալ ա էս տղան մեծ տղա տըեռալ։

Մին հետ էս նա՛զիր-վա՛զիրնեն ասալ ըն.«Քյինինքյ տեսնանք էն խոխան, վըեր տիրալ ընք քոլեն տակեն, հի՞նչ տեռավ»։

Քյեցալ ըն տեսալ, վըեր մազը սաղ ջանը եր ա կալալ հու ինքյն էլ սաղ մարթ: Նա̀զիր-վա̀զիրնեն էս վըեր տեսալ ըն, շատ ուրխացալ ըն հու եր կալալ տարալ մոըը տվալ, թա էս քու խոխատ ա, ինքյ կալ պահե հու անումն էլ տիրա̀լ ըն Ասլան-Բալասի: Էս կնեգյն էլ ուրխացալ ա հու ինքյ ա կալալ խոխան, պահալ մըծըցրալ հու մազերն էլ խոզալ, ինսանու նման շինա̀լ:

Ըէստրա ըըըլըղավը մին քանե տարե ա անց կացալ, թաքավերեն տղան մին օշափու ախճիգյ ա իլա̀լ օզում, մինը քթենում չըն իլալ, վըեր ըստրա հնգեր տան, վըեր քյինի:

Էս նա̀զիր-վա̀զիրնեն ասալ ըն. «Մինին տեղը գյուղում ընք»:

Թաքավերն ասալ ա. «Քյեցեքյ պերեքյ»: Նրանք էլ քյեցալ ըն, պերալ:

Թաքավերն ասալ ա. «Կկարի՞ս իմ տղես նհետ քյինիս փլան օշափեն ախճիգյն օզիս իմ տղես հետե»:

- Կկարիմ,- ասալ ա Ասլա̀ն-Բալասին,- ամմա մին մեծ թոփուզ չինիլ պետմա տաս:

Թաքավերն էլ վզա̀վ ա կալալ: Եննան ո̀ւրա̀ն երգյիրումը հինչքան դա̀մո̀ւռչիքյ ա իլա̀լ, պերալ ա ածալ մին դո̀ւզ հու ո̀ւրա̀ն երգյիրումը հինչքան արկաթ ա իլա̀լ, պիրիլ ա տվալ էն դո̀ւզը հու դա̀մո̀ւռչիքյը յըրա ըրալ վըեր շինին: Մին քանե տարումը վըեր էս դա̀մո̀ւռչիքյը շինալ ըն պրծալ, թաքավերն էլ իրաման ա տվալ, վըեր պերին: Դո̀ւլգյըրնեն մին շատ մըեծ ըրըքա ըն շինալ, թոփուզը մին թա̀հրավ քցա̀լ ըն ըրըքեն մաչը հու սաղ երգյիրումը հինչ եզնը, կյումաշ, տավար հու ամեն հինչ վըեր ըրքա քշո̀ղ հըեյվան կա, պերալ ըն լծալ, հու էն լծած հըյվըններեն ճոնղը եկալ ա թաքավերեն տո̀ռնը, ամմա կրեցալ չըն, թա թոփուզը տեղան տո̀ւրո̀ւր տան: Հինչքան հըյվըններեն թակալ ըն, թա պատառ տո̀ւրո̀ւր տան, կրեցալ չըն:

Ասլան-Բալասին քյեցալ ա, տես ու տեննին քոե տալավ թոփուզեն քշտեն մարթուցն ասալ, «էտ էլ չը՞ք կարում տո̀ւրո̀ւր տաք». հու ըրըքեն վեր քոե ա տվալ, ըրըքան ինքյը-ինքյը քյեցալ ա:

Էս մարթիքյը մնացալ ըն զարմացած: Ախրը Ասլան-Բալասին քոե տալավ տարալ ա թաքավերեն տոռնը: Էս օրեն էքյսը վըեր քյինիլ պիտար Ասլան-Բալասին,սաղ երգյրին մարթիքը եկալ ըն հըվաքվալ թաքավերեն տո̀ռնը,թա հունց ա եր ունելու թոփուզը: Քյինիլի վախտը վըեր եկալ ա, Ասլան-Բալասին եր ա իլա̀լ ո̀ւրա̀ն ծին հու ծիան կռացալ, թոփուզը ծիծիգյնավը պցըրցըրալ հու իրեք հետ կլխավը շոո տվալ, կոխալ կյոտեգյը հու

թաքավերեն տղան էլ եր ա իլա̈լ մին ծի, Ասլան-Բալասուն հետան քյեցալ:

Էս Ասլան-Բալասին հու թաքավերեն տղան շատ-խրեկյ քյեցալ ըն տըեսալ, վըեր մին վըտնանե մարթ բախրեքյ, ջեյրաննե առաչը քցա̈ծ պահըմ ա, մինին էլ թողում չի, վըեր տես ու տեն փախչի: Էս մին վըտնանե մարթը հըրցրալ ա թա. «Հոր ը՞ք քյինում»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ընք օշափեն ախճիգյը օզինքյ»:

Էս մին վըտնանե մարթն էլ ասալ ա, «էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինինքյ»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Ե՜կ»:

Մին խիլա̈ էլ քյեցալ ըն տըեսալ, վըեր մին մարթ տափան անգուճ ա տինում: Ասլան-Բալասին հարցրալ ա թա.- «Խե ը՞ս տափան անգուճ օնում»:

Էն մարթն ասալ ա. «Միրչեմնեն հարայ ըն անում, ընդրա ըմ անգուճ տինում»:

Տափան անգուճ տինող մարթը Ասլան-Բալասուն ասալ ա թա. «Հոր ը՞ք քյինում»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ըմ օշափեն ախճիգյն օզեմ թաքավերեն տղեն հետե»:

Էս տափան անգուճ օնող մարթը ասալ ա, «Իրեք չինինքյ. չորս ինինքյ, քյինինքյ»:

Էս չորս մարթը շատ-խրեգ քյեցալ ըն տըեսալ, վըեր մին մարթ նի ա մտալ թոռնեն մաչը էրվում ա, էլհա ասում ա թա. «Վա՜յ, մրսեցե, վա յ, մրսեցե», ամմա, վեր տո̈ւս ա կյամ իլա̈լ» տո̈ւս ղոլ էլ մրսում չի իլա̈լ, թըքանում ա իլա̈լ:

Էս թորեն նի մտնող մարթն ասալ ա. «Հոր ը՞ք քյինում»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ընք օշափեն ախճիգյն էս տղեն հետե օզինքյ»:

Էս թորեն նի մտնող մարթն ասալ ա. «Չորս չինինքյ, հինգ ինինքյ, քյինինքյ»:

Էս հինգ մարթիքյը շատ-խրեգյ քյեցալ ըն, հսալ օշափեն տոնը հու ընդեղ օշափներեն ասալ թա. «Եկալ ընք ծեր ախճիգյն օզինքյ թաքավերեն հետե»:

Էս օշափնեն ասալ ըն. «Կտանք, ամմա վըեր մին պեն ասինքյ՝ անիքյ»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Ըշկներես յրան, կանինքյ. ասեքյ, տըեսնանք հի՞նչ ըք ասըմ»:

Օշափնեն ասալ ըն թա. «Էն ա մին բաղում մին վըեսկե խնձո̈րի կա, օխտը

կլխանի օշափն էլ տակեն քոն: Ծզանա հու վըեր քյինի էն խնձո՜րան մինը պիրի, մեր ախճիգյը ծեզ կտանք»:

Էս մին վըտնանե մարթը ասալ ա Ասլան-Բալասուն. «էտ իմ վզես, ես կանիմ»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինի, ամմա շո՜ւտ եկ»:

Էս մին վըտնանե մարթը ասալ ա. «Լա՛վ»:

Էս մին վըտնանե մարթը քյեցալ ա մին սհաթում հըսալ բաղը հու տըեսալ առըե՛ բաղեն մաչին մին վըեսկե խնձո՜րի հու օխտը կըլխանե օշափն էլ տակեն քոն: Էս կաղլեգյ մարթը վխեցալ չի, անսա՛ս քյեցալ ա եր իլա՛լ ծառը հու ընդեղան խնձո՜րը կտրալ: Օզալ ա թա վեր կյա, օշափը զո՜ւրթնա՛ցալ ա հու տըեսալ ծառեն յրան: Օշափը եր ա իլա՛լ ծառը հու օզալ թա փռնե, բիրդա՛ն էս մին վըտնանեն լոք ա տվալ, ծառան վեր եկալ տափը հու խնձո՜րը ծեռքեն փախալ: Էս օշափը հինշքան հետան վազ ա տվալ, կըեցալ չի փռնե: Ախրը մին վըտնանեն խնձո՜րը տարալ ա տվալ օշափներեն: Ըստրա հետե օշափնեն մնացալ ըն զըրմարած հու ո՜ւրա՛նք-ո՜ւրա՛նք ասալ ըն թա. «էս հունց ա՞նինքյ, հունց չի ա՞նինքյ, եկեքյ հըմամեն ճո՜ւրը իփ ածինքյ հու նրանց ասինքյ՛ ծզանա հու վըեր նի մտնե հըմամեն մաչը, լղանա, մեր ախճիգյը ծեզ կտանք»:

Էս տափան անգուճ տհնողը անգուճ ա տիրա՛լ հու եկալ Ասլան-Բալասուն ասալ: Ասլան-Բալասին հնգերունցը ասալ ա. «էս հու՞ կանե, հու՞ չի անել»:

Էն թորեն նի մտնողը ասալ ա. «Ես կանիմ»:

Էքյսը օշափնեն եկալ ըն Ասլան-Բալասուն ասալ, թա. «Մին պեն ասինքյ, թա վըեր անիքյ, մեր ախճիգյը ծեզ կտանք»:

Ասլան-Բալասին ասալ ա օշափներեն. «Հինչ ա՞»:

Օշափնեն ասալ ըն թա. «Մեր հըմամումը ծեզանա մինը լղանա, էն վախտը մեր ախճիգյը ծեզ կտանք»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Լա՛վ ա»:

Եննան եկալ ա թորեն նի մտնողեն ասալ: Թորեն նի մտնողն էլ քյեցալ ա հըմամեն կոշտը հու ընդեղ շորերը հանալ, լոք տվալ ընզալ մաչը, լղացալ հու տո՜ւս եկալ: Էս օշափնեն մնացալ ըն զարմացած: Եննան ախճիգյը տվալ ըն ո՜ւրա՛նց, տարալ ըն: Էս Ասլան-Բալասին թաքավերեն տղեն տիրա՛լ ա մին ծիյի յրա հու ախճիգյն էլ տղեն թա՛րքյին հու ինքյն էլ եր իլա՛լ ո՜ւրա՛ն ծին, թոփուզը տիրա՛լ կյոտկումը: Եննան ախճիգյը օշափներեն նհետ պըռոշտի ա ըրալ, եննան քյեցալ ըն: Ըստրանց հընգեր մարթիքյն էլ քյեցալ ըն ո՜ւրա՛նց տեղը:

Աւլան-Բալասին, օշափեն ախճիգյը հու թաքավերեն տղան շատ-խրեգյ քյեցալ ըն, էս Աւլան-Բալասուն կյո̈ւզը եկալ ա։

Թաքավերեն տղեն ասալ ա. «Տուք յավաշ-յավաշ քյեցեքյ ես էս ա կյամ ըմ»։

Աւլան-Բալասին քյեցալ ա թա կյո̈ւզի, էս տղան հու ախճիգյը մին պատառ քյերալ ըն տըեսալ, վըեր մին պառավ մարթ լըելՈւմը թավուլ ա տամ։

Էս պառավ մարթը էս տղեն ըղաչանք ա ըրալ թա. «Ինձ էս լըելաս պրծըցըրու»։ Էս տղեն ծիյիցը կռացալ ա թա պըրծըցնե, էս ախճիգյը թողացալ չի, թա. «Կըլոխտ խաթա կիկյա»։

Էս տղան ասալ ա. «Չէ՛, ես պետմա եր օնեմ»։

Հինչքան էս ախճիգյը զոռալ ա, թա եր չօնե, էս տղան մտեգյ չըրալ, ծեռքը կոըցրալ ա, թա էն մարթին ծեռքան փոնե, բիրդա̈ն էս պառավ մարթը էս տղեն ծեռքան փոնալ ա հու շպռտալ քցա̈լ լըելը հու ինքյը ախճիգյը եր կալալ, փախալ։

Աւլան-Բալասին եկալ ա տըեսալ, վըեր թաքավերեն տղան լըելումը թա̈վո̈ւլ ա տամ, հու ախճիգյն էլ ընդեղ չի։ Աւլան-Բալասին էս տղեն ծեռքան փոնալ ա հու լըելան եր կցրալ, հրցրալ. թա. «էտ խե ը՞ս լըելը ընգալ»։

Էս տղան ո̈ւրա̈ն կլխավը եկած ամեն պեները պատմալ ա։ Աւլան-Բալասին էս տղեն եր ա կալալ հու քյեցալ էն օշափներեն տանը ըռաչին կաղնալ հու թոփուզը կեսըվեր յրա ա ըրալ, օշափներեն տանը կեսը ցրն ա տվալ։ Սաղ մնացած մեկալ օշափնեն վըեր տըեսալ ըն, վխեցալ ըն թա ո̈ւրա̈նց էլ կսպանե, եկալ ըն Աւլան-Բալասուն վետները ընգալ, թա. «Քըմատա՛ղ, մեզ խե ը՞ս ըսպանում»։ Աւլան-Բալասին ասալ ա. «Ախճիգյը մին էլ եկալ ըք տարա՞լ»։

Էս օշափնեն ո̈ւրթո̈ւմ ըն կերալ թա. «Մունք չընք տարալ»։

Աւլան-Բալասին ասալ ա. «Չէ վըեր չէ, տուք ըք տարալ»։

Էս օշափնեն էլիա ո̈ւրթո̈ւմ ըն կերալ, ճաքճաք ըն եկալ, թա տարալ չընք։

Եննան Աւլան-Բալասին ասալ ա, թա. «Տուք եր կալած էլ չինիքյ, տեղը կգյիդաք, ըսեցեքյ»։

Օշափնեն էլ ո̈ւրթո̈ւմ ըն կերալ, ճաքճաք ըն եկալ, թա. «Տեղը գյո̈ւղո̈ւմ չընք»։

Աւլան-Բալասին օշափներեն ասալ ա. «Ես քյինըմ ըմ, ամմա վայ էն օրեն, վըեր ըսկանամ թա էտա ծեր առեն ա, կա̈լու ըմ լոխճու էլ ղինա̈ր-ղինա̈ր կտորիմ»։

Օշափնեն ասալ ըն. «Լա̀վ ա, վըեր ըսկանաս, եկ»:

Էննան Ասլան-Բալասին օշափներեն ասալ ա. «Դե ինքյ կալիքյ էս տղան ծեզ ըմանաթ, ամմա վըեր կյամ տեսնամ նաչաղ ա, յա մեռած, կաշինետ գյա̀րգյո̀ւ վըմ տալու»:

Էննան օշափնեն Ասլան-Բալասուն ասալ ըն թա.

«Տեսնըմ ը՞ս էն թաքյ ասթխը»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Տեսնըմ ըմ»:

Օշափնեն էլ ասալ ըն, թա. «Վըեր վախտ նիզյա̀րա̀ն մնաս, էն վախտը էն ասթխեն մտեզյ ըրա, թա վըեր տեսնաս լա̀վ հու պարզ ա՝ էն վախտը գյիդա̀, վըեր տղան սաղ ա, ամմա թա վըեր տեսնաս՝ մին հա̀նգյվում ա, մին պենվում, էն վախտը գյիդա̀, վըեր նաչաղ ա»:

Էննան էս Ասլան-Բալասին շատ-խըեզյ քյեցալ ա տըեսալ, վըեր մին մարթ քչեղակեն հա̀քյվեքյը մին-մո̀ւնո̀ւ ետև ա կոխում, նըանք էլ գյո̀ւղո̀ւմ չըն իլալ: Էս մարթը Ասլան-Բալասուն անա հրցրալ ա, թա. «Հոր ը՞ս քյինում »:

Ասլան-Բալասին ասալ ա. «Օշափեն ախճիգյը կորալ ա, քյինում ըմ քթենամ»:

Էս մարթս էլ ասալ ա. «Մին չինինքյ, էրկու ինինքյ, քյինինքյ»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Լա̀վ ա, ե՛կ»:

Սրանք քյեցալ ըն, տըեսալ մին մարթ ծառը հանում ա, մին էլ տնգում: Էս մարթը Ասլան-Բալասուն հրցրալ ա, թա. «Հոր ը՞ք քյինում :»

Ասլան-Բալասին ասալ ա. «Օշափեն ախճիգյը կորալ ա, քյինում ընք քթենանք»:

Էս մարթս էլ ասալ ա. «էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինինքյ»:

Ասլան-Բալասին ասալ ա. «Լա̀վ ա, ե՛կ»:

Ասլան-Բալասին հու էն մարթիքյը շատ-խըեզյ քյեցալ ըն տըեսալ, վըեր մին մարթ թո̀ւթա̀գյը փչո̀ւմ ա՝ կյետեն քարերը պար ըն կյամ: Էս մարթս Ասլան-Բալասուն ասալ ա, «Հո՞ր ըք քյինում»:

Ասլան-Բալասին ասալ ա. «-Քյինում ընք օշափեն ախճիգյը քթենանք»:

Էս մարթս էլ ասալ ա, «Իրեք չինինքյ, չորս ինինքյ, քյինինքյ»:

Ասլան-Բալասին ասալ ա, «Լա̀վ ա, ե՛կ»:

Ասլան-Բալասին, մին էլ էս իրեք մարթս շատ-խըեզյ քյեցալ ըն, մին տեղ մին տոն շինա̀լ հու էս չորս հո̀ւքյին ընդեղ կացալ հու նոբաթ-նոբաթան մինը տանը կենում ա իլա̀լ, մեկալնեն էլ քյինում ըն իլա̀լ վըերս:

Առչի դո̀նո̀ւմը քչեղակեն հաքյվեքյը մին-մո̀ւնո̀ւ ետև ա կոխալ, էն ա կացալ վըեր խորագյը իփի, մեկալնեն էլ քյեցալ ըն վըերս: Էս խորագյ իփող մարթը տըեսալ ա, վըեր էս ա մին պիծի մարթ, մուրոքը տափավը քաշ ինելիս, եկավ էն մարթին ասից թա. «Մին պատառ փլավ տու, օտիմ»:

Էս մարթս էլ տվալ ա: Կերալ ա պրծալ, էլիա օզալ: Էն մարթն էլ տվալ ա: Էլիա կերալ ա պրծալ, մին դո̀նո̀ւմ էլ օզալ: Էն մարթն էլ տվալ ա: Կերալ ա պրծալ, մին դո̀նո̀ւմ էլ օզալ: Էն մարթը յրան կզնըվալ ա, էլ տվալ չի: Էս պիծի մարթս էլ եր ա կացալ էս մարթիս թոփուզավը թխալ: Էն մարթը ըշտափալ ա: Եննան էս պիծի մարթս սաղ փլավը կերալ ա հու ղըզղանը տափեն յրա փըսըվերալ հու տո̀ւս եկալ քյեցալ:

Եննան ըշտափած մարթին հնգերունքը կյամ ըն, տըեսնում, վըեր էս մարթս ըստեղ ըշտափած հու ղզղանը տափեն յրա փըսըվերած:

Էս մարթիս յրա ճո̀ւր ըն շաղ տվալ, մին թա̀հրա̀վ եր կըցրալ հու հրցրալ թա. «Էտ խե ը՞ս ըշտափալ»:

Էս մարթըս էլ էն պիծի մարթին նաղլը ըրալ ա: Եննան նոր մին էլ հաց ըն շինա̀լ, կերալ:

Էքյսը էն ծառ հանող մին էլ տնգողն ա կացալ:

Էլիա պիծի մարթը եկալ ա նհենց ըրալ հու փլավը կերալ: Էլիա ըշտափած մարթին հնգերունքը եկալ ըն տըեսալ, եննան սըրցրալ ըն:

Ըստրա էքյսը թո̀ւթա̀գյ ածողն ա կացալ հու նրանք քյեցալ ըն վըերս: Էլիա էն պիծի մարթը եկալ ա, էլիա ըշտըփցըրալ հու փլավը կերալ: Էլիա նրանք եկալ ըն տըեսալ ըշտափած, փլավն էլ կերած: Ընդրանց նման էլիա էս մարթին եր ըն կցրալ հու մին էլ նոր հաց շինա̀լ, կերալ:

Ըստրա էքյսը նոբաթը վըեր Ասլան-Բալասունն ա իլա̀լ, կացալ ա:

Ասլան-Բալասուն հնգերունքը վխեցալ ըն, թա քյինին վըերս: Քյեցալ ըն տանը քմակեն կյողլու կացալ: Ասլան-Բալասին խորագյը իփիլիս վախտը տըեսալ ա, վըեր հրես էն մարթը եկավ ո̀ւրա̀ն կոշտը, թա. «Մին պատառ փլավ տո, օտեմ»: Ասլան-Բալասին էլ տվալ ա: Էս պիծի մարթըս էլ կերալ ա հու էլ օզալ: Ասլան-Բալասին էլ տվալ ա: Էս մարթըս էլ կերալ ա, մին էլ օզալ: Ասլան-Բալասին էլ տվալ ա: Էլիա կերալ ա, մին էլ օզալ: Ասլան-Բալասին յրան կզնըվալ ա, թա. «Բոլ ա»: Էս պիծի մարթըս էլ եր ա կացալ, թա թուփուզավը թխե:

Ասլան-Բալասին էս պիծի մարթիս թոփուզը խլա̀լ ա հու էս պիծի մարթիս

կլխեն վեր թխալ ա, կիլո՞խը կտրվալ ա: Եննան կիլո՞խը հու ջանը թուլուլ-թուլուլ ա ընգալ, տըռնավը տո՞ւս եկալ, քյեցալ: Ասլան - Բալասին հետան վազ ա տվալ թա փռնե, կրեցալ չի: Էս մարթիս կիլո՞խը նան ջանը քյեցալ ըն: Կլո՞խը քյեցալ ա, քյեցալ, բիրդա՞ն մին հոր ա պեցվալ հու նի ա ընգալ մաչը հու մին էլ կա՞լվա՞լ ա: Ջանն էլ մին տեղավ ա քյեցալ, էլիա մին հոր ա պեցվալ հու նի ա ընգալ մաչը հու հորեն ըռեխը մին էլ կա՞լվա՞լ ա: Ասլան-Բալասին քյինացալ ա մին էլ ո՞ւրա՞ն  տեղը հու փլավն իփա՞լ: Տըեսալ ա վըեր էս ա հնգերունքը եկեն: Ասլան-Բալասին էլ ո՞ւրա՞ն  ըսպանած մարթին նաղլն ըրալ ա: Եննան ասալ ա, թա. «Եկեքյ քյինինքյ էն հորը մտնինքյ տեսնանք»: Նրանք ասալ ըն. «Եկեքյ»:

Եննան քյեցալ ըն էն հորեն կոշտը հու ո՞ւրա՞նց հնգերներեն մինին կախ տվալ, առռե էն կեսումը էս մարթըս ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ, ըրվեցե»:

Հնգերունքը տո՞ւս ըն կալալ: Եննան միենգյ էն մինին ըն կախ տվալ, էլիա առռե էն կեսումը ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ, ըրվեցե»: Էլիա տո՞ւս ըն կալալ:

Եննան էլիա էն մինին ըն կախ տվալ, էլիա առաչվանեն նման ա ըրալ:

Եննան նոբաթը եկալ ա Ասլան-Բալասուն: Կապալ ըն, կախ տվալ: Էլիա ասալ ա, «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ ըրվեցե», հնգերունքը տո՞ւս ըն կալալ:

Եննան էլիա Ասլան-Բալասին ասալ ա, թա. «էս դո՞նո՞ւմս էլ վըեր հինչու անիմ, կախ տվեքյ:

Սրանք էլիա կապալ ըն, կախ տվալ:

Ասլան-Բալասին ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե», տո՞ւս չըն կալալ: Կախ ըն տվալ, հսալ ա առռե էն տակը հու ընդեղ եր ա եկալ: Քյեցալ տըեսալ, վըեր էն ախճիգյը մին տեղ նստած հու օխտը կլխանի օշափն էլ ծնգանը յըրան քոն:

Էս ախճիգյն Ասլան-Բալասուն ասալ ա. «Հոր ը՞ս  եկալ, օշափը օխտը օրան վա՞դի քոն ա իլա՞լ հու վա՞դա՞ն մին օր ա մնացալ, եր ա կնալու քյեզ փըչափարախ անե»:

- Բա հունց ա՞նիմ,- ասալ ա Ասլան-Բալասին:

Թոփուզտ առռե էն մաչի կլխեն մին հետ թխե, էլ թխիս վեչ հա՜, վըեր մին հետ էլ թխիս, սղընալու ա, կյա՞ քյեզ ըսպանե: Հու հինչքան ասե, թա. «Մին հետ էլ թխե», թխիս վեչ:

- Լա՞վ ա՞,- ասալ ա Ասլան-Բալասին:

Եննան Ասլան-Բալասին օշափեն առռե էն մաչի կլխեն թխալ ա, կլո՞խը

կտըրվալ ա, ընգալ ընդեղ:

Էս օշափը ասալ ա. Մին հետ էլ թխե, հա՜յ մին հետ էլ թխե:

- Թխել չըմ, - ասալ ա Ասլան-Բալասին,-քունը էտ ա, վըեր քյեզ տվէ:

Էս օշափը ըստեղ ըստակալ ա, պրծալ: Ասլան-Բալասին հորեն մաչումը իլա՛ծ զատերը հու էս ըխճկանը եր ա կալալ, տարալ հորեն կօշտը: Լոխ զատերը տը՛ւս ունելան ետը էս ախճիգյը Ասլան-Բալասուն ասալ ա. «Առաչ տու եր իլ»:

- Առաչ վըեր ես եր ինիմ,- ասալ ա Ասլան-Բալասին,-տու կյա՛լ չըս:

Էս ախճիգյն ասալ ա. «Տե՛ս, ես վըեր եր ինիմ, ինձ եր ըն ունելու, փախճին: Դե վըեր տհենց ա, ինքյ կալ իմ վըեսկե չըմոշկս, առետ պահես:

Եննան էս ըխճըկանը մաշկան քյա՛նդիրը կապալ ա հու երե դոլե մարթիքյը ծիքյ ըն տվալ տը՛ւս կյա՛լա՛լ: Եննան էլհա քյա՛նդիրը կախ ըն տվալ, Ասլան-Բալասին մաշկան կապալ ա, նրանք էլ ծիքյ ըն տվալ: Առոե էն կեսումը քյա՛նդիրը տինակավ կտրալ ըն, հու Ասլան-Բալասին թըըմփացալ ա տակը: Եննան էս մարթիքյը էն ըխճըկանը եր ըն կյա՛լա՛լ, տարալ:

Ընդեղ Ասլան-Բալասին մին խիլա՛ վախտ կացալ ա, տըեսալ վըեր էս ա քյարվան ա կյա՛լիս: Ասլան-Բալասին ծվվացալ ա, քյարվանեն մարթիքյն էլ, եկալ ըն տը՛ւս կալալ: Ասլան-Բալասին էն ըխճըկանը հետե ման կյա՛լավ քյեցալ ա, տըեսալ վըեր էն իրեք մարթը մին քոլու տակ նստած, ախճիգյն էլ մաչ տեղ հու ըխճըկանը յըրան չոփ ըն քիցը՛ւմ, թա տըեսնան՝ հու՞ր կընգնե:

Էս ախճիգյն էլ ասում ա. «Հու վըեր իմ չմոշկս պիրի, ես ընդրա կքյինիմ»:

Ասլան - Բալասին ը՛ւրա՛ն իրեք հընգեր մարթուցը ասալ ա. «Տուք ինձ ընհե՞նց ըրեքյ»: Ասալ ա հու ըսպընոտալ, ախճիգյը եր կալալ, տարալ:

Ասլան-Բալասին նիզյա՛րա՛ն ա մնացալ թաքավերեն տղեն հետե, ասթխեն մտեգյ ա ըրալ, տըեսալ, վըեր մին հա՛նգյվում ա, մին էլ պենվում : Ասլան-Բալասին շը՛ւտ քյեցալ ա օշափներեն կօշտը, օշափներեն յրան կգըրվալ: Օշափնեն էլ ասալ ըն թա. «Հինչ ա՞նենքյ, մարթ ընք վըերս անում, ինքյը ստում չի»:

Եննան Ասլան-Բալասին թաքավերեն տղեն մին էլ օշափեն ախճիգյը եր ա օնում, քյինում: Թաքավերը վըեր ըսկանում ա, շատ ուրխանում ա, ախճիգյը տղեն յրան օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում:

Ըստուծանա իրեք խնձո՛ր եր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չյսողեն:

## 3.ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂՈՐՑԸ ՀԱՔՅԱԹԸ

[Քաչալ ախպերը][1]

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին թաքավեր։ Էս թաքավերես իլա̈լ ա̈ իրեք տղա, հու ըստրանց պիծինը քաչալ ա իլա̈լ։

Էս թաքավերը մըռնելիս վախտը մըեծ տղեն կանչալ ա կոշտը թա,- Բա՛լամ, էս ա ես մեռնըմ ըմ հու ինձ իրեք օր ահ օնիմ, չո̈ւնքյի վըեր դո̈ւշմըննես կյըրեզմանաս կհանին, առաչի օրը հա̈նգյիստըս պահե։

Տղան ասալ ա. « Լա̈վ ա»։

Եննան թաքավերը ասալ ա. «Դե տու քյինի»։ Թաքավերը մին պատառ կացալ ա, մաշնակ տղեն կանչալ, ասալ. «Բա՛լամ, ինձ իրեք օր ահ օնիմ, վըեր դո̈ւշմըննեն կկյա̈ն հանին մըռնելիս եւոը, էրկուընջի օրը եկ հա̈նգյիստըս պահե»։

Էս տղան ասալ ա. «Աշկես յըրա», հու տո̈ւս եկալ, քյեցալ։

Թաքավերը մին պատառ էլ կացալ ա, պիծի տղեն կանչալ ա, ասալ» Բա՛լամ, ինձ իրեք օր հա̈նգյիստումս ահ օնիմ։ Իրեքընջի օրը տու եկ իմ հանգյիստըս պահե»։

Պիծի տղան ասալ ա. «Կըլխես յըրա̈»։

Եննան պիծի տղեն խոսքը վըեր ըսկացալ ա, մըեռալ ա։ Տղերքը ո̈ւրա̈նց հորը առոք-փառոք թաղալ ըն հու եկալ տոն։

Էքյսը Քաչալը մեծ ախպորը ասալ ա. «Ըսօր քու նոբաթըտ ա, քյինի կյըրեզմանը պահե»։

Ախպերը ասալ ա. «Բա՛, շատ հարակավերս ա՞, էս ա քյինում ըմ իմ հըներանց տոն»։ Ասալ ա հու տո̈ւս եկալ։

էս Քաչալը քյեցալ ա տանան նետը եր կալալ հու քյեցալ հորը հանգյիստին քշտեն մին խոր փոս կտրալ հու ինքյը նի մուտալ մաչին կլոռլու կացալ։ Մին խրեզյ կացալ ա, տըեսալ, վըեր հըես մին սիպտակ մարթ եկավ, սիպտակ ծիու յրա նստած, ինքյը հու ո̈ւրա̈ն շորերը, թորը, դա̈մա̈ն հու ամեն պենը սիպտակ, հու մին սիպտակ թուլա էլ քմակեն, եկավ թաքավերեն հա̈նգյիստին վըեր մուտացավ, ասից. «Թաքա՛վեր, զյոռըտ մզոված» ու ջիտ-րան տակավն ա տվալ, վըեր քարը տեն քցի, բիրդա̈ն Քաչալը նետը փոսան յըրա ա ըրալ հու ընդեղ վեր քցա̈լ։ Եննան Քաչալը տո̈ւս ա եկալ, քյեցալ, էն մարթին շորերը հանալ ա հու ծիյին նհետ տարալ, ծին մին քոլից կապալ հու

[1] Կրկնակի անվանումը դրված է մեր կողմից՝ նույնանուն հաջորդ հեքիաթից տարբերելու համար (Ծ. Կ.)։

շորերը ծիյին յրա̀ քցա̀լ, քյեցալ տոն:

Էքյսը մաշնակ ախպորն ասալ ա, «Մըհենցյ էլ քու նոբաթըտ ա, քյինի»:

Մաշնակ ախպերն ասալ ա. «Բա՛ , էս ա քյինըմ եմ իմ հըներանց տոն»: Ասալ ա հու տո̀ւս եկալ, քյեցալ: Էլիա էս Քաչալս էրկու նետ ա եր կալալ, քյեցալ էն փոսումը կյլողլու կացալ հու մին պատառ վախտան ետը տըեսալ ա, վըեր մին կյա̀րմո̀ւր մարթ, կյա̀րմո̀ւր ծիյու յրա նստած հու ո̀ւրա̀ն ամեն պենն էլ լոխ կյա̀րմո̀ւր, եկավ, ասից, «Թաքա՛վեր, գյոռըտ մզոված, տու իմ ախպորս ըսպընեցեր»: Ասալ ա հու օզալ թա ջիտրան տակավը տա, բիրդա̀ն Քաչալը նետը յրա ա ըրալ փոսան հու կլողլու կացալ: Քյար չի ըրալ, հու էն մարթը տես ու տեն մտեցյ ա ըրալ, ասալ, «էս հու ա՞, էս հու ա՞»: էլ քթա̀լ չի: Մին էլ ա օզալ, թա ջիտրան կյերեզմանեն տակավը տա, Քաչալը մին էլ ա նետը յրա ըրալ, ընդեղ ըսպանալ, վեր քցա̀լ հու քյեցալ շորերը հանալ, տիրա̀լ ծիյին յրան, ծին էլ տարալ էն առաչվա ծիյին քըշտեն կապալ, հու ինքը քյեցալ տոն:

Էքյսը վըեր ո̀ւրա̀ն նոբաթն ա իլա̀լ, չորս նետ, մին էլ մին թոփուզ ա եր կալալ, քյեցալ փոսումը կյողլու կացալ: Տըեսալ ա, վըեր էս ա մին սև ծիյավեր եկավ հու ասեց, «Թաքա՛վեր, գյոռըտ ընեծվի, տու ըս իմ էրկու ախպորս ըսպանալ»: Ասալ ա հու ջիտրան քարեն տակավը տվալ, թա քարը տեն քցի: Էս Քաչալը բիրդա̀ն նետը յրա ա ըրալ՝ ընդրանա տվալ, ամմա քյար չի ըրալ: Մին հետ էլ ա յրա ըրալ՝ էլիա քյար չի ըրալ: Էս չորս նետոն էլ ա յրա ըրալ, էլիա քյար չի ըրալ: Ախրը էս մարթս եկալ ա, թա ըստրան ըսպանե: Բիրդան էս Քաչալը թոփուզը տըրըքցրալ ա հու ընդեղ ընդրան վեր քցա̀լ ու փոսան տո̀ւս եկալ, շորերը հանալ, ծիյին յրա կապալ հու էն էրկու ծիյին նհետ տարալ, մին թալվա փռնալ, մաչին կապալ հու ինքյը քյեցալ ո̀ւրա̀նց տոն:

Մին քանե տըռնան ետը Քըչալեն ախպերքը ըսկացալ ըն, թա մին թաքավեր ո̀ւրա̀ն ախճիգյը օխտը սարու քմակե ա տիրալ հու ասալ. «Հու վըեր օխտը սարեն կլխավը ծիյավ լոք տա, էն վախտը ախճիգյս ո̀ւրա̀ն կտամ»:

Քչալեն մըեծ ու մաշնակ ախպերքը վըեր ըսկացալ ըն, մին կաղլեցյ ճո̀րի ըն փռնալ, վըեր էրկուքան էլ եր ինին, քյինին թըմաշա: Էս Քաչալս ախպորցն ասալ ա. «Ախպերք, ինձ էլ տարեքյ է՛»: Ախպերքն ասալ ըն. «Ը՛հ, քաչալ շան տղա, վըեր քյեզ տանինքյ՝ վըննըտակե կոխ տան, ըսպանի՛ն, հոր ը՞նք տանում, տու ըստեղ կաց»:

Էս Քաչալն էլ սուս ա կացալ, տեղը նստալ: Ախպերքը կաղլեզյ ճո̀րին յրան նստած քշալ ըն քյեցալ:

Քաչալը վըեր տըեսալ ա ախպերքը շըհա̀րին ղըրբըզավը անց կացեն, քյեցալ ա սիպտակ ծին եր իլա̀լ, վըեր թաքավերեն հա̀նգյիստը քանդիլ օգողինն ա, հու սիպտակ շորերը կյեցալ, հու յարաղ-ասպաբը քցա̀լ, քյեցալ տըեսալ, վըեր օխտը սարեն քշտեն շատ մարթ կա կաղնած հու ո̀ւրա̀ն ախպերքն էլ ընդեղ: Էս Քաչալը տես ու տենին ղամչավ թխալ ա, հղե պեցալ հու քյեցալ ախպորցը թա թխե. ախպերքը, վայ-վայ ըն ըրալ, էլ թխալ չի: Եննան ծիյին սաղրուն չափալ ա, անց կացալ օխտը սարեն կըլխավը, քյեցալ ախճիգյը տիրա̀լ թա̀րքյին հու մին էլ ծիյին վըեռեն թխալ ա, անց կացալ օխտը սարեն կըլխավը, եկալ էն թու․ բուն մարթուցը կոշտը հու մարթուցը տես ու տենին թխելավ հղե պեցալ, եկալ ո̀ւրա̀նց տոն: Խիլա վախտ կացալ ա, մին էլ տըեսալ ա, վըեր ախպերքը էս ա գյեժղա̀նա̀-գյեջ եկեն:

Քաչալը հըրցրալ ա ախպորցն անա թա. «Հինչ կա՞ր, հինչ չի կա՞ր»:

Ախպերքն էլ ասալ ըն. «Հինչ պիտի՞ ինի, ընդեղ կընոտած ընք, բիրդա̀ն տեսնանք վըեր էս ա մին մարթ եկավ, սիպտակ ծիյին յրա նըստած, հու սիպտակ շորերը կյեցեն, հու սիպտակ ջիտրան, ղա̀մա̀ն հու ամեն պենը լոխ էլ սիպտակ: Եկավ տես ու տենին թխելավ անց կացավ օխտը սարեն կլխավը, ախճիգյը թա̀րքյին տիրա̀ծ եր կալավ, պերավ դիբի ըստեղ: Էլ գյիդացինքյ վըեչ թա հիշտեղ տարավ:

Քաչալն էլ ասալ ա. «Լա̀վ ա, վըեր ես ընդեղ չըմ իլալ»:

Էլիա մին քանե տարանը ետը ըսկացալ ըն թա թաքավերը էլիա մին ախճիգյ ա տիրա̀լ օթ սարու քմակե հու ասըմ ա թա. «Հու վըեր ծին լոք տալ տա օթ սարեն կլխավը ախճիգյը ո̀ւրա̀ն ինի»:

Էլիա էրկու ախպերքը մին կաղլեզյ ճո̀րի ըն փռնալ, քյեցալ թմաշա: Էլիա էն Քաչալն ասալ ա. «Ինձ էլ տարեքյ»:

Ասալ ըն. «Օգիլ չի, տու ըստեղ կաց»:

Էս Քաչալն էլ սուս ա կացալ: Ըստրանք ճո̀րին եր ըն իլա̀լ, քյեցալ: Էս Քաչալը տըեսալ ա, վըեր ղըրբըզավը տո̀ւս ըն եկալ քյեցալ, կյարմո̀ւր ծին եր ա իլա̀լ, ո̀ւրա̀ն ամեն սարքավը քյեցալ ա առաչվա նման անց կացալ օթ սարին կլխավը հու ախճիգյը տիրա̀լ թա̀րքյին, մին էլ օթ սարին կլխավը անց կացալ, եկալ տոն:. Տանը ո̀ւրա̀ն ամեն պեները ծիյին յրա կապալ ա հու ախճիգյը յրան տիրա̀լ, տարալ էն առաչի ըխճըկանը քշտեն տիրա̀լ հու ինքյը

եկալ տեղը նստալ։ Մին էլ տըեսալ ա, վըեր գյեժդյա՛նա՛-գյեջ ախպերքը եկեն։

Հըրցրալ ա թա. «Հինչ կա՞ր, հինչ չի կա՞ր»։

Ասալ ըն. «Հինչ պիտի՞ ինի, էն վախտանց մնան մինը եկավ տես ու տենին թխելավ քյինից, ախճիգյը թա՛րքյին տիրա՛ծ պերավ, ամմա էս մարթիս տակեն ծին, շորերն ու յարաղ-ասպաբը կյա՛րմո՛ւր ար»։

Էլհա ասալ ա. «Լա՛վ ա, վըեր ես եկե վըեչ»։

Մին քանե տըռնան ետը էլհա ըսկացալ ըն թա մին թաքավեր իննը սարու քմակե մին ախճիգյ ա տիրա՛լ հու ասալ. «Հու վըեր քյինի իննը սարին կլխավը ծին լոք տալավ անց կցնե, էն ախճիգյը ո՛ւրա՛ն կտամ»։

Էլհա էս էրկու ախպերքը կաղլեգյ ճո՛րին եր ըն իլալ, քյեցաք թմաշա։ Էս քաչալը տանը կացալ ա։ Նրանք էլհա շհա՛րեն դըրբըզավը վըեր տո՛ւս ըն եկալ, ինքյը քյեցալ ա սև ծին եր իլալ, սև շորերը կյեցալ, յարաղասպաբը կապալ, քյեցալ իննը սարի քշտին մին քանե մարթու ըսպանալ հու քյեցալ թա ո՛ւրա՛ն ախպորցն էլ թխե։ Նրանք վայ-վայ ըն ըրալ փախալ, եննան էլ թխալ չի։ Անց ա կացալ իննը սարեն կլխավը հու քյեցալ ախճիգյը տիրա՛լ թարքյին, եր կալալ պերալ տոն հու ո՛ւրա՛ն շորերը հանալ, ծիյին յրա կապալ հու ախճիգյը յրան տիրա՛լ, տարալ թալվումը էն ըխճըկոցը քշտեն կապալ հու ինքյը եկալ տանը նստալ։

Ախպերքը եկալ ըն , Քաչալը հըրցրալ ա թա. «Միե՞նգյ հինչ կար»։

Նրանք էլ աս ալ ըն. «Հի՞նչ պիտի ինի, մին սև ծիյավեր մարթ եկավ, թորը հանից, մին քանի մարթու թխից, ըսպանից, եկավ թա մըզ էլ թխե, մունք վայ-վայ ըրինքյ, էլ թխից վըեչ. եննան իննը սարեն կլխավը անց կացավ, ախճիգյը թա՛րքյին տիրա՛ծ եր կալավ, տարավ, էլ գյիդացինքյ վըեչ, թա հիշտեղ տարավ։

Մին քանե վախտան ետը էս Քաչալս ախպորցը ծիյանքը շհանց ա տվալ թա. «Էն վախտն ար, վըեր թաքավերը ասալ ար. «Եկեքյ իմ հանգյիստս իրեք օր պըհեցեքյ», տուր քյեցեք վըեչ։ Ես էն իրեք օրը քյեցե հա՛նգյիստը պըհեցե, էս իրեք ծին ինձ ընգավ»։

Ախպերքն ըղաչանք ըն անըմ, թա մարթը մին ծի տոք։ Քաչալն էլ սիպտակ ծին տվալ ա մեծ ախպորը, կյա՛րմո՛ւրը՝ մաշնակ ախպորը, սևն էլ ինքյը եր կալալ։ Եննան էլհա պերալ ա առաչի պերա՛ծ ախճիգյը տվալ մեծ ախպորը, էրկուինջի պերա՛ծը՝ մաշնակ ախպորը, երեքինջինը ինքյը եր կալալ։

Ըստվածանա իրեք խնձոր վեր ընգնե. մինն՝ ըսողեն,մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն։

4.ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂՈՐՅԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին թաքավեր։ Էս թաքավերես իլա̈լ ա̈ իրեք տղա։ Էս թաքավերը վըեր շատ պռավալ ա, ո̈ւրա̈ն իրեք տղորցը կանչալ ա, ասալ. «Հու վըեր կյա̈ ախճըկերքս օզե. տվեքյ»։

- Լա̈վ ա- ասալ ըն տղերքը։

Մի քանի վախտ անց ա կացալ, թաքավերը մըեռալ ա։ Մին օշափ եկալ ա, ասալ թա. «Եկալ ըմ թաքավերին ախճիգյն օզիմ»։ Մեծը հու մեշնակ տղերքը ասալ ըն. «Քյինա՛, քյինա՛, մունք քյեզ ախճիգյ չընք տալ»։

Պիծինն ասալ ա. «Պիրենքյ տանք»։ Նահանք ասալ ըն թա. «Տալ չընք»։

Պիծի ախպերն ասալ ա. «Չէ՛ վըեր չէ՛, վըեր իմ հա̈րն ասալ ա՝ տալ պիտիմ»։

Պիծի ախպերը ախրը տվալ ա օշափին։

Մին քանի վախտ անց ա կացալ, մին ասլան ա եկալ, թա. «Եկալ ըմ թաքավերեն ախճիգյն օզիմ»։ Էլհա մեշնակ նան մեծն ասալ ըն. «Կորի քյինա, մեզ ախճիգյ չօնենքյ  քյեզ տալի»։

Էլհա ախրը զոռավ պիծի ախպերը տվալ ա։ Մին քանի վախտ էլ անց ա կացալ, մին դո̈ւլզյա̈ր ա եկալ, թա. «Եկալ ըմ թաքավերեն ախճիգյն օզիմ»։ Էլհա էն էրկունն ասալ ըն թա. «Տալ չընքյ»։ Պիծինն ասալ ա. «Տալու ըմ»։

Ախրը պիծի ախպերը տվալ ա։

Մին քանի վախտ անց ա կացալ, պիծի ախպերն ասալ ա. «Ես պիտի փլան թաքավերի ախճիգյն օզիմ»։

Քյինացալ ա օշափին տոնը, ընդեղ քուրը ասալ ա. «Ա̈՛դա̈, հոր ը՞ս եկալ, էս սհաթս օշափը կկյա̈ քյեզ կօտի»։

- Պա հունց ա՞նիմ,- ասալ ա։

- Ըտեղ կյողլու կաց, - ասալ ա քուրը։

Ախպերը կյողլ ա կացալ։

Օշափը եկալ ա, ասալ. «էս հի՞նչ մրթմրթավետ ա կյամ»։

- Դե ըսկի՞ հինչ,- ասալ ա կնեգյը։

- Ասի, վըեր քյեզ կօտիմ,- ասալ ա օշափը։

- Իմ ախպեր եկալ ա,- ասալ ա կնեգյը։

- Թա վըեր մեծը հու մեշնակն ինի, օտելու ըմ, թա վըեր պիծինն ինի, աշկիս յրան ա եկալ։

- Պիծինն ա,- ասալ ա կնեգյը։

Ետնան պիծի ախպերը տո՛ւս ա եկալ, պարով տվալ:

Օշափն ասալ ա թա. «Հոր ը՞ս եկալ»:

Թա. «Եկալ ըմ քյեզ ասիմ՝ փլան թաքավերեն ախճիգյն ինձ հետի օզիս»:

- Էդ իմ պենը չի,- ասալ ա օշափը,- քյինա՛ Ասլանի կոշտը:

Պիծի ախպերը եր ա կացալ քյինա՛ցալ Ասլանի կոշտը:

- Հոր ը՞ս եկալ, - ասալ ա քուրը,-էս սհաթս Ասլանը կկյա՛ քյեզ կոտի:

- Բա հունց ա՞նիմ,- ասալ ա ախպերը:

- Կյողլու կաց,- ասալ ա քուրը:

Կյողլ ա կացալ պրծալ, Ասլանը եկալ ա:

- Էս հինչ մրթմրթա՞վետ ա,- ասալ ա Ասլանը:

- Իսկի՞ հինչ,- ասալ ա կնեգյը:

Մին էլ ասալ ա թա. «էս հի՞նչ մրթմրթավետ ա, ա՛սի, վըեր էս սհաթս քյեզ կոտիմ»: Ասալ ա թա. «Իմ ախպեր եկալ ա»:

Նա էլ ասալ ա. «Թա վըեր մեծը յա մեշնակն ինի, ոտելու ըմ, թա վըեր պիծինն ինի, աչքիս լո՛ւսին յրան ա եկալ»:

Պիծի ախպերը տո՛ւս ա եկալ, պարով տվալ: Ասլանն ասալ ա թա. «Հոր ը՞ս եկալ»:

Ասալ ա թա. «Եկալ ըմ վըեր քյեզ ասեմ, քյինա՛ս փլան թաքավերեն ախճիգյն ինձ հետի օզիս»:

- Էտ իմ պենս չի, - ասալ ա Ասլանը. քյինա Դո՛ւլգյա՛րին կոշտը:

Քյինացալ ա Դո՛ւլգյա՛րին տոնը: Քուրն ասալ ա թա. «Հոր ը՞ս եկալ, էս սհաթս Դո՛ւլգյա՛րը կկյա՛ քյեզ կսպանե»:

Պիծի ախպերն ասալ ա. «Բա հունց ա՞նիմ»: Քուրն ասալ ա թա. «Ըտեղ կյողլու կաց»: Նա էլ կյողլ ա կացալ:

Դո՛ւլգյա՛րը եկալ ա, թա. «էս հի՞նչ մրթմրթավետ ա»: Կնեգյը ասալ ա, թա. «Իսկի՞ հինչ»:

Նա էլ ասալ ա. «Էս հի՞նչ մրթմրթավետ ա, ասի, թա չինա՛, գյուղում ը՞ս ինձ»:

- Իմ ախպեր եկալ ա,- ասալ ա կնեգյը:

- Թա վըեր մեծը հու միշնակն ինի,- ասալ ա Դո՛ւլգյա՛րը, ըսպանելու ըմ. ամմա թա վըրեր պիծինն ինի, աչքիս լո՛ւսին յրան ա եկալ:

Պիծի ախպերը տուս ա եկալ կյողլու կացած տեղիցը, Դո՛ւլգյա՛րին պարով տվալ: Դո՛ւլգյա՛րը ասալ ա թա. «Հոր ը՞ս եկալ»: Թա. «Եկալ ըմ վըեր քյեզ ասիմ՝

փլան թաքավերեն ախճիգյն ինձ հետե օզիս»։

Նա էլ ասալ ա թա. «Բա՛լամ, ես հունց ա՞նիմ»։

Դո̈ւլգյա̈րը մեթկա ա ըրալ, ախրը ասալ թա. «Մին մաշին կշինիմ, ընդրանավ կը քյինա̈ս ընդեղ, կյա̈ս»։

Նա էլ ասալ ա թա. «Լա̈վ ա»։

Մին քանի վախտան ետը մաշինը շինա̈լ ա։

Պիծի ախպերը մաշինին մեչին նստալ ա, քյինա̈ցալ թուշ էն թաքավերեն ախճըկանը օթաղին հո̈ւրթին յրա կաղնալ։ Մաշինիցը վեր ա եկալ, հո̈ւրթա̈վը նի մտալ օթաղը, տըեսալ էն ախճիգյը քոն մին կոխկեն էլ բա̈քյմա̈զ, մին կոխկեն մեղրը։ Բա̈քյմա̈զը խմալ ա, մեղրը կերալ, հո̈ւրթա̈վը եր իլա̈լ մաշինին մեչին նստալ, դոռալի քյինացալ Դո̈ւլգյա̈րեն տոնը։

Էքյսը թաքավերեն ախճիգյը եր ա կացալ, տըեսալ բա̈քյմա̈զը խմած, մեղրը կերած։ Թաքավերեն նա̈զիր-վա̈զիրներեն կանչիլ ա տվալ, հրցրալ թա. «Հու վա՞ նի մտալ իմ օթաղս»։

Նաիանք էլ ասալ ըն թա. «Մունք չընք նի մտալ»։

Ախճիգյը ըստաիանց թակել ա տվալ կտորալ, թա. «էլ չի նի մտնիքյ»։

Էլիա քշերեն մեչտեղը պիծի ախպերը մաշինը եր ա իլա̈լ, դոռալի եկալ, էլիա նիմտալ օթաղը բա̈քյմա̈զը խըմալ, մեղրը կերալ, քյինացալ։ Էքյսը թաքավերեն ախճիգյը եր ա կացալ, նա̈զիր-վա̈զիրներեն, գյա̈դոցը թակել ա տվալ, թա. «Խե ը՞ք եկալ բա̈քյմա̈զը, մեղրը կերալ»։

Էս ախճիգյը ո̈ւրո̈ւլգյո̈ւնը մաննը կտրալ ա, պտատալ, հանցու վըեր հեռիցը քոն չի ինի։ Էն տղան էլիա եկալ ա, ամա թաքավերեն ախճիգյը բա̈քյմա̈զը խմելիս տեղը փռնալ ա, թա. «Հո՞ր ըս եկալ»։ Ասալ ա թա. «Եկալ ըմ քյեզ օզիմ»։

Էս ախճիգյը ո̈ւրա̈ն մազիցը մինը պուք ա տվալ, տվալ էն տղեն հու ասալ. «Թա վըեր էքյո̈ւց կյա̈ս թաքավերեն ասիս թա եկալ ըմ ախճիգյդ օզիմ, թաքավերն էլ տռանը չինա̈րո̈ւն տակեն թաբաղա թղթեր ա փռելու հու մին ջամ ճո̈ւր ա լցնելու, տինի ծեռքեդ, ասի, թա հանց եր իլ չինարուն պտոկը հու վեր եկ, վըեր մին կաթ ճո̈ւր չի կաթի։ Տող էլ վըեր մին պատառ եր ինիս, էդ մազը քցի ճրին մեչը, ճո̈ւրը էն սիաթը կսառչի։ Եր ինելիցը ետը վեր կյա̈լիս վըեր առե քշանաս, մազը կիանիս։

Նա էլ ասալ ա, թա. «Լա̈վ ա»։

Էն տղան ըստրանից ետը եր ա իլա̈լ մաշինը, քյինացալ Դո̈ւլգյա̈րին տոնը։

Էքյսը եկալ ա թաքավերեն ասալ, թա. «Եկալ ըմ ախճիգյդ օզիմ»:

Թաքավերը պերա̀լ ա չինա̀րո̀ւն տակավը թաբաղեքյը շարալ, մին ջամ ճո̀ւր լցալ, տիրա̀լ ծեռքեն, ասալ. «Թա վըեր եր իլիր չինա̀րո̀ւն պտոկը վեր եկեր, մին կաթ ճո̀ւր չի կաթից, ախճիգյս քեզ յրա կփսակիմ. թա վըեր կաթից, քեզ կսպանիմ»:

Նա էլ ասալ ա, թա. «Լա̀վ ա»:

Մին խիլա̀ տղան եր ա իլա̀լ, մազը քցա̀լ ա մեչը, ճո̀ւրը սառալ ա, եր ա իլա̀լ. մին էլ վեր կյա̀լիս վըեր պատառ ա մնացալ թա վեր կյա̀, մազը հանելիս տեղը մին կաթ կաթալ ա: Թաքավերը ասալ ա, թա. «Բա էս հի՞նչ ա»:

Տղան ասալ ա թա. «Վեր կյա̀լիս տեղը իմ հա̀ր, իմ մար մետս ընգավ, աչկիցս մին կա̀թ ըրտասունք կա̀թից»:

Թաքավերը ասալ ա, թա. «Լա̀վ»:

Եննան օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ ա ըրալ: Տղան կնգանը եր ա կալալ, քյինա̀ցալ:

Ըստուծանա իրեք խնո̀ձր վեր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ չլսողեն:

## 5.ՔՅԱ̀ՍԻԲ ՄԱՐԹԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին մարթ: Էս մարթիս էլ իլա̀լ ա̀ էրկու պիծի տղա: Էս տղերքս ամեն օր քյո̀ւնո̀ւմ ըն իլա̀լ փադ անում, պո̀ւրո̀ւմ ծախում: Մին օր էլ քյինա̀ցալ ըն փադի: Փադ պիրելիս տեղը մին դուշ երկնքիցը վեր ա եկալ, էս տղորցս ըռաչին մին ծո̀ւ ածալ, քյինա̀ցալ: Էս տղերքս էս ծո̀ւն եր ըն կալալ պերալ: Մին ջուհուդ եկալ ա հինգ հա̀րո̀ւր մանեթի ծո̀ւն առալ: Ամեն օր քյինո̀ւմ ըն իլա̀լ փադի, էն դուշն էլ կյամ ա իլա̀լ մին ծո̀ւ ածում էս տղորցս ըռաչին, նահանք էլ տանում ըն իլա̀լ, էն ջուհուդը հինգ հա̀րո̀ւր մանեթի առնում ա իլա̀լ:

Էս տղերքս մին օր էն դուշին մսավ-զատավ խա̀փա̀լ ըն, փռնալ: Էս դուշն էլ տանը ծո̀ւ ածում ա իլա̀լ, հու նահանք էլ ջո̀ւհո̀ւդին յրա ծախում ըն իլա̀լ: Ըստըհենց անելավ ըստահանք շատ հարստացալ ըն, մեծ ամարաթ շինա̀լ: Ըստրանա ետը էս տղորցը հա̀րը քյինացալ ա դարիբութուն:

Էս ջուհուդը էս տղորցս մորը նհետ դոստացալ ա: Էս կնեգյը ջուհուդին ասալ ա թա. «Ինձ օզե»:

Նա էլ ասալ ա թա. «Էդ դուշը մորթե, տրա թոքը մին էլ կլո̀խը իփի, տիր

փլավեն յրան օտիմ, քյեզ օզիմ»: Նա էլ ասալ ա թա. «Լա̀վ ա»:

Էդ կնեգյը էդ դուշը մորթալ ա, կլո̀խը հու թոքը իփա̀լ: Էս տղերքս եկալ ըն տոն, տըեսալ դուշը մորթած, կլո̀խը հու թոքը իփա̀ծ: Ըստահանք էլ վըեր սոված ըն իլալ, մինը թոքն ա կերալ, մինն էլ կլո̀խը: Հու վըեր էս դուշին կլո̀խն ա կերալ, թաքավեր ա տըռնալու, ամա հու վըեր թոքն ա կերալ, ամեն քշերավ եր ա կենալու, տըեսնա կըլխըտակեն հինգ հա̀րո̀ւր մանեթ: Ետավ էս ջուհուղը եկալ ա թա. «Դե պեր օտիմ»:

Կնեգյը քյինա̀ցալ ա տես ման եկալ, տեն ման եկալ, զատ չի քթա̀լ, ետավ էն էրկու տղորցանից հըցրալ ըն,թա. «Կերալ ը՞ք»:

Նահանք էլ ասալ ըն, թա. «Հա»:

Էս կնեգյը էլհա ասալ ա. «Բա միեկյ հինչ ա՞նի մ, վըեր ինձ օզիս»:

Ջուհուղը ասալ ա, թա. «Միեկյ էլ էրկու տղորցտ մորթե, մինին փորիցը դուշին կլո̀խը հանե օտիմ, մինին սրտան էլ թոքը հանե, վըեր օտիմ, ետավ քյեզ օզիմ»: Էս կնեգյը ասալ ա, թա. «Լա̀վ»:

Էս տղերքս դո̀յմիշ ըն իլա̀լ, կլո̀խ եր կալալ, փախալ օրիշ երգյիր:Ամեն օր թոք օտող տղին կլխատակեն էլ հինգ հա̀րո̀ւր մանեթ ա իլա̀լ, էտ փողավն էլ լա̀վ սո̀րո̀ւն ապրալ ըն: Քյինա̀ցալ ըն, քյինա̀ցալ ըն, տըեսալ ըն էրկու հղե. մինը մինա̀վն ա քյինա̀ցալ, մինն էլ՝ մինա̀վը:

Էս տղան, վըեր թոքը կերալ ար, քյինացալ ա մին տան վեր եկալ. ընդեղ էլ մին զա̀նգյի ա իլա̀լ: Էն զա̀նգյո̀ւն նիետ դոստացալ ա: Էս զա̀նգյին ասալ ա թա. «Ինձ փող տո»:

Նա էլ թա. «Լա̀վ ա»: Ամեն քշերավ հինգ հա̀րո̀ւր մանեթ փող ա իլա̀լ տամ: Էս զա̀նգյին ասալ ա թա. «էդ փողը քյեզ հիշտեղան ա՞»: Նա էլ թա. «Իսկի հիշտեղան»:

Էլհա ասալ ա. «էդ փողը քյեզ հիշտեղան ա»: Թա դե. «Իսկի հիշտեղան, ինձ օնիմ»:

Էս զա̀նգյին մին քանի մարթ նստըցըրալ ա, մին էլ էն տղան հու ըստեղ կյինի խմըցրալ, հըրփըցրալ: Էս զա̀նգյին էն տղեն ասալ ա. «Էն փողը հի՞շտեղան ա»:

Նա էլ ասալ ա թա. «Մին դուշի թոք ըմ կերալ, ամեն քշերավ եր ըմ կենում, տեսնում հինգ հա̀րո̀ւր մանեթ կլխըտակես»:

Էս զա̀նգյին թա̀մբա̀քյի ա պիրիլ տվալ, ածալ պոկը: Եննան էս տղան սըերտը պարան ա տվալ, թոքը վեր ա ընգալ, շո̀ւտ ինքյը եր ա կալալ կոլ տվալ:

Էս տղան էքյսը էր ա կաց ալ, տըեսալ վըեր էլ կլխըտակեն հինգ հա̈րո̈ւր մանեթ չի կա: Գյիդացալ ա վըեր էն զա̈նգյին ա ո̈ւրա̈ն ըստըհենց ըրալ: Կլո̈խ ա եր կալալ, քյինա̈ցալ: Քյինա̈ցալ ա, քյինա̈ցալ, տըեսալ վըեր չորս ջուհուդ կոռ ըն անում ։

Էն ջուհուդեեն էլ ասալ ըն. «Դե՛ հես ա լա̈վ տըեռավ, էս տղան եկավ, փայ կանե»:

Էս տղան քյինա̈ցալ ա տըեսալ մին սուփրա, մին մուտանա, մին գյա̈քա̈, մին էլ մին դամչի:

Ասալ ա, թա. «Սահանք հինչ կա՞նին»:

Ասալ ըն թա. «էս դամչավը վըեր մինին թխիս, հինչ վըեր օզիս, էն կտեռնաս. էս գյա̈քին մեչին էլ վըեր նստիս, հինչ տեղ օզիս, կտանի, էս մուտանան վըեր քցիս մաննըտ, հինչ վըեր օզիս՝ կտա. էս սուփրան էլ վըեր քցիս աղաքըտ, հինչ խորագյ վըեր օզիս, սուփրին միչին կինի: Էս չորս պենս,- ասալ ա, -փայ ըրա մեզ յրա»:

Էս տղան չորս քար ա եր կալալ մինն էն դոլը թող ըրալ, մինն էն դոլը թող ըրալ, մինն էն դոլը, մինն էլ էն դոլը: Ասալ ա թա. «Հու վըեր քյինա̈ մին քար առաչ պիրի, սուփրան ո̈ւրա̈ն, հու վըեր ընդրանից ետը պիրի,դամչին ո̈ւրա̈ն հու վըեր էլ ընդրանից ետը պիրի, գյա̈քա̈ն ո̈ւրա̈ն, հու վեր ընդրանից ետը պիրի, մուտանան ո̈ւրա̈ն»:

Լիհա վըեր պատառ հռացալ ըն, էս տղան նստալ ա գյա̈քին յրա, հու մուտանան քցա̈լ մանը, սուփրան մին էլ դամչին տիրալ գյա̈քին յրան, քյինա̈ցալ զա̈նգո̈ւն տոնը հսալ: Կզնված դամչավը թխալ ա, զա̈նգյո̈ւն էշ շինա̈լ, թա̈մբա̈քյի տվալ, նա էլ սըերտը պարան ա տվալ, թոքը վեր ա ընգալ, եր ա կալալ կոլ տվալ հու էն զատերը ծեռնքան խիլալ, ետնան էղ զա̈նգյո̈ւն պերալ ա էն դղա̈ր քար ա կրել տվալ, վըեր օզացալ ա թա ըստակե: Էս զա̈նգյին էս տղեն ճնա̈նչում ա իլա̈լ, եկալ ա կլո̈խը քցա̈լ տղեն վըեններըը, թա յա̈նի ըզատե: Տղան էլ գյի-դա̈ցալ ա վըեր հինչ ա ասում, դամչավը մին դոնում թխալ ա, զա̈նգյին սղացալ ա: Ետնան էլհա էս զա̈նգյին պերալ ա էն տղեն նըստըցրալ, կյինի խմըցրալ, հրփցրալ, թա. «Էն զատերը հոր ը՞ն»: Նա էլ տեղն ասալ ա: Զա̈նյզին քյինա̈ցալ ա եր կալալ հու էլհա թա̈մբա̈քյի տվալ, սըերտը պարան ա տվալ, թոքը վեր ա ընգալ. զա̈նգյին եր ա կալալ, կոլ տվալ: Էս տղան վըեր օյամմիշ ա իլա̈լ, եր կացալ տըեսալ վըեր էն զատերը ընդեղ չըն հու կլխտակեն հինգ հա̈րո̈ւր մանեթ չի կա, կլո̈խ ա եր կալալ, քյինա̈ցալ:

Ըստրա ըստեղ թողինքյ հու ետ տեռնանք էն մին ախպորիցը խոսինքյ,

վըեր էն դուշին կլո՛խն ա կերալ։

Էդ տղան քյինա՛ցալ ա տըեսալ մին քաղաքի թաքավեր մեռած։ Ընդեղ էլ մին դուշ ա իլա՛լ, վըեր պեց թողում ըն իլա՛լ, քյինո՛ւմ ա իլա՛լ մինին կլխեն կաղնում. հո՛ւր կլխե վըեր կաղնե, ընդրա թաքավեր կշինին։ Դուշը պեց ըն թողալ, քյինա՛ցալ ա էն տղեն կլխեն կաղնալ։ Քանի պեց ըն թողալ, քյինա՛ցալ ա էն տղեն կլխեն կաղնալ։ Ըստրա տարալ ըն մին օթախ քցա՛լ, ետնան պեց թողալ, էլիա քյինա՛ցալ ա հո՛ւրթավը վեր եկալ, ընդրա կլխեն կաղնալ։

Ետնան ասալ ըն թա. «Մին քանե վախտ թաքավեր տինինքյ, թա վըեր խելքավ չի կառավարից, տո՛ւս քցինքյ»։

Մին քանե վախտ թաքավեր ըն տիրա՛լ, տըեսալ վըեր շատ իմաստությու-նավ ա կառավարում, ըստրա թաքավեր ըն տիրա՛լ։

Միեգյ ըստրա թողնինքյ, էն մին թոք օտող ախպորիցը խոսինքյ։

Էդ տղան եկալ ա ընդեղ, վյըեր ո՛ւրա՛ն  ախպերը թաքավեր ա տըեռալ, էն քաղաքը։ Էս թաքավերը ըստրա հեռու տեղան ճնա՛նչա՛լ ա, ամմա սա թաքավերեն ճնա՛նչա՛լ չի։

Թաքավերը պերիլ ա տվալ ըստրա ո՛ւրա՛ն  կոշտը, իըրցըրալ. «Խե ը՞ս ըտըհենց, ախըր ամեն օր քու կլխատակետ հինգ հա՛րո՛ւր մանեթ կար»։

Նա էլ հինչ վըեր կլխավը անց ա կացալ, ասալ ա։ Էս թաքավերը էս վըեր ըսկացալ ա, թախտան վեր ա եկալ, ո՛ւրա՛ն  տեղ մին օրիշը թաքավեր տիրա՛լ, ետնան մին կուպրուն վիզա՛ն կապալ ա, ո՛ւրա՛ն  ախպորը եր կալալ, քյինա՛ցալ ըն զա՛նգյո՛ւն տոնը հսալ։ Մի քանի վախտ տարալ ըն փող տվալ էս զա՛նգյո՛ւն. սա էլ գյիդացալ ա, թա էլիա փա՛նդ օնին, վըեր ըստըհենց փող ըն պիրում տամ։ Էս տղորցը նստըցրալ ա, կյինի խըմըցրալ, վըեր իըրփըցնե։ Հո՛ւր վըեր կյինի ա տվալ, լոխ խմալ ըն, ամմա էս թաքավերը հինչ վըեր տվալ ըն, ածալ ա կուպրունի մեչը։ Լոխ հա՛րփա՛լ ըն. էս թաքավերը եր ա կացալ թա՛մբա՛քյի պերիլ տվալ, ածալ էս զա՛նգյո՛ւն պոկը, ծղկ ա եկալ, թոքը վեր ա ընգալ, ինքյը եր ա կալալ։ Ետնան գյա՛բին մեչին նստալ ա, ո՛ւրա՛ն  ախպորը տիրա՛լ գյա՛բին յրան, եր կալալ ճինջի-պոմբի ընելավ քյինա՛ցալ։ Ինքյը վըեր ընդեղ թաքավեր ա իլա՛լ, ո՛ւրա՛ն  ախպորը թաքավեր ա տիրա՛լ, ինքյն էլ նա՛զիր-վա՛զիրը տեռալ։

Միեգյ քյինա՛նք  ըստրանց հորը-մորիցը  խոսինք ։

Ըստրանց հարը դարիբութունից եկալ ա, տըեսալ տղերքը ընդեղ չըն։

Կնգանը ասալ ա. «Տղերքս հոր ը՞ն»։

Նա էլ ասալ ա թա. «Ինձ թողալ ըն, փախալ»:

Թա. «Դե, ա՛ կնեգյ, եկ կլոխ եր օնինքյ քյինինք:Կնիգյն էլ ասալ ա. «Լա̈վ ա»:

Քյինա̈ցալ ըն, քյիընա̈ցալ ըն հասալըն էն քաղաքը, վըեր ո̈ւրա̈նց տղերքը ընդեղ թաքավեր ըն նստալ: Թաքավեր տղան հու մեկալ տղան ո̈ւրա̈նց հորը-մորը ճնա̈նչա̈լ ըն. հա̈րը-մարը ըստահանց ճնա̈նչա̈լ չըն: Թաքավեր տղան պերիլ ա տամ կոշտը, տանում մին ճոկ օթաղ, ընդեղ ասում, թա. «Մունք քու տղերքդ ընք»:

Նա էլ հրցրալ ա, թա. «Բա խե ը՞ք փախալ»: Ասալ ըն, թա.

«Մեր մար մեզ օզից ըսպանե, մունք էլ փախենքյ»:

Ջանլաթը պիրիլ ըն տվալ, ո̈ւրա̈նց մորը շախկա տվալ, ո̈ւրա̈նց հորն էլ թաքավեր ըն տիրա̈լ հու ո̈ւրա̈նք ընդրա ղուլլուղ ըրալ:

Ըստուծանա իրեք խնձո̈ր վեր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն:

## 6.ԽՈՐԹ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին մարթ: Էս մարթըս կնեգյ ա ըրալ: Էս կնեգյս մին վախտ ետ ա ընգալ, մին ախճիգյ պերալ, ետնան մըեռալ: էս մարթըս քյինա̈ցալ ա մին կնեգյ էլ ըրալ: Էլհա էս կնեգյս ետ ա ընգալ, մին ախճիգյ պերալ: Էս էրկու ախճըկերքս մնացալ ըն:

Մին վախտ էս կնեգյը մին կուտանա, մին էլ մին գյիրվանքա պո̈ւրթ, մին էլ մին կով ա տվալ էս խորթ ախճըկանը, թա. «Ըստահանք եր կալ, քյինա̈. էս կուտանան ըսօր կեր, կեր, լեհա̈ ինքյը տեղը. էս պո̈ւրթն էլ մանե, պեր»:

Էս ախճիգյը եր ա կալալ, քյինա̈ցալ ա մին տեղ վեր եկալ, լա̈ց իլա̈լ էս կովն էլ լո̈ւզո̈ւ գյո̈ւղո̈ւմ ա իլա̈լ, ասալ ա. «Պո̈ւրթը ինձ տո, մանիմ, ես էլ քյեզ կաթնը, մածուն կտամ, կօտիս»:

Նա էլ ասալ, ա թա» «Լա̈վ ա»:

Էս կովս պո̈ւրթին ճոնղը քիցա̈լ ա ըռեխը, մին ճոնղն էլ ըռաչի վըռննին, մին ճոնղան մանալ, թիլն էլ ճոնղան ոռավը տո̈ւս ա եկալ, էս ախճիգյս էլ կծկալ ա:

Ետնան ո̈ւրո̈ւգյո̈ւնը քյինա̈ցալ ըն ո̈ւրա̈նց տոն, կուտանան տվալ խորթ մորը:

Ետնան էքյսը էլհա էս ախճըկանը խորթ մարը պերալ ա մին կուտանա, մին էլ մին գյիրվանքա պո̈ւրթ տվալ թա. «Տար էս կուտանան կեր, կեր, լեհա̈ ինքյը տեղը, էս պո̈ւրթն էլ կյիզի, պեր ինձ տո»:

Էս ախճիգյս էր ա կալալ, քյինա̀ցալ։ Հըղըցեն սովածացալ ա, կուտընեն կեսը կերալ ա, քյինա̀ցալ ա մին կտրի յրա նստալ, պո̀ւրթը կյիզա̀լ։ Կյիզելիս տեղը սանդերքը ընգալ ա կտրին տակը։ Էս ախճիգյս քյինա̀ցալ ա տըեսալ կտրին տակեն մին պառավ կնեգյ նստած։

Ասալ ա. «Նա՛նի, նա՛նի, մին սանդերքս ինձ տո»։

Նա էլ ասալ ա. «Նանը քը մատաղ, մին եկ ըստեղ»։

Ախճիգյը քյինացալ ա, տըեսալ հո̀ւչո̀ւլ ըղանձա̀ծ, օտելիս։

Էս պառավս ասալ ա. «Նանը քը մատաղ մին կլո̀խս քթվե»։ Ախճիգյը քյինա̀ցալ ա, տըեսալ կլո̀խը որթնավ լիգյը։

Ասալ ա. «Նա՛նի, կիլո̀խտ հունց թա̀մո̀ւզ ա»։

Պառավն ասալ ա. «Նանը քը մատաղ, մին քյինա̀ էն կարասին եշի, տես մեչին հի՞նչ կա։

Ախճիգյը քյինա̀ցալ ա, տըեսալ կյոռթնուկ, մոկնը, ոռթնը մեչը լիգյը։ Ասալ ա. «Նանի, հի՞նչ լա̀վ հոտ ա կյամ»։ Ետնան ասալ ա. «Նանի, ծարավ ըմ»։

Պառավը ասալ ա. «Քյինա̀ հենա մին սիպտակ ծով կա, մին էլ սև ծով կա. քյինա̀ սիպտակ ծովիցը խմե, հա՛, սևիցը չխմիս»։

Էն ախճիգյը ասալ ա, «Լա̀վ ա»։

Քյինա̀ցալ ա սիպտակ ծովիցը խմալ, սիպտկացալ ա, հանց տըեռալ ճըրա̀քյ, հու մին լո̀ւսինգյա̀ էլ ճկատան կացալ։ Ետնան քյինա̀ցալ ա ո̀ւրա̀նց տոն, ընդեղ մա̀թ ըն մնացալ, թա էս հունց ը՞րավ, վըեր սիպտակից։ Կուտընեն կեսը տվալ ա մորը, նա էլ խոսացալ չի։

Ետնան էքյսը էս կնեգյը պերալ ա ո̀ւրա̀ն ախճըկանը մին կուտանա, մին էլ մին գյիրվանքա պո̀ւրթ տվալ, թա. «Կուտանան տար կեր, պո̀ւրթն էլ կյիզի, պեր»։

Էս ախճիգյս էր ա կալալ, քյինա̀ցալ։ Քյինա̀ցալ ա էլհա էն կտրին նստալ, կյիզա̀լ։ Կյիզիլիս տեղը սանդերքը վերա ա ընգալ, կտրին տա կին էլհա եշալ ա, տըեսալ մին պառավ ընդեղ նստած։ Էն ախճիգյը ասալ ա. «Քավթառ, մին սանդերքը ինձ տո է՛»։

Նա էլ ասալ ա. «Քավթառը քը մա՛տաղ, մին եկ ըստեղ»։

Ախճիգյը քյինա̀ցալ ա, տըեսալ հո̀ւչո̀ւլ ըղանձած օտելիս։ Ասալ ա. «Ա քա՛վթառ, ա իմանըզ, հո̀ւչո̀ւլ ըս օտում»։

Պառավն էլ ասալ ա. «Քավթառը քը մատաղ, մին եկ կլո̀խս քթվի»։

Քյինա̀ցալ ա թա քթվի, տեսալ ա սաղ կլոխը ոռթնած, էլհա ո̀ւշո̀ւնց ա

տվալ. «Քավթառ, խե ը՞ս կլի՞խղ ըտհենց պահում, խե չը՞ս թա՛մի՛ւզ պահում»:

Պառավը ասալ ա. «Քավթառը քը մատաղ, մին քյինա՛ էն կարասին եշի, տես հի՞նչ կա մեչըին»:

Ախճիգյը քյինա՛ցալ ա, տըեսալ կարասի մեչը հոտած զըտերավ լիգյը: Եկալ ա ասալ, «Քու կլխեղ քար ընգնե, խե ը՞ս կարասը նհենց պահում»: Ետնան ասալ ա. «Քավթառ, ծարավ ըմ, ճի՛ւր տո խմիմ»:

«Քավթառը քը մատաղ, - ասալ ա պառավը,-քյինա՛ հենա մին սև ծով կա, մին էլ մին սիպտակ: Սիպտակիցը խմիս ոչ, հա՜, սևիցը խմես»:

Էս ախճիգյս քյինա՛ցալ ա սևան խմալ: Վեր խմալ ա, էն սհաթը սվացալ ա, մին էլ մին էշու քանթալ ճկատան կախ ա իլա՛լ: Էս ախճիգյս քյինա՛ցալ ա ի՛ւրա՛նց տոն: Ի՛ւրա՛ն մարը եկալ ա տըեսալ էշու քանթալը ճկատան կախ, մնացալ ա սուս կացած: Ետնան մարը իրցրալ ա, ախճիգյը էն պառավեն նաղլը ընդրան արալ ա:

Ըստուծանա իրեք խնձի՛ր վեր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն:

## 7.ԿԻ՛ՒՅԼ ՏԵՌԱԾ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին մարթ, մին էլ մին կնեգյ: Ըստրանց էլ իլա՛լ ա՛ մին տղա, մին էլ մին ծեծ ուտող ախճիգյ: Մին վախտ հաց թխում ըն իլա՛լ. էս տղաս էլ պի՛ւլերը օթախիցը տանում ա իլա՛լ, վըեր թխին: Մին հետ էլ էս տղաս պի՛ւլը օթախիցը տանելու վախտը տըեսալ ա, վըեր ի՛ւրա՛ն քուրը կոնեն վըեննեն կապանը կերավ: Վազ ա տըվալ, եկալ ի՛ւրա՛ն մորը ասալ, «Ա՜յան, էն պիծի ախճիգյը միհեգյիս կապաննեն կերավ»:

Մարն էլ ասալ ա տղեն. «Վի՜, աչքերդ քուռանա, էն պիծի խոխան կապանը հունց կոտե»:

Մին հետ էլ օթախիցը պի՛ւլերը տանելու վախտը տըեսալ ա՝ լոխ պի՛ւլերը կերալ ա հու ըսկսալ ա կարպետննեն էլ օտել, վազ ա տըվալ մորն ասալ, «Ա՜յան, էն խոխան պի՛ւլերը կերալ ա, էլ պի՛ւլ չի կա»:

Մարը հվատացալ չի: Էս տղան ի՛ւրթի՛ւմն ա կերալ, ճաք-ճաք ա եկալ, թա. «Եկեքյ փախչինքյ, կիկյա մեզ էլ կոտե»:

Մարը եկալ չի: Էս տղան ինքյը փախալ ա, քյինա՛ցալ: Էս պիծի ախճիգյը եկալ ա մորը, հացթոխեն, խմոր հունցողեն կերալ հու սաղ հացերն էլ կերալ: Եննան ընգալ ա սաղ շըհա՛րը, լոխ կերալ: Մինակ մին դա՛մի՛ւրչի, մին բաղ-

մանչի, մին զա̀րգյա̀ր, մին դա̀րգի հու մին օրիշ փեշակա, հինչ վըեր ո̀ւրա̀ն պետքն ա եկալ, նահանցից մին-մին պահալ ա:

Էս փախչող տղան քյինա̀ցալ ա մին սարի կոշտ, ընդեղ տըեսալ ա, վըեր էն սարը բիրդա̀ն պեցվավ, հու մաչան մին սո̀ւրո̀ւ էծեր տո̀ւս եկեն քյինա̀ցին ըրածեցին: Էս տղան մնացալ ա մա̀թ մնացած: Ընդեղ չուրու ո̀ւրո̀ւզյո̀ւնը կացալ ա, տըեսալ, վըեր էն էծերը կյամ ըն, ինքյն էլ քյինա̀ցալ ա սո̀ւրո̀ւեն նհետ ընգալ, քյինա̀ցալ էն սարի կոշտը: Սարը բիրդա̀ն ճղվալ ա, հու էն էծերը նի ըն տեռալ, ինքյն էլ նհետնեն քյինա̀ցալ ա մաչը հու եննան լոխ էծերը վըեր նի ըն տըեռալ, բիրդա̀ն սարը ղփըլվալ ա: Եննան էս տղաս քյինա̀ցալ ա էծերին նհետ տըեսալ, վըեր ընդեղ մին քոռ կնեգյ, մին էլ մին քոռ մարթ: Էս տղաս վըեր տըեսալ ա, մին տեղ կյողլ ա կացալ: Էնդեղան տըեսալ ա, վըեր էն մարթն ու կնեգյը էծերը կթեցեն կյեվաթումը, տիրին առաչներեն, հացավ կերեն, ինքյն էլ քյինա̀ցալ ա քշտըներին նստալ, հաց կերալ: Էս մարթն ու կնեգյը տըեսալ ըն, վըեր կաթնը շո̀ւտ կլխեց, մնացալ ըն մաթ մնացած:

Սհենց մին քանե օր ըստրանց նհետ հաց ա կերալ: Ախրը մին դո̀նո̀ւմ էս տղան էս մարթին հու կնգանը նհետ հաց օտելու վախտը էս տղաս թիքյան օզացալ ա թա եր օնե, բիրդա̀ն էս պառավըս ծեռքը թափ ա տըվալ հու էս տղիս ծեռքեն վեր նի ա եկալ, բիրդա̀ն ծեռքան փռնալ ա:

Եննան էս տղիցը հըցրալ ա. «Տու հուվ ը՞ս»: Էն տղան էլ ասալ ա, «Ես մին եթիմ տղա ըմ, եկալ ըմ ըստեղ»: Էս կնեգյս էս տղես ասալ ա. «Հա̀ր, մար չօնի՞ս, վեր եթիմ ըս»:

Էս տղաս էլ ո̀ւրա̀ն կլխին եկած պեները նաղլ ա ըրալ:

Էս կնեգյն ու մարթը ասալ ըն, թա. «Դե վըեր տհենց ա, լա̀վ ա, տու մեր տղան, մուեք էլ քու ծնողը»: Էս տղան էլ ասալ ա. «Դե լա̀վ ա»:

Եննան էս պառավն ու մարթը ասալ ըն, թա. «Ըտեղ մին ծո̀ր կա, քյինա̀սվեչ ընդեղ:

Էս տղաս ասալ ա. «Լա̀վ ա»:

Մին քանի օր անց ա կացալ, էս տղաս էս ծո̀րը տըեսալ ա, ասալ ա թա. «Քյինամ տըեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չի կա»:

Եննա̀ն քյինա̀ցալ ա էն ծո̀րավը, տըեսալ, վըեր էն ա մին տոն կա: Քյինա̀-ցալ ա դարվազավը նի մտալ, տըեսալ, վըեր սըտանեքյը հրսանեքյ ըն անում, տռանն էլ մին կյերա̀ն ըն ճրղոտում, քյինա̀ցալ ա քըշտներեն կաղնալ,

տըեսալ ա, կարում չըն ճղին: էս կյերա̀ն ճղող սատանան վըեր տըեսալ ա էս տղես, կացենը տըվալ ա, ասալ թա. «Ինքյ կալ մին էս կյերա̀նս ճղե, ես կարում չըմ ճղիմ»:

Էս տղաս էլ ինքյ ա կալալ կացենը: Եննան կացնավը կյերա̀ննեն մին հետ թխալ աւ կյերա̀նը մին պատառ ճղվալ ա, կացենը թողալ ա կյերա̀ննեն մաչին, քյինա̀ցալ լոխ սըտանոցը ասալ. «Եկեքյ ծեռքնետ սեպ տըվեքյ, վըեր կյերանը ճղվե»:

Եննան լոխ սըտանեքյը եկալ ըն ճոխտ ծեռքնեն տիրա̀լ էն պատառ ճղած տեղը, մինակ աշպազն ա մնացալ:

Աշպազեն ասալ ա, «Տու էլ եկ» էն աշպազն ասալ ա. «Ես կարալ չըմ, պենս թայդի ա»:

Եննան էս տղաս եկալ ա էն սըտանոցը ասալ, վըեր ծեռքնեն տիրա̀լ ըն կյերա̀ննեն ղաթումը, թա. «Ծեռքնետ պենդ-պենդ կոխեցեքյ հա՛, վըեր կյերանը ճղվե»:

Սըտանեքյն էլ լոխ պենդ-պենդ կոխալ ըն: Եննան էս տղաս կացենը կյերա̀նիցը տո̀ւս ա կալալ, կյերանը եկալ ա մո̀ւն-մինու եկալ հու էս սըտանոցը ծեռքնեն մնացալ ա կյերա̀ննեն ղաթումը:

Էս սըտանեքյը ծվծվացալ ըն, թա. «Վա՛յ ծեռքնես»: Էս տղան մտեգյ չըրալ, լոխճունց կացնավ ըսպնոտալ ա:

Քյինա̀ցալ ա, թա աշպազեն էլ ըսպանե, աշպազն ասալ ա- «Ինձ ըսպանել մեր, ես քու հորը, մորը աչկերին տեղը կասիմ»:

Էս տղան ասալ ա, թա. «Դե ա՛ սե»:

Էս աշպազն ասալ ա. «էն ա էն դոլաբումը, քյինա̀ եր կալ»:

Էս տղան քյինա̀ցալ ա եր կալալ, աշպազեն ասալ ա, «էս հունց ա̑նիմ իմ հորը-մորը, վըեր սըղանա»:

Էս աշպազն ասալ ա. «էն դոլաբումը մին յալլուխ կա, եր կալ, վըեր աչկերը տինես ո̀ւրա̀ն տեղը հու էդ յալլուխը վեր քիսես, կողանա»:

Եննան էս տղաս սըտանեն էլ ըսպանալ չի, մինակ էն աչքերն ու յալլուխը եր ա կալալ, տարալ. աչքերը սաղ-սալամաթ աչկեր ըն տըեռալ:

Էս տղաս մին հետ մին ծո̀րա̀վ քյինա̀լո̀ւ վախտը տըեսալ ա,. վըեր մին հանց մեծ ծվվոց ա կյամ, վըեր սա̀սը ա̀սմա̀նն ա եր ինո̀ւմ: Էս սա̀սեն յրա̀ քյինա̀ցալ ա, տըեսալ մին ասլան ցավում ա. վըեր հանցու ճոտը պիրի: Էս տղաս վըեր տըեսալ ա ասլանեն, փախալ ա: Էս ասլանն էլ էն տղեն եննան

կանչալ ա, թա. «Փա՛խչիլ մի, ե՛կ»:

Էս տղան-քյինա̈ցալ ա կոշտը: Էս աւլանն էլ էս տղեն ասալ ա. «Տու հինչ ը՞ս»:

Էս տղան էլ ասալ ա. «Ես տատմար ըմ»:

Էս աւլանն էլ ասալ ա. «Դե տու ինձ յրա տատմարութուն ըրա, թա վըեր ճոտերս տո̈ւս կյա̈ն հու ճոխտ ինի, մինը քյեզ, ամմա թա վեր կընդ ինի, ես քյեզ կօտիմ»:

Էս տղան ասալ ա. «Հա՛, լա̈վ ա»:

Մին պատառ վախտան ետը աւլանեն ճոտերը տո̈ւս ըն կյամ, ամմա կընդ ա ինո̈ւմ: Էս տղաս վըեր տեսնում ա կընդ ա, մինը շուտ եր ա օնում կոխում շալվարը: Էս աւլանն էլ տեսնում չի: Եննան էս աւլանը մտեզ ա անում տըեսնում, վըեր ճոխտ ա, մինը տամ ա էն տղեն, մեկալը ինքյը եր օնում: Էս տղաս աւլանեն էրկու ճոտը տանում ա ո̈ւրա̈նց տոն, սվըցնում: Մինին անումը Զա̈նգյո̈ւ ա տինում, մեկելինը՝ Զո̈ւրա̈նգյո̈ւ :

Մին հետ էլ հորն ու մորը ասալ ա. «Ես քյինում ըմ իմ առաչվան հորս ու մորս երգյիրը. «Ա՛յան, ինքյ կալ էս մուտանան, տիր մաննումտ հու էս էրկու աւլանեն ճոտերը, վըեր ըստեղան կապալ ըմ, հու մին կյեվաթ ճո̈ւր էլ տինո̈ւմ ըմ ըռաչներեն: Վըեր վախտ վըեր էն կյեվաթեն ճո̈ւրը պո̈ւրտողի, մուտըննեն ակնըն էլ խըռվարե հու աւլաննեն են զինջիլը ծիքյ-ծիքյ անին, աւլաննեն պեց թողեցեքյ կյա̈ն:

Եննան էս տղաս մին ծի ա եր իլալ, քյինա̈ցալ: Հըղըցեն տկողեն ա կուտ-րատալ, մաչը կերալ հու քչննեն ջա̈րգյիլամա վեր ածալ, եննան էս տկողնեն քչներեն ամեն մինը մեծ չինա̈րու մչանք ծառեր ա տեռալ: Եննան քյինա̈ցալ ա ո̈ւրա̈ն կյո̈ւլ քվորը տանը վեր եկալ:

Քուրը տո̈ւս ա եկալ ախպոր առաչը, ասալ «Բաջին քըմատաղ, պարով ըս եկալ, եկ օթախումը նըստե»:

Էս տղաս քյինա̈ցալ ա տանը նստալ: Եննան, էս տղեն քուրը քյինա̈ցալ ա ծիյին վըեննեն մինը կերալ, եկալ ախպորն ասալ, «Բաջին քըմատաղ, ծիտ իրեք վըննա՞նի եկավ»:

- Հրամանք ըս, - ասալ ա ախպերը:

Եննան քյինա̈ցալ ա մին վըենն էլ կերալ, եկալ էլիա ասալ, «Բաջին քըմատաղ, ծիտ էրկու վըննա՞նի եկավ»:

- Հրամանք ըս, - էլիա ասալ ա ախպերը:

Սհենց քյինա̀ցալ ա սաղ ծին կերալ, եկալ ախպորն ասալ, ախպերն էլ ասալ ա, «Հրամանք ըս»:

Ըննան էս տղեն կյո̀ւլ քուրը ասալ ա, «Բաջին քըմատաղ, ըտեղ կաց, ես քյինամ մեր հրևանիցը իրեք հաց փոխ օնիմ, կյամ»:

- Լավ ա, - ասալ ա ախպերը:

Էս ախճիգյը վեր քյինա̀ցալ ա, մին վերցակ եկալ ա էն տղեն ասալ, «Բա՛-լամ, քու քուր քյինա̀ցալ ա կըռքընեն սրել տա, կյա̀ քե օտե, փախե քյինա̀»:

Էս տղաս վըեր ըսկացալ ա, փախալ ա քյինա̀ցալ: Էն տկողենը վըեր կերալ ա հու ընդեղ տկողնե ծառեր ա փսալ. քյինա̀ցալ ա նահանցից մինը եր իլալ: Էս ախճիգյը ման ա եկալ էն տղեն հետան, եկալ ա տըեսալ էն տկողնե ծառեն յրա: էս ախճիգյը էն ծառը կրծկրծորալ ա, առռե մին մազ ա մնացալ, թա կոտըրվե, էս տղան լըք ա տըվալ, ինգյա̀լ էն մին ծառը: Էս ախճիգյը էն մինն էլ ա կրծկործալ, էլհա առռե մին մազ ա մնացալ, էս տը դան լըք ա տըվալ, ինգյա̀լ էն մին ծառը: Սհենց լոխ ծառը կրծկործալ ա, առռե էն վեռչի ծառն ա մնացալ, թա կրծկործի, էս տղաս ասալ ա. «Զա̀նգյո̀ւ- Զո̀ւրա̀նգյո̀ւ, հիշտեղ վըեր ըք, հոփ տըվեքյ, կոլ տըվեքյ, մին տոպ ա̀րո̀ւն չի կա̀թի»:

Էն սհաթը մորը մաններ մուտըռնեն ակնը խըվարվալ ա հու ասլաններ քշտին ճո̀ւրը պո̀ւրտողվալ: Էս տղեն հա̀րն ու մա̀րը ասլաններեն պեց ըն թողալ, էն սհաթը եկալ ըն հսալ էն տղեն կօշտը:

Էս տղան Զա̀նգյո̀ւ- Զո̀ւրա̀նգյո̀ւլին ասալ ա. «Հոփ տըվեքյ, կոլ տըվեքյ, մին տոպ ա̀րուն չի կա թի» :

Էս ախճիգյը ըղալանք ա ըրալ, տղան մտեգյ չի ըրալ, հրամայալ ա, վըեր օտին: Էս ասլաններ հոփ ըն տըվալ, կոլ տըվալ, ամա մին տոպ ա̀րո̀ւն ա̀ կա̀թա̀լ մին տիրնու յրա: Էս տղաս վեր ա եկալ ա̀րո̀ւնը տիրնումը պտատալ, կոխալ փափախեն դաթը:

Ըննան ասլաններ մին հըղցավ տանելու վախտը մին քյարվան ա պըտա-հել. էս քյարվաներ տարը եկալ ա էս տղիցս հրցրալ. «Ա՛ տղա, քյեզ մին պեն հրցնիմ, թա վըեր գյիդացեր, էս սաղ քյարվանս քյեզ. ամմա թա վըեր գյիդաս վըեչ, էդ երկու ասլաներ ճոտերը ինձ»:

Էս տղաս էլ հավան ա կացալ: Ըննան էս մարթս հըցրալ ա, «Ծեռքենս հինչ փա՞ դ ա»:

Էս տղաս էլ աշխարքումս հինչ ծառու անում ա իլա̀լ, լոխ ասալ ա, ճապկի ծառն ա մնացալ թա ասե, էն էլ մննան ինգյա̀լ ա: Ըննան էս քյարվաներ տարը

էս էրկու ալանեն ճոտերը ինքյ ա կալալ, քյինացալ մին խիլլա տեղ: Էն սհաթեն մի տոպ արոնը բիրդան փափախիցը տոլս ա էկալ, ծետ տեռալ, քյինացալ ծառեն էրա կաղնալ, ասալ. «Ճապկի ճպատ, թպղլի, ճապկի ճպատ, թպղլի»:

Էս տղան էս վըեր ըսկացալ ա, վազ ա տըվալ քյարվանեն տերուչը կոշտը, ասալ. «էդ փաղը ճապկի ճպատ թպղլի ա»:

Էն քյարվանեն տարը ասալ ա. «Հա՛, գյիդացեր»:

Ըննան էս տղաս էն մարթին հինչու ապրանք ա իլալ, լոխ էր ա կալալ, ալանեն ճոտերը ետ առալ, էր կացալ ինգյալ հղե: Եկալ ա, եկալ, հասալ ա ոլրանց սարը: Հարը, մարը սրան վըեր տըեսալ ըն, ուրախացալ, ըշխարքավ մին ըն իլալ:

Ըստուծանա իրեք խնձոր վեր ինգյնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չըլսողեն:

8.ՄԸԵՌԱԼԻՆ ՀՈՐ ԱԽՃԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին մարթ, մին կնեգյ: Սահանց էլ իլալ ա օխտը տղա, մին ախճիգյ: Էտ հարը, մարը, ախպերքը էտ ախճկանը շատ օզում ըն իլալ: Ընտրանց մահլին ախճկեքյը ասալ ըն. «Ա՛խճի, եկ քյինանք ջոլրը»: Ասալ ա. «Կացիր քյինանք ի մոր ասիմ, ետնան»: Քյինացալ ա ասալ. «Ա՛յան, քյինամ ջոլրը»: Մարն ասալ ա. «Քմատաղ, քյինալ միր»: Ասալ ա. «Քյինալու վըմ»: Մարն ասալ ա. «Լավ, տե որ քյինամ ըս, կոլան էր կալ, քյինա»: Նա էլ կոլան էր ա կալալ, քյինալիս վախտը մին ակռավ եկալ ա ըղաքին կոկռացալ: Էս ախճիգյը քյինացալ ա, մին էլ կյալիս ա եկալ ըղաքին կոկռացալ: Մին էլ էքյան ա քյինացալ, էլիա եկալ ա ըղաքին կոկռացալ: Էս ախճիգյը մին էլ կյալիս ա եկալ ըղաքին կոկռացալ: Իրեք հետ եկալ ա ըղաքին կոկռացալ: Էս ախճիգյը եկալ ա մորն ասալ, թա. «Ա՛յան, ամման քյինալիս վախտը մին ակռավ կյամ ա ըղաքիս կոկռամ»: Մարն էլ ասալ ա. «Քյինա, վըեր մին էլ կյա, ասի՝ Չալ-չալ աչքերիտ մատաղ, տեղեն վըններիտ, հինչ ը՞ս ասում»: Էս ախճիգյը քյինացալ ա, էլիա էս ակռավը եկալ ա ըղաքին կոկռացալ: Էս ասալ ա. «Չալ-չալ աչքերիտ մատաղ, տեղեն վըններիտ, հինչ ըս ասում»: Ակռավն էլ ասալ ա. «Ընտըհենցու քյինա, հենա մին արկաթի տարվազա կա, ընդեղ էլ մին մըեռալ: Էն մըեռալը օխտը օր օխտը քշեր լըըցըրու»:

Ետնան էս ախճիգյը քյինացալ ա ոլրան մորն ասալ, թա. «Այան, ըսեցի,

ասից՝ թա ընտրիենցու քյինա՛, ընդեղ հեն ա մին արկաթի տարվազա կա, ընդեղ էլ մին մըեռալ, էն մըեռալը օխտը օր օխտը քշեր լղըցըրու»: Ետնան էս հա՛րը, մարը, ախպերքը էս ախճիկանը եր ըն կալալ, քյինա՛ցալ տըեսալ մին արկաթի տարվազա: Բիրտան էս արկաթի տարվազան պա՛ցվալ ա, էս ախճիգյը ինկյալ ա մեչը, մին էլ քլըրվալ ա: Ետնան էս հա՛րը, մա՛րը, ախպերքը մնացալ ըն տարվազին քմակին: Ետնան էս հա՛րը, մարը, ախպերքը էս տարվազին քմակին ընչանք շատ լա՛ց ըն իլա՛լ, ախըր եկալ ըն ո՛ւրա՛նց տոն: Ո՛ւրա՛նց տանն էլ ընչանք լա՛ց ըն իլա՛լ, վըեր աչքնեն քոռացալ ա:

Ետնան էս ախճիգյը քյինա՛ցալ ա, քյինա՛ցալ, տըեսալ մին ամարաթ: Նի յա մտալ ընդեղ, մին օթաղը պա՛ցալ, տըեսալ վըեսկավ լիգյը, մինն էլ պա՛ցալ ա, տըեսալ մին մըեռալ, թեշտըն էլ յրան փրըրվեր տիրա՛ծ: Ետնան էս ախճիգյը էս մըեռալին վեց օր վեց քշեր լղըցըրալ ա, մին օր մին քշերն ա մնացալ, թա պրծընի, տո՛ւս ա եկալ, տըեսալ մին քաչալ ախճիգյ ընտեղ փիրփետ քաղելիս: Ասալ ա. «Ա՛խճի, կիկյա՞ս մին մըեռալ կա, մին օր մին քշեր էլ լըղըցնինքյ: էս ախճիգյն ասալ ա. «Կըկյամ»: Ետնան էս ախճիգյը քյինա՛ցալ ա, մին օր մին քշեր էլ լղըցըրալ ըն, էս մըեռալը սըղացալ ա: Էս ախճիգյը հմանչելիցը քյինա՛ցալ ա մին հեռու տեղ կաղնալ, ամմա էս քաչալ ախճիգյն ա, վըեր քշտին կաղնալ ա, թա ես ըմ քյեզ օխտը օր օխտը քշեր լղըցըրալ, սըղացալ ըս, ես քու կնեգյըտ ըմ տա՛ռնալու»: Ետնան էս մարթն ասալ ա. «Բա էն ախճիգյը հուվա՞»: Էս քաչալ ախճիգյն ասալ ա. «Իսկի հու, մին ախճիգյ ա ընդեղ կաղնալ ա»: Ետնան էս տղան էս ախճկանը ո՛ւրա՛ն յրա օխտը օր օխտը քշեր հրսանիք ա ըրալ, ո՛ւրա՛ն կնեգյը շինա՛լ:

Մին վախտ էս մարթն ասալ ա ես քյինամ ըմ օրիշ տեղ, հինչ ը՞ս օզում պերեմ: Ասալ ա. «Հալավ պեր, լա՛վ զատեր պեր»: Էս մարթն ասալ ա. «Քյինա՛ էն ախճկանն էլ ասի, թա՝ հինչ ը՞ս օզում»: Էս քաչալ ախճիգյն ասալ ա. «Նա էլ իմ ցավըս քաղի»: Էս մարթս ասալ ա. «Լա՛վ ա, քյինա՛ ասի»: Էս քաչալ ախճիգյը քյինա՛ցալ ա, ասալ ա. «Ցավըս քաղես, մարթս քյինամ ա օրիշ տեղ, հինչ ը՞ս օզում պերի»: Էս ախճիգյն ասալ ա. «Զատ չըմ օզում»: Էս քաչալ ախճիգյը քյինա՛ցալ ա թա՛ զատ չի օզում: Մին էլ ղըրկալ ա, էլիա զատ չի օզացալ: Մին էլ ա ղըրկալ, ասալ ա ասի մին շիանոռնը պերի, մին չախկու, մին բուրըընտիկին: Էս քաչալ ախճիգյը քյինա՛ցալ ա ասալ, մարթն ասալ ա. «Քյինա՛ ասի՝ լա՛վ զատ օզի»: Քյինա՛ցալ ա ասալ, ասալ ա. «էտ ըմ օզում»: Ետնան էս մարթը քյինա՛ցալ ա, վըեր եկալ ա, էս քաչալ ախճկանը մըհար

լա̈վ-լա̈վ շորեր ա պերալ, ամմա էն մին ախճկանը մըհար մին շհանոռնը, մին չախկու, մին բուրընտիկին ա պերալ, տըվա̈լ էս ախճկանը: Էս ախճիգյն էլ նի յա մտալ մին օթաղ, էս պուրունտիկինը, զատերը տիրա̈լ մին դուբուռ, բուրընտիկինը կղնցըրալ, չախկուն տիրալ մին դոլին, շհանոռնը մին դոլին:

Էս մարթը էն զատերը տալիցը ետնան եկալ ա տռնիցը եշալ, թա տեսնա էն հի՞նչ ա անում: Ետնան էս ախճիգյն ասալ ա, «Ա՛ չախկու, տու՛ վկա, ա՛ բուրընտիկին, տո՛ւ խաղա, ա՛ շհանոռնը, թա ե՛ս սոտ ասեմ, ես ճաքեմ, թա դորթ ասեմ, տո՛ւ ճաքի»: Ետնան էլ ասալ ա. «Բա ես օխտը ախպոր քուր ինեմ, քյինա̈մ ջո̈ւրը, ակռավ կյա̈ ըղաքիս կռկռա , քյինա̈մ ի մոր ասեմ, ի մար ասի, թա՝ քյինա̈ ասի. «Չալ-չալ աչքերիտ մատաղ, տեղեն վըններիտ, հինչ ը՞ս աասում»: Ա՛ բուրընտիկին, տո՛ւ խաղա, ա՛ չախկու, տու վկա, ա՛ շհանոռնը, թա ես սոտ ասեմ՝ ե՛ս ճաքեմ, թա դորթ ասեմ՝ տո՛ւ ճաքի: Քյինա̈մ ասեմ, ասի՝ ըտըհենցու քյինա̈, հենա ընդեղ մին արկաթի տարվազա կա, ընդեղ էլ մին մըեռալ, օխտը օր օխտր քշեր լըղցըրու քյինա̈մ ի մոր յոր օնեմ քյինա̈մ, էն արկաթի տարվազան ինքյը-ինքյը պա̈նվա, բիրտան ինկյնեմ մեչը, տոռը քըլլըվի, ա՛ չախկու, տո՛ւ վկա, ա բուրընտիկին, տու խաղա, ա՛ շհանոռնը, թա ես սոտ ասեմ՝ ե՛ս ճաքեմ, թա դորթ ասեմ՝ տո՛ւ ճաքի: Քյինա̈մ տըեսնամ մին մըեռալ վեց օր, վեց քշեր լըղցընեմ, մին օր, մին քշեր մնա, տո̈ւս կյամ տըեսնամ մին քաչալ ախճիգյ ընդեղ փիրփետ քաղելիս, ա՛ չախկու, տո՛ւ վկա, ա՛ բուրընտիկին, տո՛ւ խաղա, ա՛ շհանոռնը, թա ե՛ս սոտ ասեմ՝ ե՛ս ճաքեմ, թա դորթ ասեմ՝ տո՛ւ ճաքի: Կանչեմ կյա քյոմագյ անի, մին օր մին քշեր էլ լըղցըրալ ընք, սըղացալ ա, միենգյ ընտրա կնեգյը նա յա տա̈ռալ, ա՛ չախկու, տո՛ւ վկա, ա՛ բուրընտիկին, տո՛ւ խաղա, ա՛ շհանոռնը, թա ես սոտ ասեմ ե՛ս ճաքեմ, թա դորթ ասեմ՝ տո՛ւ ճաքիս: Էս շհանոռնը ճքճքոտալ ա, էս բուրընտիկինն էլ լոք-լոք ա ըրալ: Էս մարթս, վըեր էս տըեսալ ա, տռանը քացի ա տըվալ, քյինա̈ցալ ասալ. «Ղորթ ա՞, ըտըհենց ա՞»: Էս ախճիգյն ասալ ա. «Բա հինչ ա՞»: Ետնան էս մարթը քյինա̈ցալ ա էն քաչալ ախճկանը ձորուն ոռան կապալ, քաշ-քաշ ըրալ: Ետնան էս ախճկանը ո̈ւրա̈ն յրա օխտը օր, օխտը քշեր հրսանիք ա ըրալ:

Ետնան էս ախճիգյն ասալ ա. «Ես քյինա̈լու վըմ ի մոր, իմ հոր կոշտը»: Ետնան էս ախճիգյն ո̈ւրա̈ն մարթին եր ա կալալ, արկաթի տարվազավը եկալ ո̈ւրա̈նց տոն: Տըեսալ ըն, վըեր ո̈ւրա̈ն հա̈րը, մարը, ախպերքը էնչանք լա̈ց ըն իլա̈լ, վըեր աչքնեն քոռացալ ա: Էս ախճիգյը քյինա̈ցալ ա ոչխարի

աչքեր պերալ, տիրալ մորը, հորը, ախպորցը աչքերին, սըղացալ ըն: Ետնան էս ախճիգյն ան մարթը էս հորը, մորը, ախպորցը եր ըն կալալ, քյինա̀ցալ էն ամարաթը:

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինգյնի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

9.ՕԽՏԸ ԱԽՊՈՐՑ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա չիլա̀լ մին կնեգյ, մին մարթ: Էս կնեգյս օխտը տղա յա պիրալ հալա մին ախճիգյ չիպիրա̀ծ: Էս կնեգյս վըեր ցավում ա իլա̀լ, էս օխտը տղան ասալ ըն՝ այան, մունք քյինոսմ ընք էն թումբին գլխին կաղնենքյ, տու վըեր տղա պիրես փափաղը տիր, մունք գլո̀խ յոր օնենք քյինանք, վըեր ախճիգյ ինի, չըխարակը մանի, վըեր կյանք: Ետնան էս կնեգյը ախճիգյ ա պերալ: Ըստրանց մին դո̀ւշման մարթ ա իլա̀լ, փափաղը տիրալ ա, էս օխտը տղան գլո̀խ ըն եր կալալ, քյինացալ ըն մին ծմակում տոն շինա̀լ, ընդեղ կացալ:

Էս ախճիգյը վըեր մծացալ ա, օրիշ ախճկորցը նըհետ գյո̀ւլբա̀ ընելիս վախտը մինը տ... ա, մեկալնեն ասալ ըն. «Իմ ախպոր քթին»: Էս ախճիգյն ասալ ա. «Հունց անե՞մ, ինձ ախպեր չօնեմ, իմ դա̀յու քթին»: Նահանք էլ ասալ ըն. «Բա՛լամ, քյեզ չի՞ ախպեր օնես, քյեզ օխտը ախպեր ա իլա̀լ, օրիշ տեղ ըն քյինա̀ցալ»: Էս ախճիգյը քյինացալ ա մորն ասալ. «Ա՛յա, ինձ ախպեր չօնե՞մ»: Մարն էլ ասալ ա. «Քյեզ օխտը ախպեր օնես, օրիշ տեղ ըն քյինացալ»: Էս ախճիգյն ասալ ա. «Բա ինձ հու՞ կտանի ընտեղ»: Մին բուլղի եկալ ա, թա. «Հա̀քյո̀ւս զրթարի, քյեզ տանեմ»: Հա̀քյո̀ւն՝ զըրթարալ ըն, տարալ ա ախպորցը կօշտը:

Ետնան մին աղվես եկալ ա տըեսալ բուլղուն հա̀քյո̀ւն զրթարած, ասալ ա. «Բուլղի ախպեր, էտ հա̀քյո̀ւտ էն հույվ ա՞ զրթարալ»: Բուլղին էլ ասալ ա. «Տարալ ըմ տիրալ կյետումը, ըստհենց ա տա̀ռալ»: Էս աղվեսը տարալ ա հա̀քյո̀ւն տիրալ կյետումը , սառալ ա, մնացալ մեչին: Ծիքյ ա տըվալ, ծիքյ, տո̀ւս չի եկալ: Մին էլ վըեր ծիքյ ա տըվալ հա̀քյո̀ւն կտըրվալ ա, մնացալ սառնումը, ըտհենց քյինԱցալ ա: Ետնան էս բուլղիս, վըեր էս ախճկանը տարալ ա, էս ախճիգյը քյինացալ ա ախպորցը տաշտին կյողլու կացալ: Էս տղերքյը աման օր վըերս ըն քյինում իլա̀լ, մին խնձո̀ր ա իլա̀լ, ամաքյը մին դո̀նո̀ւմ ընտրանից պաչում ըն իլա̀լ, քյինում, թա էս էլ մեր քուրն ա, սըհանք վըեր լիհա̀ քյինում ըն իլա̀լ վըերս, էս ախճիգյը եր ա իլա̀լ կենում օթաղը

սրփո՛ւմ, հացը շինում, ամման պա՛ն սարքում, էլլա քյինում կյողլու կենում: Էս ախպերքը վըեր եկալ ըն տըեսալ հացը շինա՛ծ, զատ ըրած, ետնան էքսյը լոխ քյինացալ ըն վըերս: Էս պուճուր ախպերը կյողյլ ա կացալ, տըեսալ վըեր մին ախճիգյ տաշտին տական տո՛ւս եկավ թա քյինա հացը շինի, օթաղը սրփի, էս ախպերը վազ ա տըվալ քյինացալ խտըտալ, ասալ, թա. «տու հո՞ւ վըս»: Նա յէլ ասալ ա. «Ես ծեր քուրն ըմ», հու ո՛ւրա՛նց գլխավը հինչ անցանք վըեր անց կացած ա իլա՛լ, լոխ նաղլ ըն ըրալ, ըտրանից ետը տարալ ա էլլա տիրա՛լ տաշտին տակին: Ետնան ախպերքը եկալ ըն: Վըերս քյինա՛լիս վախտը լոխ էն խնձո՛րին պաչալ ըն, մինակ պիծի ախպերն էլ եկալ ա, թա պաչի, պաչելի տեղ կծալ ա, կերալ: Ախպերքն ասալ ըն ա՛՛դա՛ ոզըտ կոտրի, խե՞ կծեցիր: Էս պուճուր ախպերն էլ ասալ ա. «Ես ծեզ միար մին քուր կըպերեմ»: Սահանք ասալ ըն. «Դե պե՛ր»: Էս պուճուր ախպերը քյինացալ ա տաշտին տական պիրալ: Մին վախտ էս տղերքն ասալ ըն քվորը, թա. «Տու հաց շինի, օթաղը սրփի, մունք էլ քյինում ընք վըերս անենքյ, պերենքյ խրավենքյ, օտենքյ»: Ետնան սահանք քյինացալ ըն: Ետնան էս բուլղիս եկալ ա ըստրանց հերթին պըպըզալ, տըեսալ վըեր էս ախճիգյը օթաղը սիրփելիս տեղը մին չամինչ քիթավ: Էս բուլղիս ասալ ա. « Էտ չամինչը ինձ տոք, վըեր կըթսեմ, կրակըտ կըհանգյի»: Էս ախճիգյն ասալ ա. «Քմատաղ, թողար վըեր մինն էլ քիթենամ, քյեզ կըտամ»: Մինն էլ ա քիթա՛լ, տըվալ չի: Թսալ ա, կրակը հանգյա՛լ ա:

Ետնան էս ախճիգյս քյինացալ ա, քյինացալ, տըեսալ մին ամարաթում ծոխ ա եր ինո՛ւմ: Քյինացալ ա էն ամարաթը նի մտալ, տըեսալ մին կնեգյ նստած օշափին գլո՛խը քթվում ա, օշափն էլ քոն: Ասալ ա. «Քմատաղ, բուլղին եկալ ա թսալ, կրակը հանգյա՛լ ա, մին պատառ կրակ տոք»: Էս կնեգյն ասալ ա. «Քյինա՛, օշափը եր կըլկենա քյեզ օտի»: Էս ախճիգյն էլ ասալ ա. «Քմատաղ, տոք: Էս կնեգյն ասալ ա. «Քյինա՛, հեն ա ընդեղ կրակ կա, համ էն կրակը եր կալ, համ էլ հեն ա ընդեղ մին փեշկ սըխտոր կա, վեր ըծիլավ տար մինչև ծեր տոն»:

Էս ախճիգյը քյինացալ ա համ կրակը եր կալալ, համ սըխտորը, մինչև ո՛ւրա՛նց տոն վեր ըծիլավ տարալ ա հու կրակն էլ տարալ ա կրակ ըրալ: Ետնան էս օշափը եր ա կացալ կնգանն ասալ, թա. «էս հի՞նչ մրթավետ ա»: Էս կնեգյն ասալ ա. «Իսկի հինչ»: Օշափն ասալ ա. «Ասի, վըեր քյեզ կոտեմ»: Էս կնեգյն ասալ ա, թա. «Մին ախճիգյ եկավ, թա՝ բուլղին թսալ ա, կրակըս

հանգյա̀լ ա, պատառ կրակ տոք. կրակը տվի հու մին փեշկ սըխտոր, հու ասեցի՛ ինքյ կալ էս սըխտորը, մեր դարվազիցն էլ մինչև ծեր տոն վեր ըծելավ տար»:

Էս օշափը եր ա կացալ էս սըխտորը վիաքելավ քյինացալ ընտրանց տոռնը, ասալ. «Ախճի՛, տոռնը պա̀ց, քու ախպեր քյեզ միար մին մտանի ա ղրկալ, տինեմ մաննումտ»: Պա̀ցալ չի: Էս օշափը ասալ ա. «Մաննտ տռնին ճեխկավը կոխի, տինեմ մաննումտ»: Մաննը տռնին ճեխկավը կոխալ ա, էս օշափը ծծալ ա, ծծալ, էս ախճիգյը ըշտափալ ա: Ետնան էս օշափը քյինացալ ա ո̀ւրա̀նց տոն: Ետնան էս ախճկանը ախպերքը եկալ ըն տոռնը թակալ, թակալ, պացալ չի: Քյինացալ ըն հերթավը պուճուր ախպորը կախ տըվալ, քյինացալ ա տոռնը պա̀ցալ, տըեսալ ըն ո̀ւրա̀նց քուրը ըշտափած: Ճո̀ւր ըն ածալ յրան, եր ա կացալ: Հրցրալ ըն թա՝ էտ հինչ ա՞, ասալ ա. «Օշափը եկավ, թա՛ քու ախպեր քյեզ հետի մին մտանի յա ղրկալ, տոռնը պա̀ց, տինեմ մաննումըտ: Պացի ոչ. ասեց՝ դե մաննտ տռնին ճեխկավը կոխի, տինեմ մաննումտ: Կոխեցի, ծծեց, ըշտափեցի:

Էս ախպերքը ո̀ւրա̀նց տռանը մին հոր ըն կտրալ, յրա̀վը կարպետ քիցալ: Ետնան չարխի ղըզղաննեն տիրա̀լ կրակին յրա, մեչը ճո̀ւր ածալ, իփ տըվալ: Ետնան մեծ ախպերը ղրկալ ըն, թա. «Քյինա̀ ասի՝ օշափ ախպեր, ըսօր եկ մեր տոն»: Քյինացալ ա ասալ: Ասալ ա. «Շնորհակալ ըմ»: Մեչնակն ըն ղրկալ, ասալ ա. «Շնորհակալ ըմ»: Պուճուրն ըն ղրկալ, եկալ ա: Սահանք ասալ ըն. «Օշափ ախպեր, ընտեղ նստի»: Օշափն էլ նստալ ա: Վըեր էն ղըզղանեն կրակին յրա տիրա̀ծ ա իլա̀լ, գյիդացալ ա թա խորագյ ա: Սահանք ասալ ըն. «Օշափ ախպեր, պատառ տեն նստի»: Օզացալ ա տեն նստի, բիրդան ինկյա̀լ ա հորը: Հորը քարեր-զատեր ըն ածալ հու էն իփ եկած ճրերը լցալ հորը: Ետնան էս օխտը ախպերքը ո̀ւրա̀նց քըվորըն ասալ ըն, «էս հորին յրա ճո̀ւր չի ածես, վըեր ածես, լա̀վ կնանչի կըփսնի, կօտենքյ, խոզ կտա̀ռնանք»:

Մին վախտ շիլ ա ինկյա̀լ էս ախճիգյը, յրան ճո̀ւր ա ածալ, կնանչի ա փսալ, քաղալ ա տարալ ածալ ճաշին մեչը, ո̀ւրո̀ւլգյո̀ւնը ախպերքը կերալ ըն, քոն իլա̀լ: Ետնան էքսյը եր չըն կացալ: Եկալ ա քյըսօր տա̀ռռալ, հա̀լա̀ եր կացած ոչ: Պուճուր ախպորը յորղանը եր ա կալալ, տըեսալ խոզ տա̀ռռած: Լոխչին յորղանն էլ եր ա կալալ, տըեսալ խոզ տա̀ռռած: Էս ախճիգյըս լա̀ց ա իլա̀լ, լա̀ց, մին հաց եր կալալ, էս խոզերն էլ ըրալ աղաքը, տարալ ածալ ծովը, ծովին քշտին էլ մին չինա̀րի ա իլա̀լ, էս ախճիգյն ասալ ա. «Ա՛ չինա̀րի, քշաց՝

քշանամ, քշագ՝ քշանամ»։ Քշացալ ա, եր ա իլա̀լ։ Մին էլ ասալ ա. «Չինարի՛, պըցրա̀գ՝ պըցրա̀նամ»։ Պըցրա̀ցալ ա, էս ախճկանը շոխկն էլ ինկյա̀լ ա ծովին յրա։

Ետնան աման վախտ էս թաքավերին ծիյանքը պերում ըն իլալ թա ճո̀ւր տան, խմում չըն իլալ, խըրթնում ըն իլալ։ Մին վախտ էս ծիյանքը խե յըն լղարալ։ Գյա̀ղեքըն էլ ասալ ըն. «Տանում ընք թա ճո̀ւր տանք, խրթնում ըն իլա̀լ,խմում չըն իլա̀լ»։ Էս թաքավերն ասալ ա. «Մին ծովը պտըռեցէք տըեսեք մեչին զատ կա՞»։ Պըտռալ ըն, տըեսալ մեչը մին խոզ։ Տո̀ւս ըն կալալ, էլլա խմալ չըն խրթնալ ըն։ Տըեսալ ըն, վըեր հեն ա մին շոխկ կա ինկյա̀ծ ծովին յրա. եշալ ըն, տըեսալ մին ախճիգյ չինա̀րո̀ւն յրա նստած։Քյինացալ ըն թաքավերին ասալ, թաքավերն էլ մին պառավ կնկան ասալ ա. «Թա տու վըեր էն ախճիգյը ընտեղան վեր պիրես, հինչ օզես կըտամ»։

Մարթիքյր կյողլու կըցնիլ ա տըվալ էս պառավ կնեգյը, ինքյը ընդեղ կրակ ըրալ, ղզղանը ճո̀ւր ա լցալ, պիրա̀լ փրըըվեր տիրա̀լ կրակին յրա, հա̀նգյա̀լ ա։ Էս ախճիգյն ասալ ա, «Ա՛ բաջի, ըտըհենց մի տինիլ է՛, դո̀ւզ տիր»։ Էլհա էս պառավը կրակ ա ըրալ, ղզղանը տարալ ճըրավ լցալ, պիրալ էլհա փրըըվեր տիրալ կրակին յրա, հա̀նգյա̀լ ա։ Էլհա էս ախճիգյն ասալ ա. «Ա՛ բաջի, ըտըհենց մի անիլ է՛, ըտըհենց դո̀ւզ տիր»։ Էս պառավը եր ա կալալ ղզղանը կոխկին ա տիրա̀լ, թա. «Ըտըհենց կտինե՞ն»։ Թա՝ չէ։ Եր ա կալա փրըըվեր տիրա̀լ. թա. «Ըստհենց կտինե՞ն»։ Ասալ ա՝ չէ՛։

Էս պառավն ասալ ա. «Դե տո̀ւ եկ, մին տիր, տըեսնամ հունց ըս տինում»։ Վեր ա եկալ, թա տինի, փռնոտալ ըն տարալ թաքավերին կոշտը։ Թաքավերն ասալ ա. «Տու հինչ իլլիմիլա̀թ ըս, վըեր իմ ձիյանցս խըրթնըցնում ըս»։ Նա յէլ ո̀ւրա̀ն գլխավը եկած պա̀ները նաղլ ա ըրալ։ Ետնան էս թաքավերըս էս ախճկանը յրա օխտըն օր, օխտըն քշեր հըսանիք ա ըրալ, տարալ։

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինգյնի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին։

10.ՄԻՍԻԿ-ՄԻՍԻԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին թաքավեր։ Էս թաքավերիս իլա̈լ ա̈ իրեք ախճիգյ։ Էս ախճըկերքը վըեր չափահաս ըն տա̈ռալ, մին օշափ եկալ ա մեծ ախճիգյն օզալ, տարալ։ Էս օշափը տանը մին աման բոզբաշ ա տըվալ կնզանը, ասալ թա. «Տու էտ ինքալ կեր, ես քյինում ըմ մին օրան վա̈ղի օրիշ տեղ»։ Ետնան քյինացալ ա։ Էս ախճիգյն ասալ ա ինքյը-ինքյը. «Ես թաքավերի ախճիգյ ինեմ, բոզբաշ օտե՞մ»։ Կերալ չի, ածալ ա տռնատակը։ Ետնան օշափը հրցրալ ա, թա. «Բոզբաշը կերի՞ր»։ Ասալ ա. «Կերի»։ Մին էլ ա ասալ, թա. «Կերի՞ ր»։ Ասալ ա. «Կերի»։ Օշափն ասալ ա. «Վըեր ծեն տամ՝ ծեն տա, ըսպանե՞մ»։ Ասալ ա. «Հա՛»։ Օշափն ասալ ա. «Միսի՛կ-Միսի՛կ, հինչտե՞ղ ըս»։ Թա. «Հեն ըմ տռնըտակին»։ Ետնան էս ախճկանը ըսպանալ ա։

Էս օշափը քյինացալ ա մին էլ հանորը մեչնակ ախճիգյն օզալ, պերալ էլիա տանը մին աման բոզբաշ տըվալ, թա. «Տոլ կեր. ես քյինում ըմ մին օրան վա̈ղի օրիշ տեղ»։ Ինքյ առնելիցը ետնան էս օշափը քյինացալ ա։ Էս ախճիգյը ինքյը-ինքյը ասալ ա. «Ես թաքավերի ախճիգյ ինեմ, բոզբաշ օտե՞մ»։ Ածալ ա սո̈ւնդո̈ւն ։ Էս օշափը եկալ ա, ասալ ա, «Բոզբաշը կերի՞ր»։ Ասալ ա. «Կերի»։ Մին էլ ա ասալ, թա. «Կերի՞ր»։ Ասալ ա. «Կերի»։ Օշափն ասալ ա. «Վըեր ծեն տամ՝ ծեն տա, քյեզ ըսպանե՞մ»։ Ասալ ա. «Հա՛»։ Օշափն ասալ ա. «Միսի՛կ-Միսի՛կ, հի՞նչտեղ ըս»։ Թա. «Հեն ըմ սո̈ւնդումը»։ Էս ախճկանն էլ ա ըսպանալ։

Մին էլ քյինացալ ա թաքավերին պուճուր ախճիգյն օզալ։ Պերելիս վախտը էս ախճիգյը մորն ասալ ա. «Ա՛յան, մեր էն պուճուր կատուն տոք»։ Մարն էլ տըվալ չի։ Հա̈րն էլ ասալ ա, որ. «Պեժինքյ չընք տըվալ, լիհա̈ էտ ինի, տոք լիհի»։ Նա յէլ տըվալ ա, նըհետը տարալ ա։ Էլիա մին աման բոզբաշ ա տըվալ, թա. «Ես քյինում ըմ մին օրան վա̈ղի, տու էտ կեր։ Էս օշափը քյինացալ ա։ Էս ախճիկն ասալ ա. «Ես թաքավերի ախճիգյ ինեմ, բոզբաշ օտե՞մ»։ Տըվալ ա կատվին, կերալ ա։ Օշափը եկալ ա։ Ասալ ա. «Կերալ ը՞ս»։ Ասալ ա. «Կերալ ըմ»։ Մին էլ ա ասալ, թա. «Կերալ ը՞ս»։ Ասալ ա. «Կերալ ըմ»։ Օշափն ասալ ա. «Որ ծեն տամ՛ ծեն տա, հի՞նչ կանես»։ Թա, «Ծեն տոք՛ ծեն տա»։ Օշափն ասալ ա, «Միսի՛կ-Միսի՛կ, հինչտե՞ղ ըս»։ Թա. «Հեն ըմ կա̈րմո̈ւր աղինքումը»։ Օշափն ասալ ա. «Տե ինքալ էտ օխտը պիլա̈նին, ամմա օթաղնեն պա̈նաս ոչ»։

Ետնան էս օշափը քյինացալ ա։ Ետնան էս ախճիգյը ըստրա խոսքին եշալ չի քյինացալ ա մին օթաղը պա̈ցալ, տըեսալ մին դա̈րզի՝ վըեսկի շորեր կարելիս։ Ասալ ա. «Ինձ մըիար վըեսկի շորեր կարի»։ Մին էլ պա̈ցալ ա,

տըեսալ մին բաշմախչի՝ չըմոշկ կարելիս։ Ասալ ա. «Ինձ մըհար մին չըմոշկ կարի»։ Մին էլ պյ՛ացալ ա, տըեսալ փ՛ըրշ ըրած։ Մին էլ պյ՛ացալ ա, տըեսալ վըեսկի գյոլ։ Վըեսկի գյոլումը լղացալ ա։ Մին էլ պյ՛ացալ ա, տըեսալ՝ արծաթի գյոլ։ Արծաթի գյոլումն էլ ա լղացալ։ Մին չորս ամսումը վըեսկի շորերը, չմոշկը-զատերը կարալ ըն, կյեցալ ա։ Քյինացալ ա մին մորթի առալ, շորերին գլխավը կյեցալ, առին պիլ՛ա՛նիքյն էլ տիրալ մղակին գլխին, ինքյը գլոխ եր կալալ, քյինացալ մին թաքավերի ղազ պահող նի մտալ։ Ամման օր քյինում ա իլ՛ալ վրեսկի շորերը հանում լղանում, էլիա վըեսկի շորերը կյենում, գլխավն էլ մորթին, տանում, ղազերը պահում։ Մին վախտ էս թաքավերին տղան թա-քուն եշալ ա, տըեսալ, վըեր մորթին հանեց, վըեսկի շորերը պյ՛աց իլ՛ավ, վըեսկի շորերը հանեց հու տառավ մին լ՛ավ հ՛ուլ՛ումյ՛ալ՛աքյ ախճիգյ։ Ետնան լղացավ, էլիա վըեսկի շորերը կյեցավ, մորթին էլ գլխավը, տարավ ղազերը պահի։ Էս թաքավերին տղան քյինացալ ա ՛ուր՛ան օթաղում բեքյեփ նստալ։ Թաքավերը քյինացալ ա ասալ, թա. «Եկ հաց կեր»։ Եկալ չի։

Ղազ պահողն ըն ղրկալ, թա բալքյի կյամ ա։ Ղազ պահողը՛ քյինացալ ա թա մղակավը նի մտնի, եր ա կացալ եկալ։ Թաքավերին տղիցը հրցրալ ըն, թա. «Բա խէ՞ վըեր մունք եկինքյ, եկիր ոչ, էն ղազ պահողը եկավ, եկիր»։ Թաքավերին տղան ասալ ա. «Ընտրա օզելու վըմ»։ Թաքավերն ասալ ա, «էն սև ախճիգյը հեն ա՞ , վըեր օզում ըս՝ էտ ղազ պահողը»։ Տղան ասալ ա. «Չէ՛, օզելու վըմ»։ Հ՛արն ասալ ա. «Վըեր էն ըս օզում, լ՛ավ, հես ա իր՛ար կըփսակեմ»։

Էս ախճկան մորթին էլ հանիլ ըն տըվալ, էս տղին յրա փսակալ։ Էս ախճիգյն էլ ասալ ա. «Մին մեծ ամարաթ շինիլ տոք, վըեր ես ընդեղ նստեմ»։ Նա յէլ շինիլ ա տըվալ։ Էս ախճիգյը քյինացալ ա տիբի էն օշափին տանը թուշըմը նստալ, տըեսալ ա, վըեր հես ա օշափը արկաթի տրեխը կյեցին, շենբաշեն ման կյ՛ալավ կյամ ա։ Էս օշափը կյ՛ալիս ախճկանը տըեսալ ա, վըեր ՛ուր՛ան կնեգյը հեն ա ընդեղ։ Քյինացալ ա մին բաղից խաղուղ քաղալ, պիրալ թաքավերին տանը ըղաքավը տանելավ ասալ. «Ա՛յ խաղուղ առնող»։

Էս ախճըկանը մարթն էլ էս վախտս վըերս քյինացած ա իլ՛ալ։ Էս ախճկանը ղուլլուղչին ասալ ա. «Խա՛նըմ, խա՛նըմ, հինչ լ՛ավ խաղուղ ա՛ր»։ Խանումը փող ա տըվալ, թա տանի առնի։ Տարալ ա առալ, պիրալ լոխ կերալ ըն, էշ տառալ։

Էն ախճիգյը վըեր էս տեսալ ա, կերալ չի։ Էս օշափը եկալ ա, թա վըեր կնգանը ըսպանի, էս կնեգյն ասալ ա. «Քմատաղ, մեր հրևանին տաըը հաց ըմ

տալու, թողար տամ, ետնան»: Էս օշափն ասալ ա. «Լա՛վ»:

Տասը հացը տարալ ա, ո՛ւրա՛նց կյերանին յրա նստալ, լա՛ց իլա՛լ հու հացերը փշըրալ վեր ածալ, ղուշերը կերալ ըն: Ետնան եկալ ա թա. «Քմատաղ, մեր հրևանին եղ ըմ տալու, տամ, ետնան»: Վըեր ասալ ա՝ տար, էլիա տարալ ա տըվալ հրևաններին, եկալ»:

Ըստհենց շատ ընելավ մարթը եկալ ա: Կնեգյը վըեր էտ պա՛նները ասալ ա, օզացալ ա թիրփանգյը յրա անի, ըսպանի: Օշափն ասալ ա. «Քմատաղ, ինձ ըսպանիլ միր, քու կատուտ կտառնամ »: Ամա նա եշալ չի, ըսպանալ ա: Ետնան քյինացալ ա էն բաղվանչուցը վըեր օշափը խաղուղ ա պիրալ, իրցրալ, թա. «Ա՛պեր, էն հինչ ա՞»: Թա. «Խաղուղ ա, մին էլինձո՛ր»: Ասալ ա. «Վըեր էն օտես, հի՞նչ կըտա՛ռնաս»: Թա» «էշ»: Ասալ ա. «Վըեր էն օտես հի՞նչ կըտա՛ռնաս»: Թա. «Վըեր էշ տա՛ռնաս, կըսըղանաս»:

Ըստրանից մին ճուվարան լցալ ա, տարալ տըվալ ընտրանց, կերալ ըն, սըղացալ: Էս ախճիգյը մին վախտ մարթին ասալ ա. «Էտ օշափին շատ տովլաթ օնի»: Էս թաքավերիս տղան քյինացալ ա լեխ պիրալ ո՛ւրա՛նց տոն:

Աստվածանից իրեք խնձո՛ր վըեր ինգյնի» մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չլսողին:

## 11.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին թաքավեր: Էս թաքավերիս էլ իլա՛լ ա օխտը տղա, մին ախճիգյ: Ամման ո՛ւրո՛ւլյո՛ւն էտ թաքավերին օխտը տղորցան մինը քյինում ա իլա՛լ խազնան պահում, օշափը կյամ ա իլա՛լ կյուղանում , տանում:

Մին վախտ թաքավերին ախճիգյն ասալ ա, թա. «Թաքավերն ապրած կենա, թողար էս քշեր էլ ես քյինամ խազնան պահեմ»: Թաքավերն ասալ ա, «Օխտը տղաս քյինացին հի՞նչ շինեցին, վըեր տու քյինաս հինչ շինես»: Էս ախճիգյն ասալ ա. «Դե մին վըեսկի թորըտ տոք, ես կըքյինամ պահեմ»:

Էս թաքավերը տուվալ ա: Էս ախճիգյս եր ա կացալ, քյինացալ, թա պահի: Տըեսալ ա, վըեր հես ա օշափը մըթմըթալավ կյամ ա, եկա՛վ, բաղյան տուվավ փողերին տակավը: Էս ախճիգյը վըեր թխալ ա, օշափին գլխին ղափաղը եր ա կացալ: Ետնան քշերավ էս օշափին գլխին ղափաղը տարալ ա թաքավերին նշանց տըվալ, թաքավերըն էլ ճակատան պաչալ ա, թախտին նըստըցըրալ:

Էս օշափը վըեր սաթկած չի իլա՛լ, տառավ գլխին ղափաղն ա իլա՛լ եր

կացած, եկալ ա ո̈ւրա̈նց տոն, զյեյիմ կյեցալ, քյինացալ թաքավերին ասալ. «Ախճիգյտ օզում ըմ, կըտա՞ս»: Թաքավերըն էլ ասալ ա. «Քյըզանից էլ լա̈վ տղա չըմ քիթանալու, կըտամ»: Ետնան օխտը օր, օխտը քշեր հրսանիքյ ա ըրալ, տարալ:

Մին քանե վախտ անց ա կացալ կնգանն ասալ ա. «Եկ քյինանք ման կյա̈լ»: Ետնան քյինացալ ըն մին կանանչկոտ տեղ: Էս օշափը կնգանն ասալ ա. «Տու տեղ նստի, ես քյինամ ճպատ պիրիմ, ըստեղ մին բաղչա շինենք»: Ետնան քյինացալ ա ճպատ պիրալ, կեսավը շինա̈լ: Ետնան կնգանն ասալ ա. «Դե մին տկլորաց, ըտեղ նստի»: Նա էլ տկլորացալ ա, մեչին նստալ: Ետնան էս օշափը էնչանք թակալ ա կնգանը, վըեր ջանը լոխ կյիպտալ ա: Ճպատըն էլ լոխ կլխալ ա թակելիցը հու կոտրատալ ա: Ետնան քյինացալ ա, վըեր էլ ճպատ պիրի թակի: Էս ախճիգյս տըեսալ ա, վըեր հես ա բարդի քյարվան ա կյա̈լիս: Էս քյարվաննեն եկին, վըեր ըռաչներան քյինա̈ն, էս ախճիգյն ասալ ա, թա. «Ինձ տիրեքյ էտ բարդումը հու կանչեցեք  ա՛յ եթիմ ախճիգյ առնող»:

Սահանք տիրալ ըն հու կանչելավ տարալ: Ետնան էս օշափը եկալ ա տըեսալ ո̈ւրա̈ն կնեգյը ընտեղ չի: Քյինացալ ա քյարվաններիցը հրցրալ, թա. «Ըտեղին ախճիգյը հոր ա՞»: Ընտրանք էլ ասալ ըն. «Հէս ա էս բարդումը»: Էս օշափն ասալ ա, թա. «Ղա̈մա̈վս թխեմ՝ վըեր ա̈րո̈ւն տո̈ւս կյա̈՝ ըտեղ ա, վըեր տո̈ւս չի կյա̈՝ ըտեղ չի»:

Ղամավը թխալ ա, բուղը կտրալ ա հու ա̈րո̈ւնը պենպակն ա ծծալ, ղամին ըռեխն էլ պենպակը սրփալ ա: Ետնան էս օշափը ասալ ա. «Աստված ձեզ պարի ճանապար տա, ըտեղ չի, քյինացեքյ»:

Ետնան սահանք տանելավ ասալ ըն. «Ա՛յ եթիմ ախճիգյ առնող»: Մին պառավ տո̈ւս ա եկալ, թա. «Պեր առնեմ»: Պերալ ըն, առալ ա, տարալ: Ետնան քյարվաննեն քյինացալ ըն: Ետնան մին թաքավերի տղա եկալ ա էս պառավին տոնը, թա. «Ախճիգյտ օզում ըմ, կըտա՞ս»: Էն պառավն էլ ասալ ա. «Կըտամ»: Էս ախճիգյն էլ պառավին ասալ ա, թա. «էն տղին ասի, թա մին տոն կշինիս, վըեր կլխան եշիս, փափաղըտ վըեր ինկնի հու օխտը արծեվ տակին ժինճիլավ կապած՝ կըկյամ, թա շինիլ չըս՝ կյա̈լ չըմ»:

Պառավն ասալ ա: Էս տղան ասալ ա. «Լա̈վ»: Ետնան շինելիցը ետնան օխտը օր, օխտը քշեր հրսանիքյ ա ըրալ, տարալ: Էս ախճիգյն էլ ըսկի քոն չիլա̈լ ընդեղ, չունքյի վախում ա իլա̈լ: Մին քանի վախտ անց ա կացալ, էս ախճիգյը ետ ա ինկյա̈լ:

Ետնան էս օշափը եկալ ա էս պառավին տոնը, թա. «Ըստեղին ախճիգյը հոր ա՞»: Էս պառավն էլ ասալ ա. «Թաքավերին տղան եկավ օզեց, տարավ»: Էս օշափը քյինացալ ա մեծ-մեծ մեխեր շինիլ տըվալ, քյինացալ ա մին ոչխար քցա̈լ արծեվներին աղաքը, ինքյը մեխերը վըեր տըվալ, եր իլա̈լ: Մին մեխ ա մնացալ, վըեր եր ինի երի ատաժը, էս ախճիգյը մեչ ղոլան ասալ ա. «Սուրփ Սարքիս, փորինըս քյեզ մատաղ, ինձ էս նեղ տեղիցը ազատի»: Վըեր էս ասալ ա, թըռ՛մփ, ինկյա̈լ ա արծեվներին աղաքը: Ընդեղ փըչըփարախ ըն ըրալ: Ետնան էս ախճիգյը օխտը օր օխտը քշեր քոն ա իլա̈լ, եր կացալ: Ետնան էս թաքավերին տղին կնեգյը մին ախճիգյ ա պերալ:

Մին օր էս Սուրփ Սարքիսը ախքատ ա տա̈ռալ, եկալ: Էս ախճիգյս քյինացալ ա հաց պիրալ տըվալ, էս Սուրփ Սարքիսն ասալ ա. «Քյինա քու մոր ասի, վըեր մատաղ ըս խոստացալ, տո՛ք»: Էս ախճիգյը քյինացալ ա մորը ասալ: Մարըն էլ ասալ ա. «Պեր թոշատ պաչեմ, քյինա̈ ասի՝ պապի, մատաղըտ եu ըմ, ինձ տար»: Էս ախճիգյը քյինացալ ա ասալ, Սուրփ Սարքիսըն էլ ասալ ա. «Ղիմիշ չըմ անիլ քյեզ տանեմ»: Ետնան օրհթնելավ ասալ ա. «Վազ տաս՝ մարճան-մարքարիտ եր տառնա հու փունճ մանիշակ, վըեր ծըծաղես՝ մարճան-մարքարիտ եր տառնա, վըեր կլոխըտ լուվանաս՝ ճո̈ւրը վըեսկի քյա̈րփո̈ւչ կըտրվի, վըեր լաց ինես՝ ճըրհեղեղ ինի»:

Ետնան քյինացալ ա: Էս ախճիգյը մծացալ ա: Մին թաքավերի տղա եկալ ա էս ախճիգյս օզալ: Փսակելիս վախտը էս ախճիգյը ո̈ւրա̈նց տանն ասալ ա, «Մեր տանիցը մինչև ընդեղ շոր փռեցեքյ»: Տանելիս վախտը մարճան-մարքարիտ հու փունճ մանիշակ ա վեր տա̈ռալ, ղարավաշը հու ո̈ւրա̈ն մարը վըհաքալ ըն, ածալ ծոցերնեն»:

Մին վախտ էս թաքավերին տղին կնգանը ախճիգյը ծարավացալ ա, քյինացալ ա մին պառավ կնկանից ճո̈ւր օզալ: Նա յէլ ասալ ա. «Մին քթո̈լ ճո̈ւրըս մին աչքի լուս ա»: Էս ախճիգյը աչքին մինը հանալ ա տըվալ, մին քթո̈լ ճո̈ւր ա տվալ: Խմալ ա, քըշտացալ չի: Մին քթո̈լ էլ ա ուզացալ, ասալ ա. «Մին աչքի լուս էլ տոք, մին քթո̈լ էլ տամ»: Աչքին մինն էլ ա տըվալ, մին քթո̈լ էլ ա տվալ: Խմալ ա, տըեսալ լոխ կյո̈լզ : Ետնան ընտեղ վեր ըն քցա̈լ հու շորերը հանալ, ղուլուղչուն կյեց տըվալ: Էս ղուլուղչին էլ քյինացալ ա թաքավերին տղին կնեգյ տա̈ռալ:

Ետնան մին քյա̈սիբ մարթ եկալ ա, թա չոփ անի տանի, էս թաքավերին տղին կնեգյը ասալ ա. «Ա՛պեր, ինձ տար ծեր տոն»: Էս մարթըն էլ ասալ ա.

«Օխտը ախճիզյ օնեմ, կարըմ չըմ պահեմ, քյեզ ը՞մ պահելու»: Էս ախճիզյն էլ ասալ ա. «Ա՛պեր, խեր կըտեսնաս, ինձ տար ծեր տոն»: Էս մարթըս տարալ չի:

Ետնան քյինացալ ա ո՜ւրա՜ն ախճկորցըն ասալ, թա. «Մին ախճիզյ ասեց՝ ինձ տար ծեր տոն, պերի ոչ, ասեց՝ խեր կըտեսնաս, տար»: Էս ախճկերքըն էլ ասալ ըն. «Ա՛ պեր, քյինա՛ պեր, մեր կերածը ընտրա կըտանք»: Էս մարթը մին էլ քյինացալ ա փեդ ըրալ, տիրալ փեշկումը, էն ախճիզլըն էլ տիրալ աթակումը, թա պերի: Պերելիս վախտը փեշկը մարճան-մարքարիտավ հու փունճ մանիշակավ լցալ ա: Փեդերը վեր ա ածալ, ախճկանը տիրա՜լ փեշկումը, պերալ:

Սահանք ըստըհենց հարուստացալ ըն հու մեծ ամարաթ ըն կաղնըցրալ: Կլո՜խըն էլ լըվացալ ըն, ճուրը վըեսկի քյա՜րփո՜ւճ ա կտրալ: էս ախճիզյն ասալ ա, թա. «Ա՛ պորը էրկու վըեսկի քյա՜րփո՜ւճ տըվեքյ, տանի բազար, ասի՝ ա՛յ վըեսկի քյա՜րփո՜ւճ ինքյ օնող՝ աչքի լո՜ւս տըվող»: Ետնան տըվալ ա, տարալ ա, ասալ. «Ա՛յ էրկու վըեսկի քյա՜րփո՜ւճ ինքյ օնող՝ աչքի լո՜ւս տըվող»: էն պառա-վը ինքյ ա կալալ, աչքին լո՜ւսերը տըվալ: Էս մարթըս պերալ ա աչքին լո՜ւսերը տիրալ էս ախճկանը աչքերին յրա, սղացալ ա աչքերը:

Մին վախտ էս ախճիզյը ամարաթին քշտին կաղնած ա իլա՜լ, տըեսալ ա, վըեր ո՜ւրա՜ն մարթը ծիյին յրա նստած, ընդեղավ անց կացավ: Էս ախճիզյը աչքը ճպեց, լա՜ց իլա՜վ, թոռը նի կալավ: Ետնան ո՜ւրա՜նց գյա՜դին ղըկեց, թա քյինա՜ ասի. «Մին եք ըստեղ, կանչող կա»: Գյա՜դա՜ն էլ քյինաց ասեց, նա էլ եկավ: Էս ախճիզյն ասալ ա. «Ա՛յ մըրվաթսըզ, տո՜ւ բա ինձ հու՞նց թողեցիր քոռացած, ընտեղ վեր ինկյա՜ծ, տո՜ւ ենկին[1] տարեր քու կնեկյտ շինեցիր, իմ շորերըս էլ ենկան կյեցավ»:

Ետնան էս թաքավերին տղան քյինացալ ա ո՜ւրա՜նց տոն, ենկին վազ տալ տըվալ՝ ք...ի կլոնձնե ա վեր տա՜ռալ, կլո՜խը լուվացալ ըն՝ նոթ ա վեր տա՜ռալ: Կլո՜խը մածուն ըն քա՜լ, ծիյին ոռան կապալ, քաշ-քաշ ըրալ: Ետնան էս ախճիզլը ո՜ւրա՜ն կնեզըն շինա՜լ, ինքյն էլ մարթը տառալ:

Աստվածանից իրեք խնձո՜ր վեր ինգյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

---

[1] Ենկա -դուլլուղչի (Ծ. Բ.) : Ծառա, աղախին ( Ծ. Կ.) :

## 12.ԿՅՈՌԹՆՈՒԿԸ ՎԸԵՐ ԱԽՃԻԿՅ Ա ՏՆ̀ՌԱԼ, ԸՆԴՐԱ ՀԱՔՅԱԹԸ

Իլնա̀լ ա̀ չիլնա̀լ մին թաքավէր։ Էս թաքավէրիս էլ իլնա̀լ ա̀ մին տղա։ Էս տղան քյինացալ ա ծովին ղրաղէրքը ման կյնա̀լ, ետավ ծարավալ ա, նի յա մտալ գյամին, թա ճո̀ւր խմի, մին կյոռթնուկ լըք ա տվալ, փէշկան կացալ։ Էս թաքավէրին տղան հիշտեղ վըէր քյինացալ ա, էս կյոռթնուկն էլ փէշկան կացած։ Ո̀ւրո̀ւկյո̀ւնը վըէր քյինացալ ա տոն, էն կյոռթնուկը փախալ ա, նի մտալ տոլաբը, մին վախտ էս կյոռթնուկը խեցկը հանալ ա, տիրող տոլաբումը, ինքյը եր իլնա̀լ զեհը։ Թաքավէրին տղան եկալ ա տըեսալ մին շափաղ պատին յրան. եշալ ա տըեսալ զեհին մին հո̀ւլո̀ւմնա̀լնա̀գյ ախճիկյ։ Էս տղան պիրալ ա էս ախճկանը ո̀ւրնա̀ն յրան օխտը օր, օխտը քշեր փսակալ։

Ըստեղ մարթըկնեգյ ըն տնա̀ռալ, թաքավէրին տղան ասալ ա. «Քյինա թաքավէրին ծերքը պաչի»։ Քյինա̀ցալ ա պաչալ, եկալ։

Թաքավէրին տղան ասալ ա. «Պիր կյոռթնուկի խեցկըտ քցենքյ կրակը»։ Նա էլ ասալ ա, թա. «Չէ»։ Ախրը քիցալ ա կրակը։ Կնեգյը ասալ ա. «Տէ՛ս, վըէր քիցեցիր կրակը, քյեզ շատ զուրար ա նի կյնա̀լու»։

Ետնան թաքավէրը ղրկալ ա ո̀ւրնա̀ն տղին հետան։ Էս տղան էլ քյինա̀ցալ ա։ Թաքավէրը ասալ ա. «Էտ կնեգյը ինձ տո»։ Նա էլ ասալ ա, թա. «Չէ՛, տալ չըմ»։ Թաքավէրը ասալ ա, թա, «Ընդե քյեզանից մին զատ կօզեմ, թա վըէր էն տվիր՝ կնեգյը քեզ, թա վըէր չէ՝ ինձ ինի»։ Ասալ ա, թա. «Հա»։ Նա էլ ասալ ա. «Քյեզանից մին խնձո̀ր կօզեմ, վըէր սաղ դուշունըս կեսը օտեն, կեսը մնա»։ Քյինա̀ցալ ա կնգանը քշտին բեքեփ նստալ, կնեգյն էլ ասալ ա. «Լնա̀վ ա՞, վըէր ասում ի խեցկըս էրիլ մի, տու լիհնա̀ էրում իր»․ մին էլ ասալ ա. «Լնա̀վ ա, հելլա ճար կանեմ»։ Ասալ ա, թա. «Քյինա̀ ասի՝ գյնա̀մուն թա՛քավէր, գյնա̀մուն թա՛քավէր, մին ծեր բաղին պիծի խնձո̀րիցը մինը տո»։ Քյինա̀ցալ ա ասալ. «Գյնա̀մուն թա՛քավէր, գյնա̀մուն թա՛քավէր, մին ծեր բաղին պիծի խնձո̀րիցը մինը տո»։ Նա էլ տվալ ա, ծովիցը տո̀ւս ա պիրալ, մարթ ղրկալ թաքավէրին հետան, թա. «Ես պիրալ ըմ, տո̀ւ էլ տար»։

Թաքավէրը ո̀ւրնա̀ն դուշունը ղրկալ ա, թա. «Քյինա̀ցեք պիրեքյ»։ Եկալ ըն տարալ կեսը կերալ, կեսը մնացալ ա։ Ըստըհենց շատ զատեր ա ասալ, նա էլ քյինա̀ցալ ա պիրալ։ Մին էլ թաքավէրն ասալ ա. «Մին կարմունջ շինիլ տո ծովին յրան»։ Եկալ ա կնգանն ասալ. «Էս հունց ա՞նեմ»։ Նա էլ ասալ ա, թա. «Քյինա ասի՝ Գյնա̀մուն թա՛քավէր, ամաքյը մին քար ցեց տիրեքյ»։ Նա էլ

քյինացալ ա ասալ, ամաքյը մին քար ըն ցեց տիրալ, տառալ ա կարմունջ:

Թաքավերը ասալ ա՝ մին քյինամ տըեսնամ: Ուրան կնգանն էլ եր ա կալալ, քյինացալ: Օզացալ ա, թա կարմունջավը անց կենա էն ղոլը, թաքավերին տղան ասալ ա. «Գյամուն թաքավեր, ամաքյը ծեր քարը եր կալեքյ»: Ամաքյը ուրանց քարը եր ըն կալալ, թաքավերը մին էլ ուրան կնեգյը նի յըն տառալ ծովին մեչը, կտորվալ:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մին՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չլսողին:

## 13. ՕՎ ՍՈՎԴԱՔՅԱՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին սովդաքյար: Էս սովդաքյարիս անումն էլ Օվ սովդաքյար, հու էլ շատ հարուստ ա իլալ: Ըստրա էլ շատ ախպերք ա իլալ, ըստահանք էլ մեծ-մեծ չինովնիկնե: Էս Օվ սովգաքյարս մին վախտ աշխատանքի քյինալիս վախտը քյինացալ ա մին չոլ, ընդեղ մին տան վեր եկալ. էս տանս կնեգյն էլ ցավում ա իլալ: Մին հրեշտակ եկալ ա Օվ սովդաքյարին ասալ. «Վըեր էտ խոխան պիրի, քու աշխատանք օտելու վա»: Էս կնեգյս մին տղա յա պիրալ: Մին վախտ էս կնեղյը քյինացալ ա Օվ սովդաքյարին ասալ. «Էն հրեշտակը քյեզ հինչ ա՞սեց»: Ասալ ա. «Ասիլ չըմ»: Էն կնեգյը ասալ ա, թա. «Ասիլ պիտիս»: Նա էլ ասալ ա. «Ասիլ չըմ, որ ասիլ չըմ»: Ախըրը ասալ չի:

Էս Օվ սովդաքյարը մին օր էն կնգանը ասալ ա. «Էտ տղին հինչ տա՞մ»: Ասալ ա, թա. «Ուրան քշռունքավը մին փող տո»: Սա ըստրա քշռունքավը մին փող ա տվալ, եր կալալ քյինացալ մին ծրանա ծմակում տիրալ, ինքյը քյինացալ:

Էս ծրանա ծմակումն էլ մին տոն ա իլալ, ըստահանց էլ մին էծ. տահանց տղան էլ աման օր տանում ա իլալ ըրըծըցընում, պիրում: Տրա կաթնըն էլ կթում ըն իլալ, օտում: Մին օր էլ տարալ ա, թա ըրըծցնի, էս էծս քյինացալ ա տըեսալ, վըեր մին խոխա վեր տիրած: Էս խոխին ծեծ ա տվալ, ետավ քյինացալ էն մին տըղին կոշտը, էս տղան էլ եր ա կալալ, քյինացալ ուրան տոն: Էս կնեգյը պիրալ ա, թա էծին կթի, տըեսալ ա, վըեր ծըծումը կաթնը չի կա, փռնալ ա էս տղին թակալ, թա. «Խե յը՞ս կթալ»:

Էքյսը վըեր տարալ ա թա ըրըծցնի, բուսունը պահալ ա, էս էծը հինչ տեղ վըեր քյինացալ ա, ինքյն էլ հետան մին խիլլա քյինացալ ա: Էս տղան տըեսալ ա, վըեր հես ա քյինաց ծեծ տվավ. էս տղան եր ա կալալ խոխին, համ էլ էծին՝

քյինաց ալ ՞ուրա՜նց տոն, ասալ. «Ա՛յան, տու ինձ փոնում ըս թակում, թա կթալ ըս կերալ, ամմա էս խոխին ա իլա՜լ ծեծ տամ»: Էս կնեգյն էլ խոխին եր ա կալալ, պահալ մեծըցրալ:

Մին օր էս տղան տո՞ւս ա եկալ քյո՞ւչա՜ն, թա հաղ անի: Տա, մին էլ մին տղա ՞ուրո՞ւր նիետ կռև ըն ըրալ, էն մինը ետ ա տա՜ռալ թա. «Էծի տղա, շան տղա, էծի տղա, շան տղա»: Քյինացալ ա էն կնգանը ասալ. «Ա՛յան, էն խե յը՞ն ինձ ասում՝ էծի տղա, շան տղա»: Նա էլ ետ ա տառալ էն տղին կլխավը անց կացած պա՜ները ասալ: Էն տղան էլ ասալ ա, թա. «Վըեր ես քու տղան չըմ, կիլ՞ոխ եր կօնեմ, քյինամ»:

Կիլ՞ոխ ա եր կալալ, քյինացա՛լ, քյինացա՛լ, մին տան վեր եկալ: Էն տոնն էլ ինքյը վըեր ընդեղ ծնվալ ա, էն ա իլա՜լ: Էս տղան ՞ուրա՜ն կլխին անցկացած պա՜ները ըստեղ ասալ ա: Էս տանը կնեգյն էլ ասալ ա, թա. «Տու իմ տղաս ըս»: Ետավ էս տղան էլ ըստեղ կացալ ա:

Մին օր էս Օվ սովդաքյա՜րը եկալ ա ընդեղ հելլա վըեր եկալ, տըեսալ էն տղան ընդեղ: Ասալ ա. «Տրա ինձ տո, նո՞քյար պահեմ»: Նահանք էլ տվալ ըն:

Մին օր էլ մին կյիր ա կյիրալ, տվալ էս տղին, թա. «Տար տո իմ ախպորը», հու մեչին կյիրա՜ծ ա իլա՜լ, թա. «Քշերա՜վ կյա՜՝ քշերավ ըսպանեցեք կյիր պիրող տղին, քյո՞ւսօրին կյա՜՝ քյո՞ւսօրին ըսպանեցեք, ՞ուրո՞ւլքյո՞ւնը կյա՜՛ ՞ուրո՞ւլքյո՞ւնը ըսպանեցեք»: Ետավ էս տղան քյինացալ ա մին կյետի ղրաղի վըեր եկալ, քոն իլա՜լ: Մին հրեշտակ եկալ ա ծոցիցը հանալ, մեչին կյիրա՜ծը ճինջա՜լ, ինքյը մեչին կյիրա՜լ: թա. «Քշերավ կյա՜՝ քշերավ փսակեցեք կյիր պիրող տղին, քյո՞ւսծրին կյա՜՝ քյո՞ւսծրին փսակեցեք, ՞ուրո՞ւլքյո՞ւնը կյա՝ ՞ուրո՞ւլքյո՞ւնը փսակեցեք»:

Թոխտը հունց վըեր ծալած ա իլա՜լ, նիենց էլ ծալալ ա, տիրալ էն տղին ծոցումը հու հունց ճինջա՜լ ա, վըեր մա՜հլ՞ում չիլա՜լ, թա ճինջա՜ծ ա, թա ճինջա՜ծ չի. համ էլ Օվ սովդաքյա՜րին ղալամին նման ա իլա՜լ, վըեր ըսկի ճոկվում չիլա՜լ:

Էս տղան եր ա կացալ, քյինացալ էն տոնը, տըեսալ, որ փսակած տիրած ընդեղ: Ո՛ւրա՜ն ախպորցը ասալ ա, թա. «Խե յը՞ք փսակալ, ես կյիրալ ըմ թա՝ վըեր վախտ վըեր կյա՜, ըսպանեցեք, անճախ տուք պիրալ ըք փսակալ»: Ըստահանք պիրալ ըն կյիրա՜ծ կյիրը տիրա՜լ ծերքին, թա. «Էս քու կյիրած կյիրտ, էտ էլ տու»: Ասալ ա, թա. «Դե բա՜լքյի հա՜րփա՜ծ ըմ իլա՜լ»: Էս Օվ սովդաքյարը քյինացալ ա ՞ուրա՜նց հրևան չ՞որա՜քչյ՞ուն ասալ, թա. «Հու վըեր

կյա՛ , ծեր թուրունը քցի»: Ինքյը քյինացալ ո՛ւրա՛նց տանը  շիպիլկեքը կրակը լոխ հա՛նգյըցըրալ, ինքյը սոտըսոտ նաչաղացալ, ո՛ւրա՛նց զյադեքյը լոխ կրակի յըն քյինացալ, լոխչին էլ քյիցա՛լ ա թուրունը, ո՛ւրա՛նց հարսներըն էլ ըն քյինացալ, լոխչին հելլա քիցալ ա թուրունը:

Էս Օվ սովդաքյա՛րն էլ ա եր կացալ քյինացալ, ըստրա էլ ա քիցալ թուրունը: Ետավ մնացալ ըն էս տղան հու ախչիգյը, նստալ ըն էս Օվ սովդաքյա՛րին ապրանքը կերալ:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չլսողին:

## 14.ԴՈ՛ՐՎԻՇԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին թաքավեր: Էս թաքավերիս իլա՛լ ա՛ մին կնեգյ: Էս կնեգյս իսկի խոխա պո՛ւրո՛ւմ չիլա՛լ: Մին վախտ էս թաքավերըս տո՛ւս ա եկալ դարբազին տո՛ւս դոլ՝ ախ ասելավ, ետնան տըեսալ ընդեղան մին դո՛րվիշ ա կյա՛լիս: Էս դո՛րվիշը եկալ ա, ասալ. «Թաքավերն ապրած կենա, էտ խե յը՞ս ախ կանչում»: Նա էլ ասալ ա. «Իմ կնեգյս խոխա չի պո՛ւրո՛ւմ» : Թա. «Դե հինչ կըտա՞ս, վըեր ես մին փա՛նդ անեմ, նա խոխա պիրի»: Նա էլ ասալ ա. «Հինչ վըեր օզես, կըտամ»: Թա. «Դե վըեր խոխա պիրի, մինը ինձ»: Թա. «Հա»: Դո՛րվիշը պիրալ ա իրեք խնձո՛ր տվալ, էրկունը սաղ, մինը մին խնձո՛րին կեսը, թա. «Տար ըստահանց կեսը տու կեր, կեսը տո կնգանտ»: Թա. «Լա՛վ ա»:

Տարալ ա կեսը ինքյը կերալ, կեսն էլ տվալ կնգանը, նա յա կերալ: Էս կնեգյս մին վախտ ետ ա ինգյա՛լ, իրեք տղա պիրալ, էրկունը սաղ ըն իլալ, մինը՝ կեսատ: Ըստահանք մեծացալ ըն, էս կեսատն էլ շատ զոռբա յա իլա՛լ: Մին վախտ լոխչանց մեծը ասալ ա. «Ես քյինալ պիտիմ փլան օշափին ախճիգյն օզեմ»:

Ետնան կիլոխ ա եր կալալ, քյինացա՛լ, քյինացա՛լ, տըեսալ մին չոբան մին մեծ սո՛ւրո՛ւ ոչխար ա պահում: Քյինացալ ա էն չոբանին կոշտը: Չոբանը էն տղին ասալ ա. «Հոր ը՞ս քյո՛ւնո՛ւմ»: Նա էլ ասալ ա, թա. «Քյո՛ւնո՛ւմ ըն փլան օշափին ախճիգյն օզեմ»: Նա էլ պիրալ ա ոչխարներիցը մին կյավաթ կաթնը կըթալ տիրալ առաչին, մին չորս հացի նհետ հու ասալ, թա. «Վըեր տու էս փրթես ոտես, չորանը վըեր ես էս ոչխարներին չորս ղոլավը իրեք հետ շոռ տալըս, բա՛ս տու օզելու վըս, թա վըեր չէ, բա՛ս կրալու  չըս օզես»: Նա էլ ասալ ա, թա. «Դե լա՛վ ա»: Էս չոբանս տասսը հետ շոռ ա տվալ, նա հա՛լա՛ փրթած ոչ:

Էս չոբանն ասալ ա. «Աղ̀ա, քյինալ մի, կիլոխտ բաղա կըքյինա»: Թա. «Ընդե չէ, քյինալու վըմ»: նա էլ ասալ ա. «Տու գյիդ̀ա»:

Ետնան էն տղան քյինացալ ա, քյինացալ, տըեսալ մին մարթ: Քյինացալ ա էն մարթին կոշտը: Էն մարթն ասալ ա. «Ա՛ տղա, հոր ը՞ս քյո̀ւնո̀ւմ: Թա. «Ընդե քյո̀ւնո̀ւմ ըմ փլան օշափին ախճիգյն օզեմ»: Պիր̀ալ ա մին բիզ մին ծառից վեր տվալ, թա. «Վըեր էս ծառիցը կարաս հանես, բ̀ըս օզելու վըս»: Թա. «Լ̀ավ այ»: Ծիքյ ա տվալ, ծիքյ՝ կարացալ չի հանի: Էն մարթն ասալ ա. «Ա̀ղ̀ա, քյին̀ալ մի»: Թա. «Լիհ̀ա չէ, քյին̀ալու վըմ»: նա էլ ասալ ա, թա. «Դե տու գյիդ̀ա»:

Քյինացալ ա էն օշափին տոնը հսալ, նի մտալ տըեսալ օշափը ընդեղ քոն: Էս օշափը եր ա կացալ, տըեսալ էն ընդեղ: Օշափը վըեր ո̀ւր̀ան հոթկը ո̀ւր̀ան ա քաշալ, էն տղան եկալ ա կոշտը: Վըեր եկալ ա կոշտը, էն սհաթը կոլ ա տվալ: Ետնան ընդրանից պիծինն ա քյինացալ, հելլա ընդրա կլխավը հինչ վըեր անց ա կացալ, ըստրա կլխավն էլ անց ա կացալ:

Ետնան կեսատն ա քյինացալ, հելա եկալ, տըեսալ էն չոբանը ընդեղ ոչխարնեն ըրըծցնամ ա: Քյինացալ ա չոբանին կոշտը: Չոբանն ասալ ա. «Ախպեր, հոր ը՞ս քյո̀ւնո̀ւմ»: Թա. «Ընդե քյո̀ւնո̀ւմ ըմ փլան օշափին ախճիգյն օզեմ»: Չոբանը պիրալ ա ոչխարներիցը մին կյեվաթ կաթնը կթալ, տիր̀ալ ըստրա ըղաքին մին չորս հացի նհետ: Թա. «Ինքյ առ: Վըեր տու էտ փրթես ոտես, չոբանը ես էն կյառներին չորս ղոլավը շոռ տալըս, բ̀ըս տու օզելու վըս, թա վըեր կարաս ոչ՝ օզելու չըս»: Թա. «Լ̀ավ ա»: Էս տղաս փրթ̀ալ ա, կերալ, նա հալա մին դո̀նում շոռ տված ոչ»:

Ետնան էս չոբանն ասալ ա. «Բ̀ըս օզելու վըս»: Էն տղան քյինացալ ա տըեսալ մին մարթ: Էն մարթը քյինացալ ա ընդրա կոշտը, թա. «Ախպեր, հոր ը՞ս քյո̀ւնո̀ւմ»: Թա. «Քյո̀ւնո̀ւմ ըմ փլան օշափին ախճիգյն օզեմ»: Էս մարթըս պիրալ ա մին բիզ վեր տվալ մին ծառից, թա. «Վըեր տու կարաս հանես՝ բ̀ըս օզելու վըս, թա վեր կարաս ոչ՝ օզելու չըս»: Էս տղան վըեր ծիքյ ա տվալ ծառն էլ նհետը պուք ա եկալա : Ետնան էս մարթն ասալ ա. « Բաս օզելու վըս»:

Էս տղան ծառը եր ա կալալ, քյինացալ էն օշափեն տոնը, հսալ, տըեսալ օշափը քոն, մին սիպտակ ախճիգյ էլ կիլոխը քթվում ա:

Էս ախճիգյն ասալ ա. «Հոր ը՞ս եկալ, էս սհաթս եր կըկենա քյեզ ոտի»: Էս տղան վըեր ծառավը թխալ ա, էս օշափին մեչան ճոթ ա հլ̀ալ, ո̀ւր̀ան ախպորցն էլ փորիցը հանալ:

Ետավ քյինացալ ա մին օթախ պա̈ցա̈լ, տըեսալ մեչը սաղ օշափավ լիքյը: էս օշափնեն եկալ ըն թա ըստրա օտեն, էն տղան ասալ ա. «Մին-մին եկեքյ, խոսկ ըմ ասում»: Վըեր մին-մին ըն եկալ, լոխչին էլ ծառավը կտորալ ա: Քյինացալ ա մին օթաղ էլ պա̈ցա̈լ, տըեսալ մին լա̈վ սիպտակ ախճիգյ թոշերը կյա̈րմյո̈ւր, լա̈վ-լա̈վ շորերը կյեցին, մին ըստոլի յրա նստած: Էն մին օթաղն էլ պա̈ցա̈լ ա, տըեսալ՝ մին հո̈ւլո̈ւմալակյ ախճիգյ թախտին յրա նըստած, մին քանի օշափ կոխկերքին նստոտած, ընղրա ղուլուղ ըն անում: Լոխ էլ օխտը կլխանի յըն իլա̈լ: Էս օշափներին մինը եր ա կացալ ըստրա նհետ կոխ փռնալ: Էս տղան վըեր ըստրա մին ոննիցըն ա փռնալ, մին էլ կլխիցը: վըեր եր կալալ տափավը եկալ, տասսը կըտոր ա տա̈ռալ. լոխ էլ եկալ ըն, լոխչին էլ ըտըհենց տափավն ա եկալ փշըրալ, հու մեծ ճոթերն էլ անկանջն ա մնացալ: Ետնան էս տղան ո̈ւրա̈ն ախպորցը, մին էլ էն իրեք ախճըկորցը եր ա կալալ, քյինացալ ո̈ւրա̈նց տոն: Հո̈ւլո̈ւմալաքյ ախճիգյն ինքյն ա եր կալալ, էն էրկու ախճիգյն էլ մինը մինին տվալ, մինը՝ մինին:

Աստվածանից իրեք խնձո̈ր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 15.ՕՑ-ՄԱՆՈՒԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին թաքավեր: Էս թաքավերիս էլ իսկի խեզան հինում չիլա̈լ: Մին օր թաքավերն ախ կանչելավ տո̈ւս ա եկալ դարբազին տո̈ւս ղոլ, տըեսալ վըեր առչը քյինում ա ո̈ւրա̈ն ճտերավը, կյխտարը քյինում ա ո̈ւրա̈ն ճտերավը, բախրան քյինում ա ո̈ւրա̈ն ճտերավը, օցը քյինում ա ո̈ւրա̈ն ճտերավը: Էս օցին ճտերն էլ լոխճունց անից շատ ա իլա̈լ: Էս թաքավերն ասալ ա. «Փառք քյեզ աստված, էս օցին էլ ճոտ ինի, ինձ ինի ո՞չ»: Սա վըեր ըստըհենց ա ասալ, մին վախտ վըեր կնեգյը ետ ա ինգյա̈լ, մին խոխա յա պիրալ օցի կերպարանքավ: Ըստրա քիցա̈լ ըն մին օթաղ:

Ընղեղ օրը մին ախճիգյըն իլա̈լ քցո̈ւմ, Օց-մանուկն էլ ոտում ա իլա̈: Հինչ վախտ ո̈ւրա̈ն աշխարքին ախճկերքը լոխ կլխալ ա, դավթարին եշալ ըն՝ տըեսալ, վըեր էրկու ախճիգյ կա, վըեր շատ հեռու վա իլա̈լ:

Քյինացալ ըն էն տոնը, ասալ, թա. «Ախճիգյ տոք տանենք»: Նա էլ ասալ ա, թա, «էս մինը խորթ ա՝ կըտամ, էս մինը հալալ ա՝ տալ չըմ»: Ետնան խորթը եր ըն կալալ, քյինացալ:

Էս ախճըկանս տանելիս տեղը ո̈ւրա̈ն մորը հանկյիստը տըեսալ ա, էս

ախճիզյս ասալ ա. «Ինձ էրկու սհաթ մո՛հլաթ տվեքյ, քյինամ իմ մոր յրան լա՜ց ինեմ, ետավ կյամ»: Նահանք ասալ ըն, թա. «Լա՜վ»: -Քյինացալ ա:

Լա՜ց ինելիս տեղը ննջացալ ա, մորը հանգյիստին յրա քոն իլա՜լ: Ո՜ւրա՛ն մարը արազ ա տվալ, թա. «Հետա կոխկիս մին կոզնու մորթի կա, վըեր եր կենաս, տիր կոնըտակիտ, քյինա ընդեղ, քյեզ վըեր տանեն թա քիցեն օթաղը, մորթին կյեց, նի մուտ. Օց-մանուկը վըեր ասի թա. «Հանի՛ քու փողեղենտ», տու էլ ասի. «Հանի՛ քու օցեղենտ»:

Էս ախճիզյս եր ա կացալ, տըեսալ կոխկին մին կոզնու մորթի, եր ա կալալ, տիրա՛լ կոնըտակին, քյինացալ հսալ թաքավերին տոնը: Նահանք վըեր քյեցալ ըն օթաղը, կոզնու մորթին կյեցալ ա, նի մտալ օթաղը: Օց-մանուկն ասալ ա, թա. «Հանի՛ քու փողեղենտ»: Նա էլ ասալ ա, թա. «Հանի՛ քու օցեղենտ»: Վըեր ըստըհենց շատ ասալ ըն, օցը հա՛քյվավը թխալ ա ընդրա կեռքին մինը վեր քիցալ:

Ըստըհենց իցցուն օր հո՛ձաթ ըն տվալ, ախրը Օց-մանուկը ո՛ւրա՛ն մորթին հանալ ա, էն ախճիզյն էլ Օց-մանուկին մորթին ո՛ւրա՛ննին նհետ քցա՛լ ա բուխարին, էրալ, չունքյի վըեր 0ց-մանուկին օթաղեն բուխարին վառ ա իլա՛լ:

Ետնան մարթըկնեկյ ըն տառալ: Էս Օց-մանուկը վըեր աման օր ծըվվում ա իլա՛լ, մին ախճիզյ ըն իլա՛լ քցո՛ւմ օթաղը, նա էլ օտում ա իլա՛լ: Բրդան իցցուն օր վըեր ծըվվացալ չի, ասալ ըն թա. «Էս խե չի՞ ծվվում, քյինանք օթաղը պա՛նանք, տըեսնանք»: Պա՛ցալ ըն, տըեսալ սաղ մարթ տառած, կնեգյն էլ քշտին:

Քյինացալ ըն ասալ. «Հենա սաղ մարթ տառած, մին կնեգյ էլ քշտին, գյուտում չընք, թա էն կնեգյը հու վա»: Պիրալ ըն ըստահանց ո՛ւրո՛ւր յրա փսակալ, վըեր մարթին անումը Օց-մանուկ ա իլա՛լ, կնգանը անումն էլ տիրալ ըն Մարիան: Օց-մանուկը վըեր հա՛քյվավը թխալ ա, ընդրա կեռքին մինը վեր քիցալ, վեր ինկյած կեռքին տեղը սաղափի կեռեքյ ըն տիրալ: Մին վախտ էս ախճԸկանը խորթ հա՛րա՛նք վըեր հըսկացալ ըն [Մարիանին] բախտը, ղոնաղ ըն կանչալ հու մին օր եր կալալ, քյինացալ կյետը լըվաց:

Մարիանին չմոշկն էլ վըեսկի յա իլա՛լ, մին թայն ինկյա՛լ ա կյետը, եր կալալ, քյինացալ. էս Մարիանն էլ հետան քյինացալ ա: Ախրը մին տան նման զատի տեմ ա ինկյալ: Ետավ նի յա մտալ, տըեսալ վըեր մին մըեռալ ընդեղնը եր տիրա՛ծ: Էս մըեռալիս անունն էլ Ալիքսաննոս ա իլա՛լ: Քշերը տըեսալ ա, վըեր եր կացավ ո՛ւրա՛ն տարավ ո՛ւրա՛նց տոն, նշանց տվավ, ասեց, թա.

«Տարբազան թակի, ասի՝ տուք ինեք ծեր Ալիքսաննոսին արևը, մին օթաղ տվեքյ, ըստեղ կենամ»:

Ետնան քյինացալ ա տարբազան թակալ, եկալ ըն պաւ̀ցա̀լ: Մարիամն ասալ ա, թա. «Տուք ինեք ձեր Ալիքսաննոսին արևը, ինձ մին օթաղ տվեքյ, կենամ»: Ըստահանք էլ ասալ ըն, թա. «Էս հի՞նչ ա ճնանչում Ալիքսաննոսին»: Մնացալ ըն մեթկ անելիս: Ախըրը տարալ ըն ո̀ւրա̀նց թավլումը մին քյէչա̀ քցա̀լ հու տեղեր Տվալ, թա. «Քցի, քոն իլ»: Հու սա էլ ետ ինկյա̀ծ ա իլա̀լ, ըստեղ խոխան պիրա̀լ ա:

Ալիքսաննոսը աման քշեր կյամ ա իլա̀լ հրցնում, թա. «Մարիան, ո՞նց ես»: Նա էլ ասալ ա. «Վերս՝ փեյին, երս՝ փեյին, օտիլըս ճտուկուտուր, ըրախիս ուրուրուցը ճոթոտած»:

Մին ղուլլուղչի էս խոսկերը ըսկացալ ա, եկալ կյողլու կացալ, ասալ, թա. «Տըեսնամ մին էս հի՞նչ ա խոսելու»: Վըեր մթնալ ա, Ալիքսաննոսը եկալ ա հո̀ւրթավը ինկյալ, թա. «Մարիան, ո՞նց ես», նա էլ ասալ ա՝ «Երս փեյին, վերս փեյին, օտիլս ճթուկուտուր ըրախիս ուրուրուցը ճոթոտած»: Նա էլ ասալ ա, թա, «Իմոր [աչքերը] քոռանա, վըեր գյիդա, թա տու հու վըս, քյեզ կըտանի իմ օթաղումս տինի, քյեզ ղայ յորղան-դոշակումս կըպահի, ըրախիտ վըեսկի ուրուրուցում կըտինի»:

Ըստրանից ետը Ալիքսաննոսը քյինացալ ա: Էս ղուլլուղչին քյինացալ ա, թա. «Խանում, խանում, Ալիքսաննոսը եկավ ըստըհենց ասեց»: Խանումն էլ ասալ ա, թա. «Սոտ ըս ասում»: Նա էլ ասալ ա, թա. «Սոտ չըմ ասում»:

Ետավ Ալիքսաննոսին մարն էլ մին քշեր ա քյինացալ կյողլու կացալ, տըեսալ ա, վըեր ղորթ ա ասում: Ետավ Մարիամին տարա լա տիրա̀լ Ալիքսաննոսին օթաղումը: Ետավ էլհա Ալիքսաննոսը եկալ ա թալվին հուրթավն ինգյա̀լ, ասալ. «Մարիա՛ն, ո՞նց ես»: Սա̀ս չի ըրալ: Քյինացալ ա թուռնատանավն ինգյա̀լ, էլհա ասալ, տըեսալ վըեր սա̀ս չըրալ: Լոխ օթաղնեն քյինացալ ա ման եկալ, սա̀ս չըրալ: Քյինացալ ա ո̀ւրա̀ն օթաղը, ասալ. «Մարիա՛ն, ո՞նց ես»: Ասալ ա, թա. «Երս ղույ, վերս ղույ, խոխիս ուրուրուցը վըեսկի:

Ետավ Ալիքսաննոսը քյինացալ ա: Ալիքսաննոսին մարը Մարիանին ասալ ա, թա. «Ախճի, վըեր մին էլ կյա, ասի բա հունց անենք, վըեր քյեզ պիրենք»: Մարիանն էլ ասալ ա, թա. «Դե լա̀վ»: Ետավ վըեր եկալ ա ասալ. «Մարիա՛ն ո՞նց ես»: Էս թա. «Երս ղույ, վերս ղույ, ըրախիս ուրուրուցը

վըեսկի», հու ասալ, թա. «Բա հունց ա նենքյ, վըեր քյեզ պիրենք»: Նա էլ ասալ ա, թա. «Պիտում ա թափուրավ քյինաք իրիքյնակեն մորը ծծիցը, յա իրիքյնակը վըեր ծերքերը լվանում ա՝ ընդրա ճրիցը պիրեք, վըեր ինձ յրա շաղ տաք, ես կըսըղանամ»:

Ետավ էքսը թափուրավ լյ̈ուց ինելավ խոխան ձիտն ա կապալ, քյինացալ, քյինացալ, հսալ իրիքյնակեն տոնը: Քյինացալ ա տըեսալ իրիքյնակին մարը ընդեղ նստած: Նա ասալ ա, թա. «Ախճի, հոր ը՞ս եկալ, արեքակը էս սհաթս վըեր կըկյա, քյեզ խանձուղ շինի»: Ասալ ա, թա. «Եկալ ըմ Ալիքսաննոսին միար իրիքյնակը, վըեր ծերքերը լուվանում ա, յա էն ճ̀ուրիցը, յա քու ծծիտ կաթնիցը տանեմ յրան շաղ տամ սղանա»: Թա. «Լյ̈ավ ա, նի մուտ էտ սանդուղը, վըեր կըկյա ծերքերը լուվանա, ճ̀ուրիցը կըպահեմ, քյեզ տամ»:

Իրիքնյակը եկալ ա, թա. «Էս հի՜նչ մրթմրթավետ ա»: Մարն ասալ ա, թա. «Տու վըս աշխարքիցը կյամ, ինձանից ը՞ս հրցընում»: Ետավ մարը պատառ կացալ ա, թա. «Ընդրա կնեգյը եկալ ա թա՝ պատառ քու ծերքերիտ ճ̀ուրիցը ինձ տո, տանեմ յրան շաղ տամ, սղանա»: Ետնան ծերքերը լուվացալ ա, ճ̀ուրիցը տվալ ո̀ւրա̀ն, թա տար: Տարալ ա յրան շաղ տվալ, սղացալ ա: Ետավ ըստեղ օխտը օր, օխտը քշեր փսակալ ըն :

Էս Օց-մանուկն էլ վըեր Մարիանին կորչիլը ըսկացալ ա, ո̀ւրա̀նց տան հացը օտում չիլալ, ետնա եր ա կենում, կիլոխ եր օնում, քյինում հու ընդեղ բազարումը նստում: Ընդեղի մարթիքյն ըստըրա խեղճ կյ̈ալիս ըն իլ̀ալ, տանում ո̀ւրա̀նց տան հաց տամ: Սա մին օր էլ էս Ալիքսաննոսին ա պատահալ, տարալ տանը մտեղ հաց ըն կերալ, Ալիքսաննոսը հացին յրա Մարիանին ասալ ա, թա. «Քյինա ծմերուկ պիր օտենքյ»: Ամբարումն էլ մին ծմերուկ ա իլ̀ալ, քյինացալ ա պիրալ: Ալիքսաննոսը ասալ ա, թա. «Էս փիսն ա, քյինա մին լյ̈ավը պիր»: Տարալ ա, էլիա էն պիրալ: Էլիա ասալ ա, թա. «Էս էլ ա փիս, տար մին օրիշը պիր»: Տարալ ա, էլիա էն պիրալ: Շատ վըեր ըստիենց ա ըրալ, Մարիանը քմքըծիծաղ ա տվալ, սա̀ղափի կեռեքյը պյ̈աց ա իլալ: Էն Օց-մանուկը էս վըեր տըեսալ ա, ասալ ա, թա. «Էս իմ կնեգյս ա, ինձ տո տանեմ»: Թա. «Չէ»: Դավի յըն ըրալ, ախըրը կնեգյը Օց-մանուկն ա եր կալալ, տղան ընդրա տվալ, եր կալալ, քյինացալ:

Աստվածանից իրեք խնձոր վէր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝չիլսողին:

## 16.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԵՐԿՈՒ ՏՂՈՐՅԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլյա՛լ ա չիլյա՛լ մին թաքավեր, էս թաքավերիս էլ՝ էրկու տղա։ Էս էրկու տղան մին-մինու ասալ ըն. «Եկեքյ քյինանք փող աշխատենք»։ Եննան տանիցը տո՛ւս ըն եկալ, շատ-խրեգյ քյինացալ, հսալ էրկու հղե։ Ըստեղ մին-մինուանից ճոկվալ ըն։ Էս պիծինը առռէ ոննավ-կլխավ կորալ ա, ամմա մեծը քյինացալ ա մին մարթի գյա՛ղա՛ մտալ։ Էս տղաս էս տանը մին քանի վախտ կացալ ա, եննան իրան աղին ասալ ա, թա. «Ա՛ ղա, մին ճո՛րի տո, փողի տեղ ըմ գյո՛ւղո՛ւմ, տանեմ պեռնեմ, պիրեմ»։ Էս մարթն էտ տվալ ա էս թաքավերին տղին։

Էս տղան մին մարթ ա եր կալալ, քյինացալ մին պեցո՛ւր սարի կոշտ։ Ըն- ղեղ էս թաքավերին տղան չըվալնեն եր ա կալալ հու եր իլյա՛լ սարը, ընդեղ վըեսկին չըվալնեն ածալ, եննան սարիցը չըվալնեն թուլալ ա տըվալ, էն տակի մարթն էլ ճորին պեռնալ ա, թա քյինա։ Էս թաքավերին տղան մին տեղ չի քիթալ, թա վեր կյա՛, ճարը կտրալ ա, մին քար տըըքցըրալ ա, էն տակի մարթին անից ա կացալ, ընդեղ էն մարթը խլիփա՛լվալ ա, մըեռալ։ Էն ճո՛րին մնացալ ա ընդեղ պեռնած։

Էս թաքավերին տղան հինչքան ման ա եկալ, թա մին տեղ քիթնի վեր կյա՛, քիթալ չի։ Մինչև ո՛ւրո՛ւգյո՛ւնը ման ա եկալ, մին տեղ չի քիթալ, թա վեր կյա՛, ախրը մին տեղ քոն ա իլյա՛լ։ Քոն իլյա՛ծ վախտն արազումը տըեսալ ա, վըեր մին մարթ եկավ հու ո՛ւրա՛ն ասեց, թա. «Իրեք օր ըտեղ կենալ պիտիս, եննան ըտեղատ վեր կյա՛ս»։ Էս տղան ընդեղ իրեք օր կացալ ա, եննան առռե էն իրե- քինջի քշերը քոն ա իլյա՛լ հու քշերավ զո՛ւրթնա՛ցալ, տըեսալ վըեր մին կտրի յրա կաղնած ա։ Էս տղաս հո՛ւրթավը մտեկ ա ըրալ, տըեսալ վըեր ո՛ւրա՛ն ախպերը խեխտվում ա, հո՛ւրթավը նի յա մտալ, ախպորը պրծըըցըրալ։

Եննան էս պիծի ախպերը մեծ ախպորն ասալ ա. «Ա՛խպեր, ե՛կ փախչենք, վըեր կյո՛ւլ ախպերը չիկյա մեզ օտի»։ Եննան էս տանիցը տո՛ւս ըն եկալ, քյինացալ։ Էլհա էս պիծի ախպերը ոննավ-կլխավ կորալ ա, ամմա էս մեծ ախպերը քյինացալ ա մին պառավի տոն։ Էս մեծ ախպերը էս պառավ կնգանը տանը մին քանի վախտ կացալ ա։ Եննան էս պառավս էս տղին վըեր պիլյա՛նի յա տըվալ, թա աման օր մին բաղ պա՛ց, ման եկ, ես էլ քյինում ըմ մեր պարեկամին տոնը։ Եննան էս պառավը քյինացալ ա։

Քշերավ էս տղան քյինացալ ա մին բաղին տո՛ռը պա՛ցալ հու էս բաղն էլ էնքան մեծ ա իլյա՛լ, վըեր քշերավ էս տղան փոռնալ ա, դո՛ւզ քյինացալ առռե էն

տակը հու ընդեղից  էլ կյամ մեչը, մթնում ա իլա̀լ: Հու ըստհենց օրը մին բաղ ման ա եկալ ամմա մնացալ ա թա̀քյ մին բաղ: Էս բաղն էլ քյինացալ ա քշերավ ման եկալ, տըեսալ վըեր առռե էն մեչին մին լա̀վ հովուզ:

Եննան էս հովուզին քշտիցը մին պատառ քյինացալ ա, մին էլ քմակին մտեկ ըրալ, տըեսալ վըեր իրեք դուշ եկին հովուզին քշտին թևերնեն հնեցին հու ծլեցին, հովուզին քշտին վեր տիրին, եննան ո̀ւրա̀նք մին լավ իիլիմա̀լա̀կ ախճկերք տա̀ռին: Էս տղաս վըեր տըեսալ ա, ըշտափալ ա, ընդեղ վեր ինգյա̀լ: Օխտը օրիցը ետնան էս պառավս եկալ ա տըեսալ, վըեր էն տղան հովուզին քշտին ըշտափած, էս տղին ծերքան փռնալ ա, եր կցրալ, հրցրալ, թա. «էտ հի̑նչ ա»: Էն տղան էլ ո̀ւրա̀ն  կլխին եկածը պատմալ ա:

Ետնան էս պառավը ասալ ա, թա. «Ես էլ ըմ տըեսալ, հինչքան ուզացալ ըմ, թա փռնեմ իմ տղորցս մինին հետի օզեմ, կրացալ չըմ փռնեմ: Ետնան էս տղան էս պառավին ասալ ա, թա. «Վըեր ես նահանցից մինը փռնեմ, ինձ հետի կօզե̑ս»: Էս պառավն էլ ասալ ա. «Հա́, կօզեմ»: Էս տղան էլ քյինացալ ա տըեսալ, վյըեր էս ա էն իրեք դուշը եկին, թևերն են հնեցին, ծլեցին, եննան նի մտին հովուզին մեչը, թա լղանան: Լղանալիս վախտը էս տղան բիրդան մեշնակ ախճկանը ոննիցը փռնալ ա հու հովուզիցը տա̀ւս կալալ, թևերն էլ եր կալալ, մեկալնեն էլ փախալ ըն: Եննան էն փռնած ախճիգյը տարալ ա պառավին տոնը: Եննան պառավը հրսանիք ա ըրալ, էս ախճիգյն էս տղին երան, հու էն ախճկանը թևերն էլ էս տղան տիրալ ա ո̀ւրա̀ն  սանդուղումը: Էս տղիս էլ էրկու տղա յա իլա̀լ, վըեր էլհա թևեր ա իլա̀լ:

Մին քանի վախտ էս պառավին տանը կացալ ըն: Էս տղան պառավին ասալ ա, թա. «Ես քյինամ ըմ իմ հոր տոնը, ինքյ կալ իմ սանդուղիս պիլա̀ննին պահի, ամմա տաս ոչ իմ կնգանս»: Էս պառավը էս տղին ասալ ա. «Ա́ տղա, քյինալ միր»: Էս տղան ասալ ա. «Չէ́ քյինա̀լ պիտիմ»: Ետնան պիլա̀ննին տվալ ա պառավին հու ինքյը քյինացալ:

Էս տղան շատ-խրեզյ քյինացալ ա, հսալ ո̀ւրա̀նց տոն: Էս տղան վըեր քյինացալ ա, էս կնեգյը եկալ ա պառավին անից պիլա̀ննին ինքյ կալալ, տարալ թևերը հանալ, կյեցալ, եննան ո̀ւրա̀ն տղորցը նհետ փախալ: Էս թաքավերին տղան ընդեղ մին խիլլա̀ վախտ կնալիցը եննան մին էլ ետ ա տառալ էն պառավին տոնը, տըեսալ, վըեր ո̀ւրա̀ն  կնեգյը ընդեղ չի: Էս տղան պառավիցը հըրցըրալ ա, թա. «Բա կնեգյս հոր ա̑»: Էս պառավն էլ ասալ ա. «Բա հի̑նչ, կնեգյտ փախալ ա, քյինացալ»: Եննան էս տղան ասալ ա. «Բա

հունց անե՞մ, հունց չի անե՞մ»։ Էս պառավս էլ ասալ ա, թա. «Ես գյիդա̀լ չըմ, իմ ախճիգյս կըգյիդա̀, քյինա̀ ընդրա կոշտը»։

Էս տղաս քյինացալ ա պառավին ախճկանը տոնը, էս պառավին ախճկանիցը հրցրալ, թա. «Ես հունց անե՞մ, կնեգյս փախալ ա»։ Էս պառավին ախճիգյն ասալ ա. «Վախիլ մի, ես ճար կանեմ»։ Եննան էս պառավիս ախճիգյը աշխարքումս հինչ դուշ-ղանաթ ա իլա̀լ, պիրիլ ա տվալ հու լոխճիցը հրցրալ ա, թա. «[Հու] կգյի՞դա փլան կնգանը տեղը»։ Լոխ դուշերը ասալ ըն, թա. «Գյո̀ւղո̀ւմ չընք»։ Մինակ մին պառավ կոկոռ, քոսուտ՝ հու ասի տեն քյիցելի, վըեր իսկի մին չեթ կապեկ էլ չի ա̀ժիլ, մին ակռավ, ասալ ա, թա. «Ես տեղը գյո̀ւղո̀ւմ ըմ»։ Եննան էս տղան ասալ ա, թա. «Հունց ա՞նեմ, վըեր ինձ տանես ընդեղ»։ Էս ակռավն ասալ ա, թա. «Մին շատ մեծ վըեսկի ղափազա̀ շինիլ տո հու ղափա̀զին կլխան մին քող ըրած, վըեր տու մեջին նստես»։ Էս տղան էլ շինիլ ա տըվալ վըեսկի ղափա̀զան հու քողն էլ ակռավին ոննիցը կապալ։

Էս ակռավն էլ թռչալ ա քյինացալ, էն կնգանը հայաթումը կաղնալ։ Էս տղան էլ ղափազիցը տո̀ւս ա եկալ քյինացալ արթման, տըեսալ վըեր ո̀ւրա̀ն էրկու տղերքը ընդեղ հաց ըն օտում։ Ինքյն էլ նստալ ա նհետնեն կերալ, պրծալ։ Եննան էս էրկու տղերքը քյինացալ ըն մորը ասալ, թա. «Վըեր մունք օտում ինքյ, մինն էլ մզնհետ օտում ար»։ Մարն ասալ ա. «Ծզնհետ մարթ հո՞ւ պիտի ինի, խեչի լիհա սռված ըք իլա̀լ, շո̀ւտ կերալ ըք, գյո̀ւղո̀ւմ ըք [թա] ծզնհետ մարթա իլալ»։

Մի քանի վախտ էս մարթս ո̀ւրա̀ն էրկու տղորցը նհետ հաց ա կերալ էս էրկու տղերքը տըեսալ ըն, վըեր ո̀ւրա̀նց նհետ մին մարթ հաց ա օտում, ամմա ո̀ւրա̀ն տըեսնում չըն իլա̀լ։ Կյամ ըն մորը քշտին ո̀ւրթո̀ւմ օտում, թա մզնհետ մին մարթ հաց ա օտում, մունք ո̀ւրա̀ն տըեսնում չընք։ Էս կնեգյս տըեսալ ա, վըեր ո̀ւրթո̀ւմ ըն օտում, ճաք-ճաք ըն կյամ, մտքումն ասալ ա թա. «Մին դո̀նո̀ւմ քյինամ սահանց նհետ հաց օտեմ, տըեսնամ, բա̀լքյա̀մ դո՞րթ ա»։ Եննան ըստրա էքյսը տղորցը հաց ա տվալ, ինքյն էլ քյինացալ քշտներին նստալ, հաց կերալ։ Էս տղաս վըեր տըեսալ ա, էլ աներևույթ չի տա̀ռալ, ամմա քյինացալ ա ո̀ւրա̀ն կնգանը քշտին նստալ, նհետը հաց կերալ։ Էս կնեգյս վըեր տըեսալ ա, ճնա̀նչա̀լ ա, վըեր ո̀ւրա̀ն մարթն ա, շատ հմանչալ ա։ Եննան էս տղաս ո̀ւրա̀ն կնեգյը հու էրկու տղան մին էլ եր ա կալալ, տարալ թաքավերին տոնը։

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինկնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չի լսողին։

## 17.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԿՆԵԳՅԸ ՎԸԵՐ ԷՇԻ ՔՌՌԱԿ Ա ՊԵՐՎԱԼ, ԸՆԴՐԱ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին թաքավէր։ Ըստրա էլ իլյալ ա մին կնեգյ։ Սահանք քյի-նացալ ըն ման կյյալ, տըեսալ ըն մին էշ՝ քոռակը հետան քյինալիս։ Թաքավերին կնեգյն ասալ ա. «Ըներակ քյեզ, ա՛յ էշ, քոռակըտ հետատ կյյալիս ա»։

Մին վախտ էս թաքավերին կնեգյը ետ ա ինկյյալ, մին էշի քոռակ ա պերյալ։ Էս կնեգյը պերալ ա մին փալան կարալ, մին դուշդուն կարալ, ամեն սարքն էլ կարալ։ Հու վըեր էս տղան էշի քոռակ ա իլյալ, նա էլ քշերը մարթ ա իլյալ տյառնում, ցերեկը՝ էշ։ Ըստրա մարը պերալ ա փսակալ։

Մին օր հաց թխելիս էս էշին կնեգյը քշերը պերալ ա մորթին քցյալ թորենը. էս էշը եր ա կացալ քշերն, ասալ ա. «Կնեգյ, էտ հինչ ա՞ էրում»։ Նա էլ ասալ ա. «Փետ պիրողին աչքը տո՛ւս կյյա փիս փետ ա պիրյալ»։ Էս էշը քյինացալ ա մորթուն տեղը ման եկալ, տըեսալ ընդեղ չի։ Տո՛ւս ա եկալ տըեսալ ծիտերը ծըլվըլալիս, ինքյն էլ նհետնեն ծըլվըլացալ ա, ծըլվըլացալ, ծետ տյառալ, թըչյալ քյինացալ մին ամարաթի կլխի տոն շինյալ։

Ո՛ւրյան կնեգյը եր ա կացալ շենբաշեն արկաթ վըհաքալ, մին-մին չին շինալ, քյինացալ ո՛ւրյան մարթին տանիցը կախ տըվալ, եր իլյալ տըեսալ խրաված քցյած, ամման շամփուռիցը մին թիքյա եր ա կալալ։ Մարթը ասալ ա թա. «էտ հի՞նչ մըրթմըրթավետ ա, տուս եկ կորի, թաչինյա կնտիչըիս պտոկը կօնեմ, թող անեմ»։ Էս կնեգյը տո՛ւս ա եկալ ըղանչանք ըրալ, պղատանք ըրալ, եշալ չի,կնտիչին կիլոխն ա կալալ, եր կալալ տանը կլխավը իրեք հետ շոռ տըվալ, տափավը տվալ փշըրալ։

Էն տղին մարն էլ մին ոչխարի բուդ ա կտրալ, տիրալ ուրուրուցումը, ստըըստ ծեծ տըվալ ըրորալ, ծեծ տըվալ ըրորալ, տառալ ա մին ախճիգյ։ Էս ախճիգյը մին օր տո՛ւս ա եկալ, ախճկորցը նըհետ գյո՛ւլըյա ընելիս վախտը մին դուշ եկալ ա կնտիչին առալ, եր կալալ քյինյացալ։ Եկալ ըն ո՛ւրյան մորն ասալ, նա էլ ասալ ա. «Ո՛ւրյան ախպերն ա իլյալ»։ Ետնան էս դուշը էս ախճըկանը տարալ ա տիրալ էն ամարաթին կլխին, ասալ, թա. «Ըտեղ կացիր, ես քյինամ վըերս անեմ պիրեմ, տու էլ գյո՛ւլըյա ըրա»։

Մին թաքավերի տղա յա եկալ մին պառավի տոն, ասալ, թա. «Եկալ ըմ ախճիգյ օզեմ, ախճկան տեղ ը՞ս գյիդո՛ւմ, ասե»։ Էն պառավն էլ ասալ ա. «Իմ քշուռքութունավըս մին փող տոք, մին լավ ախճիգյ պիրեմ քյեզ տամ»։ Էն

թաքավերին տղան տըվալ ա: Ետնան էս պառավը մին տա̀նա̀կ, մին ոչխար, մին էլ մին ղզղան տարալ ա էն ամարաթին տակին կրակ ըրալ, ղզղանը տիրա̀լ կրակին, ոչխարը մորթելիս տեղը տա̀նա̀կը տիրա̀լ ա մեչքին: Էս ախճիգյն ասալ ա. «Նանի՛, նանի՛, տի՛ր վզին»: Տիրա̀լ ա տմա̀կին, էլհա ասալ ա. «Նանի՛, տի՛ր վզին»: Տիրա̀լ ա փորեն: Ըստհենց շատ ասալ ա, էն պառավը վզին չի տիրա̀լ, ամմա օրիշ տեղերքին ա տիրա̀լ: Ետնան էս ախճիգը մին կոլայա կախ տըվալ, ասալ թա ախպո̀ւրիցը լցի: Էս պառավը կոլին ոռն ա տեմ կալալ:

Էս ախճիգյն ասալ ա. «Նանի՛, նանի՛, ըռեխը տեմ կալ»: Փորն ա տեմ կալալ: Ըստհենց շատ ըրալ ա, ախրը էն ախճիգը, վըեր էն կնեգյը ժինճիլ ա պերա̀լ ընդրանավ եր իլալ, էն ախճիգյն էլ ընդրանավ վեր ա եկալ: Էս թաքավերին տղան տրա̀լ ա ծիյին թարքյին, եր կալալ էս ախճկանը քյինացալ: Ախպերը եկալ ա տըեսալ վըեր գյո̀ւլա̀ն ընդեղ վեր քցա̀ծ, ժինճիլը հու քյա̀նղիրն էլ կախ տրված: Շատ ման ա եկալ, ման՝ քթալ չի: Ախրը թռալ ա ամարաթին դրաղը, իրեք հետ զինքյը տըվալ ա տափը, փշըրվալ, մեծ ճոթը անգուճն ա մնացալ:

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

## 18.ԾԻՏԻԿ-ՎԻՏԻԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա չիլա̀լ մին մարթ, մին էլ մին կնեգյ: Ըստրանց էլ իլա̀լ ա̀ մին տղա, մին էլ մին ախճիգյ: Էս կնեգյս նաչաղացալ ա, ծառան մին տիրն ա վեր ինգյա̀լ, էս կնեգյը մըեռալ ա: Էս մարթըս քյինացալ ա մին օրիշ կնեգյ էլ ըրալ: էս կնեգյս սոտիկ-սոտիկ նաչաղացալ ա: Էս մարթը ասալ ա. «Հինչ կօ̑տես, վըեր սղանաս: Կնեգյն ասալ ա, թա. «Վըեր տղատ մորթես, կօտեմ»: էս մարթը մին աղի շլիպլիթ ա եր կալալ, մին էլ մին թթո շլիպլիթ հու տղան մին էլ ախճիգը, շատ-խրեկյ քյինացալ: Էն ախճիգը ասալ ա. «Ա՛պեր, ծարավ ըմ»: Ասալ ա. «Ինքյ կալ էս աղի շլիպլիթը, տար ըտաղավ թուլուլ տո, հինչ տեղ վըեր կաղնի, ընդեղ հենա ճո̀ւր կա, քյինա̀ խմի, եկ»:

Ետնան էս ախճիգը հինչ վըեր ասալ ա, ըրալ ա. էն աղի շլիպլիթը քյինա̀ցալ ա մին տեղ կաղնալ: Քյինա̀ցալ ա խմալ, եկալ հու ասալ. «Ա՛պեր, սոված ըմ» Ասալ ա, թա. «Ինքյ կալ էս թթո շլիպլիթը, տար հելլա ըտաղավ թուլուլ տո, վեր տեղ վըեր կաղնի, ընդեղ հեն ա հաց կա, քյինա̀ կեր, եկ»:

Ետնան էս ախճիգյը էս թթո շլիպլիթը տարալ ա թուլուլ տվալ, քյինա̀ցալ ա մին տեղ կաղնալ: Էս ախճիգյը քյինա̀ցալ ա թա հաց օտի: Էս մարթը էս տղին եր ա կալալ, քյինա̀ցալ մին չինա̀րու տակի նստալ: Էս մարթը չուխան հու փափաղը տիրա̀լ ա չինա̀րո̀ւն պտկին, ետնան էս տղին մորթալ, տարալ: Էն ախճիգյը եկալ ա տըեսալ հա̀րը ընդեղ չի, տես հու տենին մտեկ ա ըրալ, փափաղը հու չուխան վըեր տըեսալ ա, հենց ա գյիդացալ թա ո̀ւրա̀ն հա̀րն ա չինա̀րո̀ւն պտկինը: Քյինա̀ցալ ա եր իլա̀լ չինա̀րո̀ւն պտոկը, տըեսալ ո̀ւրա̀ն հորը չուխան հու փափաղն ա: Ետնան քյինա̀ցալ ա ո̀ւրա̀նց տոն հու ասալ. «Ա՛յան, սովածըմ»: Նա էլ ասալ ա, թա. «Հէն ա ըզղանումը բոզբաշ կա, քյինա̀ կեր»: Քյինա̀ցալ ա մին թիքյա̀ կերալ, ասալ թա. «Հունց շատ համեղ ա է՛»: Մին թիքյա̀ էլ ա կերալ, հելլա ասալ. «Հունց շատ համեղ ա է՛»: Մին թիքյա̀ էլ ա կերալ, տըեսալ, վըեր ախպորը ծիծիկնը մեչին:

Ետնան էս ախճիգյը շատ լա̀ց ա իլա̀լ, ետնան ծիծիկնը թոալ ա քյինա̀ցալ հերթին կաղնալ հու ասալ. «Ծիտիկ ըմ, ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ, մոր կերած ըմ, ա̀զիզ քուվոր խնչըցըրած ըմ»:

Ետնան թռալ ա, քյինա̀ցալ մին ասեղ ծախողի կոշտ, ասալ թա. «Ա ՛պեր, հինչ կըտա՞ս, մին խաղ ասեմ»: Նա էլ ասալ ա. «Մին թոփ ասեղ կըտամ»: Ասալ ա թա. «Ծիտիկ ըմ, ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ, մոր կերած ըմ, ազիզ քուվոր խնչըցըրած ըմ»: Նա էլ մին թոփ ասեղը տվալ ա:

Ետնան քյինա̀ցալ ա մին շանջախ ծախողի կոշտ, ասալ թա. «Ա՛պեր, հինչ կըտա՞ս, մին խաղ ասեմ»: Թա. «Մին թոփ շանջախ կըտամ»: Ասալ ա, թա. «Ծիտիկ ըմ, ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ,մոր կերած ըմ ա̀զիզ քուվոր խնչըցըրած ըմ»: Հելլա մին թոփ շանջախը տվալ ա:

Ետնան քյինա̀ցալ ա մին մխթասեղ ծախողի կոշտ թա, Ա՛պեր, հինչ կըտա՞ս, մին խաղ ասեմ»: Թա. «Մին թոփ մխթասեղ կըտամ: Ասալ ա, թա. «Ծիտիկ ըմ, ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ, մոր կերած ըմ, ա̀զիզ քուվոր խնչըցըրած ըմ»: Ետնան մին թոփ մխթասեղը տվալ ա, ինքյ ա կալալ:

Ետնան քյինա̀ցալ ա մին բախկալի կոշտ, թա. «Ա՛պեր, հինչ կըտա՞ ս, մին խաղ ասեմ»: Թա. «Մին գյիրվանքա չամինչ կըտամ»: Ասալ ա, թա. «Ծիտիկ ըմ, ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ, մոր կերած ըմ, ա̀զիզ քուվոր խնչըցըրած ըմ»: Ետնան չամինչը տվալ ա:

Ետնան քյինա̀ցալ ա մին ճոթ ծախողի կոշտ, թա. «Ա՛պեր, հինչ կըտա՞ս, մին խաղ ասեմ»: Թա. «Մին թոփ մով կըտամ»: Ասալ ա, թա. «Ծիտիկ ըմ,

ծիլվիլիտիկ ըմ, հոր կերած ըմ, մոր կերած ըմ, ա̀զիզ քուվոր խնչըցըրած ըմ»: Մովը էն մարթը տվալ ա:

Ետնան էս տղան քյինա̀ցալ ա ո̀ւրա̀նց հերթին երա կաղնալ, ասալ, թա. «Ա՛պեր, մին հո̀ւրթա̀վը ինձ եշի»: Եշալ ա, շանջախը ածալ ա աչքերը, քուռացալ ա: Ետնան ասալ ա, թա. «Ա՛յան , մին ինձ եշի»: Թա. «Կըմհանչեմ»: Թա. «Դե՛ մին խախալը իրեսավտ կալ, եշի»: Եշալ ա: Մխթասեղը ածալ ա աչքերը, քուռացալ ա:

Ետնան քուվորը ասալ ա՝ «Ա՛ քուր, մին հերթավը եշի»: Էս ախճիգյըս ասալ ա, թա. «Վախում ըմ ինձ էլ իմ հոր նման անես»: Ասալ ա, թա. «Վախիլ մի, դե էկ կոշտս»: Եկալ ա կոշտը: Էն ճոթերը-զա̀տերը ավալ ա ո̀ւրա̀ն , թա. «Ինքյ կալ, ըլխալուղ, հալավ-զատ կարի, ես հես ա կյամ ըմ»: Թա. «Լա̀վ ա»: Ետնան էս տղան քյինա̀ցալ ա մին տասսը օր կացալ, եկալ տըեսալ կարած-պըծած:

Էս տղան ո̀ւրա̀ն  քվորը եր ա կալալ, քյինա̀ցալ ըն, քյինա̀ցալ, տըեսալ երկու հղե: Մինը մինա̀վն ա քյինա̀ցալ, մինը՝ մինա̀վը: Էս ախճիգյս քյինա̀ցալ ա տըեսալ մին մեծ ամարաթ: Քյինա̀ցալ ա ընդեղ նստալ, մահրամա ըրալ: Մին խիլլա̀ նստալ ա, ըրալ, տըեսալ վըեր հես ա մին մեյմուն եկավ ո̀ւրա̀ն կոշտը հու ասեց, թա. «Տու հինչ ըլլըմըլլա̀թ ըս, վըեր եկալ ըս ըստեղ մահրամա անում»: Էն ախճիգյն էլ ասալ ա. «Ըստըհենց ըլլըմըլլա̀թ ըմ»: Էս մեյմունը եկալ ա, թա ըստրա ըսպանի, էս ախճիգյը եր ա կացալ, վըեր ըստրա ոնը-կլխան փռնալ ա տափավը եկալ, մեծ ճոթը անգուճն ա մնացալ:

Հելլա քյինա̀ցալ ա նստալ ո̀ւրա̀ն  մահրաման ըրալ, մին խիլլա̀ էլ կացալ, տըեսալ, վըեր հելլա ա մին մեյմուն եկավ, ասեց. «Տո՞ւ իմ ախպոր ըսպանե-ցիր»: Էս ասեց հու եկավ թա ըստրա ըսպանի, էս ախճիգյը վըեր եր ա կացալ ըստրա մեչան փռնալ տափավը տվալ, փշրվալ ա:

Հելլա քյինա̀ցալ ա նստալ մահրաման ըրալ, մին խիլլա̀ կացալ, տըեսալ, վըեր հես ա մինն էլ եկավ, ասեց, թա. «Տո՞ւ իմ ախպորց ըսպանեցիր»: Էս ասեց հու դիբի էս ախճկանը կզնըված-կզնըված եկավ: Էս ախճիգյը եր ա կացալ, թա ըստրա էլ ըսպանի, էս մեյմունը, վըեր էս ախճկանը եր ա կալալ տափավը եկալ, էս ախճիգյը փշրվալ ա:

Ետնան մին դուշ եկալ ա էս ախճկանը տըեսալ հու վըեր տըեսալ ա, քյինա̀ցալ ա մին թաքավերի ասալ: Էս թաքավերս էլ մին տեղ ա դըկալ, էն շիարին յըա հու մին կյիր կյիրա̀լ, թա էտ ախճկանը կտորնեն հվաքեցեքյ,

ո՛ւրո՛ւր յրա տիրեքյ, էս տեղըն էլ քսեցեքյ, կըսըղանա: Ետնան էն շհարին մարթիքյն էլ էն ախճըկանր կտորնեն ո՛ւրո՛ւր յրա յըն տիրալ, էն տեղն էլ քսա՛լ, աղացալ ա, հելլա տա՛ռալ էն ախճիգյը, մին էլ հելլա եր կացալ, մահրաման ըրալ:

Հելլա էն մեյմունը եկալ ա, թա ըսպանի, էս ախճիգյս եր ա կացալ էս մեյմունին վըեր եր կալալ տափավը եկալ, էն մեյմունը փշրվալ ա: Ետնան մին օրիշ մեյմուն եկալ ա էս ախճկանը գյա՛դա՛ նի մտալ, հուվել էն մեյմունը աման օր տեղերումը ք…..ում ա իլա՛լ:

Էս մեյմունը մին վախտ քոնըտեղից եր ա կացալ, տըեսալ ո՛ւրա՛ն յորղան- դո՛շակը նհենց ճնթոը, փիս, ինքյը-ինքյը ասալ ա մեյմունը. «Հինչ կօ՞տի». մին էլ ինքյը ասալ. «Լա՛վ սո՛ւրո՛ւն փլավ»: Հելլա ասալ ա մեյմունը. «Հինչ կօ՞տի»: Հելլա ասալ ա. «Լա՛վ, սո՛ւրո՛ւն, բոզբաշ»: Մին էլ ասալ ա մեյմունը. «Հունց յորղան-դոշա՞կում քոն կինի»: Ասալ ա. «Լա՛վ, սո՛ւրո՛ւն զարբաբ յորղան-դո՛շա՛կում քոն կինի», հու ըստըհենց շատ զատեր ա ասալ:

Ետնան ախըրը մին դոնում էս մեյմունը թորենը վառալ ա, ոռը տեմ կալալ թորենին, թա հուեցը որ ք....ի ոչ, էն ախճիգյն էլ հեն ա իլա՛լ ամբարին տակին կյուղլու կացած, թաքուն-թաքուն եկալ ա մեյմունին քռի տվալ, քցա՛լ թորենը, էրա՛լ:

Մեհեգյ էտ ախճկանը թողենքյ, ո՛ւրա՛ն ախպորիցը խոսենք: Էս տղան վըեր էն հղցավը քյինա՛ցալ ա, քյինա՛ցալ ա հսալ մին քաղաք, ընդեղ մին դա՛մո՛ւրչո՛ւ շա՛գյիրդ նի մտալ: Շատ կացալ ա, կացալ, մին վախտ ասալ ա, թա. «Մին ես քյինա՛մ տըեսնամ իմ քուր հի՞նչ տա՛ռավ»: Ետնան եր ա կացալ քյինա՛ցալ, քյինա՛ցալ հսալ էն հղըցին կլոխը, ետնան էն մին հղցավը քյինա՛ցալ էն ամարաթը հսալ, եր իլա՛լ տըեսալ ո՛ւրա՛ն քուրը ընդեղ մահրամա յա անում : Ետնան ըստեղ փսակվալ ըն մարթը-կնեգյ տա՛ռալ, էս ամարաթումը նստալ, քյեփ ըրալ:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 19.ՀԻՆԴԻ ԹԱՔԱՎԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լա, չիլա̈լ մին թաքավեր։ Ընտրան իրեք տղա ա իլա̈լ։ Պռաված վախտը մին ո̈ւրո̈ւգյո̈ւն կանչըմ ա տղոցը ասըմ. «Վե՛րթիք, ես պռավալ ըմ, սօր-էքյո̈ւց հո՞ւ վա գիտըմ հի՞ք ըմ մոնըլական, օզըմ ըմ իմ թաքավերութjունը տամ ծըզանա մինին, հո՛ւ վըեր ղոչչաղ ա, հո՛ ւ վըեր լա̈վ վըերական ա։ Էքյուց քյեցեք վըերս ի, հո՛ւ վըեր լա̈վ վըերս կպերի, թաքավերությունը ընտրան կտամ, ղաբու՞ լ ըք»։

-Ղաբո՛ւլ ընք, ղաբու՛լ,-ըսեցին թաքավերին տղեքը, քյեցին թաղարիքյ տեսին, քոն իլին։ Քնըտեղան եր կընալուց քյեցին վըերսի. ամեն մինը ճոկ-ճոկ տեղ ճուկեցին, ըսկսեցին ո̈ւրա̈նց վըերսը։ Մըեծ ու միչնակ ախպերքը շատ չալիշ եկին, շատ տես ու տեն ընկին, կրեցին վըեչ լհա̈ մին ըլը-պաստրակ էլա վեր քցին, մթնըժոռած վախտը տա̈ռը-տերտակ պալատը եկին, ամմա պուճուր ախպերը մին կյիխտար շլակին տիրա̈ծ, եկավ թաքավերին փեշքեշ ըրավ։ Թաքավերը շատ ուրխացավ, ճկատան պաչեց, «Ղոչչաղ տղա» ասեց, կողքին նստըցրավ։

Էն էրկու ախպերքը քթըպոռշ ըրած ըսեցին. «Ա՛ հա̈ր, դե մունք հի՞նչ կարինք անել, վըեր մեր ճանկը վըեչ մին վըերս չընկավ, վըեր սպանինք, տոն պերինք, թող էքյո̈ւց քյինանք, կտեսնաս մըզանա հու վա ղոչչաղը»։

Էքյսը էլիա իրեք ախպերքը վըերսի քյեցին, մեծ ու միչնակ ախպերքը էլիա տես ու տեն ընկին, կրեցին վըեչ մին պեն էլա տոն պիրին։ Պուճուր ախպերը էտ ո̈ւրո̈ւգյո̈ւն էլիա մին ջեյրան տոն պիրավ, հորը թավազա ըրավ։

- Հը՛, տեսնըմ ըք ծեր պուճուր ախպերը հինչքան ղոչչաղ ա, բա հմանչըմ չը՞ք։

Տղաքը էտ խոսքին յրա ավել բեթար նըղացին, ըսեցին. «Ա՛ հա̈ր, թող էքյուց էլ քյինանք վըերսի, մըզանա հու վըեր մին լա̈վ վըերս կպիրի, թաքավերությունդ ընդրա կտաս, շատ ընք խընթըըմ»։

- Լա̈՛վ, լա̈՛վ, էս ո̈ւնո̈ւմ էլ ծեզ իրավունք ըմ տամ, ամմա տեսեք, էտ վերչին անքամն ա հա՛, էլ ինձ խուսցնիք վըեչ։

- Չէ՛, չէ՛, ա՛ հա̈ր, խուսըցնել չընք,- ըսեցին տղերքը, ո̈ւրա̈նց օթախնին քեցին։

Քշերվա կեսին մեծ ախպերը միչնակ ախպորը զըթնըցրավ, ասից. «Ա՛ բալամ, թաքավերությունը մեր պիծի ախպերը խլիլական ա մեզ ըստղան տո̈ւս անի, պիտմա ըտրա կլխին մին օյին պերինք, վըեր էքյուց կարի վըեչ

պալատ կյա̀, հինչ լա ասըմ, ըսպանի՞նք, թա մին ճրավեր քցինք, կլո̀խը ծածկինք, կարի վըէչ մեչան տո̀ւս կյա̀։

- Հա՛, ճրավեր քցելը ավելի մըսլըհաթ ա, էտ լա̀վ ըս մտածալ։

Էքյսը իրեք ախպերքը մինտեղ տո̀ւս եկին, քյեցին-քյեցին մին ճրավեր տեսին, մըեծ ախպերն ասեց. «Ծարավ ըմ, թոքերս ցմաքվալ ըն, կըկարի՞ք պատառ ճո̀ւր հանիք, վըեր խմիմ՝ սերտս հվանա»։

- Խե՞ չընք կարիլ,-ըսեցին մյուս ախպերքը, - բա խի՞ քյեզ ծարավ կթողինք, բա ճուրը վերան հինչա՞վ կհանինք։

Պիծի ախպերը ասից. «Ինձ քյա̀նդիրավ կախ տվիք, մին աման տվիք, մեչը կլցնիմ ետնան կըպցրցնիք, թա էլհա կօզիք, կմննիմ ճուր կհանիմ»։

Շատ ուրխացին մեծ ախպերքը, քյա̀նդիրը մեչքան կըպեցին, ճրամանը ծեռքը տվին, կախ տվին վերին մեչը։ Ճրամանը լցնելան ետը ախպորցը կանչից. «Դե՛, քաշեցեք, ճուրը պերըմ ըմ»։

Ախպերքը քյա̀նդիրը քաշեցին, լհա̀ վըեր պատառ պցրցրին քյա̀նդիրը կտրեցին, վերին մեչին թողեցին, վերին ըռեխն էլ ծածկեցին, ո̀ւրո̀ւլյո̀ւնը տոն եկին, հորը պատմեցին, վըեր սաղ օրը էլհա պեն չը ճրեցին։

- Բա ծեր ախպերը հո՞ր ա, խե՞ չի իրևըմ։

- Մունք ընտրան տըեսալ չընք, հա̀լբա̀թ կըկյա̀։

Թաքավերը ըսպասից, ըսպասից, տղան տոն չեկավ։ Էքյսը մարթիք քցից սաղ միալը, ծմակնին, վըէչ մին տեղ չքթին։ Թաքավերը ըտրա յրա շատ տրտմից, ո̀ւրա̀ն պլատան էլ տո̀ւս չար կյամ, տղոցը ո̀ւրա̀ն կոշտը կանչըմ, ըսպասըմ ար թա վերչը հի՞նչ կինի։

Միեզյ պատմինք, թա վըերին մեչը քցա̀ծ թաքավերին տղան հի՞նչ իլա̀վ։ Խիլա վախտ ախպորցը հարայ տալան ետը, վեր օքնին, տըեսավ ծեն-ծո̀ւն չի կյամ, թողալ ըն հըռացալ, տես ու տեն ա ընկնըմ, տըեսնըմ վըերին կողքին մի ծակ կա, մննըմ ա մեչը, քյինըմ ծակավը, տըեսնըմ իսկի վերչ չկա, չորս դոլը մթին աշխարք ա, յրան էլ ծառեր փաած։ Քյինըմ ա մին ծառի տակ թեքյ ընկնըմ վըեր դինջա̀նա̀ , քնավ ա ընցնըմ։ Էտ քոն իլա̀ծ վախտը, լըըմ ա վըեր մին ծվծվոց ա կյամ, զարթնըմ ա, տըեսնա իշտեղան ա էտ ծվծվոցը, տըեսնըմ ծառին կլխին մին դուշի պո̀ւնըմ հինգ-վեց ճտեր ըն նստած. մին զյո̀ւրզա̀ օց պցրա̀նըմ ա, վըեր ընտրանց փռնի օտի, ըտրա միար ա էտ ծվծվոցը։ Մին փատ ա եր օնըմ, օցին քյա̀լլին կյամ, ըսպանըմ վեր քցըմ, ինքն էլհա թեք ընկնըմ, քոն ինըմ։

Կես սհաթան ետը դուշի ճտերին մարը՝ մին թավար դուշ, կյամ ա վըեր ծառը պցրնանն, տըեսնըմ ա մին մարթ ծառին տակին թեք ընկած քոն իլած ա. «Է՜հ,- ասըմ ա, - էս էն մարթն ա, վըեր ընցած տոնին եկալ ա ճտերիս կտորալ, ես ըտրա աչքերը պիտմա հանիմ»: Լհա վըեր օզըմ ա թաքավերի տղին մուտանա, ո̈ւրա̈ն ճտերը ծվծվըմ ըն, մորը հսկըցնըմ, վըեր ծեռք չտա, էտ տղան ա ո̈ւրա̈նց օցին ծեռքան ըզատալ, ըսպանալ: Թավար դուշը հենց վըեր տըեսնըմ ա ըսպանված օցին, թևերը պեց ա անում ,էտ քնած տղին կլխին երը փռըմ, պահպանըմ, վըեր դինջ քոն ինի, վնաս տվող չինի:

Թաքավերին տղան զարթնելան ետը թավար դուշը ըռաչին կաղնըմ ա. «Շատ շնորհակալ ըմ քյըզանա, վըեր իմ ճտերին ըզատալ ըս, բա հինչ ը՞ս օզըմ, վըեր տրա ա̈վա̈զը ես քյեզ տամ»:

Թաքավերին տղան ասըմ ա. «Մինակ իմ խնթիրը էս ա, վըեր ինձ էս մթին ըշխարքան լո̈ւս աշխարք հանիս»:

- Էս իմ աչքիս յրա, նստի մեչքիս, քյեզ տանիմ:

Նստըմ ա մեչքին, թավար դուշը թևերը պեց ա անըմ թռչըմ, քյինում ա մին օր, էրկու օր, ճնըպարին թավար դուշը ասըմ ա. «Ա՛ խր, սոված ըմ, կարըմ չըմ լա̈վ թռչիմ, ըստեղիք էլ ուտելու պեն չի կա, հու՞նց կանինք»:

Թաքավերին տղան տենակը ջուբան հանըմ ա, ո̈ւրա̈ն բուդան կտրըմ թավար դուշին ուտըցնըմ, ըտրանավ նա ղվաթ ա առնըմ, քյինըմ, քյինըմ վերչը լո̈ւս աշխարք տո̈ւս պերըմ, ետ տեռնըմ ո̈ւրա̈ն ճտերին կոշտը:

Թաքավերին տղան շատ ա քյինըմ, խրեզյ ա քյինըմ. վերչը հսնըմ ա մին շհա̈ր, իշտեղ էտ երկրին թաքավերն ա նստած ինըմ: Խիլա հրցըփորց ընելան ետը, վըեր ըտեղի թաքավերը իմանըմա, վըեր էտ տղան Հինդի թաքավերին տղան ա, ո̈ւրա̈ն պալատն ա տանըմ, մըեծ պատիվնի տամ, վերչն էլ ո̈ւրա̈ն մին սիրուն ըխճըկա յրա փսակըմ, վըեսկավ-ըրծաթավ պեռնած մին սո̈ւրո̈ւ ղոշունավ ճնապար տինըմ:

Թաքավերին էտ տղան ո̈ւրա̈ն երկյիրն ա մննըմ, բար-բարխանով հորը շհա̈րը մննըմ, թուշ հորը պալատը քյինըմ:

Հինդի թաքավերը տո̈ւս ա կյամ առաչը, լհա̈ վըեր տըեսնըմ ա ո̈ւրա̈ն տղան ա, ուրխըթունան օզըմ ա օշը քյինա̈, հարսին ան տղին կողքին նստըցնում ա, պալատականներին կանչըմ, հայտնըմ, վըեր թաքավերությունը տղին ա տամ, մհեզաա տենը լոխ էլ ընտրա հրամանը պիտմա կտարին, ինքը թախտան վեր ա կյամ, տեղը տղին նստըցնըմ:

Հիտնան տղին անա հրցընըմ ա, թա. «Բա քյեզ հի՞նչ պտահեց, ախր վըերսի քյեցիր, էլ տոն չի եկիր, ինձ նիզյա̈րա̈ն թուղեցիր»:

Տղան մին-մին պատմըմ ա, թա ախպերքը հունց ո̈ւրա̈ն վըերին մեչին թուղեցին, հունց ինքը մթին աշխարքը ինգավ, թավար ղուշին ճտերին օգի ծեռքան ըզատից, յա հունց լո̈ւս աշխարք տո̈ւս եկավ:

Թաքավերը մեծ տղոցը կանչըմ ա, ընեծըմ, թա. «էս սհաթին, էս պալատան տո̈ւս եկիք, էլ աչքս ծեզ տեսնավըեչ»:

Պուճուր տղան հորը խնթրըմ ա, թա հինչ վըեր իլա̈լ ա, իլա̈լ ա, նե՛րի, թող պալատում մնան:

Թաքավերը խնթիրը կտարըմ ա:

Օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ըն անըմ, եկած ղոնաղներին լա̈վ-լա̈վ պատիվնի տամ, հղե տինըմ:

## 20.ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂԱՆ ԹԱՔԱՎԵՐ

Ինըմ ա չինըմ, մին թաքավեր ա ինըմ: էս թաքավերեն մին տըղա յա ինըմ: Թաքավերը մըռնելիս ո̈ւրա̈ն թաքավերութունը թողըմ ա տըղեն: էտ թաքավերը մըռնելան ետը էտ աղան տեռնըմ ա թաքավեր, հունցը վըեր ո̈ւրա̈ն խելքն ա կըտըրըմ , իտի էլ երգյիրը կառավարըմ ա:

Ժողովուրթը տեսնըմ ըն, վըեր էս թաքավերը կարըմ չի թաքավերութուն անե: Հըվաքվըմ ըն էտ երգյիրին ախսախկալնեն, փորցված, գյիղա̈ցող, աշխարք տըեսած մարթիքյ, մին-մին կյամ էտ թաքավերեն կոշտը, վըեր հըսկըցնին, քյո̈մա̈գյ ինին ո̈ւրա̈ն, կարե երգյիրը կառավարե: Հու վըեր կյամ ա մին խորհուրթ տամ, ըտա վեչ մին մարթու խորհուրթ լըսըմ չի, ո̈ւրա̈ն քըթեն թուշին, հունց վըեր օզըմ ա, ինդի էլ անըմ ա: Քանի քյընըմ ա, քանի ժողովուրթեն տո̈ւրո̈ւթյո̈ւնը խարաբ ա ինըմ, էս թաքավերը մըտածըմ ա, թա ասըմ ա. «Իմ երգյիրըմս հիշքան մեծ յաշավ մարթիքյ կա, պիտի կըտորիմ, վըեր ես իմ գյիղա̈ցած երգյիրս կառավարիմ , թա չէ, էտ քյո̈յնա̈ մարթիքյը քանի սաղ կենան, իմ կառավարելս ըտրանց տուր չի կյա̈լու, թազա մարթիքյ ա̈մա̈լ կըկյա̈ն, հունց վըեր էլ տըեսնան, ինդի էլ կըսըվերին»:

Հիշքան էտ թաքավերեն հըսկըցընըմ ըն, վըեր մեծ մարթկանց հարկավեր ա պահել, ընդրանց անա պեներ սըվերել, թաքավերը վեչ մինին էլ անգուջ չի օնըմ, մին օրենքյ ա տո̈ւս պերըմ, վըեր հո̈ւր տանը մեծ յաշավ մարթ կա, կըլո̈խը կըտըրին, պերին:

Էտ քըղաքըմը մին տըղա յա ինըմ, ըտըրան մին հա̀ր ա̀ ինըմ։ Էս տըղան մըտածըմ ա. «Ես հունց ղի՞միշ անեմ իմ հոր կըլո̀խը կըտրիմ, թող հա հինչ օզըմ ա՝ անե, ես իմ հոր մին կերպ բիղի պահիմ, փորցըված մարթ ա, մին պեն իլա̀ծ տեղը նըհետը մըսլըհաթ կանինքյ»։ Հունց վըեր մտածըմ ա, ինդի էլ անըմ ա։ Տո̀ւս ա կյամ քյընամ քըղաքան մին հեռու տեղ մին սարու դո̀շըմ կըհո̀լ կըտըրըմ, կյեղըմ, ամեն օր թաքուն հորը հետե օտել-խըմել տանըմ, հորը պահըմ։

Անց ա կենըմ մին քանի վախտ, մին առավոտ ժողովուրթը եր ըն կենըմ տըեսնըմ էտ քըղաքըմը մին զեռ օշափ վեր եկած։ Վըեր էտ օշափեն դա̀րդա̀ն վեչ մին մարթ կարըմ չի, թա տո̀ւս կյա̀ քաղաքը, չունքյի լոխճին էլ կոլ ա տամ, վեչ մին մարթ վեչ մին պենավ կարըմ չըն թա յա ըսպանին, յա հըռըցընին։

Թաքավէրը տըեսնըմ ա, վըեր իրեք օր ա օշափը վեր ընգած, զորք ա կանչըմ, վըեր առաչն առնին, վեչ մին պեն ա̀մա̀լ չի կյամ, չունքյի լոխճին էլ կոլ ա տամ։ Սաղ քաղաքը էտ օշափեն դա̀րդա̀ն կարըմ չըն թա տո̀ւս կյան տըներան, կործերը կաղնած, ժողովուրթը տըներան մընըմ ըն օշափեն եշիլիս։ Օշափեն դա̀րդա̀ն էտ տըղան էլ չի կարըմ թա տո̀ւս կյա̀ քյընա հորը կոշտը, հաց տանե։ Հա̀րն էլ իրեք օր ա, վըեր տըղան քյեցալ չի, ուտելի պեն չի իլա̀լ, սուվըծթունան-ծըրըվթունան թո̀ւլա̀նըմ ա, վեր ընգնըմ, ինքյը-ինքյը մըտածըմ. «Հա̀լբա̀թ տըղաս դիմիշ չի ըրալ ինձ ըսպանե, մըւռածալ ա, պերալ ինձ քըցալ ըստեղ, վըեր սուվըծթունան ըսպանե, վա՜յ քյե՜զ, նամարդ տըղա, լըհա̀ իմ կոճիս տակեն ըսպընիր, քու ծերքավտ տընիր թըղիր իլի, մըհենգյ ես հինչ կա՞նեմ, խե ը՞ս իմ ջա̀մդա̀քս շըներեն փայ անըմ, ա՜յ նամարդ տըղա»։ Դե հա̀րը գյո̀ւղըմ չի, թա շըհա̀րեն յըան հինչ ա վեր եկալ, տըղան շատ ա օզըմ քյընա̀, ամմա դե կարըմ չի։

Չորսինջի օրը, քշերը տըղան ո̀ւրա̀նց տանը կտորը ծակըմ ա, վեր օշափը տըեսնավեչ, օտել-խըմել յոր օնըմ, քյինա̀մ հորը կոշտը։ Քյընա̀մ ա տըեսնըմ հա̀րը վեր ընգած, խըեզյ ա մընամ լըհա̀ մեռնե, մուտանըմ ա, հորը եր կըցընըմ, լա̀վ ուտուցընըմ, խըմըցընըմ, հորը օշը վըեր կըլո̀խն ա կյամ, տըղեն անա հըրցընըմ ա, տղան լոխ նաղլ ա անըմ, վըեր իստի-իստի մին օշափ ա եկալ, սաղ ժողովուրթը կարըմ չըն, թա տըներան տո̀ւս կյան։ Հա̀րը տըղեն անա հըրցընըմ ա. «Պա ծեր էն խելունք թաքավերն էլ չի՞ կարըմ առաչը առնե»։ Տըղան, թա. «Ըշտե՞ղան ա կարըմ, թաքավէրը մին քաշ վըեսկե

յա խոստացալ տալ ընդրան, հու վըեր կարե էտ օշափեն առաչը առնե: Հարը ասըմ ա. «Դե, լա՛վ լըսե վերթիս, ընտրան առաչը վեչ թոփ, վեչ թըվա՛նգյ, վեչ զորք քար չի անել, ընտրան առաչը մին շատ խուտուրու պենավ կառնին: Դե լըսե, ես քյեզ հինչ վըեր ասիմ, տու ինդի կանիս: Վեր քյընա՛ս տոն, էքյո՛ւծ քշերավ իրիքյնակը վըեր տո՛ւս եկավ թա չէ, տու մեր տանը բոյահիլին յոր կօնիս իրիքյնակեն տեմ ըրած բիդի էն օշափը քյինիս, վեր հիլըմը ո՛ւրա՛ն տեսավ, գյիդըլա՛կան ա թա ո՛ւրա՛ն նըման մին օշափ էլ կա, օզըմ ա նըհետը փըռնվե. էտ օշափը ըսկըըսլական ա վըռըվըեռ անելը, հիշքան վըռըվըեռ անե, տու նըհետը կըքյինա՛ս մինչև վըեր յա թուլալ ինի մին քերծավ, յա կորչի»:

Էտ տըղան հունց վըեր հա՛րը ասըմ ա, ինդի էլ անըմ ա՛ առավոտը արևը վըեր տո՛ւս ա կյամ, հիլին յոր ա օնըմ բիդի օշափը քյընա՛մ, արևին լո՛ւսը օշափեն աշկերը ըսկըըսըմ ա ծըկոտելը: Օշափը վըռըվըեռ ընելավ էնքան քյընամ ա, վեր մին քերծավ թուլուլ ա ինըմ, սատկըմ:

Սաղ ժողովուրթը թաքավերեն նըհետ տըներան տըեսնըմ ըն, վըեր էս տըղան մինակ հիլա՛վ օշափեն առաչը կալավ: Թաքավերն էս տըղեն կանչըմ ա, թա մին ասե տըեսնամ էտ խելքը քյեզ հու վա սըվըրցըրալ: էս տըղան վեր հորը կյեղալ ա, վեչ մին պեն չի ասըմ թաքավերեն, շատ ա ըստիբըմ, խոսկ ա տամ, վըեր հինչ էլ ինի, վեչ մին պեն չանե: Սաղ ժողովուրթը հըվաքված, էս տըղան թաքավերեն լոխ պատմըմ ա, վըեր քու հըրամանտ ես կադարալ չըմ, իմ հա՛ր պահալ ըմ, մըտածալ, վըեր փորցված մարթ ա, մին պեն կըպըտահե, կըքյինամ մըսլըհաթ հըրցընիմ, մըհենգյ հունց վըեր տեսնեքյ, փորցանքը պըտահալ ա, ես էլ քյեցալ ըմ իմ հոր կօշտը մըսլըհաթու, սաղ շըհա՛րը ըզադալ:

Ըստեղ լոխ ժողովուրթը թաքավերեն մեղադրըմ ըն, վըեր հիշքան սխալ պեն ա փռնալ մեծ-մեծ մարթկանցը կուտուրելավ: Էս տըղեն հորը կանչըմ ըն քաշավը մին վըեսկե տամ, թաքավերը հո՛քյմը փոզմիշ ա անըմ, վեր մեծա-հասակ մարթկանց վեչ թա կըտորին, այլ ըըրանից հետո ավելի պեցո՛ւր պահին ըտրանց պատիվը, համ էլ լա՛վ եշին:

Թաքավերեն էս ըրխալ կործը ըստիբըմ ա՝ ժողովուրթը եր ըն կենըմ էտ թաքավերեն թախտան վեր քըցըմ, էտ տըղեն տինըմ թաքավեր: Էտ թաքա-վերը վեր քըցիլա՛ն ետը զինքյը տամ ա ամեն շընութունի, ընգնըմ ա փիս-փիս մարթկանց մեչ, իլա՛ծ-չիլա՛ծը կարտըմ տանել տամ, խմիշկավ ինըմ, վերչը տո՛ւս կյամ հայտնի խըմող: Անց ա կենըմ մին քանի վախտ, իլա՛ծ-չիլա՛ծը,

տոնը-տեղը լոխ ծախըմ ա խմիշկի տամ, վերչըմն էլ շորերն ա հանըմ ծախըմ, մընըմ լափ տկլոր, մին քյո̈ւլքյըմ: Ճարը կտրըմ ա, էտ քըղաքան տո̈ւս ա կյամ, քյընամ մին անծանոթ էրգյիր, վըեր ո̈ւրա̈ն ճընա̈նչո̈ղ չինի:

Ամեսներավ վըեննավ հըղե ա քյընա̈մ: Շատ ա քյընա̈մ, թա խըրեզյ, կյամ ա ընգնըմ մին էրգյիր: Վըեննըրը տեպեզյ, իրեսին նան կըլխեն մազերը էրկան՝ մինչև փորը, կլո̈խը պեց, ջանը տըկլըր՝ մին քյո̈ւրքյ շոռ կալած, մին մըհակ ծերքեն ղա̈վրիշ տըեռած, մին տըեղավ անց կընալիս եշըմ ա տըեսնըմ մին քանի մարթ մին ծառու տակե կաղնած, համ զո̈ւրո̈ւց ըն անըմ, համ հո̈ջա̈թ տամ: Մտածըմ ա, թա՝ մին մուտանամ, տըեսնամ հի՞նչ ըն խոսըմ, բա̈լքյի ինձ մին օքութ պեն ինի: Ասըմ ա, մուտանըմ մին ղըրաղ տեղ վըեննը կենըմ, ըրրանց զո̈ւրո̈ւցին անգուձ օնըմ, տըեսնըմ, վըեր ըրրանք ո̈ւրա̈նց թաքավերեն անա յըն կյընգյատվըմ, վըեր շատ խըմող ա, քշեր-ցիրեկ թաքավերության կործերը, ժողովուրթեն խոսքերը թողած, ինքյը սաղ օրը լակած ա ինըմ, կարըմ չի թա մին ճար անի:

Սա մուտանըմ ա էտ մարթկանցը, թա ասըմ ա. «Ես Դա̈վրիշստանեն ղա̈վրիշն ըմ, ծեր թաքավերեն ես կըկարիմ լիվրցնիմ, հըղե պերիմ, ինձանըմ համ սուրփություն կա, համ էլ օժ»: Էս մարթիքյը հըվատըմ ըն ըտրան ըսածէն, յոր ըն օնըմ քյընա̈մ ո̈ւրա̈նց թաքավերեն կոշտը: Թաքավերեն հայտնըմ ըն, վըեր մին հայտնի ղա̈վրիշ ա էկալ, օզըմ ա կյա̈ կոշտը, վըեր լիվրցնե, անջախ քյի ղա̈վրիշը համ տըկլըր ա, համ եղտուտ: Թաքավերը կարքաղըրըմ ա, թա. «Տարեքյ համամ, լըղըրցըեքյ, լա̈վ թա̈զա̈ շո̈րեր կյեց տըվեքյ, պերեքյ կոշտս»: Կյամ ըն էտ ղա̈վրիշին էլ ինդի ասըմ, ղա̈վրիշը թա ասըմ ա. «Չէ՛, ես պիտի իստի քյինամ կոշտը, իմ օժը ըստրանըմ ա, վըեր շո̈րերս փոխիմ, օժս կըկորչի»: Իտի էլ քյընամ ըն թաքավերեն ասըմ, թաքավերը ճարը կըտրած, ասըմ ա. «Թող կյա»: Կյամ ըն ղա̈վրիշին ասըմ, ղա̈վրիշը լըհա̈ գյիրթ նի յա մընըմ թաքավերեն պալատը, տեսնըմ թաքավերը ըստըլեն նըստած, ըստոլը սարքած, կյինին-արաղը վեր տիրա̈ծ, օտըմ ա խըմըմ:

Դա̈վրիշը ուրխընալան նըհետ ըսկըսըմ ա պար կյալը, յանի քյի ղըվըրըշոթուն ա անըմ: Էս թաքավերը տեսնըմ ա, վըեր սա սուս չի ըննական, ասըմ ա. «Դա̈վրիշ ախպեր, հըղե էկած ըս, նըստե պատառ հաց կեր, պատառ դինջա̈ց, վըեր ցավս քյեզ պատմիմ»: Դա̈վրիշը թա ասըմ ա. «Տոռնը եր կաց կապե, մըզնըհետ մարթ չի բիղի ինի, մին ես բիղիմ, մին՝ տու, օրիշ մարթ վըեր ինի, կործերը թա̈րս կըքյինա̈»: Թաքավերը իտի էլ անըմ ա: Տոռնը

կապըմ ա, մընամ ըն դա̀վրիշ նան ինքյը:

Էտ դա̀վրիշը նըստըմ ա թաքավըրեն կոխկեն, թա ասըմ ա. «Տու հինչավ վըըր հիվանդ ըս, ընդրանավ էլ բիդի պժըշկվիս, հըսկացե՞ր, թաքավըրն ապրած կենա»:

Թաքավըրը թա. «Դա̀վրիշն ապրած կենա, հըսկացե վեչ, հինչ ա՞նիմ մըհենգյ»: Դա̀վրիշը յոր ա օնըմ էրկու կյնաթ, մինը տամ թաքավըրեն, մինը ո̀ւրա̀ն ծեռքեն փըռնըմ, թա ասըմ ա. «Աձե՛, էնքան բիդի խմինքյ, վըըր էտ ցավեն զա̀հլա̀ն քյըզանա տանե, տո̀ւս կյա̀ քյինա̀»: Էս թաքավըրը թա. «Ա՛յ, մըհենգյ վեր գյիդացե իմ հա̀թյիմս հու վա, դե խըմե խըմենքյ»: Նըստըմ ըն, թաքավըրն ածըմ ա, դա̀վրիշն ա խըմըմ, դա̀վրիշն ա ածըմ, թաքավըրն ա խըմըմ: Խըմըմ ըն հա խըմըմ ըն մինչև առե էնքան, վըըր նըստած տըղըրնեն վեր ըն տեռնըմ, քընավ ընցնըմ:

Էքսյը շատ ետե եր ըն կենըմ, թա̀զա̀դա̀ն խըմըմ, թաքավըրը էլ վեչ մին մարթի վեչ մին կործի եշըմ չի, քշեր-ցիրեկ կործերը թողած, դա̀վրիշին նըհետ նըստած խըմըմ ա, քոն ընըմ, եր կենըմ խըմըմ: Իստի քաշըմ ա մին քանի շեբեթ, ախըրը մին օր էս թաքավըրը ետ ա տըեռնըմ էս դա̀վրիշին, թա ասըմ ա. «Դա̀վրիշ ախպեր, ախեր մին ասե տըեսնամ մեր վերչը հինչ ա իննա̀կան, է՞»: Դա̀վրիշը քյո̀ւրքյր պիցըրցընըմ ա, տըկըլոր ջանը նըշանց տամ, թա. «Հասե մեր վերչը իստի յա իննա̀կան: Ըստեղ թաքավըրը մաննը կըծըմ ա, վեր ո̀ւրա̀ն անա մին բեթար խըմողու ճա̀նգյ ա ընգալ, թա ասըմ ա. «Դե վըըր իտի յա, խըմե խըմինքյ, հիշտեղան պիրակե, ընդեղան էլ թող կըտըրե»:

Թաքավըրն ան դա̀վրիշը մինչև էքյսը հեն ըն իլա̀լ լըկելիս: Ըսօրե խաբար եկավ, վըըր ճոխտն էլ մին տեղ ըն կըտորվալ:

## 21.ՇԱՄԴԱՆ ԱԽՊԵՐ

Ինըմ ա չինըմ, մին թաքավըեր ա ինըմ: էս թաքավըերը շատ մըծընալան աշկերը տեսնըմ չի: Հիշքան դոխտուրնե ըն կյամ, կյիր անողնե ըն կյամ, կարըմ չըն թա էս թաքավըերեն աշկերը սըղըցընին: Լոխ էլ մըտածըմ ըն, ամմա դե վըեչ մինը կարըմ չի թա ճար անե:

Թաքավըերեն ինըմ ա մին տըղա: էս տըղան շատ ա ման կյամ, շատ ա չըրչարվըմ, վըեր մին մարթ ճարն հորն աշկերը լիվըցընե, ա̀մմա̀լ չի կյամ: Սաղ էրգյիրը թաքավըերեն դա̀րդա̀ն սո̀քյ ա պահըմ, մինչև վըեր թաքավըերեն աշկերը սըղըցնին վըեչ:

Օրերեն մին օր էս քաղաքն ա կյամ մին դերվիշ, տըեսնըմ ա, վըեր էս քաղաքը լոխ էլ հեն ըն սո̀քյ. վըեչ ասըմ ըն, վըեչ խոսըմ ըն, վըեչ ուրխոթուն կա, սաղ ժողովուրթը մըեռած տո̀ւրո̀ւթյան մեչ ըն: Դերվիշը ըսկսըմ ա հըրցըփորձ անելը, թա պատճառը գյիդա̀: Շատ հըրցընելան ետը դերվիշը վըեր գյո̀ւղո̀ւմ ա սո̀քյը թաքավըերեն ըշկերեն դա̀րդա̀ն ա, ասըմ ա, թա. «Ես թաքավըերեն աշկերը կըլիվըցընիմ»:

Մըեծ-մըեծ մարթիքյը ուրխունալան դերվիշին տանըմ ըն թաքավըերեն կոշտը: Պատառ հըրցըփորց ընելան ետը դերվիշը կանչըմ ա թաքավըերեն տըղեն, թա ասըմ ա. «Քու հոր աշկերը սըղըցընելը հեն ա քու ծերքետ, վըեր տու օզիս, կըսըղըցնիս»: Լոխ մընըմ ըն զարմացած, տըղան թա. «Հոր ա՞, վըեր իմ ծերքիս ինի, հինչ օզըմ ա ինի, ես իմ ջանըս էլ չըմ խնայիլ, դե հոր ա՞, երանի թե իմ ծերքես ինի, դե ասե, տըեսնամ հի՞նչ բիդի անիմ, հո՞ւնց անիմ, վըեր սըղըցնիմ»: Դերվիշը թա ասըմ ա. «Դե լա̀վ լըսե, էքո̀ւծ առավոտը քյինամ ըս կյետը ծո̀ւկուն փըռնիս, թորըտ քըցըմ ըս կյետը, առաչի ծո̀ւկունը վըեր փըռնըմ ըս, աշկերը տո̀ւս ըս տամ, պիրըմ քսըմ թաքավըերեն աշկերը, ըտրանավ աշկերը սըղընալու ա: Լա̀վ հըսկաց ըռաչի փըռնած ծուկընեն աշկերը հանում ըս, պիրում:

Էքյսը առավոտը թաքավըերեն տղան քյընամ ա կյետը ծո̀ւկուն փռնելի, դերվիշն էլ թաքուն քյընամ ա կյետին ղըրաղըմը կյողըը կենըմ, թա տըեսնա թաքավըերեն տըղան ո̀ւրա̀ն  ասածն ա՞ ըննական: Թորը վըեր քըցըմ ա, տո̀ւս ա կյամ մին շատ լա̀վ դա̀շա̀նգյ, չըտեսված ծո̀ւկուն: Թաքավըերեն տղան եշըմ ա էտ ծո̀ւկնին, մըղափուն ա կյամ, վըեր աշկերը հանե, ինքյն ո̀ւրա̀ն  ասըմ ա. «Հա̀րըս պըռաված մին մարթ ա, ըսօր-էքյո̀ւծ մըռնելու ա, մըղափուն ա, վըեր էս ծո̀ւկունին աշկերը հանիմ»: Ասըմ ա, ծո̀ւկունը ետ

քըցըմ կյետը։ Վերևիետև դերվիշին ասածը բիդի կըդարե, թորը նորից քըցըմ ա կյետը, էս անքամ տո՞ւս ա կյամ մին հասարակ ծո՞ւկուն։ Փըռնըմ ա էս ծո՞ւկունեն աշկերը հանըմ, պիրըմ տոն։ Տըեղն ու տըեղը քըսըմ ըն թաքավըրերեն աշկերը։ Թաքավըրերեն աշկերն ավելի յա խարաբ ինըմ, ցավն ավելի յա թո՞ւնդըմ։

Թաքավըրերը նան պալատականնեն վըեր տըեսնըմ ըն ավելի ա փիսացալ աշկերը, մըտածըմ ըն, վըեր էս դերվիշը յա դասիդանա յա ըրալ, յա էլ ո՞ւրա՞նց անավ ծաղը ա ըրալ։ Հըրամայըմ ըն, վըեր դերվիշին կըլո՞խը կըտրին։ Վըեր տանըմ ըն, թա կըլո՞խը կըտրին, դերվիշը խընթրում ա, վըեր մինչև ո՞ւրա՞ն կըլո՞խը կըտրելը վերչին անքամ մին խոսկ տան  ո՞ւրա՞ն ։ Վըեր խոսկը տամ ըն դերվիշին, դերվիշը թա ասըմ ա. «Թաքավըրերեն տըղան էլ բիդի ըստեղ ինի, վըեր վերչի խոսկըս լըսե»։ Կանչըմ ըն, թաքավըրերեն տըղան էլ ա կյամ։ Դերվիշն ասըմ ա թա. «Ես ո՞ւրթո՞ւմ ըմ օտըմ իմ մըռնելաս առաչ, վըեր ես մեղավըեր չըմ, մեղավըերը թաքավըրերեն տըղան ա, վըեր առաչին ծո՞ւկունը փըռնալ ա, դիմիշ չի ըրալ թա աշկերր տո՞ւս տա, ո՞ւրա՞ն հորը կյանքը փոխալ ա մին ծո՞ ւկունու կյանքու նըհետ։ Էրկուինջի անքամ վըեր թորը քըցալ ա, փըռնալ ա օրիշ մին ծո՞ւկուն, էտ ծո՞ւկունն էլ ճարած ա իլա՞լ։ Թող թաքավըրերեն տըղան ասե, թա վըեր իտի չի իլա՞լ, ինձ կախ տըվեքյ»։ Թաքավըրերեն տըղան տըեսնըմ ա, վըեր դերվիշը գյո՞ւդում ա, վիզն ա եր օնըմ, վըեր դո՞ւզ ա, ես ըմ մեղավըրը։ Ըստեղ դերվիշին ըզադըմ ըն, պեց թողըմ։

Թաքավըրերը վըեր գյո՞ւղըմ ա տըղան ա մեղավըեր, անիծըմ ա տըղեն, թա ես քյեզ ըսպանըմ չըմ, զըրկըմ ըմ իմ թաքավըրերությունից, քյեզ էլ իմ երգյիրաս տո՞ւս ըմ անըմ, ըշտեղ օզըմ ըս, քյինի, ես քու հերըտ չըմ, տու էլ իմ տըղաս չըս։

Թաքավըրերեն տըղան ըտըղան լըհա՞ տո՞ւս ա կյամ, հըղե ընգնըմ քյինըմ վըեր մին օրիշ երգյիրըմ ապրե։ Շատ քյընա՞լա՞ն ետը նըղանըմ ա։ Մին ծառու տակե ճանապարհին նըստըմ ա՝ դինջա՞նա՞։ Էտ ծառեն տակին քընավ ա ընցնըմ։ Շատ-խըրեգյ քընելան ետը վըեր ա կենըմ, տըեսնըմ ա ո՞ւրա՞ն նըման մին ճանապարհորթ քըշտեն նըստած, դինջա՞նըմ ա։ Հըրցըփորց ընելան ետը տըեսնըմ ա, վըեր ըտա էլ ո՞ւրա՞ն նըման մին ճանապարհորթ ա, քյընա՞մ ա մին երգյիր, վըեր ընդըեղ ապրե։ Ըստըեղ էրկու հոքին էլ խոսկ ըն տամ, հալալ ախպըեր տըեռնըմ, վըեր ո՞ւրո՞ւր հընա՞զա՞նդ ինին մինչև մահ։

Թաքավըրերեն տըղըեն անըմը տընիմ ըն՝ պուճուր ախպըեր, էն մինին անըմը՝ մըեծ ախպըեր:

Էրկու ախպըերք եր ըն կենըմ հըղե ընգնըմ, քյինըմ: Շատ ըն քյինըմ թա խըրեգյ, կյամ ըն մին հաչա հըղըրցու տեմ ընգնըմ: Ճանապարեն մինը քյինըմ ա աչ, մինը՝ ծա̈խ: Մըեծ ախպերն ասըմ ա. «Պո՛ւճուր ախպըեր, էրկու հոքի մին ճանապարավ քյրնա̈լա̈վ վայ թե խեր չանինքյ, վըեր մին փորցանք պըտահե, էրկուսըս էլ կարող ընք փըչանանք. է՛ք մինը մին հըղըըցավ քյինի, մինը՝ մին հըղըըցավ, պեն ա՝մին փորցանք էլ վըեր պըտահենքյ, մըզանա մինը սաղ մընա»: Պուճուր ախպըերը թա ասըմ ա. «Մը՛եծ ախպըեր, շատ դո̈ւզ ըս ասըմ, հունց վըեր օզըմ ըս, ինդի էլ քյինինքյ, տու բիդի աչ քյինա̈, ես՝ բիդի ծա̈խ»: Էրկու ախպըերքն ո̈ւրո̈ւր խոսկ ըն տամ, պայմանավըերվըմ, վըեր քյինին աշխադանք անին, հինչ վըեր ըշխադին, իրեք ամսից հետավ կյա̈ն էն հա̈մին ծառեն տակեն, ըշտեղ ըխպըրացըլ ըն, ո̈ւրո̈ւր պըրտահին, պերա̈ծ աշխադանքնեն էրկու տըեղ կըեs անին: Խոսկ ըն տամ. ո̈ւրթո̈ւմ օտըմ: Մըեծ ախպըերը ճանապարեն աչ ո̈ւնգյո̈ւնավն ա քյինըմ, պուճուր ախպըերը՝ ծա̈խ:

Պուճուր ախպըերը քյընա̈լա̈վ, քյինա̈լա̈վ հըսնըմ ա մին քաղաք, մին սա̈նա̈թքյա̈րի քըշտի շա̈գյիրդ մըտնըմ, կործ անըմ: Իրեք ամըեսը վըեր թըմամըմ ա, ըշխադած իրեք մանեթը յոր ա օնըմ, կյամ հա̈մին էն ծառեն տակեն ըսպասըմ մըեծ ախպոր կյա̈լին:

Մըհենգյ պուճուր ախպըերը թողինքյ էն ծառըեն տակին ախպորն ըսպըսըելիս, անց կենանք մըեծ ախպորը:

Մըեծ ախպըերը շատ ա քյինըմ, խըրեգյ ա քյինըմ, հըսնըմ ա մին քաղաք, եշըմ ա տըեսնըմ էտ քըղաքեն մաչտըեղը մին խիլլա̈ մարթու կըլխընե կըրտորած, տա̈րսա̈ծ, մին զըեռ սար շինա̈ծ, քըղաքեն ժողովուրթն էլ լոխ սո̈ւքյի մըեչ: Մընամ ա զարմացած, համ էլ վախած. Ինքյն ո̈ւրա̈ն մըտածըմ ա. «Տեր աստված, էս ես հիշտըե՞ղ ըմ ընգալ»: Վէրչը ըսկըսըմ ա հըրցփորց անելը: Տըեսնըմ ա, վըեր էս երգյիրին թաքավըերեն օնե մին հըսած-փըսած ջա̈հիլ, շատ դա̈շա̈նգյ ախճիգյ, ծընված օրից լալ ա, կարըմ չի թա խոսե՝ հիշքան էլ հա̈քյիմ, գյիդացող, դերվիշ, փալչի մարթիքյ ըն պերալ վըեր սըղըըցնին, կըրեցալ չըն: Էտ կուտորած կըլխընըեն էլ էն մարթկանցը կըլխընըեն ա, վըերը վըեր կըրեցալ չի թա սըղըըցնե, կըլո̈խը կըտըրալ ըն, տա̈րսա̈լ:

Մըեծ ախպըերն ասըմ ա. «Ես կըկարիմ էտ ըխճըկանը սըղըցնիմ, վըեր խոսէ»: Ժուղովուրթը լոխ զարմանըմ ըն, քյինըմ թաքավըերեն հայտնըմ, վըեր ի ստի մին մարթ ա եկալ, օզըմ ա ըխճըկանըտ սըղըցնէ: Թաքավըերը մըեծ ախպորը կանչիլ ա տամ կոշտր, նըհետը խոսըմ, ասըմ. «Վըեր կըրեցեր վըեչ սըղըցնիս, քու կլ՞ոխըտ էլ էն մընացածեն նըման կըտըրել ըմ տալու»: Մըեծ ախպերն արխային ասըմ ա, «Շատ լա՛վ, թաքավըերն ապրած կենա, եթե կարիմ վըեչ սըղըցնիմ, կըլ՞ոխըս կըտըրե, պա վըեր սըղըցընիմ, հինչ ըս տալու»:

Թաքավըերը թա. «Հինչ վըեր օզիս, կըտամ, թա՛քյ լըհա՛ սըղըրցնիս»: Մըեծ ախպըերը վախըմ ա, թա օղածն ասէ, թաքավըերը տա վըեչ, ասըմ ա. «Թաքավըերն ապրած կենա, իմ օզածըս էն ա, վըեր հունց վըեր տու ըս օզըմ, ըխճըկանըտ լ՞ուզին պեցվի, ես էլ ինդի օզըմ ըմ, վըեր իմ օզածըս տաս, ամմա դե վախըմ ըմ տաս վըեչ»: Ըստըեղ թաքավըերը կըլոխ ա ընգնըմ, վըեր խոսկն ըխճըկանը մասին ա, ասըմ ա. «Հա՛, հինչ վըեր օզիս, կըտամ, թա՛քյ լըհա՛ սըղըցնիս, ա՛սէ, տըեսնամ հի՞նչ ըս օզըմ»: Մըեծ ախպըերն ասըմ ա. «Վըեր կարիմ վըեչ սըղըցնիմ՝ կըլ՞ոխըս կըտրե, վըեր սըղըցնիմ՝ ախճիգյըտ ինձ բիդի տաս»: Թաքավըերն ասըմ ա. «Հա՛, կըտամ, թա՛քյ լըհա՛ սըղըցընիս ըխճըկանըս»:

Մըեծ ախպըերը մին օթաղ ա օզըմ, էս ութաղըմը մին մարթ կյոդը կըցընըմ, վըեր էտ մարթը լըսէ, տըեսնա թա հունց ա թաքավըերեն ախճիգյը խոսելու: Ետավ ըստոլեն յրա մին շամդան տինըմ, թաքավըերեն ախճիգյը պիրըմ էտ օթաղըմը ըստոլեն քշտեն նըստըցընըմ, ինքյը տ՞ուս կյամ մին պատառ կենըմ, ետնան նի մըտնըմ, թա ասըմ ա.

Պա՛րև, շամդան ախպըեր:

- Պա՛րև, ղոնաղ ախպըեր:

- Շամդան ախպըեր, մին հաքյաթ պատմըե, լըսինքյ:

Շամդանը թա. «Ղոնաղ ախպըեր, տու լավ կըպատմիս, պատմի լըսինքյ»: Ղոնաղ ախպըերն ասըմ ա. «Լա՛վ, ես պատմիմ, տուք անգուճ կալիքյ: Ինըմ ա չինըմ, մին կընեգյ ա ինըմ: Էս կընգանն ինըմ ա մին մարթ, մին էլ մարթին ախպըերը: Մին օր էրկու ախպըեր ՞ուրա՛նց երգյիրան քյինըմ ըն մին օրիշ երգյիր ըշխադանքու: Շատ-խըրեգյ քյընա՛լա՛ն ետը կյամ ըն հըսնըմ մին ըխպիրի կոշտ: Էրկու ախպըեր մըսլըհաթ ըն անըմ՝ պատառ ճ՞ուր խըմին, նըստին դինջանան, ետավ եր կենան քյընա՛ն: Լըսըմ ըս շամդան ախպըեր»:

-Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

«Շամղան ախպորըս ասիմ, ախպուրից ճուր խըմելիս վախտը ծառան մին ծըղոտ ա վըէր ընգնըմ, էրկուսին վիզավն ընգնըմ, էրկուսին վիզն էլ կըտըրըմ, վըէր քըցըմ։ Էրկու ախպըէրն էլ վըէր ըն տըէռնըմ ըխպիրին քշտին առանց կըլխընէ։ Կընգանը սըէրտը ըսկըմ ա թխըէլը, վըէր մարթին ան ախպորը մին փորցանք ա պըտահալ։ Էր ա կէնըմ ըտրանց եկած ճանապարավը քյընըմ։ Քյընըմ ա, քյընըմ, կյամ ա հըսնըմ էտ ախպո՞ւրին կոշտը, տըէսնըմ մարթը նան ո՞ւրա՞ն ախպըէրը վըէր ընգած, մին պատառ ո՞ւրա՞նց անա էլ հեռու կըլխընըեն վըէր տըէռած։ Էս կընէգյն ըսկըմ ա լա՞ց ինիլը, կըլո՞խը թակըէլը, ետ տըէռնըմ, տըէսնըմ մին ծըէտ կըլխանըէրը թոչըմ ա, կյամ կաղնըմ մին ղըրաղ տըէղ, լո՞ւզո՞ւ առնըմ, էտ կընգանը հըրցնըմ.

Քոյրիկ ջա՛ն, էտ մարթը քու հինչըտ ա՞։

Մինը իմ մարթս ա, մինը՝ մարթիս ախպըէրը։

Լա՛ցա՛վ վըէչ մին պէն չըս կարէլ անիս, հէս ա էս քյէզ ղարկիմ մին թեփուռ, էտ թեփուռը էր կալ քսի կըլխընեն, ըխպըրըմը լվաց, ետավ տիր ո՞ւրա՞նց տըէղէրը, մարթըտ էլ, մարթիտ ախպըէրն էլ կըսըղանան։

Ծըէտը թեփուռը վըէր ա քցըմ, ինքյը թըռչըմ, քյինըմ։ Էս կընէգյը իտի էլ անըմ ա, ամմա դէ կըլխընեն թա՛րս ա տինըմ՝ մարթին կըլո՞խը տինըմ ա տա՛քյո՞րը էրան, տա՛քյո՞րը կըլոխը՝ մարթին էրան»։

-Լըսըմ ը՞ս, շամղան ախպըէր։

-Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

«Էտ մարթիքյը սըղանըմ ըն, մարթին ջանը, տա՛քյո՞րը կըլոխը ըսկըմ ըն հո՞ջա՛թ տալ։ Տա՛քյո՞րը կըլո՞խն ասըմ ա՝ կընէգյն իմըս ա, մարթին ջանն էլ ասըմ ա չէ՛, իմըս ա»։

-Լսում ը՞ս, շամղան ախպըէր։

- Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

-Մըհէնգյ քյըզանա յըմ հըրցընըմ , շամղան ախպըէր, կընէգյը հո՞ւրն ա՞, հուր կը հըսնէ՞»։ Շամղանը թա. «Կընէգյը ընդըրանն ա, հո՞ւր յրա վըէր մարթին կըլոխն ա»։ Թաքավըէրեն լալ ըխճըկանը լո՞ւզո՞ւն պէնվըմ ա, թա ասըմ ա. «Չէ՛, սխալ ըս ասըմ, շամղան ախպըէր։ Չընայած վըէր մարթին կըլո՞խը տա՛քյո՞րը էրան ա, կընէգյը հըսնըմ ա էն ջանեն, վըէրին էրա վըէր տա՛քյո՞րը կըլո՞խն ա։ Չէ՞ վըէր էտ կընէգյը ջանավ, հոքավ էն մարթինն ա իլա՛լ»։

Մըեծ ախպըերը լըհա̈ վըեր լըսըմ ա՝ թաքավըերեն ախճիգյը խոսից, եր ա կըենըմ, թա. «Պարի քշեր, շամդան ախպըեր»: Շամդանը թա. «Լուսը պարի, ղոնաղ ախպըեր»: Էն մարթը վըեր կյողըլը կացած ա իլա̈լ որպես շըհադ, քյընամ ա թաքավըերեն ասըմ, թա. «Իսկապես ախճիգյըտ խոսալ ա»: Թաքավըերը հըվատըմ չի, ասըմ ա. «Մինչև վըեր ես ինքյըս լըսիմ վըեչ իմ ըխճըկանըս խոսըելը, կարել չըմ հըվատամ»:

Կանչըմ ըն մըեծ ախպորը, թա. «Թաքավըերը հըվատըմ չի, մինչև վըեր ինքյը լըսե վըեչ»: Մըեծ ախպըերը թա ասըմ ա. «Դե հունց անինքյ, էքյուծ ո̈ւրո̈ւլգյո̈ւ թաքավըերն էլ կը լըսե»:

Էքսը պերըմ ըն էլիա ախճիգյը նըստըցընըմ էն ութաղըմը, շամդանեն քըշտեն: Թաքավըերն էն ութաղըմը մին դրաղ տըեղ կյողլ ա կենըմ: Մըեծ ախպըերը նի յա մընըմ օթաղը.

- Պա՛րև, շամդան ախպըեր:

-Պա՛րև, ղոնաղ ախպըեր:

Շա՛մդան ախպըեր, մին հա̈քյա̈թ պատմե:

- Ղոնաղ ախպըերը լա̈վ կըրպատմե:

Մըեծ ախպըերը պատմըմ ա էս հա̈քյա̈թը. «Ինըմ ա չինըմ, մին տերտեր ա ինըմ, մին դա̈րզի, մին դո̈ւլգյա̈ր: Էս իրեք հոքին մին ճանապարավ քյինա̈լիս ըն ինըմ»:

- Լըսըմ ը՞ս, շամդան ախպըեր:

- Լըսըմ ըմ ղոնաղ ախպըեր:

«Շատ ըն քյինըմ, թա խըրեգյ, օրը մըթնըմ ա: Ճանապարին հըսնըմ են մին ծմակ: Տերտերն ասըմ ա. «Եկեքյ քշերըս ըստեղ կենանք, մինչև լո̈ւսա̈նա̈, մունք էլ համ դինջա̈նա̈նք, համ էլ քոն ինինքյ»: Դա̈րզին ան դո̈ւլգյա̈րը իտի էլ անըմ ըն: Տերտերին նըհետ քշերը մընըմ ըն էտ ծըմակըմը, քշերը քոն ինելիս վախտը որոշըմ ըն, վըեր ո̈ւրա̈նց յրա կյո̈ւլա́, արչա, կյա վըեչ, նուբաթավ ղարաղուլ քաշին: Տերտերն ան դա̈րզին քոն ըն ինըմ, դո̈ւլգյա̈րը ղարաղուլ ա քաշըմ: Ղարաղուլ կաղնած վախտը էտ դո̈ւլգյա̈րը փադից մին մարթ ա շինում կըղնըցընըմ»:

Լըսըմ ը՞ս, շամդան ախպըեր:

Լըսըմ ըմ, ղո՛նաղ ախպըեր:

«Դո̈ւլգյա̈րը քյընա̈մ ա քոն ինըմ, կյամ ա դա̈րզին կաղնըմ:

-Լըսըմ ը՞ս, շամդան ախպըեր:

-Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

«Էս դյա̈րզին ղարաղուլ կաղնած տըէղը եշըմ ա տըեսնըմ մին փաղի մարթ կաղնած, ասըմ ա. «Ես էլ շորը կարիմ, կյեց տամ»։ Ասըմ ա, շորը կարըմ, կյեց տամ, ինքյը քյընա̈մ քոն ինըմ։ Ըղարկըմ ա տէրտէրին»։

-Լըսըմ ը՞ս, շամղան ախպըէր։

-Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

«Տէրտէրը վըէր կյամ ա ղարաղուլ քաշի, տըեսնա մին փաղի մարթ, շորերը կյեցած, կաղնած։ Գյո̈ւղըմ ա, վըէր սա դո̈ւլգյարեն ան դյա̈րզո̈ւն պէնն ա։ Մըտածըմ ա, մըտածըմ, թա. «Ես էլ շնորքըս նըշանց տամ»։ Ասըմ ա, աղոթկ անըմ ածու, վըէր էս փաղի մարթին լո̈ւզո̈ւ տա, խոսըէ»։

Լըսում ը՞ս, շամղան ախպըէր։

Լըսըմ ըմ, ղոնաղ ախպըէր։

«Տէրտէրը ածու աղոթկ ա անըմ։ Հունց ա պըտահըմ, էս փաղի շինա̈ծ մարթը ըսկըսըմ ա խոսելը։ Առավոտը վըէր լո̈ւսա̈նըմ ա, դո̈ւլգյա̈րը, դյա̈րզին, տէրտէրը ըսկըսըմ ըն կըռվըէլ, նա ասըմ ա՝ իմն ա, էն մինը թա՝ իմն ա, էն մինը թա չէ՛, իմն ա։ Քյեզ ըմ հըրցընըմ, շամղան ախպըէր, հո̈ւր ա՞ հըսնըմ։ Շամղանը թա. «Տէրտէրին, եթե տէրտէրը աղոթկ չանար, նա էլ խոսել չար»։

Ըստըէղ թաքավըէրեն ախճիգյը ըսկըսըմ ա խոսելը, թա. «Չէ՛, շամղան ախպըէր, դո̈ւզ չըս ասըմ, էտ մարթը պատկանըմ ա հիմքին, հիմքը դո̈ւլգյա̈րն ա, եթե դո̈ւլգյա̈րը փաղից էտ մարթը շինա̈ծ չինար, դյա̈րզին շորերը կարել չար, տէրտէրը աղոթկ չար անել, ուրեմն հիմք ա իլա̈լ, էտ հիմքն էլ հունցը վըէր մունք լըսեցինքյ, դո̈ւլգյա̈րն ա իլա̈լ, ուրեմն դո̈ւլգյա̈րին էլ հըսնըմ ա»։

Թաքավըէրն ուրխութունան գյո̈ւղըմ չի, թա հինչ անե, վըէր տըեսնըմ ա ախճիգյը խոսից հերիքյ չի, հա̈լա̈ նրան սըխալն էլ փըռնից։ Ըստեղ մըեծ ախպըէրը թա ասըմ ա. «Ես քյեցե, շամղան ախպըէր»։ Թաքավըէրը տո̈ւս ա կյամ, թա ասըմ ա. «Վրէչ մին տըէղ էլ քյինա̈լու չըս, մըէր պայմանը պայման ա, իմ խոսկըս էլ խոսկ։

- Լըսըմ ը՞ս, շամղան ախպեր։

- Լըսում ըմ, ղոնաղ ախպեր։

- Ախճիգյըս եր կալ, քյինինքյ հըրսանեքյ անինքյ, քյեզ հալալ ինի։

Թաքավըէրը, ախճիգյը, մըեծ ախպըէրը կյամ ըն թաքավըէրեն տոնը։ Թաքավըէրը օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ ա անըմ, ախճիգյը տամ մըեծ ախպորը։ Մին քանի օր մըեծ ախպըէրը թաքավըէրին տանը ըպրելան ետը

թաքավըրեն խնթըըմ ա, վըեր կընգանը յոր օնե, քյինա̀ բիդի ո̏ւրա̀ն պուճուր ախպըերը: Թաքավըերը համաձայնըմ ա, պերըմ քառասուն օղտ պեռնըմ, մըեծ հարուստոթուն տամ, մըեծ պազմութո̏ւնավ ճանապարըմ բիդի ո̏ւրա̀ն ախպորը կոշտը:

Մըեծ ախպըերն ո̏ւրա̀ն կընգանավը, քառասուն օղտավ, մըեծ հարուստութո̏ւնավ կյամ ա էն ծառեն տակը, ըշտեղ վըեր պուճուր ախպորը խոսկ ա տվալ: Կյամ ա, տըեսնըմ ախպըերը ըսպասըմ ա: Պուճուր ախպըերը վըեր իտի տըեսնըմ ա, մընըմ ա զարմացած, վըեր մըեծ ախպըերն իտի մըեծ պազմությունավ եկալ ա: Մըեծ ախպըերը պուճուր ախպորն ասըմ ա. «Դե, պեր հինչ վըեր ըշխադալ ընք, կես անինքյ»: Պուճուր ախպըերը հըմընչելավ իրեք մանեթը տո̏ւս օնըմ, թա. «Հասե, հինչ օնիմ-չօնիմ, իմ աշխադանքըս էս ա տըեռալ»: Մըեծ ախպըերը ըսկըսըմ ա լոխ հարուստութունը կես անելը: Քսան օղտը ո̏ւրա̀ն հարստութո̏ւնավը տամ ա պուճուր ախպորը , իրեք մանեթը կես անըմ: Թա ասըմ ա. «Կընեգյն էլ բիդի կես անինքյ»: Ասըմ ա թա չէ, կընեգյը ծառան կապըմ ա: Ըստըեղ էտ կընեգյն էլ, պուճուր ախպըերն էլ շատ վախըմ ըն: Պուճուր ախպըերը ասըմ ա. «Մըեծ ախպըերն ապրած կենա, կընեգյըտ թող քյեզ մընա, մեխկ ա, կես մանել»: Մըեծ ախպըերը թա ասըմ ա. «Չէ՛, բիդի կես անիմ»: Ասըմ ա, ծերքեն ղա̀մա̀ն եր կալած վազ տամ բիդի կնգանը: Մին վախտ կընեգյը վըխելան հարայ ա տամ, պըրա̀նան օխծեր ա թափվըմ: Ըստեղ կընեգյը ճըղղամ ա, թա. «Ուխխա՛յ, ըզըդվըեցե, դինջա̀ցե՛…»

Մըեծ ախպըերը վըեր տըեսնըմ ա կընեգյը իտի ասից, ազադվից, ըրխյնանըմ ա, թա ասըմ ա. «Դե՛, ես քյեցե մըհենգյ, կընեգյն էլ քյեզ, լոխ հարուստոթո̏ւնն էլ քյեզ»: Ասըմ ա, ճանապար ընգնըմ, քյինըմ:

Պուճուր ախպըերը մընամ ա զարմացած, վըեր մընացալ ա քառասուն պեռնած օղտը, հարուստոթո̏ւնը, կընեգյը ո̏ւրա̀ն: Էս  հինչ պե՞ն ա, մըեծ ախպըերն էլ քյինից: Վազ ա տամ, քյինըմ մըեծ ախպորը հըսնըմ, թա. «Մին ասե տըեսնամ՝ սա հի՞նչ ա, սա հի՞նչ պեն ա ախեր, վըեր տու իտի յըս ըրալ»: Մըեծ ախպըերը թա ասըմ ա. « Էտ կընեգյը թաքավըերին ախճիգյն ա, ըտա խոխա վըխտանց օխծի անա վըխեցած ա իլա̀լ, լո̏ւզո̏ւն կըտըըրված ա ի-լա̀լ, ես խըըեգ-խըըեգյ խուսցըրալ ըմ, մըհենգյ հանց ըրալ ըմ. վըեր լափ ըզադվալ ա, ես էլ էն ծո̏ւկունն ըմ, վըեր տու ինձ փըռնալ ըս, առաչին դո̏ւնըմը քու հոր ըշկըերեն դա̀րդա̀ն իմ աշկերըս տո̏ւս չըս տըվալ: Ես մըտածալ ըմ, վըեր քյեզ

քըթենամ, լիվոթունետ լիվոթուն անիմ, մըհենգյ հինչ վըեր օզալ ըմ, ինդի էլ ըրալ ըմ: Ես ծո՞Լկուն ըմ, քյինըմ ըմ կյետը, հինչ ը՞մ անըմ կընեգյը, հարուստոթո՞Լնը, քյընա՞ցեքյ բախտավըեր ըպրեցեքյ, աշխարքավըս էլ տարածեցեքյ, հինչքան կարըմ ըք, ո՞Լրո՞Լր լիվոթուն ըրեքյ: «Ծուկունը փըռնե, քցի ճո՞Լրը, չըգյիղա՞ցողը գյիղա՞լ չի, ծո՞Լկունը կըգյիդա», դե, ես քյեցե կյետը»:

Պուճուր ախպըերը ըստեղ կըլոխ ա ընգնըմ՝ պենը հինչըմն ա: Կյամ ա կընեգյն էլ, հարուստոթո՞Լնն էլ յոր օնըմ, քյինըմ բախտավըեր ապրըմ:

## 22.ՇԱՀ-ԱԲԲԱՍԵՆ ՏՂԸԵՆ ՆԱՂԼԸ

Օրերի մի օր Շահ-Աբբասն ո՞Լրա՞ն նաա՞զիր-վեզիրներավը տո՞Լս ա կյամ վըերսի: Վըերս ընելավ կյամ ըն ընգնըմ մին ծըմակ: Մին պատառ ընցնելան ետը մըթնըմ ա: Նա՞զիրներան մինը եշըմ ա, տըեսնըմ ծըմական պատառ տեն, կյետին ղըրաղեն մին ճեղաց կա, քյընամ ա էտ ճըղըցպանեն կոշտը՝ Շահ-Աբբասեն հետե տըեղ անե, վըեր քշերը մընա էտ ճըղացըմը: Ո՞Լրա՞նք մընըմ ըն ծըմակըմը» Շահ-Աբբասը կյամ ա էտ ճեղացը: Ճըղացպանը տո՞Լս ա կյամ քյինըմ ճըղացեն ճիրա՞վը ընցնըմ: Շահ-Աբբասը նկատըմ ա, տըեսնըմ, վըեր էտ ճըղացըմը ո՞Լրա՞ն անա կըման մին մարթ էլ կա, թա հու վա, գյո՞Լղո՞Լմ չի: Եր ա կենըմ էն մըթնավը կամանց-կամանց սա՞սին յրան մուտանըմ տըեսնըմ մին շատ ղա՞շա՞նգ ախճիգյ ա պարկած : Հըրցըփորց ընելան ետը գյո՞Լղո՞Լմ ա, վըեր էտ ախճիգյը ճըղըցպանեն ախճիգյն ա: Էտ ճըղացպանը ոչ ոք չօնե, էտ մաղար ախճիգյն ա ո՞Լրա՞ն քշտեն, ճըղացըմն ա պահըմ: Շահ-Աբբասն էս ըխճըկանավն էնքան տարվըմ ա, վըեր էլ մուռանըմ ա, վըեր ախեր ինքյը շահ ա, ըտել մին խեղճ ճըղըցպանու ախճիգյ: Էս ըխճըկանը խա՞փըմ ա, ախճիգյն էլ համ վըխելան, համ հըմընչիլա՞ն ճարը կըտըրըմ ա, սուս ա անըմ: Առավոտը քյընա՞լիս տըեղը Շահ-Աբբասը տո՞Լս ա օնըմ ծոցան մին շատ թա՞նգյա՞նո՞Լց վիզկապ բոլյանտի քրերավ, ո՞Լրա՞ն նըշա՞նն էլ յրան տամ էս ըխճըկանը, թա ասըմ ա կա, թա վըեր ախճիգյ կինի, կըծախիս պեժինքյ պըղրաստիս, թա վըեր տըղա կինի, կըքըցիս պոկը հիշատակ մընա ինձանից:

Ախճիգյը յոր ա օնըմ հորն անա թաքուն պահըմ, էլ վրեչ մին պեն չի ասըմ: Անց ա կենըմ իննը ամըես, էս ախճիգյը մին տըղա յա պիրըմ: Տըղան պիրիլան ետը հորն անա հըմանչըմ ա, թա ինքյը մին պեն ասե: Հա՞րն էլ շատ սիրելա՞ն ըխճըկանը , համ էլ վըեր մար չօնե, շատ մեխկըն ա կյամ, ըտրա

հետե էլ սուս ա անըմ, համ ըխճըկանը պահըմ, համ էլ էտ խուխեն: Էս խոխան մինչն չափահաս տըեռնալը գյո̀ւղո̀ւմ ա, թա ո̀ւրա̀ն հա̀րն էտ ճըղացպանն ա, իսկ վըեր մըծանըմ ա, հետան պիճ ըն կանչըմ: Էս տըղան արթեն հըսկանըմ ա, վըեր հա̀ր չօնե, էտ ճըղացպանն ո̀ւրա̀ն պապն ա, վըեչ թա հա̀րը:

Մին օր էս տըղան մորն ըստիբըմ ա, թա տու ինձ մին ասե տըեսնամ իմ հար հու՞ վա իլա̀լ, էտ հունց ա՞ պըտահալ, վըեր ես պիճ ըմ իլա̀լ: Մարը հիշքան օզըմ ա անե, վըեր կյեղե, տըղան շատ ըստիբիլ ա տամ, մարը լոխ պարզ տըղեն նաղլ ա անըմ, վըեր տու Շահ-Ըբբասեն անա իս իլա̀լ:

Էս տըղան լոխ գյիդա̀լա̀ն ետը էլ հըմանչըմ ա, վըեր էտ շենըմը կենա, ըստիբըմ ա ո̀ւրա̀ն պապըեն, թա ես ու մարըս անհարմար ա ըստըեղ կենանք, շատ խընթըրըմ ըմ մին պենըմ մըեզ քյո̀մա̀գյ իլ, հինչ վըեր կարըմ ըս, մըեզ տո, մունք քյինինքյ օրիշ երգյիրըմ ապրինքյ: Էտ ճըղացպանն ասըմ ա. -«Հինչ օ՞նիմ, վըեր հինչ տամ, շատ լավ ըս ասըմ, ինձ էլ ա նամուս կյամ, ամ-մա դե մինակ մին կով օնիմ, ընել ծըեզ հալալ, եր կալիքյ, քյեցեքյ: Տըղան համաձայնվըմ ա, կովը յոր օնըմ, մորը նըհետ տո̀ւս կյամ քյինըմ բիդի էն երգյիրը, ըշտեղ վըեր Շահ-Աբբասն ա թաքավըեր:

Կյամ ըն հըսնըմ Շահ-Աբբասեն երգյիրը, մարը տո̀ւս ա օնում Շահ-Աբբասեն տված վիզկապը, քըցըմ վեզը, ասըմ, վըեր սա իմոր անա իհշատակ ա, թող վիզըմըտ մինչն մահըտ կենա, ըշտեղ վըեր նեղ տըեղ ընգնիս, քյեզ ըզըղելու ա:

Անց ա կենըմ մին քանի օր, էս տըղան յոր ա օնըմ կովը, տանըմ բազարը վըեր ծախե, հանցու ապրին: Բըզարըմը կովը ծըխելիս էտ տըղեն մուտանըմ ա Շահ-Աբբասեն նա̀զիր-վեզիրան մինը, թա ասըմ ա, «էտ էծը քանի՞ յա»: Էս տըղան թա ասըմ ա. «Սա էծ չի, կով ա»: Նա̀զիր-վեզիրը պընդըմ ա, թա չէ, ըտա կով չի, էծ ա: Վեզիրին էս խոսկավն հու վըեր մուտանըմ ա թա առնե, լոխ էլ էծ ըն ասըմ: Էս տըղան մըտածըմ ա, մըտածըմ, ինքյն ո̀ւրա̀ն ասըմ հալբաթ էս երգյիրըմը կովըեն էծ ըն ասըմ իլի: Էտ կովն էն վեզիրին յրան էծու տըեղ ծախըմ ա իրեք մընեթու, վեզիրին խնթըրըմ ա, թա մինակ հա̀քյո̀ւն ինձ բիդի տաս: Վեզիրը համաձայնվըմ ա , կովը մորթըմ, հա̀քյո̀ւն, իրեք մանեթը տամ էս տըղեն: Տըղան փողը պիրում ա տամ մորը, թա ասըմ ա. «Ա՛ մեր, կա՛ էս փողը, քյինա̀ մին ծըերք կընգա շոր առ, պեր»:

Մարը կընգա շորերն առնըմ ա, պիրըմ: Էս տըղան իրեսը, կլո̀խը շինըմ

ա, կընգա շորերը կյենըմ, կովեն հ՚ոքյ՚ուն էլ տինըմ ծոցըմը, հունցը մին դ՚աշ՚անգյ կընեգյ, մորը թա ասըմ ա. «Ա՛ մեր, ինձ տար բըզարըմը ծախե, ամմա դե հ՚ուրը վըեր աշկավ անիմ, ընդրա յրա կըծախիս, եշիս վըեչ, լըհ՚ա վըեր աշկավ անիմ, փողը յոր կօնիս, ինձ ձախիս, տու կյաս տոն, ընդրանա տենը ես կըգյիդամ:

Մարն իտի էլ անըմ ա: Տըղեն կընգա շորեր ա կյեց տամ, պիրըմ բազար: Սաղ բըզարեն մարթիքյն էս ըխձըկանավը տարվըմ ըն, լոխ էլ օզըմ ըն թա առնին: Ըռնողներան մինն էլ ինըմ ա հ՚ամին էն վեզիրը, վըեր կովը էծու տըեղ առալ ա: Էս տըղան մորն աշկավ ա անըմ, մարը տըղեն ծախըմ ա էտ վեզիրին երան, փողը յոր օնըմ, քյինըմ տոն: Վեզիրն էլ էտ տըղեն յոր ա օնըմ, կյամ ՚ուր՚ան տոնը:

Վեզիրն ան տըղան վըեր կյամ ըն տոն, էս տըղան ասըմ ա. «Վեզիր ջան, դե մին նըշանց տո տըեսնամ հինչ օնիս, հինչ չօնիս, համ ուրխանամ, համ էլ ամեն հինչին տըեղը գյիդ՚ամ, վըեր մին պեն ուզելի ինիս, էլ հըրցընիմ վըեչ, թա ըշտեղ ա, ասածըտ ծծեռաց կըդարիմ»: Վեզիրը թա ասըմ ա. «Ա՛յ, շատ ապրիս, հատե՛, իտի խըելունք կընեգյ է՛ , օխտը կընեգյըս ա իլ՚ալ, հ՚ալ՚ա վըեչ մինն իտի մին խըելունք պեն չի ասալ ինձ, դե քյինինըքյ, նըշանց տամ»:

Վեզիրը տանըմ ա օթըղնեն ման ածըմ, լոխ նըշանց տամ, տ՚ուս ըն կյամ հայաթը, հըյաթըմը մին դրաղ տըեղ ինըմ ա մին սըրահ, էտ վեզիրը մին քանի տարե առաչ ըտըեղ մինչև վեզիր տըեռնալը դ՚ամ՚ուրչոթուն ա իլ՚ալ ընելիս: Էս սըրահըմը ինըմ ա մին մըեծ մ՚անգյ՚ան՚ա, էս տըղան էս մ՚անգյ՚ան՚ավը շատ ա զըրմանըմ, թա սա հի՞նչ պեն ա, վեզիրը թա, «Տա մ՚անգյ՚անա յա, արկյաթ-պեն ըմ տինըմ, հոփ տամ, ետնան հինչ օզըմ ընք, շինըմ ինք»: Էտ տըղան ՚ուր՚ան էշատըեղ ա տինըմ, թա. «Ես հըվատըմ չըմ, վըեր իտի պեն կինի, հունց ա՞ պահըմ»: Էս վեզիրը թա. «Օզըմ ըս, փորցինքյ տըես»: Էս տըղան թա. «Դե ես ծըերքերըս տինիմ, տո հոփ տո տըեսնամ»: Վեզիրը թա. «Պա ես դիմիշ կանըե՞մ քու ծըերքերըտ հոփ տամ, հաստ՛ , ես իմ ծըերքերըս տինիմ, տու հոփ տո տըես»: Վեզիրը համ ասըմ ա, համ էլ ճոխտ ծըերքերը տինըմ, տըղան կամանց-կամանց համ հոփ ա տամ, համ էլ հըրցընըմ. «Ցավ ա՞ տամ», վեզիրը թա. «Չէ՛»: «Ցավ ա՞ տամ». թա. «Չէ»: Էլ ա հոփ տամ. «Ցավ ա՞ տամ», թա. «Չէ՛»: Պատառ էլ հոփ տալան ետը վըեր վեզիրը թա ասըմ ա հոփ ա տամ, էս տըղան հիշքան վըեր օժըմը կա, էրկու ծըերքավ պըենդ հոփ ա տամ, ճոխտ ծըերքերը ճարթըմ, ծոցան կովըեն

հա̀քյո̀ւն տո̀ւս օնըմ, ըսկըսըմ թակըելը։ Համ թակըմ ա, համ հըրցնըմ. «Դե՛, ասե տըեսնամ կով ա՞ր, թա էծ, կըկարի՞ս կովըս էծու տըեղ առնիս, դե մըհենզյ ասե տըեսնամ կով ա իլա՞լ, թա էծ»։ Վեզիրը թա. «էծը ես ըմ, ե՛ ս, վըեր էշ էլ տըեռնամ, ծըերքերըս պեց կը թողի՞ս»։ Տըղան թա. «Ծըերքերըտ պեց չըմ թողիլ, հոքիտ հես ա պեց կըթողիմ»։ Խանչալը հանըմ ա, ըսպանըմ, կյեցին կընգա շորերը հանըմ, ո̀ւրա̀ն տըղու շուրերըմ տո̀ւս կյամ քյինըմ ո̀ւրա̀նց տոն։

Վեզիրը մընըմ ա սըրահեն տակեն ըսպանված, վըեր ընգած։ Էրկու օրան ետը վըեր վեզիրը ըրվամ չի, Շահ-Աբբասը հայտնըմ ա, վըեր հու վըեր վեզիրիս տըեղն ասե, քառասուն վըեսկի ըմ տալու։ Էս տըղան վըեր լըսըմ ա,եր ա կենըմ մին աբա կյենըմ, մին դա̀վթա̀ր յոր օնըմ, սոտ տըեղան կյիրպեց տըեռնըմ ինքյը, քյինըմ բզարըմը նըստըմ, թա ես կորած պիներեն տըեղը գյիդա̀ցող ըմ։ Քյինըմ ըն շահեն ասըմ, վըեր մըեր երգյիրը մին կյիրպեց ա եկալ, կորած պեները ճարըմ ա։ Շահը կանչել ա տամ էտ սոտ կյիրպեցին, թա ասըմ ա. «Վըեր վեզիրին տըեղը գյիդա̀ս, ասիս ճարինքյ, քառասուն հատ վըեսկե յըմ տալու, թա վըեր սոտ ասիս, կըլո̀խըտ կըտըրելու ըմ»։ Տըղան ռազի ա կենըմ, ասըմ. «Դե ինձ մին մըթեն օթաղ տըվեքյ, նստիմ համ աղոտկըս անիմ, համ կյիրքիս եշիմ, տըեղն ասիմ»։

Պերըմ ըն մին մըթեն օթաղ տամ, սա նըստըմ ա սոտ-սոտ դա̀վթարը պիցըհոփ անըմ, սոտ-սոտ տըեղան աղոտկ անըմ, թա հիշքան կյիրիս եշըմ ըմ, կյիրըս նըշանց ա տամ, վըեր վեզիրն օրիշ տըեղ չի, հեն ա ո̀ւրա̀ն հըյաթըմը մին նըեղ տըեղ ընգած, համ թակված, համ ըսպանված, քյեցեքյ պերեքյ։ Շահը մարթ ա ղարկըմ, քյինըմ ըն տըեսնըմ ղորթ-ղորթ հունցը վըեր ասալ ա, ինդի էլ կա։ Ցոր ըն օնըմ պիրըմ, շահը քառասուն վըեսկեն տամ ա էտ տըղեն, տըղան վըեսկեն յոր ա օնըմ, քյինըմ ո̀ւրա̀նց տոն, վըեսկեն տամ մորը։

Վեզիրը թըղելան ետը շահը մեջլիս ա կանչըմ, հարցը տինըմ, թա հունց ա՞նինքյ, վըեր վեզիրին ըսպնողեն ճարինքյ։ Ախըր մըծերան մին աղսախկալ ասըմ ա.-Օրիշ ճար չկա, պիըինքյ մին օղտ վըեսկավ պեռնինքյ, տանինքյ մին ճանապարըմ պեց թողինքյ, թաքուն օղտըեն հետան չորս մարթ պեց թողինքյ, հու վըեր  մուտանա թա օղտըեն տանե, ըտա յա իննական ըսպանողը, ըտրան էլ փըռնինքյ։ Հունց վըեր ասըմ ըն, իտի էլ անըմ ըն։ Օղտը վըեսկավ պեռնած մին ճանապարըմ պեց ըն թողըմ, չորս հոքի  էլ

հըռըքաշ, օղտան թաքուն քյինըմ ըն:

Էս տըղան վըէր գյո՛ւղո՛ւմ ա, վըէր իտի քյա՛լա՛գյ կա սարքած,քյինըմ ա բըզարան էրկու ջուր նոխուդ-չամինչ առնըմ, ածըմ ջըբէրը, մինը ճարըմ ա, մինը չա՛րա՛զ ընէլավ օղտըէն ան էտ մարթկանցը հետան ինքյն էլ թաքուն քյինըմ, վըէր մին քյա՛լա՛գյ կյա ըտրա՛նց: Օրը մըթնըժուրում ա, ըտրանց հընգէրէն մինն անց ա կենըմ մին քոլու քըմակե պըպըզըմ, էտ տըղան նի յա հըսնըմ քըմական տո՛ւս խընչալավ թըխըմ ըսպանըմ, շորէրը հանըմ ինքյր կյենըմ, նոխուդ-չամինչը չա՛րա՛զ ընէլավ քյինըմ հըսնըմ էտ իրեք հընգէրին: էտ հընգէրնէրը էլ գյուղում չըն, վըէր ըտա օրիշ ա, ծըրքըրնէն մըէկնըմ ըն , ըտրանա նոխուդ-չամինչ օզըմ, էտ տըղան էլ էն ճարած նոխուդ-չամինչան տամ ա ո՛ւրա՛նց, մին պատառ քյինա՛լա՛նը ետը էտ իրեք հոքին էլ կըտորվում ըն, տըղան օղտը քշըմ ա պերըմ ո՛ւրա՛նց տոն, պեռնը վըէր օնըմ, օղտն էլ մորթըմ, մին շախկան ո՛ւրա՛նց սըրահան կախ տամ, մըէկալը նի տամ փոսը, թաղըմ:

Էքսյը վըէր խաբարը եր ա ինըմ թա օղտը տարալ ըն , էն չորս մարթն էլ կըտորվալ ըն, Շահ-Աբբասը կանչըմ ա թա՛զա՛ղա՛ն մեջլիս անըմ՝ հունց ա՞նին, վըէր էտ մարթին փըռնին: Մեջլիսըմը մին կընեգյ ասըմ ա. - Շահ-Աբբասը սաղ ինի, ես կըճարիմ: Վըէր հըրցընըմ ըն, թա հո՞ւնց կըճարիս , էս կընեգյն ասըմ ա. - Սաղ քաղաքը տըռնը-տոռնը շոռ կըկյամ, ըղաչանք կանիմ, վըէր մին մաղար տըղա օնիմ, հեն ա մըռնէլիս, մին կըտոր օղտու մըէս ա օզըմ, վըէր օտըէ, սըղանա: Հու վըէր ինձ օղտըէն մըէսը կըտա. էն էլ կինի էն մարթը, վըէր օղտը տարալ ա, էտ մարթկանցն էլ կըտորալ: Ես տըէղը կըգյիդամ, կըկյամ կասիմ, տուք էլ կըքյինաք, կըփռնիքյ: Մեջլիսը, ռազի յա կենըմ, էս կընեգյը եր ա կենըմ քյընա՛մ: Ըստըէղ-ընդըէղ քյընա՛լավ կյամ ա տո՛ւս կյամ էտ տըղէն տանը, տըէսնըմ սըրահան մին շախկա օղտու մըէս կախ տըված: Էտ տըղան տանը չի իլա՛լ, էտ կընեգյը տըղէն մորը շատ ըղաչանք ա անըմ, վըէր մաղար տըղաս մըռնէլի յրա յա, մին կըտոր օղտու մըէս ա օզըմ, ինձ տո, տանիմ տամ ո՛ւրա՛ն, օտըէ, սըղանա: Էս տըղըէն մարը մեխկը կյա՛լա՛ն ետը կընգանը, օղտըէն մըսան մին կըտոր կըտըրըմ ա, տամ ո՛ւրա՛ն: Էլիա՛ մըէսը ծըէրքէն տո՛ւս կյա՛լիս էս տըղան նի յա մընըմ հըյաթըմը էտ կընգանը պըտաիըմ, հըրցընըմ էտ կընգանան. «Հոր ը՞ս եկալ»: Կընեգյն ըսէլան ետը էս տըղան կըլոխ ա ընգնըմ, վըէր տա քյա՛լա՛գյ ա սարքած, կընգանը թա ասըմ ա. «Դե քյա՛սիբ կընեգյ ըս, ետ տըէռ քյընա՛նք տոն, քյեզ

փող էլ տամ, վըեսկե էլ տամ»: Էտ կընգանը խափըմ ա, տանըմ տոնը, տանը ըսպանըմ, կըռնըեն մինը կըտըրըմ, սըրահըմը օղտըեն մըսըեն քշտեն կախ տամ, մեյիդը փոսըմը թաղըմ:

Մին քանի օր վըեր ըսպասըմ ըն էս կընեգյը կյամ չի, շահը նորից մեջլիս ա կանչում, հարց տինըմ՝ մըհենգյ հունց ա՞նինքյ, վըեր էտ մարթին փըռնինքյ: Վեզիրներան մինը թա. «Ես գյո՛ւղո՛ւմ ըմ, վըեր էտ մարթը վըերն ա, էտ լոխ մին մարթու կործ ա, էտ մարթն էլ էն մարթկանցից ա, վըեր հազզար հոքի եկալ ըն ախճիգյըտ օղին, տըվալ չըս, մըհենգյ ըտըրանց անա մինը քեզ թըշնամութուն ա անըմ, հո՞ւ վա, վըե՞րն ա, գյո՛ւղո՛ւմ չըմ, համ գյիղա՛լի, համ էլ փըռնելի հետի հարկավըեր ա քըղաքան տո՛ւս մին ղըրաղ տըեղ մին օթաղ շինիլ, ախճիգյըտ տանել մինակ էն ութաղըմը պահել, յրան էլ ղարաղուլչի տինիլ, էտ մարթը վըեր գյիղա՛ ախճիգյըտ ընդըեղ մինակ ա ապրըմ, կյա՛լու վա թա փըխճըցընե, տըեղնը-տըեղը կըփըռնինքյ»:

Շահ-Աբբասը ռազի կընալան ետը քըղաքեն ղըրաղեն մին օթաղ ըն շինըմ, ախճիգյը տանըմ էն ութաղըմը պահըմ, յրան էլ մին ղարաղուլչի տինըմ:

Էտ տըղան լոխ գյիղա՛լա՛նը ետը մին օր ժըմըժենքին մին թա՛զու մորթե յա շոռ օնըմ, էն կընգանը ծըերքն էլ յոր օնըմ, մորթուն տակեն կյեղած նի մընըմ էտ ըխճըկանը հայաթը: Ղարաղուլչին գյո՛ւղո՛ւմ ա, թա ղորթ-ղորթ թազի յա, մին ղըրաղ տըեղ ինքյը նըստըմ ա, նընջըմ: Էս տըղան վըեր նի յա մընըմ հայաթը, մորթեն յոր ա օնըմ էն ծըերքը մաչին փըթաթըմ, թողըմ տո՛ւսըմը, ինքյը ըխճըկանը կոշտը քյինամ: Ախճիգյը, վըեր տըեսնըմ ա էտ տըղեն, ուրխընալան ըսկըսըմ ա ծիծաղելը, տոռնը պեց ա անըմ, տըղան նի յա մըտնըմ կոշտը, շատ խուսելանը ետը ըսկըսըմ ըն ո՛ւրո՛ւր սիրիլը: Ախճիգյն ասըմ ա, - Վըեչ մին տըեղ չըս քյինա՛լո՛ւ, մընալու վըս ըստըեղ քըշերը: Էտ տըղան վըխեան վըեր լո՛ւսա՛նա՛ կը փըռնին, ո՛ւրա՛ն խոսկ ա տամ մընա մինչև ծա՛քյիլը:

Վըեր ծա՛քյըմ ա, տըղան օզըմ ա թա քյինի: Ախճիգյը պեց չի թողըմ: Տըղան շատ վըխելան վըեր լո՛ւսա՛նըմ ա, խընթըրըմ ա, վըեր թողե տո՛ւս կյա տո՛ւսը, էլհա կյա՛: Ախճիգյն ասըմ ա՝ վախըմ ըմ փախճիս, տղան թա ասըմ ա տո՛ւսա՛վը տըռանը ճաքավը ծըերքըս մըկնելու վըմ տու փըռնիս, մինչև վըեր ես կյամ: Ախճիգյը վըեր հըվատըմ ա, տըղան տո՛ւս ա կյամ տոռնը, տըռանը ճաքավը էն կընգանը կըտըրած ծըերքը մըեկնըմ ա, ախճիգյը փըռնըմ ա,

ինքյը թազուն մորթին շոռ օնըմ, թազի տըեռած տո՞ւս կյամ քյինըմ...

Ախճիգյը եշըմ ա, եշըմ, վըեր տըղան կյամ չի, տոռնը պեց ա անըմ, էն կըտըրած ծըերքը վըեր ա ընգնըմ։ Ախճիգյը վըխելան ըսկըմ ա հարայ-հըրոց անըելը, ճըղճըղալը։ Սա՛սին յրան լոխ էլ հըվաքվըմ ըն, տըեսնըմ ըխճըկանը քյա՛լա՛գյ եկած, տըղան փախած, յոր ըն օնըմ, տանըմ Շահ-Աբբասին կօշտը։

Շահ-Աբբասը շատ մըտըծելան ետև էլ օղըմ չի էտ տըղեն փըռնելը հո՛քյմավ ինի, սաղ ըշխարքեն հայտնըմ ա, վըեր ես շահ տըեղավըս էն մարթը վըեր կըրեցալ ա ինձ իտի քյա՛լա՛գյնե կյա՛, նիգյա՛րա՛ն ըմ, թա հու վա, թող կյա կօշտըս, տըեսնամ, լոխ՝ հինչ վըեր ըրալ ա, բախշըմ ըմ, դոչաղ մարթին, խըելունք մարթին մեխկը չի ինիլ։

Էս տըղան վըեր ըսկանըմ ա, Շահ-Աբբասեն յրան մին նամակ ա կյիրըմ, վըեր  քու խոսկըտ հըստըղելի համար էս նըմակըմը հինչ  վըեր կյիրըմ ըմ վըեր կըդարիս, ես կյալու վըմ կօշտըտ.

«Քըղաքեն կըլխան մինչև պալատըտ տափավը մըեկնըմ ըս գյա՛բա՛-կարպետ , գյա՛բա՛-կըրպետին կուխկերքավը վըենն ըս կըցնըմ լոխ ոըհա՛թը, տու էլ պալատան տո՞ւս ըս կյամ չոլը, ես մին ծի եր իլա՛ծ կյըլա՛կան ըմ, հինչ վըեր իլա՛լ ա, հունց վըեր իլա՛լ ա, ոըհաթին պատմիմ, վըեր տու էլ լըսիս»։

Շահը մին օր, հունց վըեր ասած ա ինըմ էտ տըղան, իտի էլ անըմ ա։ Եշըմ ըն տըեսնըմ էտ տըղան մին ծի եր իլա՛ծ կյամ ա։ Վըեր հըսնըմ ա շահեն կօշտը, չոխ պատմըմ ա։ Շահը թա. «Քու ըրած կործերըտ լոխ բախշըմ ըմ, մինակ վըեր ըխճըկանըս խա՛փա՛լ ըս, ըտրա դա՛րդա՛ն քեզ կախ ըմ տամ»։ Տըղան թա ասըմ ա. «Վըեր կախ տալի ինի ինձ, առաչ քյեզ բիդի կախ տան, վերնիետև ես քյըզանա ըմ սըվըերալ, վըեր տու էն քյա՛սիբ, առանց մար, ճըղըցպանեն ըխճըկանը խա՛փա՛ծ չինիր, ես էլ քու ըխճըկանըտ չի խա՛փիլ»։ Ասըմ ա, վիզին կապած շահեն տըված վիզկապը տո՞ւս օնըմ, թա կա՛, դե մըհենգյ ինձ կախ տո։ Շահը վըեր տըեսնըմ ա ժողովուրթը քար ըն տըեռալ էս տըղեն ըսելավը, ճարը կըտըրըմ ա, ետ ա տըեռնըմ, թա. «Ա՛սըմ ըմ, ախեր, ըռնաս մաչիտ կա, էրկու մորա, մին հորա մորը տըղան, հորը ախճիգյը հալալ ինին ո՞ւրո՞ւր, ախճիգյըս՝ քյեզ»։ Օխտը օր, օխտը քըշեր հըրսանեքյ ըն անըմ, շահեն ախճիգյը տամ էտ տըղեն, մըեծ հարուստու-թունավ հըղե քըցըմ էն տըղեն մորը կօշտը։

## 23.ԴՈ̀ՎՐԻՇԻՆ ՏՂԱՆ

Մին թաքավըեր ա ինո̀ւմ, անումը Ջեմ: Էտ թա քավըերեն վըեչ կընեգյ ար ըզադվում, վըեչ բաղն ար ծաղկում, վըեչ ապրանքն ար պըտըղվում : Բաղն էլ կընանչում ար, ծաղկում չար: Քանի տարե էտ թաքավըերն ապրում ա: Ուրերան մին օր մին դա̀վրիշ կյամ ա նի մըննում էս քաղաքը, շոռ կյամ: Ո̀ւրո̀ւլգյո̀ւնը կյամ ա թաքավըերեն դըրբըզումը նըստում: Թաքավըերն ո̀ւրա̀ն ծառան դարկում ա, սըրան հըրցընում ա, թա խե յը՞ս ըտրեղ նըստալ Դա̀վ-րիշն ասում ա. «Եկալ ըմ դոնաղ»: Դա̀վրիշը եշում ա, տըեսնում թաքավըերեն վըեչ մին խոխա, վըեչ մին պեն չի կա, ասում ա. «Քանի՞ տարեյա թաքավըեր ըս, էս հինչ պե՞ն ա, վըեր վըեչ մին պենըտ ծաղկալ, աճալ չի»: Թաքավըերն ասում ա. «Է՛, դա̀վրիշ բաբա, իմ դա̀րդըս շատ ա, վըեչ կընեգյըս ա խոխա պիրում, վըեչ կավըս ա ծնում, վըեչ բաղըս ա բար տամ»: Դա̀վրիշը մին խըեգյ մըտածում ա, ասում. «Ջեմ թաքավըերն ապրած կենա, ես մին պեն ասիմ՝ եք ես նան տու դոզվոր կապինքյ՝ ես մին կյիր անիմ, քյինաս կընեգյըտ պըտըղվի՝ թա ախճիգյ ինի, առաչին փոըը իմը, թա տըղա ինի, էլլա իմը՝ բաղըտ բար տա, կավըտ՝ ծընե»:

Դա̀վրիշը մին կյիր ա անում տամ ո̀ւրա̀նց, ինքյը քյինամ: Քյինամ ա հենգյ-տասըը տարե շոռ կյամ: Իննը ամսումը թաքավըերեն կընեգյը մին տղա յա պիրում, անումը տինում ըն Դա̀վրիշին տղա: Կյամ ա էտ տղան տըեռնում իննը հասակ: Էտ իննը հասակումը մին դո̀նում դա̀վրիշը շոռ ա կյամ, տըեսնում ծուցումը դոզվոր կա, ասում ա.«Մին դոզվորիս հային քյինամ տեսնամ»:

Դա̀վրիշը կյամ ա տըեսնում թաքավըերեն տըռանը մին տըղա, մին ախճիգյ շոռ ըն կյամ: Դա̀վրիշին լո̀ւզին էրգյընանում ա: Նի յա մըննում թաքավըերեն տոնը, թա. «Դե ես եկալ ըմ տըղաս տանեմ»: Ո̀ւրո̀ւլգյո̀ւնը նըստում, հաց ըն օտում: Դա̀վրիշին տըղան ասում ա. «Ա՛ հեր, տու քյինա քըղաքան տուս եք, ես կյամ ըմ, մըխըրե անհարմար ա քյըզնըհետ կյամ»: Տղան հորը նհետ, մորը նհետ ծըեռք ա տամ, տըռանը սրկիվիլի յա ինո̀ւմ, ասում ա. «Ա՛ մար, էն ժամանակ, վըեր սրկիվիլին չուրանա, գյիդա վըեր ես մահացալ ըմ», ու ճանապար ինգյնում դա̀վրիշին հետան:

Քյինամ ա ճանապարեն ըըրաղեն մին հինգյիստարան վըեր էտ հինգյիս-տարանն անց կենա, մինը հետան ծեն ա տամ. «Էհե՛յ, դա̀վրիշին տըղա»: Ետ ա տըեռնում եշում, մարթ չի կա: Մին էլ օզում ա, թա քյինա, հինգյիստին

քարեն տական մին ինսանու չոր կյիլոխ հըրցընամ ա. «Թոռնը՞ս քյինամ»: Ասում ա. «Դա̀վրիշը եկալ ա, ինձ տանում ա»: Ասում ա. «Տու դավրիշին ծըեռքան պըրծըննական չըս, էն ա դա̀վրիշին էրկու ծի օնե կյումումը կապած, էտ ծիյանցը մինը կյարի յա օտում, մինն էլ չամինչ, էն դա̀վրիշը տանելու յա քե նահանց տա: Դա̀վրիշն ըսելուվա օլմիյա, տրանց կորմը փոխիս վըեչ, վըեր փոխիս՝ ծիյանը կըլղարին, կըկըտորվին, իսկ տո̀ւ, դա̀վրիշը վըեր տո̀ւս կյա̀ քյինա̀, կարող ըս կյարի ուտողեն չամինչ տաս, չամինչ ուտողեն՝ կյա̀րի, իրեք օր կորմը փոխած կըպահիս, չորսինջի օրը տըռանը քըմակին տո̀ւ քյեզ կըկյա̀ղիս: Ծին լո̀ւզի յա տըռնըլական, խոսի. ասելուվա՝ էս կորմը փոխողը հինչ նպա՞տակ օնի, ես ընդրա նպատակը տըեղ տամ: Վըեր կասի, էտ վախտը տո̀ւ տըռանը քըմական տո̀ւս կըկյաս, ասես՝ վըեր ես օզում ըմ տո̀ւ դա̀վրիշան ինձ ըզադիս, էն վախտը քյեզ ըզըդելուց Սըև ծին կըզադվի»:

Էտ ասեց պըրծավ, մընաց քարին տակին, իսկ Դա̀վրիշին տղան քյա̀ցավ դա̀վրիշին հետան հըսավ: Դա̀վրիշը տղեն եր հանից՝ թա̀րքյը, քյա̀ցավ, քյա̀ցավ, տո̀ւս եկավ մին դո̀ւզ, վըեչ քաղաք ա, վըեչ շեն, մին կենդակ տոն ա, հասար քաշած, դըրբըզան յիրա̀ ըրած: Դըրբըզան դա̀վրիշը պեց ա անում, նի մննում հայաթը, վըեր կյամ, նի մըննում տոնը: Էտ քշերը ըտըեղ քոն ըն ինում, լո̀ւսանում ա: Դա̀վրիշը տըղեն յոր ա օնում, քյինում ծիյանցը կոշտը, ասում, վըեր էս ծիյանցը կորմը փոխել անկարելի յա, վըեր ծիյանցը կորմը փոխիս, ծիյանքը կըլըղարին, կըտորվին. ամեն ծի, հինչ վըեր կերալ ա, պետք ա էն էլ օտի: Ասում ա պրծնում, տըղեն նիետ ծըեռք տամ, ինքյն ո̀ւրա̀ն ծին նըստում, քյինում ո̀ւրա̀ն հետե շոռ կյա̀լ:

Էտ վըեր քյինում ա. տըղան դա̀ստի ծիյանցը կորմը փոխում ա: Իրեք օր վըեր անց ա կենում, չորսինջի օրը տռանը քմակին կյողլ ա կենում: Ծին լո̀ւզո̀ւ վա տըեռնում, ասում, վըեր. «Էս հո՞ւ իմ կորմըս փոխից, սըրան հինչ նպատակ օնի, ես նպատակը տըեղ կըտամ»: Տռանը քմական տղան տո̀ւս ա կյամ, թա. «Սըև ծի, ես ըմ փոխալ կորմը, ինձ դա̀վրիշին ծըեռքան ըզադե»: Ծին ասում ա. «Վըեր մըետքըտ տըհենց ա, քյինա̀ տոն, տանան եր կալ մին լիսեռնը, եր կալ մին իլիզյ, եր կալ մին չըխմըխաքար, մին հիլի՝ ծուցում տինիլի հիլի, էտ չորս պենը եր կալ, էն տանը հինչ վըեր տըեսնաս՝ մին շամփուր, մին՝ ճըպատ, հինչ վըեր տըեսնաս, լոխճին անումը կասիս, յետնան կասիս՝ մնացեքյ պարև, կըկյա̀ս եր ինիս մաշկըս, կըքյինանք: Պա էտ

հունց ա՞նինք վըեր մին լո՛ւլա՛ն կոտրած ըլթավան տռանը քմակին ա մնացալ»:

Վըեր ծին նըստում ա թա կյուման տո՛ւս կյա՛, էտ ըլթավան տռանը քմական տո՛ւս ա կյամ, ինգյնում դուզերը, ղընգըղնգում, հարայ տամ. «Դա՛վ-րի՛շ, տոնըտ քընդեցեն, Սըև ծիտ տարեն»: Դա՛վրիշը լսում ա, կյամ: Սահանք քյինամ ըն, դա՛վրիշը սահանց հետան: Սըև ծին ասում ա. «Չըխմըխաքարը վըեր քցի»: Վըեր չըխմըխաքարը վըեր ա քըցում, ո՛ւրա՛ն ան դա՛վրիշին ղաթը տըեռնում ա քըերծ, ծին կարում չի թա կյա՛: Մինչև դա՛վրիշին ծին մուտա-նալը Սըև ծին մին մա՛նգիլ քյինամ ա: Դա՛վրիշը վըեր քյինամ ա, Սըև ծիյին հըսվըհաս ա տըեռնում վըեր փռնի, տղան ասում ա. «Սըև՛ ծի, դավրիշը հասավ»: Սըև ծին ասում ա. «Իլիզյը սազ ըրա, վեր քցի»: Իլիզյը վըեր վեր ա քցում, ո՛ւրա՛նն ան դա՛վրիշին ղաթը տըեռնում ա ծըմակ: Դա՛վրիշը մին էլ ա շաղվում, Սըև ծին մին մա՛նգիլ քյինամ ա: Դա՛վրիշը ծըմական տո՛ւս ա կյամ, քյինամ հըսվըհաս տըեռնում վըեր փռնե, տղան ասում ա. «Սըև ծի, դա՛վրիշը եկը»: Միկա տըեղ վըեր քյինում ա, Սըև ծին ասում ա. «Հիլին վեր քցի»: Տղան հիլին վեր ա քցում: Միհենգյ հիլին վըեր վեր ա քցո՛ւմ, ո՛ւրա՛ն ան դա՛վրիշին ղաթը տըեռնում ա ծով: Ըտըեղ Սըև ծին ասում ա. «Դե Դա՛վրիշին տղա, վեր եք, հանգստաց, էլ դա՛վրիշը կարել չի մըեզ փռնե»:

Տղան վեր ա կյամ, Սըև ծին ըրածում ա, դա՛վրիշ կյամ ա ճիրին կոշտը, կարում չի ճիրավն անց կենա: Դա՛վրիշն ասում ա, «Սըև ծի, իմ ա՛մա՛գյըս քու աշկերըտ քուռըցընե, ասե տըեսնամ էս ճիրավը հո՞ւնց անց կացեր»: Սըև ծին ասում ա. «Դա՛վրիշ, վըեր տա ինձ ո՛ւրթո՛ւմնը տվիր, ճղացին քարը քցի պոկըտ, նի մըտ ճո՛ւրը, անց կաց: Էտ ճըղացին քարը թողիլ չի, վըեր տու տակ անիս»: Դա՛վրիշը նի յա մըննամ, տակ անում:

Ըտըեղան տահանք հըղե յըն ինում, քյինամ: Մին ծմակավ քյինալիս Սըև ծին տըեսնում ա, վըեր մին առյուծ օզում ա թա ծնի, կարում չի: Սըև ծին տղեն ասում ա. «Կըկարի՞ս վեր կյաս, ճոտերը քաշիս: Ճոտերը վըեր քաշիս, վերչին ճոտը վըեր քաշիս, քոլին քըմակին կըկյեղիս»: Ճոտերը վըեր քաշում ա, վերչին ճոտին քոլին քըմակին կյեղում ա: Առյուծը ճըղղամ ա, թա. «Էս հո՞ւ ինձ տանջից», վըեր մըխըըե կենում ա, ասում ա. «էս հո՞ւ ինձ մահից ըզադից, հինչ պահանջի, ես նրան պահանջը կըտամ»: Տըղան քոլին քմական տո՛ւս ա կյամ, ասում, վըեր. «Ես ըմ քե մահից ըզադալ»: Սըև ծին ասած ա իլա՛լ օրիշ պեն չպահանջիս, ճոտերան մինը կըպահանջիս: Առուծն ասում ա.

«Տու ինձ̀նն̀ հի՞նչ պահանջ օնիս»: Ասում ա. «Ես քյըզանա վըեչ մին պահանջ չօնիմ, խնթրո̀ւմ ըմ, վըեր ճոտերատ մինը տաս ինձ»: Ճոտերան մինը առյո̀ւծը տամ ա ո̀ւրա̀ն:

Տղան ծին նստում ա, ըտըեղատ ճանապարվում: Կյամ ա, մին մըեծ ծառ ա ինո̀ւմ: Վեր ըն կյամ, վըեր մին խըրեգյ ծառեն տակեն դինջանան: Վեր ըն կյամ, տըեսնո̀ւմ մին օխծը ծառնըյեր եր ա ինի̀ւմ: Ծառնըեր եր ա ինո̀ւմ, ծառին յիրան մին պո̀ւն կա, ճոտերը մաչին: Էտ ճոտերը վըսվըսամ ըն: Սըև ծին տղեն ասում ա թա. «Կարում ըս, էտ օխծը ըսպանե»: Տղան թխում ա, օխծը ըսպանում: Օխծը վըեր ըսպանում ա, ընդըեղան վեր ա քցո̀ւմ, Սըև ծին քյինամ ա ո̀ւրա̀ն հետե ըրածիլ: Էտ տըղան էլ ո̀ւրա̀ն  հետե ծառին տակին ննջամ ա:

Ճուտերեն մարը կյամ ա, տըեսնում մին մարթ ծառին տակին քոն իլա̀ծ: Էն ճուտերեն մարն էլ Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշն ա ինո̀ւմ: Տա քյինամ ա, վըեր մին քար յոր օնի, պիրի քոն իլա̀ծ մարթին ըսպանի: Ճոտերը մորը կանչում ըն. «Մա՛մմա, մա՛մա, հենե՛, օխծը էտ տղան ա ըսպանալ, մըեզ ըզադալ»: Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշը կյամ ա թըները ետ տանում, էտ տըղին յիրա̀ն շոք անում, վըեր տղան քոն ինի: Տղան քոն ա ինո̀ւմ, զո̀ւրթնա̀նում: Վըեր զո̀ւրթնա̀նում ա, դուշն ասում ա. «Տու ինձ̀նն̀ հինչ ը՞ս պահանջում, վըեր տու էտ օխծը ըսպանալ ըս»: Սըև ծին տղեն ասալ ար, վըեր դուշը կյա ասե՝ ինձանա հինչ ը՞ս պահանջում, կասիս՝  քու ճուտերատ մինը: Տղան դուշին ասում ա, թա. «Ճուտերատ մինը ինձ տո»: Ղուշը ճուտերան մինը տամ ա տղին:

Տղան նստում ա Սըև ծին, կյամ մին քաղաք, մին թաքավըերու երգյիր: Էտ թաքավըերը Զեմ թաքավըերն ա ինում: Սըև ծին ասում ա. «Դա̀վրիշին տղա, մեհենգյ կըկարի՞ս վեր կյա̀ս, իմ մազաս մին էրկունը-իրեքը պուք տաս, մին չըխմըխաքար, մին չախմախ էն մազին նհետ ջուբումըտ պահիս»: Տըղեն մազերը վըեսկու ռանգյ ա իլա̀լ, ըտըեղ պերալ ա մին քսակ կարալ, մազերը հըվաքալ ա քսակին մաչին, ինքյը տա̀ռալ քաչալ: Ըտըեղատ ծիյան վըեր վեր ա եկալ, մազը, չըխմըխաքարը եր ա կալալ, ծիյին ասալ ա, թա. «Ես քյինամ ըմ ինձ համար շոռ կյամ»: Տղըեն մաքուր, գյեղեցիկ շոր ա իլա̀լ, շորերը հանալ ա, ծիյին թա̀րքյին կապալ, ծին պեց թողալ: Ծին ասալ ա. «Հիշտըեղ վըեր նեղ տըեղ ընգնիս, մազըս կըտինիս չըխմըխքարեն յիրան, թափ տաս, էն ըմ քշտիտ հա̀զիր»: Ծին ասըմ ա տըղին, թա տու քյինյա̀ քղաքումը շոռ եք, կործ քըթի, կործ ըրա, հիբը հարկավըեր կըկյամ, էն ըմ քշտիտ:

Ծին ո̀ւրա̀ն միար քյացավ, տըղան էլ քյացավ կործու շոռ կյա̀լի:

Տըղան քյինամ ա տըեսնում մին բաղում մին բաղվանչի հլուր մարթ կործ ա անըմ, կանչըմա էն հլուր մարթին, ասում. «Ղարիբ մարթ ըմ, ըտըեղ կործ չի կա՞, կյամ ես էլ կործ անիմ»: Էտ մարթն ասըմ ա. «Խե՞ չի կա, ե՞ք»: Քյինամ ա էտ մարթին քշտին ըսկսում կործ անելը: Էտ բաղն էլ Ջեմ թաքավըրերեն բաղն ա ինո՞ւմ: Կործ ա անըմ, ո՞ւրո՞ւզյո՞ւնն ասում ա. «Տըեղ օնի՞ս, վըեր քյինա՞ս քշերըս կենաս»: Տըղան ասում ա. «Չէ՛» էտ մարթն ասում ա. «Քյինանք մըեր տոն»:

Քյինամ ա ո՞ւրա՞նց տոն: Ըտըեղ էտ հլուրը տղին հըրցընում ա. « Հա՞ր օնի՞ս, մար օնի՞ս»: Տըղան ասըմ ա. «Վըեչ մին պեն չօնիմ, ես ըմ, վըեր կամ»: Հչնուրն ասըմ ա. «Վըեր քյեզ վըեչ մին պեն չօնիս, մըեզ էլ խեզա՞ն չօնինքյ, եք տու տա՞ռ մըեր տըղան»: Տղան ասըմ ա, «Հինչ կինի՞»: Քյինամ ըն: Էտ տըղան տա՞ռնըմ ա բաղվանչուն տըղան: Քյինամ ա ամեն օր բաղումը կործ անըմ, կյամ տոն:

Ուրերեն մին օրը թաքավըրերը բաղվանչուն ասում ա, վըեր ըխճըկեքյըս կյա՞լու վըն բաղը ման կյա՞ն, տուք բաղին մին դոլը կըկենաք, վըեր կյա՞ն:

Էտ օրը հլուրը մնամ ա տանը, տղան ա դարկըմ բաղը: Տղան էլ թա՞սա՞կը քաշած կըլխին, քաչալ խոխա յա: Հլնուրն ասըմ ա. «Բա՛լա, բաղին էն մին դոլին կաց, էն մին դոլը քյինա՞ս վըեչ, սօր թաքավըրերեն ըխճըկեքյը կյա՞լու վըն հովուզըմը լըղանան, հովուզեն դոլը քյինա՞ս վըեչ»:

Թաքավըրերեն ըխճըկեքյը կյամ ըն: Քյինամ ըն հովուզին կօշտը վըեր լըղանան, էտ տղան քյինամ ա հովուզին քշտին մուշոտըին քոլին տակին կյողըլը կենում: Մըեծ ախճիգյը լղանըմ ա, տո՞ւս կյամ քյինամ, միչնակ ախճիգյը լըղանըմ ա, տո՞ւս կյամ քյինամ: Կուճի ախճիգյը լըղանըմ ա, տո՞ւս ա կյամ վըեր շորերը կյենա, շուրերեն կեսը կյեցած, էն տղան տո՞ւս ա կյամ, թասակը կյխան յոր օնըմ, կյըլոխը տո՞ւրո՞ւր տամ, ասում. ‹‹Հե՛յ»: Ախճիգյը կըլխան եշըմ ա, տղան կյամ ա ո՞ւրա՞ն տըեղը, ախճիգյն էլ կյենըմ ա, քյինամ:

Իրեք օրան ետը թաքավըրերը հլնուրեն ծեն ա տամ, վըեր իրեք հատ գյո՞ւլ կըփընջիս պիրիս վըեր ըխճըկերքյըս մարթու վըն քյինամ: Մեհենգյ հլուրը կյամ ա գյո՞ւլը քաղում, տղեն նիհետ նըստում ա, վըեր գյո՞ւլը փոնջ անին, կապին: Էտ տղան մին գյո՞ւլ ա փնջում: Հա՞րն ասըմ ա. «Հանց ըրա խարաբ չանիս»: Էրկու փոնջը հլուրն ա կապում, մինը՝ տղան: Տղան էրկու մազ կլխան պուք ա տամ, էն մաղավը սարքած փոնջը կապում, ասում. «Ա՛պըեր, մին տըես հունց ըմ կապալ»: Ապըերն ասում ա. «Էս քողը հիշտըղան քըթի՞ր» վըեր կապեցիր»: Տղան ասում ա. «էն ար խոտին յիրան վըեր ընգած»:

Փոնջերը հլնուրը հըվաքըմ ա, տանըմ տամ թաքավըրերեն։

Թաքավըրերեն ըխճըկեքյը ամեքյա մին հատ յոր ըն օնում։ Էն մազավ փոնջը կուճի ախճիգյն ա յոր օնում։ Ըռութանան թաքավըրերը հայտարարում ա, վըեր հիշքան երիտասարդություն կա, հվաքվին ն̀ւրն̀նց հայաթը։ Ըխճըկեքյը էն ըն ինում բալկոնին նստած, ամեքյա ն̀ւրն̀նց գյն̀ւլը ծըեռքին։ Երիտասարդությունը օչերեղավ կյամ ըն, ըխճըկորանցը ըռաչավը քյինամ։ Մըեծ ախճիգյը թաքավըրերեն մըեծ վն̀զիրին կըլխան ա տամ գյն̀ւլը, միչնակ ախճիգյը կուճի վն̀զիրին կըլխան ա տամ, կուճի ախճիգյը մնամ ա գյն̀ւլը ծըեռքին նստած։ Երիտասարդությունը կյամ ա անց կենըմ, գյն̀ւլը, վրեչ մինին կլխան չի տամ։ Թաքավըրերն ասում ա. «Շենումըս մարթ կա, խե չը՞ք պիրում, կուճի ախճիգյըս վըեր էն ա գյն̀ւլը ծըեռքին, աշկը տիրն̀ծ տըեղ օնի, խե չը՞ք պիրում»։ Թաքավըրերեն ասըմ ըն, վըեր շենումը մնացալ ա բաղվանչուն տղան։ Թաքավըրերն ասում ա. «Քյացեքյ պերեքյ»։

Քյինամ ըն բաղվանչուն տղան առաչ անում, պիրում։ Վըեր կյամ ա անց կենում ըռաշկավը, ախճիգյը գյն̀ւլը քաչալ կընդան ա տամ։ Ըտըեղ թաքավըրերը կըզնըրվում ա, ասում ա. «Ախշարքըս մորեխ կերալ ա՞, վըեր տու ընա յըս քյինամ»։ Թաքավըրերը ըխճըկանը կուռնան փըռնում ա. էտ ն̀ւրն̀ւգյն̀ւնը տամ ա էտ քաչալ գյիդին, թա. «Եր կալ տար»։ Տղան էլ ըխճըկանը յոր ա օնըմ, պիրում ն̀ւրն̀նց տոն։ Էն էրկու ըխճըկանը իրեք քշեր, իրեք ցիրեկ հըրսանեքյ ըն անըմ, մարթու տամ։

Թաքավըրերը հիվըընդանում ա։ Դուխտուրնեն ասում ըն. վըեր Սըև կյըխտարու վըննըկըլն̀ւխ պիտի իփիքյ՝ տաք ն̀ւրն̀ն, ճն̀ւըը խմե, ըղանա։ Թաքավըրերեն փըստտենքյը հըվաքվըմ ըն, քյինամ վըերս։ Դն̀վրիշին տղան եր ա կենում կընեգյը ղարկըմ մորը կոշտը, վըեր ճն̀րեն տա, նստե քյինա կյըխտար վեր քցի, մըեսը պիրի։ Ախճիգյը քյինամ ա մորն ասում։ Ըտրանց վըեննեն մինը կաղըլիգյ ճն̀րի յա ինըմ։ Էտ ճն̀րեն մարը տամ ա ըխճըկանը, թա տար։ Ախճիգյը ճն̀րեն յոր ա օնում, կյամ։ Դն̀վրիշին տղան ճն̀րեն յոր ա օնում, մին խրեգյ շենան տն̀ւս կյամ, ճն̀րուն վըեններըը կըպստում, կուփե տամ վեր քցն̀ւմ։ Ըտըեղ չըխմախեն թափ ա տամ, Սըև ծին, Առյուծը, Ջն̀ւմբն̀ւ-րն̀ւտ դուշը կյամ ըն կոշտը։ Ըտըեղ տղան մաքուր շորերն ա կյենում, ծին նըստում, Ջն̀ւմբն̀ւրն̀ւտ դուշը երգյինքյավը պեց թողում։ Առյուծն էլ տափեն իրեսավը։ Տըղան ասըմ ա. «Հիշքան վըեր էս տերիտորումը կյըխտար կա, կիըվաքեքյ մին ծառու տակ»։ Ըտահանք հիշքան կյըխտար կա, հըվաքում ըն

ծառեն տակը: Դա̀վրիշին տըղան եր ա կենում մինը մորթում, ծառան կախ տամ, փադ հըվաքում, կըրակ վառում, խըրավում: Մին ժամանակ ո̀ւրա̀ն բաջանաղնեն տո̀ւս ըն կյամ, տըեսնում կյըխտարնեն հվաքած մին տըեղ, Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշը մին դոլը, Առյուծն էլ մին դոլը, մին երիտասարդ էլ շամփուրը քաշած մըեսա խրավըմ: Սահանց հա̀մեցեքյ ա անում: Սահանք վըեր կյամ ըն, ասում ա թա. «Տուք հու վը՞ք, վըեր ըստիյան մանըք կյամ, էս անասուննեն իմըս, էս երգյիրն էլ իմըս տուք խե յը՞ք շոռ կյամ»: Բաջանաղներան մինն ասըմ ա. «Մըեր թաքավըերը հիվընդացալ ա, դուխտուրնեն ասալ ըն, թա սըև կյըխտարին կլո̀խը վըեր իփիքյ տաք ո̀ւրա̀ն, կըսղանա, մունք էլ եկալ ընք մին սըև կյըխտար վըեր քցինքյ, տանինքյ»: Մեհենգյ եկալ ընք, սըև կյըխտարնեն հըվաքալ ըք, թա կարելի յա, մինը տըվեքյ, մորթինքյ, կըլո̀խը տանինք»: Տղան ասում ա, թա. «Ես էն ժամանակ կըտամ կըլո̀խը ծըեզ, վըեր ծըզըրա մին նիշա̀ն տինիմ»: Ասըմ ըն, թա. «Էտ տու վըս գյո̀ւղո̀ւմ»: Եր ա կենըմ թո̀ւվա̀նգյին ձըպատը տո̀ւս օնում տինում կրակումը, կիրմըրո̀ւմ ա: Վըեր կիրմըրո̀ւմ ա, տղան բաջանաղըեն ասում ա. «Շալվարըտ տվըեր քաշի»: Մինին վ... աչ թոշին ա դմղըմ, էն մինին՝ ծա̀խ թոշին, մին կյըխտար էլ տամ ո̀ւրա̀նց, թա առեքյ քյացեքյ: Յոր ըն օնըմ քյինամ: Ինքյը եր ա կենում ո̀ւրա̀ն մորթած կյիխտարեն վըննրկլո̀խը, մըեսը յոր օնըմ, կյամ Սըև ծիյին կոշտը, Սըև ծին նըստում, կյամ ձո̀րուն կոշտը, էլլա ո̀ւրա̀ն շորերը հանըմ ծիյին թա̀րքյին կապում, Սըև ծին պեց թողըմ, ձո̀րուն վըեննեըը ետ անըմ, ձո̀րեն եր կըցընում, ո̀ւրա̀ն քյո̀հնա̀ շորերը կյենում, թորբան կըլոխը քաշում, վըննըրկըլո̀խը, մըեսը քցո̀ւմ ձո̀րուն յիրա̀ն, ձո̀րեն նստում, կյամ: Կյամ ա ո̀ւրա̀նց տռանը վեր կյամ, ո̀ւրա̀ն կնգանն ասում. «Տար ձո̀րին տո ո̀ւրա̀նց»: Ըտահանք տանում ըն կյիխտարին կլո̀խը, մըեսը տամ ո̀ւրա̀ն, իփում ըն, տամ թաքավըերեն, թաքավըերը սղանում ա:

Հենգյ-վեց ամսան ետը մին օրիշ թաքավըեր հայտարարում ա էտ թաքավըերեն յիրա̀ն, վըեր պատերազմ ըմ շարունակում: Մին էրկու օր պատերազմը քյինում ա, իրեքինջի օրը Դա̀վրիշին տղան ասում ա կընգանը. «Քյինա̀ քամոր ասէ ձո̀րին տա, նստիմ քյինա̀մ են կըտորված մարթուցը շուրերան պիրինքյ ապրինքյ»: Քյինում ա մորն ասում, մարը եր ա կենում էն կաղլիքյ ձո̀րին տամ ո̀ւրա̀ն, պիրում ա: Դա̀վրիշին տղան նստում ա ձո̀րին, քյինա̀մ: Քյինալիս տըեղը հու վըեր տըեսնում ա, ծիծաղում ա. «Հը՛ը, քյիննական ա էն մին թաքավըերեն զորքը կըտորե»: Քյինում ա բաղըեն տակին ձո̀րուն

վըեննեըը կպոտում, կուփե տամ ճո̈ըուն վըեր քցո̈ւմ, չըխմախեն թափ տամ, Սըն ծին, Ջո̈ւմբո̈ւըո̈ւտ դուշն ան Առյուծը կյամ ըն կոշտը: Տղան դա̈ստին ո̈ւրա̈ն մաքուր շորերը կյենում ա, քյո̈հնա̈ շորերը վըեր ա ածում, ծին նըստում, սուրը ծըեռքն օնում: Երգյինքավը Ջո̈ւմբո̈ւըո̈ւտ դուշն ա կյամ, տափավն էլ՝ Առյուծը: Տղան քյինամ ա Ջեմ թաքավըերեն կոշտը, ասում.«Ես օզում ըմ մին խըեգյ կռվիմ»: Թաքավըերն ասում ա. «Հա̈մեցեքյ»:

Թաքավըերեն զորքը հըղե յա տամ Սըն ծիյին էն մին թաքավըերն զորքեն յիրա̈: Տղան քյինում ա, երգյինքյավը Ջո̈ւմբո̈ւըո̈ւտ դուշն ա կտորում, տափավը Առյուծն ա կտորում, ինքյն էլ ծիյին յիրա̈ նստած ա կտորում: Ըտըրանց զորքը մինանքամից պըրծընում ա: Կռվին վախտը նետը կյամ ա տղին ծախի ծըեռքին նի կյամ, ճիլա̈տո̈ւմ:Թաքավըերն ո̈ւրա̈ն յալլեխը ջուբան հանում ա, ծըեռքը կապում: Ըտըղատ ետ ըն տըեռնում:

Կըռըևը պըրծալ ա: Դա̈վրիշին տղան մին կերպ յան ա տամ, թաքավըերեն զորքը քյինամ ա: Տղան վըեր ետ ա մնում, կյամ ա ճո̈ըուն քշտին շորերը հանում, Սըն ծիյին թա̈րքյը կապում, ըտըղատ ճանապարվում. ինքյը ճո̈ըուն վրեններըը ետ անում, յոր ա օնում ճո̈ըեն, հըղե ինո̈ւմ տոն:

Դա̈վրիշին տղան կյամ ա շենը: Շենումը ծիծըղոտում ըն, թա թաքավըերեն կուճի փըեսան քյինա̈ց զորքը կտորեց, եկը: Զորքը եկալ ըն: Թաքավըերը կանչում ա, թա. «էն ճիլա̈տված տղան հու վա՞, թող կյա̈ կոշտըս»: Մեհենգյ թաքավըերեն մըեծ փըեսան քյինում ա, թա ես ըմ: Թաքավըերն ասում ա. «Պա Առյուծը հոր ա՞»: Վըեչ մինը կարում չըն ասըեն, թա հու վա իլա̈լ: Ըտըեղ թաքավըերեն կուճուր փըեսան քյինամ ա, ծըեռքը թաքավըերեն յալլեխավը կապած, կլխավն էլ մին քյո̈հնա յալլեխ ա զիրավ կալալ, վըեր ըրվա վրեչ թաքավըերեն յալլեխը: Քյինամ ա կուճի փըեսան թաքավըերեն ըռաշկին կաղնում. ասում, վըեր էն ես ըմ իլա̈լ: Թաքավըերը եշում ա, ասում, «Խե չը՞ս քյինամ կործըետ, տու ընդըեղ հինչ ընե՞լիս ըս իլա̈լ»: Տղան ասում ա, թա վըեր ես ընդըեղ հինչ ընելիս ըմ իլա̈լ, տասսը րոպե ըսպասե:

Տղան կյամ ա տոն, չըխմախըեն թափ տամ. Սըն ծին. Ջո̈ւմբո̈ւըո̈ւտ դուշը, Առյուծը կյամ ըն տոռնը: Ո̈ւրա̈ն քյո̈հնա̈ շորերը վըեր ա ածում, թա̈զզա̈ շորերը կյենում, ծին նստում, թա̈սա̈կը թողում, քյինամ թաքավըերեն հայաթը: Թաքավըերը եշում ա, տըեսնում հա̈մա̈ն տղան եկավ Ջո̈ւմբո̈ւըո̈ւտ դուշն ան Առյուծը նըհետը, ծըեռքն էլ ո̈ւրա̈ն յալլեխը կապած: Թաքավըերը տըեսնում ա ո̈ւրա̈ն կուճի փըեսան ա:

Ըտըեղ մին թիթև հակառակություն ա կույանում իրեք բաջանաղներեն մաչին: Կուճի փըեսան ասում ա. «Ես հա̈մա̈ն տղան ըմ», մըեծ բաջանաղն ասում ա. «Տու հինչ կա՞րող ըս անիս»: Կուճի փըեսան ասըմ ա. «Գյո̈ւղըմ չը՞ս ես հինչ կարող ըմ անիմ, թաքավըերն ապրած կենա, եք ըստըեղ մին»: Թաքավըերը կյամ ա: Տա ասըմ ա. «Թաքավըերն ապրած կենա, մին մըեծ փըսետ աստ շալվարը տըվըեր քաշի, վ... աչի թո̈շին տըես ղըմղած ա՞ , թա չէ»: Շալվարը տըվեր ա քաշըմ, տըեսնըմ վ... աչ թո̈շին մին դամղա կոխած: Կուճի փըեսան ասում ա. «էն մին փըսետ ասի շալվարը տըվեր քաշի»: Շալվարը տվեր ա քաշըմ, տըեսնըմ հա̈մին դամղան յիրա̈ն: Թաքավըերն ասում ա, թա. «Տու հինչ ը՞ս գյուղըմ թա ըտահանց վ... դամղա կա»: Տա ասում ա. «Թաքավըերն ապրած կենա, ես ըմ ղըմղալ»: Թաքավըերն ասում ա. «Տա հունց ը՞ս ղըմղալ»: Տղան ասըմ ա. «Վըեր տու հիվընդացալ ըս, փըստտան-ցըտ ղարկալ ըս, վըեր մին կյըխտարու կըլո̈խ պիրին տու օտիս սըղանաս: Վըեր եկալ ըն կյըխտարին հային, կյխտարնեն ես հվաքած ըմ իլա̈լ, դմղալ ըմ ետնան մին կյիխտար տվալ, թող ըրալ: Ես գյիղացալ ըմ վըեր էս օրը իմ ըոըշկիս ա, տրա հետե էլ ղըմղալ ըմ, վըեր ո̈ւրա̈նք կարեն վըեչ ինձա̈նա̈ առաչ քյինան»:

Ըտըեղ թաքավըերը պիրո̈ւմ ա օխտը օր, օխտը քշեր Դա̈վրիշին տղեն իըրսանեքյ անում: Հըրսանեքյը վըեր անում պըծնում ա, ըտըեղ էրկու ճանապար կա՝ մինավը վըերս քյինողը կյամ չի, էն մինավը քյինողը կյամ ա: Թաքավըերը կուճի փըեսեն ասում ա. «Տըեսնում ը՞ս էն ճանապարը, էն ճանապարը քյինա̈ս վըեչ, վըեր քյինա̈ս, կըրըլական չըս ետ տըեռնաս, էն մին ճընապարավը կարող ըս համ քյինաս, համ էլ կյա̈ս»:

Տղան մին քանի օր էտ ճանապարավը քյինամ ա-կյամ, մին օր էլ ասում ա. «Մին քյինամ էն ճանապարավը, վըեր թաքավըերն ասըմ ա քյինողը կյամ չի, տըեսնամ էտ հինչ ճանապար ա»: Էտ ճանապարավը քյինամ ա, քյինամ, ըոըշկան մին կյիխտար ա տո̈ւս կյամ: Էտ կյիխտարը փախչում ա, նի մննում մին քըերծ: Քըերծեն կեսան մին ճաք ա ինըմ: Մին քավթառ փիս պառավ ընդեղավ տո̈ւս ա օնըմ կըլո̈խը ասըմ ա. «Հինչ ա՞, կտորվածնե, թողըմ չըք վըեր մըեր հեյվանն ստըեղ ըրածե»: Տա ասըմ ա. «Շատ մի խոսել, վըերսըս տո̈ւս կալ»: Նա էլ ասըմ ա. «Ղադատ տանիմ, դումար խաղ կանի՞ս»: Ասում ա. «Խաղ կան իմ»: Ասում ա. «Հինչա՞վ»: Ասում ա. «Առյուծավ»: Ասում ա. «Տըեսնամ Առյուծտ քար տըեռնա»: Առյուծը դա̈ստին քմակին քար ա

տըեռնում: Ասում ա. «Քավթառ, վըերսըս տո՛ւս կալ»: Ասում ա. «Ղաղատ առնիմ, դումար խաղ կանի՞ս»:Ասում ա. «Խաղ կանիմ»: Ասում ա. «Հինչա՞վ»: Ասում ա. Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշավ»: Ասում ա. «Տըեսնամ Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշտ քար տըեռնաս: Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշը քար ա տըեռնում: Տղան մին էլ ա ասում, թա. «Քավթա՛ռ, վըերսըս տո՛ւս կալ»: Ասում ա. «Ղաղատ առնիմ, դումար խաղ կանի՞ս»: Տղան ասում ա. «Խաղ կանիմ»: Պառավն ասում ա. «Հինչա՞վ»: Տա ասում ա. «Սըև ծիյավ»: Սըև ծին էլ ա քար տըեռնում: Տղան մին էլ ա ասում. «Քավթառ, վըերսըս տո՛ւս կալ»: Պառավն ասում ա. «Ղաղատ առնիմ, դումար խաղ կանի՞ս»: Տղան ասում ա. «Խաղ կանիմ»: Պառավն ասում ա. «Հինչա՞վ»: Տղան ասում ա. «Իմ ջանավըս»: Տղան էլ ա քար տըեռնում, մնամ ըտըեղ»:

Դէ միհենգյ խաբարը տանք Ջեմ թաքավըերեն կնգանը: Ջեմ թաքավըերեն կնեգյը տեսնում ա, վըեր սիրկնիլը չուրանում ա, տղեն կանչում ա, ասում. «Քու ախպըեր նեղ տըեղ ա»: Եր ա կենում ըտըեղատ էտ տղան ճանապարվում, վըեր կյա՛ դա՛վրիշը ճարի: Կյամ ա ըտըեղավ անց կենալիս տըեղը հետան ծեն ըն տամ, եշում ա, տըեսնըմ մին ջուվար էլ չի կա, մին էլ սա օզում ա թա քյինա՛, մին էլ ըն կանչում: Ետ ա տըեռնում, տըեսնում, մին չոր կլո՛խ հինգյիստին քարին տակին, ասըմ ա. «Տու քյինա՛մ ըս դա՛վրիշին տղեն հետա՞ն»: Ասըմ ա. «Հա»: Ասըմ ա. «Քյինա՛, դա՛վրիշին տոնը հեն ա ըռաշկիտ, դա՛վրիշին կյումումը մին Սըև ծի կա, էս ա հիշքան ժամանակ ա էն ծին կեր չօնե, վըեր օտե, կըքյինիս էն ծին օթ օր կերակրիս, բայց տու քյեզ կյեղած կպահիս, օթ օրը թմամի, իննըինջի օրը ծիյին կերակուրը կըտաս, տու քյեզ կըկյեղիս կյումումը, ծին լո՛ւզի յա տըռնըլական խոսի, ասի. «էս հինչ բարի մարթ ա, վըեր ինձ կյինթանցրուց, սա հա՛յլբա՛թ մին խորուրթ օնի, վըեր ինձ կյինթընցրալ ա, ես սրա խորուրթը տըեղ կըտամ»:

Քյինամ ա օթ օր կերակրում, իննըինջի օրն ո՛ւրա՛ն կյեղում: Ծին լո՛ւզի յա տըեռնում, խոսում: Տղան տո՛ւս ա կյամ ասում, վըեր ես ըմ քյեզ կյինթընցրալ: Ծին ասում ա. «Հինչ ը՞ս պահանջում», ասըմ ա. «Իմ ախպըերըս դա՛վրիշին ծըեռքան փախալ ա, ես քյըրզանա պահանջում ըմ, վըեր տու տըեղը զյիդաս»: Ծին ասում ա. «Մինակ քու ախպըերըտ չի կորալ, իմն էլ ա նիետը կորալ»: - Ա՛սում ա. «Դէ թամքը տիր մաշկես, նստե, քյինանք»: Նստում ա, ճանապարվում ըն:

Ծին ասըմ ա. «Քյինամ ընք, ըռըշկներես մին ծմակ կա, էն ծմակին մաչին առյուծը տո՛ւս ա կյիլական, ըռըշկնես կտրե, առյուծը վըեր ասե՝ պա մըեր

խոխան խե՞ պերալ չըս, տու կասիս, վըեր. «Խոխան լա՜վ ա, կըրեցալ չըմ պիրիմ, ասալ ա իմ մորը կասիս, վըեր ո̀ւրա̀ն ճուտըերան մինն էլ տա, մունք ըստըեղ ղարիբոթուն չքաշինքյ»: Տա ո̀ւրա̀ն ճըտըերան մինը փըռնում ա, տամ տրան:

Կյամ ա Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշին ծառին տակը: Ըտըեղ Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշն ասըմ ա. «Խե մըեր ճո՞տն էլ պիրալ չըս տըեսնանք»: Ասըմ ա. «Մինն էլլա պիրալ չըմ: Առյուծը ո̀ւրա̀ն ճըտերան մինը տվալ ա, վըեր ղարիբոթուն չքաշին, մինն էլ տու տո»: Մինն էլ Զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշն ա տամ:

Մեհենգյ քյինամ ըն Զեմ թաքավրերեն երգյիրը՝ ո̀ւրա̀ն ախպորը հըրա-յին: Քյինամ ըն ախպորը տոնը, կարըմ չըն նկատին՝ առաչվանն ա՞, թա նոր ա, ինքյն էլ հըրցընըմ չի, թա հիշտեղ ա, Սըն ծին ասալ ա, վըեր հըրցընեն վըեչ: Ո̀ւրո̀ւլգյո̀ւլնն ըտըեղ կերակրվըմ ըն պըծնըմ, պիտի քոն ինին, հարթնը կըրավաթը պեց ա անում, շուրըրնեն հանըմ ըն վըեր քոն ինին, տա ո̀ւրա̀ն թո̀ւվա̀նգյը տինըմ ա ո̀ւրա̀ն ան կնգանը ղաթումը, քոն ինում: Քըշըրհանա էր ա կենում ծին նստում, ըտըեղատ քյինամ: Քմական բաղվանչուն կնեգյը հըցընում ա, թա թո̀ւվա̀նգյը պատան կախ չի տվալ, հիշտեղ ա՞ տիրալ: Հարթնը ասում ա. «Թո̀ւվա̀նգյը տիրալ ա իմն ան ո̀ւրա̀ն ղաթումը, մին դոլին ինքյն ա քոն իլալ, մին դոլին՝ ես»: Պառավն ասում ա. «Քըզնհետ խոսկ չի՞ խոսալ»: Ասում ա. «Ինձն հետ ամմիննին խոսալ չի»: Ասում ա. «Պա վըեր եր կացավ ըռութանա թա ծին նստե, քյեզ պեն չի ասա՞լ»: Թա՝ «Չէ»:

Մեհենգյ Սըն ծին հղե իլա՜վ, քյինաց: Ընդըեղավ ա քյինում, վըեր քյինացողը կյամ չի: Ծին տղեն ասում ա, վըեր. «Քյինամ ընք, ըռշկներիս մին կյիխտար ա իննա̀կան, կյիխտարը փըլխճըլկան ա, նի մննէ մին քըերծ, էն քըերծին մաչան մին փիս քավթառ պառավ ա տո̀ւս կյիյական, ասե. «Հինչ ա՞, կըտորվածնե, խե չը՞ք թողում մըեր ապրանքն ըրածե», տու կասես. «Շատ մի խոսել քավթառ, վըերըսըս տո̀ւս կալ»: Պառավն ըսըլական ա. «Ղաղատ տանիմ, դումար խաղ կանի՞ս»: Տու կասիս. «Խաղ կան իմ»: Վըեր ասի. «Հինչա՞վ խաղ կանիս», տու կասիս. «Սաղ դուշերավը»:

Վըեր քյինամ ըն, կյիխտարը փախճում ա, նի մըննում քըերծը: Պառավը տո̀ւս ա կյամ, վըեր ասըմ ա. «Ա՜ կտորվածնե, խե չը՞ք թողում մըեր ապ-րանքն ըրածե», տղան ասում ա. «Քավթառ, շատ մի խոսել, վըերըսըս տո̀ւս կալ»: Պառավն ասում ա. «Ղաղատ առնիմ, դումար խաղ կանի՞ս»: Ասում ա. «Խաղ կանիմ»: Ասում ա. «Հինչա՞վ»: Ասում ա. «Սաղ դուշերավը»: Վըեր ասում

ա՝ սաղ դուշերավը, պառավն ասում ա. «Սաղ դուշերը քար տըեռնան»: Պառավը վըեր տհենց ասում ա, Առյուծը կյինթընանում ա, կըլվըկոյ անում: Տղան մին էլ ա ասում. «Քավթառ, վըերըս տո՛ւս կալ»: Պառավն ասում ա. «Ղադատ առնիմ, դումար խաղ կանիս», ասում ա. «Խաղ կանիմ»: Ասում ա. «Հինչա՞վ խաղ կանիս»: Ասում ա. «Սաղ դուշերավը»: Պառավն ասում ա. «Էն տըեսնամ, վըեր սաղ դուշերը քար տըեռնան»: Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշն Դա՛վրիշին տըղեն ծըեռքեն կյինթըընանում ա: Տղան մին էլ ասըմ ա. «Քավթառ, շատ մի խոսըեք, վըերըսը տո՛ւս կալ»: Պառավն ասում ա. «Ղադատ տանիմ, դումար խաղ կանի՞ս», ասում ա. «Խաղ կանիմ»: Ասում ա. «Հինչա՞վ»: Ասում ա.»Սաղ դուշերավը»: Պառավն ասում ա. «Էն տըեսնամ, վըեր սաղ դուշերը քար տըեռնան»: Սըև ծին էք ա կյինթընանամ: Տղան մին էլ ա ասում. «Շատ մի խոսեք պառավ, վըերըսը տո՛ւս կալ»: Պառավն ասից. «Ղադատ տանիմ դումար խաղ կանի՞ս»: Ասեց. «Հինչա՞վ»: Տղան թա. «Սաղ դուշերավը»: Դա՛վրիշին տղան կյինթընանում ա, ախպորը նըհետ կըլվըկոլ անում:

Մեհենգյ ըտըեղատ ետ ըն տըեռնըմ տոն: Մեհենգյ տըեռալ ա էրկու Սըև ծի, էրկու Առյուծ, էրկու Ջո՛ւմբո՛ւրո՛ւտ դուշ, էրկու տղա: Կյամ ըն տոն: Տնատարը ճինա՛նչո՛ւմ չի. թա ո՛ւրա՛ն մարթը վերն ա: Դա՛վրիշին տղան ո՛ւրա՛ն ախպորն անա հըրցնում ա, թա. «Տու հի՞նչ գյիդացեր՝ ես մըեռած ըմ»: Ասում ա, վըեր «Քու ասած ծառըտ չուրացալ ա, ըտրան յիրա՛ն գյիդացալ ըմ, վըեր մըեռած ըս»: Դա՛վրիշին տղան հարց ա տամ ո՛ւրա՛ն կնզանը. «Քշերես քյըզնհետ հու վա՞պառկած իլալ»: Ասում ա. «Քշերես թա տու վըս իլա՛լ ինձնհետ պառկած, թա ախպըերըտ ա իլա՛լ, էլլա ճինա՛նչում չըմ, էն ըմ գյո՛ւղըմ, վըեր նի յա մտալ պառկալ, թո՛ւվա՛նգյը տիրա՛լ ա իմն ան ո՛ւրա՛ն ղաթումը, ես ըտըեղ գյիդացալ ըմ. վըեր տու չըս իլա՛լ»: Ըտըեղ թաքավըերն էլ ա կյամ ըտրան կոշտը, փըսեն ասում, թա քանի օր ա, վըեր կորած ըս իլա՛լ: Ասում ա. «Էն ճընապարը, վըեր տու նշանց ըս տվալ, քյացալ ըմ, եկալ չըմ, էս իմ ախպըերս ա, եկալ ա ինձ ըտըեղան ըզադալ, պիրա՛լ»: Թաքավըերը կուճուր ախպորն անա հըրցնում ա. «Քյեզ մըետք օնի՞ս քյինաս Ջեմ թաքավըերեն երգյիրը՝ հորտ կոշտը»: Կուճուրն ասում ա. «Չէ՛, ես օզում ըմ իմ ախպոր քշտին կենա»:

Թաքավըերը պիրում ա ո՛ւրա՛ն երգյիրը մաչան կըես անում, տամ կուճի փըսեն՝ Դա՛վրիշին տըղեն: Թաքավըերն ասում ա.

«Ես գյո՛ւղում ըմ, վերչը իմ երգյիրին տարը տու վըս տըռնալու, մինչև իմ մըեռնըելը կըես մասը քյեզ, կես մասը՝ ինձ, ես վըեր մըեռնիմ, իմ երգյիրը լոխ քյեզ»:

## 24.ՀԱՔՅԱԹ

[Ղըզարածը][1]

Ինում ա չինում, մին թաքավէր ա ինում: Էս թաքավէրին իրեք տղա յա ինում: Ամենապուճուր տղան հա՛մ սէրուն ա ինում, հա՛մ ղոչաղ տղամարթ: Կյա՛մ ա մին վախտ էս թաքավէրեն մին ախճիգյ ա ինում, ամմա վըէչ ինսանու պըտկէրավ:

Մին օր թաքավէրը քյինամ ա ո՛ւրա՛ն ծիոնցր կյո՛ւմը, տըէսնում ա, վըէր ո՛ւրա՛ն մին լա՛վ ծիու մին անգուճը կաուչ: Շատ ա թաքավէրն ըրմանում, թա էս հու՞ կինի ըրած: Կանչում ա թաքավէրն ո՛ւրա՛ն մըէծ տղեն, ասում ա. «էս քշէր քյինա ձիանուցը քշտին կաց, մղեյիթ կաց քյըզ, համ էլ սայաղ կաց, տըէս էտ հու՞վ ա, վըէր մէր ծիին անգուճը կէրալ ա:

Մըէծ տղան կյա՛մ ա կյո՛ւմը, ամմա քըշէրը քընավ ա ընցնում, զատ չի տըէսնում: Թաքավէրն էքյսը կյա՛մ ա, տըէսնում հի՞նչ, միէնգյ էլ ծիին մին անգուճը կաուչ: Միէնգյ էյ մաչնակ տղեն ա ղարկում: Մաչնակն էլ ա կյա՛մ, քընավ ընցնում, զատ չի տըէսնում: Թաքավէրը կյա՛մ ա տըէսնում, միէնգյ էլ ծիին պոռշնէն ըն կէրալ:

Էս դո՛նո՛ւմ թաքավէրը պուճուր տղեն ա ղարկում, թա. «Քյինա՛ տըէս, էս հի՞նչ պէն ա»: Պուճուր տղան կյա՛մ ա, ամմա վախում ա, վըէր ո՛ւրա՛ն քոնն էլ տանի, տրա հէտէ մաննը մին պատառ տինակավ կտրում ա, յըրան աղ անում: Սաղ քըշէրն էլ մաննին մըրմռոցան քոնը տանում չի: Մին էլ ա տըէսնում կէս քիշէրեն, էշում ա տըէսնում վըէր ո՛ւրա՛ն քուրը, վըէր իրէք վընննանի ար, հունց էկավ կյո՛ւմը նի մտավ, օզում ա, թա ծիին մուտանա: Թաքավէրին պուճուր տղան նշա՛ն ա փըռնում և դո՛ւզ նէտը յըրա անըմ ո՛ւրա՛ն քվորը ծեռքը ծակում: Քուրը փախչում ա նի մընննում ո՛ւրա՛ն ուրուրուցը:

Մին դո՛նո՛ւմ, մին քըշէր պուճուր ախպէրը արազ ա տըէսնում: Ըրազումն կյա՛մ ըն ասում, թա. «Ծէր քուրը սաղ ցեղը բէղմա օտէ փըչացնէ, լա՛վն էն ա, վըէր տուք միէնգյանց ծէր կըլխէն ճարը տըէսնաք»: Պուճուր տղան էս արազը նաղլ ա անում թաքավէրեն, ամմա թաքավէրը միա՛լ չի տինում: Էքյսը էլիա պուճուր տղան արազ ա տըէսնում, էլիա ըրազումն ասում ըն, թա. «Ծէր քուրը ծէր ցեղը, ծէր շըհա՛րը բէղմա օտէ, փըչացնէ, լա՛վն էն ա, տուք ծէր կլխէն ճարը տըէսնաք, ըստղան փախչիք ըզատվիք»: Թաքավէրեն տղան

[1] *Վերանվանված է մեր կողմից, տարբերելու համար (Ծ. Կ.)*

էլիա հորը նաղլ ա անում, ամմա թաքավերը էլիա միա̈լ չի տնհ̈ւմ: Էս դհ̈նում էլ թաքավերեն պուճուր տղան եշում չի. եր ա կենում կլհ̈խ եր օնում, փախչում, քյինում:

Շատ ա քյինում, թա խրեզյ, թաքավերեն պուճուր տղան, կյա̈մ ա մին տեղ տհ̈ւս կյամ, տըեսնում ա, վըեր ըստեղ էս ա մին էրկու հազար վեչխար ա ըրածում, առանց չոբան, առանց շոն:

Թաքավերեն պուճուր տղան ըստեղ կենում ա, էս վըչխարեն քըշտեն, մին վեչխար էլ մորթում, ուտում, շատ ար սովըծացալ: Իրիգյունը, մըթնըժոռած վախտը թաքավերեն պուճուր տղան վեչխարն առաչն ա անում, պերում բինան: Տըեսնում ա էս ա մին քոռ օշափ, կաղնալ ա բինին մղակումը, շքեռը պեց ըրալ, մին-մին վեչխարը պեց ա թողնում ծեռքերը զիրավ քըսելով, շքըռմաչավը հըմբարում:

Թաքավերեն տղան մորթած վըչխարեն մորթին շոռ ա օնում, ինքն էլ վըչխարեն նհետ նի ա մըննում բինան: Էս օշափը վըեր լոխ վեչխարը հըմբարում, պրծնում ա, փըռնում ա մին վեչխար մորթում, ածում ղըզղանը իփում, մին միժմա̈հի վեր տհինում, իփա̈ծ մըեսը տասնհինգյ տեղ փայ տընում, ըսկսում ուտելը: Թաքավերեն պուճուր տղան էդ մսերեն իրեք փայն ուտում ա:

Օշափը փայերն ուտիլավ, ուտիլավ կյամ ա, թա էն իրեք փայն էլ ուտե, տեսնում ա կաուչ, ծեռքերը տես ա քըսհ̈մ, տեն ա քըսհ̈մ, մըժմա̈հհ̈մը էլ մըես չինում: Էդ վախտը օշափը կանչում ա, «Հո՞ւ կա ըստեղ, թող ծեն հանի, էս հո՞ւ կերավ մսեն իրեք փայը, հհ̈ւվ ըս, տհ̈ւս եկ մեյդան, ծեն հանե»:

Թաքավերեն տղան սուվթա սա̈ս չանում, ամմա ետըհետը ասում ա. «Ես ըմ, էս ինչ թաքավերեն տղան ըմ»: Օշափը ա̈լըա̈հալ ճընա̈նչում ա: Ասում ա. «Վըեր իտի յա, թաքավերեն տղա, եք ինձ հետ մին տեղ ապրինք: Էնքան ես հըրըստոթուն օնիմ, վըեր մըեզ երկուսես հերիքյ ա»:

Իստի օշափն ու թաքավերեն պուճուր տղան շատ դոստանում ըն, բարեկամանում: Մին օր էլ թարավերեն պուճուր տղան հըրցնամ ա օշափեն, թա. «Պա ինքը խի՞ քոռ ա, հո՞ւնց ա իլա̈լ, վըեր քուռացալ ա»: Օշափը նաղլ ա անում, ասում. «Մունք իրեք ախպեր ինք, մեր հա̈ր, վըեր մըեռավ ինձ ժառանգոթեն թողից՝ մին միակ, էս միակը մին է՛ն ջուռա հհ̈ւնար օնե, վըեր հհ̈ւր վըեր թխիս ծեռաց կմեռնե, վըեր մին էլ թխիս, կղղանա: Մին սանդր, էս սանդրը մին էն ջուռա հհ̈ւնար օնե, վըեր հինչտեղ քըցիս, քոլուտ, ցա̈քյհ̈ւտ

կտեռնա, էլ մարթ կարել չի ընդեղավ անց կենա: Մին բոթուլ ճիրավ լըցած, էս բոթուլն էլ էն ջուռա հո̀՛ւնար օներ, վըրեր հինչ տըղեղ քըցիս ծով կըտեռնա: Ախպերքըս, վըրեր էս պենը գյո̀՛ւղո̀՛ւմ ըն, կյա̀մ ըն ինձ քուռըցնում, ամմա կարում չըն, թա էդ շեհերը քըթենան: Ինձ ղըկում ըն, խըրեգյ վեչխար ըն տամ, ո̀՛ւրա̀նց շատ վեչխար եր օնում: Մաչնակ ախպորըս վըչխըրնին կյա̀րմո̀՛ւր ռանգյի յըն, իրանք էլ ըրածում ըն էն սարին քըմակեն, ինձա̀նա̀ քյեզ ամանաթ սարեն էն ղոլը քյինաավեչ. մաչնակ ախպերս քյեզ կսպանի»:

Թաքավերին պուճուր տղան եր ա օնում օշափեն հոր տված միակը վեչխարը թուշ քշո̀՛ւմ մաչնակ ախպոր սարը: Լհա̀ վըրեր սահմանը անց ա կենում, թաքավերին պուճուր տղան տըեսնում ա էս ա դիպա իրան մի ա̀ժդահա կյամ ա, վըրեր վըրեննեն տական կրակ ա տո̀՛ւս կյամ: Վըրեր հասնում ա օշափը, թաքավերեն տղան էս մահակը յըրա ա պիրում: Օշափը խըրնթրում ա, թա, մին էլ թխի: Թաքավերին պուճուր տղան ասում ա. «Աթալար բիր դեյիր»[1]:

Իրիկունը մաչնակ ախպորը հենգյ հազար վեչխարն առաչն ըրած պերում ա բինա: Օշափը թա̀րիփ ա անում թաքավերին պուճուր տղեն դոչաղությունը, համ էլ խընթրում ա, վըրեր էն մին սարըեն թարափը իսկի քյինավեչ, էն մին սարին քըմակեն էլ մըեծ ախպերն ա ինում, էն անպատճառ կարող ա ո̀՛ւրա̀ն ըսպանե. «Իմ մըեծ ախպերը,- ասում ա օշափը,- իմ մըեծ ախպոր վեչխարնեն տասսը հազար ըն. համ էլ էն ա իմ աչքերս էլ պահում ա, ծովումը մին տոն օնե, էտ տանն էլ մին դութի կա, իմ աչքերս էտ դութումն ա: Օլմիա, օլմիա նրա հետ կռվի փռնվիս, էն շատ զոռավ ա, կարել չըս նրա Օ̀վթան կյաս: Ամմա գիդվալ չի կյա̀լ, կարող ա պտահի ինքը քյեզ ջիհց, ինքյ ալ էս շա̀քյա̀րը տիր պիրա̀նումըտ, կռվեն վախտը թա վըրեր էս շա̀քյա̀րը ըղուվացավ, գյիդա̀, վըրեր նա քյեզ հըղթելու ա: Բեդմա ընտան մի թա̀հրա̀վ խափիս»:

Էքյսը թաքավերին պուճուր տղան վեչխարը թուշ քշո̀՛ւմ ա մըեծ ախպորը սարը: Եշում ա տըեսնում դիբա̀ ո̀՛ւրա̀ն  ա կյամ մին աժդահա, վըրեր կլո̀՛ւխը յըրգյինքյումն ա, վըեններր՝ տափումը:

Օշափը կյա̀մ ա, թա չէ, կոխ ա փըռնում թաքավերին պուճուր տղին նհետ: Սա օզում ա ընրան վըրեր քըցի, էն էլ օզում ա ընրան վըրեր քըցի, քաշ-քաշ ըն ինում, թավիլ տամ: Թաքավերին պուճուր տղան բիրդա̀ն տըեսնում

[1] *Պապերը մեկ են ասել:*

ա, վըեր պիրանեն շաքարը ըղուվանում ա: Լհա՝ էտ վախտն ա ինում, վըեր օշափին տըրխատանը պեց ա ընգյնում: Թաքավերեն պուճուր տղան ասում ա. «Յա՛վաշ, տըրխատանըտ կապե, ետըհետը ասխվեչ, թա տըրխատանըս պեց ընկած ա իլա՝լ»: Օշափը օզում ա, թա տըրխատանը զիրավ տա կապի, ալըղադը՝նը՝ում թաքավերին պուճուր տղա, տը՝ւս կօնիս միակը և մին դը՝նը՝ում հանց կթխիս, վըեր օշափն էլ տեղան կարել չի եր կենա:

Թաքավերին պուճուր տղան քյնը՝ւմ ա ծովին մաչը ման կյա՝մ. օշափեն տոնը քըթենում, յոր օնում դութին, մին բոթուլ էլ անմահական ճուր, վեչխարն էլ առաչն ըրած իրիգը՝ւնը կյա՝մ ա տոն: Թաքավերին պուճուր տղան Յարանահանգալ օշափեն աչքերը տնը՝ւմ ա տեղը, անմահական ճը՝ւրը քսը՝ւմ, օշափը ըսկսում ա տըեսնալ. ամմա աչքերը շիլդի յա տը՝ւս կյամ, ընդրա հետե, վըեր ծախ աչքը աչին ա տիրա՝լ, աչինը՝ ծախ: Էս լոխճանը ետը, թաքավերին պուճուր տղան օշափին ասում ա. «Ես բիդմա քյինամ, տըեսնամ իմ հոր տոնը հինչ տեռավ»:

Օշափն ասում ա. «Տու եք ինձ անգուջ կալ, քյինալ մեր, քու քուր հինչ կա, կավուչ, լոխ կերալ ա, ծեր շիհա՝րումը էլ սաղ ինսան ու ջինս չկա»: Թաքավերին պուճուր տղան եշում չի օշափեն խոսքեն, եր ա կենում, թա քյինա:

Էդ վախտը օշափն ասում ա, դե վըեր իտի յա, ինքյ կալ քյըզ նհետ եր կալ մին սանդր, էրկու էն բոթըլ ճրա՝վ լիգը, իրեր սիպտակ, կարմիր մին էլ սև ծիուցը հա՝քյվեն մազերան, էս մազերից վըերը վըեր պահես կրակեն յըրա՝, էն սհաթը քըշտիտ հազիր կինի:

Թաքավերեն պուճուր տղան էս հրեղան ծիոցան մինը եր ա ինում, կյամ ը՝ւրա՝ն հոր շիհա՝րեն մին մոտեկ տեղ ծին պեց թողնում, ինքյը մին լղար, ըստըկելիս ծի նստում, կյա՝մ ը՝ւրա՝նց տոն: Կյա՝մ ա տըեսնում, վըեր հոր շըհա՝րը ամայի յա տըեռալ, ինսան, ջինս կավուչ, ը՝ւրա՝ն հորն էլ քուրը կերած, կեսն էլ պատան կախ ըրած: Քուրը վըեր ախպորը տըեսնում ա, լոք ա տամ տեղան եր կենում, ասում ա. «Բարով ըս եկալ, ախպե՛ր, հինչա՞վ ըս եկալ»:

-Ծիով ըմ եկալ, ծիս էլ հանե հըյաթումը կապած:

Քուրը տը՝ւս ա կյա՝մ հայաթը ծիու մին վըեննը ոտում, կյա՝մ թա. «Ախպե՛ր, ծիդ իրե՞ք ոննանի ա իլալ»:

- Հա՛, քո՛ւր ջան,- վըխելան նհետ ասում ա ախպերը:

Մին պատառ կըեալանը ետը, քուրը տը՝ւս ա կյա՝մ տոռնը, ետ կյա՝մ, թա.

«Ախպե՛ ր , ծիդ մի՞ն վընանի ա եկալ»: Միենգյ էլ, թա. «Ծիտ փորսո՞ղ տալով ա եկալ»:

Խեղճ տղան էլ վախելան նհետ ամեն դ՞նում. «Հա, քուր ջան» ա ասում:

Քուրը վըեր մին էլ ասում ա, թա. «Ախպեր ծիդ փորսո՞ղ ա եկալ», թաքավերին տղան տ՞ւս ա կյամ, կյ՝րմ՞ւր ծիին հ՝քյվեն մազերը պահում կրակեն՝ էն սհաթը կյ՝րմ՞ւր ծին ըռաչկեն հազըր կաղնում ա: Թաքավերին պուճուր տղան թող ա ինում, նըստում, թըռչ՞ւմ:

Մին խիլլա տեղ քյինն՝լանը ետը կյ՝րմ՞ւր ծին ասում ա. «Թաքավերին պուճուր տղա, մին ետ եշի, տե՛ս քու քուր կյա՞մ ա»:

- Հա՛, կյ՝մ ա,- ասում ա թաքավերեն տղան:

- Հինչո՞ւ ղըդար կինի:

Մին դուշու ղըդար:

-Վըե՛չինչ, հ՝լ՝ հեռու վա:

Մին խիլլա վախտան ետը էլհա ծին հըրցընում ա. «Թաքավերեն պուճուր տղա, միենգյ ետ եշի, տես հինչո՞ ւ ղդար ա»: Թաքավերին պուճուր տղան ետ ա եշում, ասում. «Մին մարթու ղըդար ա ըրևում»:

- Թող ըրա սանդրը,- ասում ա ծին:

Թաքավերին տղան սանդրը թող ա անում, ՞ւր՝ն քըմակեն մին քոլուտ, ցաքյուտ ա բհամ կյ՝մ:

Մին խիլլա տեղ քյըն՝լ՝նը ետը ծին էլհա հըրցընում ա». «Թաքավերին պուճուր տղա, մին դպետ եշի, տըես քու քուր կյ՝մ ա՞, յա հինչո՞ւ ղըդար ա»: Թաքավերին տղան ետ ա եշում, տեսնում, քուրը կյամ ա, ամմա մին ծտու ղըդար ա:Կյ՝րմ՞ւր ծին էլհա առաչ ա քյընամ, քյընամ ա, քյինամ: Վըեր մին խիլլա անց ըն կենում, էլհա հըրցնում ա. «Թաքավերին պուճուր տղա, քուրդ կյ՝մ ա՞, հինչո՞ւ ղըդար կինի»:

- Կյ՝մ ա, հա՛, մարթու ղըդար ա:

- Տեն քըցի ճըր՝վ լիգյը բոթուլը:

Ճր՝վ լիգյը բոթուլը տըեռնում ա մին մըեծ ծով: Քուրը կյամ ա ծովին դեմ ընկնում, օզում ա, թա անց կենա, կարում չի, ընկնում ա ծովը խեղդվում:

Թաքավերին պուճուր տղան քվորն անա ըզատվելանը ետը էլ ետ չի տեռնում օշափեն կոշտը: Կյ՝մ ա մին թաքավերու վեղ, ծիան վեր կյամ, ծին պեց թողնում, ինքյը վըեննավ կյամ էս թաքավերին շհ՝րը, կլխեն տերած մին քըչալու փափախ:

Էս շիȁրեն դարվազեն կաղնած մարթիքյ թողում չըն, թա քաղաք նի մննի: Թաքավերեն պուճուր տղան ըղաչանք ա անում, թա. «Ես մին խեղճ մարթ ըմ, թուղեցեք քյընամ շիȁրը, դո̏ւզ ա, խեղճ մարթ ըմ, ամմա ծեր թաքավերին կարող ըմ պետքը կյȁմ»:

Դարվազեն քըշտին կաղնած մարթիքյ կյամ ըն թաքավերին կոշտը, հայտնում, թա. «Թաքավերն ապրած կենա, իստի մին մարթ ա եկալ, ինքը շատ սերուն, բոյավ-բուսաթավ, ամմա էն ա վըեր քաչալ ա, ասում ա. «Կարող ըմ թաքավերին ծառայիմ»: Ասում ընք՝ ղազերը տանք, տանե պահի»:

- Հինչ կինի՞,- համաձայնվում ա թաքավերը:

Իստի էդ օրվանան թաքավերեն պուճուր տղան տըեռնում ա թաքավերին ղըզարածը: Ամեն օր թաքավերին ղազերը քշո̏ւմ ա, պերում թաքավերին բախչան, հովուզնեն լիզյը ճըերավ: Ըռութանան ղազերը քշո̏ւմ ա ըստեղ, իրիկունը տոն պիրում:

Մին օր թաքավերին պուճուր տղա քաչալ ղըզարածը էլիա ղազերը քշո̏ւմ ա ըստեղ, պեց թողնում, թա ըրածեն, էն վեր ա ինքը, թեքյ ընկնում, մին քոլու տակ քնավ ընցնում: Հունց ա ինում, էդ օրը թաքավերին պուճուր ախճիգյը ըստեղ ման կյալու վա կյամ, բաշմակսեյրի, կյամ ա տըեսնում, վըեր մին քոլու տակին ո̏ւրանց ղըզարածը թեքյ ընկած, քոն իլած, փափախն էլ կլխան վեր ընկած: Եշում ա տըեսնում, էս թաքավերին ախճիգյը, վըեր էս տղան դո̏ւզ ա, փափախը քըչալու փափախ ա, ամմա կլո̏խը քաչալ չի, մին սերուն, դȁշȁնգյ, բոյավ, բուսաթավ ջȁհիլ տղա, վըեր իսկի ո̏ւրȁնց շիȁրո̏ւմը իտինը ինիլ չի:

- Է՛յ, քա՛չալ, է՛ր կաց,- հրաման ա անում թաքավերին ախճիգյը: Ղըզարածը բիրդȁն եր ա թռչո̏ւմ, վըեր ընկած փափախը յոր օնում, կլխեն տինո̏ւմ: Թաքավերին պուճուր ախճիգյը նըստում ա քաչալ ղըզըրածեն կողքին, սիրում սիրվում, մաննեն մըտանին էլ հանում քցո̏ւմ ղըզարած քըչալին մաննը: Թա.‹‹Տու վըս վըեր կաս, աշխարքը վըեր շոռ կյȁ, տու իմն ըս, ես՝ քունը»:

Անց ա կենում խելա վախտ, թաքավերին իրեք ախճիգյն էլ մըծացալ ըն, սիրունացալ, ալավ-ալավ ըն անում, մարթու քյինȁլու հետե ճընգ-ճընգում ըն քյո̏ք ըրած սազու սիմու նման:

Մին օր թաքավերին նազիր-վազիրնեն հրվաքվում ըն, թա.«Թաքավերն ապրած կենա, ախեր, ըխճկերքդ մըծացալ ըն, մարթու տալու վախտն ա:

Իրավունք տո, վըեր ըխճըկերքդ ո՛ւրա՛նց անա մեր տղորցը մաչան փըսացու հընտրին»:

Թաքավերն ասում ա. «Համաձայն ըմ, լա՛վ կինի: Թաքավերը հրաման ա պեց թողնում ո՛ւրա՛ն երգյիրումը, թա. «Հինչ տեղ լա՛վ, սերուն, քաջ տղա կա, թող հըվաքվին, վըեր իմ ըխճըկերքս ո՛ւրա՛նց համար փեսա ճոկին»:

Նշանակված օրը թաքավերեն վըեղեն ազնիվ և նազիր-վեզիրներեն տղերքը լոխ հըվաքվում ըն, ըստեղ ա կյամ և մեր քաչալ ղըզարածը: Թաքավերեն էրկու ախճիգյը հավան ըն կենում էրկու նազիրի տղաների, էն վըեր ա պուճուրը ճոկում ա էս ղըզարածեն: Թաքավերը հավան ա կենում մեծ ու միչնակ ըխճկորանց փեսցը, էն վըեր ա պուճուրինը, հավան չի կենում: Հայտնում ա լոխճին, թա պուճուր ախճիգյը շիլ ա ընկալ, պեդմա թա՛զա՛ղան հընդրե: Էլհա կանչում ա նազիր-վազերներին տղորցը, պուճուր ախճիգյը էլհա կյա՛մ ա էս քըչալին ա փըռնում, թա. «Ես ըստրան ըմ օզում»: Իրեքինջի հետ ա թաքավերը հայտնում, վըեր ախճիգյը շիլ ա ընգալ, իրեքինջի հետ ա հընտրություն անել տալիս, ամմա պուճուր ախճիգյը էլհա քաչայ ղըզըրածեն ա օզում: Թաքավերը կըզնըվում ա, հրաման ա անում, վըեր երկուսին էլ քըցին ղըզերին պո՛ւնը: Էն վեր ա էն էրկու ըխճըկորցը միար օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ա անում, ուրխութուն անում: Մին քանի վախտանը ետը հունց ա ինում, թաքավերը հիվանդանում ա:

-Թաքավերը կարող ա սըղանա, թա վըեր անմահական ճո՛ւր խմե: Պա հո՞ւ կպիրի հո՞ւ չի պիրիլ: Թա. «Փեսաները, նահանցա գյիման հու բիդի պիրի»:

Փեսաները հըզըրոթուն ըն տըեսնում: Ճոկում ըն լոխճա լա՛վ ծիենքը, խուրջիննին լըցնում ըն լա՛վ-լա՛վ պըշարավ, վըեսկավ, ըրծաթավ և հղի քցո՛ւմ: Քաչալ փեսան էլ ա ասում, թա. «Ես էլ կըքյինամ անմահական ճո՛ւր պիրելու»: Նըեստավըը ծըծաղում ըն, տամ ըն մին քոսուտ ծի, շհա՛րա՛վը քյինալիս էլ հետան տնազ անում, ծափ տամ, ծըծաղում:

Քաչալը շհա՛րա՛ն տո՛ւս ա կյամ. թա չէ, ո՛ւրա՛ն քըչալեն փափախը պահում ա, հանում ա սև ծիու հա՛քյվին մազերը պահում կրակին: Սև ծին հազըր ըռաչկեն կաղնում ա: Թաքավերին պուճուր տղան, լըք ա տամ յըրան նըստում, քըշո՛ւմ: Ինքյն էլ փոխվում, տըեռնում ա մին սերուն, նախշուն տղամարթ: Քըշո՛ւմ ա ծին կյամ ա հըսնում թաքավերին էրկու փեսին, սահանք կլխին մին-մին ղումիրզ թխում, ինքը թռչո՛ւմ, անց կենում:

Թաքավերին պուճուր տղան զյո՛ւղո՛ւմ ա, վըեր անմահական ճուրը քըթենվում ա երկու պեց ու խուփ ինող սարեն ղաթումը: Թա վըեր մանի սա-րը, պեցված վախտը կըրեցավ նի մըննե և մինչելի խուփ ինելն էլ տո՛ւս եկավ, էն ա պրծավ, թա չէ՝ կըմնա ըրանքումը տփակած: Թաքավերեն պուճուր տղան թուշ քշո՛ւմ ա սև ծին էն վախտը, վըեր սարը պեցվում ա: Սև ծին թռչո՛ւմ, շուշան լըցնում, հանց տուս ա կյամ, վըեր հա՛լա՛ սարը հոպ կալած չի ինո՛ւմ: Թաքավերին պուճուր տղան կյամ ա երկու հըրցեն ճուկվելիս տեղը մին չաղիր վեր թողում, յըրա՛ն կյիրում. «Անմահական ճո՛ւր ըմ ծախում»:

Էս թաքավերին էրկու փեսան կյամ ըն, թա ըստըղավ անց կենան, տըեսնում ըն մին չաղիր, մաչին անմահական ճուր ըն ծախում: Ուրխանում ըն, վըեր ըն կյամ, ասում, խոսում, ամմա ծախողն ասում ա. «Փողով ծախում չըմ, առանց փող ըմ տամ, ամմա մո՛ւշտա՛րուն քըմակներին, էն փափուկ տեղերը փեչատ ըմ ճըխտում»: Հինչ ըրած, փեսալարը համաձայնվում ըն: Թաքավերին պուճուր տղան էս փըսոցը շուշեքյը հրսարակ ճո՛ւրով լըցնում ա, տալիս ո՛ւրա՛նց, պեց ա անում քամակնին, մին-մին փեչատ ճըխտում, թա, «Դե քյեցեքյ»:

Փեսեքը օրախ-օրախ կյա՛մ ըն տոն, տո՛ւս օնում շո՛ւշեքյը, թա. «Դե անմահական ճո՛ւրը պերալ ընք»: Հաքյիմնին կյամ ըն եշում, ասում թա. «էս անմահական ճո՛ւր չի»: Կյամ ա քաչալը, պերում ա անմահական ճո՛ւրը: Թաքավերին պուճուր ախճիզյը տանում ա հորր տամ: Հա՛րը խմում ա, սըղղանում, ամմա քաչալ փըսեն թողում չըն մեյդան տո՛ւս կյա՛, ղըզերեն պո՛ւնո՛ւմն ըն պահում:

Մին քանի վախտան ետն էլ ազառու վա տեռնում, տեղեն տակը ընկնում թաքավերին կնեզյը՝ թաքուհին: Էլիա հա՛քյիմնին քյընա՛մ ըն կյամ, ամմա զատ չի տո՛ւս կյամ: Միենզյ էլ ասում ըն, թա, «Ազառուն կըլիվա՛նա՛, թա վըեր ասլանու կաթ խմե»:

- Բա հո՞ւ կճարե, հո՞ւ չի ճարել:

Թա. «Դե փըսեքյը կճարեն, էլ հո՞ւ բիդի ճարե»: Էլիա փըսեքյը հազըր-վում ըն, ասլանու կաթ պիրելու: Ճոկում ըն, ըշխարքես տակին հինչքան լա՛վ ծի կա, տամ էս էրկու փեսին, խուրջիննին լա՛վ-լա՛վ պաշարավ, վըեսկավ, ըրծաթավ լըցնում, հղե քըցո՛ւմ: Քաչալն ասում ա. «Ես էլ կըքյինա՛մ»: Էլիա զիրավ ծըծաղամ ըն, տնազ անում, մին քընձռոտ ծի տամ, շիհա՛րա՛վ քյինալիս էլ ըծաղում զիրավ, մասխարա քըցո՛ւմ:

Թաքավերին պուձուր տղան շըհա̈րա̈ն տո̈ւս ա կյամ թա չէ, տո̈ւս օնում սիպտակ ծիու հա̈քյվեն մազերը, ո̈ւրո̈ւր ա քսո̈ւմ: Սիպտակ ծին ըռաչքին հազըր կաղնում ա:

Թաքավերին պուձուր տղան թող ա ինում սիպտակ ծին նըստում, յալլա , քըշում, քյինում հասնում թաքավերեն էրկու փեսին, մին մին կլխներին բամփում, թըխում անց կենում, քյինամ: Քյինում ա, քյինամ, կյա̈մ ա մին մթին ծմակ, տըեսնում ա մին էքյ ասլան՝ ձոտերը չորս դոլն արած սա̈սը կլոխն ա քըցալ, մի՜ն սա̈ս ա հանում, մին սա̈ս, վըեր սարեր, ծո̈րեր , տըղտո̈ղում ըն:

Թաքավերի պուձուր տղան եշում ա տըեսնում, վըեր էս էքյ ասլանը թաթը պըցըրցրած ա պահում, փոշ ա նի մտալ, փիրըկալալ, օռալ: էլ եշում չի, ալբահալ ծիան վեր ա կյամ թաքավերին պուձուր տղան, տո̈ւս օնում նետը, հանց թո̈ւշ օնում էս էք ասլանին վեննին, վըեր նետը ծակում ա օռած տեղը, վահըր վըրըխկալի քյինամ ա, ասլանը դինջանում ա:

Ասլանն ո̈ւրա̈ն ձոտերին ասում ա.

Հինչ տեղ վըեր ա, էս հու վըեր ինձ իստի լավությունն ըրավ, քըթեյք պերեք: Ճոտերը ման ըն կյամ, քըթենում թաքավերի  պուձուր տղեն, պերում մոր կոշտը:

-Քու լավոթունեն տեղը հի՞նչ ըս օզում, ա՛ մարթ:

-Ասլանու կաթն ըմ օզում, օրիշ վեչինչ:

-Լա̈վ, պա հինչո՞ւմ կտանես, իմ կաթնը մին ա հինչու մաչ վըեր ածիս, էնքան զոռավ ա, վըեր ամանը կըկոտրե, էլ կարել չըս տանես, մինակ ասլանեն մորթումը կկարես տանես: Քու լավությունդ մեծ ա, դրա հետե  էլ ես քյեզ կտամ իմ ձուտերաս մինը, ամմա տու բեղմա էնքան հեռու տեղ ըսպանիս, մորթին հանիս, վըեր ես սա̈սը ըսկանամվուչ, թա չէ, քյեզ սաղ չըմ թողնել:

Թաքավերեն պուձուր տղան ասլանեն ձոտը եր ա օնում, սիպտակ ծիեն յրա̈ տնո̈ւմ, թըռնում մին հեռու տեղ, մորթում, մորթին պերում տամ ասլանեն, ալսանն էլ ո̈ւրա̈ն կաթնը ածում ա, տամ թաքավերեն պուձուր տղեն. թա. «Կա, տա՛ր, հալալ ինի քեզ»: Թաքավերին պուձուր տղան եր ա օնում ասլանեն կաթնը, կյամ մին հղուցու ղըրաղեն չաղեր վըեր թողում, յըրա̈ն կյիրո̈ւմ. «Ասլանի կաթն ըմ ծախում»:

Կյամ ըն թաքավերին էրկու փեսան, տըեսնում, վըեր մարթ ասլանու կաթն ա ծախում, ուրախանում ըն: Վըեր ըն կյամ խոսում, ասում, կաթնը

առնում: Ամմա ծախողն ասում ա. «Ասլանես կաթնը փողավ չըմ ծախում: Հու վըեր օզում ա. քըմակներին էն փափուկ տեղը փեչատ ըմ ճըխտում»:

Փեսեքը ռազի ըն ինում: Թաքավերին պուճուր տղան ասլանին կաթնեն տեղակ էծու կաթն ա տամ, շալվարնին էլ հանել տամ, փեչատնեն քըմակներեն ճըխտում, պեց թողնում:

Վըեր փեսեքը կաթնը պերում ըն թաքավերեն կընգանը տան, հա՚թյիմնեն եշում ըն, տեսնում՝ էծու կաթնը: Ասում ըն. «Էս էծու կաթն ա: Սա անպետք ա, օքութ չանել»: Կյա՚մ ա քաչալ ղըզարածը, պերում ա ասլանեն իսկական կաթնը, թաքավերեն կընեգյը խմում ա, լիվա՚նո՚ւմ: Ամմա քաչալ ղըզարածը մնամ ա էլհա ղըզերեն պո՚ւնո՚ւմը:

Մին քանե վախտանը ետը, հունց ա ինում. իըրևան թաքավերը եր ա կենում կռև կյա՚մ էս թաքավերեն յըրա՚: Դուշմանեն ղո՚շունը շհա՚րը շհա՚րին հետան եր ունելավ, առաչ ա կյա՚մ: Թաքավերեն զորքը կարում չի, թա դո՚ւշմանեն առաչը կտրե: Թաքավերեն պուճուր ախճիգյը տըեսնում ա, վըեր ո՚ւրա՚ն հորը երգյիրը ծեռքա քյինամ ա, ըղաչանք-պըղատանք ա անըմ մարթին, վըեր տո՚ւս կյա, ո՚ւրա՚ն հորը քյո՚մագ անե:

Թաքավերեն պուճուր տղան նշանածեն խաթիրը կոտրում չի: Տո՚ւս ա կյամ շհա՚րա՚ն, հանում ա սև ծիյին հա՚քյվեն մազը ո՚ւրո՚ւր քըսում: Սև ծին ծարս-ծարս ինիլավ, հազըր կաղնում ա ըռաչկին: Թաքավերին պուճուր տղան լըք ա տամ սև ծիյին յրա նըստում, թռչո՚ւմ կըռվեն ամենաթո՚ւնդ տեղը, հինչքան ինքն կտորում, մին տասը էդքան էլ սև ծին ա վըեննեն տակը տամ, տըրորում: Թաքավերը հեռու կաղնած թամաշա յա անում, թա հունց ա էս սև ծիյավերը դո՚ւշմա՚ննեն նեղը քցա՚: Եշում ա, հայիլ-մայիլ ինում, ինքյն ո՚ւրա՚ն ասում. «Յարաբ էս հու վա՞, էս սև ծիավերը»:

Էս կռվեն ամենաթեժ վախտը, թաքավերը եշում ա տըեսնում, վըեր սև ծիյավերը յարալու տեռավ, ծեռաց ջուբան ո՚ւրա՚ն յաղլուխը հանում ա, քըցո՚ւմ ծիյավերին յրա՚, թաքավերին պուճուր տըղան յաղլուխր յոր ա օնում, ամմա յարան չի կապում, տնո՚ւմ ա ջուբումը, ինքն էլհա կռև անում: Դո՚ւշմա՚նը կարում չի տիմա՚նա՚, զորքը յավաշ-յավաշ նոսրանում ա, մնացածն էլ փըխչը-փախչի յա ընկնում, դալուն նշանց տամ: Կտըրվածը կտըրվում ա, յարալուն վըեր ընկնում, սաղ մնացածն էլ փախչում ա, ջանն ըզատում:

Թաքավերը շատ ա օրախանում, հաղթության պատվին հանդես ա

սարքում, զորքին, ժողովուրթին մեծ պատիվ ա տամ, ճաշ ա տամ, կյինի խըմըցնում: Ըստեղ ա և մեր քաչալ ղըզարածը, վըերին ռխեն միա̀լ տնո̀ղ չկա, իսկյի մարթու հաշիվ չըն անում: Թաքավերեն պուճուր տղան՝ մեր քաչալ ղըզարածը, էլ հովսալա չանում, բաժակը եր ա օնում և ասում. «Թաքավերն ապրած կենա, յաըաբ, տու իսկի գյո̀ւղո̀ւմ ըս, թա քեզ միար հո՞ւ պիրեց անմահական ճուր: Ես ըմ պերալ, ես, տըեսնո՞ւմ ըս ինձ: Գյո̀ւղո̀ւմ ը՞ս, թաքավե՛ր, թա հո՞ւ պերեց ասլանեն կաթնը թաքուհու միար: Թաքավերն ապրած կենա, գյո̀ւղո̀ւմ ըս, թա հու տարավ էն հաղթությունը, վըերին պատվեն ըսօր ըստեղ հըվաքված ուրախություն ընք անում: Էդ բոլորը ես ըմ ըրալ»: Սաղ ժողովուրթը ըրեսնեն շօռ ըն տամ դիպա խոսող քաչալ ղըզարածը:

- Հինչա՞վ ըս կարող էդ ասածներըդ հաստատիս, - ասում ա թաքավերը:

- Ես ամեն մինին միար օնիմ իմ նշա̀ննեն : Առաչինը խընթրում ըմ, թող վըեր քու էրկու սիրելի փեսեքյըդ պեց անեն ո̀ւրա̀նց քամակնեն և նշանց տան էն փեչատնեն, վըեր ես ճըխտալ ըմ, մին դո̀նում անմահական ճո̀ւրի տեղ, ախպուրի ճո̀ւր տալավ, էն մին դո̀նո̀ւմն էլ ասլանեն կաթնեն տեղակ՝ էծու կաթնը տալու միար: Մնաց դուշմանեն հաղթելը, առ էս քու յաղլուխըդ, վըեր կօվեն թո̀ւնդ վախտը ինձ տվեր, թա յարալու ծեռքըս կապիմ, ամմա ես կըպեցե վեչ, տիրի ջուբըս:

Էս ասում ա թա չէ, կըլխան տեն ա քըցո̀ւմ քըչալեն փափախը, խալխը տըեսնում ըն, թա հինչքան դաշանգյ, սերուն տղա յա իլալ քաչալ ղըզարածը: Թաքավերը շատ ա հավան կենում, կանչում ա կօշտը, ճըկատան պաչում, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք անում, ուրխութուն անում և կտակ անում, վըեր ո̀ւրա̀ն թաքավերությունը ո̀ւրա̀ն մահանը ետը թաքավերը նա ինի:

25.ԻՄԱՍՏՈՒՆ ՏՂԱՆ

Մին շենում մին շատ հարուստ մարթ ա իլալ ապրելիս: Էս մարթը պենդ մարթ ա ինում. համ էլ խոխա չիլալ ինիլիս: Քիշեր-ցիրեկ մետք ա անում էս մարթը:

Մին տարի խե շատ հացու պըկըսոթոն, սով ա ինում էս շենումը: Շինացեքյ հըվաքվում ըն, կյամ էս հուրուստ մարթեն կօշտը, խընթրում, վըեր ցորեն փոխ տա, էս սովան ո̀ւրա̀ն ըզատե, կալին վախտը կպիրին էլլիա ետ կտան, հինչքան էլ օզում ա շահ յոր օնե: Հարուստ մարթը տամ չի: Շինացեքյ քոռ ու փոշման ետ ըն տեռնում, տերտակ ծեռքով: Կյամ ըն շինացեքյ, ժողով անում, վճիռ հանում, վըեր էքյսը քյինան մին էլ օզին, խընթրին, թա տըվավ, էն ա հու տվավ, թա վըեր տա վուչ, էն վախտը ըսպանեն, էտ անզավակ, անհուքի հարուստեն ու պեց անեն ամբարնեն ցորենը ժողովուրթեն մաչին պըժին-պեժին անեն:

Հա̀մա̀ն էտ քըշերը, էս ծեռքը պենդ հարուստ մարթու կնեգյը մին արազ ա տըեսնում: Ռութանան եր ա կենում, մարթին պատմում. ‹‹Էս քիշեր ըրազի մին տղա ի պերալ, մին սերուն դա̀շա̀նգյ տղա, վըեր ասում իր՝ օտիմ վե՛չ, խմիմ վե՛չ, լհա̀ էս խուլխեն թըմաշա անիմ: Ա՛ մարթ, - ասում ա, - ե՛կ, քարը փըշկերքատ վեր ածե, մեր շինացուց կանչինք, ցորենը տանք, թող տանեն, կյուրունքահան ինին: Բա̀լքյա̀մ ըտրա սըդըղավը մին խոխա ինի մեզ»:

Մարթը իտի էլ անում ա: Ռութանան կանչում ա շինացուց, ասում ա. «Գյո̀ւղո̀՞ւմ ըք հինչ կա, ա՛ խալխը, կնեգյս էս քիշեր մին արազ ա տըեսալ, մեզ մին տղա յա ինելու, դրա հետե էլ հո̀ւր վըեր ցորեն ա հա̀ջա̀թ, թող կյա տանե, կյարունքըհան իլիքյ, շահին էլ օզում չըմ, ծեզ ինի»: Ժողովուրթը ուրախանում ա, կյամ ըն ցորենը տանում, կյըրունքահան ինում:

Տըրկըլխեն էս մարթին կնեգյը մին տղա յա պիրում, մին սերուն, նախշուն տղա: Էս տղան էլ խե՞ շո̀ւտ- շո̀ւտ ա մըծանում: Ինքյն էլ խելունք, խելունք, հունց վըեր մին խելքըու ծով: Էս տղան վըեր կյամ ա տըսներկու տրեկան ա տեռնում, մարթը կնգանն ասում ա. «Ա՛ կնեգյ, ես քյընամ ըմ հա̀նդը վար ընելու, տու էլ խուլխեն կղարկիս կօշտըս, հանցուվըեր բոյին եշիմ, բուսաթին եշիմ, ուրխանամ»:

Կնեգյը էտ օրը թա̀զա̀ հաց ա ինում թխած, ամմա մին քյո̀հնա, ծաղկած հաց ա տինում հըբգյումը, վըեր խոխան տանի հորը հետե: Էնվերա խոխան մոր տված հացը թողնում ա, մորան թաքուն, էն թա̀զա̀ թխած փափուկ

հացան նհետ մին չորսը եր ա օնում հըբգյոլմը տինում, մին փարչ էլ կյինի, արաղ, կարաքյ, պաներ, հա̈բգյա̈ն քցո̈ւմ ծիյին մաչքավը, ինքն էլ թող ինում ծին նստում: Կյամ ա տղան տըեսնում հա̈րը մին կող վարած, մինն էլ ըսկած: Սուփրան պեց ա անում, հացը, կյինին, պանըրը, կարաքյը տինում: Հա̈րը վըեր կյամ ա տըեսնում մին չոր, ծաղկած հացին ա̈վա̈զ տղան էտքան պեներ ա պերալ, ասում ա. «Է՜, բալա՛, վըեր ես իտի կերած ինիմ, պա էս հարստութենը հի՞նչ տղան կինա̈ր»,- ասում ա էս մարթը, ետ քաշվում, էլ օտում չի, եր ա կենում վարեն հետան քյընա̈մ:

Էտ վախտը մին ծիյավեր ա կյամ, թա ըտըղավ անց կենա, էս խոխան կանչում ա.«Թաքավարեն փեսա, տու հեռու տեղ ըս քյինա̈լու, քյըզ նհետ հաց էլ չըն տիրալ: Ե՛ք, նըստի, հաց կեր, մին- էրկու հաց էլ քյըզ նհետ եր կալ»: Դո̈ւզ, վըեր էս ծիյավերը թաքավարեն փեսան ա ինում: Էս ծիյավերը նստում, հաց ա օտում, մին հաց էլ ո̈ւրա̈ն նհետ ա եր օնում: Վըեր տոն ա ետ տեսնում թաքավարեն փեսան, կնգանն ասում ա. «Տու հունց կնե՞գյ ըս, վըեր ինձ նհետ մին էրկու հաց չըս տիրալ, էնվեր ա մին շինա̈ցու տասներկու տրեկան տղա ինձ ճընանչից, կանչից հա՛մ հաց ուտացրուց, հա՛մ էլ հըղըցու պաշար տիրավ ինձ նհետ»:

Թաքավարեն ըխճըկանը քյեփին շատ նի յա կյամ էս պենը, մտքումը տինում ա, հունց վըեր էլ ինի, էտ խուխեն կլո̈խն օտէ: Մոտ տեղան ազառու վա տեռնում: Մարթը վըեր կյամ ա, հըրցնում ա, թա. «Ա՛ կնեգյ, հինչատ չը՞ս կարում»: Կնեգյն ասում ա. «Հաքյիմնեն, փալչիքյն ու կյիր պեց անողնեն ասալ ըն, տու կաղանաս. թա վըեր փլան շենումը մին տըսներկու տրեկան տղա կա, նրան ըսպանել տաս, կլխեն յիրա̈ լըղանաս»:

Հի՞նչ ըրած, թաքավարեն ճարը կտրած կանչում ա ո̈ւրա̈ն մարթկանցը, մին խուրջին վըեսկէ յա տամ, ասում. «Քյե՛ցեք էտ տղեն պերեք, հունց վյըեր էլ ինի»: Թաքավարեն մարթիքյը կյամ ըն էս մարթեն կոշտը, ասում. «Թաքավերը քու տղատ օզում ա, էս խուրջին վըեսկին էլ քյըզ միար ա ըղարկալ»:

Մարթն ասում ա. «Մին ու ճար մին տղա օնիմ, տա՛լ չըմ»: Խոխան ասում ա, «Ա՛ հար, տու վախել մեր, ես կըքյինամ, էլլհա ետ կիկյամ»: Հա̈րն ասում ա. «Լա̈վ, թա էս թըքըրվերին հրամանն ա, թող զոռով տանին, էլ վըեսկին հինչու վա՞ ըղարկալ: Ինձ վըեսկեն հարկավեր չի, թաքյ լհա̈ իմ խոխաս սաղ-սըլամաթ ետ կյա»: Խոխան ասում ա. «Վախել մեր, ա՛ հա̈ր, վըեսկեն եր

կալ»,- ասում ա տղան,- եր ա օնում խուրջինը, մաչեն վըեսկին թափ տամ տափեն, տերտակ խուրջինը տամ թաքավարեն մարթին: Ինքյն էլ նստում թաքավարեն մարթին թա̀րքյին, հղե ընկնում թաքավարեն շհա̀րը:

Հըրցեն ջիհո̀ւմ ըն մին թա̀զա̀ կյրեզմանու: Էս տղան թաքավարեն մարթկանցն ասում ա. «Ես զյո̀ւղըմ ըմ, թաքավերը հինչո՞ւ հետե յա ինձ օզում, ինձ ըսպընելու հետե յա օզում: Էդ ինձ այան ա: Ամմա ես ծեզ շատ ըմ խնթրում, քանդեցեք էս թազա կյըրեզմանը: Ըստեղ թաղած ըն մին տըսներկու տրեկան տղա, մին օրում ինձ նհետ ծնված, ես խնթրում եմ կտրեք էտ տղեն կլոխը, տարեք տվեք թաքավարեն ըխճըկանը, թող յըրան լղանա: Ետը հետը ես ծեզ շատ պետքը կըկյա̀մ »:

Թաքավարեն մարթիքյը իտի էլ անում ըն: Էս մարթիքյր թաքավարեն ծո̀ւկն որսողնեն էն իլա̀լ: Էս ծո̀ւկնը որսողնեն էդ թա̀զա̀ թաղած տղեն կլո̀խը կտրում, տանում ըն թաքավարին ըխճըկանը: Ախճիկը լղանում ա, սղանում: Թաքավերը շատ ա ուրխանում, վըեր ախճիգյը սղանում ա, տրա հետե էլ մին լա̀վ քեֆ ա սարքում: Ծո̀ւկնը փըռնողներեն կանչում ա, թափշուր անում, վըեր քեփեն միար էնքան ծո̀ւկնը փըռնին, վըեր կանչած ամեն մին մարթու մին ծո̀ւկնը ընկնե: Ծո̀ւկնը փըռնողնին հինչքան անում ըն, կարում չըն թա ծո̀ւկնը փըռնին, թորը հա տերտակ ա տո̀ւս կյամ: Վերչը, վըեր մին դո̀նո̀ւմ էլ թորը քըցո̀ւմ ըն, մին ծո̀ւկն ա տո̀ւս կյամ, էն էլ հաքյվին յիրա̀ կաղնած, հա պար ա կյա̀մ. Ծո̀ւկնը փռնողնեն ըրմանում ըն, ո̀ւրա̀նց օրումը իտի պեն չին տըեսած: Ճարնեն կըտրած կյամ ըն թա̀քավերեն կոշտը, ասում, վըեր ո̀ւրա̀նք ծո̀ւկնը չըն կըրեցալ փըռնին, վեռու դիբըլու, մին ծո̀ւկն ա թորն ընկալ, էն էլ հաքյվին կաղնած՝ մին կլո̀խ հա պար ա կյա̀մ:

Թաքավերն ասում ա. «Տուր քյո̀հնա ծո̀ւկն փըռնող ըք, կիմանաք, պետմա ասիք, թա խե ա էտ ծո̀ւկնը հաքյվեն յիրա̀ դիքյ կաղնած պար կյա̀մ»:

Շատ ըն մետք անում էս ծո̀ւկնը փռնողնին, ամմա կարում չըն մին պեն էլ ա կլո̀խ հանեն: Ճարնեն կըտրած, կյամ ըն էն իմաստուն տղեն կոշտը, պատմում, թա կլխնին հինչ խաթա յա եկալ, վըեր թաքավերը իրեր օր վախտ ա տվալ, իրեք օրանը ետը վըեր ասինքյ վեչ, թա էտ ծո̀ւկնը հաքյվին յրա կաղնած խե՞ յա պար կյա̀մ, մըեր կլո̀խնին կտրել ա տալու: Տղան ասում ա. «Վախել մե՛ք, քյեցեք, թաքավերեն ըսեցեք. «Թաքավեր, տու մին դո̀նո̀ւմ վըերսի յըիր քյեցալ, խե շատ էլ ծըրավալ իր: Մին քերծի քշտավ քյինա̀լիս տըեսեր, վըեր էտ քերծան նհետ ճո̀ւր ա կըթկաթում, թասըդ տո̀ւս ըս օնում

տակին փըռնում, թաաը խրեզյ ա մնամ թա լըցնէ, մին թավար դուշ թռած, կյամ ա թեավը թխում, ճո՛Ւրը վըէր ածում, տու յրա ըս անում դուշին վէր քըցո՛Ւմ , ամմա ետնան եշում ըս, տըեսնում, վըէր էտ ճո՛Ւրը օխծու լղէ յա: Տու փո՛Ւշմա̀նում ըս, թա խէ՞ ըսպնեցեր քյեզ լվըթուն անող դուշեն: Թաքավերն ապրած կենա, մունք կարող ընք ասինք, թա խէ՞ ա ծո՛Ւկնը պար կյա̀մ հաքյվեն կաղնած, ամմա վախում ընք, թա տու փո՛Ւշմա̀նիս»: Ծո՛Ւկնը փըռնողնին կյամ ըն իտի էլ ասում:

Թաքավերն ասում ա. «Ըսե́ցեք, վա́խել մեքյ, փո՛Ւշմա̀նիլ չըմ»:

Ծո՛Ւկնը փըռնողնին կյամ ըն տղեն կոշտը ասում. «Վըէր թաքավերը փուշմանել չի, վըէր ասինքյ ծո՛Ւկնը խէ՞ յա պար կյա̀մ»: Իմաստուն տղան ասում ա. «Քյեցեք թաքավերեն ըսեցեք. «Թաքավեր, մին դո՛Ւնում տու տոն ըս կյամ, տըեսնում, վըէր ուրուրուցումը խոխատ ըռնըքթաթախ, շոնն էլ քըշտին թեքյ ընգած: Եր ըս օնում շանը ըսպանում, գյո՛Ւղո՛Ւմ ըս թա խոխատ շոնն ըսպանալ ա: Ամմա ետըհետը եշում ըս, տըեսնում, փըէր խոխատ սաղ ա, ուրուրուցեն էն մին թըրա̀փեն էլ մին ջանավար ա ըսպանած, վէր քցած: Տու մի ասել, էտ ջանավարն ա ուզեցալ, վըէր խոխատ օտե, շոնը յըրա յա հասնում, էտ ջանավարին խեխտում: Տու փո՛Ւշմա̀նալ ըս, վըէր նհախ տեղան քյեզ լվըթուն անողեն խէ՞ ըսպըըրցեր: Կասինքյ՝-թաքավերն ապրած կենա, վախում ընք ասինք, թա խէ յա ծո՛Ւկնը պար կյա̀մ, փո՛Ւշմա̀նիս»: Ծո՛Ւկնը փըռնողնեն կյամ ըն իտի էլ ասում:

Թաքավերն ասում ա. «Վախել մեքյ, ըսեցեք, փո՛Ւշմա̀նել չըմ»:

Ծո՛Ւկնը փըռնողնեն կյամ ըն իտի էլ ասում իմաստուն տղեն: Իմաստուն տղան ասում ա. «Վըէր իտի յա, տուք քյեցեքյ, ես էլ էս ա կյա̀մ ըմ»: Իմաստուն տղան կյա̀մ ա թաքավերին կոշտը, ասում. «Գյիդա՞ս, թա ծո՛Ւկնը խէ՞ յա պար կյամ, կանչի քու տըսներկու դարավաշներետ, թող կյա̀ն ըստեղ, ջա̀րգյին կըղնոտեն»: Թաքավերը կանչել ա տամ ո՛Ւրա̀ն կընգանը տըսներկու դարավաշնեն կըղնըցընում ջա̀րգյին: Տղան ասում ա, «Թաքավերն ապրած կենա, հրաման ըրա, շորերնին հանին, տկլըրանան»:

Թաքավերն հրաման ա անում: Ղարավաշնեն, վըէր շորերնեն հանում ըն, եշում ըն տեսնում, էտ տըսներկու կընգա շորեր կյեցած դարավաշներան վեցը տղամարթ ըն: Տղան ասում ա. «Թաքավերն ապրած կենա, քյըզանա կըման էս վեց հո՛Ւքյին քու կընգանը մըրթոթուն ըն անում»:

Թաքավերեն սըերտը ճաքում, մեռնում ա: Ժողովուրթը շատ հավան ըն

կենում էս տղին խելքին, պերում ըն ո՛ւրա՛նց յրա թաքավեր անում: Տղան թաքավեր տըռնալանը ետը, պիրիլ ա տամ ո՛ւրա՛ն հորն ու մորը, ասում. «Թոքա ըրեքյ ծեր պընդոթունը, ըպրեցեք բոլ, առատ, ժղովուրթեն էլ քաղցր աչքով եշեցեքյ»:

## 26.ՕԽԾՆ ՈՒ ԱԽՃԻԳՅԸ

Ինում ա չի ինում, մին մարթ ա ինում: Էս մարթին ինում ա օխտը ախճիգյ: Էս մարթը շատ քյա՛սիբ ա ինում, օրական օխտը ցորեն ա ըշխատում, պիրում մին-մին պժենում ա ըխճկորանցը:

Էս մարթին կուճի ախճիգյը խելունք ա ինում, ասում ա. «Մին ցորենը հինչ ա, վըեր հինչ օտիմ, լա՛վն էն ա, վըեր թուփ անիմ, բա՛լքյա՛մ մին պենու մա՛սրա՛փ տեռնա»: Մին խիլլա վըեր թուփ ա անում, էս կուճի ախճիգյը ետ ա տեռնում հորը թա. «Ա՛ հա՛ր, պա խե՞ մունք վար չընք անում, էս խալխը վըեր վար ըն անում, մըզ հետե ը՞ն վար անում»: Հա՛րը թա. «Ա՛ բալա, հո՞ւնց վար անիմ, վըեր սըերմը չօնինքյ»: Պուճուր ախճիգյն ասում ա. «Վախել մի, ա՛ հա՛ր, տու քյինա վար ըրա, ես սըերմին ճարը կտըեսնամ»:

Հա՛րը քյինում ա վար անում, կուճի ախճիգյն էլ թուփ ըրած ցորենն ա տանում, տամ հորը: Վարան ետ տըռնալիս տեղը էս ախճիգյն ասում ա. «Աստ ու՛ծ, տու հանց անիս, վըեր էքյուց մեր արտը կնանչի»: Հունցը ասում ա էդ ախճիգյը, իտի էլ ինում ա: Էքսյը կյամ ըն տըեսնում, արտը կնանչած:

Միենգյ էլ ասում ա. «Աստո՛ւծ, տու հանց անիս, վըեր էքյո՛ւց կյամ տըեսնամ մեր արտը հըսած»: Իտի էլ ինում ա, էքյսը կյամ ըն տըեսնում արտը հըսած: Էս դո՛նո՛ւմ ասում ա. «Աստո՛ւծ, հանց ըրա, վըեր էքյուց կյամ տըեսնամ մեր արտը հընձա՛ծ»: Էքյսը կյամ ա տըեսնում արտը հնձա՛ծ, կալը քըցած, ցորենը թակած, մին թե էլ մաչին չարխ ըրած: Էս մարթը վըեր մուտանում ա թա թեն եր օնի, մին էլ վըռվըեռ ա քյինամ: Տու մեր աեել, էս թիյին կոթավը օխծը զիրավ ա տվալ: Մարթը ըղաչանք, պղատանք ա անում օխծեն) թա. «Հի՞նչ վըեր օզիս, քեզ կտամ, թաքյի լի՛ն, թողիս իմ խուխոցը ռուզին տոն քըցիմ»:

Օխծն ասում ա. «Ըխճըկերանցըդ մինն ինձ տո, թողիմ դա՛նը տոն կրիս»: Հա՛րը կյամ ա տոն, ըխճկորանցը պատմում. «Ծըզանա .մինը պիտի էն օխծեն քյինա, վըեր ես կարիմ դա՛նը տոն կրիմ»:

Լոխ ըխճըկերքը փախչում ըն տես ու տեն: Մնում ա կուճի ախճիգյը: Սա

ասում ա. «Ա՛ հա՜ր, իսկի էլ մետք մեր անել, ես կըքյինա՜մ էտ օխծեն, թաքյի լիա՜, տու դա՜նը տոն քըցիս»: Կուճի ախճիգյը կյամ ա հոր նհետ կալը: Օխծը վըեր ա կյա՜մ: Էս մարթը դա՜նը կրում, տոն ա քըցո՞ւմ, խոխոցը ռուզին բուլուցնում:

Մինենգյ էլ խաբար տանք կուճուր ըխճըկանը, մին էլ օխծեն անա:

Կուճի ախճիգյն ու օխծը հղե ըն ընկնում:

Մին պատառ վըեր քինամ ըն, օխծն ասում ա. «Ախճի՛գյ, տու յըվըշ-յավաշ քյինա, ես էլ էս ա կյամ ըմ»: Ախճիգյը վըեր մին պատառ առաչ ա քյինամ, մին էլ ա ըսկանում մին ծըկըլթոց: Ախճիգյը ետ ա եշում տըեսնում, վըեր օխծը մին ծառու տակին մաչան ճըղված, կողքեն էլ մի նախշուն ջահիլ տղա կաղնած: Տու մի ասիլ էս թաքավերին տղան ա իլալ օխծու կերպարանքով՝ կյամ ա ըխճըկանը ծեռքան փըռնում, տանում թաքավերեն պալատը, հորը նշանց տամ: Թաքավերը հավան ա կենում ըխճըկանը, հըրսանեք անում, փսակում: Պուճուր ախճիգյը մին քանի վախտան ետը ո՞ւրա՜ն կոշտն ա պիրիլ տամ հորը, քվորցը:

## 27.ՊԱՌԱՎ ԿՆԳԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՜լ ա՜ չիլա՜լ մին պառավ կնեգյ, հու ինքյն էլ շատ քյա՜սիբ ա իլա՜լ: Էս պառավ կընգանը խեզան չի իլա՜լ, մինակ մին բոստան ա իլա՜լ, ըստո՞ւր մաչին էլ իլա՜լ ա մին չոր տանձի ծառ:

Էս պառավ կնեգյը մին հետ էլ տո՞ւս ա եկալ կտրեն յրան նըստալ, շատ լա՜ց իլա՜լ հու ըստծու ըղաչանք ըրալ թա. «Աստուծ, ինձ մին ապրուստ տո, վըեր ընըրանավ կառավարվիմ»: Ասալ ա հու լա՜ց իլա՜լ:

Վըեր շատ լա՜ց ա իլա՜լ, քոնը տարալ ա, էն կտրեն յրան քոն ա իլա՜լ: Քոն իլա՜ծ վախտը տըեսալ ա, վըեր աստոծ եկավ հու ո՞ւրա՜ն ասից, թա. «Ե՛ր կաց, քյինի քու բախճիտ չոր ծառը ամեն վախտ, ամեն օր ճիրի: Ամմա վըեր ծառեն յրան բար ինի, տու քաղիս վեչ, թող ըրա, վըեր բարիցը մինը վեր ընգնե, էն վախտը քաղե հու սաղ բոստանն էլ վարե»:

Էս պառավ կնեգյս եր ա կացալ ուրխացած եկալ տոն, ամեն վախտ ծառը ճիրա՜լ հու կյարունքտեմին էլ բոստանը վարալ: Մին քանե վըխտան ետը էս պառավս տըեսալ ա, վըեր ծառը շատ ա եր կալալ հու բուստանումն էլ հինչու վարալ ա՝ լա՜վ տո՞ւս ա ըրալ: Ամեռն էլ տանձի ծառը տանձավ ճուրճուփալ ա, վըեր առռե ճըղնըկուտուր ա տըեռալ: Եննան էս տանձիս

վըէր հսալ ա, առոէ փոփ տըէռալ, տանձը էր ա ընգալ։ Էս պառավս քյեցալ ա էր կալալ կէրալ հու էննան սաղ ծառը քաղալ ա, տարալ ծախալ մին քաան մընեթու հու էկալ բուստանեն վարած զատերն էլ ծախալ մին քանե մընեթու։ Ըստըհենց մին քանե տարե տանձը հու բոստանեն բարը ծախալ ա, շատ փող շինա̀լ, էննան մին ըմարաթ շինալ, մաչին կացալ։

Մին հետ էլ վըէր քոն ա իլա̀լ, քշէրավ-քշըրհանա էր ա կացալ, տռնավը բոլթա տվալ։ Ընդեղ տըեսալ ա, վըէր մին պառավ հու քյա̀սիբ կնեգյ էկալ ա օղորմություն օզե։ Էս հարուստ կնեգյս. էն կնգանը յրան կզնվալ ա հու ո̀ւշո̀ւնց տվալ թա. «Կո՛րե, շան տուղու քած տու քյա̀սիբ ը՞ս»։

Էս պառավ կնեգյս լաց ինիլավ տո̀ւս ա քյեցալ։ Մթնալ ա։ Էս պառավս լա̀վ յորղան- դո̀շակ ա քցալ, մաչին քոն իլա̀լ։ Էքյսը մին էլ էր ա կացալ տըեսալ, վըէր էլհա ո̀ւրա̀ն կտրավոր տանը նստած, սաղ դո̀լվա̀թն էլ կորած, հու տանձի ծառն էլ չուրացած, բոստանն էլ առաչվան բոստանը։ Էննան մին էլ մեղա ա էկալ հու քյեցալ էլհա կտրեն յրան նստալ, լա̀ց իլա̀լ, լա̀ց, ախրը էլհա նինջը կոխալ ա, քոն իլա̀լ։ Քոն իլա̀ծ վախտը տըեսալ ա, վըէր աստուծ ասից թա. «Ես էն ապրանքը քյեզ տվե, վըէր տու էլ ո̀ւրիշո̀ւ տաս։ Դե վըէր տու էն պըռավեն տվէր վէչ, էնքան հարուստ իր, էն պառավ կնեգյն էլ լա̀ց ինելա̀վ քյինից, տու ընդրա խեղճ չի էկէր, ընդրա միար քու հարստությունտ ծեռքատ խլեցե, էն պառավ կնգանը տվե»։

Ըստուծանա իրեք խնձո̀ր էր ընգնե, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն։

## 28. ԽԱԼ ԱՆԻՄ, ԽԱԼԻՉԱ ԱՆԻՄ, ՅՐԱՆ ՆՍՏԻՄ ԴԻՎԱՆ ԱՆԻՄ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին թաքավէր։ Էս թաքավէրեւս տանն էլ մին պո̀ւրո̀ւտ տընկեց ա իլա̀լ կենում։ Էս թաքավէրեւս կնեգյն ու տընկեցեն կնեգյը խոխա ըն պիրում իլա̀լ։ Ամմա ետ ընգնելավ տնկեցեն կնեգյը տղա յա իլա̀լ պիրում, ամմա թաքավէրեն կնեգյը ախճիգյ ա իլա̀լ պիրում։

Մին դո̀նում էլ ետ ընգած վախտը թաքավէրը կնգանն ասալ ա. «էս ա ես քյինում ըմ ղարիբոթուն, թա վէր տու ախճիգյ պիրիս՝ էլ կյա̀լու չըմ, ամմա թա վըէր տղա պիրիս՝ կյա̀լու ըմ»։

Էս ասալ ա հու քյեցալ մին օրիլ շհա̀ր։ Մին խիլա̀ վախտ անց ա կացալ, թաքավէրեն կնեգյն ու տնկեցեն կնեգյը խոխերքը պերա̀լ ըն։ Թաքավէրեն կնեգյը ախճիգյ ա պերա̀լ, ամմա տընկեցեն կնեգյը՝ տղա։ Էննան թաքավէրեն

կնեգյն ու պո̈ւրո̈ւտին կնեգյը պերա̈լ ըն մո̈ւն-մո̈ւնո̈ւ խոխերքը փոխալ, թաքավերեն կնեգյը ո̈ւրա̈ն ախճիգյը տվալ ա տընկեցեն, տնկեցն էլ ո̈ւրա̈ն տղան տվալ ա թաքավերեն կնգանը: Թաքավերը ըսկացալ ա, թա ո̈ւրա̈ն կնեգյը տղա յա պերալ, ամմա տնկեցինը՛ ախճիգյ: Թաքավերը ըրխունալավ եկալ ա շատ մարթ կանչալ, մին լա̈վ կնոնք ըրալ:

Էս տղան հու ախճիգյը տաս տրեկան տեռած վախտը մին հետ հաղ անում ըն իլա̈լ: Տղան ըխճկանը ասալ ա. «Եկ մարթը մին հաղ ասինքյ»: Ախճիգյը հավան ա կացալ հու էս հաղն ասալ. «Խալ անիմ, խալիչա անիմ, յրան նստիմ, դիվան անիմ»: Տղան Էլ ասալ ա. «Կոժ անիմ, կոլա անիմ, էշավը քցիմ, չու-չու անիմ»:

Թաքավերն էլ օթախումը կյողլու կացած ա իլա̈լ, էս վեր ըսկացալ ա, մին էլ նոր մարթ ա կանչալ հու կնեգյն էլ պերալ ըռըչներեն կղնցրալ, բիյաբուռ ըրալ, թա. «Աստուծ հինչ տվալ ա, խե չը՞ս էն եր կալալ, բա̈լքյա̈մ աստուծ կզնվից, օրիշ պեներ ըրավ»: Եննան ախճիգյր ինքյն ա եր կալալ հու տղան տվալ պո̈ւրո̈ւտին:

## 29.ՆԱ̈ԶԻՐ – ՎԱ̈ԶԻՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին թաքավեր: Էս թաքավերին էլ իլա̈լ ա̈, վըեր աչքին լուսն ա իլա̈լ, էս թաքավերին էլ իլա̈լ ա մին ղոչ: Էս ղոչը հունց պահում ա իլա̈լ, վըեր աչքին լո̈ւսիցը առավել ա իլա̈լ օզում: Մին վախտ էս թաքավերը ո̈ւրա̈ն նա̈զիրին նըհետ քյինացալ ա ման կյա̈լ: Ընդեղերք տըեսալ ըն մին մարթ իրեք տեղ հող ա թուփ ըրալ, մեչին նստալ: Էս մարթին անունն էլ Տարանտեյի Փալուլ ա իլա̈լ: Էս նա̈զիր-վա̈զիրը հրցրալ ըն, թա. «Էտ խե յը՞ս ըտըհենց ըրալ, էտ էլ ա՞ ծախելի զատ»: Ասալ ա. «Էս ըստհենց ըմ ըրալ, վըեր էս հողը էն մարթին կլխին, որ աղովը կըպարծանա. էս հողն էլ էն մարթին կլխին, որ կնգանը սըռ կասի, էս հողն էլ էն մարթին կլխին, որ նորաքյիսից պարթկ կանի»: Ետնան էս նա̈զիր-վա̈զիրը քյինացալ ըն տոն:

Մին օր էս նա̈զիրը թաքավերին ղոչը կյուղացալ ա, տարալ հու կնգանն ասալ. «էս թաքավերին ղոչն ա, կյուղացալ ըմ, պիրա̈ննա̈տ հանես ոչ»: Ետնան էս նա̈զիր-վա̈զիրը ղոչը տարալ ա կյաղալ, ետնան քյինացալ մին օրիշ ղոչ պերալ մորթալ, կերալ ըն: Ետնան քյինացալ ա մին նորաքյիսից էլ մին տասը մանեթ պարտկ ըրալ: Ետնան թաքավերը ճառ կանչիլ ա տվալ, թա. «Ա՛յ թա-քավերին ղոչը կորալ ա, հու վըեր քիթանա պերի մեզ տա, հինչ օզի,

կըտանք»: Էս նա̀զիրն էլ եկալ ա կնգանը թակալ, կնեգյն էլ կըզնըվալ ա, ճառ կանչողներին ասալ ա. «Թաքավերին ղոչը նա̀զիրն ա կյուղացալ, պերալ մորթալ՝ կերալ»: Էս ճառ կանչողնեն քյինացալ ըն թաքավերին ասալ, թա. «Քու ղոչըտ նա̀զիրն ա կյուղացալ, մորթալ կերալ»: Թաքավերը էս վըեր լսում ա, հրամայում ա, վըեր տաննեն ճիտրին պտոկը կախ անեն, քարկործ անեն: Ղոշունը յրա տա̀ռած տանում ըն թաքավերին նա̀զիրին վըեր քարկործ անեն, նորաքյիսան կյամ ա պկիցը կենում, թա. «Պարտկըս տոք»: Էս նա̀զիրին տանում ըն վըեր քարկործ անեն, էս նա̀զիրն ասում ա. «Թաքավերն ապրած կենա, թող արեքյ մին իրեք խոսկ օնեմ ասելի, ասեմ»: Ետնան վեր ա կյամ, ասում. «Մտիտ ա՞, վըեր փլան վախտը ման կյա̀լ ինքյ քյինում, մին մարթ իրեք տեղ հող ար թոփ ըրալ, մեչին նստալ. վըեր հըրցրինք, ասեց թա. «էս հողը էն մարթին կլխին, որ աղովը կըպարծանա. Էս հողն էլ էն մարթին կլխին, որ կնգանը սըռ կասի, էս հողն էլ էն մարթին կլխին, որ նորաքյիսից պարտկ կանի»: Միենգյ ես քու ղոչըտ կերալ չըմ էնա կյաղած, կանց քյեզ էլ լա̀վ ըմ պահալ»: Տարալ ա ղոչը տվալ թաքավերին, ինքյն էլ թաքավերիցը տո̀ւս եկալ:

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 30.ՄԱՐԹԻՆ ՀՈՒ ԿՆԳԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ՝ մին մարթ: Ըստրա էլ իլա̀լ ա̀ մին կնեգյ: Էս կնեգյս մարթին ասալ ա. «Ա՛ մարթ, ինձ տար մին տեղ, վըեր ընդեղ մեռնող չի ինի»: Նա էլ ասալ ա, թա, «Լա̀վ»: Էս մարթը էս կնգանը եր ա կալալ, քյինացալ շենքա̀շեն ման եկալ, տըեսալ վըեր աման տեղ կյերեզմանոտ կա:

Ետնան քյինացալ ըն մին տեղ, տըեսալ, վըեր կյերեզմանոտ չի կա, ընդեղ իրեք օր ման եկալ, տըեսալ կյերեզմանոտ չի կա: Ընդեղ նստալ ըն, տոռ շինա̀լ: Էս մարթն էլ քյինացալ ա չոպան նի մտալ: Էս կնեգյն էլ չխարակը վեր ա տըրա̀լ, թիլ մանալ: Ըստրանց էլ իլա̀լ ա̀ էրկու տղա:

Մին քանի օրիցը ետնան չորս մարթ եկալ ըն էս կնգանը նըհետ շատ խոսալ: Էս կնեգյը ետ ա տա̀ռալ ասալ, թա. «Ըտեղան քյինացեքյ, զլոխըս ցավում ա, թող ըրեքյ իմ պա̀նիս կենամ»: Էս մարթիքյը ըստրա մորթալ ըն կերալ, թա ըստեղ կըմեռնի, մուռտառի, ոննը-զլոխն էլ քիցա̀լ մին ղզղան, թա՝ էս էլ կենա ո̀ւրա̀ն մարթին հետի:

Էս էրկուտղան էլ ըստեղ նստալ ըն լա̀ց իլա̀լ, թա. «Իմոր մորթալ ըն»:

Ետնան ըտրա մարթը եկալ ա տեսալ ընդեղ լա̈ց ինո̈ւմ տղերքը: Քյինացալ ա քշտնեն հու ասալ. «Էտ խե յը՞ք լա̈ց ինո̈ւմ»: Նահանք էլ ասալ ըն, «Մին ղզղանին եշի»: Քյինացալ ա եշալ, տեսալ կնգանը ոննը-գլոխը ղզղանին մեջին ղըլթղլթալի իփում ա: Հրցրալ ա, թա. «էտ հինչ ա՞»: Ասալ ըն. «Մի քանի մարթ եկին շատ խոսեցին, ինքյն էլ ասեց՝ գլո̈խս ցավում ա, եր կացեքյ քյինացեքյ, ես իմ պա̈նիս կենամ: Փռնեցին մորթեցին կերին, ոննը-գլո̈խն էլ քյեզ միար պահեցին»: Ետնան էս չոպանը ետ ա տա̈ռալ ասալ, թա. «Քյեզ ընդեղ հի՞նչ պան օնես, որ մորթեն օտեն»: Ետնան էս էրկու տղան եր ա կալալ, քյինացալ:

Աստվածնից իրեք խնձո̈ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 31.ՎԱՐ ԱՆՈՂ ՄԱՐԹԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին վար անող: Էս վար անողիս էլ իլա̈լ ա̈ իրեք կնեգյ՝ շատ նախշուն: Մին վախտ քյինացալ ա, թա վար անի, էս էրկրիս թաքավերն էլ տո̈ւս եկած ա ինո̈ւմ ման կյա̈լ: Էս վար անողն էլ վըեր մին տո̈նո̈ւմ տափը էս ղոլան ճղում ա իլա̈լ , մինչի էն ղոլը տանում ա իլա̈լ, եզները էն ղոլին պա̈ց թողում ա իլա̈լ, ինքյը քյինում ընդեղ պար կյամ:

Ետնան թաքավերը տըեսալ ա, վըեր մին մարթ տափը մին տո̈նո̈ւմ ճղում ա, տանում եզները պա̈ց թողում, ինքյը ընդեղ պար կյամ: Էս թաքավերը քյինացալ ա ասալ. «Էտ խե յը՞ս ըտըհենց անում»: Նա էլ ասալ ա. «Ինձ իրեք կնեգյ օնեմ, նահանք ինձ շատ օգնում ըն, ուրախությունից ըստհենց ըմ անում»: Թա. «Ինձ էլ իրեք կնեգյ օնեմ, քյեզ էլ, եկ փոխենքյ»: Էս վար անողը միտկ ա ըրալ, ասալ, թա. «Թաքավերին խա̈թրավը անց կենալը զատ չի, համ էլ պեթկական մարթ ա, փոխեմ, լա̈վ կինի»: Ըստեղ պերալ ա փոխալ:

Էս թաքավերին կնանիքյն էլ փիս խասյաթի կնանիքյըն ըն իլա̈լ: Էս վար անողը թաքավերին կնանիքյը քյինացալ ա, վըեր տանի ո̈ւրա̈նց տոն: Կյետավը վըեր օգնում ա իլա̈լ անց կցնի, կյետին էն ղոլին վեր ա տիրա̈լ, ընդեղ մինին շիլա̈կալ ա, տարալ տիրա̈լ կյետին մեջին հու ասալ. «Կործիցըտ ծեռք յորկօնե՞ ս»: Նա էլ ասալ ա, թա. «Հա»: Ետնան շիլա̈կալ ա, տարալ տիրալ էն ղոչին: Ետնան քյինացալ ա էն մինին պերալ, տարալ տիրա̈լ կյետին մեջին, թա. «Կործիցըտ ծեռք յոր կօնե՞ս»: Թա. «Հա»: Էլիա շիլա̈կալ ա, տարալ տիրա̈լ էն ղոլին: Ետնան էլիա քյինացալ ա էն մինին պերալ, տիրալ

կյետին մեջին, ասալ. «Կործիցըտ ծեռք յոր կօնե՞ս»: Թա. «Չէ»: Էլիա ասալ ա. «Ծեռք ը՞ս յոր օնում»: Թա. «Ընդե չէ՛»: Մին էլ ա ասալ. «Ծեռք ը՞ս յոր օնում»: Թա. «Ընդե չէ՛»: Ասալ ա, թա. «Ընդե ծեռք եր կալ»: Թա. «Ծեռք չըմ յօր օնել»: Մին էլ ա ասալ, թա. «Ծեռք եր կալ»: Թա. «Յոր չըմ օնել»: Ասալ ա. «Քյիցում ըմ կյե՞տը, թա. ծեռք ը՞ս յոր օնում»: Թա. «Ծեռք չըմ յօր օնում»: Քիցալ ա կյետը: Մին քանի կազաչափավ հեռու տեղ քշա̈լ ա, էն վար անողն ասալ ա. «Ծեռք ը՞ս յոր օնում»: Ծեռքավ իմաց ըրավ, թա վըեր մկրատավ կտորես, ծեռք չըմ յոր օնելու: Ետնան էս էրկու կնգանը եր ա կալալ, տարալ ո̈ւրա̈նց տոն էս վար անողը: Էս էրկու կնեգյն էլ ըստրա շատ սիրում ըն իլա̈լ:

Էս վար անողը մին վախտ քյինացալ ա, թա վար անի: Էլիա մին տո̈նո̈ւմ տափը ճղալ ա, տարալ եզները էն ղոլին պա̈ց թողալ, ինքյը ընդեղ պար եկալ: Էն թաքավերն էլ տո̈ւս եկած ա ինում ման կյա̈լ: Եշա̈լ ա, տըեսալ էլիա ընտհենց ա անում: Թաքավերը քյինացալ ա ասալ մըհենգյ էլ չի կնանիքըտ լա̈վ, խե յը՞ս ըտենց անում, պար կյամ: Էս էլ ասալ ա. «Իմ էրկու կնեգյս ինձ շատ սիրում ըն, ընտրա տա̈ոտա̈ն պար ըմ կյամ»: Ետնան էս թաքավերն ասալ ա. «Փոխենքյ»: Նա էլ մեթկ ա ըրալ, մտկումը ասալ, թա. «էն լա̈վ ա իմ կնանիքյըս պահեմ, քան թե օրիշինը, փոխեմ»: Պիրալ ա էն էրկու կնեգյը տըվալ թաքավերին, ո̈ւրա̈ն առաչվան կնեգյը ինքյ կալալ իրեքան էլ: Ետնան էս թաքավերն ասալ ա. «էս խե յա՞ էրկունը»: Նա էլ ասալ ա. «տահանք վզա̈վ կալին վըեր էլ փիս պա̈ներ չըն անիլ, ամմա նա վզավ չի կալավ, քցեցի կյետը, քշեց տարավ»:

Աստվածանից իրեք խնձո̈ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 32.ՇԱՀԲԱԶ ԹԱՔԱՎԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին Շահբազ: Էս Շահբազս տո̈ւս ա եկալ քյինացալ ման կյալ: Մին ճղացպանի ախճիգյ ա տըեսալ շատ նախշուն: Էս Շահբազս մթկումը տիրալ ա, վըեր էն ախճիգյը օզի: Քյինա̈ցալ ա տոն, մին մարթ ղըկալ, թա. «Քյինա̈ փլան ճղացպանին ախճկանը սաի. «Շահբազը քյեզ օզում ա»: Էս մարթը քյինացալ ա ասալ: Էս ախճիգյն ասալ ա. «Քյինա սաի՝ մին փեշակ սըվերի, կյամ»: Էս մարթը քյինացալ ա ասալ: Էս Շահբազն ասալ ա. «Ես թաքավեր, հինչ ըմ ա՞նում փեշակը»: Էս մարթը քյինացալ ա էս ախճկանն ասալ: Էս ախճիգյն էլ ասալ ա. «Մինչև վըեր փեշակ չի սըվերի,

կյա̀լ չըմ»: Էս մարթը քյինացալ ա Շահբազին ասալ, էս Շահբազն էլ ասալ ա. «Հինչ վըեր ասի, սըվերելու վըմ, թա̀քյ ինձ կյա̀»: Էս Շահբազը մարթ ա ղրկալ, թա քյինա̀ ասի. «Քյեչա կտրողի շագյերդ նի մտնեմ»: Քյինացալ ա ասալ, էս ախճիգյն ասալ ա. «Հինչ փեշակ օզում ա սըվերի, թա̀քյ փեշակ ինի»: Էս մարթը եկալ ա ասալ: Էս Շահբազըս էլ սըվերելիցը ետնան հըրսանիք ա ըրալ, տարար:

Մին վախտ էս Շահբազը տարվիշի շորեր ա կյեցալ, քյինացալ տըեսնա ո̀ւրա̀ն տիրա̀ծ մա̀զա̀նտա̀վն ը՞ն զատ ծախում, թա չէ: Էս Շահբազը քյինացալ ա մին քյա̀լլա̀բա̀զի տո̀ւքյա̀նի քշտի նստալ, թա. «Քյա̀լլա̀փաչան քանի ը՞ս տալիս»: Թա. «Մին շա̀հի»: Ասալ ա. «Մին աման ածի»: Քյա̀լլա̀բա̀զնեն ասալ ըն. «Եկ մեչ ղոլ»: Քյինացալ ա: Փռնալ ըն, քցա̀լ մին խոր մաղազա, թա մորթեն: Էս քյա̀լլա̀բա̀զնեն էլ օրամեչ մին մարթ ըն իլա̀լ ըսպանում: Էս Շահբազը ղաչանք ա ըրալ, թա. «Քմատաղ, ինձ ըսպանիլ միքյ, ես քյեչա կտրող ըմ, լա̀վ քյեչա կկտրեմ, կըտանեքյ Շահբազին յրա ծախեքյ, ծեզ շատ փող կըտա»:

Ետնան էտ քյա̀լլա̀բա̀զնեն շատ պո̀ւրթ ըն առալ, էտ Շահբազին ըն տըվալ, թա. «Քյեչա կտրի, տանենքյ Շահբազին երա ծախենքյ» : Ետնան էս Շահբազին կնեգյը վըեր տըեսալ ա Շահբազը եկավ ոչ, զյիդացալ ա, վըեր կլո̀խը պա̀ն ա եկալ: Ինքյը մին փարտա յա քցա̀լ, քմակին նստալ, դուվաննե կտրալ: Ետնան էս Շահբազս քյեչա յա կտրալ հու քյեչին դրաղին էլ կյիրալ, թա. «Ես՝ Շահբազըս, հեն ըմ փլան քյա̀լլա̀բա̀զին դո̀ւքյա̀նին խոր մաղազումը, ղոշուն կապեցեքյ, եկեքյ քյա̀լլա̀բա̀զին կապոտեցեքյ, ինձ էլ տո̀ւս պերիքյ»: Ետնան տվալ ա էս քյա̀լլա̀բա̀զին, թա տար Շահբազին կնգանը յրա ծախի, նա շատ փող կըտա: Ետնան էս քյա̀լլա̀բա̀զը տարալ ա Շահբազին կնգանը յրա ծախալ:

Ետնան էս կնեգյը տըեսալ ա, վըեր քյեչին դրաղին կյրած, կարթալ ա, տըեսալ կյիրած, թա. «Ես՝ Շահբազըս հեն ըմ փլան քյա̀լլա̀բա̀զին դո̀ւքյա̀նին խոր մաղազումը, ղոշուն կապեցեքյ, եկեքյ քյա̀լլա̀բա̀զին կպոտեցեքյ, ինձ էլ տո̀ւս պերեքյ»: Ետնան էս կնեգյը ղոշուն ա վըհաքալ, քյինացալ ըն քյա̀լլա̀բա̀զին կպոտալ, ետնան Շահբազին տո̀ւս պերա̀լ: Ետնան քյա̀լլա̀բա̀զին էլ ծիյան վըեռան կապալ ըն, քաշքաշ ըրալ ըսպանալ:

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 33.ՄՈԼԼԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին մոլլա։ Էս մոլլաս վար անող ա իլա̀լ։ Մին օր սա̀սա̀վ նամազ անելիս տեղը կնեգյն ասալ ա. «Մին քյինամ տըեսնամ էն հինչ ա աղոթկ անում»։ Քյինացալ ա տըեսալ, վըեր ասում ա թա. «Տեր աստված, ինձ սատանային փորցանքիցն ազատի, տու ինձ փորցանքի մեչ մի քցիլ», հու ըստըհենց շատ զատեր ա ասալ։ Կնեգյը ետ ա տառալ, ասալ, թա. «Բա խե ասում չը՞ ս՝ կնզան փորցանքից էլ ազատի»։ Թա. «Խե կնեգյը հինչ ա՞, վըեր ըտըհենց ասեմ»։ Կնեգյն ասալ ա. «Հինչ վըերի յա, ես քյեզ ասում ըմ՝ տու ասի»։ Մոլլան ասալ ա, թա. «Ասիլ չըմ»։ Նա ասալ ա, թա. «Ասի»։ Նա ասալ ա, թա. «Ասիլ չըմ»։ Ախրը կնեգյն ասալ ա, թա. «Ասի կնզան փորցանքից էլ ազատի, թա չինա կիլոխտ շատ պա̀ն կըկյա։ Մոլլան ասալ ա, թա. «Թաքչա աստված՛ չի ինձ փորցանքի մեչ քցի, կնեգյը ինձ հի՞նչ ա անելու»։ Կնեգյն ասալ ա, թա. «Ասում չը՞ս»։ Թա. «Չէ»։ Ասալ ա թա. «Լա̀վ», հու անց կացալ քյինացալ։

Մին վախտ ծո̀ւկուն ըն պիրալ, վըեր շեներքումը ծախեն։ Էս կնեգյս քյինացալ ա մին յալլուխ քյիմի առալ, տարալ վըերտեղ վըեր մոլլան վար անում ա իլա̀լ, տափեն շաղ տվալ։ Մոլլան քյինացալ ա թա տափը վարի, կեռը քիցալ ա թա տափը ճղի, ծո̀ւկները իրես ա տո̀ւս եկալ. ծո̀ւկո̀ւնը հվաքալ ա, պիրալ տվալ կնզանը, թա. «Սօրի վարումը ծո̀ւկո̀ւն ըմ քիթա̀լ, ինք առ իփի, վըեր ըսօր՝ ղոնաղ ըմ պիրելու»։ Նա էլ ասալ ա, թա. «Լա̀վ»։ Քյինացալ ա ղոնաղը պիրալ, եկալ կնզանը ասալ, թա. «Դե ծո̀ւկնը պիր»։ Նա էլ ասալ ա, թա. «էլ կա ոչ»։ Էս մոլլան փռնալ ա կնզանը թակալ։ Նա էլ տո̀ւս ա եկալ տռանը ճղճղացալ հու ո̀ւրա̀ն հա̀րա̀նց տոնը՝ վըեր մոտիկ ա իլա̀լ. էս կնզանը ախպերքը եկալ ըն մոլլին փըռնալ, մին բոլամա թակալ հա տարալ սթունան կապալ, վըեր էքսյը տանեն ո̀ւրա̀նց ղազուն առզ անեն։

Ղազին էլ էն քանի օրերը հրաման տված ա իլա̀լ, որ հինչ թորք վըեր ո̀ւրա̀ն կնզանը թակի, ընդրա ըսպանելու վըն։ Կնեգյը տանիցը տո̀ւս ա եկալ, եկալ մոլլան՝ վըեր կապած ա իլա̀լ, ընդրա կոշտը հու ասալ, թա. «Վըեր ասում ըմ թա ասի նամազումըտ կնզան փորցանքից էլ ազադի, տու խե չը՞ս ասում»։ Էս մոլլան ըստրա ոներն ա ընգյա̀լ հու ասալ. «Քմատաղ, ճանըս քմատաղ, օրաս տենը կասեմ, թա̀քչա̀ ինձ պա̀ց թողես»։ Ըստրա պա̀ց ա թողալ, մոլլան էլ աման նամազ անելիս, տեղը ասում ա իլա̀լ, թա. «Ինձ կնզան փորցանքից էլ ազատի»։

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՛ չիլսողին։

## 34.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԿՆԳԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին թաքավեր: Էս թաքավերս մին հետ ո՛ւրա՛ն կնգանավը, նազիրավը քյինում ա իլա՛լ ման կյա՛լ: Էս թաքավերին կնեգյն էլ ետ ինգյա՛ծ ա իլա՛լ: Էս թաքավերիս կնեգյը ծիյանը տո՛ւս կռացալ ա տափան մին նըռնի գյիլա եր կալալ, կերալ: Էս թաքավերը կնգանն ասալ ա. «Տո՛ւ թաքավերի կնեգյ, խե՞ կռացիր տափան էն նըռնին գյիլան եր կալիլ կերիր, վըեր օրը մեր տոն հարուր պեռնը նոռնըն ա կյա՛լիս»: Ետնան էս թաքավերը տա՛նա՛կը կոխալ ա սերտը, ճղալ, տըեսալ էն նըռնին գյիլան փորին խոխին պրա՛նումը: Էս թաքավերս ետնան ըստեղ ըստուծու ըղաչանք ա ըրալ, մեղա յա եկալ:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինկյնի. Մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

## 35.ՓՈՐԸՄՆԱ ՃՈԽՏԱԿ ԸՐԱԽՈՐՑԸ ԻԼԱ՛Ծ ՀԱՔՅԱԹԸ

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին կնեգյ: Էս կնգանը մարթն էլ մըեռած ա իլա՛լ: Էս կնեգյը մին ճոխտակ տղա յա պիրալ: Համ էլ շատ քյա՛սիբ ա իլա՛լ: Կափըռել հրեշտակը աստված ղըկալ ա. թա, «Քյինա՛ էն կնգանը հոքին պիր»: Հրեշտակը քյինացալ ա տռնավը նի մըտալ, տըեսալ շատ քյա՛սիբ ըն հու ճոխտակ ըրախան էլ պիրա՛ծ: Վըեր էս տըեսալ ա, ղիմիշ չըրալ հոքին առնի, ետ ա տառալ Կափըռել հրեշտակը, քյինացալ աստծու կուշտը: Աստված ասալ ա. «Բա խե՞ չի պիրիր»: Կափըռել հրեշտակն ասալ ա. «Քյինացալ ի, տռնավը նի մտի, տըեսնամ շատ քյա՛սիբ հու ճոխտակ ըրախան էլ պիրա՛ծ, տրա հետի պիրի ոչ»: Աստված ասալ ա. «Տո՛ւ աստուծու պա՛նը կարող չըս քըննես, քյինա՛ հոքին պիր»: Նա էլ քյինացալ ա հոքին առալ, պիրալ: Վախտավ էս ճոխտակ ըրախորցը մինը մին քաղաքի յըրա յա թաքավեր նստալ, մինը՝ մին քաղաքի: Աստված Կափըռել հրեշտակին ասալ ա, թա. «Տեսի՞ր, վըեր ասում ըմ աստուծու պանը կարող չըս քըննե՞ս»:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինկյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

36.ՍԸՏԱՆԻՆ ՀՈՒ ԿՆԳԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլ՝ա՛լ ա՛ չի լա՛լ մին կնեգյ, մին էլ մին սըտանա: Էս սըտանան էս կնգանս ասալ ա թա. «Ես կիննեմ ղոչա՞ղ, թա տո՛ւ»: Էս կնեգյն ասալ ա. «Ես»: Սըտանան էլ ասալ ա թա, «Ես»: Էս կնեգյս ասալ ա թա, «Վըեր տըհենց ա, աման վախտ տու էլ ինսանի շորեր կյեց, ես էլ, տո՛ւս կյանք բազար, տըեսնանք հո՞ւ շատ ա՛րո՛ւն կանե»: Թա. «Ընդե հա»:

Ինսանի շորեր ըն կյեցալ, սըտանան բազարին էն կլխավն ա 124իմ տալ, կնեգյը էն մին կլխավը: Էս կնեգյս քյինացալ ա մին ներկարարի դո՛ւքյան, ներկարարին ասալ.«Թյիլ օնեմ, քյինալու վըմ պիրեմ, հուցը վեր ներկես, տըեսնամ ներկտ լա՛վ ա՞»: Ծերքը կարասին մեչն ա կոխալ, ներկոտ ըրալ, քյինացալ էն ներկարարին տոնը, կնգանն ասալ, թա, «Ծեծտ պա՛ց, տեսնամ հո՞ւնց ա»: Նա ծեծը պա՛ցա՛լ ա, բիրտան ծերքը սրտին ա ճխտալ, քյինացալ ա ներկարարին ասալ, թա. «Կնեկյտ օրիշ ներկարարի նհետ ա ինգյա՛լ»: Էս ներկարարը ասալ ա. «Պա հինչ ը՞ս գյո՛ւտո՛ւմ»: Թա. «Դե քյինա տես, հեն ա վըեր ծըերքը տրա՛լ ա սրտին, մա՛հլո՛ւմ ա»:

Էս ներկարարը եր ա կացալ, քյինացալ ո՛ւրա՛ն  կնգանը ըսպանալ: Էս կնգանը հա՛րա՛նց տոնն էլ մոտիկ ա իլա՛լ. էս կնգանն ախպերն էլ եկալ ա ներկարարին ըսպանալ: Ներկարարին ախպերն էլ եկալ ա կնգանը ախպորը ըսպանալ. կնգանը էն մին ախպերն էլ եկալ ա ներկարարին ախպորը ըսպանալ:

Ետնան էս կռեվ քցող կնեգյը քյինացալ ա տըեսալ սըտանան հալա նոր ա օզում կոռ քցի: Ասալ ա. «Սըտանա, հինչ ը՞ս անում»: Թա. «Հես ա նոր ըմ կոռ քո՛ւցո՛ւմ»: Թա. «Դե մին եկ քյինանք տես քա՞նի մեյիդ կա վեր տա՛ռած, է՛»: Սըտանան մնացալ ա սուս կացած:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

## 37.ՔԱՉԱԼԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին քաչալ։ Էս քաչալս էլ շատ քյա̀սիբ ա իլա̀լ հու աման քշեր քյինում ա իլա̀լ թաքավերին խազնան կյուղանում, պիրո̀ւմ խարջում։ Մին վախտ ըստրա դային եկալ ա ըղաչանք ըրալ, թա. «Ինձ էլ տար, մունք էլ ընք քյասիբ»։ Քաչալն էլ եր ա կալալ, քյինա̀ցալ տըեսալ մին չինա̀րի, չինա̀րուն պտկին էլ մին դուշի պո̀ւն։

Դային ասալ ա. «Քաչալ, թա վըեր տու հունց եր ինես քյինաս դուշը վեր պիրես ինձ նշանց տաս հու մին էլ տանես տեղը տինես՝ մարին զլիդա ոչ, բաս տու ինձանից ղոչաղ ըս ինելու»։ Էս քաչալս եր ա իլա̀լ վեր պիրա̀լ, շհանց տվալ հու տարալ տիրա̀լ տեղը՝ առանց մարն իմացնելի, դային ասալ ա. «Բաս տո̀ւ ինձանից ղոչաղ ըս ինելու»։

Քյինացալ ըն մին էրկու դո̀նո̀ւմ կյուղացալ։ Վըեր կյուղացալ ըն թաքավերին խազնան, մին օրիշ թաքավեր կյիրալ ա թա. «Դե վըեր տու քու կյոդըտ քիթնում չըս, բաս տու ախճիգյ ըս»։

Էս թաքավերը պիրալ ա խազնին ըռաչին մին վեց կազ խոր հոր կտրալ, կուպրավ լցալ, իրեսավն էլ մոխուր շաղ տըվալ։

Մին քշեր քյնում ըն թա վըեր կյուղանան, դային ասում ա, թա. «Առաչ ես առաչ կընգինեմ»։ Լիհա̀ վըեր առաչ ա իեգյալ, բիրդան ոննը տիրալ ա մոխրին յրա, մինչև վեգը խրվալ ա։ Քաչալը դայուն կիլօխը կտրալ ա, տիրա̀լ խուրջինումը, եր կալալ, քյինացալ։

Էքյսը ճառչին ճառլամիշ ա իլա̀լ, թա. «Հա́յ, թաքավերին կուպրի կարասումը մին մարթ ընք քիթալ, տարը հու՞ վա, տո̀ւս կյա»։ Ոչ մին մարթ էլ խոսացալ չի։ Մեյիդը տարալ ըն մին տո̀ւզո̀ւմ վեր քիցալ, տասսը սալդաթ տիրալ յրան, թա. «Հու վըեր վըեր տարություն անի՝ կյոդը նա յա»։ Քաչալն էլ ասալ ա, թա. «Ես հունց ա՞նեմ, հունց չա՞նեմ»։ Ախրը տարալ ա մին վեց կոժ կյինի խմըցըրալ սալդաթներին, հարփեցրալ, ետնան մեյիդը եր կալալ, տարալ թաղալ։

Էքյսը ճառչին ճառլամիշ ա իլա̀լ, թա. «Դե քիթած մարթը կորալ ա, հու գյիտում ա տեղը, ասի»։ Էս քաչալըն էլ եր ա կացալ քյինացալ մին օրիշ թաքավերոթուն, ընդեղ թաքավերին ասալ, թա. «Ինձ հի՞նչ կըտաս, վըեր էն թաքավերին սանդուղում տիրած առաչտ պիրեմ»։ Ասալ ա, թա. «Թաքավերոթյունիս կեսը քյեզ կըտամ»։ Քաչալն ասալ ա, թա. «Դե մին քսան մանեթ փող տո»։ Քսան մանեթը տվալ ա։ Եր ա կալալ տարալ մին ալանի մորթի

առալ հու շատ զնկոլակնե կախ տվալ, մին էլ մին փափաղ առալ, մինչև օսերը նի քաշալ, զնկոլակներան մին քանինը փափաղիցը կախ տվալ հու աչկերին, պերանին տեղը ծակ թողալ։ Ետնան մին էլ հանալ, տիրալ կոնըտակին, քյինացալ։

Մին քշեր շորերը կյեցալ ա, քյինացա լթաքավերին օթաղը, վըեր բրդան ӫւրա̈ն թփըհարալ ա, զնկզնկցրալ, թաքավերը եր ա կացալ, ասալ ա. «էտ հու վը՞ս»։ Խոսացալ չի։ Մին էլ ա զնկզընկցրալ։ Մին էլ ա ասալ, թա. «Դե էտ հու վը՞ս»։ Հելա խոսացալ չի, զնկզնկցրալ ա։ Մին էլ ա ասալ, թա. «Դե տու հու վը՞ս»։ Ասալ ա. «Ես Կափռիել հրեշտակն ըմ, եկալ ըմ հոքիտ առնեմ»։ Թաքավերը ասալ ա, թա. «Քմատաղ, ճանս քմատաղ, իրեք օր մӫհլա̈թ տո»։ Ասալ ա. «Լա̈վ», հու քյինացալ։

Իրեք օր կացալ ա, իրեքինջի քշերը եկալ ա էլհա զնկզնկցրալ։ Եր ա կացալ թաքավերը, ասալ թա. «Եկալ ը՞ս»։ Թա. «Հա, եր կաց նի մըտ սանդուղիտ մեչը»։ Անխոս եր ա կացալ, նի մտալ սանդուղին մեչը, քաչալն էլ ասալ ա. «Վըեր տանեմ աստուծո կոշտը հու ասեմ թա էշի նման զռա՝ էն սհաթը զռա, վըեր պալքյի աստված մեխկիտ թողություն տա։ Հըղցին էլ վըեր խոսըցընեն, խոսես ոչ հա՛»։ Սանդուղը քըլալ ա, պիլանին տիրա̈լ ջուբումը հու շլա̈կալ, քյինացալ։ Էքյսը ճառչին ճառլամիշ ա իլա̈լ, թա. «Դե հա՛յ, թաքավերը կորալ ա»։ Թաքավերին սանդուղն էլ ճնա̈նչӫւմ ըն իլա̈լ։ Եկալ ըն տըեսալ քաչալին առին, ամմա ӫւրա̈նք ӫւրա̈նց ասալ ըն թա. «Ը՛հ, էս ա՞ կյուղանալու թաքավերին», հու անց կացալ քյինացալ։ Էս ըսելան ետը եր ա կալալ, քյինացալ էս թաքավերին քշտին վեր տիրալ։ Քաչալն ասալ ա, թա. «էշի նման զռա»։Զռացալ ա։ Ետնան սանդուղը պա̈ցալ ա, էն մին թաքավերը ասալ ա. «էս քու կյողտ, էտ քեզ պիրողյը», հու մին լա̈չակ քցալ կլխին, ասալ թա. «Բաս տու ախճիգյ ըս, որ տու քու կյողըտ քթնում չըս»

Աստվածանից իրեք խնձӧր վեր ինգյնի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՛ չիլսողին։

## 38.ՄՈԼԼԻՆ ՀՈՒ ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին քաղաք: Էս քաղաքիս մեջին էլ իլա̀լ ա̀ մին մոլլա, մին էլ մին տերտեր: Էս մոլլան հու տերտերը ճանապար քյինալիս վախտը մին քչեղակ եկալ ա չըրթչըրթացալ: Էս տերտերը ասալ ա, «Ջա՛ն, ջա՛ն»: Ետնան մին ակռավ էլ ա եկալ կըկղացալ, տերտերը ասալ ա. «Չո՛ռ, չո՛ռ»: Մոլլան էս վըեր տըեսալ ա, տերտերիցը հըցրալ ա, թա. «Խե յը՞ս ընդրա ջան ասում, ընդրա էլ չոռ»: Տերտերն էլ ասալ ա. «Ընդրա միար ըմ ասում քչեղակեն ջան, որ նա լա̀վ կա̀րթում ա, ամմա ակռավը կըկղում ա, վըեր մարթի զա̀հլա̀ յա տանում»: Մոլլան ասալ ա. «Ըղըհենց չի, քչեղակը վըեր չըրթչըրթում ա, ասում ա թա մոլլա, էտ ա տերտերին ջուբումը օխտը մանեթ կա, ըսպանի, ինքյ կալ, ամմա ակռավն ասում ա՝ սոտ ա, սոտ ա»: Տերտերը մոլլին ասալ ա. «Իմաստուն ը՞ս», մոլլան ասալա. «Հա՛»:

Էս ասելիցը ետնան էրկու յըն պաժանվալ, տերտերը քյինացալ ա մին թաքավերի քաղաք, մոլլան էլ մին օրիշ տեղ ա քյինացալ: Տերտերը քաղաքին միչին իլա̀ծ վախտը ըսկացալ ա, թա թաքավերը իմաստունի յա ման կյամ, քյինացալ ա թաքավերին ասալ. «Ես մին իմաստունի տեղ ըմ զյիդում, հի՞նչ կտաս, վըեր ասեմ»: Թաքավերն ասալ ա. «Հինչու քիթնի, կեսը քյեզ»: Ետնան տերտերը մոլլին տեղը ասալ ա, թաքավերն էլ զարկիլ ա տվալ, վըեր պիրեն:

Քյինացալ ըն մոլլին պիրալ թաքավերին կոշտը: Թաքավերն էլ մոլլին ասալ ա. «Իմ պապ փողերը կքաղալ ա, իմաստուն ըս, ասի տըեսնամ հի՞շտեղ ա»: Մոլլան ասալ ա. «Հիշտ ա, ամմա մին տավար, մին էծ, մին ոչխար հու օրիշ զատ էլ տալ պիտիս»: Թաքավերն էլ տվալ ա: Ետնան նահանց տարալ ա մին ծառի տակի մորթալ հու ինքն էլ քշտին մին փոս կտրալ հու նի մտալ մեչը: Տըեսալ ա վըեր էս ա շատ դուշ եկին, ամմա մեչին մին պառավ հու գուռգոռ ակռավ կար: Էս լեշը ստելիցը ետնան էս պառավ ակռավս ասալ ա. «Մին ժամ էլ մին թաքավերի վաղի կերինք, էն էլ ար լա̀վ ժամ, վըեր թաքավերը փողը պիրավ կյաղեց հու ընդեղ էշերը ըստըկոտեցին, քյինացինք կերինք»: Մեկալ դուշերը ասալ ըն. «Շտեղ ա՞, շհանց տո»: Էս ակռավն էլ թռալ ա, քյինացալ փողին կլխին կաղնալ, կըկղացալ: Մոլլան վըեր տըեսալ ա, քյինացալ ա թաքավերին ասալ:

Թաքավերն էլ էն տափը քանդիլ ա տվալ հու փողը տո̀ւս տվալ: Ետնան մոլլին ասալ ա. «Ինձանից հինչ կօ՞զես»:

Մոլլան էլ ասալ ա. «Քյեզանից մին զատ չըմ օզել, մենակ տերտերը»:

Թաքավերն էլ տերտերը տվալ ա մոլլին: Մոլլան էլ տերտերին կիլոխը կտրալ ա հու տիրալ մին քշըռքի թայում, ետնան լոխ փողերը տիրալ էն մին թայումը հու քշըռալ, տըեսալ, վըեր կիլոխը ծանըր ա: Ետնան սաղ փողերը վեր ա ածալ հու մին հափուռ հող ածալ քշեռքը, քըշըռալ, տըեսալ վըեր հողը ծանըր ա[1]:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չի լսողին:

## 39.ԹՈ̀ՄԲՈ̀Լ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլո̀լ ո̀ չի լո̀լ մին կնեգյ: Էս կնգանս էլ իլո̀լ ո̀ մին թո̀մբո̀լ ախճիգյ: Տո̀ւս ա պերալ կտրին նստըցըրալ, վըեր մին մարթ տըեսնա: Մին սովտաքյո̀ր եկալ ա, թա ընդեղավ անց կենա: Էս կնեգյա ախճկանն ասալ ա. «Լիտրը մանի, լիտրը կյիզի քըվորանց ետ քարկահ անի, նանը քմատաղ, արի տուն»: Էս սովտաքյո̀րը, վըեր էս ըսկացալ ա, քյինացալ ա էս կնգանը տոնը, թա. «Ախճիգյըտ օզում ըմ, կըտա՞ս»: Էս կնեգյն էլ ասալ ա. «Հա»: Ետնան օզալ ա, տարալ: Ետնան էս սովտաքյո̀րը քյինացալ ա մին քսան փութ պեմբո̀կ առալ, պերալ, թա. «Ա՛ կնեգյ, էտ մանի, կյիզի, ես էլ քյինում ըմ մին քսան օրան վո̀ղի»: Ետնան էս կնեգյը չխարակը վեր ա տիրո̀լ, շփոթ ըրալ, ածալ օսերին, ըստեղան-ընդեղան լպըզտալ, չխարակը մանալ:

Ետնան էս սըտանին թաքավերին տղան նաչաղ ար, պոկն էլ օռած, բարդան կտրած: Ման կյո̀լավ պերալ ին ընդեղ: Էս նաչաղ տղան վըեր էս տըեսալ ա, ծիծաղալ ա, պոկն էլ պըծալ ա: Եր ըն կալալ տարալ սըտանին թաքավերին կոշտը, ասալ ա. «Քյինացեքյ էն կնգանը պերեքյ»: Քյինացալ ըն պերո̀լ: Էս սըտանին թաքավերն ասալ ա. «Ինձանից հի՞նչ կօզես՝ տամ»: թա. «Զատ չըմ օզում»: Թա. «էլհա՞»: Ասալ ա. «Քյզանից մին զատ չըմ օզում, ամմա ինձ մին քսան փութ պեմբակ օնեմ, մանի, կյիզի, ինձ տոք»: Ետնան էս սըտանեքյը յրա յա ըրալ, մանալ ըն, կյիզալ, մին սըհաթում օթաղներում կյո̀ւտալ: Վըեր քսան օրը թմամալա, մարթին կյո̀լի վախտն ա իլո̀լ, եր ա կացալ օթաղը սըփո̀լ, բուխարին վառալ, խալիչեքյը քցո̀լ, մին վըեթես էլ պերալ բուխարուն ըղաքին խալիչին յրա տըրո̀լ: Էտ վըեթեսը թուլուլ ա

[1] *Այս տողերին հաջորդում է բանասացի հետևյալ բացատրությունը, որ բանահավաքը պահել է հեքիաթի բնագրի մեջ:*
*«Էս հաքյաթն էլ առակ ա վեր պիրած ագահ մարթի երա, որ ինչքան փող տաս, աչկը ծակ կինի, մենակ ետավ մին հափուռ հողի լայեղ կինի»:*

ինկյա̀լ տափը: Էլհա տիրա̀լ ա խալիչին յրա: Էլհա թուլուլ ա ինկյա̀լ տափը: Եր ա կալալ տիրա̀լ խալիչին յրա: Ետնան մարթը եկալ ա, տըեսալ մանած-կյիզած, ուրխացալ ա: Տըեսալ ա վըեր մին վըեթես էլ տըրա̀լ ա խալիչին յրա, թուլուլ ա ինկյնում տափը: Հրցրալ ա, թա. «Էտ քու հինչըտ ա՞, վըեր թուլուլ ա ինկյնում տափը, տինում ըս խալիչին յրա»: Ասալ ա. «Էս իմ մրաքուր ա, ինչանք պա̀ն ա ըրալ, վըեթես ա տա̀ռալ»: Ասալ ա, «Տու պա̀ն չանես»:

Աստվածանից իրեք խնձո̀ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին[1]:

Հաքյաթ, հաքյաթ, մին չըվալ ցակատ,
Ոչ կօթ օնի, ոչ արկաթ:
Ճղացին գլխին օխտը գյո̀ւլ,
Օխտը գյո̀ւլին մին բո̀ւլբո̀ւլ:
Հաաա՛ն, Հաաա՛ն, տոռնը բաց,
Փատրլի մասրան, տոռնը բաց:
Մին հավ օնենքյ կրչկրչոց:
Մին ծու կածի, լոխ տղնո̀ց,
Պապը կոտի քյինա̀ հունձ,
Կըպերի մին չալ-չալ կլոնձ:
Մուխակյը մեչան կցի հա̀զ անի,
Մարիանը գլխան կցի, տազ անի,
Կոստին տական կցի, տախտին տակին տազ անի:

[1] *Բանահավաքը վերջում կցել է հեքիաթներին հատուկ չափածո նախաբանը, որը նույնությամբ պահել ենք (Ծ. Կ.):*

## 40.ԹԱՔԱՎԵՐԻՆ ՏՂԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին թաքավեր։ Էս թաքավերիս էլ իլա̀լ ա̀ մին տղա, էս տղին էլ շատ լոթի հնկերներ ա իլա̀լ։ Էս տղան աման վախտ էս լոթուցը նրհետ քյեփ անում ա իլա̀լ։ Էս թաքավերը մին օթաղ ա շինիլ տըվալ, մեչը փողավ լցալ, տռնան էլ մին քյա̀նդիր կապալ, տարալ ո̀ւրա̀ն օթաղան կախ տըվալ։ Ետնան տղին ասալ ա. «Ա՛ տղա, վըեր ես մըեռնեմ հու տու էլ իմ դո̀վլա̀թըս լոխ փըչըցընես, օզես վըեր խեխտըվես, եկ էս քյանդիրավը խեխտվի»։ Էս քյա̀նդիրին յըան էլ մին ծակ ա թողա̀ծ իլա̀լ, վըեր ընտրանավ խեխտվի։

Մին քանի վախտից ետնան էս տղին հա̀րը մըեռալ ա։ Էս տըղան էլ թաքավերին փողերը լոխ ցրն ա տըվալ, քյա̀սիբացալ ըն։ Մարը թիլ ա մանալ, տարալ ա ծախալ, փողը տըվալ ըն հացի, կերալ։ Ըստրանց էլ մին թոխսըկան հավ ա իլա̀լ, էս տղան ասալ ա. «Ա՛յան, էս թոխսըկանը ինձ տոք, տանեմ իմ հնկերունցըս նըհետ քյեփ անեմ»։ Նա էլ տըվալ ա, տարալ ա բաղին տարվազան թակալ, թակալ, պա̀ցալ չըն։ Թոխսըկանը տիրվազումն ա տիրա̀լ, ինքյը եր իլա̀լ տարվազին գլխավը տոռնը պա̀ցալ, տըեսալ թոխսը-կանը չաղալ տարած։ Քյինա̀ցալ ա հնկերներին ասալ. «Ա՛դա, ծեր վեզը աստված չի կոտրի, միեկյիս մին հավի պիրում թա քյեփ անենքյ, մին չաղալ եկավ տարավ»։ Ետնան էս տղան քյինացա̀լ ա, թա խեխտըվի էն քյա̀նդիրավը, բիրդան էն փողեն տոռնը պա̀ցվալ ա, փողերը վեր ա տա̀ռալ։

Ետնան էս տղան ուրխացալ ա։ Ետնան էս տղին լոթի հնկերները էս տղին ասալ ըն. «Հեն ա փլան պատումը մին սանտուղ կա»։ Ետնան էս տղան քյինացալ ա հանալ, տըեսալ մեչին մին քսակ, մին զուռնա, մին փափաղ։ Քսակը եր ա կալալ մեչը հող ածալ վըեսկի յա տա̀ռալ, զուռնան փիչա̀լ ա՝ տըեսալ ա սաղ աշխարքը դուշունավ լցավ, փափաղն էլ տիրա̀լ ա գլխին, թա, «Ա՛յան, ըրվըմ ը՞մ»։ Ասալ ա. «Չէ»։ Ետնան ասալ ա. «Քյինա̀լու վըմ մին ախճիգյ օզեմ»։ Գլո̀ւխ ա եր կալալ, քյինացալ մին թաքավերի տոն, ընդեղ ըստրանց ախճիգյը քոն ա իլա̀լ, էս տղան քյինա̀ցալ ա իրեսան պաչալ։ Մին էլ էքյսը քշերն ա քյինացալ իրեսան պաչալ, էս ախճիգյը էքյսը թաքավերին ասալ ա, թա, «Թաքավեր, մին նա̀զիր-վա̀զիրներին թակի, վըեր էլ ըտըհենց ք... չի օտեն»։ Թաքավերն էլ փռնալ ա թակալ։

Մին էլ էքյսն ա քոն իլա̀լ, էլհա իրեսան պաչալ ա։ Ախրը էս ախճիգյը ձիձիկնը կտրալ ա յրան աղ ըրալ, վըեր հեռիցը իսկի քոնը տարալ չի։ Մին էլ ա տըեսալ մին մարթ եկավ, թա պաչի։ Էս ախճիգյը օզացալ ա, թա փռնի,

ծեռքը փափաղին նի յա եկալ, վեր ա ինգյա̈լ, բիրդան փռնալ ա: Թաքավերին կանչալ ա, թաքավերն էլ եր ա կացալ փռնալ թակալ, փափաղն էլ ծեռքան ինքյ կալալ, տանիցը տո̈ւս քցա̈լ: Էս տղան էլ քյինա̈ցալ ա զուռնան եր կալալ, քյինացալ թաքավերին տռանը փչա̈լ սաղ աշխարքը դուշունավ լցալ ա:

Էս թաքավերը ղանչանք ա ըրալ, թա դուշունին ասի քյինա̈ն, փափաղըտ քյեզ տանք: Զուռնան թա̈րս ա փիչա̈լ, դուշունը քյինացալ ըն: Ետնան քյինացալ ա թա. «Փափաղըս տըք»: Թաքավերը փռնալ ա թակալ, զուռնան էլ ինքյ կալալ, պա̈ց թողալ: Էս տղան ասալ ա. «Վըեր քյինամ տոն, իմար կասի զատերըտ հոր ա՞»: Ըստրա հետի զլո̈խ ա եր կալալ, քյինա̈ցալ մին բաղի տռնավ նի մտալ, բաղվանչուցը հրցրալ, թա. «Ծառին բարը հինչ ա՞»: Բաղվանչին էլ ասալ ա. «Էս խաղուղ ա, էն էլ խնձո̈ր»: Ասալ ա. «Խաղուղը վըեր օտեն հինչ կտա̈ռնան»: Թա. «էշ»: Ասալ ա. «Վըեր էս խնձո̈՞րն օտեն, հի՞նչ կտա̈ռնան»: Թա.«Որ էշ տա̈ռնան, օտողները կըսըղանան»: Էս խաղուղիցը մին քանի գյիրվանքա առալ ա, տարալ էն թաքավերին տանը ըղաքավը «Ա՜յ լա̈վ խաղուղ առնող» ասելավ ման ա եկալ: Էն թաքավերին ղուլլուղչին ասալ ա. «Խանը՜մ, խա՜նըմ, հինչ լա̈վ խաղուղ ա է՜, փող տոք, տանենքյ առնենքյ: Փող ա տրվալ, տարալ ըն առալ, պերալ լոխ կերալ ըն, էշ տա̈ռալ:Էս տղան քյինացալ ա էս էշերավը էնչանք քար կրալ, վըեր լղարալ ըն, ըստկելու  հետա իսալ: Էս էշ տա̈ռածներին հաները հաքյիմի ման ա եկալ, թա. «Հու վըեր էս էշերին սըղըցրնի, հինչ օզի՝ կըտանք»: Էս տղան ասալ ա. «Իմ զուռնաս հու փափաղըս ինձ տոք, ես սըղըցընեմ»: Զուռնան, փափաղը տըվալ ա, էն խնձորիցը ամենին տըվալ ա, կերալ ըն, սըղացալ:

Ետնան էս ախճիգյը էս տղին յրա օխտը օր օխտը քշեր հրսանեքյ ըն ըրալ, ետնան եկալ ըն ո̈ւրա̈նց տոն, ո̈ւրա̈նց տանը մեծ-մեծ տներ ըն շինա̈լ, թաքավեր տա̈ռալ:

Աստվածանից իրեք խնձո̈ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չիլսողին:

41.ՄԱՆԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹ

Քյեցէ ճեղաց, ճղացպանը ըղարկից ինձ փադու: Շոռ եկէ, շոռ եկէ, փադ չի քթի, մին քյեթուկ քթի: Թխեցէ, թխեցէ՝ պուկ չը եկը, ըսեցէ. «Ա՛ յ քյեթուկ, խե՞ զալում ըս»:

Ասից. «Թա զալում ըմ, խե՞ կացենը ինձ կտրում ա»:

-Ա՛ յ կացեն, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ դնմ̀ըրչին չըքյն̀ւճավ ինձ թակում ա:

-Ա՛յ դնմ̀ըր չի, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ խե՞ աստուծ ինձ տանում ա:

-Ա՛յ ա՛ստուծ, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ թոխպը իրեսս օնում ա:

-Ա՛յ թոխպ, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ թոռը մաչավս վեր ա տեռնում:

-Ա՛յ թոռ, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ տափեն յրա ըմ տեռնում:

-Ա՛յ տափ, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ ինձ յրա խոտ ա փսնում:

-Ա՛յ խոտ, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ տավարն ինձ օտում ա:

-Ա՛յ տավար, խե՞ զալում ըս:

Թա զալում ըմ, խե՞ շոնը ինձ նիետ ա տամ:

-Ա՛յ շոն, խե՞ զալում ըս:

-Թա զալում ըմ, խե՞ պառավն ինձ թակում ա:

-Ա՛յ պառավ խե՞ զալում ըս:

- Թա զալում ըմ, խե՞ մոկնը քյն̀ւլքս կտրում ա:

-Ա՛յ մոկնը խե՞ զալում ըս:

- Թա զալում ըմ, խե՞ կատուն ինձ օտում ա:

- Ա՛յ կատու խե՞ զալում ըս:

-Համ զալում ըմ համ ծեր տաշտեն քշտեն նստում ըմ, հացն օտում ըմ, աչքտ հանում ըմ

## 42.ԹՈ̀ՒՆՈ̀ՒՆ ՊԸԵԼԻՆ

Տարվա թիվը լա̀վ մեննա չի կյամ, չորրքնջի ամսի մինն ար. աստուծ մեր շնացե Թո̀ւնի դա̀ուն մին բոլչնակ դոչ խոխա բախշից (միայն տերը չար աշկա պահե)։ Թո̀ւնի դա̀յին ըրեսուն տըրեկան տղամարթ ար, ըստըծու հղեցը յրա մին ա̀ռթար մարթ ար։ Մին բոյ օնար, մին պատկեր օնար, վըեր յըշիր խելքըտ կըքյընա̀ր, ընդրու լեն ճակատը, բըղի իրեսը կըռացած օնքերը, ըրիքյնակու մնան փլստրատե տվող աշկերը, ըրեսան կախ ըլած կյա̀մբո̀ւր խնձո̀րու մնան թոշերը, չքորանը ընգուճնեն նի հսնող բեղերը, պերակ ու կյա̀մբո̀ւր պըռըշնեն, ըռծիվու կըտոցու մնան, էրկու աշկեն մաչտեղան կախ ըլած քեթը, յըշողեն արմասկն ար պո̀ւրո̀ւմ։ Մին խոսկավ պակաս տեղ չօնար մեր Թո̀ւնի դա̀յին, վըեր ասխ՝ մին փիս պեննու խառնըվում չար, հա̀լա̀ մին մարթու յա խըխու ասած չար, թա. «Տեղտ ծոխ ա, եր կաց տըեն նստե», յա էլ թա. «Աշկետ կըլխեն օնք կա». կյըլո̀խը քաշ քըցա̀ծ ո̀ւրա̀ն հըետե ըշխադըմ ար, ո̀ւրա̀ն քըռթնընքավը մին քանե կապեկ հըվաքում, թուփ անում տըեսա̀-տըենան, հանցու մնա վըեչ ըրո̀ւշո̀ւ ծըեռքե յըշիլիս։ Թո̀ւնի դա̀յին ո̀ւրա̀ն մնանն օնար վըեչ մեր շըենումը, անըմը սիրում չար շընացունց, ո̀ւրա̀ն հընգերունցը, ընդրա մըհար, վըեր լոխ ըստըծու հըղըցան տո̀ւս եկած, ըստրա-ընդրա տոնը քնդիլավ, հացը հարամ ընելավ ըն հըպըրապած. ըտրա միար էլ մեր Թո̀ւնի դա̀յին շատ ար կզնըվալ, շըտերան խըռավալ. մին քնենին էլ աշկավ աշկը չօնար թա եշի։

Ըստըծու բախշած խուխեն օխտը օրը վըեր անց կացավ, ուրըենքյավ բեղմա կընքըվար, ամմա մեր Թո̀ւնի դա̀յին շատ մըետկ ընելանը ետը, տըեսավ վըեր ո̀ւրա̀նց շըենըմը մի հանց ըստըծու հղեցը մարթ չկա, վըեր պըելի շինի, խոխան կնքել տա։ Ինքյը-ինքյը մըետկ ընելանը ետը՝ ասում ա. «Չըէ՜, կարել չըմ խոխաս անկընոնք թողիմ. բըեղմա ըշտղա վըեր ա, յըրգյիրաս յա յըրգյինքյան մին հանց պըելի ճարիմ, վըեր վըեչ մղավրեր ինի, վը՜եչ էլ կյըղծավըեր»։

Էս ըսելանը ետը, մեր Թո̀ւնի դա̀յին էրկու պոռշ հաց ա տընո̀ւմ յըլլեխեն մաչին, կապում, մին փաղ էլ ծեռքը օնում ու հղե ըղնում։ Շատ ա քյընո̀ւմ, խրեգյ ա քյընո̀ւմ, աստուծ ա գյո̀ւղո̀ւմ, վեռչը ջըհո̀ւմ ա մին ճոթ ծըխողու։

- Տու հու վը՞ս, հի՞նչ մարթ ըս, թոռն ը՞ս քյընո̀ւմ ։

- Ես էսիինչ շընացե, էսիինչ մարթն ըմ, ըստի-ըստի պըեննու մըհար ըմ քյընում։

Մեր Թո՛Լնի դա՛յին սըերտը պեց ըրավ ու հինչ վըեր կար ասից ընդրան. ետնան էլ հըրցրուց. «Պա տո՞ւ հինչ մարթ ըս, ըխպըրացու, հի՞նչ փա՛նդո՛ւ տար ըս»:

- Ես ճոթ ծախող ըմ, խըռիդտեղա յըմ կյամ, էսհինչ շըհա՛րն ըմ քյընո՛ւմ, ամմա քու խաթրիտ հըղես կըծռիմ, մին քանի օր էլ ետ կըղնիմ. ընդրա միար վըեր ես ըմ, վըեր ես ըմ քու շոռ եկած մարթը, ընձանա լա՛վը տըժեր թա քյըթենաս:

- Չէ՛, ըխպըրերացու, իմ ապըեր մռնելիս տեղը անեսկ ա տըվալ, թա անըմը ճոթ ծախողու նըհետ պեն չփըռնիս. ճոթ ծախուղնեն պարեկամ տռնալանը ետը սլո՛Լկնու յա տըեզու մնան մարթու ա՛րո՛Լնը ծծում ըն, տռնը փըրսըվըեր շոռ տամ, խոխեքյը տռնըտռռնը քըցյո՛ւմ, ամմա ո՛Լրա՛նք տըռռըզում, կյըմբրո՛ւմ ու բա՛զյո՛Լ մնան շոռ կյամ: Չէ՛, ըխպըրացու, օզըմ չըմ, ծեռք քաշի ընձա՛նա, քու հա՛ր լո՛Լս տա՛ռնա, թող, վըեր ես իմ հըղեն քյընիմ, իմ օզած մարթը քյըթենամ:

Քյնո՛Լմ ա, քյնո՛Լմ, էս դո՛նըմ էլ ջըհում ա մին դըերու: Մեր Թո՛Լնի դա՛յին ըստրան էլ ա ասում, թա ինքյը հո՞ւ վա, թոռն ա քյընո՛Լմ, ամմա ետնան էլ դա՛ստի հղե քըցո՛ւմ:

- Ա՛ դըեր ջան, ես գյո՛Լղո՛Լմ ըմ, վըեր տուք էն մկըլունցան խժմըտանքավ ըք, հո՛Լնչո՛Լ վըեր է, լա՛վ թա փիս կընքում ըք մեր խըխոցը, թաղըմ ըք մեր մըռըլնեն... Հա՛լա՛ էսչանքը բոլ չի, ժամ էլ ըք ասում, թա հինչ ա ժողովուռթը եխծե կյա, ըստըծու հըղըցան տո՛Լս չըկյա: Ամմա հինչ կանիս, վըեր ծըզանա էլ ըմ կյընգյըտավուր, տուք էլ կարըմ չըք, թա ծեր ըրըսներեն խաչ քաշիքյ, հըռնանցե եշողը գյո՛Լղո՛Լմ ա, թա սըրտըրնետ ըք թակում:- Ժամն էլ չըք լա՛վ ասըմ, եխծե կյըվողը կարըմ չի, թա վըեննը կենա.- խոսկը մեր մաչին մնա, տուք ժամ չըք ասում հու, ժիժի պապա յըք անըմ: Հըուստեն լա՛վ ըք թաղըմ, քյըսիբին՝ փիս: Հա՛, էն մըեկալ պեները ասըմ չըմ, ընդրա միար, վըեր ժմանակ չօնիմ, շատ ըմ թայդի, էրկան հղե բեդմա քյընիմ, թա վըեր մին ծրիշ վախտ օնզատը կըղնե, մին-մին կըտաճիմ, հանցու ծեր փա՛նդերը ըշխարքես մարթիքյը լոխ հըսկանան, թա վըեր չըէ՝ չըէ:

Իրեքընջի դո՛նըմը Թո՛Լնի դա՛յին ջըհից Քյըրըստոսեն: Մըեծապատիվ կըռթացող, մեր Թո՛Լնին Քյըրըստոսեն էլ հավան չկացավ, ասից.-Չէ՛, քյըզանա էլ շնուրհակալ չըմ, ընդրա միար, վըեր տու էլ ըս ճըկըղոթուն տընո՛Լմ մարթուցը մաչին, մինին փուլ, հըրըստոթուն շատ ըս տամ, մընան

էլ՝ իրեստ հանց շոռ ըս տամ, վըեր կուտանա հըվաքելն էլ օնզատը չըղնում, տո՞ւզնը, տկլոր մըեռնում ա։

Ախըրը լոխճանը ետը, Թո՞ւնի դյ՛ային ջըհո՞ւմ ա մին հըրըշտրյ՛ակու. «Տու հու վը՞ս, հի՞նչ մարթ ըս.-հըռցնելանը ետը, ասըմ ա.- Ա՛յ, հինչ ըմ ասըմ, քյեզ հավան ըմ. ընդըրա միար, վըեր ըրըսպըշտոթունա, յա կյըղծըվըրութունա հըռռե յըս, հարուստ ու քյ՛ասիբ չըս ասըմ, լոխճին հո՞ւքյին էլ ո՞ւր՛ան վըղին կյամ ըս տանըմ, տու վըս, վըեր տու վըս իմ պըեւլին»։

Կնոնքը պըծնելանը ետը, մեր Թո՞ւնի դյ՛ային հըրըշտրյ՛ակեն նըհետ պարեկամ ա տեռնում, մին օնզատը ընգած վ՛աղ՛ա էլ հոցընում. «Պըեւլի ջան, մըհենգյ պարիկամ ընք, ծասկել մըեր ընձանա, հիբ ը՞ս կյըլական իմ հո՞ւքյիս տանիս»։ Պըեւլին ասըմ ա. «էս հինչ վախտը»։

- Չէ՛, պըեւլի ջան, էտ շատ ճըեւլլի յա.- պա էլ վըե՞ր օրվա պարիկամ ընք, մինկա էլ իվիլ վ՛աղ՛ատո, վըեր հանցու կարիմ մին խիլա էլ ապրիմ։

- Դե լ՛ավ, թող քու ասածն ընի։

Հըրիշտրյ՛ակը ըստրանա ետը թևերը թըփըհարից, թա ծըլկե երգյինքյ պըցըր՛անա, մեր Թո՞ւնի դյային փեշկան փոնից, էլըհա ղաչանք ըրավ.

- Պըեւլի ջան, պա թոռն ը՞ս քյընո՞ւմ, ինձ ըստի թողում քյըսբըթունու մաչի, ըղաչանք, պըղատանք ըմ անըմ, վըեր ինձ հըրըստոթուն էլ տաս։

- Լա՛վ, լա՛վ, ըտ էլ հիշտ ա. հիբու վըեր ծեր շըենումը ազառլու յա նաչաղ կինի, տու քյինի ընդեղ, ես էլ ըմ ընդեղ ըննական, ես մինակ քու աշկետ ըմ ըրվըլական, եշի՛, տե՛ ս, թա վըեր ես կըլխեն քըշտեն ըլի վըեննը կացած, գյիդա վըեր պըեններերը պո՞ւռթ ա, մըռնըլական ա, ետ տըեռ քյինի տոնը, ամմա վըեր վըեններեն քշտեն ընիմ վըեննը կացած՝ գյիդա, վըեր աղըննական ա, ազառլըվեն հորան յա մորան փուլ ինքյ կալ, ասե, թա ես կըռղըցընիմ ։

Էս ըսելանը ետը պըեւլին զինքյը թըփըհարից, թևերը մտակից, վըենները տափան կըտրից, մին մընուտանը ետը ծասկըվից յըրգյինքին ըրեսեն կյո՞ւտված թուխպերեն մաչին։

Թո՞ւնի դյ՛ային էրկու տռնանը ետը էս փըշակավը հըրուստացավ, խասյաթն էլ փոխից, ո՞ւր՛անց շընացուց ջ՛արգյը մըտավ, ջանն էլ էնչանք հմըրղացավ, վըեր օզից վըեչ, թա պըեւլին ո՞ւր՛ան վըղին ղոնաղ կյա, օզըմ ար չքորանը վեռչը ապրե հու ապրե.- ընդըրա միար, վըեր հրիշտրակեն նըհետ պարիկամ տռնալանը ետը քըռթնոնք ասած պենը մըննան քըցյ՛ալ ար, ո՞ւր՛ան

տանը նստած փուլը (անդար մնա) կյամ ար հո̈ւռթա̈վը նի տըեռնում ջուբը:- Մին քանի տռնանը ետը, հո̈ւքյին ինքյ ունելու վախտը մուտանում ա. Թո̈ւնի դա̈յին յըրղըն-դո̈շակ ա նի միննում, հրիշտրակն էլ ո̈ւրա̈ն վըղին կյամ ա, կըլխանը երը վըեննը կենում: Թո̈ւնի դա̈յին եշում ա, տըեսնում պըելին կըլխանը երը, էլլըհա ասըմ ա. «Չէ՛, վըեր, չըէ՛, հո̈ւքյիտ բեղմա տանիմ»:

Մեր Թո̈ւնի դա̈յին տըեսնում ա, վըեր էլ ճար չկա, դա̈ստի շոռ ա կյամ, վըեններն անում բըդի հրիշտակը, պըելին ծլկում ա կըլխեն անգյունը: Թո̈ւնի դա̈յին էլլըհա շոռ ա կյամ, վըենները տըեմ անըմ, մին օր շաղըրանի կըտըրելավ պըելուն շըղվըցնում ա, վըենն անում, հրիշտրակն էլ տըեսնում ա, վըեր կարըմ չի Թո̈ւնի դա̈յին ծ̈քյտան կյա̈, ճարը կըտրած մին քանե տարե էլ ա վա̈ղա̈ տամ, վըեր ապրե: Ինքյըն էլ տեռտակ ծեռքավ հղե յա ըղնում բըդի երգինքյ:

Էտ մին քանի տարեն էլ, վըեր անց ա կենում, Թո̈ւնի դա̈յին տըեսնըմ ա վա̈ղա̈ն էլլըհա մուտացալ ա, եր ա կենում, փախճում, եր ընըմ մին սարու պտոկ, նի միննում մին քարու ճեխկ, կյողըլը կենում, թա հինչ ա, պըելին կարե վըեչ քյըթենա:- Թա դորթ ա, դե պըելին գյո̈ւղըմ ա էլի լոխ ո̈ւրա̈ն վըղին թուշ կյամ ա սարեն պտոկը, Թո̈ւնի դա̈յուն կոշտն ու ծեն տամ:- Թո̈ւնի դա̈յին քարեն դաթըմը կոչ եկած, աշկերը հոփ կալա ծ, տապըռ ըրած տըեղան անըմր տո̈ւրո̈ւր չի կյամ. հրիշտրակը ծեն ա տամ, ծեն, Թո̈ւնի դա̈յին վըե՛չ տեղան ա եր կենում, վըե՛չ էլ սա̈ս անըմ: - Ախրը պըելին կզնվում, վըեննավը բըշտի յա տամ, Թո̈ւնի դա̈յին զո̈ւռթնըցընում, եր կըցընում ու ասըմ. «Հոր ըս եկալ ըստեղ, հի՞նչ կա էս վըրինի տեղը, հո̈ւքյիտ ինքյ ունելու վախտն ա, էս դո̈նըմ բեղմա տանիմ, վըեր տանիմ, կոզի ըստեղ մարթ էլ չընի, վըեր մին հայրի մերն էլա ասի քյըզ յըրա»:

Թո̈ւնի դա̈յին լո̈ւզո̈ւն ցմաքում, լղեն պտառում, ջանն էլ տո̈ղ ա ըղնում, մին քանե վախտ էլ շշկըված ընում, ամմա էլլըհա ինսանեն տոնը քանդըվի վըեչ, Թո̈ւնի դա̈յին մըետք ա անըմ, օզում ա պելո̈ւն էս դո̈նում էլ խափի, հըղե տընի տեռտակ ծերքավ,- ըտի էլ անըմ ա. «Պըելի ջան.- ասըմ ա Թո̈ւնի դա̈յին,-խընթրում ըմ, դաչանք ըմ անըմ, էս վըերչին խընթիրքս էլ կըտարե, ընդրանա ետը էլ օրիշ պըեն չըմ օզիլ, թող կաց, վըեր յըս էլա մին հայրի մեր աղոտկը ասիմ, պրծնիմ, ետնան հո̈ւքյիս ինքյ կալ, ամմա խոսկ տո, վըրե հո̈ւքյիս ինքյ չըս ուննական չքորանը հայրի մեր ասել պրծնելս»:

Պըելին մին քանե մնուտու միար օզից վըեչ Թո̈ւնի դա̈յո̈ւն խաթիրը

կոտրէ, թո՛ւլ տըվավ, վըէր աuէ «հայրի մէրը», պրծնէ հանցու էննան հո՛ւքյին ինքյ ոնէ: «Հայրի մէր, վըէր հէրգինս»… մինակ էս չորք խոսկը ըսէլանը էտը, էտ տէռավ բըդի պըէլին ու ասից. «Խոսկ ըս տվալ, վըէր հո՛ւքյիս ինքյ չօնիս, չքորանը հայրի մէր ասէլ պրծնէլս, մըհէնգյ էս ըմ գյո՛ւղո՛ւմ, մնացածը հիբու վըէր կասիմ, էն վախտը էկ հո՛ւքյիս տար»: Պըէլին կըզնըրվէլան նըհէտ, թըռըշնից, կյըպտից, օխտը ռանգյ փոխից, ամմա դէ հինչ, խոսկը էլլհա Թո՛ւնի դա՛յո՛ւնն ար: Էս դո՛նըմ էլ քուռ ու փոշման կլո՛խը տո՛ւրո՛ւր տալավ պըցըրացավ էրգինքյ:

Ըստրա կլխավն էլըհա մին քանէ տարէ ա աս կէնում, Թո՛ւնի դա՛յին էտչանք վախտը «Վըէր հէրգյինս»- անմին պատառ էլա տեն չկացավ: Ախըրը մէր Թո՛ւնի դա՛յին հղի քյընիյիս տեսնըմ ա հըղեցը մաչին մին մըէռած մարթ վըէր ընգած. շատ խէղճ ա կյամ, յոր օնում մէյդը հըղըցան տո՛ւս օնըմ, հըղըցէն դըրաղէն մին կյըըէզման քա՛նդո՛ւմ, վըէր տընի մաչին, վըէղան յըրա անէ, ծասկէ: Ամէն պըէն պրծնէլանը էտը, մէյդը տընո՛ւմ ա կյըըըզմանէն մա-չին, դըէրին տէղակ մին հայրի մէրն էլ ասըմ, վըէր վըէղը յըրան անի: Պըէլին դաստի կոխկէն վըէնն ա կէնըմ:

- Դէ, մըհէնգյ հու խո՜սկը չօնիս ըսէլի, «հայրի մէրը» ըսէցէր պրծէր, հո՛ւքյիտ բէդմա տանիմ:

Պըէլին էս ըսէլանը էտը էլ ըջըլաման չտվավ, թա Թո՛ւնի դա՛յին պըէրանը պըէց անի, ծէռքը մէկնից պըկէն խըռթըլո՛ւկյան փըռնից, հո՛ւքյին տո՛ւս քաշից, էր կալավ, մէյդն էլ կուփէ տըվավ, նի քըցից կյըըըզմանէն մաչը, վըէղան էլ յըրան ըրավ ու էլըհա ինքյը թռչից պըցըրացավ էրգինքյ:

## 43.ՇԱՌ ԽՈՍՈՂԸ

Ինըմ ա չընըմ, մին շէնըմ մին շառ խոսող մարթ ա ինըմ: Էս մարթը ամէն օր, ամէն վախտ, թա ուռութանան, թա ցիրեկը հո՛ւըը վէր պըտահէ, անպատճառ բիդի մին շառ պէն ասըէ. վըէչ մէծ կըզյիդա՛, վըէչ պուճուր, վըէչ կընէգյ, վըէչ մարթ, վախսըզ, թա բէյվախսըզ, մըռըլատան, թա հըըսընքա-տան, մըրթըմաչի, թա շընըմաչի, չոլըմ, թա հա՛նդըմ, բիդի շառ խոսէ, մին փիս պէն ասըէ: Ո՛ւրա՛ն շառ խուսէլան նըհէտ լոխճին աշկէն էլ կյըրոդ ա տըէռալ, հու վըէր էլ պըտահըմ ար, վախըմ ար, թա նըհէտը խոսէ, չո՛ւնքի բիդի մին շառ պէն ասէ: Ամմա դէ կոզի նըհէտը խոսըմ չին, ինքյը հո՛ւըը վըէր պըտահըմ ար, շո՛ւտ ար անըմ մին շառ պէն ասըմ:

Ո̀ւրա̀ն  փիս ինիլա̀ն ըշխարքես տակեն էլ փիս անըմ չիկար, վըեր տիրած չինին յրան՛ շառ խոսող, անխղճմտանք, բայղուշ, խաթալու, լո̀ւզո̀ւն չար, անհոքի, պատիժ, անդար, մարդիմազար, շառը-շըլթաղ։ Կողի սաղ շընա̀ցիքյ նըհետը չօնին, նըհետը խոսըմ չին, վըեր ասիս վեջա̀ն չար, ինքյը ո̀ւրա̀ն  էշն ար քըշըմ։ Ամեն մին պեն տըսնալիս, ամեն մին մարթ պըտըհելիս բիդի մին շառ պեն ասե։

Մին օրե հա̀նդին տըեսալ ա, վըեր ո̀ւրա̀նց շինա̀ցեքյ վար ըն անըմ, ետ ա տըեռալ, թա ասըմ ա. «Ըրազի տըեսալ ըմ, վըեր ըստարե արաշտ ա ինելու արտերը չուրուցնե, էտ սըերմը փըչըցըրեքյ»։ Մին օր էլ հեն ա իլա̀լ մին հըրսընքըմ, աշկը քցա̀լ ա հարթնեն ան փըսեն աշկը, եշա̀լ, եշա̀լ, կըլո̀ւխը ծանդր-ծընդըրմըեծ տո̀ւրո̀ւր տուվալ, ախ-վիշ ըրալ, ետավ թա ասըմ ա. «Արազս կըրակեն ա նաղլ անըմ, ըտրանք բաշաեթմիշ չըն ինելու, էտ մարթը էտ կընգանը պըհելու չի»։

Մին օր հեն ա իլա̀լ կընոնքըմ, խոխան ծերքն ա կալալ, եշա̀լ, եշա̀լ, թա. «Մըղափո̀ւն էս խոխա, վըեր ումբուրը կարճ ա, էս խոխան ըպրելու չի, շո̀ւտ մըռնելու ա»։

Մին օր էլ տո̀ւս ա յըեկալ շընա̀մաչը, տըեսալ ո̀ւրա̀նց շինա̀ցե մին տղա տոն ա շինըմ, կաղնալ ա եշա̀լ, եշա̀լ, թա ասըմ ա. «Ա՛րա, ա՛ խըեղճ, էտ հոր ը՞ս, էտքան խարջ անըմ, էտքան չըչարվըմ, մըհե տու էնքան կըննական ը՞ս, վըեր էտ թա̀զա̀ շինա̀ծ տանը բաշաեթմիշ ինիս, ապրիս, փըսակվիս, կընեգյտ էլ խոխա պիրի»։

Մին տարե խե շատ լա̀վ արտեր ա իլա̀լ, սաղ շինա̀ցեքյ էտ ըրտերավը ուրխացալ ին, վըեր իտի բոլ ռուզի յա յըեկալ, ըսօր-էքյո̀ւծ մըհե հըզըրված, վըեր արտերը բիդի ըսկըսին հըն̀ձիլը, շառ խոսողը շընըմաչըմը շինա̀ցուց, թա ասըմ ա. - Ա՛ խալխը, յըես իմ գյիդա̀ցածս ասիմ, տուք ծըեր հոքսը քըշեցեքյ, սըրտըմս տըպալ ա, վըեր ըստարե մըեծ մորեխ ա ինելու, լոխ արտերը օտե, դե մըեկալը տուք ըք գյո̀ւղո̀ւմ ։

Մին ուռութանա եր ա կացալ յըեկալ շինա̀մաչ, թա. «Սըերտըս ասըմ ա, վըեր ըստարե թո̀ւնդ կըռըն ա ինիլու, սաղ ժուղովուրթը կուտուրվելու ըն, գյո̀ւղո̀ւմ չըմ թա հինչ անիմ, վըեր կարիմ ես պըրծընիմ»։

Մին շինացե օվչի թըվա̀նգյը քցա̀ծ, պատրոնդաշին կապած, շոնը առաչը քըցա̀ծ, հեն ա իլա̀լ քյինա̀լիս վըերսի։ Էտ շառ խոսողը պըտահալ ա էտ օվչուն, թա ասըմ ա, «Աշկըս խաղըմ ա, խաթատ շըռշըռամ ա, ին̀ձա̀նա̀ դրաղ

շոռ տռ»: Էտ վըերսկանը էլ կարե վըեչ թա մին պեն ասե, վըերսի չի քյինն̀, յըետ տըեռնա, ո̀ւրն̀ց տոն քյինի:

Էտ շենըմը մին սն̀ն̀թկյն̀ր մարթ ինի, հիշքան անե վըեր էտ շառ խուսողեն խըելքի պիրի,վըեր պատառ էլ խեր խոսե, վըեր խեր կարըմ չի, շառն էլա խոսե վըեչ, ն̀մն̀լ չի կյամ: Ճարը կըտըրե, վըեր շառ խուսողեն իրեսը էլ տըեսնա վըեչ, կընեգյը, էրկու խոխան բրախ տա, թողե տակը տակ, կըլո̀խը կըլո̀խ, տանան տո̀ւս կյա, քյինի մին օրիշ քըղաքըմ կըլո̀խը պահե: Քյինն̀լն̀վ, քյինն̀լն̀վ, խիլլն̀ ճընապար կըտըրելավ հըսնե օխտը սարեն քամակը՝ մին շիհն̀ր: Մընա էտ շիհն̀րըմը, ղարիբութունըմ: Անց կենա մին քանի տարե, կարե վըեչ թա տանան մին խաբար գյիդա, կոզի նիգյն̀րն̀ն սըերտը ճաքըմ ա:

Մին օր լըսըմ ա, վըեր էտ շառ խոսողը եկալ ա էտ շիհն̀րը, հեն ա բըզարըմը շոռ կյն̀լիս: Սն̀ն̀թկյն̀րը ըսկըսըմ ա մըտածելը. «Տեր աստված, հինչ ա՞նիմ, վըեր քյինիմ մին խաբար գյիդն̀մ, հն̀զիր շենն̀ն մարթ ա եկալ, ամմա դե վըեր էտ մարդիմազար շառ խոսողն ա, հունց քյինի՞մ ըտրա կոշտը, անպատճառ մին շառ պեն ա ըսելու, ինձ էլ գյունաքար անե»: Մըտածըմ ա, մըտածըմ, թա ասըմ ա. «Էլ ճար չկա, քյինիմ տըեսնամ մին ալվըհաթ, հըրցընիմ տանան, խուխոցան, դե գյո̀ւղո̀ւմ ըմ, անպատճառ մին շառ պենա ըսըլական, շո̀ւտ կանիմ մըեր շանը՝ Բողարան հըրցընիմ, վեր շառ ասե, լըհն̀ Բողարեն յրան ասե»: Մըտածըմ ա, մըտածըմ, եր ա կենըմ քյինըմ բազարը: Շատ ա շոռ կյամ, խըեգյ ա շոռ կյամ, շառ խուսողեն քըթենըմ ա, շո̀ւտ անըմ կոլավը ընգնըմ, պըչպըչորըմ, ջըգյն̀րը պուղերեն քըցըմ, վըեր մեխկը կյն̀, մին շառ պեն չասե էս ղարիբ տըեղը, վըխվըխելավ խե շատ խեղճ-խեղճ հըրցընըմը. «Մըեր Բողարը հունց ա՞»:

- Ծեր Բողարը սատկալ ա:

- Խե մըեր բողարը սատկալ ա՞, յա՞ դուզ:

- Հա՛, ծեր ծին վեր սատկալ ա, Բողարը սատկած ծիյին մըսան կերալ ա, ինքյն էլ սատկալ:

- Ա՛րա, հինչ ըս ա՞սըմ, ուրեմն մըեր ծին էլ ա՞ սատկալ:

- Հա՛, քու հոր մըռնելին էքսյը ծեր ծին էլ սատկալ ա:

- Ա՛րա, խե իմ հն̀ր էլ ա՞ մըեռալ:

- Հա՛, քու մոր օխնը վեր տըըվալ ըն, քու հն̀ր էլ ա մըեռալ:

- Վե՛, ա՛րա հինչ ը՞ս ասըմ, իմար էլ ա՞ մըեռալ:

- Հա, մըեռալ ա: Կընգանտ քըռըսունքին քու մար էլ ա մըեռալ:
- Ա՛րա, կընեգյս էլ ա՞ մըեռալ:
- Հա՛, խըխոցտ տարեն վըեր թըմամալ ա, կընեգյտ էլ ա մըեռալ:
- Վա՜յ աստված, դե աստ տոնս քա̀նդվա̀լ ա իլի:
- Տոնտ քանդվիլը գյո̀ւղո̀ւմ չըմ, ես կյա̀լիս ծըեր տանը տեղը սխտոր ին վարըմ: Էտ լոխ վըեչինչ, տու էլ աշկես լա̀վ չըս ըրվամ, հետ ըս տու էլ մըոլըկախած, քըեզ մըղայիտ կաց, դե ես քյեցե:

Շառ խոսողը լըհա̀ վըեր քյինամ ա, էտ խեղճ սա̀նա̀տկյա̀րը բողմու ա կյամ, վայ կանչըմ, բըզարըմը վըեր ընգնըմ, գյիըթ մըեռնըմ:

## 44.ԸԽՄԱԽԵՆ ԹԱՔԱՎԵՐՈԹՈՒՆԸ

Օրերեն մին օր մին երգյիրըմ ջամահաթը հըվաքըմ ըն մին դո̀ւզ չըլ տեղ, վեր ո̀ւրա̀նց անա մին թաքավեր ճոկին: Էտ երգյիրին թաքավեր ճոկելեն դայդան էլ ըստի յա ինըմ, ջամահաթը հըվաքված վախտը մին դուշ ըն պեց թողնըմ, էտ դուշը հո̀ւր վեր կըլխեն նըստըմ ա, ընդրան էլ թաքավեր ըն ճոկըմ: Ո̀ւրա̀նց ըղա̀թին իտի էլ անըմ ըն: Սաղ ջամահաթը վեր հըվաքվըմ ըն, էտ դուշը պեց ըն թողնըմ: Դուշը քյինամ ա մին ախմախ մարթու կըլխե վեր կյամ, ըտրան էլ ճոկըմ ըն թաքավեր:

Սաղ ժողովուրթը հըվաքվըմ ըն, առոք-փառոք ո̀ւրա̀նց ըղաթին ըծելավ, պար կյա̀լավ, հարայ-հըրոց ընելավ չո̀լան յոր օնըմ, տանըմ թաքավերեն թախտեն նըստըցընըմ, մին քանի էլ գյիդա̀ցած, ընգած-տո̀ւս եկած, աշխարք տըեսած մարթիքյ էլ հըվաքվըմ ըն կոշտը, քյո̀մագյ անըմ, թաքավերոթունը հըստաղըմ, թաքավերը կործի ա ընցնըմ:

Անց ա կենըմ մին քանի վախտ, թաքավերեն ծառայողներան մինը ամենախելունքը, ո̀ւրա̀ն հավաղարիմը մեռնըմ ա: Կյամ ըն ախմախ թաքավերեն կոշտը, հըսկըցնըմ, վեր մեյիդը յոր ունելիս տեղեն թաքավերութենեն աղաթին ինքը պիտի տո̀ւս կյա̀ սաղ ջամահաթեն ըռաչին ո̀ւրա̀ն քարոզը ասե, ճառ խոսե, թա̀րիփ անե, ափսոզե, վեր իտի մարթը մեռալ ա: Էս ախմախ թաքավերը մնամ ա էշ կըտըրած: Հիշքան մըտածըմ ա, վեր մին պեն ասե, կարըմ չի: Խոսելը գյո̀ւղըմ չի, ո̀ւրա̀ն էլ նշանց չի տամ, վեր ախեր խոսելը գոյո̀ւղըմ չըմ, հունց խո՞սիմ: Քըշեր-ցիրեկ մըտածըմ ա, մըտածըմ, սուս ա անըմ, նըստըմ, ումեդը քըցըմ աստծու, թա՝ աստված ողորմած ա, հա̀լբա̀թ էն օրը մին ճար կինի:

Կյամ ա մըռալեն թըղելի օրը, սաղ ջամահաթը հըվաքված սոքյ-շիվան քցա̀ծ, ալամ աշխարը վըեննը կաղնած լոխ մեյիդավը իլա̀ծ, մին վախտ հարայ ա կյամ, թա համ սուս ըրեքյ, համ հեռու կացեքյ, թաքավերը կյամ ա վերչի խոսկն ասե։ Լոխ էլ ղըրընղարան ըն ընըմ, էս ախմախ թաքավերը ծանղր-ծնղրմեծ սուսուփուս կյամ ա մեյդին կըլխեն կաղնըմ, էլ գյո̈ւղո̈ւմ չի, թա հինչ անե, հինչ ասե։ Ճարը կըտըրած, կըռանըմ ա մեյդին ունգուջումը փսփսամ, եր կենըմ, թա. «Դե տարեքյ»։ Սաղ ժողովուրթը մնըմ ըն նիգյյա̀րա̀ն, թա թաքավերը հինչ ասեց մըռըելեն։ Լոխ գյո̈ւղըմ ըն, թա իտի խուսելին ա̀ղա̀թը էտ թաքավերն ա տիրա̀լ։

Մեյդը թըղելան ետը վեր մին քանի օր անց ա կենըմ, թաքավերեն հավաղարիմը հըրցընըմ ա. «Թաքավերն ապրած կենա, ախեր ես շատ նիգյյա̀րա̀ն ըմ, էն օրեն էն մըռըելեն ունգուջեն հինչ ըսե՞ցեր»։ Թաքավերն ասըմ ա. «Դե ես անգլամաղ հըսկըցնող ը՞մ, ըստեղ ըն գյո̈ւղըմ, վեր թաքավերը ես ոմ, էն դունյըմն էլ չը՞ն գյո̈ւղըմ, հա̀զիր քյինամ ա, հըսկըցրե, վեր ընդեղ ասե թաքավերը հու վա»։

Անց ա կենըմ մին քանի վախտ, էս թաքավերութան ժողովուրթը ըսկըըմ ըն տըժեր ապրելը, ըրած ըշխաղանքը ժողովըրթեն ուտելին հերիքյ չանըմ։

Թաքավերը մըտածըմ ա, մըտածըմ, թա էս ժողովուրթեն թա̀հրը վեր ես ըմ տըեսնըմ, վերչը կըտորվուսկ ա իննա̀կան, ուտուղնեն շատ ըն, ընուղնեն՝ խըրեգյ, ճար չըկա, պերիմ տանան մին մարթ կըտորել տամ, վեր ժողովուրթս պըկասին, հանցու վեր մընացածը լա̀վ ապրին։ Հունցը վեր ասըմ ա, ինդի էլ անըմ ա։

Ախմախ թաքավերը հըվաքըմ ա էտ քըղաքեն ուստա-փա̀հլա̀ն տանըմ մին դո̈ւզ տեղ, մին մեծ, պեցուր կըրավեր շինըմ, էտ կըրավերը վառել տամ, հո̈քյմ անըմ, վեր նուբաթավ ամեն օր ամեն մինին տանան մին մարթ պիրին քըցին էտ կըրավերը, էրին, վեր տոն էլ հո̈քյմը կըտարին վեչ, սաղ տոնը կրակ տան։

Թաքավերին հո̈քյմը էնքան թո̈ւնդ ա ինըմ, վեր սաղ ժողովուրթը ամեն օր նուբաթավ տանան մին մարթ լա̀ցա̀վ-շիվանավ պիրըմ ըն էտ կըրավերը, թաքավերեն քշտին կուփե տամ, քըցըմ կըրակը, էրըմ։

Էտ քըղաքըմը մին մարթ մին կընեգյ ըն ինըմ։ Մարթը գյո̈ւղըմ ա, վեր ո̈ւրա̀նց տանան ինքյը բիդի քյինա̀ էրվի, չո̈ւնքյի տանը տղամարթն ա։ Շատ մըտըծելան ան վըխելան քանի քյինամ ա, խարաբ ա ինըմ։ Եշըմ ա տըեսնըմ

վեր ո՛ւրա՛նց նոբաթը մին քանի օր ա մընացալ, ահան ան մահան վըխելան վեչ տանան ա տո՛ւս՝ կյամ, վեչ խոսըմ ա։ Կընեգյը տըեսնըմ ա, վեր խեղճ մարթը սաղ-սաղ հեն ա մեռած, ամեն օր մարթին սերտ ա տամ, թա. «Ա՛ մարթ, խե յը՞ս իտի վախըմ, ըսկի էլ ա վախըլ մեր, սիրտտ պենդ պահե. քյեփտ էլ քյոք, ես թողել չըմ, վեր տու քյինա՛ս էրվիս, արխային կաց»։

Էս մարթը մըտածըմ ա, թա՝ հը՞, կընեգյ ա է, տես հունց ա ինձ ծերք քըցըմ, ո՛ւրա՛ն հինչ վջան ա, վեր էրվողը ես ըմ։ Կընգանը էտ խոսկերքն էլ մին տեղան ա էտ մարթին խեխտըմ, վեր մինչև անքամ հացա-ճըրա՛ էլ ա կըտըրվըմ։ Վեր մընամ ա ո՛ւրա՛ն նոբաթը իրեք օր, էս մարթը վեչ հաց ա օտըմ, վեչ քշերը քոն ա ինըմ, սաղ օրը բայղուշու նըման հեն ա ինըմ ինքյն ո՛ւրա՛ն  խոսելիս։ Կընեգյը վեր տըեսնըմ ա մարթը առե ծերքա ընգնըմ ա, մարթին հըսկըցնըմ ա, վեր քու տեղ ես ըմ քյինա՛լու էրվիմ , խըրեգյ մըտածե, քյեփտ էլ առե քյոք պահե։

Էս մարթը տըեսնըմ ա, վեր կընեգյը ո՛ւրթըմնը-հավատ, ճաք- ճաք ա կյամ, համ հըվատըմ ա, համ հըվատըմ չի, մընըմ ա մըտըրծելիս, թա դո՛ւզ ա ասըմ, պա հունց կինի՞, ես կենամ, ինքյը քյինա՛ էրվի՞, ինձ հինչ կա՞սին, թա սոտ ա ասըմ, պա խե չի՞ իմ դարդս քաշըմ։ Մըտըրծելավ մընըմ ա վեչ հըվատե, վեչ հըվատե վեչ։

Անց ա կենըմ վերջի էրկու օրն էլ, էքսյը, վեր բիդի էտ մարթը քյինա՛, սաղ քշերը շորերը հանըմ չի, կաղնած տեղը նըստիմ չի, վեչ մին պեն խոսըմ չի, էնքան էլ կնեգյը ըղաչանք ա անըմ, վեր. «Ա՛ մարթ, արխային կաց, քու տեղ էքյո՛ւծ ես ըմ քյինա՛լու, շորերըդ հանե, հաց կեր, պարկե քոն իլ, մըտածըմել»։ Էս մարթը վեչ մին պեն էլ վեչ հըսկանըմ ա, վեչ հըվատըմ ա, վեչ անըմ ա, վեչ էլ խոսըմ ա, լըհա՛ դիքյ մընամ ա տեղը կաղնած, մինչև վեր լո՛ւսանըմ ա։

Օրը լո՛ւսանըմ ա, կընեգյը եր ա կենըմ տըեսնըմ հունց վեր մարթին թողալ ա կաղնած, հա՛լա՛ հեն ա ինդի էլ կաղնած, մարթին թա ասըմ ա. «Մըհենգյ հինչ կա՞սիս, ա մարթ, վեր քյեզ ասալ ըմ թա ես ըմ քյինա՛լու քու տեղ, ես ըմ քյինամ, մըհենգյ ինի, կընըստի՞ս հու՛»։ Մարթը վեչ մին պեն խոսըմ չի։ Կընեգյը եր ա կենըմ մարթին նըհետ զոռավ ծերք տամ, թա ասըմ ա. «Դե ես քյեցե քու տեղ էրվիմ, վեր քյեզ ըզադիմ»։

Ասըմ ա, քյինում թուշ կըրավերը։ Մինչև էս կընեգյը կյամ ա ըտեղ, լոխ ժողովուրթը հըվաքվըմ ըն թըմաշի։ Էս կընեգյը կյամ ա տեսնըմ կըրավերը վառած, ալավը մինչև երգյինքը պըցըրա՛ցած։ Էնքան էլ մարթ կա հըվաքված,

վեր տեղ չըկա թա ինքյը անց կենա: Մին ղըրաղ տեղ կաղնըմ ա, ծեն տամ, թա. «Ա՛յ ջամահաթ, տեղ տըվեքյ, ես կյամ ըմ մարթիս տեղ էրվիմ, ըսօր նոբաթը մեր տանենն ա»: Լոխ ղըրընղարան ըն ինըմ, էս կընեգյը վազ տալավ կյամ ա եր ինըմ կըրըվերեն կըլը̀խը, շորերը հանըմ լափ տուկուլուրանըմ, ըսկըսըմ տկըլոր կըրվերեն յրա պար կյա̀լը:

Կաղնած ժողովուրթը էս կընգանը ըրըրմունքան զարմանըմ ըն, վեր էսքան մարթին մաչին հըմանչըմ չի, տըկուլուրացած պար՛ ա կյամ: Մին քանիսն ասըմ ըն թա. «Շատ վըխելան պըլացալ ա»: Մին քանիսը, թա. «Մին ա իլի, մըռնելու վա»: Էտ դարըմը հարայը կյամ ա, թա հրղե տըվեքյ, թաքավերը կյամ ա: Եշըմ ըն տըեսնըմ թաքավերը ը̀ւրա̀ն նա̀զիր-վիզիրնե-րավը, ը̀ւրա̀ն  կարք ու սարքավը ծանդր-ծընդըրմեծ, նազաննան-սազանն ան, առոք-փառոք, արքյավ-ըռըխտեվեր, շենքավ-շընորքավ կյամ ա: Լըհա̀ վեր մուտանըմ ա կըրըվերեն, լոխ ժողովուրթը ծոնդր ըն տամ, իրըսներեն խըչըկընքըմ, ը̀ւրա̀ն  հըղե տամ: Էտ կընեգյը թաքավերեն վեր տըեսնըմ ա, յա̀նի քյի հըմընչիլա̀ն նըհետ օզըմ ա մին կերպ տկլոր ջանը ծասկե, ծեռքերը դը̀շին ա տինըմ, կըրվերեն յրան պըպըզըմ, կոչ կյամ, մնըմ իտի պըպըզած: Թաքավերը էտ տըսնալան ետը հըրցնըմ ա էտ կընգանան. «Ա՛սե, տըեսնում խե՞ իտի ըրեր, մինչև իմ կյա̀լս հեն իր ազատ, ուրախ-ուրախ պար կյա̀լիս, էտ խե՞ վեր ինձ տըեսեր, կոչ եկեր»: Էտ կընեգյը թաքավերեն ասըմ ա. «Քյզըանա հըմընչըլա̀ս ինձ օզըմ ի թա ծասկիմ»: Թաքավերը թա.. «Խե՞ էտքան մարթին անա հըմընչեցերվեչ, մինակ ինձա̀նա̀ հըմընչեցեր, խե ըտրանք մարթիքյ չը՞ն»: Էտ կընեգյը ասըմ ա. «Չէ՛. սըրանք մարթիքյ չըն, սըրանք վեր մարթիքյ ինին, ես էլ կըհըմանչիմ լի՛, մարթը տու վըս, վեր օրեկան սըրանց անա մինը պը̀ւրըմ ըս քըցըմ էս կըրավերը, էրըմ: Պա սըրանք մարթիքյ ը՞ն վեր ես հըմանչիմ սրանց անա»:

Էս կնեգյը իտի ըսելան ետը սաղ ժողովուրթը զարմանըմ ըն ը̀ւրը̀ւր անցավ ընգնըմ, ըստեղ հըսկանըմ ըն, վեր էտ կընեգյը դը̀ւզ ա ասըմ: Ը̀ւրը̀ւր ըսելավ, ը̀ւրը̀ւր խոսքը տալավ յիրա յըն տեռնըմ էս թաքավերեն վըննը-կըլխան փըռնըմ, քցըմ կրավերը էրըմ, էտ օրվանից ը̀ւրա̀նք էլ ըզադվըմ:

Կընեգյը կյամ ա տոն, մարթին ասըմ թա. «Ա՛ մարթ, ես նան տու հունց ընք, տեսեր, վեր համ քեզ ըզըդեցե, համ էլ սաղ ժողովուրթը»:

## 45.ՊԸԼԸ-ՄԵԼԸ

Ինըմ ա չինըմ, մին մարթ ա ինըմ: Էտ մարթին անըմը ինըմ Պըլը-Մել: Էս Պըլը-Մելին մին շատ լա̀վ էծ ա ինըմ, վեր օրեկան վեց գյրվանքա կաթն ա տամ: Պըլը-Մելը մին օր մըտածըմ ա, թա էծը ծմեռնը հունց բիդի պահե, ո̀ւրա̀ն խոտ չօնե, փող էլ չօնե, վեր խոտ առնե, վեչ էլ դիմիշ ա անըմ ծախե: Մըտածըմ ա, մըտածըմ, վեր մին թըհա̀ր անե էծը պահե: Շատ մըտըծելան ետը էծը յոր ա օնըմ տանըմ դերին կոշտը, թա ասըմ ա. «Ա՛ դեր, էս էծը ես քյեզ ըմ բախշըմ, վեր մեռնիմ, կըկյաս, ինձ առանց հախկ թաղիս, չո̀ւնքյի փող չի իննա̀կան, վեր քյեզ տան»: Դերը շատ ուրխանըմ ա, թա ասըմ ա. «Շատ լա̀վ կինի, իմ հոքվես պարտքը՝ մեռած տեղտ քյեզ մին լա̀վ յոր օնիմ»: Ճոխտը ռազի յըն կենըմ, Պըլը-Մելը էծը թողըմ ա դերին քշտին, ինքյը քյընամ ո̀ւրա̀նց տոն:

Ծմեռնը վեր ընցնըմ ա, կյարունքը մին օր Պըլը-Մելը կյամ ա բիդի դերին բաղը, մին տըեսնա էծը հո՞ւնց ա: Եշըմ ա տըեսնըմ էծը ավելի լա̀վ չըղացած, էրկու հո̀լ էլ ծընած, դերին կընեգյն էլ էծը քթելիս: Պըլը-Մելը կաղնըմ ա, եշըմ, եշըմ, փըռնած պենան փո̀ւշմա̀նըմ, մտածըմ, թա հունց անե, վեր էծը ետ յոր օնե: Էս մըտքավը կյամ ա տոն, կընգանը նըհետ մըսլըհաթ անըմ, վեր. «Ա՛ կընեգյ հինչ օզըմ ա ինի, էծը բիդի ետ պիրիմ, վեր տըեսնաս, խելքտ կըլխատ կընգնե, լա̀վ ծըմըռհան ա իլա̀, դե կյանքն էլ լա̀վ ա ինիլու վեր լա̀վ, պա ես հինչ ա՞սիմ, վեր մեր էտ դո̀վլա̀թը թողիմ դերին ծերքեն»: Պըլը-Մելեն կընեգյը զըրմանըմ ա, ամմա դե օզում ա վեր իտի մին պեն անե, ասըմ ա. «Ա՛ մարթ, շատ լա̀վ ըս ասըմ, պա հունց կա՞նիս, վեր իտի պեն անիս»: Պըլը-Մելը թա ասըմ ա. «Իմ անըմս ինձ յրա յա, ես մըտածալ ըմ, թա հունց բիդի անիմ, դե՛, ես քյընա̀ցե դերին կոշտը էծին հետան»:

Պըլը-Մելը կյամ ա դերին կոշտը, թա ասըմ ա. «Ա՛ դեր, ես ըստեղ չըմ մըռնելու, ես մին օրիշ քըղաքըմ ըմ մըռնելու, յա՛ թոխտ տօ, վեր քու խարջավտ վիզիտ ըս յոր օնըմ՛ հինչ քըղաքըմ վըեր մեռնիմ, կյա̀ս ընդեղ ինձ թաղիս, յա էլ էծս ինձ տո, քյընա̀մ»: Դերը վեր տըեսնըմ ա Պըլը-Մելը իտի պահանջ ա տինըմ ըռաչին, կըզնըվըմ ա, թա. «Հինչ ա՞, ես քյըզնըհետ խոսալ ըմ մեր շենըմը թաղի՞մ, թա օրիշ քըղաքըմ, մեր պայմանը պայման ա, տու էլ քյընա̀լ մեր օրիշ քըղաքըմ մեռնել, հունց վեր խոսալ ընք, կաց մեր շենըմը մեռեր, ես քյեզ թաղիմ»:

Պըլը-Մելը ո̀ւրա̀ն ըսածեն յրա պընդըմ ա, դերը Պըլը-Մելեն չի լըսըմ,

Պըլը-Մելը՝ դերին, շինըմ ըն մի եքյա՛ կըռն: Ըստեղ դիրա՛կենը տո՛ւս ա կյամ թա. «Ա՛ մարթիքյ, խե կըռն՞ ըք անըմ, տըրանա էլ խելուք մարթ չըկա՞, քյեցեքյ դիվանբաշուն կօշտը, նա էտ խերը-շառը կըկըտրե, հինչ վեր կասե, ինդի էլ կանիքյ»: Ըստեղ էրկու հոքին հընդա՛րդվըմ ըն, իտի էլ խոսկը տամ, վեր էքսյը քյընա՛ն: Պըլը-Մելը վըռենները քաշ տալով կյամ ա տոն, կընգանը կըլխեն եկածը նաղլ անըմ, թա դըրա՛կենը մըսըլըհաթ տեսավ, կործը քըցեցինքյ դիվանբաշուն, էքյո՛ւծ ըռութանա քյինա՛լու վընք տըեսնանք հի՞նչ ա տեռնըմ: Կընեգյը թա. «Դե քոն իլ տըեսնանք, մինչև լո՛ւսա՛նա»:

Պըլը-Մելը նան կնեգյը քոն ըն ինըմ: Թողնինքյ սրանց քոն իլա՛ծ, անց կենանք դերին ան դիրա՛կենին: Դերը նան դիրա՛կենը վեր նի յըն մըտնըմ ո՛ւրա՛նց տոն, դիրա՛կենը, թա ասըմ ա. «Ա՛ մարթ, միենգյ քյեզ փա՛նդ նշանց տամ, ինդի էլ ըրա, վեր էծը մընա մեզ»:

- Հի՞նչ, ա՛ կընեգյ, մին-մըսըլըհաթ տես:

- Ա՛ մարթ, եր կաց էս սըհաթես մաչին մին կյառնը եր կալ, քյընա՛ դիվանբաշուն կօշտը, ըըշվաթ տո, դա՛րդտ նաղլ ըրա, վեր էքյո՛ւծ քու օքտետ դըվան կըտրե:

Դերը կընգանը ըսելավը եր ա կենըմ մին կյառնը յոր օնըմ, քյընա՛մ դիվան բաշուն կօշտը, կըլխեն եկածը պատմըմ, կյառնը ռուշվաթ տամ: Դիվանբաշին ըրխըյինցնըմ ա, դերը ետ ա տեռնըմ կյամ տոն:

Էքյսը ըռութանա դերն ան Պըլը-Մելը քյընա՛մ ըն դիվանբաշուն կօշտը, դերը լոխ պատմըմ ա դիվանբաշուն: Դիվանբաշին Պըլը-Մելեն յրան կըզնվում ա, թա. «Բա՛լքյի քյընալու ըս ըշխարքես էն ճունդըմը մեռնիս, դերը պըըտական հետատ կյա՛ քյեզ ընդեղ թաղե. տո՛ւս եք կորե ըստեղան, էծը դերին ա հըսնըմ»: Պըլը-Մելը էլ կարե վեչ մին պեն խոսե, բեքյեփ-բեքյեփ կյա՛ տոն, մըտածե թա օրիշ հինչ փա՞նդ քըթենա՛ վեր համ էծը ինքյ օնե, համ էլ դիվանբաշուն մին քյա՛լա՛գյ կյա՛: Պըլը-Մելը սաղ քշերը մըտածըմ ա, մըտածըմ, վեր մին քյա՛լա՛գյ սարքե համ դերին կըլխեն, համ դիվանբաշուն: Շատ մըտըծելան ետը կանչըմ ա կընգանը, թա ասըմ ա. «Հիշքան մըտածըմ ըմ, էս կործըմը բիդի կընգան մաննը մաչին ինի, տըեսե՞ր, դըրա՛կենը խառնըվալ ա, դերը կործը հա՛լա՛ մինչև ըստեղ տարալ ա, մըհենգյ վեր տու էլ խառնըվիս, ըստեղան տենն էլ ես կըտանիմ կործը, ա՛ կընեգյ, համ էծերը, համ փողերը հեն ա տոռնտ թըկելիս, ըհա՛ մին փա՛նդ ընք սարքըմ, կործը տանըմ»: Կընեգյը թա. «Վեդիմ դըըըկընգանը կըլո՛խը, էն քաշկը հինչ ա՞, վեր

կըրեցալ ա կործ դո̀ւզո̀ւցընե, ես էս դաշանգյ տեղավս, խելունք կըլխավս կարիմ վեչ, ա՛սե, ա՛ մարթ, ա՛սե, հինչ ը՞ս փա̀նդ ըրալ»:

-Ա՛ կընեգյ, անգուճ կալ, էտ դիվանբաշին կընեգյ չօնե, կընեգյը մեռած ա, եր ըս կենըմ քյընամ կոշտը, ամմա դե իզինքյըտ մին դա̀շա̀նգյ ո̀ւրո̀ւր քըցըմ, պատառ-մատառ էլ կուտրտվելավ, խուսելիս տեղն էլ քըմքըծեծաղ տալավ:

-Գյիդա̀ցե» ա՛ մարթ, կըտվոթուն, ըղվըսոթան ընելավ, յա̀նի քյի սերտս քըզետե քյընա̀մ ա իլի:

-Հա՛, ապրիս, ամմա դե հանց ըրա, քյեզ կուրցընիս վեչ, հա՛, ասըմ ըս, վեր դիվանբաշին ապրած կենա, եկալ ըմ կոշտտ մին մըսլըհաթու, իմ մարթս հես ա վեց տարե յա, քյեցալ ա ղարիբոթուն, էլ եկալ չի, մըհենգյ լըսալ ըմ, վեր ղարիբոթունըմ մեռալ ա, դե քյըզանա հինչ կյե՞դիմ, ես էլ ջա̀հիլ ըմ, օզըմ ըմ մարթու քյընա̀մ, մին թոխտ տռ, վեր կարող ըմ մարթու քյընա̀մ: Դե ես էլ գյո̀ւղո̀ւմ ըմ, վեր տու իտի նըհետը խոսիս, դիվանբաշին խելքը կուրցընելու ա, կըտեսնաս՝ հի՞նչ կասե, հինչ վեր էլ ասե, տու կըհամաձայնվիս, անպատճառ պիրիս մեր տոնը:

Պըլը-Մելեն կընեգյը մին լա̀վ զուքվըմ-զարթա̀րվըմ ա, իրեսը կըլո̀խը զըրթա̀րըմ, քյընա̀մ դիվանբաշուն կոշտը: Դիվանբաշուն նըհետ հունց վեր մարթը ասած ա իլա̀լ, ընդի էլ կընեգյը պատմըմ ա: Դիվանբաշին էտ կընգանավը հո̀ւրո̀ւմա̀լա̀գյ ա̀ ինըմ. խելքը տանել տամ, թա ասըմ ա. «Դե էլ խե յը՞ս օզըմ օրիշ մարթու քյընա̀ս, իմ կընեգյս էլ ա մեռած, ես էլ հիշքան վեր ասիս, հարուստ, ամեն հինչն էլ օնիմ, համաձայնվի, ես քյեզ օզիմ, առե վեր տու հա ասիս, ըսօր լըհա̀ հինչ վեր օզիս ինդի էլ կինի»: Կընեգյը մըտածըմ ա, մըտածըմ, թա ասըմ ա. «Դե քյըզանա լա̀վ մարթու չը՞մ քյընա̀լու, վեր տու օզըմ ըս, ես էլ կյամ ըմ, անջախ դե պիտի ո̀ւրո̀ւգյո̀ւնը մեր տանը հացա-պենա շինիմ, տու էլ կյա̀ս, վեր ինձ պիրիս, հանցու տեռնա օրենքյավ»:

Դիվանբաշին թա ասըմ ա. «Շատ դո̀ւզ ա, էս էլ քյեզ հազզար մանեթ, քյինա̀ հինչ վեր քյեփտ օզըմ ա, առ, պադրաստություն տես, ես ո̀ւրո̀ւգյո̀ւնը կըկյամ ծեր տոն, հացան-պենան ուտելան ետը քյեզ յոր կօնիմ, կյամ մեր տոն»:

Պըլը-Մելեն կնեգյը հազզար մանեթ փողը դիվանբաշուն անա յոր ա օնըմ, կյամ տոն, մարթին լոխ պատմըմ, մարթը թա ասըմ ա. «Մեր էն մեծ սանդուղը տըրտա̀կե, տու էլ քյրնա̀ հինչ հարկավեր ա, առ պեր, ըստոլը սարքե, ամմա դե վեր եկավ սընդուղեն յրան կընըստիքյ, ես իմ կյա̀լի վա̀դա̀ս

վեր եկե, տու ո̀ւրա̀ն կըկոխիս սանդուղը, քըլլիս, աչառը ինձ տաս»:

Ո̀ւրո̀ւզյո̀ւնն ամեն հինչը սարքած, դիվանբաշին կյամ ա: Էտ կընեգյը առոք-փառոք տանըմ ա սանդուղեն յրան նըստըցընըմ, ինքյն էլ կոխկեն թա նըստե, տոռնը թակըմ ըն, կընեգյը հըրցընըմ ա. «Հու վա՞»: Տո̀ւսան ջողոբ ա տամ, թա. «Ես ըմ՝ մարթտ, տոռնը պեց»: Էս կընեգյն ասըմ ա. «Իմ մարթս հեն ա իլա̀լ ղարիբթունըմ, ընդեղ էլ մեռալ ա, հես ա վեց տարե յա, վեր խաբար չըկա»: Պըլը-Մելը թա. «Ախճի՛, շան կընեգյ, հինչ ը՞ս զա̀հլա̀ տանըմ, ես ըմ մարթտ՝ Պըլը-Մելը, մըհենգյ գյիդա̀ցե՞ր»: Էս կընեգյը վա՛յ ա անըմ, դիվանբաշուն թա. «Վա՛յ, մարթս ա՝ Պըլը-Մելը, եկալ ա, էս հունց ա՞նինքյ, քյըզ էլ ա ըսպընելու, ինձ էլ»: Դիվանբաշին վըխելան ըսկըսըմ ա տըղտո̀-ղալը, թա ասըմ ա. «Աման գյո̀ւնո̀ւղո̀ւ, մին տեղ ինձ կյեղե, շուտ ըրա»: Էս կընեգյը սանդուղը պեց ա անըմ, դիվանբաշին քըցըմ սանդուղը, քըլըմ, ինքյն տոռնը պեց անըմ: Պըլը-Մելը նի ա մըտնըմ, տըեսնըմ ըստոլը լա̀վ սարքած, թա. «Խեր ինի՞, ա կընեգյ, էս հի՞նչ ոտել-խըմել ա, ըստեղ օրիշ մարթ չըկա քյի»: Կընեգյը թա. «Չէ՛, ա՛ մարթ, քըշերես արազըմս տեսալ ըմ, վեր մեր տոնը ղոնաղ ա կյա̀լո̀ւ, դե քյըզանա էլ լա̀վ ղոնա՞ղ»: Պըլը-Մելը թա. «Ապրիս տու, շատ գյիդա̀ցած կընգանս մատաղ, դե նըստե, նըստե ջան ասինքյ, ջան լըսինքյ, ոտինքյ-խըմինքյ, պառկինքյ քոն ինինքյ»:

Էրկուսն էլ նըստըմ ըն սանդուղեն յրան, ըսկըսըմ ոտըմ-խըմըմ: Վեր մին պատառ ոտըմ ըն-խըմըմ, կընեգյը հըրցնըմ ա, թա. «Ա՛ մարթ, քյըզանա ետավ պահած տոնս հունց ա՞, հավան ը՞ս»: Պըլը-Մելը թա ասըմ ա. «Հա՛, ա՛ կընեգյ, ամեն հինչին հավան ըմ. ամա դե մին պենի չըմ հավան»: Կընեգյը հըրցնըմ ա. «Խե՞, հինչին չը՞ս հավան»: Պըլը-Մելը թա. «Հեսե՛, էս տըկըրնե-րես սանդուղին»: Կընեգյը թա. «Ցա՞ղուզ»: Պըլը-Մելը թա. «Տու գյուղում չըս էն օրեն, վեր էտ սանդուղն առալ ըմ, մեր տանը կործերը լոխ թա̀րս ա̀ իլա̀լ քյինա̀լիս, էս անդար սանդուղը առած օրվանից ծիս կյուղացեն, էշս սատկեց, խոտս կըրակ տվեն, մըտքըմս տիրա̀լ ըմ, վեր էտ սանդուղը բիդի կըրակ տամ»:

- Ա մարթ, պըել չըս, կյիժ չըս սանդուղ ա իլի, թող վեր ընգնե, կեր խըմե:

Պըլը-Մելը թա. «Չէ՛, ա՛ կընեգյ, հինչու վեր ասիս, կանիմ, ամմա դե էտ սանդուղեն վըեննը մեր տանը կյամ չի, ո̀ւրթո̀ւմն ըմ կերալ պըրծալ, իմ ծերքավս էտ սանդուղը բիդի կըրակ տամ, սըերտըս հըվանա»:

Մարթ ու կընեգյ մինչև սանդուղեն դա̀րդա̀ն հո̀ջա̀թ ըն տամ, մինչև

կոտին-կըխմին, կը լո̀ւսա̀նա: Պըլը-Մելը տո̀ւս կըկյա մին խիլլա̀ խոտ, փադ, նոթ պերի վեր սանդուղը կըրակ տա, կընեգյը ծերքան կըփըռնե, թա. «Ա՛ մարթ, սանդուղը տանը կըրակ կը տա՞ն, խե ը՞ս իտի անըմ, տոնն էլ կըրակ կընգնե, դե ջըհա̀ննամը, կըրակ ըս տամ, տար բազարը, բա̀լքյի մին մարթ կըպըտաhե, կառնե, մին պեն էլ քյեզ կըտա, թա վեր պըտահել չի, էլլըհա բըզարըմը կըրակ կըտաս»:

Պըլը-Մելը կընգանը լըսըմ ա, տո̀ւս կյամ մին համբալ կանչըմ, սանդուղը շելակ տամ, տանե բազար: Համբալը սանդուղը շիլա̀կած, Պըլը-Մելը առաչը ընգած քյընամ ըն բազար: Ճանապարեն դիվանբաշին սընդուղեն մաչան հըմբալեն կանչըմ ա. «Հա՛մբալ, հա՛մբալ»: Համբալը սըտաճանք ա ինըմ, սանդուղը վեր քըցըմ, փախճըմ դըրրաղեն վըեննը կենըմ, Պըլը-Մելեն թա ասըմ ա. «Սընդուղումը մարթ կա»: Պըլը-Մելը կըզնվըմ ա յրան, թա. «Հինչ ը՞ս սըրսըդ-մարսադ տո̀ւս տամ, մարթը ընդեղ հինչ ա՞ անըմ»: Համբալը հիշքան ո̀ւրթո̀ւմն ա օտըմ, վեր հըվըտըցնե, Պըլը-Մելը կըզնըվըմ ա, թա. «Արա՛, քյեզ հի՞նչ, տու քու փողետ տարն ըս, կա»: Տո̀ւս ա օնըմ իրեք մանեթ թող անըմ առաչը, համբալը սանդուղը նորից շիլա̀կըմ ա, քյընա̀մ ըն: Մին պատառ էլ վեր քյինա̀մ ըն, դիվանբաշին հըմբալեն կանչըմ ա, թա. «Արա՛, վախըմեր, քյեզետե խեր պեն ըմ ասըմ, համ քյընա̀, համ ինձ անգուճ կալ, տես հինչ ըմ ասըմ»: Էս համբալը վըխվըխելավ համ քյընամ ա, համ էլ անգուճ օնըմ: Դիվանբաշին ասըմ ա. «Համբալ ախպեր, քյեզ հարուր մանեթ փող ըմ տըլական, վեր սանդուղը բըզարըմը վեր տինիս, կըքյինա̀ս էս հինչ տեղը, ընդեղ ապըրըմ ա իմ տըղաս, կասիս, վեր քու հոր իստի-իստի սընդուղավ տարեն բազար, թող շուտ կյա̀, հինչ կյինավ օզըմ ա ինի, էս սանդուղն առնե, թա չինա̀ , սանդուղն իրելու ըն, ինձ էլ մաչին էրին»:

Վեր կյամ ըն բազարը, սանդուղը համբալը վեր ա տինըմ, նի ա հըսնըմ դիվանբաշուն տըղեն լոխ պատմըմ, տըղան շո̀ւտ կյամ ա բազարը, տըեսնըմ Պըլը-Մելը խոտա, ցա̀քյա̀, տեսա̀-տենա̀ սընդուղեն յրա տըրա̀ծ, օզըմ ա, թա լըհա̀ վառե, դիվանբաշուն տըղան ծերքան փըռնըմ ա, թա. «Ա՛րա խե յը՞ս նըհախ տեղան կըրակ տամ, մին կյին ասե, ես առնեմ»: Պըլը-Մելը թա ասըմ ա. «Չէ՛, էս սանդուղեն վըեննը ինձ եկալ չի, էն հինչ ա առալ ըմ, ինձ վընաս շատ ա տըվալ, ծիս կյուղացալ ըն, էշս սատկալ ա, խոտս կըրակ ըն տըվալ, ես էլ ո̀ւրա̀ն ըմ կըրակ տամ»: Դիվանբաշուն տըղան ասըմ ա. «էտ սանդուղը իմ աշկըմս տուր ա եկալ, քու լոխ վընաստ ասե, ես փողը տամ, սանդուղը

ինձ տռ»: Խոսըմ ըն հազզար մանեթ, սանդուղը յոր ա օնըմ, քյընա̀մ տռն:

Վեր կյամ ա տոն, տըղան պեց ա անըմ, հորը սընդուղան տո̀ւս պերըմ, հըրցընըմ. «Ա՛ հեր, մին պատմե տըեսնամ սա հինչ քյա̀լա̀գյ ա»: Դիվանբաշին ըրըրմունքան փո̀ւշմա̀նա̀ծ, թա. «Սա իվիլ թամահ ա, մին կյառնու տըմա̀կու կաշառք ա, մին կընգա քյա̀լա̀նգյ ա̀»:

Անց ա կենըմ մին քանի օր, Պըլը-Մելը տեղը դինջա̀նըմ չի, մին օր կընգանը թա. «Ա կընեգյ, քյընամ ըմ էծս պիրիմ»: Կընեգյը զըրմանըմ ա, թա. «Մըհենգյ քյընա̀լու ըս հինչ ա՞սիս»:

Պըլը-Մելը եր ա կենըմ քյընա̀մ վաղզալ, մին վագոնի բիլեթ առնըմ, քյընամ դերին կոշտը, թա. «Ա՛ դեր, ես վըղզալան ըմ կյամ, հասե ըսել իմ բիլեթս, ճանապարվըմ ըմ, յա ինձնըհետ եք քյընանք, յա էլ էծս ետ տռ: Դերը չգյիդալավ, վեր Պըլը-Մելը դիվանբաշուն իտի քյա̀լա̀գյ ա եկալ, արխային ասըմ ա. «Հունց անինքյ, էլըհա քյընանք դիվանբաշուն կոշտը, հինչ վեր ասե, ինդի էլ կանինքյ»: Պըլը-Մելը թա. «Դե եր, ճելլ ըրա, վագոնը քյընամ ա»: Եր ըն կենըմ ճոխտավ կյամ դիվանբաշուն կոշտը: Դիվանբաշին լըհա̀ վեր Պըլը-Մելեն տեսնըմ ա, վըեննը-ծերքը տըղտո̀ղըմ ա, շուտ ա անըմ դերին յրա կըզնվըմ, թա. «Հինչ ա՞, մինչև մըհենգյ հա̀լա̀ ըտրա էծը ետ չը՞ս տըվալ, դե շո̀ւտ քյընա պեր տռ ո̀ւրա̀ն»: Դերը վեր օզըմ ա, թա քյընա̀, Պըլը-Մելն ասըմ ա. «Էրկու հո̀լն էլ ասե թող պիրի» Դիվանբաշին եխան ըզըդելու դա̀րդա̀ն դերին ասըմ ա. «Էծին նըհետ էրկու հո̀լն էլ պեր»: Դերը քյնամ ա էծը նան էրկու հո̀լն էլ պերըմ, տամ Պըլը-Մելեն: Պըլը-Մելը էծը նան հո̀լերը յոր ա օնըմ կյամ տռն, կընգանը թա. «Ա՛ կընեգյ, դե մըհենգյ ապրե, հա ապրե, փողը կա, էծը կա, հո̀լերը կա, ես կամ, տռւ կաս»:

Պըլ-Մելը քյընա̀լա̀ն ետը դերը դիվանբաշուն անա հըրցնըմ ա. «Դիվան-բաշին ապրած կենա, պա էտ հունց տե՞ռավ, վեր մըն էլ փիչը հուլլըրեցեր բիդի Պըլը-Մելը»: Դիվանբաշին թա ասըմ ա. «Էն օյինը վեր իմ կըլխես ա սարքալ, քու կըլխետ սարքած ինա̀ր, մըհե տռւ սանդուղեն նըհետ էրված իր, դե տո̀ւս եք քյընա̀, օրաս տենը մարթդ ճընա̀նչի, նըհետը կործտ փըռնե»:

46.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ԿԸՆԵԳՅԸ ՄԱՐԹԻՆ ՀԸՐՈՒՍՏԸՑՐԱԼ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ, մին շատ հարուստ մարթ ա իլա̀լ: Էս հարուստ մարթը փըսակվալ ա թա չէ, առաչվա օրից կընգանը վըեննը եկալ չի, ամեն օր էս հարուստ մարթը վընաս ա ըրալ, ամեն օր մին փորցանքի մաչ ա ընգալ, մին օր պըրախոդն ա տակ ըրալ, մին օր զավոդն ա կըրակ ընգալ, մին օր խազնան կըտրալ, վերչը էն օրն ա ընգալ, վեր տըեսալ ա, հացու փող էլ չի ինիլու, մըտածալ ա, մտածալ, վեր կընգանը քշտեն սըվիրես չի մընա, կոզի կընգանն էլ շատ սիրելիս ա իլա̀լ, ասալ ա. «Ա՛ կընեգյ, տըեսնըմ ըմ. վեր կործերս թա̀րս տ քյինըմ, տու էքյո̀ւծ քյինի քու հա̀րա̀նց տոն, տըեսնամ ես հինչ ըմ անըմ, համոթ ա, վեր քյըզնըման կընգանը կարըմ չըմ պահիմ»:

Կընեգյը գյիդա̀լիս ա իլա̀լ մարթին քյանբախտոթութունը, վեր ո̀ւրա̀ն կյա̀լա̀ն ետն ա լոխ պըտահալ, ասալ ա. «Ա՛ մարթ, քու քյանբախտությանը պատճառը ես ըմ, պա ես քյեզ հո̊ւնց թողիմ քյինիմ, քյըզանա մին պեն ըմ խընթըըմ, վեր տու թողիս, լոխ էլ կըդո̀ւզի ամմա դե ո̀ւրթո̀ւմ ըմ օտըմ՛ հինչ վեր անիմ, էլ քյեզ ծախիմ վէչ, կընդ ինձ իրեք օր հո̀քյմը տո, հինչ վեր օզիմ, անիմ, մունք լա̀վ հըրուստանանք, տու էլ մայա կըփըռնիս, թա̀զա̀ կըհուրուս-տանանք, համ էլ քյեզ հինչ վեր ասիմ, ինդի պիտի անիս, ինձ քյո̀ւմա̀գյ ինիս, ընդրանավ էլ մինչև իրեք-հենգյ օրը մունք կըհուրուստանանք»: Մարթը մըտածըմ ա, մըտածըմ, կընգանը հըվատըմ, թա ասըմ ա. «Դե վեր էտքան տու գյո̀ւդո̀ւմ ըս, ըրա տըեսնամ հինչ բիդի անիս»:

Էս մարթին կընեգյը համ ջա̀հիլ ա իլա̀լ, համ էլ դա̀շա̀նգյ: Էքյսը եր ա կենըմ մին լա̀վ հաքվըմ, տանան տո̀ւս կյամ քյինըմ խազնադարին կոշտը: Խազնադարն էս կընգանը տըսնալավ, խելքը օզըմ ա թա կուրցընէ: Էս կընեգյն ասըմ ա. «Օզըմ ըմ քյըզնըհետ մին ղըրաղ տեղ պատառ զո̀ւրո̀ւց անիմ, չո̀ւնքյի տու բիդի էս կործը գյիդա̀ս»: Խազնադարը եր ա կենըմ տո̀ւս կյամ, քյընա̀մ ըն մին ղըրաղ տեղ նըստըմ: Էս կընեգյն ասըմ ա. «Կոշտտ մին մըսլըհաթու ըմ եկալ, ինձ մին մարթ ա իլա̀լ, առե իտի քյըզնըման, քու բոյին, ինքյն էլ ա իլա̀լ խազնադար, հես ա տասսը տարե ա՝ քյեցած դարիբոթուն, մըհենգյ խաբար ա եկալ, վըեր մեռալ ա, ես օզըմ ըմ մարթու քյինիմ, ամմա դե մին դեր էլ կա, մին քյոխա էլ, հենըն հետս կըտրած, իննա̀դու ընգած: Քյոխան ասըմ ա, վեր ես ղուլլուղավ մըեծ ըմ, ես ըմ տընելու, դերն ասըմ ա՝ ես ասծու ծառան ըմ, ես ըմ տընելու: Դո̀ւզն ասած ես էլ վէչ մինին ընդրանց անա օզըմ չըմ քյինիմ, ես կօզիմ քյեզ կյամ, չո̀ւնքյի տու համ մարթիս նըման

ըս, համ էլ քու փեշակտ մարթիս փըշա̀կան ա»:

Էս խազնադարը վեր լըըմ ա էս կընգանը խոսելը, յրան հո̀ւրո̀ւմա̀լա̀գյ ա ինըմ, ասըմ ա. «Պա ես հենըմ քյըզերա պըլացած, պա կըթողի՞մ, վըեր ըտրանք քյըզանա մուտանան, ես խազնադար ինիլավ ըտրանք հինչ ը՞ն, վեր իմ ըռըչիս ծըպտան, դե վեր մինը դոլլըղավ ա մըեծ, մինն էլ ածու ծառան ա, ես էլ փողավ ըմ զոռավ, քյեզ կըկյընհատինքյ, հու վըեր փողը շատ կըտա, ընդրան էլ կըքյինիս, վըեր առե լափ հա̀րո̀ւր հազզար էլ կյինտ պըցըրցնին, ես տըլական ըմ, արխային կաց, ո̀ւրա̀նց ծերքան ինքյ օնիմ, թա̀քյ տու ռազի ինիս»: Էս կընեգյը թա. «Հոր ա՞, հոր ա՞, մըհենգյ էքյո̀ւծ ո̀ւրո̀ւգյո̀ւնը կյա̀լու ըն մըեր տոն՛ կոշտըս, վըեր համ օտին-խըմին, համ էլ էտ խերը-շառը կըտըրին, տու ըս գյուղըմ, օզըմ ը՞ս տու էլ եք ո̀ւրա̀նց քըշտեն վիրչըցընինքյ, տու արխային կաց, ո̀ւրա̀նք հիշքան էլ վեր փողը շատ տան, տու լափ շատ կըտաս, մին ա իլի, վերչըմը էտ փողը մերն ա իննա̀կան»: Խազնադարը ուրխընալան տո̀ւս ա օնըմ մին քանի հազզար մանեթ տամ, թա ասըմ ա. «Դե կա քյինի տեսա̀-տենա̀ առ, էքյո̀ւծ հըզըրե, ես էլ ըմ կյա̀լո̀ւ, հինչ հարկավեր ա, ընդըեղ կըտըրցնինքյ, փողեն ջանը ինի սաղ»:

Էս կընեգյը ըտըղան քյինըմ ա դերին կոշտը, կուտրատվելավ, ուրուր-վելավ-տուրուրվելավ դերին էլ նաղլը անըմ ինդի, հունց վեր խազնադարին: Դերը վեր լըսըմ ա էս կընգանն ասածը, օզըմ ա թա օշան տանե, ամմա դե վախըմ ա, թա կընեգյն ո̀ւրա̀ն քյինի վեչ, չո̀ւնքյի մեծ ինիլա̀ն: Էտ դա̀րըմը կընեգյն ասըմ ա. «Պա ես օզըմ ըմ լըհա̀ քյեզ կյամ, չո̀ւնքյի մարթը կընգանան հիշքան մըեծ ինի, լա̀վ կապրե, ջա̀հիլը հինչ ա, մին օր ըստըեղ, մին օր ընդըեղ, ուրերավ իսկի տոն էլ չի կյիլա̀կան , համ էլ իմ մարթս էլ ա դեր իլա̀լ, տու էլ սո̀ւր-սըփաթավ մարթիս նըման ըս, մըհենգյ քյոխան ասըմ ա՛ ես դոլլուղավ ըմ մըեծ, խազնադարը թա ես՝ փողավ: Մըհենգյ էքյո̀ւծ ո̀ւրո̀ւգյո̀ւնը կյա̀լու ըն մեր տոն, օտին-խըմին, մին կյինա կըտըրցնին, հու վըեր իվիլ տըվավ, ես էլ բիդի ընդրան քյինիմ, մըհենգյ հիշքան կարիս, փողը շատ եր կալ, վըեր փողավ րն դրանց ռըխնեն ճըղիս, հիշքան էլ ո̀ւրա̀նք իվիլ տան, տու ընդրանց անա իվիլ կըտաս, չո̀ւնքյի մըեր փողն ա իննա̀կան իլի, մին ա, ես քյեզ ըմ կյա̀լո̀ւ»: Դերն էլ ա տո̀ւււս օնըմ մին քանի հազզար մանեթ, թա. «Կա, քյինի թադարիքյ տես, էքյո̀ւծ ո̀ւրո̀ւգյո̀ւն ես էլ ըմ ծեր տանը»:

Էս կընեգյը դերին քըշտան տո̀ւս ա կյամ, քյինըմ քյոխեն կոշտը, հինչ վեր ասալ ա խազնադարին, դերին, ինդի էլ ասըմ ա քյոխեն, քյոխեն անա էլ մին

քանի հազզար մանեթ պուկում, կյամ տոն, մարթին, թա ասըմ ա. «Կա, էս քանի հազզարը եր կալ հ՞ըլ՞ը, էքյ՞ուծ ըտրանա մին քանի մանեթ օտել-խըմելու կըտաս, վըեր դերը, խազնադարը, քյոխան կյըլական ըն հըրսա-նեքյս անին, լըհ՞ը վեր նըստինքյ վախտը վըեր եկավ, էս փ՞ըրդ՞ըն պեց ըրե, մին էլ նըհետ ըրե, տու տոռնը քըթակիս, հինչ վըեր հըրցընիմ, ջողաբըս թ՞ըրս կըտաս»:

Էտ օրեն էքյսր ՞ուր՞ուզյ՞ունը դերը, քյոխան, խազնադարը կյամ ըն էտ կընգանը տոնը, տըեսնըմ ըստոլը սարքած, ՞ուր՞ընք ըստոլեն քըշտեն նըստոտըմ, դերը թա, ասըմ ա. «Ա՛ խալխը, մունք ըստեղ լոխ մին նըպատա-կավ ընք եկալ, եկեքյ էտ խերը-շառը կըտրինքյ, ետնան հաց օտինքյ»: Լոխ էլ վեր ռազի ըն կենըմ, խոսկը տամ ըն քյուխեն, քյոխան թա ասըմ ա. «Մունք էս կընգանը մ՞ուշտ՞ըրին ընք, էնքան լ՞ըվ ա, վեր մըեր մաչին մին շըլթաղ չի կա, լոխ էլ հունց վեր տըեսնըմ ընք, ընըմավեր մարթիքյ ընք, մըզանա վըեչ կըռըեվ անող ա իննըկան, վըեչ մարթ ըսպանող, ամեն մինը ՞ուր՞ըն պատիվն օնե, եկեքյ էս կործը խերավ կըտըրրինքյ, էտ կընեգյը հ՞ուր կընգնե, ընդրան էլ կըքյինի»: Դերը թա ասըմ ա. «Շատ լ՞ըվ կինի, պա հունց կըտը-րինքյ»: Քյոխան թա ասըմ ա. «Պերինքյ չոփ քըցինքյ»: Դերը թա ասըմ ա. «Չէ՛, ՞ուր՞ըն անա հըրցընինքյ, հ՞ուրը օզե, ընդրան էլ քյինի»: Խազնադարը թա ասըմ ա. «Չէ՛, վըեչ չոփ քըցինքյ, վըեչ ՞ուր՞ըն անա հըրցնինքյ, պերինքյ էտ կընգանը կյինիատինքյ, հու վըեր շատ փող տա, էտ կընեգյը ընդրանը ինի, ես էտ կընեգյը կյինիատըմ ըմ հազզար մանեթ, հասե իմ հազզար մանեթըս»: Ասըմ ա, փողը ըստոլեն վըեր տինըմ: Դերը թա. «Ես՝ էրկու հազզար մանեթ»: Քյոխան թա. «Ես՝ իրեք հազզար»: Խազնադարը թա. «Ես հենգյ հազզար»: Ո՞ւր՞ուր եշիլավ, ՞ուր՞ուր աջուղու էտ կընգանան իննըդի իլ՞ըծ հանց ա վըեր հանըմ ըն փողերը ըստոլեն վըեր ածըմ, տու կասիս խազալ ինի: Կընեգյը , վըեր տեսնըմ ա քյոխան ան դերը փող տալըմ տըժիրանըմ ըն, փ՞ըրդ՞ըն թաքուն պըցըհոփ ա անըմ, էտ դարըմը մարթը տոռնը թակըմ ա, կընեգյը հըրցընըմ ա. «Հո վա՞»: Մարթը թա. «Ա՛ կընեգյ, ես ըմ, ես՝ քու մարթըտ, տոռնը պեց»: Էս կընեգյը թա, ասըմ ա. «Իմ մարթիս մըռնելին հեսա վեց տարե յա ընցալ»: Մարթը կըզնըվըմ ա, թա. «Շոն շան քած, էտ հինչ ա՞, տու դ՞ուշմ՞ընին խոսկեն հըվըտացալ ըս, ինձ հըվատըմ չը՞ս, քու ըստինըտ, քու ընդինըտ, հես ա ես տոռնը կոտրիմ, տես քու կըլխետ հինչ ըմ տինելու»: Կընեգյը թա. «Լ՞ըվ ա, լ՞ըվ ա, տոռնը կոտրել մե, հես ա պեց անիմ»: Համ ասըմ

ա, համ ծո՛ւնգյներեն, կըլխեն թըխըմ, թա. «Վայ, մեզ կուտուրելու վա»: Դերը, քյոխան, խազնադարը ահան սըրտաճանք ինիլա՛ն փողերը թողին ըստոլեն երան, ո՛ւրա՛նք տանավը բուլղի կըտըրըմ, էլ վեչ կընզանը եշին, վեչ մարթին, ակուշկան պեց անին, փախճին, կընեգյը տոռնը պեցի, մարթը նի մըննե, կընեգյը համ ակուշկան կապե, համ էլ ծիծըղելավ մարթին ասե թա. «Ա մարթ, դե հըվաքե էտ ըստոլեն յրա փողերը, տեսե՞ ր կընզանըտ հինա՛րը»:

Տանան դերը, քյոխան, խազնադարը վըեր փախճըմ ըն, ո՛ւրա՛նք-ո՛ւրա՛նք մընամ ըն զարմացած, վեր համ փողը քյընա՛ց, համ էլ ո՛ւրա՛նք մընացեն առանց կընեգյ: Կյամ ըն էտ տըռանը տակեն կըղնոտըմ, մըսլըհաթ անըմ: Մարթն ան կընեգյը վեր ըտրանց քըսփըսոցը լըսըմ ըն, լամբը հինգյըցնում ըն, անգուճ օնըմ, թա տըեսնան հինչ ըն խոսըմ: Խազնադարը թա ասըմ ա. «Օրիշ ճար չի կա, սա նամուս չի, եկեքյ որոշինքյ, վեր քշերըս էտ կընզանը թիքյա՛- թիքյա՛ անինքյ, կըտրան մին պատառ ծակինքյ, նոբաթավ քըշանանք ամեն մինը էտ կընզանը մին տեղան կըտըրե, ես ծըզանա ջա՛հել ըմ, առաչ ինձ կըպեցեքյ, քյինդիրավ քըշըցրեքյ, աշկերը ես տո՛ւս տամ, վեր իրեք հետ հըմբարիմ, վերչըմն ասիմ փը՛րթ, ինձ ծեռաց կըպիրցըցընեքյ, ետավ քյոխան քըշանա ծերքեն մինը կըտըրե, ըտրան էլ տասը հետ հըմբարելը, մին փըրթ անելը, դե դերը պառավ ա, անջախ մինչև ծերքեն մինը կըտըրե, քառասուն հետ կըհըմբարե, մեհետ փըրթ անե, կըպիրցըցընինքյ»:

Հունց վեր ասըմ ըն, ինդի էլ անըմ ըն, քյինըմ ըն մին քյա՛նդիր պերըմ, տանը կտորը ըսկըմ ծակելը: Էտ մարթն ան կընեգյը լոխ լըսած ըն ինըմ, մարթը, թա ասըմ ա. «Ա՛ կընեգյ, քյընա՛ կըրակը ը՛րա, իրեք հատ շամփուր տիր կըրակեն, թող կյըրմիրի , ամեն մինը լըհա՛ վեր քըշանա, շամփուրավ բիդի դաղիմ»: Մին պատառ վեր անց ա կենըմ, եշըմ ըն տըեսնըմ խազնա-դարը կապած քըշանըմ ա: Էս մարթը թա. «Ա՛ կընեգյ, շամփուրը պեր»: Կընեգյը շամփուրը պերըմ ա. էս մարթը կեծ շամփուրը վըեր կոխըմ ա մին փըրթ անըմ, պըցըրցընըմ ըն, ամմա դե վեչ դերին ա ասըմ, վեչ քյոխեն: Քյա՛նդիրը կապըմ ըն քյոխեն, քյոխան քըշանըմ ա: Շամփուրը վըեր կոխըմ ըն, մինչև տասը հըմբարելը մեհետ փըրթ ասելը իրեք հետ դաղըմ ըն , քյոխան էլ չի ասըմ: Պերըմ ըն դերին քըշըցնըմ, խազնադարն ան քյոխան ո՛ւրա՛նց ցավը մուռանըմ ըն, ըսկըմ դերին անավ ծիծաղելը, թա էս վեր քյոխան մինչև տասսը հըմբարելը իրեք հետ ա ծակալ, պա դերը մինչև քառասունը հըմբարելը, մին հետ փըռթ անելը քանի՞ հետ ա ծկվելու: Դերը

լըհա̀ վեր քըշանըմ ա, շամփուրը վեր կոխըմ ըն, մինչև հենգյը էրկու հետ, մինչև օխտը իրեք հետ, մինչև տասսը հենգյ հետ... Ճարը կըտըըմ ա, շո̀ւտ-շո̀ւտ, թայղի-թայղի տասսը-տասսը, քսան-քըսան հըմբարըմ ա, տեսնըմ ա վեր ծիքյ չըն տամ, ախրը ճըղղամ ա թա. «Արա՛, քառասունըմին տեղ փըրթ»:. Վերչը պըցըրցնըմ ըն, տեսնըմ էլ ըշտե՞ղ, դերըմը էլ հա̀լ չի մնացալ:

Խազնադարը, դերը, քյոխան, իրեքն էլ շըմփուրավ դաղված, էտքան փուլերը խարջած, մըտածըմ ըն, թա հինչ անին: Խազնադարը թա ասըմ ա. «Ես կարել չըմ քյինիմ կյենգյատ անիմ, վեչ գյիղա̀ն, խազնեն փողերը տարալ ըմ ցըրըեվ տըվալ մին կընգա դա̀րդա̀, վերչըմն էլ շըմփուրավ էրվալ, ինձ հինչ կա՞սին»: Քյոխան թա ասըմ ա. «Ես էլ չըմ կարել քյինիմ կյանգյատ անիմ, հու վըեր լըսե, ինձ ցա̀քյըմ կըտինի, թա տու քյոխա ինիլա̀վ իտի ախմախ պեն ըս փըռնալ»: Դերն էլ թա. «Պա ե՞ս, ես կըկարի՞մ, վըեր քյինիմ կյենգյա̀տ, հիշտեղ էլ քյինիմ նաղլ անիմ, մուրոքըս կըքանդին, փեւոնըս հանին, ինձ բիյաբուռ անին, եկեքյ ի սեր ածու, էս քյա̀լա̀գյը մինակ մունք գյիդանք, մին քար կըլխեն տինինքյ, մինը տակեն, վըեչ մինին կոշտն էլ կյենգյա̀տ չի քյինանք»: Հունցը վըեր ասըմ ըն, ինդի էլ անըմ ըն, վըեչ մին տըեղ էլ քյընամ չըն կյենգյա̀տ:

## 47.ԿԸՆԳԱՆԸ ՔԱ̀ՆԴԱ̀Ծ ՏՈՆՆ ԱՍՏՎԱԾ ԷԼ ՉԻ ՔԱ̀ՆԴԻԼ

Ինըմ ա չինըմ, մին քյասիբ մարթ ա ինըմ, շատ էլ խուխատար: Էս մարթին կընեգյը համ ա̀նպեն ա ինըմ, համ թա̀մբա̀լ, մարթին ըշխադանքն էլ ցըրն տվող: Էտ կընգանը մարթը շատ ըշխըղասեր ա ինըմ, քյընիմ ա ըս տըեղ-ընդըեղ ըշխադանք անըմ, խուխոցը հետե ռուզի պերըմ, վըեր խոխեր-քը պահե: Հինչ վըեր էտ մարթը պերըմ ա, էտ կընեգյը լոխ մին օրըմը ցըրն ա տամ, համ փըչըցընըմ, համ պըժենըմ: Էս խըեղճ մարթը կարըմ չի, թա էս կընգանը սըվըրցնե, թա տոնը հունց կըպահին: Վըեր օրը մին փութ հաց էլ կյա̀ էտ տոնը, էքյսը մին կտոր հաց չի ինիլ, լոխ ցըրն ա տամ:

Մին օր էս մարթը մին չըվալ ցորեն ա պարտք անըմ, պերըմ տոնը, վըեր պահին, ծըմեռնը խոխերքը կըտորվին վըեչ: Ճարը կըտըըմ ա, կընգանը խա̀փըմ ա, թա էս ցորենն ամանաթ ա, մըերը չի, իմ ծանոթ էրկու քյիրվաս ըն տըրվալ, վըեր պահիմ, հիբը վըեր օզին, կյա̀լու ըն տանին, ծըերք չի տաս, շիլ չընգնիս յա խարջիս, յա էլ օրիշի տաս, չուվալեն ռըեխն էլ պեց չանես, թող իրեսին ճըրա̀վը կենա, մինչըեվ կյա̀ն տանին:

Էքյսը մարթը քյինըմ ա ըշխըդանքու, կընեգյը մընըմ ա տանը խուխո-ցավը։ Մին պատառ վըեր օրը ետ ա ընցնըմ, էս կընեգյը կոժը յոր ա օնըմ, վըեր քյինի ախպո̈ւրը, ճո̈ւր պերի։ Եշըմ ա տըեսնըմ շենը մը էրկու չովդառ էրկու ծի եր կալած, շենին մաչըմը կաղնած, եկալ ըն, վըեր տեսա̈-տենա̈ առնին, տանին ծախին, էս կընեգյը, վըեր տըեսնըմ ա ըտրանք կաղնած, քթըեն տակեն ասըմ ա. «Վի՛, մըեր քյիրվեքյն ըն է՛, եկալ ըն ցորնեն տան, վըեր տանին, խըեղճերը տանը տըեղը գյո̈ւղո̈ւմ չըն, մընացալ ըն շենումը կաղնած քյինիմ ասիմ, տանիմ ցորենը տամ ո̈ւրա̈նց»։ Էլ ախպո̈ւրը չի քյընա̈մ, քյընա̈մ ա ըտրանց կոշտը, թա. «Ծըեր ցորենը հեն ա մըեր տանը, եկալ ըք տանիքյ հա՞, ես լըհա̈ գյիդա̈ցե, վըեր տանը տըեղը ճրնա̈նչըմ չըք, է՛կեքյ, է՛կեքյ քյինինքյ ծըեզ տամ, տարեքյ, մըեր մարթն ինձ ասալ ա»։ Էս մարթիքյը ձեռաց գյո̈ւղո̈ւմ ըն, վըեր էս կընեգյը սըրսաղված ա, թա ասըմ ըն. «Հա իլի, տանը տըեղը ճըննա̈նչըմ չընք, քյընանք ցորենը մըեզ տո, աստված մարթըտ պահե»։

Էս կընեգյը տերտակ կոժն օսեն ուրախ-ուրախ ըռըչնեն ա ընգնըմ, թայդի-թայդի կյամ տոն, ցորնեն չըվալը նշանց տամ, թա. «Հեսե՛, եր կալիքյ տարեքյ»։ Էս չովդառնեն շուտ ըն անըմ չըվալը խըտտըմ, վըեր տանին։ Հընգերեն մինը վըեր տըեսնըմ ա մին սո̈ւրո̈ւ խոխա տըկլոր, վընըըրնեն պեպեգյ, սոված, մեխկըն ա կյամ էտ խըխոցը, թա ասըմ ա. «Քույրիկ, մին ղըզղան պեր, էտ խըխոցը փայ տանք։ Էս կընեգյը ղըզղանը պերըմ ա, սրանք մին ղըզղան լըցնըմ ըն թողըմ, չուվալը յոր օնըմ, քյինըմ։ Չովդառնեն քյընա̈լան ետը մին պատառ անց մարթը կյամ ա տոն։ Կընեգյը վազ ա տամ առաչը, հա̈լա̈ մարթը տոն չի նի մըտած, ուրախ-ուրախ մարթին թա. «Քյիրվեքյը եկած ըն իլա̈լ շենը, մըեր տանը տըեղը գյիդա̈ցալ չըն, քյեցալ ըմ ասալ, եր կալալ պերալ տոն, ցորենը տըվալ ո̈ւրա̈նց, տարալ ըն, լա̈վ ա, վըեր ինձ ասած ըս իլա̈լ, խեղճերը մըհե սաղ օրը մընալու ին շենըմը կաղնած»։

Էս մարթը տըեսնըմ ա, վըեր կընեգյն իտի ախմախ պեն ա փըռնալ, թա ասըմ ա. «Էն ճըրդոտած մեզա̈րը պեր ըստեղ»։ Կընեգյը վազ ա տամ պերըմ։ Էս մարթը կյեցին շորերն էլ հանըմ ա վըեր ածըմ, տըկըլոր, մեզա̈րը շոռ օնըմ, թա ասըմ ա. «Շան կընեգյ, ես էլ կըրեցե վըեչ քյեզ կընեգյ շինիմ, ես քյեցե, իմ կըլո̈խըս մին թա̈հրա̈վ կըպահիմ, տու քու լըկուտնետ պահե»։ Ասըմ ա, մեզա̈րը շոռ կալած տո̈ւս կյամ քյինըմ։ Շատ ա քյրնըմ, խրեգյ ա քյրնըմ արևը մար ա մըտնըմ։ Շատ նըղացած ա ինըմ, հըսնըմ ա մին հարուստի

տան կոշտ, պատըեն տակեն պարանց ա ընգնըմ, թա դինջնանա։ Տու մե ասել, էս հարուստը տանը չի ինըմ, մինակ կընեգյն ա տանն ինըմ։ Էս կընեգյն էլ ուրան կընգանան բեթար վըեր եշըմ ա տըեսնըմ ուրանց պատեն տակեն մին մարթ պըրանած, ասըմ ա, «Քյընալու ըմ տըեսնամ՝ էս մարթը հու վա»։

Էս կընեգյը կյամ ա, թա. «Ա՛յ մարթ, տու հու վը՞ս, վըեր ըտըեղ պըրանալ ըս»։ Էս մարթը խըեղճ-խըեղճ թա ասըմ ա. «Քու՛յրիկ ջան, ես մըեռալ ըմ, հընգյիստան ըմ կյամ, վախտըս թըմամալ ա, ինձ պեց ըն թողալ, մըհենգյ կյեցիս շորեր չի կա, ըստըեղ պըրանըմ ըմ, վըեր մըթնե, ետնան քյինիմ, համոթ ա»։ Էս կընեգյը վըեր լըսըմ ա թա մըեռալ ա, հընգյիստան ա կյամ, ուրխանըմ ա, թա. «Դե ասե իմ հոր տըեսալ ըս իլի»։ Էս մարթը հըրցըփորց ա անըմ, հորն անըմը, փեշակը գյուղում, սոտ-սոտ տըեղան ուրթում ուտըելավ հըվըրտցընըմ, վըեր. «Հա՛, տըեսալ ըմ, հալա ինձանավ էլ փասպարք ա ըրալ»։ Էս կընեգյն առե հըվատըմ ա, թա. «Դե եր, եր եք տոն, ըշկըերետ մատաղ, մին նաղլ ըրա տըեսնամ, սըերտս ճաքից, քշերըս իմ դոնաղըս ըս»։ Էս մարթը տըեսնըմ ա, վըեր էս կընեգյն ուրան կընգանան էլ բեթար սարսաղ ա, թա. «Հա՛, կյամ»։ Ասըմ ա, մեզարը շոռ օնըմ, պիցըրանըմ էտ հարուստեն տոնը, տըեսնըմ, ա՛րա, հինչ տո՛ն, հինչ ապրո՛ւստ։ Մըտկըմն ասըմ ա. «Քշերըս էլ վըեր ըստըեղ կենամ, առե կըմըխթարիմ, դե մին հըրցըփորց անիմ»։ Ետնան հըրցնըմ ա, «Հու վը՞ս, մարթա-պենա, խուխա-ըրխա հի՞նչ օնիս, հի՞նչ չօնիս»։ Էս կընեգյն էլ հինչ վըեր ասըմ ա, մըեննան ընգնըմ ա. մարթին անըմը, հորն անըմը, ուրան անըմը լոխ ասըմ ա։ Էս մարթն էլ վըեր ըտրանց ընըմնեն տամ ա, էս կընեգյը գյուղում ա, թա ուրան հարն ա ասալ, լավ ուտըցնըմ ա, խըմըցնըմ ա, շորեր ա տամ կյենա, թա ասըմ ա. «Քշերըս էլ ըստըեղ կըկե-նաս, էքյուծ քյեզ կըճանապարիմ մինչև մարթըս կյալը։ Չունքյի վըեր մարթըս եկավ, ես բիդի մուշտուլուղ օզիմ, վըեր իմ հոր քշտան եկող ա իլալ»։ Էս մարթը ռազի յա կենըմ, ամմա դե վախըմ ա՝ մարթը քշերավ կյա պըտահե, կործերը փոզմիշ կինի, խընթըըմ ա, թա վըեր քշերավ շուտ ճանապարե, լոխ նաղլ անե։ Իտի էլ խոսկ ըն տամ, էտ մարթը լավ ուտըելան-խըմըելան ետը նաղլ ա անըմ, թա. «Քու հոր վաղան էլ ա թըմամալ, հենա աշկը հըղեց, պեց չըն թողնըմ, ընդըեղ համ պարտք օնի, համ էլ շորեր չօնի, ինձ խընթըրալ ա, վըեր քյեզ պըտահիմ, լոխ նաղլ անիմ»։ Էս կընեգյը ուրախութունան գյուղում չի, թա հինչ անե, լըհա խոսկեն տակեն. «Ըշկըերետ մատաղ, վըեր տըեսալ ըս իմ հոր»։

Առավոտն էս կընեգյը պիրըմ ա ՙուրա՚ն  մարթին հիշքան լա՚վ- լա՚վ շորեր օնե, էս մարթին կյեց տամ, մին մըեծ բոխճա էլ կապըմ հորը հետե շորեր, մին քանի հազզար մանեթ էլ տամ համ հոր պարտքը , համ էլ ՙուրա՚ն ։ Էս մարթը պեռնին տակեն տընքտընքալավ տ՚՚ուս ա կյամ, քյինըմ։ Էս մարթր վըեր տ՚՚ուս ա կյամ էս կընգանը մարթը կյամ ա։ Մարթը վըեր լըհա՚ մըղակավը նի յա մըննըմ, կընեգյը վազ ա տամ կոլավն ընգնըմ, թա ասըմ ա. «Ա՛ մարթ, մաշտուլուղըս տո, մին լա՚վ պեն ասիմ»։ Էս մարթը թա. «Ա՛ կընեգյ, տու հինչ բիդի ասիս, վըեր ինձ ուըխըրցընիս»։ Կընեգյը թա. «Չէ՛, մինչև վըեր տաս վըեչ, ըսըլական չըմ»։ Մարթը ճարը կըտըրած, վիզավ ա օնըմ։ Կընեգյը թա. «Իմ հա՚ր կյամ ա»։ Էս մարթը թա. «Ա՛ կընեգյ, քու հոր մըռնելին հես ա քսան տարե յա, մըեռալը ետ կըկյա՞, էտ հու վա՞ քեզ խա՚փա՚լ»։

- Ա՛ մարթ, քըշտան եկող ա իլա՚լ, վըեր տըսնիր իմ հոր խոսքերքը նաղլ ընելիս, մա՚թա՚լ կըմընիր, քու անըմըտ, իմ անըմըս ամեն հինչն իմ հար հըսկըցըրալ ա, պատառ պարտք օնե, համ էլ շոր չօնե, էն մարթին անավ հիշքան վըեր լա՚վ շորեր օնիս, լոխ տըվալ ըմ տանե, հա՚լա՚ մին խիլլա էլ փող ըմ տըվալ։

Էս մարթը տըեսնա վըեր կընեգյը սըրսըղոթուն ա ըրալ, հըրցընե, թա. «Հունց քյե՞ցավ»։ Կընեգյը նշանց տա էտ մարթին քյեցած հըղեն։ Էս մարթը տ՚՚ուս կըկյա ծին եր ինի հետան քյինի, վըեր փըռնե, լոխ յոր օնե։ Շատ ա քյինըմ, թա խըրեգյ, չըհասած մին ճըղացի, եշըմ ա, տըեսնըմ՝ մին մարթ ա քյինըմ։ Էն քյինացողը հա՚մին մարթն ա ինըմ։ Ետ ա եշըմ, տըեսնըմ մին ծիյավեր հետան կյամ ա։ Մըտածըմ ա. «Ըսա յա ղաչաղ ա, յա էլ էն կընգանը մարթը»։ Շուտ ա անըմ նը մըննըմ ճաղացը, պեռնը տըռանը կյեղըմ, իրեսը, շորերը, ա՚լ՚՚ուր՚՚ուտ անըմ, տ՚՚ուս կյամ ճըղացեն մըղակըմը կաղնըմ։ Ծիյա-վըերը կյամ ա հըրցընըմ. «Տու հու վը՞ս»։ Էս մարթը թա. «Ես ճըղացպան ըմ»։ Ծիյավըերը՝ թա. «Մին շելակը մըշկեն մարթ չի տըեսե՞ր»։ Էս թա. «Տըեսե, նը մըտավ ճաղացը»։ Ծիյավերը վըեր ա կյամ ծիյա՚ն, կապը տամ էտ մարթին, թա. «Ծիս պահե մին», ինքյը նը մըննըմ էտ մարթին հետան ճաղացը։ Էս մարթը պեռնը յոր ա օնըմ, ծին էլ նըստըմ, փախճըմ։

Հարուստը ճըղացան տ՚՚ուս ա կյամ, տըեսնըմ վըեչ ծին կա, վըեչ ճըղաց-պանը։ Ըստըեղ կըլ՚՚ուխ ա ընգնըմ, վըեր էտ էն հա՚մին մարթըն ա, ծին էլ եր ա կալալ, փախալ։ Քոռ ու փեշման, վըեննավ կյամ ա տոն։ Կընեգյը հըրցընըմ

ա, թա. «Ա՛ մարթ, հիշտե՞ղ քյեցեր էսքան վախտ»: Մարթը թա. «Պա քու հա̀ր վըեննավ ա՞ կյա̀լու, տարե ծին տըվե էն մարթին, վըեր տա քու հոր, հանցու ծիյավ կյա̀»: Կընեգյը թա ասըմ ա. «Խըելքետ մատաղ, ա՛ մարթ, վըեր իմ հա̀ր ծիյավ ըս պերիլ տամ»: Մարթն էլ թա. «Քու էլ խըելքետ մատաղ, վըեր ծին կյա̀, քու հա̀ր էլ ա կյա̀լու̀»:

Էն մարթը էտ հարուստոթունը պերըմ ա ու̀րա̀նց տոն, կընգանը թա. «Ըշխարքըմըս քյըզանա էլ ախմախ, տընըրքա̀նդի կընեգյ կա, դե կեր, օտինքյ»:

## 48.ՅՈ̀ՒՐԻ-ՓԱ̀ՐԻՆ

Ինըմ ա չինըմ, մին շատ դա̀շա̀նգյ ախճիգյ ա ինըմ, անըմը Յու̀րի-Փա̀րի: Էս ախճիգյն էնքան դա̀շա̀նգյ ա ինըմ, վըեր լոխ զըրմանըմ ըն, պայց խասյաթն էնքան փիս ա ինըմ, վըեր վըեչ մինն էլ օզըմ չի: Շատ անբարիշ ար, խասյաթը ջո̀դ, հակառակ, վըեչ մին պենու նըհետ սազ չար կյամ, կըռվարար, հայասըզ, ու̀րա̀ն ըսածեն:

Օրերի մի օր մին օրիշ շենա̀ մին տըղա յա կյամ էս ըխճըկանն օզըմ, տանըմ: Տընելան ետը էս կընգանը նըհետ շատ տիժեր ա ինըմ ապրելը, վըեչ մին պեն լըսըմ չի, վըեչ մին պենի սազ չի կյամ, սաղ օրը կըռն ա անըմ, հայասըզոթուն, դըլմըղալ սարքըմ: Մին քանի վախտ ըպրելան ետը հիշքան օզըմ ա, թա էս կընգանը խելքի պերի, ա̀մա̀լ չի կյամ, վըեչ կարըմ ա տու̀ս քցի, վըեչ էլ կարըմ ա թա ըսպանե, վըեր ջամբար ինի: Ախըրը մըտածըմ ա, մին օր ու̀րա̀նց հյաթըմը մին խոր փոս կըտըրըմ, տըեղերը պիրըմ էտ փոսեն յրան քըցըմ, ինքյը բիդի տափը պըրանըմ, կընգանը կանչըմ, թա եք մին պատառ էլ տու պըրանե դինջա̀ց: Կընեգյը միյամիտ կյամ ա, թա պըրանե, գյիրթ ընգնըմ ա էտ փոսեն մաչը: էս մարթը մին մըեծ քար ա պիրըմ տինըմ փոսեն յրան, վըեր կընեգյն ըտըեղ էլ մըեռնե:

Անց ա կենըմ մին քանի շափաթ, մին օր էս մարթն ասըմ ա. «Մին քարը պիցըրցընիմ, տըեսնամ հի՞նչ ա տըեռալ»: Լըհա̀ վըեր քարը պիցըրցընըմ ա, էտ փոսան մին զըեռ օխծը տու̀ս ա կյամ, էս մարթին պըկավը զիրավ տամ: Էս մարթը վըխըըթոնան խըրեգյ ա մընըմ սըերտը ճաքե, օխծը թա. «Վախիլ մըեր, լափ արխային կաց, մին տու ինձ ասե տըեսնամ՝ էտ հունց մարթ ըս, վըեր ինձ էտ կընգանը ծըերքան ըզըդեցըր, քյեզ հինչ լիվո՞թուն անիմ, վըեր սըերտըս հըվանա, քու ըրած լիվոթունըտ ինձ յրա չի մնալ: Էս մարթը վըխվխելավ ասըմ ա. «Հինչ բիդի՞ անիս, հըղետ պարի, վըեր եք քյինի, քյըզ էլ պարի, ինձ էլ պարի, ընդրանա էլ լա̀վ լիվոթուն կինի»: Օխծը թա. «Չէ՛, լըսե

ինձ հինչ վըեր ասիմ, ինդի էլ կանիս. ես քյընձ̀լու ըմ թաքավըերեն ըխճը-կանը պըկավը զիրավ ընգնիմ, հինչ վըեր էլ անին, հ̀ուր վըեր էլ պիրին, վըեր չըմ կյ̀ալ̀ու, մինակ վըեր տու եկեր, հախկըտ կըխոսիս հիշքան կարիս շատ, քյեզ վըեր տըեսնամ, սուս ու փուս, վըեր ըմ կյ̀ալ̀ու քյինիմ, հախկըտ կըստանաս, քյինիս»:

Օխծը հունց վըեր ասըմ ա, ինդի էլ անըմ ա: Քյինամ ա թաքավըերեն ըխճըկանը պըկավը զիրավ ընգնըմ, մընամ ա տըեղեն մաչին նըստած: Թաքավըերը հիշքան խըելունք մարթիքյ կա, հ̀ըքյիմ կա, օխծ պար ածող կա, պերըմ ա, վըեչ մին պեն էլ կարըմ չըն անին: Էս մարթը կյամ ա թաքավըերեն կօշտը, թա ասըմ ա. «Թաքավըերն ապրած կենա, ես կըկարիմ ըխճըկանըտ ըզադիմ»: Թաքավըերը հըվատըմ չի, ասըմ ա. «Վըեր կարիս վըեչ ըզադիս՝ քյեզ կախաղան ըմ տընելու, վըեր ըզադիս՝ մին քըսակ վըեսկե ըմ տալու»: Էս մարթը թա ասըմ ա. «Ռազի ըմ»: Ասըմ ըն, քյինըմ ըխճըկանն օթաղը: Էտ օխծը վըեր տըեսնըմ ա էտ մարթին, վըեր ա կյամ քյինըմ: Քյին̀ալիս տըեղը էտ մարթին ասըմ ա. «Վըեչ մին ժամանակ կյ̀աս վըեչ, վըեր մին էլ կյ̀աս, համ ըխճըկանըն ըմ կըծելու, համ քյեզ»: Տղան խոսկ ա տամ, վըեր էլ քյըն̀ա վեչ:

Անց ա կենըմ մին քանի վախտ, էս օխծը քյինըմ ա մին օրիշ թաքավըերու ըխճըկանը վիզ̀ավը պատ կյամ: Ըստըեղ հիշքան ճարը-վար ըն անըմ, կարըմ չըն, թա ախճիգյը օխծան ըզադին: Թաքավըերը լըսըմ ա, վըեր մին օրիշ երգյիրըմ մին մարթ կա, մինակ նա յա, վըեր կարըմ ա ըզադե: Մարթիքյ ա ըղարկըմ, թա. «Քյեցեքյ պերեքյ, պեն ա, վըեր եկավ վըեչ, զոռավ էլա պերեքյ, ըսեցեքյ, վըեր կյ̀աս վըեչ, թաքավըերը քյեզ կախ ա տալու»: Էս մարթիքյը քյինամ ըն էն երգյիրը՝ էտ մարթին կօշտը, վըեր տանին: Էս մարթը օխծըեն խոսկը մըեննըն ա քըցըմ, թա ասըմ ա. «Ես կարել չըմ կյամ»: Էտ մարթիքյն ասըմ ըն, վըեր. «Մին ա, կյ̀աս էլ վըեչ, մըեր թաքավըերը հունց հ̀ըքյմ ա ըրալ, վըեր քյեզ զոռավ էլ ինի տըննական ընք, թաքավըերն էլ քյեզ կախ ա տալու»:

Էս մարթը վըխելան եր ա կենըմ, քյըն̀ըմ: Կյամ ա թաքավըերեն կօշտը, թաքավըերը տանըմ ա ըխճըկանը օթաղը: Օխծը վըեր տըեսնըմ ա էս մարթն էլըըհա եկալ ա, կըզնըըվըմ ա էս մարթին յրան, թա. «Քյեզ ասալ չը՞մ էլ կյ̀աս վըեչ»: Էս մարթը շատ վըխվըխելավ թա ասըմ ա. «Օխծ ախպըեր. ես ըտըրա հետե չըմ եկալ է՜ , ես զուտ քու կօշտըտ ըմ եկալ, վըեր քյըեզ իմաց տամ, վըեր Հ̀ուրի-Փ̀արին փոսան տ̀ուս ա եկալ, հեն ա հետատ կյ̀ալիս»: Օխծը վըեր Հ̀ուրի-Փ̀ար̀ուն անըմը լըսըմ ա, շ̀ուտ վըեր ա կյամ ըխճըկանը պըկան, քյինըմ

կորչըմ, վըեր Հ̀ուրի-Փ̀արուն պըտահե վըեչ: Էս անքամ էլ թաքավըերեն ախճիգյն իստի յա ըզադվըմ: Թաքավըերը մին քըսակ վըեսկե յա տամ էտ մարթին, հըղե քըցըմ:

## 49.ԿԱՏՈՒՆ ԸՌՉԻ ՔԸՇԵՐՆ ԸՆ ՍՏԸԿՑՆՈՒՄ

Ասում ա՝ Թ̀ունին ան Գյ̀ուքյին հընկեր ըն: Մին օր Թ̀ունին Գյ̀ուքյուն թա.«Գյ̀ուքյի՛, էդ հինչա՞ն ա, վըեր քու կնեգյտ իտի լ̀ավ ա եշում քյեզ, խոսքեդ անկուչ ա օնում, մին պեն ասած վախտն էլ, տեղան թող ա ինում, հալա խոսքը պիրանատ տ̀ուս կյ̀ալու, կտարում ա: Էն վըեր ա իմը, դե հինչ ասիմ, մին պենը հ̀ար̀ուր հետ ասել պիտիս, վըեր տեղան տըմբըհան ինի: Մին պեն չըմ ասում, վըեր խոսքես խոսքը չպիրի, թընթորա վեչ: Ես ասում ըմ՝ ինքյն ասում ա, ես ասում ըմ՝ ինքյն ասում ա, լըհ̀ ասիս փոխ ինինքյ ըսիլիս: Մին մարթ դոնադ պիրած վախտն էլ, մարթու աքուռ վեր ա կյամ: Ես էլ ըմ փ̀ուշմ̀անում, էն դոնադ եկած մարթն էլ ա փ̀ուշմ̀անում:

- Էդ նրանա յա, Թ̀ունի, վըեր կատուն ես ըռչի քըշերն ըմ ըսպանալ:

- Ցանի hո՞ւնց, ա՛ Գյ̀ուքյ:

- Թ̀ազ̀ հըրսանեքյ ըրած ինքյ, - ասում ա Գյ̀ուքյին,-իրիկունը հաց ուտելիս վախտը, մին կատու ունինքյ, եկավ սուփրավը, թա ծընկանս նըստե: Կըզնվեցի, հանց եր կալի տափին եկե, վըեր կատուն ս̀անը մին դ̀ունում պեց ըրավ: Ըստակած կատուն եր կալի, թող ըրի տոռնը: Կնեգյս թ̀ազ̀ հարս ար, շատ վախից:

Էքյսը մորն ասալ ար, - Գյ̀ուքյին թ̀ունդ մարթ ա, վըեր կզնվեց, էլ պըծավ, աղին, բոզին եշում չի:

Թ̀ունին մտքումը տինում ա վըեր ինքն էլ կատուն ըսպանի: Իրիկունը հաց ուտելիս տեղը, կատուն վեր օզում ա, թա կյ̀ա Թ̀ուն̀ուն կյոքյումը նըստե ալըղադ̀ուն̀ում Թ̀ունի, կատուն եր կօնիս տափավը կտաս, քըմական էլ մին լավ ̀ուշ̀ունց կտաս. «Ես քու…»:

-Ը՛, այ մոխրվիս տու Թ̀ունի ետացալ ըս. կատուն ըռչի քըշերն ըն ըսպանում:

## 50.ՈՒՂՏԱՊԱՆՆ ՈՒ ՆԱ̀Ռ ՕՂՏԸ

Ասում ա՝մին չարվադար օղտ ար պնըցնում: Էս չարվադարը մըռնելիս վախտը խընթրում ա, վըեր ո̀ւրա̀ն կոշտը պիրին ո̀ւրա̀ն Նա̀ռ օղտը: Օղտը վըեր պիրում ըն, էս մեռնող չարվադարն ասում ա. «Իմ ա̀զիզ Նա̀ռ, ես էս ա մըեռնըմ ըմ, ամմա չքելը մըեռնելըս օզում ըմ քյըզանա շնուրհակալ ինիմ, օզում ըմ, վըեր տու իմ մեղքերս ներիս: Վախտ ա իլա̀լ, վըեր քյեզ ծարավ ըմ թողալ, վախտ ա իլա̀լ, վըեր քյեզ սոված ըմ թողալ, վախտ էլ իլա̀լ ա, վըեր պեռնըտ ծանդըր ըմ փըռնալ, վախտ էլ իլա̀լ ա, վըեր մա̀նգյզիլըտ էրկան ըմ ըրալ, շատ ըմ խնթրում, վըեր էս իմ արարմունքներիս միար ներիս, շատ ըմ խընթրում»:

Օղտը ջողաբ ա տամ. «Իմ տար, իմ տիրական, մեր առաչնորթ, էդ լոխ, հինչ վըեր տու ասում ըս, ես քյո̀հնա̀դան ըմ քյեզ ներալ, ես շուտանց ըմ քյեզ բաշխալ: Ամմա մին պեն, չուքիլը միենգյ էլ մըննաս ընգնում չի, կարում չըմ մըննաս քըցիմ: Էդ էն ա, վըեր տու, հիբ մունք իրիկունը կյամ ինքյ, մա̀նգյզիլ, պեռնըրնես վեր պիրում, թա դինջա̀նանք, քյինանք մըզիետե ըրածինքյ, տու ինձ կապում իր էշին անա, վըեր էշն ինձ յըրա մըծոթուն անե»:

## 51.ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ասում ա էրկու ախպեր ըն ինում: Մեծը շենումն ար ինում, տանը կոր-ծերը տըեսնում, շինըրմաչում շենին կործերին խառնվում, էն վըեր ա պուճուր ախպերը հա̀նդ ար քյինամ, վար անում, բոստան անում, ըստծու տվածը տոն քըցո̀ւմ, եկող-քյընացող լիանում:

Մին օր էլ էս պուճուր ախպոր կնեգյը մարթեն նիետ կռև ա անում, թա. «Տու էտ հո̆ւնց մարթ ըս, քու ախպոր վըննը-ծեռքը թա̀մո̀ւզ, թա̀քյո̀ւզ, շինը-մաչին մեծ-մեծ մարթկանց նիետ նստում, եր կենում, հիշտեղ մին էրկու մարթ ըն հըվաքվում, մինը ինքյը. էն վերա տու, վըննը-ծեռքըտ ցեխուտ, ամեն վախտ հա̀նդո̀ւմը, չոլան տոն չըս կյա̀մ, ռուփանան ծեքյեն քյընամ ըս, իրիկունը մթնած կյա̀մ, սաղ պո̀ւլլո̀ւր տարեն անըմըս, չըրչարվում, տանջը-վում: Բոլ ա, հերիքյ ա, թող միենգյ էլ քու ախպեր քյինա հանդը, վար անե, չոլին պեները ինքյը տըեսնա, էնվեր ա տու միենգյ էլ կաց շենումը թա̀զա̀ շորեր կյեցած մըրթամաչ տո̀ւս եկ, հանցուվըեր ես էլ ասեմ՝ իմ մարթս էլ ա մարթ, ես էլ մըրթըմաչի մարթ օնիմ»:

Պուճուր ախպերը կնգանը խելքավն ա ընկնում, մեծ ախպորը նիետ կռև

քըցում, թա. «Դե՛ բոլ ա, հինչքան ես չոլ ըմ քյեցալ. տու շենումն ըս կացալ, մհենգյ էլ ես բեղմա շենումը կենամ, տու քյինա չոլը»:

Մեծ ախպերը հինչքան օզում ա ախպորը հըսկըցնե, թա շենին պենն օրիշ ա, չոլին պենն օրիշ ա, վըեր պուճուր ախպերը շենին կործերը կարել չի տըեսնա, ա̀մա̀լ չի կյա̀մ, պուճուր ախպերը կոտրվում չի: Ճարը կըտրած, մեծ ախպերը եր ա կենում ռութանան, հըզըրվում, կյո̀ւթա̀նավ, եզներավ, սարքավ քյընամ հա̀նդը: Էնվեր ա պուճուր ախպերը շենին շորերը փոխում ա, տո̀ւս կյամ շինամաչ, շենին աղսախկալներին կոշտը, նստում, ասում, խոսում:

Էս զրո̀ւցին վախտը պուճուր ախպերն ասում ա. «Ա՛րա, են օրը վար ի անում Ծակ քարեն հարթեն, մին էլ տըեսնամ կլխաս երը, յըրկյինքյումը մին շան լկուտու սա̀ս ա կյա̀մ, հինչքան վա̀րա̀վո̀ւրդ ըրի[1], կըրեցի վուչ կլխու ընկնիմ, թա էտ հինչ ար»: Ախսախկալնեն էս խոսքեն յըրա պուճուր ախպորը լա̀ղ[2] ըն անում, նեստավը ծըծաղում, շինում «հըրնընքում տռած հարս»: Պուճուր ախպերը քո̀ռ ու փոշման կյա̀մ ա տոն:

Իրիկունը մեծ ախպերը հա̀նդա̀ն կյա̀մ ա տոն, հաց ուտելիս ախպեր-ախպեր գյլեջա յըն անում, ո̀ւրո̀ւր անա հըըցընում, թա էտ օրը հունց ըն անցկըցրալ: Մեծ ախպերն ըսելանը ետը, պուճուր ախպերը ասում ա, թա էտ օրը ո̀ւրա̀ն շինըմաչումը հունց ըն ըրալ, զիրավ ծըծաղալ, հինչ ա թա ինքյն ասալ ա, թա յըրգյընքյումը շան թուլու սա̀ս ա ըսկացալ վըրատեղ:

- Իտի՞, - ասում ա մեծ ախպերը: Թա. «Հա՛»:

- Լավ,- ասում ա մեծ ախպերը, - էքյուց ես հա̀նդը չըմ քյընալ, քյըզ նհետ տո̀ւս կըկյամ շինամաչը, տըեսնանք էտ հո՞ւ վա, վըեր քյեզըրա ծըծաղում ա:

Շինըմաչումը հըվաքված մարթիքյ էլլհա օզում ըն, թա պուճուր ախպորը լա̀ղ անին, մեծ ախպերը մաչ ա ընկնում, «էլ խե՞ լա̀ղ ըք անում իմ ախպոր անավ,- ասում ա մեծ ախպերը,- ինի՞լ չի, վեր ղըրղուշը յրա տված ինի, չընգյերավը շան թուլան պըցըրցըրցրած երկինքյ»: Շինիմաչի մարթիքյը հավան ըն կենում մեծ ախպոր ասածին. «Կինի, կինի»,- ասում ա մինը:

- Դո̀ւ՛զ ա, դո̀ւ՛զ, մին տարե էլ ղըրղուշը յրա տվավ մեր թուլան տարավ:

Պուճուր ախպերն ասում ա. «Չէ՛, ախպեր, շինըմաչին նհետ ես պեն չօնիմ, տու էլլհա տանը կաց, էնվեր ա ես քյինամ չո̀լը, հա̀նդը: Հինչ պեն օնիմ շինըմաչումը, վըեր ըսածավըս էլ լա̀ղ անին»:

---

[1] *Դիտեցի, իմանալու համար (Ծ. Բ.)*

[2] *Ծաղր (Ծ. Բ.):*

## 52.ԸՇԽԱՐՔԵՍ ԻՐԵՍԻՆ ԱՄԵՆԱԲԱԽՏԱՎԵՐ ՄԱՐԹԸ

Մին դավրիշ ա ինում: Էս դավրիշը ըշխարքես տակին մին պենու ա իլալ ման կյա̀լիս, մին բախտավեր մարթ ճարի: Շատ տեղեր ա ման կյամ, շատ միալում ա ինում, ամմա բախտավեր մարթ չի ճարում: Մին օր էլ կյամ ա մին շհա̀ր, մին տեղ վեր ա կյամ, տըեսնում ա, վըեր էս տանը ղաբալարշու մին մեծ մաղազին կա, էտ մաղազինին կլխեն էլ մի տոն կա, ամեն իրիկուն էս տանը ածիլ, պար կյա̀լ, օտել, խմել քյեփ անել կա: Մին օր, էրկու օր, մին շաբաթ, էրկու շաբաթ, մին ամես, էրկու ամես, համեշա իստի օրախություն ա, համեշա՝ ասել, խոսել, ծըծաղել:

Էս դավրիշն ասում ա. «էս ա վըեր կա, աշխարքես տակին բախտավեր մարթը քըթալ ըմ: Քյինամ հըրցնըմ, գյիդամ, թա հունց ա իլալ, վըեր էս մարթը իստի բախտավեր ա»:

Հըրցընելավ իմանում ա, վըեր էտ տոնը հա̀մա̀ն էդ մաղազինին խազայինինն ա: Դավրիշը ամեն օր մին միանավ կյա̀մ ա էս մարթին կոշտը, ասում, խոսում, լափ դուստանում: Մին օր էլ խոսք ա վեր պերում, բախտավորության յըրա, ասում թա. «Ինքը ման ա կյա̀մ, վըեր աշխարքես յրա մին բախտավեր մարթ ճարի, անջախ, անջախ էս ա վըեր քիթալ ա»: Էս մաղազինին տարը, վըեր մին սերուն տղամարթ ար, ասում ա, թա. «Բախտավեր ըմ, բախտավեր չըմ, ես գյո̀ւղո̀ւմ չըմ, քյեզ նաղլ անիմ, իմ կլխավս անց կացածը, տու իմաց, բախտվե՞ր ըմ, թա չէ»: Ասում ա. «Ես ջաhիլ ի, մին ըխճըկա յըրա սիրաhարվեցի, ես ընդրան սերեցի, նա էլ՝ ինձ սերից: Մունք փսըկվեցենք, ո̀ւրո̀ւր սերում ընք, հունց վըեր յըղոննեգյը, մո̀ւմնո̀ւ հետե հո̀ւքի յընք տամ, ջան ասում, ջան ըսկանում: Մեր սերը էնքան ա̀րթա̀ր ար, էնքան անարատ, վըեր մունք օխտը ըրենք, թա վըեր մըզանու միննը մինը մեռնի, էն մինը էլ փսակվե վեչ: Խոսք տվենք, օխտ ըրենք, պայման տըրինք: Ապրում ինք մըզ համար, բախտավեր, առանց դա̀րդի, հունց վըեր երգքինքյին դուշերը: Մին օր էս իմ նշանածըս հիվանդանում ա, ծանդր ա հիվանդանում: Ըխշարքես տակեն էլ հա̀քյիմ չի մնամ, պերում ըն, ամմա ճար չինում: Քըշերը քոն չօնիմ, ցիրեկը դարար, ծեռքըս ծոցումըս, ման ըմ կյա̀մ, գյո̀ւղո̀ւմ չըմ տափեն տակեն ըմ, թա կլխեն, աստուծ ըմ կանչում, երնային թաքավեր, թա վըեր իմ նշանածես մին պեն ա ինելու, առաչ իմ հուքին առ, ետնան ընդրանը: Հա̀քյիմներեն մինը քյնամ ա, մինը՝ կյամ, ճար չինում, իլլաջ չինում: Էլ վեչ օտում, վեչ խմում, վեչ խոսում, ըսօր-էքյուց ա, ըհը- միենգյ կմեռնե, մին

սհաթան ետը կմեռնե։ Հ՚աքյիմներեն հույսը կտրվում ա։ Էլ ճար չըն անում, ասում ըն. «Պենը պենձ անց ա կացալ»։ Էն վըեր ա ես մին կլ՞ոխ մետք ըմ անում, թա պա առանց իմ սիրած կնգանս հո՞ւնց կանիմ։ Հընկեր, հըրևան, բարեկամ թաղման ըն հըզըրվում, ես էլ, դե մարթ ընք իլի, հու վա գյ՞ուղ՞ում կնգանս մըռնելանը ետը հի ՞նչ կպըտահի մարթուս, - ասում ա- «Իթթիբար չինիլ»․ եր կացե քյեցե հ՚աքյիմին կոշտը, ըսեցի, հ՚աքյիմ, ինձ կըրտե, հո՞ւ վա գյ՞ուղ՞ում հինչ կինի, վախում ըմ, թա նշանածես տված խոսքը կարիմ վեչ պահիմ, քանե վըեր հ՚ալ՚ա կնեգյս մեռած չի, թող, վըեր ես իմ պայմանըս կտարիմ»։ Կյ՚ամ ըմ տոն, սերտս մին ջուռա, դինջացած։ Ասում ըմ. «Փառքդ շատ, աստուծ, բալքյամ էս օրեն էլ պեղմա արժանանայինքյ։ Կնեգյս մեռնի, ես էլ մարթությունից զուրկ մնամ»։

Ամմա հինչ կանիս վըեր, նշանածս հ՚ալ՚ա ն՚ափ՚ասը քյին՚ամ-կյ՚ամ ա։ Հ՚աքյիմներն էլ ծեռք ըն քաշալ, թողալ ըստծու ումուդին։ Մին օր, էրկու օր, էս իմ նշանածը մեռնում չի, յըվըշ-յավաշ օշու վա կյ՚ամ, աչքը պեց անում, քթ՞ըլ՚ավ ճ՞ուր խմում։ Մին, էրկու, էս նշանածս օյամիշ ա ինում, մարթ ճընանչում, յըվըշ-յավաշ ոտել օզում, ջանու կյամ։ Կլոխըտ հինչ ցըվըցնիմ,էս իմ նշանածը սըղանում ա, սաղ-սալամաթ ինսան տըեռնում։ Խալխը, հընկեր, հըրևան, բարեկամ ա, լոխ ուրխանում ընք։ Անց ա կենում մին ամես, էրկու ամես, էս իմ նշանածն ամեն քշեր ինձ ասում ա. «Խե չը՞ս կյամ կոշտըս, պա քու սերտըդ ինձ օզո՞ւմ չի»։ Ամեն մին դ՞ոն՞ում, մին պեն ըմ միանա օնում, մին օր քեփ չօնիմ, մին օր կարում չըմ։ էս նշանածս եշում ա տըեսնում, վըեր չէ,ըստեղ մին ՚ամ՚ալ կա, էս ինձանա չի, վըեր քըշերը նշանածես ծոցը չընի մըտնիմ, զիրավ խաղ չանիմ։ Ճարս հի՞նչ, վերչը օզիմ-չօզիմ պետմա դ՞ուզն ասիմ։ Եվ դ՞ուզը նաղլ ըմ անում, հունց ես վըխեցի, թա ՞ուր՚ան մըռնելանը ետը կարիմ վեչ խոսքս պահիմ, հունց քյեցի հ՚աքյիմին կոշտը հունց  ինձ կըտել տվե։ Էս ասելն ար, էս կնեգյը յախաս փոնից, թա չէ, վըեր չէ, ես էլ քյըզնըհետ օր ու քշեր անել կարել չըմ։ Ես մարթ ըմ օզում, վըեր իտի յա, ես հ՞ուր վըեր օզիմ, պեղմա նհետը իմ քեփս ՚արա՚միշ անիմ։ Ամեն օր մեր տոնը ըստրա հետի կռեվ, ՚ալ՚ալ՞ում ար ինում։ Հո՞ւնց անիմ, հի՞նչ անիմ, մետք ըմ անում, մետք, կարում չըմ, թա մին ճար քըթենամ։ Ես օզում չըմ, վըեր հընգեր-հըրևան գյիդ՚ան իմ կըրտված ինիլըս, օզում չըմ թա մարթ իմանա, վըեր իմ սերած կնեգյս ինձանա իտի պահանջ ա անում։ Մնացալ ըմ կըրակին մաչն ընկած։ Ճարըս կտրած, տըեսնում ը՞ս էն դախլին քըմակին բոյավ, սերուն

տղան, պահում ընք մինակ ընդրա հետե, վըեր կնգանս պահանջը կտարե, սերտն օզածն անե, յանի քյի քըշերնին իմ ավազ կնգանս ծոցը նիմըտն:

- Պա լա̀վ, պա էտ հի՞նչ քեփեր ա, վըեր ամեն օր քու տանդ ա ինում,- հըրցնում ա դավրիշը:

- Էդ էլ խալխին աչքերը կըպցելու հետե յա:

- Բա̀լի,- ասում ա դավրիշը, եր կենում տեղան: Էն քյինալն ա, վըեր քյինում ա:

## 53.ԱԶՆԻՎ ՄԱՐԹ

Էրկու շատ հարուստ հընգերներ ըն ինում: Էս հընգերներեն մինը ապրում ար, ասինք, Կասպի ծովին մին ղըրաղեն, էն մինը՝ ծովին էն մին ղըրաղեն: Անասելի ու լո̀ւզվավ անպատմելի սերում ըն էս էրկու հընգերնեն ո̀ւրո̀ւր: Ո̀ւրո̀ւր կարոտը էն ղըդար ըն քաշում, վըեր նիանցա մինին մետն ընկավ հընգերը, հեռագիր ա տամ հընգերին, թա հինչ տեղ վըեր ըս, ե՛կ:

Էս հընգերն էլ եր ա կենում, կյա̀մ մին քանի վախտ կենում. «Վառըղա նա դառըղ», օտում, խըմում, էլլիա եր կենում, քյինամ ո̀ւրա̀ն շհա̀րը:

Էս հընգերներան մինը, վըեր ծովեն էս ղըրաղեն շհա̀րո̀ւմն ար կենում, մին ախճիգյ ա նշանում, նշանտրիքյին էլ քառասուն հազար մանեթ փող խարջում: Ըխճըկատերերին նիետ խոսում ըն, վըեր մին քանի օրանը ետը պեղմա հըրսանեքյն անին: Էս հընգերը օզում ա հեռագիր տա ո̀ւրա̀ն հընգերին, թա հինչ տեղ վըեր ըս, ե՛կ վըեր իմ հըրսընքես հասնիս:

Էս տղան էլ հունց ա ինում, խեղափուլ[1] կյամ ա, տո̀ւս կյամ հընգերեն շհա̀րը: Հընգերն էլ շատ ուրախանում ա, ամմա հըրսընքին միար զատ չասում:

Սահանք շհա̀րումը ման կյա̀լիս, էս էկած հընգերեն աչքը մին ըխճըկա փըռնում ա, հընգերեն յախան փռնում ա, թա տու վըս, վըեր տու էդ ախճիգյն ինձ հետե բեղմա օզիս:

Տու մեր ասել, էս ախճիգյը հա̀մա̀ն էն ախճիգյն ա, վըերեն յըրա ո̀ւրա̀ն հընգերը նշանվալ ա, էս էրկու օրն էլ օզում ա, թա փսակվե:

Էս հընգերն ասում ա. «Աչքիս յըրա, հունց էլ ինի, էս ախճիգյը քյըզ միար կօզիմ»: Կյա̀մ ա էս ըխճըկա հորը, մորը կոշտը, թա հա̀լ, դազիյա, իստի, իստի

[1] *Հանկարծ, անսպասելի (Ծ. Բ.):*

պեն, ծեր ախճիգյը բեղմա տաք իմ ազիզ հընգերես, ամմա օլմիյա, օլմիյա պերաններատ հանալ ըք, վըեր տա իմ նշանածս ա ի լալ: Ըխճըկա հա̈րնը մարը ասում ըն. «Դե՛ մունք հինչ կա՞րինքյ ասենքյ, էտ ըխճըկա պենն ա, վըեր օզից, մունք հի՞նչ բիդմա ասինքյ»:

Հա̈րն ու մարը ըխճըկանը հըրցնըմ ըն, թա. «Հի՞նչ ըս ասում. քու նշանածը քյեզ օզում ա մին լա̈վ, ո̈ւրա̈ն անա էլ հարուստ մին տղու»: Հա՛, էն էլ մըննաս ընկավ, թա ասիմ, վըեր էս ըխճըկա նշանածն ասալ ար, թա. «Սրանա ետը ինձ բեղմա հաշվիք ծեր վըերթին, ծեր ախճիգյն էլ իմ հալալ քուրս ա»: Ախճիգյն ասում ա. «Ա՛ հա̈ր, վըեր ինքյն ասում ա, ըստրանա ետը ես ո̈ւրա̈ն քուրն ըմ, էլ հինչ ա՞սիմ, տուք ըք գյո̈ւլո̈ւմ, վըեր ծեռքաս էլ փըռնիք, մին քոռու տաք էլլիա չէ ասողը չըմ, իրեսըս շոռ տվողը չըմ»: Քուր ու ախպեր տըեռած, ըսկսում ըն հըրսընքին թաղարիքյը քաշել, մին լա̈վ հըրսանեքյ անել, հղի քցո̈ւմ դիբա ծովի էն դրաղի շհա̈րը:

Հունց ա ինում, մին դո̈նո̈ւմ, խոսք պեց ըլա̈ծ վախտը ես ախճիգյն ասում ա ո̈ւրա̈ն մարթուն, թա. «Պա ասել չըս, ես քու հըրնգերեղ նշանածն ըմ իլալ, հըրսանեքյը վըեր յըտացալ ա, քու խաթրուվա իլալ, վըեր տու կյա̈ս հըսնես»:

Հընգերը մա̈թ ա մնամ, շատ դա̈րդ ա անում, ամմա դե հինչ կա՞րե անե, պենը պենա̈ն անց ա կացալ: Եր ա կենում հըրնգերեն մին նամակ ա կյիրում, թա. «էլ առանց քյեզ ես կարել չըմ ապրեմ, վըեր տու իտի պեն ըս փըռնալ, իմ խա̈թրու տու քու նշանածատ ծեռք ըս քաշալ ինձ տվալ, ես էլ առանց քյեզ կարել չըմ ապրեմ, ե՛ր կաց, հինչ օնիս, չօնիս, լոխ ծախի, ծըխծըխորե, եք իմ կօշտըս մինտեղ կո̈րծ անինքյ, մինտեղ էլ ապրինքյ, թա ինձ սերում ըս, թա վըեր օզում չըս ես ինձ ըսպանիմ, եր կաց, եք»: Էս հըրնգերն էլ ջողաբը կյիրում ա, թա. «Աչքես յըրա, էս քանի վախտըս կործըս վերչացնիմ, կյա̈մ»: Ամմա, քյընալը յըտըցնում ա: Էս հըրնգերը մին էլ ա կյիրում, էրկու էլ ա կյիրում: Ամեն մին նամակին կըլխեն, տակեն, էն ա կյիրում, թա. «Եր կաց, ծախի, ծըխծըխորի իլած-չիլածըտ, եկ մինտեղ ապրինքյ, մինտեղ կո̈րծ անինքյ»:

Ճարը կտրած էս հըրնգերը եր ա կենում հինչ օնե, չօնե, լոխ ծախում, ծըխծըխորում, վըեսկե շինում, ածում մին քանի դութի լըցնում, պարախոդ նըստում, թա քյինա հըրնգերին կօշտը: Հըղըցին մին քամի յա եր կենում, վըեր պարախոդը տըշեղու նման ծովեն իրեսին խաղ ա անում: Մին վախտ խալխեն քոն իլած վախտը մին հարայ ա եր կենում, թա հու վըեր կարում ա ո̈ւրա̈ն պըրծըցնե, պարախոդը տակ ա անում: Մարթիքյ թող ըն ինում,

ո՛ւրանց կուրցրած, վըերը տկլոր, վըերը փուխանած ըստեղ վազ տամ, ընդեղ վազ տամ, հու վըեր կարում ա հըսցնե, պուճուր-պուճուր գյամին ա նըստում, տկլոր, առանց շորերի պըրծընում, ըզադվում, հու վըեր էլ կարում չի, պարախողին նհետ տակ ա անում: Էս հընգերն էլ մին թա՛հրավ ո՛ւրա՛ն քըցո՛ւմ ա պուճուր գյամին, տո՛ւս կյամ ծովեն ղըրաղը մին փոխան, մին հալավավ:

Ծովեն ղըրաղեն մարթիքյ էս հընգերեն ըստղան-ընդղան, ճըրղոտած, քյո՛հնա շորեր ըն դո՛ւզո՛ւցըընում, տամ էս հընգերեն, վըեր մին թա՛հրա՛վ տկլոր մարմինը ծասկում, կյա՛մ ա քաղաք: Դիպա ո՛ւրա՛ն հընգերին տոնը քյինալիս տըեսնում ա, վըեր հընգերը ո՛ւրա՛նց բալկոնումը նստած կնգանը նհետ չայ ա խմում: Բըլկոնումը նստած հընգերը եշում ա, տըեսնում, վըեր էս ա ո՛ւրա՛ն հընգերը դիպա ո՛ւրա՛նց տոն ա կյամ, ամմա խե շատ փիս հալո՛ւմ ա: Կյեցեն քյո՛հնա՛, ճըրղոտած, ճընթըղմ շորեր, կյա՛մ ա: Նստած տեղան եր ա կենում, մաչ կյո՛ւս նի մըննում, ավըրցնում ո՛ւրա՛ն քոծեն, թա էն մարթը վըեր կյա՛, թողիքվեչ տոն նի մննի:

Էս հընգերը կյա՛մ ա տոռնը թակում, օզում ա, թա նի մննի մղակավը[1], քո՛ծը դո՛շին կուփե յա տամ, տո՛ւս քըցո՛ւմ, տո՛ռնը նհետ անում, քըլլում: Խեղճ հընգերը մնամ ա քյո՛ւչո՛ւմը, սոված, ծարավ, տկլոր: Հինչ ա՞նե, թո՞րը քյինա: Իլած-չիլած կարողութունը ծովեն տակն ա բաթմիշ իլալ: Ո՛ւրա՛ն մին ա՛զիզ հընգեր ա իլալ, էն էլ իրես ա շոռ տամ: Իստի մետք ընելավ ման ա կյա՛մ, ման կյա՛մ, կյա՛մ մին քարու յրա նստում, քընընքյու մաչ ընկնում: Էտ վախտը մուտանում ըն էրկու մարթ, մին չամադան ծեռքներին, պերում ըն տամ ըստրան, ասում, թա.- Էս չամադանը մունք կյո՛ւղացալ ընք, տու պահե, մունք քյինամ ընք մին չամադան կա, էն էլ կյո՛ւղանանք: Թա վըեր մինչևը մին սհաթը եկենքյ, եկենքյ, էն ա քյեզ շատ փող կտանք, թա վըեր պեն ա, մունք եկենքյ վուչ՝ էտ չամադանը քյեզ ինի քու մոր կաթնեն նման քյեզ հալալ, տար քու բախտեն ինչ կինի մաչեն, կինի:

Ասում ըն, ո՛ւրա՛ք քյինում: Էս հընգերը մին սհաթ ա եշում, էրկու սհաթ ա եշում, տըեսնում մարթ չի կյա՛մ: Ասում ա. «Պեց անիմ, տըեսնամ, մաչին հի՞նչ կա»: Պեց ա անում, տըեսնում հի՞նչ: Մաչը լոխ վըեսկե յա, մին էլ թոխտ փող: Շատ յիշիլա՛նը ետը, վըեր տըեսնում ա՝ մարթ չի կյա՛մ, եր ա կենում էս չամադանը յոր օնում, քյինում զաստնիցան, մին նումեր փըռնում, տո՛ւս կյամ

[1] Դուռ, դըռնովը (Ծ. Բ.)

բազար, ՟ՈՒՐ՝Ն համար մին ծեռք շոր առնում, կյենում, տ՟ՈՒՍ կյամ մեյդան:

Եշում ա տըեսնում, էս ա էրկու մարթ կյ՝մ ըն կոշտը, թա. «Ըստեղ մինը մին մաղազին ա ծախում, մաշին կինի էրկու հ՝ր՟ՈՒՐ հազար մանեթի ապրանք, ամմա ինքը տամ ա քառասուն հազարավ, առնե՞լ չըք: Էս հընգերն ասում ա. «Խի՞ չըմ օզել, քյինանք, տըեսնանք» :

Քյինամ ըն տըեսնում, վըեր դ՟ՈՒԶ վըեր էս մաղազինումը էրկու հ՝ր՟ՈՒՐ հազարի ապրանք կինի: Ասում ըն, խոսում, մարթը հենգյ հազար մանեթ էլ էս էրկու մարթին ա տամ, քառասուն հազար էլ մաղազինին, ըսկսում առտուրը: Անց չի կենում մին ամիս, էս մարթը սաղ շհ՝րավը մին հայտնի յա տեռնում: Մ՟ՈՒՇտ՝րիքյն էլ անասելի շատ ըն ինում: Մին օր էլ տըեսնում ա, վըեր էրկու կնեգյարմատ եկին մաղազինը, մինը խե շատ ջ՝հիլ, սերուն հունց վըեր հ՟ՈՒՐ՟ՈՒՄ՝լ՝զ ինի, էն վըեր ա էն մինը՝ մեծ ա ըրվում: Էս ջ՝հիլին փոնում ա աչքը: Շատ հավան ա կենում, մտքումը տն՟ՈՒՄ ա՛ ՟ՈՒՐ՝Ն  հետե օզի: Էն մեծեն մին ղըրաղ ա կանչում, հըրցըփորց անում, իմանում, վըեր ախճիգյ ա, ՝զ՝փ ա: Շատ խընթրում ա ՟ՈՒՐ՝Ն  ծանոթացնի էտ ախճըկա հորը, մորը նհետ, համ էլ ինդի անի, վըեր էտ ախճիգյը ՟ՈՒՐ՝Ն  տան: Էս կնեգյը խոսք ա տամ, տան տեղն էլ նշանց տամ, ասում թա. «Էս իրիկուն կարող ըս կյաս, վախելմեր, էտ լոխ իմ ծեռքես ա, հունց օզիմ, ընդի էլ կանիմ»:

Իրիկունը, մաղազինը քըլելան ետը, էս հընգերը եր ա կենում, քյինամ նշանց տված քյ՟ՈՒՉ՝Ն. նի մըննում հայաթը: Երի թր՝փ՝Ն վըեր տըեսնում ըն, կյամ ըն կանչում կլխե ատաժը: Էս հընգերը կյ՝մ ա նի մըտնում մին մեծ օթախ, տըեսնում ա հ՝մ՝Ն ըստեղ ՟ՈՒՐ՝Ն դավաճան հընգերը, աչքը հընգերեն իրեսն ա ընկնում թա չէ, մին ջուռա փիս ա տեռնում, օզում ա ետ տեռնա, օզում չի, վըեր իտի դավաճան հընգերեն իրեսը տըեսնա, ասում ա.«Քանի վըեր էտ դավաճանը էս տանն ա, ես ըստեղ ինիլ չըմ - ասում ա,-ես իտի մարթու նհետ բարեկամանալ կարել չըմ»: Ասում ա համ էլ օզում ա, տ՟ՈՒՍ կյ՝: Ամմա էս դավաճան հընգերը պենդ փոնում, պաչում ա, պենդ խըտտում, ասում. «Անգուջ կալ:էս լոխ իմ սարքած պենն ա: Ըռըչինը, էն չամադան վըեսկին ու թոխտ փողերը ես ըմ քյըզ միար ըղարկալ: Էն մաղազինն էլ իմն ա իլալ, թա չէ, էն վըեր պըելն ա, վըեր էրկու հար՟ՈՒՐ հազար մանեթանուց մաղազինը քառասուն հազարավ տան մարթու: Էն էրկու մարթիքյն էլ վըեր հենգյ-հենգյ հա զար փող ըս տվալ, նահանք էլ իմ

մարթիքյն ըն, էն էլ էն մարթիքյը, վըէր չամադանը փողավ լիգյը պէրալ ըն քյեզ պահ տվալ: Թա իըվատում չըս, կանչիմ տես»:

Կանչում ա էտ էրկու մարթկանց, էս իընգէրը եշում ա տըեսնում, դըուզ վըէր նահանք ըն: Էն վախտը իընգէրն ասում ա.

«Էն ախճիգյն էլ իմ քուրն ա, օգում ըմ քյեզ տամ, վըէր մէր բարեկա-մությունը էլ ավէլի ինի: Թա խի չի քյեզ ըռչի դըննըւմը մէր տոն թուղեցէ, էտ էլ ընդրա հետե, վըէր ես օգում չի, քյեզ էտ ըղքատեն հա̀լին տըեսնամ»:

## 54.ՎԱԽՏՆ Ա ԽԱԲԱՐ

Ասում ա, մի հետ տղան կյամ ա տոն, հորն ասում. «Ա՛ հա̀ր, իժան օղտ ըն ծախում, մինը տասսը մանեթ, փող տո, քյինամ մին քանենն առնեմ»:

- Թա̀նգյ ա, բա՛լա, կարել չընք առնինքյ:

Անց ա կենում մին էրկու տարե, հա̀րը տղեն ասում ա. «Բալա, օղտ ըն ծախում, քյինա տես քանի՞ յըն ասում»:

Տղան քյինամ ա, կյամ, ասում. «Ա՛ հա̀ր, թա̀նգյ ա, մինը հա̀րըուր մանեթ ըն ասում»:

- Թա̀նգյ չի, թանգյ չի, վըէ՛րթի, քյինա մին քանինն առ:

Տղան ասում ա. «Ա՛ հա̀ր, ես զատ չըմ իըսկանում քյըզանա, մինը տասսը մանեթան ասում ըս թանգյ ա, ամա մինը հա̀րըուր մանեթան ասում ըս թանգյ չի»:

- Վախտն ա խաբար, էն վախտը փող չունինքյ, օղտը տասսը մանեթան թանգյ ար: Էնվէր ա միենգյ, վըէր փող օնինքյ օղտեն մինը հա̀րըւր մանեթան իժա̀ն ա:

## 55.ՄԱՐԹ ԱՊՐՈՒՄ Ա ՍՎԸՐԵԼՈՒ ՀԵՏԵ

Ասում ա՝ մին փշըկավէր տղու հա̀ր քոռ ա ինում: Էս տղան ամեն օր ռութանան հորը շիլակում ա տանում բազար, վէր տնըւմ, իրիկունը տոն կյա̀լիս շիլակում էլլհա տոն պիրում:

Մին ռութանա էլ տղան շիլակած հորը բազար տանում վախտը, հըըցին հա̀րն ասում ա. «Բա՛լա, վէր տիր, կյըւզըս կյամ ա»:

Վըէրթին հոր ասած տեղը չի վէր տընըւմ, մին խիլլա տեղ տանում ա, ետնան վէր տինում: Կյըւզելանը ետը հա̀րը իըրցնում ա, «Վըէրթի՛, պա խե՞ չի ինձ ընտեղ վէր տիրեր, իինչտեղ ես քյեզ խընթըրվեցի»:

Ա՜ հա՛ր, ախր ընտեղ քըրքարուտ ար, կյո՛ւզելիս տեղը ցալքունը քյըզանավ կտար, էն վերա, ըստեղ վըեղ ա, փափուկ, ցալքուն չի տալ:

-Դե, բալա ջան, ըսօր էս ինձ բոլ ա, ետ տոն տար, էս յաշիս մարթ ըմ, ամմա էտքանը խըելքս կըտրում չար:

## 56.ԽՂՃՄԸՏԱՆՔԱՎ ԿՅՈՂԸ

Ասում ա՝ մին մարթ ա ինում: Էս մարթը հինչ փեշակի վըեր քյինամ ա, կարում չի, թա ավերի: Վերչը կյամ ա ըստծու տոռը, ասում ա. «Ա՛յ աստված, ախր ես հունց ա՞նիմ, հինչ փիշակու վըեր քյինա՛մ ըմ, կարում չըմ, թա ավերիմ: Պա տու աստուծ ըս, հի՞նչ պենու կլխու ըս տնո՛ւմ»:

Աստուծն ասում ա. «Քյինա ծեր տանն ըռաչքին մին քանի փոս քանդի, ամեն մին փոսում մին քանի հատ ցորեն քըցի, ամեն մին փոսու էլ մին փիշակու անուն տու. ղո՛ւլզյարություն, նըրկարարություն, ռանչպարություն, մինի անունն էլ տիր կյողթուն, տե՛ս, էտ ցորեններին վըերը լոխճա շո՛ւտ ծիլից, էն փիշակեն էլ քյինա: Էն էլ ասիմ,-ասում ա աստված, - թա վըեր պեն ա, պտահիմունք ա, կյողթունեն փոսեն ցորենը լոխճա շո՛ւտ ծիլից, տե՛ս, ինձա՛նա քյեզ ամանաթ[1] ինսափավ[2] կյողթուն կանիս:

Էս մարթը իտի էլ անում ա: Մին քանի վախտանը ետը կյամ ա տըեսնում, վըեր լոխճա ճելլի էն փոսեն ցորենն ա ծիլալ, վըերին անումը տիրալ ա կյողթուն: Էս մարթը ըսկսում ա կյողթուն անել: «Հինչ ա՞նիմ, ինձ էլ աստուծ է՛ս փեշակը տվավ», - ասում ա էս մարթը ու հղե ընկնում:

Կյամ ա տըեսնում մին կով, ասում ա. «էս լա՛վ իլավ, էս ա էս կովը կկյուղանամ»:

Կովը առաչն ա անում, թա պիրի, ինքյը-ինքյը մետք ա անում,թա. «Պա մեղքը չի, կովը տանիմ, ղանան թողնիմ պըընչիլիս»: Կովր թող ա անում տեղը, տերտակ կյա՛մ տոն:

Էս մարթը ամեն քիշեր կյողթունու վա տո՛ւս կյամ, ամեն ղո՛նո՛ւմ էլ մետք ա անում, մետք, տերտակ կյամ տոն: Օզում ա, թա կյողթունը թոքա անե, ամա կարում չի ըստծու խոսքան տո՛ւս կյա: Մնացալ ա իստի կըակու մաչ ընկած:

Վերչը շատ մետք ա անում, վերչը վճիռ ա անում, եր կենում, թուշ

---

[1] *Խրատ, խորհուրդ:*
[2] *Խղճով:*

քյինամ ղաչաղներեն նհետ թա հընգեր տեռնա, ըըլդրոթուն անե:

Ղըչըղնեն սո՞Լվթա՝ օգում ըն, թա ըսպանին էս մարթին, հվատում չըն, ամմա վըեր ետը հետը տըեսնում ըն, վըեր էս մարթը դո՞Լզ սրտավ ա օգում ո՞Լրա՝նց նհետ հընգեր տեռնա, եր ըն օնում, հընգեր շինում: Քըշերը քոն ըն ինում, ռութանան եր կենում, քյինամ մին հղե կտրում: Եշում ըն տըեսնում, էսա մին քանե խոջա օխտը ճո՞րե ճոթ-կտորավ պեռնած կյամ ըն: Ղըչըղնին բըըչնին կտրում ըն, խուջոցը ծեռքերնին կպոտում, առաչն անում, տանում լափ ծմակին խորքը, ո՞Լրա՝նց բինան: Ճո՞րուցը պեռները վեր ըն պիրում, ծեռքերնին կըպոտած խոջաներեն տամ էս թա՝զա՝ եկած հընգերին, թա տար էտ ծո՞րո՞մը կտորե: էս թա՝զա՝ հընգերը խուջոցը առաչն ըրած տնելիս վախտը ինքյը  իրան մետք ա անում. «Լա՝վ, - ասում ա, - ասինք, թա էս խուջոցը թալանեցենքյ, էլ խե՞ ընք կտորում, պա մեղքը չը՞ ն, սահանք էլ տոն օնին, տեղ, խոխա, ըրախա, կնգա, օղլուշաղու տար ըն, եք պեց թողնիմ, թող քյընան»:

- Հը՛, հի՞նչ ըս մետք անում, ղաչաղ ախպե՛ր,- հըրցընում ըն էս խոջեքյը:

- Մետք ըմ անում, վըեր ծեզ կտորիմ վըեչ, պեց թողնիմ քյինաք ծեր տները:

Էս խուջեքյն ասում ըն. «Վըեր տու իտի ինսափավ մարթ ըս, քյինի տու, մունք ըստեղ կենանք, մեր խուրջինումը օխտը բուլկի կա, տու օտիս վեչ, վըեր օտիս, կմեռնիս, տեղած ըն: Քյինա, թա վըեր քու հընգերունքդ կերած ինին, մհենգյ լսի, մեռած կինին, մըեզ դույուղ կանիս, մունք կկյանք, թա վըեր կերած չին ինիլ, տու օտիս վեչ»:

Էս մարթը կյա՝մ ա տըեսնում, վըեր բուլկիքյը ղչըղնեն կերալ ըն, լոխ կտորվալ, մին դո՞նո՞Լմ թվա՝նգյը տըրքըցնում ա: Խուջեքյը իմանում ըն, վըեր ղըչըղնեն կտորվալ ըն, կյամ ըն էս թվա՝նգյի սա՝սա՝վը քըթենում ղաչաղներեն բինան:

- Տու, վըեր իտի մարթ ըս, - ասում ըն խոջեքյը, - մեր էս ապրանքը քյեզ հալալ, ճոթկտորը քյեզ, մեր ճո՞րեքյը մըեզ տո, մունք քյինանք:

Թա՝զա՝ ղաչաղն ասում ա. «Չէ՛, ախպեր, էս ծեր ճո՞րեքյը, էս ծեր ապ-րանքը, ծեզ ինի, պռնեցեքյ, քյեցեք ծըզ հետե»: Ինքյն էլ յոր ա օնում թվանգյը ծառավը տամ, կոտրում, թա. «Ես իստի հացը կերե վեչ, թող աստուծ հինչ օգում ա, անե»:

## 57. ՇՌԱՅԼ ՏՂԱՆ

Ասում ա՝ մին հարուստ մարթու ինում ա ճար ու մաղար մին տղա։ Էս տղան խե շատ շռայլ ա ինում , փող ծախսող, օտող, խմող, քեփ անող։ Քիշեր-ցիրեկ օրը անց ա կըցնում օտել-խմելում։ Կըլխեն հըվաքած հընգեր տղորցը, հորը փողերը ճրո՞ւ նման խարջում ա։ Հա՜րը շատ ա խրատ տամ, ամա պա՜ն չի տո՞ւս կյամ.

Մին օր էլ կանչում ա տղեն ասում. «Վե՛ րթի, ես տըեսնում ըմ, վըեր տու փիս հղըցավ ըս քյինամ, ըսօր օնիս, հընգեր, ախպեր տղա քյեզ ճընա՜նչո՞ւմ ըն, սիրում ըն, էքյուց վըեր փողերդ պրծնի, էլ իրեսեդ եշող չի ինիլու։ Քանի փող կա, հընգեր էլ կա, էքյուց փողըդ պրծավ հընգրոթունն էլ պրծավ։ Տե՛ս,- ասում ա, - ես տըեսնում ըմ, վըեր քու վերջդ մահավ ա ինելու, լա՜վն էն ա, իրեն լամփան նիետ մին քյա՜նդիր ըմ կախ տվալ, վըեր պեն ա, օզիս, թա քյեզ ըսպանիս, եք քյեզ էտ քյա՜նդիրան կախ տո»։

Հա՜րը մռնելանը ետը, տղան հոր կարողությունը ինդի յա փչացնում, վըեր կապեկի հա՜սրա՜թ ա մնամ, խոխերքը տո՞ւզնը սոված, տկլոր, չփլաղ, էլ հընգեր, ախպեր տղա, լոխ քաշվալ ըն, ամենն էլ ո՞ւրա՜նց հետե, մին սրտեհեռեչ չօնի, վըեր ծեռք փոնե։

Հույսը կտրած, էս տղան օզում ա, վըեր ո՞ւրա՜ն կլո՞խն ըսպանե, մետն ա ընգնում հոր խրատը, քյինամ ա լամփան նիետ կախ տված թոկը քցո՞ւմ բողազը, թա ո՞ւրա՜ն խեխտի։ Տու մեր ասել, էտ թոկը բոշ ա ինում կապած, լամփեն տախտակներեն մեխերն էլ հանած։ Տղան քաշում ա քա՜նդիրը, թա քըցի բողազը, լամփին տախտակը պեցվում ա, ղաթան շըռում վըեսկեն։ Ըստեղ տղան կլխու վա ընկնում հոր խրատնեն։

## 58. ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

Ասում ա՝ մին մարթու մինուճար մին տղա յա ինում։ Էս մարթը էս տղեն լա՜վ պահում, մծըցնում ա։ Շատ դո՞նո՞ւմ ո՞ւրա՜ն զըրկում ա, տղեն տալիս։ Թա՜զա՜ շորը տղեն հետե յա կարել տալիս, քյո՞հնա՜ն ինքյը կյենում։ Իստի սուրփ-սուրփ ընելավ պահում ա, մըծըցնմ, փըսակում, մուրազին հըսցնում։

Հա՜րը պռավում ա, ծեռքըվըեննա ընկնում, էլ կարում չի, թա ըշխատի։ Տղան եշում ա, տըեսնում, վըեր հա՜րը իրեն վզեն պո՞ւն ա տեռալ, համ էլ իրան շատ նեղություն ա տալիս, էլ շատ մետք չի անում, մին չուվալ ա պերում, էս վըեննըծեռքա ընկած հորը քըցո՞ւմ մաչը, շըլա՜կում, տանում

ուրա̀նց սարումը մին քերծավ վեր քըցո̀ւմ:

Վախտ ա, ժմանակ ա, կյամ ըն, անց ըն կենում, քյինամ: Էս տղան էլ ա պռավում, հորը նման վըեննեծեռքա ընկնում: Սրա տըղան էլ, տըեսնում ա, վըեր հա̀րը իրան շատ ա նեղութուն տամ, մին չուվալ ա քցո̀ւմ, տանում, վըեր սարավը թուլուլ տա: Պերում ա չուվալը սարումը վըեր տընո̀ւմ ասում. «Ա՛պեր, ըստեղ կաց, էս ա կյամ ըմ»:

Հա̀րն ասում ա. «Վերթի՛, ես գյիդում ըմ, տու հինչու հետե յըս պերալ ինձ ըստեղ: Ըստեղ չի, էն թըրրա̀փեն ա, տար էն քերծավը ինձ վըեր քըցի, ես իմ հորը ըստըղավ չըմ վեր քըցա̀լ, հնե՛, ընտղավ, էն քերծավն ըմ վեր քըցա̀լ»:

Տղան վըեր էս ըսկանում ա, վախում ա, վըեր ո̀ւրա̀ն տղան էլ ո̀ւրա̀ն պիտի քերծավը վըեր քըցի, անսա̀ս, հորը եր ա օնում, շըլակում, պերում տոն, լա̀վ պահում, պըհպանում:

## 59.ՊԱՌԱՎ ԸՍԿԵՍՈՒՐԸ

Ասում ա՝ մի պառավ ա ինում: Էս պառավեն ինում ա իրեք հարս: Էս պառավը շատ չար ըսկեսուր ա ինում: Էս հարսներին օր ա տամ, իշեղ չի տամ: Հացը քաշավ ա տամ, հինչ օնին, չօնին ըլլած[1] պնեյիքն էլ ո̀ւրա̀ն ջբումն ա պահում:

Մին օր ալ հացին պո̀ւլերը[2] հըմբարում ա, տամ հըրսներին, ասում, «Հացը թխեցեք, ամմա պըկասե վէչ»: Ասում ա, թափշուր անում, ինքը քյինամ ժամ: Ըսկեսուրը քյինա̀լանը ետը, հարսները մտածում ըն, հունց ա՞նին, վըեր հացան կյո̀ւղանան, ամա ըսկեսուրը գյիդա վըեչ: Մետք ըն անում, մետք, պիրում ըն ամեն մին պուլա մին պատառ կտրում և ո̀ւրա̀նց հետե ավելացածից հաց թխում: Հարսները միենգյ էլ մետք ըն անում, թա հի՞շտեղ կյեղիքյ, թիլ ըն անցկըցնում, վզա̀ն նհետ կախ անում:

Ըսկեսուրը կյամ ա տըեսնում, ղորթ ա, հացին համբրանքը տեղն ա, ամմա պուճուրացալ ըն, քաշը տեղը չի: Կըզնվում ա հըրներեն յրա, ասում. «Դո̀ւզն ըսեցեք, հացերը հինչ ը՞ք ըրալ, համբրանքը տեղն ա, քաշը տեղը չի»:

Հարսները ըղաչանք, պղատանք ըն անում, խոստանըմ ըն պար կյա̀լ, երք, տաղ ասել, հո̀ւքի հավատ անել, վըեր հացան ո̀ւրա̀նք կյո̀ւղացալ չըն: Հարսները հա՛մ պար ըն կյա̀մ, հա՛մ երք ասում.

---

[1] *Կողպած (Ծ. Բ.):*
[2] *Գնդերը(Ծ. Բ.):*

Լոք[1] տո, հա̀սի[2], վախել մեր,

Լոք տո, լոք տանք, վախել մեր,

Պենդ ըմ կապալ, վախել մեր,

Լեն ըմ ծակալ, վախել մեր,

Լոք տո, լոք տանք վախել մեր:

Իստի մին թա̀հրա̀վ հարսները կարում ըն պրծընին ըսկեսորը ղազաբից: Ամմա հարսները դինջ չըն կենում, էլլիա մտածում ըն, թա հո՞ւնց անին, վըեր էս ըսկեսվորը կլ̀ոխն օտին, ըզատվին: Մետք ըն անում, մետք Ջըլալեն ախճկան ասածն անում: Տաք-տաք շըփոթը իփ̀ում ըն, ըսկեսուրը քոն իլած վախտը պերա̀նը պեց անում, կա̀ծ-կա̀ծ շփոթը լցնում պերանը, դաղ արած եղն էլ՝ կլխավը: Իտի էլ անում ըն: Ըսկեսորը լ̀ուզ̀ուն պիրա̀ն̀ումը օռչում ա, նա̀փա̀ը կտրվում, կարում չի, թա խոսե: Իրիկունը տղերքը կյա̀մ ըն տոն, տըեսնում մարը թեքյ ընկած, կարում չի, թա խոսե, մին ղարար լիա̀ ղըլղըլցընում ա, ծեռքավ նշանց տամ հարսներեն, Ջալալեն ըխճըկանը, յանի թա, օզում ա տղորցը հըսկըցնե, վըեր ինձ էս օրը քց̀ողը Ջըլալեն ախճիգյն ա.

-Ջըլըլը՛…,-ղըլղըլացնում ա սկեսուրը:

Տղերքը ասում ըն. «Ջըլալեն ախճիգյ, քյեզ ա օզում, ե՛ք, տըես, ի՞նչ ա ասում նանը»: Ջըլալեն ախճիգյը մոտի ա կենում, ըսկեսուրը ջըլջըլացնում, ղըլղըլացնում .ա:

- Հինչ ա՞ ասում,- հըրցնում ըն տղերքը:

- Իստի,- ասամ ա Ջըլալեն ախճիգյը,- նանն ասում ա՝ մեծ ղզղանը կտաք Ջըլալեն ըխճըկանը:

- Էլ իի՞նչ, ա ասում,- հըրցնում ըն տղերքը:

- Միենգյ էլ ասում ա. իմ մըռնելանը ետը, կլխես փուլերը կտաք Ջըլալեն ըխճըկանը:

Էքսյը պառավը մըեռնում ա, հարսները ըզատվում ըն:

---

[1] Յատկիր(Ծ.Բ.):

[2] Հարս(Ծ.Բ.):

## 60. ԹՈՐՔԻՆ ՀԱՐՆԸ

Ասում ա՝ մին թորքու հարն ա ինում: Էս հարնը խե շատ լա̀չառ, հայաաըզ ա ինում, ըսկեսվորը օր ա տամ, ումբըր չի տամ: Սաղ օրը սոված ա պահում, ծարավ, վայը եկալ ա, թա վըեր ըսկեսուրը մին խոսք ա պիրա̀նան տո̀ւս կալալ, հարնը էլ աղին ու բոզին եշում չի, հինչ վըեր հըսնում ա, յըրա յա անում ըսկեսուրին անա տամ, թակում, թան ծըմելա քցո̀ւմ: Ըսկեսուրը վըխելանը նհետ կարում չի, թա տղին կյա̀նգյա̀տ անե:

Հարնը ասում ա. «Թա վըեր տղետ ասալ ըս, սրանա բեթար օր կըքըցիմ»: Իստի ամեն օր, էս պառավին տղա Աֆանդին տանան տո̀ւս ա կյամ թա չէ, հարնը ըսկսում ա ըսկեսվորը թակել, շորերը հանել, ճընչլոտ շորերը կյենալ տամ, ըստիպում, վըեր խեղճ պառավը ձեռքերը պըցըրցնե, յա̀լլի պար կյա, տես թող ինի, տեն թող ինի: Պար կյա̀լանը ետը հարնը պերո̀ւմ ա ո̀ւրա̀ն հետե լա̀վ-լա̀վ խըրավածնե, էն վըեր ա սկեսվերեն հետե լըղլըղան ճո̀ւր: Եվ իստի ամեն օր, ըսկեսվորը հաց չի տամ մուչունք, վըեր խեղճ պառավը եր չի կենում ո̀ւրո̀ւն ճրղոտած շուրերավը պար չի կյա̀մ ուրխըցնում հարնին, հարնը հաց չի տամ, վըեր սկեսուրն օտե: Լհա̀ վըեր տղեն կյա̀լեն վախտը մըտանում ա, հարնը ըսկեսվորը չընթռոտած, ծընկըլնեն կախ-կախ շորերը հանում, թա̀զա̀ շորեր ա կյեց տամ, երե թախտին նըստըցնում:

Մին վախտ էս մեր Աֆանդին եշում ա, տեսնում, վըեր ո̀ւրա̀ն մարը օր-օրին յըրա հա̀լվում, մաշվում, չոփ ա տըեռալ:

- Ա՛ մար, էս քյեզ հինչ ա՞ պտահալ, խե իտի լղա՞րալ ըս, ազառու հո՞ւ չըս:

Մարն ասում ա. «Կարել չըմ ասեմ, դա̀րդս շատ ա»: Տղան ասում ա. «Վախել մեր, ասե»: Մարն ասում ա. «Կարել չըմ ասեմ, թա օզում ըս դա̀րդս գյիդա̀ս, մին օր տանը կաց, թաքուն մին տեղ կյողըլը կաց, էն վախտը լոխ կըգյիդա̀ս»:

Էքյսը Աֆանդին թաքուն կյող ա կենում, փըղերեն քըմակեն, եշում ա, տըեսնում հի՞նչ: Կնեգյը մորը թակում ա, ետը հետը շորերը հանում, չըթռոտած շորերը կյեց տամ, ետնան պար ածում, ինքյն էլ ուրխանում, վըեր ըսկեսուրը թող-թող ա ինում, քըչոտած շուրերե ծընկըլնեն կախ-կախ իլած ծափ ըն տամ, էն վըեր ա հարսը ծըծաղում, ուշկյինա յա ինում:

Ըսկեսուրը հա՛մ պար ա կյա̀մ, հա՛մ երք ասում.

Օրս էս ա, Աֆանդի,

Շորերս էս ա, Աֆանդի,
Կերածըս էսա, Աֆանդի,
Կեսն էլ ճո՛ւր ա, Աֆանդի,
Իրեք դյա՛ստա՛ շորերան,
Թա՛զյա՛ն էս ա, Աֆանդի,
Աստծու օրը, հալըս էս ա, Աֆանդի:

Պար կյա՛լյա՛նը ետը, Աֆանդին եշում ա, տըեսնում, վըեր էսա կնեգյը պե-րավ ամանը ճո՛ւր ածից, մին կտոր էլ չոր հաց տվավ, թա. «Կե՛ր, ամմա վըեր տղեդ ասալ ըս, ըստրանա բեթար օր կըքըցիմ»:

Աֆանդին էլ հըմփերում չի կյողըը կացած տեղան տո՛ւս ա կյա՛մ, կընգանը յըրա պըրծնում, տոր վըեր կտաս, էնքան ա թակում, վըեր թան ծըմելա քըցո՛ւմ ա: Թըկելանը ետը մին գյիրվանքյա մեղր ա առնում, կնգանը տկլորցնում, էտ մեղրը քսո՛ւմ կընգանը ջանը, տանում ծըմակում մին ծառա պենդ կըպկըպոտում: Ծմակումը հինչքան մրջեմնը, պղոճ կա, լոխ յըրան ըն տեռնում, էնքան օտում ըն, վըեր ջանք տո՛ւս ա կյա՛մ:

## 61.ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՎ ԱՆՀԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

Ասում ըն՝ Շահալի Շահը քըշերները շորերը փոխած ման ար կյա՛մ, թա տըեսնա ժողովուրթը ո՛ւրա՛ն հրամանը հունց ըն կտարում: Մին դո՛ւնում Շահալի Շահը հրաման ա անում, վըեր իրիկունները վըեչ մի տեղ ճրա՛քյ չվառեն: Հրամանը տամ ա, ինքյն էլ քըմական տո՛ւս կյամ, թա տըեսնա հո՞ւ վա հրամանը կըտարում, հո՞ւ չի կըտարում: Տո՛ւս ա կյամ, տըեսնում ամեն տեղ խավար ա, վըեչ մին տեղ լո՛ւս չկա, ամմա մին տեղ մին ծըպո՛ւլի յա ըրնում: Շահալի Շահը թուշ կյա՛մ ա դիպա էս լո՛ւսը, օզում ա իմանա, թա էս հո՞ւ վա, հի՞նչ ինսան ա, վըեր ո՛ւրա՛ն հրամանը կտարում չի: Կյա՛մ ա, տըեսնում, վըեր մին ջա՛հիլ կնեգյ ա, լվածք ա անում, խորագյ ա իփում, էշխավ գործ ա անում, պատրաստոթուն ա տըեսնում: Մին պատառ վախտանը ետը, Շահալի Շահը եշում ա տըեսնում էս ա մին մարթ էկավ, տոռնը թակից: Էս ջա՛հիլ կնեգյը օրախ-օրախ տոռնը պեց ըրավ, էս մարթին կո՛լավն ընգավ, վըեննը կլո՛խը լվացավ, շորերը փոխից, հացը քըցից, քաղցր-քաղցր զրո՛ւց ընելավ հաց կերին, պրծին, եր կացին շորերնին հընեցին նի մտին տեղները, քոն իլին:

Շահալի Շահը տըեսավ, վըեր սահանք մարթ ու կնեգյ ըն, ինքյն էլ շատ

սերավ մարթ ու կնեգյ: Մարթը տո՛ւսն ա ըշխատում, կնեգյը՝ տանը: Շահալի Շահը մըտքումը տիրավ էս կնգանը փորցի, տըեսնա դո՛ւզ սրտավ ա սերում, թա՝ չէ: Մին թողթ ա կյիրո՛ւմ, թա. «Ես Շահալի Շահն ըմ, քյեզ օզում ըմ, տու կինիս իմ լըխճա սիրելի կնեգյս, իմ կնանուցը մաչին ամենան ըռաչինը: Թա վըեր օզում ըս, ե՛ք, տու կինիս թաքուհիների թաքուհին»: Էս կյիրած թոխտը թաքուն տնո՛ւմ ա էս կնգանը մոտ, ինքը քյինամ ո՛ւրա՛ն պալատը: Էքյսը իրիկունը Շահալի Շահը կյա՛մ ա, թա տըեսնա՝ նամակը էս կնեգյը ե՞ր ա կալալ, հի՞նչ հա՛լո՛ւմ ա:

Շահալի Շահը կյա՛մ ա տըեսնում է վըեր էս կնգանը էշխը էլ տեղը չի, բեքյեփ օթախումը նստած, ծեռքը ճըկատեն տիրած, մըտքին դոնն ընգած քնենքյ ա անում[1]: Էլ երեկվա նման տընըրտո՛ւս չի անում, խորազյ չի իփում, օախ-օրախ էլ պեն չի շինում: Էս ա մարթը էկավ, տոռնը թակից, ամմա կնեգյը ա՛լբա՛հա՛լ տեղան ծալ չիլավ, տոռնը ա՛լբա՛հա՛լ պեց չարավ: Մարթը էլլհա յա տոռնը թակում, միհենգյ վըեր հա, կնեգյը չկամ-չկամ եր կացավ տոռնը պեց ըրավ, էլլհա էկավ տեղը նստից, ծըեռքը ճկատեն տիրավ: Մարթը հինչքան օզում ա մուտանա՝ էս կնեգյը չոր-չոր ա անում, ամեն մին հարցմունքին կոշտ-կոշտ ա անում: Մարթը ճարը կտրած շորերը հանից, տեղը մտավ, առանց ուտելու: Ամմա կնեգյը մին ջուռա յա տըեռալ, տափը տեղ չի տամ, թա նստի, ըստեղ ա ման կյա՛մ, ընդեղ ա ման կյա՛մ, ինքյն էլ չի գյո՛ւղո՛ւմ, թա հինչ ա անում: Շահալի Շահը մին էլ ա տըեսնում էս կնեգյը եր կացավ տեղան, քյինաց մին տենակ պիրավ, քարին քըսից, սրեց, կոխեց ո՛ւրա՛ն քոն իլած մարթին դո՛շը:

Շահալի Շահեն ջանը զըրզանդից: Շո՛ւտ ըրավ էկավ ո՛ւրա՛ն պալատը, մին հրաման կյիրից, թա. «Իմ երգյիրումըս հինչքան կնեգյ արմադ կա՛ մեծ, պուճուր, լըխչու սրու քաշել, կտորել՝ կին ախճիգյ, քուր, մար, էլ իմ երգյիրումս էլ ա՛դդա՛բին կնեգյ արմատ չինի»:

Էս հրամանը վըեր ժողովուրթը իմանում ա, մնում ա քար կտրած. «Հո՞ւնց թա մեր երգյրի կնեգյ արմատներին կտորել»: Մարթիքյ ժողով ըն անում, կյա՛մ ըն Շահալի Շահեն խնթրում, վըեր ետ կենա իրա հրամանան: Շահալի Շահը մերժում ա: Կյա՛լիս ըն նազիրները, կյա՛լիս ըն վեզիրները չէ՛ ու չէ՛: Շահալի Շահը լըխչու խնթիրն էլ կոտրում ա: Ասում ա. «Չէ՛, վըեր չէ՛»:

Էս դո՛նո՛ւմ ժողովուրթը հըվաքվում ըն մետք անում, վճիռ անում Շահալի

[1] *Մտածել (Ծ. Բ.):*

Շահեն կոշտը ըղարկին էն կոըկոռ տեռած պառավ վեզիրին, վըերը Շահալի Շահին հորը քշտին մեծ վեզեր ա իլալ։

Էս Շահազիզ վեզիրը կյա̈մ ա Շահալի Շահին կոշտը. «Շահալի Շահին ապրած կենա, ես քու հոր մեծ վեզիրն ըմ, մաըթիքյ քու հորատ էնքան չըն իլալ վըխելիս, հինչքան ինձա̈նա, սաղ ժողովուրթը տըղտողում ա իլալ իմ անումը ըսկընալիս։ Ամմա մին դո̈նո̈ւմ ինձ մին պեն պտահից, մինչելա միենգյ էլ մննաս քյինամ չի։ Մին օր նստած իմ դիվանխանումս, պեն ի անում, մին էլ տըեսնամ մին աժդահա մարթ քըմականս տո̈ւս կանչից ինձ, թա. «Ե՛ր կաց տեղատ և իմ քըմակաս եք»։ Ես մին պենդ վըխեցե, ամմա մըծոըթո̈ւն ըմ տինում, գյուվաքյի վեչինչ, ամմա հիշտե՛ղ, վըեններս ծըլծըլըտում ըն, պատառ ա մնամ, թա սըերտս ճաքի, ամմա իզինքյս ինձ ըմ հըվաքում։ Մին վախտ օզում ի, թա քըմականը տո̈ւս փախչիմ, ամմա եր իլած անումս թողից վեչ։ Մին մըթեն քիշեր ա, էս աժդահա տղամարթը քյինամ ա ըռաչես, ես էլ քըմական։ Մին վախտ ուզեցե, թա քըմականը տո̈ւս տամ ըսպանիմ, մին էլ մետք ըրե, պա բա̈լքյա̈մ կրեցե վեչ ըսպանիմ։ Էն վախտը, ախր ետ կտեռնա ինձ դինար-դինար կտորե։ Իստի մտքես դոնն ընգած քյեցենքյ, մինչելը հսենք ծմակեն լափ խոր տեղը։ Էս մարթը վեր եկավ, ծիան, ասից. «Վեզի՛ր, էս քեզ իմ ծին, էս էլ քյեզ մին խուրջին վըեսկե, թա վըեր չուրը մին սհաթը եկե վուչ, քյեզ հալալ ինի էս ծին էլ, էս վըեսկին էլ։ Եր կօնիս և ետ կտեռնաս ծեր տոն»։ Ինքյն էլ իթտի-բաթտի տեռավ, թողից ինձ մինակ։ Մին սհաթն հա̈լա̈ թըմամած վեչ, մին էլ տըեսնամ էս ա եկավ, ամմա ըրնում ար, վըեր բըզա̈րած ար, ըրնըլվա, շորերն էլ տեղ-տեղ ճղած, եկավ կոշտս, թա. «Գյո̈ւղո̈ւմ ը՞ս հինչ կա, ես կնեգյ ըմ, տղամարթու շորեր կյեցած։ Մին քանի օր առաջ իմ մարթը ըստըղավ կյա̈լու վախտը դըչըղնեն յըրա յըն տամ, թըլանում մարթիս, ո̈ւրա̈ն  էլ ըսպանում։ Միենգյ ես եկալ ըմ, վըեր մարթիս աջըղը հանիմ։ Ղըչըղնին օխտը հո̈ւքի յին, օխտին էլ ըսպանալ ըմ։ Միենգյ պատառ տես եք, քյեզ նշանց տամ, թա իմ մարթս հինչտեղ ա թաղած»։ Տարավ ինձ, մին թա̈զա̈ թաղած կյրեզման քանդից, պեց ըրավ դութին, նի մտավ մաչը, ծեռքը տարավ մարթու կլխեն տակեն տիրավ, խըտտից էն մին ծեռքավը, տո̈ւս կալավ մին շո̈ւշա̈ զհա̈ր խմեց ու աչքերը հոփ կալավ։ Ես տեսի, թա հունց ար էս տղամարթ կնեգյը մահեն նհետ կռնսը տամ, սփաթը ծռում, վըենները թփըհարում։ Ես էնքան կացե ըտեղ, չքելանը էս կնեգյ-տղամարթը հո̈ւքին տվավ, դինջացավ։ Ես դութուն դափաղը տրի,

վըեղան յրա ըրե և էս էրկու սիրող սրտերը թուղեցի վուչ, վըեր կազանու փայ տեռնան։ Շահալի Շահն ապրած կենա, տու տըեսալ ըս ինդի մին կնեգյ, վըեր ո̀ւրա̀ն բախտավերության միար ո̀ւրա̀ն սիրած մարթին ա ըսպանում, ամմա ես էլ տըեսալ ըմ ինդի մին կնեգյ, վըեր ինքյը ո̀ւրա̀ն հոժար կամքավը ո̀ւրա̀ն զոհում ա մարթեն սերեն խա̀թրու։ Միենգյ թող Շահն Շահն ինքյն ասե»։

Շահն-Շահը մետք ա անում, փոխում ա ո̀ւրա̀ն հրամանը, վըեր ո̀ւրա̀ն մարթեն ըսպանող կնգանը կախ տան։

## 62.ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Ասում ա՛՝ օխտն ախպեր ըն ինում։ Չո̀ւրը[1] փսակվելը սահանց մեծ ախպերը հըվաքում ա ըխպորտանցը, թա. «Գո̀ւղո̀ւմ ը՞ք հինչ կա։ Մունք միենգյ իստի սերավ ընք, ամմա էքյուց ամեն մինը մըզանա պետմա մին խըզա̀տակը հանիծուտ[2] պիրի, էն վախտը մեր կնանիքյը հու վա գյո̀ւղո̀ւմ ո̀ւրո̀ւր նիետ հունց ըն յոլա քյընալու։ Մունք պետմա ըստեղ խոսք տանք, վըեր մունք մեր խելքը կնանուցը չբիդի տանք, մունք չքելանը մեր մեռնելը պետմա պըժենվինք վուչ, մեր հոր օջախը քա̀նդինքյ վուչ»։

Ասամ ըն, պայման կապում, թա. «Վըեր մեր կնանուցը մաչին կը տեսնանք խառնող յա իմըքու անող կինի, խոսքը մին անինքյ, քաշինք մեյդան, թակինքյ, խըատինքյ։ Մունք պետմա սերավ կենանք» ։ Էս օխտն ախպերը փսակվում, խուխատար ըն տեռնում։ Խոսքը մին ըրած սերավ ապրում ըն, իմըքու չկա։

Մին օր էլ պուճուր ախպորը կնեգյը յըվիշ-յավաշ պոզերը հանում ա. «Իմ խոխաս խըրեգյ կերավ, քու խոխատ՝ շատ, լա̀վը քու խուխետ հետե կըրեցեր, փիսը՝ իմ խուխես, իմ մարթս շատ ա չըրչարվում…»։ Մեծ ախպերը եշում ա տըեսնում, վըեր կնանոցը մաչին ա̀լա̀լում ա ընգալ, ո̀ւրո̀ւր կոշտ-կոշտ ըն անում, պենը վախտեն չինո̀ւմ, հացը վախտեն հա̀զիր չինում։ Մեծը իլլհա̀ հըվաքում ա ախպորցը, թա. «Մեր կնանեքյը աչքես մին ջուռա յըն ըրվամ, մըզանում մին խառնակիչ կա, ամմա գյո̀ւղո̀ւմ չըմ, թա հո՞ւ վա, հունց ա՞նինքյ, հունց չանենք»։ Պերում ըն մըսլահաթ անում, վճիռ անում։

Մեծ ախպերը մին օր, վըեր լոխ ըխպըրտանքը տանն ըն ինում, կանչում

---

[1] *Մինչև (Ծ. Բ.)։*

[2] *Աղջիկ, կին, բառացի նշանակում է ծոծրակը անիծոտ, այսինքն անձ, որի ծոծրակը պիտի ծածկված լինի մազերով (Ծ. Բ.)։*

ա կնանոցը, թա. «Պա ասիլ չըք, մունք պետմա պըժենվինքյ»:

- Հը , հի՞նչ ըք սուս կացալ խե՞ խոսում չըք,- մեծ ախպերն ասում ա կըղնոտած ուրա̈ն ախպորտանցը և կնանուցը: Լոխ կաղնած ըն, վեչ մինն էլ խոսում չի:

Էտ վախտը մեծ ախպերն ասում ա. «Ասածըս ասած ա, պետմա պըժենվինքյ, առաչ պետմա ըսկսինք ծալքան, յորղան-դո̈շակը պըժենինքյ հալա, ետնան էլ մնացածը: Դե՛, շուտ ըրեքյ, հինչ ը՞ք վըեննը կացալ: Եկեքյ, վըեր ըծեցեքյ, ծալքը պիժին-պեժին անիմ»:

Հարսներեն մաչան էն ա պուճուրը ծեռքերր եր քաշից, եկավ ծալքը քաշից, վըեր ածից, էն վըեր ա մնացած հարսները լա̈ց ին ինում: Էդ վախտը մեծ ախպերր փըռնում ա պուճուր ախպորը կընգանը, մին լա̈վ թակում, թա. «Տո՛ւ վըս լիա̈, վըեր կաս մեր տոնը ալալում քըցողը, տու վըս խառնակիչը»:

Էն ա ու էն, նրանա ետը էս հարսը խըլունքանում ա:

## 63.ԷՐԿՈՒ ԼԱ̈ԶԳՅԻ

Ասում ա՝ էրկու հըրևան լա̈զգյի յըն ինում: Էս էրկու լա̈զգյիքը սերում ըն մին ըխճըկա: Էն վերա ախճիգյը սերում ա էս էրկու լա̈զգյո̈ւն անա մինին, սրա յըրան էլ փսակվում : Մին քանի վախտանը ետը էս փսակված լա̈զգյին ուրա̈ն հըրըվանեն ասում ա. «Ե՛կ, մինտեղ քյընանք Ղարաբաղ, կլեկչութուն անինքյ»:

Խոսքը մին ըն անում, կյա̈մ Ղարաբաղ: Տեղ հըսնելանը ետը փսակվածը ըզափեն ասում ա. « Ախպե՛ ր ջան, օզում ըս էս շենումը կաց, ես քյինամ էն մին շենը, օզում ըս ես ըստեղ կենամ, տու քյինա էն մին շենը: Ճոկ-ճոկ ինինքյ, վըեր փող ըշխադելը հիշտ ինի, համ էլ պայման անինքյ, վըեր մին տարուց ետը մին տեղ քյընանք տոն, ճոկ-ճոկ չի քյինաք»: Ասում ա. «Լա̈վ»:

Խոսր ըն տամ ուրո̈ւր, մինը մնամ ա էս շենումը, էն մինը քյինամ ա մին օրիշ շեն: Մին տըրնանը ետը փսակված հընգերը չորս հա̈րո̈ւր մանեթ փող ա աշխատում, եր ա կենում քյինամ հընգերին կոշտը, թա. «Ե՛կ քյինանք, մին տարեն թըմամալ ա»: Ազա̈փ հընգերն ասում ա. «Պա ես հունց կյա՞մ, վըեր փող չըմ ըշխատալ»: Փստկվածն ասում ա. «Ա՛խպեր, մեր խոսքը խոսք ա, եկ քյինանք տոն. ես չորս հա̈րո̈ւր մանեթ փող ըմ ըշխատալ, էրկու հա̈րո̈ւր մանեթը քյեզ, էրկու հա̈րո̈ւր մանեթը ինձ»:

Ազա̈փը համաձայնվում ա և էրկուսավ հղե յըն ընգնում դիպա Դաղըս-

տան: Տոն չիըսած, Դաղըստանա մին մոտե տեղ, վեր ըն կյամ, թա դինջա̀նան, պատառ հաց ուտելանը ետը, փըսակված հընգերը հանում ա էրկու հա̀րո̀ւր մանեթը տամ հընգերին, ասում. «Առ, էս էրկու հա̀րո̀ւր մանեթը քյեզ քու մոր կաթնեն նըման քյեզ հալալ, վըեչ մին վախտ, մունք բարիկամ ինինքյ, յա դո̀ւշմա̀ն, կօվում ինինքյ, յա հա̀շտ, ես իմ օրումը, խոսք ըմ տամ, էդ էրկու հա̀րո̀ւր մանեթեն անումը տամվեչ»: Ասում ա, էրկու հա̀րո̀ւր մանեթը տամ հընգորը, ինքյը թեքյ ընգնում, քոն ինում:

Էս ազափ հընգերը ինքյը իրան մետք ա անում, թա. «Էս մարթը հա̀լբա̀թ փող շատ օնե, վըեր էրկու հա̀րո̀ւր մանեթը ինձ ա տամ»: Տո̀ւս ա օնում խանչալը, կոխում հընգերին փորը: Հընգերը խանչալեն ցավան նհետ զո̀ւրթնանում ա, ըղաչանք, պըղատանք անում, թա. «Շատ ըմ խնթրում, ինձ ըսպանել մեր, էդ էրկու հա̀րո̀ւր մանեթեն գիման էլ իվել փող չօնիմ»:

Ամմա էս ազափ հընգերը եշում չի հընգերեն ասածներեն, թա. «Ա՛խպեր, ըսպանել մեր, մին ա, քամեն ինի, յա տիրևը, խաբարը պետմա տանի Դաղստան, վըեր տու վըս ինձ ըսպանալ, վըեր ինձ ըսպանողը տու վըս»: Ազա̀փ հընգերը ըսպանելան ետը, հընգերեն ջուբերը, ծուցերը ման ա կյա̀մ, ամմա էրկու հա̀րո̀ւր մանեթից ավել փող չի քըթենում: Փո̀ւշմա̀նում ա, ամմա էլ պենը պենա̀ն անց ա կացալ: Հընգերեն մեյիդը քաշ ա տամ, քըցո̀ւմ հղեցին ներըքե թա̀րա̀փը, խանչալով մի կուճի փոս քա̀նդո̀ւմ, մաչը քըցո̀ւմ:

Ազա̀փը վըեր տոն ա կյա̀մ, փըսակվածեն կնեգյը կյա̀մ ա հըրցընում, թա. «Պա իմ մարթըս հոր ա՞»: Ազա̀փն ասում ա, թա. «Քու մարթըդ իմ կյալան հենգյ օր առաչ հիվանդացալ ա, հենգյ օր էլ ես տրա հետե յըտացե, քյեցե, թա տըեսնամ հունց ա, տըեսե. վըեր չուրրը իմ քյինալը հայերը թաղալ ըն»:

Մին տարանը ետը, հիբը վըեր էս ըսպանելը լոխճա միննան ընկած ա ինում, էս ա̀զա̀փը մարթ ա ըղարկում էս կնգա կոշտը, թա. «Մին ա, սըանա ետը քու մարթըդ էլ ետ չի կյա̀լու, եկ ինձ»: Էս կնեգյը մետք ա անում, մետք, վերչը փսակվում ա: Թա̀զա̀ փըսակվածնեն ապրում ըն սերավ, վերչն էլ մին սերուն տղա յա ինում:

Մին օր մարթ ու կնեգյ վճիռ ըն անում հըրևան շենան տասսը փութ ցորեն առնին: Էըծում ըն ըրբան, եր օնում ո̀ւրա̀նց խոխան և հղե ընկնում դիպա հըրևան շենը՝ ցորենը պիրելու: Էդ շենին հղեն անց ա կենում համեն ընտեղավ, հինչտեղ ազափ հընգերը ըսպանալ ա փսակված հընգերեն: Վըեր կյա̀մ ըն հըսնում ըստեղ, ըրբան կըղնըցնում ըն, եզները պեց թողնում, վըեր

ըրածին, ո̈ւրա̈նք էլ պատառ դինջա̈նան: Էտ վախտը մին քամի յա պըցրա-նում, էս քամին թոզն ու տիրնը ո̈ւրո̈ւր խառնած տես ու տեն ա քշո̈ւմ, յա երկինքը պըցըրցնում: Էս վըեր տեսնում ա մարթը, բիրդան մետն ա ընկնում հընգերին ասածը, թա մին ա, քամին ինի, յա՝ տիրնը, խաբարը տեղ կիըսցնին, ծիծաղում ա: Կնեգյն ա̈լբա̈հա̈լ հըրցնում ա, թա. «Ա՛ մարթ, խե՞ ծըծըղեցեր»:

Մո̈ւվթա̈ մարթը սարավ-քոլավ ա քըցո̈ւմ խոսքը, ամմա վըեր-տըեսնում ա կնեգյը ծեռք չի քաշում, մետք ա անում, թա. «Անց կացած, քյեցած պեն ա, թող ասիմ»: Եվ մին-մին ըսկսում ա նաղլ անել, թա հունց ինքյն օզում չար կյար, հունց հընգերը էրկու հա̈րո̈ւր մանեթ փող տըվավ, հունց եկին ըստեղ հըսին, հունց ինքը ըսպանից:

- Լա̈վ ըս ըրալ,- ասում ա կնեգյը:

Տեղ ըն հասնում, քըշերը թեքյ ընգնում, քոն ինում: Կես քըշերին, վըեր մարթը քոն իլած ա ինում, կնեգյը եր ա կենում, խանչալը տո̈ւս օնում, մարթու սէրտը խրում, մարթին ըսպանելանը ետը, ետ ա տեռնում խուխեն ըսպանում:

Սուղին վախտը, դատավերը հըրցնում ա. «Լա̈՛վ, ասինքյ, թա մարթիդ սպընեցիր, վըեր էն ո̈ւրա̈ն հընգերեն ա ըսպանալ, պա խուխետ խե՞ ըսպընեցեր»:

- Ընդրա հետե, վըեր շանան էլ շոն բիամ կըկյա̈:

## 64.ԱԶՆԻՎ ՀԸՆԳԵՐ ԸՄ ՄԱՆ ԿՅԱ̈Մ

Ասում ըն, մին թաքավեր տո̈ւս ար եկյալ ո̈ւրա̈ն մըհալը վերս ընելու: Կյա̈մ ա տըեսնում, էս ա մին մարթ ծովեն ղըրաղեն կաղնած, հա՛ թորը քըցո̈ւմ ա ճո̈ւրը, հանում, քըցո̈ւմ ա՝ հանում: Թաքավերը նի յա մնամ[1], թա էս մարթը խելունք ա, թա պել, վըեր թորը քցո̈ւմ ա ճո̈ւրը, էլլհա դա̈ստի տո̈ւս օնում: Մին մարթ ա ըղարկում, թա. «Քյեցե՛ք, տեսեք, էտ մարթը հի՞նչ պենի յա»: Թաքավերեն մարթիքյը կյա̈մ ըն հըրցնում, թա. «Ա՛ մարթ, հինչ պենի յը՞ս»:

Թա. «Ես, ես մին մարթ ըմ, վըեր ըշխարքիս ըրեսին հինչքան ցամաք կա, լո̈խ վըեննես տակն ըմ տըվալ, ամմա ազնիվ հընգեր չըմ քըթա̈լ: Մինեգյ էլ

[1] Հետաքրքրվում է:(Ծ. Բ.):

ճրերն ըմ ման կյա̀մ, բալքյամ ճրո̀ւմն ինի ազնիվ հրնգեր, քըթենամ, մըեռնիմ, էլ սրտումըս դա̀րդ չմնա»:

Թաքավերը կանչում ա էս մարթին և ասում. «Տո̀ւ ազնիվ հրնգերու վրս ման կյա̀մ, ես քյեզ ազնիվ հրնգեր, եկ իմ կոշտը, ինձ նհետ ապրե, կեր, խմե, ջան ասինքյ, ջան ըսկանանք»: Էս մարթն ասում ա. «Ես հըվատում չըմ, թա էս ըշխարքես իրեսին ազնիվ հրնգեր ինի, ամմա վըեր ասում ըս, կյա̀մ քյըզնհետ մինտեղ ապրենքյ, հունց վըեր ազնիվ հրնգերու նհետ»:

Էս մարթը մին քանի վախտ ապրում ա թաքավերեն նհետ, ծանութա-նում ա թաքավերեն գործերի նհետ, նրա տանը-տեղեն, թաքուհու, րախա-ների նհետ և վերչը ինքյն իրան ասում ա. «Ի՛սկը, վըեր քըթա̀լ ըմ ազնիվ հրնգեր»:

Ամմա էս թաքավերեն մին սերուն կնեգյ ա ինում՝թաքուհին, վըերը սիրահարվում ա էս մարթին յըրան համ էլ օգնում ա, հունց վըեր ինի ծեռք քըցի: Ամմա էս մարթը,. չալիշ ա կյա̀լիս, մոտ չի թակում: Ամմա թաքավերին կնեգյը ծեռք չի քաշում, էս մարթին հետան ընկած, ասում ա. «Մին ա, հինչ էլ անես, երկյինքյ էլ պըըցրա̀նա̀ս, տափին տակն էլ նի մըտնես,. մին ա, էլլհա կքըթանամ, իմ օզածը կանիմ, տու իմն ըս, վըեր ի՛մն ըս»: Էս մարթը էլ օրիշ թա̀հր չի քթենում, մետք ա անում, մետք, թաքավերեն խընթրում , վըեր ո̀ւրա̀ն մին օրիշ միալ ըղարկե ծառայելու, վըեր ինքյը շատ շնորհակալ ա թաքավերեն անա: Թաքավերը եր ա օնում ո̀ւրա̀ն երգյիրումը մին միալում մեծ տնո̀ւմ, ասում ա. «Թող քու սրտավըդ ինի, քյինա քյըզհետե ապրե»:

Ամմա տես վըեր, էլլհա թաքուհին դինջ չի կենում, միհնգյ էլ ըստեղ ա նամակ կյիրում, բարով ըղարկում, թա. «Առանց քյեզ կարում չըմ տիմա̀նամ»: Էս մարթը էս նամակներեն ջուղափը կյիրում չի, ամմա ո̀ւրա̀նց պահում ա, մին դութու մանչին:

Թաքուհին, վըեր տըեսնում ա պեն չի տո̀ւս կյա̀մ, սոտ տեղան հիվանդանում ա: Թաքավերը, ո̀ւրա̀ն երգյիրումը հինչքան լա̀վ հա̀քյիմներ կան, լոխճու կանչում ա, ամմա վեչ մինն էլ կարում չի կլո̀խ հանե: Մինակ թաքուհին մին հա̀քումնու հըսկըցնում ա թա վըեր տու կարիս էս հինչ մարթին նհետ ինձ տաք ճրերն ըղարկիս, ես քյեզ էսքան վըեսկե կտամ: Էս հա̀քյիմը կյամ ա թաքավերեն կոշտը, թա. «Թաքուհին կլըվանա էն վախտը, հիբը վըեր մին հավատարիմ մարթու նհետ տնիս ըղարկիս տաք ճրերը, էդ ճըրերը քու թաքուհուն կըըղըցըն»:

- Հա՞, հո՞ւ տանի, հո՞ւ չի տանի,- թաքավերը մասլահաթ ա անում հ՜քյիմին նհետ:

- Էտ պենը կարուղ ա կլ՜ոխ պիրի քու էն մարթը, վըեր ըղարկալ ըս միալը:

Թաքավերը կանչում ա սրան, թա թաքուհուն տու պետմա տանիս տաք ճրերը, քյըզանա կման օրիշ հավատարիմ մարթ չօնիմ: Տաք ճրերումը թաքուհին էլլիա՝ փըռնում ա էս մարթեն յախան, թա. «Լհ՜ տու վըս, վըեր կաս, ես լհ՜ քու ղ՜րղ՜տ ըմ եկալ ճրերը: Ես տաք ճրերին հ՜սրաթ չըմ, ես քու հ՜սր՜թն ըմ»:

- Հունց անիմ, հունց չանիմ,- մետք ա անում էս մարթը, եշում ա, տըեսնում, վըեր էրկու կրակեն ղաթումն ա մնացալ: Վերչը սուս ու փուս եր ա կենում, քյինում իրան կըրտել տալիս, ձվաները հանում տն՜ոմ հ՜մին էն ղութումը, հինչ տեղ վըեր պահած ա ինում թաքուհու նամակնեն: Էս ղութին փըչ՜տում ա, ըղարկում թաքավերեն, մին նամակ էլ կյիրում թա. «Թաքավերն ապրած կենա, էս փըչ՜տ՜ծ ղութին քյեզ ըմ ըղարկում , հանցուվըեր, պեն ա, պըտահիմունք ա, ես մեռնեմ, իմ մռնելանը ետը, պեց կանիս և կիմանաս իմ վերչը»:

Թաքավերին կնեգյը տըեսնում ա, վըեր էս մարթը իսկի մոտ չի թակում սրանա պեն չի տ՜ոսւ կյ՜լ՜ու, հարայ ա քըց՜ոմ, թա «Հա՛յ, հարա՛յ եկեքյ, ազատեցեքյ, էս մարթը ինձ օզում ա օժավ բռնապարե, յըրա յա ընզալ, թա լհ՜ տու իմ կամքը պիտի կատարես»:

Իստի էլ հեռագիր ա տամ թաքավերեն յըրա: Թաքավերը շատ կզնվում ա, մին ղարաղաջի ա շինել տալիս, արար աշխարհը կանչում թըմաշի: Էս ա պիրում ըն էս մարթին թա կախ տան: Սաղ ժղուվըրթին ըռաչքին, էս մարթը խնթրում ա, վըեր թաքավերը մինչև իրան կախաղան պըցր՜նալը ուր՜ն տված ղութին պեց անե, ետնան իրան կախ տա:

Թաքավերը պեց ա անում ղութին, տըեսնում ՜որ՜ն կնզանը նամակնեն, էս մարթու էրկու ծ՜ոսն, մին էլ մին նամակ: Մարթը նմակումը կյիրում ա, թա հունց ա թաքավերեն կնեգյը ՜որ՜ն  յախան կտրալ, յա հունց ա ինքյն էլ ճարը կտրած ՜որ՜ն  կըրտել տվալ: Էս մարթը նըմակեն վերչումը կյր՜ոմ ա. «Ես զյ՜ող՜ոմ ի, վըեր ճեյլի յա ետե էս օյինը իմ կլ՜ոխն ար կյ՜լու, իմ ազնվութունը ինձ թողից վեչ, վըեր ես մարթ մնամ»:

Թաքավերը շատ փ՜ոշմ՜նում ա ՜որ՜ն փըռնած պենեն յըրա: .Էս մարթին ըզաղում ա, ՜որ՜ն  կնզանը կախ տալ տամ:

## 65.ՎԱՆԵՍ ԱՊՈՐ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին մարթ, էս մարթիս անումը՝ Վանես ապեր: Սա աման օր քյո̀ւնո̀ւմ ա իլա̀լ վար անում: Մին օր էլ վար անելիս վախտը տըեսալ ա, վըեր մին ծուվոց ա կյամ: Քյինացալ ա տըեսալ մին առչ վըեննը դա̀լա̀մ իլա̀ծ: Ինքյը ո̀ւրա̀ն ասալ ա. «Թա քյինամ դա̀լա̀մը վըեննիցը հանեմ, փախչեմ»: Քյինացալ ա վըեննիցը դա̀լա̀մը հանալ, փախալ: Առչը ըսալ ա. «Ա՛դա̀, քյինալ մի, ա̀՛դա̀, քյինալ մի, խոսկ ըմ ասում»: Նա կաղնալ չի, փախալ ա: Առչը ընդրա հետան քյինացալ ա, ասալ. «Ինձանից հինչ կօ՞զես»: Նա էլ ասալ ա. «Զատ չըմ օզիլ»: Առչը ասալ ա. «Փող կօզե՞ս»: Վանես ապերն էլ ասալ ա. «Հա՛»: Առչը ասալ ա. «Հէն ա փլան ծառին տակին մին զյո̀ւզյո̀ւմ փող կա, քյինա̀ էր կալ, ամմա կընզանտ ասես ոչ հա՛, վըեր քյեզ կօտեմ»: Թա. «Լա̀վ ա»:

Ետնան քյինացալ ա ծառին տակը քա̀նդա̀լ, մին զյո̀ւզյո̀ւմ փող էր կալալ, քյինացալ ո̀ւրա̀նց տոն: Կնեզյը վըեր շատ զոռալ ա, նա էլ ասալ ա, թա. «Առչն ա տվալ»: Առչն էլ հո̀ւրթա̀վը անգուջ ունելիս ըսկացալ ա, ետնան ետ ա տա̀ռալ, ասալ. «Վա՛նես ապեր, կըտեսնաս, հա̀լբա̀թ մին էլ կիկյա̀ս վար անես, թա ես քյեզ կերե՞չ»: Վանես ապերը մին տարի էս փողավը ապրալ ա, էլ տո̀ւս չի եկալ, վըեր վար անի:

Մին վախտ մին աղվես եկալ ա, թա. «Մին ծո̀ւ տո, ես քյեզ տո̀ւս պիրեմ առչին աղաքը»: Վանես ապերն էլ ասալ ա. «Լա̀վ»: Աղվեսն ասալ ա. «Տու քյինա վարըտ ըրա, ես էլ քյինալու վըմ հղըցումը թող անեմ, առչը վըեր կյա̀ ասի՝ հինչ ա յէ՛ ասի՝ շահին ճո̀րիքյը քոսուտ ըն ինզյա̀լ, առչի եղի յըն ման կյամ. վըեր ասի՝ թա հունց անե՞մ, ասի՝ նի մուտ էտ չվալը: Վըեր նի մնի չվալը, ըռեխը պենտ կապի, ես էլ կիկյամ, կթակենքյ»: Նա էլ ասալ ա. «Լա̀վ»: Վանես ապերը քյինացալ ա վարը ըրալ, աղվեսն էլ քյինացալ ա ընդեղ թոզ ըրալ: Առչը եկալ ա թա օտի, եշալ ա տըեսալ մին քյո̀ւչո̀ւմ թոզ ա էր ինո̀ւմ: Հըցրալ ա թա. «Վանես ապեր, էն հինչ թոզ ա էր ինո̀ւմ»: Թա. «Շահին ճորիքյը քոսուտ ըն ինզյա̀լ, առչի եղի յըն ման կյամ»: Առչը ասալ ա թա. «Վանես ապեր, էս հունց ա՞նեմ, Վանես ապեր, էս հո՞ւնց անեմ»: Թա. «Նի մըտ էտ չվալը»: Նի յա մտալ չվալը:Նա էլ ըռեխը պենտ կապալ ա:

Ետնան աղվեսը եկալ ա: Մինը սանդն ա էր կալալ, մինը՝ փայան, ինզյա̀լ ըն առչին ջանին, ըստրա էն դդար թակալ, վըեր պատառ ա մնացալ, թա ըսատկի: Ախըրը չվալը ճղալ ա, տո̀ւս ա եկալ փախալ, քյինացալ հնգերունցը էր կալալ, թա կյա̀ն, վըեր ըստահանց ըսպանին: Հնգերունքը մին էլ ինքյը

լիհա̀ վըեր օզացալ ըն, թա ծո̀րավը նի մնեն ըստահանց օտեն, աղվեսն ասալ ա. «Վանես ապեր, սանդն ինձ տո»: Վանես ապերն էլ առալա փայան: Թակված առչը վըեր էս լսալ ա, պուք ա եկալ, քյինացալ: Հնգերնեն հրցրալ ըն, թա. «Պա հոր ը՞ս քյո̀ւնո̀ւմ»: Ասալ ա. «Թա տուք հա̀լա̀ Վանես ապորը սանդը տըեսալ չըք վըեր տուք էլ տըեսնաք կըփախչեքյ»: Ետնան վըեր էս քյինացալ ըն, ո̀ւրա̀նք-ո̀ւրա̀նք ըն հետան քյինացալ:

Վանես ապերը մին օր վար անելիս տեղը աղվեսը եկալ ա թա. «Ծո̀ւս տո»: Բիրդան Վանես ապորը փորը ղռղռացալ ա,աղվեսը ասալ ա. «էտ հինչ ա՞»: Նա էլ ասալ ա. «Հեն ա փորումըս մին զա̀նգյո̀ւ կա, մին էլ մին զիրա̀նգյո̀ւ, զա̀նգյո̀ւն ասում ա՝ ես ըմ տո̀ւս կյամ աղվեսին օտեմ, զիրանգյուն ասում ա ես ըմ տո̀ւս կյամ աղվեսին օտեմ»: Աղվեսը լիհա̀ վըեր էս ըսկացալ ա, ասալ ա. «Քմատաղ, Վանես ապեր, պա̀ց մի թողիլ, պա̀ց մի թողիլ, ծո̀ւն էլ քյեզ ինի, պա̀ց չի թողես, թող ըրա ես փախչեմ քյինամ, ետավ պա̀ց ըս թողում, պա̀ց թողի»: Ետնան փախալ ա քյինացալ, Վանես ապորը ծուն էլ մնացալ ա ո̀ւրա̀ն:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ըսողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

### 66.ԿՅԱՌՆԻՆ, ԷՇԻՆ, ՔԸՉԵՂԱԿԻՆ, ՄՇԸՀԱՎԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին մարթ: Էս մարթիս իլա̀լ ա մին էշ: Էս էշին էնդղա̀ր պինըցըրալ ա, վըեր օզացալ ա, թա ըստակի: Թակալ ա, տո̀ւս ըրալ, թա հանցը վըեր քյինա օրիշ տեղ ըստակի, ո̀ւրա̀նց տանը չի ըստակի: Նա վըեր պա̀ց ա թողալ, էշը քյինացալ ա տըեսալ մին ոչխար, վըեր էլիա էս ջուռա թակված, տո̀ւս ըրած ար: Ասալ ա թա. «Ոչխար ախպեր, հոր ը՞ս քյինում»: Թա. «Իմ տարս ինձ տո̀ւս ա ըրալ, ես քյինում ըմ կլո̀խս պահեմ»: Նա ասալ ա. «Թա մին չինենքյ, էրկու ինենքյ, քյինանք»: Քյինացալ ըն, քյինացալ, տըեսալ մին քչեղակ, վըեր էլիա էն ջուռա թակված, տո̀ւս ըրած ըն իլա̀լ, ասալ ըն, թա. «Քչեղակ ախպեր, հոր ը՞ս քյինում»: Թա. «Իմ տարս ինձ տո̀ւս ա քիցա̀լ, քյինում ըմ կլո̀խս պահեմ»: Թա. «էրկու չինենքյ, իրեք ինենքյ»: Քյինացալ ըն, քյինացալ, տըեսալ մին մշըհավ, էլիա էս ճուռա թակված, տո̀ւս ըրած: Թա. «Մշըհավ ախպե՛ր, հոր ը՞ս քյինում»: Թա. «Իմ տարս ինձ տո̀ւս ա ըրալ, քյինում ըմ կիլոխս պահեմ»: Թա. «Իրեք չինենքյ, չորս ինենքյ, քյինանք»: Քյինացալ ըն, քյինացալ, հսալ մին շատ խուտալի տեղ, ըստեղ կերալ ըն

քյուքացալ, մինը վըհատաս տա̈ռալ ա մին մարալ։

Մին դո̈նում էս էշը ասալ ա թա. «Հես ա իմ պապու փայը տալու վըմ»։ Մին պենդ զոռացալ ա։ Էս վախտիս սարին կլխին էլ թուփ տա̈ռած կյո̈ւլ ըն իլա̈լ, վըեր ման կյամ ըն իլա̈լ զատ քիթնեն, օտեն։ Մին կյո̈ւլը էշին սա̈սը լսալ ա, մըթկումը ասալ ա. «Վըեր լոխ յրա տա̈ռնան, ինձ փայ չի հսնիլ, ասեմ ոչ, մինակ քյինամ օտեմ»։

Հնգերունցը ասալ ա, թա. «Տուք քյինացեքյ, ես էս ա կյամ ըմ»։ Ինքյը լիհա ծո̈րավը թխալ ա տո̈ւս եկ ալ, տըեսալ մին էշ, մին կյառնը, մին քըչեղակ, մին մշըհավ։ Էշին յրա յա վազալ թա օտի, էշը ասալ ա թա. «Կյուլ ախպեր, մին տես ես քանի տրեկան ըմ, վըեր ասես, էլ սրտումըս դաղ չի մնալ»։ Թա. «Պա հունց զյի՞դամ»։ Թա. «Հեն ա իտի վըեննըերիս յրան կյիրած»։ Կյո̈ւլը մուտացալ ա, թա եշի, էշը էն ջուռա քացի յա տվալ, վըեր կեռքնեն փորն ա տա̈ռալ։ Վըեր քացի յա տվալ, կյո̈ւլը թեք ա ինգյա̈լ, ետավ կյառնը կյո̈ւլին կլխավը շոռ ա̈ տվալ, շոռ, տմա̈կը կլխին եկալ, մշըհավը նի յա մտալ քոլին մեչը պրպտա-ցալ, քչեղակը եր ա իլա̈լ ծառին պտուկը, չըռթչըռթացալ։ Էս կյուլս մին թա̈հրավ ըստահանց ծերքիցը փախալ ա, քյինացալ ո̈ւրա̈ն հնգերունցը ասալ, թա. «Հնգերունք, եկեքյ փախչենքյ, վըեր հես ա ըստեղ մին էրկու հա̈րո̈ւր մարթ կա. մինը եկավ պկաս հոփ տվավ, մինը կլխավս շոռ տվավ, շոռ, ճաղացաքարը կլխիս եկավ, մինն էլ նի մտավ քոլին մեչը, թա ճպատ կտրի պիրի ինձ թակի, մին էլ մինը եր ա իլա̈լ ծառը, կանչում, թա շենիցը մարթ կյա̈, ինձ փռնեն»։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։

## 67.ԷՐԿՈՒ ՎԸՆՆԱՆՈՒՆ ԼԻՎՈԹՈՒՆ ԸՆԵԼԻ ՉԻ

Մին օր մին ճանապարհորթ հըղե ա քյընա̈մ։ Շատ ա քյընա̈մ, թա խըրեգյ, եշըմ ա տըեսնըմ հըղեցը մաչին մին փոսում մին օխծը սառած, ծըլծալված, փոսըմը վեր ընգած։ Էս մարթը կըռանըմ ա էտ օխծեն բիշտի-բիշտի անըմ, օխծը սառած ինիլա̈ն տո̈ւրո̈ւր չի կյամ։ Էս մարթը զյո̈ւդո̈ւմ ա, թա սատկած ա։ Էտ օխծեն յոր ա օնըմ, կոխում ծոցը, էլրհա հղեն ընգնըմ, քյընա̈մ։

Մին խիլլա հըղե քյընա̈լա̈ն ետը էս օխծը էտ մարթին ծոցըմը թըքանըմ ա, ըսկսըմ տո̈ւրո̈ւր կյալը։ Էս մարթը վեր տըեսնըմ ա՝ օխծը ծոցըմը տո̈ւրո̈ւր ա կյամ, շատ փիս վախըմ ա, ո̈ւրա̈ն փըռնած պենա̈ն փո̈ւշմա̈նըմ, ըսկսըմ ա

համ հըղեն քյընա̈լը, համ էլ մըտածելը՝ հունց ա՞նե, վեր էտ օխծը ծորան տո̈ւս կյա̈ քյընա̈ առանց ո̈ւրա̈ն վընաս տալու: Էտ մարթը լըհա̈ մըտքեն դոնըմը մըտըծելիս էս օխծը ծոցան կըլո̈խը հանըմ ա, էս մարթին իրեսնը եր ծառս ինըմ, թա. «Ա՛ մարթ, քյեզ կըծելու վըմ»: Էս մարթը խըրեգյ ա մնամ, թա վըխըրթունան սըերտը ճաքե, եշըմ ա, եշըմ էս օխծեն, շատ ըղաչանք անըմ, վեր. «Ախեր ես քյեզ լիվոթուն ըմ ըրալ, ծոցումս թըքըցըրալ, եա պերալ, մըհենգյ ծոցաս տո̈ւս եկ, հըղետ պարի, առանց ինձ կըծելու քյինա̈»: Օխծը թա ասըմ ա. «Չէ՛, պետմա քյեզ կըծիմ»: Էս մարթը մընել ա ըղաչանք անըմ, թա ասըմ ա. «Ա՛ օխծ ախպեր, պա իմ լիվըթունիս տեղը խե ը՞ս տու օզըմ թա փիսոթուն անիս, խեղճ ըմ, մեխկ ըմ, ծոցաս տուս եկ հըղետ քյինա̈, աստված սիրիս, քյեզ էլ պարի, ինձ էլ պարի»:

Օխծը ռեխը պեց ա օնըմ, կըզնըվըմ, էտ մարթին իրեսնը եր ծարս ինըմ, թա. «Չէ՛, էրկու վըննանու լըվոթուն չկա, քյեզ պետմա կըծիմ, տուք լըվոթուն գյիդող չըք»: Օխծը օզըմա, թա լըհա̈ կըծե, էս մարթը ըղաչանք ա անըմ, թա. «Ա՛ օխծ ախպեր, դե ես հինչ կա՞րող ըմ անիմ, հեն ըմ ճա̈նգյա ընգած, հինչ վեր օզիս, ինդի էլ կանիս, մինակ մին պեն ըմ խընթըրըմ, եկ էս հըղեն քյընա̈նք, հինչ վեր պըտահից հըղըցեն, պատմինքյ, վեր ասին թա կըծի՝ էն վախտը կըկըծիս»: Օխծը մըտածըմ ա, մըտածըմ, թա.«Լա̈վ, թող քու ասած ինի, քյինանք»: Ասըմ ըն, քյընամ:

Շատ ըն քյընամ, թա խըրեգյ, ճանապարեն պըտահըմ ըն մին չուրացած տանձի ծառե: Մուտանըմ ըն էտ տանձի ծառեն, էս մարթը շատ խեղճ-խեղճ ասըմ ա. «Տանձի ծառ ախպեր, քյըզ մին կյենգյատ օնինքյ ընելի, տու բիդի էս կյենգյատը կըտըրիս՝ հինչ վեր դո̈ւզն ա: Ես մին ճանապարավ քյինալիս ըմ իլա̈լ, եշալ ըմ, տեսալ էս օխծ ախպերը մին փոսում սառած, մըեռած: Մեխկս կյա̈լա̈ն կըռացալ ըմ եր կալալ, կոխալ ծոցս, թըքըցըրալ, եա պերա̈լ: Մըհենգյ իմ լիվութունես ինքյը օզըմ ա, թա ինձ կըծե, պա տա դո̈ւզ պեն ա՞, պա լիվութունեն փիսոթուն կանի՞ն: Մըհենգյ տու հինչ կա՞սիս, հինչ ա՞նե մեր օխծ ախպերը»: Տանձի ծառը թա ասըմ ա, «Կըծե՛, օխծ ախպեր, կըծե»: Էս մարթը մընըմ ա զարմացած, թա. «Ա՛րա, պա տա ինսափավ պեն ա՞, վեր իտի յըս ասըմ, դե մին սա̈քա̈քը ասե, տըեսնամ, մեխկս հինչ ա՞, խե՞ կըծե»:

- Կըծե՛, օխծ ախպե՛ր, կըծե՛, սա̈քա̈քը էն ա, վեր էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի, տեղավը մին ըտրանք անինսափ ըն, խեղճ, մեխկ չօնին, հասե ես, տըեսնըմ ը՞ք, էն վախտը ջա̈հիլ ծառ ըմ իլա̈լ, բար տալիս, տակս

պըհա̀լ ըն, շըվաքըմս նըստալ ըն, բարս քաղալ ըն, համ կերալ ըն, համ ծախալ ըն, մըհենգյ հա̀րա̀քյա̀թա ընգալ ըմ, բարա կըտըրալ ըմ, տակս պըհըմ չըն, ինձ եշըմ չըն հերիքյ չի, կացենն էլ քաշըմ ըն ճըղներս կըտորըմ, տանըմ էրըմ: Էրկու վըննանուցը լիվոթուն ընելի չի, օ՛խծ ախպեր, կըծե՛»:

Օխծը լըհա̀ չալմիշ ա անըմ թա կըծե, էս մարթը շատ ա ըղաչանք անըմ, թա մին ա իլի, հիբը վեր օզիս, կըծելու ըս, շատ ըմ խընթրում պատառ էլ քյինա̀նք տըեսնանք մին օրիշ պեն էլ պըտահե, ընդրանա էլ հըրցնինքյ, հինչ վեր կասե, ինդի կանիս օխծ ախպեր: Օխծը թա ասըմ ա. «Լա̀վ, հինչ ը՞մ ասըմ, թող քու ասած ինի, քյընա̀նք»: Ասըմ ըն, քյընա̀մ:

Շատ ըն քյընա̀մ թա խրեգյ, եշըմ ըն տըեսնըմ ճանապարեն մին պառավ, լըղար, մաշկը յարա ծի, ինքյն էլ քոսան ընգած,վեր ընգած: Մըհե մեսըհաթ վեր կըսատկե , մին սո̈ւրո̈ւ ըկռըվնե եր իլա̀ծ մաշկը, յարան կըտկոտըմ ըն, ինքյն էլ տո̈ւզնը ինիլա̀ն թո̈ւլա̀ցած, կարըմ չի, թա ըկռըվնեն տեն անե, ջանը քորե: Էտ մաթին ան օխծը մուտանըմ ըն ծիյին կոշտը, մարթը էտ ծիյին լոխ կըլխեն եկածը նաղլ ա անըմ, հունց վեր ծառեն ա նաղլ ըրալ, ետավ թա. «Հինչ ը՞ս ասըմ, ծի ախպեր, կըծե՞, թա չըկըծե»:

Էտ ծին զռավ-կյիժավ, մին թա̀հրա̀վ կըլո̈խը պիցըրցընըմ ա, թա. «Կըծե՛, օխծ ախպեր, կըծե՛, էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի»: Էս մարթը լա̀վ բաղիրյար իլա̀ծ ասըմ ա. «Ծի ախպեր, մին իմ մեխկը ասե, տըեսնամ խե՞ կըծե, պա իմ լիվութունին իտի փիսոթուն կանի՞ն»: Ծին թա. «Հա՛, հա օխծ ախպեր, կըծե՝, էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի, հասե՛, ինձ տըեսնըմ ը՞ք, ես վեր իմ վըխտես հըրեղան ծի ըմ իլա̀լ, քշեր-ցիրեկ ինձ յրա նըստած ըստեղ ըն քշա̀լ, ընդեղ ըն քշա̀լ, շըլլաղավ թակալ յա պեռնալ ըն պեռնու տակե պինըցրալ, յա եր ըն իլա̀լ մակառ քյեցալ, վեր մին տեղ էլ եկալ ըն վեր եկալ, կապս տիրա̀լ ըն մին խուխու ծերքե, թա տար կյումըմը կապե, վեչ ապուռավս ըն ընցալ, վեչ ճըրա̀վս, թա սաղ քշերը էն կյումումը հունց ըմ սռված-ծարավ լո̈ւսըցըրալ, քշերավ էլ վեր լո̈ւսա̀ցալ ա, վըեննը կոխալ ըն զա̀նգյո̈ւս, շալլաղը եր կալալ ծերքը, չափարախ տալավ, ո̈ւրա̀նց նշանց տալավ գյառ-գյառ քշա̀լ: Մըհենգյ պըռավալ ըմ, պենա̀ կըտրալ ըմ, պերա̀լ ըն ըստեղ թող ըրալ էլ ապուռ չըն տամ, հեչ հերիչ լըհա̀ էս մըշկես յարեքյն էլ վեր սա̀բա̀բը ո̈ւրա̀նց տիրա̀ծ փըլանան ա, յիհա̀րան ա, սըղըցընըմ էլ չըն. մըհենգյ վեչ կարըմ ըմ ջանս քորիմ, վեչ կարըմ ըմ ըկռըվնեն տեն անիմ, կըծե՛, օխծ ախպեր, կըծե՛, էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի»:

Ծին էլ վեր իստի ա ասըմ, էն մարթին սուրփ-աստուծը կըտրըմ ա, օխծը օզըմ ա թա լըհա̀ կըծե, էտ մարթը ըղաչանք ա անըմ, թա. «Օխծ ախպեր, մըհենգյ կըծած, պատառ ետավ կըծած, մին ա իլի, կըծելու ըս, լըհա̀ շատ ըմ խընթրում մին պատառ էլ տըմաց, մին պեն էլ պըտահե հըրցընինքյ, ետնան կըծե»:

- Լա̀վ, վեր շատ ըս ըղաչանք անըմ, քյինինքյ տըեսնանք:

Օխծը նա մարթը կյա̀լա̀վ-կյա̀լա̀վ տըեսնում ըն հըղըցեն ղըրաղեն մին զեռ, քավթառ շոն վեր ընգած, կարըմ չի թա տեղան էլ տո̀ւրո̀ւր կյա̀: Մուտանըմ ըն էս շանը, էտ մարթը կըլխեն եկածը հանց վեր ծառեն ա, ծիյին ա նաղլը ըրալ, իտի էլ էտ շանն ա նաղլը անըմ: Շոնը լոխ լըսելան ետը թա ասըմ ա. «Կըծե՛, օխծ ախպեր, կըծե՛»: Էս մարթը սըրտաճանք իլա̀ծ, խեղճ-խեղճ հըրցընըմ ա. «Շոն ախպեր, մին ասե տըեսնամ խե՞, իմ մեխկս հինչ ա՞, վեր կըծե»: Շոնը զոռավ-կյիժավ մին թըհա̀րավ ասըմ ա. «Հա՛, բիղի կըծե, էրկու վըննանուն լիվոթուն չկա, ես ծընված օրից մինչև էս օրս ընգնելը իմ տերուչը հընազանդ, հավատարիմ ծառայալ ըմ, մո̀ւլքյը, տոնը-տեղը, հեյվանը, կերը, բոստանը ամեն հինչա պահալ ըմ, տըռանը եշալ ըմ, կո̀ւյլա̀, ղըչաղա, կյողա ըզադալ ըմ, քշերը մինչև լո̀ւս հա̀քյիս չարխու կալած, հա̀չոցս շենը, չոլը, հա̀նդը քըցա̀ծ լոխ մո̀ւլքյը պահալ ըմ, վեր մին հեյվանն էլ մորթալ ըն, ո̀ւրա̀նք կերալ ըն, դիմիշ չըն ըրալ, թա լհա̀ մին կըտոր փափուկ մես տան, վըսկուռնեն էլ էնքան ծըծալ ըն, վեր յրան մին մուս կտոր էլ չըն թողալ, չոր վըհսկեռը թող ըն ըրալ մին չըփարու տակ քըցա̀լ, ինձերա̀ էլ կըզնըվալ, տեն ըրալ, օրվա շատը սոված պահալ: Մեհենգյ սա̀ սս կըտրալ ա, վըեններս փըռնըվալ ա, ինձ էլ պահըմ չըն, հեչ-հերիքյ պերա̀լ ըն էս դո̀ւզո̀ւմը վեր քըցա̀լ, ո̀ւրա̀նք քյեցալ, ինձ թողալ ամեն մին քար յրա ընողի ծերքեն, էրկու վըննանուն լիվոթուն չկա, կըծե՛ , օխծ ախպեր, կըծե՛»:

Շոնն էլ վեր իստի յա ասըմ, էս մարթը կըլխեն թըխըմ ա. թա «Օխծ ախպեր, տու ապրիս, մըհենգյ էլ քյեզ ըմ քըցըմ, օզըմ ըս մին պատառ էլ քյինա̀նք, բա̀լքյի մին պեն էլ պըտահինքյ, օզըմ չըս, տու ըս զո̀ւղո̀ւմ , ամմա դե լիվոթունը ըրալ ըս. ըրալ, փիսոթունն էլ բիղի անիս դո̀ւզ ա, մեհետ էլ ումեդս կըտըրցրու, ետնան ես քյեզ հալալ, ըրվամ ա, վեր շատ յոլլազյեղան ըխպըրացու ըս, խըղճմտանքա էլ մոտե»:

Օխծը մըտածըմ ա, մըտածըմ, թա. «Լա̀վ, էտ մին էլ կանիմ , ամմա դե ըտել վերչինը կինի, քյըզնըման վեր հազար մարթ էլ ինի, էլ վեչ մին պեն

լըսելու չըմ»: Էս մարթը շատ ուրխընալան գյո՛ւղո՛ւմ չի, թա հինչ անե, ամմա դե մըտածըմ ա. աստուծ կանչըմ, վեր էս անքամ ինի, մին խերու պըտահե: Քյինամ ըն-քյինամ, եշըմ ըն տըեսնըմ ճանապարին մաչավը մին աղվես ա կյամ բիդի ո՛ւրա՛նց: Վեր կյամ ըն մուտանըմ, էս մարթը ըղվեսին լոխ պատ-մըմ ա, հունց վեր պատմալ ա ծառեն, ծիյին, շանը: Աղվեսը լըսելան ետը էս մարթին աշկավ ա անըմ, հըսկըցընըմ, վեր հինչ ը՞ս ասըմ, հինչ կըտա՞ս, վեր քյեզ ըզադիմ: Էս մարթը պըկան փըռնըմ ա բիդի երգյինքը եշըմ, յա՛նի քյի՝ աման գյո՛ւնո՛ւղու, մին կերպ ըրա ըզադե, հինչ վեր օզիս, լոխ էլ կըտամ:

Մարթն ան աղվեսը ո՛ւրո՛ւր հըսկընալան ետը աղվեսը կործի ա ընցնըմ, թա ասըմ ա. «Ես մինչն վեր իմ աշկավս տըեսնամ վեչ, թա օխծը հունց ա փոսումն իլա՛լ պառկած. հունց ա էտ մարթը բիշտի-բիշտի ըրալ, էր կալալ կոխալ ծոցը, հըղե իլա՛լ քյեցալ, կարել չըմ խերը-շառը դո՛ւզ կըտըրիմ: Թա օզըմ ըք վեր դո՛ւզ կըտըրիմ էտ դըվանը, հինչ վեր ասիմ, բիդի տո՛ւք էլ ինդի անիքյ: Օխծը թա. «Աղվես ախպեր, քյըզանա առաչ էլ էտ խերը-շառը կըտըրող ա իլա՛լ, ո՛ւրա՛նք դըվանը ըրալ ըն, ասալ, վեր էրկու վըննանուն լիվոթուն չի բիդի անիս, կըծե՛, օխծ ախպեր, կըծե՛, մըհենգյ տու խե յը՞ս իտի ջընջա՛լու քըցըմ, յա ասե կըծիմ, յա՝ կըծիմ վեչ, պըրծընե քյինա՛»:

Աղվեսը թա. «Օխծ ախպեր, ախեր իտի չի, ընդրանք վեր իտի յըն դիվան ըրալ, կըլխըներան ռաղ ըն ըրալ, կործը բիդի համ սա՛մթին փըռնիս, համ էլ ինսափեն, մըհենգյ ո՛ւրա՛նք ո՛ւրա՛նց գյիդացածն ըն անըմ, ես էլ իմ գյիդացածս ըմ անըմ, մըհենգյ ա մարթ ախպե՛ր, տու ըստեղ մին փոս կըտրե, օխծ ախպե՛ր, տու էլ էտ մարթին ծոցան տո՛ւս եկ, էտ փոսըմը պըրանե հունց վեր պըրանած ըս իլա՛լ, սառե-մեռե, ես էլ եշիմ դըվանը անիմ»:

Աղվեսը հունց վեր ասըմ ա, օխծն ան մարթը ինդի էլ անըմ ըն, օխծը վեր նի յա մըննըմ փոսը, աղվեսը էտ մարթին թա ասըմ ա. «Մին քար եր կալ փոսին մաչին եք»: Մարթը մին զեռ քար ա յո՛ր օնըմ փոսին մաչին կյամ, օխծեն ըսպանըմ, ինքյը ըզադվըմ: Աղվեսը ետ ա տըեռնըմ էտ մարթին ասըմ. «Տըեսե՞ր, քյեզ մըռնելա ըզըդեցե, քյըզանա վեչ մին պեն չըմ օզըմ, լըհա՛ էրկու հավ տո, տանիմ ուտիմ»:

- Շատ լավ կինի, դե քյինա՛նք, հենե՛ մեր շենը ըրվամ ա, քյինա՛նք քյեզ տամ, տար:

Աղվեսն ան էտ մարթը հըղե ըն ինըմ, քյինամ բիդի շենը, լըհա՛ վեր շենան մուտանըմ ըն, աղվեսը շներեն հաչոցը լըսըմ ա, տըեղը կաղնըմ, թա

ասըմ ա. «Ա՛ մարթ ախպեր, ես պատառ շներեն նըհետ իրես չօնիմ, օզըմ չըմ կյամ իրըսներին ըրվամ, շատ ըմ խնթըրըմ, ես էս չըփարեն տակեն կաղնիմ, քյեզ ըսպասիմ, տու քյինձ հավերը պեր ինձ տռ»:

- Լա՛վ ըս ասըմ, մըհե շոնը հինչ ա՞, վեր ըտրանը նըհետ հա՛լա մին կըլո՛խ էլ տինիս, շատ լա՛վ ըս ասըմ, դե տու ընտեղ չըփարին տակին կաղնե, ես քյինիմ հավերը պերիմ:

Աղվեսը չըփարեն տակեն կաղնըմ ա, ամմա դե աշկերը շըներան յո՛ր չօնըմ, չո՛ւնքյի վախըմ ա: Էս մարթը լըհա՛ հըսնըմ ա շենը թա չէ, հիշքան վեր շըներ կա շենըմը, լոխ հըվաքըմ ա, բիղի աղվեսը կյամ: Աղվեսը մին վախտ եշըմ ա, տըեսնըմ վեր էտ մարթը շըները հըվաքած, բիղի ուրա՛ն կյամ ա: Ինքյը-ինքյը քըթեն տակեն մըրթմըրթալով մտածըմ ա. «Ըստա թա էս էն մարթն ա, պա էս շըները հոր ա՞ պիրում, հավերը թողում: Չէ՛, էն չի, հա՛լբա՛թ շըներեն ահան աշկերս շաղվալ ա, պատառ եշիմ մուտանա, վեր լավ ճինանչիմ»: Մին պատառ կըղնելանը ետը տըեսնըմ ա, վեր էտ հա՛մին ո՛ւրա՛ն ասած մարթն ա, շըները հըվաքած կյամ ա բիղի ո՛ւրա՛ն, աղվեսը դըբաննեն փի յա կապըմ, մին բաշ ծըլկըմ: Էտ մարթը վեր տըեսնըմ ա՝ աղվեսը փախճըմ ա, շըները քըս ա տամ ըղվեսին հետան, կյամ ա մին դիքյըմ տեմ ընգնըրըմ, շըները հըսնըմ ըն, ըղվեսին փըռնըմ: Մարթը հըսնըմ ա շներին փըռնում, ո՛ւրա՛ն տենակը տո՛ւս պերըմ ըղվեսին պոկը կըտրըմ, թա. «Ծան անդար, չորս շըհա՛նո՛ց մորթեն հիշտեղ ը՞ս տանըմ»: Ըստեղ աղվեսը մաննը կըծըմ ա, մըեննը քըցո՛ւմ, վեր օխծը խե յա ասալ, թա. «Էրկու վըննանուն լիվոթուն ընելի չի»: Մարթը ըղվեսին կաշին մաշկըմ ա, մորթեն յոր օնըմ, տանըմ:

## 68.ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ԿԱՔԱՎԸ

Ասում ա՝ մին վըերսկան վըերսի ար տո՛ւս եկալ, պըտահից մին կըքավու:

Կաքավն ասից. «Վըերսկան ախպեր, շատ ըմ խնթրում, իմ ճոտես ըսպանիս վէչ»:

- Լա՛վ,- ասում ա վըերսկանը,- պա ես հունց իմա՞նամ, թա քու ճոտըղ վե՞րն ա:

- Իմ ճոտս, պա ճընանչո՞ւմ չըս, դուշերին մաչին ամենասերունը, իմ ճոտս վըեր ման ա կյա՛մ, լոխ հայիլ-մայիլ ըն ինում, լա՛վ էլ կըղկըղում ա:

-Լա՛վը, խոսք ըմ տամ, վըեր քու ճոտիդ նի չի կյամ:

Իրիկունը վըերսկանը տոն կյա̀լիս էլլիա կքավին ա ջըհո̀ւմ:

- Պա ես խընթըրվեցե՞ վէչ, վըեր իմ ճոտես նի չի կյա̀ս:

- Ես քու ճոտեն նի չըմ եկալ, էս դուշը, եշի տես, քու ասած նախշուն չի, մուխըրըռանգյ ա:

Սաղ քըշերը կաքավը լա̀ց ար ինում:

69.ՊԸԵԼ ԱԽՊՈՐԸ ՀՈՒ ԽԵԼՈՒՆՔ ԱԽՊՈՐԸ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին պըել ախպեր, մին էլ մին խելունք ախպեր: Ըստահանք քյինացալ ըն մին թաքավերի չոբան նի մտալ հու աման վախտ էլ հացընեն նհետնեն տանում ըն իլա̀լ: Մին վախտ մըընան քիցալ ըն, հացը տարալ չըն: Խելունք ախպերն ասալ ա. «Պըե՛լ ախպեր, տու քյինա հաց պեր, ես ըստեղ վըչխարնեն պահեմ»: Սա քյինացալ ա հու պիրելիս տեղը արն ա իլա̀լ: Քմակին վըեր եշալ ա տըեսալ շոխկը ընկած քմակին, կլո̀խը տո̀ւրո̀ւր տալավ ասալ ա, թա. «Ընդե հը՛, հինչ ա՞, հաց ը՞ս օզում»: Վըեր ինքյը կլո̀խը տո̀ւրո̀ւր ա տվալ, շոխկին կլո̀խը տուրուր ա եկալ:Մին հացը տվալ ա ո̀ւրա̀ն հու մինչև ախպորը կոշտը հացը ըստըհենց անելավ լոխ կլխըցրալ ա: Եկալ ա, ախպերն ասալ ա. «Հոր ա՞ հացը»: Ասալ ա, թա. «Ընդե մարթիքյը օզեցին, տվի ո̀ւրա̀նց»: Խելունք ախպերն ասալ ա. «Տու վըեչխարնեն պահի, ես քյինամ հաց պիրեմ»:

Էս պըել ախպերը քյինացալ ա մին տանձի եր իլա̀լ, շըղհարալ: Էծերը հու վըեչխարնեն եկալ ըն կերալ: Պըել ախպերը ընդաղան ասալ ա. «Իմ փայս պահեցեք»: Սահանք էլ գյիդացալ չըն թա հի՞նչ ա ասում, հելլա ասալ ա. «Իմ փայս էլ պահեցեք»: Էս պըել ախպերը վըեր ըստըհենց շատ ասալ ա, մին դոնում որ շըղհարալ ա, մինն ինգյա̀լ ա էծին պոզը, ասալ ա. «Յարադանիտ մատաղ ինեմ, իմ փայս պոզիտ պտկին ը՞ս պահում»: Վեր ա եկալ, ըստա-հանց լոխճին կտորալ, էն էծին պահալ:

Ախպերը եկալ ա, ասալ. «Հոր ա՞ վըեչխարնեն»: Ասալ ա, թա. «էն դդար տանձ ըմ օտըցըրալ, վըեր հեն ըն քեփնեն քյոք, ծծաղելիս»: Քյինացալ ա տըեսալ կտորած հու կեռքնեն պեց: Ասալ ա, թա. «Ըստրա եշի, էս խե յ՞ըս ըստըհենց ըրալ. դե եկ տանենքյ դո̀ւզո̀ւմը տիզ տանք, քյինանք մեր դըլլուղ-նես ինքյ օնենքյ, փախչենք»: Նա էլ ասալ ա, թա. «Ընդե հա»: Քյնում ըն, վըեր ոչխարնեն տանեն: Պըել ախպերը զոռավ ա ինո̀ւմ, տասսը-տասներկունը շիլակում ա, տո̀ւս պո̀ւրո̀ւմ դո̀ւզը: Ետնան քյինում ըն թաքավերին ասում.

«Ա՛դա , մեր դոլլուղը տո, վըեր մունք քյինանք, չյունքի վըեր մեր շենիցը մարթ ա եկալ, թա՝ քու հար, քու մար մեռալ ըն, եկ»: Թաքավերը հրցրալ ա, թա. «Հոր ա՞ ոչխարնեն»: Ասալ ըն, թա. «Ընդէ հենե դո̈ւզո̈ւմը նստոտած»: Թա. «Նստեցեքյ հաց կերեքյ, վըեր դոլլուղնետ տամ»: Հաց օտելիս տեղը խելունք ախպերը խե շատ շո̈ւտ-շո̈ւտ ա հաց կերալ: Պըել ախպերը ետ ա տառալ, ասալ, «Հը՞, խե՞ շուտ-շուտ ըս հաց օտում, ես տասսը ոչխար շիլակեմ տո̈ւս պերեմ, տու մինը, համ էլ շո̈ւտ-շո̈ւտ ըս հաց օտում»: Նա էլ ասալ ա, թա. «Քմատաղ, ճանըս քմատաղ, լոխ քյեզ ինի, ես օզում չըմ, թա̈քյ լա խոսես ոչ»: Ըստըհենց թողացալ չի, թա հաց օտի: Ետնան վըեր հացը կերալ ա, պրծալ, քյինացալ ըն վըեր դոլլուղնեն ինքյ առնեն:

Դոլլուղնեն ինքյ ըն կալալ, քյինացալ ո̈ւրո̈ւզյո̈ւնը մին կարան: Էն կարանումը տըեսալ ըն մին առչի պո̈ւն. էս առչիս էլ լակուտնե յա իլա̈: Էս առչը եր ա կացալ, ասալ. «Պարո՛վ, պարո՛վ, ձեզ օտիլ չըմ, ամմա թա վըեր իմ լակուտնես լղցնեքյ»: Նահանք էլ ասալ ըն, թա, «Լա̈վ ա»: Էս խելունք ախպե-րը մին օր լղըցըրալ ա: Նոբաթը ինգյա̈լ ա պըել ախպորը: Պըել ախպերը լակուտնեն ածալ ա ղզղանին մեչը, իփ տվալ: Խելունք ախպերը հու առչ ախպերը, վըեր վըրսըտեղից ետ տառնալիս ըն իլա̈լ, խելունք ախպերը ասալ ա. «Ա՛ոչ ախպեր, ես քյինամ լղըցընեմ, տու էլ ըտեղ վըերս ըրա»: Ասալ ա թա. «Լա̈վ ա»: Նա եկալ ա ասալ. «Պըել ախպեր, լըղըցըրալ ը՞ս»: Թա. «Ընդէ էն հանգին լղըցըրալ ըմ, վըեր հեն ըն քյեփըրնեն քյոք, ծծաղելիս»: Քյինացալ ա տըեսալ, վըեր իփ տված, ածած կարպետին տակը, ասալ ա. «Աղա, էս հինչ ը՞ս ըրալ, գէ վըեր ըստըհենց տառավ, եկ փախչենք, քյինանք»: Փախալ ըն, քյինացալ մին ծըրա̈նա̈ ճաղաց:

Առչը եկալ ա, տըեսալ լակուտնեն սպնոտած: Ման կյա̈լա̈վ քյինա̈ցալ ա ճաղացին տոռնը թակալ: Խելունք ախպերը եկալ ա պա̈ցալ: Պըել ախպերը մին ճղցպեղարճ ա շինա̈լ, տիրա̈լ ճղացին քարին յրա: Առչը խելունք ախպո-րը պկիցըն ա կացալ, ասալ, թա. «Լիհա̈ տու ըս իմ ճտերըս ըսպընոտալ»: Ըստեղ կոխ ըն փռնալ: Լիհա վըեր կոխ ըն փռնալ, պըել ախպերը ասալ ա, թա. «Ա̈դա̈ մին կոխկիցը փռնի յէ՛ , աղա մին կոխկիցը փռնի ճղացին քարավը եկ է՛»: Խելունք ախպերը ասալ ա. «Քմատաղ, ինձ ըսպանեց, եր կաց»: Նա էլ ասալ ա, թա. «Դէ մին թող վըենը պիլիթիս նի կյա̈, ես իրան կասեմ»: Մին էլ ա ասալ խելունք ախպերը. «Ա՛ քմատաղ, ինձ ըսպանեց, ե՛ր»: Ասալ ա, թա. «Լիհա̈ մին թող վըենը պիլիթիս նի կյա̈»: Խելունք ախպերը ասալ ա. «Ա՛

քմատաղ, ե՛ր, ինձ ըսպանեց»: Ասալ ա, թա. «Լիհա՝ վըենը պիլիթիս նի պիտի կյա՝, վըեր եր կենամ»:

Աստվածանից ա իլա՝լ, հինչից ա իլա՝լ, առջին հա՝քյո՝ւն պիլիթին նի յա եկալ: Պըել ախպերը եր ա կացալ առջին մեչան ճղալ, քիցա՝լ դոնգուզլըղը: Պըել ախպերը ասալ ա. «Խելունք ախպեր, իմ մար ինձ լիսեռնն ա շինիլ տալու, էս ճղացին քարը լա՝վ լիսեռնն ա, եր օնեմ, տանեմ»:

Եր օնելից ետը քյինացալ ըն ո՝ւրո՝ւզյո՝ւնը մին տանձի ծառ քիթալ: Խելանք ախպերը եր ա իլա՝լ տանձի ծառը: Պըել ախպերր ասալ ա. «Տու եր ըս ինում, ես եր չըմ ինիլ»: Օզացալ ա, թա եր ինի, ճողնը կոտրալ ա ճղացքարին ծանդրութունիցը, վըեր ա ինկյալ: Ախրը զոռավ-կյիժավ եր ա իլա՝լ: Մին քյարվան եկալ ա տակին վեր եկալ: Պըել ախպերը խելունք ախպորը ասալ ա. «Կյո՝ւզըս կյամ ա»: Նա էլ ասալ ա. «Պա հո՝ւնց ը՞ս անում»: Ասալ ա, թա. «Կյուզում ըմ»: Կյո՝ւզա՝լ ա, քյարվանին յրա յա տառալ: Մին էլ ասալ ա, թա. «Կռներըս նղացալ ա, քարը վեր ըմ քցո՝ւմ»: Խելունք ախպերը ասալ ա. «Վեր ըս քցում, վեր քցի»: Վեր ա քիցալ, քյարվանին մարթոցը ըսպընոտալ: Քշերավ վեր ըն եկալ, խելունք ախպերը փողն ա հվաքալ, պըել ախպերը յորղան-դո՝շակը: Եր ըն կալալ քյինացալ:

Ո՝ւրո՝ւզյո՝ւնն էլ փա՝ւնկյո՝ւ յա իլա՝լ պըել ախպերը յորղանումը պտատվալ ա, ապրալ, ամմա խելունք ախպերը եր ա կացալ մըռալին մին ծիյի յրա կպոտալ, մին տումջակ ըրալ, մին ճոնդը տիրա՝լ ծերքումը, մին ճոնդըն էլ պիրա՝նումը, ետնան ծին ըրալ մին առտ, ինքյը կլոդլու կացալ: Առտատարը երի կլխան կանչալ ա, թա. «Հե՛յ, հե՛յ, այ ծիյատար, ծին առտը օտըցնիլ մի»: Նա էլ խոսացալ չի, չյունքի վըեր մեռած ա իլա՝լ: Առտատարը վազ տալավ եկալ ա մեռած մարթին ընկուշտակին մին լա՝վ թխալ, մըեռած մարթըն էլ ինկյալ ա ծիյին էն դոլը: Պըել ախպերը եկալ ա ասալ.

«Հա՛յ շան տղա, խե՞ իմ ախպոր ըսպանեցիր», հու քյինացալ էն մարթին պկան փոնալ, թա. «Եկ քյինանք երկրիս տարին կոշտը»: Թա. «Քմատաղ, ճանս քմատաղ, իմ տոնս-տեղս քյեզ մատաղ, քյինալ մի առզ անիլ»: Պըելը ըստրա տոնը-տեղը ինքյ առնելից ետը եր ա կացալ քյինա՝ցա՝լ ո՝ւրա՝ն հորը տոնը:

Աստուծանից իրեք խնձոր վեր ինգյի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չիլսողին:

## 70.ՔՈՍԱԿԵՆ ՀՈՒ ՔԱՉԱԼԵՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլյա՛լ ա՛ չիլյա՛լ մին քոսակ, մին էլ մին քաչալ: Սահանք ամեքյը մին պարկ ցորեն ըն եր կալալ, թա տանին ճղացումն աղին: Տարալ ըն աղալ:

Քոսակ ախպերն ասալ ա. «Քա՛ չալ ախպեր, եկ պեղարճ թըխինքյ»:

- Եկ թխինքյ- ասալ ա քաչալը:

Տաշտը ճրա՛վ լցալ ըն, ա՛լերը պարան տվալ մեչը, հունցալ հու պեղարճ թխալ: Մինը մեծ ա տո՞ւս եկալ, մինը՝ պուճուր:

Էս քոսակ ախպերն ասալ ա. «Դե վրեր ըտըհենց ա, ամեքյը մին սոտ ասինքյ, հո՞ւրը վեր մեծ ինի, լոխ ընդրանն ա»: Քաչալն ասալ ա. «Լա՛վ ա»:

Քաչալն ասալ ա. «Մեզ մին ղզղան օնինքյ, ըստրա մեչին մին տոն շինեցինքյ, տանը կլխեն մին բախչա»:

- Մեզ մին լո՞ւ օնինքյ, - ասալ ա քոսակը,- էդ լո՞ւն քցեցինքյ տոնը, տանը մեչին ծո՞ւ ածից, տոնը վեր լցավ, եր իլյա՛վ հուրթին էլ ծո՞ւ ածից հու ինքյը կորավ, քիթի ոչ: Ասեղը հորումը վեր տվի, եր իլի տըեսնամ Ըստամբուլ կալ ա կասում: Քյինա՛ցի ընտեղ, լո՞ւն քիթի պերի, տըեսնամ մեչքը յարա յա: Ճղուպուրը տիրի մեչքին թխեցե, ճղուպուրի ծառ փսավ մեչքին: Ճղուպուրի ծառը եր իլի, տըեսնամ ընդրա մեչին մին բախչա, բախչան ման եկե, մին ծմերուկ քիթի: Ծմերուկը օզեցի կարիմ, կարեցի ոչ ծեռքս կոխեցի՝ նի չը մտավ, կլո՞խս կոխեցի՝ տըեսնամ հազար ծիյավեր ման ըն կյա՛լիս: Ասեցի, «Խե ը՞ք ման կյա՛լիս»: Ըսեցին. «Էրկու հա՛րո՞ւր մարթ ա կորալ, ման ընք կյա՛լիս»:

- Քոսակ ախպեր, - ասալ ա քաչալը,-քու սոտը ավելի մեծ ա: Քոսակը պեղարճնեն եր ա կալալ, ետնան էրկուսը ճղացիցը հղե ըն իլյա՛լ: Հղըցեն քաչալն ասալ ա. «Քոսակ ախպեր, մին պեղարճ տո»:

Քոսակն ասալ ա. «Խե ը՞մ տամ, մին աբասի տո, տամ»:

Քաչալն ասալ ա. «Լա՛վ ա, տանը կտամ»: Քոսակը մին պեղարճը տվալ ա: Եկալ ըն տոն: Քոսակը ո՞ւրա՛ն աբասին օզալ ա, քաչալը տվալ չի, սոտ մեռալ ա:

Պերալ ըն, թա պտանին, քոսակն ասալ ա. «Ես լավ կպտանիմ»:

Եննան տիրա՛լ ա կտավեն մեչին, մխաթավը մսեն նհետ կարալ: Եննան տարալ ա, թա թաղե, տըեսալ ա կյողեր ըն կյա՛լիս: Քոսակը նի ա մտալ քարեն տակը, մըեռալին թողալ ընդեղ: Կյողերը եկալ ըն նստոտալ, վեր կյողացած փողերը փայ անին: Փայ ըն ըրալ, պրծալ, մինակ ընդեղ մնացալ ա մին թոր: Էս կյողերը ասալ ըն. «էս թրավը էս մեռալին թխինքյ. վերը մեչան ճոթ անի, հա՛րո՞ւր վըեսկի ա կյինը»:

Էս քաչալը էս վեր ըսկացալ ա, ասալ ա. «Մեռալներ, ե՛ր կացեքյ»: Քոսակն էլ ծեն ա տվալ. «Փռնե, կյա̀մ ընք»:

Կյողերը էս վեր ըսկացալ ըն, փողերը ըտեղ ըն թողալ, փախալ: Էս քոսակը հու քաչալը եր ըն կացալ, փողերը փայ ըրալ, եննան քյինա̀ցալ ըն ո̀ւրա̀նց տոն:

Ըստուծանա իրեք խնձո̀ր վեր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը լսողեն, մինն էլ՝ չլսողեն:

## 71.ԱՉՔԸ ՎԱՀՐԸԿԱԼԱԾԵՆ, ԿԱՂԼԻԳՅԻՆ ՀՈՒ ՔՈՍԱԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին աչքը վահրը կալած, մին կաղլիգյ, մին էլ մին քոսակ: Էս իրեքանիս մին տեղ ղոնաղ ըն կանչալ, իրեքանն էլ քյինա̀ցալ ըն, մո̀ւն-մո̀ւնո̀ւ քշտե նստոտալ:

Էս աչքը վահըրկալածեն աչքը շատ վահրն ա կալալ, հմանչալ ա թա սրփի. կաղլիգյն էլ վեր ծլրպատակ նստալ ա, վրեննը օզալ ա մեկնե, հըմանչալ ա,, քոսակեն կլոխն էլ քոր ա եկալ, էլհա հըմաչալ ա, թա քորե:

Ախրը վեր ճարընեն կտրալ ա, աչքը վահըրկալածը մին ծեռքը մեկնալ ա, մինավն էլ աչքը սրփալ հու ասալ. «Իմ հորս մին թըվա̀նգյ օնար, վեր թուշ ի օնում՝ հավին պոչըրտակավն ար կենում»:

Կաղլեգյն էլ վըեննը մեկնալ ա հու ասալ, բա իմ հա̀րն էլ իմ պիծի վախտս մին չա̀քյմա̀ ար առալ ինձհետե, կյեցե՛ նի չի մտավ, կյեցե՛ նի չի մտավ, ախրը վեր մին պենդ ծիքյ տըվե՝ նի մտավ»:

Էն քոսակն էլ կլոխը քորելավ ասալ ա. «Ա՛դա, հինչ շատ սոտ ըք ասում»:

## 72.ՏԵՐՏԵՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին տերտեր: Էս տերտերըս էլ քյինացալ ա պատարաքյ անիլ: Մին մարթ եկալ ա էս տերտերիս տոնը, թա. «Տերտերը հոր ա՞»: Նահանք էլ ասալ ըն. «Քյինացալ ա պատարաքյ անիլ»: Էս մարթն ասալ ա. «Պատարաքյը հինչ ա՞»: Սահանք էլ ասալ ըն, թա. «Պատարաքյն ա իլիհ»: Ետնան էս տերտերը վըեր եկալ ա պատարաքտեղից, էս մարթն ասալ ա. «Ա̀դե՛ր, հոր ը՞ս քյինացալ»: Տերտերն էլ ասալ ա թա. «Քյինացալ ըմ պատարաքյ անիլ»: Էս մարթն ասալ ա. «Պատարաքյը հինչ ա՞, կիկյա̀ս մեր շենումն էլ պատարաքյ անե՞ս»: Էս տերտերն ասալ ա. «Լա̀վ, կիկյամ»:

Ետնան էս տերտերը քյինացալ ա էն շենիցը շատ մըղրաճա̀նճ հըվաքալ,

էս մարթիքյը հրցրալ ըն, թա. «Ա՛դեր, էտ խե յը՞ս ըտհենց անում»: Տերտերն էլ ասալ ա. «Ըստրանավ ըմ ընելու»: Ետնան էս մարթիքյը քյինացալ ըն ժամ, էս տերտերն ասալ ա. «Լոխըքանտ էլ տկլորացեքյ»: Սահանք էլ տկլորացալ ըն, մինակ փոխաննեն ա մնացալ կյեցըներին: Մարթիքյն ասալ ըն. «Ա՛դեր, համոթ ա, փոխաննես հանենքյ ոչ»: Տերտերն էլ ասալ ա. «Լա՛վ ա, հանիլ միքյ, ամմա մին պատառ վախտ տո՛ւրո՛ւր չի կյաք»:

Ետնան էս տերտերը էս մղրաճանճերը պա՛ց ա թողալ, սահանց վըեր կծոտալ ըն, ղըռըբռոցը նի յա ինկյա՛լ, մին մարթ էլ ասալ ա. «Պելի՛, պելի՛, մեր հարսը տեսի՞ր»: Էս մարթն ասալ ա. «Տեսի, պատարաքյը ռ...ան կացած քյինաց»: Ետնան էս մարթիքյը մին փետ ըն քաշալ, էս տերտերին թակալ:

Աստվածանից իրեք խնձո՛ր վեր ինկյնի, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 73.ԴԵՐԻՆ ՍԱՄԵՆ

Մին շենում մին դեր ար ապրում: Տա վարն ըսկըսելան առաչ նո՛քյա՛ր ար փըռնում, հա՛նդին պենն անել տամ: Դերին խասյաթը շատ փիս ար, հինչ նո՛քյա՛ր վըեր կյամ ար տրա կոշտը, էրկու օրա իվիլ կենում չար, առանց հախը յոր ունելի փախճում ար:

Մին օր մին մարթ քյինա՛մ ա էտ դերին կոշտը, ասում.- Ինձ նո՛քյա՛ր եր կալ, հիշքան օզում ըս, պինըցրու, համմա մըեր մաչին պայման տինինքյ՝ հինչ պըտահե, ո՛ւրո՛ւշու տոռնը կյենգյատ չի քյինանք: Դերն ասում ա,- էտ լիհա՛ ես ըմ օզում:

Ըռութանան վըեր ծաքյին քըեթը պռատվում ա, դերն էտ թա՛զզա՛ նո՛ւքյա՛րին զո՛ւրթնըցնում ա, բիրա՛դի քյինամ ըն հա՛նդը: Էս էլ մին փիս սիվիրուտկ օնըե՝ վըեր հաց ա նըստում, ծըտու մնան դրաղավն ընցնում ա, ետ տըեռնում, օրը տասսը հետ հաց նըստում, մնամ սոված, նո՛ւքյա՛րին ուրա՛ն նիըետ սոված թողում, պենն էլ մնամ ար խափան, տրա հետե յել վըեչ մին նո՛քյա՛ր քշտին վըեննը չար կենում:

Վըեր քյինա՛մ ըն հա՛նդ, դերն էտ խաղը թա՛զզա՛ նո՛ւքյա՛րին կըլխեն էլ պիրո՛ւմ՝ մին թիքյա՛ վըեր հաց ըն օտում, տա տըեղան լոք ա տամ եր կենում, թա օրը քյըսօ՛ր տըեռավ ճեյլ ըրա եր կաց, քյինա՛նք եզները լծենքյ, վար անենքյ: Տա սուսուփուս դերին ասածն անում ա՝ եզենքյը լծում ըն, վար անում: Վըեր միխըրե անց ա կենում, դերը նորը մինան ա նո՛ւքյա՛րին ասում, -

Սոված մըեռե, ետ տըեռնանք հաց օտըենքյ: Նո̀քյա̀րը եզենքյը տո̀ւս ա անում, քյինա̀մ, վըեր մխըրե հաց օտըե, դերը էլլա յա եր կենում, ասում.- Լա̀վ, կերենքյ, քյինա̀ եզենքյը պեր, լծենքյ, վար անենքյ, իրիքընակը մար մտավ: Նո̀քյա̀րը նորից ա եզենքյը պիրո̀ւմ լծում, վար անում: Դերը նորից ա ասում.- Վա՛յ, սոված մըեռե: Նո̀քյա̀րը եզենքյը տո̀ւս ա անում, մին սամե տո̀ւս օնում, տինո̀ւմ քշտին, դերին նըհետ հաց օտում: Դերն էլլա ո̀ւրա̀ն քյոհնա̀ խըսյաթն ա պինըցնում՝ մին էրկու թիքյա̀ հաց լըմլամում, լոք տամ եր կենում, ասում. - Մթնեց, եր կաց եզենքյը պեր լծենքյ, վար անենքյ: Նո̀քյա̀րը չգյիդա̀լը տիրա̀ծ ո̀ւրա̀ն հացն օտում ա, դերն էլ տիմանո̀ւմ չի, կռանում ա թա սուփրան հըվաքե, տա դերին մըրքան փըռնում ա, մին լա̀վ սըմաթակ տամ, նստում հացն օտում, քուշտանում, եր կենում եզենքյը պիրո̀ւմ լծում, վար անում: Դերը մնամ ա էշ կըտրած: Ախեր պայման տիրա̀ծ ըն իլա̀լ, վըեր հու ո̀ւրա̀նց մաչին խոսկըն օրիշ տըեղ հըսցնե, հազզար մանեթ փող տա: Դերը ճարը կըտրած, սուսուփուս վար ար անում:

Էքյսը վըեր նորըմինա̀ն կյամ ըն վըրատեղ, դերն էլլա ո̀ւրա̀ն քյո̀հնա̀ սիվիրուտկն ա պինըցնում՝ մին թիքյա̀ հաց ա կոլ տամ, եր կենում թա՛ լա̀վ կերենքյ, եր կաց եզենքյը լծենքյ, օրը քյըսօ̀ր տըեռավ: Նո̀քյա̀րը թա. «Ա՛ դեր, սամեն... Դերը վըխեւլան նիըետ լո̀ւզին կապ ա ինգյո̀ւմ, կըմկըմալավ ասում ա. -Ծը՛, ծը, ծա՛մե քըմատտաղ, ծա՛մե...

## 74.ՔԱՉԱԼԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին քաչալ: Էս քաչալիս էլ իլա̀լ ա̀ մին կնեգյ: Էս քաչալը շատ քյասիբ ա իլա̀լ, ամման օր էս քաչալը քյինում ա իլա̀լ փետ անում, պերում ծախում: Մին օր փետի քյինա̀լիս վախտը հղեն շիլ ա ինկյա̀լ հու քյինացալ ա տըեսալ մին քսան թորք մին տեղ կաղնած, մին շատ մեծ ծառ էլ քշտըներին: Էս քաչալը վըեր տըեսալ ա, քոլին տակին կյողըլ ա կացալ: էս թորքերը էն ծառին ասալ ըն. «Ա՛ ծառ, պա̀ցվի՛»: Պա̀ցվալ ա: Էս քաչալը տըեսալ ա, վըեր թաքավերին խազնան հենա մեչին, շատ ակներ էլ կա: Ետնան էս թորքերը քյինացալ ըն: Էս քաչալը քյինացալ ա ծառին ասալ. «Ա՛ ծառ, պա̀ցվի»: Պա̀ցվալ ա: Քյինացալ ա էշը փողավ պեռնալ, պիրալ ո̀ւրա̀նց տոնը, տոռնը թակալ, կնեգյը պա̀ցալ չի, ասալ ա. «Քյինա՛»: Մարթըն էլ ասալ ա. «Փող ըմ պիրալ»: Կնեգյը ասալ ա. «Պիրած փողըտ քյեզ ինի»: Մարթըն էլ ասալ ա. «Հերթավը շոր փռի, վեր ածեմ»: Կնեգյն ասալ ա. «Դե մին քանինը

վեր ածի տըեսնամ»։ Չուվալին ըռեխը պացալ ա, մին քանինը վեր ածալ, կնեգյն ասալ ա. «Քյմատաղ, կացիր շոր փռեմ»։ Շորը փռալ ա, վեր ածալ։ Ետնան մին իրեք-չորս հետի քյինացալ ա պեռնալ պիրալ։ Տանը դա̈յին ասալ ա. «Քաչալ ախպեր, ինձ էլ տար»։ Քաչալըն էլ տարալ ա։

Մին քանի հետ պիրալ ըն, մին վախտ դա̈յին ակներիցը մինը թաքուն եր ա կալալ, տիրալ չուվալին մեչին։ Ետնան քյինացալ ըն։ Էս թորքերը եկալ ըն, էլ կյիտացալ չըն, թա խազնիցը պակաս ա, մինակ ակները հնպարալ ըն, տըեսալ մինը պակաս։ Թորքերին մինը խազնին տակին կյողլ ա կացալ, թա վըեր կյա̈ն, խազնան կյուդանան, փռնի։ Դա̈յին ասալ ա. «Քաչա՛լ, եկ քյինանք»։ Քաչալըն էլ ասալ ա. «Տու քյինա, ես նաչաղ ըմ»։ Էս դա̈յին քյինացալ ա ընդեղ, ծառին ասալ ա. «Ա՛ ծառ պա̈ցվի»։ Պացվալ ա։ Նի յա մտալ չըվալը թա լցնի, էս թորքը եր ա կաց ալ դա̈յուն ըսպանալ, մին շախկան մին պատան կախ տըվալ, մինն էլ մին պատան, գլոխն էլ տիրալ ա ակներին մեչին։ Էս դա̈յուն կնեգյը եշալ ա, եշալ՝ եկալ չի։ Դա̈յուն կնեգյը քաչալին ըղանչանք ա ըրալ, թա. «Քաչա՛լ, եր կաց քյինա տես հի՞նչ իլա̈վ դա̈յիտ»։ Քաչալըն էլ ասալ ա. «Վըեր ասեմ, լա̈ց չը՞ս ինիլ»։ Ասալ ա՛ չէ՛։ Քաչալն ասալ ա. «Վըեր լաց ինես, մարթտ հինչ փող ա պիրալ՝ ի՞նձ» Ասալ ա՝ հա՛։ Քաչալն ասալ ա. «Դա̈յուն ըսպանալ ըն»։ Էս կնեգյը պատառ լա̈ց ա իլա̈լ։ Հինչ փող ա իլա̈լ, լոխ եր ա կալալ քաչալը հու դա̈յուն կնգանն էլ ասալ ա. «Վախել մեր, քյեզ լավ ըմ պահելու»։ Էս քաչալն էշը աղաքն ա ըրալ, քյինացալ էն ծառին կոշտը, ասալ. «Ա՛ ծառ, պա̈ցվի»։ Պա̈ցվալ ա. նի յա մտալ չըվալնեն փողավ լցալ, էշին պեռնալ հու դա̈յուն էրկու շախկան էշին յրա տիրա̈լ, գլո̈խն էլ տիրալ էշին մեչքին, պերալ տոն։

Ետնան էս թորքերը եկալ ըն, ասալ. «Ծա՛ռ, պա̈ցվի»։ Պա̈ցվալ ա։ Նի յրն մըտալ, տըեսալ խազնում ըն էլ փող չի կա։ Եր ըն կացալ, քյինացալ շատ տկեր առալ հու շատ բա̈քյմա̈զ։ Մին քանի տեկ լցալ, մեկալունցը մեչն էլ թորքեր ըն նի մտալ։ Ետնան ասալ ըն. «Տաննենքյ ծախենքյ. հու որ առնի՝ նա յա մեր կյողը», համ էլ ասալ ըն, թա. «Քյա̈սիբի յրա չի ծախենքյ»։ Տարալ ըն քաղաքին մեչավը ասելավ. «Ա՛յ բա̈քյմա̈զ առնող»։ Մին քյա̈սիբ մարթ եկալ ա, թա առնի, ծախալ չըն, տարալ ըն։ Էս քաչալը եկալ ա առալ տարալ ըն էս քաչալին տոնը։ Ետնան էս թորքերն էլ ասալ ըն, թա. «Քշերըս ըստեղ կնելու վընք»։ Վըեր ու̀լրու̀կյու̀ն ա տա̈ռալ, էս քաչալին գյա̈դան քյինացալ ա մին տեկը ծակալ, ծծալ, տըեսալ քախծր։ Քյինացալ ա մինին քացի տըվալ, մեչին

թորքը ասալ ա. «Բի՛ , բի՛, բի՛»: Խանչալավը ծակալ ա, ո̈րո̈ւնը շուկուկու յա տըվալ: Քյինացալ ա աղին ասալ, թա. «Ա՛ղա, էն տկերին մեչինը մարթիքյ ըն»: Աղան ասալ ա. «Ա՛ղա̈, սարսաղվալ ը՞ս»: Գյա̈ղա̈ն էլ ասալ ա. «Հավատա, մարթիքյ ըն»: Էս քաչալը էս թորքերին կանչալ ա, ասալ թա. «Պեռնոտեցեքյ, տարեքյ Քըռին ղրաղին վեր կալեքյ»: Տանելիցը ետնան քաչալը մին-մին ըռեխը պա̈նալ ա տըվալ, քացի տըվալ քցալ Քյուռը, խեխտվալ ըն: Ախրը վերչը էս քաչալը շատ հարուստացալ ա:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 75.ԺԱՄԱՍԵՐ ՎԱՐԹԱԲԵՏԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին ժամում մին քանի վարթաբետ: Սրանցից մինը շատ աստվածապաշտ ա իլա̈լ, վըեր աման օր հա̈լա̈ ժամերը չի տված, քյինում ա իլա̈լ ժամումը աղոթկ անում հու ժամերը կյա̈լի վախտն էլ ժամերը տվալ, ժամն էլ օրթնալ: Մին վախտ մին քաչալ ասալ ա. «Սա վըեր էնչանք աղոթկ ա անում, մին քյինամ տըեսնամ, թա էս հի՞նչ ա ասում»: Քյինացալ ա եր իլա̈լ ժամին կաթողիկին երի կիլոխը, տըեսալ վըեր ժամին մեջտեղը կաղնած: ծերքերը առ աստված կալած, աղոթկ ա անում հու ասում թա. «Տեր աստված, տու ինձ.... նման երկյինքը տար»: Քաչալն ասալ ա, թա. «Վարթաբե՛տ, աստված քու աղոթկտ լսեց, քշերս ըտեղան տո̈ւս չի կյաս, ամմա քյինա ծեր պարեկամներին հու ծեր տանը մարթոցը նհետ պռոշտի ըրա հու ես էլ քյեզ առաչ չվանավ ըմ տո̈ւս պիրելու, ետավ հրեղեն արապով»:

Ետավ վարթաբետը քյինացալ ա ո̈ւրա̈ն պարիկամների հու ո̈ւրա̈նց տանը մարթոցը նհետ պռոշտի ըրալ, եկալ: Քաչալը չվանը կախ ա տվալ, վարթաբետը մեչկան պենտ կապալ ա, քաչալը ծիքյ ա տվալ տարալ, տափան մին հենգյ կյա̈զ պեցուր կապալ: Վանքին մեկալ վարթաբետնեն եկալ ըն տըեսալ ժամին տոռնը պա̈ց, զանգակնեն տված ոչ: Ման ըն եկալ, ման, թա վարթաբետը հոր ա, հոր չի, քիթալ չըն: Ժամը ասալ ըն, ժամին կեսումը տըեսալ ըն, վըեր հեն ա ընղաղան կախ, սուս, տապռը ըրած, թա հունցը վըեր տեսնան ոչ, ո̈ւրա̈ն բիյապուռ չանեն: Քյինացալ ըն տըեսալ կաթողիկիցը կապած հու էն հանկին կապած ա իլա̈լ, վըեր ետ անելիս ինեն, կտրի, վարթաբետը տափը տա: Լիհա ղա̈մա̈վը թխալ ըն, վեր քիցալ: Ետավ եկալ ա խոստովանվալ, թա. «Ես ինձ հենց ի գյիտում, թա ես սուրփ ըմ, աստված հես ա ինձ ըստըհենց պատին տվավ»:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 76.ՆԸՂԱՐԱՉՈՒՆ ՔՅԱԼԱԳՅԸ

Մին նրղարաչի քշերեն կեսին հըրսընքան տո՞ւս ա կյամ, վըեր քյինա տոն: Հղեննի քյինալիս վարար թոռ ա կյամ նըղարաչին նի յա միննում մին ծըրանն ձեղաց, քարեն յիրա նստում, մխըրե կենում, տըեսնում տոռնը պեց իլավ, մին զըեռ արչ նի մտավ: Նըղարաչին գյո՞ւղո՞ւմ չի, թա հինչ անե: Էլլա ո՞ւրան կուրցընում չի, նըղարան յոր ա օնում, ըսկսում պեցո՞ւր սասավ վըեր թակելը: Արչը վըխելան մին էս պատին ա տամ, մին էն պատին, տոռնն էլ քմըկան նիըետ ա ինո՞ւմ, տո՞ւս կյալի տըեղ չի ինո՞ւմ, օգնում ա թա պատեր-նըյեր եր ինի, տափըեն ա վըեր ինգյո՞ւմ:

Էտ նըեղ դարո՞ւմը մին հարուստ խոջա ձո՞րեն վըեսկավ՝ պեռնած տըեղավ անց կընալիս ա ինո՞ւմ: Նըղըրեն սասը վըեր ըսկանում ա, գյո՞ւղո՞ւմ ա, թա հըրսանեքյ ա, կյամ ա: Ճըղացին տոռնը պենում ա, թա նի մննե, արչը տո՞ւս ա կյամ, փախճում: Նըղարաչին վըեր խուջեն փախած ըռանգյը տըեսնում ա, ետ ա տըեռնում տըրան ասում.- Տու քանի կըլխանե յը՞ս, վըեր տոռնը պեց ըս անում, թաքավըերեն արչը պեց թողում, ես մեհենգյ թաքավըերեն հինչ ջո՞ղոբ պիտի տամ, նա արչը ինձ ա տուվալ, վըեր էս խոր ծորումը սուվըրցընըեմ, տու կյամ ըս պեց թողում:

Խոջան, ճարը կտրած, պիրում ա ձորուն պեռնած վըեսկեն տամ նըղա-րաչուն, դաչանք-պըղատանք անում, թա թաքավըերեն ասըեսվուչ:

## 77.ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՑՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Ամպ քշելը]

Իլալ ա չիլալ մին շեն: Մին դո՞նո՞ւմ էս շենս քշաթոխպը եկալ ա կոխալ: Սահանք ասալ ըն, թա. «էս մեզ յրա կռեվ ա եկալ, եկեք քյինանք ըստահանց թակենքյ, խռեկյ տանք»: Մարթը մին փետ, չոմաղ ըն եր կալալ, ամմա մինն էլ մին լո՞ւծ ա եր կալալ: Քյինացալ ըն տուրըըթակ ընելավ շենիցը մին խիլլա տեղ հռացալ, մին էլ ետ եշալ, տըեսալ վըեր թոխպը լիհա հեն ա քմակներին: Եշալ ըն տըեսալ, վըեր էն մարթը լո՞ւծ ա եր կալալ, մեչը ծակ ա: Ըստրա փռնալ ըն թակալ, ըսպանալ, թա. «Տու վըեր ծակ փետ ըս եր կալալ, մեչավն անց ա կացալ էն դոլը»:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՛ չիլսողին:

## 78.ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՅՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Անգլուխ տերտերը]

Իլա̀լ ա չիլա̀լ մին տերտեր, մին էլ մին քանի մարթ: Ըստահանք ասալ ըն, թա. «Եկեքյ քյինանք ծմակը ման կյանք»: Քյինացալ ըն ման եկալ, մին ծմակի աղաքավ քյինալիս տեղը տըեսալ ըն մին առչ չալա մտած: Շատ քարավ ըն տվալ, թա տո̀ւս կյա̀, տո̀ւս չի եկալ: Ետնան մինը մինին ասալ ըն. «Նի մուտ»: Նահանք էլ ասալ ըն, թա. «Տե́րտեր, տո́ւ նի մուտ, առչը քու խա̀թրըտ կըպահի, մին տեղան փռնի, վըեններտ տո̀ւրո̀ւր տո, որ ոններտ տո̀ւրո̀ւր կըտաս, վըեններիցըտ կըփռնինքյ, ծիքյ տանք հանենքյ: Վըեր խա̀թրըտ պահել չի յե́, յրա կըտառնանք, ծիքյ տանք հանենքյ»: Թա. «Դե լա̀վ ա»: Նի յա մտալ առչին վըեններիցը փռնալ, առչն էլ ընդրա կլխան ա փռնալ: Վըեր փռնալ ա, վըենները տո̀ւրո̀ւր ա տվալ: Նահանք էլ վըեններան փռնալ ըն, ծիքյ տվալ: Առչըն էլ ընդաղան ա ծիքյ տվալ, նահանք՝ ընդաղան: Նա՝ ընդաղան, նահանք՝ ընդաղան, էն ղդար ծիքյ ըն տվալ, վըեր կլո̀խը պուք ա եկալ: Ետնան տարալ ըն ընդրա կնգանը կոշտը, հրցըրալ, թա. «Ուրկյո̀ւնի տերտերին կլոխը յրան ա՞ր»: Նա էլ ասալ ա, թա. «Դե վալլա, կյո̀ւտո̀ւմ չըմ, ամմա մինակ ուրկյունի մեր փեսին նհետ վըեր չա̀րա̀զ ար օտում, մրոքը տո̀ւրո̀ւր ար կյա̀մ»:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին:

## 79.ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՅՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Տերտերին ծեծելը]

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին տերտեր, մին էլ մին քանի մարթիքյ, վըեր ծիյանք ըն եր իլա̀լ քյինացալ ման եկալ: Մեչներումը մին ծի ա իլա̀լ, ըստրա էլ մին քոռակ: Ըստահանց ծիյանքը մնացալ ըն, ամմա էս քոռակս արխավը տես ա իլա̀լ լոք տամ, տեն: Ասալ ըն, թա. «էս hո՞ւնց անենքյ, վըեր էս քոռակս մնա»: Թա. «Պիրեք լոխ շորըրնես հանենքյ, տանք յրան, վըեր արխումը մնա»: Լոխ շորըրնեն հանալ ըն, տկլըրացալ, տվալ յրան: Էս տերտերս ո̀ւրա̀ն փոխանը հանալ չի: Էս քոռակին ըրալ ըն արխին կոշտը, թակալ, թա. «Հունցու վըեր օղի, թա անց կենա, մնա արխին մեչումը»: Քոռակը բիրդան յոք ա տվալ, անց կացալ էն ղըլը: Փռնալ ըն էս տերտերին թակալ, թա. «Խե՞ փոխանտ հանալ չըս, վըեր ծանդրոթուն անի, կարա ոչ անց կենա»:

Աստվածանից իրեր խնձոր վեր ինգյնի, մինն՝ ասողին, մինը՝ լողին, մինը՝ չիլսողին։

## 80.ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՑՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Ծին քարշ տալը]

Իլա̀լ ա̀ չիլա̀լ մին մարթ։ էս մարթս քյինացալ ա տըեսալ մին ծի առտն ինկյած օտում ա։ Էն ծիյին կլխին էլ վըեր ճանճը քյո̈ւնում ա իլա̀լ նստում, ծին էլ կլխավ ա իլա̀լ անում։ Էն մարթը ասալ ա. «Ա՛ տղա, էս ծիյին եշի է՛, ասում ըմ՝ թա. «Ինձ գողը՞ս»։ Թա. «Գողըմ»։ Ասում ըմ. «Մեր շենին քյոխան գողը՞ս»։Թա. «Գողըմ »։ Ասում ըմ թա. «Մեր հարսը գողը՞ս»։ Թա. «Գող ըմ»։ Նա ասալ ա, թա. «Պիրեքյ ըսպանենքյ»։ Թա. «Հա՛»։ Քաշ ըն տվալ, թա. «Դե վի՛, վի՛, առտը ճմռեց, էն ղոլավը քաշ տվեքյ»։ Էն ղոլավն ըն քաշ տվալ, թա. «Դե վի՛, վի՛, առտը ճմռեց, էն ղոլավը քաշ տվեքյ»։ Ըստեղ առտը խարաբցրալ ըն, տիրա̀լ ընդեղ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լողին, մինը՝ չիլսողին։

## 81.ՊԸԵԼ ՂԱՐԱԴԱՂՑՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Փայտ կտրողները]

Իլա̀լ ա չիլա̀լ մին շեն։ Էս շենիս մարթիքյըն էլ պըել ըն իլա̀լ։ Ասալ ըն, թա. «Եկեքյ քյինանք փետ անենքյ»։ Թա. «Հա՛»։ Քյինացալ ըն ման եկալ, ման նկալ, ծմակ չըն քիթալ։ Ետավ քյինացալ ըն տըեսալ, վըեր մին պեցուր սարի մեչում մին թա̀քյ ծառ կա, կարացալ չըն, թա եր կյան կտրեն, հու չվան էլ չի իլա̀լ, վըեր կախ տան։ Ասալ ըն, թա. «Եկեքյ ո̈ւրո̈ւր կյոտկա փռնենքյ, կախ ինենք»։ Թա. «Հա՛»։ Ո̈ւրո̈ւր կյոտկա փռնալ ըն, կախ իլա̀լ։ Սարիցը փռնողին ծերքերը նղացալ ա, ասալ ա, թա. «Մին պա̀ց թողեմ, ծերքիս մեչը թքոտ անեմ, վըեր մին լա̀վ փռնեմ»։ Լիհա վըեր պա̀ց ա թողալ, բիռղան վեր ըն տա̀ռալ, կտորվալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինը՝ ասողին, մինը՝ լողին, մինը՝չիլսողին։

## 82.ԹԱ̀ՄԲԱ̀ԼՆԵՆ

Ինըմ ա չինըմ, չորս թա̀մբա̀լ մարթ ըն ինըմ, էնքան թա̀մբա̀լ, վըեր նըղանըմ ըն, թա հացն էլ կոլ տան, սաղ օրը հեն ըն ինըմ շենըմը ըրնին տակեն վըեր տեռած: Էնքան էլ ճա̀նջեր ա ինըմ թուփ տեռած, վըեր նըղանըմ ըն, թա ճա̀նջերն էլ քշին: Քշեր-ցիրեկ շինըմաչըմը վըեր տըեռած, նըղանըմ ըն, թա ո̀ւրո̀ւր նըհետ էլ խոսին: Օրվա վըեր վախտն էլ տըեսնաս, հեն կինին քոն իլա̀ծ, վըեչ կասին, վըեչ կը խոսին, վըեչ կոտին, վըեչ կըխըմին, ո̀ւրա̀նց շատ թա̀մբա̀լ ինիլա̀ն նըղանըմ ին, թա ըշկըրնեն էլ պենա̀ն: Վըեր քըշտըր-ներեն հարայ էլ տաս, թա. «Հա՛յ հարայ, կյո̀ւլերը եկեն, հա՛յ հարայ, ճըրհե-ղեղ ա, հա՛յ հարայ, օխծը կըծըմ ա, հա՛յ հարայ, երգյինքյը փօլ ա կյամ», վըեր ասիս, տըղըրներան էլ տըմբըհան չըն ինիլ, վըեչ ըշկըրնեն պեց կանին, վըեչ մին քյա̀լմա̀ կըխոսին: Շենին մարթ, կընեգյ, խոխա-ըրախա քշտըրնե-րեն պըպըզըմ ըն, հացան ծամըմ, ռըխներըմը տինըմ, վըեր մին կյերպ կոլ ըն տամ, ճո̀ւրը տալիս՝ շորը թըռչըմ ըն, պիրըններըմը մըզո̀ւմ, վըեր մին թա̀հրա̀վ կա̀թ-կա̀թ կոլ ըն տամ, վըեր սովածությունան կըտորվին վեչ:

Շենին ախսախկալնեն մին օր հըվաքված մըտածըմ ըն, վըեր ախեր ո̀ւրա̀նց շենին պատիվ չի պերըմ, ամեն մին ղարիբ մարթ կյա̀լա̀վ շենը, տըեսնըմ ա սըրանց ըրարմունքը, ո̀ւրա̀նց էլ նամուս ա կյամ, կյամ ըն մըսլըհաթ անըմ, տանըմ սըրանց շենան մին ղըրաղ տան վըեր քցըմ, ո̀ւրա̀նք էլ լըհա̀ մին թա̀հրա̀վ, նուբաթավ ըտրանց ուտուցնըմ, խմըցընըմ:

Կյամ ա ծմըեռնը մուտանըմ, ցուրտերն, ընգնըմ: Շինա̀ցեքյ մըսլըհաթ ըն անըմ, վըեր հարկավըեր ա ըսրանց հետե փաղու հոքս անել, թա. «Չինա̀ ծմըեռնը կը փիդա̀նան, ցուրտան կըկըտորվին, հինչ ա՞նինքյ, վըեր ըտրանց անա մինը լըհա̀ մըզնըհետ տանինքյ ծըմակը, մունք փաղը կանինքյ, կըպեռնինքյ, մըեր իշերավը կըպերինքյ, թա̀քյ լըհա̀ մինը կյա̀ տըեսնա, բա̀լքյի հըմանչի, նամուս կյա̀, ընդրանց էլ իննա̀դի քցի»:

Մին ըռութանա հենգյ շինա̀ցե յոր ըն օնըմ հենգյ էշ, կյամ ըտահանց կոշտը, վըեր ըտրանց անա մինն էլ յոր օնին քյինին ծըմակը, ո̀ւրա̀նց հետե փադ անին: Վըերեն վըեր խուսուցընըմ ըն, ըտրանք նըղընալան նըհետ ջուղուբնեն էլ չըն տամ: Վերչը, շատ ըսելան, կոըն ընըելան, հըսկըցնելան ետը մին թա̀հրա̀վ ըտրանց անա մինը զոռավ-կյիժավ խոսկերքը կըսըտ-կեսատ թա ասըմ ա. «Դ- ե- վ-ը-ե-ր շ-ա-տ ը-ք օզըմ, ինձ տ-ա-ր-եքյ»:

Շինա̀ցեքյ ճըրըրնեն կտըրած, զոռավ-կյիժավ ըտրան պըցըրցընըմ ըն

էշին յրա նըստըցնըմ, քշըմ ծըմակը։ Վըեր հըսնըմ ըն ծըմակը, տափըեն մին կարպըետ ըն վըեր քցըմ, քյընդըրնեն ետ անըմ, էտ թըմբա՛լին էշան վըեր տընըմ, կըրպետեն յրան նըստըցընըմ։ Թա՛մբա՛լը թա ասըմ ա. «Չէ՛, նըղացած ըմ, պըրկըցըրէքյ, վըեր դինջա՛նա՛մ»։

Շինացեքյ պըրկըցընըմ ըն, ո՛ւրա՛նք ըսկըսըմ փադ անելը։ Թա՛մբա՛լն էլ տամ ա, քընավ ընցընըմ, վըեր դինջա՛նա։ Շինա՛ցեքյ մին խիլլա՛ փադ ընելան ետը կյամ ըն, թա եր կըցընին, վըեր հաց ուտուցընին, թա՛մբա՛լն էլ թա ասըմ ա. «Ա՛ լ-ա՛-վ է՛, լ-ա՛-վ, թ-ո-ղ կ-ա-ց-ե-քյ պ-ա-տ-ա-ռ դ-ի-ն-ջ-ա՛-ն-ա՛-մ»։

Դե մըհենգյ շինա՛ցեքյ թող հաց օտին, թա՛մբա՛լն էլ դինջանա՛, անց կենանք տանը մնացած էն իրեք թըմբա՛լին։ Հունց կըպըտահե, ըտրանց տոնը նի կըկենա, ըսկըսե էրիլը, ըտրանց անա մինը կրակը վըեր տըեսնըմ ա, զոռավ-կյիժավ, շատ գյընգյըլըխտա պիրա՛նէն մին ղոլավը ծեն կըտա. «է՛-ր-վ-ը-մ ը՛մ, է -ր-վ-ը-մ ը՛մ»։ Հընգերեն մինը թա. «Ա՛-ր-ա, ա-ս-ե հ-ը-ն-գ-եր-ը-ս է-լ-ա է՛-ր-վ-ը-մ»։ Էն մին հընգերն էլ ետ կըտեռնա, թա. «Ա՛-ր-ա, լ-ա՛-վ, ն-ը-ղ-ա-ն-ըմ, չ-ը՞-ք, է-տ-ք-ա-ն վը-ե-ր խ-ո-ս-ըմ ը-ք»։ Մինչև սըրանք ո՛ւրո՛ւր ընգնելը կրակը սաղ տոնը փըռնե, ո՛ւրա՛նց էլ մաչին էրի։

Մըհենգյ անց կենանք էն ծըմակեն թըմբա՛լին։ Շինացեքյ ըռութանա մինչև ժըմըժենքը փադն անըմ, էշերը պեռնըմ, մուտանըմ ըն էն թըմբա՛լին, թա. «Եր կաց քյինանք»։ Թա՛մբա՛լը մին թա՛հրա՛վ թա ասըմ ա. «Կ-ա-ր-ե-լ չ-ը-մ, հ-ու-նց վը-ե-ր պ-եր- ալ-ըք, ի-ն--դի է-լ տ-ա-ր-եքյ»։ Ախր էտ խըեղճ շինա՛ցեքյ տըեսնան վըեր էլ ճար չըկա, էշերը պեռնած ա, յա բիդի թողին ծըմակըմը, յա բիդի  մին թա՛հրա՛վ տանին։ Ըտրանց մինը հենգյ պեռնած էշերն ա քըշըմ, էն չորս հոգին էլ էտ թըմբա՛լին կըրպետեն յրա պարանց քըցած, կըրպետեն քյունջերքան փըռնըմ, թըմբա՛լին յեր օնըմ, տանըմ։ Մին պատառ վըեր քյինամ ըն, մին կըծանավ էշերը ցըրն ըն կյամ, ըստեղ-ընդեղ կորչըմ։ Ճարը կըտըրած, էշ քշողը ետ ա տըեռնըմ, կյամ հընգերունցը ասըմ, թա. «Մինակ ես կարըմ չըմ հենգյ էշ քշիմ, եկեքյ քյո՛մա՛գյ իլիքյ»։ Էտ դա՛րըմը թա՛մբա՛լը եր ա կենըմ կըրպետըմը նըստըմ, էն էշ քշողին յրա կըզնվըմ, թա ասըմ ա. «Պա տու հինչ կըկա՞րիս անիս, վըեչ էշերը քշիլը կըգյիդա՛ս վըեչ էլ կըրպետին ճունդան փըռնելը»։

Մինչև էտ թըմբա՛լին կըրպետըմը ճունդերան փըռնած պերըմ ըն շենը, քշերր լո՛ւսա՛նըմ ա։

## 83.ՎԸՐԹԱԲԵԴՆ ՈՒ ՈՒՐԱՆ ԾԱՌԱՆ

Մին վըրթաբեդու մին սիրած ա ինում: Էս վըրթաբեդը ամեն դ՚ն՚ւմ մին միանա փըռնած քյ՚թ՚, կըթնահունց, թըրթերուկ թխած, խուրջինը լըցած, մին էշու յըրա քըցած քյինամ ա սիրածեն կոշտը: Էշն էլ քշելու հետե եր ա օնում ՚ւրյ՚ն ծառան:

Մին դ՚ն՚ւմ էլ էս վարթաբեդը էլլիա լյ՚վ պաշար շինած, ՚ւրյ՚ն նոքյ՚-րեն նհետ քյինամ ա ինում սիրածեն կոշտը: Հըցին ն՚քյարը խի սուվըծանում ա: Ծեռքը քըց՚ւմ ա խուրջինը, թա քյ՚թ՚ն նհետ մխրե կտրե օտե: Վարթա-բեդը աչքեն տակավը եշում ա, օզում չի, վըեր ն՚քյ՚րը քյ՚թ՚ն կտրե, օտե, ասում ա. «Ա̀դյ՚, Վա՛նես»: Վանեսն էն սհաթին ծեռքը խուրջինին մաչան տ՚ւս ա օնում:

-Ա̀դյ՚, Վա՛նես:

-Հրամանք՛ս, հայր սուրփ:

-Հեն է՛, էն սարեն կլխինը հինչ շե՞ն ա:

-Գյ՚ւղ՚ւմ չըմ, հայր սուրփ:

Մին խիլլա էլլիա քյինում ըն, ն՚քյարը ծեռքը կոխում ա խուրջինը, օզում ա, թա քյ՚թեն անա մին պատառ կտրե, էլլիա վարթաբեդը, թա. «-Ա̀դյ՚՛, Վա՛նես, էն հինչ սա՞ր ա»: Էս ն՚քյ՚րն էլ ծեռքը էն սհաթեն խուրջինյ՚ն տ՚ւս ա օնում:

Իստի վարթաբեդը չքելը տեղ հասնելը աչքեն տակավը յըշիլիս ա կենում, լի՚ վըեր ն՚քյ՚րն օզում ա ծեռքը կոխե խուրջինը, կանչում ա. «Ա̀դյ՚, Վա՛նես , էս հինչ կյե՞տ ա»:

Վարթաբեդը, իստի ուստայությունավ քյ՚թ՚, կըթնահունց, թըըթերուկը սաղ-սալամաթ պիրում ա հըսցնում սիրածեն:

Տեղ հըսնելանը ետը, իրիկունը հացն օտում ըն թա չէ, տեղերը քըց՚ւմ ըն, թա թեք ընկնին, քոն ինին: Ն՚քյ՚րը տեղն ա նի մննում, թա չէ, սոտ տեղան խըռոըցնում ա, յանի տըեսեքյ, տըեսեքյ, ես քոն իլ՚ծ ըմ: Վարթաբեդն էլ էտ ա օզում, յավաշ-յավաշ սութ ա տամ դիպա սիրածեն տեղերը:

Ն՚քյ՚րն ընտղան կանչում ա. «Հայր սուրփ, միենգյ վըեր մեննըս ընկավ էն շենին անումը, ասի՞մ»: Ն՚քյ՚րեն հայր սուրփ ասելն ան վարթաբեդին ետ քաշվիլը մին ա ինում:

- Հա՛, վըերթի, վըեչի՛նչ, վըեչի՛նչ, քոն իլ:

Ն՚քյ՚րը պատառ կընալանը ետը խըռըմփցնում ա: Վըեր ն՚քյարը

խըռըմփցնում ա, վարթաբեղը  էլլիա սութ ա տամ դիպա սիրածեն տեղերը: Նո՞քյա՞րը էլլիա կանչում ա, վըռըվեռ անում, կյա՜մ տեղը: «Հայր սուրփ, հայր սուրփ, միենգյ վըեր քըթի էն սարեն անումը»:

- Հա, վըերթի, վըեչի՛նչ, վըեչի՛նչ,- ասում ա վարթաբեղը,- քոն իլ, վըեր-թի, քոն իլ:

Էլլիա անց ա կենում խիլլա վախտ, նո՞քյա՞րը խըռռըցնում ա: Վարթա-բեղը էս դո՞նո՞ւմ սութ ա տամ, լափ մուտանում սիրածեն տեղերը, էն ա հա օզում ա յորղանը պըցրցնի տակը նի միննէ, վըեր նո՞քյա՞րն էլլիա կանչում ա. «Հայր սուրփ»: Վարթաբեղը էլլիա դա՜ստի ետ ա տըեռնում ո՞ւրա՜ն  տեղերը:

- Գյուղում ը՞ս էն կյետին անումը հի՞նչ ա:

- Վըեչի՛նչ, վըերթի, քոն իլ, քոն իլ:

Մին խիլլա կացած, նո՞քյա՞րը էլլիա խըռռըցնում ա: Վարթաբեղը սութ տալավ քյինամ ա դիպա սիրածը, էն ա լի՜ օզում ա, թա սիրածեն ծոցը նի մըննէ, էլլիա նո՞քյա՞րը կանչում ա. «Հայր սուրփ, գյուղում ը՞ս»:

- Զո՛ռ հայր սուրփ, զահըրմար հայր սուրփ, հինչ ը՞ս զա՜հլա՜ տանում՝ հայր սուրփ, հայր սուրփ, քոն իլ իլի, նի յըս մըտալ տեղերըդ, աչքերըտ հոփ կալ, քոն իլ:

- Հայր սուրփ, խէ յը՞ս  կըզնվում, քյա՜թա՜ ուտելիս թափմաջա յըս ասալ, ես էլ հարսեն կոշտը քյինալիս ըմ ջողաբը քըթա՜լ:

## 84.ՀԱՐՈՒՍՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՎ ՀՈՔԵԱՌ ՀՐԵՇՏԱԿԸ

Ասում ա՝ մին հարուստ մարթ իրիկունը հացին նստած վախտը տոռնը պեց ա ինում, նի ա մըտնում մին մարթ: Էս մարթը մըղակումը կաղնում ա, ասում. «Ես Ազրայիլ հրեշտակն ըմ, աստծու հրամանավ էս քըշեր ծըզանա երկու մարթու հուքին պետմա առնիմ: Մետք ըրեքյ, տըեսեքյ հո՞ւր ըք ճոկում, վըեր ես նահանց հուքին առնիմ»:

Էտ վախտը հարուստին սուփրին դրաղին նստոտածնեն մըեծ-պուճուր աչքըրնեն քըցո՞ւմ ըն ո՞ւրա՜նց նոքյարեն յրա, վըեր հեն ա ինում սուփրեն ներքէ թըրա՜փեն նստած:

Նո՞քյարն ասում ա. «Հի՞նչ ըք լոխ ըչքըրնետ ինձ յրա կալալ, ասինք՛ էս ես մին, լա՜վ, ախր մինն էլ ծըզանա յա պիտո՞ւմ, թա՞ չէ»:

## 85.ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍՈՒ ՀԱՔՅԱԹԸ

(Տարբերակ)

Իլա̀լ ա չիլա̀լ ա, մին թաքավէր ա իլա̀լ էտ թաքավէրին ժառանգյ չիլա̀լ: Մ ետք ա ըրալ, թա. «Հի՞նչ անիմ, բա առանց ժառանգյի հո՞ւ պետմա իմ տեղ թաքավէր նստի»: Կանչըմ ա նա̀զիր-վա̀զիրին, խորուրթ անըմ: Նրանք ասըմ ըն. «Թաքավէրը ապրած կենա, խե՞ յրս դա̀րդ անըմ, մեր շհա̀րը մին փալչի կնիկ ա յեկար հո̀ւր բախտի եշըմ ա՝ դո̀ւզ-դո̀ւզինա օզածը կտարվըմ ա»:

Թաքավէրը հրամայըմ ա՝ էտ փալչուն ո̀ւրա̀ն կոշտը պիրին:

Փալչին կյա̀մ ա, երտիր-վէրտիր անըմ, բախտին եշըմ, ասըմ. «Թաքավէրն ապրած կենա, աստուծ քեզ մին տղա ժառանգյ պետմա տա, ամմա էտ ժառանգյտ քու կլխիտ բալահ պիտի պիրի. էտ ժառանգյտ նոր ա ծնվալ, կենըմ ա էս ինչ տանը, մորը դո̀շին ընգյա̀ծ, վըեր կլխին բալահ չի տա»:

Թարավէրը մարթիքյ ա ղարկըմ էտ կնգան ու խոխին պիրիլ տամ պալատը: Էտ ծծմար կնգան ասըմ ա. «Հի՞նչ տամ էտ խռ խիտ, վըեր ինձ տաս»: Էտ կնեգլը ասըմ ա. «Խոխաս ծախու չի»: Թաքավէրն ասըմ ա. «Հարո̀ւր մանեթ տամ, կտա՞ս»:

- Չէ՛, տալ չըմ:
- Հզեր մանեթ տա՞մ:
- Չէ , տալ չըմ:
- Տասը հզեր, հարո̀ւր հզեր:

Պառավն ասըմ ա. «Տա՛լ չըմ, վըեր տա՞լ չըմ»:

Թաքավէրին աջըղը կյամ ա, ասըմ ա. «Տղիտ քաշավը վըեսկի կտամ»: Պառավը տեսնըմ ա, վէր թաքավէրը ծեռք չի քաշելու, ասըմ ա. «Տղիս էրկու քաշավը վըեսկի տաս՝ կտամ»: Թաքավէրը վըեսկին տամ ա, խոխին յո̀ր օնըմ, մորը ճնապար տինըմ:

Մին քանի օրան ետը, վըեր էդ ժառանգյը ո̀ւրա̀ն զլխին բալահ չի պերի, կանչըմ ա նա̀զիր-վա̀զիրներին, էտ տղին ընդրանց տամ, ասըմ. «Տարե՛ք, մուրթեցեքյ, ըտրա մըեսը տպակած ինձ պիրեք»:

Նա̀զիրնին խոխան յո̀ր են օնըմ, տանըմ ծմակը, խեղճըննին ա կյամ, մորթըմ չըն, տինըմ ըն ծմակըմը մին ծառի տակ, ո̀ւրա̀նք մին հո̀լ մորթըմ, մըեսը տպակըմ, պիրըմ թաքավէրին ըռաչին տինըմ: Թաքավէրը ըշտը-

հալի մըեսն օտըմ ա, արխային ընգնըմ, վըեր էտ ժառանգյին մորթալ ըն, էլ կլխին բալահ չի կյա̀լ։

Ետ տեռնանք էտ խուլխին։ Հա̀մին էտ օրը, վըեր նա̀զիրնին ծառին տակը չըն թողում էտ խուլխին, մին էքյ ասլան անց ա կենըմ ծմակավը, լա̀ցի ծենին յրա մուտանըմ, տեսնըմ մին խոխա անտեր-ընտերու վեր ընգյա̀ծ, սովածութունան վընգըմ ա։ Ծեծ ա տամ, քնավ անըմ, ինքյը հռանըմ, էքյսը՝ էլհա կյա̀մ, ծեծ տամ։

Էտ տղան ասլանին յուղուրավը հանց օրեցօր մծանըմ ա, վըեր մին ամսըմը իրեք տրեկանու չափ ա տեռնըմ, ըսկսըմ ա ման կյա̀լ, ծառերի կլո̀խը եր ինիլ, ամմա ասել-խոսելը գյիդըմ չի։

Մին օր նա̀զիրնեն վըերսի ըն քյինըմ. տեսնըմ ըն ծմակըմը մարթու նման մին պիծի ջանավար, սաղ ջանը մզմազուտ, մին թա̀հրա̀վ փոնըմ ըն պիրըմ թաքավերին կոշտը, հանց վըեր մին խաղալիք պահըմ։

Թաքավերը շատ ուրխանըմ ա, մազերը վեր անել տամ, լա̀վ շորեր կյեց տամ, քշտին պահըմ, մըծըցնըմ, ընտրա օծն էլ տեսած՛ անըմը Ասլան-Բալասի տինըմ, ո̀ւրա̀ն թաքաժառանգյ շինըմ։

Մին օր թաքավերը վըերսի յա քյինըմ, պալատի պընա̀լիքյը տամ ա Ասլան-Բալասուն, ասըմ ա. «Վերթի՛, առ էս պընա̀լիքյը, պահի, իշտեղ օզխս նի մտիր, տես հինչ կա, հինչ չկա, լոխ քունն ա, ամմա ինձա̀նա քեզ ամանաթ, մինակ էս ժընգյոտած պինա̀լավը մին օթախ կա, ծեռք չի տաս, կլխիտ բալահ կըկյա̀»։

Թաքավերը քյինա̀լան ետը, Ասլան-Բալասին պեցուխուփ ա անըմ պալատին օթախնին, վերչն էլ օզըմ ա տեսնա հինչ կա էն ութախըմը, վըեր. թաքավերը ղդըղա յա ըրալ վըեր չպենա։ Ման ա կյա̀մ, ման կյամ՝ էտ օթախը քթնըմ, պլա̀նին քցըմ, տոռնը պենըմ, տեսնըմ մեչին մին սիրուն ախճիգյ նստած, տեղին, էրգյան ծամերը մին վըեսկու մժմա̀հըմ տիրա̀ծ խաղ ա անըմ, աչքերը լո̀ւս ըն տալիս։ Ասլան-Բալասին սիրահարվըմ ա էտ ըխճըկան յրան, մին մինու խոսք ըն տալիս՛ էտ պալատան փախչին, ըզատվին։

Էտ ախճիգյը ասըմ ա. «Բյինա թաքավերին ծիու սո̀ւրիին մեչին մին տեղին վըեսկու ըռանգյավ ծի կա, պե՛ր, նստինքյ յըրան, ըստղան փախչինքյ։ Ասլան-Բալասին ծեռաց քյինըմ ա ծին պիրըմ, ըռաչին կղնըցնըմ, ասըմ. «Առաչ ես եր ինիմ, ետնան՛ տու»։

Ասլան-Բալասին խաթրը կոտրըմ չի: Ախճիգյը եր ա ինըմ ծին, ու չափարախ քշըմ փախչըմ, Ասլան-Բալասուն թողում տափին:

Ասլան-Բալասին քոռ ու փեշման տոն ա կյա̀մ, զյիդըմ չի թա թաքավերին հինչ ջողաբ պիտի տա:

Թաքավերը վըերըստեղա վըեր կյա̀մ ա, տեսնըմ ա Ասլան- Բալասուն ռանգյ-ըռուշը փոխած, պընձ̀ըլիքը յոր ա օնըմ, քյինըմ տեսնըմ ըղըղա ըրած տոռնը պեց, ախճիգյը փախած: Շատ նեղանըմ ա, կնըզվըմ Ասլան-Բալասուն յրա, վըեր էտի պեն ա ըրալ, օշափին ըխճկանը պից թողալ:

Կանչըմ ա նա̀զիր-վեզիրներին, ասըմ ա. «Շուտ հզրվեցիքյ, քյեցիք էտ օշափին ըխճկան քթիքյ, պերիք. թա վըեր չպերիքյ ծեզ պալատան տո̀ւս կանիմ»:

Նա̀զիր-վեզիրնին խոսք ըն տամ, վըեր քյինան, Ասլան-Բալասին մեչ ա ընկնըմ, էրկու վեննը մին չըմըշկըմ տինըմ, թա. « Ես կքյինամ, էտ ըխճըկան կըքթնիմ, կպիրեմ»:

Թաքավերը վըեր շատ սիրում ար նրան, օզըմ չի թողի, ամմա Ասլան-Բալասին պընդըմ ա, վըեր ինքյը կըքյինա, հշտեղ վըեր ինի կճարի, կպիրի մինակ խնթըրըմ ա, վըեր ո̀ւրա̀ն ըրկաթի մին մեծ թոփուզ տան:

Թաքավերը հրամայըմ ա հշտեղ արկաթ-եկութ կա, հվաքին- պիրին, երկրի դա̀մո̀ւրչիներին էլ կանչին, թոփուզը շինին:

Հվաքըմ ըն երկրի արկաթնին, դա̀մո̀ւրչիներին պիրըմ, մին- հանց թոփուզ ըն շինըմ, վըեր հա̀րո̀ւր մարթ կարըմ ըն տեղան տո̀ւրո̀ւր տան, ամմա Ասլան-Բալասին մաններին պտկավը պտըտըցնըմ ա, ծեռքըմը խըղըցնըմ, կյոտկին մեչը կոխըմ: Թաքավերը հրմանըմա, վըեր իտի զոռավ, ղոչչաղ ժառանգյ օնի, խաթրը կոտրըմ չի, քյինաս պարև ա ասըմ, ճանապարհ տինըմ:

Ասլան-Բալասին շատ ա քյինըմ, խրեգյ ա քյինըմ, ճանապարին մի մարթու ռաստ ա կյամ, տեսնըմ թեք ընգյած, անգուճը տափին տիրած, կասիս մին պենի անգուճ ա տինըմ: Հըրցընըմ ա. «էտ հի՞նչ ըս անըմ»: Ասըմ ա. «Անգուճ ըմ տինըմ, թա օխտը կլխանի օշափին տանը հի՞նչ ըն անըմ»:

Էտ վըեր լըսըմ ա, Ասլան-Բալասին ասըմ ա. «էտ օխտը կըլխանի օշափը հշտե՞ղ ա կենըմ»: էտ մարթը տեղը նշանց ա տամ, ասըմ ա. «Ըստեղավ քյինա, առաչտ իրեք ճնապար կպենվա, մեչի ճնըպարավը

քյինա, կքթնիս»։

Ասլան-Բալասին քյինըմ ա, քյինըմ, տեսնըմ՝ մին մըեծ ամարաթ, ըրկաթի տռներավ, էրկու օշափ էլ պահապան տիրած։ Տրանք թողըմ չըն Ասլան-Բալասուն նի մննի։ Ասլան-Բալասին թուփուզավ թխըմ ա, էրկու օշափներին ըսպանըմ, տռռնը կոտրըմ, նի մննըմ։ Ման ա կյա̀մ օթախնին, տեսնըմ մին օթախըմ, ՛իրա̀ն հրսնացուն ծըլըպատակ նստած, օխտը կլխանի օշափն էլ կլոխը ծնկանը տիրած, քոն իլած։

Էտ ախճիգյը վըեր տեսնըմ ա Ասլան-Բալասուն, սիրտը երըեր ա խաղում, հրցնըմ. «Էտ հունց ը՞ս սերտ ըրաւ ըստեղ մտալ. դուշը ՛իրա̀ն թևավը, օցը ՛իրա̀ն փորավը կարըմ չի ըստեղ մննի։ Օշափը օխտը օր ա քոն ա մտալ, վըեր զարթնի, եր կենա, քեղ սաղ չի թողիլ, պրթ՛ում-պրթ՛ում կանի, շո՛ւտ ըրա, ըստղան հռաց։

Ասլան-Բալասին ասըմ ա. «Ես ըտրանա վախըմ չըմ»։ Թոփուզը պցրցնըմ ա օշափին կլխին տալիս։ Օշափը զարթնըմ ա, ասըմ ա. «Մին էլ թխի, մին էլ։ Ախճիգյն ասըմ ա. «Չըթխի՛ս, կըսղանա»։ Թխըմ չի։ Օշափը սատկըմ ա։ Ասլան-Բալասին ախչկան յ՛որ ա օնըմ, ծի նստըցնըմ, պալատը պիրըմ։

Թաքավերը, վըեր տեսնըմ ա ՛իրա̀ն ժառանգյին ու էտ ըխճըկան, վըեր օխտը կլխանի օշափը փախցրած ա ինըմ. շատ ուրխանըմ ա, օխտը օր, օխտը քշեր հրսանիքյ անըմ, ժառանգյին փսակըմ, ՛իրա̀ն թախտին նստըցնըմ։

Ըստուծանա իրեք խնձ՛որ վեր ընգավ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ չլսողին։

## 86.ԳՅ՛ՈՒԼԻ-Ա̀ՍՊԱ̀ՐԻՆ ՀԱ̀ՔՅԱ̀ԹԸ

Իլա̀լ ա չիլա̀լ էրկու ախպեր. պիծինը՝ թաքավեր, մեծը՝ սարտար։ Էս սարտարիս մին տղա յա իլա̀լ, անումը տիրալ ըն Ա̀սպա̀ր։ Մին տղա էլ թաքավերին ա իլա̀լ, անումը Գյ՛ուլի։ Էս Ա̀սպա̀րը յաշավ մեծն ա իլա̀լ, Գյ՛ուլի՝ պուճուրը։ Էս Գյ՛ուլին աման կոխ կնալիս վախտը Ա̀սպա̀րին կոխում ա իլա̀լ։ Մին վախտ էտ էրկունը տռանը խաղ ընելիս վախտը մին օշափ եկալ ա Գյ՛ուլ՛ուն եր կալալ, փախալ, տարալ քիցալ մին հոր։ Էն հորումն էլ շատ մարթ ա իլա̀լ։ Էս օշափը ամման վախտ հորին գլխան հաց ա իլա̀լ քց՛ում, օտում ըն իլա̀լ։ Գյ՛ուլին որ եկալ ա մին երեսուն տարեկան տա̀ռալ,

էս օշափը նի յա մտալ հորը, թա Գյո̈ւլո̈ւն տո̈ւս օնի, օտի։ Գյո̈ւլին ասալ ա. «Հոր ը՞ս եկալ»։ Օշափն էլ ասալ ա. «Քեզ պերալ ըմ ըտեղ քիցալ, մըհեկյ, տանում ըմ օտեմ»։ էս Գյո̈ւլին ասալ ա. «Տու հինչ կա՞րող ըս ինձ օտես»։ էս օշափը եշալ չի, հորիցը տո̈ւս ա կալալ, թա տանի օտի, Գյո̈ւլին որ գլխին թխալ ա, գլո̈խը կտրվալ ա։

Ետնան էս Գյո̈ւլին եկալ ա մին ծմակում տոն շինա̈լ, ընդեղ կաց ալ։ Մին վախտ տեսալ ա, որ հես ա մին դոշուն ա կյա̈լիս, որ էս դոշունն էլ ո̈ւրա̈ն հա̈րն ա ղրկալ օրիշ թաքավերի եղա։ Էն ծմական մին ծառ ա կտրալ, քյինա̈ցալ էն դոշունը կտորալ, թողացալ չի քյինա̈ն։ Ետնան էս Գյո̈ւլուն հա̈րը շատ դոշուն ա վըհաքալ, Ա̈սպա̈րին էլ տիրա̈լ նիետը, թա քյինա̈ցեքյ փոնոտեցեքյ պերեքյ։ Էն Ա̈սպա̈րը դոշունավը քինացալ ա թա կռն անի, էս Գյո̈ւլին ասալ ա կռն մի անիլ, եկ կռխ կենանք, որ տու կռխես,ինձ փոնի̇ տար, որ ես կռխեմ, ես ըմ գյո̈ւտում հինչ կանեմ՝ կանեմ։ Կոխ ըն կացալ. էս Գյո̈ւլին որ էս Ա̈սպա̈րին հիլո̈րալ ա տիրա̈լ տակին, ետնան էս Ա̈սպա̈րը դանչանք ա ըրալ, թա. « Քմատաղ, ինձ ըսպանիլ միր»։ Ետնան Գյո̈ւլին պաց ա թողալ, քյինա̈ցալ ա հորը ասալ թա ես էլ կարալ չըմ ընտրա փոնեմ։ Ետնան էս Գյո̈ւլո̈ւն հա̈րը սաղ դոշունավը, կնկանավը քյինա̈ցալ ա էս Գյո̈ւլո̈ւն ոնները ինկյա̈լ, թա. «Խե՞ յըս իմ դոշունըս կտորում»։ Ետնան էս Գյո̈ւլո̈ւն պիրալ ըն թաքավեր տիրա̈լ։ Ստնան Գյո̈ւլո̈ւն հա̈րը գյիտացալ ա, որ էս ո̈ւրա̈ն տղան ա, ասալ ա տղին, թա. «Տու իմ տղաս ըս, հաղ անում վախտը մին օշափ եկավ քեզ եր կա լավ, տարավ գիդացենքյ ոչ, թե հո՞ր տարավ»։

Աստվածանից իրեք խնձո̈ր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մի՝ լսողին, մինը՝ չի լսողին։

## 87.ՈՐՍԿԱՆ ՄԱՐԹԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին մարթ։ Էս մարթս աման օր քյինում ա իլա̈լ որս անում։ Ըստրա ըղաքավը մին ճեյրան տես ա իլա̈լ քյինում, տեն։ Էս մարթը աման օր քյինում ա իլա̈լ որ փոնի։ Մին վախտ հետան վազ ա տըվալ, էս ճեյրանը քյինացալ ա մին պո̈ւն նի մտալ։ Էս մարթը քյինացալ ա տեսալ՝ մին հո̈ւլո̈ւմա̈լա̈քյ ախճիկյ։ Պիրալ ա ո̈ւրա̈ն կնեկյը շինա̈լ։

Էս կնեկյն էնչանք շատ պարեբաշտ ա իլա̈լ, որ հրեշտակներին նըհետ ա իլա̈լ խոսում։ Էս կնեկյը մին ախճիկյ ա պերալ, որ կանց մորը նախշուն։

էս մարթս թամք շինիլիս վախտը էս ախճիկը նի յա ինկյա̀լ, կոտրալ ա, հա̀րը մին պուճուր թխալ ա: Էն սըհաթը մարը ըխճկանը եր ա կալալ, թռչա̀լ երկյինքյը: Էս մարթը շատ ման ա եկալ, ման, քիթա̀լ չի: Մին տարե լա̀ց ա իլա̀լ: Մին տարուցը ետնան էլլա ըսկսալ ա թամք շինիլ: Մին թամք ա շինա̀լ. մին իրեսին կնկանը պատկերը քաշալ, մին իրեսին ըխճկանը հու տարալ ծախ: Մին մարթ եկալ ա առալ: Էս մարթն ասալ ա. «Մին ըստեղ պեր, էտ թամքին մեխը ծռռ ա, շինեմ»: Նա էլ պերալ ա: Չաքյո̀ւչավը թխալ ա, թամքը շաղ ա եկալ: Էս որսկան մարթն ասալ ա. «Լա̀վ ա, քյինա̀, որ կըշինեմ, կիկյա̀ս տանես»: Նա էլ քյինացալ ա: Էլլա մին տարի չըրչարվալ ա, չըրչարվալ, շինալ՝ ո̀ւրո̀ւր ըրալ: Էլլա մին օրիշ մարթ եկալ ա առալ, թա տանի: Էլլա ասալ ա. «Պեր էտ թամքին մեխը ծռռ ա, շինեմ»: Էլլա թխալ ա, շաղ ա եկալ:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

## 88.ԹԱԳԱՎՈՐԻՆ ՁՈՒԿԸ ԲՌՆՈՂԻՆ ՈՐԴՈՒՆ ՎԵՊԸ

Իլա̀լ ա չիլա̀լ մին թագավոր: Դրան էլ իլել է մին ձուկը բռնող: Էս ձուկը բռնողին էլ իսկի զավակ չիլել: Մին անգամ դրա կնիկը մին տղա է բիրել: Էս տղան մեծացել է: Դրա հայրը մին անգամ գնացել է ծովին մոտ, ուռկան քցել ու ասել. «Էս իմ որդուս բախտին»: Մին քիչ կացել է, հանել տեսել՝ ձուկը չի կա: Մին անգամ էլ է քցել, էլի տո̀ւս կալել տեսել՝ զատ չի կա մեջին. մին անգամ էլ է քցել, տո̀ւս կալել տեսել՝ մին գեղեցիկ ձուկն է տո̀ւս եկել, որ իսկի էնպես ձուկը չիլել, էն ինչ որ թագավորին համար ձուկն է հանել:

Էն ձուկը վեր է կալել, քցել կաթսային մեջը ու տարել տըվել ո̀ւրա̀ն որդուն, թե էղ ձուկնովը տո̀ւ խաղ արա: Մին երկու օր խաղ է արել, ետով ո̀ւրա̀ն հայրն ասել է. «Դու էղ ձուկնովը շատ ես խաղ արել, հիմիկ էլ տար տուր թագավորին աղջկանը, որ նա խաղ անի տրանով: Նա էն ձուկը վեր է կալել, քցել կաթսային մեջը ու տրել գլխին, գնացել թագավորին դռնովը նի մտել, թե տանի տա նրանց: Մին էլ ինքը-ինքը միտք է արել և ինքը ո̀ւրա̀ն

մտքումը ասել, թե. «Որ ես էս ձուկը տանեմ տամ նրանց՝ նրանք ուտելու են, ինձ ի՞նչ: Տանեմ քցեմ ծովը, ինձ վարձք է»: Ու մին էլ եղ է տա̀ռել թե գնա: Թագավորին աղջիկը եղ է տա̀ռել, թե՝ էտ ո՞ւրտեղ ես գնում: Նա էլ

շուտով պատասխանել է թե՝ մին ձուկը մոռացել եմ, գնում եմ էն էլ բիրեմ:

Էս տղան էս ձուկը վեր է կալել, տարել քցել ծովը, ինքը ծովին մին եզրովը գնացել է մին երկու մղոն, տեսել էն տեղով մին ծեր մարդ է գալիս: Դրանք ուրուր հարցըփորձ են արել, հայր ու որդի տնռել, էստեղ ուրուր հետ հաց կերել ու վեր կացել էն ճանապարհովը գնացել:

Շատ ու քիչ գնացել են, հասել մին քաղաք: Էն քաղաքումը էս տղան փողով շատ խաղ է արել ու շատ փող է տարել: Էն քաղաքիցը մին էլ վեր են կացել գնացել մին մայրաքաղաք: Էս մայրաքաղաքին թագավորին աղջիկն էլ համր է իլել: Էս աղջկանը վերա շատ բժիշկ է ջանք արել, թե առողջացնի, բայց ոչ մինը չի կարողացել: Թագավորի տանիցը մին անգամ եկել են սրանց տունը, էն ծեր մարդին հարցրել, թե՝ տուք կըկարողանա՞ք էն համր աղջկանն առողջացնել: Էն ծեր մարդը ասել է. «Ես չեմ կարողանալ, բայց իմ որդիս կըկարա»:

Էն տղան էնտեղ չի իլել: Ետով իրիկունը որ էս տղան եկել է տուն, ուրան հայրն ասել է, թե՝ հիմիկիս թագավորին տանիցը եկին ասեցին. «Մեր համր աղջկանը կարո՞ղ եք առողջացնել», ես էլ պատասխանեցի, թե՝ ես չեմ կարողանալ առողջացնել, բայց իմ որդիս կըկարողանա: Էս տղան ուրան հորը վերա կզնվել է, թե՝ ես կըկարողա՞նամ առողջացնել, որ դու ասել ես:

Էս մարդն ասել է. «Լա՛վ, որ դու գիշերով գնաս էնտեղ, էն է՝ էն աղջկանը կողքին մին սնդուկ կա. էն սնդուկին բարի լույս տու, նա էլ քու պատասխանտ կըտա: Ետով հարցրու, ասի՝ թե հյուսը որ փետ տաշի, ուրագով կըտաշի՞, թե մուրճով: Էն սնդուկն ասելու է՝ մուրճով: Ետով էն աղջիկն էլ ասելու է. «Ուրագով կըտաշի, ոչ թե մուրճով»:

Էքսը էն տղան գնացել է էնտեղ ու ամեն բաները կադարել, էն աղջիկը էն ամեն բաները խոսացել է, էս թագավորն էլ շատ փող ու ուրիշ զատեր էլ է տրվել էս տղին: Էս տղան որ եկել է տուն, էլի էն աղջկանը խոսացրել են, խոսացել չի: Մին անգամ էլ են եկել էս տղին հետիցը, էլի տանը չի իլել: Էլհա եկել է տուն, ուրան հայրն ասել է. «Թագավորի տանիցը եկել էին հեղիցդ, ես էլ ասեցի, թե՝ որ կըգա տուն, կասեմ կըգա»: Էլի էս տղան ուրան հորը հետ կռիվ է արել: Էն մարդն էլ ասել է՝ հիմիկ էլ որ գնաս էն սնդուկին ասի. «Որմնադիրը որ քարը կոտրի, մուրճով կըկոտրի՞, թե ծեփիճով»: Էլի էքսը գիշերով էն տղան գնացել է էնտեղ, էն սնդուկին բարով տըվել ու էն

ամեն խոսքերն ասել: Մնդուկովն էլ ասել է՝ ծեփիճով: Էն րոպեին էն աղջիկն էլի ասել է. «Մուրճով կըկոտրի, ոչ թե ծեփիճով»: Ետով էս թագավորը ի՞րա՞ն աղջիկը էն տղի վերա պսակել է, շատ փող ու շատ ուրիշ բաներ էլ տըվել:

Էս տղան էլ որ տարել է ի՞րա՞նց տուն, էն աղջիկը էլի համրացել է: Էն ծեր մարդը էն աղջկանը կախ է տըվել ու ասել, թե. «Էս ժամիս քու մեջիցըտ կես կանեմ, խոսի»: Ու թուրը հանել է, թե աղջկանը մեջիցը կէս անի, էն րոպեին մին վիշապ օձ բերանիցը տ՞ուս է եկել, փախել: Էս վիշապը որ տ՞ուս է եկել՝ էս աղջիկը ողջացել է, լավ ու սիրուն խոսացել: Ետով գնացել են թագավորին ասել, թե քո աղջկանը փորիցը մին էսպես բան է տ՞ուս եկել ու աղջիկըտ առողջացել է:

Մին երկու օր անց կենալից ետը էս ծեր մարդը էս տղին օրհնել է ու ասել. «Դու աշխարիքիս վերա թագավորություն անես, ես էլ ծովին ձկներին վերա հավիտյանս հավիտենից», ու պոռշտի արել, ետով ասել, որ ինքը առաջվա գեղեցիկ ձուկն է: Ու էս ասելից ետը գնացել է ծովի մոտ ու ասել, թե. «Որ դու տարիր ինձ քցեցիր ծովը, դե որ դու ինձ էս բարությունը հասցրիր, ես էլ քեզ էտ բարությունին հասցրի»: Էս ասել է ու ձուկը տ՛առել, նի ինկել ծովը և ինքը ծովի ձկներին վերա թագավորություն արել,, էն տղան էլ երկրիս վերա:

Աստվածանից իրեք խնձ՞ր..

## 89.ՈՐՍՈՐԴ ՓՌՒՐՌՒՄԻՆ ՎԵՊԸ

Իլել չիլել մին որսորդ: Էս որսորդն էլ ամեն անասունի լեզու գիտում է իլել: Էս որսորդը գնացել է որս անել, էնտեղ տեսել է, որ մին քանի օձ ու էտ օձերին միջին էլ մին չըլմըլոտիկ օձ մին սև այլակերպ օձի հետ խառնակ-ված: Էս որսորդը հրացանը վերա է արել, թե էն օձին ըսպանի: Գնդակը նի է եկել չըլմըլոտիկ օձին, հազին կտրվել է: Էն չըլմըլոտիկ օձն էլ օձերի թագավորին կնիկն է իլել: Էս օձին թագավորը որ տեսել է ի՞րա՞ն կնկանը հազին կտրված, հրցրել է, թե՝ էտ ո՞վ է արել: Նա էլ ասել է՝ այսինչ մարդը: Սրա հմար ասել է՝ գնացեք էն մարդին պիրեք:

Էս օձերը գնացել են, կարողացել չեն պիրնն: Օձերի թագավորը երկու օձ ու էլ մին մարդ է ղրկել, թե՝ գնացեք դուք նի մտեք նրա կոշիկներին մեջը, էս մարդն էլ գնա, ասի, թե՝ եկ: Նա էլ ասել է, թե՝ լավ, կըգամ, դու գնա: Նրանք էլ գնացել են:

Ետով էս մարդը գնացել է թագավորին մոտ։ Թագավորն ասել է. «Դու ինչի՞ ես իմ կնկանս հագին կտրում»։ Նա էլ ասել է, «Ես գիդացել եմ չեմ, թե քու կնիկտ է։ Ու ես մին անգամ գնացի տեսի, որ կնիկտ մին այլակերպ սև օձի հետ խառնակված, հրացանս վերա ըրի, թե էն սև օձին ըսպանեմ, տրա նի եկավ»։ Թագավորն էլ ասել է. «էն սև օձը կըճնանչե՞ս»։ Նա էլ ասել է, «Կըճնանչեմ»»։ Թագավորն էլ ասել է. «Ոտնդ մեկնի. որ էն սև օձը գա ոտնովդ անց կենա, ինձ ասի»։ Ետով թագավորը հրաման է տըվել, որ բոլոր օձերը գան։ Օձերն էլ խումբ-խումբ եկել են նրա ոտավը անց կացել, որսորդն էլ ասել է. «էստեղ չի»։

Էս սև օձին ընկերները սև օձին ասել են. «Դու էլ եկ»։ Նա էլ ասել է. «Դուք գնացեք, ես երեխան պահում եմ»։ Էս օձը մինել է ասել, թե՝ «Ե՛կ»։ Նա էլ ասել է, թե՝ «Գամ չեմ»։

Օձին թագավորը մինէլ որ հրամայել է օձերին, թե՝ գան, նըրանք էլի մին խումբ եկել են։ Էս որսորդը տեսել է, որ սև օձը օձերի տալտովը կամաց-կամաց գամ է, էս մարդն ասել է. «Թագավորը ապրած կենա, էս է»։ Օձերի թագավորը հրամայել է, որ ամեն օձ գան, էս սև օձին աղու տան, ըսպանեն։ Բոլոր օձերը եկել են աղու տըվել, էս սև օձը ուռվել է, տրաքել։

Ետով էս թագավորը որսորդ Փի՛ւրհ՛ւմին ասել է. «Ինձանից ի՞նչ կուզես»։ Նա էլ ասել է. «Քեզանից բան չեմ ուզում»։ Էս որսորդին կնիկն էլ որսորդին ասած է իլել, որ թագավորը ասի՝ ինձանից ի՞նչ կուզես, ասի՝ մին բան չեմ ուզում, բայց միայն քու լեզուդ իմ լեզվիս տակովը անց կըցրու։

Թագավորն ասել է. «Ինձանից ի՞նչ կուզես»։ Որսորդն էլ ասել է. «Քեզանից մին զատ չեմ ուզում, մենակ քու լեզուտ իմ լեզվիս տակովը անց կացրու»։ Թագավորն էլ ի՛ւրա՛ն լեզուն ընդրա լեզվին տակով անց է կցըրել ու էս մարդը իմաստուն է տա՛ռեր։ Սրանից ետը գնացել է ի՛ւրա՛նց տունը։

Մին անգամ էս մարդը ի՛ւրա՛ն կնիկը ձի եր իլա՛ծ խաչ գնում ժամանակ ձիին քուռակը խըխնջացել է, ձին էլ ասել է. «Ցա՛վ, մինը փորումս, մինը՝ վերաս, ես ի՞նչ անեմ, ե՛կ»։ Էս մարդը ծիծաղել է, կնիկն էլ ասել է. «Խե՞ ծիծաղում ես»։ Մարդն էլ ասել է. «Իսկի»։ Էս կնիկը որ շատ զոռել է, մարդն ասել է, որ գնանք խաչ, էնդեղ կասեմ։

Ետով գնացել են խաչ, կնիկն ասել է. «Դե էն ինչ էր»։ Որսորդն էլ ասել է. «Միտք անեմ, ասեմ»։ Ետով էնտեղիցը մին որձակ ասել է. «Ծկլո՛ւկը՛, էս է որսորդ Փի՛ւրհ՛ւմը մեռնելու է»։ Մին հավ էլ էնտեղիցը կանչել է ու ասել.

«Որ ուզի, մեռնիլ չի. գնա ծմակիցը մին քանի տկողնի ճպատ պիրի՝ կնկանը թակի ըստանի»: Էս որսորդ Փի՛ւրի՛ւմը, որ ըսկացել է, եր է կացել գնացել ծմակիցը մին քանի ճպատ կտրել, պիրել կնկանը թակել, ըսպանել:

Աստվածանից երեք…

## 90.ԹԱԳԱՎՈՐԻՆ ԱՂՋԿԱՆԸ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին քաղաք: Էս քաղաքիս մեջին էլ մին թագավոր է իլել: Էս քաղաքիս մեջին բոլոր մարդիքը ամեն առավոտ պետք է գային թագավորի դռանը կարքին կաղնեին, կաղնեին և թագավորն էլ պիտի տի՛ւս գար եշեր, որ ամեն օր գնում է իլել մին շալակ ցաք անում, պիրում երկու շահու տամ՝ հացի, օտում: Թագավորի աղջիկն էլ աման օր, երբ որ հայրը ի՛ւրա՛ն մարդոցը քշում է իլալ, հորն ասում է իլել, թե էն աղքադ մարդին հմար, թե՝ ա՛բեր, մին էս մարդին եշի է՛: Սա որ ամեն օր էսպես ասել է, թագավորն էլ ասել է՝ քեզ տալու եմ նրան:

Ետով որ մինել եկել են էնտեղ, կարքին կաղնել, թագավորը տի՛ւս է եկել՝ եշել: Ետով էս աղջիկը տվել է էս աղքադ մարդին: Էս աղքադ մարդն էլ ասել է. «Ես էտ տանում եմ ի՞նչ անեմ, դա թագավորի աղջիկ է՝ բոլ-բոլ կյերած, սվերած, ես կարել չեմ պահեմ»: Թաղավորն էլ ասել է. «Շատ մի խոսիլ, վեր կալ տար»:

Էս աղքադ մարդը էս աղջկան ը վեր է կալել, տարել ի՛ւրա՛նց տուն: Տանը էս աղջիկը գրպանիցը մին քանի փող է հանել, տվել էս աղքադ մարդին, թե. «Տար մին քանի խսիր առ ու էլ մին փունթ բամբակ, մինել մին չխարակ»: Էս աղքադ մարդը գնացել է առել, պիրել: Էս թագավորի աղջիկը էս բամբակը մանել է, էս մարդն էլ տարել է ծախել, փողը պիրել: Էս մարդն էլ ամեն օր գնում է իլել երկու շալակ ցաք անում, պիրում մին շալակը ի՛ւրա՛ն հմար, մինը կնկանը, ետով ծախում, փողը հացի տամ, ուտում: Մին ժամանակ էս մարդը ցաք ըրած զամ ժամանակը մին վաճառական ասել է. «Կըզա՞ս քեզ գործակատար բռնեմ»: Էս մարդն էլ ասել է. «Կացիր գնամ իմ կնկանս ասեմ, թե որ թողի, կըզամ»: Էս վաճառականն էլ ասել է. «Գնաս»: Էս մարդը գնացել է կնկանն ասել, կնիկն էլ ասել է. «Գնա, բայց փողիտ կեսը էս գլխից ինքալ, կեսը՝ էն գլխիցը»: Էս մարդն էլ ասել է՝ լավ: Ետով էս մարդը գնացել է վաճառականին ասել, էս վաճառականն էլ փողի կեսը էս գլխիցը տըվել է, կեսը մնացել է:

Սրանց ճանապարումն էլ ջուր չիլել, բայց մին հոր է իլել, որ ով որ նի մըտնի թե ջուր հանի՝ էլ տո՞ւս չի գալ: Էս մարդը նի է մտել, ջուրը ածել դույլը, ետով հանել են: Ետով ինքն էլ ուզացել է տո՞ւս գա, վիշապազները եկել են տարել մին սենյակ: Էս սենյակումն էլ մին աղջիկ ու էլ մին գորտ է իլել: Էս վիշապազներն ասել են. «Աղջի՞կն է լավ, թե գորտը»: Էս մարդը միտք է արել, միտք ու ասել. «Աչքի սիրածը լավ կինի»: Էս վիշտպազներն էլ ասել են. «Լավ»: Ետով տարել են մին ուրիշ սենյակ, ասել, թե. «Տեսնում ե՞ս, ով որ էն աղջկանը ու գորտին հմար է ասել, թե՝ աղջիկն է լավ, գլուխը կտրել ենք, բայց դու որ էտպես ասեցիր, քու գլուխդ կտրիլ չենք», ու երկու շհանուռ են տըվել, թե. «Տա՛ր, բայց ճանապարին կտրեսոչ»: Էս մարդը էս հորիցը տո՞ւս է եկել, գնացել էն վաճառականի մոտ ու գնացել են մին ուրիշ քաղաք:

Մին անգամ վաճառականն ասել է էս մարդին, թե գնում եմ ձեր երկիրը, ինչ որ ունիս, տուր տանեմ տամ քու կնկանդ: Էս մարդն էլ մին շհանուռ է տվել, թե՝ տար: Էս վաճառականն էլ մըտքումն ասել է. «Վա՛յ, վա՛յ, մի՛ն բան չունի թե տա, շհանուռ է տալիս»: Էս վաճառականը էս շհանուռը տարել տըվել է էս մարդի կնկանը, էս կնիկն էլ էս շհանուռը տրել է տռանը գլխին: Մին իրիկուն էս կնիկը ծառային ասել է. «Էն շհանուռը բեր կտրենք»: Նա էլ բիրել է, կտրել են, տեսել մեջը բոլոր ակներ ու մարքարիտներ: Էս կնիկը ամեն օր ակներիցը մինը տըվել է ծառային, թե՝ տար ծախի, սա էլ տարել է մին երեքհարյուր-չորսհարյուր մնեթի ծախել: Սահանք հարուստացել են ու թագավորին պալատի նման մին պալատ են կաղնեցրել, ըռաջին էլ մին պարտեզ են շինել:

Ետով էս կնկանս մարդը գամ ժամանակը էս կնիկը ոսկի զգեստ է կտրել, ղրկել առաջը, նա էլ կյեցել է, ձին եր իլել, եկել, տռնովր նի մըտնելիս ասել, թե՝ էս մեր տունը չի, ո՞ւր եմ գամ: Կնիկն էլ ասել է վախիր միր, քու տունդ է, եկ: Էս մարդն էլ գնացել է, մին քանի օրից ետը թագավորին կանչել ի՛ւրա՛նց տուն ու շատ պատիվ են արել ու շատ շամբանիո գինի և ուրիշ բաներ էլ են պա՛ցել: Ետով էս թագավորը ուրիշ սենյակ է գնացել, մին արծաթի տալերք տրել են մին արծաթի պոտնոցում ու էն մարդին բերած շհանուռը կտրել, տրել տալերքումը: Որ ակները տալերքին միջին կուտվել է, ետով տարել են թագավորին ըռաջին տրել: Թագավորն է, եշել է, եշել, զարմացել ու ետով նոր բարեկամացել են ու թագավորը ի՛ւրա՛ն աղջկանր բաժինք ու գանձ է տըվել ու մին ել նոր հարուստացել են:

Աստվածանից իրեք խնձոր...

## 91.ԹԱԳԱՎՈՐԻՆ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին թագավոր։ Էս թագավորիս էլ իլել է իրեք տղա։ Էս թագավորս ո̀ւրա̀ն տղորցն ասել է. «Որ ես մեռնեմ, ինձ տարեք այսինչ տեղը թաղեցեք, իմ վերաս էլ մին տուն շինեցեք ու գնացեք այսինչ տեղը մին բո̀ւլբո̀ւլ կա, բիրեք սենյակի մեջիցը կախ տըվեք»։ Ետով որ էս թագավորը մեռել է, տարել են էն տեղը թաղել ու վերան էլ մին սենյակ շինել։ Ետով մեծ տղան ասել է. «Ի՞նչ անեմ, մեռել է, հիմիկ նրա հոգսն էլ ե՞մ քաշելու»։ Մեջնակն էլ է էնպես ասել։ Բայց փոքրն էլ ասել ա. «Ես կըգնամ էն բո̀ւլբո̀ւլը պիրեմ, խե՞ իմ հայրը ինձ հմար գանձ է պահել, ես կըգնամ պիրեմ»։

Էս փոքր տղան գնացել է, մեծն ու մեջնակն էլ հետիցը գնացել են։ Մին եղեգնի ծմակ է եկել ըռաջնին, էս ծմակովը գնացել են տեսել մին տեղ իրեք ճանապար. մինը՝ նեղ, մինը՝ նրանից նեղ, մինն էլ՝ լայն ու էնտեղ էլ մին քար տրա̀ծ, էն քարին վերա գրած, թե. «Ով որ լայն ճանապարովը գնա՝ ետ տա̀ռնա̀, նրանից նեղովը գնա՝ կամ ետ տա̀ռնա̀ կամ ոչ, որ նրանից փոքրովը գնա՝ ետ չի տա̀ռնա̀»։ Էս ծմակիցը երեք եղեգն են կտրել, տրել էս քարին տակին ու ասել. «Մեծը մեծ ճանապարովը գնա, մեջնակը մեջնակ ճանապարովը գնա, փոքրը փոքր ճանապարովը գնա. ու ով որ շուտ գա, տեսնա էս եղեգն էստեղ՝ ետ տառնա, գա մեր հարային»։ Ետով գնացել են։

Էս մեծ եղբայրը գնացել է մին դարբնի աշակերտ նի մտել, հացը դարբնիցը, շորը ո̀ւրա̀նիցը. տարենը էրկու ապասի։ Մեջնակն էլ գնացել է մին հաց թխողի աշակերտ մտել, հացը հաց թխողիցը, շորը ո̀ւրա̀նից։ Էս փոքրն էլ գնացել է տեսել մին պալատ. էս պալատովը նի է մտել, տեսել մին գեղեցիկ կնիկ նստած։ Էս կնիկն ասել է. «Ո՞ւր ես եկել, էս է վիշապազը յոթ օր է ուրիշ տեղ, էսօր գալու է, քեզ կուտի»։ Էս տղան ասել է, «Բա ի՞նչ տեղ մտնեմ»։ Նա էլ ասել է, թե. «Նի մուտ տախտին տակը»։ Էս տղան էլ ասել է. «Որ վիշապազն գա ասի, թե՝ էտ ի՞նչ մարդահոտ է, ասի՝ իմ եղբայրը եկել է»։ Ետով նի է մտել տախտին տակը։ Վիշապազն եկել է ասել, թե՝ էտ ի՞նչ մարդահոտ է։ Էս կնիկն էլ ասել է. «Տո̀ւ սարերիցը, թուփերիցն ես գալիս, մարդահոտը քեզանից է»։ Էս վիշապազն էլ ասել է. «Չէ՛, ինձանից չէ»։ Էս կնիկն էլ ասել է. «Թե իմ եղբայրը գա, էտպես ե՞ս անելու»։ Վիշապազն էլ ասել է. «Թե մեծն է եկել՝ աջիականջն է մնալու, թե մեջնակն է եկել՝ ձախ ականջն է մնալու, թե փոքրն է եկել, աչքիս վերա է եկել»։ Էս կնիկն ասել է.

«Փոքրն է եկել»: Վիշապազն էլ ասել է. «Աչքիս վերա է եկել»: Ետով էս տղան տախտի տակիցը տուս է եկել, տրա համար փլավ են եփել: Ետով էս վիշապազն ասել է. «Ո՞ւր ես գնում»: Էս տղան էլ ասել է, թե. «Գնում եմ այսինչ տեղը մին բո՛ւլբո՛ւլ կա, պիրեմ»: Էս վիշապազն էլ ասել է. «Գնալ միր, եկ քեզ հարյուր ջորաբեռը գանձ տամ, եկ ետ տա՛ռ»: Էս տղան էլ ասել է. «Չէ՛, ես գնալու եմ»: Ետով էս վիշապազն ասել է. «Տո՛ւ որ գնում ես, ես հարյուր տարեկան եմ, իմ եղբայրը երկու հարյուր տարեկան է. գնա՛ այսինչ տեղը՝ կըհասնես նրա մոտ»: Ու մին գիր էլ է տըվել, թե՝ տար տուր նրան:

Էս տղղան գնացել է, գնացել, տեսել մին քաղաք, էս քաղաքովը նի է մտել, տեսել՝ մին պալատ, էս պալատովը նի է մտել, տեսել՝ մին գեղեցիկ կնիկ նստած: Էս կնիկն ասել է. «Ո՞ւր ես եկել, էս է վիշապազը յոթ օր է ուրիշ տեղ, էսօր գալու է, քեզ կուտի»: Էս տղան էլ ասել է. «Բա ի՞նչ տեղ մըտնեմ»: Թե. «Նի մուտ տախտի տակը»: Էս տղան էլ ասել է. «Որ վիշապազը գա ասի, թե՝ էտ ի՞նչ մարդահոտ է, ասի՝ իմ եղբայրը եկել է»: Ետով նի է մտել տախտի տակը: Վիշապազը եկել է, ասել, թե. «էտ ի՞նչ մարդահոտ է»: Կնիկն էլ ասել է. «Տո՛ւ սարերից, թուփերից ես գալիս, մարդահոտը քեզանից է»: Էս վիշապազն էլ ասել է. «Չէ՛, ինձանից չէ»: Էս կնիկն էլ ասել է. «Վայ թե իմ եղբայրը գա, էտպես ե՞ս ընելու»: Վիշապազն ասել է. «Եթե մեծն է եկել՝ աջիականջն է մընալու, թե մեջնակն է եկել՝ ծախի ականջն է մնալու, թե փոքրն է եկել՝ աչքիս վերա է եկել»: Էս կնիկն ասել է. «Փոքրն է եկել»: Վիշապազն էլ ասել է. «Աչքիս վերա է  եկել»: Ետով էս տղան տախտի տակիցը տո՛ւս է եկել, տրա հմար փլավ են եփել: Ետով էս վիշապազն ասել է. «Ո՞ւր ես գնում»: Էս տղան ասել է, թե. «Գնում եմ այսինչ տեղը մին բո՛ւլբո՛ւլ կա, պիրեմ»: Էս վիշապազն էլ ասել է. «Եկ քեզ հարյուր ջորաբեռը գանձ տամ, ետ տա՛ռ»: Էս տըղան էլ ասել է. «Չէ՛, ես գնալու եմ պիրեմ»: Էս վիշապազն ասել է. «Տո՛ւ որ գնում ես, ես երեքհարյուր տարեկան եմ, իմ մայրը երեքհարյուր հազար տարեկան է, գնա նրա մոտ, էն է այսինչ տեղը ու մին փութ մազտաք էլ սրտիցտ կպցրու, գիրերը վզիցդ կախ տուր ու գնա: Որ մին վերստ մնա թե հըսնես, իմ մայր քեզ ծիքյ է տալու, տու էլ գնա. որ ուզի քեզ կուլ տա՝ մազտաքեն կուխի բերանը ու գիրերն էլ ըռաջին վեր ածի ու ասի, թե՝ քու տղորցիցտ գիր եմ պիրել»:

Էս տղան էլ գնացել է, գնացել: Որ մին վերստ տեղ է մնացել թե հասնի,

էս վիշապազին մայրը ծիքյ է տըվել: Էս տղան գնացել է, առի մոտացել: Վիշապազին մայրը ուզացել է կուլ տա, էն տըղան մազտաքեն կուխել է էս վիշապազին մորը բերանը ու գիրերն էլ ըռաջին վեր ածել ու ասել. «Քու տղորցիցտ գիր եմ բիրել»: Էս վիշապազին մայրն ասել է. «Բարով ես եկել, եկ էստեղ նստի»: Նա էլ գնացել է: Ետով էս տղան ասել է. «Եկել եմ էս բանիս հըմար»: Էս վիշապազին մայրն էլ ասել է. «Եկ քեզ հարյուր ջորա-բեռը զանձ տամ, ետ տառ»: Էս տղան ասել է. «Չէ՛, ես գնալու եմ»: Էս վիշապազին մայրը գնացել է մին տաշտում մին ուղտ, մին ոչխար մորթել, կորեկը ածել վերան, ետով բոլոր ղուշերը եկել են, որ ուտեն: Էս վիշապազին մայրը տեսել է, որ մին հարյուր տարեկան ու Գորիգոր ագռավ եկավ: Էս վիշապազին մայրն ասել է. «Այսինչ բ՟ուլբ՟ուլին տեղը ո՞վ ա գիտում»: Էս ագռավն ասել է. «Ես գիտում եմ տեղը»: Վիշապազին մայրն էս տղին էս ագռավի ոտիցը կապել է, թե. «Տար այսինչ բ՟ուլբ՟ուլի մոտ»: Էս ագռավն էլ տարել է մին պալատի մոտ վեր տիրել: Էս տղան էս պալատովը նի է մտել, տեսել՝ էս պալատին ըռաջին մին մեծ պարտեզ, ու տեսել է էն բ՟ուլբ՟ուլը վանդակին մեջին ծառիցը կախ տըված. ու մին գեղեցիկ կնիկ էլ ծառին տակին քուն: Էս պարտեզի մոտն էլ մին գոմ է իլել: Էս գոմն է նի մտել, տեսել՝ էս գոմումը երկու հարյուր ձի. տրանց միջիցը մին լավ ձի է ջոկել, եր իլել ու բ՟ուլբ՟ուլն էլ տրել ըռաջին, ձին քշել: Գնացել է մին տեղ վեր եկել, քուն իլել:

Էս գեղեցիկ կնիկը եր է կացել տեսել՝ բ՟ուլբ՟ուլը տեղըռչ: Գնացել է գոմը, տեսել մին ձին տեղըռչ, պակաս: Ու էս գոմումն էլ մին լավ ձի է իլել. որ տիրուջը տեսնում է իլել՝ լավ ձի է իլել տա՟ռնում, բայց որ ուրիշի է իլել տեսնում՝ էշ է իլել տա՟ռնում: Էս գեղեցիկ կնիկը լավ ձին եր է իլել, քշել գնացել, եկել էս տղին գտել: Էս կնիկն ասել է» «Դու ի՞նչ ես, որ իմ բ՟ուլբ՟ուլս վեր ես կալել, եկել»: Էս տղան էլ ասել է. «Ես էսպես եմ»: Էս կնիկն էս տղին ասել է. «Եկ կռիվ կենանք՝ եթե ես քեզ կոխեմ՝ քու գլուխտ կտրեմ. եթե տու կոխես՝ ես քու կնիկտ տառնամ»: Էս տղան կընկանը կյ՟ուզիլիս տեսել է, որ պրպըզած է կյ՟ուզ՟ում: Կնիկ է. միտկ է ըրել, որ կնիկը ծըծիցր նվազ կինի: Կոխ կենալիս տեղը էս տղան էս կնկանը ծծից բռնել է՝ էս կնիկը ինկել է տակը: Ետով էս տղան էս կնկանը մարդն է տա՟ռեր: Ետով ուզացել են զան թագավորին տունը, կնիկն ասել է. «Ինձ շատ զանձ ունեմ, եկ ետ տա՟ռնանք պիրենքյ»: Էս տղան էլ ասել է. «Լա՛վ»: Ետ են տա՟ռել էս կնկանը բոլոր

հարուստությունը էս ձիանցը բեռնալ ու ո՛ւրա՛նք էլ ա՛մա՛քյը մին ձի եր իլել, եկել էն իրեք ճանապարումը վեր եկել, տեսել որ դեռ եղբայրքը եկածոչ, էն եղեգն էնտեղ: Էս տղան կընկանը ասել է. «Դու էտտեղ նստի, ես գնամ իմ եղբորը յոր օնեմ, գամ»: Ետով գնացել է, տեսել մեծ եղբայրը դարբնի աշակերտ նի մտած՝ տարենը էրկու ապասը էրկու ապասին տրվել է դարբնին՝ եղբայրը եր կալել, գնացել տեսել մեջնակ եղբայրը չո՛րա՛կչյու աշակերտ նի մտած՝ տարենը վեց շահի: Վեց շահին տվել է չո՛րա՛կչյուն, եղբորը եր կալել, եկել էն իրեր ճանպան: Էս մեծ ու մեջնակ եղբայրը տեսել են, որ ո՛ւրա՛նց փոքր եղբայրը բո՛ւլբո՛ւլը բերել է ու նրան էլ կնիկ ունի, ինքն էլ թագավոր է նստելու ու ո՛ւրա՛նք էլ նրա ձեռքին տակին ծառա, սրա հմար փռնել են աչքերը հանել, քշտին տրել, ո՛ւրա՛նք գանձը ու բո՛ւլբո՛ւլը, կնիկը վեր կալել, գնացել: Էս բո՛ւլբո՛ւլը տարել են սենյակին մեջիցը կախ տըվել, բայց բո՛ւլբո՛ւլը կարդել չի:

Ետով մին աղավնի ու էլ մին ձագ եկել են տեսել՝ էս տղան էնդեղ վեր ինգած: Էս ձագն ո՛ւրա՛ն մորն ասել է. «Խեղճ տղա, բա սրան աչքերին մին ճար չի՞ ինիլ»: Մայրն էլ ասել է. «Խե՞ չի ճար ինիլ, հիմիկ որ մունք տո՛ւրո՛ւր կյանք, իրեք տիրն ա վեր ինգյնելու, նա աչքերը տնի տեղը, էն տիրնը եր ունի քսի աչքերը, կառողջանա»: Ետով դրանք տո՛ւրո՛ւր են եկել, իրեք տիրն է վեր ինգյել, էս տղան աչքերը տրել է տեղը ու էն տիրնը քսել աչքերը, սղացել է: Ու էն տղան ետով գնացել է թագավորի ոսկերիչին աշակերտ նի մտել: Ետով էլ կնիկը էս մեծ եղբորը վերա փսակելիս ժամանակը էս փոքր եղբայրը գնացել է մարդուցը, կնանուցը ըսպանել ու ինքը էս կնկանը եր կալել ո՛ւրա՛ն կնեկյը շինել ու ինքն էլ հորը տեղը թագավոր նստել:

Աստվածանից իրեք…

### 92.ՈՒՂԽԱՅԻՆ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին աղքատ մարդ: Էս աղքատիս էլ իլել է մին տղա: Մին ժամանակ էս մարդս էլ ասել է, թե. «Տղաս տանես շակերտ տամ»: Ետով որդին վեր է կալել, գնացել հասել մին գետ: Էս գետովը անց կենալիս ժամանակը էս մարդս ծարավ է իլել, գետին մին տեղիցը ջուր է խմել ու ասել. «Ուխա՛յ»: Գետի միջիցը մին մարդ է տո՛ւս եկել ու հարցրել.«Ի՞նչ ես ասում»: Էն մարդն էլ ասել է. «Տղաս ուզում եմ շակերտ տամ»: Ուղխայն էլ ասել է. «Ինձ շակերտ տու»: Էն մարդն էլ տըվել է: Ետով Ուղխայը էս տղին

վեր է կալել ու մտել գետի մեջը: Էս մարդս էլ գնացել է ո՛ւրա՛նց տուն:

Մին քանի օր անց է կացել, էն մարդը եկել է էն ջրիցը խմել ու ասել.«Ուխա՛յ»: Ուղխայը էն վայրկենին տո՛ւս է եկել, թե. «Ի՞նչ ես ասում»: Էն մարդն էլ ասել է, «Մին թուման տու, խարջեմ»: Ուղխայն էլ հանել է մին թուման տըվել: Ետով էս մարդս էլ գնացել է ո՛ւրա՛նց տուն, Ուղխայն էլ գնացել է ո՛ւրա՛ն տեղը:

Էս մարդս էն թումանը խարջելից ետը էլի գնացել է ջրիցը խմել, հետո ասել. «Ուխա՛յ»: Ուղխայը տո՛ւս է եկել, հարցրել, թե. «Ի՞նչ ես ասում»: Էն մարդն էլ ասել է, թե. «Մին թուման տու, խարջեմ»: Ուղխայն էլ հանել է մին սեղան տըվել, թե. «Տար, բայց փողոցներումը վեր չի տնես»: Նա էլ ասել է. «Լա՛վ»: Հետո Ուղխայն էլ նի է մտել ո՛ւրա՛ն տեղը: Էն մարդն էլ սեղանը վեր է կալել, գնացել դեպի տուն: Ճանապարհին ինքը-ինքը ասել է, թե. «Ուղխայը որ ասեց՝ թե ճանապարհին վեր չի տնես, մին նրա ասածին հակառակը անեմ՝ տեսնեմ ի՞նչ կինի»: Սեղանը վեր է դրել, տեսել, որ մեջը լցվավ, աշխարքումս ինչ կերակուր ու ուտելեղեն և թաց միրգեղեն ու ամեն բան, ինչ որ աշխարքումս կըգտնվի ուտելի համար: Էս մարդս որ տեսել է, ուրախացել է, թե՝ էս լավ տառավ: Ետով վեր է կալել, տարել ո՛ւրա՛նց տուն և ամեն ժամանակ սիրտը ուզած զատը ուտում է իլել և էն սեղանիցը ինչ-քան բան ուտես՝ չի կլխիլ: Մի քանի օրից ետը էս մարդս ասել է, թե՝ թագավորին հյուր կանչեմ: Ետով կանչել է ո՛ւրա՛նց տուն ու էն սեղանը տրել առաջին: Թագավորը էս որ տեսել է՝ զարմացել է: Ետով հյուրը պրծընելիցը ետը թագավորը գնացել է ո՛ւրա՛նց տուն և մարդ ղրկել, էն սեղանը էն մարդին ձեռնիցը խլել ու ինքը վեր կալել: Էս մարդս որ տեսել է թագավորը ձեռնիցը ինքյ կալավ, ճարը կտրելով գնացել է էլի էն ջրիցը խմել ու ասել. «Ուխա՛յ»: Ուղխայը տո՛ւս է եկել, թե. «Ի՞նչ ես ասում»: Էն մարդն էլ ասել է, թե. «Մին թուման տու, խարջեմ»: Ուղխայն էլ մին էշ է տվել, թե. «Տար, բայց ճանապարհին ոռին հրեսոչ»: Էս մարդս ասել է. «Լա՛վ»:

Ետով էշը վեր է կալել գնացել, Ուղխայն էլ նի է մտել ո՛ւրա՛ն տեղը: Էս մարդը ինքը-ինքը ասել է. «Մին ոռին հրեմ, տեսնամ ի՞նչ կդառնա»: Ետով չուխան հանել է փռել ու էշին հրել, տեսել է որ ոսկի փթրեց: Ուրախացել է ու ասել. «Լա՛վ տա՛ռավ, սրանով կիհարուստանամ»: Ետով տարել է ո՛ւրա՛նց տուն ու գոմումը կապել ու ամեն օր էլ ոռին հրել է, ոսկի է փթրել: Ու ամեն ժամանակ էլ ո՛ւրա՛նց տուն աղքատ է իլել գամ, հա՛բկյան ոսկով լցունում է

իլել ու տամ ՟իրա՟ն։ Մին ժամանակ էս մարդին կնիկը էս էշը վեր է իլել, գնացել բաղնիքը ու էշը տվել բաղեպանին, թե՝ ռռին իրեսոչ հա՛, ոսկի կըփթրի։ Բաղեպանն էլ ասել է, թե՝ լա՛վ։ Ետով հետը տարել է թե կապի, ինքը-ինքը միտք է արել, թե մին ռռին իրեմ, տեսնեմ։ Ետով իրել է, տեսել որ ոսկի փթրեց։ Ինքը-ինքը ասել է, թե. «Լա՟վ տա՟ռավ, ինձ էլ սրա պես մին էշ ունեմ»։ Ետով էս կնկանը էշին համետը վեր է կալել, դրել ՟իրա՟ն էշին վերա ու ինքը եկել ՟իրա՟ն տեղը, թե էս էշին հետ փոխըս կըքիցիմ։ Էս կընիկը բաղնիքիցը տ՟իւս է եկել, բաղեպանին ասել, թե՝ էշս պիր։ Բաղեպանն էլ գնացել է ՟իրա՟ն էշը պիրել, տըվել էն կնկանը։ Էն կնիկն էլ գյիդացել է թե՝ ՟իրա՟ն էշն է, եր է իլել, եկել ՟իրա՟նց տուն։ Մին ժամանակ էս էշին ռռին իրել են, ոսկի չի փթրել, մինել են իրել, էշը ոսկի չի փթրել. շատ որ իրել են՝ թրքել է։ Էս որ տեսել են, իմացել են, որ բաղեպանին էշն է, ՟իրա՟նց էշին հետ փոխել է։ Գնացել են բաղեպանին ասել, թե՝ իմ էշս ինձ տուր։ Բաղեպանն էլ փռնել, գլուխը թակել է, թե՝ դու ինձ էշ ես տըվե՞լ. կորի էստեղից։

Էս մարդն էլ ճարը կտրելով գնացել է էն ջրիցը խմել ու ասել. «Ուխա՛յ»։ Ուղխայր տ՟իւս է եկել, թե. «Ի՞նչ ես ասում»։ Էն մարդն էլ ասել է. «Մին թուման տուր, խարջեմ»։ Ուղխայն էլ մին երկանք է տըվել, թե. «Էս տար, բայց ճանապարին աղեսոչ»։ Էս մարդն էլ ասել է. «Լա՛վ»։ Ետով Ուղխայն էլ նի է մտել ՟իրա՟ն տեղը։

Էս մարդը երկանքը վեր է կալել, եկել ճանապարին ասել է, թե՝ մին վեր տինեմ, աղեմ։ Հետո չուխան փռել է ու երկանքը վեր ա տրել ու աղել, տեսել, որ ոսկի է վեր տառնում։ Վեր է կալել, տարել ՟իրա՟նց տուն։ Մին ժամանակ աղելիս տեղը մին քանի սրիկա եկել են, տեսել որ էս երկանքը ոսկի է աղում։ Բռնել են էս մարդին թակել ու ձեռքիցը խլել։ Էս մարդիս ճարը կտրելով, գնացել է առաջվան նման Ուղխային ասել, թե՝ մին թուման տուր խարջեմ։ Ուղխայն էլ մին կարկաժ, երկու կոպալ է տվել, ասել. «Տար, բայց ճանապարհին թակես ոչ»։ Էս մարդն էլ ասել է. «Լա՛վ»։ Հետո Ուղխայը նի է մտել ՟իրա՟ն տեղը։ Էս մարդը էլի էն կարկաժը վեր է կալել, եկել էլի ճանապարումն ասել է. «Մին թակեմ, տեսնեմ՝ ի՞նչ կըտառնա»։ Հետո էն երկու կոպալով կարկաժին մին քանի անգամ թխել է, տեսել որ կարկաժիցը մարդիք տ՟իւս եկին, թե ՟իրա՟ն թակեն, սպանեն։ Էս սըհաթը ասել է. «Տմբըլթը՛ս, տըմբլթը՛ս»։ Էն մարդիքը մինել նի են մտել կարկաժը։

էս մարդը որ տեսել է, ասել է. « Էս լա՛վ տա՛ռավ, սրանով իմ սեղանս, երկանքս ու էշս ինքյ կունեմ»: Ետով գնացել է ո՛ւրա՛նց տուն:

Մին քանի օր կացել է, ետով էն կարկաժն ու կոպալնեն վեր է կալել, տարել բաղեպանին ասել, թե. « Իմ էշս ինձ տուր»: Բաղեպանը էս որ լսել է, եր է կացել էս մարդիս թակել, թե տո՜ւս քցի: Էն մարդը բաղեպանին ասել է, թե. «Ինձ մին հնարք ունեմ, էն անեմ, հետո տո՜ւս կյամ»: Բաղեպանն էլ ասել է, թե՝ «Արա տեսնեմ»: Ետով էս մարդը կոպալներովը մին տասը անգամ կարկաժին թխել է, էն սհաթը էն չոմաղավոր մարդիքը տո՜ւս են եկել, թե ո՛ւրա՛ն թակին, ձեռքը դեպի բաղեպանին է մեկնել, թե՝ նրան: Էն սհաթը չոմաղավորնեն նրան թակել են, սպանել: Ետով էս մարդս գնացել է էշը վեր կալել, պիրել ո՛ւրա՛նց տուն: Էս էշը որ ինքյ է կալել, մինել գնացել է էն սրիկյուցը մոտը, տեսել որ երկանքը նստած աղում են: Ետով գնացել է կշտին կազնել ու մինքանի անգամ կոպալներովը կարկաժին թխել: Էն սհաթը չոմաղավորնեն տո՜ւս են եկել, սրիկյուցը անձնին ինկել, թակել՝ ըսպանել: Ետով էս մարդը երկանքը վեր է կալել, տարել ո՛ւրա՛նց տուն: Հետո կարկաժը, մինել կոպալն են վեր է կալել, տարել թագովորին տունը ու թագավորին ասել, թե. «Իմ սեղանս ինձ տուր»: Թագավորն էլ կզնվել է ու ծառաներին հրամայել, թե, «Սրա՛ն թակեցեք, տո՜ւս քցեցեք»: Էս մարդս որ լսել է, կոպալովը մին քանի անգամ կարկաժին թխել է: Էն սհաթը չոմաղավորնեն տո՜ւս են եկել, ծառաներին ու թագավորին թակել, սպանել: Ետով էս մարդը գնացել է ո՛ւրա՛ն սեղանը վեր կալել, գնացել ո՛ւրա՛նց տուն:

Սրան ինքյ առնելիցը ետը բերել է ո՛ւրա՛նց տուն ու մին քանի տարուցը ետը գնացել է, թե. «Տղաս ինձ տուր»: Ուղխայն էլ տղան ո՛ւրա՛ն է տըվել: Ետով գալիս է ժամանակը, էս տղան հորն ասել է. «Տո՛ւ գնա, ես կյամ եմ»: Ետով հայրը մին քիչ գնացել է, էս տղան ջեյրան է դառել ու եկել հորը կշտով գնացել: Հայրը ուզացել է թե բռնի, կարողացել չի: Էս տղան փախել է, գնացել մին տեղ նստել: Հայրը եկել է, տեսել էնտեղ նստած, ո՛ւրա՛ն սպասում է: Հայրը տղին հետ էտ ամեն պատահմունքը պատմել է: Տղան էլ ասել է, թե, «Ինչի՞ չիր ինձ կանչում, որ գամ տեղ, բռնենք»: Հայրն էլ ասել է, թե. «Շուտ փախավ, կարել չէիր հասնել»: Ճանապարհին գնալիս ժամանակը տղան հորն ասել. «Մին քիչ գնա, էս է կյամ եմ»: Հայրը երբ որ գնացել է, ինքը բախրա է դառել ու հորը կշտով եկել գնացել մին տեղ մարդ դառել, էնտեղ նստել: Հայրը եկել է տեսել տղան էնտեղ նստած: Էլի տղին հետ էն

պատահմունքը պատմել է, տղան էլ առաջըվան պատասխանն է տըվել: Հայրն էլ ի̀րա̀ն առաջվան պատասխանն է տըվել, հետո եկել են ի̀րա̀նց տուն: Մին քանի ժամանակիցը ետը էս տղաս մին փունջ մանուշակ է պահել ու նի մտել [...][1] մեջը: Հայրը, մայրը շատ ման են եկել, գտել չեն, եկել են էս [...][2]մոտ, ման եկել, տեսել, որ մին փունջ մանուշակ էնտեղ տրած: Վեր են կալել հոտ քաշել ու էլի տրել տեղը: Էն ժամանակն էլ ծմեռն է իլել, էսպես շատ որ ման են եկել, էս տղաս մինել մարդ է տա̀ռել, եկել քուրսուն տակին թեք ինգել: Հայրը, մայրը մինեը եկել են, տեսել, որ էնտեղ թեք ինգած, հարցրել են, թե. «Ո՞րտեղ էիր»: Էն տղան էլ ի̀րա̀ն բաները նաղլըն է ըրել:

Մին քանի օրից ետը տղան հորն ասել է, թե. «Հա՛յր, ես մին լավ քուռակ տա̀ռնամ, տու էլ իմ գլուխս մին կապ զցիր ու ինձ եր իլ, տար խանեն տոնովը տես ու տեն քշի: Խանը որ կըտեսնե ես լավ քուռակ եմ, ինձ կառնի, ու էն կապն էլ ինձ հետ ծախեսոչ: Ու ասի՝ ուրիշ կապ չի քցես գլուխը: Ու իմ գինս էլ որ հրցնի, ասի՝ հարյուր հազար ոսկի»: Էս հայրն էլ ասել է՝ լա՛վ: Ետով էս տըղան մին լավ քուռակ է տա̀ռել, հայրն էլ կապը զցել է գլուխը, վեր իլել տարել խանին տոնովը տես ու տեն ման ածել: Խանը որ տեսել է լավ քուռակ է, հարցրել է էն մարդիցը, թե. «Կըծախե՞ս»: Մարդն էլ ասել է. «Կըծախեմ»: Խանն էլ ասել է. «Գինը քանի՞ է»: Էն մարդն էլ ասել է, «Հարյուր հազար ոսկի»: Էս խանն էլ տըվել է: Ետով էս մարդը ձին տըվել է խանին ու կապը գլխիցը հանել, ինքը վեր կալել: Խանն ասել է, թե, «Բա կապը խե՞ չես տամ»: Էն մարդն էլ ասել է. «Կապը ծախում չեմ»: Ետով էս մարդը խանին ասել է, թե. «Տրա գլուխը կապ չի զցես»: Խանն էլ ասել է. «Լա՛վ»: Հետո էս կապը վեր է կալել, եկել ի̀րա̀նց տուն: Մին երկու օրից ետը էս տղան որ քուռակ է իլել, մինել մարդ է տա̀ռել, եկել ի̀րա̀նց տուն: Էսպես, էս տղան օձ, ուղտ, ջեյրան, բախրա ու փունջ մանուշակ է տա̀ռել, հայրն էլ տարել է ծախել ուրիշ խաների վերա, էն խաներն էլ շատ փող են տըվել: Էսպես, շատ հարուստացել են, մին մեծ պալատ են շինել ու ի̀րա̀նք էլ հարստացել:

Աստվածանից ...

[1] Անընթեռնելի (Ծ.Կ):
[2] Անընթեռնելի(Ծ.Կ)

## 93.ԿԵԾԱԿ ԹՌԻՆ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին թագավոր: Էս թագավորիս էլ իլել է իրեք տղա: Էս թագավորս էլ ծեր է իլել: Մին ժամանակ մին պառավ կնիկ է եկել թագավորան ասել. «Թագավորն ապրած կենա, ինչո՞ւ չես մինին ղրկում այս ինչ վիշապազներին թագավորին թոքը բիրի, որ դու ուտես, երիտասարդանաս»: Թագավորն էլ ասել է. «Ո՞վ կըպիրի, ով չի պիրիլ»: Պառավ կնիկն ասել է. «Քու տղորցը մինը»:

Ետով թագավորը մեծ տղին ղրկել է: Մեծ տղան էլ վեր է իլել մին ձիու, գնացել վիշապազին տանը կուշտը: Էնդեղ ձոր է իլել, գնացել է էնտեղ վեր եկել ու քնել: Վիշապազներին թագավորը որ տեսել է, էնտեղ մին կաղլիկյ վիշապազն է իլել, նրան հրամայել է, թե. «Կաղլիկյ վիշապա՛զը, կաղլիկյ վիշապա՛զը, գնա քար թուլուլ տու, էն տղին էնդեղ ըսպանի»: Էս վիշապազը գնացել է որ թուլուլ տա, էս տղան որ տեսել է, ձին վեր է իլել փախել, եկել ի՛ւրա՛նց տուն:

Ետով թագավորը միջնակ տղին է ղրկել, էլի մեծ տղին պես ետ է տա՛ռել: Ետով թագավորը փոքր տղին ղրկել է: Փոքր տղան էլ գնացել է: Գնալիս ժամանակն էլ մորը ձեռքը պաչել է ու ասել. «Կամ կըգամ, կամ չեմ գալ»: Մայրն էլ ասել է. «Ո՛րդի, որովհետև դու գնում ես, գնա քու հոր ասի, թե՝ ինձ որ ղրկում ես, քո Իմաստուն ձին ու Կեծակ թուրը տու, որ գնամ»: Էս տղան էլ գնացել է ասել թագավորին: Թագավորն էլ բարկանալով, դահիճին կանչել է տրվել ու որդուն կախ տալ տըվել, որ ըսպանի: Թագավորին մեծամեծները խնդրել են, թե. «Ըսպանիլ մի, Կեծակ թուրը ու Իմաստուն ձին տուր»: Թագավորն էլ չի ըսպանել, Իմաստուն ձին ու Կեծակ թուրը տրվել է: Հետո էս տղան ձին վեր է իլել թուրը վեր կալել, գնացել վիշապազներին թագավորին տանը մոտը վեր եկել: Եվ ընդեղ մի ձոր է իլել, վեր է եկել, որ քնի: Էս տղին Իմաստան ձին ասել է. «Ո՛վ տղա, հիմիկ որ քուն ես լինում, էս է վիշապազներին թագավորն ասելու է՝ կա՛ղլիկյ վիշապազը, կա՛ղլիկյ վիշապազը, գնա քար թուլուլ տու, էն տղին ըսպանի: Ինչ ժամանակ կըգա որ քարը թուլուլ տա, էն ժամանակը ես իմ ոննովս քու գլխիտ կը թխեմ, դու էն սիաթը վեր կաց ու Կեծակ թուրը դեպի կաղլիկյ վիշապզը թուշ կալ՝ ոչ թե դեպի ինձ»: Էս տղան էլ ասել է՝ լա՛վ, ու քնել է:

Քիչ ժամանակից ետը վիշտապազներին թագավորը ասել է. «Կա՛ղլիկյ վիշապազը, կա՛ղլիկյ վիշապազը, գնա քար թուլուլ տու, էն տղին ըսպանի»:

Էն վայրկյանին ձին ոտնովը թխել է էն տղին գլխին: Էն տղան էլ վեր է կացել ու Կեծակ թուրը դեպի կաղլիկյ վիշապազը թուշ կալել, էնդեղ ըսպանել: Էսպես, ամեն վիշապազներին Կեծակ թրովը ըսպանել է: Հետո էս տղան գնացել է վիշապազներին թագավորին ըսպանել ու թոքը հանել, շեմքիցը կախ տըվել: Իմաստուն ձին ասել է, «Ո՛վ տղա, որովհետև դրա ըսպանեցիր, շեմքին տակը քանդի, յոթը բանալի կա, հանե»: Էս տղան էլ քանդել է, հանել և էնդեղ յոթը սենյակ է իլել փակած, գնացել է յոթը բանալիքովը էն յոթը սենյակը բացել՝ տեսել: Առաջինը որ բացել է, տեսել է որ գրերով լիքը: Երկրորդն է բացել, տեսել, որ միջին արծաթի ու ոսկի լիճեր կա: Նի է մտել երկուքանումը լղացել ու տո՛ւս եկել: Երրորդ սենյակն է բացել, տեսել, որ ոսկերիչ է բան անում: Չորրորդն է բացել, տեսել, որ միջին մին դարբին է բան անում: Հինգերորդն է բացել, տեսել, որ միջին մին կոշկակար է բան անում: Վեցերորդն է բացել, տեսել, որ մին վիշապազը նստած գիր գրելիս: Յոթներորդն է բացել, տեսել որ գորգով ծածկած և տռան զլուխումը մին շատ նախշուն փետուր տրա՛ծ: Էս տղան որ տեսել է, ասել է. «Ինչ լա՛վ նախշուն փետուր է, տանեմ այսինչ թագավորին ընձա»: Իմաստուն ձին ասել է, «Ո՛վ տղա, տանիլ մի, գլուխտ փորցանք կըգա»: Էս տղան մտիկ չի արել, վեր է կալել, տարել տըվել թագավորին: Էն պառավ կնիկը, որ էս տըղին հորը ասել էր, թե տղիտ մինին ղրկի վիշապազներին թագավորին թոքը բերի, որ դու ուտես երիտասարդանաս, եկել է էս մին թագավորին ասել. «Թագավորն ապրած կենա, էտ ես տեսել, թե տրա դուշը տեսնես, ինչպե՞ս կըզարմանաս»: Թագավորն էլ ասել է. «Ո՞վ կըբերի, ով չի բերիլ»: Պառավ կնիկն ասել է. «Դրա բերող տղան կըբերի»: Էս պառավ կնիկն էս խոսակցությունիցը ետը գնացել է էն տղին հորն ասել. «Քու տղատ էն է այսինչ թագավորի մոտ»:

Էս դուշ ուզող թագավորը էն տղին ասել է. «Գնա՛, բեր»: Էս տղան էլ վզա՛վ է կալել ու գնացել ձիին չամիչ տըվել ու ինքը մոտը լաց իլել, ձին ասել է. «Ես քեզ չի ասեցի՞ գլուխդ փորցանք կըգա: Դե գնա թագավորին ասի, թե մին ուղտ, մին գրիվ կորեկ տա»: Էս տղաս գնացել է թագավորին ասել, թագավորն էլ տըվել է: Հետո եկել է ձիին մոտ, ձին հարցրել է, թե. «Տըվա՞վ»: Էն տըղան ասել է, «Տըվավ»: Ետով ձին ասել է, թե. «Տար այսինչ տեղը մորթի էտ ուղտը ու կորեկը վերան շաղ տուր ու տըվել վիզումը կյաղլու կաց: Ու ինչ ժամանակ էն դուշը կըգա՝ դու կըբռնես»: Էս տղաս էլ

տարել է ամեն բանն արել և ինքն էլ վզումը կյաղլու կացել: Մի քիչ ժամանակից ետը տեսել է, որ էս է շատ թռչուն եկին: Հետո մին քիչ ժամանակ էլ կացել է, տեսել որ երկընքիցը մին թռչուն եկավ կաղնեց, չորս կողմին մտիկ տըվավ և տեսավ, որ մարդ չի կա, սկսեց ուտիլ: Էս տղաս էն ժամին թռչունին բռնել է և տարել թագավորին տըվել:

Էլի էն պառավ կնիկը եկել է էս թագավորին ասել. «Թագավորն ապրած կենա, էդ ես տեսել, զարմացել, եթե դրա Ոսկի ծամերավոր ախճիկը տեսնես, ինչպես կըզարմանա՜ս»: Թագավորն ասել է. «Ո՞վ կըբերի»: Պառավ կնիկն ասել է. «Տրա պիրող տղան կըբերի»: Հետո գնացել է էն տղի հորն ասել, թե. «Թու տղատ էն է այսինչ թագավորի քշտին»: Ոսկի ծամերավոր ախճիկ ուզող թագավորը էս տղին ասել է. «Ո՛վ տղա, հիմի էլ ես քեզանից Ոսկի ծամերավոր ախճիկն եմ ուզում»: Էս տղաս ասել է. «Լա՛վ»: Ետով գնացել է ձիին չամիչ տըվել ու ինքը լաց իլել: Ձին ասել է. «Է՜ ես քեզ չի ասեցի՝ գլուխդ փորցանք կըգա: Դե՝, գնա ասի, թե յոթը բեռը հաց թխի ու չորացնի, ետով էլ աղի, անուսրացնի»: Էս տղաս էլ թագավորին ասել է, թագավորն էլ կատարել է:

Հետո էս տղան Իմաստուն ձին վեր է իլել և էն յոթը ջորեպեռնը հացը վեր կալել, գնացել Ոսկի ծամերավոր ախճկանը տանը քշտին վեր եկել և մին բեռնը ձիին բեռնել ու մին հակն էլ ինքը վեր կալել, տրել կռնատակին ու գնացել Ոսկի ծամերավորի բակը: Աղախինները եկել են թե էս տղին թակեն, էս տղաս էն աղած հացը առաջներին շաղ է տվել: Էս աղախինները հացը կոխտամ չեն իլել, էլ չեն կարացել, թե թակեն: Ետո էս տղան որ ամեն բեռները շաղ է տըվել, ձին վեր է իլել, գնացել Ոսկի ծամերավորի ծամերիցը բռնել, ուզացել թե տնի գավակին, էն վայրկենին Ոսկի ծամերավոր ախճիկն էն տղին ասել է, «Քար տա̀ռ»: Էն վայրկենին քար է տա̀ռել, ձին էլ մնացել է կաղնած: Աղախինները եկել են տեսել՝ էս տղիս քար տա̀ռած, Ոսկի ծամերավորին աղաչանք են արել, թե. «Տիկի՛ն, տիկի՛ն, ի՜նչ գեղեցիկ տղա է, վերկցրու»: Ոսկի ծամերավոր ախճիկն ասել է, թե. «Գնացեք կուլան ջուր ածեցեք, բերեք» Աղախիննեն գնացել են կուլան ջուր ածել ու բերել տվել Ոսկի ծամերավորին: Ոսկի ծամերավոր ախճիկն էլ ջուրը էս տղին վերա շաղ է տըվել՝ էն րոպեին էս տղաս վեր է կացեք ու ձին վեր իլել ու Ոսկի ծամերավորի ծամերիցը բռնել ու տիրել գավակին, տարել թագավորին տունը: Թագավորն էս Ոսկի ծամերավոր ախճկանը որ տեսել

է շատ է գեղեցիկ, ասեք է. «Ինձ եկ»: Ասել է թե. «Գալ չեմ»: Էսպես շատ որ ասել է. «Ինձ եկ», էն ախճիկն ասել է, թե. «Ինչ ժամանակ իմ ձիանցը կաթնովը կըլղանաս՝ ես քեզ կըգամ»: Թագավորն ասել է, թե. «Ո՞վ կըբերի, ո՞վ չի բերիլ»: Էն ախճիկն ասել է. «Ինձ բերող տղան կըբերի»: Ետով թագավորն էլ էն տղին ասել է, էն տղան էլ գնացել է ձիին չամիչ տըվել ու լաց իլել: Ձին էլ էն տղին ասել է, թե. «Ես չեմ կարող մերկ գնալ քուռակներիս մոտ: Գնա թագավորին ասի, թե ինձ համար մին ոսկի զգեստ կըտրիլ տա ու մին չուվան տա, որ աշխարքովս երեք անգամ ու կես պատ կյա̀ և մին տիկի էլ ձիթենու եղ»: Էս տղան էլ գնացել է թագավորին ասել, թագավորն էլ տըվել է»:

Ետով էս տղան ձին եր Է իլել և նրանք էլ եր կալել ու գնացել ծովին կուշտը: Ետով էս ձին ոսկի զգեստը կյեցել է ու չուվանը վզիցը կապել, ձիթենու եղը ինքը վեր կալել և տղին ասել. «Ո՛վ տղա, էս է որ նի մտնեմ, մտիկ տու, թե որ ձիթենու եղը տակ անի՝ տըվել ինձ կախ տու, բայց թե երես անի՝ ձիք տու, ինձ որ հանես»: Էս տղան էլ ասեք է. «Լա՛վ»: Ետո էս ձին նի է մտել ծովի մեջք ու գնացել քուռակների մոտը, խրխնջացել. էն ժամին քուռակնեն եկել են: Էս ձին էս որ տեսել է՝ ձիթենու եղը բաց է թողել: Որ էն րոպեին երես է արել, էս տղան տիկը տեսնելն ու պես չուվանը ձիգ է տըվել ու ձին տո̀ւս կալել, տեսել, որ քուռակները եկին ոչ: Մինել է նի մտել ձին, էլի առաջվան նման չեն եկել: Ետով ձին էս տղին ասել է. «Ո՛վ տղա, կամ կըգամ, կամ չեմ գա էս անգամ»: Ետո նի է մտել: Էս տղաս մին քիչ կացել է, տեսել, որ ձիթենու եղը երես արավ, էն ժամին ծիք է տըվել, ձիին տո̀ւս կալել: Ձին էն տղին ասել է. «Ինձ եր իլ, գնանք»: Էս տղաս եր է իլել, քշել: Մին քիչ որ գնացել են, ձին ասել է. «Մին քմակիտ մտիկ տու, տես քուռակնեն կյամ ե՞ն»: Էն տղան էլ մտիկ է արել, տեսել որ կյամ են, ձիին ասել է. «Գալիս են»: Ետով քուռակն են ու էս տղան եկել են թագավորին տունը: Թագավորը ո̀ւրա̀ն տռանը լիճին մեջ քոռակներին կթել է տըվել, մինչև որ եկել է կեսիցը տա̀ռել: Էս լիճին մեջ էլ լղանող մարդը էն ժամանակը ողջ տո̀ւս կըգար, երբ որ ձիանքը շունչերնին չի քաշեին: Բայց և այն ժամանակը կը հալվեին, երբ որ ձիանքը շունչերնին քցեին կաթնին վերա:

Ետով Ոսկի ծամերավոր ախճիկը թագավորին ասել է, թե. «Լղա՛ց»: Թագավորն էլ ասել է, թե. «Առաջ տո̀ւ լղա՛ց»: Էսպես շատ որ ասել են, ետով

վճռել են, որ առաջ ձի բիրող տղան լղանա, ետով ѝրա̀նք: Էս տղան էն րոպեին շորերը հանել է, մտել լղացել ու տѝւս եկել: Սրան լղանալիս ժամանակը ձիանքը շունչերնին ѝրա̀նց փորումն էին պահել, չունքի որ ճանաչ են, որ ѝրա̀նց տերն է: Ետով թագավորն է մտել որ լղանա, էն րոպեին ձիանքր շունչերնին կաթնին վերա են պահել ու էն սիաթը թագավորը հալվել է: Ետով էստեղ էս ախճիկը ու էս տղան մարդ ու կնիկ են տա̀ռել:

Մին քիչ ժամանակից ետը էս տղան ինքը-ինքը ասել է, թե. «Վիշապազներին թոքը տանեմ տամ իմ հորը»: Ու վեր է կալել տարել ѝրա̀ն հորը տրվել, հայրն էլ կերել է, տասնհինգ տարեկան տղա տա̀ռեր: Ետով թոքը պիրող տղին ասել է, թե. «Զորք հավաքի ու պատրաստվի, որ այսինչ օրը կռիվ անենք»: Տղան ասել է. Թե. «Լա՛վ»: Ետով էն օրը որ եկել է, թագավորը պատրաստված գնացել է կռիվ անելի տեղը: Բայց էս տղին որովհետև զորք չի իլել, վախեցել է թե տѝւս կյա. ու տրա հմար էն օրը որ եկել է, ինքը ու ѝրա̀ն կնիկը մարդը մին Հրեղեն ձի են վեր իլել ու զընացել ամպերին կուշտը: Մինակ տափին մնացել է մին քուռակ: նա էլ ուզացել է, թե վեր ինի ѝրա̀նց կուշտը, նրան թուղ չեն արել, ասելով. «Ցա՛վ-ցա՛վ, չար ծերը տափովը տու եկ»: Էս քուռակն էլ նի է մտել թագավորին զորքին մեջը, ամենին կտորել ու գնացել թագավորին էլ սպանել: Սրանից ետը էս տղան ու ախճիկը երկնքիցը վեր են եկել տափը ու էս տղան ѝրա̀ն հորը տեղ թագավոր է տառել, էս ախճիկն էլ ѝրա̀ն կնիկ:

Աստվածանից երեք...

## 94.ԹԱԳԱՎՈՐԻՆ ՔԱՌԱՍՈՒՆ ՈՐԴՈՑԸ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին թագավոր: Սրան էլ իլել է քառասուն որդի: Սրանց ամենին տարել են ուսումնարան, որ ուսում առնեն: Սրանք ամենն էլ ուսում են առել, տѝւս եկել: Ետով սրանք ամեն օր մեծացել են, մին ժամանակ տѝւս են եկել մին մեծ դաշտ ու էնտեղ ѝրѝր հետ խորհուրդ արել: Ու վերջը փոքր եղբորը խոսքին են հավանել, թե՝ մենք գնանք թագավորին ասենք, թե մեզ հմար մի տուն ճարի, որ էնտեղ քառասուն աղջիկ ինի ու էն աղջկերքը մեզ հետի ուզի, թե չէ, մենք զլուխ ենք վեր առնում, զնում:

Ետով գնացել են էտ բանը թագավորին ասել, թագավորն էլ միտք է

արել միտք, ետով ասել. «Դուք եք գիտում, գնում եք, գնացե՛ք»: Սրանք ամենն էլ ձիավորվել են ու զրահավորվել, գնացել ու ուրանց վերա գլխավոր են ջոկել ուրանց փոքր եղբորը: Ետով տրանք գնացել են մին տեղ վրան տրվել, էնդեղ վեր եկել, կացել: Իրիկունը փոքր եղբայրն ասել է. «Գիշերս ձեր ճրագները վառ պահեցեք. գիշերով մարդի ճրագ որ վառ չինի, նրան մորթելու եմ»: Նրանք էլ ետով ամենը գնացել են ուրանց վրանումը ճրագները վառել ու քուն իլել: Կես գիշերին փոքր եղբայրը վեր է կացել, տեսել ամենին ճրագը վառ է, բայց ուրանը հանգած: Վեր է կացել, թե տանի վառի. ու վախեցել է թե ուրան եղբորցն վրանից վառի, գիտան: Սրա համար վեր է կացել եշել, տեսել մին հեռու տեղից մին լույս է գալիս: Ճրագը վեր է առել, ձին վեր իլել, քշել գնացել տեսել՝ մին ծեր մարդ՝ մորուքը մինչև ոտանը տակը եկած ու ինքը արեգակի պես լուս է տալիս: Էս տղան հարցրել է, թե. «Դու ո՞վ ես»: Էն մարդն էլ ասել է. «Ես ցիրեկը լուսացնողն եմ ու գիշերը մթնացնողը»: Էս տղան էս մարդին կապոտել է էնտեղ վեր քցել ու ասել, թե. «Լուսացնեսոչ, մինչև որ ես գամ»: Ետով ճրագը վեր է կալել, գնացել տեսել մին տուն: Մտել է տեսել՝ մին կնիկ էնտեղ խորակ է եփում: Էն կնիկը ասել է. «Ո՞ւր ես եկել, էս րոպեին քառասուն վիշապազները կըգան քեզ ուտեն»: Էն տղան ասել է «Բա ի՞նչ անեմ»: Պառավն ասել է. «Նի մուտ տաշտին տակը»: Նա էլ նի է մտել: Էն քառասուն վիշապազները եկել են հարցրել, թե. «Էս ինչ մարդահոտ է»: Էն կնիկն ասել է. «Տուք եք մարդի քշտից կյամ, ի՞նձ եք ասում»: Վիշապազներն էլի ասել են թե. «Չէ՛, պետք է ասես»: Վերջապես, ասել է, թե. «Մին տղա է եկել, էն է տաշտին տակին»: Ետով գնացել են տուս կալել, քացի-քացի արել ու ասել, թե. «Սրան մտիկ արեք, սրան, էս ի՞նչ է, միջատ է, թե ինչ է»: Ետով էն տղին անից հարցրել են, թե. «Կըկարողանա՞ս էստեղ մին թագավոր կա, նրան քառասուն աղջիկ ունի, մեզ համար ուզես»: Նա էլ ասել է, թե. «Կըկարողանամ»:

Ու վեր է կացել ուրան ձին եր իլել ու վիշապազնին առաջնին ինկել, գնացել էն թագավորին դռանը որ քացի տըվել, դուռը փշըրվել է, նի է մտել, էն վիշապազներին տարել պատին տակովը կարքին կաղնեցրել ու ասել. «Էստեղ կացեք»: Ինքը գնացել է պատին քամակիցը որ քացի տըվել, պատը պարան է եկել, էն վիշապազներին էնտեղ կտորել: Սրանից ետով գնացել է նի մտել նրանց արտաքնոցը ու էն արտաքնոցին մեծությունն էլ մին տան

հավասար է իլել։ Ետով գնացել է մին անգյունումը կյաղլու կացել։ Թագավորին տռանն էլ երեսունհինգ գիշերապահ է իլել։ Էս պ՝ննըս իմացել են։ Նրանցից մինը գնացել է, որ տեսնա, թե էն ով է։ Սա որ գնացել է, էն տղան թուրը հանել է, էն գիշերապահին ըսպանել ու ի՝րա՝ն շորերը հանել, էնտեղ վեր քցել ու ինքը նրա շորերը կյեցել։ Էն գիշերապահին տեղ ինքը գնացել, թե. «Էնտեղ մարդ չի կա»։ Նրանք հավատացել չեն, մինն էլ են ղրկել։ Նա որ գնացել է, էն տղան էլ նրան ետիցն է գնացել, էլի մյուսին պես ըսպանել ու եկել, թե. «Մարդ չի կա»։ Էս տղաս էսպես անելով ամենին էլ էտպես ըսպանել է։ Երեսունհինգ գիշերապահները ըսպանելից ետը գնացել է նի մտել թագավորին աղջըկորցը սենյակը, տեսել էն քառասուն աղջկերքը էնտեղ քուն։ Ամենին իրեսիցն էլ պաչել է և ի՝րա՝ն մատանին հանել է, տրել փոքր աղջկանը մատնումը։ Ետով գնացել է թագավորին սենյակը նի մտել ու տեսել, որ թագավորը մին լ՝ա՝վ մարմար քարի վերա քուն ա. մին միջատ մարմար քարովը գնում է, թե թաղավորին կծի ու էն միջատն էլ որ մարդի եթե կծի, էն րոպեին կը մեռնի։ Սա որ տեսել է, թուրը հանել է, էն միջատին թխել, ըսպանել և մինել թխել է, թուրը մարմար քարին մեջին խըվեցրել ու ինքը գնացել ձին եր իլել, քշել։ Գնացել, տեսել է, որ էն ծեր մարդը էնտեղ կապոտած, վեր քցած։ Ու ճրագը էն ծեր մարդին տանիցը վառել է ու նրան ետ արել։ Գնացել է ի՝րա՝նց տեղը ճրագը դրել վրանումը և քուն իլել։ Գիշերով վեր են կացել, էս փոքր եղբայրը ասել է. «Ձիյանքնիտ վեր իլեք, գնանք այսինչ քաղաքը»։ Նրանք էլ ի՝րա՝նց ձիյանքը վեր են իլել ու գնացել են։

Սրանց թողնենք էստեղ ու ետ տառնանք խոսենք էն թագավորիցը, որ փոքր տղան գնացել էր նրանց քաղաքը։ Թագավորը որ վեր է կացել, տեսել ի՝րա՝ն գիշերապահները կտորած, թուրը մարմար քարին մեջին խրած, շատ տարակուսվել է և շատ մարդիք է պիրել տըվել որ թուրը հանեն, բայց նրանք կարողացել չեն հանեն։ Ետով ձայն է հանել, թե. «Ով որ կարողանա հանի, շատ զանձ կըտամ»։ Ետով էն քաղաքին ամեն ըմբիշները եկել են կարքին կաղնել ու ամենիցը փոքրը գնացել է թե հանի, բայց կարողացել չի։ Նրանից մեծն առաջի մարդին երեսին թքել է, թե՝ ինչի չի կարողացիր հանես, ու ինքը գնացել, որ հանի, չի կարողացել։ Նրանից մեծն էլ նրան երեսին է թքել ու ինքը գնացել, բայց չի կարողացել, որ հանի։ Եվ էսպես, ամենքն էլ չեն կարողացել որ հանեն։ Էն քառսուն տղերքը եկել են

թագավորին [.. .][1], տեսել որ ըմբիշները չեն կարողանում հանեն: Սրանք որ թուրը չեն կարողացել հանեն, թագավորը հրամայել է, թե. «Ով որ կըկարողանա, գա հանի»: Էս փոքր եղբայրը ասել է, թե. «Ես կըկարողանամ»: Թագավորն ասել է. «Թե որ կըկարողանաս, եկ հանի»: Էս տղան գնացել է մին մատնով որ թրին թխել, թուրը թուղ է իլել: Ետով էս տղան էն բանին անցքը պատմել է, որ ինքը էն գիշերը արել էր: Թագավորը որ էս բանս լսել է, ѝւրա̀ն քառասուն աղջիկը պսակել է էս քառասուն տղորցը վերա ու փոքր աղջիկն էլ տըվել էս փոքր տղին:

Էս տղան որ էս քաջությունը արել է, էս քաղաքիցը մին օձ է տѝւս եկել, գնացել օձերին թագավորին իմացրել, թե մին տղա էս քաջությունս ըրավ: Էս տղան ѝւրա̀ն եղբորցը ամենին ѝւրա̀ն կնանոցը հետ մին կառքում նստեցնել է տըվել ու պատվիրել է, թե որ գնաք այսինչ տեղը, էն է երեք ճանապար կա՝ մինը խուտալի, մինը՝ չոր, մինը՝ քարքարոտ. դուք խոտալի ճանապարհովը գնացեք և ոչ թե էն միներովը: Սրանք գնալիս ժամանակը ճանապարը շիլ են ինկել ու չոր ճտնապարովը գնացել: Օձերին թագավորը ѝւրա̀ն զորքովը էս ժամտնակիս եկած է իլել չոր ճանապարում նստած: Նրանք որ եկել են, օձին թագավորը հարցրել է, թե. «Էն տղան ո՞ւր է»: Նրանք էլ ասել են, թե էս է: Էն օձի թագավորը փոքր եղբորը ասել է, թե. «Այսինչ թագավորի աղջիկը ինձ համար ուզի, թե չէ, էս րոպեին քեզ աղու կըտամ, ըսպանեմ»: Նա էլ ասել է, թե՝ «Լավ է»: Օձին թագավորը էս տղին մին երկաթի տրեխ է տըվել, թե ինքյ կալ կյեց, գնա և երբ որ էտ տրեխը մաշի, գյիտա, որ էն [....][2] մուտիկ ես: Էն տղան էլ ինքյ է կալել էն տրեխը: Ետով ѝւրա̀ն եղբորցը և եղբորցը կնանոցը ու ѝւրա̀ն կնկանը հետ պռոշտի է արել ու շատ պատվերք արել եղբորցը, թե. «Իմ կնիկս տարեք մեր տուն»: Ու նրանց ճանապարհ է տըել:

Ետով էս տղան գնացել է ու գնալիս էլ օձին թագավորին տրեխը կյեցել է: Էս տղան մին տարի, էրկու տարի գնացել է, ետով մին տեղ նստել, տեսել որ շատ մրջյուն տѝւս եկած: Մինը մին զատ է վեր առնում գնում, մինը մին զատ: Էս տղին գրպանումը հացի փշրանք է իլել, հանել է էնտեղ շաղ տըվել, ու մրջյուններն էլ կերել են: Ետով մին թևավոր մրջյուն է տѝւս եկել, որ մրջյուններին թագավորն է իլել, խոսացել է ու ասել. «Դու մեզանից ի՞նչ

[1] *Անընթեռնելի (Ծ.Կ)*
[2] *Անընթեռնելի (Ծ.Կ)*

կուզես, որ էսքան ժամանակ մեզ կերակուր ես տամ»: Նա էլ ծուրա՛ն գլխավն անց կացած պա՛ները պատմել է: Էն մրջյունն էլ ծուրա՛ն թևիցը մին քիչ կտրել է, տըվել էն տղին, թե. «Ինքյ առ, էս քեզ ժամանակով հարկավոր կըկյա՛»: Էս տղան էս թևը մին թղթում պտատել է, դրել շուքումը, ետով եր կացել գնացել: Գնացել է տեսել մին պառավ: Էս պառավս ասել է. «Ո՞ւր ես գնում»: Էս տղան էլ ծուրա՛ն գլխովն անց կացած բաները պատմել է: Էս պառավը սրան մին չախմախ ու չախմախաքար է տըվել, ասել, թե. «Ինքյ առ, ինչ ժամանկ որ մին բան պետք ինի, էն բանին տեսակիցը տիր էտ քարին վերա ու չախմախը թափ տուր՝ էն վայրկյանին էն բանիցը քեզ կինի»: Ետով էս տղան էս էլ է վեր առել, գնացել: Գնացել է տեսել՝ մին ծըվոց է գալիս: Էն տղան էն ծըվոցին վերա գնացել է, տեսել մին առյուծ ոտնը սուր իլած ու էն առյուծըն էլ առյուծներին թագավորն է իլել: Էս տղան չախմախը հանել է, արել սուրին վերա ու թափ տըվել, սուրը հանվել է և հանելիցը ետը փախել է: Էս առյուծը վեր է կացել, էս տղին ետիցը ման եկել և գտել ու ասել, թե. «Դու ի՞նչ երկրացի ես, որ իմ ոտնիս սուրը հանեցիր»: Նա էլ ասել է, թե. «Ես էսպես երկրացի եմ ու գնում եմ այսինչ թագավորին աղջիկն ուզեմ»: Էս առյուծն ասել է. «Դե՛ ինքյ առ իմ մազիցս մինը քեզ տամ, քեզ հարկավոր կըկյա՛, ես էլ առյուծներին թագավորն եմ»: Էս տղան էս մազը մին թղթում պտատել է, դրել գրպանումը և գնացել: Գնացել է մին թումբի վերա նստել ու տըխին տակին եշալ, տեսել որ մաշած է: Իմացել է, որ էն քաղաքիցը մոտիկ է և մին քիչ էլ գնացել է ու տեսել, որ վշշոց է գալիս: Ու էն վշշոցն էլ էն քաղաքին մարդոցը ման գալիցն է իլել ու քաղաքին քշտին իլած գետիցը: Էս տղան գնացել է գետի եզրը ու տեսել մին առյուծ գետի վերա եռեսուն շղթայով կապած, և վախեցել չի, անց է կացել գետի էն մին կողմը և գնացել քաղաքը: Էս տղան էնտեղի մարդոցն անից հարցրել է, թե. «Թագավորին տունը ո՞րն է»: Նրանք էլ նշանց են տըվել, ու էն տղան գնացել է թագավորին տունը: Էնտեղ հարցրել են. «Ո՞ւր ես եկել»: Նա էլ ասել է, թե. «Եկել եմ թագավորի աղջիկն ուզեմ»:

Թագավորին աղջիկը պերել է մեյդանումը մին բեռը ավազ վեր ածեք տըվել ու մին գավաթ մարգարիտ ածել ավազին մեջը, ծուրծուր հետ խառնել ու ասել, թե. «Էտ մարգարիտը ավազի մեջիցը ջոկի»: Էս տղան միտք է արել, միտք, մրջյունին թևը ու էն պառավին չախմախաքարը միտն է ինկել: Ետով մրջյունին թևը արել է չախմախաքարին վերա ու չախմախով թխել,

տեսել որ ավազին չորս կողմը մրջյունով լցված: Ու մարգարիտները ավազին միջիցը ջոկեցին ու էն գավաթումը էնպես սարքեցին, որ առաջվանից լավ էր: Ետով էն տղան էն մարգարիտը տարել է տըվել թագավորի աղջկանը, թագավորի աղջիկն էլ ասել է. «Լա՛վ, գնա, էքուց եկ»: Ետով նա էլ գնացել է ու էքսը եկել: Էն աղջիկն էլ տարել է ի̈ւրա̈նց տռանը մին հմայած քար նշանց տըվել ու ասել, թե. «էս քարը բարձրացրու, օռճունքիցը կախ տուր»: Նա էլ ասել է, թե. «Քանի՞ օրումը»: Աղջիկն ասել է, թե. «Մին ամսումը»: Ետով էս տղան բռնել է, թե բարձրացնի՝ չի կարողացել: Շատ չալախ է եկել, էլի չի կարողացել: Ետով հանկարծ միտն է ինկել, որ հմայած բաներին շատը մազով գլուխ կըկյա̈: Սրա հմար գնացել է մին պառավ կնկան կուշտ ու թաքուն նրան ասել, թե. «Նանի՛ , կըկարողանա՞ս թագավորի աղջկանը մազիցը մինը պիրես ինձ տաս»: Նա էլ ասել է. «Կըկարամ»:

Ետով էս պառավ կնիկը գնացել է տեսել թագավորի աղջիկը գլուխը լվացել է պրծել, մազերը սանրում է: Գնացել է թագավորի աղջկանը մոտ ու ասել. «Սանտրը ինձ տուր, ես լավ կըսանտրեմ, դու չես կարում սանտրես: Էս սանտրը ինքյ է կալել, սանտրել պրծել ու ծամ անելիս ժամանակը մազիցը մինը, էրկունը պուք է տըվել, դրել գրպանումը և ծամ անելից ետը վեր կացել ու տարել տըվել էն տղին: Էն տղան մազը տարել է էն քարիցը կապել ու չախմախաքարը դրել էն մազին վերա ու չախմախովը թխել՝ էն րոպեին էն քարը բարձրացվել ու գերանիցր կախ է իլեր: Մարդ է գնացել թագավորի աղջկանն ասել, թե. «Քարը էն տղան կախ է տըվել»:

Թագավորին աղջիկը էս խոսքը որ լսել է, իրեք երանգ է փոխ տըվել, մին կարմրել է, մին ըռըշնել, մին էլ տեղնել: Ետով ասել է, թե. «Գնացեք այսինչ առյուծը պիրեք»: Գնացել են բիրեր: Էն առյուծն էլ քաղաքին կողքի առյուծն է իլեր: Թագավորի աղջիկն ասել է էն տղին, թե. «Մին մարդ ճարի, որ սրան հետ կոխ կենա ու կոխի»: Նա միտք է արել, միտք, առյուծին մազը միտն է ինկել: Մազը տրել է չախմախաքարին վերա ու չախմախովը թըխելնուպես տեսել է, որ էս է հրես մին լղար, քոսոտ ու համարյա թե ըստակելիս առյուծ եկավ ու էն գեր առյուծին խզըտակիցը բռնեց, որ տափովը տըվեց՝ էն գեր առյուծը փշրվեց: Էս թագավորին աղջիկը սրանից ետը ասել է էն տղին, թե. «Ես քու կնիկդ եմ, որ քու կնիկդ եմ»: Ետով էս տղան ու էն աղջիկը մարդը մին ձի են վեր իլել, շատ ու քիչ գնացել են,

հասել էն իրեք ճանապարհը, որ օձի թագավորը եկել էր էն տղին առաջը կտրել:

Ետով էս տղան աղջկանը տարել է, թե տա օձի թագավորին, օձի թագավորը ասել է, թե. «Ես օձ եմ, կնիկը ի՞նչ եմ անում, քեզ ինի: Ես նրա համար քեզ ղրկեցի, որ տեսնեմ կըկարա՞ս էտ բանն էլ անես»: Եվ հարցրել է, թե. «Դու ինձանից ի՞նչ կուզես»: Նա էլ ասել է. «Ես քեզանից զատ չեմ ուզիլ, բայց ինձ շուտ տար մեր տուն»: Էն րոպեին օձի թագավորը հրամայել է, որ օձերը փռվեն տափին վերա և փռվելից ետը նրանք նրանց վերա նստել են: Օձի թագավորը օձի բերանում ակներիցը նրանց շատ տըվել է ու օձերին հրամայել է, որ նրանց տանեն ուրա̀նց տուն: Էն րոպեին օձերը թռել են, տարել ուրա̀նց քաղաքիցը մոտիկ վեր տրել: Սրանք էն ակները մին ձիի վերա բեռնել են ու մին ձիի վերա էլ ուրա̀նք նստել: Ետով գնացել են տեսել մին ծեր մարդ վար անում: Թագավորին տղան նրան ասել է, թե. «Գնա թագավորի մոտ ավետչյա ասի, թե՝ քու տղատ եկել է»: Էն մարդը ասել է, թե « Դու թագավորի տղան չես, թագավորին տղան էս յոթը տարի է կորած: Սիրտըս շատ կուզի, որ թագավորի տղան տա̀ռնաս, բայց տա̀ռնալ չես: Էսպես շատ համառ են տըվել, վերջապես էն ծեր մարդը ասել է. «Թագավորի տղի ոտնին մին նշան է իլել, բիր ոտնդ տեսնամ»: Էն տղան տարել է, ծեր մարդն էլ տեսել է, որ ոտնին նշանը կա ու էս բանս տեսնելունպես շուտ գնացել է թագավորին ավետչյա: Թագավորն էլ ասել է. «Թե որ ճշմարիտ ինի, մին բեռը փող տըվեք»: Ետավ էս տղան որ գնացել է ուրա̀նց տուն ու էնտեղ երկու կնիկ է վեր կալել, մինն առաջվանը ու մինն էլ հիմիկվանցը, էն ավետչյա գնացող մարդին շատ փող են տըվել ու էն մարդն էլ էս փողովս հարուստացել է ու էլ վար չի արել:

Աստվածանից երեք խնձո̀ր…

## 95.ԿՈՒՆՏԻՆ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին թագավոր։ Էս թագավորը որ շատ պառավացել է, ի̀րա̀ն իրեք որդոցը կանչել է ի̀րա̀ն մոտ ու աղաչանք արել, թե. «Որ ես մեռնեմ, իրեք օր ու իրեք գիշեր եկեք իմ գերեզմանս պահեցեք»։ Էս թագավորը որ մեռել է, ի̀րա̀ն իրեք որդուցը մեծն ու միջնակը գնացել են ի̀րա̀նց հանորը տունը։ Բայց էն ամենիցը փոքր եղբարը (որ Կունտ է իլել) ի̀րա̀ն հորը խոսքը կատարելով ի̀րա̀նց տանիցը վեր է կալել մին հրացան, ետով գնացել ի̀րա̀ն հորը գերեզմանիցը մին երկու կազաչափ հեռու փոս քանտել ու ինքը նի մտել էն փոսը։ Մին քանի ժամ կացել է, տեսել որ մին մեծ մարդ եկավ ու ինքն էլ զրահավորված, որ նրա երկայնությունն է տասը-տասնմեկ կազաչափ ու սրտին լայնքը երկու-երեք կազաչափ, բայց ի̀րա̀ն կռներին հաստկությունը կես կյազաչափ ու ի̀րա̀ն մեծությունին համաձայն էլ ի̀րա̀ն ձին, ինքը՝ ըսպիտակ, կեցին շորերը՝ ըսպիտակ, ձին՝ ըսպիտակ ու ձիին ամեն բաներն՝ ըսպիտակ։ Ետով եկավ թագավորին գերեզմանիցը մոտացավ, նիզակը հանեց ու ասեց. «Թագավո՛ր, հանգիստ անիծվի»։ Էս ասեց ու նիզակը գերեզմանին մեջումը խրեց, որ գերեզմանին քարը վեր ունի, Կունտը էնտեղից հրացանը մին անգամ որ արձակել է, բայց էն մարդը չէր գիտում, թե ի̀րա̀ն գնդակ է նի եկե լ, թե չէ։ Սրա հմար էս Կունտը մինել է արձակել, էլի էն մարդը այնումը չի քցել։ Մին անգամ էլ է արձակել, էն մարդը ձիիցը վեր է ինկել, մեռել։ Էս Կունտը փոսիցը տո̀ւս է եկել, էն մարդին շորերը ու ձին տարել մին տեղ դրել ու ինքը եկել տուն։

Էքսը որ միջնակ եղբայրը չի գնացել, էլի էքսը իրիկունը գնացել է մտել էն փոսը ու մին քիչ կացել։ Ետով տեսել էլի էնպես մին մեծ մարդ եկավ, ինքը՝ սև ու սև շորերավոր, ձին՝ սև ու ամեն բաներն էլ սև։ Ինքը զրահավորված, եկել է առաջվան մարդին նման արել, էլի Կունտը ըսպանել է։ Երրորդ օրը որ կարգը ի̀րա̀ն է իլել, տեսել է, որ մին մարդ եկավ առաջվաններին նման, էլի [...][1] ըսպանել է, ամենին ծիանքը ու ամեն բաները վեր կալել ու գնացել ի̀րա̀նց տուն ու էնտեղ ի̀րա̀նց գոմումը կյաղել։ Մին քանի ժամանակ էտ բանովն անց կենալից ետը մին թագավոր ձայն է հանել, թե. «Ով որ կարա ձիի վերա նստած այսինչ յոթը սարովը ձին լոք տալով անցկացնի ու գա իմ կուշտս, ես իմ աղջիկս կըտամ ի̀րա̀ն»։ Էս որ լսել են, համարյա թե բոլոր աշխարքիս մարդիքը գնացել են տեսնելի

[1] *Անընթեռնելի (Ծ.Կ)*

համար, թե ով է անելու էտ բանը:

Էս թագավորին որդոցը էրկունը մեծն ու միջնակը մին կաղլիկյ ձորի են քրեհով բռնել ու էրկուսն էլ վեր իլած գնացել: Կունտը ասել է. «Ինձ էլ տարեք»: Էն էրկունն էլ ասել են. «Ը՞հ, հիմիկ դու էն մարդուցը մեջին կըկորչես, քեզ ո՞ւր ենք տանում»:

Սրանք որ գնացել են պրծել, էս Կունտը էն կյաղած ծիոցը ըսպիտակը հանել է, ըսպիտակ շորերը կեցել ու ձին վեր իլել, զրահավորվել ու շուտ գնացել էնտեղ հասել: Թուրը հանել է սրա-նրա թխել ու գնացել, թե ի՛րա՛ն եղբորցն էլ թխի, եղբարքը աղաչանք են արել՝ թխել չի ու ձիին մտրակովը թխել, ձին էն յոթր սարովը լոք է տըվել ու անց կացել: Ետով էն թագավորը ի՛րա՛ն-աղջիկր տըվել է էն Կունտին, էն Կունտն էլ տրել է ձիին զավակին ու մին անգամ ձիին թխել, ձին էն յոթր սարովը մին էլ լոք է տըրվել: Էլի էն տղան սրա-նրա թխել է ու ծին քշել գնացել ի՛րա՛նց տուն ու էն աղջկանը մին սենյակում կյաղել: Ի՛րա՛ն եղբարքը եկել են ի՛րա՛նց տուն, Կունտը հարցուփորձ է արել, նրանք էն ամեն բաները պատմել են:

Մին քանի ժամանակ որ անց է կացել, էլի էն թագավորը ձայն է հանել, թե. «Ով որ ձին լոք տալ տա ութը սարովը, իմ աղջիկս կըտամ ի՛րա՛ն»: Էլի էս Քաչալը սև ձիով գնացել է էն աղջիկր պիրել: Մին անգամ էլ է էն թագավորը ձայն հանել, թե. «Ով որ իննը սարովը ձին լոք տալ տա, իմ աղջիկս կը տամ ի՛րա՛ն»: Էլի էն Կունտը գնացել է պիրել կարմիր ձիովը: Էն Կունտը ի՛րա՛ն եղբորցը իմացրել է, թե ինքն է էն աղջկորցը պիրել և ամենիցը լավը ինքն է վեր կալել ու մինը՝ մինին տըվել, մինը՝ մինին: Ետով էլի լավ ձին ինքը վեր կալել ու մինը՝ մինին տըվել, մինը՝ մինին: Կունտն էլ շատ գեղեցիկ է իլել:

Էս էրկու եղբորցը աչկը եր չի կալել, որ ի՛րա՛նց փոքր եղբայրը ի՛րա՛նցից լավ ինի: Խոսացել են, թե մենք նրան ըսպանենք, ի՛րա՛ն կնիկը մենք վեր առնենք: Ետով էս Կունտին կնիկը իմացել է սրանց միտքը ու գնացել ի՛րա՛ն մարդին ասել, թե նրանց մեջին էսպես խարդախություն կա, դու քու գլխից ճարը տես: Էս Կունտը որ էս հասկացել է, շուտով ի՛րա՛ն եղբորցն անից բաժանվել է ու ի՛րա՛ն կնիկը վեր է կալել, ձին եր իլած փախել են գնացել: Տեսել են մին մեծ պալատ, չորս կողմովը մեծ պատ քաշած: Ձիին թխել է, ձին լոք է տըվել, նի մտել էնտեղ: Էս Կունտը ամեն օր ի՛րա՛ն կնիկը դնում է իլել էնտեղ և ինքը ձին վեր իլած գնում որս անում

պիրում, ո̈րա̈նք ուտում են։ Ետով էս Կունտը մին ժամանակ որսատեղից գալիս ժամանակը եկել է տեսել մին պառավ կնիկ պատին վերա բնեռներ վեր տալով վեր է ինո̈ւմ, որ գնա տուն։ Ետով էս պառավն է մտել։ Կունտին կնիկը մարդին ասել է, թե. «Էս պառավը մեր գլուխը մին բան կըբերի, տո̈ւս արա»։ Էն Կունտն էլ ասել է, «Ինչի՞ տո̈ւս անեմ, դու մինակ ես, քու կշտիտ կըկենա»։

Ետով էս Կունտը էքսը ո̈ւրա̈ն ձին տանը կապել է ու ինքը պառավի վեր տըված բնեռներովը վեր եկել, գնացել որս։ Էս պառավ կնիկը որ էն երեք տղորց մայրն է իլել (որոնց Կունտը ըսպանել էր, ինչ ժամանակ եկել էին թագավորին գերեզմանը քանդին) ու եկել էր նրանց վրեժը առնի Կունտիցը։ Հարմար ժամանակ գտնելով, էն աղջիկը վեր է կալել, տրել էն Կունտին ձիին թարքին, ինքն էլ վեր իլել ձին, երեք ամիս գիշեր, երեք ամիս ցերեկ ճանապարհ գնացել, որ հասել են ո̈ւրա̈նց տուն։ Ետով Կունտը եկել է տեսել տանը ոչ ձի կա, ոչ կնիկ, ոչ էլ էն պառավը։

Էս Կունտին միտն է եկել ո̈ւրա̈ն երեք քույրը, որ ամենն էլ առջի կնիկ են իլեր։ Էս Կունտը վեր է կացել, գնացել ո̈ւրա̈ն մեծ քըվորը տունը։ Էնտեղ ո̈ւրա̈ն քույրը ասել է. «Ո՞ւր ես եկել, առջը յոթ օրվան ժամանակի որս է գնացել, էսօր ժամանակն է, կըգա քեզ կուտի»։ Նա էլ ասել է, թե. «Բա ինչպե՞ս անեմ»։ Քույրն էլ ասել է, թե. «Նի մուտ տաշտին տակը»։ Նա էլ նի է մտել։ Առջը եկել է շատ որս արած ու հարցրել կնկանն անից, թե. «Ի՞նչ մարդահոտ է»։ Նա էլ ասել է. «Դու ես կյա̈լիս սարից ու թուփիցը, ի՞նձ ես ասում»։ Էլի ծերք չի վեր կալել, ասել է, թե. «Չէ՛, էս ի՞նչ մարդահոտ է, ասի»։ Կնիկն էլ ետ է տա̈ռել, ասել, թե. «Որ իմ եղբայրը ինի, ի՞նչ կանես»։ Առջն էլ ասել է. «Թե որ մեծն ինի՝ մեծ պատառը աջի անկանջն եմ թողելու, թե որ միջնակն ինի՝ մեծ պատառը ձախի ականջն եմ թողելու, թե որ փքրն ինի՝ աչքիս վերա է եկել, ի՞նչի հմար է կյաղլու կացել»։ Փոքր եղբայրը տո̈ւս է եկել, էստեղ սիրուն բարով են տըվել ու էս Կունտը էստեղ հաց է կերել։

Ետով առջը հարցրել է, թե. «Ի՞նչի հմար ես եկել»։ Էն էլ ասել է, թե. «Բաս ինչ, էնպե՛ս բան է պատահել»։ Էս առջն էլ ասել է. «Էդ իմ բանս չի, ես հարյուր տարեկան եմ, իմ եղբայրս երկուհարյուր տարեկան է, նա կըգիտա գնա նրան ասի»։ Ու նա շատ աղաչանք է արել, թե եկ քեզ շատ զանձ տամ, գնալ մի, գլուխդ փորձանք կըկյա̈։ Բայց Կունտը ասել է, թե. «Չէ՛, պիտի գնամ»։ Ետով էս առջը մին գիր է գիրել, տըվել նրան, թե. «Որ գնում ես,

տար տուր իմ եղբորս»: Էս Կունտը գիրը վեր է կալել, գնացել էն առջի տունը: Էնտեղ էլ առաջի առջին տանը ինչ որ պատահել էր, էնտեղ էլ պատահել է, բայց էլի էն առջն էլ է ասել. «Ես երկուհարյուր տարեկան եմ, իմ աղբերը երեք հարյուր տարեկան է, նա կըգիտա»: Ու էլ մին գիր էլ գրել է, տըվել նրան, թե. «Տար տու իմ եղբոր»:

Էլի էս Կունտը էն էրկու գիրը վեր է կալել, գնացել էն մին եղբոր տունը: Էլի էն ամեն բաները պատահել է էնտեղ ու առջը ասել է, թե. «Ես իրեքհարյուր տարեկան եմ, իմ մայրս միլիոն տարեկան է, գնա նրանից հարցրու, նա կըգիտա»: Էլի մին գիր էլ գիրել է, տըվել նրան, թե. «Տար տուր իմ մոր»: Սա էլ է շատ աղաչանք արել, թե գնալ մի, բայց նա գնացել է: Էս առջն էլ Կունտին ասել է. «Ո՛վ տղա, դու որ գնում ես, էն գիրերը սրտիցդ կախ տուր և մին փութ էլ մազտաք սրտիցդ կախ տուր ու գնա, որ մին վերստ մնա թե իմ մոր կուշտը հասնես, իմ մայրս քեզ քաշելու է, որ տանի կուլ տա, տու էլ գնա, որ շատ մոտացած ժամանակդ մայրս քեզ ուզելու է թե կուլ տա, տու շուտ մազտաքին քցի բերանը, որ նա մազտաքովը ինի, ետով գիրերը առաջին վեր ածի ու ասի. «Քու տղորցդ անից գիր եմ բիրել»: Էս տղան ասել է, թե. «Լա՛վ»: Ու էն կյրանքը վեր է կալել, գնացել էնտեղ ու էն ամեն բաները կատարել: Էնտեղ առջին մայրը ասել է. «Գնա քառասուն ոչխար, տավար վեր կալ, գնա այսինչ աղբուրին եզրին վեր եկ. մին ձի գալու է էնտեղ ցնգնի, ինքը գնա: Քառասուն գայլ էն գալու թե ուտեն, դու շուտ ըրա էն քուռակը վեր կալ, փախի ու քու ոչխարները և ուրիշ բաները տու գայլերին

Էս տղան գնացել է էն ամեն բանը կատարել, էն քուռակը վեր կալել, գնացել էն առջերին մորը տունը, առջերին մայրն ասել է. «Չին բերի՞ր»: Նա էլ ասել է, թե. «Հրամել եք»: Առջը ասել է. «Էդ ձիանը տար երեք ամիս մութը տեղ, երեք ամիս լույս տեղ պահի, տրա̀ գարին ու հարդն էլ շատ-շատ տուր»: Սա էլ տարել է էն բաները կատարել ու գնացել ասել, թե. «Արել եմ»: Նա էլ ասել է, թե. «Վեր իլ գնա էն աղբուրին ցեխովր քշի՛, քշի՛. ետով մին անգամ էլ պինդ քշի: Թե որ էն ձիին ոտանը ցալքունը քեզանից հեռու մին մղոնից շատ գնա, էլ քամակիտ եշեսոչ, քշի՛: Բայց թե որ ցալքունը մին մղոնից քիչ գնա՝ ձին պիր էլի պահի»: Տարել է էնպես արել, ցալքունը մին մղոնից քիչ է գնացել, ետով պիրել է էլի պահել, գարին ու հարդը շատ-շատ տըվել, ետով տարել քշել: Էլի շատ քշել է, ետով մին անգամ էլ պինդ է քշել,

ցալքունը մին մղոնից շատ է գնացել: Ետով էլ քամակին եշել չի, քշել է ու շատ գնացել, էն պառավին տունը հասել: Ետով քուռակը հանկարծ թռել է երկինքը ու էնտեղով վեր եկել էն պառավին տունը: Կունտին առաջվա ձին որ պառավը վեր էր իլել փախել, օզացել է թե խրխնջա՝ էն պառավը որ քուն է իլել, վերկացնի, բայց էն Կունտին կնիկը էն ձիին աղաչանք է արել, թե. «Իմ մարդս է, խրխնջալ մի»: Նա էլ խրխնջացել չի: Էն տղան եկել է էն աղջկանը տարել դրել գավակին ու վեր կալել փախել:

Ետով էն պառավը վեր է կացել, տեսել էն աղջիկը էնտեղ չի: Էն ձիին անից հարցրել է, թե. «Ո՞ւր է»: Էն ձին էլ ասել է. «Ո՛ւ ր՛ն մարդը եկել է վեր առել, գնացել»: Էս պառավը էլի ձիին անից հարցրել է, թե. «Նրանք ո՞ւրտեղ են»: Ասել է. «Սև ճանապարովը անց են կացել, հիմիկ էլ են էն լույս ճանապարումը»: Էլի հարցրել է, թե. «Հա՞ց ունենք՝ գնանք, թե հաց չունենք՝ գնանք»: Ձին ասել է. «Հաց ունենք, գնանք:

Ետով էս պառավը քառասուն ոչխար ու քառասուն տավար կերել է և բավական գինի է խմել, ետով վեր իլել ձին ու մին գունդ էլ վեր կալել, քցել կուռը ու երկու անգամ ձիին թխել ու էն րոպեին ձին շուտ հասել է նրանց մոտ: Ետով պառավը որ մին անգամ Կունտին թխել է, Կունտը ուշաթափվել է: Էն պառավը աղջըկանը մեր է կալել, գնացել:

Էս Կունտը մին քիչ էնպես կացել է, ետով երբ որ ուշը գլուխն է եկել՝ վեր է կացել ձին վեր իլել, գնացել էն առջերին մորը տունը: Էնտեղ էն առջը ասել է. «Բերիրո՞չ»: Նա էլ ասել է, թե. «Չէ»: Կունտը մինել է վեր կացել թե գնա, էն առջը ասել է. «Ա՛ տղա, եկ, ես քեզ շատ զանձ կըտամ, գնալ մի, գլուխդ փորցանք կըկյա՛»: Նա էլ ասել է. «Չէ, գնալու եմ»: Ետով գնացել է էն աղբուրին եզրովը ձին քշել, գնացել էն պառավին տունը, էլի ո՛ւր՛ն կնիկը վեր կալել, փախել: Պառավը վեր է կացել առաջվան նման էն ձիին հարցուփորձ արել, գունդը քցել կուռը, երկու անգամ թխել ձիին ու էն րոպեին ձին նրանց ետիցը հասել է: Պառավը գունդով որ մին անգամ Կունտին թխել է, Կունտը ճոթուպատառ է տա՛ռել: Ետով կնկանը վեր է կալել թե գնա, էն կնիկը ասել է, թե. «Սիրտս էրում է՝ իմ մարդս է, թող ճոթերը հավաքեմ, տընեմ ո՛ւր՛ն ձիին վերա: Ետով էն պառավը հրամայել է, էն աղջիկն էլ հավաքել է, դրել ձիին վերա, ու ո՛ւր՛նք գնացել են:

Կունտին ձին էլ ուղիղ գնացել է մեծ քվորը տունը: Կունտին քըվորը մարդ առջը նրա ճոթերը տրել է ո՛ւր՛ուր վերա ու մին տեղ էլ քսել՝ էն

րուպեին էլ առողջացել է։ Ետով վեր է կացել թե գնա. էն առջն ասել է. «Ա՛ տղա, գնալ մի՛, գլուխդ փորցանք կըկյա՞»։ Կունտն էլի գնացել է։ էն աղբարին եզրովը շատ-քիչ գնացել, հասել է էն պառավին տունը, էն աղջկանը վեր կալել, փախել։ Պառավը վեր է կացել, առաջվաներին նման արել ու ձիին երկու անգամ գունդովը թխել, ձին գնացել է, մին վերստ է մնացել, թե նրանց ետիցը հասնի, էն Կունտը ձիին սովորեցրել է, թե՝ որ էն ձին գա, դու նրան ասի. «Թե ինչի՞ ես երկու ջահելներին համար դու էդ պառավին մեծացնում. վեր իլ երկինքը ու տրան վեր քցի»։ Էն պառավին ձին որ լսել է, հանկարծ կաղնել է։ Էն պառավը երկու անգամ գունդովը ձիին թխել է, որ գնա՝ նա չի գնացել։ Մին անգամ էլ որ թխել է, էս ձին որ վեր է իլել երկինքը ու էն պառավին վեր քցել՝ ճոթուպատառ է տառեր։ Ետով Կունտն ու ի՛րա՛ն կնիկը մին էլ ետ են տա՛ռել, գնացել էն պառավին տունը, էնտեղ կացել։

Աստվածանից իրեք...

## 96.ԹԱԳԱՎՈՐԻՆ ԻՐԵՔ ՈՐԴՈՑԸ ՎԵՊԸ

Իլել է չիլել մին թագավոր։ Սրան էլ իլել է իրեք որդի։ Էս թագավորը մին ժամանակ ի՛րա՛ն որդոցը կանչել է ու ասել. «Ես որ մեռնեմ, տուք ձախ ճանապարհով չի գնաք, բայց աչ ճանապարհով գնացեք»։ Ետով էս թագավորը որ մեռել է, սրան իրեք որդիքը գլուխ են վեր կալել, գնացել տեսել մին մեծ հոր, նրա ըռխին էլ մին մեծ քար քցա՛ծ։ Էս քարը վեր են կալել։ Մեծ եղբայրն ասել է, թե. «Ինձ կախ տըվեք, ես ջուր հանեմ խմենք»։ Ետով էս մեծ եղբորը կախ են տըվել, գնացել է տեսել հորին տակը լայն քա՛նտա՛ծ ու իրեք դուռը արած՝ մինը մին կողմիցը, մինը՝ մին կողմիցը, մինն էլ մին կողմիցը։ Գնացել է մին դուռը բացել, նի մտել տեսել իրեք գեղեցիկ աղջիկ մին սենյակում նստած։ Էս տղան ամենիցը մեծին վեր է կալել, հորիցը տո՛ւս եկել։

Ետով միջնակ եղբորն են կախ տրվել։ Էլի մեծ եղբորը գլխովը ինչ բան որ անց է կացել, նրա գլխովն էլ անց է կացել ու մին աղջիկ վեր կալած տո՛ւս է եկել։

Դրանից ետը փոքր եղբորն են կախ տըվել։ Նի է մտել, էլի էն մին դուռը բացել նի մտել, տեսել իրեք ձի՝ մինն ըսպիտակ, մինը՝ սև, մինը՝ աշխետ։ Ետով գնացել է մին դուռը բացել, տեսել՝ գանձով լիքը։ Մինն էլ բացել է,

տեսել՝ մին գեղեցիկ աղջիկ էնտեղ նստած, որ էն աղջիկն էլ ամենիցը փոքրն է իլել: Էս փոքր տղան վեր է առնում, թե տանի, էն աղջիկն ասում է. Առաջ դու տո՞ւս եկ, ետով՝ ես, չուն որ եթե ես տո՞ւս գամ, քո եղբարքդ քեզ չեն հանիլ»: Էն տղան ասել է, թե. « Իմ եղբարքս լավ մարդիկ են, Էտպես բանը չեն անիլ»: Նա էլ ասել է, թե, «Բան է, եթե ինձ եղբարքդ տանեն, էնտեղի ձիյանքը տեսե՞լ ես»: Նա էլ ասել է, թե՝ հա:

- Գնա ջանք ըրա ըսպիտակ ձին վեր իլ, որ տո՞ւս պիրի ըսպիտակ աշխարքը: Սև ձին չի վեր ինիս, չուն տո՞ւս կըպիրի սև աշխարքը:

Ետով էս աղջկանը հորիցը տո՞ւս են կալել, մնացել է էն տըղան ու էն տղին էլ ո՞ւրա՞ն եղբարքը տո՞ւս չեն կալել ու թողել են հորին մեջը, չուն որ նրա կնկանը ո՞ւրա՞նք վեր առնեն:

Ետով էս աղջկանը նրան եղբարքը վեր են կալել գնացել ո՞ւրա՞նց տուն: Ետով էս միջնակ եղբայրը ուզացել է, թե էն աղջկանը ո՞ւրա՞ն վերա պսակի, բայց էն աղջիկը պսակվել չի: Էսպես, էն տղան շատ ջանք է արել, թե պսակվի, էն աղջիկր պսակվել չի: Պատճառը որ ո՞ւրա՞ն նշանածին է մտիկ անում իլել:

Հիմիկ տրանց թողենք էստեղ ու ետ դառնանք խոսենք փոքըր եղբորն անից, որ մնացել է էն հորին մեջին: Էս փոքըր եղբայրը գնացել է ձիանցը գոմին տուռը բացել, ու գնացել է թե ըսպիտակ ձին վեր ինի, բայց սևն է եկել նի մտել տակը: Եվ էսպես, էն տղան շատ ջանք է արել, թե ըսպիտակը վեր ինի, բայց սևն է եկել մտել տակը: Վերջապես սևն է վեր իլել ու տո՞ւս է բիրել սև աշխարքը: Էս տղան գնացել է մին պառավի տան վեր եկել ու ծարաված է իլել: էն պառավիցը ջուր է ուզել: Էն պառավն էլ ասել է թե. «Քե մատաղ, էս քաղաքումը ջուր չկա, բացի այսինչ աղբուրիցը ու էն աղբուրին ակնին մեջին էլ մին վիշապ կա, որ ամենայն օր պետկ է մին տանից մին աղջիկ տանք նրան, որ ուտի, մին կուժ ջար տա մեզ, որ խմենք: Հիմիկ էլ թագավորին աղջկանը կարքն է, որ պետք է թագավորին աղջիկը տանեն տան նրան՝ ուտի, որ մին կուժ ջուր տա»: Էս տղան էն պառավին ասել է թե՝ ինձ տար վիշապին նշանց տուր: Էն պառավն էլ տարել է նշանց տրվել:

Էս տղան որ տեսել է, մին անգամ հրացանը արձակել է էն վիշապին վերա: Էն վիշապը աղաչանք է արել, թե մին անգամ էլ հրացանդ արձակի, բայց նա չի արձակել, պատճառը որ գիտում է իլել թե որ մին անգամ էլ արձակի, վիշապը կը կենդանանա: Եվ էսպես, ըսպանել է վիշապին: Էս

միջոցիս թագավորին աղջկանը պիրել են, թե տան էն վիշապին, տեսել են, որ ըսպանված է: Էն աղջիկը շուտ ծերքերը արյունոտ է արել՝ էն ըսպանող տղի սրտին ճխտել, պատճառը, որ նշան տ՛ա՛ռնա, որ էն տղան է ըսպանել:

Ետով խապարը գնացել է թագավորին, բայց թագավորը հավատացել չի: Ետով որ ՛իր՛ա՛ն աղջիկը ետ են բերել, էն ժամանակը թագավորը հավատացել է, ու էն աղջկանը պիրող մարդոցն անից հարցրել է թե. «Էն տղին կըճանաչե՞ք»: Նրանք էլ ասել են. «Չենք ճանանչիլ»: Ետով էն աղջիկը ասել է, թե. «Ես կըճանանչեմ»: Թագավորն էլ մին քանի հոգի է տրել էն աղջկանը հետ, թե . « Գնացեք էն տղին բիրեք»:

Նրանք էլ գնացել են ման եկել, քտել ու տարել թագավորին մոտ ու թագավորը հարցրել է, թե. «Դու ինձանից ի՞նչ կուզես»: Նա էլ ասել է, թե. «Մին բան չեմ ուզիլ, բայց մինակ ինձ տ՛ու՛ս պիր լույս աշխարքը»: Նա էլ միտք է արել ու պիրել էս տղին մին Հնդկահավ տըվել ու էն Հնդկահավին թեիցը մինը պուք տըվել տըվել տղին ու ասել, թե. «Դու էդ թևիցը ինչ-որ ուզես՝ տա քեզ կըտա»: Ետով էն տղին էլ էն Հնդկահավին վերա նստըցըրել, յոթ տիկ ջուր ու յոթ ոչխարի տմակ տըվել ու ասել, թե. «Ինչ ժամանակ որ էտ Հնդկահավը ծըվվա՝ էտ տմակիցը մինը ու էտ տիկ ջուրիցը մինը քցի բերանը»: Նա էլ ասել է, թե. «Լա՛վ»:

Էս Հնդկահավը էս տղին վեր է կալել, գնացել ու ամեն անգամ որ Հնդկահավը ծըվվացել է՝ էն տղան տմակիցը մինը ու էն տիկ ջուրիցը մինը քցել է բերանը: Մին ժամանակ էլ էն տմակը ու էն ջուրը ըռեխը քցելիս տմակը վեր է ինգել, էս տղան ՛իր՛ա՛ն ազդրը կտրել է, քցել նրա բերանը: Էն Հնդկահավը էն բոպեին իմացել է, որ նրա միսն է, ու լեզվին տակին պահել է: Ետով էս Հնդկահավը երբ որ նրան հասցրել է նրանց երկիրը ու վեր է տրել, թե գնա, էն տղան կաղլկի է տըվել: Էն Հնդկահավը ասել է, թե. «Բա ի՞նչի համար ես կաղլկի տալիս, ես եմ քեզ բիրել, ես պետք է կաղլկի տամ, դո՞ւ ես կաղլկի տալիս»: Ետով նրա ոտնին միսը ՛իր՛ա՛ն լեզվին տակիցը հանել է, տրել տեղը ու թագավորին տըված թևը ինքյ կալել քսել, ոտնը առողջացել է: Ետով էս տղան գնացել է մին ոսկերիչի շակյերտ մտել»:

Հիմիկ սրան էստեղ թողնենք ու ետ տ՛ա՛ռնանք ՛իր՛ա՛ն երկու եղբորցն անից խոսենք: Էս տղին միջնակ եղբայրը փոքր եղբորը նշանածին որ շատ զոռել է, թե՝ եկ պսակվենք, էն աղջիկը ասել է, թե. «Եթե որ դու գնաս ինձ համար մին ոսկի պոտանոցում մին ոսկի թռչուն տր՛ա՛ծ ու ոսկի կուտը

ուտելիս, պիրիր, էն ժամանակը ես քեզ վերա կըպսակվեմ»: Նա էլ ասել է, թե. «Լա՛վ»: Էս տղան գնացել է էն ոսկերիչին, որ փոքր եղբայրը նրան շակյերտ է մտել, նրան ասել է, թե. «Ինձ հմար մին էսպես բան շինի»: Բայց նա ասել է, թե. «Ես չեմ կարողանալ շինեմ»: Էն տղի եղբայրը, որ կոնտ է իլել, ասել է, թե. «Ինձ մին չըվալ տկողին տուր, ես կըշինեմ»: Դրա վարպետը (ուստան) ասել է, թե. «Ա՛տա, հիմիկ ես էս է հազար տարվան մարդ եմ, ես չեմ կարում շինեմ, հիմիկ դու էտ կոնտ տեղովդ շինելու ե՞ս»: Նա էլ ասել է, թե. «Հրամերեք»: Ետով էն տղան էլ գնացել է մին չըվալ տկողին բիրել, տըվել կոնտին: Էն կոնտն էլ տկողինն ու մին մուրճ է վեր կալել, գնացել մին սենյակում նստել, էն տկողինը կոտրատել, կերել: Ո՛ւրա՛ն վարպետն էլ ինքն-ինքն ասել է, թե. «Էն է չխկչխկոց է գալիս, հավատաս շինում է, գնամ տեսնեմ»: Գնացել է տեսել տկողինը կոտրատում է, ուտում: Ետով էս տղան բոլոր տկողինը կոտրատել է կերել ու էն թնը հանել է, ասել, թե. «Ա՛ թն, ես քեզանից կուզեմ մին ոսկի պոտնոց, մին ոսկի դուշ՝ ոսկի կուտը ուտելիս»: Էն րոպեին տեսել է, որ ամենն էլ տրա՛ծ էնտեղ: Ետով վեր է կալել, տրել գլխին, տարել տըվել ո՛ւրա՛ն միջնակ եղբորը:

Ետով էս թագավորին տղան էն իրիկունը պսակվելիս էս կոնտը էն թնը հանել է, ասել, թե. «Ես քեզանից մին ըսպիտակ ձի, մին ըսպիտակ ըզգեստ, մին թուր կուզեմ, որ էն թուրը տեղիցը հանեմ աղամաղամ անեմ, էն րոպեին ում որ ուզեմ, նրան ըսպանի: Ետով նա էլ բոլորը տըվել է: Էս կոնտը վեր է իլել ձին ու ըսպիտակ ըզգեստը կյեցել, էն թուրը կապել ու ձին քշել, գնացել տեսել թագավորին տղան գնում է պսակ: Էս կոնտը թուրը հանել է ու որ աղամաղամ արել, էն րոպեին ամենն էլ կտորվել են ու մնացել է էն հարսը ծետ մենակ: Էս հարսն էլ գնացել է ո՛ւրա՛նց տուն: Էքսը իրիկունն էլ մեծ եղբորը վերա պսակվելիս ժամանակը էլի գնացել է կտորել:

Ետ ով էն հարսը իմացել է, թե էտ բաներ անողն ո՛ւրա՛ն մարդն է ու գնացել է նրան հետ պսակվել ու մարդուկնիկ են տա՛ռել:

Աստվածանից իրեք...

## 97.ՇԱՀ-ՍԼԵՅՄԱՆԻՆ ՎԵՊԸ

Իլել է չիլել, մին մարդ։ Սրան էլ իլել է մին ջրաղաց, մին շըհա̀րում էլ մին ախկատ մարդ։ Էս ախկատ մարդը ամենայն օր աղվեսի մորթի է կյեցել, գնացել էն ջրաղացին մնացորդը գողացել, տարել կերել։ Ջրաղացպանն էլ եկել է տեսել, որ ջրաղացին վերա աղացքի մնացորդ չի կա։ Էս մարդը որ գողացել է կերել, ջրաղացպանը մին ժամանակ պիրել է զամբին տեղը կուպըր քըցել ու այյուրը կուպրին վերա շաղ տըվել։ Էն ախկատ մարդը եկել է, որ զամբը տանե, ձերքերը մնացել է կուպրին մեջին։ Ջրաղացպանը եկել է տեսել էն ախկատ մարդը աղվեսի մորթի կյեցած, աղվեսի կերպով եկել է, որ այյուրը գողանա։ Էս ջրաղացպանը ինքը-ինքը ասել է, թե. «Ես ի՞նչ անեմ, թակեմ ըսպանեմ, թե ի՞նչ անեմ»։ Էն ախկատ մարդը որ էս լսել է, ասել է, թե. «Քե մատաղ, ջանս քեզ մատաղ, ինձ ըսպանիլ միր, ես թագավորին աղջիկը քեզ հմար ուզեմ»։ Նա էլ ասել է, թե. «Չես կարել ուզես»։ Նա էլ ասել է, թե. «Տո̀ւ ինձ բաց թող, տես ես ուզում չե՞մ»։ Նա էլ բաց է թողել։

Էս ախկատ մարդը աղվես տա̀ռած գնացել է մին թագավորի սնտուկի տակը ծակել ու լա̀վ-լա̀վ ճոթեր տո̀ւս տըվել, տարել են ջրաղացպանին հմար էլ ու ո̀ւրա̀ն հմար էլ լավ շորեր կարել տվել ու կյեցել են։ Էն մարդը ջրաղացպանին անունը դրել է Շա-Սլեյման ու ո̀ւրա̀ն տղան շինել։

Էս ախկատ մարդը գնացել է մին ուրիշ թագավորին խնամեքարին վերա նստել, և ով որ էն խնամեքարին վերա նստի, էն կը նշանակի թե եկել է թագավորին աղջիկն ուզի։ Ետով թագավորը եշել է, տեսել ո̀ւրա̀ն խնամեքարին վերա մին մարդ նստած։ Կանչել է տըվել, տարել հարցրել, թե ո՞ւմ հմար ես ուզում։ Նա էլ ասեք է՝ Շահ-Սլեյմանին հմար։ Թագավորը ասել է թե գնա պիր տեսնամ ։

Էս մարդը գնացել է որ պիրի, Շահ-Սլեյմանը շուտ-շուտ շորերին մտիկ է անում իլել։ Էս մարդը Շահ-Սլեյմանին ասել է, թե. «Թագավորին քշտին էլ չի շորերիտ մտիկ անես, որ մտիկ անես, կասեն թե չտես է»։ Նա ասել է թե. «Լա՛վ»։ Էն մարդը Շահ-Սլեյմանին տարել է թագավորին տունը։ Էնտեղ Շահ-Սլեյմանը շորերին մտիկ է արել, թագավորը հարցրել է, թե. «Ինչի՞ հմար է շորերին շատ մտիկ անում»։ Էն մարդն էլ ասել է. «Շորերին հավան չի, նրա հմար է շատ մտիկ անում»։

Էս թագավորը Շահ-Սլեյմանին հավանել է ու ո̀ւրա̀ն աղջիկը պսակել

Շահ-Սլեյմանին վերա: Էս Շահ-Սլեյմանը վեր է կալել, գնացել: Եվ որովհետև ՝ուրա՝ն էլ տուն չի իլել, բացի էն ջրաղացիցը, աղվես տառնող մարդը առաջ է ինկել, գնացել տեսել մին հոտ ոչխար: Սրան սովորեցրել է, թե որ հարցնեն, թե՝ էդ ո՞ւմն է, ասի Շահ-Սլեյմանինն է: Էսպես, շատ մարդոց սովորեցրել է: Ուրիշ մարդիկը որ եկել են հարցրել, նրանք էլ ասել են, թե՝ Շահ- Սլեյմանինն է:

Էս աղվես տա՝ռնող մարդը գնացել է տեսել մին մեծ պալատ, ոսկով և արծաթով լիքը ու վիշապներր միջին նստոտած: Էն տռանն էլ խոտ է իլել դեզ տըված: Գնացել է վիշապազներին ասել, թե թագավորին դուշունը գալիս են ձեզ ըսպանեն: Նրանք էլ ասել են, թե. «Բա ինչպե՞ս անենք»: Նա էլ ասել է թե գնացեք մտեք խոտի տակը: Նրանք էլ գնացել են նի մտել, էն մարդն էլ գնացել է կրակը տրել խոտին ոռումը ու վառել, նրանց էրել: Ինքը գնացել է սենյակները գորգով ծածկել, պրծել ու գնացել Շահ-Սլեյմանի հարսանիքը պիրել էնտեղ: Շահ-Սլեյմանն էլ հարուստացել է, էն մարդն էլ նրա հայրն է տառել:

Աստվածանից իրեք խնձ՝որ...

### 98.ՍԱՏԱՆԱՆ ԵՎ ՉԱՐ ԿԻՆԸ

Ասում ա՝ մին դ՝ոնում մին չար կնեգյ մին սատանու նիետ մա՝րջ ա կյա՝մ, թա.«Հո՞ւ կկարե մըեծ չար պեներ փըռնե»: Մա՝րջ ըն կյա՝մ, ՝ուր՝ուր անա ճոկվում, մինը դիպա ծա՝խ, մինր դիպա՝ աչ:

Սատանան կյա՝մ ա դիպա ճաղացը, վըեր հինչ ա ճղացումը չար պեներ փըռնե, կռև քըցի:

Էն վըեր ա չար կնեգյը՝ կյա՝մ ա, տեսնում մին քարտաշ մախարիբը ծեռքին քար ա տաշում:

- Պա՛րով, ուստա:

- Աստծու պարին:

- Ուստա՛, հունց վըեր տեսնում ըմ, շատ օրախ ըս: Օզում ըմ սաբախ գյիդամ: Հի՞նչ կինի ասիս:

- Ըստուծանա թաքուն չի, քըզանա հինչ թաքուն ինի, ես մին լա՝վ կնեգյ օնիմ, նրա էշխավն ա համ լա՝վ պա՝ն ըմ անում, հա՛մ էլ օրախ ըմ:

- Էտ տու վըս ասում , մին տես ես էլ հավա՞ն ըմ, վըեր տեսնամ, ես կասիմ, փիսն ա, թա՝ լա՝վը:

- Իմ կնեգյը մին էն ջուռա օղլուշաղ ա, վըէր հա̀լա̀ ուրիշի իրեսը տեսալ չի:

- Չէ՛, ուստա, ես շատ ըմ խընթրում, վըէր մին նշան տա̀ս, քյինամ ծեր տոն, մին քու կընգանը տեսնամ:

Էս բա̀ննա̀հը տեսնում ա, վըրէր էս կնգանան պըրծնում չկա, ջուբան հանում ա տէրողորմիան, տալիս ա իրան, թա. «Կա, քյինա տես»:

Էս չար կինը ծեռքէրը ներկոտ ա անում, կյա̀մ բա̀ննա̀հի տոնը: Տոռնը թակում ա, կնեգյը մաչկյո̀ւսա̀ն հըրցնում ա. «Հու վա՞»:

Չար կինը խընթրվում ա տոռնը պա̀ց անել, ամմա բա̀ննա̀հին կնեգյը պա̀ց չի անում, ասում ա. «Մըէր տոռնը իմ մարթանը օքիման օրիշի հետե պեց չըմ անել»:

Չար կնեգյը բըննա̀հին տէրողորմյան նշանց ա տամ, կնեգյը տոռնը պեց ա անում: Չար կնեգյը յըրա յա ընկնում բըննա̀հեն կնկանը պաչում, համ էլ ներկուտ ծեռքը իրեսը քսո̀ւմ: Տեսա̀ն-տեննա̀ն խուսելանը ետը, էս չար կնեգյը ետ ա տեռնում, կյա̀մ բա̀ննա̀հեն կոշտը:

- Էն ա քու թարիփլամա կնեգյը, քյեցե, տեսե ներկըրարեն ծոցումը, օգում չար, թա տոռնն էլ պա̀ց անե:

Բա̀ննա̀հը հըվատում ա չար կնկա ըսածներեն, եր ա կենում, եր ա օնում մուխարիբը, վազ տամ դիպա տոն: Կնեգյը տոռնը պա̀ց ա անում: Բա̀ննա̀հը եշում ա տեսնում, վըրէր կնգա թոշին ներկու տեղեր կան: Էլ աղին ու բոզին էշում չի, մախարիբովը տամ ա կնգանը տեղն ու տեղը ըսպանում:

Հարայն ընգյնո̀ւմ ա շենը, էս կնկա ախպերտենքը հըվաքվում ըն, կյա̀մ տամ ո̀ւրա̀նց փըսեն ըսպանում, քվորը աջըղը հանում: Միենգյ էլ էս բըննա̀հեն ախպերտենքն ըն կյա̀մ, հընգեր, հըրևան լոխ մի մինը մին փաղ եր կալած տո̀ւս ըն կյա̀մ, կռվու: Շենը մին կոև, մին ա̀լա̀լում ա ընգյնո̀ւմ, վըէր աստված թափե, տերն ըզատե: Կլո̀խ ա, վըէր ճըղվում ա, շորեր ըն, վըէր ճըղորտվում ըն, մեյիդ ա, վըէր պարանց ըն քըցո̀ւմ:

Չար կնեգյը կյա̀մ ա սատանին կոշտը, թա տեսնա հինչ չար պա̀ն ա ըրալ ճըղացումը:

- Հը՞, հուեց ը՞ն կործերըտ:

- Վըէչինչ, լա̀վ ա,- սատանան ա ասում,- ճըղացեն ճո̀ւրը շըտըըցրալ ըմ, չանն էլ ծակալ ըմ, դա̀նը վըէր ա տեռնում քարեն յըրա̀ ցրեվ կյա̀մ, հա̀լա

դան պերողնեն կլխու չըն. լհա վըեր կլխու ընգյնեն կռննեն ըգյնելու վա ճղըցպանեն նհետ: Մին պատառ կաց, տես էս ա հինչ թկըմհակա ա ինելու:

Վա՜յ, քու տռնը շինվի, մին քյինա տես շենումը հի՞նչ կռև ըմ քըցա̀լ, հի՞նչ ա̀լա̀լում կա շենումը, կլո̀խ ա, վըեր ճըղվում ա, մեյիդ ա, վըեր մըեկնվում ա:

Սատանան քյինամ ա շենը, տեսնում հի՞նչ, շենը էրկու թա̀րա̀փի յա պըժենվալ, ո̀ւրո̀ւր տամ ըն, կտորում:

- Բա հո՜,- ասում ա սատանան,- կնեգյը վըեր բհամ ա եկալ, էն վախտը հա̀լա̀ ըշխարքեն իրեսին սատանան իլա̀ծ չիլալ:

## 99.ՊԵԼ ԱԽՊՈՐԸ ՀԱ̀ՔԱ̀ԹԸ

Իլա̀լ ա չիլա̀լ մին մարթ: Էս մարթիս իլա̀լ ա էրկու տղա, մեծը պել, պիծինը՝ խելունք: Էս խելունք ախպերը աման օր վար անում ա իլա̀լ, իրան հացն էլ նհետը տանում ա իլա̀լ: Մին վախտ մտնան քիցալ ա, հացը տարալ չի: Պել ախպերը հացը եր ա կալալ, թա տանի: Էն օրն էլ արև ա իլա̀լ, տանելիս տեղը որ արևը տվալ ա, շոխկը ինգյա̀լ ա քամակը: Քմակին եշալ ա, տեսալ շոխկը քմակին, գիտացալ ա թա շոն ա, մին հացը քիցա̀լ ա աղաքը: Մինչև հա̀նդը հսնիլը ըստըհենց ընելավ հացը կլխալ ա: Հա̀նդումը խելունք ախպերը ասալ ա. «Հացը հոր ա՞»: Նա է ասալ ա. «Տերտերանց շոնը հետաս եկավ, վխեցի թա կծի, հացը տըվի ո̀ւրա̀ն, կերավ»: Խելունք ախպերը ասալ ա. «Դե որ տըհենց ա, եկ փախչենք»: Նա էլ ասալ ա, թա. «Ե՜կ»: Գիլոխըն եր կալալ, քյինացալ տեսալ մին առչի պո̀ւն: Նի ըն մտալ, տեսալ մեչին մին առչ, էս առչիս նհետ ախպեր ըն տառալ էս շա̀րթավը, որ նոբաթ-նոբաթան մինը տանը կենա, առչին լկուտնեն լղցնի ու մեկալներին հետի էլ խորագյ իփի, նահանք էլ քյինան որս անեն, պիրեն որ օտեն:

Ամաքը մին դո̀նում տանը կացալ ըն, նոբաթը ինգյալ ա պել ախպորը: Էս պել ախպերը պիրալ ա թա լղցնի. սիրուն փռնալ ա ածալ ղզղանին մեչը, մին լա̀վ իփ տըվալ, ետնան տարալ ածալ կրպետին տակը: Խելունք ախպերը առչ ախպորը ասալ ա, թա. «Առչ ախպեր, տու որս ըրա, ես քյինամ քոթեթնեն լըղըցնեմ. նա խամ ա, կարալ չի լըղըցնի»: Առչն էլ ասալ ա. «Լա̀վ ա»: Նա եկալ ա տեսալ, որ քոթեթները խաշած, կարպետին տակը տըված, ասալ ա. «Պե՜լ ախպեր, եկ փախչենք, որ առչը կըկյա մեզ օտի»: Նա էլ ա ասալ ա, թա. «Հա՜»: Էս առչիս տանիցը ալյուր ըն եր կալալ, փախալ

քյինացալ մին օրա̈նա̈ ճաղաց: Առչը եկալ ա տեսալ լակոտնեն իփա̈ծ, կարպետին տակը տըված, տրա հետի ման կյալավ եկալ ա ըստահիանց քիթալ, խելունք ախպերը հեն ա իլա̈լ շեմքին ա̈ոթա̈կ նստած: Շուտ առչը խելունք ախպորը պկիցն ա կաց ալ, թա. «Տո̈ւ ըս նիենց ըրալ»: Պել ախպերը լիա̈ որ էս տեսալ ա, մին կրկենի յա շինա̈լ, տիրա̈լ ճըղըցաքարին երան հու ասալ. «Հու որ էս կրկենուն նի կյա̈, ընդրա ըսպանելու ըմ»: Խելունք ախպերը որ էս ըսկացալ ա, ճահտ ա ըրալ, քոհ տվալ առչին քիցա̈լ պլիթին երան: Պել ախպերը եր ա կացալ առչին պկին հոփ տըվալ, ա̈րո̈ւնը ո… տո̈ւս ածալ: Առչը ասալ ա, թա. «Պել ախպեր էտ հի՞նչ ըս անում»: Թա. «Հա̈նա̈քյ ըմ անում»: Նա էլ ձերքը տարալ ա ո… նի տըվալ, ա̈րո̈ւնը ձերքումը պիրա̈լ, թա. «Պա էս հանաքյ ա՞» :

Էս առչիս ըստեղ ըսպանալ ա: Ճղացին քարն էլ քիցա̈լ ա կոռնը, ախպորը ասալ, թա. «Եկ քյնանք»: Քյինացալ ըն, ո̈ւրո̈ւկյո̈ւնը մին չինա̈րի եր իլա̈լ: Ընդեղ էլ քյարվան ա իլա̈լ վեր եկած: Պել ախպերը ասալ ա, թա. «Խելունք ախպեր, կյո̈ւզս կյամ ա»: Նա էլ ասալ ա. «Աղա կյո̈ւզիլ մի, որ կըկյան մեզ ըսպանեն»: Ասալ ա, թա. «Ընդե չէ, լիհա̈ կյո̈ւզիլ պիտիմ»: Ետնան կյո̈ւզալ ա քյարվանին երա: Քյարվանին մարթիքյր ասալ ըն. «Աստված մեզ երա պարկացալ ա, տես հունց թոռ ա կյա̈մ»: Պել ախպերը հելլա ասալ ա. «Խելունք ախպեր, ք… կյա̈մ ա»: Նա էլ ասալ ա, «Ա՛դա̈, ք… մի, որ կըկյան մեզ ըսպանեն»: Նա էլ ասալ ա. «Չէ՛, ինիլ չի, ք… պիտիմ»: Առաջ ճղըցաքարը եր ա քիցալ նաhանց ճառթոտալ: Քշերավ էրկու ախպերը վեր ըն եկալ, պել ախպերը յորղան-դո̈շակն ա հըվաքալ, խելունք ախպերն էլ խազնան: Եր ըն կալալ քյինացալ: Ո̈ւրո̈ւկյո̈ւնը խելունք ախպերը ասալ ա. «Պե՛լ ախպեր, յորղան-դո̈շակ տո՛, քոն ինեմ»: Նա էլ ասալ ա, թա. «Խե՞ յըմ տամ, յորղանին իրեսավը մին փռած փող տո , տամ»: Խելունք ախպերը պիրալ ա շարալ, մին չեթի տեղ պակաս ա մնացալ: Պել ախպերը ասալ ա. «Տալ չըմ»: Էս խելունք ախպերը ճար չի քիթա̈լ, քյինացալ ա առտըմը քոն իլա̈լ, ցոռտը տվալ ա խելունք ախպերը մեռալ ա:

Պել ախպերը քյինացալ ա քշերավ տեսալ որ մեռած, կոքնեն էլ պա̈ց: Պել ախպերը ասալ ա, թա. «Ըստրա եշի, ինձա̈նավ ծիծաղում ա»: Եր ա կալալ մին էշի երա կպռաալ, մին էլ մին դյո̈ւմջակ ըրալ ծեռքումը տիրա̈լ. ետավ տարալ ինքյը կյաղլու կացալ,, էշն էլ առտը օտում ա իլա̈լ: Առտատարը ընդաղան ճղճղացալ ա, ասալ. «Աղա̈ հե՛յ, հե՛յ, էշը առտը

կերավ»: Որ ըստըհենց շատ ճղճղացալ ա, ըսկացալ չըն: Վազ տալավ եկալ ա էս մեռած տղին քմական չռմաղավը որ թխալ ա, ինգյա̈լ ա էշին քամակը: Պել ախպերը տո̈ւս ա եկալ ճղճղացալ, թա. «Հա՛յ, իմ ախպոր ըսպանեցին, ես հես ա քյինում ըմ արզ անեմ»: Էս մարթս ըղաչանք ա ըրալ, թա. «Քմատաղ, ջանս քմատաղ, իմ տոնս-տեղս, առտս, հինչ որ օնեմ, քեզ ինի, քյնա̈լ մի առզ անիլ»: Ինքյ կալալ, եր կալալ լոխ, քյինացալ հորը տոնը:

Աստվածանից իրեք խնձոր վեր ընգյնի՝ մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չի լսողին:

## 100.ՌՍՊԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլա̈լ ա̈ չիլա̈լ մին շիհա̈ր, ըստեղ էլ մին Ռսպ: Էս Ռսպըս էլ ղասապ ա իլա̈լ: Էս շիհա̈րումն էլ մին մարթ ա իլա̈լ, անումն Արզըման: Էս Արզըմանը շատ հարուստ ա իլա̈լ: Մին վախտ քյինացալ ա էս Ռսպիցը մես առալ փողն էլ տըվալ չի: Մին քանի վախտ անց ա կացալ, էս Ռսպն էլ քյինացալ ա Արզըմանին տռանը կաղնալ հու ասալ թա. «Արզըմա՛ն, փողըս տալու՝ տո՛, Արզըմա՛ն, փողըս տալու՝ տո՛»: Ըստըհենց շատ ասալ ա, էս Արզըմանը ո̈ւրա̈ն գյա̈դոցն ասալ ա, թա. «Մին տո̈ւս եկեքյ տեսեք էն հո՞ւ վա»: Տո̈ւս ըն եկալ, տեսալ զատ չի կա: Դե մին պիծի զատ ա էլի, տեսալ չըն: Քյինացալ ըն ասալ. «Աղա՛, ընդեղ զատ չի կա»:

Էլհա գյա̈դեքյը որ քյինացալ ըն, ասալ ա. «Արզըմա՛ն, փող ըս տալու՝ տո՛, Արզըման, փող ըս տալու՝ տո՛»: Ըստըհենց շատ ասալ ա, Արզըմանն ա տո̈ւս կյա̈մ, ասում, թա. «Դե էտ հու վը՞ս, եկ ըստեղ»: Էս քյինացալ ա քշտին կաղնալ ասալ, «Արզըմա՛ն, փող ըս տալու՝ տո՛»: Թա, «Դե որչա՞նք տամ»: Թա՝ մանեթկես: Մանեթկեսը տվալ ա, տարալ ա հմբարալ, տեսալ մին կապեկ պակաս:

Եկալ ա Արզմանին տռանը կաղնալ, ասալ, «Արզըման, փող ըս տալու՝ տո՛»: Էլհա Արզըմանը ո̈ւրա̈ն գյա̈դին ասալ ա, թա. «Մին տո̈ւս եկ, տես էն հո՞ւ վա»: Տո̈ւս ա եկալ տեսալ՝ մարթ չի կա, քյինացալ ա ասալ «Ա՛ղա, մարթ չի կա»: Հելլա որ գյա̈դան քյինացալ ա, ասալ ա. «Արզըմա՛ն, փող ըս տալու, տո՛, Արզըման, փող ըս տալու, տո՛»: Արզըմանը տո̈ւս ա եկար թա. «Էտ հու վը՞ս, ե՛կ ըստեղ»: Էս Ռսպը քյինացալ ա քշտին կաղնալ ա, ասալ, թա. «Արզըմա՛ն, փող ըս տալու, տո՛»: Թա. «Ընդե որչա՞նք ա, թա չորս հա̈րո̈ւր մանեթ»: Չորս հա̈րո̈ւր մանեթը տվալ ա, տարալ ա հմբարալ,

տեսալ մին մանեթ պակաս: Էլիա քյինացալ ա Արզըմանին տռանը կաղնալ հու ասալ, թա. «Արզըմա՛ն, փող ըս տալու, տո՛, Արզըման, փող ըս տալու, տո՛»: Արզըմանը տո՞ւս ա եկալ, թա. «Հու վը՞ս, եկ ըստեղ տեսնամ»: Քյինացալ ա քշտին կաղնալ, ասալ. «Արզըմա՛ն, փող ըս տալու, տո՛»: Ասալ ա, թա. «Ըրչա՞նք ա»: Նա էլ ասալ ա, թա. «Հինգյ հա՛րո՞ւր մանեթ»: Հինգյհա՛րո՞ւր մանեթը տվալ ա:

Ետնան մին դո՞նո՞ւմ էլ քյինացալ ա ասալ յա եկ ախպեր տա՛ռնանք, յա էլ քու փողերտ լոխ կըմսխեմ: Թա. «Դե լա՛վ ա, եկ ախպեր տա՛ռնանք»: Ըստեղ ախպեր ըն տա՛ռալ: Էս Արզըմանը ասալ ա. «էս հունց անե՞մ, էս հունց չանե՞մ, որ ըստրա ըսպանիլ տամ»: Գյա՛դոցը սվըրցրալ ա, թա. «Դե Ոսպին փռնեցեքյ, քիցեցեքյ ղազանին մեչը, իփեցեքյ, տիրեքյ փլավին երան, ես օտեմ: Էս գյա՛դեքը Ոսպին փռնալ ըն, իփա՛լ, տիրա՛լ փլավին երան, տարալ տըվալ ո՞ւրա՛ն , կերալ ա: Էս Ոսպը ըստրա փորին մեչին փորը չնկռոտալ ա: Էս Արզըմանն էլ ո՞ւրա՛ն գյա՛դո՞ցը մարթը մին թոր ա տվալ թա. «Ես հես ա քյո՞նո՞ւմ ըմ ք...., ք.... տեղը եկեքյ, որ Ոսպը տո՞ւս կյա՛, թրավը թխեցեքյ, ըսպանեցեքյ»: Ետնան քյինացալ ա թա ք..., գյա՛դեքյը քյինացալ ըն մինն էն կոխկին ա կաղնալ, մինը՝ էն կոխկին: Լիհա՛ որ ք... ա, թրավը թխալ ըն՛ ո... կտրալ: Ետնան պերալ ըն ընտրա ո... մա՛հլա՛մ տիրա՛լ, աղցրալ: Ետնան էս Ոսպըս տո՞ւս ա եկալ, եկալ, թա. «Լա՛վ ա, տու վեր ինձ օզում իր թա ըսպանես, էտա ըտըհենց կինի հա»: Եկալ ըն բըշա՛լ, պըծալ: Էս Ոսպըս մին հետ ասալ ա, թա. «Ինձ հետի կնեգյ օզի, յա էլ էս սհաթըս քեզ կըսպանեմ»: Թա՝ լա՛վ ա: Էս Ոսպին հետի կնեգյ ըն ըրալ:

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝լսողին, մինը՝չիլսողին:

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1.ՎԸԵՍԿԵՔՅԱՔՅՈՒԼ ՏՂԵՆ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 8-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», ութերորդ գիրք, Թիֆլիս, 1894, էջ 36-39): Հեքիաթի վերնագրի տակ նշված է՝ Ղարաբաղի բարբառով, իսկ էջատակին դրված է հետևյալ ծանոթությունը. «Ղարաբաղի բարբառով գրած սույն հեքիաթները - Վեսկեքյաքյուլ տղեն հաքյաթը, Թաքավերեն տղորցը հաքյաթը, Խալ անիմ, խալիչա անիմ, երան նստիմ, դիզան անիմ, Ասլան-Բալասուն հաքյաթը և Պառավ կնգանը հաքյաթը, հրատարակում ենք հանգուցյալ մանկավարժ Առաքել Բահաթրյանցի ստվար ժողովածուից, որը հանձնված է մեզ տպագրելու»:

ԲԱ-ում պահպանված Տ. Նավասարդյանցի բաժնի նյութերից հայտնի է, որ Ա. Բահաթրյանցը այդ հեքիաթները ժողովել է 1860-ական թվականներին Շուշիում:Հեքիաթասացի և հեքիաթի գրառման հանգամանքների մասին այլ տեղեկություններ չկան:

## 2.ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍՈՒՆ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 8-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», ութերորդ գիրք, Թիֆլիս, 1894, էջ 48-60): Հեքիաթի վերնագրի տակ նշված է՝ Ղարաբաղի բարբառով: Հեքիաթը գրի է առել Ա. Բահաթրյանցը 1860-ական թվականներին, Շուշիում (տե՛ս №1 հեքիաթի ծանոթագրությունը):

## 3.ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂՈՐՑԸ ՀԱՔՅԱԹԸ

[Քաչալ ախպերը]

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 8-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», ութերորդ գիրք, Թիֆլիս, 1894, էջ 40 -45): Հեքիաթի վերնագրի տակ նշված է՝ Ղարաբաղի բարբառով: Հեքիաթը գրի է առել Ա. Բահաթրյանցը, 1865 թ. մարտ-օգոստոս ամիսներին, Շուշիում:

Պահպանված է գրառման ձեռագիրը (տե՛ս ԲԱ, Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, № 2)։

## 4.ԹԱՔԱՎԵՐԵՆ ՏՂՈՐՑԸ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 9-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», իններորդ գիրք, Թիֆլիս, 1902, էջ 78-82)։ Հեքիաթի վերնագրի տակ նշված է՛ Ղարաբաղի բարբառով, իսկ էջատակին դրված է հետևյալ ծանոթությունը. «Հանգուցյալ Առաքել Բահաթրյանցի ժողովածուից հրատարակում ենք հետևյալ հեքիաթները, «Թաքավերեն տղորցը հաքյաթը», «Քասիպ մարթին հաքյաթը», «Խորթ ախճկանը հաքյաթը» և «Քոսակեն հու քաչալեն հաքյաթը»։ ԺԲԱ-ում նշված վերջին՝ «Քոսակեն հու քաչալեն հաքյաթը» գրի է առել Գ. Բահաթրյանը (տե՛ս այս հատորում այդ հեքիաթի ծանոթագրությունը), իսկ մնացած հեքիաթները գրի է առել Ա. Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին, Շուշիում։ Հեքիաթասացի և հեքիաթների գրառման հանգամանքների մասին այլ տեղեկություններ չկան (տե՛ս ԲԱ, Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1, № 2)»։

## 5.ՔՅԱ̈ՍԻԲ ՄԱՐԹԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 9-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», իններորդ գիրք, Թիֆլիս, 1902, էջ 90- 95)։ Հեքիաթի վերնագրի տակ նշված է՝ Ղաբարաղի բարբառով։ Հեքիաթը գրի է առել Ա. Բահաթրյանցը I860 թ. մայիս-օգոստոս ամիսներին, Շուշիում ։ Պահպանված է հեքիաթի գրառման բնագիրը (տե՛ս ԲԱ, Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, №2)։

## 6.ԽՈՐԹ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 9-րդ գրքույկում հրատարակված բնագրի (Տ. Նավասարդյանց, «Հայ ժողովրդական հեքիաթներ», իններորդ գիրք, Թիֆլիս, 1902 թ., էջ 86-89)։ Հեքիաթի տակ նշված է՝ Ղաբաբաղի բարբառով։ Հեքիաթը գրի է առել Ա. Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին, Շուշիում։ Պահպանված է

հեքիաթի գրառման բնագիրը (տե՛ս ԲԱ, Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ I, №2):

## 7.ԿՅՈ̀ՒԼ ՏԵՌԱԾ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հայ Ժողովրդական հեքիաթների» տասներորդ գրքույկում հրատարակված բնագրի Թիֆլիս, 1903, էջ 36-43):

Հեքիաթի անվանման տակ փակագծում նշված է՝ Ղարաբաղի բարբառով, իսկ էջատակին տրված է հետևյալ ծանոթությունը, «Առաքել Բահաթրյանցի ժողովածուից հրատարակում ենք Ղարաբաղի բարբառով գրած սույն հեքիաթները»: Սույն հեքիաթի առթիվ Տ. Նավասարդյանցը ծանոթության կարգով նույնպես էջատակին նշում է. «տե՛ս «Խմոր ուտող էրեխեն»- արարատյան բարբառով գրած, որ համարյա նույն հեքիաթն է»: Նշված արարատյան բարբառով հեքիաթը գտնված է 10-րդ գրքույկում (էջ 3-14) տե՛ս «Հայ ժող. հեքիաթներ», հատ. 2-րդ:

Այս հեքիաթի գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Տ. Նավասարդյանցի ֆոնդում (գործ 1, №2): Հեքիաթը գրի է առել Ալ. Բահաթրյանցը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին, Շուշի քաղաքում:

## 8.ՄԸԵՌԱԼԻՆ ՀՈՒ ԱԽՃԸԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Տպագրվում է առաջին անգամ: Հեքիաթի գրառման ձեռագիրը, որ հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում:

Հեքիաթը գրի է առել Գրիգոր Բահաթրյանը I860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

## 9.ՕԽՏԸ ԱԽՊՈՐՑ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որ հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում Լ Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1, №2):

Հեքիաթը գրի է առել Գրիգոր Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին:Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 10.ՄԻՍԻԿ-ՄԻՍԻԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1, №2):

Հեքիաթը գրի է առել Գր. Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 11.ԹԱՔԱՎԵՐԻՆ ԱԽՃԿԱՆԸ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1 , № 2):

Հեքիաթը գրի է առել Գր. Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 12.ԿՅՈՌՔՆՈՒԿԸ ՎԸԵՐ ԱԽՃԻԿՅ Ա ՏԸ̀ՌԱԼ, ԸՆԴՐԱ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1, № 2):

Հեքիաթը գրի է առել Առաքել Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 13.ՕՎ ՍՈՎԴԱՔՅԸ̀ՐԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 1, № 2):

Հեքիաթը գրի է առել Առաքել Բահաթրյանը I860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հերիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 14.ԴՈ̀ՐՎԻՇԵՆ ՀԱՔՅԱԹԸ

Հեքիաթի գրառման ձեռագիրը, որը հիմք է ծառայել ներկա հրատարակության համար, պահվում է Բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանի ֆոնդ, գործ I, № 2):

Հեքիաթը գրի է առել Առաքել Բահաթրյանը 1860 թ. մայիս-օգոստոս ամիսներին: Բանահավաքը հեքիաթասացի և հեքիաթի գրառման մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում:

### 15.ՕՑ-ՄԱՆՈՒԿԻՆ ՀԱՔՅԱԹԸ

Նամարդ - տմարդ

Նամուս - պատիվ

Նան - ու, և, նաև

Նաչաղ - հիվանդ

Նաչաղանալ - հիվանդանալ

Նարդըվան - սանդուղք

Նա̀փա̀ս - շունչ

Նըեստան - նրանից

Նըեստա կենալ - կպչել

Նըհախ - իզուր, ապարդյուն

Նըղանալ - 1. հոգնել, 2. դժգոհ լինել

Նիզյա̀րա̀ն- անհանգիստ

Նի մննել (նի մտնել) - ներս մտնել

Նի կենալ - այրվել, վառվել, կրակը կպչել

Նի կյա̀լ - կպչել

Նի մնալ - տարվել, ապշել, հետաքրքրվել

Նի քաշիլ - 1. ներս քաշել, 2. կոպիտ ձևով հագնել, անճաշակ հագնել

Նիհենց (նհենց) - այնպես

Նհետ - հետ

Նհետ անել - փակել, ծածկել

Նշանց տալ - ցույց տալ

Նոբաթ - հերթ

Նոթ - նավթ

Նոխուղ - սիսեռի մի տեսակը

Նորաքյիսա̀ - նոր հարստացած մարդ

Նոքյար - ծառա

Նումեր - համար

## Շ

Շալլաղ (շալլըեղ) - մտրակ

Շախկա - մորթված անասունի կեսը

Շակերդ (շա̀գյերդ)- աշակերտ (արհեստավորի)

Շահ - 1. տոկոս, 2. օգուտ

Շա̀հի ( շիհա̀նուց ) - հինգ կոպեկանոց

Շամ - մոմ

Շամասեր (շըմասեր) - մոմասեր

Շամդան - մոմակալ

Շանջաղ - գնդասեղ

Շաղվել - 1. շփոթվել, 2. գժվել

Շա̀րթ - գրազ

Շարմաղ - սիրուն

Շափաղ - շող, փայլ

Շեբեթ - շաբաթ

Շեհեր (շըհա̀ր) - քաղաք

Շեն - գյուղ

Շենահավա (շինըհավա) - գյուղն իր բոլոր բնակիչներով

Շենբա̀շեն- գյուղեգյուղ

Շըլթաղ - շառ

Շըհաղ- 1. վկա, 2. աղունավարձ

Շըհանց տալ - ցույց տալ

Շընացե (շինացե) - գյուղացի

Շընլակուտ - շան լակոտ

Շըվաք - ստվեր

Շիլ ինգյիլ - մոլորվել, սխալվել, շփոթել

Շինամաչ - գյուղամեջ

Շիպիլկա (շպիլկա) - 1. հերակալ, 2. կցասեղ, 3, զամիկ, մեխիկ, 4. պտուտաձողիկ

Շիրեփ - շերեփ

Շլինքաքյոք - վզակոթ

Շլիպլիթ (շիլիպլիթ) - եփած ու չորացրած սալոր

Շհանց տալ - ցույց տալ

Շիանոռնը - նռան խոշոր տեսակը

Շղըհարել (շըղհարել) - թափահարել, թափ տալ

Շո̀ւշա̀ - ապակի

Շոխկ - ստվեր, շվաք

Շոռ կյա̀լ- ման գալ, պտտվել

Շորվա - կերակրատեսակ

Շոք- 1. հով, 2. ստվեր

Շողըբանի կըտըրել (շուռղըբանի կտրել) - անընդհատ պտտվել, շուռ գալ

Շուկուկու տալ - ծորալ, շատրվանել (արյունը, ջուրը և այլն)

Շփոթ - ալյուրից պատրաստված կերակուր

Շքըռամաչ - երկու ոտքերի արանքը

Շքեռ- շեք

## Ո

Ոզ - վիզ

Ոթես (վըեթես) - գետնափոր բզեզ

Ոռթնը (վըեռհնը) - որդ

Ոռթնած (վըեռթնած) - 1. ոջլոտ, 2. որդեր առաջացած, նեխած

Որցակականչին (վըրցըկկանչին) -վաղ առավոտյան, աքլորականչին

## Չ

Չաղիր (չաղր) - վրան

Չալ- խայտաբղետ

Չալա (չիլա) - ապահով տեղ անձավում, բուն

Չալըխ (չալախ) կյա̀լ-տե՛ս չալիշ կյալ

Չալիշ կյա̀լ (չալըշ կյալ)- 1. դես ու դեն ընկնել, 2. շատ չարչարվել, 3. թպրտալ

Չալիկ - գավազան

Չախկու - չախու

Չախմախ - տե՛ս Չըխմըխաքար

Չամադան - ճամպրուկ

Չա̀նգյ (ճանղյ) - ճանկ

Չարխի ղըզղան (չարըխի ղըզղան) - մեծ կաթսա (օղի, գինի քաշելու, ճաշ պատրաստելու համար)

Չափար - ցանկապատ
Չափարախ (չափալախ) - 1. կրնկակոխ, 2. ապտակ
Չաքյմա - կոշիկ
Չեթ - քառորդ
Չըլմըլոտիկ (չըլմըլոտիգյ) - գույնզգույն
Չըխմըխաքար - կայծքար
Չընկերավը (չինգյերավը)-ճանկերով
Չիմ - բոլորը
Չխարակ - ճախարակ
Չյո̈ւնքյի (չո̈ւնքյի) - որովհետև
Չոբան - հովիվ
Չոլ (չո̈լ) - 1. դաշտ, 2. դուրս, 3. հարթ տեղ
Չոմաղ - մեծ և հաստ գավազան, մահակ
Չովդառ - անաստւն գնող
Չորանը (չերանը) -մինչև
Չո̈րաքչի (չո̈րաքյչի) - հացթուխ
Չորքըմջի (չորսինջի )-չորրորդ
Չոփ քցիլ - վիճակ հանել
Չութ - արոր
Չումար - ինչու համար
Չուշտ - շուտ
Չուվալ - ջվալ
Չուվան - պարան
Չուրը (չորը) - մինչև
Չքորանը (չքերանը, չքորը) - մինչև

Պ

Պադվալ - նկուղ
Պալքյի (բալքյի) - գուցե
Պահիլ (պըհիլ) - հողը բահով փխրեցնել
Պաղարճ - առանց թթխմորի թխած հաց
Պան (պեն) - բան
Պանալ (պենալ) - բացել
Պաշ - լանջ, թումբ

Պատառ - 1. քիչ, 2. կտոր
Պատարաք (բաղարաքյ) - 1. պատարագ, 2. քելեխ
Պատրոնդաշի - փամփշտակալ
Պարախոդ (պըրախոդ) - նավ
Պարան կյա̀լ - 1.փլվել, 2. շուռ գալ, պառկել
Պարան տալ - 1. թափել, 2. շուռ տալ
Պարանց քցիլ - պառկեցնել
Պարի - բարի
Պա̀ց-պիցըհար (պեց-պիցըհա̀ր) - լրիվ բաց
Պեժինք (պեժինքյ) - օժիտ
Պել (պըել) - գիժ, խենթ
Պեղարճ (պեղաճ) -բաղարջ
Պեմբա̀կ - բամբակ
Պեն - բան
Պենդ (պըենդ) - 1. ժլատ, 2. պինդ, ամուր
Պենվա̀լ - բացվել
Պեպեգյ (պեպիգյ) - բոբիկ
Պեռնել - բեռնել
Պեռնը - բեռ
Պեց - բաց
Պեցո̀ւր - բարձր
Պերա̀ն - բերան
Պըելի(պելի) - քավոր
Պըժենիլ (պիժա̀նիլ) - բաժանել
Պըժին-պաժին(պիժըն-պեժին - բաժին -բաժին
Պըլանալ - գժվել, խելագարվել
Պըլացած - գժված, խելագարված
Պըկըսոթուն - պակասություն
Պըրանել (պըրանվել) - պառկել
Պըցըրցնել (պիցըրցնել) - բարձրացնել
Պիլա̀նի - բանալի
Պիծի- փոքր
Պիճ - ապօրինի երեխա

Պիտում ա (պետմա) - պետք է

Պիրիլ - բերել

Պլիթ - բլիթ

Պհամ կյալ - առաջ գալ, ծնվել, ստեղծվել

Պոեզ - գնացք

Պոլ - հատակ

Պոկ - բուկ

Պող - կրակի շեղջի մի հատիկը

Պռանչիլ - բառաչել

Պռոշ - շուրթ

Պռոշտի անել - համբուրվել

Պտատել - փաթաթել

Պտոկ - 1. կրծքի պտուկ, 2. ծայր, գագաթ

Պրթում-պրթում անել - կտրել, մանր մասերի բաժանել

Պրընոտել ( պըրրոնոտել) - մի քանի հոգով պառկել

Պո̀ւլ - խմորագունդ

Պո̀ւն - բուն

Պո̀ւրթ - բուրդ

Պո̀ւրտող- պղտոր

Պո̀ւրտողել - պղտորել

Պո̀ւրո̀ւտ - բրուտ

**Ջ**

Ջանլաթ - դահիճ, տե՛ս նաև Ջալլադ

Ջանավար - գազան

Ջա̀մտա̀ք (ջանդակ) - 1. մարմին, 2. դիակ

Ջամբար ինիլ - ազատվել

Ջամահաթ (ջահամաթ) - ժողովուրդ

Ջալլադ - դահիճ

Ջամ - մետաղե աման՝ խմելու կամ կերակրի համար

Ջա̀նջա̀լ - չարչարող, գլխացավանք պատճառող, որևէ բան դժվարությամբ կատարող, ձգձգող

Ջա̀րգյ - շարք

Ջա̀րգյիլա̀մա̀ (ջըրգյըլա̀մա̀) - շարքով

Ջեյրան - եղջերու
Ջեջիմ - կարպետ, գործվածքի տեսակ
Ջըհ̀ընդ̀ըմ (ջըհ̀ըննըմ) -դժոխք
Ջընթըրըմ (ճընթըրըմ) - խիստ պատռված
Ջիհիլ (ջհիլ) - պատահել, հանդիպել
Ջինս (ջիս) - տոհմ, ցեղ
Ջո̀դ - կոշտ, կոպիտ
Ջվալ - պարկ
Ջտ̀ընոց - վզնոց
Ջուբ - գրպան
Ջո̀ւհո̀ւդ (ջհո̀ւդ ) հրեա
Ջուղաբ (ջողոբ) - պատասխան
Ջուռա - տեսակ
Ջուվար - մարդ

## Ռ

Ռադ անիլ - կորցնել, հեռացնել, վտարել, սպանել
Ռազի կենալ - համաձայնել
Ռանգյ - գույն
Ռանչպար - հողագործ
Ռաստ կյ̀ըլ - հանդիպել
Ռըեխ - երախ
Ռըհ̀ըթ - ժողովուրդ
Ռըշվաթ - կաշառք
Ռիսկ - համարձակություն
Ռուզի - եկամուտ, բերք

## Ս

Ս̀ըբ̀ըբ - պատճառ
Սաբախ - 1. առավոտ, 2. վաղը
Սադաղ- մատաղ
Սազ - երաժշտական գործիք
Սալամաթ - առողջ, ապահով
Սալդաթ - զինվոր
Սահանք - սրանք

Սաղ-սալամաթ - ողջ-առողջ
Սա̀մթ - հարմար, հարմար տեղ
Սայաղ - զգույշ
Սանատկյա̀ր - ահեստավոր
Սանդուղ (սանդող) - սնդուկ
Սանդր - սանր
Սապոժնիկ - կոշկակար
Սապոկ - ճիտկավոր կոշիկ
Սա̀ս - ձայն
Սավահի - բացի
Սարսաղ - հիմար, պակասամիտ
Սեյիզ - առաջնորդ ոչխար
Սըռք - զաղտնիք
Սըրտաճանք ինիլ - սաստիկ վախենալ, սիրտը ճաքել
Սըփաթ - դեմք, երես
Սիմ - լար (նվազարանի)
Սինի - մատուցարան
Սլյո̀ւկնը (սո̀ւլո̀ւկնը) - տզրուկ
Սհաթ - ժամ, ժամացույց
Սղանալ - 1. առողջանալ, 2. ամբողջանալ, 3. հարություն առնել
Սովդաքար (սովդաքյար) - առևտրական
Սոտ - սուտ
Սորի (սօրե) - այսօր
Սո̀քյ - սուզ
Սպոռ կյա̀լ - զրազ գալ, վիճել
Ստոլ - սեղան
Ստրանա (ըստրանա) - սրանից
Սրտհեռեչ (սրտըհեռեջ) - սիրտը ցավացող
Սութութ տալ (սութ տալ) - սղալ, սողալ
Սո̀ւթո̀ւն - սյուն
Սո̀ւվթա̀ (սո̀ւրթա̀)- առաջ, սկիզբ
Սո̀ւրա̀թ - դեմք, նաև դիմանկար, դիմակ
Սո̀ւրգյո̀ւն -աքսոր

Սո̀ւր-սըփաթ-դիմագծեր, կերպարանք
Սո̀ւրո̀ւ- խումբ
Սուփրա - սփռոց

## Վ

Վա̀ղա̀ - ժամանակ, ժամկետ
Վազ - որթատունկ
Վալլա (վալլահ) - աստված վկա, այն աստվածը
Վախսըզ - ժամանակից շուտ, անժամանակ
Վախտ - ժամանակ
Վահր ( վահար) - թարախ
Վասիաթ - ավանդ, կտակ, խրատ
Վարավուրդ անել - 1. դես ու դեն նայել, 2. խորհել
Վաքիլ - պալատական
Վեդրո - դույլ
Վեղ (վըեղ) - հող
Վեշ- բեռ
Վեջա̀ - հոգ
Վետնակեծան - ոտքի արահետ
Վեր - 1. հոր, 2. որ
Վեր ածել (վըեր ածըել) - թափել
Վեր կյալ - իջնել
Վեր տալ (վըեր տալ) - տնկել
Վեր տինիլ (վըեր տինիլ) - վայր դնել
Վերցակ (վըերցակ)- աքլոր
Վզա̀վ օնել (վիզա̀վ օնել) -խոստովանել, վիզ առնել
Վըեննը - ոտք
Վըեռցակ - աքաղաղ
Վըեսկե - ոսկի
Վըեր - 1. որ, 2. վերև
Վըեր քաշիլ - իջեցնել
Վըեր քցիլ – 1.ցած գցել, 2. սպանել
Վըհատա (վըհատաս) - կարծես, երևի
Վըհաքել - հավաքել

Վըիըրկալել - թարախակալել

Վըննըկըլո՞խ - ոտք և գլուխ

Վըռըվեռ անել - ետ-ետ գնալ

Վըռվեռ (վըռըվեռ) - ետ-ետ, դեպի ետ

Վըսվըսալ - 1. ցածր, հազիվ լսելի ձայներ հանել, 2, դժգոհել

Վռազ-վռազ - շուտ-շուտ

Վո՞ւո՞ւչլ (վիչիլ) - ոջիլ

Տ

Տալտա (դալդա) - ծածուկ տեղ

Տակ անել - սուզվել

Տա՛նա՛կ (տենա՛կ) - դանակ

Տապըռ ըրած ( տապուռ ըրած) - առանց ձայնի, առանց խոսելու, կուչ եկած

Տա՛ռալ ( տըէռալ) - դարձել, դառել

Տար - տեր

Տարաղաջ - կախաղան

Տարոթուն անել (տըրրոթուն անել) - տիրություն անել

Տարվազա (դըրբըզա) - դարպաս

Տափ - հող, հողամաս, գետին

Տեղեն ա՛ռթա՛կ (արթակ) - տեղով մեկ, ամբողջովին

Տեմ ընգնել (տեմ ինգյնիլ) - դեմ առնել

Տեմ օնել (տեմ կալել) - դեմ առնել

Տեն - դեն

Տեռնալ - դառնալ

Տերտակ - դատարկ

Տըեղ - տեղ

Տըմանա՛լ (տիմա՛նա՛լ) -դիմանալ

Տըմբըհան ինիլ - շարժվել, թույլ կերպով շարժվել, հազիվ շարժվել

Տընկեց ( տընգեց) - տնվոր

Տըրտա՛կել (տիրտա՛կել) - դատարկել

Տիզ - դեզ

Տիմա՛նա՛լ - դիմանալ

Տինիլ - դնել

Տիրն - տերն
Տկողեն - տխիլ
Տմա̀կ - դմակ
Տոլաբ (դոլաբ) - պատի մեջ բացված պահարան
Տոն - տուն
Տոռնը - 1. դուռ, 2. դուրս
Տո̀վլա̀թ (տո̀վլա̀թ) - 1. նախիր, 2. ունեցվածք
Տոռնըտոռնը - դռնեդուռ
Տու(տո̀ւ) - դու
Տո̀ւզ(դո̀ւզ) - ուղիղ, շիտակ
Տո̀ւզնը -  քաղցած
Տո̀ւս - դուրս
Տուսաղխանա (դուսաղխանա) - կալանատուն
Տո̀ւս պիրիլ- դուրս բերել
Տո̀ւս քցիլ - դուրս գցել, վռնդել
Տուրըթակ - տուրուդմփոց, ծեծկըռտուք
Տո̀ւրո̀ւր կյալ - շարժվել
Տո̀ւրո̀ւր տալ - շարժել

## Ց

Ցալքուն - ցայտ
Ցա̀քյ - փշի թուփ
Ցիզան - գնչու

## ՈՒ

Ուղուբ - շնորհք
Ումբուր - տարիք, հասակ, կյանք
Ումուդ (ումեդ) - հույս
Ուշկինա ինիլ (ո̀ւշքյինա̀, ինիլ) - շատ ծիծաղելուց թուլանալ
Ուռութանա - առավոտից
Ուստաքյա̀ր - վարպետ
Ո̀ւրա̀ն-իրեն, իր
Ո̀ւրա̀նց  -իրենց
Ո̀ւրթո̀ւմնը - երդում
Ո̀ւրո̀ւր - իրար

Ո̀ւրո̀ւր անել - իրար  անել, հազիվ պատրաստել, հազիվ դասավորել

Ո̀ւրո̀ւր ընգնել - իրար ընկնել

Ուրուրուց - օրորոց

**Փ**

Փա̀դ - փայտ

Փալչի - բախտ բացող

Փակետ - ծրար, կապոց

Փա̀հլա̀ - բանվոր

Փայ - բաժին

Փայա - խոշոր ձեռնափայտ

Փայ անել - բաժանել

Փայտոն - կառք

Փայտոնչի - կառապան

Փա̀նդ - հնար, ձև

Փա̀րդա̀ - 1. վարագույր, 2. առաստաղի գերան

Փա̀րշ անել - գորգերով ու գեղազարդ կարպետներով սենյակի հատակը զարդարել

Փարչ - պղնձե կամ կավե ջրաման

Փա̀րվազ - 1. զգեստի եզրերին կարվող ժանյակ, 2. դռան, պատուհանի փեղկի եզրին մեխված երկայն, բարակ տախտակ, որի վրա հենվում է մյուս փեղկը՝ դուռը կամ պատուհանը փակելու ժամանակ

Փեյին (փեյնը) - գոմաղբ

Փեշկ - փեշ

Փեշա̀կ - արհեստ

Փեշքեշ - նվեր

Փեչատըել - կնքել

Փեսալար - փեսաներ

Փըշկերքատ (փիշկերքատ) - փեշերիցդ

Փըռնել - բռնել

Փըստոենքյ - փեսաներ

Փըրչըփարախ - կտոր-կտոր, մաս-մաս

Փըրսըվըեր (փարսավըեր)- երեսնիվայր, հակառակ կողմի վրա

Փի - ճարպ

Փինա̀չի - հնակարկատ

Փիրփետ (փո̀ւրփո̀ւտ) - փիփերթ, բույս

Փլան - ոմն, այնինչ

Փլստրատե տալ - փայլատակել

Փոզմիշ ինիլ - խափանվել, փչանալ, ցրիվ գալ

Փոլ կյա̀լ - փլվել

Փողեղեն - հագուստեղեն

Փոնջ - փունջ

Փոշմանել - զղջալ

Փորըմնա - հոր մահից հետո ծնված երեխա

Փորիկ - քիչ

Փոփ - 1. երեխայի համար պատրաստված հատուկ ճաշ, 2. հիվանդացած ու խիստ թուլացած մարդ

Փսո̀ւնկյո̀ւ ( փո̀ւսո̀ւնգյո̀ւ)-ձյունախառը քամի

Փուլ - փող, դրամ

Փուռը-փեջման (փոր-փոշման) - զղջացած, խիստ փոշմանած

## Ք

Քալլափաչա (քյըլլըփաչա) - անասունի գլխից ու ոտքերից պատրաստված կերակուր

Քամոր - քո մոր, մորդ

Քա̀նդիր ( քյանդիր , քյենդիր) - պարան

Քաշկ - քաջք, ոգի, սատանա

Քարխեց - մատնաշունչ

Քաքուռ - աթար

Քե - քեզ

Քեչա̀ (քյեչա̀) - թաղիք

Քյեփ - ուրախություն, խնջույք

Քեփընեն քոք (քյըփըրնեն քյոք) - ուրախ

Քթրպոռշ - քիթ ու պռունգ

Քթո̀լ (քթա̀լ) - գդալ

Քթվել (քըթըլվել) - միջատ (ոջիլ) ջոկել, ոչնչացնել

Քըերծ - լեռ

Քըթենա̀լ (քթենա̀լ) - գտնել

Քըթեն թուշին - իր ասածի պես, իր ուզածի պես
Քըլլել - կողպել
Քըռթնոնք - քրտինք
Քըս տալ - հրահրել, հարձակման մղեք
Քիթի ոչ - չգտա
Քյա̀թա̀ - գաթա
Քյա̀լլա̀ - (արհամարհական) գլուխ
Քինա̀լ ( քյինա̀լ) - գնալ
Քյա̀լմ - մեծ, խոշոր
Քյա̀լա̀գյ - փորձանք
Քյա̀մա̀ր - գոտի
Քյանբախտոթուն (քյընբըխտոթուն) - դժբախտություն, անբախտություն
Քյա̀նքյա̀նչի - հող փորող
Քյա̀սիբ-աղքատ
Քյար անել - հախիցը գալ, հաղթել
Քյարվան - քարավան
Քյա̀րքյո̀ւլ- մազափունջ
 Քյեթուկ (քոթուկ) -կոճղ
Քյըրըըստոս - Քրիստոս
Քյի - որ
Քյո̀յնա̀ ( քյո̀հնա̀) - հին
Քյո̀մա̀գյ - օգնություն,
Քյոք անել - լարել
Քյո̀ւլփա̀թ -1. ընտանիքի փոքր երեխաներ, 2. ընտանիք
Քյո̀ւլքյ- քուրք
Քյո̀ւնջ (քո̀ւնջ) - անկյուն
Քյո̀ւչա - փողոց
Քյո̀ւսօր- կեսօր
Քյուքանալ - չաղանալ
Քնենքյ անել - խորը մտածել, մտորել
Քնտեղ - անկողին
Քշաթոխպ - մառախուղ
Քշանալ - ցածրանալ, իջնել

Քշըրիանա - վաղ առավոտյան
Քշռանքավը մին (քաշավը մին) - որևէ իրի, առարկայի կշռի չափ
Քոլ - թուփ, անտառ
Քոծ - աղախին
Քող - հաստ թել
Քոմակ անել - օգնել
Քոն ինիլ - քնել
Քոռ - կույր
Քոռ ու փեշման - լրիվ փոշմանած, զղջացած
Քոռփա - մատղաշ
Քոսա(կ) - 1. երեսին մազ չունեցող, 2. ճաղատ
Քոք (քյոք) - չաղ
Քչն - կեղև
Քռի տալ (քռէ տալ) - հրել
Քրեհ - վարձ
Քցիլ - գցել

O

Oթաղ - սենյակ
Oժ - ուժ
Oլմիա (oլմիյա) - չլինի, չլինի թե
Oխծ - oձ
Oխտը - յոթ
Oղլուշաղ - 1. կին կամ աղջիկ, 2. ընտանիք
Oշկ անել - կերածը ետ տալ, փսխել
Oղտ - ուղտ
Oյամիշ ինիլ-1.սթափվել, արթնանալ, 2. գիտակցությունը վերականգնել, 3. առողջանալու նշաններ ցույց տալ
Oյին - խաղ, փորձանք
Oնգատ - պատեհ առիթ
Oնվըել - փակվել
Oնք - ունք
Oշ - ուշք
Oշափ - վիշապ

Օշը տանել - ուշաթափվել
Օչերեղ - հերթ
Օռած - ուռած
Օռչիլ - ուռել
Օս - ուս
Օսալ - վատ, վատթար
Օվչի - որսորդ
Օ̀վտան կյա̀լ (օ̀քյտա̀ն կյալ) - հախիցը գալ
Օ̀րա̀նա̀ - ավերակ
Օրաս տենը - այսօրվանից, այսուհետև
Օքմին - ոչ ոք
Օ̀քյտան կյա̀լ - հախիցը գալ

Ֆ

Ֆայտոն-կառք

# Հատոր VII

## 1.ԼՈ̀ՒՍ ՆԱՆ ՄԹԵՆ ԱՇԽԱՐՔՆԵՆ

Մին մարթ, մինգյել մին կնեգյ ըն ինո̀ւմ, տահանց խոխա չի ինո̀ւմ: Տահանք գյո̀ւղո̀ւմ չըն, թա հինչ անեն: Էտ մարթը ըսկանում ա, թա մին հեռու տըեղ մին պառավ կա, թիլիսիմներավ ամմեն հինչ կարող ա անե, վըեր խոխա ինի: Եր ա կենում, քյինա̀մ էտ պըռավեն կոշտը: Պառավը ուրուրուցեն տական իրեք խնձո̀ր ա տո̀ւս օնում, տամ էտ մարթին: Խնձո̀րին մինը մըեծ ա ինո̀ւմ, մինը՝ մաշնակ, մինն էլ՝ կուճուր: Պառավը խնձո̀ւրնեն տամ ա, համ էլ ասում. «Վըեչ մինն էլ կըծես վուչ օտես, տահանք իրեքան էլ տղա յըն տըռնըլական»:

Էտ մարթը խնձո̀ւրնեն յօր ա օնում, հղե ինո̀ւմ: Հղեննի տիմա̀նո̀ւմ չի՝ օզում ա գյիդա, թա վըեր խնձո̀րա̀ն կծե, հինչ կինի: Կուճուր Խնձո̀րա̀ն մին խրեգյ կծում ա, օտում, մնացածը տինո̀ւմ ջուբումը: Քյինա̀մ ա հսնում տոն: Մին քանի ամըես վըեր անց ա կենում, էրկու խնձո̀րը էրկու սաղ տղա յըն տըեռնում, կեսատ խնձո̀րն էլ մին կեսատ, կըտըրզ տղա յա տըեռնում:

Էտ տղեքյը մըծանում ըն: Տահանց մին մըեծ, լա̀վ բաղ ա ինո̀ւմ: Բաղեն խնձո̀րը միշտ պկասում ար: Տղորանցը մըեծը քյինա̀մ ա, վըեր քշերը ղարաղուլ անե, տըեսնա խնձո̀րը հո՞ւ վա քաղում տանում: Քյինա̀մ ա բաղումը պրանվում, կարում չի զա̀րթո̀ւն կենա, քոնը տանում ա: Մաշնակն ա քյինա̀մ, էլլա կարում չի: Կըտըրզը վըեր քյինա̀մ ա, մաննը կտրում ա, յիրա̀ն աղ ածում,հանցու քոնը տանե վուչ: Քշերեն կեսումը տըեսնում ա մին մըեծ օշափ նի մտավ բաղը, մին մըեծ խնձո̀րի ծառ պուկեց, շիլա̀կեց տարավ, քըերծեն ղաթավը նի մտավ, մին զըեռ քար տիրա̀վ ղաթումը, էլ ուրվաց վուչ: Տղան էտ վըեր տըեսնում ա, քյինա̀մ ա հորն ասում: Հա̀րը տղորանցը նհետ քյինա̀մ ա էտ քարեն կոշտը, քըերծեն ըռըխան քարը յոր ըն օնում, տըեսնում մին մըեծ վըեր: Քյենդիր ըն պիրում, մըեծ տղեն անա կապում, վըերան կախ տամ: Մըեծ տղան վըեր քյինա̀մ ա վըերեն տակեն հսնում, սա̀ս ա անում, թա՝ վա՛յ, է՛րից, է՛րից: Ծիքյ ըն տամ, տրան ետ տո̀ւս օնում:Մաշնակն ըն քցո̀ւմ, էլլա թա՝ վա՛յ, է՛րից: Ծիքյ ըն տամ, տրան էլ տո̀ւս օնում: Կըտըրզն ասում ա, վըեր ինձ քյինդիրա̀ն կապեքյ քցիքյ վըերը, հենց վըեր ես ասեմ էրից, տո̀ւս չօնեքյ, պեց կըթողեքյ: Կուճուր տղեն վըեր քցո̀ւմ ըն վըերը, ասում ա՝ է՛րից, է՛րից: Քյենդիրը պեց ըն թողում: Տա

քյինյմ ա մին տան տոռնը պեց անում, տըեսնում մին քյանօխտը կըլխանե օշափ քոն իլյած, քշտին էլ մին ղյշյնգյ ախճիգյ նստած, գյուլըմ յա անում։ Էտ ախճիգյը թա՝ ախպըեր, ախպըեր, էտ տըեռ քյինյ, էս սհաթս քյանօխտը կըլխանե օշափը եր ա կըննական, քեզ ուտե։ Տղան թա՝ ես ուշափեն անա վախում չըմ, ասե տըեսնամ հի՞շտեղ ա նրա օժը։ Ախճիգյը թա էն ա էն ղոլի ութաղեն շուշին մաչին։ Տղան թխում ա շուշյն կոտրում, ցրև տամ։ Օշափը ճլումկուտալավ եր ա կենում, աշկերը պենում, թա՝ էս ա մին քանի օր ա մարթու մըես չի կեռքես տակյն ինգյյլ. ըստեղաս մըրթավըետ ա կյամ, էր կենամ ըսպանեմ, ուտեմ։ Էտ տղեն ծըեռքեն մին կոպալ ա ինում, պտոկը ծանղր արկաթ կոխած։ Օշափը վըեր էտ խոսկն ասում ա, տղան կուպալավը կըլխեն մեհետ թխում ա, օշափն ըստակում ա։

Տրանա ետը խիլլյ տեղ վըեր քյինյմ ա, մին տան մղակ էլ ա պեց անում, տըեսնում երեսունօխտը կըլխանե մին օշափ քոն իլյած, քշտին էլլա ինղի մին ղյշյնգյ ախճիգյ նստած, գյուլըմ ընելիս։ Էտ ախճիգյը տղեն թա ճելլ ըրա փախե, էս սհաթս երեսունօխտը կլխանե օշափը եր ա կննական, քեզ ուտե։ Տղան թա՝ ես ուշափեն անա վախում չըմ, մինջյ ասե տըեսնամ նրա օժը հի՞շտեղ ա։ Ախճիգյը թա՝ էն ա շուշին մաչին, կոխկե ութաղումը տիրյած։ Տղան թխում ա էտ շուշյն կոտրում, օշափը զուրթնյնում ա, թա՝ էս հինչ լյվ պեն ա, մին քանի օր ա վըեր մարթու մըես չի ինգյյլ կեռքես տակը, տու լիհյ քու վըեննավըտ ըս էկալ, էս սհաթս եր կենամ քեզ ուտեմ։ Վըեր տի յա ասում, տղան կուպալավը թխում ա ուշափեն ըսպանում։ Խիլլյ տեղ տղան քյինամ ա, մին տան մղակ պեց անում, եշում, տըեսնում քառասունօխտը կըլխանե մին օշափ քոն իլյած, մին շատ ղյշյնգյ ախճիգյ էլ կոխկեն նստած, գյուլըմ ընելիս։ Ախճիգյը տղեն թա՝ ճելլ ըրա փախե, էս սհաթս քառասունօխտը կըլխանե օշափը եր ա կըննական, քեզ ուտե։ Տղան թա՝ ես ուշափեն անա վախում չըմ, տու ինձ ասե, տըեսնամ նրա օժը հի՞շտեղ ա։ Ախճիգյը թա՝ էն ա կոխկե ութաղումը մին շուշյ կա, նրա մաչին ա։ Տղան նի յա մննում կոխկե օթաղը, թխում շուշյն կոտրում, օշափը զուրթնյնում ա, թա տղեն մուտանա ուտե, տղան կլխեն թխում ա, ըսպանում։ Տրանա ետը իրեք ուշըփներեն վըսկեղանը, ապրանքը լոխ հվաքում ա վըերեն առաչը, ըխճըկորանցն էլ նհետը տանում։ Քյենդիրը տիյերյն քցում ըն, լոխ կպոտում ա, ծիքյ ըն տամ, պիցըրցընում։ Էրկու ըխճըկորանցն էլ վըեր տուս ըն օնում, մնամ ըն ինքյն ան քառասունօխտը

կըլխանե ուշափեն քշտի ախճիգյը, վըեր ամմենակուճուրն ու ամմենծ-դծշծնգյն ա ինում։ Ախպըերքը տիյերծն ծեն ըն տամ, թա ծըզանա մենակ մին հոքի յընք տո՞ւս ուննական, հու օզում ա, թող կյծ։ Ախճիգյը տղեն ա ասում տու տո՞ւս եք, տղան՝ ըխճըկանը։ Վերչը, տղան ըխճըկանը վըեր շատ ասում ա տու տո՞ւս եք, ախճիգյը թա՝ լծվ, ես տո՞ւս կըկյամ, տու կըքյինծս էահինչ տըեղը մին ախպո՞ւր կա, մին սև էծ, մինգյել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ըխպըրծն ճո՞ւր խմում, լոք կըտաս եր ինիս էտ սիպտակ էծին մաշկեն նստես, քեզ տո՞ւս ա ուննական լո՞ւս ախշարքը, իսկ վըեր շիլ ինգյիր սև էծին մաշկեն նըստեցեր, տո՞ւս ա ուննական ավելի մթեն ախշարք։

Ըխճըկանը քյինդիրծն կապում ա, ծիքյ ըն տամ տո՞ւս օնում, ինքյը քյինծմ ա էտ ըխպըրին կոշտը, լոք տամ եր ինո՞ւմ սիպտակ էծին մաշկեն նստում, սև էծը կյամ ա տրան հարու տամ, վըեր քցո՞ւմ։

Տղան քյինծմ ա մին պռավու տոն նի մննում, ճո՞ւր օզում։ Պառավը դրաղ տըեղ կյո՞ւզո՞ւմ ա, պիրո՞ւմ տամ տղեն։ Տղան խմում ա, հրցընում, թա ծըեր քըղաքումը ճո՞ւր չի՞ կա։ Պառավը թա՝ ըխպիրին աշկը մին օշափ կապալ ա, ամմեն օր մին ախճիգյ ա տանում, վըեր մին խրեգյ ճո՞ւր ա տամ։ Սօր թաքավըրեն ըխճըկանը հերթն ա։

Տղան քյինծմ ա տո՞ւս կյամ ըխպիրին կոշտը, տըեսնում թաքավըրեն ախճիգյը լիհծ օզում ըն թա տան ուշափեն։ Ուշափեն մուտանում ա, ասում՝ պատառ ինդի կաց։ Օշափը թա՝ տու հու վը՞ս, հինչ ը՞ս, հի՞նչ իլլիթ-միլլաթ ըս, վըեր ռիսկ ըս անում ինձ ասում՝ պատառ ինդի կաց։ Տղան ծըեռքեն կուպալավը ուշափեն կըլխեն թխում ա, օշափն ծռնծվ փլալվում ա, վըեր ինգյո՞ւմ, հոքին փչո՞ւմ։ Թաքավըրեն ախճիգյը ծըեռքը կոխում ա ծռնին մաչը, տղեն հալավը պիցըրցընում, դուլվեն ծըեռքավը թխում, ծըեռքեն հետը թողում յիրծն։

Խաբարը հսնում ա թաքավըրեն, թա՝ ուշափեն ըսպանալ ըն, ըխճը-կանըտ ըզադալ։ Թաքավըրը վըեր հրցընում ա, թա հո՞ւ վա ուշափեն ըսպանալ, շատ ջծհիլ տղեքյ ըն քյինծմ ասում՝ ես ըմ ըսպանալ, ըխճըկա-նըտ էլ ըզադալ։ Էլ կարում չըն գյիդծն, թա ուշափեն ըսպանողն ու թաքա-վըրեն ըխճըկանը ըզադողը հու վա իլծլ։ Ախճիգյը լոխճին ջծրգյծվ վըենն ա կըցընում, հըլըվնեն պիցիրցընելավ քյինծմ էտ տղեն քթնո՞ւմ, ծեն տամ, թա՝ ա՛պա, հասէ՛ ինձ ըզադողը։ Հծրը էտ տղեն հրցընում ա, թա քեզ հի՞նչ

լիվոթուն անեմ, վըեր տու իմ ըխճըկանն ըզադալ ըս։ Տա թա՝ վըէչ մին պեն օզում չըմ, մենակ ինձ տո̀ւս կալիքյ լո̀ւս ախշարքը։ Թաքավըերն ասում ա էն ա էսհինչ տըեղը մին զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշ կա, տրա ճոտերը ամմեն տարե մին օց կյամ ա օտում, վըեր տու կարես էտ օցեն ըսպանես, ճոտըերն ըզադես, էտ դուշը քեզ տո̀ւս կօնե լո̀ւս ախշարք։

Տղան հղե յա ինո̀ւմ քյինա̀մ էտ տըեղը, տըեսնում օցը նոր ա ծառավը պիցիրա̀ցալ, օզում ա լիհա̀ դուշին պո̀ւնա̀ն մուտանա, ծըեռքէն կուպալավը թխում ա, օցեն ըսպանում, վըեր քցո̀ւմ։ Ղուշն էլ վըեր քյեցալ ար մին ճըղըցաքար պերալ, թա օցեն յիրա̀ վըեր քցի ըսպանե, տղեն վըեր տըես-նում ա, օզում ա թա տրա կըլխեն քցի, ճոտերը պո̀ւնա̀ն կըլխընեն պիցըրցընում ըն, թա՝ մա՛մա, մա՛մա, տա յա մըեզ ըզադալ։ Ղուշը քարն էն դոլին վըեր ա քցո̀ւմ, տղեն թա՝ քեզ հի՞նչ լիվոթուն անեմ, վըեր իմ ճուտերես օցեն ռըխան ըզադալ ըս։ Տղան թա՝ քըզանա վըէչ մին պեն չըմ օզում, լիհա̀ ինձ տո̀ւս կալ լո̀ւս ախշարք։ Էտ զո̀ւմբո̀ւրո̀ւտ դուշը թա՝ քյինա̀ օխտը վըխճարու տիմա̀կ, մինգյէլ օխտը յոխա եր կալ, թըվըերես դաթումը նըստե, վըերդեղ ծըկըլթամ, ընդեղ մին վըխճարեն տիմա̀կը նան յոխան կըքըցիս պերա̀նս։

Տղան քյինա̀մ ա օխտը վըեխճար ինքյ օնում, մըթոտել տամ, տիմըկնեն յոր օնում, օխտը յոխա էլ թխել տամ, տիմըկներեն նիետ տինո̀ւմ հիյբումը, կյամ դուշին կօշտը։ Ղուշը տրան ո̀ւրա̀ն թըվերեն դաթումը լա̀վ տըղվա-րում ա, ետնան էլ ասում՝ պըենդ կաց, վախես վուչ։ Շատ էրկան տըեղ վըեր թռչո̀ւմ ըն անց կենում, հենգյ տիմա̀կն ան հենգյ յոխան տամ ա դուշին, էրկու տիմա̀կը նան էրկու յոխան հիյբավը ծըեռքան վըէր ա քցո̀ւմ։ Ղուշը վըեր էլլա յա ծըկըլթամ, տա ո̀ւրա̀ն բուդան կտրում ա, քցո̀ւմ պերա̀նը։ Ղուշը լո̀ւզվին տակեն էրկու բուդն էլ պահում ա, վըեր քըշանում ըն, ասում ա՝ հըսենքյ, եր կաց։ Տղան թա՝ վըեննըս տըմբըրալ ա, կարում չըմ։ Ղուշը լո̀ւզվին տական տղեն մըեսը տո̀ւս ա օնում, տինո̀ւմ կտրած տըեղը, ո̀ւրա̀ն թեփռան մինը պուկում, քսո̀ւմ, տղան լո̀ւվանում ա, եր կենում։ Ղուշը տըեղատ ետ ա տըեռնում, տղան էլ քյինա̀մ ա ո̀ւրա̀ն ախպորցն ըսպանում, կուճուր ըխճըկանը նիետ փըսակվում, հորը տանը-տըեղեն տըրոթուն անում։

## 2.ՕԽՏԸ ԱԽՊՈՐ ՄԻՆ ՔՈՒՐԸ

Օխտը ախպեր ըն ինում, մինգյել մին քուր: Մին օր էտ ախճիգյը վըեր տանան տուս ա կյամ, մին օշափ կյամ ա էտ ըխճըկանն ասում, թա տու քյինա̀լ պիտիս էսիինչ տըեղը մին տան մաչի մին մըեռալ կա, նրան հացը շինիս ուտըցնես, չայը քցիս խմըցնես, տոնը սրփիս, ըմընեքյը լուվանաս, տանը պեները լոխ անես, հանցու էտ մըեռալը սըղանա:

Էտ ախճիգյը քյինա̀մ ա էտ խոսկերքը ու̀րա̀ն հորն ասում: Հա̀րը ըխճըկանն ասում ա.- Վըեր մինգյել օշափը կըպըտաhե, կյա̀ իտի պեներ ասե, կասես՝ պեն չօնե՞ս, քյինա̀ դա̀րդիտ:

Իտի մին քանի հետ էտ օշափն էտ ըխճըկանը պըտահում ա, էտ խոսկն ասում: Ախճիգյը խոսում չի: Օշափը տրանա ծեռք չի քաշում, միշտ տրան ջիու̀մ ա, էտ խոսկն ասում:

Մին օր էլ էտ ախճիգյն ասում ա.-Քյիննա̀կան ըմ տըեսնամ էտ հի՞նչ պեն ա, վըեր էս օշափը միշտ ասում ա:

Մին օր էլ տա հղէ յա ինու̀մ, քյինա̀մ էտ ուշափեն ասած տըեղը: Հըսնում ա մին պալատ: Տըեսնում ա օխտը օթաղ վըեսկավ լիգյը, մին ութաղում էլ մին մըեռալ վըեր տիրա̀ծ, կոխկե ութաղումն էլ մին մըեռած խոխա էլլա վըեր տիրա̀ծ:

Էս ախճիգյն ամմեն օր էտ մարթին հացը-ճու̀րը շինու̀մ ա, տոնը սրփու̀մ, տանը պեները լոխ անում, էտ մարթին լա̀վ ուտըցընում, խմըցնում, սըղըցնում :

Տրանա ետը էտ ախճիգյը մինգյել խուխեն ա սըղըցնում:

Մին օր էտ ախճիգյը կյամ ա, ասում.- Քյինա̀մ ըմ քաղաք, հու վա՞ հինչ օզում: Էտ սղացած մարթն ասում ա.- Ինձետե մին տենա̀կ կըպիրիս, էն տղան էլ ասում ա.- Ինձետե մին թու̀թա̀գյ կըպիրիս:

Տա վըեր քյինամ ա քաղաք, համ տենա̀կն ա պիրու̀մ, համ թու̀թա̀գյը: Էտ մարթը տենա̀կը յոր ա օնում, վըեր ու̀րա̀ն ըսպանե: Էս ախճիգյն ասում ա.- Պա ես քե սըղըցըրալ ըմ, վըեր քեզ ըսպանե՞ս: Ասում ա, համ էլ թողում չի, վըեր ու̀րա̀ն ըսպանե:

Տրանա ետն էտ ախճիգյը տրան ասում ա.- Քյինա̀նք իմ ծնողներես կօշտը, ընդեղ ապրենքյ: Էտ մարթն ասում ա.- Իմ տըեղըս ըստեղ ա, վըեր ըստեղա տու̀ս կյամ, էլ սաղ չըմ մըննական, մըռնըլական ըմ: Էտ ախճիգյն էլ ասում ա. - Մըեռնել չըս, տու̀ս եք քյինա̀նք:

Տա ըտեղատ տո̀ւս ա կյամ, քյինա̀մ ըն: Վըեր հըսնում ըն էն մին ախշարքը, էտ մարթը մըեռնում ա: Էտ ախճիգյը լա̀ց ա ինո̀ւմ, լա̀ց, ետնան եր կենում, քյինա̀մ էլլա էտ պալատը: Ըտեղ էտ տղան նան էտ ախճիգյը փսակվում ըն: Ախճիգյը տրան յոր ա օնում, կյամ ո̀ւրա̀ն ծնողներեն կոշտը: Կյամ ա տըեսնում հա̀րը-մա̀րը բեքյեփ, պըռաված, հա̀լա̀ ինգյա̀ծ: Տահանց հըրցնում ա, թա խե՞ իտի բեքյեփ ըք, տահանք թա՝ շատ տարենե առաչ մըեզ մին ախճիգյ ա իլա̀լ, իստի մին ուշափու պըտահալ ա, օշափն ասալ ա էսիինչ տըեղը իստի մին մըեռալ կա, քյինա̀լ պիտիս նրա հացը-ճո̀ւրը շինիս, տոնը սրփիս, տանը պենը լոխ անես, նրան լա̀վ ուտըցնես, խմցնես, սըղըննական ա: Տրանա ետը քյեցալ ա, էլ եկալ չի: Մեհենգյ նրա դա̀րդա̀ն, նրա կարոտը քըշիլան իստի հա̀լվա̀լ ընք-մաշվալ: Տա ետ ա տըեռնում, ասում. - Պա ես ծըեր ախճիգյն ըմ: Տահանք հըվատում չըն: Էտ ախճիգյն ո̀ւրա̀ն կըլո̀ւխը եկածը լոխ նաղլ ա անում, տահանք նոր հվատում ըն:

Էտ ախճիգյը տրանա ետը նշանածը յոր ա օնում, կյամ ո̀ւրա̀ն ծնողներեն քշտին կենում:

## 3.ՕԽՏԸ ՔՈՒՐ

Ինո̀ւմ ա չինո̀ւմ մին մարթ, մինգյել մին կնեգյ: Տահանց ինո̀ւմ ա օխտը ախճիգյ: Էտ մարթին կնեգյը մըեռնում ա, տա քյինա̀մ ա մին օրիշ կնեգյ պիրում: Էտ կնեգյն էտ խուխոնցը նիետ բիրըշում չար, մարթին ըստիբում ա, ասում.-Տա՛ր ծմակումը կուրցրու, ե՛ք:

Էտ մարթը խուխոնցը հըվաքում ա, մինգյել մին աղե պիլիթ նիետը յոր օնում, քյինա̀մ: Վըեր հըսնում ըն մին խոր ծմակ, մաշնակ քուրն ասում ա.- Ապա, ծարավ ըմ: Հա̀րը պիլիթը թուլուլ ա տամ, ասում.-Հետան քյեցեքյ, իիշտեղ վըեր վըեննը կենա, ընդեղ ախպո̀ւր ա տո̀ւս կյըլական, կըխմեքյ:

Հա̀րը պիլիթը թուլուլ ա տամ, ըխճըկեքյը հետան քյինա̀մ ըն: Հա̀րը չոխան քցո̀ւմ ա ծառավը, ինքյը փախճում , քյինա̀մ տոն:

Ըխճըկեքյը պիլիթին հետան քյինամ ըն, ճո̀ւր չըն քթենո̀ւմ: Ետ ըն տըեռնում, թա քյինա̀ն հորը կոշտը, եշում ըն, տըեսնում հորը չոխան քցա̀ծ ծառավը, գյո̀ւղո̀ւմ ըն թա ո̀ւրա̀նց հա̀րը փադ ա տըեռալ, հղեն շիլ ըն ինգյո̀ւմ, կարում չըն քյինա̀ն տոն:

Սուվըծանում ըն: Գյո̀ւղո̀ւմ չըն, թա հինչ անեն: Ըստեղ կուճուր քուրն ասում ա.- Դե վըեր սուվըծացալ ըք, ինձ մուրթեցեքյ, կերեքյ: Տահանք

ասում ըն. - Պա քու աշկերըտ պեց, քեզ հունց մո՞րթենքյ: Տա ասում ա.-Դէ վըեր օզում չըք իմ աշկերըս պեց մորթեքյ, ես քոն ինիմ, էն վախտը ինձ մուրթեցեքյ, կերեքյ:

Կուձուր քուրը վըեր քունավ ա հընցնում, մնացած քուվերքը ըսկսում ըն տրա կըլո̀խը քթըվելը: Վըեր կըլո̀խը քթըվում ըն, քթըվում, քուվորցան մինը բո̀ւրդա̀ն ասում ա.-Ա՛քա, ա՛քա, հասէ՛ մին չա̀մո̀ւչ : Տահանք ասում ըն՝ հոր ա՞: Տա ասում ա՝ կերէ:

Մինգյել նորից ըն կուձուր քվորը կըլո̀խը քթըվում, էլլա էտ քուրն ասում ա.- Ա՛քա, ա՛քա, հասէ՛ մին չա̀մո̀ւչ : Տահանք ասում ըն՝ հոր ա՞: Տա ասում ա՝ կերէ: Իտի կըլո̀խը քթըվելավ քյինա̀մ ըն, քյինա̀մ, հըսնում մին մըեծ կյում: Հո̀ւրթա̀վը նի յըն մննում, տըեսնում կյումումը շատ ծիյանք կապած, ըոըչներեն էլ չա̀մո̀ւչ վըեր ածած: Տահանք թաքավըերեն ծիյանքն ըն ինո̀ւմ, չա̀մչավ ըն ինո̀ւմ պըհելիս:

Ըստեղ վըեր շատ կենում ըն, թաքավըերեն ծիյանցը նհետ չա̀մո̀ւչ օտում, ծիյանքը լըղարում ըն: Թաքավըերեն նո̀քյա̀րը կյամ ա տըեսնում լըղարած: Կյողլ ըն կենում, էտ ըխձըկորանցը փոնոտում, տանում թաքավըերեն կոշտը: Թաքավըերը տահանց հըրցնում ա, թա տուք հինչ իլըրթ-միլլա̀թ ըք, վըեր եկալ ըք նի մտալ իմ ծիյանցըս կյումը, ծիյանցըս չա̀մո̀ւչը օտում, լըղըրցնում: Տահանք ըսկսում ըն ո̀ւրա̀նց կլխավն անց կացածը նաղլ անելը:

Տրանե ետը թաքավըերն էտ ըխձըկորանցը մին-մին հըրցընում ա, թա տու հինչ կըկա՞րես անես, մինն ասում ա՝ ես լա̀վ լուվաց կանեմ, մինն էլ ասում ա՝ ես լա̀վ խմոր կըհունցեմ, մինն էլ թա՝ ես լա̀վ հաց կըթըխեմ, էն մինը թա՝ լա̀վ խորազյ կիփիմ, տի ամեքյա մին պեն ըն ասում, տահանց մաչին ամենակուձուրեն էլ վըեր թաքավըերը հըրցնում ա թա պա տո՞ւ հինչ կըկարես անես, տա ասում ա. - Ես կօտեմ, խմեմ, լա̀վ վըսկըքյա̀քյո̀ւլ տղեքյ պիրիմ:

Տրանե ետը լոխ քյինամ ըն ամեքյա ո̀ւրա̀նց պենին:

Թաքավըերը պիրո̀ւմ ա հըրսանեքյ անում, կուձուր քվորն ո̀ւրա̀ն տղեն նհետ փսակում:

Ժամանակ ա անց կենում, կուձուր քուրը մին վըսկըքյա̀քյո̀ւլ տղա յա պիրում: Մըեծ քուրը թաքուն էտ վըսկըքյա̀քո̀ւլ տղան կյուղանում ա, մին յա̀շիգյու մաչի տինո̀ւմ, տանում ծմակումը թաքուն տըեղ վըեր քցո̀ւմ, մին

շան թուլա տինո՞ւմ յա՞շիգյին մաչին, տանում տինո՞ւմ էտ խուխեն տըեղը, քյինա՞մ թաքավըրերեն խաբար տամ, թա հառհնըտ մին շան թուլա յա պերա՞լ:

Թաքավըրըրը ո՞ւրա՞ն մարթուցը նհետ կյամ ա, տեսնում ո՞ւրա՞ն հառհնը «մին շան թուլա պերա՞ծ»: Դա՞ստին հրաման ա տամ, վըեր տրան տանեն սաղ քաղաքը շոռ ածեն, ամեն կոխկավն անց կենող ո՞ւրա՞ն հառհնեն իրեսեն թքե: Իտի յել անում ըն:

Թաքավըրերեն հառհնը քըղաքումը շոռ ըծելիս լոխ կյամ ըն տրա իրեսեն թքում, անց կենում քյինա՞մ:

Մեհենգյ մարը թողենքյ ըստեղ, քյինա՞նք տըեսնանք տղա՞ն հինչ տըեռավ:

Մըեծ քուրն էտ վըսկըրքյա՞քո՞ւլ տղեն վըեր քցո՞ւմ ա ղրաղ տըեղ, մին չոբան ո՞ւրա՞ն պըհելիս էծերը ամեն օր պիրում ա ըտեղավ անց կըցընում, մին պըռավու էծ կյամ ա միշտ էտ խուխեն ծըեծ տամ, քյինա՞մ: Իտի մին քանի օր էտ էծը վըեր տրան ծըեծ ա տամ քյինա՞մ, մին օր էլ էտ իծատար պառավը կյամ ա էտ չուբանեն յիրա կոռ, ասում էծըս քանի օր ա քթած ա կյամ տոն, տու վըս քթում, պեց թողում: Էտ չոբանը թա՝ ես խաբար չօնեմ, եք էծիտ բուսը պահե, տես հի՞շտեղ ա քյինա՞մ, վըեր ետնան ինձ շառավ չի տաս:

Էտ պառավը քյինա՞մ ա էծին բուսը պահում, տըեսնում էծը քյինա՞ց մին ղրաղ տըեղ, կռացավ մին խուխու ծըեծ տուվավ, հըռացավ: Պառավը քյինա՞մ ա էտ վըսկըրքյա՞քյո՞ւլ տղան յոր օնում, տանում, պահում:

Մին քանի օրան ետը թաքավըրերեն մարթիքյը կյամ ըն տըեղետ ժողռվուրթեն էլ հըվաքում, տանում, վըեր էտ թաքավըրերեն հառհնեն իրեսեն թքեն: Լոխճինին հըվաքում ըն տանում, էտ պըռավեն ան վըսկըրքյա՞քո՞ւլ տղեն էլ նհետը: Էտ պըռավեն էլ վըեր տանում ըն թաքավըրերեն հառհնեն իրեսեն թքում ա, ետնան էլ էտ վըսկըրքյա՞քյո՞ւլ տղեն ըն ասում թա թքե, նա ասում ա. - Տուք ծեր մոր իրեսեն կըթըքե՞քյ: Նաhանք հըրցնում ըն, թա խե սա քու մար ա՞: Սա թա՝ հա՛, իմ ինիլա՞ս ետն իմ մըրաքուր եկալ ա ինձ եր կալալ տարալ տիրալ ծմակումը, իմ տըեղըս մին շան թուլա տիրա՞լ:

Խաբարը հըսնում ա թաքավըրերեն: Թաքավըրերն ո՞ւրա՞ն հառհըրնեն ետ ա յոր օնում: Մըեծ քվորն էլ պիրում ա ծիյին հա՞քյվա՞ն կապում, քաշ-քաշ անում, ըսպանում:

## 4.ԿՈՌՆԸ ԿՏՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Մին տղու մին շատ ղա̈շա̈նգյ քուր ա ինի̈ում։ Վըեչ օտըես, վըեչ խմըես, լիհա̈ վըեննը կենաս, թիմա̈շա̈ անես։ Ախպըերը փսակվում ա, մին հառինը պիրում տոն։ Հառինը էտ ըխճըկանը ղա̈շա̈նգյ ինիլին նախանձվում ա, շատ շառեր տինի̈ում յիրա̈ն։ Մին օր ինքյն ըմընեքյը կուտրատում ա, մարթին ասում՝ քուրըտ ա ըրալ, մին օր տոնն ա զիբիլ անում, մին օր մին օրիշ պեն, մին օր էլ մին օրիշը, լոխ տալին անավ քցի̈ում։ Բայց ախպըերը քվորը շատ ար սիրում, միշտ էլ ասում ար՝ վըեչինչ, հինչ ըրալ ա, ըրալ ա, ամմեն հինչան կըքըթենվա̈, քուրը քթենվա̈լ չի։

Հառինը տըեսնում ա, վըեր սարքած պիներան վըեչ մինն էլլա անց չի կենում, մին քշեր եր ա կենում, ի̈ուրա̈ն խոխան մորթում, ա̈ռնուտ տենակը տինի̈ում էտ ըխճըկանը ջուբումը, կլի̈խը նան ծի̈ւյները վըեր թակում, թա վա՜ա՜յ, խոխաս մորթալ ըն։ Սաղ ժուղովուրթը հըվաքվում ըն, տըեսնում պենը հինչումն ա, հրցըփորց անում, թա պա հո՞ւ կինի ըրած, հո՞ւ չի ինիլ, հառինը ասում ա՝ մըեր տանը էլ հո՞ւ կա, հա̈րն անել չի, մարն անել չի, հու վըեր էլ ըրած ինի, տենա̈կը ջուբումը կինի տիրա̈ծ, շոռ եկեքյ, տըեսեքյ հի̈ուր ջուբում ըք քթենի̈ում։ Տոնը շոռ ըն կյամ, ա̈ռնի̈ուտ տենակն էտ ըխճըկանը ջուբումը քթենի̈ում։ Ախպըերն ետ տինակավը քուվորը կուռները կտորում ա, տանան տի̈ուս քցի̈ում։

Էտ ախճիգյը քյինա̈մ ա, քյինա̈մ, մին շատ հեռու տըեղ, մին խոր ծի̈րի̈ում մին ցորտ-ցորտ ախպի̈ուր ա պըտահում։ Նստում ա, վըեր մխըրե դինջա̈նա, ճի̈ուր խմե։ Ցիրգյինքա̈վը մին ղուշ ա թըռչում, մին թըեփուռ ա վըեր քցի̈ում։ Մին տղա ծին նստած կյամ ա տըեղավ անց կենում, վըեր ծին ճի̈ուր տա, տըեսնում ա տըեղ մին թըեփուռ վըեր ինգյա̈ծ, էտ ախճիգյն էլ ըխպրին ղրաղեն նստած։ Տա ըխճըկանն ասում ա՝ էտ թըեփուռը եր կալ ըխպրի̈ումը լուվաց, քսի կուռներետ կտրած տըեղերը, կուռներտ փսնըլական ա։ Ախճիգյը թըեփուռը յոր ա օնում ըխպըրումը լուվանում, քսի̈ում կուռներեն կտրած տըեղերը, կուռները կյամ ա։ Ճի̈ուր ա խմում, դինջանում, հղե ինի̈ում քյինա̈մ։ Քյինա̈մ ա, քյինա̈մ, տըեսնում մին մթըեն, ծրա̈նա̈ տըեղա մին ծոխ ա պիցրա̈նի̈ում։ Մուտանում ա, տոռնը պեց անում, տըեսնում մին զըեռ օշափ մին մըեծ ղզղան կաթնը տիրա̈ծ կրակեն յիրա̈, ինքյը քոն իլա̈ծ։ Կաթնը հեռ կյա̈լիս ա ինի̈ում, յոր ա օնում ածում ուշափեն կըլխեն, ըսպանում։ Տըեղ պիլա̈նիքյ ա ինի̈ում, մին տոռնը պեց ա անում, էտ ութաղեն

մաչավը քյինա̀մ, մինգյել էն մին տոռնը պեց անում, տի ո̀ւրո̀ւր մաչավ քյինա̀լա̀վ օխտը ութաղու տռներ պեց անում, էվո̀ւլը յոր օնում, ութըղնեն լոխ սրփո̀ւմ, լուվանում, ամմեն հինչ թիմիզցընում, շինում, սարքում, քյինա̀մ օխտըինջի ութաղեն ըշկափեն փիրդին քմակեն կյողլը կենում:

Իրեք մարթ կյամ ըն, նի մննում, տըեսնում օշափն ըստակած, տոնը-տըեղը թիմիզցրած, տանն էլ մարթ չի կա: Տահանք շոռ ըն կյամ տես ու տեն, ջուվար չըն քըթենո̀ւմ: Քյինա̀մ ըն վըերս, կյամ տըեսնում տոնը-տըեղը էլլա լուվացած, թիմիզցրած, տանը ջուվար չիկա: Կյողլ ըն կենում, փիրդին քմական եշում, տըեսնում օխտըինջի ութաղան մին հո̀ւրի-փա̀րի տո̀ւս եկավ, էվո̀ւլը եր կալավ, ըսկսավ տոնը, բալկոնը սրփիլը: Լիհա̀ վըեր սրփո̀ւմ ա պրծնում, տհանցա մինը տո̀ւս ա կյամ կուռնան փռնում, թա՝ ասե տըեսնանք տու հի՞նչ իլլիթ-միլլա̀թ ըս, ըստըեղեքյ հի՞նչ ըս անում: Տա թա ես իստի մին անբախտ ախճիգյ ըմ, իմ ախպըեր կուռներս կտորալ ա, պեց թողալ, էսհինչ ըխպրին ճիրա̀ն դուշին թըեփուռը թաթախ ըմ ըրալ, քա̀լ կտրած տըեղերը, կուռներս փսալ ա, ետնան էլ եկալ ըմ ըստըեղ, տըեսալ օշափը քոն իլա̀ծ, հեռ կյա̀լիս կաթնը ածալ ըմ կլխեն, ըսպանալ. մեհենգյ տուք ըք գյո̀ւղո̀ւմ, ինձ հինչու օզում ըք, ըրեքյ: Տահանք թա՝ լա̀վ ըս ըրալ, վըեր ուշափեն ըսպանալ ըս, մունք նրա կյերին ընք, քանի տարե յա նրա ծըեռքէն տանջվում ընք: Էտ ըխճըկանը կոռնը սո̀ւրթա̀ փռնողն էլ թա ես օզում ըմ, վըեր տու իմ նշանածս ինիս, ինձ կըկյա՞ս, թա չէ: Ախճիգյն ասում ա՝ կըկյամ: Տահանք մըեծ հըրսանեքյ ըն անում, փըսակվում, ուշափեն տոնը-տըեղը մնամ ա ո̀ւրա̀նց:

Մին օր էտ ըխճըկանն ախպըերն ասում ա՝ էս լիհա̀ քվորս կուռները կուտուրեցե, տանան տո̀ւս քըցեցե, իսկի մեհետ տո̀ւս չըմ կյամ շոռ կյամ, տըեսնամ հի՞նչ տըեռավ, հի՞նչ չըտըեռավ: Դիբըլո̀ւսին տանան տո̀ւս ա կյամ, հըռանում, շատ տըեղեր շոռ կյամ, կարում չի քթենա̀: Մին ծուխու յիրա̀ քյինա̀մ ա, նի մննում էտ տոնը, ո̀ւրո̀ւգյո̀ւնը տըեղ ղոնաղ ինգյո̀ւմ: Քուրը ղա̀ստին ճինա̀նչո̀ւմ ա: Ախպըերը մտկումն ասում ա թա՝ էս իմ քուր ա, պա կուռնե՞րը հիշտըղան ա: Քշերը տըեղ կենում ա, քուրը տրան լավ պաղվում ա, քշըրհանան ախպըերը պիտի հղե ինի, ո̀ւրա̀նց տանը վըեսկե ջամը յոր ա օնում, թաքուն տինո̀ւմ ախպորը խուրջինումը, մարթին թա ջամը կորալ ա: Ախպըերը թա հո̀ւ՞նց կարող ա պըտահե, հո՞ւ պիտի եր կալած ինի, քուրը թա դե մըեր տանը էլ հու կա՞, խուրջինը պըտըռենքյ,

տըեսնանք։ Խուրջինը պտռում ըն, տըեսնում ջամը մաչին։ Ախպըերը թա՝ կարող չի՞ պըտահե, վըեր ջամն օրիշ ինի տիրա̈ծ խուրջինումս։ Քուրը թա էտ հունց կա՞րող ա պըտահե խոխատ օրիշ չինի մորթած տենա̈կը տիրած ջուբումս, ջամը կարող ա օրիշ ինի տիրա̈ծ խուրջինումտ։ Ախպըերը դա̈ստին գյո̈ւղո̈ւմ ա պենը հինչումն ա, բո̈ւրդա̈ն քվորը խտըետն ա ինգյո̈ւմ, լա̈ց ինո̈ւմ, թա՝ դե, ա՛ քուր, հինչու իլա̈լ ա, ինձ բախշի, գյիդացալ չըմ, ինձ խա̈փա̈լ ըն։ Ետնան քյինա̈մ ա կնգանը փռնում, ծիյին հա̈քյո̈ւվան կապում, քշո̈ւմ, քաշ-քաշ անում ըսպանում, օրիշ տըեղա ո̈ւրա̈ն հետե մին նոր կնեգյ պիրո̈ւմ։

## 5.ԸԽՇԱՐՔԸԵՍ ԱՄԵՆԱՔԱԽԾԸՐ ՊԵՆԸ

Մին թաքավըերու մին շատ կա̈րթա̈ծ, ուսում առած ախճիգյ ա ինո̈ւմ։ Մին օր հա̈րն ըխճըկանը ծեն ա տամ կոշտը, հըրցնում, թա ըխշարքումըս ամմենաքախծր պենը հինչն ա՞։ Ախճիգյն ասում ա՝ աղն ա։

Հա̈րը հրաման ա տամ, վըեր ո̈ւրա̈ն ըխճըկանը քցին տո̈ւրմա̈ն, նըստըցնեն։

Մին քանի օրան ետը թաքավըերը նորըմինան ա ո̈ւրա̈ն ըխճըկանը ծեն տամ, էլլա հա̈մին պենը հըրցնում։ Ախճիգյն էլլա յա ասում՝ աղն ա։ Թաքավըերը կզնըվում ա, հրաման տամ, վըեր ըխճըկանն ո̈ւրա̈ն երգյիրա̈ն տո̈ւս քցին։

Թաքավըերեն ըխճըկանը տանում ըն մին հեռու տըեղ, օրիշ թաքավըերու վըեղում պեց թողում։ Տու մի ասըել, էտ վախտն էլ էտ երգյիրին թաքավըերեն նո̈քյա̈րը տո̈ւս եկած ա ինո̈ւմ ըտըեղեքյ վըերս։ Հենց ըտըեղ էլ էտ ըխճըկանը պըտահում ա, ասում.- Ես վըեր վըերս ըմ տո̈ւս եկալ, քըզանա լա̈վ վըերս չըմ քըթընա̈կան, եք քեզ տանըեմ մըեր տոն։ Ախճիգյն ասում ա.-Տու թաքավըերեն նո̈քյա̈րն ըս, վըեր տանըես, թաքավըերն ինձ քու ծըեռքատ յոր ա ուննական, տու քյինա̈ մին կուճուր օթաղ շինի, ընդըեղ առըտուր ըրա, ինձ էլ կոշտըտ տար։

Թաքավըերեն նո̈քյա̈րը քյինա̈մ ա տոն, մին կուճուր օթաղ շինում, ըտըեղ ըսկսում ծմըերուկ ծախըելը, էտ ըխճըկանն էլ ըտըեղ ըխշաղանք տամ։ Էտ ախճիգյը իրեք մահարմա յա տամ թաքավըերեն նո̈ւքյա̈րին, համ էլ ասում.- Օրը մին մահարմա կըծախըես, ամմըեն մինը մին խոսկավ, մին մահարման էն խոսկավր. վըեր «աշկըեն դուր եկածն ա լոխճընան լա̈վը»,

մինն էլ՝ «խըչըմաչ հըղըցեն յիրա՛ քշերը մնալ չըն», վերչինը՝ «մինչև աշկավըտ տըեսնաա վուչ, հըվատաա վուչ»։

Մին օր էլ թաքավըերը ի՛րա՛ն նի՛ւքյա՛րին քշտին մին շատ ղա՛շա՛նգյ ախճիգյ ա տըեսնում, օզում ա ի՛րա՛ն ծըեռքը քցի, տրա հետե յել մըհիընու վա շոռ կյամ։ Վերչը, մըհանան էլ ա քթենում՝ նի՛քյա՛րեն քցիլ ա տամ ուշափըեն հետե ճոկած տղորանցը օթաղը, տանում ըն տամ ուշափըեն։ Օշափը տրան հըրցնում ա, թա քու սիրած ախճիգյըտ ղաշանգյ ա՞ ։ Տա ասում ա. - Աշկըեն դուր եկածը լըխճըեան լա՛վն ա։ Տրանա ետը օշափը տրան մին կոլա յա տամ, վըեր տանե ի՛րա՛ն հետե ճի՛ւր պիրի։ Տա կոլան յոր ա օնում, քյինա՛մ ճի՛ւրը պիրում, օշափը կոլան տիրտըկցնում ա, մին նոռնը տամ տրան, թա՝ կտանըես տաս քու սիրած ըխճըկանըտ։

Թաքավըերեն նի՛քյա՛րը նոռնը յոր ա օնում, քյինա՛մ տոն։ Հղըեննի թաքավըերը պըտահում ա։ Վըեր տըեսնում ա ի՛րա՛ն նի՛քյա՛րը սաղ ա, լի՛ւզին կապ ա ինգյի՛ւմ, կըմկըմալով ասում.- Էքյուծ մըեր քյարվանը քյինննա՛կան ա օրիշ երգյիրա ապրանք պիրի, հիզիրվի, հանցու քյըրվանըեն նիըետ քյինա՛ս։

Նի՛քյա՛րը տանում ա ծըեռքըեն նոռնը տամ ի՛րա՛ն նշընածըեն, ինքյը վընըըծըեռքը պընդըցնում, վըեր էքյսը քյըրվանըեն նիըետ հղե ինի, քյինա՛։

Էքյսը քյարվանը թաքավըերեն նիըետ ի՛րա՛նց քըղաքան տի՛ւս ա կյամ, քյինա՛մ օրիշ երգյիրում առըտուր անում պըրծնում, ետ տըեռնում։ Ետ կյա՛լիս մին խըչըմաչ հըղըցում մթըեն ըն ինգյի՛ւմ։ Թաքավըերն ասում ա.- Քյարվանը վըեննը կըցըրեքյ, քշերը մնանք ըստըեղ։ Նի՛քյա՛րը ասում ա.-Չէ՛, խըչըմաչ հըղըցեն քըշտին քշերը մնալը լա՛վ չի ինիլ, քյինա՛նք մին էրկու-իրեք վերստ, հեռու վըեր կյանք։

Թաքավըերը մին քանի մարթու նիըետ քյինա՛մ ա, հեռու տըեղ վըեր կյամ, մնացածն ասում ըն՝- Դե, արտեն վըեր ընք եկալ, պըրծալ, մինգյել նորըմինա՛ն տես-տենը հըվըքըլա՞կան չընք քյինա՛նք, վըեր պեռները վըեր ընք կալալ, մնանք։ Թաքավըերն ասում ա.- Դե լա՛վ, տուք ըք գյի՛ւղի՛ւմ, մնամ ըք, մնացեքյ։ Տահանք մնամ ըն ըտըեղ, ըտըեղ էլ քոն ինի՛ւմ։ Ըռավուտը թաքավըերեն մարթիքյը կյամ ըն տըեսնում ղըչըղնըեն տահանց յիրա՛ եկած, մարթուցը շատըեն կըտորած, մին քանինն էլ փըխճըցրած, քյարվանը, ապրանքը-պեննն էլ լոխ թըլանած, տարած։

Տրանա ետը քյինա՛մ ըն ի՛րա՛նց քաղաքը։ Թաքուհին էտ Նի՛ւքյա՛րին

քշտին ծուրծն կնգանն անա փիս-փիս պեներ ա ասում, վըեր սաբավ ծուրծն կըրեցալ չի պահե, սրա-նրա նիըետ շոռ կյծլիս ա իլծլ, իտի պիներավ ա կըրեցալ էն մըեծ պալատը շինի, էնքան էլ Նծւքյծրնե պահե: Տղան օզում ա, վըեր քյինծ ծուրծն կնգանն ըսպանե, մինգյել մըտկումն ասում ա-Չէ, մինչև վըեր աշկավըս տըեսնամ վըեչ, հըվատալ չըմ: Քյինծմ ա տըեսնում ծուրծն էն կուճուր բուտկեն տըեղը մին հունց պալատ վըեննը կըցըրած, վըեր թաքավըերեն պըլատեն յիրա շոք ա անում: Էտ տղան մտածում ա, թա իսկապես կնեգյըս հինչա՞վ պիտի շինած ինի էս պալատը, մինգյել ասում ա.-Ճծլծ կենամ տըեսնամ սրա ախըրը հի՞նչ պիտի ինի:

Տու մի ասել, ծուրծն կնեգյն էտ պըլատըեն ըռաչին ղարաղուլչիքյ ա տիրծլ, հու վըեր կյամ ա թա նի մննե (շատ ըն ուզեցալ, վըեր նի մննեն), թողում չըն: Տղան վըեր կյամ ա թա նի մննե, պահակնեն թողում չըն: Տղան ասում ա, թա ինքյը հու վա, էլլա չըն թողում: Տռանը քըմական ախճիգյն ասում ա.- Իրեքինջի խոսկն ասե, նոր տոռնը կըպենվա: Տղան ասում ա.- Մինչև աշկավըտ տըեսնաս վուչ, հըվատաս վուչ: Տրանա ետը պահակնեն տոռնը պեց ըն անում, ախճիգյը եշում ա, տըեսնում կյըվողն ծուրծն նշանածն ա: Ըտըեղ ախճիգյն ասում ա, վըեր էտ պալատն ծուրծն տուված նուռնավն ա շինալ: Ետնան նոռնը տամ ա ծուրծն, տղան եշում ա, տըեսնում էն ուշափըեն տուված նուռնըեն մաչինը լոխ անկյին քարեր ա: Ախճիգյն էտ քըրերան մինը պուկում ա տամ տղըեն, թա՝ տար զիրգյծրին տո, ինքյն ծուրծն հախը քե յա տըլական: Տղան էտ մին քարը տանում ա տամ զիրգյծրին, զարգյծրը մին քսակ վըեսկե յա տամ, պիրում ա տոն: Ախճիգյը թա՝ տըեսնում ը՞ս, վըեր էտ քըրերեն հծլծ կեսին կեսն էլ չըմ խարջալ, շատը կենում ա:

Տրանա ետն ախճիգյը մըեծ քյեփ ա սարքում, նըշընածեն ասում. - Ըխշարքումըս հիշքան թաքավըերնե կա, լըխճինին ծեն տո, թող կյծն: Տղան ըխշարքըես թաքավըերներեն լըխճինին ծեն ա տամ, կյամ ըն: Ըխճըկանը հծրն էլ ա ծուրծն նծզիր-վեզիրավը կյամ: Լծվ ըստոլնե յըն ինծւմ սարքած, ըխշարքըես տակըեն հինչվըեր կա, լոխ էտ ըստուլներեն յիրա յար, մենակ ծուրծն հորը մինգյել նծզիր-վեզիրներեն ըստուլներեն աղ չի տինծւմ: Ըխճըկանը հծրն ասում ա.-Ըստուլնըետ շատ լծվ ա սարքած, վըեչ մին պեն պակաս չի, մենակ մղափուն, վըեր աղ չի կա, առանց աղ վըեչ մին պեն օտվում չի: Ախճիգյը թա՝ աղը հինչ ա՞, վըեր առանց տրան

յոլլա չըք քյինա̈մ, Թաքավըերն ըստըեղ մաննը կծում ա, ըխճըկանը եշում, եշում, մըեննը քցո̈ւմ, ճինա̈նչո̈ւմ: Ախճիգյն էլ թա՝ էտ խոսկըեն հետե տու ինձ քու երգյիրատ տո̈ւս ըս քցա̈լ, դո̈ւզերը քցա̈լ, մեհենգյ տըեսե՞ր, վըեր ըխշարքումըս աղան քախծըր պեն չի կա:

## 6.ԹԱ ԽԵ ԾՈ̈ՒԿՆԵՐԸ ԾԻԾԸՂՈՒՏԵՑԵՆ

Շահ-Աբբասն ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրավը տո̈ւս ա կյամ շոռ կյա̈լի: Մին մըեծ գյոլու քշտի վըեննն ըն կենում թիմա̈շա անում, տըեսնում ծուկներն ո̈ւրո̈ւր հետա վազ-վազ ըն անում, պիցրա̈նում գյոլեն իրեսը, մինգյել տակ անում: Շահ-Աբբասն ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրին ասում ա. - Տըեսնաս ծո̈ւկներան քա՞նինն ըն էքյ, քանինը՝ վըերց: Էտ խոսկըեն յիրա ծո̈ւկները կլխընեն ճիրան տո̈ւս ըն օնում, ծիծաղում: Շահ-Աբբասը հըրցնում ա.- Հո՞ւ կըկարե գյիդա̈, թա ծո̈ւկները հինչու հետե յըն ծիծաղում: Նա̈զիր-վեզիրան վըեչ մինն էլլա կարում չի գյիդա̈: Շահ-Աբբասն ասում ա. - Ծըեզ քառասուն օր մո̈հլա̈թ ըմ տամ, թա կըրեցեքյ ասեքյ՝ էն ծո̈ւկները հինչու հետե յըն ծիծաղալ, ծըեզ պեց ըմ թուղըլական, թա չէ, ծըեր լոխճինին կլխընեն կտրել ըմ տըլական:

Նա̈զիր-վեզիրը շատ ըն մտածում, կարում չըն գյիդա̈ն: Վըեր մնամ ա իրեք օր, խաբարը հըսնում ա նա̈զիր-վեզիրին, վըեր էս հինչ շենումը մին հլիվուր մարթ կա, տա ծո̈ւկներեն լո̈ւզին գյո̈ւդում ա: Նա̈զիր-վեզիրը կյամ ըն էտ հլիվուրեն կոշտը, ասում, վըեր խստի-խստի պեն կա, մին քսակ վըեսկե յէլ տամ ըն ո̈ւրա̈ն, հլիվուրը տրանա ետն ասում ա.- Քյեցեքյ Շահ-Աբբասեն ըսեցեք՝ հինչ վըեր կա, թող մնա տակը տակ, կլո̈խը՝ կլո̈խ, թա չէ, ո̈ւրա̈ն հետե յէլ լա̈վ չի:

Նա̈զիր-վազիրը քյինա̈մ ըն Շահ-Աբբասեն ասում հլիվուրեն ասածը, Շահ-Աբբասը մնամ ա էլլա ո̈ւրա̈ն խոսկեն:

Նա̈զիր-վեզիրը էլլա կյամ ըն հլիվուրեն կոշտը, նորըմինան մին քսակ վըեսկե տամ, ետնան էլ ասում. - Շահ-Աբբասը մըեր լոխճինին կլխընեն էքյո̈ւծ պիտի կտրել տա, ասե տըեսնանք ծո̈ւկները հինչու հե՞տե յըն ծիծաղալ: Հլիվուրն էլլա յա ասում.- Քյեցեքյ Շահ-Աբբասեն ըսեցեքյ, թող մնա տակը տակ, կլո̈խը՝ կլո̈խ, թա չէ, ո̈ւրա̈ն հետե յէլ լա̈վ չի:

Նա̈զիր-վեզիրը կյամ ըն հլիվուրեն խոսկը Շահ-Աբբասեն ասում, Շահ-Աբբասն էլ ասում ա.-Քյեցեքյ հլիվուրեն ծըռքըրներետ յիրա̈ պերեքյ, թող

հինչ վըեր հըրցրալ ըմ, ջողորը տա։

Նա̀զիր-վեզիրը քյինա̀մ ըն հլիվուրեն ծըռքըրներեն յիրա պիրում Շահ-Աբբասեն պալատը։ Շահ-Աբբասն ասում ա.- Ա՛սըե, տըսնամ, ա՛ հլիվուր, խի՞ յըն ծո̀ւկներն իմ խոսկես յիրա ծիծըղոտալ։ Հլիվուրն ասում ա. - Շահն ապրած կենա, քեզ քանի կնե՞գյ օնըես։ Շահ-Աբբասն ասում ա. -Քառասուն։ Հլիվուրը թա՝ ղաբուլ կանե՞ս քու կնանեքյըտ լոխ շուրըրնեն հանեն, տկլոր կյան մին -մին մըեր ըոըչավն անց կենան, քյինան օրիշ օթաղ։

Էքյսի օրը Շահ-Աբբասը հրաման ա տամ, վըեր ո̀ւրա̀ն կնանեքյը լոխ տըկլուրանան, մին –մին ո̀ւրա̀նց ըոըչավն անց կենան, քյինա̀ն օրիշ օթաղ։ Շահ-Աբբասեն կնանեքյը լոխ տկլուրանում ըն, մարթուցը ըոըչավը մին-մին անց կենում, քյինա̀մ օրիշ օթաղ։ Շահ-Աբբասը տըեսնում ա, վըեր ո̀ւրա̀նց կնանուցն անա հենգյը տղամարթ ըն, միշտ ըտեղ կնգան շուրերավ ըն իլալ կըռնալիս։ Հլիվուրն ասում ա.- Շահն ապրած կենա, մեհենգյ տըեսե՞ր, թա քու կնանուցտ մաչին քանի տղամարթ կա, ծո̀ւկները հենց տրա հետե յին ծիծըղոտում, ասում ին, վըեր Շահ-Աբբասը գյո̀ւղո̀ւմ չի, թա ո̀ւրա̀ն կնանուցան քա՞նինն ըն էքյ, քանինը՝ վըերգ, օզում ա գյիղա̀՝ ծուկներան վըե՞րն ա էքյ, վըերը՝ վըերգ։

## 7.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ՉՈԲԱՆԸ ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ԸԽՃԸԿԱՆՆ ՕԶՈՒՄ

Մին մըծացած, յաշը շատ անցկըցրած թաքավըերու մին շատ դա̀շա̀նգյ ախճիգյ ա ինո̀ւմ։ Ախճիգյը վըեր մըծանում ա փսըկվելի տըեռնում, թաքավըերն ասում ա.-Հու վըեր կարե քառասուն մեշուկ կյա̀րին, քառասուն մեշուկ ցորենը, մինգյել քառասուն մեշուկ կորեկը խառնե, իրեք ամսում ճոկե, ախճիգյըս նրա յըմ տամ։

Տրանա ետը թաքուհին կյամ ա թաքավըերեն կոշտը, ասում. - Մունք մըեր կյանքըեն լա̀վ վախտն անց ընք կըցրալ, թող մըեր ըխճըկանը հունց տղա թուշ ինի, վըեր կարե ծովըեն դրաղըեն մըեր պըլատեն քշտին ծո̀ւկնու վըսկուռա մին մըեծ պալատ վըեննը կըցնե, հունց ինի, վըեր քշըրհինեն նան դիբո̀ւրո̀ւգյո̀ւնին լո̀ւսը բիրաղի ինի մաչին, համ էլ ըխշարքես սո̀ւրթա̀ բարն ընդըեղ ինի։

Թաքավըերն ո̀ւրա̀ն պայմանը նան կնգանը տինիլիս պայմանը բիրա̀դի յա ո̀ւրա̀ն երգյիրը հըսցնում։ Էտ հրամանը կյիրում ա, ըխճըկանը

նկարն էլ նըեստա տամ, իսկ փըսըցուվուցան հու վըեր կարե վուչ էտ պայմանը կըդարե, կլո̈խը կտրել ա տամ: Տրա հետե յել ո̈ւրա̈ն պըլատեն ըռաչին մին մըեծ փոս ա կտրըել տամ, վըեր էտ կլխընեն կտրած մարթիքյը լոխ նի տան մաչը:

Էտ երգյիրին ջիհիլներան հու վըեր թաքավըերեն ըխճըկանը նկարը տըեսնում ա, խըլքըհան ա ինո̈ւմ: Լոխ կյամ ըն թա պայմանը կըդարեն, կըլխընեն կտրել ըն տամ, մնամ ըտըեղ: Խրեգյ ա մնամ վըեր փոսը լըսնե, մին շենում մին շատ քյա̈սիբ չոբան ա ինո̈ւմ, տրա յել վըեչ մին պեն չի ինո̈ւմ, մենակ մին պառավ մար ա ինո̈ւմ, վըխճըրնըեն տամ ա մորը, վըեր պահե, ինքյն էրկու հաց տինո̈ւմ հիյբումը, մին ըստաքան էլ պեսոկ յոր օնում, մորն ասում.-Քյինամ ըմ թաքավըերեն ախճիգյն օզըեմ: Մարը հիշքան ղաչանք-պըղատանք ա անում, վըեր տղան ո̈ւրա̈ն մենակ, իրեսը տափըեն չըթողե, անջուկ չի օնում, ասում ա._ Տու մենակ աղոթկ ըրա, վըեր պեներըս հաջող անց կենա, մնըցածեն նիըետ կործ չօնըես:

Տղան հղե յա ինում: Վըեր շատ քյինամ ա, տըեսնում ա հղըցեն մաչին էնքան մրչեմնը հըվաքված, վըեր վըեննը տինիլի տըեղ չի կա: Տա պեսուկը կես ա անում, կեսը հղըցեն տակըեն շաղ տամ, կեսը՝ կլխըեն: Մրչըմննըեն հըվաքվում ըն հղըցըեն էրկու ա̈նգյո̈ւնը, հղըցըեն մաչը մնամ ա պեց: Չոբանն օզում ա էտ պեց տըեղավն անց կենա, մրչըմննըերեն մըեծը տրան մուտանում ա, ասում. -Չոբան ախպըեր, տու վըեր էտ լիվոթունը մըեզ ըրալ ըս, քեզ էրկու մրչեմնու թըև ըմ տամ, վըերդեղ վըեր տիժար տըեղ ինգյիս, ո̈ւրո̈ւր կըքսիս, լոխ էն ընք իննա̈կան քըշտիտ:

Չոբանը թըևերը յոր ա օնում տինո̈ւմ ծուցըեն ջուբումը, կյամ թուշ թաքավըերեն պըլատըեն առաչը, քյինամ խնամախոսըեն քարեն նստում: Թաքավըերը մարթիքյ ա ղարկում, տահանք հըրցնում ըն.-Չոբան ախպըեր, թաքավըերն ասում ա՝ հինչ ը՞ս օզում, բա̈լի փող յա օրիշ պեն ա հարկավըեր, ասըե՝ քեզ տանք, քո մոր աշկը հղեց ա, եր կաց քյինա̈: Չոբանը տահանց ասում ա.-Ես փողու յա օրիշ պեննու հետե չըմ եկալ, ես եկալ ըմ թաքավըերեն ախճիգյն օզըեմ, քյեցեքյ թաքավըերեն ըսեցեքյ՝ հինչ պայման տինում ըս, չոբանն օզում ա կըդարե:

Խոսկը տանում ըն թաքավըերեն հըսցնում, թաքավըերը մտածում ա, ասում ա հա̈լբա̈թ տրանում մին հինա̈ր կա, վըեր ըռիսկ ա ըրալ, եկալ: Քյինա̈մ ա թաքուհուն նիըետ խոսում, ասում ա.-Հենց սա̈բրա̈, թա չոբանը

մըեր տիրա̀ծ պայմանը կըդարեց, մըեր մաղար-գյո̀ւղա̀ր ախճիգը պիտի տանք էտ սարան փըռնածըե՞ն։ Թաքուհին ասում ա.-Վըեր լա̀վ ինի, խըելուեք ինի, հինչ ա՞նըենքյ, թա չոբան ա։ Թաքավըերը հրաման ա տամ, չուբանըեն տանում ըն համամ, լըղըցնում, իրեսը-կլո̀խը վըեր անում, շորերը փոխում, տրանա ետը մին լա̀վ օթաղ տամ, օտում ա-խմում, պեն անում։ Չոբանն ո̀ւրա̀ն մտկումն ասում ա. - Դէ, հալա̀ մին իրեք-չորս ամըես մըրթըվարի կապըըեմ, թաքավըերը ետնան ինձ ըսպանում ա, ըսպանըե։

Մին քշեր չոբանն ըրազումը մըրչըմննըերեն թաքավըերեն տըեսնամ ա, տա չուբանըեն ասում ա. - Պա քեզ ասալ չը՞մ, վըեր նըեղ տըեղ ինիս, թըներն ո̀ւրո̀ւր կըքսիս, կյիլա̀կան ընք քեզ քյո̀մագյ անըենքյ։ Չոբանը քունըտըեղա եր ա կենում, մըրչըմննըերեն թըները ջուբան տո̀ւս օնում ո̀ւրո̀ւր քո̀ւմ, մըրչըմննըեն լոխ հըվաքվում ըն ըտըեղ, մին քշերումը քառասուն չուվալ ցորենը, քառասուն չուվալ կյա̀րին, քառասուն չուվալ կորեկը ճոկում, ածում չուվըլնեն։

Քշերավ չոբանը եր ա կենում չուվըլնըեն ցեց տինում, մարթ ղարկում թաքավըերեն կոշտը, թա ըսեցեքյ ո̀ւրա̀ն մարթիքյը յոր օնըե, կյա̀ ճոկած ցորըենը, կյա̀րին նան կորեկը տըեսնա։ Քյինա̀մ ըն թաքավըերեն ասում, թաքավըերն ո̀ւրա̀ն նա̀զիր-վեզիրավը կյամ ա ճոկած, պատնըյեր տիրա̀ծ չուվըլներեն եշում, մնամ պերանը պեց։

Տրանա ետը թաքավըերը չուբանըեն ասում ա.- Քու մար նիզյա̀րան կինի, իրեք օր պեց ըմ թողում, քյինա̀ տըես, եք։ Չոբանը թա՝ թաքավըերն ապրած կենա, ես կործավ ըմ եկալ, մինչև վըեր պրծնըեմ վուչ, մինչև վըեր մուրազըես հսնըեմ վուչ, վըեչ մին տըեղ քյինա̀լ չըմ։ Թաքավըերը թա՝ տու վըս գյո̀ւղո̀ւմ, վըեր իտի յա, քյինա̀ ծովըեն ղրաղեն եշի, մին լավ տըեղ քթի, պալատը շինի։

Չոբանը քյինա̀մ ա ծովըեն ղրաղը, մտածում, մտածում, գյո̀ւղո̀ւմ չի, թա հինչ անըե։ Եշում ա, տըեսնում ճիրին ղրաղեն ցամաք տըեղ ծովըեն լափուն մին շատ ղա̀շանգյ ծո̀ւկուն ա քցա̀լ, յոր ա օնում ճիրին մաչին պեց թողում։ Մխըըե քյինամ ա, տըեսնում էտ ծո̀ւկունը նորից ինգյա̀ծ ցամաքը, օզում ա թա ըստակե, էլլա յա յոր օնում, քցո̀ւմ ճո̀ւրը։ Ծո̀ւկունը կլո̀խը ճիրրա̀ն տո̀ւս ա օնում, ասում.-Չոբան ախպըեր, վըեր տու ինձ մահա ըզադալ ըս, մաշկաս մին թըեփ պուկե, վըեր նըեղ տըեղ ինգյիս, կերիս,

կյիլյանկան ըմ քեզ հըսնըեմ, հինչ վըեր օգըես, քյո՛մյազյ կանըեմ։

Չոբանը ծուկնըեն մաշկան թըեփը պոկում ա, տինում ջուբումը, քյինյամ պըլատըեն հետե մին լավ տըեղ քթենո՛ւմ, մարթ դարկում թաքավըերեն կոշտը, թա էսքան ուստա, էսքան փյահլա, էսքան դում, էսքան կեր դարկե։

Հինչ վըեր չոբանն ասում ա, թաքավըերը լոխ դարկել ա տամ։ Չոբանը բինո՛վրյան կտրել ա տամ, կերն անըել տամ, թըեփն էրում, ծո՛ւկունը կյամ ա կոշտը, հըրցնում ա, թա հինչ ա՞ պըտահալ, ասըե՝ տըեսնամ հի՞նչ կա։ Չոբանն ասում ա.-Ըստըեղ ծո՛ւկնու վըսկուռա մին հունց պալատ պիտի շինիմ, վըեր քշըրհինեն ըրնեն լո՛ւսը նան դիբըրգյոնըեն ըրնեն լուսը բիրադի մաչին ինին, էնքան ծո՛ւկնու վըեսկուռ պեր, վըեր էս պըլատըեն հերիքյ անըե։

Ծո՛ւկունը նի յա մննում ծովը, քշանում ծովըեն տակը, մին վախտ չոբանը եշում ա, տըեսնում ծովումը հիշքան ծո՛ւկուն կա, ամըեքյա մին ծո՛ւկնու վըեսկուռ եր կալած, կյամ ըն բիդի ծովըեն դրադը։ Ծո՛ւկներն էնքան քյինամ ըն կյամ, էնքան վըեսկուռ ըն պիրում, վըեր պալատը շինիլյան ետը մին խիլլյա յէլ մնամ ա։ Չոբանը մարթ ա դարկում թաքավըերեն կոշտը, վըեր կյյան եշին, տըեսնան։ Թաքուհին թաքավըերեն ասում ա.- Պալատը մըեր ըխճըկանը հետե յա շինվյալ, ախճիգյն էլ տանենքյ, տըեսնանք հավան ա կենո՞ւմ, թա՞ չէ։ Ախճիգյն էլ յոր ըն օնում, նյազիր-վեզիրին նիըետ քյինյամ պըլատըեն եշում, մնամ պիրըննըեն պեց կալած։ Թաքավըերն ո՛ւրյան պըլատան չերը էտ նոր շինյած պալատը գյիբենե յա մըեկնել տամ, վըեր ո՛ւրյան ախճիգյն էտ գյիբըընուցավը քյինյա։

Թաքավըերեն ախճիգյը քյինյամ ա պըլատըեն եշում, շատ հավան կենում, տըղըեն ասում.-Քյինյա շոռ եք, ինձետե հունց բար պեր, վըեր տրանա մենակ իմ պըլատումըս ինի։ Չոբանն ասում ա. - Ես ինձ հաշն ըմ անում թաքավըերեն կուճուր տղան, թող թաքավըերն ինձնիըետ էրկու հոքի յէլ տինի, նաhանց հաշն կանըեմ ո՛ւրյան մըեծ տղեքյը՝ իմ մըեծ ախպերքը, էն վախտը բիրյադի կըքյինանք ախշարքըս շոռ կյանք, էտ բարը քթենանք։

Թաքավըերն ո՛ւրյան մոտե մարթուցն անա էրկու հոքի յա տամ՝ մինը լափ մըեծ, ամմըեն հինչում փորցված, մինն էլ նրանա մխըրե կուճուր։ Կյամ ըն չուբանեն կոշտը, իրեքան ըխպըրանում ըն, ամեքյա մին իրեղան

ծի նստում, հղե ինի՞ւմ, քյինա̀մ: Քյինա̀մ ըն, քյինա̀մ, մին հեռու տըեղ մին քյալվաարա յա պըտահում: Ըտըեղ վըեր ըն կյամ, հաց օտում, ծիյանցը խոտ տամ, ճի՞ւր տամ, դինջըցնում, հղե ինի՞ւմ: Տըեղատ էլ իրեք հղե յա ճոկվում, հղըցոցը դրաղը են էլ մին քյալվաարա յա ինի՞ւմ:

Մըլըհաթ ըն անում, վըեր ետ տըռնալիս հու ճեըլի կյա, էտ քյալվաարեն քշտին կենա, մինչև ի՞ւրանք էլ կյա̀ն, բիրա̀դի քյինան թաքավըերեն ըճխըկանը կոշտը:

Հղե յըն ինի՞ւմ, քյինամ: Մըեծ ախպըերն աչի ընգյի՞ւնի հղըցավն ա քյինա̀մ, մաշնակը՝ մաչի հղըցավը, կուճուրն էլ՝ ծա̀խի հղըցավը: Կուճուր ախպըերը քյինա̀մ ա տըեսնում հղըցումը մին մըեծ, սիպտակ մըրքավուր մարթ նստած: Էտ մարթն ասում ա. - Բա՛լա, ջա̀հիլ ըս, ըստըեղավ քյինողը ետ կյամ չի, ետ տըեռ քյինա̀: Չոբանն ասում ա.- Ես հղըես քյինա̀լ պիտիմ, թա պեն օնըես ըսելի, ասըե: Հլիվուրն ասում ա.- Դե, վըեր քյինա̀մ ըս, մըրքես մաչին մին պիլա̀նի կա, եր կալ, հարկավըեր կըկյա: Տա ծըեռքը տանում ա, մըրքեն մաչին պիլա̀նին յոր օնում: Վըեր օզում ա թա հղե ինի, հլիվուրն ասում ա.- Վըեր խիըլա քյինա̀ս, առաչըտ մին պեցի՞ւր սար ա կյիլական, էտ սարըեն կլխըեն մին պառավ կնեգյ նստած, չխարակ ա մանում, վըեր մին կես վերստ մնա թա հսնըես սարըեն կլի՞խը, ծիյատ վըեր կըկյաս, քմակավն անց կենաս, պռավըեն թաքուն խըտտես, կլխավը լոք տաս, ասըես՝ ես եկալ ըմ: Նրանա ետը ինքյը քեզ ըսըլական ա, թա հինչ պիտի անըես:

Չոբանը հղե յա ինի՞ւմ, քյինա̀մ: Վըեր կես վերստ ա մնամ թա սարըեն հըսնե, ծիյան վըեր ա կյամ, ծին մին դալդա տըեղա կապում, ինքյը թաքուն քյինամ պըռավըեն մաշկանը տի՞ւս ծըեռքերը ետ տանում, խըտտում, կլխավը լոք տամ, ասում. - Ես եկալ ըմ: Պառավը թա՝ վա՛յ, քուռանան քո մոր աշկըերը, վըեր քեզ դարկյալ ա ըստըեղ: Վըեր իտի յա ասում, էտ սիաթըեն չուբանեն մարն ի՞ւրա̀նց տանը քուռանում ա: Պառավը ետնան ասում ա. - Դե, վըեր եկալ ըս, քյինա̀ ծիտ նստըե, հղե իլ, հղըցումը քեզ մին մըեծ, ջանավար օց ա պըտըհըլական, տրան վըեր տըեսնաս, ծիյիտ փորըեն տակըեն դամչավը հունց կըթխես, վըեր մին զըլ կաշի եր կենա, ետնան քմըկիտ եշիս վուչ,ծիտ կըքշիս, քյինա̀ս, օցը կյիլական ա առաչըտ, վախըես վուչ, նա քեզ լոխ կասըե, թա հինչ պիտի անըես:

Չոբանը քյինա̀մ ա ծին նստում, հղե ինի՞ւմ: Վըեր էտ օցըեն պըտահում

ա, ծիյին փորըեն տակըեն ղամչավը հունց թխում ա, մին զոլ կաշի յա եր կենում: Ծին քշո՞ւմ ա քյինա՞մ, օցը կյամ ա տո՞ւս կյամ առաչը, աւում.-Վըեննը կաց, ինձա՞նա՞ վախըես վուչ, վըեր քյինա՞ս, ըռաչիտ էրկու մագնիտու սարեր ըն պըտըիըլական, տաhանք շատ ճիլլը-ճելլի քյինա՞մ ըն-կյամ, ո՞ւրո՞ւր թխում, էլլա ետ տըեռնում. էտ սըրերան վըեր մուտանաս, ծիյիտ փորըեն տակըեն ղամչավը հունց կըթխըես, վըեր էրկու զոլ կաշի եր կենա, ճելլի քշիս, էտ սըրերեն ղաթավն անց կենաս, հետատ հիշքան ծեն տան, ետ եշիս վուչ, ղաթավն անց կըկենաս, տո՞ւս ըս կյիլա՞կան էն մըեծ ախշարքը, մեհենգյ կոռնըտ պիցըրցըրու, կյամ, հա՞լա՞ էլ ըմ քեզ հարկավըեր կյիլա՞կան: Չոբանը կոռնը պիցըրցընում ա, օցը կուռնավը պիցրա՞նում ա չուբանըեն անավ տամ, կլո՞խը վիզա՞վը տո՞ւս օնում:

Չոբանը ծին քշո՞ւմ ա քյինա՞մ էտ սըրերեն ըռաշին վըեննը կենում, եշում, տըեսնում սարըերը մին ըշկըճըպումը տասը հետ քյինամ ըն կյամ, ո՞ւրո՞ւր թխում, էլլա ետ տըեռնում: Տա ծիյին փորըեն տակըեն հունց թխում ա, վըեր էրկու զոլ կաշի յա եր կենում: Ծին քշո՞ւմ ա սըրերեն ղաթավը ճելլի անց կենում, տո՞ւս կյամ էն ղոլը, եշում, տըեսնում մին հունց ախշարք, վըեր ծառերը, քոլըերը, սարըերը, ամմըեն հինչ տարըեն տասներկու ամըես կանանչ ըն ինո՞ւմ, ամմըեն հինչավ լիգյը, բոլլուղ: Տրա առաչն էլ մին հունց ախճիգյ ա կյամ, վըեր իրիքյնակըեն կաստե՝ տու հեռու կաց, ես ըմ լո՞ւս տամ:

Էտ ախճիգյը տրան վըեր պըտահում ա, աւում ա.-Չոբան ախպըեր, ծիյիտ հա՞քյին սըրերեն ղաթումն ա մնացալ, մեհենգյ ես քեզ հունց հրեղան ծի կտամ, վըեր հիշտըեղ օզըես, քեզ կըթռչըցնե, տանըե հացընե, մեհենգյ աստե, տըեսնամ օրիշ հինչ ըս օզում: Չոբանն աւում ա.-Ինձ հանց բար տո, վըեր տրանա մենակ իմ տանն ինի: Ախճիգյն աւում ա.-Տու վըեր էտքան չըրչարվալ ըս ծըեր թաքավըերեն ըխճըկանը հետե, նա իմ ծիծիյնըս էլ չա՞ժի, եք ինձ օզըե, մնա մըեր երգյիրումը, ըստըեղ ամմըեն հինչ լա՞վ ա, վըեչ մին մարթ, հեյվան, ղուշ ըստըեղ մըեռնում չի: Չոբանն աւում ա.-Խոսկ չօնըեմ, տու շատ ղա՞շա՞նգյ ըս, ամմա ես մըեր երգյիրին մարթն ըմ, պիտի ետ տըեռնամ, ես մենակ մինին ըմ սիրա՞լ, պիտի քյինա՞մ նրա կոշտը հսնըեմ, մըեր երգյիրումն էլ վըեր մըեռնեմ, նրա վըեղը ինձիրա՞ թիթն ինի: Ախճիգյն աւում ա.-Քու օզածըտ մին տռնըերը կապ ութաղում ա, վըեր նրա պիլա՞նին քթենվա, մենակ էն վախտը կըկարըես ծըեռքըտ քցիս: Չոբանը

ջուբան մին պիլանի յա տուս օնում, տամ ըխճըկանը: Ախճիգյը պիլաննին դաստին ճընանչում ա, յոր օնում քյինամ քըլլած օթաղը պենում, մին շուշու ըմանու մաչի մին տեղեն տանձ ա ինում, տուս ա օնում տամ ուրան, ասում.- Տար նշընըծացուվըետ տո. վըեր օտըե, լափ ա ղըշընգյիննական, մեհենգյ մըեր ծիյանցան մինը նստըե, քյինա կոշտը:

Չոբանն ըխճըկանն անա շատ շնուրիակալ ա տըեռնում, ծիյանցան մինը նստում, տանձն էլ յոր օնում, քյինամ տուս կյամ քյալվաըրեն կոշտը, վըերդըղան վըեր իրեք ախպըերքը ճոկվալ ըն: Մաշնակ ախպըերը քյեցած ա ինում մին ըխպըրու կոշտ, տըեսնում ժողովուրթը տըեղ հըվաքված, քյեփ ըն անում, ուրան էլ ծեն ըն տամ, պիրում նստըցնում: Տա յել լավ երք աող ա ինում, ուրան յիրքերավը, խըղերավը տահանց ուրխըցնում ա: Էտ երգյիրին թաքավըերեն տղան էլ ա էտ քյեփումն ինում, տա յել պիտի էն մին օրը փսակվըե:

Թաքավըերեն տղան տրան տանում ա ուրան հըրսանեքյը, տա հունց երք ա ասում, հունց խաղ ա ասում, վըեր հըռհնըցուվըեն սըերտը տըկըռտիյեր ա ինում, տրան թաքուն ասում ա.- Վըեր տու ինձ օգնըես, ես թաքավըերեն տղըեն անա ետ կըտըեռնամ, կյամ քեզ: Տա յել ասում ա. - Ես նրա նիըետ հաց ըմ կըտրալ, կարել չըմ նրան դարազ անըեմ: Հըռհնացուն ուրան ծուցան մին հիլի յա տուս օնում, տամ էտ տղըեն, ասում.- Եր կալ, ինձանա հիշատակ պահըե, հիբը վըեր ինձ մըետըռտ քցիս, հիլուն կը յեշիս, պատկըերըս մաչին ուրվըլական ա, հուր անում էլ տաս, հիլուն մաչին տըսնըլական ըս, ետնան, վըեր նըեղ տըեղ ինգյիս, մաչին եշիս, պենըռտ աչ ա քյիննական:

Տա հիլին յոր ա օնում, լըխճունան շնուրիակալ տըեռնում, ծին նստում կյամ քյալվաըրեն կոշտը, եշում, տըեսնում կուճուր ախպըերը հաց քցած, օգնում ա օտըե: Տըեղ պռոշտի յըն անում, հենց պռոշտի ընելիս վախտն էլ եշում ըն, տըեսնում մըեծ ախպըերը եկավ: Նստում ըն մին լավ քյեփ անում, եր կենում, վըեր հղե ինին: Մըեծ ախպըերն էլ ուրան նիըետ մին գյաբա յա պերալ, վըեր յիրան նստըես, մին ըշկըճըպումը հիշտըեղ օգըես, քեզ ընդըեղ կըհըսցնե:

Իրեք ախպըերն էլ էտքան վախտ թաքավըերեն ըխճըկանը հետե յըն իլալ չըրչըրվելիս, իրեքան բիրանի ըխճըկանն անումը տամ ըն, հիլուն եշում, տըեսնում հիվանդ, հոքուն յիրա: Ծիյանցավ կարըել չըն հսնըեն:

Ծիյանքը ծախում ըն, իրեքան բիրա̀դի գյիբին յիրա̀ նստում, մին ըշկըճըպումը հըսնում թաքավըրեն ըխճըկանը թա̀զզա̀ պալատը, կուճուր ախպըրերը տանձը տո̀ւս ա օնում տամ ո̀ւրա̀ն, օտում ա, լո̀ւվանում, էնքան էլ ղըշընգյանում ա, վըեր եշիլ չի ինո̀ւմ:

Մեհենգյ խոսկ ա ինգյո̀ւմ, թա թաքավըրեն ախճիգյը հու պիտի օզըե: Պըլատեն մարթիքյը հըվաքվում ըն մալըհաթ անում, ասում, վըեր հիլին չինա̀ր, կարել չին գյիդա̀ն, թա ախճիգյը հիվանդ ա, վըեր գյա̀բա̀ն չինա̀ր, կարել չին ճելլի տըեղ հսնին, վըեր տանձը չինա̀ր, ախճիգյը հինչ պիտի՞ օտար, լո̀ւվանար: Իտի ասում ըն, խոսում, վըեչ մինն էլ կարում չի գյիդա թա ախճիգյը հու պիտի օզըե: Ախճիգյն էլ խոսկ ա յոր օնում, ախպորցն ասում. - Տուք իրեքըտ էլ ինձ ուզելի հետե քանի տարե չըրչարվալ ըք, իրեքըտ էլ հունց պեներ ըք ծըռքըրնետ քցա̀լ, վըեր առանց մինն ինիլի կարել չիքյ ինձ լո̀ւվըրցնեքյ՝ վըեր հիլին չինա̀ր, կարել չիքյ ինձ տըսնիքյ, գյա̀բա̀ն չինա̀ր, կարել չիքյ ճելլի տըեղ հսնիքյ, տանձը չինա̀ր, լո̀ւվանալ չի, մեհենգյ հիլին էլ ա կենում, վըեր ծըեր մաշնակ ախպորը շատ պենում կարող ա քյո̀մագյ անըե, գյա̀բա̀ն էլ ա կենում, վըեր օզած վախտը մարթ ո̀ւրա̀ն օզած տըեղը կըհսնըե, տանձը կենում չի, ետնան ծըեր կուճուր ախպըրերը իմ հոր ու մոր տիժա̀ր պեներն էլ ա ըրալ, դո̀ւզը նա կինի, վըեր ինձ ծըեր կուճուր ախպըրերն օզըե:

Տրանավ էլ խոսկը պրծնում ա, իրեք ախպըրերը ծիյանքը նստում ըն, քյինամ տըեսնամ կուճուր ախպորը մորն աշկըերը քուռացած, տանը նստած: Կուճուր ախպորն անավ տուված օղը ջանան ետ ա տամ, քյինա̀մ հաքյին քսո̀ւմ աշկըերը, լո̀ւվըրցնում: Մարը եշում ա, տըեսնում ո̀ւրան տղան ա եկալ, շատ ա ուրխանում: Տղան մորը յոր ա օնում, քյինա̀մ թաքավըրեն ըխճըկանը պալատը, օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ ըն անում, չուբանեն նան թաքավըրեն ըխճըկանը փսակում, մնամ ըտըեղ:

8.ԷՐԿՈՒ ԱԽՊԸՐ

Մին շենում մին շատ քյա̀սիբ մարթ ու կնեգյ ըն ինո̀ւմ ըպրելիս: Տահանց վըեչ մին պեն չի ինում, բայց շատ հավըեր ա ինո̀ւմ: Էտ հըվերավն ըն ինո̀ւմ ըպրելիս:

Ուրերան մին օր տահանց տոն մին ղարիբ մարթ ա ղոնաղ կյամ: Տա հըյաթավն անց կընալիս եշում ա, տըեսնում տահանց հըվըերեն մաչին մին շատ ղա̀շա̀նգյ վըերցակ կա, կլխըեն էլ մին մըեծ կատար, յիրան կյիրած. «Հու էս վըրցակըեն կլո̀խն օտե, թաքավըեր ա տըոնըլական, հու քարճիգյն օտըե, ամմըեն հիզիլավ պիրա̀նան վըեսկե յա վըեր ըծըլական»: Տնըտարերն էլ կյիրիլ-կարթիլը գյիղա̀լիս չըն ինո̀ւմ, պենա̀ն խաբար չին: Էտ ղոնաղը վըեր տա կարթո̀ւմ ա, քյինա̀մ ա տնըտարըեն կոշտը, ասում.- Օզում ըմ քըզնհետ ըխպըրանամ: Տնատարն ասում ա. - Լա̀վ կինի:

Ղոնաղը տահանց տանն էրկան ա կենում, մին օր էլ սուտը-սոտ հիվընդանում: Վըեր հըրցնում ըն, թա իշտահը հին չու վա տամ, տա ասում ա. - Էն մըեծ, ղա̀շա̀նգյ վըերցակը մուրթեցեքյ, կլո̀խն ան քարճիգյը ինձ տուվեքյ, օտըեմ: Տնատարն օզում ա, թա օրիշ հավ մորթե, ղոնաղն ասում ա.-Չէ՛, նա յա իշտահըս տամ: Տնատարը քյինա̀մ ա էտ վըերցակը մորթում, իփո̀ւմ ըն, կուտորում, տինում կուխնումը, վըեր տան ղունաղըեն: Տահանց էլ տաստ-տասներկու տըրեկան էրկու տղա յա ինո̀ւմ, մինին անումը Սըմավար, մինինը՝ Չայնիկ:

Սըմավարը նան Չայնիկը ըշկոլան սոված կյամ ըն, Սըմավարը վըրցակեն կլոխն ա յոր օնում օտում, Չայնիկը՝ քարճիգյը: Տնըտարերը կյամ ըն թա վըրցակեն կլո̀խը նան քարճիգյը տանըեն տան ղունաղեն, տըեսնում ըն կավըեչ: Մըեսը տանում ըն տամ ղունաղեն, օտում չի: Տնատարն ասում ա, վըեր կլո̀խը նան քարճիգյը խոխեքյը կերալ ըն: Ղոնաղը խոսում չի:

Մին քանի օր վըեր անց ա կենում, ղոնաղը տնատըերնը ասում ա.- Խուխոնցըտ մորթե, մինին հըղողը, մինին էլ ջիգյա̀րը տո̀ւս կալ, պեր օտըեմ: Էտ խոսկը ղունաղան ըսպըեսելիս չըն իլա̀լ, բայց դե վըեր ըխպըրացալ ըն, տնատարն ըստիբված ա իլա̀լ խուխոնցը մորթե: Շենան մին ղասաբ ա ծեն տամ, տրան ասում. - Խոխեքյը տար մին դրաղ տըեղ մուրթոտե, մինին հըղողը, մինին էլ ջիգյա̀րը տո̀ւս կալ, պեր, տամ ղունաղես, օտըե: Էտ ղասաբը տրան ասում ա. - Մին գյա̀ղա̀ մարթու խոսկավ խուխոնցըտ մըրթոտում ը՞ս: Հա̀րն ասում ա.-Հինչ ա՞նըեմ, խուխոնցըս շատ ըմ սիրում,

դե վըեր էտ մարթին նիըետ ըխպըրացալ ըմ, կարել չըմ նրա խոսկը կոտրեմ:

Ղասաբը խուխոցը յոր ա օնում, տանում շենան տ՞ւս մին դրաղ տըեղ, գյ՞ւղում չի, թա հինչ անըե: Բ՞ւրդ՚ն եշում ա, տըեսնում մին պըռաված շոն տըեղ նստած: Խոխոցն ասում ա. - Ամեքյա մին քար եր կալիքյ: Ինքյն էլ ա մին մըեծ քար յոր օնում, յիրա յըն տըեռնում, քըրերավ էտ շանն ըսպանում: Ղասաբն էտ շանը հըղողն ան ջիգյ՚րը տ՞ւս ա օնում խուխոցը մինին հըլավումը կապում, յոր օնում: Խուխոցն էլ ասում ա.- Կլ՞ւխ եր կալիքյ, հղե իլիքյ, քըմըկներետ եշիքյ վուչ, վըեր ետ տըեռնաք, ծեր հ՚որ ծեզ ըսպըննական ա, քյեցեքյ շատ հեռու երգյիր, վըերդեղ շեն յա քաղաք պըտահե, ընդըեղ ՞ւր՞ւր բութա կանեքյ, ապրեքյ:

Ղասաբը խուխոցը հղե յա անում, ինքյը շանը հըղողը նան ջիգյ՚րը տանում տամ տահանց հորը:

Սըմավարը նան Չայնիկը հղե յըն ին՞ւմ, քյին՚ամ: Շատ ըն քյին՚ամ, թա խրեգյ, հըսնում ըն մին քաղաք: Էտ քըղաքեն չորս ընգյ՞ւնավը պեցուր հասար ա ին՞ւմ քաշած, մին դըրբըզա յել յիրա ըրած: Տահանք եշում ըն, տըեսնում մին մարթ էտ դըրբըզավը նի մտավ: Էտ մարթին նիըետ նի յըն մննում, քյինամ տըեսնում մին տըեղ սաղ քըղաքեն ժուղովուրթը հըվաքված, թաքավըեր ըն ճոկում: Ղուշը պեց ըն թողում, հ՞ւր կլխըե վըեր կյ՚ա, թաքավըերը նա պիտի տըեռնա: Ղուշը վըեր պեց ըն թողում, քյին՚ամ ա Սըմավարեն կըլխեն վըեր կյամ: Ժուղովուրթը զարմանում ըն, ասում.- Էս պիր՚նան կըթնավըետ կյ՚ալիս խոխա՞ն պիտի մըեր թաքավըերն ինի:

Խուխեն յոր ըն օնում տանում քց՞ւմ մին օթաղ, ղուշը պեց թողում: Էս դ՞ն՞ւմ ղուշը թռչում ա քըղաքան տ՞ւս կյամ, էլ կյամ չի: Քյին՚ամ ըն տոռնը պեց անում, Սըմըվարեն տ՞ւս օնում, ղուշը թռչում ա, նորից կյամ տըրա կլխըեն վըեր կյամ: Ճըրըրնեն կըտրած, պիրում ըն տրան թաքավըեր տին՞ւմ:

Մեհենգյ քյինանք տըեսնանք Չա՞յնիկը հինչ տը՞եռավ: Սա յել քյին՚ամ ա քըղաքեն դըրբըզավը տ՞ւս կյամ ընդըեղ կենում, վըեր ախպըերը տ՞ւս կյալիս կարե տըեսնա: Տըեղ վըեր շատ կենում ա, ախպըերը կյամ չի: Մըթնում ա, քունավ ա հընցնում, մնամ տըեղ: Քշերեն կեսին զ՞ւրթն՚նում ա, տըեսնում մին կյեզան եկած դըրբըզավը կլ՞ւխը կոխած, վըեչ կարում ա նի մննե, վըեչ էլ կարում ա կլ՞ւխը տ՞ւս օնըե: Տա քյինամ ա էտ կյիզանին

մաշկըեն նստում, ջուբումը մին տենակ ա ինո՜ւմ, տո՜ւս ա օնում, չըրչըրվելավ վիզը կտրում, ըսպանում, տըեղ վըեր քցո՜ւմ։ Ինքյն էլ քունավ ա հընցնում, մնամ տըեղ։

Դըրբըզեն յիրա վըեննը կացած պահակը վըեր զո՜ւրթնա՜նում ա տըեսնում կյեզանն ըսպանած տըեղ վըեր քցա՜ծ, էտ տղան էլ տրա մաշկըեն քո՜ւնավ հընցած, տրան խեխտում ա, տանում տո՜ւսի փեյնումը թաղում, ինքյը քյինա՜մ թաքավըերեն ասում.- էս քշեր կյիզա՜նին ըսպանալ ըմ, լեշն էն ա դըրբըզեն քշտին վըեր քցա՜ծ։ Տու մի ասըել էտ կյեզանն ամմըեն քշեր կյալիս ա ինում քըղաքան վեց-օխտը մարթ կյուղընալիս, տընելիս։ Քըղաքեն հասարը հենց տրա հետե յըն քաշած ինո՜ւմ, դըրբըզան էլ յիրա ըրած։ Հայտարարած ըն ինո՜ւմ, վըեր հու կարե էտ կյիզանին ըսպանե, թաքավըրութունեն կեսը տան նրան։

Թաքավըերեն նա՜զիր-վեզիրը քյինա՜մ ըն տըեսնում էտ կյեզանն ըսպանած, տըեղ վըեր քցած։ Քըղաքումը մըեծ ուրախութուն ըն սարքում, թաքավըրութունեն կեսը տամ էտ դըրբըզեն յիրա վըեննը կըցըրած պահակեն։

Մին օր մին ախճիզյ ո՜ւրա՜նց փեյնը տանում ա, վըեր դըրբըզանը տո՜ւս թափըե, եշում ա, տըեսնում փեյնին տակըեն մին պեն ա տո՜ւրո՜ւր կյամ։ Վըխելան նիըետ փախճում ա քյինա՜մ տոն, մորն ասում իստի պեն ըմ տըեսալ։ Մարը հըվատում չի։ Ախճիզյը նորից ա քյինա՜մ ընդեղ, տըեսնում մին ծըեռք ա տո՜ւս եկած փեյնին իրեսը, տո՜ւրո՜ւր ա կյամ։ Նորից ա քյինա՜մ մորը կոշտը, մարը ըխճըկանը նիըետ եր ա կենում քյինա՜մ, փեյնը քա՜նդում ըն տղըեն տո՜ւս օնում, տըեսնում հա՜լա՜ սաղ։ Էտ կնեգյն էլ ետ քըղաքեն ամենալա՜վ դոխտուրն ա ինո՜ւմ, տանում ա ո՜ւրա՜ն տոն, մին քանի ամըես պահում, լա՜վ բըժըժկում, ետնան հըրցըփորց ա անում, էտ տղան ասում ա.- էն ա մըտես, վըեր ախպորըս կլխըեն դուշը վըեր կյա՜լա՜ն ետն ո՜ւրա՜ն կուրցըրալ ըմ, քյեցալ դըրբըզան տո՜ւս նըստալ, եշալ, վըեր տո՜ւս կյա՜լիս տըեսնամ. տըեղ քունավ ըմ հընցալ, քշերեն կեսումը զո՜ւրթնացալ ըմ, տըեսալ մին կյեզան կլո՜ւխը կոխած դըրբըզեն դաթը, վըեչ կարում ա նի մննե, վըեչ էլ կարում ա տո՜ւս օնըե. տինակավ էտ կյիզա՜նեն վիզը կտրում ըմ, մաշկեն պրանվում, քունավ հընցնում, մինգյել աշկըս պենում ըմ, ինձ ըստեղ տըեսնում։

Ըստեղ էտ կնեգյը մաննը կծում ա։ Տու մի ասըել, Սըմավար

թաքավըերն էլ տըեղ ա ինո՛ւմ ախպորը շոռ կյա՛լիս։ Էտ կնեգյը թաքավըերեն յիրա նամակ ա կյիրում, ասում ախպըերըտ էս ա քշտիս։ Թաքավըերն էտ կնգանը պիրիլ ա տամ կոշտը, հըրցըփորց անում, տըեսնում, վըեր էտ կնգանը քշտինը ղուրթուղորթ ո՛ւրա՛ն ախպըեր Չայնիկն ա։ Էտ Չայնիկն էլ հիվանդ վախտը հիշքան հա՛զո՛ւմ ար, պիրա՛նան վըեսկե յար վըեր ածում։ Տրանավ էտ կնեգյը լափ լա՛վ հըրուստացալ ա։

Սըմավար թաքավըերն ո՛ւրա՛ն նա՛զիր-վեզիրին նիըետ քյինամ ա ո՛ւրա՛ն ախպըեր Չայնիկին պիրում պալատը, թաքավըերը տըեղ ա ախճիգյ օզում, էտ դուխտուրեն ըխճըկանն էլ Չայնիկին յիրա յըն փսակում, օխտը օր, օխտը քշեր բիրա՛դի հըրսանեքյ անում, մնամ տըեղ։ Ետնան մարթ ըն ղարկում, քյինա՛մ ըն ո՛ւրա՛նց հորը, մորը մինզյել հորը ըխպըրացուվըեն պիրիլ տամ, հորը նան հորը ըխպըրացուվըեն ըսպանում, մորը յոր օնում, տըեղ ապրում։

## 9.ԽՈՐԹ ԱԽՊՈՐ ԽՈՐԹ ՔՈՒՐԸ

Իլա՛լ ա չիլա՛լ մին մարթ, մին կնեգյ։ Մարթին անումը Հաջի Սայաթ ա իլա՛լ, կնգանն էլ՝ Խանում։ Տահանց խոխա չի իլա՛լ։ Տըեսալ ըն, վար առանց խոխա կըրըլական չըն կըենան, քյընա՛ցալ ըն պո՛ւրո՛ւտան մին ախճիգյ պիրալ, անումը տիրալ Փա՛րի։ Մտածալ ըն, վար մին տղա էլ պըերին, վար քուր ու ախպըեր տա՛ռնան։ Քյինա՛մ ըն մի տղա յէլ պերում, անումը տինում Մահամադ։

Անց ա կենում մին քանի տարե, ախճիգյը նան տղան մըծանում ըն, փըըսկվելի տա՛ռնում։ Կյարունքը վար կյամ ա, հա՛րն ու մարը եր ըն կըենում, քյինամ սարը՝ տավարը պահեն։

Օրերից մին օր տղան եր ա կըենում, թա քյինա՛ բըզարան տես-տեն ինքյ օնե։ Մին ուխտնաասուն տըրեկան կնեգյ ասում ա.

-Ա՛ տղա հեյ, քու հա՛ր մըեռնե, մին վըեննը կաց։

-Նանե, հինչ ը՞ս ասում։

-Ա՛ տղա Մահամադ, էտ ա մըծացալ ըս, մըեծ մարթ տա՛ռալ, խե փըսակվում չը՞ս։

-Նանե, հո՛ւր օ՞զիմ։

-Ծեր Փա՛րին օզի։

-Վայ, նանե, պա նա իմ քուր ա։

-Շատ ըս սըխալ, քու քուր չի, նա փլանքյա̀նին ախճիգյն ա, տու՝ փըլանքյա̀նին տղան:

Տղան կյամ ա տոն, ասում.

-Փա̀րի, ես քըեզ օզում ում:

-Համութ չի՞ քըեզ, հինչ ղա̀՞լաթ ըս անում, մըեր հայությունումը տի պա̀ն չի կա:

Ըլթավան յոր ա օնում, տամ, տղեն կլո̀խը ճըղում:

Օրերից մին օր տղան ըսկանում ա, վար հա̀րն ու մարը սարան կյամ ըն: Վազ ա տամ քյընամ ըոըչնեն, կլո̀խը պտատած: Հա̀րը-մարը վար տըեսնամ ըն, հըրցուփորց ըն անում, խըե՞ տըհիրենց ա: Տղան ասում ա. - Սաղ օրը տըրղեքյը նի տա̀ռած տոնը, ասում ում խըե պե՞րում ըս, թըխալ ա կլո̀խըս ճըղալ: Հա̀րը-մարը ասում ըն. - Վար իտի յա, թող նա մըեր աշկեն ըրվա հուչ, քյըnà մինչև մըեր կյա̀լը տար մին օրան ծմակում տեն քըցի, եք:

Տըղան կյամ ա ըխճիկանը յոր օնում, տանում մին խոր ծմակում շորերը հանում, պա̀ց թողում:

Ժուկ ա անց կենում, ժամանակ ա անց կենում, թաքավըրերեն տըղա Ալիխանն ո̀ւրա̀ն շըներավը քյինա̀մ ա վըերս: Նա ծըմակըեն մաչին տըեսնում ա մին ղա̀շա̀նգյ ախճիգյ, յոր ա օնում, պերում տոն, ինքյը տրան օզում:

Վար մին քանի վախտ անց ա կըենում, տահանց ինո̀ւմ ա էրկու խոխա: Փա̀րին շատ ա բիքյիփանում: Ալիխանը ասում ա. - Խըե՞ բեքյեփ ըս: Ասում ա.-Դե քյընա̀մ ըմ իմ ծընողնես տեսնամ: Ալիխանը եր ա կըենում, երեսուն սալդաթ նըհետը տինո̀ւմ, Փա̀րո̀ւն էլ յոր ըն օնում, քյինամ: Շատ ըն քյինամ, թա խըրեգյ, մին ծըմակյավ քյընա̀լիս մըթնում ա: Տահանք քիշերը տեղ կենում ըն: Սալդաթնեն լոխ քոն ըն ինո̀ւմ, մինը պահակ ա վըեննը կըենում: Փա̀րին զա̀րթո̀ւն ա ինո̀ւմ: Պահակ սալդաթն ասում ա.

- Փա̀րի, եք ո̀ւրո̀ւր նըհետ խաղ անենքյ:

-Չէ՛, ես թաքավըրերու կնեգյ, տու՝ սալդաթ:

- Դե վար կյամ չըս, խոխեքյըտ ըսպըննական ըմ:

-Ըսպանում ըս, ըսպանըե, բայց կյալ չըմ:

Էտ սալդաթն էտ էրկու խուխոցը փըռնում ա, ըսպանում:

- Դե, միհենգյ եք խաղ անենքյ:

- Դե վար տի յա, ըսպասըե, քյընա̀մ ըլթըվավը ճո̀ւր պերիմ ծո̀րա̀ն:

-Չէ՛, վախում ում փախճիս:

- Դե վար վախում ըս, վըեննաս մին քյենդիր կապե, վար փախճիմ վուչ:

Էտ պահակը տըրա վըեննան քյենդիրը կապում ա, պա̀ց թողում: Փա̀րին քյինա̀մ ա դալդան հընցնում թա չէ, վըեննան քյենդիրը ետ ա անում, ըլթըվեն օյնան կապում: Պահակը տըեսնում ա, վար կյամ չի, քյինդիրան ծիքյ ա տամ, տըեսնում ա չըրըխկալավ ըլթավան ա կյամ: Տա կլը̀խ ա իյնում պա̀նը հինչումն ա, տըրըքցնում ա ը̀րա̀ն ծերքը վիրավորում, սըլդըթներեն եր կըցնում.

- Ա տընըշիներ, հինչ ը՞ք քոն իլա̀լ, ղըչըղնեն եկեն խոխեքյը կտուրեցեն, Փա̀րին տարեն:

-Սըլդըթնեն յըեր ըն կըենում փայտոնը լըծում, կյամ թաքավըերեն տըղըեն ասում: Տա շատ բիքյիփանում ա: Տա թողենքյ ըտըեղ:

Փա̀րին քյընում ա տըեսնում մին չոբան վըեխճար ա պահում: Թուրքնուր ծեն ա տամ.

-Չոբան կարդաշ, Ալիխանը գյորմադին[1]:

- Վալլահ, բա՛ջի, հեչ Ալիխանը գյորմադիմ[2]:

Ախճիգյը քյինա̀մ ա չուբանեն կոշտը: Չոբանը մին կյառնու թափան ա պիրտը̀տը̀սը̀ւմ, քցը̀մ ըխճըկանը կլը̀խը: Ըխճըկանը տանում ա տոն, ասում ա.

- Խանում, քըզետե մին դուլլուղչի յըմ պըերալ:

- Շատ էլ լա̀վ կինի, թող կյա̀ քըզնըհետ վեխճարը պահե:

Փա̀րին ասում ա.

- Խանում, ինձ տան գործեր տո, հա̀նդ կարել չըմ քյընա̀մ:

- Դե, հինչ ը՞մ ասում, մինզյել տանը գործ ըրա:

Ալիխանն էլ սազը յոր ա օնում, էն պըհակեն նըհետ քյինա̀մ շենքաշեն շոռ կյամ, տը̀ս կյամ Փա̀րը̀ն շենը: Ախճիգյը քյընա̀մ ա տըեսնում էրկու դարիբ մարթ ըխպիրին դրադեն: Ճինա̀նչը̀մ ա: Քյընա̀մ ա տոն, ասում.

- Խանում, մին տարե յա ծեզ դուլլուղ ըմ ըրալ, խնթրում ում ը̀րը̀ւզյը̀նըս թույլ տաք էն աշըղնեն պերինքյ ըստեղ:

- Լավ կինի, քյընա̀ պեր:

Ախճիգյը քյընա̀մ ա ըշըղնեն պըերում տոն: Փա̀րին չուբանեն ասալ ա. -

[1]Չոբան եղբայր, Ալիխանին չե՞ս տեսել(Ծ.Ա.):
[2]Աստված վկա, քույրիկ, Ալիխանին բոլորովին չեմ տեսել(Ծ.Ա.)

Մին մըեծ մըհակ յոր կալ, քյընն̀ տըռանը ըսպասե,hու վար տո̀ւս կյն̀, կըթխես։ Աշըղը վար ըսկսալ ա դո̀վը անելը, Ալիխանեն հընգերը եր ա կենում, թա տո̀ւս կյն̀, չոքանը թըխում ա, տըրան ըսպանում։ Մինգյել ախճիգյն ա դո̀վը անում, ախպըերն ա օզում տո̀ւս կյն̀, թըխում ա ըսպանում։ Թաքավըրերեն տղան ո̀ւրն̀ն կնգանը յոր ա օնում, քյընն̀մ ո̀ւրն̀ն վն̀թն̀նը։

## 10.ԸԽՇԱՐՔՈՒՄԸՍ ԱՄՄԸԵՆ ՀԻՆՉ Ո̀ՒՐՆ̀Ն ՏԸԵՂԱՎՆ Ա ՔՅԻՆՆ̀Մ

Մին թաքավըրերու կնեգյ էրկան վախտ խոխա չար պիրո̀ւմ։ Մին օր էտ թաքավըրերն ո̀ւրն̀ն կնգանը եր կալած տո̀ւս ա կյամ շոռ կյն̀լ։ Քյինն̀լն̀վ, քյինն̀լն̀վ հըսնում ըն մին ծմակում մին լն̀վ տըեղ։ Թաքավըրերեն կնեգյն ասում ա. - Շն̀հ, հինչ լն̀վ տըեղ ա յե՛։ Թաքավըրերն էլ ասում ա. - Ա՛ կնեգյ, դե վըեր էտքան լավ տըեղ ա, հն̀լըն̀թ աստված մըեր խոսկը մեհետ կըսկանա, մըեզ մին խոխա տա, էս քու ասած լն̀վ տըեղը մին մըեծ պալատ ըմ շիննական, մաչին տինիմ, վըեր ըստըեղ մըծանա։

Ժուկ ա անց կենում, ժըմանակ ա անց կենում, աստված տահանց խոսկն ըսկանում ա, թաքավըրերեն կնեգյը պատճառուր ա տըեռնում, մին ախճիգյ պիրում։

Թաքավըրերը պիրում ա տըեղ մին պալատ շինո̀ւմ, ըխճըկանն էտ պըլատումը մըծըցնում, համ էլ հունց պահում ա, վըեր էտ ախճիգյը «մարթ»[1] բառը ըսկանա վըեչ, գյիդա վըեչ, թա հինչ պեն ա։ Թաքավըրերն էտ պըլատեն նն̀զիր-վեզիրը, ծառայողնեն լոխ կնանեքյ ա տինո̀ւմ, թողում չի, վըեր տըեղ տըղըմարթու շոք ըրվա, ինքյն էլ տըղերքատ մուտանում չի։

Էտ ախճիգյը վըեր մըծանում ա, հենց էտ պըլատումն էլ ուսում ըն տամ, վարժարեղնեն էլ լոխ կնանեքյ ըն ինո̀ւմ։ Վըեր մին քանի տարե անց ա կենում տա լափ մըծանում ա, լավ, քու հավան կացած շատ դն̀շն̀նգյ ախճիգյ ա տըեռնում։

Մին օր մին շալոն զորք կյամ ա էտ թաքավըրերեն պըլատեն քըշտավն անց կենում, քյինն̀մ։ Էտ զորքըեն կամանդիրը վըեր թաքավըրերեն պըլատըեն բալկոնեն եշում ա, էտ ըխճըկանը տըեսնում ա, բո̀ւրդն̀ն ըռանգյը փոխում ա, խրեգյ ա մնամ, վըեր օշը տանե։ Ո̀ւրն̀ն սըլդըքթներան

---

[1] *Տղամարդ(Ծ. Բ.):*

մինն էտ պենը տըեսնում ա: Վըեր տըեղ ըն հըսնում, տա կամանդերին ասում ա տու ինձ էսքան դոլլար փող տո, ես քյինմ ախճիգյը քըզետե պիրիմ: Կամանդերը փողը տամ ա, տա քյինամ ա տըեղետ բըզարումը մի լավ ուստա քթենում, տրան ասում.-Հիշքան փող օզըես, ես ըրկուտակ, իրըքտակ կըտամ, ինձետե տասներկու ըշկանե մին լա̀վ բուփետ շինի, տասնըմին աշկը պեց թող, նըերքե աշկըեն մին պինա̀լին թող քու ծըեռքետ կենա, մինն իմ ծըեռքես, ես նի յըմ միննական էտ նըերքե աշկը, կըքըլլես, պինա̀լին յոր օնըես, էնքան կըպահես, վըեր թաքավըերը կըկյա էտ բուփետոն ի̀լրա̀ն ըխճըկանը հետե ինքյ օնըե տանե, իմ գաղտնիքը մին տի̀ւ կըգիդա̀ս, մին էլ ես: Ուստան իտի յել անում ա:

Մին օր թաքավըերն ի̀լրա̀ն կնգանը նիըետ կյամ ա բազարը, տըեսնում մին լա̀վ բուփետ ըն ծախում: Կնգանն ասում ա.-Հինչ լա̀վ բուփետ ա, մըեր ըխճըկանը հետե ինքյ օնըենքյ, կյիրքերը-պենը տինի մաչին: Կնեգյը թա՝ ինքյ օնըենքյ: Ինքյ ըն օնում, վըեր տանեն պալատը, աշկըերը լոխ պենալ ըն տամ փորցում, նըերքե աշկը պենվում չի: Վըեր հըրցնում ըն, թա խե՞ պենվում չի, ուստան ասում ա.-Ցափուշխանը պըենդ ա, վըեր տանեքյ պալատը, մին քանի օր կենա տըեղը թըքանա, պինվըլական ա:

Բուփետը յոր ըն օնում, տանում թաքավըերեն ըխճըկանր պալատը: Մին քանի օրան ետը էտ ախճիգյն ի̀լրա̀ն կյիրքը կըրթիլիս մին քանի իրես վըեր անց ա կենում, կյամ ա լափ վերչին իրեսումը էրկու տըեղ «մարթ» բառը պըտահում: Կա̀րթի̀լմ ա, ետնան ասում.-Մա՛րթ, մա՛րթ, ա՛խ, էս բառը կլի̀խ չըմ ինգյում: Էտ խոսկեն յիրա բի̀լրդա̀ն էտ տղան բուփետին նըերքե աշկան պինա̀լին քցի̀լմ ա, շոռ տամ աշկը պենում, տի̀ւս կյամ ըխճըկանն առաչը, ասում.-Մարթը էտ հենց ես ըմ: Էտ ախճիգյն ասում ա. -Կլի̀խ չըմ ինգյի̀լմ:. Տղան ըսկսում ա բացատրելը, վըեր ըստըեղավ զորք անց կընալիս ի̀լրա̀նց կամանդերն ի̀լրա̀ն վըեր տըեսնում ա, ի̀լրա̀ն կուրցնում ա, հիվընդանում: Ետնան լոխ նաղլ ա անում, թա հունց ա բուփետը շինիլ տուվալ, նըերքե աշկը կապել տուվալ, վերչումն էլ ասում ա, վըեր ինքյը եկալ ա ի̀լրա̀ն տանե ի̀լրա̀նց կամանդերին հետե, մինգլել թա՝ վըեր կամանդերին հետե յըմ տըննական, էն ա ես յոր կօնեմ իլի: Վերչը էտ տղան ի̀լրա̀ն պենը տըեսնում ա, էլլա նի միննում բուփետին նըերքե աշկը, մաչավը քըլլում, ընդըեղ կենում: Իտի ամմըեն օր էտ տղան տի̀ւս ա կյամ էտ ըխճըկանը նիըետ խոսում, էլլա նի միննում ի̀լրա̀ն տըեղը:

Մին օր ըխճըկանը մարը կյամ ա պալատը, տըեսնում ախճիգյը թըշընակած։ Քյինա̀մ ա թաքավըրեն ասում, թաքավըրը տրան թա՝ հինչ ը՞ս տիրտըկ-մերտակ տո̀ւս տամ։ Մին քանի օրն էլ վըեր անց ա կենում, մարը նորից ա քյինա̀մ ըխճըկանը կոշտը, տըեսնում ա ախճիգըը պատճառնուր։ Էլլա յա կյամ թաքավըրեն ասում, թաքավըրը իըվատում չի։

Մին օր էլ մարը քյինա̀մ ա, տըեսնում ախճիգըը խոխա պերած, կյամ ա մարթին ասում, մարթն էս դո̀նո̀ւմ եր ա կենում, քյինա̀մ ըխճըկանը պալատը, տըեսնում կնգանն ասածը դո̀ւզ ա։ Ըխճըկանը յիրա̀ կըզնըըվում ա, թա էս հի՞նչ պեն ա, ախճիգյն ասում ա, - Ես քեզ ճինա̀նչում չըմ, տու հու վը՞ւս, վըեր ինձերա կըզնըըվում ըս։ Թաքավըրը թա՛ ես քու հա̀ր ըմ, ես երգյիրին տարը, տու հինչ իրա՞վունք օնըես, վըեր ինձ իտի ջողոբ ըս տամ։ Ախճիգյն էլ ասում ա,-Թա իմ հա̀ր ըս, խե՞ էքան տարե մեհետ տո̀ւս չըս եկալ իրեսըս, վըեր քեզ ճինանչիմ, իսկ բուփետը բըզարան վըեր ինքյ ըս կալալ պերալ, խե՞ նըերքե աշկը պեց չըս ըրալ։ Համ ասում ա, համ բուփետին նըերքե աշկըեն տոռնը թակում, տղան պինա̀լին քցում ա, պենում, տո̀ւս կյամ։

Ըստըեղ թաքավըրն ամմըեն հինչ կլո̀խ ա ինգյո̀ւմ, ճարը կտրած, պիրո̀ւմ ա օխտը օր, օխտը քշեր հըրսանեքյ անում, տահանց փսակում, թողում պըլատումը, ինքյն անց կենում քյինա̀մ։

## 11.ԼՈՂՄԱՆԻՆ ԴԱ̀ՐԴՈ̀Ի ՎԱ ԿՅԱՄ

Մին մարթ ա ինո̀ւմ, մինգյել մին կնեգյ։ Տահանց խոխա չի ինո̀ւմ։ Վըեր շատ ըստուծ-աստուծ ըն անում, մին տղա յա ինո̀ւմ։ Էտ տղան հա̀լա̀ խոխա վըխտանց շատ խըելունք ա ինո̀ւմ, մխըրե էլ ժուլիկ։ Աշկը նի ինգյած պենը դա̀ստին սուվըերում ար։

Էտ տղան վըեր մխըրե մըծանում ա, խըելքը կտրում, ըսկըսում ա սուտըստ լըլըզյոթուն անըելը։ Հա̀րը նան մարը գյո̀ւղո̀ւմ ըն, թա դուրթըղորթ լալեգյ ա, շատ ա սըրտըրնեն ցավում, մտածում ըն, թա հինչ անըեն վըեր խոխան ո̀ւրա̀նց մըռնելան ետը խըեղճ չմնա, մին փիշակա-պենա սուվըերե, վըեր կարե կլո̀խը պահե։

Մին օր հա̀րն ըսկանում ա, վըեր էսհինչ քըղաքումը մին շատ քյո̀հնա̀, կլո̀խն ամմըեն հինչ եկած, ամմըեն հինչ գյո̀ւղող լողմանի կա։ Տըղեն յոր ա

օնում, վըեր տանե էտ լողմանուն շա̀գյերդ տա:

Վըեր քյինա̀մ ըն տո̀ւս կյամ էտ քաղաքը, տղըեն ընջուկավն ա ինգյո̀ւմ, վըեր էտ լողմանին իննը հա̀րո̀ւր իննասո̀ւնիննը շա̀գյերդ ա պահ ալ, վըեչ մինին էլլա ո̀ւրա̀ն փեշակը սուվըրցրալ չի, շատ պինըցրալ ա, վըեր եկալ ըն, թա ըշկըրնեն մխըրե պենա̀ն, թա խըրըգյ-մրեգյ պեն սուվըրեն, կլխըննեն կտրալ ա, հանցու ո̀ւրա̀ն լողմանոթունը մենակ ո̀ւրա̀ն անում մնա:

Հա̀րը տղըեն վըեր թողում ա տըեղ, ետ տըեռնում, տղան լողմանուն քշտին ո̀ւրա̀ն լափ դոնգու տըեղ ա տինո̀ւմ: Լողմանին մտկումն ասում ա. -էս ա, վըեր կա, համ քառ ա, համ լալեգյ, համ էլ դըմբռ, վըեչ մին պեն կարըել չի սուվըերե:

Լողմանուն հըյաթումը մին լավ բախճա յա ինո̀ւմ: Էտ բըխճեն մաչին ըխշարքումըս հինչ ջուռա ծաղեգյնե ասըես, ինո̀ւմ ա: Լողմանին էտ ծըղըըգյներան ար ճարեր շինո̀ւմ, ամմըեն ցավու դարմա̀ն անում: Էտ տղըեն սո̀ւրթա̀ ասում ա,-Էտ ծըղըգյնեն ճիրի, տակըերը քըղհանե, թիմըզցրու, լա̀վ պահե:

Հինչ վըեր լողմանին ասում ար, էտ տղան լոխ անում ար, համ էլ ո̀ւրա̀ն դոնգու մնան ար պահում, ամմա դե թաքուն էն ծըղըգյներեն յիրա ամմըեն հինչ փորցում ար: Վըեր տըեսնամ ար լողմանին մին ծաղկան հինչ ջուռա ճար ա շինո̀ւմ, ինքյն օրիշ ծըղըգյնե յել ար խառնում, օրիշ ճարեր շինո̀ւմ, լոխ պրոբ անում: Վերչը, հիշքան ծաղեգյ կար, լողմանին հինչ ճարեր նըհանցա պըդըրաստալ ար, մին տըռնումն էլ էտ տղան լոխ թաքուն սուվըերում ա: Լողմանին վըեչ մին պեն կլո̀խ չի ինգյո̀ւմ:

Մին տըռնան ետը լողմանին ասում ա.-Դե, սա ախմախ զատ ա, ըրխըյին կարող ըմ տանըեմ բալլիցաս, ընդըեղ էլ ինձ քյո̀ւմա̀գյ կանե, մին ա, վյըեչ մին պեն կարըել չի սուվըերե: Իտի յէլ անում ա: Լողմանին հինչ յըրենե, հինչ ցավըեր վըեր լո̀ւվըցնում ար, տղան թաքուն աշկըեն տակավը եշում ար, լոխ սուվըերում: Մին էրկու տարե վըեր ըտըեղ կենում ա, տա լողմանուն անա յէլ ա անց կենում, ամմա վըեչ մին պեն նշանց չի տամ:

Մին օր թաքավըերեն տղան շատ ծանդր հիվընդանում ա, պիրո̀ւմ ըն լողմանուն կոշտը: Լողմանին եշում ա, տըեսնում կլխումը վըեռհնը կա, պիտի կըլխըեն ղափաղը յոր օնըե, ա̀պլեցա անըե: Լողմանին տրան պարանց ա քցո̀ւմ նարկոզ տամ, կլխըեն ղափաղը կտրում տո̀ւս օնում, եշում, տըեսնում էտ վըեռհըընը ասածը մին կուճուր պեն չի, մին մըեծ

կարեճ ա, վըեր չա̈նգյերը քցա̈լ ա թաքավըերեն տղըեն հուղողեն փիրղին իրեսը, փիրղա̈ն պըենդ փռնալ, պուք չար կյամ: Լողմանին պինցետը քցա̈լ ա, էտ կարեճին պինցետավ փռնալ, ծիքյ ա տամ, վըեր հուղողեն փիրղա̈ն պուկե: Ծիքյ ա տամ, ծիքյ, կարում չի, օզում ա թա լիհա̈ փա̈րղա̈ն էլ նիըետը պուք կյա̈: Էտ վախտը լողմանուն շագյերդն էն ա ինում հո̈ւրթա̈վը թաքուն յիշիլիս, տըեսնում ա, վըեր լողմանին կարում չի կարեճը պուկե, օզում ա թա թաքավըերեն տղըեն էլ նիըետն ըսպանե, հո̈ւրթա̈վը ծեն ա տամ, թա պինցետը կըծըցրու կարեճին մաշկըեն կալ, վըեր էրի, վըեններր պեց ա ըննական, էտ վախտը փռնե, տո̈ւս կալ...

Լողմանին մնամ ա տըեղը քար կտրած: Ասում ա.-Էս տղեն լո̈ւզի չի իլա̈լ, սրան հիբ լո̈ւ̑զի փսավ, իմ փեշակըս էլ հա̈լա̈ ինձանա լա̈վ ա սուվըերալ: Պիրում ա պինցետը կրակըեն օնում լա̈վ կիրմրցնում, կըրեճին մաշկեն տեմ օնում, կարեճը վըեններր ետ ա տանում: Լողմանին կարեճը փռնում ա, տո̈ւս օնում, տեն քցո̈ւմ:

Տղան զյո̈ւղո̈ւմ ա, վըեր լողմանին ո̈ւրա̈ն կլո̈խն էլ ա կտրըլական, տըեղատ փախճում ա, քյինա̈մ Շահ -Աբբասեն երգյիրը, շահեն ասում, վըեր ես էսհինչ երգյիրին լողմանուն շագյերդն ըմ, սաղ ըխշարքումըս զյո̈ւղո̈ւմ ըն, վըեր նա իննը հա̈րո̈ւր իննա̈սո̈ւնիննը շագյերդ ա պահ ալ, լոխճինին կլխըենեն էլ կտրալ, հանցու վըեր ո̈ւրա̈ն փեշակը սուվըերող չինի, ես էսքան տարե յա ինձ լըլեգյու, քառու, դոնգու տըեղ տիրա̈ծ, ո̈ւրա̈ն փեշակը սուվըրելիս ըմ իլա̈լ, էսհինչ թաքավըերեն տղըեն էլ իմ ըսելավըս ա լո̈ւվըցրալ, մեհենգյ զյո̈ւղո̈ւմ ըմ, վըեր հիշտեղ էլ ինիմ, շոռ ա կյիլական ինձ քթենա̈, վըեր ըսպանե. թող ես քու երգյիրումըտ կենամ, հիշքան մարթ հիվընդանա, կըլուվըցնեմ, վըեր լողմանին էլ կյա, ո̈ւրա̈ն կասըես, թա օզում ըս էտ տղըեն ըսպանես, փուրցեցեքյ ամեքյա ծըեր շինած ճըրերավն ըսպընեցեքյ, հու վըեր կարեց հունց աղու ճար շինի, վըեր էն մինը կարե վուչ կըտըրցնե, թող էտ ճարը խմըելան ետը մըեռնե: Շահ-Աբբասը թա՛ լա̈վ, տու եք իմ պըլատումըս լողմանոթուն ըրա, վըեր էտ քավթառը կըկյա ըստըեղ, հա̈լըա̈թ թա̈հրը կըքթենանք:

Մին քանե տարե էտ տղան Շահ-Աբբաս են պըլատումը կենում ա, հիշքան հիվանդնե յըն կյամ, լոխճինին լո̈ւվըցնում ա, իսկ էն լողմանին էլ սաղ ախշարքը շոռ ա եկալ, վըեր տրան քթենա̈ ըսպանե, կըրեցալ չի: Վերչը, ընջուկավն ա ինգյո̈ւմ, վըեր Շահ-Աբբասեն երգյիրումն իստի մին

նոր լողմանի յա լ՛ուս ախշարք եկալ, ծըեռքան վըեչ մին պեն պըրծնում չի, հինչ ցավ ասըես, դ՛արմ՛ան ա անում: Էտ լողմանին թա՝ ինի, չինի, սա իմ շ՛ազյերդըս ա, օրիշ մարթ դ՛ալ՛աթ ա ըրալ էսքան ճելլի անում պիցըրցնե: Հղե յա ին՛ում, թուշ քյին՛ամ Շահ-Աբբասեն երգյիրը:

Էտ տղան ըսկանում ա, վըեր ուստան եկալ ա, Շահ- Աբբասեն ասում ա. - Շահ-Աբբասն էլ մարթիքյ ա ղարկում էտ լողմանուն կօշտը, ՛ուր՛ան լողմանուն տիրած պայմանն էլ ասում, տա թա՝ լ՛ավ:

Պիրում ըն տահանց ՛ուր՛ուր կօշտ: Շահ-Աբբասեն մարթիքյ նան էտ էրկու լողմանին մսլըհաթ ըն անում, թա առաչ հո՞ւ ճար շինի, հո՞ւ խմըե: Էտ տղան ասում ա.-Իմ ուստան յաշավ ինձ՛նա շատ ա մըեծ, թող ինքյը շինի, ես խմըեմ: Շահեն մարթիքյըն ասում ըն. - Դե վըեր տու վըս ասում, թող իտի ինի: Ուստան էլ ղաբուլ ա անում:

Մեհենգյ պիրում ըն ամմըեն մինին ՛ուր՛ուր կոխկե ամեքյա մին օթաղ տամ: Ամեքյա ՛ուր՛ան սարքավը, ՛ուր՛ան դիզզյ՛ահավը տահանք տըեղ տըղվարվում ըն: Ուստան մին սաղ օր զանիտ ա տըեռնում, սուխտուրթակեն յոր օնում, մին կյ՛ուշու մաչի ամմենափիս ծըղըզյներան ան խուտըերան աղում, քշըրնան չերը ՛ուր՛ուզյ՛ունը թակում, թակում, ըխշարքես ամմենափիս, աղու ճարը շին՛ում, վըեր մարթ լիհ՛ա լ՛ուզին նի տալնըբաս տըեղն ա մնամ: Տղան պատին ընգյ՛ուն՛ան թաքուն անջուկ ա օնում, սուխտուրթակուն ս՛աս վըեր ըսկանում ա, դ՛աստին կլ՛իխ ա ինգյ՛ում, թա ՛ուր՛ան ուստան հինչ ճար ա շինում, տրան կտրող պենն էլ գյ՛ուղ՛ում ա հինչ կինի, քյին՛ամ ա մին կուպրուն թանավ լըսնում, տին՛ում ՛ուր՛ան ութաղումը: Վըեր ուստան պըրծնում ա ճարը տամ ՛ուր՛ան, նի յա մննում կուպրունեն թանեն մաչը, ետնան ճարը խմում, վըեչ մին պեն չի անում: Թանն աղուն ծծում ա տ՛ուս օնում, տղան մնամ ա սաղ:

Տրանա ետն էտ տղան նի յա մննում ՛ուր՛ան օթաղը, սուխտուրթակուն տակեն մին քյիչու կուտուր նըեստա տամ, ըսկսում կյ՛ուշին մաչին սուտըսոտ թակըելը, սաբավ ճար ա շին՛ում: Ուստան հիշքան պատին ընգյ՛ուն՛ան անջուկ ա օնում, կարում չի ս՛աս ըսկանա, վըեր ս՛ասին յիրա գյիդա, թա տա հինչ ճար ա օզում շինի: Ուստան մնամ ա չ՛աշմիշ իլ՛ած, մտածում ա, ասում. - Ա՛յ ջանըմ, էս հինչ նոր ճա՞ր պիտի քթ՛ած ինի, վըեր շինիլիս թակըե, ս՛աս չանե:

Իրեք օր էտ տղան կյ՛ուշին մաչին թակում ա, թակում, վըեչ մին ս՛աս

էլլա տուս շի կյամ: Ուստան շատ մտըծելան նըեղու վա կյամ, սըերտը ճաքում ա, մըեռնում:

## 12.ԹԱ ՀՈՒՆՑ ԸՐԾԱԹԵ ՂԱ̀ՄԱ̀Ն ՓԱԴ ՏԸԵՌԱՎ

Մին օր Շահ-Աբբասը շորերը փոխած տո̀ւս ա կյամ, վըեր ո̀ւրա̀ն երգյիրը շոռ կյա̀, տըեսնա ժուղովուրթը հո՞ւնց ըն ապրում, հի՞նչ ըն անում, հո՞ւնց ըն յոլլա քյինամ: Քյինամ ա տըեսնում քըղաքըեն ղրաղեն մին քյա̀սիբ տան մին մարթ, մինգյել մին կնեգյ ո̀ւրա̀նց խուխոցը նըհետ նըստած քյեփ ըն անում:

Էքյսի ո̀ւրո̀ւգյո̀ւնն էլ ա տըեղավ անց կենում, տըեսնում էլլա քյեփ ընելիս:

Մին քանի օր ո̀ւրո̀ւգյո̀ւննեն միշտ տըեղավ անց ա կենում, տըեսնում տահանց տանը միշտ քյեփ: Հըրըվըններան-պենան հըրցըփորց ա անում, թա տահանք հինչավ ը՞ն իտի միշտ քյեփ անում, հըրըվաներն ասում ըն.- Մարթը վըեչ մին տըեղ ըխշադում չի, ամմըեն օր քյինամ ա մին-էրկու դուշ վըեր քցո̀ւմ, տանում ծախում, մին մանեթ փող ինքյ օնում, բըզարան տեսա̀տենա̀ ինքյ օնում, ո̀ւրո̀ւգյո̀ւնը պիրում կնգանը, խուխոցը նիհետ նըստում, քյեփ անում: Շահ-Աբբասը մտկումն ասում ա.-Հունց ըննական ըմ, վըեր էտ մարթին ծըեռքը մին քանի օր փող չինգյի, տըեսնամ հի՞նչ ա անում: Տրան ծեն ա տամ ո̀ւրա̀ն պալատը, չորս դուսազ տամ ո̀ւրա̀ն, մին ըրծաթե ղամա յել կապել տամ, թա էտ դուսըզնըերեն յիրա սաղ օրը ղարաղուլ պիտի անըես, վըեչ մին տըեղ էլ պիտի քյինա̀ս վուչ:

Էտ մարթը մին սաղ օր դուսըզներեն յիրա վըենն ա կենում, ետնան տըեսնում մին դո̀ւլգյա̀ր հիջըրթըեն եր կալած քյինամ ա տոն: Էտ դո̀ւլգյա̀րին ծեն ա տամ, թա ինձետե մին փա դի ղա̀մա̀ շինի, էս ըրծաթեն ղա̀մա̀ եր կալ, մին մանեթ փող տար մըեր տոն, տոնըս էսհինչ տըեղն ա: Դո̀ւլգյա̀րն ուրխացած ղա̀ստին ղա̀մա̀ն շինում ա, տամ ո̀ւրա̀ն, ըրծաթեն ղա̀մա̀ն յոր օնում, մի մանեթ փող տանում տամ տրա կնգանը: Շահ-Աբբասն էտ ո̀ւրո̀ւգյո̀ւնը շորերը փոխած, էլլա տահանց տանը քշտավն անց ա կենում, տըեսնում դո̀ւլգյա̀րին կնեգյը խուխոցը նըհետ նստած, քյեփ ա անում: Քյինամ ա պալատը, էքյսի օրն էտ մարթին ասում. - Պիտի քու ծըեռքետ ղիմավը էտ դուսըզնըերեն կտորես: Տա թա՝ շահն ապրած կենա, վըեր ինձ թիքյը-թիքյա̀ էլ անըես, ես հա̀լա̀ մարթ ըսպանած չըմ, կարել չըմ,

համ էլ տահանք մեխկու տար չըն, ծըեռքըս պատ չի կյալ: Շահ-Աբբասը թա՝ տու վըս գյ՚ուղ՚ում, յա տահանց պիտի կտորես, յա էլ քու կլ՚ուխըտ ըմ կտրել տըլական: Էտ մարթն ասում ա. - Դէ վըեր իտի յա, եշինքյ տըեսնանք, թա ղ՚ամ՚ան արծաթ մնաց, գյիդա վըեր էտ մարթիքյը մեխկու տար ըն, էն վախտը ես տահանց կըսպընոտեմ, թե վըեր փադ տըեռավ, գյիդ՚ա վըեր էտ մարթիքյը մեխկ չօնըեն, տըրանա ետը տու վըս գյ՚ուղ՚ում: Տա ծըեռքը տանում ա բիդի ղոր՚ուրը, ղ՚ամ՚ան տ՚ուս օնում, տըեսնում «փադ տըեռած»: Շահ- Աբբասը մնում ա տըեղը քար կտրած, դուսըղներեն պեց ա թողում, էտ մարթին էլ լ՚ավ վըեսկավ, խըզնավ, խըլըթնըերավ ղարկում ՚ուր՚անց տոն, թա՝ դե վըեր իտի պարի մարթ ըս, քյինա ամմըեն օր քյեփ ըրա:

## 13.ԱՆԱՀԻՏ

Բ՚արդ՚ու թաքավըերեն տղան ՚ուր՚ան հնգըերունցը նիըետ քյին՚ամ ա վըերս: Վըրսըտըեղա կյ՚ալիս մին շեն՚ու կոխկավ անց ըն կենում, կյամ ըն մին ըխպըր՚ու ղրաղ, տըեսնում մին ախճիգյ կոժը լըսնում ա: Տահանք էտ ըխճըկանան ճ՚ուր ըն օզում, ախճիգյը շուլումուլի յա անում՝ ամանն ա օղող տամ, լուվանում, մինգյել օղող տամ, մինգյել լուվանում, ճ՚ուրը յըտըցնում: Թաքավըերեն տղան նան ՚ուր՚ան հնգըերունքը ասում ըն. - Լավ, էտքան օղող մի տալ, յըտըցնումիլ, շատ ընք ծարավ, ճ՚ուր տո, խմըենքյ: Ախճիգյը թա՝ վըեչինչ, վըրսըտըեղա եկած, քըրտընքած ըք, մխըրե յել կացեքյ, էլլա կըխըմըեքյ: Ըստըեղ թաքավըերեն տղան մաննը կծում ա, ասում ա.- Սա հենց ա շատ խըելունք ախճիգյ ինի, ինքյն էլ էնքան ղ՚աշնգյ ա, հենց ա լիհա մին հ՚ուրի-փ՚արի ինի, էս ըխճըկանն ուզըլական ըմ: Հնգըերունքը թա՝ դ՚ուզ վըեր խըելունք, լավ ախճիգյ ա, բայց քու հ՚ար ղաբուլ կանե՞, վըեր օզըես, սա էս շենին տվըրածըեն ախճիգյն ա: Թաքավըերեն տղան թա՝ չէ՛, էտ ա, վըեր էտ, օրիշ ախճիգյ օզըել չըմ:

Էտ վախտը թաքավըերն ՚ուր՚ան տղըեն՝ Վաչագանըեն հետե օրիշ թաքավըերու ախճիգյ ա օզում վըեր օզըե: Օրիշ մին քանի թաքավըերեր էլ ամեքյա ՚ուր՚անց ախճիգյն ըն օզում տան Վաչագանըեն: Պիր՚ում ըն թա Վաչագանըեն փսակըեն, սա թա՝ իմը Հացե շենին տվըրածըեն ախճիգյն ա, օզում ըք, ուզեցեքյ, օզում չըք, ես օրիշ ախճիգյ չըմ ուզըլական: Հ՚արը թա՝ բալա, ա վըերթի, համութ ա, պա տըեսնող-ըսկանող հինչ կա՞սըեն, ես

թաքավըեր, տու թաքավըերու տղա, քյինա̀լ պիտիս տվըրածըեն ախճի՞գյն օզըես: Հինչ անում ըն, անում չըն, Վաչագանը թա՝ չէ, վըեր չէ, իմը Անահիտն ա, Հացե շենին տըվըրածըեն ախճիգյը, օրիշ ախճիգյ չըմ ուզըլական: Վերչը, ճըրըրնըեն կտրած թաքավըերը եր ա կենում ո̀ւրա̀ն մարթուցը մըեծ խըլաթավ-բըրաթավ ղարկում Հացե, տվըրածըեն տոն: Հա̀րը թա՝ էտ տուք, էտ էլ ախճիգյը, ինքյն ա գյո̀ւղո̀ւմ: Ախճիգյն էլ թա՝ թաքավըերեն տղան հինչ փե՞շակ օնըե: Տահանք թա՝ հինչ փե՞շակ պիտի ինի, էքյո̀ւծ-ա̀լոր թաքավըեր ա: Ախճիգյը թա՝ օզում չըմ: Տահանք մնամ ըն ցըմաքված: Ետ ըն տըեռնում, քյինամ:

Խաբարը իըսնում ա թաքավըերեն, թաքավըերն էլ ա զըրմանում, Վաչագանը թա՝ շատ խըելունք պեն ա ասալ, քյինա̀լ պիտիմ ո̀ւրա̀ն կոշտը, ինքյն ո̀ւրա̀ն փեշակն ինձ սուվըրցընե:

Վաչագանը քյինա̀մ ա Հացե: Անահիտը տրան գյա̀բա̀ կյործըելը լա̀վ սուվըրցնում ա: Էտ փեշակը Անահիտը ինքյն ո̀ւրա̀ն ա սուվըերալ: Հա̀րը միշտ հա̀նդա̀ ամմըեն ջուռա խոտըեր ար քաղում պիրում տոն, էտ խոտըերան ծմական պերած ճպըտնըերան ճուվըրըննե, զումբուլնե անում, Անահիտն էլ էտ խոտըերը յոր ար օնում, թիլերն ըռանգյ անում, գյիբենե կյործում: Վերչը, Անահիտը լավ, դա̀շա̀նգյ գյիբենե կյործըելը սուվըերում ա: Հունց գյիբենե յար կյործում, վըեր մարթին խըելքը հետան քյինամ ար: Տա մին քանի ամսումը Վաչագանըեն էլ ա գյա̀բա̀ կյործըելը սուվըրցնում, տրանա ետը թաքավըերը մըեծ պադրաստությունով օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում, Վաչագանըեն նան Անահիտին փսակում:

Մին քանի ամսան ետը թաքավըերը մըեռնում ա, Վաչագանը թաքավըեր ա տըեռնում: Էտ վախտը մին օրիշ երգյիրու թաքավըեր զորք ա հըվաքում, Վաչագանըեն յիրա̀ կռըև քյինա̀մ, թա խե չի՞ իմ ախճիգյըս օ զալ: Կռըևն ըսկսվում ա, էտ թաքավըերեն զորքը ետ ըն տամ, բայց Վաչագանը նան ո̀ւրա̀ն հնգըերունքը գյերի յըն ինգյո̀ւմ:

Շատ վախտ ա անց կենում, Անահիտը տըեսնում ա, վըեր Վաչագանը կա վուչ: Վըեչ մին տըեղ ասում չի, վըեր հըրցնում էլ ըն, ասում ա.-Քյեցալ ա երգյիրը շոռ կյա̀, թա տըեսնա հինչ կա, հինչ չի կա:

Վաչագանըեն նան ո̀ւրա̀ն հնգըերունցը տանում ըն տո̀ւրմա̀: Էտ տո̀ւրմա̀ն էլ մին հունց տըեղ ա, վըեր մարթուցը պինըցնում ին, հու փեշակ օնար, պահում ին, հու օնար վուչ, ըսպանում ին, տրա մըեսը տամ պեն

ընուղներեն։ Քյո՛հնա՛ գյերի ինգյածներեն մինն էտ պենը գյիդա՛լիս ա ինո՛ւմ, Վաչագանըեն էլ ճինա՛նչո՛ւմ ար, տրան թաքուն ասում, - Մըեսը մարթու վա, վըեր պիրին, ասե ես մենակ ցամաք հաց ըմ օտում, մըեսը հարկավըեր չի, բայց հանց կանըես, գյիդան վուչ, վըեր գյո՛ւղո՛ւմ ըս՝ հինչ մըես ա, վըեր գյիդացըեն քեզ էլ ըն ըսպըննական։ Վաչագանը տի յել անում ա։ Վըեր հըրցնում ըն, թա տու հինչ փեշակ օնըես, ասում ա՝ լավ գյա՛բա՛ յըմ կյործում։ Հնգըերունցը մին քանինին կըտորում ըն, մին քանինն էլ ո՛ւրա՛նց փիշակավը պեն ըն անում, Վաչագանն էլ ըսկըսում ա գյա՛բա՛ կյործըելը։ Վըեր գյա՛բա՛ն կյործում , կտրում ա, օրիշ ըպրանքու նիըետ տանում ըն, թա ծախըեն։ Տանողն ասում ա՝ էս գյիբին կյինը հու կըկա՞րե տա Վաչագանը թա՝ մենակ Բա՛րդո՛ւ թաքավըերեն կնեգյը՝ Անահիտը տըրա հինչ ինիլը կըգյեղա՛ կյինը տա։

Էտ մարթը տանում ա ուրան նիըետ եր կալած ապրանքը լոխ ծախում, գյա՛բա՛ն էլ տանում Անահիտին կօշտը։ Անահիտը գյա՛բա՛ն մըեկնում ա վըեր եշի, տըեսնում ա Վաչագանըեն ծըեռքաճո՛ւրն ա, դաստին մաննը կծում ա. նըխշերավ էլ կյիրա՛ծ ա ինո՛ւմ, վըեր Անահիտ, էս ըմ էսհինչ տըեղը, զորք հըվաքե, եր կալ եք, ինձ ըզադըե։ Անահիտը դա՛ստին էտ մարթին փռնըել, կըպոտըել ա տամ, նա՛զիր-վեզիրին հըվաքում, զորք հըվաքըել տամ, քյինա՛մ տահանց քըղաքըեն յիրա՛ կոըն, Վաչագանըեն նան մնացած մըրթուցը լոխճինին ըզադում, ետ տըեռնում։

## 14.ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԾԱԽՈՂ ՏՂԱՆ

Մին թաքավըերու խոխա չի ինո՛ւմ։ Տրա հետե յել շատ ար դա՛րդ անում։ Մին օր էլ էրկան դա՛րդ ընելան ետը դիլխոր տո՛ւս ա կյամ ո՛ւրա՛ն բաղը, վըեր մխըըե շոռ կյա՛, եշո՛ւմ ա, տըեսնում մին օց ո՛ւրա՛ն ճոտերը կլխեն հըվաքած, լոխճինին մին-մին լո՛ւզ ա տամ։ Թաքավըերը իրեսը բիդի երգյինքն ա անում, թա՝ ա՛ յ աստված, պա ինձ լիհա՛ մին օցու մչանք էլ չըս բախտ տուվալ, սա ո՛ւրա՛ն ճուտերավն ուրխանում ա, ես մինն էլ չօնեմ, վըեր իրեսեն եշիմ։ Էտ վախտը երգյինքյա՛ն մին էրկան, սիպտակ մըրքա-վուր մարթ ա վըեր կյամ, թաքավըերեն ասում.- Աստված սա՛սըրտ ըսկացալ ա, քեզ մին տղա խոխա յա տըլական, տա առաչ քու ամմըեն հինչըտ ա ծխըլական օտե, ետնան էլ քեզ ու կնգանըտ։ Թաքավըերը թա՝ վըեչինչ, թող տի ինի, մենակ թա՛քյի վըեր ասեն էսհինչ թաքավըերեն տղա օնե։

Ինն ամբես իննը օրը վրեր անց ա կենում, թաքավըրերեն կնեգյը մին տղա յա պիրո՛ւմ: Էտ տղան էնքան ճէլլի յա մրծանում, վըեր ուրեկանը տրեկան ա տըեռնում: Մին քանի տարե անց ա կենում, տղան վըեր տըեռնում ա տասսը-տըսներկու տըրեկան, ըսկսում ա կարտ խաղ անելը, տանը իլըծ-չիլա՛ծը տանել տալն ու ծախելը: Մին օր էլ քյինամ ա բազար, տըեսնում լա՛վ զենքեր ըն ծախում: Ծըեռքեն մին կապեկ էլլա փող չի ինո՛ւմ մնացած: Ծխողեն հրցընում ա, թա վըեր իմ հա՛ր ուիմար քե տամ, զենքերն ինձ կըտա՞ս: Ծախողը թա՝ հա՛:

Տղան քյինա՛մ ա տոն, ո՛ւրա՛ն հա՛րն ու մարը պիրո՛ւմ բազար, տամ էտ ծախս ընողեն, զենքերն ինքյ օնում: Տրանա ետը շատ տըեղեր ա շոռ կյամ, շատ պեներ ա տըեսնում, էտ զենքերավը շատ օյիննե յա խաղում, տրա հետե յէլ մին թաքավըեր օզում ա էտ տղեն կլո՛խն օտե: Էտ տղան գործավ պիտի քյինա՛ր մին օրիշ թաքավըերու կոշտ, իսկ էն մին թաքավըերն էլ էտ թաքավըերէն նհետ շատ լա՛վ ա ինո՛ւմ, նամակ ա կյիրո՛ւմ, տամ էտ տղեն, թա կտաս էտ թաքավըերեն: Նըմակումը կյիրա՛ծ ա ինո՛ւմ, թա էտ տղան տըեղ հըսնելն ու բա՛ս կլո՛խը կըկտրես, պահես ինձ տաս: Տղան ծիյավ վըեր շատ կյամ ա, նղանում ա: Մին ըխպրո՛ւ ղրաղե վըեր ա կյամ, վըեր ղինջա՛նա՛: Մտածում ա, ասում ա՝ իմ հա՛ր էսքան ծախս ա ըրալ, ինձ կըրթըցրալ, պա լիհա՛ էս նամակը պեց չանե՞մ, տըեսնամ հինչ ա կյիրա՛ծ: Պեց ա անում կա՛րթո՛ւմ, տըեսնում կյիրա՛ծ, վըեր տղան ըտըեղ հսնելն ու բա՛ս կլո՛խը կըկըտրես, պահէս ինձ տաս: Տղան նամակը կլոլում ա, ըստաքան շինո՛ւմ, իրեք հետ ըխպիրա՛ն ճո՛ւր նի օնում՝ խմում, նամակն էլ ճըղում, տեն քցո՛ւմ, մին օրիշ նամակ կյիրո՛ւմ, տանում տամ էն թաքավըե-րեն: Տեղատ ետ ա տըեռնում կյամ, հսնում մին քաղաք, մին պըռավու տան վըեր կյամ, էտ պռավեն հրցընում, թա քղաքումը հինչ կա՞, հինչ չի՞ կա: Էտ պառավը թա քըղաքեն թաքավըերեն ըխճըկանը ուզուղնե շատ ըն կյամ, լըխճինին հարցեր ա տամ, կարում չըն ջողոբը տան: Նա յէլ ասում ա.-Հու վըեր իմ հըրցերեն կարե ղո՛ւզ պատասխանը տա, ես նրա յըմ քյիննական, էտ տղան էլ ա քյինա՛մ ըխճըկանը կոշտը, տուված հըրցերեն լըխճինին պատասխանում: Վըեր տա պրծըում ա, տղան էլ ըխճըկանն ա հարց տամ՝ ասում ա.- Էէն հու վա՞ր, վըեր տոն-տըեղ լըխ կերավ, քուռըփուչ ըրավ, վերչումն էլ հորն ու մորը զենքավ ծախեց, կյինը իրեք կում ճո՛ւր ըրավ, խմեց: Էտ հարցեն ախճիգյը կարում չի պատասխանե. ասում ա.-

Մին օր ժամանակ տռ, մըտածեմ, պատասխանեմ: Տղան թա՝ լա̀վ: Թաքավըրերեն ախճիգյն ո̀ւրա̀ն էրկու հնգեր ըխճըկան յօր ա օնում, քյինա̀մ էտ տղէն կօշտը, օտում ըն-խմում, տահանք տղէն լա̀վ հիրփըցընում ըն, ախճիգյը քյինա̀մ ա տղեն օթաղը, խուըըցընում, հարցեն պատասխանը գյո̀ւղո̀ւմ, լեչա̀կը մննան քցո̀ւմ, թողում տղեն քշտին, քյինա̀մ:

Ախճիգյն էքյսի օրը տղեն հարցեն պատասխանը տամ ա: Տղան մին օրիշ հարց ա տամ՝ ասում ա էն հի՞նչ դուշ ար, վըեր թռչից-քի̀նա̀ց ծառէն յիրա̀ վըեր եկավ, բարը կերավ, թեփուռը թողեց ծառեն յիրա̀, քյինա̀ց: Ախճիգյն էլլա չի կարում պատասխանը տա, տղան ասում ա.- էտ էն դուշն ա, վըեր թըեփուռը մեհենգյ իմ ծըեռքես ա: Համ ասում ա, համ լեչա̀կը ջուքան տո̀ւս օնում, կըլխըյեր թող անում: Ախճիգյը ծեն ա տամ, թա՝ հայրի՛կ, հայր՛իկ, սա յա իմ փըսացուն:

Թաքավըերը պիրո̀ւմ ա օխտը օր, օխտը քշեր հըսանեքյ անում, տահանց փըսակում,թաքավըրոթունը տամ էտ տղեն, ըսկըսում ըն տըեղ առոք-փառոք ապրելը:

### 15.ՇԵՆԸ ՎԸՐՅԱԿՈՒ ԿԱՊԱԾ ԸԽՃԸԿԱՆԸ ՆԱՂԼԸ

Մին մարթ, մինգյել մին կնեգյ ա ինո̀ւմ: Տահանց ինո̀ւմ ա մին տղա, մինգյել մին ախճիգյ: Ախճիգյը հա̀լա̀ ուռուռուցումը, մարը վըեր տանում ա, թա թուրունն էրի, հաց թխըե, եր ա կենում պո̀ւլերը լոխ օտում, էլլա նի մննում ուռուռուցը: Վըեր մխըրե մըծանում ա, շենումը հիշքան մարթ, հեյվան, շոն, կատու վա ինո̀ւմ, լոխ օտում ա, հորն ան մորն էլ օտում, սաղ շենումը թողում մին վըերցակ, հանցու վըեր օրիշ տըեղա մարթ-պեն կյա̀լիս վախտը կանչի, դույուղ անըե, մին շոն, հանցու վըեր հըչիլավ դույուղ անըե, մինգյել մին դա̀մո̀ւրչի, հանցու վըեր կըռքընըեն սըրե:

Հա̀լա̀ մինչև հորը նան մորը օտըելը էտ ախճիգյը օզում ա ախպորն օտըե, մին դուշ տիյերան դույուղ ա անում, վըեր քու քուր քյեցալ ա կըռքընըեն սըրե, կյա քեզ օտըե, ճելլ ըրա փախե, կլո̀խըտ ըզադե:

Էտ տղան փախճում ա, քյինա̀մ մին հեռու տըեղ, տըեսնում մին քըերծու ղաթում մին կարան տըեղ էրկու քոռ պառավ էծերը քթած, կաթնը մին ըմանում փրթա̀ծ, օտում ըն: Թաքուն քյինա̀մ ա տահանց կօշտը, կուխկըրնըերեն նստում, ըսկսում նիըտնըեն օտըելը: Վըեր պըրծնում ըն, մարթն ընդըեղան ա ասում. - Ա՛ կնեգյ, ախեր քուշտացըե վուչ, կնեգյն էլ

ընդըեղան ա ասում. - Ա՛ մարթ, ախեր իսկի ես էլ չի քուշտացըէ:

Մին քանի օր վըեր էտ տղան տահանց նիըետ թաքուն օտում ա, տահանք միշտ մնամ ին սոված, մին օր էլ մարթր թա՝ ա՛ կնեգյ, հենց ա մըեր քշտին օրիշ մարթ էլ ինի՞ մըզնիըետ ուտըելիս, թա չէ, սոված չընք մնալ, եք ծըռքըրնըես ո՛ւրո՛ւր անա փռնենքյ, տըփտըփենքյ, քթենանք:

Ո՛ւրո՛ւր ծըեռքա փռնում ըն, ղալ անում, տըփտըփըելավ էտ տղըեն քթենո՛ւմ, հըրցնում, թա՝ տու հինչ իլըթ-մի՞լլա՛թ ըս, ըստըեղ հինչ օնըե՞ս: Էտ տղան թա՝ ես էսհինչ շենա՛ն ըմ, ինձ իստի մին մըրթակեր քուր օնըեմ, շենին կեսը կերալ ա, ուզըեցալ ա ինձ էլ օտըե, փախալ ըմ: Տահանք թա՝ դե լա՛վ, մըեր քշտին կաց, մունք կըտըեռնանք քըզեստե համ հա՛ր, համ մար, տու վըել տար էծերը պահըե, հըղըցըեն ծախ ընգյո՛ւնան վըեր չի հընցնըես:

Էտ տղան ամմըեն օր տանում ա էծերը պահում, ո՛ւրո՛ւզյո՛ւնը պիրո՛ւմ տոն: Մին օր էլ վըեր էծերն առաչն ըրած տանում ա հա՛նդ, ասում ա. - Էս հըղըցըեն ծա՛խ անգյո՛ւնն անց ըմ կըննական, տըեսնամ ընդըեղ հի՞նչ կա, վըեր էս պըռըվնըեն ինդի յըն ասում: Էծերը հըղըցըեն տիյերն ա անում, ինքյն անց կենում էն անգյո՛ւնը:

Մին խիլլա՛ վըեր քյինա՛մ ա, եշում ա, տըեսնում մին հեռու տըեղա մին ծոխ ա պեցրանո՛ւմ: Թուշը յոր ա օնում, քյինամ: Հըսնում ա ըտըեղ, տըեսնում մին տոն, մաչին մին քանի սաղանեքյըն ապրում: Էտ սաղանեքյը տրան փըռնում ըն, մին քանի օր պինըցնում: Մին օր էլ էտ տղըեն մին մըեծ փադ ըն տամ, թա՝ կըտորըե: Տա կացնավը վըեր ա թակում, օզում ա ճղըե, կարում չի: Սաղանոցն ասում ա.- Սըեպ չի կա՞, մին քանի սըեպ տուվըեքյ տինիմ փադին ղաթումը, ճղըեմ: Սաղանեքյն էլ ասում ըն սըեպ չօնենքյ, լոխ կըհըվաքվենքյ ծըռքըրնըես տինինքյ փադին ղաթումը, բիրա՛դի ծիքյ տանք, ճղըենքյ:

Սաղանեքյը լոխ հըվաքվում ըն, էտ տղան կացնավը փադին թխում ա, մին մըեծ ճեղ ա պեց ինո՛ւմ, սաղանոցն ասում ա.- Դե, ծըռքերնետ բիրա՛դի քցեցեքյ ղաթը, ծիքյ տուվըեքյ, ճղըեցեքյ: Տահանք վըեր մըննըրնըեն քցո՛ւմ ըն փադին ճեղը, էտ տղան ծիքյ ա տամ, կացըենը փադին ղաթան տո՛ւս օնում, փադին ճղված տըեղը հոփ ա կյամ, սաղանոցը մննըրնըեն մնամ ա փադին ղաթումը, ո՛ւրա՛նք էլ մըշկըրնըերան կռացած: Սաղանեքյը լոխ բիրա՛դի էտ տղըեն դաչանք-պըղատանք ըն անում, թա մըեզ ըզադե, հինչ լիվոթուն ասըես, կանըենքյ:

Էտ տղան թա՝ ըսեցեքյ տըեսնամ էն պըռըվնըերեն աշկերը հի՞շտեղ ա, ծըեզ ըզադըեմ: Տահանք թա՝ էն ա էսիինչ ութաղըեն ուրուրուցըեն պերցին տակըեն:

Կացնավը թխում ա տահանց լըխճինին կլխընըեն կտորում, քյինա̈մ պըռըվնըերեն աշկերը յոր օնում, սաղանոցը իլըծ-չիլածն էլ հըվաքում, տանում: Պըռըվնըերեն աշկերը տանում ա քցո̈ւմ ո̈ւրա̈նց տըեղը, լո̈ւվըցնում , ետնան թա՝ քյիննա̈կան ըմ մըեր շենը, տըեսնամ իմ հա̈ր, իմ մար հունց ըն ապրում: Էտ տղըեն էլ էրկու լա̈վ շոն ա ինո̈ւմ, մինին անումը Զա̈նգյի, մինինն էլ՝ Զիրա̈նգյի: Տա պըռըվնըերեն ասում ա. - Կաթնը տիրիքյ կրակըեն, թուղըեցեքյ կենա, վըեր պըտյո̈ղեց, Զա̈նգյին նան Զիրա̈նգյին պեց կըթողեքյ, կյա̈ն:

Ինքյը ծին նստում ա, հղըե ինո̈ւմ, քյինա̈մ: Վըեր հըսնում ա ո̈ւրա̈նց շենը, եշում ա, տըեսնում մարթ, հեյվան, հավ, շոն, կատու չի մնացալ, տու մի ասըել, քուրը լոխ կերալ ա, սաղ շենումը թողալ մին վըերցակ, վըեր նոր մարթ յա օրիշ պեն կյա̈լիս կանչի, դույուղ անըե, մին շոն, վըեր հա̈չի, դույուղ անըե, մինգյել մին դա̈մո̈ւրչի, վըեր կըռքընըեն սըրե:

Տանում ա ծին սըհարան կապում, ինքյը խուրջինը ծըեռքն օնում, պիցրա̈նո̈ւմ տոն: Քուրը վըեր ախպորը տըեսնում ա, շատ ա ուրխանում, կոլավն ա ինգյո̈ւմ, թա՝ վայ, ա ախպըեր, եկալ ը՞ս: Ախպըերը թա՝ հա՛: Քյինա̈մ ա տուվըեր, ծիյին մին վըեննը պուկում օտում, կյամ թա՝ ա՛յ ախպըեր, ծիտ իրեք վըննանե յա՞ եկալ: Ախպըերը վըեր արտեն գյիդացալ ա պենը հինչումն ա, ասում ա.-Հա՛: Մինգյել քյինա̈մ ա ծիյին էն մին վըեննը պուկում օտում, կյամ թա՝ ա՛յ ախպըեր, ծիտ էրկու վըննանե յա՞ եկալ: Ախպըերը թա՝ հա՛: Էն մինն էլ վըեր պուկում ա օտում, հըրցնում թա՝ ծիտ մին վըննանե յա՞ եկալ, ախպըերը էլլա յա ասում՝ հա՛: Վէրչին վըենն էլ վըեր պուկում ա օտում, ախպորն անա հըրցնում ա, թա՝ ծիտ առանց վըեններ ա՞ իլա̈լ: Ախպըերը էլլա ասում ա՝ հա՛: Վէրչը ծիյին մնացած ջա̈մդակն ան կլո̈խն էլ ա լոխ օտում, ետնան կյամ ասում. - Ա՛յ ախպըեր, դե, տու տանը կաց, ես քյինա̈մ հըրվանան հաց փոխ օնըեմ պիրիմ, սոված կինիս, հանցու հաց օտըես:

Քուրը վըեր տանան տո̈ւս ա կյամ, հա̈մին դուշը տիյերան ծեն ա տամ, թա՝ ա՛յ տղա, քու քուր քյինա̈ց կըռքընըեն սըրե, վըեր կյա̈ քեզ օտըե, ճելլի ըստըեղաս փախըե, կլո̈խըտ պրծըցրու:

Էտ տղան շալվարը հանում ա, փոխկերքը կըպոտում, մոխրավ լըսնում հո՛ւրթա՛ն կախ տամ, ինքյը փախճում: Քուրը կըռքընըեն սրած կյամ ա կլխըյեր եշո՛ւմ, տըեսնում «ախպըերը հո՛ւրթա՛ն կախ իլա՛ծ», լոք ա տամ փռնում, ծիքյ տամ, ասում.-Հոր ը՞ս օզում հո՛ւրթա՛վը տո՛ւս կյա՛ս փախճիս, քյեցալ ըմ կըռքընըես սրալ, վըեր կյամ քեզ օտըեմ: Վըեր շըլվարան ծիքյ ա տամ, պտառվում ա, մոխըերն աշկըերը տըեռնում, շաղվում, ըշկըերավն ինո՛ւմ, աշկըերը հըղլըղորում, ախպըերը մին խիլլա տըեղ էլ ա փախճում:

Քվորը ըշկըերեն ցավը վըեր անց ա կենում, վազ ա տամ, քյինա՛մ ախպորը հըսնում, ախպըերն էլ վազ ա տամ, տըեսնում ըռաչին իրեք ծըրա՛նի ծառ: Պիցրա՛նո՛ւմ ա էտ ծըռըերան մինը, քուրը կյամ ա տրա տակոըեն կուրծկործում: Վըեր մազ ա մնամ թա ծառը պուք կյա՛ վըեր ինգյի, լոք ա տամ եր ինո՛ւմ էն մին ծառը: Քուրն էտ մին ծառն էլ վըեր կըրծկործում ա, օզում ա թա վըեր ինգյի, կաթնը պրտո՛ղում ա, պըռըվնըեն Ջա՛նգյին նան Ջիրա՛նգյին պեց ըն թողում, փրփրած կյամ ըն հըսնում, տղան թա՝ Ջա՛նգյի-Ջիրա՛նգյի, տրան հունց հոփ տուվըեքյ, հունց կոլ տուվեքյ, վըեր մին տոպ արո՛ւն կա՛թի: Էրկու շնըերը յիրա՛ յըն տըեռնում, էտ ըխճըկանը հո՛ւնց հոփ տամ, հունց կոլ տամ, վըեր մին տիրնու յիրա մենակ մին տոպ արո՛ւն ա կա՛թո՛ւմ: Տղան էտ տիրնը յոր ա օնում տինում ծոցումը, շնըերը հետան քցո՛ւմ, հղըե ինո՛ւմ:

Քյինա՛մ ա, քյինա՛մ, տըեսնում մին քանի մարթ ո՛ւրա՛նց քոչը վըխճըր-նըերավ, իծերավ, օրիշ հիյվընըերավ քշո՛ւմ, տանում ըն, տըհանցա մինին ծըեռքըեն էլ մին միակ ա ինո՛ւմ, էտ տղըեն ասում ա.-Թա վըեր գյիղա՛ս էս միակը հինչի յա, էս ապրանքը լոխ քե յըմ տամ: Տղան կարում չի ասըե, էտ ծուցըեն տիրնը թա՝ ճըռ, ճըռ, ճըռ, տղան էլ ասում ա. - Ճըռ-ճապկե-թըքըղըէ: Էտ մարթը թա՝ հա՛, տի յա: Ապրանքը լոխ տամ ա էտ տղըեն, էտ տղան էլ առաչն ա անում, տանում պըռըվնըերեն կոշտը:

## 16.ՍՌՎԴԱՔՅԱ՛ՐԵՆ ՆԱՂԼԸ

Սռվդաքյա՛ր[1]. ընումավ մին մըեծ, հարուստ մարթ կնեգյ ա անում, պիրո՛ւմ թողում մորը քըշտին, ինքյը քյինա՛մ ո՛ւրա՛ն ղուլլուղըեն (հեռու երգյիրում ա ինո՛ւմ կործ ընելիս): Էտ հառնինը վըեր մին քանի ամըես ըսկըեսվորը նըհետ կենում ա, ախըրը մին օր էլ ետ ա տըեռնում, թա՝

[1] Մի քանի տեղերում բառի իսկական իմաստը մոռացվել է, դարձել հատուկ անուն:

քավթառ շոն, հինչ ը՞ս տանը հըպարապ վըեր ինգյալ, մին պեն էլ չըս անում, հու վա՞ քեզ մ՜իյտա՜ հաց տըլական, վըեր օտըես: Էտ պառավը թա մըեծ կնեգյ ըմ, հինչ ա՞նեմ: Հառհնը թա՝ քյինա՜ մին քան ծ՜ու եր կալ, տիր տակըետ, ճոտըեր ըրա, հետատ ըրա, պահե...

Էտ պառավը քան ծ՜ու վա տին՜ում տա՜կըեն, յիրա՜ն թոխսը նըստում: Քան օրանը ետը ճոտըերը վըեր տ՜ուս ըն կյամ, հետան ա անում, տանում մոտե փիյնատըեղը, մին շամփուր եր կալած քա՜նդ՜ում, ճըճո հըվաքում, տամ ճուտըերեն:

Մին օր էլ էտ պըռավըեն տղան ղարիբթունա կյամ ա, տըեսնում ա մարը փիյնատըեղը ճոտըերն առաչն ըրած, շըմփուրով ճըճո վա քա՜նդ՜ում: Հըրցընում ա, թա՝ այա, էտ հինչ ը՞ս անում: Մարը թա՝ այան քե մատաղ, սահանց մարը ըստակալ ա, ճոտըերը մնացալ ըն անղար, յիս էլ լիհա՜ ծըեռքըս յիրա՜ յըմ օնում, վըեր մըծանան: Տղան հըվատում ա, թողում քյինա՜մ ղարիբոթուն:

Տղան վըեր քյինամ ա, հառհնը նորից ա ըսկըեսվորը յըխըբողազ ին՜ում, թա հինչ ը՞ս տանը հըպարապ վըեր ինգյա՜լ, հանե մաղ կըպ՜ուղնըեն եկալ ըն, քյինա՜ նըհըտնեն ըխշաղի, հաց կըտան, կօտըես…

Էտ պառավը սուսուփուս քյինամ ա մաղ կըպուղներեն նըհետ չորս-հենգյ ամըես պեն անում, կըլ՜իխը պահում, քյինա՜լիս էլ մին մաղ ըն տամ, պիր՜ում ա տոն, պատան կախ տամ: Տղան ղարիբթունա կյամ ա, հըրցընում ա, թա՝ այա, է՞ս հինչ մաղ ա: Մարը թա՝ այան մատաղ, վըեչինչ, ա՜լա՜քյչիքյը եկալ ըն մըեր տռանը մնացալ, քյինա՜լիս էլ էս մաղը տուվալ ըն, քյեցալ:

Տղան նորից ա քյինամ ղարիբոթուն: Տղան վըեր քյինա՜մ ա, հառհնը ըսկըեսվորը, թա՝ մինգյել ը՞ս տանը հըպարապ վըեր ինգյա՜լ, քյինա՜ հանե, փալանղուզերը եկալ ըն, պեն ըն անում, քյ՜ոմա՜գյ ըրա, հաց տան, կեր:

Էտ պառավը եր ա կենում, քյինա՜մ մին չորս-հենգյ ամըես էլ փալանղուզներեն նըհետ պեն անում, կըլ՜իխը պահում տահանք քուչիլիս պըռավըեն մին փալան ըն տամ, պիրում ա ՜ուրա՜նց բըլկոնեն վըեր տին՜ում: Տղան վըեր նորից ղարիբթունա կյամ ա, հըրցընում ա, թա՝ այա, է՞ս հինչ փալան ա, մարը թա՝ փալանղուզերը եկալ ըն մըեր հըյաթումը վըեր եկալ, քյինա՜լիս էլ քըրեհեն տըեղը էս փալանն ըն տուվալ, քյեցալ:

Տղան նորից ա քյինա՜մ ՜ուրա՜ն կործըեն: Մին քանի օր վըեր կենում ա, հառհնը ըսկըեսվորը թա՝ քավթառ յախնի, սուվըերալ ը՞ս ծիրի հաց օտըելը, հու վա՞ քեզ պըրտական, քյինա՜ էն ա փա՜հլ՜իվանը եկալ ա,

նըհըտնեն շոռ եք, քյինդիրին տակըեն քյո̏ւսա տըեռ, կըլո̏խըտ պահե, թա չէ, ես կարել չեմ քեզ պահեմ:

Էտ պառավը քյո̏ւսո̏ւ շորեր ա կյենում, քյինա̏մ փա̏հլո̏ւվանըեն քյո̏ւսօթուն անում, նըհըտնեն շենքաշեն շոռ կյամ, ամմըեն տըեղ քյինդիրին տակըեն պար կյա̏լիս մին երք էլ ասում.

Ջ ո̏ւջա̏լա̏րըն նա̏նա̏սիյամ,
Ա̏լա̏քյչինըն քյո̏մա̏քյչիյամ ,
Փալանդուզըն փա̏հլասիյամ,
Փա̏հլըվանըն քյո̏սա̏սիյամ,
Սովդաքյա̏րըն նա̏նա̏սիյամ[1]:

Փա̏հլո̏ւվանն ո̏ւրա̏ն զուռնըղըվալավը վըեր տո̏ւս ա կյամ սովդաքյա-րին քաղաքը, փազըերը վըեր ա թողում, քյա̏նդիրը կապում, ըսկսում խաղ անըելը, ժուղովուրթը լոխ թուփ ըն տըեռնում թիմա̏շա̏ ընելի հետե: Էտ վախտը սովդաքյա̏րին հնզըերունքը սովդաքյա̏րին ասում ըն՝ եք քյինա̏նք թիմաշա անըենքյ: Սովդաքյարն էլ թա՝ ես պեն օնըեմ, տուք քյեցեքյ, կըկյաք, նաղլը կանեքյ, թա հի՞նչ ըք տըեսալ, հի՞նչ չըք տըեսալ: Տահանք քյինա̏մ ըն փա̏հլո̏ւվանըեն թիմաշա անում, վըեչ մին պենու եշում չըն, լիհա̏ քյո̏ւսին երքն ըն անջուկ օնում.

Ջ ո̏ւջա̏լա̏րըն նա̏նա̏սիյամ,
Ա̏լա̏քյչինըն քյո̏մա̏քյչիյամ,
Փալանդուզըն փա̏հլասիյամ,
Փա̏հլըվանընքյո̏սա̏սիյամ,
Սովդաքյա̏րըն նա̏նա̏սիյամ:

Հըվաքված մարթիքյը, մինզյել սովդաքյա̏րին հնզըերունքը մնամ ըն ո̏ւրո̏ւր իրեսե յիշիլիս: Տահանք փա̏հլո̏ւվանըեն խաղը թողում ըն կեսատ, քյինա̏մ սովդաքյա̏րին կոշտը: Սովդաքյարը հըրցընում ա, թա հինչ ը՞ք տըեսալ, հինչ չը՞ք տըեսալ, տահանք թա՝ ըսկի մին կարքըեն պեն չի կար, մենակ քյո̏սան սըհաթ-մընուտ իստի մին երք ար ասում.

Ջո̏ւջա̏լա̏րըն նա̏նա̏սիյամ,
Ա̏լա̏քյչինըն քյո̏մա̏քյչիյամ ,

---

[1] *Ճտերի մայրն եմ,*
*Մաղ պատրաստողի օգնականն եմ,*
*Թամբագործի մշակն եմ,*
*Լարախաղացի ծաղրածուն եմ,*
*Սովդաքյարի մայրն եմ :(Ծ.Ա.)*

Փալանդուզըն փա̀հլասիյամ,
Փա̀հլըվանընքյո̏սա̀սիյամ,
Սովդաքյա̀րըն նա̀նա̀սիյամ

Սովդաքյա̀րը թա՝ հալա մին քյեցեքյ քյո̏ւսին պերեքյ ըստըեղ: Քյինա̀մ ըն քյո̏ւսին պո̏ւրո̏ւմ (իրեսը-պենը լոխ ծածկած ա ինո̏ւմ), սովդաքյա̀րը հըրցնում ա, թա տու հու վը՞ս, հինչ ը՞ս, ըշտըղա՞ցըե յըս: Մարը քյո̏ւսին փափաղը, իրեսեն շորը տեն ա քցո̏ւմ, սովդաքյա̀րը դա̀ստին ճինա̀նչո̏ւմ ա, կոլավն ինգյո̏ւմ, լա̀ց ինո̏ւում, ասում. - Վա՛յ, ա՛յա, ըստըեղ հինչ օ՞նըես: Մարն ըսկսում ա լա̀ց ինիլա̀վ լոխ նաղլ անըելը, թա՝ այան մատաղ, էն վյըեր եկալ ըս տըեսալ ճոտըերը հետ աս ըրած, շամփուրը եր կալած ճուտըերեն հետե փեյնումը ճըճո քընդիլիս, հըրցըրալ ըս, խա̀փա̀լ ըմ, աս ալ՝ ճուտըերեն մարն ըստակալ ա, սոտ ըմ ասալ, կնեգյըտ ա հավը են ծո̏ւվանքը տիրա̀լ տակըես, թոխսը նըստըցրալ, ճոտըեր անըել տուվալ. էն վըեր եկալ ըս տըեսալ մաղը տռնան կախ տուված, հըրցըրալ ըս՝ ասալ էս հի՞նչ մաղ ա, քեզ խա̀փա̀լ ըմ, ասալ ա̀լա̀քյչիքյն ըն եկալ մըեր տռանը կացալ, քյինա̀լիս էլ քըրեհ տուվալ, էլլա յըմ սոտ ասալ, մըեր տռանն ա̀լա̀քյչի չի իլա̀լ կնեգյտ ա ինձնըհետ կռվալ, խայտառակ-բըյաբուռ ըրալ, թա քյինա̀ մաղ կըպուղներեն քյո̏մագյ ըրա, հաց տան, կեր. հղե քյինա̀լիս էն մաղը տուվալ ըն, քյեցալ. էն վրեր եկալ ըս տըեսալ փալանը տռանը տիրա̀ծ, հըրցըրալ ըս թա՝ է՞ս հինչ ա, խա̀փա̀լ ըմ թա՝ փալանդուզերը մըեր հըյաթումը կացալ ըն, հղե ինիլիս էլ մին փալան թողալ, քյեցալ, էլլա կնեգյտ ա կըռվավ-դուվավ ղարկալ թա՝ քյինա̀ փալանդուզնըերեն նըհետ պեն ըրա, կըլո̏խըտ պահե. քյեցալ ըմ մին քանի ամսըե քըշտըրնըերին կացալ, պեն ըրալ, քյինալիս էլ մի փալան ըն թողալ, քյեցալ, մինգյել վըեր տու հղե յըս իլա̀լ կըռն ա ըրալ, իրեսըս պուկալ, թա քյինա̀ փա̀հլո̏ւվանըեն տակըեն քյո̏ւսոթուն ըրա, հաց տան, կեր. շենբա̀շեն, քըղաքան-քաղաք փա̀հլո̏ւվանըեն նըհետ շոռ ըմ տուվալ, եկալ տո̏ւս եկալ ըստըեղ:

Տրանա ետը փա̀հլո̏ւվանըեն հնգերունքը կյամ ըն Սովդաքյա̀րին մորը տանում: Սովդաքյա̀րն ասում ա, թա էտ կնեգյն իմար ա, իստի-իստի պեն ա իլա̀լ, մեհենգյ օզում ըմ պիրիմ կոշտս: Տահանք էլ ասում ըն, թա մունք կարել չընք պեց թողենքյ, քյինա̀ փա̀հլո̏ւվանըեն կոշտը, տըես հինչ ա ասում:

Սովդաքյա̀րը քյինա̀մ ա փա̀հլո̏ւվանըեն կոշտը, էլլա ինդի ասում,

փա̈հլո̈ւվանն ասում ա.-Կարել չըմ, փող ընք տուվալ, ինքյ կալալ: Սովդաքյա̈րն էլ ասում ա.-Ծըեր տուված փողը ես ետ կըտամ, իմար ինձ տուվըեքյ: Տահանք թա՝ չէ, վըեր չէ, կարել չընք: Վէրչը, սովդաքյա̈րը վըեր շատ ղաչանք-պըղատանք ա անում, մորը էրկու կյինն էլ տամ, նոր պեց ըն թողում:

Սովդաքյա̈րը մորը հետե մըեծ, երկան ղոթի յա շինիլ տամ, հացը-ճո̈ւրը տինո̈ւմ մաչին, մին օղտա կապում, քյարվանը հլո̈րո̈ւմ բիդի ո̈ւրա̈նց շենը, մորը քյըրվանըեն նհետ հսցընում տոն: Վըեր շենա̈ն մուտանում ըն, խաբարը հըսնում ա կնզանը, թա սովդաքյա̈րն ո̈ւրա̈ն քյըրվանավը, ո̈ւրա̈ն մըրթուցավը կյամ ա: Կնեզյը քյինա̈մ ա հըրվընններեն ան շինա̈ցուց վըեններըն ինզյնո̈ւմ, ղաչանք-պըղատանք անում, թա վըեր սովդաքյա̈րը կյա̈ մորն անա հըրցընե, կասեքյ մըեռալ ա: Հըրըվանները, շինա̈ցեքյ մին թա̈հրավ համոզ ըն տըեռնում: Սովդաքյա̈րը վըեր կյամ ա կնզանը հըրցընում թա իմար հո՞ր ա, կնեզյը, թա՝ մըեռալ ա: Սովդաքյա̈րը նորից ա կնզանը հըրցընում, թա հոր ա՞ իմար: Կնեզյը՝ թա մըեռալ ա: Սովդաքյա̈րը հըվաքված հըրվըններան էլ ա հըրցընում, նահանք էլ խուսկըրնեն մին ըրած թա՝ մըեռալ ա: Սովդաքյա̈րն ասում ա. - Տարեքյ թաղած տըեղը նշանց տուվեքյ: Տանում ըն հինգյիսնեն, մին օրիշ մըեռալ թաղած տըեղ ըն նշանց տամ, հըվաքված շինացեքյ թա՝ էտ ո̈ւրո̈ւշու մըեռալ ա: Պիրո̈ւմ ըն օրիշ թաղած մըեռալ քա̈նդո̈ւմ, հըվաքված մարթիքյ թա էտ էն փլանքյա̈սին մըեռալն ա: Մին սո̈ւրո̈ւ տըեղեր ըն քա̈նդո̈ւմ, լոխճինին տար ա տո̈ւս կյամ: Սովդաքյա̈րը թա՝ տուք կըրեցեքյ վուչ իմար ինձ նշանց տաք, եկեքյ ես տանեմ ծըեզ նշանց տամ: Ժուղովուրթը հըվաքում ա, տանում տոն, ղոթին պեց անում, ղոթան տո̈ւս օնում, թա էս իմար ա՞: Հըվաքված մարթիքյ լոխ մնամ ըն ցըմաքված: Սովդաքյա̈րը հըրցընում ա, թա՝ ա կնեզյ, էս իմար ա՞: Կնզանը լո̈ւզին կապ ա ինզյնո̈ւմ, խոսում չի: Պիրում ա կընզանը ծիյին քըմական կապում, ծին քշո̈ւմ, էնքան քաշ-քաշ անում, ըսպանում՝ շիլեխճան շինո̈ւմ, քյինա̈մ մին թա̈զա̈ կնեզյ պիրում:

## 17.ՇԱՀ-ՄՈՒՐԱԴԵՆ ՆԱՂԼԸ

Մին թաքավըերու քառասուն տղա յա ինո̈ւմ, օզում ա քառասունն էլ փսակե: Շոռ ըն կյամ, շոռ, հունց թաքավըեր չըն քթենո̈ւմ, վըեր քառասուն ախճիզյ ինի (ա̈վա̈լի վախտըերքը թաքավըերեն տղեքյը թաքավըերեն

ըխճըկորանց նըն իլնյլ ուզելիս): Մտածում ըն, մտածում, վերչը մին օր լոխ ծիյըվըերվում ըն, զենքերը յոր օնում, ըուրնյնց քըղաքան տնուս կյամ, վըեր քյինյնն օրիշ երգյիրներում շոռ կյան, հունց թաքավըեր քթենան, վըեր քառասուն ախճիգյ ինի, օզըեն, ետ տըեռնան:

Երեսունինննը ախպերքը վըեր տանան տնուս ըն կյամ, կուճուր ախպորը՝ Շահ-Մուրադեն, մարը թողում չի, վըեր նիըտնըեն քյինյն, ասում ա կուճուր ա, կարել չի երկան հըղըցու, տիժյնր տըղերու տեմ կենա:

Շահ-Մուրադը քըղաքան տնուս ա կյամ, ըսկսում մին պըռավու հըվըերու քարավ տալը: Էտ պառավն էլ թա՝ վըեղըս կլխըետ, երեսունինննը ախպըերքը քյեցալ ըն կորչին, վըեր լավ ինիր, տու վըել նիըտնեն կըքյինիր կուրչիր:

Շահ-Մուրադը էտ խոսկերքը վըեր ըսկանում ա, վազ ա տամ մորը կոշտը, պենին թնյհրը հըրցընում, ամմըեն հինչ գյնւղնւմ (ախպըերքը ըսկի նւրյնն թավ ընելիս էլ չըն իլնյլ), ծին յիհյնրնւմ, շաշկան կապում, հըտըրըներան քյինամ: Շատ ա քյինյնմ թա խըեգյ, հըռըցանա եշում ա, տըեսնում ըուրյնն ախպըերքը մին տան հըվաքված, ուրխոթուն սարքած, քյեփ ըն անում, օտում-խմում, զարափաթնե անում: Շահ-Մուրադն օզում ա թա տահանց անա մուտանա, տըեսնում ա՝ հըռըցանա մին հենգյ կլխանե օշափ բիդի տահանց մուտանում ա: Թխում ա տրա կըլխըենեն կտրում-ըսպանում, քթըպռոշը կտրում, քցնւմ խուրջինը: Տրանա ետը մինգյել վեց կլխանե մին օրիշ օշափ ա կյամ: Թխում ա, տրա կլխըենեն էլ կտորում, ըսպանում, էլլա քթըպռոշը կտրում, քցնւմ խուրջինը: Օխտը կլխանե մին օրիշ օշափ էլ ա կյամ: Տրա յել ա ըսպանում, քթըպռոշը կտրում, քցնւմ խուրջինը: Տրանա ետը ծին նստում ա, խուրջինը ծիյավը քցնւմ, քյինյնմ նի մննում մին մոտըե տոն, թա մխըրե ճնւր օզըե, երեսը նան ծըեռքերը լուվանա: Բնւրդյնն եշում ա, տըեսնում էտ տանը մին չըտըեսնված հնւրիփյնրի ախճիգյ, էլ ամմըեն հինչ միննան քցնւմ ա: Էտ ըխճըկանը հըրցընում ա, թա հու վը՞ս, տա թա՝ էսհինչ թաքավըերեն քառասուն ըխճըկորանցը քուրն ըմ, քառասունավ էլ իրեք դնւվըերեն քշտին պլեն ինգյնծ ընք:

Շահ-Մուրադը կլխու վա ինգյնւմ, վըեր էտ իրեք դնւվըերը նւրյնն ըսպըեըծնեն ըն, տա ամմըեն հինչ էտ ըխճըկանը քշտին ասում ա, տրա մուտանան յոր օնում, քցնւմ նւրյնն մաննը, քվորցը մուտըենքյն էլ յոր օնում, քշերեն կեսումը տանում թաքուն քցնւմ ախպորցը մըննըրնեն

(ախպըերքը քոն իլած ըն ինուըմ), մըեծ ըխճըկանը մուտանան քըցում ա մըեծ ախպորը մաննը, մաշնակը մըշնակըեն, տի՝ ամեքյա ուըրանց յաշին, ուըրանց բաքըեն։

Էքյսը ախպըերքը եր ըն կենում, տըեսնում Շահ-Մուրադը ուըրանց կոխկըեն քոն իլած, ուըրանց լոխճինին մըննըրներումն էլ մին-մին մուտանա։ Հըրցընում ըն, թա՝ Շահ-Մուրադ, խեր ինի՞, հինչ ա՞ պըտահալ, վըեր եկալ ըս։

Շահ-Մուրադը թա՝ ես ըմ ծըեզ մահա պըրծըցըրալ, հըրցընում էլ ը՞ք, թա հինչ ա պըտահալ։ Տահանք հըվատում չըն։ Շահ-Մուրադն ասում ա. - Խուրջինը դրաղ տիրած ա, քյեցեքյ պերեքյ, ամմըեն հինչ կըգյիդաք։ Մին-մին քյինամ ըն թա պիրին, կարում չըն, ըրըկ-էրկու վըն քյինամ, կարում չըն, իրեքավ-չորսավ էլ չըն կարում։ Ինքյը մենակ քյինամ ա խուրջինը յոր օնում պիրուըմ, ուշըփներեն քըթըպոռշնեն վըեր ածում, թա՝ սահանք ըն իլալ ծըեր քըթըրներեն տակըեն , գյիդալիս չըք իլալ։ Տրանա ետը տահանք թա՝ Շահ-Մուրադ, տու օրաս տենը մըեր մըեծ ախպըերն ըս, մանք լոխ քու խոսկավըտ ընք քյիննական, հինչու վըեր ասըես, լոխ քու խոսկըետ ընք անջուկ ուննական։

Շահ-Մուրադը տահանց թողում ա տըեղ, քյինամ թաքավըերեն քառասուն ըխճըկեքյը պիրուըմ, վըեր տանըեն ուըրանց հորը կոշտը՝ հըսանեքյ անըեն։ Բուըրդան եշում ըն, տըեսնում հըռըցանա մին օրիշ պեն ա կյամ՝ կեսը խոզ, կեսը մարթ։ Տա տահանց վըեր մուտանում ա, ախպըերքը օզում ըն ըսպանեն, Շահ-Մուրադը թողում չի։ Տա վըեր լափ մուտանում ա, Շահ-Մուրադեն ասում ա.- Քյինալ պիտիս էհինչ ծուվավն անց կենաս, էհինչ թաքավըերեն ախճիգյըն ինձետե պիրիս։ Ախպըերքը նորից ըն օզում, թա տրա նհետ կռն անըեն ըսպանըեն, Շահ-Մուրադը թողում չի, ուըրան թիռչըկան ծին նստում ա, քյինամ էտ ծուվավն անց կենում, ծուվըեն էն դոլին տըեսնում մին պառավ կնեգյ ուըրան տանն ըռաչին նստած։ Տա թա՝ազի՛, ինձ դոնադ չը՞ս յոր օնըել։ Տա թա՝ ազին քե մատաղ, հինչա՞վ դոնադ անըեմ, վըեչ ուտելի օնըեմ, վըեչ խմըելի։ Տա թա՝ վըեր փող տամ, կըկարըե՞ս ինձետե ուտըելի տես-տեն ինքյ օնըես։ Էտ պառավը թա՝ կըկարըեմ։ Տուըս ա օնում մին հափուռ վըեսկե տամ, պառավը քյինամ ա տես-տեն ինքյ օնում, վըեսկուն կեսն էլ մնամ ա ուըրան։ Ուտըելան-խմըելան ետը Շահ-Մուրադը հըրցընում ա, թա՝ ազի, պա

հինչավ ը՞ս ապրում: Պառավը թա՝ թաքավըրերեն ըխճըկանը տո՞ւս ըմ օնում էն գըմե բաղումը շոռ ածում, տա, մինգյել ո՞ւրա՞ն դուլլուղ ընողըեն հացա-մացա տամ ըն, օտում ըմ: Շահ-Մուրադը դա՞ստին մաննը կծում ա, կլխու վա ինգյո՞ւմ, վըեր տա հենց ո՞ւրա՞ն շոռ կյա՞լիս ախճիգյն ա: Մին հափուռ վըեսկե յել ա տամ, թա՝ ա՞զի, կըկարե՞ս էտ ըխճըկանը տո՞ւս օնըես, մխըրե դրաղ տանըես, օզում ըմ փըխճըցընեմ: Պառավը, վըեր ջուբըերն արտեն վըեսկավ լըցալ ա, թա՝ խե չը՞մ կարել, էքյո՞ւծ քշըրհանա ինձ նհետ տո՞ւս ա կյիլա՞կան հանե՛, էն բաղը, ո՞ւրա՞ն հնգըեր ըխճըկեքյն էլ նհետոն ըն իննա՞կյա՞ն, ես ո՞ւրա՞ն առաչ ըմ քցըլա՞կան, վարթը տինիմ ծըեռքըեն, տու վարթին յիրա կըզյիդա՞ս վըե՞ր ախճիգյն ա. ետնան դրաղ ըմ քշըլական, ո՞ւրա՞նց անա հըռըցընեմ, հենց էտ վախտը կըկյաս փըխճըցընըես:

Էքյսը քշըրհանան վըեր թաքավըրերեն ախճիգյը տո՞ւս ա կյամ, թա քյինա՞ բաղը, հնգըերունքը խիլլա՞ քամակ ինգյա՞ծ ըն ինո՞ւմ, պառավը եշում ա, տըեսնում Շահ-Մուրադը հըռաքաշ ո՞ւրա՞նց հետան ծիյավը կյամ ա: Պառավը վարթը տամ ա թաքավըրերեն ըխճըկանը: Վըեր մխըրե յել դրաղ ըն կենում, նի յըն մննում բաղը, Շահ-Մուրադը ո՞ւրա՞ն թիռչըկան ծիյավը յիրա՞ յա հսնում, ըխճըկանը տինո՞ւմ ծիյին յիրա՞, արտեն ծուվըեն կեսը հըսած, խաբարը նոր հսնում ա թաքավըրերեն, թա ըխճըկանըտ փըխճըցըրին: Ախճիգյն էլ ասում ա. - Վըեր իտի ազղուն տղա յըս, թա քըզետե յըս տանում, տար, թա քըզետե չըս տանում, ասե, վըեր ինձ քցիմ ծովը: Շահ-Մուրադը թա՝ ըրխըյին կաց, ինձետե յըմ տանում: Վըեր տո՞ւս ա օնում ծուվըեն դրաղը, էն կես մարթ, կես խոզ դո՞վը կյամ ա տրա առաչը: Հա՞լա՞ մինչև տրան հսնելը Շահ-Մուրադը ըխճըկանը սուվըրըցընում ա, թա՝ էն ուրվացող մարթին քշտին կըկենաս, կըխափիս, նհետոն ապրես վուչ, սիրն ու սեկրետը կըզյիդաս, ինձ ասըես, կըհըրըցընես, ասըես վըերդեղ ա հոքիտ, ո՞ւրա՞ն կասըես, թա հոքուտ տըեղն ինձ ասըես, քըզնըհետ կապըըեմ, թա չէ, չէ՛:

Ախճիգյը իտի յել անում ա, դո՞վին հըրցընում ա, թա վըերդե՞ղ ա հոքիտ, հինչավ ը՞ս ապրում, ասե, նոր ես քըզնըհետ կապըըեմ: Տա թա՝ հոքիս էվո՞ւլին մաչին ա: Ախճիգյը թա՝ սուտ ըս ասում, տա թա՝ էսհինչ շո՞ւշին մաչին ա: Ախճիգյը էլլա թա՝ սուտ ըս ասում: Վերչը, տա թա՝ էս ծուվան վըեր անց ըս կենում, ծուվըեն էն դոլին մին թաքավըրրու երգյիր կա, էտ երգյիրա՞ն էն դոլը էրկու քըերծ կա, էտ քըերծըերը քյինա՞մ ըն կյամ, ո՞ւրո՞ւր նի կյամ, հըռանում, նորից մուտանում, նորից հըռանում. Էտ

քըերծեն էն ղոլին մին ջեյրան կա, տրա փորումն էլ մին յա̀շիգյ կա, յշիգյումն էլ իրեք ծըետ, իմ հոքիս հենց էտ իրեք ծըտըերն ըն, տահանք քանի վըեր ապրում ըն, ես էլ նիըտնեն ապրում ըմ, տահանք հենց վըեր ըստըկեցեն, յա ըսպընեցեն, էս էլ նիըտնեն մըեռած ըմ:

Շահ-Մուրադը վըեր քյինա̀մ ա տըեսնում ո̀ւրա̀ն ախպըերքն ո̀ւրա̀ն եշալ չըն, հղե յըն իլա̀լ քյեցալ, ետ ա տըեռնում, կյամ: Ախճիգյը կյամ ա տըըան ասում, վըեր էտ դո̀վըեն հոքին էսիինչ տըեղն ապրող ջիյրա̀նըեն փորումն ա, յիշիգյին մաչին ապրող ծըտըերեն անում: Շահ-Մուրադը թիռչըկան ծին նստում ա, ծովն անց կենում, քյինա̀մ տո̀ւս կյամ էտ թաքավըերեն երգյիրը, թաքավըերեն անա հըրցընում, թա հիշտե՞ղ ա էսիինչ սարը: Թաքավըերը տրան հըրցըփորց ա անում, դյո̀ւղո̀ւմ վըեր տա ո̀ւրա̀ն ըխճըկանը փըխճըցընող տղան ա: Տա թա վըեր ըխճըկանըս կըրեցալ ըս փըխճըցընըես, քեզ հալալ, ամմա էտ սարը քյինողը ետ չի կյամ, իմ զորքաս հիշքան մարթիքյ ըն քյեցալ, վըեչ մինը ետ չի եկալ: Տա թա՝ ես քյինամ ըմ: Թաքավըերը նան ո̀ւրա̀ն  մարթիքյը օզում ըն վըեր թողըենվուչ, տա թա՝ չէ՛ , վըեր չէ՛ , ես պիտի քյինամ: Թաքավըերը նան ո̀ւրա̀ն մարթիքյը թա՝ սա պել ա, չընք ետ տանք, քյինամ ա, թող քյինա̀:

Շահ-Մուրադն ո̀ւրա̀ն թիռչըկան ծին նստում ա, քյինա̀մ էտ էրկու սարըեն ղաթավը քամու մնան անց կենում, տո̀ւս կյամ ջիյրա̀նըեն կոշտը, նիետը կոըն անում: Ջեյրանը հիշքան օզում ա, վըեր տրան պուզըպըտոկ անըե, ըսպանըե, կարում չի, դո̀ւղա̀րն ա քցո̀ւմ, շատ տիժա̀ր ջիյրանըեն ըսպանում, փորը ճըղում, յա̀շիգը տո̀ւս օնում կոտրում, ծըտըերեն մինն ըսպանում: Տա վըեր մին ծըետն ըսպանում ա, դո̀վն ո̀ւրա̀ն տանը օժը խիլլա̀ թո̀ւլըցընում ա, ըռանգյը սիփա̀ռհիո̀ւմ, բո̀ւրդա̀ն մաննը կծում ա, գյո̀ւղո̀ւմ պենը հինչումն ա, թաքավըերեն ըխճըկանը թա՝ ես իտի դա̀լա̀թ ըըած չի, ըըե, իմ սիրն ու սեկրետը պիտի քեզ սաած չինիմ, ըսեցե, լիհա̀ հունց ինի, վըեր ծըտըերեն մինը սաղ թողե, վըեր ես մենակ ինձետե կարեմ ապրեմ: Էտ վախտը Շահ-Մուրադը էրկուինջի ծըետն էլ ա ըսպանում, դո̀վը լափ ա հա̀լա̀ ինգյո̀ւմ: Մին ծըետն էլ յոր ա օնում, պիրո̀ւմ դո̀վին տանը պեց թողում, վըեր լիհա̀ տրանավ ո̀ւրա̀ն հետե ապրե, կարե վուչ մարթուցը վնաս տա, էտ մին ծըետն էլ ախճիգյն ա ըսպանում, դո̀վը հոքին փչո̀ւմ ա, մըեռնում:

Շահ -Մուրադն էտ ըխճըկանը յոր ա օնում, տինո̀ւմ թիռչըկան ծիյին

յիրա, քյինյմ տհուս կյամ հուրյն հորը երգյիրը: Թաքավըրը պիրում ա քառասուն տղորանցը հրսանեքյը օխտը օր, օխտը քշեր անում, տահանց փսակում, Շահ-Մուրադեն էլ թաքավըր տինհում, ախպըրերքն էլ կյամ ըն Շահ-Մուրադեն վըեններն ինգյհում, թա՝ մին դյլյթ ա, ըրալ ընք, տիմյցալ չընք չերը քու կյալըտ, մըեզ բախշի, մունք ընք մեղավըր:

## 18.ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՏՂԵՆ ՆԱՆ ՔԸՉԱԼԵՆ ՆԱՂԼԸ

Մին թաքավըրու տղու խոխեքյն ասում ըն՝ հյր չօնես: Տա քյինյմ ա հուրյն տատեն կոշտը, հըրցընում, տատը թա՝ քու հյր էսհինչ երգյիրումն ա: Տղան կոզի կուճուր, շատ դուվաթավ ա ինհում, վըեր քարեն հոփ տար, ճհուր տհուս կըքըցյր. ասում ա.- Ծիս, մինգյել զենքերըս ինձ տուվեքյ, քյինյմ ըմ հորըս շոռ կյամ, քթենյմ: Ծին յիհյրհում ա, զենքերը կապում, քըթեն թուշավը հըղե ինհում, քյինյմ, վըեր հորը շոռ կյյ: Շատ ա քյինյմ, թա խըրեզյ, մին քչալու վա պըտահում, հըրցնում, թա հիշտե՞ղ կա խմելի ճհուր: Քաչալը թա՝ ըստեղաս մոտե ճիրավըեր կա, պիտի քյյնդիրը մինան կապենքյ, նի մըննե վիղըյվը տհուս օնե:

Քաչալը թաքավըրեն տղեն քյինդիրավ կապում ա, վեղըյն տինհում ծեռքեն, վըեր նի մըննե ճհուր տհուս օնե: Հենց վըեր տա հսնում ա ճիրըվըրեն տակը, քաչալն օզում ա, վըեր տհուս չօնե, թողե ճիրըվյըերումը, ծին յոր օնե, քշի քյինյ: Թաքավըրեն տղան դաչանք ա անում, թա վըեր տհուս օնես, ծին քեզ ըմ տըլական: Քաչալը տըրան տհուս ա օնում, ծին նստում, քյինյմ մին հեռու տեղ շորերը փոխում, հըղե ինհում թաքավըրեն կոշտը, ասում, թա՝ ես ըմ տղատ: Իսկ թաքավըրեն տղան տրան հըղեննի պտահում ա, առաչ ճինյնչհում չի, ետնան, վըեր բիրյդի քյինյմ ըն թաքավըրեն կոշտը, էտ քաչալը թաքավըրեն վըեր ասում ա ես ըմ տղատ, տա ամեն հինչ կլհիս ա ինգյհում, բայց սուս ա անում:

Էտ վախտը թաքավըրն հուրյն մոտե մարթուցը հըվաքում ա, թա էսհինչ ծուվեն դրաղեն մին հհուրի-փյրի ախճիզյ կա, քյինյլ պիտիքյ հինչ ջուռա օզում ա ինի, պիրիքյ: Վըեչ մինը ռիսկ չի անում, էտ տղան թա՝ ես կըքյինյմ: Տրան զորք, ծի յըն տամ, զենքերն էլ նիետը: Եր ա ինհում ծին, զորքավը քյինյմ, վըեր էտ ըխճըկանը պիրի: Շատ ըն քյինյմ, թա խըրեզյ, վըեր հըսնում ըն մին կըրմունջու, տեսնում ըն մըչըմննեն քյարվան կապած կըմունջավն անց ըն կենում: Ջորքն օզում ա թա կոխ տա-քյինա, տա

թողում չի: Ջորքը վըենն ա կըցընում, ասում.- Տահանք էլ ըն ըստուծեն ըստեղծածը, թողեքյ քյինա̈ն ապրեն: Մըչըմններեն քյարվանը վըեր անց ա կենում - պըրծընում, զորքն օզում ա թա կարմունջն անց կենա: Էտ վախտը մըրչըմններեն քըմակե թոբունան մին սա̈ս ա կյամ, թա հարկավըեր ընք կյիլա̈կան:

Մին խիլլա վըեր քյինամ ըն, տեսնում ըն մին յուղունեգյու ճոտ հըղըցումը վըեր ինգյա̈ծ: Օզում ըն թա կոխ տան-անց կենան, տա թողում չի, յուղունեգյին ճոտը յոր ա օնում, ծեռքան թող անում, թըռոչըցնում: Թըռոչըցնելիս մարը կյամ ա, թևերը թափ տալավ, սա̈ս ընելավ, ճոտեն կըլխավն անց կենում, ճոտը թա՝ մամմա, մամմա, սա յա ինձ ըզադալ:

Ջորքն էլ ա քյինա̈մ, հսնում ծուվեն ղրաղը, տեսնում մին ծո̀ւկուն ցըմաքումը վըեր ինգյա̈ծ, օշը տարած, օզում ա թա լիհա̈ ըստակե: Օզում ըն, թա կոխ տան անց կենան, տա թողում չի. յոր ա օնում, թող անում քցո̀ւմ ճո̀ւրը:

Խիլլա յել վըեր քյինա̈մ ըն, հսնում ըն թաքավըերեն ըխճըկանը պալատը: Ախճիգյը թաքավըերեն տղեն ասում ա.-Իրեք պայման ըմ տինո̀ւմ ըռաչիտ: Թա վըեր կըրեցեր կադարես, կյամ ըմ քեզ, թա չէ՝ չէ́: Առաչ մին չուվալ ցորեն, մինգյել մին չուվալ կորեկ ո̀ւրո̀ւր նհետ խառնում ա, ասում. - Պիտի ճոկես, ամեքյա ո̀ւրա̈նց չուվալն ածես լըցնես, ցորնեն չուվալը մին ղրաղեն տինիս, կորկենը՝ էն մին ղրաղեն: Տղան մտածում ա, թա հինչ անե, քշերեն կեսումը մըրչըմններեն քյարվանը կյամ ա ճոկում, տինո̀ւմ ղրաղ, քյինա̈մ:

Ետնան ախճիգյը մին մեյդ ա պո̀ւրո̀ւմ, մաչան շախկա տամ, կուտուր-կուտուր անում, թա պիտի ո̀ւրո̀ւր անես, սըղըցրնես, քշըրհանա յել կյամ, տեսնամ կոխկետ նստած, քըզնըհետ զրո̀ւց ընելիս: Տղան պո̀ւրո̀ւմ ա էտ մեյդին կտուրանքերն ո̀ւրո̀ւր անում, աշկերը տինո̀ւմ ուրանց տեղերը, տեսնում ճոխտն էլ շիլդի յըն: Էն յուղունեգյը, վըեր ո̀ւրա̈ն ճոտեն էտ տղան ըզադալ ա, կյամ ա, ասում. - Աշկերը փոխե, թեփուռաս մինը պուկե, քսի աշկերը, սըղըննական ա: Տղան տի յել անում ա: Քշըրհանան ախճիգյը կյամ ա, տեսնում մեյդը նստած, տրա նհետ զրո̀ւց ընելիս: Ախճիգյը տղեն հրցնում ա, թա՝ դո̀ւզն սաւե, ինձ քըզետե յը̑ս օզում տանես, թա չէ: Տղան թա՝ ինձետե յըմ օզում տանեմ: Ախճիգյը հըվատում չի:

Էքյսի օրը ախճիգյը մին մուտանա յա պո̀ւրո̀ւմ, քցում ծովը, տղեն թա

տ՞ւս պիտի օնես: Տղան ծուվեն դրադեն մենակ վըեննը կացած, մտածում ա, թա հինչ պիտի անե, բ՞ւրդ՚ն էն ծ՞ւկունը մուտանան կծած, պ՞ւր՞ւմ ա տամ ՞ւր՚ն:

Տղան ըխճըկանը յոր ա օնում, քյին՚մ հորը կոշտը, տեսնում էն մարթին քց՚ծ մին ճոկ օթաղ, եշում ըն, վըեր ինքըը կյա: Տըեղ հ՚րն ասում ա. - Մտկըրներումըս տպված ա իլ՚լ, վըեր սա մըեր տղան չի: Տղան ըսկըսում ա կըլխավն անցկացածը նաղլ անելը: Տըեղ կըլ՞խ ըն ինգյ՞ւմ, վըեր թաքավըերեն տղան հենց տա յա: Պ՞ւր՞ւմ ըն էտ քըչալեն ծիյին քըմական կապում, քաշ-քաշ անում, ըսպանում, տղեն էլ ըխճըկանը նհետ փսակում:

## 19.ՄՈՒՆՔ ԻՎԻԼ ԸՆՔ

Մին տղա վըեր շատ մծանում ա, մարը սաղ օրն իրեսնըյեր խոսում ա, թա խե՞ չըս փսակվում: Տա թա՝ ա՛ մար, ըխշարքես կնանեքյը լոխ փուչացած ըն, վըեչ մինն էլլա ՞ւր՚ն հ՚լին չի, հունց փսա՞կվեմ: Մարը թա՝ չորս ըտըժանե մին տոն շինի, ես քաշի ըտաժումը կապրեմ, տուք կըպիցր՚նաք չորսինջի ատաժը, կնզանըտ ընդեղ կըպահես, ես ըստեղ քյին՞ղ -կյըվողեն կըեշիմ, վըեչ մին պեն էլ կարել չի անե: Տղան տի յել անում ա: Հենգյ ըտըժանե տոն ա շին՞ւմ, քաշի ըտաժումը մարն ա կենում, ինքյն էլ փսակվում, պիցըր՚ն՞ւմ չորսինջի ատաժը: Կնզանը թողում չի, վըեր ընդեղան քշանա, մարն էլ թողում չի, վըեր քյին՞ղ-կյըվող ինի:

Մին քանի ամես էտ կնեգյը տըեղ ապրում ա: Մին օր էլ եշում ա, տըեսնում ՞ւր՚նց տանան խիլլ՚ հեռու մին այբեջ՚ռ օվշար մարթ, աշկեն մինն էլ քոռ, համ պատ ա շարում, համ նուխուղ ա ջուբան մին-մին տ՞ւս օնում, թող անում, քց՞ւմ պեր՚նը: Կնզանը մտկավն անց ա կենում, թա հինչ ջուռա յել օզում ա ինի, էտ օվշարեն պիտի պիրիմ կոշտըս:

Էքյսի օրը կնեգյը սոտ տըեղան հիվընդանում ա: Վըեր տրա հ՚լը հըրցընում ըն, տա թա՝ ինձ էսիինչ տատմարը կըկարե ճար անե: Տըտմարեն ծեն ըն տամ կոշտը, վըեր մենակ ըն մնամ, տ՞ւս ա օնում քսան վըեսկե տամ, թա հինչ ջուռա. օզում ա ինի, էն քոռ օվշարեն պ՞ւր՞ւմ ըս կոշտըս: Տատմարը հրցընում ա, թա պա հո՞ւնց, տա թա՝ ես հ՚լ՚ սուտըսոտ էրկան կըհիվընդանամ, տու ճիլլը-ճելլի կըքյինաս-կյ՚ս, ետնան էլ քեզ կըքուչըցնեմ ըստեղ, էն ուվշարեն կըտինիս սընդողումըտ, հըմբալեն

շելա̀կ տալ տաս, պիրիս ըստեղ։ Տի յել անում ըն։ Տատմարը վըեր շատ քյինամ ա կյամ, մին օր էլ թա՝ արտեն վըննըհան ըմ իլա̀, իլա̀ծ- չիլածըս մին քանի լանթ ա, մինգյել մին սանդող, թող հվաքեմ, պիրիմ կնգանըտ ութաղեն մին բուրջը՝ մինչև կըլո̀ւվըցընեմ։ Մարթը թա՝ պո̀ւրո̀ւմ ըս, պեր։

Տատմարը քյինամ ա էտ քոռ ուվշարեն տինո̀ւմ ո̀ւրա̀ն սնդողումը, իըմբալեն շելա̀կ տալ տամ, պո̀ւրո̀ւմ տո̀ւս օնում չորսինջի ատաժը։ Մարթը վըեր սանդողը տըեսնում ա, կլխու վա ինգյո̀ւմ մաչին հինչ կա. տոնը-տեղը թողում ա, կլո̀ւխ յոր օնում, քյինա̀մ, վըեր կորչի։ Շատ ա քյինա̀մ, թա խրեգյ, տո̀ւս ա կյամ մին դո̀ւզ տըեղ, պիցըրա̀նո̀ւմ մին ծառ, օզում ա չորս ընգյո̀ւնին եշի, տըեսնա հինչ կա, հինչ չի կա։ Ծառան կլխուվըեր եշում ա, տըեսնում տափեն տական ա, թա հիշտըղա, մին ախճիգյ, մինգյել մին շատ դա̀շա̀նգյ տղա տո̀ւս եկեն, մտեն ծառեն տակը… Խիլլա վըեր անց ա կենում, էտ տղան քյինա̀մ ա, մինգյել էրկու մազ ո̀ւրա̀ն ա քաո̀ւմ, մին այբեջառ օշափ ա տո̀ւս կյամ, կյամ ըխճըրկանը կոշտը… տահանք վըեր ըսկըսում ըն քիսի-փիսի անելը, տա կլխու վա ինգյո̀ւմ, վըեր էտ օշափը ըխճըրկանը մարթն ա, էն ջա̀հիլ տղան էլ սիրա̀կանն ա։ Տրանա ետը օշափը քունավ ա հնցընում, ախճիգյն էլ իլլիթ-վիլլա̀թ ա ինո̀ւմ , էլ ուրվամ չի։ Տա ծառան վըեր ա կյամ, ուշափեն զո̀ւրթնըցնում, թա տու իմ մըեծ ախպըերըս ըս, իմ դարդըս էլ քու դա̀րդա̀տ ա, եք հիշտեղ քյինա̀լի ինինքյ, մին տըեղ քյինա̀նք, հինչ վըեր ընելի ինինքյ, բիրա̀դի անենքյ։ Օշափը մնամ ա զըրմացած։ Հըրցընում ա, թա պենը հինչումն ա՞, տա, թա՝ եք քյինա̀նք մըեր տոն, լոխ նաղլը կանեմ։

Օշափը տրա նիետ քյինա̀մ ա ո̀ւրա̀նց տոն։ Մարթը, թա՝ ա՛ կընեգյ, վեց իոքու պադրաստություն ըս տըեսնում։ Կնեգյը տի յել անում ա։ Օշափը նան էտ մարթը վըեր ըստոլեն կոխկեն նստում ըն, տա ուշափեն թա՝ մազերը ո̀ւրո̀ւր քսի, կնեգյըտ կյա̀։ Օշափն էրկու մազ ո̀ւրո̀ւր ա քաո̀ւմ, կնեգյը տո̀ւս ա կյամ կոխկը։ Էտ մարթն ուշափեն կընգանը, թա մազերն ո̀ւրո̀ւր քսի, էն ջահիլ տղան կյա̀։ Տա թա հի՞նչ մազ, հի՞նչ տղա, նա յել թա՝ լա̀վ, արտեն ամեն հինչ գյո̀ւղո̀ւմ ըմ, քսի, թող կյա̀։ Տա մազերն ո̀ւրո̀ւր ա քաո̀ւմ, էտ ջա̀հիլ տղան տո̀ւս ա կյամ կոխկը։ Ետնան էլ թա՝ ա կնեգյ, դե մեհենգյ տղըմարթու մնան սանդողը պեց ըրա։ Կնեգյը սանդողը պեց ա անում, ըընդողան էն քոռ օվշարը տո̀ւս ա կյամ, կնգանը կոխկեն նստում։

Էտ մարթը ուշափեն թա՝ մունք արտեն ըստեղ իվիլ ընք, եք կլո̀ւխ յոր օնենքյ, կորչինքյ։ Էտ մարթը նան օշափը կլո̀ւխ ըն յոր օնում, քյինա̀մ կորչում։ Տահանք մնամ ըն տըեղ քյեփ ընելիս։

20.ՔՅԻՆՃ ՀՈՒՆՑ ՏԵՂ, ԳՅՈՒԴՈՒՄ ՉԸՄ ՀԻՇՏԵՂ

Մին ջա̈հիլ տղու շատ ղա̈շա̈նգյ նշանած ա ինո̈ւմ: Թաքավըրը էտ ըխճըկանը խլո̈ւմ ա տղեն ձեռքան, համ էլ օզում ա տրա կըլո̈խն ուտե: Տղեն ձեն ա տամ, պո̈ւրո̈ւմ կոշտը, ասում.

Քյինա̈ ընդեղ,
Գյո̈ւղո̈ւմ չըմ հիշտեղ,
Քյինա պեր ինձ
Գյո̈ւղո̈ւմ չըմ հինչ:

Տղան ճարը կըտըրած, հըղե յա ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ ա քյինա̈մ, թա խըրեգյ, մին վըեսկե սար ա կյամ առաչը: Թխում ա, սարը ճղում, նի մըննում մաչը, տեսնում մաչան էն ղոլն էլ ա վըեսկե: Էտ վըսկեղանը լըխ պեռնում ա, պո̈ւրո̈ւմ տամ թաքավըրեն: Թաքավըրն ասում ա.-Չե՛, տա իմ ասածը չի:

Տըղան նորըմինան ա հըղե ինո̈ւմ, քյինա̈մ մին օրիշ հեռու երգյիր: Էս դո̈նո̈ւմ մին ըլմաստե սար ու վա տեմ ինգյո̈ւմ: Սարը ճղում ա, էտ ըլմըստեղանն էլ սաղ պեռնում, պո̈ւրո̈ւմ տամ թաքավըրեն: Թաքավըրը նորից թա՝ չէ՛, տա իմ ասածը չի, քյինա̈ իմ ասածը պեր:

Վերչը, էտ տղան շատ տեղեր ա քյինա̈մ, շատ թինգյա̈կան պեներ ա թաքավըրեն հետե պո̈ւրո̈ւմ, թաքավըրը միշտ էլ թա՝ չէ', էտ իմ ասածը չի, քյինա̈ իմ ասածը պեր:

Տղան նորից ա հըղե ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ ա քյինամ, թա խըրեգյ, հըսնում ա մին ճուղնըճողնը տեռնող հըղըցու: Ըտեղ էլ նըղացած-վըենն իլա̈ծ նի յա մըննում ըտեղ: Մարթ-մուրթ չի ուրվամ,մենակ մին պըռավու սա̈ս ա ըսկանում: Էտ սա̈սը էտ տղեն հըրցընում ա, թա հո՞ւ վըս, հինչ ը՞ս,ըստեղեքյ հինչ ը՞ս անում՞: Տղան թա՝ մըեր թաքավըրը ինձ իստի տեղ ա ղարկալ, ասալ ա.

Քյինա̈ ընդեղ,
Գյո̈ւղո̈ւմ չըմ հիշտեղ,
Քյինա̈ պեր ինձ
Գյո̈ւղո̈ւմ չըմ հինչ:

Էտ պըռավեն սա̈սը թա՝ հա̈լա̈ նըղացած, սոված կինիս, նըստե դին-ջա̈ց, հաց կեր, ետնան տեսնանք՝ հինչ ընք անում: Պառավը սա̈ս ա անում. -Դո̈ւղո̈ւ , դո̈ւղո̈ւ , ճելլի եք ըստեղ: Դո̈ւղո̈ւն էլ հինչ վըեր մին դուշ ա, վըեր

ուրվամ չի: Մըխըրե կենում ա, թա՝ դո՞ւղո՞ւ, էս ըռիաթըս մին մըեծ ըստոլ սարքե, ո՞ւրա՞ն ամմեն պադրաստությունավը: Տղան եշում ա, տեսնում ըստոլը ըռաչին, ամեն հինչը յրան լիգյը: Օտում ա, խըմում, պըրանվում քոն ինում քուշտանում, եր կենում:

Տղան նորից պըռավեն սա՞ն ա ըսկանում: Պառավն ասում ա. - Բա՛լա, տու գյո՞ւղո՞ւմ չըս պենը հինչումն ա: Թաքավըրերն օզում ա կըլխըտ օտե: Տղան թա՝ պա հինչ ա՞նեմ: Պառավը թա՝ վըեր հըղե ինիս քյինա՞ս, դո՞ւղո՞ւն քըզնըհետ ըմ տիննա՞կան, հիշտեղ վըեր նեղ տեղ ինգյիս, հինչ վըեր օզես, հըսցըննական ա:

Էտ տղան հըղե յա ինո՞ւմ, քյինա՞մ: Դո՞ւղո՞ւն առանց ուրվալի, տղեն նիետ դըբընքասմա քյինա՞մ ա: Շատ ա քյինա՞մ, թա խըրեգյ, ինգյնո՞ւմ ա մին մթեն ախշարք: Մին տոն ա քըթենո՞ւմ, նըստած ա ինո՞ւմ մին պառավ մարթ: Էտ մարթն էլ էն պըռավեն նըհետ կապված ա ինո՞ւմ, ամեն հինչ արտեն գյիդա՞լիս ա ինո՞ւմ: Մին թո՞ւլթա՞գյ էլ տա յա տամ, ասում. - Վըեր նեղ տեղ ինգյիս, մարթ ինի հարկավըեր, թո՞ւլթա՞գյը վըեր յիրա՞ անես, ըսկըսե դըլըդըլե ընելավ քյինա՞լը, հիշքան մարթ օզես, կյիլա՞կան ըն կոշտըտ:

Էտ տղան դուշն ան թո՞ւլթա՞գյը եր կալած քյինա՞մ ա: Շատ ա քյինա՞մ, թա խըրեգյ, մին ծմակու մաչ ա ինգյնո՞ւմ, ծմակեն տեմն էլ մին մըեծ ծով ա ինո՞ւմ, էն մին տեմն էլ մին մըեծ քըերծ, ծըմակումն էլ մին հըլիվուր մարթ ա ինո՞ւմ նստած: Էտ մարթն էլ ա նըհանցա ինո՞ւմ (էն մին մըեծ մարթին ան պըռավեն ընգյո՞ւնա՞ն): Տա յել ա գյո՞ւղո՞ւմ տղեն կըլո՞խը եկածը նան կյիլա՞կանը: Մին կացեն էլ տա յա տամ էտ տղեն, համ էլ ասում.- Թա վըեր նեղ տեղ ինգյնիս, քընդիլի, յա շինիլի, կուտըըելի յա փշրելի պեն ինի, կացնեն վըեր ասես, ինքյը ամեն հինչ ըննական ա:

Տղան դուշը, թո՞ւլթա՞գյը նան կացենը եր կալած քյինա՞մ ա տո՞ւս կյամ ո՞ւրա՞ն թաքավըրերեն վըեղը, հենց էտ թաքավըրերեն քըղաքան խիլլա մոտե տեղ օզում ա թաքավըրերեն պըլատան մին շատ մըեծ պալատ շինի: Դուշին ծեն ա տամ, թա՝ քըզանա օզում ըմ սաղ մատերիալը, թո՞ւլթա՞գյը յիրա՞ յա անում, դըլըդըլե ընելավ վըեր քյինա՞մ ա, ասում ա.-Քըզանա յել օզում ըմ պըլատեն յիրա՞ պեն անող էնքան մարթ, վըերքան վըեր հարկավըեր ա: Կացնեն էլ ասում ա.-Քըզանա յել օզում ըմ կտրելի, կուտրելի, քընդիլի-շինիլի, պալատը վըեննը կըցընելի սաղ պենը:

Դուշը, թո՞ւլթա՞գյը, կացենը ամեքյա ո՞ւրա՞նց պենը տեսնում ըն, մին

քանի օրումը պալատը շինո՛ւմ, վըեննը կըցընում:

Խաբարը հըսնում ա թաքավըերեն, թա վըեղումըտ իստի մին մարթ ա տո՛ւս եկալ, քըղաքատ մոտե իստի մին պալատ ա շինա՛լ, վըեր քու պըլատետ յիրա՛ շոք կանե:

Թաքավըերը ո՛ւրա՛ն զորքը յոր ա օնում, քյինա՛մ պըլատեն կոխկեն վըեր կյամ, եր ինո՛ւմ մին պեցո՛ւր տեղ, էտ տղեն ծեն տամ: Տղան տո՛ւս ա կյամ աշկար: Թաքավըերը տրան ճինա՛նչո՛ւմ ա, հըրցընում. - Պենը հինչո՞ւմն ա, վըեր տու կըրեցալ ըս իմ պըլատան մին քանի կըլո՛խ լա՛վ պալատ շինիս, ես կարում չըմ: Էտ տղան թա՝ իմ օժը ժողովուրթումն ա, ես լոխճինին նըհետ էլ կապ օնեմ, լոխ ինձ քյո՛մա՛գյ ըն անում, տու հի՞նչացու վըս: Թաքավըերը թա՝ վըեր տի յա, եք կըռն աննըքյ: Տղան թա՝ լա՛վ: Թաքավըերը ո՛ւրա՛ն զորքն ա տո՛ւս օնում, տղան էլ թո՛ւթա՛գյը զըլըզըլե անել ա տամ, թաքավըերեն զորքան մին սո՛ւրո՛ւ հետ շատ զորք տո՛ւս օնում: Դուղո՛ւն էլ տահանց ամեն հինչն ա հըսցընում, կացենն էլ ըսկսում ա կուտրատել, փըշըրոտել: Վերչը, թաքավըերեն զորքեն խռեգյ ա տամ, թաքավըերեն էլ ըսպանում: Էտ տղան տեռնում ա թաքավըեր:

## 21.ՋԻՅՐԱ՛ՆԵՆ ՍԱՐՈՒՄԸ

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին թաքավըեր: Տրան իրեք տղա յա ինո՛ւմ: Մըռնելան առաչ տղորանցն ասում ա.-Հինչ տըեղ էլ քյինա՛ք, էսհինչ սարն անց չի կենաք: Հա՛րը վըեր մըեռնում ա, մըեծ տղան ասում ա.- Քյիննա՛կան ըմ տըեսնամ էտ սարումը հի՞նչ կա, վըեր մեր հա՛ր ասալ ա քյինա՛ք վուչ: Մին օր էլ տա հղե յա ինո՛ւմ, քյինա՛մ: Եշում ա, տըեսնում մին ջեյրա՛ն էտ սարումը: Օզում ա թա ջիյրա՛նեն ըսպանե, փախճում ա, մին հըսարու կըլխավ լոք տամ, անց կենում: Տղան հետան քյինա՛մ ա հասարն անց կենում, մին մարթ ա տո՛ւս կյամ, տրան խա՛փո՛ւմ, տանում մին օթաղ, կլո՛խը կտրում, քցո՛ւմ պաղվալը:

Էքյսի օրը մաշնակ ախպըերը եշում ա, տըեսնում մըեծ ախպըերը ետ կյամ չի, հետան քյինա՛մ ա, հա՛մա՛ն տըեղն էն ջեյրա՛նը պըտահում ա, օզում ա ըսպանե, ջեյրա՛նը հըսարեն կըլխավը լոք ա տամ, անց կենում, մարթ տըեռնում, կյամ տրան էլ խա՛փո՛ւմ, տանում կլո՛խը կտրում, քցո՛ւմ պաղ-վալը:

Մին օրան ետը կուճուր ախպըերն ա քյինա՛մ էտ սարը, հա՛մա՛ն

ջեյրանը տուն ա կյամ, նիետը կռն ա անում, թխում ջիյրաննեն կլոխը յարալու անում: Ջեյրանը փախճում ա, հըսարավը լոք տամ, անց կենում, թաքավըրեն տղան էլ հետան: Տա եշում ա, տըեսնում մին մարթ կլոխը կապած տուն եկավ ուրան առաչը: Տղան դաստին կլոխ ա ինգյում, վըեր սա էն ջեյրանն ա, ուրան ախպորցը սա յա ըսպանալ: Էտ մարթը տրան ասում ա,-Եք տոն, կընստես դինջանաս, նի կըմննես համամը, մին լավ լըղանաս, տուն կըկյաս հաց օտես, չայ խմես, ետնան քյինաս: Տա թա՝ տըես հըմամեն ճուրը տաք ա՞, նի մննեմ լըղանամ: Էտ մարթը վըեր ծըեռքը տանում ա, թա տըեսնա ճուրը տաք ա, թաքավըրեն տղան շաշկան դաստին տուն ա օնում, տրա կլխեն թխում, ըսպանում: Կլխեն վըեսկուռեն կեսը կըտըրվում ա, կեսը մնամ:

Վըեսկուռնեն հըվաքում ա, տանում հըսարան տուն քցում մին փոս, տներեն պիլանիքյը ջուբան յոր օնում, քյինամ պադվալը պեց անում, տըեսնում ուրան ախպորցը կըլխըննեն տըեղ: Ետնան քյինամ ա ութըննեն լոխ պեց անում, տըեսնում հի՛նչ վըսկեղան, արծաթ, հի՛նչ հարստություն... վըեր տի տըեսնում ա, ասում ա.-Իմ հոր հարստությունան շատ ա, ըստըեղ մնամ, իվիլի լավ ա: Տանն էլ մին մաղար քուր ա ինում թողած, քյինամ ա յոր օնում, հորը հարստությունը, վըեսկեն, խազնան էլ լոխ պիրում տըեղ, ինքյն ամմեն օր քյինամ վըերս, քվորը թափշուր անում, վըեր հըսարան տուն չի կյա:

Մին քանի օր քուրը տուն չի կյամ, մին օր էլ ասում ա՝ տուն ըմ կյիլական, տըեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չի կա: Հըսարան տուն ա կյամ խիլլա քյինամ, տըեսնում մին փոսա մին մարթ ծեն ա տամ, թա՝ քո՛ւյրիկ, եք ըստըեղ, պեն ըմ ասում: Ախճիգյը մուտանում ա, տեսնում մին մարթ մին փոսու մաչի վըեր ինգյած. տա թա՝ քո՛ւյրիկ, ինձ քու ախպըեր ա շըշկավ թխալ, իստի ըրալ, էսիինչ տըեղը ճար կա, քյինա պեր քսի կլոխըս, լուվըցրու, հինչ ասես, կանեմ: Ախճիգյը քյինամ ա ճարը պիրում, քսում տրա կլոխը, լուվըցնում, էտ մարթը ըսկըսում ա տըեղեքյ թաքուն ապրելը, ախճիգյըն էլ ամմեն օր, ախպըերը վըերս քյինալան ետը կյամ ա տրա կոշտը, վերչը, տաիանք սիրահարվում ըն, թաքուն փըսակվում:

Մին քանի ամես վըեր անց ա կենում, էտ ախճիգյը պատճառնուր ա տըեռնում: Մին օր ախպըերը վըըսըտեղա կյամ ա, քվորն ասում ա՝ հենց ա տի պեն ինի, ինձանա կյեղում ըս: Քուրը թա յանի էս խոր ծմակումը հո՞ւ

կա, վըեր տի պեն ինի: Էքյսի օրը տա մարթին ասում ա, վըեր ախպըերը կլո̈խ ա ինգյա̈լ: Մարթը թա՝ եք ախպորըտ ըսպանենքյ, մունք ըստըեղ ազադ ապրենքյ: Տա թա՝ տու վըս գյո̈ւղո̈ւմ: Մարթն ասում ա. - Ես օգ ըմ տըռնըլական, նի մննեմ տանը մղակեն կլխեն պատը, վըեր ախպերըտ կյա̈, օզե թա նի մննե, կծըլական ըմ, ըսպանեմ:

Տահանք մինչև էտ պենը պըդրաստում ըն, ախճիգյը մին շատ դա̈շա̈նգյ տղա յա պիրո̈ւմ, թաքուն պերո̈ւր անում, պըտատած տանում հըղեցը վըեր քցո̈ւմ, հանցու վըեր ախպրերը կյա յոր օնե:

Ախպըերը վըրսըտըեղա վըեր կյամ ա, հըղըցեն դրաղան խուխու լացո̈ւ սա̈ս ա ըսկանում: Մուտանում ա խտտում, տանում տամ քվորը, քուրը թա՝ ես տրա պահողը չըմ, հիշտեղ տանում ըս, տար: Ախպըերը վըեր շատ ղաչանք ա անում, քուրն ասում ա. - Դե լա̈վ, պերա̈լ ըս, պերա̈լ ըս, յոր կոնեմ: Էտ տղան շատ ճելլի մըծանում ա, ուրեկանը տըրեկան ա տըեռնում: Տա մորուց էլ իմաստուն ա ինո̈ւմ ծնված: Արտեն վըեր մին քանի տարե անց ա կենում, դա̈յո̈ւն նիետ քյինա̈մ ա վըերս: Իսկ էտ ըխճըկանը մարթը մին օր օգ ա տըեռնում, նի մննում տանը մղակեն կլխե պատը, վըեր կնգանն ախպըերը կյա̈, կծե, ըսպանե: Էտ օրը վըրսըտըեղա կյա̈լիս քվորը տղան ասում ա. - Դա՛յի, դա՛յի, նըղացալ ըմ, ինձ ուսերետ նըստըցըրու, տար տոն: Դային տղեն ուսերեն նըստըցնում ա, տանում տոն, մղակավը նի մննելիս օցն օզում ա, թա տրա կլխան կծե, եշում ա, տըեսնում ո̈ւրա̈ն տղեն կլոխն ա առաչը կյամ, կարում չի կծե:

Էքյսի օրն էլ օցը նի յա մննում մղակեն տակե պատը, վըեր էտ տղեն վըեննան կծե, վըրսըտըեղա կյա̈լիս քվորը տղան հա̈մին տըեղը դա̈յո̈ւն ասում ա. - Վըեննը կաց, ըրկե տու վըս ինձ շիլա̈կալ տարալ տոն, սօր էլ ես պիտի քեզ շիլակեմ, տանեմ: Դային թա՝ քյինա̈ պենիտ, ես նըղացած չըմ, համ էլ տու կարել չըս ինձ շիլա̈կես: Տա թա՝ դա̈յի, տա քու պենըտ չի, տու եր իլ իմ շելա̈կըս: Դա̈յին եր ա ինո̈ւմ տրա շելակը, տա քյինա̈մ ա մըղակավն անց կենում, էս դո̈նո̈ւմ էլ օցն օզում ա թա տրա վըեննան կծե, եշո̈ւմ ա, տըեսնում ո̈ւրա̈ն տղան, էլ կծում չի:

Տրանա ետն էտ մարթն ո̈ւրա̈ն կնգանն ասում ա.-Մըեր տըղան կլո̈խ ա ինգյա̈լ, պա հինչ ա՞նենքյ: Մսլըհաթ ըն անում, վըեր խուրագյին մաչը ճար քցին, ախպորը ըսպանեն: Ուրո̈ւգյո̈ւնը վըեր էտ տղան վըրսըտըեղան կյամ ա, քուրը իրեք աման լըցած խորագյ ա պիրո̈ւմ, մինը տնո̈ւմ ախպորը

ըռաչին, մինը՝ տղեն, մինն էլ ո՛ւրա՛ն։ Ախպորն ամանը ճար քցած ա ինո՛ւմ։ Տղան տըեղ դա՛յո՛ւն դույուղ ա անում, վըեր իստի պեն կա, իմ հա՛ր էն օցն ա, վըեր ուզեցալ ա քեզ կծե, էս էլ իմ մար ա, սա յէլ մին քանի հետե ուզեցալ ա քեզ ըսպանել տա. եք ես իմ հոր ըսպանեմ, տու վըել քու քուվոր։ Տա ո՛ւրա՛ն հորն ա ըսպանում, դային էլ՝ քվորը։ Տրանա ետը տահանք թա՝ էլ ըստըեղ մնալի չի, թողենքյ, քյինա՛նք։

Տըեղետ իլըծ-չիլա՛ծը թողում ըն, հղե ինո՛ւմ, վըեր քյինա՛ն օրիշ երգյիր։ Քյինա՛մ ըն, քյինա՛մ, հսնում մին քըղաքու դրաղ։ Էտ տղան մին մըեծ ծառ ա պուկում, դա՛յո՛ւն ասում.- Տանենքյ ծախենքյ ապրենքյ մինչն գործ քըթենա՛լը։ Տանում ըն քըղաքումը ծախում, մին քանի օր յոլլա քյինա՛մ, տրանա ետը հըրցըփորց անում, թա ըտեղ հո՞ւ ո՛ւրա՛նց նո՛քյա՛ր յոր կոնե։ Մին քանի հոքի տահանց ասում ըն էս քըղաքեն թաքավըերեն քառասուն նո՛քյա՛ր ա հարկավըեր, վըեր քառասուն ճորե ամմեն օր տանեն ծմական փաղ պեռնեն, պիրին։

Էտ տղան դա՛յո՛ւն թողում ա մին տան, ինքյը քյինա՛մ թաքավըերեն կոշտը։ Թաքավըերը երեսունինննը նո՛ւքյըրներեն նհետ տրան էլ ա յոր օնում, մին քանի օր նիըտնեն ճորեն տանում ա փաղ պեռնում, պիրո՛ւմ։ Մին օր էլ քյինամ ա թաքավըերեն կոշտը ասում. - Թաքավըերն ապրած կենա, ա՛մա՛լ չի կյա՞լ, վըեր էտ երեսունինննը հոքին ղարկես օրիշ տըեղ պեն անեն, ես քառասուն ճորեն մենակ կըտանեմ պեռնեմ, պիրիմ։ Թաքավըերը թա՝ լավ կինի։

Տա մին քանի օր քառասուն ճորեն առաչն ըրած տանում ա պեռնում, պիրո՛ւմ։ Մին օր էլ ծմակումը ճուրեննեն պեց ա թողում, ինքյը քունավ հնցընում, եր կենում, տըեսնում մին բա՛բո՛ւռ ճուրենուցը լոխճինին փրթէա՛ծ, կուխկըրներեն նստած օտում ա։ Բա՛բո՛ւռին փռնում ա,քառասուն ճորուն փաղը պեռնում, առաչը քցո՛ւմ, պիրո՛ւմ քաղաքը։ Քըղաքեն ժուղովուրթը լոխ տես ու տեն փախճում ըն, քյինա՛մ թաքավըերեն ասում.- էս հի՞նչ խթու մաչ քցեցեր մըեզ։ Թաքավըերն էլ մտածում ա, վըեր սա քշտիս կենա, կլո՛խըս ուտըլական ա, լա՛վն էն ա ղարկեմ հունց տըեղ, վըեր ետ չի կյա։ Տրան ծեն ա տամ կոշտը, ասում էհինչ երգյիրումը տասսը դո՛վեր ըն ապրում, տահանք ինձ խարջ ըն տամ, տասսը տըռնըվան խարջը հա՛լա՛ տուվալ չըն, քյինա՛ ինքյ կալ, պեր։

Տա բա՛բո՛ւռը քցո՛ւմ ա մին կյում, թաքավըերեն ասում. - Ըսպանեքյվուչ,

կթողեքյ կենա, մինչև ես կյամ։ Ասում ա, ինքյը հղե իննում դըվըերեն երգյիրը, տըեսնում տաhանք ղըզղընեքյը կրակեն տիրած, խորագյ իփիլիս, ըւրանք էլ կոխկեն նստոտած։ Տա վըեր դուվերեն մուտանում ա, նհանգա մինը թա պա՛հ, էսհի՞նչ լավ պեն ա, մրթավըետ ա կյամ, ղզղընոցումն էլ մըես չի կա։ Տա էտ դովին վըեր մեհետ թընթըլոշի յա տամ, օխտը հետ կըլըկոնձի յա տամ։ Մնացած դըվերն էտ վըեր տըեսնում ըն, վընըըծըրոքըրնեն տափան կտրում ա։ Էտ ա տըեռնում դըւվերեն ասում՝ էսհինչ թաքավըերեն տասսը տըռնըվան խարջը տուվեքյ, տանեմ։

Դովերը թա՝ մունք վըեչ մին թաքավըերու էլ խարջ չընք տամ, ծըեր թաքավըերը մըզըրա վըեչ մին խարջ էլլա տիրըն չի։ Տա դըւվըերեն առաչն ա անում, տանում ըւրանց քաղաքը։

Քըղաքեն ժուղովուրթը վըեր տասսը դըւվերեն տըեսնում ըն, վայվրուդը քցըւմ ըն, տըւս կյամ տես ու տեն փախճում։ Դովերը նի յըն մննում քաղաքը։ Տահանց նիփասան, մշմշոցան էլ հավ, հեյվան-պեն լոխ փախճում ըն։ Ժուղովուրթը քյինըմ ըն թաքավըերեն կոշտը, թա՝ ամման գյըւնըւլըւ, մըեզ էս ցավան ըզատե։ Թաքավըերը մին թըհրըվ դուվերեն քըմակավը ոխկավ մարթ ա ղարկում էտ տղեն կոշտը, վըեր ասե՝ դըւվերեն պեց թողե, քյինըն։ Էտ մարթը քյինըմ ա հեռու վըեննը կենում, ծեն տամ, ասում.- Թաքավըերն աս ալ ա՝ դըւվերեն պեց թողե, քյինըն։

Տա դըւվերեն պեց ա թողում, քյինամ ըն ըւրանց երգյիրը։ Տրանա ետը նի յա մննում կյումը, տըեսնում բըրըւռն ըստակած։ Քյինըմ ա թաքավըերեն կոշտը, թա՝ պա քեզ ասալ չը՞մ՝ բըրըւռն ըսպանեքյ վուչ։ Թաքավըերը թա՝ հինչ ա՞նենքյ, զըհմըվ պեն ա, վըեչ մինն էլլա ոխկ չի ըրալ մուտանա, ուտելի պեն տա, բըրըւռը սոված կացալ ա, ըստակալ։ Տա վըեր մեհետ թաքավըերեն վիզին թխում ա, կլըխը թռչըւմ ա։ Ժուղովուրթը հըվաքվում ըն, ասում՝ տրա պատասխանը տի պիտի ինի։ Տահանք հըրցընում ըն, թա պա հո՞ւ պիտի թաքավըեր ինի, էտ տղան թա՝ իմ դըյի էսհինչ թաքավըերեն տղան ա, թաքավըեր կացած ա, երգյիրը մենակ նա կըկարե կառավարե։ Քյինըմ ա դըյըւն պիրըւմ թաքավըեր տինըւմ, երգյիրը խըղաղվում ա, ամմեն հինչ բուլանում, ժուղովուրթն ըսկսում ըն լըվ ապրելը։

## 22.ՂԱՋՐԵՐ ՊԱՀՈՂ ՏՂԱՆ

Ինում ա, չինում մին մարթ, մինգյել մին կնեգյ: Տահանց էրկու տղա յա ինում՝ մինը շատ քյոք, մինն էլ շատ մաշված, ուրանք էլ շատ տիժա՛ր ին ապրում: Շատ բիզիրիլան ետն էտ մարթը մին օր տոնը-տըեղը հըվաքում ա, կլոխ յոր օնում, քյինա՛մ, վըեր շոռ կյա, լավ ապրուստ, ըխշադանք քթենա՛:

Մին քանի օրան ետը տուս ըն կյամ ծովու ղրաղ, տըեղ էլ մին մըեծ տոն ա պըտահում, մաչին էլ մարթ չի ինում կընալիս: Էտ մարթը կնեգյը նան խոխեքյը յոր ա օնում, նի մննում էտ տոնը, տըեղ կենում:

Հենգյ-վեց ամես վըեր անց ա կենում, մին մարթ ա կյամ, տրան թա՝ հի՞նչ իրավունքավ ըս նի մտալ իմ տոնըս, մաչին կենում: Էտ մարթը կարում չի տրա ջողոբը տա: Տնատարը թա՝ լա՛վ, դե վըեր տըեղ չօնես կընալի, տղորանցըտ մինն ինձ տո, տոնըս քե տամ: Էտ մարթը վըեր շատ մտածում ա, վըեչ մին պեն կարում չի ասե, տնատարը թա գյուղում ըմ, վըեր մաշված տղատ ըս ինձ տըլական, տամ ըս, տո, ես պիտի քյինամ հեռու տըեղ:

Էտ մարթը ճարը կտրած, մաշված տղեն տամ ա տրան: Տա յել տղան յոր ա օնում, քյինա՛մ: Քյինա՛մ ըն, քյինա՛մ, տուս ըն կյամ մին շատ հեռու երգյիր: Տղան հղեննի քամակ ա ինգյում, վըեր ըխպրան ճուր խմե: Մին դուշ կյամ ա տրա կլխավը թռչում, տղեն ասում.-Էտ մարթը քեզ տանում ա քյուքըրցնե, մորթե, օտե. քեզ քցըլական ա մին սընդողու մաչ, հացըտ, ճուրըտ ընդեղ տա, ամեն շեբեթ էլ սընդողեն դաթավը ծիծիյնըտ տուս օնել տա, եշի, թա տըեսննա հիշքա՞ն ըս քյուքացալ. տղերքատ մին վըխճարու լոլակ քթի, ծըեռքետ պահե, վըեր ասե ծիծիյնըտ նշանց տո, էտ լոլակը տուս կօնես, նշանց տաս. հունց ըրա, վըեր տու ուրա՛ն քյալա՛գյ կյաս. էսհինչ տըեղն էլ մին քարու տակե էրկու ծիյու մազ կա, էն էլ տուս կօնես, ջուբումըտ պահես, վըեր հարկավըեր ինի, ուրուր կըքսես, իրեղա՛ն ծին տուս ա կյիլա՛կան առաչըտ. էտ մարթին կլոխը վըրելան ետը կըքյինա՛ս ուրա՛ն կոխկե տոնը, նրա պատան վարար ճուր ա տուս քցում, տըեղ էլ մին լավ կըլըղանաս, լափ փուխվըլական ըս, ուժըղանաս, դիշինգյանաս:

Էտ մարթը տրան տանում ա մին հեռու տըեղ: Տրան մին տոն էլ ըստըեղ ա ինում: Էտ տղեն քցում ա մին սընդողու մաչ, ամմեն օր հացը, ճուրը էտ սընդողեն մին դաթավը տամ: Վըեր վախտ էլ կյամ ա, թա

ծիծիյնըտ տո̈ւս կալ տըեսնամ, տա վըխճարեն լո̈լակը տո̈ւս ա օնում, նշանց տամ: Տղան սընդողումը վըեր շատ կենում ա, էլ կարում չի տիմա̈նա, մին օր էլ ծիծիյնն ա տո̈ւս օնում, նշանց տամ: Էտ մարթը տըեսնում ա, վըեր տղան լա̈վ քյուքացալ ա, սանդողը պեց ա անում, տո̈ւս օնում, հանցու տանե քցե թուրունր, խըրավե: Խմոր ըրած ա ինո̈ւմ, օզում ա հաց թխե, թա̈ժա̈ հացավ տղեն խըրաված մըեսն ոտե: Տղեն տանում ա թուրունր, տեփը տամ ո̈ւրա̈ն, ասում՝ կըռաց հաց թխե: Տղան էլ թա՝ ես հաց թխած չըմ, գյո̈ւղո̈ւմ. չըմ հո՞ւնց ըն թխում, տու կռաց մինը թխե, ես էլ եշիմ, սուվըերեմ: Էտ մարթը պո̈ւլը ետ ա անում, քցո̈ւմ տեփ են յիրա̈, կռանում, վըեր թուռնեն պատան տա, տղան քռե յա տամ, տրան քցո̈ւմ թուրունը, էրում, ըսպանում: Տրանա ետը տանը տռները պեց ա անում, տըեսնում հինչ հարստություն, էլ վըեսկես վըե՞րն ա, արծաթըս, բրըլյանտըս վըերը, ըխշարքես տակեն հինչ թինգյա̈կան պեններ ասես, տըեղ կա: Մինգլել եշում ա, տըեսնում պատին մին ընգյո̈ւնան ճո̈ւր ա կյամ: Շորերը հանում ա, նի մննում էտ ճիրին տակեն լղանում, ամմեն հինչ փոխվում ա, ղավաթավ ա տըեռնում, իրեսը ղիշինգյա̈նում ա, մազերը կռուզնոտ, վըսկըքյա̈քյո̈ւլ տըեռնում:

Էտ տանը վըեսկան մին չամադան յոր ա օնում, հղե ինո̈ւմ, վըեր քյինա ո̈ւրա̈ն հորն ու մորը կոշտը: Հղեննի սուվըծանում ա: Եշում ա, տըեսնում մին չոբան վըխճարեն սո̈ւրո̈ւն քշած, պիրո̈ւմ ա: Չուբանեն մուտանում ա, պարյօր տամ, ետնան էլ թա՝ պա ես հղըցավուր մարթ ըմ, սուվըծացալ ըմ, վըխճըրներատ մինը մորթե, խըրավե,ոտեմ, հիշքան փող ասես, կըտամ: Չոբանը մին քյոք վըեխճար ա մորթում, կրակ անում, խըրավում: Տա ոտում ա, վըխճարեն հախը տամ, թափանը յոր օնում, թափ տամ, թարս իրեսեն յիրա̈ պրանում, կլո̈խը քաշում, հղե ինո̈ւմ, քյինա̈մ:

Հըղեննի մին ճեղաց ա պըտահում, քշտին էլ մին համամ: Թաքավըե-րեն ըխճըկեյքը կյամ ին տըեղ լղանում, քյինա̈մ: Էտ ըխճըկորանցան էլ էրկունը փսակված ըն ինո̈ւմ, մինը ա̈զա̈փ: Էտ տղան ճըղըսպանեն անա հրցընում ա, թա ըստեղ ինձ նո̈քյա̈ր չըն յոր օնել: Ճըղասպանը խաբարը հսցընում ա թաքավըերեն՝ թաքավըերն էլ ասում ա՝ եր կալիքյ, թողեքյ ղազերը պահե: Տրան ճըղացումը ղըզարած ըն յոր օնում, տանում ար ամմեն օր ղազերը պահում, պիրում:

Մին օր էլ եշում ա, տըեսնում թաքավըերեն ըխճըկեքյը եկալ ըն կյետը,

լղանում ըն: Տա թաքուն քյինա՛մ ա շո՜րերը հանում, վըխճարեն թափանը կըլխան տո՜ւս օնում, տըեռնում մին դա՛շա՛նգյ, վըսկըքյաքյո՜ւլ տղա, նի մննում կյետը, ըխճըկորանցը նհետ լղանում: Վըեր կյետան տո՜ւս ըն կյամ, թաքավըերեն կուճուր ախճիգյը քվորցը նհետ ասում ա. - էս քյիննա՛կան ըմ էտ տղեն: Քուվերքը տրա յիրա՛ ծիծաղում ըն: Խաբարը քյինա՛մ ա պալատ, պիրին-պերա՛ն անց կենում, հսնում թաքավըերեն, թա կուճուր ախճիգյըտ օզում ա քյինա ճըղացեն ղըըրածեն: Թաքավըերը կզըրվում ա, հրաման տամ, վըեր ըխճըկանը հարամ անեն, պըլատան տո՜ւս քցին: Տի յել անում ըն: Ախճիգյը քյինա՛մ ա էտ տղեն կոշտը, հա՛րը, մարը, քուվըերքը լոխ իրես ըն շոռ տամ, վըեչ քյինա՛մ ըն, վըեչ կյամ:

Հունց ա պըտահում, կոխկե երգյիրին թաքավըերը էս թաքավյըերեն յիրա՛ կռև ա եր կենում, կյամ ամմեն հինչ քըրըհող անում: Թաքավըերեն էրկու փըսենեն, թաքավըերը ամեքյա ո՜ւրա՛նց զորքավը տո՜ւս ըն կյամ, ճըխըպո՜ւրթ տըեռնում, զոռավ կըլխընեն պրծըցնում: Էտ տղան էլ ջուբան էրկու մազը տո՜ւս ա օնում, ո՜ւրո՜ւր քսո՜ւմ, հրեղան ծին ո՜ւրա՛ն վըեսկե յիհարավը, ջիլա՛վավը, զենքերավը, ամմեն հինչավը կյամ ա ըռաչին վըեննը կենում: Տա կլխեն թըփանեն կաշին յոր ա օնում թող անում, ծիյին յիրա՛ կապած շորերը կյենում, փափաղը տինո՜ւմ, զենքերը կապում, ծին նստում, քյինա՛մ կռև: Հիշքան ինքյն ա կտորում, էրկու էնքան էլ ծին ա կտորում: Էնքան ա կտորում, վըեր կռև եկած թաքավըերն ո՜ւրա՛ն զորքան մնացած մին քանի հոքին յոր ա օնում, փախճում, զոռավ կլո՜խը պրծըցնում:

Մին քանի օրան ետը էտ թաքավըերը նորըմինա՛ն ա զորք հըվաքում, եր կենում կյամ կռև: Էս մին թաքավըերեն փըսենեն ո՜ւրա՛նց զորքավը տո՜ւս ըն կյամ, նորից ըռնըճիճեխ տըեռնում, ետ տըեռնում:Էտ տղան յա մազերն ա ո՜ւրո՜ւր քսո՜ւմ, հրեղեն ծին կյամ ա կոշտը, նստում ա քյինա՛մ կռև եկած թաքավըրեն զորքը ճըխըպո՜ւրթ անում, էտ տըեռնում կյամ: Թաքավըերը գյո՜ւղո՜ւմ չի, թա տա հու՞ վա: Իրեքինջի դո՜նո՜ւմն էլ էտ թաքավըերը վըեր կռև ա կյամ, նորըմինա՛ն ա զոռ անում, էլլա էտ տղան կյամ ա տրա զորքը ետ տամ, կռվումը տրա կոռնը թխումն ըն, յարալու անում, թաքավըերը ո՜ւրա՛ն յալլախը տո՜ւս ա օնում, յարան կապում, ա՛րո՜ւնը վըեննը կըցընում:

Կռվան ետը թաքավըերը հիվընդանում ա: Հինչ անում ըն, անում չըն, կարում չըն լո՜ւվըցնեն: Թաքավըերն աում ա.- Վըեր բըխըրու մըես ինի, օտեմ, կլո՜ւվանամ: Փըսենեն քինյա՛մն ըն վըերս, շոռ ըն կյամ, վըեր բախրա

քթենա̀ն, ըսպանեն, կարում չըն: Էտ տղան քյինա̀մ ա մին բախրա վըեր քցո̀ւմ, կյեղում, մին վիրի էծ վըեր քցո̀ւմ տինո̀ւմ հղըցեն ղրաղեն: Թաքավըերեն փըսեննեն կյամ ըն տրան պըտահում, ղաչանք- պըղատանք անում, թա հինչ օզես, կտանք, մենակ թա էտ էծը մըեզ տո, իրըսնես օնենքյ, տանինքյ: Էտ տղան ասում ա.- Թուղեցեքյ տունդուվըրնըերետ յիրա̀ փիչա̀տ տինիմ, ծըեզ տամ, տարեքյ: Տահանք մտածում ըն, մտածում, փիչա̀տ տինիլ տամ, էծը յօր օնում, քինյա̀մ:

Թաքավըերն էծին մըսերը վըեր օտում ա, իվիլի յա ծընդըրանում: Շատ տըղերա յըն ամմեն հինչու մըես պիրո̀ւմ, օտումա, վըեչ մինն էլլա օքութ չի անում: Թաքավըերեն կուճուր ախճիգյը մին ըմանում բըխրեն մըսան շինա̀ծ խորագյ ա պիրո̀ւմ, հարն օզում ա թա ետ տա, կնեգյը թա լա̀վ, եր կալ,կոզի ինքյը փիս, քու հարազատ ախճիգյտ ա: Թաքավըերը յոր ա օնում մին քանի թիքյա̀ սրտըմա ինիլա̀վ օտում, լո̀ւվանում, ետնան կուճուր փըսեն ծեն տամ, տա ել ճոխտ մազերն ո̀ւրո̀ւր ա քսո̀ւմ, հրեղեն ծին ո̀ւրա̀ն շուրերավը նան զինքերավը կյամ ըն կոշտը, վըխճարեն թափանը կլխան տո̀ւս ա օնում թող անում, ծիյին մաշկը կապած շորերը կյենում, զենքերը կապում, ծին խըղըցնելավ քինյամ թաքավըերեն կոշտը: Թաքավըերը տրան հրցնում ա, թա՝ տու հու վը՞ս, տա թա՝ ես քու կուճուր փըեսատ ըմ: Ցարալու ծըեռքը ետ ա անում, ասում.- Էս քու յալլե՞խըտ ա, թաքավըերը թա՝ հա՛: Տա թա՝ սատանք քու փըսեննետ ըն, վըեր տունդուվըրնըերեն յիրա̀ փիչա̀տ ըմ տիրա̀լ, էծը տուվալ ո̀ւրա̀նց, պերալ ըն:

Վերչը, թաքավըերը հըվատում ա, վըեր տա ո̀ւրա̀ն փըեսան ա: Պիրո̀ւմ ա էն էրկու փըսենուցը շուրըրնեն հանել տամ, եշում տըեսնում տունդու-վըրնըերեն յիրա̀ փիչա̀տ տիրա̀ծ: Դա̀ստին տահանց կտորել ա տամ, մին մըեծ քյեփ սարքում, էտ տղեն էլ ասում.-Ես արտեն պըռավալ ըմ, էս թաքավըրոթունն էլ մենակ քեզ ա լայաղ, օրաս ետը երգյիրը ծըեռքըտ կալ, տու կառավարե: Տղան թա՝ ես էսհինչ տըեղը հար, մար, ախպըեր օնեմ, քյինամ պիրիմ, ետնան: Թաքավըերը թա՝ քյինա̀ պեր: Էտ տղան քյինամ ա հորը, մորը, ախպորը հըվաքում, պիրո̀ւմ տըեղ, ախպորը տանում հա̀մին ճիրին տակեն լըղըցնում, տո̀ւս ա կյամ ուժըղացած, ղիշինգյա̀ցած, փընթ ո̀ւրա̀ն ախպորը մնան վըսկըքյա̀քյո̀ւլ տըեռած, վըեր կյամ ա թաքավըերեն ըխճըկանը կոշտը, գյո̀ւղո̀ւմ ա թա ո̀ւրա̀ն նշանածն ա, դա̀ստին պռոշը ճաքում ա: Վըերչը, էտ տղան ո̀ւրա̀ն հորը նան մորը նհետ կյամ ա թաքավըրոթունը յոր օնում, ըսկսում երգյիրը կառավարելը

## 23.ԼՈ̀ՒՎՈԹՈՒՆԸ ՄԸՆՆԱ ԻՆԳՅԻԼ ՉԻ

Մին քըղաքու մընաան տըեղում մին մար, մինգյել մին տղա յըն ինո̀ւմ ըպրելիս: Տահանք շատ քյա̀սիբ ին, օրեն հացեն մո̀հտա̀ջ: Տղան մորը հըրցընում ա, թա հինչ ա՞նենքյ, վըեր ծըմեռնը սաղ-սըլմաթ տո̀ւս կյանք: Մարը թա՝ քյինա̀ մըեր հինդերա̀ն ցա̀քյա̀-պենա կտրե, էշին պեռնե, տար էտ մոտե շիներքումը հացավ փոխե, եր կալ եք: Տղան տի յել անում ա: Մին օր էլ վըեր ցա̀քյը էշին պեռնած տանում ա կօխկե շենումը հացավ տամ, դիբրո̀ւգյուն վախտը ետ տըեռնում, տոն կյա̀լիս եշում ա, տըեսնում մին մոտե շենու տակե խոխեքյը հվաքված, մին շան թուլու ղալ ըրած թակում ըն, վըեր ըսպանեն: Էտ խուխոցը մուտանում ա, խաթիրնին քթենո̀ւմ, ծըեռքեն հացը տամ ո̀ւրա̀նց, շանը թուլան յոր օնում, պիրո̀ւմ տոն: Մարը թա՝ մունք մըեր կլո̀խը կարում չընք պահենքյ, տու տարալ ըս ցա̀քյըտ ծախալ, էտ շանը թուլան եր կալալ, էշին յիրա̀ տիրա̀լ, պիրա̀՛լ: Տղան թա՝ վըեչինչ, թող կենա:

Մին օր էլ ցա̀քյը ծխելան ետը տոն կյա̀լիս վախտը տըեսնում ա հա̀մին տըեղը խոխեքյը մին շատ ղա̀շա̀նգյ կատու ղալ ըրած, մըիրկնեն եր կալած, թակում ըն: Ծըեռքեն հացը տամ ա, կատուն յոր օնում, պիրո̀ւմ տոն: Մարը նորըմինա̀ն տղեն իրեսնըյեր խոսում ա, թա մունք կարում չընք ապրենքյ, շոնը պերալ ըս, կատուն էլ կլխավն ը՞ս պիրո̀ւմ : Տղան թա՝ վըեչինչ, թող կենա, յոլլա կըտանենքյ:

Տղան նորըմինան ա ցա̀քյ կտրում, էշին պեռնում, տանում հացավ փոխում, պիրո̀ւմ: Կյա̀լիս տըեսնում ա հա̀մին տըեղը խոխեքյը հվաքված, մին օցու ճոտ քցած մաչ տըեղր, օզում ըն ըսպանեն: Ծըեռքեն հացը տամ ա խուխոցը, օցեն ճոտը յոր օնում, պիրո̀ւմ տոն: Մարը թա՝ էս շոնն ան կատուն պերա̀լ ըս, պերա̀լ ըս, օցեն ճո՞տը հինչու հետե յըս պերալ: Ասում ա, կզնըվում, տանան տո̀ւս կյամ: Օցեն ճոտեն դա̀ստին լո̀ւզի յա փսնում, թա՝ վըեր տու իմ կյանքս ըզադալ ըս, բիրա̀դի կըքյինա̀նք իմոր կոշտը, նա օցեն թաքավըերն ա, հինչ լըվոթուն ասես ըննական ա, բայց վըեչ մինին էլ ղաբուլ չանես, կասես քզանա վըեչ մին պեն չըմ օզում, մենակ լո̀ւզվիտ տակեն մուտանան ինձ տռ: Կարող ա պըտահե, վըեր չեմուչում անե, տու կասես՝ չէ՛, մենակ մուտանան ըմ օզում: Էտ մուտընեն անա հինչ վըեր օզես, էն սհաթը ըռըչիտ ա իննա̀կան, իսկ հըղեննի քյինա̀լիս մըեզ շատ օցեր ըն պըտըհըլական, վախես վուչ:

Էքյսի օրը տղան օցեն ճոտեն նհետ հղե յա ինո՛ւմ, քյինա՛մ: Հըղեննի էնքան օցեր ըն պըտահում, վըեր թա՛հրը չի ինո՛ւմ, տղան վախում ա: Օցեն ճոտն էլ միշտ սըերտ ա տամ,թա՝ վախումիլ: Մին տըեղ էլ վըեր օցերը լափ շտանում ըն, օց թաքավըերն էլ ա տո՛ւս կյամ: Ճոտը մորը մուտանում ա, թա՝ մա՛մա, էս տղան ա ինձ ըզադալ: Տա տղեն թա՝ հինչ լուվո՞թուն ըս օզում, վըեր քեզ անեմ, հիշքան վըեսկե, թինգյա՛կան քար, հինչ հարստություն ասես, քեզ ըմ տամ: Էտ տղան թա՝ քզանա վըեչ մին պեն չըմ օզում, մենակ լո՛ւզվիտ տակեն մուտանան ինձ տո: Օց թաքավըերը մխըրե չեմուչում ա անում, վերչումն էլ թա՝ տրա տըեղն ըսողեն լո՛ւզին քար տըեռնա, դե հինչ ըրա՞ծ, վըեր ասալ ըս, պիտի քեզ տամ: Հինչ վըեր օզես, էտ մուտանան քեզ տըլական ա, մենակ թա տրա սեկրետը վըեչ մինին՝ վըեչ մորըտ, վըեչ էլ կնգանըտ ասեսվուչ:

Տղան մուտանան յոր ա օնում, քյինա՛մ: Քյինա՛մ ա տոն, մորը թա՝ ա՛յա, քյինա՛ թաքավըերեն ախճիգյըն ինձետե օզե: Տըեղատ մոտ յել կյետ ա ինո՛ւում անց կընալիս, թաքավըերեն պալատը նան տահանց տոնը կյետեն էս ընգյո՛ւնին ըն ինո՛ւմ, ո՛ւրո՛ւր անա շատ հեռու չըն ինո՛ւմ: Մարը տղեն էտ խոսկը վըեր ըսկանում ա, թա՝ ա՛դա՛ պլացալ ը՞ս, կյիժվալ ը՞ս, հինչ ը՞ս ըրալ, տու հու վը՞ս, հինչ գյա՛դա՛ յըս, վըեր թաքավըերը քեզ ախճիգյ տա: Տղան թա քեզ կործ չօնես, քյինա թաքավըերեն ասե, վըեր տղաս ախճիգյըտ ա օզում: Մարը հիշքան չեմուչում ա անում, տղան թա՝ չէ, վըեր չէ, հղե իլ, քյինա՛:

Մարը ճարը կտրած, ճղորտված շուրերավ վըննըպեպիգյ հղե յա ինո՛ւմ, քյինա՛մ: Թաքավըերեն մարթիքյը վըեր տո՛ւս ըն կյամ տըեսնում էտ կնեգյը դըրբըզեն ըռաչին, հրցընում ըն, թա հինչ կա՞, տա թա՝ թաքավըերեն ըմ օզում տըեսնամ: Տահանք հա՛լա՛ սո՛ւրթա՛ թողում չըն, մինգյել խաբարը հացընում ըն թաքավըրեն, թա իստի մին կնեգյ օզում ա կյա՛ կոշտըտ: Թաքավըերն ասում ա. - Պեց թուղեցեքյ, թողեքյ կյա՛: Էտ կնեգյը քյինա՛մ ա, թա՝ թաքավըերն ապրած կենա, տղաս գյո՛ւղո՛ւմ չըմ կյիժվա՛լ ա՞ , խելքը կուրցըրալ ա՞, թա հի՞նչ ա պըտահալ, էս ա երկու օր ա, ափաթըս կտրալ ա, թա քյինա՛ թաքավըերեն ախճիգյն ինձետե օզե: Թաքավըերը մխըրե զըրմանում ա, մինգյել մտածում ա, թա հա՛լբա՛թ ըստըեղ մին պեն կա, էս տղեն անըմ մին հինա՛ր կա, թա չէ, ռիսկ չի անել տի պեն ասե: Ետնան էտ կնգանը թա՝ կըքյինա՛ս տղետ ասես, վըեր ծըեր տան տըեղը մին մըեծ

պալատ շինի, իմ պըլատաս մինչև էտ պալատը մին լեն հող քցի, ճոխտ ա̀նգյո̀ւնն էլ պիցիր-պեցո̀ւր, ղալին ծառեր ինին, վըեր ախճիգյըս շուքավ քյինա̀-կյա̀, տրանա ետն էլ մին հունց քյեփ սարքե, վըեր իմ պըլատումըս հիշքան մարթիքյ, ուտելի-խմելի պեներ կան, էտ քյեփին ըստուլներեն ինի: Վըեր էտ լոխ անե, պրծընե, ախճիգյըս կըտամ ո̀ւրա̀ն:

Մարը քյինա̀մ ա լոխ տղեն ասում: Տղան դրաղ ա կենում, մուտանան տո̀ւս օնում, եշում, թա՝ ա՛ մուտանա, քըզանա կօզեմ մըեր տանը տըեղը թաքավըերեն պըլատեն մչանք մին պալատ, էրկու պըլատեն ղաթումը մին լեն հըղե, ղըրըղներավն էլ պիցիր-պեցո̀ւր, ղըլին-ղալին ծառեր, պըլատեն մաչին էլ մին մըեծ զալ ո̀ւրա̀ն ըստուլներավը, ընշարքես տակեն էլ հիշքան լա̀վ ուտելի- խմելի պեներ կա, էտ ըստուլներեն յիրա̀ն: Հինչ վըեր ասում ա, մուտանան էն սհաթը լոխ անում ա:

Ո̀ւրո̀ւզյո̀ւնը թաքավըերն ո̀ւրա̀ն մըրթուցավը կյամ ա տըեղ, ըստուլ- ներեն եշում, թա ամմեն հինչ կա, մենակ ծմըերուկ չի կա: Տղան դրաղ ա հնցընում, մուտանան տուս օնում, թա՝ ա՛ մուտանա, քզանա կօզեմ ըստուլներեն իրեսը լիքյը կըտորած ծմըերուկ: Ըստուլներեն իրեսնեն դա̀ստին կտորած ծմըրուկավ լըսնըվում ա:

Մին քանի օրան ետը հրսանեքյ ըն անում, թաքավըերեն ախճիգյն էտ տղեն յիրա̀ փըսակում: Թաքավըերը մաննը կծում ա, մտածում, ետնան թա մին քանի օր առաչ սահանք հաց քթինալիս չըն իլա̀լ, վըեր օտեն, էս մեհենգյ հի՞նչ պըտահեց: Կլխու վա ինգյո̀ւմ, վըեր ըստեղ մին թաքուն պեն կա, ընխճըկանն էլ սուվըրցընում ա, վըեր էտ պենին սեկրետը գյիդա, ո̀ւրա̀ն ասե:

Մին քանի օրան ետն ախճիգյը էտ տղեն ղաչանք-պղատանք ա անում, հըրցընում, թա պենը հինչումն ա, վըեր էքան կարճ վախտում հրուստա- ցեր, տղան ասում չի: Վերչը մին օր խաթիրը քթենո̀ւմ ա, ասել տամ: Ախճիգյը քյինա̀մ ա հորն ասում: Հա̀րը սուվըրցընում ա, թա մուտանան կըկյուղանաս, պիրիս:

Մին քշեր, տղան քոն իլած վախտը թաքավըերեն ախճիգյը մուտանան կյուղանում ա, տանում տամ հորը: Թաքավըերը դա̀ստին մուտըննեն եշում ա, թա՝ ա՛ մուտանա, քզանա կօզեմ էն տղեն պալատը ղըրբըղաղ տըեռած, կյետեն էն ղոլին, մին հեռու տըեղ ինձետե նրանա մըեծ մին պալատ, ես էլ իմ մըրթուցավըս ընդեղ: Տըեղն ու տըեղը էտ տղեն պալատը քրուքանդ ա

տըեռնում, կյետեն էն ղրաղեն, մին շատ հեռու տըեղ ո՛ւրա՛ն հետե մին շատ մըեծ պալատ ա շինվում, թաքավըերն ո՛ւրա՛ն սաղ մըրթուցավը էտ պըլատումը:

Տղան էքյսը եր ա կենում, տըեսնում ո՛ւրա՛ն մորը նիետ ո՛ւրա՛նց քյո՛հնա տանը, վըեչ մուտանա կա, վըեչ թաքավըերեն ախճիգյը: Մնամ ա շիշկյիլվա՛ծ, գյո՛ւղո՛ւմ չի, թա հինչ անե: Դա՛ստին կատուվեն լուզի յա փսնում, թա մտածումիլ, ես կըքյինամ մուտանան կյուղանամ , պիրիմ: Շոնը կատուվեն թա՝ պա թաքավըերեն պալատը մեհենգյ կյետեն էն ղոլին ա, տու լըեղ տալը գյո՛ւղո՛ւմ չըս, հունց ը՞ս կյետավն անց կըննական. եք բիրա՛դի քյինա՛նք, ես լըեղ տալը գյո՛ւղո՛ւմ ըմ, տու մաշկես կնստես, վիզա՛ս պըենդ կըծես, ըրկոքան անց կըկենանք կյետեն էն անգյունը, ետնան էլ քյինա՛նք թաքավըերեն պալատը, մուտանան կյուղանանք, պիրենքյ: Տի յել անում ըն: Վըեր հսնում ըն թաքավըերեն կոշտը, կատուն շանը թա՝ տու ըստեղեքյ կյողըը կացած կաց, ես թաքուն մին ծակավ նի կըմննեմ պալատը, հիշքան չինի, դա՛շա՛նգյ կատու վըմ, վըեր նի միննեմ, լոխ ինձ սիրիլական ըն, ինձ սըղալեն, ինձ վնաս չըն տալ, տու վըեր պըլատան մուտանաս, թաքավըերեն շները քըզըրա յըն տըռնըլական, քեզ քըլըլեն: Շոնն անց ա կենում մին մոտե ծըմակում տապուռ ըրած կենում, կատուն նի յա միննում պալատը, լոխ ծըեռքա-ծըեռք ըն յոր օնում, աղալում: Իսկ թաքավըերն էնքան ար էտ կատուվեն սիրում, վըեր քշերը նիետն ար քոն անում: Կատուն թըքըն-թաքուն եշում ար, թա տըեսնա թաքավըերը մուտանան հի՞շտեղ ա պահում: Տըեսնում ա քշըրիանան եր կընալան ետը լո՛ւզվին տական տուս ա օնում, իրեսր լուվանում, հաց օտում, էլլա տինո՛ւմ լո՛ւզվին տակեն, քշերն էլլա լո՛ւզվին տակեն տիրա՛ծ քոն ինո՛ւմ:

Էքյսի քշերր թաքավըերը քոն իլա՛ծ վախտը կատուն քյինա՛մ ա պուճախան մին մոկուն փըռնում, ըսպանում, պիրո՛ւմ հաքյին թաքավըե-րեն քթըծակավը քցո՛ւմ պերա՛նը, քթածակը նան պերանը դիլդի տամ: Վըեր տի յա անում , թաքավըերը բո՛ւրդան սա՛բիր ա կյամ, մուտանան լո՛ւզվին տական թող ա ինո՛ւմ, պոլեն վըեր ինգյո՛ւմ: Կատուն մուտանան յոր ա օնում, տո՛ւս պրծընում, քյինա՛մ շանը քըթենո՛ւմ:

Վըեր քյինա՛մ ըն, թա կյետավն անց կենան, շոնն ասում ա. - Դե լա՛վ, տու վըս մուտանան թաքավըերեն պըլատան տո՛ւս կալալ, մըեր տարն առանց էն էլ քեզ շատ ա սիրում, էս դո՛նո՛ւմ էլլա լափ շատ ա սիրիլա՛կան,

մուտանան ինձ տո, թող ես իմ ծըեռքավըս տամ ու՛րա՛ն, մին խրեգյ էլ ես աշկեն լա՛վ ուրվամ: Կատուն թա քեզ կըտամ, բայց կըրըլական չըս պիրա՛նումըտ պահես: Շոնը թա կըրըլական ըմ: Կատուն նորից, թա կըրըլական չըս, շոնը թա կըրըլական ըմ: Վերչը, վըեր. շոնն ու՛րա՛ն ա ասում, կատան էլ ու՛րա՛նը, շոնը թա՝ դե վըեր տամ չըս, քեզ կյետավն անց

չըմ կըցըննական: Կատուն ճարը կտրած, մուտանան տամ ա շանը: Կյետեն վժժոկավն անցկընալիս դուշերը կյամ ըն շանն ըոըչավը թոչու՛մ, անց կենում: Մին դուշ լափ ճիրին իրեսավը, շանը դուղըվան մոտե թոչիլիս, շոնը համփ ա անում, վըեր փըռնե, մուտանան պիրանան վըեր ա քցու՛մ, ինյզու՛մ ա կյետը:

Շոնն ան կատուն տուս ըն կյամ կյետեն դրաղը, էլ սըվիըես տըեռած, օզում չըն քյինա՛ն տոն: Մին իրեք-չորս օր տըեղեքյ պուկում ըն, լա՛ց ինու՛մ, սոված-ծարավ մին տըեղ նստոտում, եշում, տըեսնում մին ծու՛կուն փոնող բիդի ու՛րա՛նց կյամ ա: Ծու՛կուն փոնողը վըեր լափ մուտանում ա, տըեսնում ա էտ շոնն ան կատուն սոված-ծարավ նստոտած, ըշկըրնեն էլ վըժժոկան էլ կտրում չըն: Ասում ա կոզի վժժոկումը ծկուն չի ինու՛մ, հա՛լա՛ մին սախանց բախտեն թորը քցիլա՛կան ըմ, թա պեն տու՛ս եկավ, տըլական ըմ ու՛րա՛նց, օտեն: Վըեր քցու՛մ ա, մինգյել տու՛ս օնում, եշում ա, տըեսնում մին մըեծ ծու՛կուն թորեն մաչին: Մտկումն ասում ա՝ շոնը շատ օտող ա ինու՛մ, կատուն՝ խրեգյ, ծըծղալավ ա օտում, լեշը կըտըրըլական ըմ տամ շանը, կլու՛խը՝ կատուվեն, թող ըրկոքան էլ օտեն-քուշտանան, մեխկ ըն: Ծու՛կունեն լեշը կտրում ա տամ շանը, կլու՛խը՝ կատուվեն, ինքյը քյինա՛մ:

Տահանք վըեր ծուկունն օտում ըն քուշտանում, կատուն ըսկըսում ա կըլխեն վըսկուռնեն ու՛րու՛ր անա ճոկելը: Ճուկելավ, ճուկելավ կյամ ա հանում լափ վերչը, տըեսնում մուտանան ծու՛կունեն պիրա՛նու՛մը: Ուրխացած յոր ա օնում, կյամ շանը կոշտը, վազ տալավ տանում ըն տամ տղեն: Տղան շատ ա ուրխանում, մուտանան ծըեռքն օնում. Թա՝ ա՛ մուտանա, քըզանա կօզեմ թաքավըերեն պալատը դըրբըդաղ տըեռած, իմ տանըս տըեղը նրանա շատ մըեծ մին պալատ ու՛րա՛ն ամմեն հինչավը: Էտ սըհաթը թաքավըերեն պալատը քա՛նդվում ա, ու՛րա՛ն տանը տըեղն էլ

մին մըեծ պալատ ա վըեննը կենում: Վերչը, էտ տղան տըեղ ու՛րա՛ն հետե լավ ապրուստ ա ըստեղծում, թաքավըերեն ախճիգյը պեց թողում, մին օրիշ, լա՛վ, խելունք ախճիգյ օզում, տըեղ կենում:

## 24.ԴՈՒԼԳՅԱՐԻՆ ՏՂԱՆ

Մին թաքավըրեր ուրան երգյիրը շոռ ար կյամ, թա տըեսնա հի՞նչ կա, հի՞նչ չի կա, ժուղովուրթը հու՞նց ըն ապրում, հի՞նչ ըն անում: Էտ թաքավըրերը վըեր շոռ կյալավ տուս ա կյամ մին շեն, տըեղետ դուլգյարին տղեն դուշմուննեն շատ ըն ինում, յիրան շառ ըն տինում, թաքավըրերեն ասում. - Տա շատ փիս, խաթալու մարթ ա, տրա տըեղը տուրմա ա: Թաքավըրերն էտ խուսկերքեն հըվատամ ա, տրան փռնել տամ, դարկում տուրման:

Շատ վըեր անց ա կենում, թաքավըրերը մըծանում ա: Ուրան էլ մենակ մին տղա յա ինում, տրան ասում ա՝ դե իմ հայ-հայըս քյեցալ ա, մնացալ ա վայ-վայըս, էքյուծ-ալօր մըռնըլական ըմ, տուս եք երգյիրը շոռ եք, տըես՝ հի՞նչ կա, հի՞նչ չի կա, կառավարելը կուճուր-կուճուր սուվըերե, վըեր իմ մըռնելանըս ետը բուրդան չաշմիշ չինիս:

Թաքավըրերեն տղան շորերը փոխում ա, վըեր ճինանչին վուչ, տուս կյամ սաղ երգյիրը շոռ կյամ, քյինամ հսնում տուրման, տըեսնում նըստած մարթիքյ լոխ օրախ, ըսելիս-խուսելիս, մենակ մին մարթ կլուխը կախ ըրած, տխուր, օնքըերն ուրուր տուված: Տրան մուտանում ա, հրցընում, թա՝ դարդըտ հինչ ա՞: Տա թա՝ ես էսհինչ շենին դուլգյարին տղան ըմ, էսքան տարե յա, վըեր ես թաքավըրերեն հրամանավ նստած, բայց գյուղում չըմ, թա հի՞նչու հետե: Թաքավըրերեն տղան դաստին տրա անումը, փամիլը, ադրեսը կյիրում ա, յոր օնում: Քյինամ ա հորը կոշտը, թա՝ ա՛ հար, սաղ երգյիրը շոռ ըմ եկալ, ամմեն տըեղ տըեսալ ըմ, ամմեն հինչ ճինանչալ, լոխ ուրան տըեղն ա, մենակ մին պեն լավ չար: Հարը հըրցընում ա, թա էտ հի՞նչ պեն ա, տղան թա՝ քյեցե տուրման, փռնըված մարթիքյը լոխ օրախ ին, մենակ մին մարթու ունքըմաչան աղուն կաթում ար. հրցըրե, թա դարդըտ հինչ ա՞, տա ասեց՝ գյուղում չըմ, թա թաքավըրերն ինձ հինչո՞ւ հետե յա նըստըցընել տուվալ. ետնան էլ թա՝ ա՛ հար, էն մարթը վըեչ մին մեխկ չօնե, տու առանց քննելի, առանց ամմեն հինչ գյիդալի սուտասիգյ մարթուցը հըվատալ ըս, նրան նըստըցընել տուվալ. նա էսհինչ շենին դուլգյարին տղան ա, մըետըըտ կինի, զուր տըեղան ա նստած, ճելլի հրաման տո, պեց թողեն, քյինա ուրանց տոն, մեխկ ա, կնզատար-խուխատար ա:

Թաքավըրերը ուրան հրամանն ա դարկում, էտ դուլգյարին տղեն տուրման ըզադել տամ: Տա վըեր մին շատ ազղուն մարթ ա ինում, ծին

յիհա՚րած, տոն քյինա՚լիս վախտը եշում ա, տըեսնում միրչըմներեն մին զըեռ սո՚ւրո՚ւ քյարվան կապած, հըըցեն մաչ տըեղավը քյինա՚մ ըն: Տա հըեն փոխում ա, վըեր միրչըմններեն վնաս չի տա: Տհանցա մինը ըռըչկտրողան քյինա՚մ ա տրան հսնում, էրկու թըև տամ ո՚ւրա՚ն, ասում. - Վըեր տու տի խըղճըմըտանքավ մարթ ըս, եր կալ, քշտիտ պահե. վըեր նըեղ տըեղ ինգյիս, էտ թըևերն ո՚ւրո՚ւր կըքսիս, մունք հիշտեղ էլ ինինքյ, կյիլական ընք քեզ հըսնենքյ: Տա թըևերը յոր ա օնում, քյինա՚մ: Մին քանի օրան ետը էտ մարթը հըսնում ա ո՚ւրա՚նց տոն:

Ուրերան մին օր թաքավըերեն տղան ետ ա տըեռնում, հորն ասում՝ ինձետե էսիինչ երգյիրին օխտը դո՚վին քուրը պիտի օզես: Թաքավըերը թա՝ ա՛ վըերթի, տու գյո՚ւղո՚ւմ ըս, վըեր օխտը դո՚վերը մըեզ խաթիրավ ախճիգյ չըն տալ, զոռավ էլ կարել չընք պիրինքյ: Իրեք հետե կռվալ ընք, իրեք հետե յել հախտվալ, մեհենգյ վըեր կռվենքյ, էլլա յընք հըխտվըլական: Տղան թա՝ գյո՚ւղո՚ւմ չըմ, վըեր օխտը դո՚վի քուրն ինձետե օզըես վուչ, քյիննա՚կան ըմ ինձ ըսպանեմ: Թաքավըերը մտածում ա, մաղար-գյո՚ւղա՚ր մին տղա օնեմ, կըքյինա կլո՚խը մին պեն պիրի, էս հլիվուր հա՚լիս կլխես կրակ վըեր ածե: Տա մին օր ուրան սաղ երգյիրին ժուղուվուրթեն հըվաքում ա մին մեյդան տըեղ, օզում ա վըեր մըսլըհաթ անե, թա տըեսնա՝ հինչ անեն: Թաքավըերը ժուղուվուրթեն ասում ա.- Մաղար-գյո՚ւղա՚ր մին տղա օնեմ, վըեր էտ պենն անեմ վուչ, կլո՚խը օյին ա պիրիլա՚կան, դո՚վերը խաթիրավ մըեզ ախճիգյ չըն տալ, զոռա՚վ էլ կարել չընք խլինքյ, գյո՚ւղո՚ւմ չըմ հինչ անենքյ, էլլա բալի վըեր կոև անենքյ, տրանավ ումեղ պահենքյ, վըեր ախճիգյը կըկարենքյ պիրինքյ: Էտ մարթուցը նհետ դո՚ւլգյա՚րին տղան էլ ա ինո՚ւմ եկած: Տա թաքավըերեն տղեն դա՚ստին ճինա՚նչո՚ւմ ա, օզում ա նրա ըրած լիվութունեն հետե մին լիվոթուն էլ ինքյն անե: Ետ ա տըեռնում թաքավըերեն թա՝ կոև-պեն հարկավըեր չի, ես տղեն նհետ կըքյինամ, ախճիգյն օզեմ, պիրեմ: Ըստեղաս-ընդեղան ասում ըն կարել չըս: Դո՚ւլգյա՚րին տղան թա՝ էտ ծեր կործը չի: Թաքավըերը մտկումն ասում ա.-Հա՚լբա՚թ սրանում մին պեն, մին հինա՚ր կա, վըեր ռիսկ ա անում: Ետ ա տըեռնում, թա մաղար-գյո՚ւղա՚ր էս մին տղան ա իլա՚ծըս, յանի կըկարե՞ս էտ պենն անես. թա կըկարես, տղաս քըզնըհետ ղարկեմ: Տա թա ըրխըյին կաց, տղետ մին մազն էլլա ծռվել չի:

Էքյսը դո՚ւլգյա՚րին տղան նան թաքավըերեն տղան հըե յըն ինո՚ւմ, քյինա՚մ տո՚ւս կյամ օխտը դո՚վերեն պալատը: Նի յըն մննում, տըեսնում

ախպըերքը տանը չըն, տո՞ւս ըն եկալ, մնացալ ըն մարն ու ախճիգյը: Ախճիգյը տղեն վըեր տըեսնում ա, դա՝ստին սիրահարվում ա: Մարն ալ թա՝ ճելլ ըրեքյ ըստեղաս տո՞ւս եկեքյ, խոխեքյըս տանը չըն, քյեցալ ըն վըերս, էս սհաթըս կյիլա՝կան ըն, վըեր ծըեզ ըստըեղ տըեսնան, պըտըռ-պատառ ըն ըննական: Դո՞ւլգյա՝րին տղան թա՝ պա եկալ ընք իստի պենու հետե, էս էլ էսհինչ երգյիրին թաքավըերեն տղան ա: Դո՞ւվրերեն մարը թա՝ հա՝լա՝ ճուխտեքան նի մըտեքյ մըեծ տաշտին տակը, ընդեղ կյողըը կացեքյ, ախպըերքը կյա՝ն, ես նըիըտնեն մսըհաթ անեմ, տըեսնանք հի՞նչ ըն ասում:

Դո՞ւվերը շատ յըտանում չըն, կյամ ըն, հենց լիհա՝ փա՝լա՝քյա՝նավը պիցիրանում ըն, թա՝ մըրթավըետ ա կյամ: Մարը ծծերը դո՞ւշերան տո՞ւս ա օնում կախ-կախ անում, տղորանցր թա՝ էս կաթնը ծըեզ հարամ ինի, վըեր ըստըեղ ա՝րո՞ւն վըեր ածեքյ: Ասում ա, տաշտր պիցըրցընում, դո՞ւլգյա՝րին տղան ան թաքավըերեն տղան տական տո՞ւս ըն կյամ: Դո՞ւլգյա՝րին տղան առանց էրկան-պերակ խուսելի ասում ա՝ եկալ ընք ծըեր քուրն էս տղեն հետե օզենքյ, սա էսհինչ թաքավըերեն տղան ա: Ախպորցը մըեծը թա ըռաչիտ իրեք պայման ըմ տինո՞ւմ, վըեր կըրեցեր իրեքան էլ կըդարես, ախճիգյը տամ ընք, վըեր կըրեցեր վուչ, սուսուփուս եր կացեքյ, քյեցեքյ: Մին պայմանն էն ա, վըեր մըեր օխտը ախպորցը լոխճինին նհետ կընդ-կընդ կոխըը պիտի կենաս, վըեր քըցիս, ետնան էլ քյիննա՝կան ընք վըերս, կյանք, հիշքան վըեր մունք օտենքյ, էնքան էլ տու պիտի օտես. վերջին պայմանն էլ էն ա, վըեր մին չուվալ կորեկ, մինգյել մին չուվալ ցորեն ո՞ւրո՞ւր նհետ խըռնըըլական ընք, պիտի մին քշերում ո՞ւրո՞ւր անա լոխ ճոկես, ամմեն մինն ո՞ւրա՝ն չուվալեն մաչն ածես: Դո՞ւլգյա՝րին տղան ասում ա.- Կոխըը կընալիս կարող ըք օխտը ախպըերը մին անգյո՞ւն անց կենաք, ես՝ մին անգյո՞ւն, ծըեր օխտեն բիրադի վըեր՝ կըքըցիմ, ծըեր լոխճինին վըերսը մենակ կօտեմ, խառնած ցորենն նան կորեկն էլ մին քշերումր ճոկեմ, ածեմ ամեքյա ո՞ւրա՝նց տըեղը:

Էքյսի օրը կոխըըն կենում, դո՞ւլգյա՝րին տղան լոխինին վըեր ա քցո՞ւմ: Վըեր քյինա՝մ ըն վըերս, թաքավըերեն տղան տանն ա մնամ: Դո՞ւվերեն մարը տրան ասում ա՝ քյինա՝ սաղ հայաթը, բախճան, ութըղնեն շոռ եք, ամմեն հինչ տըես, ճինա՝նչի, մենակ էսհինչ օթաղը նի չի միննես: Թաքավըերեն տղան ամմեն տըեղ շօռ ա կյամ, ամմեն հինչ տըեսնում, պըռավեն ասած ութաղեն կոխկավն անց կընալիս ասում ա նի յըմ միննա-

կան հա̈լա̈ մին տըեսնամ ըստըե՞ղ հինչ կա: Նի յա միննում, թա չէ, տըեսնում ա մին մըեծ, աժդահա, սիպտակ դո̈վ ժինջիլա̈վ սո̈ւթնա̈ն կապած, մին կռոճ աղ էլ ըռաչին, տաշտակը ճիրա̈վ լիզյը, խիլլա հեռու, տիրա̈ծ: Էտ դո̈վը թա՝ պա՛հ, ես քե մատաղ, էս ա քանի օր ա օխտը ախպըերքն ինձ փըռնած, ըստըեղ կըպոտած, ըռաշիս էլ մենակ էս աղն ըն տիրալ, վըեր լո̈ւզ տամ, սրանավ ապրեմ, տըշտակեն ճուրն էլ հըռըցըրալ ըն, վըեր կարեմ վուչ խմեմ, աղը լո̈ւզիմ, ծըրավեմ, ճիրին եշեմ, հա̈լվիմ: Մին թիքյա̈ էտ տաշտակը մուտըցըրու, լիհա̈ պռոշըս թրչիմ: Թաքավըերեն տղան թա՝ պա տաշտակը ծանդր ա, կտրել չըմ տըեղան տո̈ւրո̈ւր տամ: Դո̈վը թա՝ վըեչինչ, լիհա զոռավ, տըեղան քըսըքսի ընելավ միխըրե մուտըցըրու: Տա վըեր քըսըքսի ընելավ, դըրթըղարթու ընելավ մուտըցընում ա, սիպտակ դո̈վը վիզը մըեկնում ա, պռոշը զոռավ տըշտակեն հըսցընում, ճո̈ւրը լոխ ծծում, խմում, խմում, օռչում, ուժըղանում, վիզը թափ տամ, ծիքյ տամ ժինջիլը կտրում, տո̈ւս կյամ օխտը դո̈վին քուրը կյուղանում, տանում: Դո̈վերը ծմական կյամ ըն, մարը թա՝ պա իստի պեն ա պըտահալ:

Ախպերքը կըրքընըրնեն ո̈ւրո̈ւր ըն տամ, տղան թա՝ ըրխըյին կացեքյ, նահանք հա̈լա̈ հղեննի կինին, տըեղ հսած չըն ինիլ. լիհա̈ հըսանեքյը նստած, ես տըեղ կըհըսնեմ,ախճիզյը ծըեռքան խլիմ, պիրիմ: Դո̈վերն ասում ըն եկալ ա, վըեր մըեր քուրը տանե, տուվալ չընք, ուզեցալ ա կռվավ տանե, օխտը ախպըեր յիրա յընք տըեռալ, զոռավ, մին թահրավ փռնալ, կըպոտալ, տու մենակ հո՞ւնց պիտի նրա նհետ կըռն անես: Դո̈ւլզյա̈րին տղան թա՝ ըրխըյին կացեքյ, չերանը իրեք օր ես կարող ըմ ծըեր քուրը էտ պիրիմ: Վըեր պիրիմվուչ, թաքավըերեն տղան ծըեր քշտին ա. նրանա ետը տուք ըք գյո̈ւղո̈ւմ, ծըեր սովիստը:

Դո̈ւլզյա̈րին տղան հղե յա ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ ա քյինա̈մ, թա խըեզյ, եշում ա, տըեսնում մին մարթ վար ընելիս, պըտահած ծառերն էլ լոխ պըկոտում ա, տեն ածում, վարեն առաչը թիմիզցընում: Վըեր մուտանում ա, էտ վար անողը հըրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինա̈մ, տա թա քյինամ ըմ սիպտակ դո̈վին ծըեռքան օխտը դո̈ւվերեն քուվերն ըզադեմ, պիրիմ էսհինչ թաքավըերեն տղեն հետե: Էտ մարթը թա՝ ես էլ ըմ կյամ: Դո̈ւլզյա̈րին տղան ասում ա՝ քյինա̈նք: Բիրա̈ղի հղե յըն ինո̈ւմ, քյինա̈մ: Խիլլա̈ վըեր հըռանում ըն, եշում ըն, տըեսնում մին մարթ արխեն ինզյա̈ծ, ճո̈ւր ա խմում, արխը ցըմըքցընում, ետնան էլ պերանը տեմ ըրած պահում, վըեր էլլա կյա̈: Էտ

մարթը տահանց վըեր տըեսնում ա հըցընում ա, թա հիշտե՞ղ ըք քյինՙմ, տահանք թա՝ քյինՙմ ընք օխտը դՙվին քուրը սիպտակ դՙվին ծըեռքան խլինքյ, պիրինքյ էսհինչ թաքավըերեն տղեն հետե: Տա ասում ա.- Վըեր քյինՙմ ըք, ես էլ ըմ կյամ: Տահանք թա՝ քյինՙնք:

Իրեքան բիրՙդի քյինՙմ ըն, տըեսնում հրսանեքյը լիհա նոր նստած: Վըեր նի յըն մննում հրսընքատոնը, տահանց տանում ըն մին լՙվ տըեղ նստըցընում: ԴՙԼլգյՙրին տղան ասում ա.- Թուղեցեքյ մունք հառհնեն նան փսեն քշտին նստենքյ: Տահանց տանում են հառհնեն նան փսեն կոխկեն նստըցընում: Հառհնը դՙԼլգյՙրին տղեն դաստին ճինՙնչՙԼմ ա, կլխու վա ինգյՙԼմ, վըեր Ալրՙն ետ տնելի հետե յըն եկալ: Հրսընքեն թՙԼնդ վախտը դՙԼլգյՙրին տղան սիպտակ դՙվին ծըեռքան փռնում ա, հլՙրՙԼմ, էն էրկու մարթն էլ մուտանում ըն, էն մին ծըեռքը հլՙրՙԼմ, հառհնն էլ կյամ ա, կլխան փըռնում, կռըցընում, չուրսեքան սիպտակ դՙվին մաշկեն նստում ըն, պիրՙԼմ մինչև օխտը դՙԼվերեն վըեղեն սահմանը, սիպտակ դՙվին պեց թողում, ՙԼրՙնք ախճիգյը յոր օնում, քյինՙմ:

Մին քանի օրան ետը դՙԼլգյՙրին տղան քյինՙմ ա օխտը դՙԼվերեն տիրած էրկուինջի պայմանը կըդարում, իրեքինջինումը տիժիրՙնում ա, միրչեմնեն թըները տՙԼս ա օնում, ՙԼրՙԼր քաՙԼմ, միրչիմնեն լոխ կյամ ըն, մին քշերումը կորեկը նան ցորենը ճոկում, ածում ամեքյա ՙԼրՙնց չուվալը, ետ տըեռնում, քյինՙմ: Քշըրհանան դՙԼլգյՙրին տղան կյամ ա, տըեսնում կորեկը նան ցորենը լոխ ճոկած: Չուվըլնեն պատնըյեր ցեց ա տինՙԼմ, քյինՙմ թաքավըերեն տղեն փսակում, յոր օնում, տանում ՙԼրՙն երգյիրը:

## 25.ԸՆԿԵՐԸ

Մին թաքավըեր ՙԼրՙն տղեն ասում ա.-Հունց մարթու քըզետե հնգըեր կըճոկես, վըեր հացան կտրելիս խրեգյը ինքյը յոր օնե, շատը քե թողե: Հարը մըռնելան ետը տղան տՙԼս ա կյամ շատ տըեղեր շռռ կյամ, շատ մարթուց պըտահում, շատ պեներ տըեսնում, բայց ՙԼրՙն հնգըեր չի կարում քթենա: Քյինՙմ ա քյինՙմ, տըեսնում մին հինգյիստրանում էրկու հոքի մին մըեռալ թաղած տըեղան տՙԼս կալած, ամեքյա մին միակ եր կալած, վըեր ըն թակում: Էտ տղան տահանց մուտանում ա, հրցընում, թա էտ մըեռած մարթը ծըեզ հինչ ա՞ ըրալ, խե յը՞ք տի անում: Տահանք թա մըեզ փող ա իլալ պարտք, տուվալ չի: Մինին հրցընում ա, թա քեզ հիշքան ա իլՙլ տալի,

տա թա՝ հՙարՙուր մանեթ: Տՙուս ա օնում տրան էրկուհՙարՙուր մանեթ տամ, էն մինին էլ հրցնում,. թա քո՞ւնը հիշքան ա, տա թա՝ էրկուհՙարՙուր մանեթ: Չորս հՙարՙուր մանեթ էլ տրան ա տամ, անց կենում, քյինՙամ, տըեսնամ հըըցավը մին կնեգյ ՙուրՙան էրկու խուխըեն նհետ լՙաց ինիլՙավ քյինՙամ ա: Հրցընում ա, թա մայրիկ, խե յը՞ս լՙաց ինՙում, էտ կնեգյը թա՝ պա վըեր ես լՙաց չի ինիմ, հո՞ւ լՙաց ինի, էն մըեռած մարթը, վըեր թաղած տըեղան տՙուս ըն կալալ կլխեն թակալ, իմ մարթս ա, մեհենգյ քու լՙուվոթունըտ գյՙուղՙում չըմ հո՞ւնց տըեղ տամ. մարթըս շատ հարուստ, լոթի-փոթի, օտող-խմողեն մինն ա իլՙալ, քանի սաղ ար, պարտկու անում չի կար, հենց վըեր մըեռավ, ըստըեղաս-ընդըեղան պըրտկըտարեր տՙուս եկեն, լոխ էլ ՙուրՙան հնգերունքը. սոտ տըեղան պարտկեր ըն տիրՙալ վիզիս, կեսը տուվալ ըմ, կեսը կըրեցալ չըմ, տրա հետե էլ խըեղճ մարթիս թաղած տըեղան տՙուս ըն օնում թակում, տինՙում տըեղը, ինձ էլ իստի միշտ լիցըցնում: Թաքավըերեն տղան էտ կնգանը մին խիլլա փող ա տամ, ասում մնացած «պարտկերըտ» կըտաս, ինքյը հղե ինՙում, քյինամ:

Մին քանի օր էլ վըեր քյինՙամ ա, մին շատ քյասիբ մարթու վա պըտահում: Բիրՙադի վըեր հղե յըն ինգյՙում մին սաղ օր քյինՙամ, նղանում ըն, մին ըխպրՙու ղրաղե նստում, վըեր դինջանՙան, հաց օտըեն, ճՙուր խմըեն: Թաքավըերեն տղան հացը տՙուս ա օնում վըեր տինՙում, էտ քյասիբը հացան մին խրեգյ կտրում ա օտում, շատը թողում ՙուրՙան: Թաքավըերեն տղան տրա ծեռքան փոնում ա, ասում մեհենգյան տենը տՙու վըս իմ հոքուս հնգերը, էսքան տարե ամմեն տըեղ շոռ ըմ եկալ, վըեչ մին մարթ քզմընան չի իլՙալ: Հորս կտակն ա, պիտի կատարեմ, վըեր հացեն խրեգյը տՙու վըս եր կալալ, շատը ինձետե թողալ, մենակ տո՛ւ կարող ըս իսկական հնգըեր ինիս: Էտ քյՙասիբը տրան թա տու հարուստ մարթ ըս, ինձնըհետ հնգըրոթուն չըս անել, քյինՙա քզետե օրիշ հնգըեր քթի: Թաքավըերեն տղան թա՝ չէ՛, զուր ըս տի պեն ասում, իմ իսկական հնգըերը տու կարող ըս ինիս: Էտ քյՙասիբը թա՝ հՙալՙա մտածե, ինձնըհետ հնգըրոթուն անողը ուրխոթունն էլ պիտի ինձնհետ կես անե, ցավն էլ, ես էլ ՙուրՙան մնան, ամմեն հինչ պիտի մաչ տըեղ տինինքյ, կես անենքյ: Թաքավըերեն տղան թա՝ հա, տի յել պիտի ինի: Վերչը, տահանք հնգըերունք ըն տըեռնում:

Մին օր էտ քյՙասիբ տղան թաքավըերեն տղեն ասում ա.-Ըստըեղաս մոտե մին թաքավըերու ախճիգյ կա, ինքյը շատ ղաշանգյ ա, հՙարՙուր տղու

նհետ փսակված կինի, լոխճինին էլ կլխընեն ա մնացալ մին պըղվալում, քյինա̀լ պիտիս էտ ըխճըկանը նհետ փսակվըես: Տա թա բա̀լքի տու օգում ըս վըեր իմ կլխըս էլ ինգյի էն մնացած կլխընըերեն մաչը: Էտ քյա̀սիբը թա քեզ վըեր ասում ըմ, ըրխըյին քյինա̀:

Թաքավըերեն տղան եր ա կենում, թուշ քյինամ էտ թաքավըերեն ըխճըկանը պալատը, նի միննում նրա օթաղը, տըեսնում ըխճըկանը պիրանավը մին օցու կլո̀խ տո̀ւս ա կյամ, վըեր բիդի ո̀ւրա̀ն մուտանա: Տա ղա̀մա̀ն տո̀ւս ա օնում, թխում կլո̀խը կտրում, ծիքյ տամ ջա̀մդա̀կն էլ բուղազան տո̀ւս օնում, կտորում, թայա տամ, ըխճըկանը նհետ փսակվում: Հնգերը կյամ ա, թա քու սաղ հարստությունտ էլ, կնգանըտ պեժինքյն էլ, կնեգյտ էլ պիտի ինձնհետ կես անես, լա̀վ հնգըերը տի յա ինո̀ւմ: Տա լոխ մաչան կես ա անում, վըեր պենը կյամ ա կնգանը հսնում, գյո̀ւղո̀ւմ չի թա հի՞նչ անե: Հնգըերը դաստին կլխու վա ինգյո̀ւմ, ասում.-Չէ , մզմըզամիլ, հնգրոթունը տի յա ինո̀ւմ, կնեգյըտ էլ պիտի կես անես: Կնգանը տանում ըն էրկու ծառու դաթ, մին քյանդիր մին վըեննան ու մին կուռնան կապում հացընում մին ծառը, մին քյանդիր էլ էն մին վըեննան ու կուռնան կապում, ճոնդը էն մին ծառան կապում, վըեր ծիքյ ըն տամ, թա մաչան կես անեն, ախճիգյը ծղկ ա անում, պիրա̀նա̀վը փորան էրկու ծո̀ւ վըեր քցո̀ւմ: Էտ քյա̀սիբ տըղան թա՝ լա̀վ, քյա̀նդիրը կտրե, քեզ փուրցելի հետե էս պենն ըրե, վըեչ մին պենըտ էլ ինձ հարկավըեր չի, մեհենգյ, վըեր ես կարող ըմ քզնըհետ հնգըրոթուն անեմ:

Քյա̀նդիրը կտորում ըն, ըխճըկանն ըզադում, էտ էրկու ծո̀ւվանքն էլ փշըրտում, քյինա̀մ տոն:

## 26.ՔԱՉԱԼ ԱԽՊԵՐԸ

Երեք ախպըեր ըն ինո̀ւմ: Ախպորցը կուճուրը քաչալ ա ինո̀ւմ: Տահանց հա̀րը մըռնելիս տղորանցն ասում ա. - Ինձ վըեր թաղեքյ, իրեք օր հինգյիստիս ղարաղուլ կանեքյ: Մո̀ւրթա̀ ո̀ւրո̀ւլգյո̀ւնը մըեծ տղեն օչերդն ա ինո̀ւմ: Քաչալ ախպըերը տրան ասում ա.-Քյինա̀ ղարաղուլ ըրա, տա թա կորի ռադ իլ, քաչալ, մըեռած մարթին կյուղունննա՞կան չըն հու: Մըեծ ախպըերը վըեր քյինամ չի, քաչալն ո̀ւրա̀ն փստոննի թո̀ւվա̀նգյը յոր ա օնում, ո̀ւրո̀ւլգյո̀ւնը տանան տո̀ւս կյամ, քյինա̀մ տըեսնամ մին կյա̀րմո̀ւր ծիյավուր կրակ վըեր ըծելավ էրգյինքյա̀ն վըեր եկավ, հորը հինգյըստա-

րանն ըսկըսավ քա̀նդիլը, նհետն էլ ո̀ւշո̀ւնց տալը: Թո̀ւվա̀նգյը թուշ ա օնում, յիրա անում վըէր քցո̀ւմ, ծին յոր օնում, տանում մին թաքուն տըեղ կապում: Էրկուինջի օրը մաշնակ ախպըէրը պիտի քյինա̀ր, քյինամ չի: Քաչալը թո̀ւվա̀նգյը յոր ա օնում, հղե հինո̀ւմ, քյինա̀մ տըեսնում մին բոզ[1] ծիյավուր էրգյինքյա̀ն վըէր էկավ, ըսկսավ հորը կյիրիզմանը քանդիլը, նհետն էլ ո̀ւշո̀ւնց տալը, թա տու վի՞ր, վըէր ախպորըս ըսպընեցէր: Քաչալը թո̀ւվա̀նգյը յիրա̀ յա անում, տրան էլ ըսպանում, շորէրը նան զենքէրը յոր օնում, ծին տանում թաքուն տըեղ կապում: Իրեքինջի օրեն ո̀ւրո̀ւգյո̀ւնը ո̀ւրա̀ն օչէրդն ա ինո̀ւմ: Թո̀ւվա̀նգյը յոր ա օնում, քյինա̀մ տըեսնում մին սև ծիյավուր էրգյինքյա̀ն կրակ վըէր ըծելավ վըէր ա կյամ, կյիրեզմանը քա̀նդո̀ւմ, ըսկսում ո̀ւշո̀ւնց տալը, թա տու վի՞ր, վըէր իմ ճոխտ ախպորս ըսպընեցէր: Քաչալը թո̀ւվա̀նգյը թուշ ա օնում, յիրա̀ անում տրան էլ ըսպանում, զենքէրը յոր օնում, ծին տանում թաքուն տըեղ կապում:

Մին քանի օր վըէր անց ա կենում, թաքավըէրն ո̀ւրա̀ն էրգյիրին ազղուն ջիհիլներեն հըվաքում ա, ասում ա. - Քյինա̀լ պիտիքյ էսհինչ ծովումը իրեք մըեծ օշափ կա, ըսպանեքյ, քշտըըներեն իրեք հո̀ւրի-փա̀րիներեն էլ ըզադեքյ, պիրիքյ: Տահանց նհետ էտ էրկու ախպըէրն էլ ըն քյինա̀մ թաքավըէրեն կոշտը: Քաչալը ախպորցն ասում ա. - Լավ է՛, թուղեցէքյ ես էլ կյամ: Տահանք թա՝ կորի քաչալ, քըզանա պեն չի տո̀ւս կյա̀լ: Վըէր տըեղ ըն հսնում, լոխ զենքէրը էր կալած քյինա̀մ ըն վըէր ուշափեն ըսպանեն: Մըեծ ախպըէրն օզում ա ծովն անց կենա, կարում չի: Քաչալը կարմո̀ւր ծին նստած կյամ ա թաքուն նի մննում ծովը, մին ուշափեն ըսպանում, ամենամըեծ քվորը յոր օնում, պիրո̀ւմ: Մաշնակ ախպըէրն էլ ա քյինա̀մ, վըէչ մին պեն կարում չի անե: Քաչալը բոզ ծին քշո̀ւմ ա, հսնում ծովը, էն մին ուշափեն էլ ըսպանում, մաշնակ քվորը յոր օնում պիրո̀ւմ: Քաչալն էտ հո̀ւրի-փա̀րիներեն թաքուն տըեղ պահում ա, վըէչ մինն էլլա պենա̀ն խաբար չի ինո̀ւմ: Տրանա էտը քյինամ ա ախպորցը կոշտը, ասում. - Ուշըփներեն ըսպանալ ըմ, հո̀ւրի-փա̀րիներեն ըզադալ: Տահանք ծիծաղում ըն: Քաչալը քյինա̀մ ա իրեք քվորն էլ թաքուն պահած տըեղան տո̀ւս օնում պիրո̀ւմ, մըեծ քվորը տամ մըեծ ախպորը, մաշնակը՝ մըշնակեն, կուճուր քվորը նհետ էլ ինքյը փսակվում: Թաքավըէրն էլ էտ ուշըփներեն ըսպընելի հետե տահանց մըեծ-մըեծ խըլըթնե յա անում, շատ փող, վըեսկե տամ:

[1] Մոխրագույն (Ս. Կ.):

Ախպըերքը մըեծ-մըեծ տներ ըն շինո՛ւմ, ո՛ւրա՛նց հետե շատ տես-տեն ինքյ օնում, ըսկսում տըեղ լա՛վ ապրելը։

27.ՃԿՏԱԿՅԻՐԸ

Էս քաթը ես ըսկացալ ըմ իմ պապե Սլեյմաննեն անա, իսկ ինքյն էլ ո՛ւրա՛ն պապե Առուստամեն անա։

Ըլա՛լ ա չիլա՛լ մին շենում մի հայտնի թաջիր ա ըլալ։ Էս թաջիրը ո՛ւրա՛ն օղտերեն քյրվանավը աշխարքը շոռ ա տամ և հասնըմ մինչև Հնդկաստան, Չինաստան, Միջին Ասիա և շատ տեղեր։

Էս թաջիրը մին դո՛ւզավ քյարվանավ և ո՛ւրա՛ն դուլլուղչիներավը քյնա՛լիս տեսնըմ ա մին ծառե տակեն էրկու ջա՛հիլ նստած։ Էս ջհիլներան մինը կյրո՛ւմ ա տամ ո՛ւրա՛ն հնգերեն, իսկ հնգերն էլ էն կյրա՛ծը ճնջո՛ւմ ա։ Թաջիրը մուտանըմ ա և հըցնում.-Ա՛յ ջհլնե, էտ հինչ ը՞ք կյրո՛ւմ։ Ջհլներան մինը ասըմ ա.-Մունք մարթկանց հետե ճկտակյիր ընք կյրո՛ւմ։ Թաջիրը ասըմա.-Մին ճկտակյիրը քանե՞ մանեթ ըք կյրո՛ւմ։ Էս կյրո՛ղը ասըմ ա.-Մին ճկտակյիրը հենգյ մանեթ ա, օզըմ ըս կյիրինքյ, օզըմ չըս կյիրինքյ հուչ։

Թաջիրը հենգյ մանեթ ա տամ և ասըմ ա, վեր ո՛ւրա՛ն հետե մին ճկտակյիր կյրին։

Էս տղեքյը ըսկսում ըն թաջիրին ճկտակյիրը կյիրիլ։ Ընդահանք կյրո՛ւմ ըն. «Թաջիր, տու հայտնի հարուստ մարթ ըս, ամմա խոխա չօնիս, վերչըմը քեզ էրկու տղա, մին ախճիգյ ա ըննա՛կան, ամմա մին ա՛, ըլա՛ծ հրստոթունըտ մին քյսիբու խոխա պիտի օտե»։

Թոխտը կյրո՛ւմ ըն, տամ թաջիրին։ Թաջիրը կա՛րթըմ ա և ասըմ. - Ա՛րա, ծեզ մատաղ, կալիքյ տասսը մանեթ էլ տամ, միայն ճնջեցեքյ և նորից կյրեցեքյ։

Էս կյրո՛ւղնեն ասըմ ըն.- Չէ՛, կյրածը ճնջվիլ չի, հինչ վեր կյիրվալ ա, պըծալ ա։

Թաջիրը կզնվում ա, էտ կյրա՛ծ ճկտակյիրը ճըղոտում և մին քանե պակաս խոսկ էլ ասըմ ըտահաց ու հրամայըմ քյարվանը առաչ քշին։

Քյարվանը շատ ա քյնո՛ւմ, թա խըեգյ, մին շենի քշտավ քյնիլիս տեսնըմ ըն շենին դըրաղեն մին ըտըժանե ծակ-ծուկ տոն և տանը կտըեն մին տղա նստած։ Թաջիրը տղեն պարզյում ա տամ և ասըմ. - Ա՛յ տղա, մեր քյարվանը հոքնալ ա, կթողի՞ս էս քշեր ծեր հայաթըմը դնջանա՛ն, էլի

առավոտը ճանապարհ ըղնին:

Էս քյա̀սիբ տղան շատ ուրխանըմ ա և թաջիրին լավ ընթունում ա: Էս քյա̀սիբը ուրխանըմ ա նրա համար, վեր ինքյը սոված ա, թաջիրը ո̀ւրա̀ն էլ մին կտոր հաց կտա:

Քյարվանը վեր ա կյամ, թաջիրը ծառաներին հրամայըմ ա ոչխար մորթին, հաց շինին, վեր հաց օտին դնջա̀նա̀ն, միկա քյնին և նորից հղեն շարունակին:

Հաց ուտիլիս թաջիրը էս քյա̀սիբին հացու հա̀մեցեքյ ա անըմ: Էտ քյա̀սիբը ո̀ւրա̀ն կնգանը և մին տարեկան մաղար տղա վերցրած կյամ ա թաջիրին քշտեն նստում: Միկա վիր օտըմ ըն, խմում, էտ քյա̀սիբի տղեն փոքր մայա յա ըղնում, ըսկսում ա չորեքթաթ տալավ քյնիլ թաջիրի գյո̀ւրգյը, խաղ անել նրա բեղերավը և ո̀ւրա̀ն սիրիլ տալ, բղերան փռնել, պաչիլ... դե խոխա յա, հինչ ա̀ գյո̀ւնղո̀ւմ:

Լա̀վ հաց կերեն, վեր կացեն, վեր քիչ դնջա̀նա̀ն, իսկ էս քյա̀սիբն էլ ո̀ւրա̀ն կնգանը և տղայի հետ անցավ իրան տոնը: Լոխ քոն իլին, ամմա թաջիրին քոնը չտարավ: Թաջիրին օշը-միտքը ընգալ ա էտ քյա̀սիբի տղեն յրա: Թաջիրը մուտանըմ ա ծառաներից մեկին քնից եր կըցնում, մի քսակ ոսկի տամ և ասըմ.-Էս քսակ ոսկին տար տոք էտ քյա̀սիբին և ասե. - Էտ ոսկին եր կալ, էտ խոխան ինձ տոք:

Ծառան քսակը տանըմ ա քյա̀սիբին քնից եր կացնում և նաղլ անըմ թաջիրի խնթիրքը: Էս քյա̀սիբը ասըմ ա. - Ա՛յ բալամ, պա մին խոխա յա, էլ օնինքյ վէչ, հունց տա՞մ:

Էս քյա̀սիբ տղեն կնեգյը շատ խելունք ա ընում: Ասը մա.- Ա՛յ մարթ, պեր խոխան տանք թաջիրին, նրա համար, վեր մունք քյա̀սիբ ենք, թաջիրի ոսկավը տուն կշինենք, համ էլ թաջիրը մեծ մարթ ա, սուվաբ ա տառնում, համ էլ նա խոխին ուսում կտա, համ էլ մունք ջա̀հիլ ընք, էլի խոխա կունենանք: Վերչապես մարթը և կնեգյը մասլահաթ ըն կյա̀լիս ու խոխան տամ թաջիրին:

Թաջիրը քյարվանի առաչին օղտեն նստած, քնած խոխան խտտած ճանապարհվում ըն:

Քշերվա կեսից անց լո̀ւսա մոտ քյարվանը հսնում ա մին ծմակ: Էս ծմակըմը թաջիրը հիշում ա, վեր ո̀ւրա̀ն  ճակատակյիրում կյրված ա, որ ըլածը մին քյա̀սիբի խոխա բիդի օտե: Էս հիշիլա̀վ, թաջիրը ծառային

կանչըմ ա և ասըմ.

-Էս խոխան տար ծմակըմը մորթե և եք: Ծառան խոխան խտտած ծմակավը պատառ քյինո՛ւմ ա և մտածըմ.- Տեր աստված, էս անմեղ քյո՛րփա՛ն հինչ մե՞խկ օնե, որ ես մորթիմ:

Ծառան խոխան տնո՛ւմ ա մին ծառի փչակում և ետ կյամ հասնում քյարվանեն: Թաջիրը հարցնում ա՝ ռադ արի՞ր: Ծառան պատասխանըմ ա.- Հա՛, թաջիրը ապրած կենա, հրամանըտ կադարված ա: Թաջիրը ծառայի զահմաթհախին մի հափուռ ոսկի յա տամ և ասըմ, - Լավ, նստե օղտըտ, քյնինքյ:

Թող թաջիրը քյրվանավը քյնի, իսկ մունք խոսինքյ էտ քյա՛սիբից: Լո՛ւսը պեցվում ա, քյա՛սիբը և ո՛ւրա՛ն կնիկը լա՛ց ըն ընո՛ւմ, մորը ծծերը օռչըմ ա և վերչապես կնեգյը մարթին ասըմ ա,-Ա՛յ մարթ, խոխան կորցրենքյ, ամմա փառք աստծու, թաջիրը բոլ ոսկի յա տվալ, քյնի մի քանե ուստա եր կալ, քյնի ծմակը, տան փադեր կտրիլ տոք, վեր մին տոն շինինքյ:

Էս քյա՛սիբ տղան մի վեց-օխտը ուստա մարթ եր կալած քյնո՛ւմ ա ծմակը: Ուստալարը ըսկսում ըն փադ կտորելը, իսկ էս տղան ծմակումը տխուր ման ա կյամ և բո՛ւրդա՛ն ընգուճավը մի խոխի լա՛ցի սա՛ս ա ըղնում: Էս լա՛ցի սա՛սին քյա՛սիբը քնո՛ւմ տեսնըմ ա ո՛ւրա՛ն խոխան ծառեն փչակըմը: Էս քյա՛սիբը խոխան յոր ա օնըմ, կյամ տոն: Դե, ա՛յ կարթացող, տու մտածե, թա էս տանը հինչ ուրախություն կինի: Համ խոխան ճարած, համ էլ ոսկի ըստացած:

Էս քյա՛սիբը թաջիրի տված ոսկովը մին զյեղեցիկ պալատ ա շո՛ւնո՛ւմ, հյաթըմը լա՛վ քյա՛հրիզ տո՛ւս քցո՛ւմ, հայաթի չորս կողմը հասար քաշում և քու սրտի օզածի պես հարստանում:

Էս դեպքից դո՛ւզ քսան տարե հետո էս զյոռբազյոռ թաջիրը նորից ո՛ւրա՛ն քյրվանավը կյամ ա էլլհա էս հյաթըմը վեր կյամ, վեր հանգստանա: Ամմա վեչ թաջիրն ա ճնա՛նչըմ էս քյոհնա՛ քյա՛սիբին, վեչ էլ քյա՛սիբն ա ճնա՛նչըմ թաջիրին: Եթե առաչվա կյա՛լա՛վը թաջիրն ա էս տղեն հացի համեցեք արալ, իսկ մեհենգյ էս քյո՛հնա քյա՛սիբն ա թաջիրին իրան ծառաներավը ղոնաղ կանչըմ և օղտերեն կորմը տամ ու լա՛վ տեղավորում:

Լավ տոն, ճանապար եկած սոված մարթիքյ: Ստում, խմում, լա՛վ քյեփ ըն անըմ: Հացից հետո լո՛խ քյնո՛ւմ ըն քնում, ամմա թաջիրը և էն քյո՛հնա քյա՛սիբը սկսում ըն զրո՛ւց անելը:

Թաջիրը հրցնում ա, ասըմ ա հինչ կա՞, հինչ չկա՞, հունց ը՞ն ապրում ծեր ժղովուրթը և շատ զրո՞ւցներ։ Զրո՞ւցի վախտը թաջիրը խոսում ա հարուստից, քյա՛սիբից և ասըմ ա, վեր, լա՛վ հարըստություն օնիս, քեզ հալալ լինի, լա՛վ ես աշխատել։ Էս խոսկի յրա՛ էն քյո՞հնա քյա՛սիբը ասըմ ա. - Թաջիր ախպեր, էս աշխարքըմը հարուստներից անպետք, խիղճը պակաս և ջանավար մարթ չկա։ Թաջիրը զարմացած հարցնում ա. - Արա խե յըս իտի հարուստներին անիծում, չէ՞ վեր տու էլ պակաս հարուստ չըս։ Քյո՞հնա քյա՛սիբը ըսկսում ա պատմել էն, հինչ քսան տարե առաչ ո՞ւրա՛ն խուխեն պատահալ ա և վերչըմը ասըմ ա.- Էն թաջիրը, վեր իմ խոխան տարալ ա, նա խեղճը պակաս մարթ ա ըլա՛լ։ Համել ասըմ ա. - Եթե նրան խոխա պետք չի, հոր ա՞ իմ խոխան տանըմ ծմակըմը թողում և կո՞ւլի փայ շինում։

Թաջիրը նոր ա հիշըմ, վեր էս խոխա տանողը ինքյն ա ըլա՛լ և ըսկսում ա տխրվել ու քյեփը խարաբ ա ընո՞ւմ։ Թաջիրը կզնըված, տխուր նստած ոչ խոսում ա, ոչ ասըմ։ Էս տղան հարցնում ա.-Թա՛ջիր ախպեր, հինչի՞ քյեփըտ խարաբ ըլա՛վ։ Թաջիրը մին քիչ սուս ա կենում և հրցնում.-Էն տղան հոր ա՞ ։ Հայրը բաղասխանըմ ա.-Էն ա հա՛նդո՞ւմը, շուտով կըկյա՛ և հրցնում ա.-Հինչ ը՞ս անըմ։ Թաջիրը ասըմա. - Առուտրական գործես դա՛վթա՛րը մնացալ ա մեր շենումը, մի ծի առնիմ՝ նստե քյնի պիրի։ Էս քյա՛սիբը ասըմ ա.-Մեզ ծի ունենքյ, մեր ծիյովը կքյնի, քու ծի առնելը հա՛ջա՛թ չի։

Էս զրուցի վախտը էն քյա՛սիբի քսան տարեկան տղան մտնում ա, կլո՞խ տամ թաջիրին, բարևում, ծեռքը պաչըմ և նստում։ Քյա՛սիբը իրեն տղեն ասըմ ա թաջիրի դավթարի մասին և տղան շատ սիրով ընթունում ա թաջիրի խնթիրքը կադարել։ Թաջիրը մի թոխտ ա կյրո՞ւմ իր կնգանը. «Ա՛յ կնիկ, քեզ մոտ եմ ուղարկում մի ջահիլ տղա, եկավ թէ չէ, կանչիր մեր ծանոթ ղասաբ Իսային և թող կտրի նրա գլուխը ու էնպես կորցնի, որ ոչ ոք չիմանա»։

Թաջիրը թուխտը կյրո՞ւմ ա, էն տղեն փափաղեն կլխեն ղաթը կոխում։ Տղան ծին նստում ա և հղե ըղնում։ Շատ ա քյնո՞ւմ թա խրեզյ, հարց-փորց ընելավ առավոտը հա՛լա՛ քիչ քշեր մնացած հասնըմ ա թաջիրին հայաթը, տեսնըմ թաջիրին տանը զերթուն մարթ չկա, ծին քաշըմ ա կյումը, կապում, խոտ տամ և պցրա՛նըմ բալկոն են մին թախտու յրա՛ քնում։ Քիչ հետո ծաքյը քցո՞ւմ ա, էն թախտը վերին յրա քյա՛սիբի տղան պառկած ա, էն թուշի

օթաղից թաջիրի աղջիկը տեսնում ա, վեր մին սիրուն տղա էն ա պարանց ընգած: Մուտանըմ ա, վեր մին լավ տեսնա, նկատում ա փափաղին վրա թոխտը: Թոխտը թաքուն հանըմ ա, օթաղըմը կյա̀րթըմ, ճղում թող անըմ և նորից գրում, «Ա՛յ կին, քեզ մոտ եմ ուղարկում մի ջահել տղա, եթե աղջիկս հավանի, պսակիր և թող մեզ մոտ մնա մինչև գալս»: Թաջիրի աղջիկը թոխտը նորից ծածուկ կոխում ա տղայի փափաղի վերևի մասը: Վերջապես լո̀ւսանըմ ա, թաջիրի կնիկը վեր ա կենում, տեսնըմ, մի տղա իրենց բալկոնի թախտին քնած: Վեր ա կացնում քնած տեղից և հարցնում, թե հով ա՞: Միամիտ և կյիր չիմացող տղան թաջիրի թոխտը փափաղան հանըմ, տամ ա խանըմին: Խանըմը կարթըմ ա և արդեն ուրիշ տեսակ ա ունթունում: Թաջիրի կինը կանչում ա բոլոր հարևաններին և պարիկամներին, կարթըմ մարթին կյրա̀ծ թոխտը և ախճկանը հարցնում,-Ի՞նչ ես ասում հորդ: Աղջիկը պատասխանում ա.- Ես ամուսնանալու միտք չօնեմ, դե հերս վեր ասըմ ա, նրա խոսկը կոտրել չըմ:

Տահանց փսակըմ ըն, լա̀վ օտում-խմում, փսեն, հարնանը կյենացը խմում:

Մին տարեն չլրացած, էս թաջիրի ախճիկը մին լա̀վ տղա րախա յա ծնում: Ուղիղ մի տարի ետ խաբարը հասնըմ ա, վեր թաջիրը ո̀ւրա̀ն քյարվանավը կյամ ա: Ժղվուրթեն նհետ թաջիրին կնեգյը, փեսան, աղջիկը քյնո̀ւմ ըն, վեր թաջիրին դիմավորին: Թաջիրը տեսնըմ ա ո̀ւրա̀ն փսեն, թոռնանը և կնգանը հրցնում ա, - էս հույ ա՞, կնիկը ասըմ ա.-Քու փեսան ա, էս էլ քու թոռնը: Թաջիրը դա̀ստին գյո̀ւղո̀ւմ ա, վեր էս օյինը ո̀ւրա̀ն ախճիգյն ա սարքալ:

Վերչապես կյամ ըն տոն: Թաջիրը որոշում ա հինչ օզըմ ա ինի, էտ քյա̀սիբի տղեն կլո̀խը օտե: Նա քյնո̀ւմ ա համամը, վեր լղանա, ամմա համամչուն ասըմ ա.-Քյո̀ւլքյըս թողում ըմ քշտիտ, մին տղա յա կյլա̀կան, վեր եկավ թա չէ, կոխիր կրակեն մաչը:

Համամչին ռազի յա կենըմ, մի քանե մանեթ էլ ըստանըմ թաջիրից: Թաջիրը լղանըմ ա հմամումը և կյամ տոն: Կյամ ա թա չէ, փեսան ջհո̀ւմ ա: Ասում ա. - Փեսա ջան, քյո̀ւլքյըս թողալ ըմ համամումը, քյնա̀ պիր: Փեսան միկա քյնո̀ւմ ա, թաջիրի մեծ տղան պտահըմ ա և հարցնում. - Փեսա, ո՞ւր ես գնում: Փեսան ասըմ ա. - Պապան քյո̀ւլքյը թողալ ա հմամումը, քյնո̀ւմ ըմ պիրիմ: Թաջիրի տղան կզնվում ա և ասըմ.- Տու խոխա յըս, վեր քեզ իտի

պենի հետե ղարկըմ ա, ետ քյնի, ես կքյնիմ պիրիմ: Տղան քյնո՛ւմ ա թա չէ, համամչին փռնում ա կոխում համամի ըզղանի կրակի տակը:

Փեսան տուն գալով, հաները հարցնում ա,- Քյո՛ւլքյը բերա՞ր: Փեսան ասըմ ա.-Չէ՛, ձեր տղան ինձ ետ տվավ և քյեցավ ընքյը պիրի: Թաջիրը կտաղած վազ ա տամ և հռնանցե ծեն տամ համամչուն.-Համամչի՛, համամչի՛: Իսկ համամչին կարծըմ ա, թա ասըմ ա ճելլի ըրա և հռնանցե բաղասխանըմ ա.- Թաջիր վախելմիր, հետը-թեփուռը մա՜հիլըմ չի: Թաջիրը կրկին կատաղած քյնում ա մի ղասաբի մոտ և ասում.-Քեզ մոտ մի տղա պիտի կյա միս առնելու, եկավ թե չէ, կռնղը կտրե, քցի վերը:

Էս անքամ էլ թաջիրի փոքր տղան է փեսային միս առնելուց ետ տամ և ինքը գնում է, թե չէ, ղասաբը պիծի տղեն քյո՛ւլք պիրողի գլխին եկած օյինն ա սարքում՝ կտրում ա կլո՛խը և գցում վերը:

Թաջիրը շատ ու շատ նեղն ա ընկնում և գալիս է տոն: Նա մի թոխտ ա կյրո՛ւմ էսպես. «Իմ եղած-չեղածը, շարժվող և չշարժվող գույքը, կտակում եմ էս քյա՜սիբ տղին և հալալ ըմ անըմ, որովհետև էսպես ա իմ ճկտակյիրը»:

Գրում է թե չէ, մի ըստաքան օխծի լղե յա խմում և սատկում: Աղքատի տղան մինչև էսօր ուտում-խմում է թաջիրի հարստությունը և վայելում նրա մարալ աղջիկը:

## 28.ԿՈՐԱԾԸ ԳՏՆՎԵՑ

Մին հարուստ վաճառականու տասնօթ տըրեկան մին շատ ղա՜շանգյ ախճիգյ ա ինո՛ւմ, մինգյել քաներկու տըրեկան տղա: Էտ վաճառականը միշտ պարախողներավ քյինա՜մ ար օրիշ երգյիրնե, ապրանք ար տանում ծախում, յա ինքյ օնում, տարանը մեհետ, էրկու հետ, շատ վախտ էլ էրկու-իրեք տարեն մեհետ կյամ ո՛ւրա՜ն տոնը: Տրա ամմենամոտե մարթը մին քահանա յա ինո՛ւմ: Ինքյը տանան վըեր տո՛ւս ար կյամ քյինա՜մ ղարիբռթուն, քահանան միշտ տրա տանը կենում ար: Տա յար էտ վաճառականեն տղեն ան ըխճըկանը պահողը նան ղաստիրակողը: Մեհետ էլ վաճառականը վըեր քյինա՜մ ա օրիշ երգյիր, քահանեն մըետկը ծռվում ա, օզում ա ըխճըկանը մուտանա: Մին քշեր, հենց վըեր տղան քունավ ա հնցընում, քահանան նի յա մննում ըխճըկանն օթաղը, տըեսնում լիհա՜ նոր ա օզում քոն ինի: Ըխճըկանը նիհետ շատ էրկան խոսում ա, զարափաթնե անում: Ախճիգյը հա՜լա՜ սո՛ւրթա՜ պեն չար կլո՛խ ինգյո՛ւմ, հոր տըեղ ար տինո՛ւմ:

Վերչը, քահանան ըխճըկանը պարզ ասում ա, վըեր էտ քշերն օզում ա ո̈ւրա̈ն քըշտին մնա: Ախճիգյը թողում չի: Քահանան զոռավ օզում ա, թա մուտանա, ա̈մա̈լ չի կյամ, ախճիգյը կզնըվում ա, տրան խայտառակ անում: Տա յէլ էքյսը մին շատ էրկան նամակ ա կյիրո̈ւմ հորը, վըեր ախ- ճիգյտ էս քըղաքումը տղա չի թողում, լոխճինին նհետ շոռ ա կյամ, մըեզ լոխճինին խայտառակ անում: Էտ վաճառականն էլ շատ ըռնախում մարթ ա ինո̈ւմ, տղեն յիրա̈ կյիրում ա, թա քըվորտ կըսպանես, մեյդը հունց կուրցընես, վըեր հետն ու թըեփուռն ուրվա վուչ, իսկ կյեցէ շորերն ո̈ւրա̈ն ա̈ռնո̈ւմը թաթախ կանես պահես, ես կյամ տըեսնամ: Վըեր ասածս անես վուչ, կյիլական ըմ ծըեր ճոխտեն էլ ըսպանեմ:

Տղան նամակը կարթո̈ւմ ա, զյո̈ւղո̈ւմ չի, թա հինչ անէ: Քյինա̈մ ա քահանեն կոշտը, վըեր մսլըհաթ անէ: Տա յէլ թա՝ յա̈նի հորըտ խըսյաթը զյո̈ւղո̈ւմ չը՞ս: Մին ա, վըեր տու քուվըերըտ ըսպանես վուչ, ինքյը ճոխտետ էլ ըսպըննական ա: Տղան թա՝ պա հինչ ա՞նեմ: Քահանան ասում ա.- Լա̈վն էն ա, վըեր քվորըտ քզնըհետ յոր օնես, քյինա̈ս վըերս: Հէնց վըրսատըեղ էլ կըսպանես, ծմակումը մին կոռած տըեղ թաղես, շորն ա̈ռնո̈ւմը թաթախ անես, պիրիս:

Տղան, ճարը կտրած, քվորը յոր ա օնում, քյինա̈մ վըերս: Ախճիգյը շատ ուրխանում ա, ըսկսում թռվռալը, վըեր ախպորը նհետ քյինա̈մ ա վըերս:

Հէնց վըեր նի յըն մննում ծմակը, ախպըերը եշում ա, տըեսնում մին վըեր ինգյա̈ծ էրկան ծառու ղըաղէ մին ղա̈շա̈նգյ, կյա̈րմո̈ւր տոպ փսած: Տղան քվորը թա՝ կըկարե՞ս քյինա̈ս էն տոպը կտրես, պիրիս: Ախճիգյը վազ տալավ քյինա̈մ ա փաղավը կռանում, վըեր տոպը կտրէ, պիրի տա ախպորը: Ախպըերն էլ թո̈ւվա̈նգյը թուշ ա օնում, վըեր յիրա̈ անէ, քվորն ըսպանէ: Հէնց էտ վախտը ծառեն տական մին ըլբաստրակ ա տուս կյամ, թա փախճի տղան թո̈ւվա̈նգյը հըլրո̈ւմ ա, ըլբըստրակեն նշա̈ն փըռնում, յիրա̈ անում, ըսպանում: Ըլբաստրակը վըեր ա ինգյո̈ւմ, ախճիգյը վազ ա տամ, վըեր յոր օնէ, տղան մուտանում ա, ըլբըստրակեն եշում, տըեսնում հոքուն յիրա̈, աշկերը հլո̈ւր-հլո̈ր ընելիս: Տղան վըեր ըլբըստրակեն տի տըեսնում ա, սըերտը տըղըըհան ա ինո̈ւմ: Մտածում ա, թա յա̈նի քուրս է՞լ պիտի մըռնելիս աշկերը տի հլո̈ւր-հլո̈ր անէ, մինգյել ասում՝ հինչ օզում ա, թող ինի, ես իմ քըվորս ըսպըննական չըմ: Հորը նամակը, քահանեն նհետ ըրած մըսլըհաթը, ամեն հինչ քվորն ասում ա, ետնան էլ թա մունք

ամենեքյանբախտ քուրուախպըերն ընք, վըեր էն հա̈րը մըերն ա, մունք կըրըլական չընք ո̈ւրո̈ւր իրես տըեսնանք։

Ախպերը յոր ա օնում քվորը կյեցէ շորերը ըլբըստրակեն ա̈ռնո̈ւմը թաթախ անում, ո̈ւրա̈ն էլ թա՝ քյինա̈ տո̈ւս եք մին հեռու տըեղ, ընդեղեքյ կլո̈խըտ պահէ։

Ախճիգյը մենակ տակէ շորերը կյեցը հղէ յա ինո̈ւմ քյինա̈մ, մին հեռու ծորում մըթեն ա ինգյո̈ւմ, նի յա միննում քըերծեն ղաթումը քշերը կենում, լո̈ւսա̈նո̈ւմ ա։ Էտ օրը մին օտպուսկ եկած ափիցեր շոնը եր կալած, տըեղեքյ վըերս ընելիս ա ինո̈ւմ։ Շոնը քյինա̈մ ա տրա վըեր քըցա̈ծ ըլբաստրակը յոր օնում պիրո̈ւմ, մինգյել վըեր երկալած տո̈ւս ա կյամ էտ քըիրծեն ղաթը, ըսկսում տըեղ շատ էրկան հա̈չիլը։ Էտ ափիցերը թո̈ւվա̈նգյը երկալած կյամ ա բիղի քըերծեն ղաթը եշում , տըեսնում հըռըցանա մին հինչ վըեր պեն ա ուրվամ, բայց գյո̈ւղո̈ւմ չի, թա հինչ ա։ Թո̈ւվա̈նգյը թուշ ա օնում, վըեր յիրա̈ անէ վըեր քցի, բո̈ւրդան քըերծեն ղաթան սա̈ս ա ըսկանում. «Ա՛խպըեր, ա՛խպըեր, յիրա մի անիլ, ես ախճիգյ ըմ»։ Ափիցերը թա՝ պա խէ տո̈ւս չը՞ս կյամ։ Ախճիգյն ասում ա. - Տկլոր ըմ, թա ծըեռքետ շոր կա, ինձ տո կյենամ, տո̈ւս կյամ։

Տրա ծըեռքեն մին պլաշ ա ինո̈ւմ, տամ ա ըխճըրկանը. կյենում ա, տո̈ւս կյամ։ Տղան հրցընում ա, թա տու հո՞ւ վըս, հի՞նչ ըս, ըստըեղեքյ հի՞նչ ըս անում, ախճիգյը թա՝ իմ նաղլը էրկան ա, ես հա̈լա̈ ազափ ըմ, թա բարի մարթ ըս, ինձ մարթու տո, վըեր կարեմ խըթա հեռու մնամ։ Տղան թա՝ քըզանա լա̈վ ախճիգյ չըմ քըթիննա̈կան, սօրվա ամենալա̈վ վըերսըս տու վըս իլա̈լ, եք քըեզ տանեմ մըեր տոն, ինձնըհետ փսակվէ։ Ախճիգյը տրա նիետ քյինա̈մ ա, տղեն հա̈րը, մարը, ախպըերքը, քուվըերքը շատ ուրխա-նում ըմ, պիրո̈ւմ ըն տրան լա̈վ շորեր կյեց տամ, տահանք էլ շատ հարո̈ւստ ըն ինո̈ւմ, մին մըեծ հըրսանեքյ ըն անում, տղան հառհըևը թողում ա տանը, ինքյը քյինա̈մ ո̈ւրա̈ն ծառայությանը։ Վըեր մին տարէ կլխավն անց ա կենում, տահանց մին տղա յա ինո̈ւմ։ Տղեն յիրա̈ նամակ ըն կյիրո̈ւմ, վըեր կընեգյըտ մին ղաշանգյ տղա յա պերալ։ Տա օզում ա օտպուսկ յոր օնէ կյա տոն, պեց չըն թողում, ասում ըն թա՝ շատ ըք օզում ո̈ւրո̈ւր տըեսնաք, թող ախճիգյը պարախոդ նըստէ, կյա̈ ըստըեղ։

Տղան նշընածեն յիրա̈ նամակ ա կյիրում, սա յել եր ա կենում պըդրաստվում, վըեր պարախոդավ հղէ ինի։ Մարթին յիրա̈ հըռակյիր ա

տամ, թա կյամ ըմ, ինձ ըսպասե: Տա վըեր խոխան նհետը պարախոդ ա նըստում, հա̀լյա̀ ծուվեն կեսը չիըսած, էտ պարախոդեն մըեծը, վըեր մին շատ կյեշ, այբեջա̀ռ, համ էլ ըռնախում մարթ ա ինո̀ւմ, տրան մուտանում ա, թա ըստըեղ խուխեն հետե լա̀վ չի, պեր մըեր կոշտը, ընդըեղ լա̀վ տըեղ կա: Ախճիգյը տրան հըվատում ա, խոխան յոր օնում, քյինամ: Էտ մարթն ըխճըկանը մուտանում ա, ասում.-Էս քշեր իմ քշտիս պիտի մնաս: Ախճիգյը տրան յիրա̀ յա պրծընում, ասում.-քըեզ կարքեն, մըրթըվարի պահե: Էտ մարթն էլ ըխճըկանը թա՝ քեզ քսան րոպե ժամանակ ըմ տամ, մտածե, թա օզում չըս, խոխատ քցիլական ըմ ծովը:

Ախճիգյը քյինա̀մ ա մտածում, մտածում, գյո̀ւղո̀ւմ չի, թա հինչ անե:

Էտ մարթին նան ըխճըկանը խոսկերքը լոխ մին մատրոս ըսկացած ա ինո̀ւմ: Տա ըխճըկանը մուտանում ա, հրցընում, թա խե յը՞ս դիլխոր: Ախճիգյն ամեն հինչ ասում ա, տղան թա՝ ես ամեն հինչ գյո̀ւղո̀ւմ ըմ, նրա խըսյաթը փիս ա, միշտ էլ ըսածին տարն ա: Ախճիգյը տրան հրցընում ա, թա մեհենգյ կարել չը՞ս ինձ մին պենավ էլլա քյո̀մա̀գյ անես: Տղան թա՝ վըեչ մին թա̀հիր էլլա կավուչ, մենակ մին պեն ա մնամ՝ խոխան տինինքյ լութկեն մաչին, յա բախտինա ծովումը պեց թողենքյ, ետնան տու կասես, վըեր խոխան տու վըս ըսպանալ, հանցու վըեր ո̀ւրա̀ն ծըեռքը չինգյի:

Տի յել անում ըն: Էտ այբեջա̀ռը նորից կյամ ա ըխճըկանը հրցընում, թա հինչ ը՞ս մտածալ, հոր ա՞ խոխան: Տա թա իմ խոխաս իմ ծըեռքավըս ըմ ըսպանալ, վըեր քու ծըեռքըտ չինգյի:

Էտ մարթը նորից ըխճըկանն ասում ա.-Քըեզ տասսը րոպե ժամանակ ըմ տամ, յա պիտի կյաս կոշտըս, յա էլ քեզ ըմ քցըլական ծովը:

Տա վըեր քյինա̀մ ա, էլլա էտ մատրոսը կյամ ա ըխճըկանը կոշտը: Ախճիգյը թա՝ պա իստի պեն կա: Մատրոսը թա էլ վըեչ մին թա̀հիրը չի կա, գյո̀ւղո̀ւմ չըմ, թա հի՞նչ ասեմ, հի՞նչ անեմ: Ախճիգյը թա՝ կարել չը՞ս ինձ էլ տինիս ինդի մին լոթկում, ծովումը պեց թողես: Տա թա՝ կըկարեմ:

Մատրոսը լոթկան պիրո̀ւմ ա, ըխճըկանը նըստըցընում, ծովումը պեց թողում: Մին սաղ օր լոթկան ծովէն յիրա̀ լըեղ ար տամ: Օրվա վերչին ախճիգյը եշում ա, տըեսնում հըռըցանա մին լութկու մնան պեն ա ուրվամ: Տրա մոտկավն անց ա կենում, վըեր ո̀ւրա̀ն խոխան կինի: Ճիրին մաչին տա ծըեռքերեն թափ տալավ լոթկան քշո̀ւմ ա բիդի էտ ա̀նգյո̀ւնը, խուխեն հըսնում, լոթկան մուտըցընում, խոխան յոր օնում, տինո̀ւմ ո̀ւրա̀ն

լութկումը: Դիբրո՛ւզյո՛ւն վախտը քամե յա անում, լոթկան քշո՛ւմ բիդի էն քըղաքեն կոշտը, վըերդըեղ վըեր ո՛ւրա՛ն հա՛րն ու ախպըերն ըն ապրում:

Ախճիզյը տըեղ տո՛ւս ա կյամ քաղաքը, խոխան տանում մին մարթու կոշտ, թա հինչ օզես, կըտամ, մենակ թա էս խոխան մին քանի ամես պահե: Էտ մարթը թա՝ ես խոխա չօնեմ, ինձ տո միշտ պահեմ, տա թա՝ չէ: Վերչը, խոխան թողում ա տրա քշտին, ինքյը մազերը կրճըցընում, տղու շորեր կյենում, քյինա՛մ հորը տոնը, ախպորը մուտանում, թա ծըեր քշտին ինձետե մին գործ չի՞ ինիլ, մին տարե առանց փող կըխշաղեմ: Ախպըերը թա՝ կաց քյինա՛մ հորըս հըրցընեմ, տըեսնամ հի՞նչ ա ասում: Ախպըերը քյինա՛մ ա հորը կոշտը, հըցընում, հարն ասում ա. -Թող էտ բըխճեն, բոստանեն, հըյըթներեն-պեննին եշի:

Ախճիզյը տըեղ մնամ ա, հորն ասած պիներա՛ն կըման տանը մնացած պեներն էլ ա անում՝ սրփո՛ւմ, լուվանում, թիմըզըցնում, ամեն հինչ սա՛քյ-սա՛քյ պահում:

Անց ա կենում մին էրկու-իրեք շեբեթ, հորը քյինա՛լի վախտը կյամ ա: Լոխ հըվաքվում ըն, վըեր հղե տինին, ախճիզյն էլ ա նըհըտնեն քյինա՛մ: Հա՛րը պարախողավ պիտի քյինա՛ր: Ժըղովուրթը հըվաքվում ըն պարախո-ղեն կոշտը: Ախճիզյը եշում ա, տըեսնում՝ տա հա՛մա՛ն պարախողն ա, վըեր ինքյը ուզեցալ ա նստե, քյինա՛ նշընածեն կոշտը: Պարախողեն մըեծեն ան մատրոսներեն դա՛ստին ճինանչո՛ւմ ա: Մըխըրե էն դոլին էլ ո՛ւրա՛ն նշանածն ա ինո՛ւմ դիլխոր վըեննը կացած: Տա վըեր հըռակյիրն ըստանում ա, եշում տըեսնում կնեգյը կյա՛մ չի, մին քանի օրավ պեց ըն թողում, վըեր կյա՛ շոռ կյա, քըթենա՛: Ախճիզյը վըեր տրան տըեսնում ա, կարում չի ո՛ւրա՛ն պահե: Բո՛ւրդա՛ն օզում ա, թա մուտանա, մինզյել զոռավ ո՛ւրա՛ն դրաղ ա քաշում: Լոխ հըվաքվում ըն տըեղ, ըսկըսում ուրխանալը, հու հինչ զյո՛ւղո՛ւմ ար, ո՛ւրա՛ն շնորքը նշանց ար տամ, տա յել երք ա ասում, պար ա կյամ, ծիծըղըցընում: Լոխ մուտանում ըն, ուրխութուն անում, մենակ էտ ըխճըկանը նշանածը դիլխոր, դրաղ վըեննը կացած ա ինո՛ւմ, մուտանում չի: Ախճիզյը քյինա՛մ ա տրա կոշտն էլ, զարափաթնե անում, ծիքյ-ծիքյ անում, ասում՝ տու վըել մուտաց, տու վըել մին պենավ քեզ նշանց տո: Տա թա կորի, ռաղ իլ, ես մեյմունու հընզեր չըմ: Ախճիզյը նորից հըվաքված մարթուցը մուտանում ա, թա եկեքյ մին հունց խաղ խաղ անենքյ, ես մին պեն նաղլ անեմ, նաղլ ընելիս հու վըեր մին տըեղ ասե սոտ ա, փըռնենքյ, թող անենքյ

քցինքյ ծովը: Տահանք թա՝ հա՛: Ախճիգյն ո՛ւրա՛ն կըլխավն անց կացածը լոխ նաղլ ա անում, կյա՛մ ա հսնում էն տըէղը, վըէր քահանան օզում ա ո՛ւրա՛ն յիրա՛ սաթաշմիշ ինի, տըէղ քահանան թա՝ սոտ ա: Հըվաքված մարթիքյը տրա վըննըկըլխան փըռնում ըն, թող անում, քցո՛ւմ ծովը: Ախճիգյը էլլա յա նաղլ անում, վըէր կյամ ա հըսնում ափիցերին նըհետ փըըըկվելին, էտ ափիցերն ըսկանում ա, մուտանում, անջուկ օնում, շատ զարմանում ա, թա էս հիշտըղան ա՞ գյո՛ւղո՛ւմ: Ետնան վըէր հըսնում ա պարախոդավ հղե ինի֊լին, ամեն հինչ վըէր նաղլ ա անում, հըսնում պարախոդեն մըէծեն խուսկերքեն, էտ պարախոդեն մըէծն էլ էն ղոլան թա՝ սոտ ա: Տրան էլ ըն վըննըկըլխան փըռնում, թող անում քցո՛ւմ ծովը: Ետնան ախճիգյը շլափ֊կան կըլխան վըէր ա օնում, հա՛րը, ախպըէրը, նշանածը տրան ճինա՛նչո՛ւմ ըն, ուրխանում, ըխշարքավը մին տըէռնում: Հորը հղե յըն տինո՛ւմ, քյինա՛մ խուխեն յոր օնում, նշանածը տրան տանում ա թողում ո՛ւրա՛նց տանը, ինքյը քյինա՛մ ո՛ւրա՛ն ծառայությանը:

## 29.ՀԱՍՏ ՈՒ ՊԵՐԱԿ ԼՈԽ ՄԻՆ ԿՅԻՆ Ա

Ինո՛ւմ ա, չինո՛ւմ մին մարթ: Էտ մարթին մենակ մին տղա յա ինո՛ւմ: Տեսնում ա, վըէր ո՛ւրա՛նց երգյիրումն ապրել չի ինո՛ւմ, տղան յոր ա օնում շատ երգյիրնե յա շոռ կյամ, թա տըեսնա վըէ՞րդեղ ըպրելի թա՛հրը կա:

Շատ ըն քյինամ, թա խըրեզյ, մին երգյիր ըն տո՛ւս կյամ, վըէրդեղ մարթիքյ ըպրանքեն լա՛վը նան փիսը ճոկում չըն, ամմըեն ջուռռա ապրանք մին կյինավ ըն ծախում՝ կաստիմն էլ ա իրեք կապեկ, հացըեն գյուրվանքան էլ, սուղանըեն գյուրվանքան էլ, ծմըերուկն էլ, կարտոշկան էլ, մին խոսկավ՝ լոխ, ամմըեն հինչ: Տղան վըէր իտի տըեսնում ա, հորն ասում ա. - Էս երգյիրըն իսկական մըէր տըէղն ա, հինչ վըէր լա՛վ ա, ինքյ կօնըենքյ, հըրռուստանանք: Հա՛րն էլ ասում ա.- Չէ՛, մին երգյիրումը վըէր ըպրանքըեն լա՛վը նան փիսը կարում չըն ճոկեն, էն երգյիրումը հունց կը կա՞րըեն մըէզ ճինանչին, մարթ կյինիատըեն, չէ՛, քյինանք մին օրիշ երգյիր:

Հղե յըն ինո՛ւմ, քյինա՛մ: Շատ վըէր քյինամ ըն, մին օրիշ երգյիր ըն տո՛ւս կյամ, տըեսնում էտ երգյիրին ժուղովուրթը հըվաքվալ ըն, մին մարթու սուդ ըն անջուկ օնում: Սուդ անողն էլ թաքավըերն ա ինո՛ւմ: Թաքավըերն էտ մարթին հըրցնում ա. «Տու խե յը՞ս տոնըտ պեցո՛ւր շինա՛լ, վըէր կյողը կյա քու տանըտ ազուշկան վըէր ինգյի, մըեռնե: Տոնըտ վըէր քաշ իիր շինած,

կյողը վըեր կինգյա̀ր, վըեննը կըկոտրար, ծըեռքը կըկոտրար, ինքյը սաղ կըմնար: Տոնըտ վըեր պեցո̀ւր ըս շինալ, տրա հետե քեզ պիտի կախ տանք, հինչ օ՞նըես ըսելի»: Էս մարթն ասում ա.- Թաքավըերն ապրած կենա, տոնը հու ե՞ս չըմ շինա̀լ, ուստեքյն ըն շինա̀լ, թա կախ ըս տըլական, ուստոցը կախ տո:

Թաքավըերն ուստոցը ծեն ա տամ, հըրցնում, թա խե յը՞ք էտ մարթին տոնը պեցո̀ւր շինա̀լ, վըեր կյողը կյա տրա ագուշկան վըեր ինգյի, մըեռնե, տրա հետե ծըեզ կախ ըմ տամ, հինչ օ՞նըեք ըսելի: Ուստեքյն ասում ըն. - Թաքավըերն ապրած կենա, մունք էտ տոնը շինիլիս վախտը քու պըլատատ մին ախճիգյ շատ լա̀վ երք ըսելիս ա իլա̀լ, երքեն սասը կյա̀լիս ա իլալ մըեզ հըսնելիս, ո̀ւրա̀ն տըսնալիս չընք իլա̀լ, տոնը պիցըրցրալ ընք, վըեր էտ ըխճըկանը տըեսնանք, թա կախ ըս տըլական, էտ ըխճըկանը կախ տո:

Թաքավըերը հրաման ա տամ, վըեր ո̀ւրա̀ն պըլատումը հիշքան ախճիգյ կա, հըվաքեն, պիրին կոշտը: Թաքավըերեն պըլատումն էլ ըխճըկեքյը շատ ըն ինո̀ւմ, լոխ հըվաքում ըն պիրում, հըրցըփորց անում, տըեսնում էտ երք ասողը թաքավըերեն մաղար ախճիգյն ա: Թաքավըերն ո̀ւրա̀ն ըխճըկանը հըրցնում ա, թա խե յը՞ս իլա̀լ քու ութաղատ երք ըսելիս, վըեր ուստըեննեն քու դա̀րդա̀տ էն մարթին տոնը պեցո̀ւր շինին, վըեր կյողը վըեր ինգյի մըեռնե: Ախճիգյը կարում չի խոսե: Թաքավըերը հրաման ա տամ, վըեր ո̀ւրա̀ն ըխճըկանը տանեն կախ տան:

Տանում ըն քա̀նդիրը հըղլակ անում, ըխճըկանը պիցըրցնում դաբրետական, յիրա̀ն վըեննը կըցնում, հըղլակը քցո̀ւմ պոկը, վըեր կախ տան: Ըխճըկանը կլո̀խը նան չա̀նա̀ն էնքան կուճուր ա ինո̀ւմ[1], վըեր հըղլական տո̀ւս ա ինգյո̀ւմ տափըեն վըեր ինգյո̀ւմ: Իրեք հետ ըխճըկանը վիզը քցո̀ւմ ըն հըղլակը, իրեք հետ էլ տո̀ւս ա պըրծնում, տափըեն վըեր ինգյո̀ւմ: Թաքավըերն ո̀ւրա̀ն նա̀զիր-վեզիրին ասում ա.- Քյեցեքյ, տըեսեքյ մըեծ կըլխավուր մարթ կա՞, փըռնեցեքյ, պերեքյ կախ տուվեքյ:

Նա̀զիր-վեզիրը հըվաքված մարթուցը մաչին եշում ըն, տըեսնում մին մըեծ կըլխավ, կուռուզնոտ մըզերավ մարթ ո̀ւրա̀ն տղըեն նիըետ ժուղուվուրթեն մաչին վըեննը կացած, թիմաշա յա անում: Քյինա̀մ ըն. ասում.- Թաքավըերը քեզ ծեն ա տամ: Տա տղըեն նիըետ մուտանում ա, թաքավըերեն կլոխ տամ, վըեննը կենում: Թաքավըերն ասում ա. - Սրա կլո̀խը

[1] *Ղարաբաղի բարբառում թվի անհամաձայնության հաճախ ենք հանդիպում (Ծ.Բ.):*

լոխճընան մըեծ ա, կախ տուվեքյ։ Էտ մարթն էլ ասում ա.- Թաքավըերն ապրած կենա գյո՛ւղո՛ւմ ըմ, վըեր իմ մեխկըս մենակ իմ կլո՛խըս մըեծ ինիլն ա, տրա հետե յել ինձ կախ ըք տըլական, հենգյ րոպեյան ետը կյիլական ըմ՝ իմաստուն տըեռած։ Թաքավըերը թա՝ դե վըեր իտի յա, ինձ կախ տուվեքյ, հու հինչ պեն գյո՛ւղո՛ւմ չի, թող մտըեն պահե, հենգյ րոպեյան ետը իմաստուն տըեռած կըկյամ լոխ ասըեմ։

Թաքավըերն իտի յա ասում, լոք տամ, պիցրա՛նո՛ւմ դա՛բրետկան։ Ջալլաթը քյենդիրը քցո՛ւմ ա պոկը, դաբրետկան տական տո՛ւս օնում։ Եշում ըն հենգյ րոպե, թաքավըերը կավուչ, տասսը րոպե, կավուչ, քսան րոպե, էլլա կավուչ։

Թաքավըերը հա՛նգյվալ ա։ Հո՛ւ՞ր թաքավըեր տինին, հո՛ւ՞ր չի տինին, պիրում ըն էտ կլո՛խը մըեծ մարթին թաքավըեր տինո՛ւմ։

## 30.ԻՄԱՍՏՈՒՆ ԿՆԵԳՅԸ

Մին օր Շահ-Աբբասը դերվիշու շորեր ա կյենում, տո՛ւս կյամ ո՛ւրա՛ն երգյիրը շոռ կյամ։ Քյինա՛մ ա տըեսնում մին շենում մին կնեգյ ցորենը կտրըեն յիրա՛ մըեկնալ ա, քշտին մին ճըխնուլ տնգալ, էտ ճըխնուլը վըստանեն ճունդան կապալ ա, մաշկեն էլ մին խնեցե կապալ, աչ ու ծախ ընգյո՛ւլներեն էլ մին-մին ուրուրուց վըեր տիրալ, խոխեքյը մաչին նի կապալ, ուրուրուցներան էլ քող ա կապալ, հըղլակ ըրալ, քցալ ծըռքըերեն, թիլին կծեգյը փադին պըտկըներան ա կապալ, վըեստերը էրկու ծըեռքավ վըստանեն դաթավն անց կըցըրալ, բիդի ո՛ւրա՛ն ա քաշում, համ էլ էրկու խոխան ուրուրուցըեն մաչին ուրորում ա, մաշկեն յիրա՛ խնեցեն ա հարում, կտրեն յիրա՛ մըեկնած ցորենն էլ ճըխնուլը տո՛ւրո՛ւր տալավ ծըտըերան պահում ա, համ էլ վըեստան կյործում։

Շահ-Աբբասը էն կնգանը մոտանում ա, ասում. - Վըեր մին օրդակ դարկեմ, կըկարե՞ս թեփռես։ Էտ կնեգյն ասում ա. - Ես տրա ուստան ըմ, դարկե կյա՛։

Շահ-Աբբասը քյինա՛մ ա ո՛ւրա՛ն պալատը, թախտըեն նստում, նա՛զիր-վեզիրին ծեն տամ կոշտը, ասում.- Էս քշեր ըրազումըս մին դերվիշ ըմ տըեսալ, էտ դերվիշն ինձ ասալ ա.-Ժուղուվուրթեն հետե յըս քոն իլա՛լ, հեռուտ մոտացալ ա, էրկունըտ իրեք ա տըեռալ, երեսուներկու ախպըեր ըն իլա՛լ, նահանք էլ քըզանա տո՛ւս ըն եկալ, իրեք օր քեզ մոհլաթ ըմ տամ,

մտածէ, քթի, թա վըեր տիժըրանաս՝ գյիդավուչ, թա հինչ ըմ ասում, կըքյինաս՝ էսհինչ շէնումը մին վըեստան կյործող կնեգյ ա ապրում, նա քեզ քյո̀մագյ կանե:

Նա̀զիր-վեզիրր Շահ-Ըբբասըեն պըլատան տո̀ւս ըն կյա̀մ, քյինա̀մ: Շատ ըն մտածում, Շահ-Ըբբասեն «արազը» կարում չըն գյիդան, թա հինչ ա: Տահանք քյինա̀մ ըն էտ կնգանր կոշտը: Էտ կնեգյը նա̀զիր-վեզիրան մին քսակ վըեսկե յա յոր օնում, «արազը» նաղլ անում: Ասում ա.- Դերվիշը վըեր ասալ ա ժուղուվուրթեն հետե յըս քոն իլա̀լ, տրանավ օզում ա ասըե, վըեր Շահ-Աբբասը պըռավալ ա, էրկունն իրեք ա շինա̀լ, տրանավ օզում ա ասըե, վըեր էրկու վըենն օնըե, մին կյըվազան էլ իվիլցրալ ա, հեռուն մուտըցրալ ա, տրանավ էլ օզում ա ասըե, վըեր աշկերը լավ չի տըեսնում, երեսուներկու ախպըերքը տո̀ւս կյա̀լն էլ կըրքընեն ա, վըեր արտեն վըեր ա տըեռալ:

Նա̀զիր-վեզիրը կյամ ըն Շահ-Ըբբասեն կոշտը, հինչ վըեր էտ կնեգյն ա ասալ, լոխ նաղլ անում: Շահ-Աբբասը կլո̀խ ա ինգյո̀ւմ, վըեր տա մենակ էն կնեգյը կըկարե գյիդա̀, խոսում չի:

Մին օր էլ Շահ-Ըբբասըեն քաղաքը օրիշ յերգյիրա̀ մին դերվիշ ա կյամ, մին ճըժ քաշում, նի միննում մաչը, հիշքան փող ըն տամ, ճըժան տո̀ւս չի կյամ: Խաբարը հըսցընում ըն Շահ-Ըբբասըեն, Շահ-Աբբասն էլ ո̀ւրա̀ն նա̀զիր-վեզիրր ղարկում ա էտ կնգանր կոշտը, նաղլ ըն անում, վըեր իստի մին դերվիշ ա եկալ, ճըժ քաշալ, նի մտալ մաչը, տո̀ւս չի կյամ:

Էտ կնեգյն ասում ա.-Տա շատ տիժար պեն ա, դերվիշին երգյիրին թաքավըերր կըռե ա օզում, տրա հետե յա դերվիշին ղարկալ, ինձ հա̀րո̀ւր վըեսկե տուվեքյ, քյինա̀մ դերվիշին ճըժան տո̀ւս օնըեմ, ո̀ւրա̀ն երգյիրը ղարկեմ:

Նազիր-վեզիրն էտ կնգանն ասածը քյինա̀մ ըն Շահ-Ըբբասեն ասում, Շահ-Աբբասը հա̀րո̀ւր վըեսկեն ղարկում ա էտ կնգանը, սայեկ մին թուխսըկան ա ո̀ւրա̀ն ճուտըերավը տինո̀ւմ մին յիշիգյու մաչի, մին կոնդ էլ սողան յոր օնում, հղե ինո̀ւմ, քյինա̀մ դերվիշին ճըժեն ըռաչին մին ճըժ էլ ինքյը քաշում, նի միննում մաչը, մաչին նըստում: Դերվիշը տրա ճըժեն մաչը մին կոնդ խստոր ա թող անում, էտ կնեգյն էլ տրա ճըժեն մաչն ա մին կոնդ սողան քցո̀ւմ: Տրանա ետը դերվիշը տրա ճըժը մին հափուռ կորեկ ա ածում, էտ կնեգյն էլ թուխսականն ո̀ւրա̀ն ճուտըերավը տո̀ւս ա օնում, լոխ օտում ըն, մինն էլ չըն թողում:

Դերվիշը ճըժան տո՞ւս ա կյամ, էլ դիբետ եշում չի, հղե յա ինո՞ւմ, քյինա՞մ ո՞ւրա՞ն երգյիրը։

Տրանա ետը Շահ-Աբբասեն մարթիքյն էտ կնգանը հըրցնում ըն, թա էն խստորավը նան կորկավը դերվիշը հինչ ա՞ ուզեցալ ասըե։ Էտ կնեգյն էլ ասում ա.- Խստորը վըեր քցա՞լ ա ճըժեն մաչը, տրանավ ուզեցալ ա ասըե, վըեր մըեր երգյիրը ծըզըրա կըոն ա օզում, ես էլ սողանը վըեր քցալ ըմ ո՞ւրա՞ն ճըժեն մաչը, տրանավ ես նրան ըսկըցրալ ըմ, վըեր մունք էլ կըկարենքյ ծըեր ծքյտան կյանք. կորեկը վըեր ածալ ա ճըժեն մաչը, ուզեցալ ա ասըե, վըեր էս կորկեն մնան անհաշն զորք տո՞ւս կօնենքյ ծըզըրա, ես էլ թուխսըկանն ո՞ւրա՞ն ճուտըերավը վըեր տո՞ւս ըմ կալալ, կորեկը լոխ կերալ ըն, ուզեցալ ըմ ասըեմ, վըեր մըեծան մինչն կուճուրը լոխ տո՞ւս կըկյանք, քու զորքըտ էտ կորկեն մնան ճինջինքյ, մինն էլ չընք թողել, հունցը էս թուխսըկանն ո՞ւրա՞ն ճուտըերավը կորեկըտ լոխ կերեն, մինն էլ չի թուղեցեն։

## 31.ԼԻՎՈԹՈԻՆԸ ԿՈՐՉԻԼ ՉԻ

Մին հարուստ, հընգըրասեր մարթ մին օր ո՞ւրա՞ն կնգանը նիըետ տո՞ւս ա կյամ շոռ կյա՛լ։ Եշում ա, տըեսնում մին ջա՛հիլ տղա ո՞ւրա՞ն կըրմունջան քըցա՛վ կյետը։ Տա վազ ա տամ նի մըննում կյետը, էտ տղըեն տո՞ւս օնում։ Էտ տըղան վըեր օշը կլո՞խն ա հըվաքում, տրան ասում ա. - Խե՞ ինձ կյետան տո՞ւս կալիր, մին ա, պիտի նորից ինգյիմ կյետը, ինձ ըսպանեմ։ Էտ տո՞ւս օնողը հըրցնում ա.- Տու հալա էտքան ջա՛հիլ, դա՛րդըտ հինչ ա՞, հինչու հետե՞ յըս օզում քեզ ըսպանես։ Տա ասում ա.- Ես ինջիներ ըմ, մին մըեծ, լա՛վ շենք ըմ շինա՛լ, էն էլ տական քա՛նդվա՛լ ա, էտ շենքը պիտի նորըմինան շինիմ, ամմա օժ չօնըեմ, պիտի կուռնըերըս կըպոտեն, տաննեն տո՞ւրմա՛ն, ընղըեղ էլ պիտի վըսկուռնես փթե, մըեռնեմ, լա՛վն էն չի , վըեր ինձ ըսպանեմ, տո՞ւրմո՞ւմը էտքան տանջվիմվուչ։ Էտ մարթն ասում ա.- Քեզ մին քսակ վըեսկե յըմ տամ, քյինա՛ շենքը նորից շինի, է՞լ հինչ ըս օզում, քեզ տամ։ Տա թա՝ կնեգյըտ ըմ օզում։ Տա մին քսակ վըեսկեն տամ ա, կնեգյն էլ նիըետը, ինքյը տերտակ կյամ տոն։

Տրանա ետը մին տարե յա անց կենում, էրկու տարե յա անց կենում, հենգյ ա անց կենում, թա վեցը, տահանց անա վըեչ նամակ ա կյամ, վըեչ էլ խաբար։ Էտ մարթը ծըեռքեն հլա՛ծ փողըերը լոխ հնգըրմաչի ցըն ա տամ, ինքյը եխտուտ, ճըղորտված շուրերավ քյինա՛մ շոռ կյամ, վըեր տահանց քթենա, տըեսնա՝ հինչ ըն տըեռալ։

Շոռ կյա̀լա̀վ քյինա̀մ ա հըսնում էն քաղաքը, վըերդեղ էտ ինջիներն ա ապրում: Հըրցըփորց ընելավ տրա տոնը քթենո̏ւմ ա, տըեսնում տոռնը քյիլիղավ քըլլած: Քյինա̀մ ա գուրծատեղը քթենո̏ւմ, տըեսնում էն մըրթըկնեգյը ուրուր կուռնա փըռնած կյամ ըն: Վըեր կյամ ըն կոխկավն անց կենում, իրեսեն եշում էլ չըն: Ասում ա.-հա̀լբաթ ինձ տըեսալ չըն, կարճ հըղցավ քյինա̀մ ա տահանց ըռըչին վըեննը կենում, տըեսնում՝ կյամ ըն ո̏ւրա̀ն ըռըշկավը անց կենում, սուսուփուս քյինա̀մ: Տրան տենակ թխըես, ա̀րո̏ւն չար կաթիլ:

Ասում ա. - Դե՛, էլ զուր ա ապրելը: Չա̀շմիշ իլած քյինա̀մ ա վագզալը, վագոնան[1] մուտանում ա, վըեր ո̏ւրա̀ն քցի տակը, ըսպանե: Հենց էտ վախտը չամաղանը ծըեռքեն մին ջահիլ տղա ո̏ւրա̀ն մուտանում ա, ասում.- Էս չամաղանը քշտիտ պահե, կյամ ըմ: Տա ետ ա տըեռնում, վըեր չամաղանեն եշի, էտ տղան ետ ա տըեռնում, քյինա̀մ: Անց ա կենում մին սըհաթ, էրկու սըհաթ, հենգյ-վեց սըհաթ, մին սաղ օր, էտ չամաղան պիրող տղան կյամ յի: Տա ասում ա.- Էս չամաղանը վըեր էսքան ծանըըր ա, մին պեց անըեմ, տըեսնամ մաչին հինչ կա: Պեց ա անում, տըեսնում չամաղանը լիգյը վըեսկե…

Չամաղանը յոր ա օնում, քյինա̀մ: Տանում ա էտ վըեսկավը էն ինջիներեն տանը ըռաչին մին հունց տոն շինում, վըեր նրա յիրա շոք ա անում: Քշտին էլ մին մըեծ դո̏ւքյա̀ն ա պեց անում, ըսկսում առուտուր անըելը, օրը օրըեն յիրա̀ հըրրուստանում, փող կյո̏ւտո̏ւմ: Մին պառավ կնեգյ էլ յոր ա օնում էտ դո̏ւքյանո̏ւմը պեն ընելի հետե: Էտ պըռավեն էլ մին շատ ղա̀շա̀նգյ ախճիգյ ա ինո̏ւմ, տա միշտ քյինա̀մ ար-կյամ, մորր նան ո̏ւրա̀ն հետե հաց ար շինում, պիրում:

Մին օր էլ էտ հացեն յիրա խոսկ ա պեց ինում, տա պըռավըեն ասում ա.- Ես էս քըղաքումը մին ղարիբ մարթ ըմ, վըեչ մին պարիկամ չօնեմ, իմ պարիկամը տուք ըք, օզում ըմ, վըեր տու քու ըխճըկանըտ նիըետ իմ պըլատումն ապրես, տու ինձ մար տըեռ, ես քեզ տղա:

Պառավն ըխճըկանը նիըետ կյամ ա տըեղ ապրում: Էտ դո̏ւքյա̀նը տըեռնում ա քըղաքեն աշկը:

Մին օր էլ էտ տղան կյամ ա պըռավըեն կոշտը, ասում. - Ինձ տոնտըեղ, կնեգյ, խոխա յա հարկավըեր, վըերքան մտածում ըմ,քու ախճիգյըտ

---

[1]*Ղարաբաղի բարբառով «վագոն» կոչում են նաև գնացքը(Ծ.Բ.):*

լոխճընան լա̀վն ա, հինչ կա՞ ըրես: Պառավն ասում ա.-Տուք ըք գյո̀ւղո̀ւմ, թա տուք ո̀ւրո̀ւր կըսիրիքյ, ո̀ւրո̀ւր նիըետ կապրեքյ, ես մենակ կարող ըմ օրհնել, վըեր մին պերցու ծիրանաք, ծիլիքյ, ծաղկեքյ, զուրանաք:

Տղան թա՝ ես օզում ըմ էն մին շեբեթը հըրսանեքյ անըեմ, հունց հըրսանեքյ, վըեր սաղ քըղաքումը ըպրուղնեն մնան պիրըննեն պեց կալած, դո̀ւշմա̀նիս աշկն էլ օզում ըմ հանած ինիմ:

Էտ տղան ո̀ւրո̀ւգյո̀ւնը զրո̀ւցին վախտը թոխտ ա յոր օնում, ըսկսում, հու վըեր հըրսանեքյ պիտի կյա, նահանց ընումնեն կյիրոտելը: Օզում ար, վըեր հըրսընքեն ինջիներեն ձեն չի տա: Պառավն ասում ա.- Մոտե հըրևանը հեռու պարիկաման լա̀վ ա, վըեր դո̀ւշման էլ ինի, կյիրի, թող կյա̀:

Հըրսանեքյն ըսկսում ըն, ամմըեն հինչ ըստոլներեն յիրա̀ վըեր ածում: Էնքան էլ մարթ ա ինո̀ւմ, վըեր ասըեղ քցիլի տըեղ չի ինո̀ւմ: Ամմըեն կյենաց խմում ըն, հերթը հըսնում ա փըսեն: Փըեսան ըստաքանը յոր ա օնում, ասում. «Էս ըստաքանը խմում ըմ էն մարթին կյենացը, վըեր ո̀ւրա̀ն կյանքը խնայիլ չի կյետումը խեխտվող մարթին ըզըդելի հետե, ուրան էլ մին քսակ վըեսկե յա տուվալ, կնեգյն էլ նիըետն ա տուվալ, ամմա ետ մարթը մեհենգյ նրան պարյօր-պարըլուս էլ չի տամ: Էտ մարթը մեհենգյ ըստըեղ նստած, մըզնըհետ օտում-խմում ա, տրան ճիրան տուս օնողն էլ ես ըմ, նա յէլ մըեր հըրևան ինջիներն ա: Ես կօզըեմ, վըեր էտ ջուռռա մարթ մըեր մաչին ինի վուչ, մարթ միշտ ո̀ւրա̀ն լիվոթուն ընողըեն տըեղը գյիդա̀, սարը սարեն նի չի կյա̀լ, մարթը մարթին նի կըկյա̀»:

Լոխ ամեքյա մին տըեղան հըլո̀րվում ըն, փիս-փիս էտ ինջիներեն ա̀նգյո̀ւնը եշում: Էտ ինջիներն էլ ըստաքանը յոր ա օնում, ասում. «Հինչ վըեր իմ հըրևանըս՝ սօրվա հըրսընքըեն փըեսան ասալ ա, լոխ դո̀ւզ ա: Ես օզում չի մուտանամ խոսըեմ նրա հետե, վըեր հըմանչում ի, ինքյն ինձ շատ լիվոթուն ա ըրալ, ես վըեչ մին պեն ըրած չըմ իլա̀լ: Մեհենգյ հըրցըեքյ տըեսնամ վըզզալումը էն մին չամադան վըեսկեն հո՞ւ վա դարկալ, վըեր նրանավ ես պալատը շինա̀լ ա: Թա գյո̀ւղո̀ւմ չըք, գյիդացեքյ, էն չամադա-նավ վըեսկե դարկողը ես ըմ իլա̀լ: Հըրցըրեքյ, տըեսնամ ո̀ւրա̀ն քշտին պեն անող պառավը հո՞ւվա: Էն իմ մարըս ա, ես ըմ դարկալ, վըեր ո̀ւրա̀ն քյո̀մա̀գյ անըե: Հըրցըրեքյ՝ տըեսնամ սօրվա հըրսընքեն հառհնը հո՞ւ վա: Էն էլ իմ քուրըս ա: Ես էլ ըմ էս ըստաքանը խմում էրկու ծաղկեն կյենացը, օզում, վըեր միշտ բախտավըեր ինին, լա̀վ ապրեն»:

## 32.ԲԱ̀ՀԼՈ̀ՒԼԻ ԴԱՆԱՆԴԵՆ ԻՐԵՔ ԽՈՍԿԸ

Մին թաքավըէր ա ինո̀ւմ, տրան էլ մին շատ խըէլունք վեզիր ա ինո̀ւմ, օզում ա ո̀ւրա̀ն թաքավըէրեն փորցե: Թաքավըէրն էլ տրան մին վըէխճար ա ինո̀ւմ տուված, վըէր հիբը օզըէ, պիտի տա ո̀ւրա̀ն:

Մին օր վեզիրը թաքավըէրեն յոր ա օնում, վըէր քյինա̀ շոռ կյա̀: Քյինա̀մ ըն տըէսնում իրեք ո̀ւրո̀ւր անա ճոկվող հղըցեն ղրաղեն Բա̀հլո̀ւլի Դանան-դան[1] իրեք վըէղու կյո̀ւտա̀կ թումբ ըրած, կոխկեն նըստած: Հըրցնում ըն, թա էս հինչ վըէ՞ղու թումբըէր ըն: Բա̀հլո̀ւլի Դանանդան թա՝ սահանց ամմըէն մինը մին խոսկ ա, մինը մին վըէսկե ա̀ժի, հախըս տուվըէքյ, ասըէմ: Վեզիրը տո̀ւս ա օնում մին վըէսկե տամ, Բա̀հլո̀ւլն ասում ա.- Էս վըէղեն թումբը էն մարթին կըլխեն, վըէր թա̀զզա̀ հըրուստացած մարթին անա փող պարտկ կանըէ: Մին վըէսկե յէլ տամ ա, թա էս մին վըէղեն թումբն էլ էն մարթին կըլխեն, վըէր ո̀ւրա̀ն կնգանը սրտեն սիրը նան սեկրետը կասե: Մին վըէսկե յէլ վըէր տամ ա, Դանանդան ասում ա.-Էս մին վըէղեն թումբն էլ էն մարթին կըլխեն, վըէր ո̀ւրա̀ն խազայինին անավ ըրխըյին կըկենա:

Անց ըն կենում, քյինա̀մ: Վեզիրը մին քանի օրան ետը մին թա̀զզա̀ հըրուստացած մարթու անա հա̀րո̀ւր մանեթ փող ա յոր օնում, ասում. -Մին ամսան ետը քեզ կըտամ: Ետնան էլ քյինա̀մ ա կնգանն ասում.- Փիս, մըէսը պակաս տարե յա, հինչ կինի՞, վըէր պիրինքյ թաքավըէրեն վըէխճարը մորթենքյ, օտըէնքյ: Կնեգյը թա՝ լավ կինի, էսքան տարե թաքավըէրեն քշտին ծառայում ըս, մին վըխճարու խաթիր էլ չօնըէ՞ս:

Վեզիրը քյինա̀մ ա թաքավըէրեն վըխճարըէն մնան մին վըէխճար փըռ-նում, պիրո̀ւմ մորթում, օտում ըն: Էքյսի օրը վեզիրը փըռնում ա կնգանը թակում: Կնեգյը ախշարքը կըլո̀խն ա օնում, հարայ տամ, թա մարթըս ինձ ըսպանեց, թաքավըէրեն վըէխճարը մորթալ ա կերալ, հավան տուվալ ա կըլխեն, փըռնալ ա, ինձ թակում ա: Տրանա ետն էլ քյինա̀մ ա թաքավըէրեն ասում, թա մարթըս իստի պեն ա ըրալ հերիքյ չի, հա̀լա̀ կըլխավն էլ փըռնալ ա ինձ թակալ:

Թաքավըէրը վեզիրին ծեն ա տամ կոշտը, ասում.- Վըէր տու իմ տուված վըէխճարը մորթալ ըս կերալ, եկող գյիրեգյի քե կախ ըմ տըլական: Ջառչին քցո̀ւմ ա, ժուղուվուրթեն ծեն տալ տամ, քյա̀նդիրը սապուն քսիլ տամ, վըէր վեզիրին կախ տան: Վեզիրին քըղաքեն մեյդանը պիրիլիս

[1] *Արաբական խալիֆի ղժգոհ եղբայրը: Դժգոհել է եղբոր դաժանություններից (Ծ.Ա.):*

վախտն էլ էն թա̈զզա̈ հըրուստացած մարթը կյամ ա առաչը կըտրում, թա փողըս տո: Վեզիրը թա՝ ա՛յ ջանըմ, ինձ հա̈լա̈ տանում ըն կախ տան, թա սաղ պըրծնըեմ, ետ կյամ, էն ա փողըտ քե կըտամ, թա կախ կըտան, կա՛խ կըտան, ինձ տանում ըն ըսպանեն, տու լիհա̈ քու փողետ դա̈րդո̈ւմն ըս: Էտ մարթը թա՝ չէ՛, վըեր չէ, փողըս տո, պըրծե, նըանա ետը հիշտեղ քյինա̈մ ըս քյինա̈: Վեզիրը տո̈ւս ա օնում տըրա հարուր մանեթը տամ, թա՝ էս հա̈լա̈ մին, քեզ էն կըլխան փուրցեցե:

Վըեր տանում ըն թա կախ տան, վեզիրը թաքավըերեն Ասում ա.- Կըթողըե՞ս մինչև քյա̈նդիրը պոկըս քցիլը մին պեն ասըեմ: Թաքավըերը թա՝ ասըե: Վեզիրը թա՝ վըեր վըեխճարըտ պիրիմ քեզ տամ, ինձ էլլա կախ կըտա՞ս: Թաքավըերը թա՝ չէ՛: Վեզիրը թա՝ վըեխճարըտ էն ա էսհինչ տըեղը, ինձ էրկու սըհաթ ժամանակ տո, քյինա̈մ պիրիմ:

Թաքավըերը մարթիքյ ա դարկում, քյինա̈մ ըն վըեխճարը պիրո̈ւմ: Վեզիրն ասում ա.- Թաքավըերն ապրած կենա, էս քու վըեխճարըտ ա՞: Թաքավըերը թա՝ հա՛: Վեզիրը թա՝ մեհենգյ ես իմ կըլխես տարն ըմ, էլ քու քշտիտ ծառայում չըմ: Թաքավըերը թա՝ վըեչինչ, կա՛ց, վեզիրը թա՝ չէ՛:

Վեզիրը քյինա̈մ ա կնգանը ծիյին հա̈քյվան կապում, քաշ-քաշ անում ըսպանում, տոն-տըեղ ծախում, հղե ինո̈ւմ քյինա̈մ մին հեռու տըեղ, մին ճըղացում ճըղըսպանեն քշտին հըցըփոր պեն անում:

Էտ ճըղասպանը քյինա̈մ ա տոն, վեզիրը տըեղ ճըղասպան ա տըեռնում, էտ մարթն էլ ամմըեն շեբտին վերչին կյամ ա շըհադը տանում տոն:

Ժուկ ա անց կենում, ժամանակ ա անց կենում, էտ թաքավըերեն երգյիրը շատ քյիսըբանում ա: Թաքավըերը մըտածում ա, թա էս հինչ ըխմըխո՞թուն ա, վըեր ես ըրե, մին վըխճարու դա̈րդա ընդուր մընանե վեզիրը պեց թուղեցե: Գյո̈ւղո̈ւմ չի, թա հինչ անըե, վըեր ո̈ւրա̈ն քյո̈հնա̈ վեզիրը քըթենա: Պիրո̈ւմ ա ամմըեն տան մին վըեխճար տամ, ասում.-Հու վըեր կարե էս վըեխճարը հունց պահե, վըեր քաշն իվիլա̈նա վուչ, մին քաղաք ըմ բախշում:

Թաքավըերը գյո̈ւղո̈ւմ ա, վըեր էտ պենը մենակ ո̈ւրա̈ն քյոհնա վեզիրը կըկարե անըե: Պիրո̈ւմ ա ջառչին քցո̈ւմ, վըխճըրնեն պիժա̈նում, թա մին տըռնան ետը հըվըքըլական ըմ, նորից քըշըռեմ: Էտ ճըղըցատարն էլ ա քյինա̈մ ո̈ւրա̈ն վըեխճարը յոր օնում, կյամ վեզիրին կոշտը, թա պա իստի պեն կա: Վեզիրը թա՝ վըեչինչ, վըեխճարը պեր, մին պեն կանենքյ:

Տա քյինա̀մ ա վըեխճարը պիրո̀ւմ, վեզիրը թա՝ վըրսկըններեն ասե, թող մին կյո̀ւլո̀ւ ճոտ փըռնեն, պիրին։ Տա կյուլին ճոտը պիրիլ ա տամ, վեզիրը թա՝ վըեխճարն ան կյո̀ւլը ո̀ւրո̀ւր անա մխըրե հըռը-հեռու կապե, մըեսը նրա ըռըչին տիր, խոտն էլ նրա, մին տարե տահանց իտի պահե, ետնան տար տո թաքավըերեն։

Տա իտի յէլ անում ա։ Մին տըռնանը ետը վըեխճարը տանում ա տամ թաքավըերեն։ Թաքավըերը պերած վըխճըրնըեն քշռում ա, տըեսնում լոխ իվիլա̀ցած, մենակ էտ մինը՝ չէ։

Էտ մարթին թաքավըերը հըրցնում ա, թա ասըե տըեսնամ էս վըեխ-ճարը հու վա պահալ։ Տա թա՝ ես։ Թաքավըերը թա՝ չէ՛, տա քու պենըտ չի, վըեր դո̀ւզն ասըես, իմ խոսկ տված քաղաքը տըլական ըմ, վըեր ասես վուչ, տըլական չըմ։ Տա թա՝ դե էն ա մին ճըղասպան օնըեմ, նա յա պահալ։

Թաքավըերը մարթ ա ղարկում, վեզիրին պիրիլ տամ, ասում. - Եք քու տըեղըտ ծառայե։ Վեզիրը թա՝ կյա̀լ չըմ։ Թաքավըերը թա՝ իրեք օրավ թաքավըրըոթունըս քեզ կըտամ, ե՛ք։ Վեզիրը թա՝ տասս օրավ ինձ տո, կյամ։

Թաքավըերը տասսը օրավ թաքավըրըոթունը տամ ա վեզիրին։ Վեզիրը ժուղովուրթեն տասսը տըռնավ պեց ա թողում, վըեր քյինա̀ն օրիշ երգյիրներում ըխշաղանք անըեն, հըրուստանան, կյա̀ն։

Ժուղովուրթը լոխ քյինա̀մ ըն ամեքյա ո̀ւրա̀նց օզած տըեղը, տասսը տարե ըխշաղանք անում, կյամ։ Երգյիրը հըրուստանում ա, իլըրվում, լըսնըրվում։ Թաքավըերը վեզիրին անա շատ շընուրհակալ ա տըեռնում, վեզիրն էլ միշտ մնամ ա թաքավըերեն քըշտին, ո̀ւրա̀ն ծառայությունն անում։

## 33.ԿՆԳԱՆԸ ՀԻՆԱ̀ՐԸ

Մին թաքավըերու ախճիգյ քյեփեն վախտը հորը քշտին ասում ա՝ տոնը կնեգյն ա տինո̀ւմ, թաքավըերը թա՝ չէ՛։ Ախճիգյն ո̀ւրա̀ն ասածն ա ասում, թաքավըերը՝ ո̀ւրա̀ն։ Վերչը, խոսկը կոխլ ըն կըցընում։

Ուրերեն մին օր թաքավըերը յոր ա օնում ո̀ւրա̀ն էտ հո̀ւրի- փա̀րի ըխճըկանը տերտակ-սըլըըղրան տամ էտ քըղաքեն ամենաթա̀մբա̀լ, ամենաքյա̀սիբ տղեն։ Էտ էլ էն ջուռա թա̀մբա̀լ ա ինո̀ւմ, վըեր կոխկեն տիրա̀ծ հացն էլ նղանում ա յոր օնե օտե։ Ճա̀նջերը տրան վըեր կոխած օտում ին, կարում չար քյիշ տար, ո̀ւրա̀ն անա հըռըցընար։

Էտ ախճիզը քյինա̀մ ա էտ տղեն: Հենց սո̀ւրթա օրը հացը շինո̀ւմ ա, շատ հեռու, դրաղ տինո̀ւմ: Թա̀մբա̀լն ասում ա. - Ինձ տո, կնեգյը թա՝ հանե́ ընդեղ, եր կաց եր կալ, կեր: Թա̀մբա̀լն ըսկըսում ա էրկու շազավ, իրեք շազավ, կուճուր-կուճուր հենգյ-վեց շազավ շոռ կյա̀լը սուվըրելը: Ետնան վըեր ըսկըսում ա շոռ կյա̀լը, կնեգյը իրեք վըեսկե յա ճըրըվար անում, տամ տրան, թա՝ քյինա̀ քըղաքումը էսիինչ մարթին կոշտը, իրեք վըեսկեն տո ո̀ւրա̀ն, իրեք խոսկ ա սուվըրցըննական: Էտ թա̀մբա̀լը տի յել անում ա: Քյինա̀մ ա էտ մարթին կոշտը, իրեք վըեսկեն տամ, էտ մարթը իրեք խոսկ ա ասում, թա մըտետ կըպահես: Մին խոսկն էն ա, վըեր ամեն խուսկու հըվատալ չըն, մինն էլ էն՝ վըեր ծո̀ր տեղ քոն չըն ինիլ, էն մինն էլ թա՝ մարթ հիշքան նեղ տեղ ինգյի, հովսա̀լա̀ կանե, կըմտածե, ետնան ընելիսն անե:

Էտ վախտը մին խոջա մարթ նո̀ւքյա̀րո̀ւ շոռ կյա̀լիս ա ինո̀ւմ, հենց տըրան էլ պըտահում ա: Տա գյո̀ւղո̀ւմ ա, վըեր կնեգյը մո̀ւյտա̀ ո̀ւրա̀ն հաց չի տըլական, քյինա̀մ ա տարեկան իրեք վըեսկավ էտ խուջեն քըշտին նո̀ւք-յըրոթուն անում: Խուջան ո̀ւրա̀ն քյարվանը եր կալած, միշտ քյինա̀մ ար օրիշ տեղեր, էտ թա̀մբա̀լն էլ նըհետը:

Մեհետ, քյարվանը տուս եկած վախտը, էրկան հըղե յըն քյինա̀մ, ծըրըվանում: Թըմբա̀լին քյինղիրա̀վ կապում ըն, քցո̀ւմ մին ճիրավըեր, վըեր ճո̀ւր տո̀ւս օնե: Վըեր հըսնում ա ճըրըվըերեն տակը, բո̀ւրդա̀ն մին զըեռ օշափ կյամ ա առաչը, տրան խուսըցնում, հըրըցփորց անում, իրեք նոռն էլ տամ, թա կղարկես տոնըտ: Ճո̀ւրը կլխըյեր ղրկելան ետն էլ քյըրվանեն մարթիքյը օզում չին տրան տո̀ւս օնեն: Տա վերչը, տահանց խաթիրը քթենո̀ւմ ա, տո̀ւս ըն օնում:

Տրանա ետը քյարվանը խիլլա̀ հըղե յա քյինա̀մ, մին ծո̀ր տեղ վըեր կյամ: Տա քյըրվանեն մարթուցն ասում ա. - Լավ տեղ չըք վըեր կյամ: Ըռըխեն եշում չըն: Ինքյը պիցըրա̀նո̀ւմ ա սարեն կըլը̀խը: Լոխ քունավ ըն հընցը-նում, քշերեն կեսումը մին սել ա կյամ, քյարվանը նան քյըրվանեն մարթուցը լըխճինին քշո̀ւմ, տանում:

Էտ թա̀մբա̀լը մենակ հըղե յա ինո̀ւմ, քյինա̀մ հըսնում ո̀ւրա̀ն քաղաքը: Օզում ա, թա քյինա̀ տոն, տեսնում ա ո̀ւրա̀նց տանը տըեղը մին զըեռ պա-լատ պիցրա̀ցած: Ճինա̀նչո̀ւմ չի: Ուրո̀ւզյո̀ւն ա ինո̀ւմ: Պիցըրա̀նո̀ւմ ա ծառը, տեսնում ո̀ւրա̀ն կնեգյը նստած, մին ջա̀հիլ տղա յել կլը̀խը տիրած զյո̀ւր-զյո̀ւմը, քոն իլա̀ծ, կնեգյն էլ տրա կլը̀խր սըղըլելիս: Թո̀ւվա̀նգյը թուշ ա

օնում, թա յիրա՛ անե վըեր քցի, էն մարթին խոսկը մըեննն ա ինգյո՛ւմ, զոռավ ո՛ւրա՛ն հվաքում, պահում: Վըեր քյինա՛մ ա տոն, կնեգյը դա՛ստին ճինա՛նչո՛ւմ ա: Էն ջաhիլն էլ ո՛ւրա՛ն տղան ա ինո՛ւմ, վըեր արտեն մծացալ ար:

Մին օր էտ կնեգյը քյեփ ա սարքում, թաքավըերեն նան ո՛ւրա՛ն մարթու-ցը ծեն տամ: Հենց նստած, թունդ ուտելիս-խմելիս վախտը ախճիգյը հորը հըրցընում ա՝ «մեհենգյ ասե՝ տեսնամ կնեգյն ա տոն տինո՞ղը, թա՝ մարթը»: Թաքավըերը կարում չի էտ խոսկը տանե, քյինա՛մ ա ո՛ւրա՛ն կախ տամ, ըսպանում:

34.ԻՐԵՔ ԽՈՍԿ

Մին եթիմ տղա յա ինո՛ւմ, մինգյել ո՛ւրա՛ն տատը: Լոխ էտ տղեն իրեսնըյեր խոսում ըն, թա խե չը՞ս կնեգյ անում: Վերչը պիրո՛ւմ ըն տըրան փսակում, էտ տղան հառհնը թողում ա տանը, ինքյը քյինա՛մ դարիբոթուն, վար ծառայություն անե, փող ըխշադի: Տա շատ ա քյինա՛մ, թա խրեգյ, հնում ա մին շիհա՛ր, տըեղ մին խազայինու քշտի դուլլուղ ա նի մննում: Էտ խազայինն ասում ա.- Իրեք տարե քշտիս ծըռըյըլական ըս, իրեք տըռնան ետը քեզ իրեք մանեթ փող ըմ տըլական: Պայման ըն կապում, տղան ըսկսում ա ծըռայիլը:

Մին տարե վըեր անց ա կենում, տահանց ընգյո՛ւններան մին խոջա յա ո՛ւրա՛ն քյըրվանավը կյամ էտ շիհա՛րը: Էտ տղեն տատն էլ խուջեն ասած ա ինո՛ւմ.- Կըքյինա՛ս տըեսնաս թոռնըս հո՞ւնց ա, հո՞ւնց չի: Խոջան վըեր կյամ ա տըեղ, էտ տղեն ծըեռքեն պեն չի ինո՛ւմ, վար դարկե տոն, մին կատու վա փռնում, քցո՛ւմ պարկը, ըռեխը կապում, տամ ո՛ւրա՛ն, թա կըտանես մըեր տոն:

Խոջան կատուն յոր ա օնում, քյինա՛մ: Շատ ա քյինամ, թա խրեգյ, տըեսնում ա մին յըանա դո՛ւզո՛ւմ մին հարուստ մարթ ո՛ւրա՛ն քյարվանը վըեննը կըցըրած, մարթիքյը լոխ սուփրան քցած, օզում ըն վար հաց օտեն: Տահանք լիհա՛ հացը վար վըեր ըն տինում, մոկները եր են քաղում: Խոջան էլ վար նիըտնեն նստում ա, տըեսնում ա հաց օտըելն ա՛մա՛լ լի կյամ, բո՛ւրդա՛ն կատուն մըեննն ա ինգյում: Պարկը ետ ա անում, կատուն տո՛ւս օնում, տինո՛ւմ սուփրեն յիրա՛ : Մոկները լոխ տես ու տեն փախճում ըն, տահանք նստում ըն, հալալ հաց օտում: Էտ խազայինը խուջեն ասում ա.- Հինչ վըեր օզես, քեզ ըմ տամ, մենակ թա էտ կատուն ինձ տո: Խոջան թա

ամանաթ պեն ա, կարել լըմ: Վերջը, շատ ղաչանք ընելան ետը խաթիրը քթենո՞ւմ ա, քսան հազար մանեթ տամ, կատուն ինքյ օնում: Խոջան էտ փողը տանում ա տամ պըռավեն, ասում ա՝ թոռնտ ա ղարկալ:

Պառավը հառհնեն նհետ էտ փողավը մըեծ-մըեծ տներ ա շինո՞ւմ, պակաս-պռատ լոխ ո՞ւրո՞ւր քցո՞ւմ, ըսկսում մըթըվարի ապրելը:

Մին տարե վար անց ա կենում, խոջան նորըմինըն ա ո՞ւրըն քյըրվանավն անց կենում, նի միննում համին շիհըրը: Էս դո՞նում էլ վար քյինըմ ա էտ տղեն կոշտը, վար տրա հըլըն-պենըն հրցընե, խաբար գյիդը, տղան մին մըեծ հիլի յա տամ խուջեն, թա կըտանես մըեր տոն:

Խոջան քյըրվանավը հղե յա ինո՞ւմ, քյինըմ: Մին քանի օր վար քյինըմ ա, խիլլը հըռանում, եշում ա, տըեսնում մին ճիրու դրաղե թաքավըրերեն օխտը ըխճըկեքյը մզըրնեն թրչած, ո՞ւրո՞ւր խառնած, կարում չըն, թա հըվաքեն: Հիլին տո՞ւս ա օնում, տամ էտ ըխճըկորանցը, տահանք հիլուն մաչին եշում ըն, թա էս հինչ լըվ պեն ա, հինչ վար օզես, քեզ ընք տամ, մըեզ տո: Խոջան թա՝ պա ո՞ւրո՞ւշո՞ւ ապրանք ա: Ըխճըկեքյը թա՝ վըեչինչ, տրա տարը մըզանա նըղանալ չի: Խուջեն խաթիրը քթենո՞ւմ ըն, մին քսան հազար մանեթ տամ, հիլին ինքյ օնում: Խոջան փողը տանում ա տամ պըռավեն:

Իրեք տարեն անց ա կենում: Էտ եթիմ տղան ո՞ւրըն ծառայությունը վըեր պրծնում ա, խազայինն ասում ա.-Քեզ իրեք մանեթ փող պիտի տամ, մեհենգյ իրեք մընեթին տեղակ իրեք խոսկ ըմ ըսըլական, ընջուկետ օղ կանես, մըտետ պահես: Մո՞ւրթըն ասում ա. - Վըեր հիշտեղ էլ ինիս, հիշքան էլ նըեղ տըեղ ինիս, քըերծու յիրը, ծո՞րո՞ւ մաչի, կյետու դրաղե ո՞ւրո՞ւզյո՞ւնը մնաս վուչ: Ետնան էլ թա՝ ո՞ւրո՞ւշին պենին վըեչ մին վախտ խառնվես վուչ: Վերջումն էլ ասում ա.-Հիշքան էլ նըեղ տըեղ ինիս, թայդի չինգյիս, հո՞վըալը կանես:

Տղան հղե յա ինո՞ւմ, քյինըմ: Շատ ա քյինըմ, թա խրեզյ, հսնում ա մին ծո՞րո՞ւ դրաղ, ծո՞րըվն էլ մին կյետ ա ինո՞ւմ անց կընալիս, կյետեն դրաղեն էլ մին քյարվան վըեր եկած: Էտ քյըրվանեն մարթիքյը տղեն ասում ըն.- Մթեն ա, մըեր քշտին կաց, քշըրհանա լո՞ւսըվ էլլա եր կըկենաս, քյինըս: Սա թա իստի տըեղը ես մընալ չըմ: Տղան քյինըմ ա մին շեն տըեղ կենում, քշերը տըեղ թոռ ա կյամ, սիլըսո՞ւ անում, կյետը վըրարում, էտ քյարվանը մըթուցավը-պենավը ամմեն հինչ քշո՞ւմ, տանում: Մին քանի ամըես տա

վըեր քյինձմ ա, տըեսնում ա մին տըեղ մին խոր ճիրձվըեր, շատ մարթիքյ կոխկեն հվաքված, վեղըձն քյինդիրձն կապում ըն, քցո̈ւմ ճիրավերը, մին մարթ էլ նի յա մըննում, վըեր վեղրձն ճիրձվ լըսնե, տո̈ւս օնե: Հու վըեր նի յա մըննում, վըեչ կարում ա ճո̈ւր տո̈ւս օնե, վըեչ էլ ինքյն ա ետ կյամ: Էտ տղան ասում ա.-Թուղեցեքյ հձլձ մին ես էլ փորցեմ, տըեսնամ պենը հինչո̈ւմն ա: Տրան էլ ըն քյինդիրձվ կապում, քշըցնում ճիրըվըերեն տակը: Վըեր հսնում ա ճիրըվըերեն լափ տակը, քյանդիրն ո̈ւրձն անա ետ ա անում, վըեր վեղրան ճիրձվ լըսնե, եշում ա տըեսնում մին շատ այբեջձռ տղամարթ, մինգյել մին դաշձնգյ, կուկլա ախճիգյ եկեն ըռաչին վըեննը կացեն: Տաhանք տղեն հրցընում ըն, թա՝ մզանա հու վա՞ դձշձնգյ, մունք ո̈ւրո̈ւր բաք ը՞նք, թա՝ չէ: Էտ տղան թա՝ սիրիլին յիրձ յա: Տրանա ետը տղեն յոր ըն օնում, տանում մին քանի պաղվալ նշանց տամ, լոխ մարթու կլխըներավ լիգյը: Ախճիգյն ասում ա.- Էս կլխընեն լոխ տիյերան եկած մարթուցը կըլխընեն ա: Հու վըեր եկալ ա, թա ճո̈ւր տանե, էտ պենն ո̈ւրձն հըրցըրալ ընք, ասալ ըն տուք ո̈ւրո̈ւր բաք չըք, մունք էլ կլո̈ւխը կտրալ ընք, քցալ պաղվալը: Էտքանեն մաչին մենակ տու վիր, վըեր մըեր հարցեն դո̈ւզ պաղասխան տուվըեր, տրա հետե տու մըեր աշկեն լո̈ւսն ըս: Պիրո̈ւմ ըն էտ տղեն խիլլա վըեսկե խազնա տամ, օրիշ հղըցավ հղե քցո̈ւմ, տո̈ւս ա կյամ, քյինձմ: Տրանա ետն էտ տղան շատ տըեղեր ա շոռ կյամ, շատ պեներ ա տըեսնում, մին քանի տարե անց կացած, հսնում ա ո̈ւրձն երգյիրը:

Քյինձմ ա ո̈ւրձն տանը տըեղը, տըեսնում տոնը կա վուչ, կոխկեն մին մըեծ պալատ ա պիցիրձցալ, առաչը լավ բախճա քցձծ, մուտանում ա, եր ինո̈ւմ բալկոնը, ակուշկավը եշում, տըեսնում ո̈ւրձն կնեգյը տախտեն նըստած, մին ջձհիլ տղա յէլ կո̈ւխը տիրձծ ծո̈ւյներեն, քունավ հնցած: Մտկումն ասում ա.- Սա ինի, չինի, կնգանըս սիրականն ա. մավզերը տո̈ւս ա օնում, վըեր յիրձ անե վըեր քցի, մինգյել խազայինին վերչին խոսկը մըետն ա քցո̈ւմ, ետ քաշում, տինո̈ւմ դոբուրումը: Վըեր նի յա մննում տոն, տատը նան կնեգյը շատ ըն ուրխանում, ըսկսում ո̈ւրո̈ւր պըչպըչորելը, տա թա՝ պա քոն իլձծ տղան հու՞ վա: Կնեգյը թա քու տղատ ա, քզանա ետեն ա իլձլ, տու տըեսալ չըս, մեհենգյ մըծացալ ա, քու բոյիտ տըեռալ:

35.ԿՈՒՃՈՒՐ ՀԱՌԹՆԸ

Մին շատ տղատար, հըռթնատար ու թուռնատար տան տոռնը մին ն̈ւրն̈ւգյն̈ւն մին հլիվուր մարթ պենն̈ւմ ա, տընըցուց լոխճինին հըրցնում, թա ծըեր տոնը մն̈ւլքյը նան ապրանքն ա՞ շատ սիրում, թա՞ սերը: Լոխ սուս ըն անում, կարում չըն հլիվուրըեն ջողոբը տան, մենակ կուճուր հառթնը ասում ա.- Հըրուստոթունը, մն̈ւլքյը, փողը լոխ ծըեռքու եղտ ա, կյամ ա, քյինա̈մ, տանը սեր պիտի, լոխ հենց պիտի ինին մին հըլավում քոն իլա̈ծ:

Տրանա ետն էլ հլիվուրն ասում ա.- Օրաս ետը լոխ էս կուճուր հառթնեն խուսկավը կըքյինաք, հինչ վըեր ասե, անջուկ կօնեքյ: Ասում ա, պըրծընում, տն̈ւս կյամ, էլ ուրվամ չի:

Էտ մըեծ տանը շատ վըեղ, շատ հանդ, շատ արտ ա ինն̈ւմ: Արտը վըեր մխըրե մըծանում ա, հա̈լա̈ հինձիլի տըռնալու, էտ կուճուր հառթնը ասում ա.- Դըրյազավ հըրեցեքյ, պերեքյ թայա տուվեքյ: Իտի յէլ անում ըն:

Կուճուր հառթնը էտքան ըրտերեն տըեղը լոխ կարկաժ ա վարել տամ, էտ կարկաժը վըեր մխըրե տիղնավուն ա տըեռնում, տըհանցա տասսը կըտրել ա տամ, պիրում կոտրում, տըեսնում լոխճինին մաչը լիգյը ցորըեն ա: Էտ ցորըենը լուվանում ըն, չուրըցնում, տանում ճեղացւ, աղում, պիրում հաց թըխում: Հացըեն համը կաղնու համ ա ինում: Տրանավ գյն̈ւղն̈ւմ ըն, վըեր կըրկըժնըեն հա̈լա̈ հըսալ չի: Տրանա ետը կուճուր հառթնը տընըցուց լոխճինին ասում ա.-Հու հիշտըղավ քյինա̈մ ա, տոն կյալիս մին պեն պիրի:

Հա̈նդա̈ տոն կյա̈լիս ամմըեն օր լոխ ամեքյա մին պեն ըն պիրն̈ւմ , մենակ կուճուր հառթնեն նշանածը տերտակ ա կյամ: Կուճուր հառթնը լոխճինին քըշտին մարթին իրեսնըյեր խոսում ա, ետնան էլ ասում. - Վըեր էքյուծ տերտակ եկեր, թուղըլական չըմ տանը մղակավը նի մննես:

Էքյսը տոն կյալիս կուճուր հառթնեն մարթը վըեչ մին պեն չի քթենն̈ւմ, հըղըցումը մին ըսպանած օց ա տըեսնում, քյինա̈մ ա միակեն քթավը քցն̈ւմ, պիրն̈ւմ հայաթը, ախպորցն ան հըռթներեն պերած տես-տենին խառնում: Կուճուր հառթնը լոխճընան թաքուն քյինա̈մ ա էտ օցըեն պիրա̈նան մին բրիլյանտա շինած մուտանա տն̈ւս օն̈ւմ, պիրն̈ւմ ուրան օթաղը:

Տրանա ետը կըրկըժնեն վըեր կյամ ա հըսնում, կուճուր հառթնը լոխ քաղել ա տամ, տահանց մաչան էնքան ցորըեն ըն տուս տամ, վըեր տասը տարե հերիքյ կանե:

Էտ տարըեն շատ թն̈ւնդ ծմըեռն ա ինն̈ւմ, հիյվըննեն լոխ սոված,

կյումերումը պըռանչում ին: Հիյվընտարերը կյամ ըն էտ կուճուր հառթնեն անա խոտ օզում, տա յել ասում ա.- Ես խոտը փողավ չըմ ծախում, ցռնավ ըմ ծախում: Խոտըեն թըյեննեն լոխ ցորեն ա շինո՛ւմ, տահանք ըսկսում ըն թաքավըերու մնան ապրելը: Էտ ղըթերքումն էլ տահանց տանը մնան սիրավ տոն չի կար:

Մին քշեր էտ հառթնեն պատրունը կյամ ա տրա տոռնը պենում, տըեսնում էտ քշերվա խըվարումը հենց ա մին իրիյնա՛կ ինի երգյինքա՛ն վըեր եկած, լո՛ւսա՛ն էլ մարթու աշկ ա օզում, թա ծակե:

Պատրունը ետ կյամ ա կնգանը կոշտը, տըեսածը քշտին նաղլ անում: Կընեգյը խըելունք ա ինո՛ւմ, ասում ա, - Ա՛ հլիվուր, հինչ պե՞ն օնըես, հինչըտ ա՞ մնացոլ, վըեր օզում ըս գյիղա՛ս, թա մըեր հառթնեն տանը էն հի՞նչ լո՛ւս ա, մունք էս ընք թաքավըերու մնան ըպրելիս, էլ հինչիտ ա՞, վըեր օզում ըս ամմըեն հինչ գյիղա՛ս: Մարթն ասում ա.-Չէ՛, վըեր չէ, ես պիտի գյիղա՛մ, թա էն հի՞նչ լուս ա:

Պատրունը քյինա՛մ ա կուճուր հառթնեն կոշտը, ասում.- Նաղլ ըրա, տըեսնամ էն հինչան ա՞, վըեր քշեր-ցիրեկ քու օթաղըտ իրիյնակու լո՛ւս ինգյա՛ծ ա ինո՛ւմ: Հառթնը ասում ա. - Ա՛պա, ես տա քեզ կարել չըմ ասըեմ, վըեր օզում ըս գյիղա՛ս, քու տղըետ նիըետ պիտի ըստըեղաս տո՛ւս կյամ, քյինա՛մ օրիշ շենում ապրըեմ, մըեր իլըծ-չիլա՛ծն էլ լոխ քեզ ինի: Տու մի ասըել, իրիյնա՛կու մնան լո՛ւս տվողն օցըեն պիրա՛նա՛ն տո՛ւս կալած մու-տանան ա:

Տա մուտանան յոր ա օնում քցո՛ւմ մաննը, մարթին նիըետ քյինա՛մ կոխ-կե շենը, մին էրկու-իրեք տըռնան ետն էլլա ամմըեն հինչատար տըեռնում, իսկ պըտրունեն քշտին մնացած ամմըեն հինչն օրկանց-օր ծո՛ւնո՛ւն մնան հալո՛ւմ ա պըրծնում, էլլա քյիսըբոթունը կյամ ա նահանց տռանը չոքում: Հացը հունց պեն ա, վըեր մարթին տանում ա դո՛ւշմա՛նին տոռնը:

Մին օր հլիվուրը ճըղորտված շուրերավ կյամ ա կուճուր հառթնեն տոռնը թակում, հառթնը պըտրունեն տանում ա տոն, լավ դունըխլեղ անում: Պատրունըն ասում ա.- Դե՛ լավ, հինչ իլա՛լ ա, իլա՛լ ա, մո՛ւլքյ ու ապրանք ա իլա՛լ, տահանք լոխ եղու մնան հա՛լա՛լ ա՝ քյեցա՛լ, էլլա եք մըեր կոշտը, բիրաղի ըխշաղինքյ, հինչ վըեր կասըես, քու ասածըտ կաննենքյ, էլ օրաս ետը քու սիր ու սեկրետետ նիըետ պեն չօնըեմ: Հառթնը ասում ա. - Ապա, տըեսնում ը՞ս էտ հացըեն կըտուրտանքը, հունց ըրա, վըեր նահանք

ո՛ւրո՛ւր անա կենան, նորըմինան սաղ հաց տըեռնան: Պատրունն ասում ա.- Ա՛ հառթնը, յա՛նի հացըեն կըտուրտանքը հունց կըկա՞րեն ո՛ւրո՛ւր անա փըռնեն, սաղ հաց տըեռնան: Հառթնը ասում ա. - Ապա, իտի յէլ մունք կարել չընք ո՛ւրո՛ւր սիրինքյ, ո՛ւրո՛ւր խոսկ ըսկանանք, լա՛վն էն ա՝ ճոկ-ճոկ, ո՛ւրո՛ւր անա հեռու ապրըենքյ, իտի ո՛ւրո՛ւր ավելի շատ կըսիրինքյ, իսկ քու ապրուստըտ, հացըտ, ճո՛ւրըտ, շորըտ ամմըեն հինչ քու տղորանցըտ լոխճինին պարտկն ա, կոզի ո՛ւրո՛ւր անա ճոկվալ ընք, պիտի մինչև վերչ քեզ լոխ քյո՛մա՛գյ անըենքյ:

## 36.ԻՐԵՔ ԿԼՈ՛Խ

Մին շատ թա՛մրա՛լ, քյա՛սիբ մարթ ա ինո՛ւմ: Տա տըեսնում ա, վըեր ո՛ւրա՛ն տանը ուտելի վըեչ մին պեն չի մնացալ, քյինա՛մ ա թաքուհուն կոշտը, կլո՛խ տամ, ինգյո՛ւմ վըենները, ղաչանք-պըղատանք անում, ասում. - Խոխեքյըս սոված կուտորվում ըն, ինձ մին պեն տո, տանըեմ: Թաքուհին խըղճմըտանքավ ա ինո՛ւմ, տրան մին քսակ վըեսկե յա տամ, ասում.- Տար խոխըեքյըտ պահե, վըեր մեռնեմ, բիղի ինձ կյա՛ս վուչ:

Էտ մարթը վըեսկեն յոր ա օնում, կյամ տոն: Օտում ըն խմում, պրանվում, քոն ինում՝ էնքան, վըեր էտ վըեսկեն էլ ա պըրծնում: Տա տըեսնում ա, վըեր վըեսկեն պըրծալ ա, տանն էլ ուտելի պեն չի կա, խոխեքյը հաց ըն օզում, բո՛ւրդա՛ն թաքուհուն խոսկը մըետն ա ինգյո՛ւմ: Թա՛րսո՛ւ մնան թաքուհին էլ մին տարե առաչ ա ինո՛ւմ մըեռած: Տա ասում ա.-Հինչ ինո՛ւմ ա, թող ինի, էս քշեր պիտի քյինա՛մ թաքուհուն կյիրեզմանը:

Հղե յա ինո՛ւմ, քյինա՛մ: Նիըետն էլ մին պա՛հ, մինգյել մին մեշուկ ա յոր օնում, ասում. - Բա՛լի թաքուհուն կյիրըզմանումը վըեսկե յա ինո՛ւմ, ածըեմ մեշուկը, պիրիմ...

Լո՛ւսնինգյա՛ քշեր ա ինո՛ւմ: Էտ մարթը քյինա՛մ ա թաքուհուն կյիրեզմանը քա՛նդո՛ւմ, ղոթին պեց անում: Թաքուհին տըեղը նըստում ա, ասում.- Ես քեզ հինչ ըմ ա՞սալ, հոր ը՞ս եկալ: Մարթն ասում ա.- Թաքուհի, եր կաց, էլ էն տըեղը չի, քու տըեղըտ ես կյիրեզման կըմնըեմ, խոխեքյըս կուտորվում ըն, մին թա՛հր ըրա: Թաքուհին տրան իրեք կյիրեզման ա նշանց տամ, ասում.-Քյինա՛ էտ կյիրըզմընըեն քա՛նդի, կըլխըեն եր կալ, տար էսիհինչ կաղնուն տակըեն մին տոն կա, տոռնը թակե սաե՝ կլո՛խ ըմ պերալ, նա յոր ա ուննական, հինչ ասըես, տա: Թաքուհին էտքանն ասում

ա, նի մննում կյիրեզմանը:

Էտ մարթը թաքուհուն կյիրեզմանը նորըմինձն ծասկում ա, վըեղը յիրձն ածում, քյինձմ էն նշանց տուված իրեք կյիրըզմանները քձնդո̈ւմ, կլխընեն տո̈ւս օնում, քցո̈ւմ միշուկեն մաչը, շիլձկում, քշերվա կեսին քյինձմ կաղնուն տակըեն տանը տոռնը թակում: Տնատարն ասում ա.-Հու վը՞ս, նի մըտ տըեսնամ: Տա նի յա մննում, մեշուկը վըեր տինո̈ւմ, ասում. - Ծըզետե կլխընե յըմ պերալ: Տնատարը մեշուկը յոր ա օնում, տանը մաչ տըեղը թափ տամ, միշուկան իրեք կլո̈խ ա վըեր ինգյո̈ւմ, մինը թուլուլ ա ինում, ինգյնո̈ւմ կարավաթեն տակը, մինն ինգյնո̈ւմ ա տանը պոճախը, էն մինն էլ մնամ ա տանը մաչ տըեղը: Տնատարը թո̈ւվանգյը յոր ա օնում, կարավաթեն տակե կըլխեն յիրա անում, գյո̈ւլլձն մին ընգյո̈ւնավ նի յա մննում, էն մին ընգյո̈ւնավը տո̈ւս կյամ: Ասում ա՝ սա հեչ: Պոճախն ինգյձծ կլխըեն ա յիրա անում, գյո̈ւլլձն նի յա կյամ, առանց ծըկելի ետ տըեռնում: Ասում ա՝ սա յէլ հեչ: Տանը մաչ տըեղեն կլխըեն թյո̈ւվձնգյը վըեր յիրա յա անում, գյո̈ւլլձն կլո̈խը ծակում ա, մնամ կլխումը: Տնատարն ասում ա. - Ա՛յ, սա կլո̈խ ա, հինչ վըեր օզըես, կըտամ, իսկ էն էրկունը ինձ հարկավըեր չըն, կարող ըս ետ յոր օնըես: Տա թա՝ հինչ թափավո՞ւտ կա կըլխըներեն մաչին, կլո̈խը կլո̈խ ա իլի: Տնատարը ասում ա.-Չէ՛, կլխան կլո̈խ թափավուտ շատ կա, էն կարավաթըեն տակըեն կլո̈խը քու կլխըետ մնան ա, թաքուհին վըեր ասալ ա՝ կոշտըս չի կյձս, ըսկացալ չըս, խոսկը մին ընջուկավըտ նի յա մտալ, մինավը տո̈ւս եկալ, էն պուճախըեն կլո̈խը՝ վըեր գյո̈ւլլձն նի յա եկալ, ծակալ չի, նա քըզանա մոտե մարթ ա իլձլ, հինչ վըեր ասալ ըն, կլո̈խը նի չի մտալ, ինձ իտի կլոխն էլ չի հարկավըեր, էն տանը մաչ տըեղեն կլո̈խը, վըեր գյո̈ւլլձն ծակալ ա մնաց ալ մաչին՝ տո̈ւս չի եկալ, տա հունց մարթ ա իլձլ, վըեր հինչ ասալ ըն, մնացալ ա կլխումը, էտ կլխըեն հինչ օզըես, կըտամ: Էտ մարթն ասում ա.- Մին քըսակ վըեսկե տո: Տնատարը մին քսակ վըեսկե յա տամ, էտ մին կլո̈խը յոր օնում, էտ մարթին էլ ասում.- Քյինձ, սօրաս ետը հինչ վըեր ասըեն, թող կլխումըտ մնա:

### 37.ՓԸՍԵՆ ՊԱՅՄԱՆԸ

Մին շատ հարուստ մարթու տղա մին շատ քյձսիբ մարթու ըխճըկան սիրում ա: Էտ տղան հորն ասում ա.- Ես մին ըխճըկան հավան ըմ կացալ, էտ ախճիգյը մըեր դո̈ւքյձնձն ապրանք ա ինքյ կալալ, օզում ա քյինձ

ուրանց շենը, թա օզում ըս տըեսնաս, նիըետը քյինձ ո՛ւրձնց շենը, հղեննի զրո՛ւց կանըես, կըճինձնչիս, կըզյիդձս հունց ախճիզյ ա:

Հձրը հղե յա ինո՛ւմ, ըխճըկանը նիըետ քյինձմ ո՛ւրձնց շենը: Հղեննի ճոխտն էլ սուս ըրած ըն ինո՛ւմ, ախճիզյը խոսկ ա օզում պեց անըե, ասում ա. - Ե՞ս քեզ շիլակըեմ, թա տո՞ւ ինձ շիլակըես: Հլիվուրը խոսկ չի քթենում, վըեր ասըե, սուս ա անում, մտկումր տղըեն ա ըսկսում ո՛ւշո՛ւնց տալը, ասում՝ էլ ախճիզյ չի քթձլ, վըեր էս տո՛ւս պրծած անիըմանչին ա հավան կացալ:

Ախճիզյը տըեսնում ա, վըեր հլիվուրը խոսում չի, ինքյն էլ ա սուս անում:

Մին խիլլա տըեղ էլ վըեր քյինձմ ըն, հղեննի մին մըեծ ցըեխ տըեղ ա պըտահում: Ախճիզյը հլիվուրըեն ասում ա.- Ե՞ս քու ծըեռքատ փռնըեմ, թա տո՞ւ՝ իմ: Հլիվուրը էլլա չի կարում խոսկ քթենա ասե:

Վըեր կյամ ըն շենձն մուտանում, ախճիզյը խոր թառանչ ա քաշում: Հլիվուրն ասում ա.- Էտ խե՞ իտի խոր թառանչ քըշեցեր: Ախճիզյն ասում ա. - Էն դոլի արտըերը հձրձնց ըն քյինձմ, տըեսնաս սահանց տարը կե՞րալ ա, վարալ, թա վա՞րալ ա, պիտի օտըե: Հլիվուրը պեն չի կլո՛ւխ ինգյո՛ւմ, վըեչ էլ խոսում ա, մինակ ո՛ւրձն տղըեն ա մտկումն ո՛ւշո՛ւնց տամ, վըեր իտի խըելքը պակաս ըխճըկան ա հավան կացալ:

Շենը հսնըելնը բձս հլիվուրը ետ ա տըեռնում կյամ տոն, հինչ վըեր ըխճըկանան ըսկացալ ա, տղըեն նիըետ նաղլ ա անում, տըղան շատ ա ուրխանում, վըեր ախճիզյն էտքան խըելունք ա իլալ: Հձրն էլ շատ ա զարմանում: Տղան ըսկսում ա ըխճըկանը խոսկըերքը մին-մին լռխ խո՛ւրդձ անըելը, ասում ա. - Էն վըեր ասալ ա՝ ե՞ս քեզ շիլակե՞մ, թա տու՝ ինձ, ուզըեցալ ա ասըե՝ հղեն երկան ա, մին պեն նաղլ ըրա, վըեր հղըեն անց կենա, իսկ վըեր ասալ ա՝ ես քու ծըեռքատ փռնըե՞մ, թա տու՝ իմ, տրանավ էլ ուզըեցալ ա ասըե՝ հղեն ցեխ ա, ծմական միակ կտրըե, հանցու վըեր տեմ տաս, մինգյել վըեր ասալ ա՝ արտըերը հձրձնց ըն քյինձմ, տըեսնաս սահանց տարը կե՞րալ ա վարալ, թա վարալ ա՝ պիտի օտըե, տրանավ էլ ուզեցալ ա ասըե, էն ըրտերեն տարը հնձիլձկան ա տանըե ո՛ւրձն պարտ-կերը տա՞, թա տըննական ա ո՛ւրձն ըմբըրնեն ածըե:

Տրանա ետը հձրն ասում ա. - Դե, վըեր իտի յա, հավան ըս կացալ, քյինձ պեր, պեժինքյ-պեն չի հարկավըեր, թաքյ լիհա մըեր հառհնը խըելունք ինի:

Տղան քյինա̈մ ա ըխճըկանը տոնը, ըխճըկանը նիըետ մսլըհաթ անում, պայման տինո̈ւմ, ասում.-Քեզ տանում ըմ, ամմա վըեր իմ պենիս խըռնըվըեցեր, իմ տանաս տո̈ւս ըմ քցըլա̈կան: Ախճիգյն ասում ա՝ լավ:

Տղան ըխճըկանը կուռնան փռնում ա, պիրո̈ւմ ո̈ւրա̈նց տոն:

Ըխճըկանը հա̈րը շատ քյա̈սիբ ա ինո̈ւմ, տանը վըեչ մին պեն չի ինո̈ւմ, մենակ մին կյառն ա ինո̈ւմ, էտ կյառնըեն նիըետ ար զիրա̈վ ինո̈ւմ, օրն անցկըցնում: Մին օր էլ փըեսան ո̈ւրա̈ն ղընոտենքյը պըհողեն սուվըրցնում ա, թա քյինա ղընոտենքյը հունց տըեղավ քշի, վըեր հանորըս կյառնը նահանց նիըետ խառնըվե, քշի, պեր մըեր հայաթը: Ղընոտենքյը պահողը իտի յել անում ա: Կյառնը ղընոտանցը նիըետ ա քցո̈ւմ, պիրո̈ւմ:

Տա կյառնը փռնում ա մորթում, օտում:

Մին քանի օրան ետը հանըերը կյամ ա փըեն կոշտը, ասում.- Կյառնըս ղընոտանցըտ նիըետ խառնվալ ա, եկալ ըմ տանըեմ, առանց նրա օրըս անց չի կենում: Փըեսան ասում ա.- Կյառնըտ վըեր ղընոտանցը նիըետ խառնվալ ա, հա̈լբա̈թ դանա յա տըեռալ, քյինա̈ տըես ճինանչում ը՞ս, ճոկե, եր կալ տար: Հանըերն ասում ա.-Հունց կա՞րող ա կյառնը դանա տըեռնա: Տըեսնում ա, վըեր փըեսան խոսում չի, ետ ա տըեռնում, քյինա̈մ ո̈ւրա̈ն տոնը:

Ախճիգյն էտ պենը վըեր տըեսնում ա, մին օր աշկ ա կյուղանում, թաքուն քյինա̈մ հորը կոշտը, հորը սուվըրցնում, ասում.- Փըեսատ քըշըրհանան ան դիբրո̈ւզյո̈ւնը բըխճեն ծըղըզյնեն ճիրո̈ւմ ա, քյո̈հնա թորըտ յոր կօնըես կյա̈, քցիս ծըղըզյնըերեն յիրա̈, փըեսատ հըրցըննական ա,թա էտ հինչ պե՞նի յըս, տու կասըես ծո̈ւկո̈ւն ըմ փռնում, վըեր ասըե հու վա՞ ծըղըզյներեն մաչին ծո̈ւկո̈ւն տըեսալ, տու վըել կասըես՝ հու վա՞ տըեսալ, վըեր կյառնը դանա տըեռնա:

Ախճիգյն էտքանը հորը սուվըրցնում ա, ետ տըեռնամ կյամ տոն:

Մին օր հանըերն ո̈ւրա̈ն թորը յոր ա օնում, կյամ նի մննում փըեն բախճան, ըսկսում թորը ծըղըզյներեն յիրա քցիլը: Փըեսան վըեր կյամ ա տըեսնում հանըերը թորը քցա̈ծ ծըղըզյներեն յիրա̈ «ծո̈ւկո̈ւն փռնելիս», դա̈ստին մաննը կծում ա, կյո̈ւխ ա ինգյո̈ւմ, վըեր տա հանորը խըելքեն պենը չի, ախճիգյն ա սուվըրցրալ, հանորը նիըետ վըեչ մին պեն խոսում չի: Ո̈ւրո̈ւզյո̈ւնը քյինա̈մ ա տոն, կընգանն ասում. - Մըեր պայմանը պայման ա, տու վըեր իմ պենիս խառնըվալ ըս, ես քեզ իմ տանաս տո̈ւս ըմ քցո̈ւմ, քշերավ կըքյինա̈ս

քու հ՚որ՚անց տոն: Կնեգյն ասում ա. - Պա ես քըզ նիըետ մին տարե ըխշադալ ըմ, էս տանան ինձ փայ չի՞ հըսնում: Մարթն ասում ա.-Էտ տու, էտ էլ տոնը, հինչ վըեր աշկըտ փռնըե, յոր կօնըես, քըզ նիըետ տանըես: Կնեգյն ասում ա.- Վէրչին դ՚ն՚ումն ինձ նիըետ պիտի մեհետ լ՚ավ հաց նստըես, ես էլ էս ՚ուր՚ուլցյ՚ունը կըքյինամ իմ հարանց տոն: Մարթը թա՝ լավ:

Վըեր պիր՚ում ըն հաց վըեր տին՚ում, օտում-խմում, մարթը հ՚որփ՚ում ա, խոր քունավ հընցնում: Տրանա ետը կնեգյը տ՚ուս ա կյամ մին փուրգոն փըռնում, պիրում ՚ուր՚ան մարթին տին՚ում մաչին, տոռնը քըլլում, փուրգոնը քըշիլ տամ թուշ ՚ուր՚ան հարանց տոռնը, պիցր՚ան՚ում տոն:

Մարթը քշըրհանան վըեր աշկըերը պեն՚ում ա տըեսնում հանորը տանը, կնգանան հըրցնում ա, թա ինձ հոր ը՞ս պերալ ըստըեղ: Կնեգյն ասում ա. - Տու ինձ ասալ ըս տանը հինչ վըեր աշկըտ փըռնըե յոր կօնըես քըզ նիըետ տանըես, ես էլ սաղ տանը մաչին հիչքան տես ու տեն յիշեցե, աշկըս քեզ փռնըեց, եր կալի պերե, տանը պիլ՚անին էլ էս ա ծըեռքես, եր կալ, տիր ջուբումըտ: Ասում ա, պիրում պիլանիքյը տամ ՚ուր՚ան: Մարթն էլ թա՝ էն տոնն առանց քեզ կապեկ չ՚աժի, ետ տըեռ քյին՚անք: Սօրաս ետը ես իմ պայմանըս փոխում ըմ:

## 38.ՎԸԵՍԿԵ ԹՌԽԿԱՆ

Օխտը ախպըեր ըն ին՚ում, ՚ուր՚անք էլ հըսած-փըսած, բայց շատ քյ՚ասիբ: Մին օր տահանք հորը յըխըբրողազ ըն անում, թա մըեզ պիտի փսակես: Հ՚որը թա՝ մունք էսքան քյ՚ասիբ, ծըեզ հինչա՞վ փսակեմ: Տղեքյը հըվաքվում ըն հորը նիետ խոսում, մսլըհաթ անում, թա հու վըեր հիշտեղա կյ՚ա տոն, մին պեն պիրի: Տրանա ետը ամմըեն օր մինը մին փաղ, մին չոփ, մինն էլ մին քար, մին արկաթ, յա մին օրիշ պեն ար նիետը պիրում տոն: Կուճուր ախպըերն էլ պեն չի քթենում, հղըցըեն մաչին մին ըսպանած օց ա ին՚ում, միակեն պտոկն ա քց՚ում, պիրում սհարումը վըեր քցում: Ախպըերքը կյամ ըն օցըեն ծոռ-ծոռ եշում, անց կենում: Կուճուր ախպըերը իսկի վեջավն էլ չի օնում:

Մին օր կուճուր ախպըերը եշում ա, տըեսնում մին դուզղուն մին վըեսկե թռխկա չինգյերավը քցած, տանում ա: Տա օցը պիրում ա քց՚ում դուզղունեն առաչը, դուզղունը թռխկան օցեն քշտին վըեր ա քցում, օցը յոր ա օնում, քյինամ:

Կուձուր ախպըերը էտ վըեսկե թոխկան տանում ա տոն, տրանավ մըեծ-մըեծ տներ ըն շինում, լավ ապրուստ ըստեղծում, ըսկըսում մըրթը-վարի ապրելը: Տրանա ետը հա՛րը, մարը, մըեծ ախպըերքը ըսկսում ըն տրա կըլխավը պըտըպատ անըելը:

Ըստուծանա իրեք խնձո՛ր վըեր ինգյի՝ մինն ըսողըեն, երկունն էլ ըսկընողըեն:

## 39.ԿՅԵՏԵՆ ՊԵՐԱ՛Ծ ԽՆՁՈ՛ՐԻՆ ՆԱՂԼԸ

Մին ջահիլ տղա քյինա՛մ ա կյետին ղրաղեն իրեսը լուվանում, տըես-նում կյետը մին խնձո՛ր քշած պիրո՛ւմ ա: Ծըեռքը մըեկնում ա, խնձո՛րը փռնում, օտում: Մինգյել մտածում ա, թա պա էս խնձորին հախը տուվե՞, վըեր կերե: Կյետնըյեր քյինա՛մ ա, վըեր տրա բաղը քթենա՛, հախը տա, ետ տըեռնա:

Շատ ա քյինա՛մ, թա՝ խըրեգյ, հսնում ա մին բաղ՝ հենց լիհա՛ կյետեն կոխկեն: Նի յա մննում, ղարաղուլչուն ասում. - Էս բաղան կյետը մին խնձո՛ր ա քշա՛լ պերա՛լ, փռնալ ըմ, կերալ, հախը հիշքա՞ն ա, ասե, տամ: Ղարաղուլչին թա՝ ես կարել չըմ ասեմ, խազայինն ա գյո՛ւղո՛ւմ:

Էտ տղան քյինամ ա շոռ կյամ, բաղեն խազայինը քթենում, ասում. - Բաղետ մին խնձո՛րը կյետը պերալ ա տուվըեր, ճիրան տո՛ւս ըմ կալալ, առանց հախը տալի կերալ, կյինն ասե, տամ: Խազայինը թա՝ կարել չըմ ասեմ, բաղը թաքավըերենն ա, քյինա՛ թաքավըերեն անա հըրցըրու:

Տա քյինամ ա թաքավըերեն էլ ասում, թաքավըերը հըրցնում ա. - Տու փսակված ը՞ս, թա ա՛զա՛փ: Էտ տղան թա՝ ա՛զա՛փ ըմ: Թաքավըերն ասում ա.- Մին ախճիգյ օնըեմ, համ քառ ա, համ՝ քոռ, համ էլ՝ կոնդ: Թա ըխճըկանըս նհետ կըփսակվըես, խնձո՛րին կյինը յոր կօնըեմ, թա չէ՝ քեզ ինի, հարկավըեր չի: Էտ տղան կարում չի իրեսա անց կենա, մտկումն ասում ա՝ փսըկվըլական ըմ, տըեսնամ սրա վերչը հինչ ա տըեռնում:

Փսակվում ա, ախճիգյը տանում տոն, տըեսնում վըեչ քառ ա, վըեչ՝ քոռ, վըեչ էլ՝ կոնդ, շատ ղա՛շա՛նգյ էլ ախճիգյ ա, հենց ա լիհա՛ մին հո՛ւլըգյ- մա՛լա՛գյ ինի:Էտ կյամ ա թաքավըերեն կոշտը, ասում.- Թաքավըերն ապրած կենա, պա տու լիհա առւմ ըս՝ ախճիգյս համ քոռ ա, համ՝ քառ, համ էլ՝ կոնդ, վըեչ նա յա, վըեչ՝ նա, վըեչ էլ՝ նա: Թաքավըերն ասում ա.- Ախճիգյս քոռ ա, վըեր հա՛լա՛ տո՛ւսը տըեսալ չի, քառ ա, վըեր հա՛լա՛ վըեչ մին փիս խոսկ չի

ըսկացալ, կոնդ ա, վըեր  հըսարան տո̀ւս չի եկալ, վըեր տի հալալ ծըծկեր ըս, տրա հետե յել քեզ ըմ տուվալ:

40.ՄԸԵԾ ԱԽՊԸԵՐԸ ՆԱՆ ԿՈՒՃՈՒՐ ԱԽՊԸԵՐԸ

Էրկու ախպըեր ըն ինո̀ւմ: Մըեծը փսակված, մին քանի խուխատար տըեռած ա ինո̀ւմ, կուճուրը՝ հա̀լա̀ ա̀զա̀փ: Տանը տիժեր պեները լոխ կուճուր ախպըերն ար անում՝ քշեր-ցիրեկ հա̀նդի պեն ար անում, տավարն ար պահում, քրտնընքու մաչի կորած ըխշադում ար:

Հունց ա պըտահում, մըեծ ախպորը մտկավն անց ա կենում, վըեր կուճուր ախպորն անա ճոկվե: Մեհետ վըեր խոսկ ա պեց ինո̀ւմ, տա կուճուր ախպորն ասում ա. - Ես արտեն խուխատար-կնգատար ըմ, տու վըել սօր-էքյո̀ւծ փսըկվըլական ըս, լավ կինի, վըեր ճոկվենքյ: Կուճուր ախպըերն ասում ա. - Դե վըեր օզում ըս ճոկվենքյ, տոնը-տըեղը լոխ մին փայ անենքյ, մըեր հա̀ր էլ՝ մին փայ: Մըեծը թա՝ հա̀լա̀ կնգանըս նհետ մըլըհաթ անըեմ, ետնան: Քյինամ ա կնգանը նհետ մըլըհաթ անում, կնեգյն ասում ա.- Քու հա̀ր արտեն մըծացած, կունդացած, հա̀լա̀ ինգյա̀ծ մարթ ա, վըեր յոր օնըեւ, սաղ տանան-տըեղան, ըպրուստան ինգյիս, խոխեքյըտ հինչավ ը՞ս պըհըլական, էն ա տահանք եր կալ, թող հա̀րն էլ ինքյը յոր օնըե:

Մըեծ ախպըերը կյամ ա կուճուր ախպորը կոշտը, սա հըրցնում ա, թա վըերն ը՞ս օզում, մըեծը թա՝ տոնը-տըեղը, մո̀ւլքյն ըմ օզում:

Փայ ըն տինում, իլա̀ծ-չիլա̀ծ լոխ մըեծ ախպըերն ա յոր օնում, հարը տամ կուճուր ախպորը: Տահանք էլ լա̀վ տոն-տըեղ ըն ինո̀ւմ տիրա̀ծ:

Կուճուր ախպըերը ամմըեն հինչ թողում ա, հորը շիլակում,քյինամ ղարիբոթուն, վըեր ընդըեղ ըխշադանք անըե: Քյինամ ա տո̀ւս կյամ մին հեռու քաղաք, մին տոն փռնում, հորը տինում ըտըեղ, ինքյը քյինամ քըղաքըեն մեյդանը, վըերդեղ վըեր մշակ մարթուցը տանում ըն պինըցնում: Լոխճինին տանում ըն, տրան տանում չըն: Մին քանի օր քյինամ ա կյամ, վըեչ մինը հըրցընում չի, թա տու հու վը՞ս, հինչ ը՞ս: Մին օր էլ մին սիպտակ ծիյավուր մարթ կյամ ա տրան հըրցնում, թա՝ տու հու վը՞ս, տա թա՝ իստի մարթ ըմ, վըեչ մինն ինձ տանում չի պինըցնե: Տա տո̀ւս ա օնում մին մանեթ տամ, յոր չի օնում, ասում ա.- Թա պեն օնըես ընելի, ինձ տար պինըցրու, հախը տո, օզում չըմ տուված փողըտ: Էտ սիպտակ ծիյավուրը

թա՝ հա̀լա̀ եր կալ, ետնան էտ էլ կինի։ Յոր ա օնում, քյինամ տոն։ Էքյսը կյամ ա, էլլա էտ սիպտակ ծիյավուրը պըտահում ա, մին մանեթ էլ մեհենգյ տամ, էն մին օրն էլ մին քանի վըեսկե յա տամ, թա՝ տու վըեր քո հոր մին փայ ըս տիրալ, մուլքյը, ապրանքը՝ մին փայ, էտ վըեսկեն աստված ա քըզետե դարկալ, տար դուքյըննե պեց ըրա, առիտոր ըրա։

Տա քյինամ ա մըեծ դո̀ւքյըննե պեց անում, ըսկսում ամմըեն հինչ իժան ծախելը։ Տըեղետ դո̀ւքյա̀նչիքյն էլ քյինամ ըն թաքավըերեն կյենգյատ անում, թաքավըերն էլ ասում ա. - Ապրանքն ո̀ւրա̀նն ա, հինչ կյինավ օզե, կըծախե։ Տահանք վըեր շատ քյինամ ըն կյամ, թաքավըերն էտ տըեն ծեն ա տամ, հըրցնում, տա յէլ ամսում ա.- Կյուղոթուն չըմ անում, ապրանքը իմն ա, հինչ կյինավ օզըեմ, կըծախեմ։ Էտ խոսկերքը թաքավըերեն շատ տոր ա կյամ, ասում ա. - Վըեր իտի խըելունք տղա յըս, իմ փըեսաս պիտի տըեռնաս։ Էտ տղան էլ ասում ա.- Երեք իրավունք պիտի տաս ինձ՝ թողես ծրի ճաշարան, ծրի համամ, մինգյել առանց շիադ աղող մին ճեղաց պահեմ, տըրանա ետը քու փըեսատ կըտըեռնամ։ Թաքավըերն ասում ա՝ թուղեցե։

Տրանա ետը ախճիգյն էտ տըեն նիետ փսակում ա, էտ տղան քյինամ ա ճեղացը, համամը, մինգյել ճաշարանը պեց անում, ժուղովուրթը կյամ ըն օտում-խմում, ուրանց դա̀նն էլ ծրի աղում, քյինամ։ Տա կնգյանն էլ ասում ա.- Քու ծառաներավըրտ-պենավըրտ իմ հոր լա̀վ կըպահես։ Կնեգյն էլ հորը առոք-փառոք պահում ա, ամմըեն օր լըղըըցընում, ուտըըցընում-խըմըցնում, քոն անում։

Սահանց թողենքյ ըստըեղ, մեհենգյ խաբար տանք մըեծ ախպորն անա։ Սա յէլ մո̀ւլքյը, ապրանքը, ամմեն հինչ լոխ ծըխլըխորալ ա, կերալ ըն, մնացալ սոված, տկլոր։ Էն օրն ա ինգյո̀ւմ, վըեր օրեն հացն էլ չար կարում քթենա։ Մին օր էլ ըսկանում ա, թա էսհինչ հեռու քըղաքումն իստի մին ծիրի ճաշարան կա։ Էլ խոխեքյը, կնեգյը էյնը չի կյամ, եր ա կենում փըյադա քյինամ տո̀ւս կյամ էտ քաղաքը, վըեր լիհա մեհետ կոշտ փորուք հաց օտըե։ Հըսնում ա ըտեղ, քյինամ ճաշարանը քթենում, նի մննում վըեր նստե, կուճուր ախպըերը տըեսնում ա, ճինանչում, ասում ա՝ ըհ՛ը, էս ա ախպըերըս եկալ ա. մուտանում ա, ասում. - Ախպըե՛ր, ախպըե՛ր, հա̀լա̀ մին կաց, պեն ըմ ասում։ Տա կուճուր ախպորը ճինանչում չի, ասում ա.- Հալա մին կաց, սոված ըմ, հաց օտըեմ, ետնան։ Կուճուր ախպըերը պօվուրներեն ասում ա.- Սրան լավ հաց տուվըեքյ, թողեքյ հինչ օզում ա, ո̀ւրա̀ն քյեփավը

օտըե-խմըե։

Մըեծ ախպըերը լա՛վ օտում ա-խըմում, քուշտանում։ Կուճուր ախպըե-ըը տրա նհետ մարթիքյ ա տինո՛ւմ, ասում. - Տարեքյ շորերը փուխեցեքյ, իրեսը վըեր անել տուվեքյ, էս ա ըստըեղ էս տեսը-տենը պըրծնեմ, կյամ ըմ։

Տահանք տանում ըն տրան լըղըցնում, իրեսը վըեր անում, շորերը փոխում, կուճուր ախպըերն էլ կյամ ա, հըրցնում, թա ինձ ճինանչում ը՞ս, մըեծ ախպըերը թա՝ չէ։ Տա թա՝ ես քու ախպըերն ըմ, պա էտ հունց ա՞ պըտահալ, վյըեր ինգյա՛լ ըս ըստըեղեքյ, կնեգյըտ, խոխեքյըտ հունց ը՞ն յոլլա քյինամ։ Մըեծ ախպըերը թա՝ դե հինչ ա՞սըեմ, ըսելի չի։ Կուճուր ախպըերը թա՝ դե տու ըստըեղ կաց, դո՛ւքյըններեն-պեննին եշի ես քյինամ ո՛ւրա՛նց հըվաքեմ, պիրիմ։ Մըեծը թա՝ չէ՛, քյինա միլ, ես կըքյինամ, կըյիսկըրնըերեն շոր չի կա, լոխ տկլոր նի տըեռած ըն տոնը, հըմանչում ըն, թա տանան տո՛ւս կյան։ Կուճուրը թա՝ վըեչինչ, հունց կանըեմ, վըեր հըմանչիլ չըն։

Տա լոխճինին հետե շորեր ա կարել տամ, յոր օնում, ծին նստում, քյինամ տո՛ւս կյամ ախպորը կնգանն ու խոխոցը կոշտը, ծեն տամ, ախպորը կնեգյը ճինանչում չի, ասում ա. - Տկլոր ըմ, կարել չըմ տո՛ւս կյամ։ Տա՛քյիրը կապած շորերը տռանը ղաթավը թող ա անում, ինքյը դրաղ կենում։ Ախպորը կնեգյը շորերը կյենում ա, խուխոցն էլ կյեց տամ, տո՛ւս կյամ, թա՝ ղարիբ ախպըեր, տու հու վը՞ս, ճինանչում չըմ։ Տա թա՝ քու տաքյիր ըմ, եկալ ըմ ծըեզ տանըեմ կոշտըս, ախպըերըս էլ էն ա քշտիս։

Տա տըեղատ ծի յա փռնում, ախպորը կնգանն էլ, խուխոցն էլ հըվաքում, տանում կոշտը։

## 41.ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՊԱՅՄԱՆԸ

Մին թաքավըեր ո՛ւրա՛ն վազիրին տասսը մանեթ փող ա տամ, ասում տար էտ փողավը ինձետե համ մին վըեխճար ինքյ կալ, համ մին շալ, տահանց նհետ մին շամփուր խըրավածծ մըեւ կըպիրիս, համ էլ տասսը մանեթըս ետ կըպիրիս ինձ տաս։ Էս վա՛զիրը մնամ ա պըտըհասու մաչ ինգյա՛ծ, հինչ անըե, հինչ չանըե, լոխճինին հըրցըփորց ա անում, վըեչ մինն էլ կլո՛խ չի ինգյո՛ւմ, թա տա հինչ պեն ա, հունց կարելի յա տասսը մընեթավ էտքան պեններն ինքյ օնըել, համ էլ փողը ետ պիրիլ։

Վազիրը կլոխ ա յոր օնում, քյինամ սաղ երգյիրը շոռ կյամ, լոխճինին

հըրցըփորց անում, վըեչ մինն էլ ա կարում չի գյիդա̀։ Մին օր էլ կլոխ եր կալած բիդի մին շեն քյինա̀լիս էտ շինացե մին մարթ ա պըտահում։ Նըհետը հնգըեր ա ինգյո̀ւմ, հղե ինո̀ւմ, քյինամ։ Հալա մին խիլլա հղե յա ինո̀ւմ մնացած մինչև շենը։ Վազիրն էտ մարթին ասում ա. - Եք մինչև շենը փա̀լա̀քյա̀ն քցինքյ։ Էտ մարթը խոսում չի։ Մին խիլլա յէլ վըեր քյինամ ըն, մին վարար՝ կյետ ա կյամ ըռըչնեն։ Վա̀զիրն ասում ա. - Եք կարմունջ քցինքյ, անց կենանք։ Տա էլլա չի խոսում, վըենները հանում ա, փոխկերքը եր քաշում, կյետավն անց կենում։ Վա̀զիրն էլ վըենները հանում ա, փոխկերքը եր քաշում, անց կենում։ Մխըրե յէլ վըեր քյինամ ըն, մին լա̀վ, շատ հըսկըկալած արտ ա պտահում։ Վա̀զիրը թա՝ տըեսնաս սրա տարը հնձա̀լ ա կերա՞լ, թա հնձիլա̀կան ա օտըե։ Տա էլլա չի խոսում։ Վըեր հսնում ըն շենը, վա̀զիրր հըրցընում ա, թա էս շենումը հիշտե՞ղ կարելի յա ո̀ւրո̀ւլգյո̀ւնըս ղոնաղ ինգյիլ։ Էտ մարթը թա՝ հանե՛ շենին նըերքե ղոլին կալերեն տակըեն մին դա̀գյա̀ կա, քյինա̀ ընդըեղ կաց, քշերավ եր կըկենաս քյինա̀ս։ Վազիրր մտկումն ասում ա հալբաթ էս շենումն ա̀դա̀թ չի ղոնաղ յոր օնըելը։

Հղե յա ինո̀ւմ, քյինամ էտ դիգյին տակր։ Էտ մարթր քյինամ ա ո̀ւրա̀նց տոն, տնըցուց քշտին նաղլ անում, թա պա իստի մին մարթ պըտահեց, թամամ պըել։ Էտ մարթին մին մըեծ, շատ խըելոնք, նշանած ախճիգյ ա ինո̀ւմ։ Հըրցնում ա, թա ապա, էտ հունց մա՞րթ ա քեզ պըտահալ, վըեր ուզեցալ չըս քըզնըհետ պիրիս տոն։ Հա̀րը թա՝ լավ կյեցված, քաղաքվարի, քըղաքում ապրող մարթ ա ուրվամ, ամմա նրա խուսկերքան խըելքըս ճուր չի խմում, խըելունք մարթու խոսկերք չըն։ Ախճիգյր թա՝ հա̀լա̀ մին ասե՝ տըեսնամ հի՞նչ ա ասալ։ Հա̀րը թա՝ շենան խիլլա̀ հեռու տա ասեց՝ եք մինչև շենը փա̀լա̀քյա̀ն շինինքյ, քյինանք։ Ետնան էլ եկենքյ կյետեն մուտացենքյ, ասեց՝ եք կարմունջ շինինքյ, կյետավն անց կենանք, գյո̀ւղո̀ւմ չըմ, թա տի կյետավը վեր կարելի յա վըենները հանած անց կենալ, ո̀ւրա̀ն կարմունջը հին չու վա՞ պետկ, յա էրկու հոքավ, տերտակ ծըեռքավ հունց ա՞ կարմունջ շինում, մինգյել եկալ ընք մին լավ փսած արտու քշտավ անց կացալ, ըտըեղ էլ ասում ա՝ տըեսնաս սրա տարը հնձա̀լ ա կերա՞լ, թա հնձիլա̀՞կան ա օտըե. պա արտը հալա թամամ հըսած վուչ հունց կա՞րող ա հնձած-կերած ինի։

Ախճիգյը թա՝ ապա, էտ մարթը շատ խըելունք մարթ ա, տու գյիդացալ չըս։ Հա̀րը թա՝ յա̀նի էտ խոսկերքը խըելունք մարթու խոսկերք ը՞ն, հունց ա՞

խըելունք։ Ախճիգյը թա՝ հա՛, շատ խըելունք խոսկերք ըն, տու չըս կլո̏ւխ ինգյա̀լ. էն վրեր ասալ ա՝ եք փա̀լա̀քյա̀ն շինինքյ փա̀լա̀քյա̀նավ քյինանք, ուզեցալ ա ասե՝ զո̏ւրո̏ւց ընելավ քյինանքյ, վըեր հղեն ճելլի պրծնե, նղացած ինիլը գյիդանք վուչ, իսկ վըեր ասալ ա կարմունջ շինինքյ կյետավն անց կենանք, ուզեցալ ա ասե՝ ո̏ւրո̏ւր շիլա̀կենքյ, անց կենանք, արտան մոտե յէլ վըեր ասալ ա տըեսնաս սրա տարը հնձա̀լ ա կերա՞լ, թա՞ հնձիլա̀կան ա օտըե, տրանավ էլ ուզեցալ ա ասե՝ տըեսնաս տարը պարտկ ա ըրալ կե-րա՞լ, էտ արտան ո̏ւրա̀ն մին պեն հսնըլական ա՞, թա՝ չէ։ Մեհենգյ հըվըտա-ցե՞ր, վըեր քըզ նհետ կյըվողը շատ խըելունք մարթ ա, դե ճելլի քյինա նըեստա ներողություն խնթրե, քըզ նհետ պեր տոն։

Էտ մարթը եր ա կենում, քյինամ վա̀զիրին կոշտը, նըեստա ներողու-թյուն խնթրում, յոր օնում քյինամ տոն։ Տանը ախճիգյը վա̀զիրին հըրցնում ա, թա ասե՝ տըսենամ քեզ հինչ դա̀րդ ա քցա̀լ ըստեղեքյ, հա̀լբաթ պեն կա, վըեր եկալ ըս էս դարիբ տըեղերը տո̏ւս եկալ։ Տա թա դե՝ էլ հինչ կյե՞ղեմ, ես թաքավըերեն վա̀զիրն ըմ, թաքավըերն ինձ տասսը մանեթ փող ա տուվալ, ասալ ա կըտանես էտ տասսը մանեթը տաս մին վըեխճար ինքյ օնըես, նհետըն էլ մին շալ, համին վըխճարեն մըսան էլ մին շամփուր խրաված մըես պիրիս, համ էլ տասսը մանեթը ետ պիրիս. ես վա̀զիր մարթ, վըեր չգյիդացած պեն ա ինո̏ւմ, ըխշարքեն էն մին ճո̏ւնդան մարթ ա եր կենում, կյամ կոշտըս, հըրցընում, ինձա̀նա̀ գյո̏ւղո̏ւմ, քյինամ. մեհենգյ ես շինըշեն ըմ ինգյա̀լ, օզում ըմ տըեսնամ էս պենը հու կըգյիդա, ինձ ասե։ Էտ ախճիգյը թա՝ վըեչինչ, ըրխըյին կաց, տիժար չի, ետնան էլ թա՝ էքյուծ կըքյինաս տասսը ըս ըստըեղ, ես կասեմ, թա հինչ կանենքյ։

Ո̏ւրո̏ւգյո̏ւնը վա̀զիրը մնամ ա ըտըեղ, քշըրհանան ճելլի քյինամ բազա-րը, տասսը մանեթը տամ, մին երկան պո̏ւրթա̀վուր, քյոք դոչ ինքյ օնում, տանում։ Ախճիգյը յոր ա օնում էտ վըխճարեն պո̏ւրթը լափ տական ծիլավ վըեր անում, կյիզում, մանում, էրկու շալ կյործում, մինը տանում տամ վա̀զիրին, թա տար տասսը մընեթավ ծախե, փողը պեր, դոչին ծո̏ւվանքն էլ տո̏ւս տալ տամ, լուվանում, խո̏ւրդա̀ կտորում, մին շամփուր նի անում, լա̀վ խրավում, էն մին շալեն, տասսը մընեթին ան դոչին նհետ տամ վազիրին, թա՝ դե տար տո թաքավըերեն։ Վա̀զիրը դոչը, շալը, մըեսը, մինգյել փողը տանում ա տամ թաքավըերեն։ Թաքավըերը հըրցնում ա, թա էտ լոխ տու վը՞ս իտի ըրալ, վա̀զիրը թա՝ հա։ Թաքավըերը շատ ըստիբում ա, թա՝ դե

դո̈ւզն ասէ։ Վա̈զիրը թա՝ քըզանա հինչ կյէ՞դեմ, էսիինչ շենումն իստի մին ախճիգյ կա, լոխ նա յա ըրալ։ Թաքավըրերը թա՝ էս սհաթըս մարթ ղըրկէ-ցեքյ, քյեցեքյ էն ախճիգյը պերեքյ ինձ կնեգյ. էս իիշքան վախտ ա, փսակվալ չըմ, իտի մին ըխճըկան ըմ իլա̈լ շոռ կյալիս, էս ա քթա̈լ ըմ։

Վա̈զիրը դաստին մարթ ա ղարկում, քյինամ ըն էտ ախճիգյը պիրում, թաքավըրերեն նհետ փսակում։

## 42.ԻՍՏԻ ԿՆԵԳՅ ԷԼ Ա ԻՆՈ̈ՒՄ

Պարսկաստանեն շահը տո̈ւս ա կյամ, վըեր ո̈ւրա̈ն երգյիրը շոռ կյա̈, տըեսնա՝ հի՞նչ կա, հի՞նչ չի կա, ո̈ւրա̈ն ըխշարքումը հի՞նչ ա կադարվում։ Շորերը փոխում ա, վըեր ճինա̈նչին վուչ։

Շատ ա քյինա̈մ, թա խըրեգյ, մին հեռու քաղաք ա հսնում։ Մթնում ա։ Եշում ա, տըեսնում էտ քղաքումը լո̈ւսերը հինգյըցրած, լոխ քոն իլա̈ծ, մենակ մին տըեղ մին լո̈ւս ա էրում։ Էտ լո̈ւսին թուշավը քյինա̈մ ա, թաքուն եշում, տըեսնում մին ախճիգյ նստած, մին չտըեսնված դա̈շա̈նգյ, կըռուզ-նոտ ջա̈հիլ տղա յէլ կլո̈խը տիրա̈ծ տրա գյո̈ւրգյո̈ւմը, քունավ հնցած։ Տա քյինա̈մ ա պերց պո̈ւրո̈ւմ, տինո̈ւմ էտ տղեն կլխըտակեն։ Վըեր լափ խոր քունավ ա հընցնում, էտ ախճիգյը կացենը պո̈ւրո̈ւմ ա, թխում էտ տղեն կըլո̈խը կտրուում, քցում մեշոկը, շիլա̈կում, տանան տո̈ւս կյամ, հըղե ինո̈ւմ, քյինա̈մ։ Շահն էլ ա հըռաքաշ տրա հետան քյինա̈մ։ Էտ ախճիգյը հըսնում ա մին տոն, տըեղ էլ ըպրելիս ա ինո̈ւմ քառասուն ավզակերեն ավզակա-պետը՝ մին այբեջառ, ունքըմաչան ա̈րո̈ւն կըթիլիս ազղուն մարթ։ Կլո̈խը պո̈ւրո̈ւմ ա տամ տրան, թա ասածըտ ըրալ ըմ, ես արտեն քունն ըմ։ Էտ մարթը կլխեն եշում ա, եշում, թա՝ ա՛յ տնըքանդո̈ւ ախճիգյ, ես սրա մին մազը չա̈ժիմ, տու հունց ոխսկ ըրեր իստի կլխեն յիրա̈ կացեն քաշիլ։ Տըեղն ու տըեղը ո̈ւրա̈ն ավզակներեն հրաման ա տամ,վըեր էտ ըխճըկանը ծիյին քմական կապեն, քաշ-քաշ անեն ըսպանեն։ Տի յէլ անում ըն։

Շահեն սըերտն ա̈ռնա̈վ լըցած, քյինա̈մ ա տո̈ւս կյամ ո̈ւրա̈ն պալատը, հրաման տամ, վըեր ո̈ւրա̈ն երգյիրումը հիշքան կնեգյ կա, տահանց լոխ-ճինին կախ տան, մինն էլլա սաղ թողեն վուչ։

Էտ վըխտերեն սաղ ըխշարքես թաքավըրերնեն ո̈ւրա̈նց հետե ուժեղ փա̈հլըվաննե ճոկած, պըհելիս ըն ինո̈ւմ։ Շահեն հորը հա̈րը, վըեր էլլա շահ ա իլա̈լ, քառասուն ուժեղ փա̈հլըվան էլ ո̈ւրա̈ն հետե յար ճոկած ինո̈ւմ

պըհելիս: Էտ փա̀հլըվաններեն մըեծը, վըեր հա̀լա̀ սաղ ա ինո̀ւմ, արտեն պըռաված, հարո̀ւրութաuուն տըեկան ար: Տա վըեր էտ ըսկանում ա, քյի-նա̀մ ա շահեն կոշտը: Շահն ո̀ւրա̀ն թախտան վըեր ա կյամ, չուքըչոք քյինա̀մ տրա առաչը, էտ մարթին հըղե տամ բիղի ո̀ւրա̀ն թախտը: Էտ մարթը թա՝ շահն ապրած կենա, ըսկացալ ըմ, վըեր իստի հրաման ըս տուվալ, դե անջուկ կալ, մին պեն նաղլ անեմ: Տա ըսկսում ա նաղլ անելը:

-Հալա քո պապըտ շահ իլած վախտը վըեր ես ո̀ւրա̀ն քառասուն փա̀հլըվաններեն մըեծն ըմ իլա̀լ, իմ երեսունհենգյ փա̀հլըվաննեն քյինա̀մ ըն հինչ վըեր մին տըեղ, ետ կյամ չըն, չորսն էլ ըն կընդ-կընդ քյինամ տահանց շոռ կյա̀լի հետե, էլլա ետ կյամ չըն: Ես ըմ ինո̀ւմ մնացած: Քշերը քոն իլա̀ծ, ընջուկավըրս մին սա̀ս ա ինգյո̀ւմ: Մինը տոռնը թակում ար: Եր ըմ կենում, թա տո̀ւս կյամ, կնեգյըս թա՝ խաթան նահախ տըեղան կինի, զենքե-րըտ եր կալ: Զենքերըս կապում ըմ, տո̀ւս կյամ, տըեսնում մին տղամարթ ծիյին յիրա̀, ինձ թա՝ հետաս եք: Մնամ ըմ զըրմացած: Նա թա՝ տես-տեն եշումել, հետաս եք: Համ քյինա̀մ ըմ, համ վըեննան-կլո̀խ չափում, քմըկանը տո̀ւս շաշկան տո̀ւս օնում, մեհետ կըլխավը պըենդ թխում: Տա ծիծաղում ա, թա՝ հա̀նա̀գյ ընելի վախտ չըս քըթա̀լ, հետաս եք:

Վըննըծըեռքըս տափան կտրում ա: Հետան քյինա̀մ ըմ: Տա ինձ հացընում ա մին խոր պաղվալ, տանում իմ երեսունիննը փա̀հլըվաններեն կըլխընեն լոխ նշանց տամ, թա՝ տու վըս իլալ մնացած, քու կլոխըտ էլ պիտի կտրի, մեհենգյ էլ մտըծեցե, վըեր ռիսկ ըս ըրալ ինձ թխալ, քեզ սաղ պիտի թողեմ, հանցու իմ ըրածներեն վկա ինիս: Ինձ պեց ա թողում, տըռնավը տո̀ւս կյա̀լիս քմըկվըեր եշում ըմ, տըեսնում տա կըլխան մին պեն եր կալավ, վըեր օզում ա, թա սընդողումը տինի, ծամերը մինչև մաշկը կախ իլավ: Բո̀ւրդա̀ն կլխու վըմ ինգյո̀ւմ, վըեր տա կնեգյ ա: Ռիսկըս մծանում ա, շաշկաս ղըբուրան տո̀ւս ըմ օնում, վըեր քյինա̀մ տրա նըհետ կռև փըռնեմ; Տա թա՝ անզզամ, գյիդացեր հա՞վըեր կնեգյ ըմ: Դե վըեր տի ռիսկավ մարթ ըս, ես քու կնեգյտ պիտի տըեռնամ: Տի յէլ անում ա: Տա հա̀լա̀ սաղ ա, մինչև մեհենգյէլ ինձ նհետ ապրում ա: Մհենգյ շահն ապրած կենա, ըշխարքումս տի կնանեքյ էլ կան, վըեր քու էտ հրամանըտ գյիդա̀ն քեզ սաղ թողել չըն կենաս: Ես իմ ըսելին ըսեցե, էդքանան ետը տու վըս գյո̀ւղո̀ւմ:

Շահը մնամ ա պերա̀նը պեց:Նորից հրաման ա տամ, վըեր ո̀ւրա̀ն հրամանը ետ յոր օնեն:

## 43.ՓԻՍԱ̈Ն ՓԻՍԸ

Մին թաքավըրեր ո̈ւրա̈ն թաքավըրութունեն կեսը տամ ա վեզիրին։ Թաքավըրերը մին օր թաքուն տըեղա եշում ա, տըեսնում՝ վեզիրն ո̈ւրա̈ն անա մին վըեսկե կյուղացավ։ Մտածում ա, թա թաքավըրոթունս սրա նհետ հալալ կես ըմ ըրալ, էս մարթին էլ հինչն ա՞ ըստիբում, վըեր վըեսկուս մինը կյուղանում ա։ Վեզիրին ծեն ա տամ կոշտը, ասում.-Քեզ տասնըհենգյ օր ժամանակ ըմ տամ, շոռ եք, քթի՝ ինձ ասե, թա հի՞նչն ա ըխշարքումս փիսա̈ն փիսը։ Վըեր ըսեցեր վուչ, քեզ կախ ըմ տըլական։

Վեզիրը քյինա̈մ ա տասսը օրումը սաղ երգյիրը շոռ կյամ, շատ ըստո̈ւր-ընդո̈ւր հրցըփորց անում, ո̈ւրա̈ն դա̈րդն էլ ասում, վըեչ մինը կարում չի ճար անե։ Տասսը օրան ետը կյամ ա թաքավըրերեն կոշտը, ասում.-Թաքավըրերն ապրած կենա, հիշքան շոռ եկե, մըտըծեցե, հրցըփորց ըրե, կըրեցե վուչ քթենա̈մ։ Թաքավըրերը թա՝ գյո̈ւղո̈ւմ չըմ, հենգյ օր ա մնացալ, յա քթի, յա քեզ կախ ըմ տըլական։ Վեզիրը նորից ա քյինա̈մ շոռ կյամ, շատ խըելունք մարթուցն անա հըրցըփորց անում, նհետն էլ ո̈ւրա̈ն դա̈րդը ասում, վըեչ մինը կարում չի գյիդա̈։

Մին օր էլ մին լենջ տըեղավ քյինալիս եշում ա, տըեսնում մին չոբան վըեխճարն առաչն ըրած, ըրըծըցընում ա։ Կոխկավն անց ա կենում, պարյօր չի տամ։ Վըեր մխրե քյինա̈մ ա, չոբանը ծեն ա տամ, թա՝ ա՛ հըղըցավը քյինո̈ղ, ես կուճուր խոխա չըմ, ջա̈հիլ չըմ, մըեծ, հլիվուր մարթ ըմ, կոխկավըս վըեր անց կացեր, խե՞ պարյօր չի տուվեր։ Վեզիրը թա՝ լիհա̈ դա̈րդըս տու վըս, վըեր կաս։ Չոբանն ասում ա.- Դա̈րդըտ ասե, բա̈լի կարեմ քյո̈մա̈գյ անեմ։ Վեզիրը թա՝ էսքան իմաստուն, խըելունք մարթու կոշտ ըմ քյեցալ, կըրեցալ չըն քյո̈մա̈գյ անեն, տու պիտի՞ կարես։ Չուբանը թա՝ հինչ կա՞, վըեր ասես, բա̈լի կարեմ։ Վերչը, տա ասում ա՝ պա ես էսհինչ թաքավըրերեն վեզիրն ըմ. թաքավըրերն ո̈ւրա̈ն երգյիրին կեսն ինձ ա տուվալ. մին օրե ո̈ւրա̈ն անա մին վըեսկե յըմ կյուղացալ, ինձ տասնըհենգյ օր ժամանակ ա տուվալ, ասալ ա քյինա̈ շոռ յեք, մըտածե, քթի, եք ինձ ասե, թա հի՞նչն ա ըխշարքումըս փիսան փիսը։ Էս ա տասնըհենգյ օր ա, շոռ ըմ կյամ, ըստո̈ւր-ընդո̈ւր հրցըփորց անում, կարում չըմ քըթենա̈մ։ Չուբանը թա՝ էն ա հըղըցեն էն ղրաղեն փոռր կա, քյինա̈ լոխ կեր, էսքան վըեխճարն էլ ըմ տամ քեզ, էտ հարցեն պատասխանն էլ ասեմ։ Վեզիրը եշում ա, տըեսնում չորս ընգյո̈ւնին մարթ չի կա, չուբանեն ասածն անում ա, վըեխճարը լոխ յոր

օնում, ետնան էլ թա՝ դե ասե, տըեսնամ հի՞նչն ա ըխշարքումըս փիս ան փիսը: Չոբանը թա՝ թամահն ա:

Վեզիրը քյինա̈մ ա թաքավըրերեն կոշտը, ասում. - Թաքավըրըն ապ-րած կենա, քթա̈լ ըմ: Թաքավըրը թա՝ դե ասե տըեսնամ ըխշարքումըս հի՞նչն ա փիսան փիսը: Վեզիրն ասում ա՝ թամահն ա: Թաքավըրը թա՝ ասե տըեսնամ քեզ հու վա էտ պենն ասալ: Վեզիրը թա՝ էսիինչ սարեն չոբանը: Թաքավըրը մարթիքյ ա ղարկում, էտ չուբանեն պիրիլ տամ կոշտը, թաքավըրութունեն կեսը տամ տրան, վեզիրին էլ կախ տամ:

## 44.ՀԱԼԱԼ ՂՈՒԼԳՅԱ̈ՔԸ ՆԱՆ ՀԱՐԱՄ ՂՈՒԼԳՅԱ̈ՔԸ

Էրկու մարթ ըն ինո̈ւմ, ըրկուքանին անումն էլ Ղուլգյա̈գ: Մինին հալալ Ղուլգյազ ին ասում, էն մինին էլ՝ հարամ Ղուլգյա̈գ: Տահանք հղե յըն ինո̈ւմ, բիրա̈ղի քյինա̈մ մին տըեղ: Սուվըծանում ըն: Հարամ Ղուլգյա̈գը հալալ Ղուլգյա̈գին ասում ա.- Պեր քու խուրջինիտ հացը օտենքյ, ետնան էլ իմը կօտենքյ: Տա թա՝ պեր: Հալալ Ղուլգյա̈գին հացն էրկու տըեղ օտում ըն, տրանա ետը հարամ Ղուլգյա̈գն ասում ա.-Քյինա̈ քըզետե հաց քըթի: Հալալ Ղուլգյա̈գն էլ թա՝ չէ՛, մըեր հնգըրոթունը ո̈լրո̈ւր նհետ փոնում չի: Ասում ա, ճոկվում օրիշ հըղըցավ քյինա̈մ, հսնում մին վա̈րա̈նա̈ ճաղաց: Մթնում ա: Ճղացումը սա̈ներ ա ըսկանում: Տա նի յա միննում տաշտին մաչը, ընղըեղ կուչոռ անում, անջուկ օնում, տըեսնում իրեք սաղանա հըվաքված, ժողով ըն անում: Տու մի ասել, էտ սաղանեքյը տարանը մեհետ տըեղ հըվաքվում ըն, ժողով անում: Սաղանոցը մինը թա՝ էս ա քանի տարե յա էսիինչ տըեղը էսիինչ ծառեն տակեն օխտը կարաս վըեսկե կա, մին մարթ շոռ ա կյամ, վար քթենա̈, ես միշտ հղեն շիլ ըմ քցո̈ւմ: Էն մինն էլ թա՝ էսիինչ տըեղը մին ճաղաց կա, միշտ ճըղասպանը ճո̈ւրը կապում ա, փուշտին (ջրհորդանի և առվի միացման տեղը) դրղընոցան պտառվում ա, նորից ա կապում, ես թողում չըմ, էլլա ճո̈ւրը պըտառվում ա, քյինա̈մ: Սաղանոցը մինն ասում ա. - Էտ հիլվուրեն խըելքը կտրում չի, վար մխրե յոնջա տինի ըռխեն, կապե: Էն մինն էլ ասում ա. - Էսիինչ տրեղը մին չոբան կա, տա մին շոն օնե, հու վար էտ շանը կլխեն ղափաղը յոր օնե, մաչը ճո̈ւր ածե, մըեռած մարթին պռըշին էտ ճիրա̈ն մին կա̈թ կիթըցնե, կըլո̈ւվանա:

Վար լո̈ւսա̈նո̈ւմ ա, սաղանեքյն էլ ուրվամ չըն: Հալալ Ղուլգյա̈գը քյինա̈մ ա էտ ճաղացը քթենո̈ւմ, ճըղըսպանեն հըրցընում, թա պա ըստեղեքյ յոնջա

չի՞ ինիլ: Ճղասպանն ասում ա.-Հանե էն լենջը յունջու դուրուղ ա: Հալալ Ղուլզյա̀զը քյինա̀մ ա յոնջա քաղում, պիրո̀ւմ, ճըղացեն փուշտան պընդըցը-նում, ետնան քյինա̀մ ծառը քթենո̀ւմ, տակը քա̀նդո̀ւմ, վըեսկան մխրե ածում ջուբերը, քյինա̀մ չուբանեն էլ քթենո̀ւմ, ասում.- Շոնըտ ծախե, ինքյ օնեմ: Չոբանը թա սաղ վըեխճարըս էլ վար օզես կըտամ, շոնըս տալ չըմ: Տա թա՝ ո̀ւրա̀ն տասսը կյինն էլ օզես, կըտամ, հա̀րո̀ւրն էլ օզես, կըտամ, մենակ թա ինձ տռ: Վար վըեսկեն տո̀ւս ա օնում, չուբանեն աշկերը շաղվում ա, շոնը ծախում: Հալալ Ղուլզյա̀զը շոնը տանում ա մին ծառա կապում, ըսպանում, կլխեն ղափաղը յոր օնում, քյինա̀մ: Մին օր էլ խաբար ա ըսկանում, վար էսիինչ թաքավըերեն ախճիզյը հիվանդ, մըռնելի յիրա̀ յա, հիշքան դոխ-տուր, լողմանի յըն քյինա̀մ, կարում չըն ճար անեն: Տա քյինա̀մ ա թաքա-վըերեն պալատը, թա օզում ըմ ըխճըկանը տըեսնամ, ասում ըն.- Էսքան մարթը հի՞նչ ըն ըրալ, վար տու հինչ անես: Թաքավըերեն խաբար ըն տամ, ասում ա՝ թող կյա̀: Պիցիրա̀նո̀ւմ ա ըխճըկանն օթաղը, ասում.-Հիվանդեն մենակ ես պիտի տըեսնամ: Լոխ տո̀ւս ըն կյամ, ճո̀ւրն ածում ա շանը կըլխեն ղափաղը, մխրե պեմբա̀կ թըչո̀ւմ, քսո̀ւմ ըխճըկանը պռըշնեն, մխրե յել կըթըցնում, ախճիզյըն աշկերը պենո̀ւմ ա, տըեղան եր կենում նստում, ըսկսում խոսելը:

Ախճիզյը վար լո̀ւվանում ա, թաքավըերը կյամ ա հալալ Ղուլզյա̀զին հըցընում, թա քեզ հի՞նչ լիվոթուն անեմ, օզում ըս, ախճիզյըս էլ քեզ տամ: Տա թա՝ ինձ վըեչ մին պեն հարկավըեր չի, մենակ տասսը ճորե, մինզյել տասը փա̀հլա̀ տռ: Թաքավըերը տրան քառասուն ճորե, քառասուն էլ փա̀հլա̀ յա տամ, տա քյինա̀մ ա ծառը քանդո̀ւմ, վըեսկեն տո̀ւս տամ, ճուրենուցը պեռնում, քյինա̀մ մին ըխպըրու ղրաղե մըեծ տոն շինո̀ւմ, էտ փիհլենեն էլ մնամ ըն տրա քշտին: Հալալ Ղուլզյա̀զն ո̀ւրա̀ն կյանքը փոխում ա, լա̀վ, փառավոր ապրում:

Մին օր մի մարթ ա կյամ հալալ Ղուլզյա̀զին կոշտը, տա եշում ա տըեսնում հարամ Ղուզյա̀զն ա: Հալալ Ղուլզյա̀զն ասում ա.- Պիցրա̀նանք, հաց կօտես, էլլա կըքյինա̀ս: Տա թա՝ չէ՛, ասե տըեսնամ հո՞ւց ըս հըուստա-ցալ, քինյա̀մ ըմ:Հալալ Ղուլզյա̀զը ամմեն հինչ նաղլ ա անում, հարամ Ղուլզյա̀զը հղե յա ինյո̀ւմ,քինյա̀մ ճաղացը, տաշտումը կըչոռ անում, տըես-նում սաղանյեքը եկեն: Սաղանոցը մինը՝ պա ասել չը՞ք ծառը քանդա̀լ ըն, վըեսկեն տո̀ւս տուվալ: Մինն էլ թա՝ շոնը տարալ ըն: Էն մինն էլ թա՝ պա

հինչ անում ըմ, կարում չըմ ճըղացեն ճուրը պըտառեմ: Մին օրիշ սաղանա յէլ ասում ա.-Հ̀ալբ̀աթ ըստեղեքյ մըեզ անջուկ անող մարթ կա, շոռ կյանք, քթենանք: Շոռ ըն կյամ, հարամ Ղուլգյ̀ազին քթենում, զիլըը-զիլբ̀ա անում:

## 45.ՃԻՐՀԵՂԵՂԸ

Վըեր շատ թոռ ա եկալ, կյետերը վըրարալ ա, ծուվերեն ճիրերը տեղան պիցրացալ ըն, մին մարթ ըրազումը տեսած ա ինո̀ւմ, վըեր աստուծը ո̀ւր̀ան մուտանում ա, ասում. «Ճիրհեղեղ ա իննական, ամեն հիյվանա, ամեն շուն-չա մին ճոխտ եր կալ, մին տապան շինի, տու քու կնգանավըտ, քու խուխոն-ցավըտ, մինգյել էտ հիյվըննեն, գազաննեն լոխ տըղվարե տապանումը, հանցու վըեր ճիրհեղեղ ինի, պիցր̀ան̀ա ճիրին իրեսը, մինգյել վըեր ճիրերը ցըմաքեն, նորից գյանքը ըսկսվե երգյիրին իրեսեն»: Էտ մարթը տի յէլ անում ա, ամմըեն շունչա, ամմըեն հիյվանա, գազանա մին-մին ճոխտ յոր ա օնում ո̀ւր̀ան նհետ, լոխ տըպանումը տըղվարում, վըեր ճիրերը կյամ ըն սաղ ախշարքըս օնում, ինքյն ո̀ւր̀ան տապանեն նհետ պիցր̀անո̀ւմ ա ճիրին իրեսը, լեղ տալավ քյին̀ամ, քյին̀ամ, տո̀ւս կյամ մին պեցո̀ւր սարու կըլո̀խ, տըեղ էնքան կենում, վըեր ճիրերը ցըմաքում ա, նորըմին̀ան էտ հիյվըննեն, էտ ղուշերը, օցերը, գազաննեն ըսկսում ըն ճոտեր հանելը, նորըմին̀ան սաղ ըխշարքումըս ըսկսում են ապրելը, իտի մինչև մեհենգյ էլ ամմեն տըեղ ապրում ըն, լոխ էլ էտ մարթին փառք տալավ: Տա յէլ մնամ ա էտ պեցո̀ւր սարեն կըլխեն, ըտեղ ո̀ւր̀ան կնգանավը, ո̀ւր̀ան խուխոցավը կենում:

## 46.ԼՈՂՄԱՆԻՆ ՆԱՆ ՉՈԲԱՆԸ

Լողմանին մին շատ պեն գյիդող, հարուստ մարթ ա ինո̀ւմ: Տա ծառա-յությունան տոն ար կյամ լիզյը պեռնավ ու չամաղանավ: Հղեննի մին ծի յա քըեհում, չամաղաննեն քցո̀ւմ ծիյին յիր̀ա, ինքյն էլ ծին նստում, հղե ինում բիղի տոն: Ո̀ւր̀ան նիըետ ծիյին տարը կյամ ա: Շատ ա կյամ, թա խրեգյ, տըեսնում ըն, վըեր տավարը հղեցը ղրաղեն ըրածում ըն, իսկ չոբանը մին ղրաղ տըեղ թեյն ա տուվալ, կյըվուղներեն ա թիմ̀աշա անում: Լողմանին հղըցեն երե ղոլին ըրածող մին կուվու եշում ա, ծիծաղում: Ծիյատարը գյո̀ւղո̀ւմ ա, թա ո̀ւր̀ան յիրա յա ծիծաղում, լողմանուն ասում ա.- Տու իմ ծիս նստալ ըս, տոն ըս քյին̀ամ, ես էլ քու հետատ փըյադա կյամ ըմ, հ̀ալ̀ա ինձյիրա յէլ ծիծաղում ը՞ս, ծիյաս վըեր եք, տես-տենըտ վըեր ածե, քըեհըտ

էլ ինձ հարկավըեր չի, ես ետ ըմ տըեռնում:

Լողմանին տըեսնում ա, վըեր ծիյատարն իսկապես կզնըվալ ա, ասում ա.-Քըզյիրա̀ չըմ  ծիծաղում, էն կուվըեն յիրա յրմ ծիծաղում, մին սհաթան ետը ծըննական ա, դանան էլ ո̀ւրա̀ն մնան ա իննա̀կան, ճակատը սիպտակ: Չոբանը մուտանում ա, ասում.- Տու դո̀ւզ չըս ասում, դանան ո̀ւրա̀ն հորը մնան ա իննա̀կան: Հաքյին սիպտակ, դո̀ւզ ըսեցեր, վըեր կովը մին սհաթան ետը պիտի ծնե, դնեն ճակատը չի սիպտակ, հաքյին ա սիպտակ՝ ծալած, տիրած ճըկատեն:

Իտի վըեր հո̀ջաթ ըն տամ, լողմանին նան չոբանը շա̀րթ ըն կյամ: Լողմանին ասում ա.- Կովը մորթենքյ, թա դանան իմ ասած իլա̀վ, տու ինձ հազար մանեթ փող տաս, իսկ վըեր քու ասած ինի, ես քեզ իրեք հազար մանեթ տամ, կովն էլ հա̀լա̀ քեզ ըշխադանք, մըեսը նան կաշին ծախե հինչ օգում ըս ըրա, հա̀լա̀ մին պեն էլ քեզ խալաթ կանեմ:

Չոբանը ղաբուլ ա անում:Կովը մորթում ըն, տեսնում դանան մորը փորումը հա̀քյին ծալած,ճըկատեն տիրած,դընեն ճակատը սիպտակ չի, հյաքին ա սիպտակ: Լողմանին մնամա զարմացած, ասում ա.- Ես շատ կա̀րթա̀ծ, աշխարք տըեսած մարթ ըմ, պենա̀ն տո̀ւս ա կյամ, վըեր տու ինձա̀նա̀ յէլ ըս շատ գյո̀ւղո̀ւմ,  էտ հունց ա, վըեր տու չոբան մարթ, ես՝ լողմանի, տու գյիդացեր, ես՝ չէ: Չոբանն ասում ա.- Պենա̀ն տո̀ւս ա կյամ, վըեր ես քըզանա շատ ըմ գյո̀ւղո̀ւմ, էն վախտը, վըեր ես ու տու մորա իլա̀լ ընք, մին պարի սհաթ ա իլա̀լ, մին իմաստուն սհաթ, ամմա տու ինիլիս վախտը վըեխճարն ո̀ւրա̀ն տիմակն ա լուզ տո̀ւվալ, իմ ինիլիս վախտը վըեխճարն ո̀ւրա̀ն վըեննավը ո̀ւրա̀ն պոզն ա քորալ, իմ փայըս վըեսկեռն ա ինգյալ, քունը՝ տիմակը նան եղը, տրա հետե յէլ ես չըրչըրվելավ քյա̀սիբ պիտի ապրեմ, տու համ դինջ, համ հարուստ:

Լողմանին չուբանեն իրեք հազզար մընեթան կըման տո̀ւս ա ճնում մին քաակ վըեսկե յէլ տամ, էլլա ո̀ւրա̀ն հըղեն քյինա̀մ:

## 47.ԱՍՏՎԱԾ ՀԸՍՑԸՐՈՒՑ

Մին սով տըռնե մին շատ խուխատեռը տանը ուտելի պեն չի կար: Ո̀ւրո̀ւզյո̀ւնը խոխեքյը սոված ին, մնացալ ին մորն իրեսեն յիշիլիս: Մարը խուխոցը խիփիլի հետե ըղղանը ճիրա̀վ լըցալ ա, մաչը քարեր նի տուվալ, տիրա̀լ կրակեն: Ճո̀ւրն իփում ա, նորըմինան իփո̀ւմ, ըղղանեն «խորագը»

իփում չար: Խոխեքյը ղըզղանեն քըշտին նստալ ըն, վիզըրնեն ծռալ, սուվըծթունան թո̀ւլա̀ցալ, մին-մին էլ ղաթումը հըրցնում ըն.-Մամմա, պա իփալ չի՞... Մարն ասում ա.- Չէ , հա̀լա̀ իփա̀լ չի, մխըրե քոն իլիքյ, եր կըկենաք տըեսնաք իփա̀ծ: Խուխոցը հա̀րն էլ քյեցալ ա օրիշ տըեղ, թա տըեսնա հի՞շտըղա յա մխըրե դա̀նա̀, ա̀լըա̀-պենա̀ քթենո̀ւմ, նա յել հա̀լա̀ եկալ չի: Խուխոցը ումեղը կըտրում ա, սոված քունավ ըն հընցնում :

Քշերեն կեսումը մինը տոռնը թակում ա, էտ կնեգյը հըրցնում ա, թա տու հու վը՞ս: Տո̀ւսա̀ն մին մարթ ասում ա.- Տոռնը պեց ըրա, ղարիբ ղոնաղ ըմ: Կնեգյն ասում ա.- Ղոնաղն ըստուծենն ա, ամմա տանըս մարթ չի կա, ես էլ խուխատար ըմ: Տո̀ւսա̀ն էտ մարթն ասում ա. - Մըեծ մարթ ըմ, վախում ել, տոռնը պեց ըրա, տանըտ մին ընգյո̀ւլին կոչ կըկյամ, լո̀ւսըցնըեմ, էլլա հղե ինիմ, քյինա̀մ: Տա տոռնը պենում ա, մին սիպտակ մըզըրերավ հլիվուր մարթ նի յա մննում, պարի ո̀ւրո̀ւզյո̀ւն ասում, նըստում: Ետնան հըրցնում ա, թա էտ հինչ ը՞ս իփալ: Էտ կնեգյը վըեչ մին պեն կյեղում չի, հինչ վըեր կա, լոխ նաղլ ա անում: Ղոնաղը ղըզղանեն մուտանում ա, իրեսը խըչըհանում, ասում.- Մեհենզյ մաչին լա̀վ վըխճարու մսավ խորագյ ա, խուխոցը զուրթնըցրու, թող օտըեն:

Էտ կնեգյը կրակեն մուտանում ա, մսավ խուրագյին վըետը տամ ա քթըեն, օզում ա, վըեր դունաղեն հետե քցի, եշում ա, տըեսնում տանը ղոնաղ չի կա, տոռնն էլ մաժ ղըլան կապ ա: Էտ կնեգյը մաննը կծում ա... ասում ա. - Աստված ար, խուխոցըս փայը հըսցըրուց:

## 48.ԾՄԸՐՈՒԿԵՆ ՃՈ̀ՒՐԸ

Լողմանուն ախպըերը շատ ծանըր հիվընդանում ա: Հինչ տեղ ու դա̀ր-մա̀ն ասըես լողմանին անում ա, կարում չի ո̀ւրա̀ն ախպորը լո̀ւվըցնե: Ախպըերն օրն օրեն հա̀լվում ա, մաշվում, շատ տնջվիլան ետը մըեռնում: Լողմանին ախպորը սըերտը տո̀ւս ա օնում, տըեսնում սրտումը մին հավու վըեսկուռ տնզված: Էտ վըեսկուռը տո̀ւս ա օնում, հիշատակու հետե մին կուճուր տինակու կոթ շինում:

Մին օր էլ էտ տինակավը ծմըերուկ կտրելիս ծմըրուկեն ճո̀ւրը կոթեն յիրա̀ վըեր ա տըեռնում, էտ հավըեն վըեսկուռը ճիրա̀ն չըքչըքոտում ա, վըեր թափում: Լողմանին ասում ա.- Ես ամմըեն հինչ ախպորըս տուվալ ըմ, վըեր լո̀ւվանա, մենակ ծմըերուկ չըմ տուվալ, վըեր ծմըերուկ էլ տուված ինի, ախպըերըս մըեռնել չար:

## 49.ԱՍՏՎԱԾ ԸՆՈՂԱՑՆ Ա ՊԱՐՏԱԿԱՆ

Չոբանը նան աստված ըխպըրանում ըն, միշտ ո̈ւրո̈ւր տոն քյինա̈լ-կյալ ա ինո̈ւմ, ո̈ւրո̈ւր ջան ըն ասում, ջան ըսկանում:

Ամըեռնը կյամ ա, աշխարքըս իլլում-լըսնըվում ա: Խուտահարքը ըսկըսվում ա, չոբանը վըեչ մին պենու հոքսը չի քաշում: Հըրվըննեն հըրցնում ըն, ասում.-Չոբան ախպըեր, խե չը՞ս հիյվըններետ հոքսը վախտըեն քաշում, միշտ իստի ամմըեռնը չի ըննա̈կան, խոտ պիտի ինի, վըեր ծմըեռնը հիյվըննետ օտըեն: Չոբանն էլ ասում ա. - Աստված իմ ախպըեր ինիլավ խե՞ պիտի դա̈րդ անըեմ:

Խուտահարքը հընցնում ա, չոբանը հա̈լա̈ մին կըոքըպըտըոե խոտ պիրիլու: Արտըերը հնձո̈ւմ ըն, կալըերը թակում, տերմանն ածում մըրըքյնեն: Չոբանը վըեչ մին պեն անում չի: Հըրվըննեն ասում ըն.-Չոբան ախպըեր, էն տերմանը խե չը՞ս ածում մարաքյըտ, խե չը՞ս հիյվըններետ հոքսը քաշում: Չոբանն էլ ասում ա.- Աստված իմ ախպըեր ինիլա̈վ ծո̈ւն չի կյիլական, հիյվըննես կըտորե:

Ամըեռնը կյամ ա հընցնում, մոտըե սարերը ծո̈ւն ա կյամ: Ծմըեռնը յըվըշ-յավաշ մուտանում ա: Մին օր էլ չոբանը քշերավ քունըտեղա եր ա կենում, տըեսնում ծո̈ւնը եկալ ա, ո̈ւրա̈ն տոանը չոքալ, հիյվըննեն էլ սու-վըծթունան կըտորվում ըն: Չոբանը եր ա կենում, քյինա̈մ ո̈ւրա̈ն ախպըեր ըստուծըեն կոշտը: Աստված տըեսնում ա, վըեր չոբանը շատ ա բեքյեփ, ասում ա.-Հը, չո՛բան ախպըեր, դա̈րդըտ հինչ ա՞: Չոբանն ասում ա.- Պա մունք ո̈ւրո̈ւր ախպըեր ինիլա̈վ հունց ը՞ս ծո̈ւն կյամ, հիյվըննես կըտորում, էտ դո̈ւզոթուն տըեռա՞վ: Աստված էլ ասում ա.- Ես քեզ վախտըեն դույուղ ըմ ըրալ, էն վըեր ախշարքըս իլլա̈լ ա լըցվալ, տու էն վըխտեն հիշտեղ ը՞ս իլա̈լ, էն վըեր սարերը ծո̈ւն ա եկալ, տու հինչ ըս իլա̈՛լ ընելիս, տու քու հոքսըտ քաշալ չըս, ուզըեցալ ըս ո̈ւրո̈ւշո̈ւ իմա̈գյավ ապըրես, մեհենգյ ես մեղավըեր ը՞մ, աստված ընողացն ա պարտական:

## 50.ՀԱՐՈՒՆ-ՂԱՐՈՒՆԵՆ ՆԱՂԼԸ

Հարուն-Ղարունը շատ հարուստ մարթ ա ինո̀ւմ: Նրա դո̀վլա̀թն էնքան շատ ա ինո̀ւմ, վըեր կարում չի, թա հըվըքելավ պըրծըցնէ: Մին օր Հարուն-Ղարունը Քրիստոսեն դաչանք ա անում, ասում ա.- Քյինա̀ ըստուծըեն կոշտը, ասըէ էն դո̀վլա̀թը վըեր տուվալ ըս Հարուն-Ղարունըեն, մխըրէ պըկըսցնէ, ծըեռքեն կըրակ ա ինգյա̀լ, կարում չի հըվըքելավ կըլխըցնէ:

Քրիստոսը քյինա̀մ ա ըստուծեն կոշտը, Հարուն-Ղարունեն ասածն ասում: Աստված էլ Քրիստոսըեն ասում ա.-Քյինա̀ Հարուն- Ղարունեն ասըէ օրաս ետը պռոզ հաց չի թխէ, թող միշտ լավաշ թխէ: Քրիստոսը կյամ ա ըստուծեն փասպարքը Հարուն-Ղարունեն ասում:

Տրանա ետը Հարուն-Ղարունն ըսկսում ա լավաշ թխելը: Հարուն-Ղարունը տըեսնում ա, վըեր խոխըեքյը լավաշն ուտըելիս կուտրատվում ա վընըրներեն տակըեն վըեր տըեռնում, խոխոցը հետե ամեքյա մին ըռըշկե-տան ա կարել տամ, ամմըեն հաց ուտըելիս էտ ըռըշկըտաները խուխոցը ըռըչներավը կապում, վըեր հացըեն կուտուրտանքը տափըեն վըեր չի տըեռնա: Հարուն-Ղարունը տըեսնում ա, վըեր ո̀ւրա̀ն դո̀վլա̀թը հիշքան իլա̀լ ա, էրկու էնքան իվիլա̀նո̀ւմ ա: Քրիստոսեն մին էլ ա ասում, թա պա ես ըստուծեն դաչանք-պըղատանք ըմ ըրալ, վըեր դո̀վլա̀թա̀ս պատառ յոր օնըէ, պերալ ա հիշքան իլա̀լ ա, նրա էրկու մչանք իվիլցըրալ. աստուծեն ասըէ՝ հիշքան դո̀վլա̀թ օնըեմ, հալալ ախպոր մնան մաչան կես անըէ, վըեչ հըվըքելին ա ճար ինո̀ւմ, վըեչ էլ խըրջիլավ ա պըրծնում:

Քրիստոսը մին էլ ա քյինա̀մ ըստուծըեն կոշտը, Հարուն-Ղարունեն ասածը նաղլ անում: Աստվածն էլ ասում ա.-Ես ասալ ըմ Հարուն-Ղարունը հացը լավաշ թխէ, հանցու պըտըռնեն տափըեն վըեր տըեռնա, ո̀ւրա̀ն ըռուզին կըտըրցնըեմ, պա տըեսնում չը՞ս, վըեր ամմըեն մին խուխու մին-մին ըռըշկետան ա կարել տուվալ, դուշըրներան կապալ, հացըեն պատառը տափը չի ինգյո̀ւմ, ես հունց կըկա՞րեմ ո̀ւրա̀նց ըռուզին ետ քաշիմ:

## 51.ՄԱՐԹԻՆ ԱՇԿԸ

Մին շատ քյա̈սիբ մարթ հղեննի հըղուղու զո̈ւլո̈ւլո̈ւ մչանք մին պո̈ւլո̈ւր, փափուկ, շատ ղա̈շա̈նգյ պեն ա քթենո̈ւմ, պիրո̈ւմ շենը։ Շինացեքյ լոխ հըվաքվում ըն, թա տըեսնան՝ տա հի՞նչ պեն ա։ Վըեչ մինն էլ կլոխ չի ինգյո̈ւմ, թա տա հինչ ա։

Խաբարը հըսնում ա շահըեն։ Շահն էտ մարթին ծեն ա տամ, տանում ո̈ւրա̈ն պալատը։ Տա քյինամ ա շահըեն կօշտը, ո̈ւրա̈ն նիըետ էլ տանում էտ ղա̈շա̈նգյ պենը, շահը յոր ա օնում, տըփտըփում, վըեչ մին պեն կլո̈խ չի ինգյո̈ւմ, ասում ա.- Հի՞նչ տա՞մ, ինձ տաս։ Էտ մարթն ասում ա.- Ո̈ւրա̈ն քաշավը մին վըեսկե տո։

Շահն մարթօցը ծեն ա տամ, թա՝ տարեքյ էտ պո̈ւլո̈ւր պենը քշըռեցեքյ, ո̈ւրա̈ն քաշավը մին վըեսկե տուվեքյ։ Էտ մարթին տանում ըն խըզնատոնը, էտ պո̈ւլո̈ւր պենը տինո̈ւմ քշըռքեն մին թայումը, վըեսկեն պիրում, վըեր քշըռըեն։ Վըեսկեն աձում ըն, աձում, քշըռքեն թայը տըեղան պիցրա̈նո̈ւմ չի։ Փոխում ըն մըեծ քշըռքու յիրա̈ քշըռում, էլլա չի քշըռքեն թայը տըեղան պիցրա̈նո̈ւմ։ Պիրում ըն լափ մըեծ քշըռքու յիրա քշըռում, քշըռքեն թայն էլլա չի տըեղան տո̈ւրո̈ւր կյամ։ Նորից ըն քշեռքը փոխում, շահըեն խազնան լոխ յիրա̈ աձում, էլլա չի քշըռքեն թայը տըեղան տո̈ւրո̈ւր կյամ։

Խաբարը հըսցնում ըն շահըեն, շահն էտ մարթին ծեն ա տամ, հըրցնում, թա տող հինչ մարթ ը՞ս, բա̈լի կախարդ ըս, եկալ ըս իմ խազնան լոխ տանըես, վըեր դո̈ւզն ասըես վուչ, կլո̈խըտ կտրըել ըմ տըլական։ Էտ մարթը շահըեն վըեններն ա ինգյո̈ւմ, ղաչանք- պըղատանք անում, ասում. - Ես մին շատ խուխատար, քյա̈սիբ մարթ ըմ, խոխեքյըս եթիմ մի թողըել, էտ կուճուր պենը ես հղըցան ըմ քթա̈լ, ըսկի վըեչ նա յըմ օգում, վըեչ վըեսկեն։

Շահն ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրին հրաման ա տամ, վըեր ո̈ւրա̈ն երգյիրին ժուղովուրթեն մըեծան մինչն կուճուրը լոխ հըվաքեն ո̈ւրա̈ն քաղաքը։ Ժուղովուրթը լոխ հըվաքվում ըն շահըեն քաղաքը, հու վըեր էտ ղա̈շա̈նգյ պո̈ւլո̈ւր պենին եշում ա, պեն չի կլո̈խ ինգյո̈ւմ։ Շահը հըրցնում ա, թա ո̈ւրա̈ն երգյիրին մարթուցը լոխճինին պերալ ը՞ն։ Նա̈զիր-վեզիրն ասում ըն, վըեր էսհինչ տըեղը մին հիվանդ, պառավ մարթ կա, նա յա մնացալ։ Շահն ասում ա.-Փայտոն ղրկեցեքյ, թող քյինա̈ էտ հլիվուրեն պիրի։

Փայտոն ըն ղարկում, քյինա̈մ ա էտ հլիվուրեն պիրում, էտ պո̈ւլո̈ւր պենը տամ ըն ո̈ւրա̈ն, ասում.-էսքան մարթուցան վըեչ մինը գյիդացալ չի,

թա հինչ ա, բա̈լի տու գյիղա̈ս: Հլիվոլըն էտ պո̈լո̈ւր պենը տինում ա քշըռքեն մին թայումը, էն մին թայն էլ մին մըննընուցու մչանք վըեղ ածում, քշըռքեն էրկու թայերը կյամ ըն, բըրբարվում: Շահըեն մարթիքյն ասում ըն. - Պա տա տիրալ ընք քշըռքեն մին թայումը, վըեսկեն նան խազնան լոխ ածալ ընք էն մին թայը, տափան կտրալ չի, էտ հունց ա՞, վըեր մին մըննանուց վըեղավ քշըռքեն թայը տափան եր ա կենում: Հլիվուրն ասում ա. - Սա մարթու աշկ ա, վըեսկավ, խըզնավ քուշտանալ չի, մենակ վըեղավ կըքաշտանա:

## 52.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ՔՅՈՌՕՂԼԻՆ ԽԱՆԸԵՆ ԸԽՃԸԿԱՆԸ ՓԸԽՃԸՑՆՈՒՄ

Քյոռօղլին խանըեն ըխճըկանը տըեսած ա ինո̈ւմ, հավան կացած: Մին օր ո̈ւրա̈ն հնգըերունցը հըվաքում ա, հըրցնում, թա հու կըկա՞րե քյինա̈ էտ ըխճըկանը փըխճըցնե, պիրի: Դա̈լի-Հասանն ասում ա.- Ես կըքյինա̈մ պիրիմ: Շորերը փոխում ա քյինա̈մ, կարում չի ըխճըկանը կոշտը տո̈ւս կյա. խանըեն մարթիքյը ճինա̈նչո̈ւմ ըն, փռնում վըններեն կաշին մաշկում, մաչը տիրմանավ լըսնում, ո̈ւրա̈ն էլ ծառան կապում, թողում ա̈րո̈ւնը քյինա̈լիս:

Մին քանի օր վըեր անց ա կենում, Քյոռօղլին քշերն ըրազումը տըեսնում ա, վըեր ո̈ւրա̈ն կեռեքյը տո̈ւս կալին: Եր ա կենում նորից հնգըերունքը հըվաքում, ասում՝ կա՛, չիկա՛, Դա̈լի-Հա̈սա̈նը նըեղ տըեղ ա, ես քյինալ պիտիմ ըզադեմ: Հնգըերունքն ասում ըն՝ բիրա̈դի ծիյանքը նստըենքյ քյինանք, Քյոռօղլին ասում ա.-Չէ՛, հա̈լա̈ ես քյինա̈մ, ետնան վըեր կըյըլտանամ, տուք էլ կըկյաք:

Քյոռօղլին քյինա̈մ ա սարեն պտկըեն վըեննը կենում, մեհետ շատ պեցո̈ւր նա̈րա̈ տամ: Դա̈լի-Հա̈սա̈նը վըեր Քյոռօղլուն սա̈սն ըսկանում ա, ծըեռքը տանում ա տափեն գյոլ տուված ո̈ւրա̈ն ա̈ռնա̈ն հափռում, խմում: Խանըեն մարթիքյը տո̈ւս ըն կյամ Քյոռօղլուն դուլբուդ անում, փռնում, տանում խանըեն կոշտը: Խանն ասում ա՝ տարեքյ քցեցեքյ էսհինչ տըեղեն խոր փոսը, թուղեցեքյ ընդըեղ մըեռնե:

Քյոռօղլուն տանում ըն քցո̈ւմ փոսը, խանըեն ախճիգյը տրա հետե ամմըեն օր թաքուն հաց-ճո̈ւր ար տանում, Քյոռօղլուն ըտըեղ թաքուն պահում:

Մին քանի օր վըեր անց ա կենում, Քյոռօղլուն հնգըերունքը տըեսնում

ըն, վըեր Քյոռօղլին կյամ չի, աuում ըն՝ Քյոռօղլին նըեղ տըեղ ա, յա յէլ կլո̈խը յիրա̈ն չի, թա չէ միե ետ ար եկալ: Իսաբալին եր ա կենում, ծին յիհա̈րում, նստում, քյինա̈մ խանըեն ամարաթան մուտանում, ծին պեց թողում, ինքյը քյինա̈մ մին պառավ քթենում, պռավըեն հըրցնում, թա ինձ հունց կըկա՞րեu տանըեu խանըեն ըխճըկանը կոշտը: Պառավը թա՝ տա շատ տիժա̈ր պեն ա, խանըեն ըխճըկանը պըլատըեն չորս ա̈նգյո̈ւնը լոխ մարթիքյ ըն վըեննը կըցըրած: Իսաբալին տո̈ւu ա օնում մին յըլլեխում կապած խիլլա̈ վըեuկե տամ պռավըեն, թա հունց ջուռա օգում ա ինի, պիտի տանըեu: Պառավը թա՝ մենակ կնգան շուրերավ քեզ կըկարեմ տանըեմ ընդըեղ: Քյինա̈մ ա մին ծըեռք կնգան շորեր ինքյ օնում, պիրում, Իսաբալին կյենում ա, պռավըեն նիըետ քյինա̈մ խանըեն ըխճըկանը կոշտը: Իսաբալին մնամ ա տո̈ւuո̈ւմը, պառավը քյինա̈մ ա ըխճըկանն աuում իստի մին կնեգյ կա, յոր չըu օնըե՞լ, քու քշտիտ ծառայի: Ախճիգյն աuում ա.- Պեր յոր կօնըեմ: Պառավը տո̈ւu ա կյամ Իսաբալուն ծեն տամ, կյամ ա:

Ախճիգյը տրա իրեսին վըեր եշում ա, տըեսնում ա հա̈լա̈ մենակ բեղերը ըսկսալ ա նոր-նոր փսնըելը, մտկումն աuում ա՝ սա հենց ա տղա ինի, հալա մին փորցըեմ, տըեսնամ: Տա Իսաբալուն իրեք ըխճըկան նիըետ ղարկում ա մուտըե բախճան վըեր ո̈ւրա̈ն հետե ծաղեգյ քաղըեն: Տահանք մին խիլլա̈ վըեր քյինա̈մ ըն, խանըեն ախճիգյը բո̈ւրդա̈ն պեցո̈ւր ծեն ա տամ, աuում՝ ղարիբ տղա, հե́յ, ետ տըեռ: Իսաբյին դաստին ետ ա եշում, ախճիգյը ծըեռքավ ա անում, թա ետ տըեռ: Իսաբալին կյամ ա ըխճըկանը կոշտը, ախճիգյը հըրցնում ա, թա հու վը՞u, հինչ ը՞u, հիշտըղա՞ցըե յըu: Իսաբալին թա՝ ղե եu Քյոռօղլուն մըրթուցան ըմ, եկալ ըմ տըեղը գյիդամ: Ախճիգյը թա՝ ըրխըյին կաց, Քյոռօղլին էն ա սաղ, էսհինչ տըեղեն փոսումը, ամմըեն օր եu նրա հետե հաց-ճո̈ւր ըմ տանում, քշերավ, լո̈ւuա̈ մոտե կըքյինա̈նք վըերան տո̈ւu օնըենքյ, բիրա̈դի ըստըեղաu փախճինքյ:

Իսաբալին ըտըեղ կենում ա, քշերավ քյինա̈մ ըն փոսան մուտանում, տըեսնում՝ Քյոռօղլին ինքյն ո̈ւրա̈ն խոսում ա. «Դա̈միրչ-օղլին քշտիս պիտա̈ր, Դա̈լի-Հա̈սա̈նը քշտիս պիտա̈ր, Բաբա Քյա̈նհանը քշտիս պիտար, Քյո̈ւրդօղլին քշտիս պիտար...»: Իտի լոխճինին ընըմնեն մին-մին տամ ա, Իսաբալուն անումը տամ չի: Իսաբալին ծեն ա տամ, թա՝ իգյիթ Քյոռօղլի, պա իսկի Իսաբալին մըետըըտ չինգյա՞վ: Քյոռօղլին վըեր Իսաբալուն սա̈ն ըսկանում ա, ուրխանում ա, ըխշարքավըu մին տըեռնում, աuում.-

Իսաբալի, դե հինչ ա՞նըեմ, էտ վախտը էյնըս չեկեր։

Իսաբալին նիըետը քյենդիր ա ինո՛ւմ տարած, մըեկնում ա, Քյոռօղլին ո՛ւրա՛ն կպոտում ա, Իսաբալին ծիքյ ա տամ, թա տո՛ւս օնըե, կարում չի։ Տըեղատ մոտե հոնձ ընողնե յըն ինո՛ւմ, քյինա՛մ ա հըվաքում պիրո՛ւմ, բիրա՛դի ծիքյ ըն տամ, Քյոռօղլուն տո՛ւս օնում։ Հնգըերունքն էլ ծիյանքը նստած կյամ ըն, Քյոռօղլուն դռաթն էլ նիըտնըեն պիրում։ Ծիյանքը նստում ըն, խանեն ախճիգյն էլ նիըտնեն տանում, քյինա՛մ Դա՛լի-Հա՛սա՛նըեն էլ կապըերը ետ անում, տինո՛ւմ ծիյին յիրա՛, հղե ինում։ Խանըեն ծառանըեն դույուղ ըն ջիհում, հարայ ըն տամ, զորք հըվաքում, քյինա՛մ Քյոռօղլուն դիստին նիըետ կըըեսը տամ, խանըեն ախճիգյն էլ ա զորքըեն նիըետ կռըն անում ծըեռքան յարալու տըեռնում։ Վերչը, տահանք զորքըեն ետ ըն տամ, ախճիգյն էլ յոր օնում, քյինա՛մ։

## 53.ՎԱՆՔԵՆ ՔՅԱ՛ՄԱ՛ՆՉԱ՛Ն

Ղուլ Հարությունը տասնիրեք-տասնըչորս տըրեկան տղա յա ինո՛ւմ, ո՛ւրա՛ն հորը նիըետ ապրում ար Ղարաբաղեն սար տըղըերեն մին շենում։ Տըեղետ մարթիքյը միշտ քյինա՛մ ին արան տըեղերը հինձա՛վարզ։

Մեհետ էլ էտ շենան մին քյըրվանու նիըետ իննը հոքի էրկու ճորավ, մինգյել օխտը ծիյավ ու ուլախավ քյինա՛մ ին, վար ո՛ւրա՛նց հինձա՛վարզը պեռնեն, պիրին։ Տահանց նիըետ Հարություն նան ո՛ւրա՛ն հա՛րն էլ ըն քյինամ ո՛ւրա՛նց հինձա՛վարզը պիրիլի։

Հղըեննի մթըեն ըն ինգյո՛ւմ։ Քյարվանը վըեննն ըն անում, վար ըտըեղ լո՛ւսըցնըեն, էլլա հղե ինին, քյինա՛ն։ Շուրըրնեն քցո՛ւմ ըն, պրանվում, քոն ինո՛ւմ։

Քշերեն կեսին էտ մըրթուցան մինը զո՛ւրթնա՛նում ա, տըեսնում Հարությունը կա վուչ։ Լոխճինին զո՛ւրթնըցնում ա, քյինա՛մ ըն շատ շոռ կյամ, տըեսնում մին ղընդաղում պրանված, ըշտափած, սառած-սըրսամնած, քունավ հընցած։ Զո՛ւրթնըցնում ըն, Հարությունը եր ա կենում նստում, ասում.- Ա՛յ տըղըշիներ, խե՞ ինձ զո՛ւրթնըցրեքյ, ըրազումըս իննը լաք կորեկ ըմ չափալ, մինն ար մնացալ, վար չափըեմ, տըեռնար մին չուվալ, եկեքյ զո՛ւրթնըցրեքյ, թուղեցեքյ վուչ. էտ կորկեն հըմբարքավը մին էլ խոսկերք ըմ սուվըերալ։

Մինգյել տրանա ետը Հարությունը նաղլ ա անում, վար ըրազումն

ըստուծանա ո՛ւրա՛ն ասած ըն ինո՛ւմ, թա էն ա էսիինչ տըեղեն վանքեն քշտին մին կյիրիզմնաքար կա վըեղեն տակըեն թաղված, քյինա՛լ պիտիս քանդիս, էտ քարը կոտըըես, մաչին մին քյա՛մա՛նչա՛ կա, տո՛ւս օնըես, ածըես:

Տրանա ետը հա՛ր ու տղա ո՛ւրա՛նց ուլախը տամ ըն քյըրվընըվուրներեն, թափշուր անում, վար ո՛ւրա՛նց հինձա՛վարզը ինքյ օնըեն, պիրին: Ո՛ւրանք քյինա՛մ ըն էտ վանքը, թա վըեղը քանդին, քարը տո՛ւս օնըեն:

Վանքումը օխտը դեր ըն ինո՛ւմ, էտ օխտը դերին էլ մին վըրթաբեղ ա ինո՛ւմ: Տահանք կյամ ըն Հարությունին նան ո՛ւրա՛ն հորը առաչը կտրում, թողում չըն, ասում ըն.-Ըստըեղ վանքըեն վըեղն ա, վըեչ մին մարթ կարել չի քա՛նդի, քարը տո՛ւս օնըե: Տահանք ասում ըն. - Ըստըեղ մըեզ պարիկամ մին դեր օնըենքյ թաղած, օզում ընք տո՛ւս օնըենք, տանենքյ մըեր կյիրիզմը-նանուցումը թաղըենքյ: Էտ դերերը թա՝ չէ, կարել չընք, տա ամա՛լ կյալի պեն չի: Տահանք քյինա՛մ ըն վըրթըըբեղին կոշտը, ասում. - Մըեզ պարիկամ դերին մեյդը էրած, մոխըերն ածած ա մին բութուլու մեչ, տիրա՛ծ քարեն ղաթումը, օզում ընք քարը տանենքյ կոտրենքյ, տո՛ւս օնըենքյ, էտ բութուլեն մոխըերը մըեր կյիրիզմընընուցումը թաղըենքյ:

Վըրթաբեղն էտ պենը քցո՛ւմ ա վանքըեն սուդը: Սուդումն էլ ասում ըն. - Մըեռալը վար ո՛ւրա՛նցն ա, կարող ըն տանըեն, հու կըկա՞րե ասե տանումեքյ: Վերչը, տահանց պեց ըն թողում, վար քյինա՛ն քարը տո՛ւս օնըեն, տանըեն:

Տահանք քյինա՛մ ըն վըեղյր քա՛նդում, քարը տո՛ւս օնում կոտրում, Հարությանը քյա՛մա՛նչա՛ն յոր ա օնում, ըսկսում չորս սիմին յիրա ածըելն ու չորս լո՛ւզվավ երք ասըելը:

Տրանա ետը Հարությանը ճինա՛նչվում ա, հինչ ազգու աշուղ ա կյամ տըեղեքյ, լոխճինին հախտում ա, համմա վըեչ մինին սազը ինքյ չի օնում:

Հարությունն էլ տըեղ շատ կենում չի. քոչում ա, քյինա՛մ Թիփլիզ, հա՛րն էլ նիըետը, վար մին դո՛ւնո՛ւմանց անում հանած տղըեն կուռանը տակըեն կարե ապրե:

54.ԸՍՏՈՒԾԱՆԱ ՏՈՒՎԱԾ ԸՌՈՒՋԻՆ...

Մին մարթ ա ինո՞ւմ, մինգյել մին կնեգյ: Մարթը շատ թա՜մբա՜լ ա ինո՞ւմ, թաքավըրեն վըրեխճարն ար պահում: Ամմըեն օր վըրեխճարը տանում ար մին սարավ անում, ինքյը պըռտըյեր հընցնում, քոն ինո՞ւմ: Վըխճըրնըերան օրը մինը կորչում ար, էտ մարթին հեչ վեջը չար: Վերչը, վըեր վըխճըր-նըերեն շատը կորչում ա, տա մին օր հըտըրնըերան քյինա՜մ ա, տըեսնում մին կըծանում մին փոս, մին քոռ կյո՞ւլ էլ մաչին պըպըզած, կարում չի փոսան տո՞ւս կյա՜, լիհա՜ վըեր վըեխճարը փոսըեն դըաղավը օզում ա թա անց կենա, փոնում ա, քաշում փոսը, պըճըղում, օտում: Վըեխճարը ետ ա տամ, տանում տամ թաքավըերեն մարթուցը, ինքյը քյինա՜մ տոն, ասում. - Աստուծ ինձ ըռուզի յա տուվալ, էլ կործ չըմ ըննական: Կնեգյը ճարը կտրած, ամմըեն օր քյինա՜մ ա ծմակը, մին շելակ չոփ անում պիրո՞ւմ, տանում ծախում, հացու տամ:

Մին օր էլ էտ կնեգյը ծմակումը չոփ ընելիս մին խըշննավ ծասկըված փոսում մին կարաս վըեսկե յա քթենո՞ւմ, կյամ մարթին ասում.- Վըեսկե յըմ քթա՜լ, եք քյինա՜նք տո՞ւս օնըենքյ: Մարթը թա՝ կյամ չըմ, իմ ըռուզիս աստուծ տուվալ ա: Կնեգյը իտի, ամմըեն օր մարթին ասում ա. - Եք քյինա՜նք տո՞ւս օնըենքյ, մարթը թա՝ քյինա՜ պենիտ, իմ ըռուզիս աստուծ տուվալ ա:

Կնեգյը ճարը կտրած, քյինա՜մ ա հըրվանըեն կոշտը, ասում.- Ծմակումը մին կարաս վըեսկե յըմ քթա՜լ, եք քյինա՜նք, քյո՞մա՜գյ ըրա տո՞ւս օնըենքյ, ճոթ անըենքյ: Հըրևանը թա՝ քյինա՜նք:

Քյինա՜մ ըն: Հըրևանը կարասը փոսան տո՞ւս ա օնում, մին hափուռ շը-պըրտում, տամ էտ կնգանը, մնացածը յոր օնում, տանում տոն: Էտ կնեգյն էլ ճարը կտրած, հըրվանըեն թող ըրած մին քանի վըեսկեն յոր ա օնում, քյինա՜մ տոն, մարթին ասում.-Լավ ըրըե՞ր, վըեր եկեր վուչ, հըրևանըտ էս մին քանինը շըպըրտավ ինձիրա՜, կարասը շիլակեց, տարավ ո՞ւրա՜ն տոն: Մարթը թա՝ պեն օնըես, քյինա՜ պենիտ, իմ ըռուզիս աստուծ տուվալ ա:

Հըրևանն էլ վըեր կարասը տանում ա տոն, պեց անում, ծըեռքը մընկնում վըեսկեն տո՞ւս օնում, օց ա տըեռնում, վըեր քցո՞ւմ ա կըրաասըեն մաչը, վըեսկե յա մնամ: Քանի հետ ծըեռքը քցո՞ւմ ա վըեսկեն տո՞ւս օնում, օց ա տըեռնում: Տըեսնում ա, վըեր երիմիշ ընըելի թա՜հրը չի կա, վըեսկըեն կըրաասավը տանում ա էտ կնգանը տանը հո՞ւրթավը վըեր ածում, վըեր օցըեր տըեռնան, բայց տըեռնում չըն:

Մարթը վըեր եշում ա, տըեսնում հո՞ւրթավը վըեսկե յա վըեր տըեռնում, կնգանը թա՝ պա վըեր ասում ըմ իմ ըռուզես աստուծ տուվալ ա՞…

## 55.ՔՅՈՌՕՂԼԻՆ ՆԱՆ ԴԸՄԸՌՉՕՂԼԻՆ

Մին օր Քյոռօղլին պիրում ա վըեր ծին դըմո՞ւրչո՞ւն քշտին նալըե: Դըմո՞ւրչո՞ւն տղան տըեսնում ա, զյո՞ւղո՞ւմ չի, թա հու վա: Վըեր ծին նալնում ա քյինըմ, հորը հըրցնում ա, թա՝ ասում ըս Քյոռօղլին իստի յա, Քյոռօղլին ինդի յա, պա մեհետ տըեսնամ վո՞ւչ: Հարը թա՝ էտ ա տըեսեր իլի: Տղան ասում ա.- Ցանի նա յա՞ Քյոռօղլին, թա նա յա, ես քյինամ ըմ նրա ծին կյուղանամ:

Մին քանի օրան եսը Դըմո՞ւրչօղլին քյինըմ ա Քյոռօղլուն երգյիրը: Հըսնում ա հենց Քյոռօղլուն ըպրելիս տըեղը: Քյոռօղլուն հնգըերունքը միշտ հերթավ ծիյին յիրա՞ ղարաղուլ ին անում: Էտ քշերը Քյոռօղլին ար ղարաղուլ անողը: Դըմո՞ւրչօղլին վըեր մուտանում ա, Քյոռօղլին տրան հըրցընում ա, թա՝ տու հու վը՞ւ: Տա թա՝ ես եկալ ըմ Քյոռօղլուն ծիյանքը կյուղանամ: Քյոռօղլին ասում ա.- Լիհա՞ ես էլ ո՞ւրա՞ն ծառանըերան ըմ, ես էլ ըմ օզում կյուղանամ, եք բիրա՞դի նի միննենքյ, տո՞ւս օնըենքյ, ամմա մղակն ըրկաթե յա, կարել չընք նի մննըենքյ: Դըմո՞ւրչօղլին թա՝ կյումըեն կտորը քա՞նդինքյ, քյինդիրավ կըպոտըենքյ, ծիքյ տանք տո՞ւս օնըենքյ:

Իտի յել անում ըն: Դըմո՞ւրչօղլին մնամ ա տիյեր, Քյոռօղլին նի յա միննում առաչ Դորաթը կապում, Դըմո՞ւրչօղլին ծիքյ ա տամ, տո՞ւս օնում: Ետնան էլ Ղռաթն ա կապում, ինքյն էլ յիրա՞ն նըստում, Դըմո՞ւրչօղլին ծիքյ ա տամ, էտ էլ տո՞ւս օնում: Ծիյանքը քշո՞ւմ ըն, քյինըմ: Հղեննի Քյոռօղլին ըտրան ասում ա.- Լա՞վ, մեհենզյ ծիյանքը տանում ընք, ախեր Քյոռօղլին հիշտեղ էլ ինի, կյիլա՞կան ա ինձ քթենա, կլոխըս կտըրե, ծիյանքն ինձ տո, ետ տանըեմ ո՞ւրա՞նց տըեղը: Դըմո՞ւրչօղլին թա՝ չէ՛: Քյոռօղլին տրան քմականը տո՞ւս մին էրկու հետ թոփուզավ թխում ա, տա սայմիշ չի անում, ասում ա. - Լա՞վ, զարափաթ մի անըել:

Մին խիլլա՞ յել վըեր քյինըմ ըն, Քյոռօղլին տրան հըրցնում ա, թա տու Քյոռօղլուն հինչան ը՞ս վախում: Դըմո՞ւրչօղլին թա՝վըեչ մին պենան էլ վախում չըմ, մենակ ասում ըն մին շատ փիս ծըկըլթոց օնըե, նրանա յըմ վախում: Մխըրե քյինըլա՞ն ետն էլ Քյոռօղլին ծիյան վըեր ա կյամ, քամակ ինգյո՞ւմ, մինգյել մուտանում, սա՞նը պեց թողում: Դըմո՞ւրչօղլին սա՞սին

կարում չի տիմանա, ծիյան վըեր ա ինգյո՛ւմ, Քյոռօղլին ըտըեղ տրան մուտանում ա, պըկըեն չոքում, ղա՛մա՛ն տո՛ւս օնում, վըեր մոըթըէ: Դա՛մո՛ւր-չօղլին կլո՛խ ա ինգյո՛ւմ, վըեր տա Քյոռօղլին ա, ղաչանք ա անում, ասում. -Վա՛յ, ես քէ մատաղ, ինձ ըսպանումիլ, ես կըտըեռնամ քու ծառանըերատ մինը:

Տրանա ետը Դա՛մո՛ւրչօղլին էլ ա Քյոռօղլուն հնգըրանում:

## 56.ՔՅՈՌՕՂԼՈՒՆ ՍԼՎԵՆԸ

Քյոռօղլին ըպրելիս ա ինո՛ւմ Պարսկաստանըեն Բելլուջո՛ւղաղ սարու-մը: Քյինա՛մ ա Դաղստան, մին սիրա՛կան քթենո՛ւմ, մին տարի քշտին կե-նում: Սիրա՛կանը վըեր պատճառնուր ա տըեռնում քշտին մին վըեսկե սլվեն ա թողում, ասում.- Վըեր տղա ինի,բլա՛կը կըքցիս, վըեր ախճիգյ ինի՝ վիզը: Ինքյը քյինա՛մ ա ո՛ւրա՛ն երգյիրը, կնգանը կօշտը:

Ժամանակ ա անց կենում, էտ սիրըկանըեն անա մին տղա յա ինո՛ւմ, անումը տինում ըն Հասան-բեկ:

Տղան վըեր մըծանում ա, խաղ անըելիս խոխեքյը տրան ասում ըն՝ տու պիճ ըս: Տղան քյինա՛մ ա մորը կօշտը, հըրցնում, թա ասե տըեսնամ իմ հա՛ր հո՞ւ վա: Մարը թա՝ քու հա՛ր Քյոռօղլին ա:

Տղան հնգըերունցը մինին նիըետ քյինա՛մ ա, վըեր հորը շոռ կյա քըթենա՛: Շատ տըեղեր անց կընալան ետը պիցրա՛նո՛ւմ ա մին սար, մին հըսարու քշտի ծին կապում, հնգըերեն նիըետ պրանվում, քոն ինո՛ւմ: Տու մի ասըել, տա յէլ Քյոռօղլուն ղուրուղատըեղն ա ինո՛ւմ: Քյոռօղլուն մար-թիքյը կյամ ըն տահանց եր կըցնում, թա՝ տուք հինչ հլլըթ-մի՞լլա՛թ ըք, վըեր պերալ ըք ծիյանքն ըստըեղ պեց թողալ, ըրխըյին քունավ հնցալ: Հասան-բեկը տահանց պենու տըեղ չի տինո՛ւմ: Խաբարը հըսցնում ըն Քյոռօղլուն:

Քյոռօղլին կյամ ա, ըսկսում ըն ո՛ւրո՛ւր նիըետ հո՛ջա՛թ տալը, վերչը, կռըև ըն փռնում: Շատ վըեր ո՛ւրո՛ւր քաշ-քաշ ըն անում, Քյոռօղլին տրան վըեր ա քցո՛ւմ: Վըեր օզում ա, թա ըսպանե, Հասան-բեկը թա՝ կաց, հա՛լա՛ էրկու հետ էլ կա:

Էրկուինջի ղոնումը վըեր ո՛ւրո՛ւր փռնում ըն, Քյոռօղլին էլլա յա վըեր քցո՛ւմ: Հասան-բեկը վըեր ինգյիլիս բո՛ւրղա՛ն թևքը պիցրա՛նո՛ւմ ա, սլվենը ուրվամ ա: Քյոռօղլին բո՛ւրղա՛ն մաննը կծում ա, ետնան հըրցնում թա՝ հա՛լա՛ ասըե, տըեսնամ՝ տու հի՞շտըղան ըս եկալ: Հասան-բեկը թա՝ կռըև ըս

ըննական, կոըն ըրա, հոր ը՞ս հըրցնում: Քյոռօղլին թա՝ ասըէ տըեսնամ, էլլա կոըն կաննեքյ: Վըէր շատ ըստիբում ա, Հասան-բեկը թա՝ ես Դաղստանան ըմ, տո՜ւս ըմ եկալ շոռ կյամ, հորըս քթենա՜մ: Քյոռօղլուն ծըեռքը բո՜ւրդա՜ն թուլանում ա, ղա՜մա՜ն ծըեռքան վըեր ա ինգյո՜ւմ, ետնան պըռոշտի յըն անում, քյինա՜մ տոն: Քյոռօղլին կնգանն ասում ա, վըեր տղաս ա, եկալ ա ինձ քթա՜լ:

Հասան-բեկը մնամ ա Քյոռօղլուն քշտին:

## 57.ՔՅՈՌՕՂԼԻՆ ՂԱՉԱՂ Ա ԻՆԳՅՈՒՄ

Քյոռօղլուն հա՜րը խանըեն ծիյանքը պըհելիս ա իլա՜լ: Նրան մին քանի անում ա իլա՜լ: Համ Հասան ըն իլա՜լ ըսելիս, համ՝ Ա՜լի, համ էլ՝ Արշակ:

Մին օր խանըեն կոշտը ղունաղնե յըն կյամ, վըեր ծիյանցան էրկու լա՜վը ճոկըեն: Խանը Հասանին ասում ա, վըեր քյինա՜ էրկու լա՜վ ծի ճոկե: Հասանը քյինա՜մ ա էրկու ամմըենաքընձըոնոտ քուռըկնե ճոկում, պիրո՜ւմ: Ղունըղնըեն ծիծաղում ըն, խանն էլ կըզնըեում ա, հրաման տամ, վըեր Հասանեն աշկըերը քուռըցնըեն, ծիանքը լա՜վ չըտեսնալի հետե: Հասանն էլ էտ ծիյանցը հորը տըեսած ա իլա՜լ Կասպիս ծովան տո՜ւս կյա՜լիս, խանըեն ծիյանցը նըհետ խըռնըվըելիս: Տա վըեր թըբունեն էրկու ծիանցը մուտանում ա, տրանցա էրկու քոռակ ըն ծնվում, մինին անումը տինում ա Ղռաթ, մինին էլ՝ Դորաթ:

Հասանեն քուռըցնում ըն, խանն էլ ծեն ա տամ, էրկու քոռակը տամ ո՜ւրա՜ն, իրղե տինո՜ւմ: Հասանը տահանց մըթեն կյումում ար պահում: Տըհանցա Ղռաթը սև ա ինո՜ւմ, Դորաթը՝ չալ, տըպտըպուրիգյ:

Մին տարըե վըեր անց ա կենում, Հասանը տըղեն՝ Ռուշանըեն ասում ա.- Սև ծին կյուման տո՜ւս կալ քշի, տես հունց ա: Մին մըեծ բըյանա ղո՜ւզ վարել ա տամ, արխը կապում յիրա՜, ցըեխ շինո՜ւմ, մին էրկան քյա՜նդիր յոր օնում ճունդեն մինը ծիյին անա կապում, էն մին ճոնդն էլ պեց թողում: Ասում ա.- Թա վըրե էնքան ճելլի վազ տա, վըեր քյինդիրին ճոնդը տափան պիցըրա՜նա, ըրըմը պինըցնըելի վախտն ա:

Ռուշանը վըեր ծին քշո՜ւմ ա քյինդիրին ճոնդը տափան պիցրանում ա, ամմա ծիյին քըթըծըկըերան ա՜րո՜ւն ար քյինա՜մ: Մին տարըե յել ըն ծին կյումումը պահում: Մին տըռնանը ետը նորը մինա՜ն կյուման տո՜ւս ըն օնում, էլա քշո՜ւմ: Էս ղո՜նո՜ւմ քըթըծըկըերան ա՜րո՜ւն չար քյինա՜մ: Ռուշանը

ծին յիհա̀րո̀ւմ ա, քշո̀ւմ…

Մին օր Ռուշանը ըսկանում ա, վըեր խանըեն քշտին ծիյանցը մըցություն կա: Հորն ասում ա: Հա̀րն էլ ասում ա.- Քյինա̀, ամմա հանց ըրա, վըեր քեզ ճինա̀նչին վըեչ: Ռուշանը իտի յէլ անում ա: Ծին լըխճընան առաչ ա ինգյո̀ւմ: Հըվաքված մարթիքյ ո̀ւրո̀ւր անա հըրցըփորց ըն անում, հըրցնում, թա հու վա՞ էս տղան: Ճինընչուղնըէ յըն ինո̀ւմ, ասում ըն, վըեր քոռըեն տղան ա: Խանը ծիյըվուրնըէ յա դարկում, վըեր ծին փռնըեն, պիրին: Մինչև էտ Ռուշանը եկալ ար հորը կոշտը: Տղան Ղռաթը, հա̀րը Դորաթը նըստած փախճում ըն: Խանըեն դարկած ծիյըվուրնըեն վըեր մուտանում ըն, հա̀րը տղըեն ասում ա.- Քըրքարուտ տըղըերավ քշի, ծիյըվուրնըեն կարըել չըն մըեզ հըսնըեն: Քըրքարուտ տըղերավ քշո̀ւմ ըն, նորըմինա̀ն դո̀ւզ տըեղ ինգյո̀ւմ: Հենց վըեր կյա̀րմո̀ւր ծիյըվուրնըեն կյամ ըն, հարն ասում ա.-Քուլըերավը քշի: Քուլըերավը վըեր քշո̀ւմ ըն, կյըվող ծիյըվուրնըեն քամակ ըն մնամ: Մինգյել վըեր սըև ծիյըվուրնըեն ըն մուտանում, հա̀րը տղըեն ասում ա. - Վարած տըղըերավ քշի: Վարած տըղըերավ վըեր քշո̀ւմ ըն, կյըվող ծիյըվուրնըեն էլլա քամակ ըն մնամ: Տահանք իտի հըսնում ըն Չամլիբել, ըտըեղ տըղըրնըեն պընդըցնում: Հա̀րը տղըեն ասում ա, վըեր միշտ սայաղ մնա էտ ինգյո̀ւննըերըեն ապրող ղաչաղ Դա̀լի-Հա̀սա̀նըեն անա:

Քյոռօղըուն հա̀րը մըեռնում ա: Քյոռօղլին մին օր դեղինա̀ պըտահում ա Դա̀լի-Հըսա̀նըեն: Դա̀լի-Հա̀սա̀նն ասում ա.-Էս երգյիրին տարը ես ըմ, տու ըստըեղեքյ հինչ պե՞ն օնըես: Քյոռօղլին ասում ա.-Կռըև անըենքյ, հու հաղտըէ, նա յէլ կինի էս երգյիրին տարը:

Կռըև ըն անում: Քյոռօղլին Դա̀լի-Հա̀սա̀նըեն վըեր ա քցո̀ւմ, պկըեն չոքում, օզում ա թա կլո̀խը կտըրըէ: Դա̀լի-Հա̀սա̀նը լա̀ց ա ինո̀ւմ, ղաչանք-պըղատանք անում, վըեր ո̀ւրա̀ն ըսպանըեվուչ, յոր օնըէ ո̀ւրա̀ն քշտին նոքյա̀ր: Քյոռօղլին տրան էլ ըսպանում չի: Յոր ա օնում ո̀ւրա̀ն հնգըեր:

## 58.ԾՈՎԸ ՆԻ ՄՆՆՈՂԸ ՎԱԽԵԼ ՉԻ

Մին չոբան ծուվըեն ղրաղեն վըեխճարը պեց ար թողալ, միակը ծըեռքեն նի մտալ ծովը, ծուվըեն իրեսավը քյինա̈մ ար: Մին օրիշ մարթ վըեր կյամ ա իտի տըեսնում, չուբանեն ասում ա.- Օզում ըմ ես էլ նի մննըեմ, ճիրին իրեսավը քյինա̈մ, վըեր վըեններըս ճիրին իրեսեն փըռնե, ճո̈ւրն էլ ինձ տակ չանե: Չոբանը թա՝ մըտկավըտ էտ պենն անց չի կըցնես, վըեր անց կըցրեր, ճո̈ւրը տակ ա ըննական:

Տա նի յա միննում ծովը, չուբանեն ծեն տամ, հըրցնում, թա պա վըեր ճո̈ւրն օզե ինձ տակ անե, կըրըլական ը՞ս տո̈ւս օնըես: Ասելնը-բաստ ճո̈ւրը կըլխավն անց ա կենում, էտ մարթին խեխտում, ըսպանում:

## 59.ՕՎՉԻ ՓԻՐՈՒՄԵՆ ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

Օվչի Փիրումը շատ իմաստուն մարթ ա ինո̈ւմ, ամեն հիյվանու, ամեն ղուշու լո̈ւզի գյիդա̈լիս: Մին օր ո̈ւրա̈ն պատճառնոր կընգանը ծիյին նըստըցըրած տանում ար հա̈րա̈նց տոն: Ծիյին քոռակը քամակ ա ինգյո̈ւմ, կարում չի, թա մորը հետան քյինա̈: Խըլխըլնջամ ա, օզում ա ասե, վըեր նըղացալ ա, մարն էլ խըլխըլնջամ ա, ջողոբը տամ: Փիրում կըլո̈խ ա ինգյո̈ւմ, վըեր մարն ասում ա՝ չոռ, զա̈հըրմար, մինն իմ փորումըս կա, մինն ինձիրա̈, ինձիրա-նեն փորումն էլ էրկունը կա, մինն էլ յես ըմ, ես հենգյ հոքի տանե՞մ, թա քե՞զ, մենակ քեզ էլ չըս կարում, թա պիրիս: Փիրումը քըմքըծիծաղ ա տամ: Կընեգյը հըրցընում ա, թա հինչու յիրա յը՞ս ծիծաղում: Մարթը թա՝ վըեչինչ, վըեր էտ կըտեռնանք կյանք տոն, կասեմ: Փիրումը ղասիդա̈նա̈ ասում չի, գյո̈ւղո̈ւմ ա, վըեր ասե, քար ա տըռնըլական: Կընեգյը սուս ա անում, բայց մըտան քըցո̈ւմ չի:

Հըներանց տանան էտ տըռնալիս կընեգյը մարթին պըկեն չոքում ա, թա ասե տեսնամ քյինա̈լիս հին չու հե՞տե ծիծըղեցեր: Մարթն օզում ա կընգանը կըլո̈խը վարե, ասե վուչ, ամմա կընեգյը ըստիբում ա: Էտ վախտը մարթը եշում ա, տեսնում մին վըերցակ մին հավու մաշկ ա օզում եր ինի, հավը թողում չի: Վըերցակը կըզնըվում ա, թա հի՞նչ ա, ես էլ ըմ օվչի Փի-րումը, վըեր քար տըռնալի հետե կընգանաս վախեմ, տու չինիս, հանե՛ հըյաթումը մին օրիշ հավ ինձ ա եշում: Փիրումը էտ վըեր ըսկանում ա, կընգանը յիրա̈ յա պըրծընում, կնեգյը ըստիբում ա, թա տու վըս, վըեր տու, պիտի ասես: Մարթը վըեր շատ կըզնըվում ա, թխում ա կընգանը ըսպա-

նում: Ըստուծանա բույրուղ ա կյամ, վըեր կյո՞ւլերեն դոշունը պիտի քինյա փըլան խազայինին վըխճըրնեն օտե: Փիրումը գյիդա՞լիս ա ինո՞ւմ, էտ խազայինին ասում ա, վըեր իստի պեն կա, տըրա մարթիքյն էլ քինյա՞մ ըն կյո՞ւլերեն առաչը ետ տամ: Մեհենգյ էլ ըստուծանա բույրուղ ա կյամ, վըեր էտ կյուլերը պիտի օվչի Փիրումեն փըռնեն, օտեն: Փիրումն էտ էլ ա գյո՞ւղո՞ւմ, թափշուր ա անում, ո՞ւրա՞ն տինին մին սընդողու մաչին, մեխեն, մին թաքուն տեղ կյողըը կըցընեն: Տի յեւլ անում ըն: Վերչը կյո՞ւլերը կյամ ըն սանդողը կոտրում, օվչի Փիրումեն տո՞ւս օնում, զիլբը-զիբզա՞ անում:

## 60.ՄԱՐԹՆ Ո՞ՒՐԱ՞Ն ԿՅԱՆՔԱՎԸ ՉԻ ԱՊՐՈՒՄ...

Աստված կյանքը պիժինիլիս ամենաառաչ մարթն ա քյինա՞մ: Մարթին տամ ա քսան տարե: Տա խռավում ա, էն դոլին նըստում: Ետնան շոնն ա քյինա՞մ: Տրան էլ տամ ա քառասուն տարե: Շոնը, թա ես քառասուն տարե ո՞ւրո՞ւշու տռան հա՞չո՞ղը, վըեսկուռ հվաքողը չըմ, ինձ քսանը բոլ ա, հանն՛ խռավկուտը ընդեղ վիզը ծռած, նստած, մնացած քսանն էլ տո ո՞ւրա՞ն, բալքյի աշկը քուշտանա:

Աստված շանը քսան տարեն յոր ա օնում, տամ մարթին: Մարթին կյանքը տըեռնում ա քառասուն տարե: Մարթը էլլա վեզը ծռած նստում ա, իըռանում չի:

Տրանա ետը էշն ա կյամ: Էշին էլ ա քառասուն տարե տամ: Սա թա՝ ես քառասուն տարե ո՞ւրո՞ւշու տռներե քաշքաշ ինո՞ղը, պեռնը կրողը չըմ, քսանն ինձ բոլ ա: Մընացած քսանն էլ տո հանե՛, էն դոլին խռաված նստած, նրան: Աստված էշին քսան տարեն էլ ա յոր օնում, տամ մարթին, տըեռնում ա վածծուն տարե:

Մարթը էլլա չի հեռու կենում: Վիզը ծռած, մնամ ա նստած:

Տրանա ետը մեյմունն ա կյամ, քառասուն տարե յեւլ սրան ա տամ: Սա թա ես քառասուն տարե ո՞ւրո՞ւշու տնըզատըեղը, մըեծեն կուճուրեն ինձիրա՞ ծիծաղել տվողը չըմ, քսան տարեն ինձ էլ ա բոլ, իմ պըպերեն էլ, հանե՛, մարթը խռաված, վիզը ծռած, ընդըեղ նստած: Մնացած քսան տարեն եր կալ, տո ո՞ւրա՞ն: Աստված մեյմունին քսան տարեն էլ ա յոր օնում, տամ մարթին: Տըեռնում ա ութասուն տարե:

Մեհենգյ մարթը ո՞ւրա՞ն իսկական կյանքավը քսան տարե յա ապրում, քսանմինան մինչև քառասունը շանը կյանքավն ա ապրում (շնոթուն ա

անում), քառասունմինան մինչև վաճծունը՝ էշին կյանքավը (շատ ա ըշխադում), վածունան տենը՝ մեյմունու մնան մաշկան կռացած ա ինո՞ւմ:

61.ԻՍՏԻ ԵԼ ՉԻ ՄՆԱԼ...

Մին հղըցավը քյինո՞ղ եշում ա, տըեսնում մին մարթ եզանը նհետ լծված, վար ա անում: Հըցընում ա, թա էտ հինչ պեն ա՞, էտ մարթը թա՝ իստի յել չի մնար: Էտ մարթը, վըեր մին հըրուստու նո՞քյա՞ր ա ինո՞ւմ, էտ հըրուստեն ըստակած եզանը տըեղն ար լըծված վար անում:

Տա ո՞ւրա՞ն հղըցավյը քյինա՞մ ա: Մին քանի տարե վյըեր շոռ ա տամ, նորըմինա՞ն ա կյամ տըեղավ անց կենում, օզում ա գյիդա՞՝ էտ մարթը սաղ ա՞, թա՝ չէ: Շոռ ա կյամ էտ մարթին քթենո՞ւմ, տըեսնում տրա խազայինը մըեռած, ինքյն էլ տըեղը նստած, տրա սաղ հըրուստթունեն տար ու տրա-կան տըեռած: Տա վըեր հրցընում ա, թա պա է՞ս հինչ պեն ա՛, էտ մարթը թա՝ իստի յել չի մնալ:

Տա ո՞ւրա՞ն հղեն նորըմինա՞ն ա կտրում, անց կենում քյինա՞մ: Շատ ա կենում, թա խրեգյ, էտ մարթն էլ ա պռավում: Նորից տըղերքավ անց ա կենում, կյամ էտ մարթին շոռ կյամ, բայց քթենո՞ւմ չի: Խաբար ըն տամ, վըեր մըեռալ ա, թաղված ա էսհինչ տըեղը: Քյինա՞մ ա հինգյիստներումը շոռ կյամ, տրա քարը քթենում, տըեսնում յիրա՞ն կյիրած. «Իստի յել չի մընա»…

Էտ մարթը քյինա՞մ ա ո՞ւրա՞ն երգյիրը տո՞ւս կյամ: Շատ վախտ ա անց կենում, տարեն տարուն հետան կյամ ա քյինա՞մ, տա արտեն մաշկան կռացած, օրեր ար հմբարում, վըեր պիտի մըեռնե: Մըտկավն անց ա կենում, ասում ա՝ քյինա՞մ էն մարթին հինգյիստա՞րանը մին էլ տըեսնամ, նոր մըեռնեմ: Քյինա՞մ ա շոռ կյամ, քըթենո՞ւմ չի: Տըեսնում ա տըեղեքյ տըկըտիյեր իլա՞ծ, վըեչ մին քարու տըեղ մա՞հլո՞ւմ չի անում, լոխ հավազ ա տըեռալ:

## 62.ԻՄԱՍՏՈՒՆ ՂԱՋԱՐ

Մին շատ ախքաղ մարթ ա ինում, անումը Ղազար: Էտ Ղազարին օխտը քուր ա ինում: Ախքաղ Ղազարը միշտ քյինամ ար ըխքըղոթուն անում, պիրում քուվերքը պահում:

Մին օր էլ Ղազարը վըեր ա ինգյմ, մըեռնում: Քուվերքը մնամ ըն անդար, ըսկսում ամմեն օր լաց ինիլը: Վըեր շատ լաց ըն ինում, Քրիստոսը տահանց սանն ըսկանում ա, ասում. - Լաց միքյ ինիլ, Ղզարին ետ պիրիլական ըմ տոն: Քյինամ ա հինգյիստըրանեն ղրաղեն վըեննը կենում, ծեն տամ, թա Ղազար, տուս եք, քյինա տոն: Էտ հինգյըստըրանումը հիշքան Ղազար ընումավ մարթիքյ ըն ինում, լոխ տուս ըն կլամ, վըեննը կենում: Քրիստոսը թա` ես ախքաղ Ղզարին ըմ ասում, թող մենակ նա տուս կյա:

Ախքաղ Ղազարը տուս ա կյամ, արտեն փոխված, իմաստուն տըեռած, քյինամ ուրանց շենը: Մինչև տոն հսնելը նի յա մննում մին դամուրչիխանա, տըեսնում մին շատ դաշանգյ ախճիգյ ուրան հըրսընքեն հետե զակազ տուված լավ, թինգյական չմուշկնեն կյեցած, տուս ա կյամ, վըեր քյինա տոն: Հվաքված մարթիքյ լոխ ասում ըն. - Տըես հինչ լավ, դաշանգյ, բախտավըեր ախճիգյ ա յե՜, ներակ սրա տըեռնը: Ղազարը թա չէ՜, քյանբախտ ախճիգյ ա, հրսանեքյը վըեր ըսկսվե, ինքյը մըռնըլական ա: Ախճիգյր հենց վըեր հսնում ա տոն, հրսանեքյն ըսկսվում ա, ինքյը մըեռնում ա:

## 63.ԹԱ ՀՈՒՐ ՀԱՐԿԱՎԸԵՐ ԵԿԱՎ ՄԵԽԸ

Մին թաքավըեր ուրան մեխ կտրող ուստեն ծեն ա տամ կոշտը, թա քեզ մին քշեր ժամանակ ըմ տամ, պիտի հարուր մեխ կտրես, էքյուծ քշերավ կյիլական ըմ տանեմ, վըեր պադրաստ չինի, կլուխըտ կտրըլական ըմ: Էտ մարթը մտածում ա, ասում, վըեր ես տըեղավըս մին կրակ էլ տըեռնամ, մինչև լուսը իծծուն մեխ էլ չըմ կարել կտրեմ, հինչ ա՞նեմ: Մտածում ա, մտածում, քյինամ կնգանը կոշտը, ամմեն հինչ նաղլ անում: Կնեգյն ասում ա. - Ամմեննին վախես վուչ, քյինա ըսկսե, վըերքան կըհըսցնես, կըկըտրես: Մարթը մնամ ա չաշմիշ իլած, գյուղում չի, թա հի՞նչ անե: Կնեգյը նորից ա ռիսկ տամ, թա ըրխըյին քյինա, վախես վուչ:

Մարթը մխըրե սըրտըպընդվում ա, հղե ինում, քյինամ ուրան գուրծա-տըեղը, ըսկըսում մեխ կտրելը: Կլուխը քաշ քցած պեն ար անում, քշերեն կեսը խիլլա անց ա կենում, գյուղում չի, թա կտրած մեխեն հաշվը հիշքան

ա: Լիհա լո̀ւսը մոտե թաքավըրեն պըլատան մարթիքյ ըն կյամ, թա ճելլ ըրա ղոթուն հետե մին քանի մըսմառ հացրու, թաքավըրը մըեռալ ա: Տա մնամ ա պըրշած: Հավատը կյամ չի: Վերչը, տա վըեր մխըրե ո̀ւրա̀ն հվաքում ա, կլո̀խը պիցրցնում ա բիդի երգյինքը եշում, թա փառք քեզ, մեխը մըսմառ շինող աստված…

## 64.ԳՅՈ̀ՒՂՈ̀ՒՄ ԸՄ, ԳՅՈ̀ՒՂՈ̀ՒՄ ՉԸՄ…

Աշուղնեն վըեր հըվաքվում ին մրցության, ո̀ւրո̀ւր հարցեր տամ, տըհանցա մինը լոխճինին կապում ա, սազերը ծըռքըրներան ինքյ օնում: Մին օրիշ աշուղ քյինա̀մ ա, տըեսնում ո̀ւրա̀ն հընգերունքը ծըռքըրնեն խաչ ըրած, լիցըկումած նստոտած: Դա̀ստին կլխու վա ինգյո̀ւմ, վըեր հնգերունցը հի՞նչ ա պըտահալ, քյինա̀մ ա տահանց հախտող աշուղեն կոշտը, ասում.-Օզում ըմ քզնըհետ մրցեմ: Էտ աշուղը թա՝ առաչ ես հարց տամ, տու պադասխանե՞, թա տու հարց տաս, ես պադասխանե՞մ: Տա թա՝ լա́վ, տո́ւ հարց տո: Նա յէլ հըցընում ա, թա էն հինչն ա՞՝ գյո̀ւղո̀ւմ ըմ, գյո̀ւղո̀ւմ չըմ: Էտ հախտող աշուղը կարում չի պադասխանե: Հարց տվողն ասում ա.-Մեհենգյ քեզ հախտված ը՞ս ճինա̀նչում, թա չէ՞ : Նա թա՝ վըեր հարցետ պադասխանն ասես, ինձ հախտված կըճինանչիմ: Հարց տվող աշուղն ասում ա.-Տա մահն ա, գյո̀ւղո̀ւմ ըմ, վըեր մըռնըլական ըմ, բայց գյո̀ւղո̀ւմ չըմ հի՞բ ըմ մըռնըլական:

## 65.ԱՆԴԱ̀ՐԴ ՄԱՐԹ ՉԻ ԿԱ

Մին իրփիվերի կնգան մին մաղար տղա յա ինո̀ւմ: Հունց ա պըտահում, վար էտ տղան ծանըր հիվընդանում ա: Մին օր տա ետ ա տըեռնում մորն ասում.- Ա̀զի, ես մըեռնելը մըռնըլական ըմ, քեզ նզովք ըմ քցո̀ւմ, վար իմ վերչին ասածըս անես վուչ՝ բաղարաքյիս էն մարթուցը կըթողես նստեն, վար վըեչ մին դա̀րդ չօնեն:

Տղան վար մըեռնում ա, տանում ըն թաղում, կյամ բաղարաքյին նըստում, մարը հվաքված մարթուցն ասում ա.- Ա́ ժուղովուրթ, հինչ վար ըըլական ըմ, իմ մաղար տղես խնթիրքն ա, ես ծըեզ ասում ըմ, վար քյըփըրներետ նի չի կյա՝ խուխես բաղարաքյին թող էն մարթը նստե, վար դա̀րդ չօնե, ցավ չօնե, վար սըտումը յարա չի կա: Էտ խոսկը մարը վար ասում ա, ժուղովուրթը լոխ դոռալի տո̀ւս ըն կյամ, մարթ չի մնամ: Էտ

սքյուվըեր կնեգյը թա՝ լա՛վ, լա՛վ, վըեննը կացեքյ, ես մեհենգյ կլխու ինգյեցե, վար էտ պենն իմ տղաս ասալ ա, հանցու դա՛րդըս սրտես շատ չի ծընդըրանա, գյիդացե, վար ըխշարքումըս անդա՛րդ, անցավ մարթ չի կա։

66.ԴԱՐԴԵՆ ՆՀԵՏ ԴԱՐՄԱՆՆ ԷԼ ԿԱ

Մին մարթ շատ փիս հիվանդ ա ինո՛ւմ։ Էլ դոխտուր չի թողում, հրցընում ա, վըեչ մինն էլլա կարում չի ճար անե։ Քյինա՛մ ա մին լողմանու կոշտ, նա յել ասում ա, թա ճար չի կա։ Էտ մարթը ետ ա տըեռնում, թա քյինա՛ տոն։ Մայիս ամեսն ա ինո՛ւմ, հղեննի թոռ ա կյամ։ Տա նի յա մըննում մին կարան, եշում, տըեսնում կըրանեն ըռաչին մին կորու չանաղ վըեր ինգյած, սելին ճիրավը լիգյը։ Մին երմար օց կյամ ա էտ ճիրա՛ն խմում, աղուն մաչին վըեր ածում, քյինա՛մ։ Էտ մարթը մտածում ա, ասում վըեր լողմանին էլ ճար չըրավ, էլ ես հինչու հետե՞ յըմ ապրում, քյինա՛մ էն չընա-դեն ճո՛ւրը խըմեմ, մըեռնեմ-պրծնեմ։ Մուտանում ա չանաղը յոր օնում, կլխեն քաշում ճո՛ւրը խմում, լո՛ւվանում։

Մին քանի վախտան ետը տա քյինա՛մ ա էն լողմանուն կոշտը, թա՝ պա տու ասալ ըս լո՛ւվըննական չըս, խե՞ լո՛ւվացե։ Լողմանին թա՝ ես մայիս ամսեն սելը, կորուն չանաղը, մինգյել երմար օցեն լղեն հիշտըղա՞ն քթինի քեզ տի խմիր, վըեր լո՛ւվանաս։ Ասե, տըեսնամ տու հիշտըղա՞ն ըս քթալ։ Էտ մարթը նաղլ ա անում, թա հունց ա տահանց պտահալ, խմալ, լո՛ւվացալ։

67.ԱԽՔԱԴԸ ՀԱՔԻ ՏԸԵՌԱՎ

Էրկու հարուստ թորք քյինա՛մ ըն, վըեր հաջի տըեռնան։ Մին քյա՛սիբ թորք նիըտնեն ա ինգյո՛ւմ, ասում. - Ես էլ ըմ օզում ծըզնըհետ կյամ։ Տահանք հրցընում ըն, թա փող օնե՞ս, տա թա՝ չէ՛, օզում ըմ ծըեզ բութա անեմ, կյամ։ Տահանք ասում ըն՝ մզնըհետ կյամիլ, տա զոռավ նիըտնեն ա ինգյո՛ւմ, քյինա՛մ։ Հղեննի քյինա՛լիս երգյինքյա՛ն մին շոխկ ա վըեր կյամ, տահանց կլխավը սա՛րին ընելավ քյինա՛մ։ Էտ մարթն ասում ա. - Էն շոխկն իմ դարդա՛ս ա եկալ։ Տահանք խոսում չըն։ Վըեր տըեղ ըն հսնում, էտ հըրուստ-նեն մին հարուստ տոն դոնաղ ըն ինգյո՛ւմ, էտ քյա՛սիբն էլ մին իրփիվերի, վեց-օխտը խո՛ւըրդա՛ խուլխատար, քյա՛սիբ կնգան տոն։ Էտ կնգանը տանն էլ ուտելի վըեչ մին պեն չի ինո՛ւմ, ճարը կտրած, կուրկըքարերը նի յա տամ

ղզղանը, տինո՞ւմ կրակեն յիրա՝, վըեր խոխեքյը գյիղա՝ն թա ղզղանումը պեն կա: Անց ա կենում մին քանի ժամ, էտ կնեգյը ղզղանը կրական վըեր չի օնում: Ղոնաղը տրան ասում ա. - Ղզղանեն պենն իփա՝ծ կին ի, վըեր կալ տո խուխոցը, ախուս ըրա, վըեր քոն ինին: Կնեգյը թա՝ հա՝լա՝ իփած չի ինիլ, կիփի իլի: Վէրչը, էրկան վըեր կենում ա, խոխեքյը քունավ ըն հնցընում, կնեգյն էլ ընդըեղ ա թողում կրակն իրիլիս, քունավ հնցընում: Էտ ղոնաղը քյինա՝մ ա ղզղանը պեց անում, տըեսնում կուրկըքարերը նի տուված մաչը: Տա ամմեն հինչ կլխու վա ինգո՞ւմ: Քշերեն կեսին եր ա կենում, քյինա՝մ մին վըեխճար կյուղանում, պիրո՞ւմ տոն, կուրկըքարերը ղզղանան տո՞ւս տամ, վըեխճարը մորթում, մաշկում, կտորում, նի տամ ղզղանեն մաչը, կրակեն տակը տամ: Վըեր լո՞ւսա՝նո՞ւմ ա, խոխեքյը եր ըն կենում, մորը եր կըցնում, թա սոված ընք, ուտելի պեն տո: Մարն ասում ա. - Իփա՝լ չի, պատառ էլ կացեքյ, իփի: Մին խիլլա՝ վըեր կենում ըն, ղոնաղն ասում ա. - Ղզղանեն եշի,կիփի, կըլխե, խուխոցը հաց տո օտեն: Էտ կնեգյը լիհա՝ հմընչիլա՝ն ղզղանը պեց ա անում, եշում, տըեսնում մսավ լիզյը: Շատ ա ուրխանում, իփա՝ծ մսերը տո՞ւս տամ խուխոցն էլ տամ, դունաղեն էլ: Ղոնաղը հաց ա օտում, քինյա՝մ տո՞ւս կյամ ընդեղ, վըերդըեղ վըեր պիտի հաջի տըեռնա: Էն երկու հարուստ մարթն էլ ըն քյեցած ինո՞ւմ, նահանց յոր չն օնում, էտ քյասիբին էլ տըեսնում ըն, վըեր ըբուռեն, հալալ, խղճըմըտանքավ մարթ ա, յոր ըն օնում, հաջի շինո՞ւմ, ետ դարկում ո՞ւրա՝ն երգյիրը: Վըեր հղե յըն ինո՞ւմ, թա քինյա՝ն, էտ քյա՝սիբը էն էրկուքանոցը թա՝ պա վըեր ասում ըմ էն շոխկը ինձետե յա դարկած:

## 68.ՀՈԳԵԱՌԸ

Մին մարթ առանց ղոնաղ հաց չար օտում: Մին օր շատ եշում ա, եշում, տըեսնում, վըեր տոնը մարթ չի կյամ, խուրջինը օմուքն ա քցո՞ւմ, տանան տո՞ւս կյամ, հղե ինո՞ւմ, վըեր քյինա՝ տըեսնա հիշտե՞ղ ա մարթ պտահում, հանցու վըեր նհետը նստե, հաց օտե: Շատ ա քյինա՝մ, թա խրեգյ, մին ըխպըրու դրաղ ա տո՞ւս կյամ: Շատ սուվըծացած ա ինո՞ւմ, օզում ա լիհա՝ վըեր նստե հաց օտե, բո՞ւրդա՝ն հրիշտրա՝կը տո՞ւս ա կյամ տրա առաչը: Տա խիլլա՝ վախում ա: Հրիշտրա՝կն ասում ա. - Վախումիլ, ես քու ախպըեր ըմ: Էտ մարթը թա՝ ես ախպըեր չօնեմ: Հրիշտըրա՝կը ասում ա. - Եկալ ըմ, վըեր քեզ մին պեն ասեմ: Մինչև կյանքետ վէրչը փըսակվեսվուչ, վըեր

փըսըկվեցեր, հենց առաչին օրը մըռնըլական ըս: Ասում ա, քյինա̈մ: Էտ մարթը մտածում ա, մտածում, ետնան էլ թա՝ դե հի՞նչ պիտի անեմ, օզած-չօզած պիտի փսակվեմվուչ: Էտ խոսկը ըսկանալան ետը տա կլո̈խ ա յոր օնում, ինգյո̈ւմ ծըմըկնեն, ասում ա վըեր ետ քյինա̈մ տոն, իմ հա̈ր, իմար, պարեկամնես, հնգերունքս յիրա̈ յըն տըռնըլական ըստիբին, վըեր փսակվեմ: Տա ծմըկներումը կենում ա, շորերը լոխ ճղորտվում ա, իրեսը մզըկալում:

Մին օր էրկու ըստրաժնիկնե տո̈ւս ըն կյամ տրա առաչը, տրա յիրա̈ կզնըվում, ասում. - Թաքավըերը մըեռալ ա, ժուղովուրթը լոխ հըվաքվում ըն, վըեր թաքավըեր ճոկեն, տու ըստըեղ հինչ ը՞ս անում: Էտ մարթին փռնում ըն, տանում թաքավըերեն պըլատեն ըոըչին մին դո̈ւզ տըեղ: Տա եշում ա, տըեսնում ժուղոէլ թաքավըեր ըն տիննական: Տա վըեր եշում ա, տըեսնում լոխ լա̈վ կյեցված մըեծ-մըեծ պաշտոնու մարթիքյ, ինքյն էլ ճղորտված շուրերավ, հըմընչիլան մին դրաղ տըեղ կուչոռ ա անում: Ղուշը պեց ըն թողում, թուշ կյամ ա տրա կլխեն վըեր կյամ: Հըվաքված մարթիքյ ասում ըն թուղեցեքյ ռաղ ինի, տրանա թաքավըեր չի ինիլ: Ղուշը նորից ըն պեց թողում, էլլա յա կյամ տրա կլխեն վըեր կյամ: Ժուղովուրթն ասում ըն. - Հա̈լբա̈թ սրանում մին հինար կա, մին պեն կա, վըեր դուշն իրեք դո̈նում էլ սրա կլխեն ա վըեր կյամ: Պիրո̈ւմ ըն տրան թաքավըեր տինո̈ւմ, տանում համամ, լըղըցնում, իրեսը վըեր անում, շորերը փոխում, թաքավըերեն ըխճըկանը նհետ փսակում: Սո̈ւրթա̈ ո̈ւրո̈ւգյո̈ւնը վըեր տա պիտի կնգանը նհետ անց կըցընե, ղասիդա̈նա̈ յըտըցնում ա, շըլըմուլի յա անում, կնեգյն էլ թա՝ տըեսնում ըմ, վըեր մին դա̈րդ օնես, ասում չըս, ասե, տըեսնամ հի՞նչ ա պըտահալ: Տա թա քզանա հի՞նչ կյեղեմ, հրիշտրա̈կը իստի պեն ա ասալ: Կնեգյը թա՝ հըսըրնեն հունց պընդըցրած ա, պահակնեն հունց վըեննը կացած ըն, վըեչ մին հրիշտրա̈կ կարել չի մուտանա: Տա լիհա̈ շորերը հանում ա, վըեր նի մննե տըեղը, հրիշտրա̈կը կյամ ա կոխկեն վըեննը կենում, թա պա քեզ հի՞նչ ըմ ասալ: Էտ մարթն ասում ա. - Լա՛վ, սըխալված ըմ: Հրիշտրա̈կը թա՝ դե վըեր սըխալված ըս, ճելլ ըրա հոքիտ տո, վըեր տանեմ: Տա թա՝ պա իմ ախպըեր չը՞ս, թող լիհա̈ աղոթկ անեմ պրծնեմ, ետնան էլլա հոքիս առնում ըս, առ: Հրիշտրա̈կը թա քըեզ քսան մնուտ ժամանակ ըմ տամ, մենակ տու չըս, օրիշ տըեղ էլ պիտի քյինա̈մ: Տա ո̈ւրա̈ն աղոտկը շատ էրկան ա անում, հրիշտրա̈կը միշտ թայդի յա տամ, թա ճելլ ըրա, տա

յըտըցնում ա: Վերչը, հրիշտրա̀կը տըեսնում ա, վըեր շատ ա յըտանում, ճարը կտրած, թողում ա, քյինա̀մ, էտ մարթին ասում.- Իսկական հրիշտրա̀կը էս դո̀նո̀ւմ տու տըեռեր, հիշքան օզում ըս, ապրե:

## 69.ԻՐԵՔ ԿՈԼԱՆ

Ժուկով ժամանակով մին հարուստ մարթ ա իլա̀լ: Էս հարուստը վեր պըռավում ա, ո̀ւրա̀ն իրեք տղեն ծեն ա տամ, պո̀ւրո̀ւմ ո̀ւրա̀ն կոշտը և իրեք հատ կոլա տնո̀ւմ ըռշներեն: Էս կուլեն մինը վըեսկուց ա ընո̀ւմ շինա̀ծ, մինը քյահրիբարից, իսկ իրեքինջինը՝ վեղա: Հա̀րը ասըմա. - Բալա, ամեզյը մինը եր կալիքյ:

Մեծ տղան ճելլ ա անըմ վեսկա շինած կոլան յոր օնում, մաշնակը՝ քյահրբարից շինա̀ծը, իսկ պիծի տղան՝ վեղե կոլան: Հա̀րը ասըմ ա, - Դե՛, ակը տվեքյ տեսեքյ մաչին հի՞նչ կա:

Մեծ տղան կոլան պրանըմ ա, մաչան ա̀րո̀ւն ա թափվում, մաշնակեն կուլեն մաչան՝ մոխեր, իսկ պիծի տղեն կոլան, վեր վեղից ա շինված, իրեք տառ ա վեր ըղնում, այս տառերն են՝ սեր:

Սրանավ հա̀րը օզում ա ո̀ւրա̀ն խուխոցն ասել, վեր վեղը ամենալա̀վն ա և բեղմա սիրել, քանի վեր ամեն հինչ վեղան ա կույանըմ:

## 70.ՄԱՐԹԸ ՆԱՆ ԱՐՉԸ

Մին մարթ քյինա̀մ ա, թա շոռ կյա ո̀ւրա̀նց կորած կովը քթենա: Քըթենո̀ւմ չի: Շատ վըեր շոռ ա կյամ, նղանում ա: Հավան էլ ցորտ ա ինո̀ւմ, արդեն մըթնըժոռած: Կրակ ա անում, վըեր համ մխըրե թքանա, համ էլ դինջանա: Բո̀ւրդա̀ն մին արչ կյամ ա կոխկեն վըեննը կենում: Տրա սուր-փաստուծը կտրում ա, շատ ա վախում, ըսկսում ա տո̀ւղտո̀ղալը, զյո̀ւղո̀ւմ չի թա հինչ անե: Լիհա̀ ինդի դեղինա̀ ծեռքը տանում ա բիդի չինա̀տակը: Եշում ա տըեսնում արչն էլ ո̀ւրա̀ն ըռաչի թա̀նթո̀ւլն ա տանում բիդի ո̀ւրա̀ն չինա̀տակը: Մինզյել ըսկսում ա վիզը քորելը: Արչն էլ ա վիզը քորում: Մինզյել ծեռքը տանում ա բիդի վեննը: Արչն էլ ո̀ւրա̀ն թա̀նթո̀ւլն ա տանում բիդի վեննը: Վերչը, տա հինչ վըեր անում ար, արչն էլ հա̀մա̀ն էտ պենը մարթին մնան լոխ անում ա: Էս մարթը մնամ ա ըրմացած: Օզում ա արչին մին քյա̀լա̀զյ կյա, նեստա ըզըղվե, դե էլ օրիշ թա̀հրը չի կա, հինչ կըկա՞րե անե: Տի վըեր շատ մըտածում ա, արչն էլ սուս ըրած տրան եշում ա, թա

տեսնա տա հինչ ա օգնում անե։ Էս մարթը բո՛ւրդա՛ն մին իրիլիս խանձուղ ա յոր օնում, բիդի ո՛ւրա՛ն ջանը տանում։ Արչն էլ մին օրիշ իրիլիս խանձուղ ա յոր օնում, բիդի ո՛ւրա՛ն ջանը տանում։ Էտ անդարն էլ խե շատ պիրթպրթո՛տ ա ինո՛ւմ, կրակը մազերը փռնում ա, ընկնում ալավ ինգյիլը։ Արչը ընկնում ա վազ-վազ անելը, հիշքան վազ-վազ ա անում, էնքան շատ ա ջանը ալավ ինգյո՛ւմ։ Վերչը, մարթը տըեսնում ա, վըեր արչն էն ա շաղված, ո՛ւրա՛ն անավ իլա՛ծ, թողում ա փախձում։

## 71.ԱՂՎԸԵՍԸ ՆԱՆ ԿՅՈ՛ՒԼԸ

Մին աղվըես, մինգյել մին կյո՛ւլ ըխպըրանում ըն։ Աղվըեսն ասում ա- Կյո՛ւլ ախպըեր, եք սօր քու հաշվիտ ապրենք։ Կյո՛ւլն ասում ա՝ լա՛վ։

Հղե յըն ինո՛ւմ, քյինա՛մ։ Շատ ըն քյինա՛մ, թա խրեգյ, հանդի ըրըծելիս մին եզն ըն տըեսնում։ Քյինա՛մ ըն մուտանում։ Կյո՛ւլն ասում ա.- Աղվըես ախպըեր, ըշկըերես եշի, տըես լամբու մնան նի յա՞ կենում։ Աղվըեսը եշում ա, տըեսնում կյո՛ւլին աշկըերը կըտըղըեյան կըրմըրա՛լ ա, ասում ա.-Հա՛, կյո՛ւլ ախպըեր, ընջուկնետ դիքյ-դիքյ վըենն ա կացալ, մազերըտ ըսըղներու մնան ցըեց ա կաց ալ։ Կյո՛ւլն անց ա կենում ըղվըեսին քամակը, ասում.- Աղվըես ախպըեր, տըես հա՛քյիս դուրբա յա՞ տըեռալ, քամակըս քյինա՛մ ա-կյա՞մ։ Աղվըեսն ասում ա.-Հա՝, կյո՛ւլ ախպըեր, հա՛քյիտ դուրբա յա տըեռալ, քամակըտ քյինա՛մ ա-կյամ։ Կյո՛ւլն ասում ա.-Հա՛, աղվըես ախպըեր, մեհենգյ եշի, տըես հի՞նչ պիտի անըեմ։ Ասում ա, մեհետ լոք տամ, ծառս ինո՛ւմ, եզանը պըկան փըռնում, տինո՛ւմ տակըեն, հախըռամիշ անում, մին լա՛վ օտում, մոշոտը մաչին պըանվում չերը լո՛ւսը։

Մին օր կյո՛ւլն ըղվըեսին ասում ա.-Դե, մեհենգյ հերթը քունն ա տըեսնանք հինչ ըս անում։

Հղե յըն ինո՛ւմ, քյինա՛մ։ Շատ ըն քյինա՛մ, թա խրեգյ, մին ծի յա պըտա-հում։ Քյինա՛մ ըն մուտանում, աղվըեսն ասում ա.-Կյո՛ւլ ախպըեր, եշի տըես աշկըերըս լամբու մնան լո՛ւս ա՞ տամ։ Կյո՛ւլը տըեսնում ա, վըեր ըղվըեսին աշկըերը իսկի յել փոխվալ չի, ասում ա.-Չէ՛, աղվըես ախպըեր։ Աղվըեսն ասում ա.-Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ կըրմըրալ ա։ Կյո՛ւլն ասում ա, - Դե լա՛վ, նըղանալ միլ, կըրմըրա՛լ ա։

Մինգյել աղվըեսն ասում ա. - Կյո՛ւլ ախպըեր, եշի տըես ընջուկնես դիքյ-դիքյ վըենն ը՞ն կացալ, մազըերըս ըսըղնըերու մնան ցըեց ը՞ն կացալ։

Կյո՛ւլը եշում ա, տըեսնում ըղվըեսին ընջուկնեն դիքյ-դիքյ վըննը չըն կա-ցալ, մազերը ըսըղնըերու մնան ցըեց չըն կացալ, ասում ա.-Չէ՛, աղվըես ախպըեր, ընջուկնետ դիքյ-դիքյ վըեննը չըն կացալ, մազըերըտ ըսըղնըերու մնան ցըեց չըն կացալ: Աղվըեսն ասում ա.-Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ ընջուկնետ դիքյ-դիքյ վըենն ըն կացալ, մազըերըտ ըսըղնըերու մնան ցըեց ըն կացալ: Կյո՛ւլն ասում ա. - Դե լա՛վ, նըղանալ միլ, ընջուկնետ դիքյ-դիքյ վըենն ըն կացալ, մազըերըտ ըսըղնըերու մնան ցըեց ըն կացալ:

Աղվըեսն ասում ա.- Կյո՛ւլ ախպըեր, անց կաց քամակըս: Կյո՛ւլն անց ա կենում ըղվըեսին քամակը: Աղվըեսն ասում ա.- Կյո՛ւլ ախպըեր, եշի տըես հա՛քյիս դուրբա յա՞ տըեռալ, քամակըս քյինա՛մ ա-կյա՞մ: Կյո՛ւլը տըեսնում ա, վըեր ըղվըեսին հա՛քյին դուրբա չի տըեռալ, քամակը քյինա՛մ չի-կյամ, ասում ա. - Չէ՛, աղվըես ախպըեր, հա՛քյիտ դուրբա չի տըեռալ, քամակըտ քյինա՛մ չի-կյամ:

Աղվըեսն ասում ա.-Քու հինչ պե՞նըտ ա, ասըե՝ հա՛քյիտ դուրբա յա տըեռալ, քամակըտ քյինա՛մա-կյամ: Կյո՛ւլն ասում ա,- Դե լա՛վ, նըղանալ միլ, հա՛քյիտ դուրբա յա տըեռալ, քամակըտ քյինա՛մ ա-կյամ:

Աղվըեսն ասում ա.- Կյո՛ւլ ախպըեր, դե մեհենգյ տըես հի՞նչ ըմ ըննա-կան: Ասում ա, համ էլ լոք-լոք ընըելավ բիդի ծին մուտանում: Ծին ըղվըեսին կլխըեն մին հունց քացի յա տամ, վըեր աղվըեսը բոյավը մին մըեկնվում ա:

Կյո՛ւլն ասում ա. - Աղվըես ախպըեր, մեհենգյ, վըեր աշկըերըտ կըըմը-բալ ա, ընջուկնետ դիքյ-դիքյ վըենն ըն կացալ, մազըերըտ ըսըղնըերու մնան ցըեց ըն կացալ, հա՛քյիտ դուրբա յա տըեռալ, քամակըտ էլ քյինա՛մ ա-կյամ:

## 72.ԾԸՏԵՆ ՕՅԻՆԸ

Մին ծըետ ա ինում ծառըեն ճուղանը նստած: Ծըետը ծըըտում ա, տիրնեն ասում.- Եք քամակըս սիրփի: Տիրնն ասում ա՝ կյալ չըմ: Ծըետն ասում ա.- Կը քյինա՛մ վըխճարեն ասըեմ, կըկյա՛ քեզ օտըե: Տիրնը թա՝ քյինա՛:

Ծըետը քյինա՛մ ա վըխճարըեն ասում.-Քյինա՛ տիրնեն կեր: Վըեխճարն ասում ա. - Էն կանանչ խոտը թուղըլական ըմ, քյինա՛մ չոր տիրնը՞ օտըեմ: Ծըետն ասում ա.- Տըես, քյիննական ըմ կյո՛ւլին ասըեմ, կյիլական ա քեզ

օտըէ: Վըեխճարն ասում ա՝ քյինա̀: Ծըետը քյինա̀մ ա կյո̀ւլին ասում.-Քյինա ընդըեղ՝ մին վըեխճար կա, կեր: Կյո̀ւլը թա՝ էն քյոք տըվըրնըեն թուղըլական ըմ, քյինամ վըեխճարը՞ օտըեմ: Ծըետը թա՝ քյիննա̀կան ըմ նըղարաչուն ասըեմ, կյիլա̀կան ա քեզ դըռըըցնէ: Կյո̀ւլը թա՝ քյինա̀:

Ծըետը քյինա̀մ ա նըղարաչուն ասում, նըղարաչին էլ թա՝ էն լա̀վ-լա̀վ հիսընքեքյը թուղըլական ըմ, քյինա̀մ կյո̀ւ՞լ փըխճըցնեմ: Ծըետն ասում ա.- Տըես, կըքյինա̀մ մոկնեն ասըեմ, կըկյա̀ նըղարատ ծակէ: Նըղարաչին էլ ասում ա՝ քյինա̀: Ծըետը քյինա̀մ ա մոկնեն ասում.-Քյինա̀ նըղարաչուն նըղարան ծակէ: Մոկունն էլ ասում ա.- Էս փափուկ հացը, ցորենը, կյա̀րին թուղըլական ըմ, քյինա̀մ էն չոր նըղարա՞ն ծակըեմ: Ծըետն էյ ասում ա.- Քյիննա̀կան ըմ կատվեն ասըեմ, կյիլա̀կան ա քեզ օտըէ: Մոկունն ասում ա՝ քյինա̀:

Ծըետը քյինա̀մ ա կատվեն ասում.- Ընդըեղ մին մոկուն կա, քյինա̀ կեր: Կատուն էլ ասում ա.- Էս լա̀վ մածունը թողած, քյիննա̀կան ըմ էն հարամ մոկո՞ւնն օտըեմ: Ծըետն ասում ա.-Քյիննա̀կան ըմ պըռավըեն ասըեմ, կյիլա̀կան ա քեզ թակէ: Կատուն թա՝ քյինա̀:

Ծըետը քյինա̀մ ա պըռավեն կոշտը, ասում.- Էն կյող կատուն մածունը կերալ ա: Պառավը էվո̀ւլը յոր ա օնում, քյինա̀մ կատվեն թակում, կատուն կյամ ա, թա մոկնեն օտըէ, մոկունը քյինա̀մ ա, թա նըղարան ծակէ, նըղարաչին քյինա̀մ ա կյո̀ւլին դըռըըցնում, կյո̀ւլը քյինա̀մ ա, թա վըխճարեն օտըէ, վըեխճարն էլ քյինա̀մ ա, թա տիրնն օտըէ, տիրնը քյինա̀մ ա ծըտեն քամակը սիրփում, ծըետն ուրխացած ծուվծուվում ա, երք ասում.-Հոր հանած ըմ, մոր պահած ըմ, ա̀զիզ-պիզիզ թիռչըցրած ըմ:

## 73.ԷՐԿՈՒ ՏՈՆ ԲԻՐԱ̀ԴԻ ՔԱ̀ՆԴՎԻՑ...

Ա̀վա̀լի վախտը քոչը սարն ա պիցրընա̀լիս իլա̀լ էն վախտը, վըեր դուշըերն ո̀ւրա̀նց հետէ պո̀ւՆ տինիլիս ըն իլա̀լ: Մին օր մին հարուստ մարթ հա̀նդա̀ն տոն կյա̀լիս տըեսնում ա՝ մին քոլու մաչի մին մուշահավ ո̀ւրա̀ն պո̀ւնո̀ւմը ճոտը հանալ ա: Տա ծին քշո̀ւմ ա, կյա̀մ տոն, նո̀ւքյըրներեն ասում.-Պա կյա̀լիս մուշահավ ըմ տըեսալ ճուտըհանած, էս տարէ մունք սավա ինգյեցենքյ, մըեր հեյվանը հիբ ը՞նք սար տըննական, սօր պաղրաս-տություն տըեսեքյ, վըեր էս քշեր պիցրա̀նանք սարը, մըեր քյո̀հնա յուրդը: Նո̀ւքյըրնեն մնամ ըն զըրմացած՝ տարվա էս վախտը հու վա՞ քյեցալ սարը,

վըեր ո̈ւրա̈նք պադրաստություն ըն տըեսնում: Վըեր խազայինն ասում ա, ո̈ւրա̈նց հինչ ա՞ իլա̈լ, հա̈լբա̈թ մին պեն գյո̈ւդո̈ւմ ա:

Էտ հարուստ մարթն ո̈ւրա̈ն իլխավը, չուբըններավը պիցրա̈նում ա սարը՝ ո̈ւրա̈նց յուրդը, տըեսնում ավերակ տըեռած: Մինչև յուրդն ո̈ւրո̈ւր կանեն, էտ քշեր մին քամե յա պիցրա̈նում, վըեր օզում ա, թա տըեղեքյ պուկե: Ըլըչափան մին տըեղան ա վըեր թակում, ցորտն էլ մին տըեղան ա ղըռըխմիշ անում, հիյվըննեն էլ հիքյըվըրնեն ո̈ւրա̈նց ըն քաշալ, հոփ եկալ, տըեռալ մին կծեզյ: Չուբըննեն յափրնջոցումը պըպըզալ ըն, կոչ եկալ:

Էտ քշեր էնքան ծո̈ւն ա կյամ, վըեր հիյվըննըեն լոխ կուտորվում ըն: Էտ հարուստ մարթը քոռ ու փեշման հղե յա ինո̈ւմ, կյամ տոն: Կյա̈լիս մուշըհավըեն պո̈ւնը մըեննն ա ինգյո̈ւմ, քյինա̈մ տըեսնում հի՛նչ... Մուշահավն ո̈ւրա̈ն պո̈ւնո̈ւմը թևերը ետ ա տարալ ճուտերեն յիրա, ինդի յէլ սառալ ո̈ւրա̈ն ճուտըերավը: Էտ հարուստ մարթը մուշըհավեն ասում ա.-Այ անաստված, թա տու իմ տոնըս քընդեցեր, քու տոնըտ էլ կըլխետ աստուծ քա̈նդից:

## 74.ՇՈՆԸ ՆԱՆ ԿՅՈ̈ՒԼԸ Ո̈ՒՐՈ̈ՒՐ ՆՀԸԵՏ ԽՈՍՈՒՄ ԻՆ

Օվչի Փիրումը հիշքան հեյվան, կյո̈ւլ, կյեզան կա, լոխճինին լո̈ւզին գյիդա̈լիս ա ինո̈ւմ: Մին օր մին տան դոնաղ ա ինգյո̈ւմ, ո̈ւրո̈ւլգյո̈ւնը կյո̈ւլին օռնուցը նան տնատըեռը շանը հաչուցը ընջուկավն ա ինգյո̈ւմ: Կըլո̈ւխ ա ինգյո̈ւմ, վըեր կյո̈ւլը շանն ասում ա. - Սոված մըեռնում ըմ, տու քու տըեռը տըռնան դրաղ կաց, մին վըեխճար տանեմ օտըեմ: Շոնն էլ ասում ա.-Էս ո̈ւրո̈ւլգյո̈ւնն իմ տարըս վըեխճար ա մուրթըլական, թա իմ փայըս ինձ տան օտըեմ, ըստըղերքաս մուտանաս վուչ, թա մըսան ինձ փայ չի տան, ես հեռու վըմ կըննական, կըկյաս նի մննես վըխճըրներեն մաչը, լոխ կուտորես:

Ո̈ւրո̈ւլգյո̈ւնը տնատարը վըեխճար ա մորթում, օվչի Փիրումն ասում ա. - Վըխճարեն կեսը տո էն շանը, վըեր ես քու հացատ կըտրեմ: Տնատարը վըխճարեն կեսը տամ ա շանը, շոնը մին լավ օտում ա, վըխճըրներեն դալեն քըշտին նստում: Կյո̈ւլը կյամ ա, ասում. - Պա հինչ տըե՞ռավ, սոված մըեռնում ըմ: Շոնն ասում ա.- Կո՛րի, դրա՛ղ քաշվի, թա չէ քեզ մուրթըհան կանըեմ: Կո̈ւլը փա̈սա̈-փո̈ւսա̈ն հըվաքում ա, հղե ինո̈ւմ:

## 75.ՃՈՐՈՒՆ ՊԻՃԸ ՄԻՆ ՏԸԵՂ ԻՆԻԼ ՉԻ

Մին արչ, մինգյել մին աղվըես հնգըրանում ըն, հղե յըն ինո̈ւմ, բիրա̈նդի քյինա̈մ մին հեռու տըեղ, տըեսնում հա̈նդի մին ճորե յա ըրածում: Մուտանում ըն, ճորուն պարյօր տամ, ետնան աղվըեսն ասում ա.- Ճորե ախպըեր, եք հնգըրանանք, էրկու չինինքյ, իրեք ինինքյ: Ճորեն ասում ա.- Ես խուտակեր ըմ, տուք՝ մսակեր, հունց կըկա՞րենքյ հնգըեր տըեռնանք: Աղվըեսն ասում ա.- Վըեչինչ, ճորե ախպըեր, մունք էլ խոտ կօտենքյ, կըսուվըրցնըես…

Արչը նան աղվըեսը տըեսնում ըն, վըեր ճորեն պեն գյո̈ւղո̈ղ ա, միշտ աշկեն տակավն ո̈ւրա̈նց եշում ա, թա տըեսնա հինչ ըն անում: Տահանք էլ օգնում ըն ճորուն կլո̈խը վարեն, խափին, փըռնեն վըեր քցին, օտըեն:

Մին օր իրեքան հըվաքված վախտը արչն ասում ա.- Առաչ վըխճըրնեն առանց չոբան ին ըրածում, ես մաշկըս Ըսկյըրա̈նին պըտերեն[1] տեմ ի անում, վըեր սուվըծանում ի, հենց իտի մաշկըս տեմ ըրած էլ մին վըեխճար ի օտում, պրանվում. ըտըեղ հա̈րո̈ւրիծծուն տարե ապրալ ըմ: Աղվըեսն ասում ա.- Արչ ախպըեր, տու ինձա̈նա̈ իծծուն տըռնավ մըեծ ըս, մըեր քշտին մին ծո̈ր կա, էտ ծո̈րո̈ւմը մին հավու փիրմա կար, փիրմին յիրա̈ յէլ պահակ չի կար, հավըերն ո̈ւրա̈նք-ո̈ւրա̈նք ծո̈ւ վին ածում, ո̈ւրա̈նք- ո̈ւրա̈նք ճուտըհանում, վըեր սուվըծանում ի, մին հավ ի փռնում, օտում. ըտըեղ հա̈րո̈ւր տարե ըպրեցե: Արչն ասում ա.- Ճորե ախպըեր, տու՞ քանի տըրեկան ըս, մին պերանըտ պեց ըրա, տըեսնամ:

Ճորեն ասում ա.- Ես վըեր իլալ ըմ[2], իմ հա̈ր նալնես տակեն իլված թիվըս կյիրա̈լ ա, հու վըեր կարթիլը գյո̈ւղո̈ւմ ա, մուտանա, եշի տըեսնա: Աղվըեսն ասում ա.-Իմ հա̈ր ինձ ըշկոլ չի տուվալ: Արչն ասում ա.- Ես կա̈րթիլը գյո̈ւղո̈ւմ ըմ: Մուտանում ա, վըեր կարթի, ճորեն արչին հունց քացի յա տամ, արչը իրեք հետ մըրըլլախե յա տամ, տափըեն վըեր ինգյո̈ւմ:

Աղվըեսն արչին հա̈լը վըեր տըեսնում ա, հա̈քյին ծալում ա. ղրաղ քաշվում, քյինա̈մ բիդի կոխկե սարը: Ճորեն ասում ա.- Աղվըես ախպըեր, պա ինձ մենակ ըս թողում, թորը՞ քյինա̈ս: Աղվըեսն ասում ա. - Էն սարեն կլխըեն իմ հա̈ր ա թաղած, քյինա̈մ ըմ կյիրեզմանն օրհնըեմ, վըեր ինձ կըրթըցրալ չի, թա չէ, ես էլ արչին օրը կինգյի:

[1]*Խոսքը Ասկերանի բերդի մասին է (Ծ. Բ.):*
[2]*Ծնվել եմ (Ծ. Բ.):*

76.ԸԽՇԱՐՔԸԵՍ ՄԱՐԹԻՔՅՆ[1] ԸՆ ՇԱ՞Տ, ԹԱ ԿՆԱՆԵՔՅԸ

Թաքավըերն ըրազումը մին շատ դա՜շա՜նգյ ախճիգյ ա տըեսնում: Սաղ ախշարքը շոռ ա կյամ, շատ քաշ-քաշ ինիլա՜ն ետը, վերչը, մին օր էտ ըխճըկանը քթեննում, տրան թա՝ ես էսիինչ երգյիրին թաքավըերն ըմ, օզում ըմ քըզնըհետ փսակվըեմ: Էտ ախճիգյը թա՝ ըռըշկիտ մին պայման ըմ տինում, վըեր կըրեցեր կըդարես, ես կյամ ըմ քե: Թաքավըերը թա՝ ասե: Ախճիգյը թա՝ վըեր կըրեցեր դուշու վըեսկուռա էրկու ըտըժանե պալատ շինիս, կըկյամ քե:

Թաքավըերը քյինամ ա ուրա՜ն երգյիրումը քանի ջուռա դուշ կա, ամմըենան մին ներկայացուցիչ պիրիլ տամ, վըեր մսլըհաթ անըեն, տըեսնան հինչ ըն անում:

Ամմըեն ջուռա դուշան մին ներկայացուցիչ ա կյամ, բեյղուշը կյամ չի: Մին խիլլա՜ վախտ անց կընալան ետը բեյղուշն էլ ա կյամ: Թաքավըերը տրան հըրցնում ա, թա՝ խե յը՞ս յըտացալ, բեյղուշն ասում ա. - Ծըեռքես պեն ա իլալ, թա չէ, ճելլի կըկյի: Թաքավըերը մտածում ա, ասում էս դուշին էրկու հարց ըմ տըլական, թա վըեր կարեց պադասխանըե, սրա ցեղեն պեց ըմ թուղըլական, թա չէ՛, չէ՛: Թաքավըերը բեյղուշին հըրցնում ա.- Ըխշարքըես մըռըլնեն ը՞ն շատ, թա՝ սաղըերը: Բեյղուշը թա՝ մըռըլնեն: Թաքավըերը թա՝ խե՞: Բեյղուշը թա՝ մարդկությունը վըեր ըստեղծվալ ա, մըեռնելն էլ նհետն ա ըստեղծվալ. հիշքան վըեր ծնվալ ըն, լոխ մըեռալ ըն, հիշքան վըեր ապրում ըն, տահանք էլ ըն լոխ մըռնըլական, հիշքան վըեր ծնվըլական ըն,նահանք էլ ըն լոխ մըռնըլական, տրա հետե յել մըեռած մարթիքյ շատ ըն, քանց սաղըերը: Թաքավըերը մին հարց էլ ա տամ: Հըրցնում ա, թա ըխշարքեն մարթիքյն ըն շա՞տ, թա՝ կնանեքյը: Բեյղուշը թա՝ կնանեքյը: Թաքավըերը թա՝ խե՞: Բեյղուշը թա՝ կնանոցն անա կման մարթուցը մաչին հունցերը կան, վըեր կնգան խըելքավ ըն: Թաքավըերը թա էտ էլ ա դուզ: Տրանա ետը բեյղուշին ցեղը կտորում չի, պեց ա թողում:

[1]Տղամարդիկ:

## 77.ՎԸՐՑԱԿԸԵՆ ՇԵՆ ՔՑԻԼԸ

Մին պըռավու մին շոն, մինգյել մին վըերցակ ա ինհում: Պառավը տահանց շատ ար չըրչարում:

Մին օր էլ վըերցակը նան շոնը շենան տհւս ըն կյամ, կլհխ յոր օնում, քյինամ: Շատ ըն քյինամ, թա՝ խրեգյ, մթըեն ա ինգյհւմ: Մին ծմակու կոխկըե վըերցակը եր ա ինհում մին ծառ, շանն ասում. - Դե, տու կարըել չըս ծառը եր ինիս, մին քոլու տակըե կըչոռ ըրա, լհւսանա, էլլա հղըե կինինքյ, քյինանք:

Վըեր կյամ ա քշերեն կեսը, վըերցակը կանչում ա: Էտ կանչին յիրա մոտըե տըեղա մին աղվըես կլհխը պիցըրցնում ա, ասում.- Ըհ՛ը , թազա մըեսն հւրան վըեննավն ա եկալ: Քյինամ ա ծառըեն տակըեն պուպուզ կենում, դուդան կլխըյեր անում, վըրցակըեն ասում. - Խեր ինի՞, շենան տհւս եկած հիշտեղ ը՞ս քյինամ, վըեր մթըեն ըս ինգյալ, մնացալ ըստըեղ: Վըերցակն ասում ա.-Օզում ըմ ըստըեղ նոր շեն քցիմ, տըրա հետե յըմ եկալ: Աղվըեսը թա՝ պա լավ, վըեր մթըեն ըս ինգյալ, հոր ը՞ս մնացալ ըստըեղ, կըկյիր կոշտըս, քշերը քշտիս դոնաղ կըմնիր, էլլա քըշըրհանան լհւսավ հղըե կինիր, քյինիր: Ետնան էլ թա՝ դե՛, վըեր եք քյինանք, քշտիս կըկենաս, էլլա քշերավ եր կըկենաս, քյինաս՝ հիշտըեղ լավ կինի, ընդըեղ շեն քցիս: Վըերցակն ասում ա. -Դե, ես մենակ չըմ, էն ա շենին պլան տվողն էլ հանե՛ , էն քոլըեն տակըեն նստած, քյինա, հըրցրու, տըես ինքյն էլ ա՞ օզում կյա, բիրադի կըկյանք կոշտըռտ, էլլա ծաքյը ծիքյին եր կենանք, քյինանք:

Վըերցակը վըեր իտի յա ասում, աղվըեսը գյհւղհւմ ա, թա քոլըեն տակըեն թուխսըկան պեն կա հւրան ճուտըերավը նստած: Քյինամ ա, թա փոնըե, շոնը յիրա յա պրծնում, տըրա պկան փոնում, ըսկսում խեխտիլը: Աղվեսը մին թահիրավ տհւս ա պրծնում, փախճում: Փըխճիլիս բիդի վըերցակը եշում ա, ասում. - Ըստըեղեքյ վըեր տուք շեն քցիքյ, վըեչ մինն էտ շենումը կենալ չի:

## 78.ԿՅՈՒԼ ՆԱՆ ԲԱԽՐԱՆ

Մին ղուզղուն մին ծառու յիրա պ՚ՈՒն տիրած ա ինՈՒմ, ճոտըեր ըրած: Մին կյՈՒլ քյինած ա ղուզղուն են ասում.- Ճուտըերատ մինը վըեր քցի: Ղուզղունը թա՝ շըհըցըրալ ըմ քըզետե՞, խե յը՞մ վըեր քցՈՒմ: ԿյՈՒլը կեռքա-վը կըրծկըրծում ա, ծառը տական պարան տամ, ՈՒլրան կըլխեն վըեր քցՈՒմ:

ԿյՈՒլը մնամ ա ծառըեն տակըեն: Մին բախրա կյամ ա տըեղավ անց կենում, կյՈՒլն ասում ա. - Եք մին թահիր ըրա ինձ ըզադե, ես քեզ մըեծ լիվոթուն կանըեմ: Բախրան պոզըերը ծառըեն տակավն ա տամ, մխըրե պիցըրցնում, կյուլը ծառըեն տական տՈՒս ա կյամ, բախրան օզում ա թա հղե ինի քյինա, կյՈՒլը թա՝ վըեննը կաց, թաքուն պեն պիտի ասըեմ:

ԿյՈՒլը բըխրեն մուտանում ա, ասում.- ԳյՈՒլղՈՒմ ը՞ս, վըեր քեզ ուտըլական ըմ: Բախրան թա՝ քեզ ըզադալ ըմ, վըեր ինձ. ստըե՞ս, էտ ա՞ ընելիս լիվոթունըտ: ԿյՈՒլը թա՝ չէ՛, վըեր չէ՛, պիտի քեզ ստըեմ: Բախրան թա՝ դե էն վախտը քյինանք մին քանի հոքու անա հըրցնենքյ, տըեսնանք հինչ կասըեն, ետնան ինձ կստըես:

Հղե յըն ինՈՒմ, քյինամ: Մին խիլլա վըեր քյինամ ըն, ըղվըեսին ըն պըտահում: Բախրան հըրցնում ա, թա պա էս կարք ա՞, վըեր կա, ես ՈՒլրան ծառըեն տական տՈՒս օնըեմ, ինքը թա՝ քեզ ստում ըմ: Աղվըեսը թա՝ քյինա կորի, տու հինչ ը՞ս, վըեր ծառեն տական կյՈՒլ ըզադես, ծըեր ցեղը լիհա լոխ տի յըն, ծըեզ կտորելի յա: Բախրան կյՈՒլին ասում ա.- ՔյինաՔ ՈՒլրՈՒշՈՒ վըել հըրցնենքյ, տըեսնանք՝ հինչ ըն ասում:

Հղե յըն ինՈՒմ, քյինամ:

Մին խըեզյ վըեր քյինամ ըվ, արչին ըն պըտահում: Սրան էլ բախրան վըեր հըրցնում ա, արչը թա՝ չէ՛, տու կարալ չըս կյՈՒլ ըզադես: Արչը կյՈՒլին վըեր հըրցնում ա, կյՈՒլը թա՝ սոտ ա ասում, սա հինչ ա՞, հինչ օ՞ժ օնե, վըեր կարե տըեղան ծառ պիցըրցնե, հալա ինձ էլ ըզադե: Արչը կյՈՒլին թա՝ ծըենտ կըտրե, տու վըել չըս դՈՒզ ասում, քյինանք՝ տըեսնանք՝ էտ հի՞նչ ծառ ա:

Քյինամ ըն հըսնում ծառըեն կոշտը, արչը կյՈՒլին հըրցնում ա, թա հունց ը՞ս իլալ ծառըեն տակեն, մին նի մըտե, տըեսնանք բախրան կարում ա՞ քեզ տՈՒս օնըե, թա՝ չէ:

ԿյՈՒլը վըեր ծառը պիցըրցնում ա, նի միննում տակը, ծառը պեց ըն թողում, կյՈՒլը մնամ ա տակըեն: Արչը կյՈՒլին թա՝ քու տըեղըտ էտ ա, տըեղատ տՈՒս չի կյաս, բըխրեն էլ թա՝ կյՈՒլին կործըեն խառնվըեսվուչ:

79.ԸՂՎԸԵՍԻՆ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ...

Մին օր աղվըեսը հղե իլյա̈ծ քյինյա̈մ ար: Ըլբաստրակր հղեննի պըտա-հում ա, հըրցնում, թա հիշտեղ ը՞ս քյինյա̈մ: Աղվըեսը թա՝ քյինյա̈մ ըմ հըր-սանեքյ: Ըլբաստրակը թա՝ ես էլ ըմ կյամ: Աղվըեսը թա՝ մին չինինքյ, էրկու ինինքյ, քյինյա̈նք:

Հղե յըն ինմ, քյինյա̈մ: Մինգյել կյո̈ւլն ա պըտահում, հըրցնում, թա հիշտեղ ը՞ք քյինամ: Տահանք թա՝ հըրսանեքյ ընք քյինյա̈մ: Աղվըեսը թա՝ էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինյա̈նք:

Մին խիլլյա̈ յէլ վըեր քյինյա̈մ ըն, արջն ա պըտահում, հըրցնում, թա հիշտեղ ը՞ք քյինյա̈մ, տահանք թա հըրսանեքյ ընք քյինյա̈մ: Աղվըեսը թա՝ իրեքյ չինինքյ, չորս ինինքյ, քյինյա̈նք:

Հղե յըն ինո̈ւմ, քյինյա̈մ: Շատ ըն քյինյա̈մ, թա՝ խրեգյ, հըսնում ըն մին փոս, տակը կարան: Աղվըեսը թա՝ է՛ս ա, ըստըեղ ա հըրսանեքյը: Լոխ հերթավ լոք ըն տամ, նի մննում փոսը, ընդըեղան էլ՝ կարանը: Վըեր նի յըն մննում, տահանք ըղվըեսին հըրցնում ըն, թա՝ պա սուվըծացյալ ընք, հոր ա՞ հըրսանեքյը: Աղվըեսը թա՝ հյա̈լյա̈ ամմըեն հինչ պադրաստ չի, մին թիթև զակուսկի անըենքյ, մինչև հըրսանեքյը կըսկսվե, ետնումն էլ թա՝ ըլբաստ-րակ, վըեններըր քյա̈ստրյա̈կ, փռնենքյ, օտըենքյ: Ըլբըստրակըեն փռնում ըն, մաչան զիլբըզիլբյա̈ անում, օտում: Մինգյել թա՝ կյո̈ւլ, քամակը թո̈ւլ, փռնենքյ, օտըենքյ: Արջը նան աղվըեսը փռնում ըն կյո̈ւլին զիլբըզիլբյա̈ անում, օտում:

Աղվըեսը կյո̈ւլին ճըղմըղենքյերը կյեղում ա, մին օր տինո̈ւմ տակեն, ճոնղն էլ տինո̈ւմ պիրյա̈նո̈ւմը, ըսկսում օտըելը: Արջը սուվըծացած ա ինո̈ւմ, ըղվըեսին հըրցնում ա, թա հինչ ը՞ս օտում: Աղվըեսը թա՝ փորըս ճղալ ըմ, ճըղմըղենքյերըս տո̈ւս տուվալ, օտում ըմ: Արջը չյա̈նգյերը քցո̈ւմ ա, ո̈ւրյա̈ն փորը ճղում, ծիքյ տամ, ճըղմըղենքյերը տո̈ւս տամ, վըեր ինգյո̈ւմ, ըստակում: Աղվըեսը արչին էլ ա թեփռում պըրծնում, օզում ա փոսան տո̈ւս կյա̈, կարում չի: Դուղան պիցըրցնում ա բիդի էրգյինքյը, թա՝ ա՛յ աստո՛ւծ, տու ըստըեղաս ինձ վըեր տո̈ւս օնըես, մին մատաղ ըմ ըննական: Լոք ա տամ, կարում չի տո̈ւս կյա̈: Ետ ա տըեռնում, ասում.- Աստո՛ւծ, ես մեղա, սըխալվյալ ըմ, քըզետե ամմըենալավ մատաղն ըմ ըննական: Վերջը, էս դո̈նում էլ վըեր լոք ա տամ, կարում ա տո̈ւս կյա̈:

Աղվըեսը քյինյա̈մ ա, տըեսնում մին չյա̈րչի էշն առաչը քցած, խո̈ւլրդյա̈-

վանք ա տանում ծախըէ։ Թաքուն քյինա̈մ ա հըրցըէն ըրաըէն վըէր ինգյո̈ւմ, սուտըսուտ ըստակում։ Չա̈րչին կյամ ա կոխկավն անց կենում, օզում ա կռանա յոր օնըէ, մինգյել ասում ա.- Սրա մորթուն կյինը հինչ ա՞, վըէր տանըէմ չըչարվըէմ, մաշկըէմ, չուրըցնըէմ, բիջա̈րիմ։ Թողում ա, անց կենում, քյինա̈մ։ Աղվըէսը էր ա կենում էն ըղլավը շոռ տամ, քյինա̈մ, նորըմինա̈ն հըրցըէն կոխկըէն վըէր ինգյո̈ւմ, սուտըսուտ ըստակում։ Չա̈ր-չին կյամ ա կոխկավն անց կենում, եշում էլ չի, ո̈ւրա̈ն հըրէն քյինա̈մ ա։ Աղվըէսը նորըմինա̈ն ա՝ էր կենում, շոռ տամ, քյինա̈մ չա̈րչո̈ւն ըռաչին վըէր ինգյո̈ւմ։ Չա̈րչին էլլա յա թողում, անց կենում։ Վէրչը, աղվըէսը մին օթ հետ սոտ տըէղան ըստակում ա, էր կենում։ Չա̈րչին թա՝ էսքան ըղվըսնեն վըէր հըվաքըէմ, տանըէմ մորթըէն տո̈ւս օնըէմ, բիջա̈րիմ, խիլլա̈ փող կըտըէռնա, հոր ը՞մ թողում, քյինա̈մ։

Չա̈րչին էշը թողում ա ըտըէղ, քյինա̈մ, վըէր «քամակ թողած ըղվըս-նըէն» հըվըքըէլավ կյա̈։ Աղվըէսն ըտըէղ էր ա կենում, չա̈րչո̈ւն իշապեռնը տըկըտիյեր անում, մըխըրէ խոնկ, մին քանի յել ժնեբ, ուլունքներ, լենթեր, զիզիպիզա̈ տես-տեն յոր օնում, հղէ ինո̈ւմ քյինա̈մ մին շեն ու ըրաղէ ըխպըրին քշտին պըպզում, եշում, տըեսնում մին հառհնը կոժը շիլա̈կած կյամ ա, վըէր ըխպրան ճո̈ւր տանըէ։ Աղվըէսը թա՝ հառհնը, ծըէռքըէս ամմըէն հինչ կա, վըէր հա̈քյիս զըրթարըէս, ծըէռքըէս մնացած ժնեբը, ուլունքնըէն, մնացած զարթարանքնըէն լոխ քէ յըմ տըլական։ Հառհնը թա՝ կա՛ց, տանըէմ կոժը թողըէմ տանը, կյամ։

Հառհնը կոժը տանում ա թողում տանը, ետ տըէռնում կյամ, բիրա̈ղի քյինա̈մ ըն մին մոտըէ արտ տո̈ւս կյամ, ըտըէղ հառհնը ըղվըէսին հա̈քյին լավ զըրթարում ա, մնացած տես-տենը յոր օնում, քյինա̈մ։

Աղվըէսը պիցրա̈նում ա մին թումբ, եշում, տըէսնում տըվրածըէրը յաղուծու ըրած, օտում ըն։ Ծեն ա տամ, թա ծըէր պըհելիս կուվըէրեն մինը կյո̈ւլերն էն ղոլին օտում ըն, տուք ըտըէղ նստալ ըք, յուղուծու վը՞ք օտում։ Տըվրածըէրը լոխ վազ ըն տամ բիղի էն ա̈նգյո̈ւնը, աղվըէսը նստում ա յուղուծուն լոխ օտում, խոնգը տո̈ւս օնում կրակըէն օնում, էրում, ղուղան բիղի կըլխըյեր անում, թա՝ աստված, էս էլ քու մատաղըտ։ Յուղուծուվըէն կեսն էլ օտում ա պըրծնում, քթավուրը փուրսըվըէր տինում, քյինա̈մ։

Մին խիլլա̈ վըէր քյինա̈մ ա, կյո̈ւլը պըտահում ա, ասում.- Հա̈քյիտ հինչ լա̈վ զըրթարալ ըս, հինչ կինի՞, վըէր իմն էլ իտի լա̈վ զըրթարըէս։ Աղվըէսը

կյո̀ւլին թա՝ պա վըեր ծըմակըեն թաքավըերեն հա̀քյին լավ չի զըրթարըեմ, էլ հո̀ւրը՞ զըրթարըեմ:

Հղե յըն ինո̀ւմ, քյինա̀մ: Հղեննի մին կուճուր կյետ ա պըտահում, իրեսը սառնը կապած: Սառնը մին տըեղան ծակված ա ինո̀ւմ, ճո̀ւրը տակավը քյինա̀լիս: Աղվըեսը կյո̀ւլին ասում ա,- Հա̀քյիտ էն սառնըեն ղաթավը քցի, հըսցրու մինչև սառնըեն տակը, թող լա̀վ թրչի, իտի նստած կաց, տըեղատ տո̀ւրո̀ւր չի կյա̀ս, ես քյինա̀մ զըրթարանքը յոր օնըեմ, կյամ:

Կյո̀ւլը հա̀քյին սառնըեն ղաթավը քցո̀ւմ ա կյետը, յիրա̀ն պըենդ նստում, սաղ քշերն իտի նստած կենում:

Քշըրիանան աղվըեսը կյա̀մ ա եշում, տըեսնում կյո̀ւլին հաքյըվին տակը կյա̀պո̀ւտ սառնը կապած: Աղվըեսը թա՝ մեհենգյ հա̀քյիտ լա̀վ ա զըրթարվալ, եր կա՛ց: Կյո̀ւլն օզում ա թա եր կենա, կարում չի: Ըղվըեսին թա՝ քյո̀մա̀գյ ըրա եր կենամ, կարում չըմ: Աղվըեսը մխըրե ծիքյ-ծիքյ ա անում, թա՝ չէ՛, ծմակըեն թաքավըեր, զըրթարանքըտ շատ ա ծանդր, մենակ ես կարել չըմ պիցըրցնըեմ, տու ըտըեղ կաց, ես քյինա̀մ մին քանի մարթ ծեն տամ պիրիմ, բիրա̀դի ծիքյ կըտանք, տո̀ւս օնըենքյ:

Աղվըեսը քյինա̀մ ա տըեսնում վըերսկանն ո̀ւրա̀ն շներավը բիդի կյետին ա̀նգյո̀ւնը կյամ ա: Վազ ա տամ վըրսկանըեն առաչը, աշկըեն ուրվամ, մինգյել բիդի կյո̀ւլին ա̀նգյո̀ւնը վազ տամ, վըերսկանն ո̀ւրա̀ն շներավը ըղվըեսին հետան ա ինգյո̀ւմ, աղվըեսը կյամ ա կյո̀ւլին կոխկավը ծառս ինո̀ւմ, պիցրանո̀ւմ յըրղանը, քոլոտը մաչին կորչում:

Վըրսկանըեն շները կյամ ըն կյո̀ւլին զիլբըզիլբա̀ անում, վըերսկանն էլ կյո̀ւլին մորթըեն տո̀ւս ա օնում, հղե ինո̀ւմ: Աղվըեսը քուլոտան տյո̀ւս ա կյամ մուտանում, թա ծըմակըեն թաքավըեր, հի՜նչ լավ զըրթըրվըեցեր...

## 80.ՕՂՏԸԵՆ ՊԱՐ ԿՅԱ̀ԼԸ

Օղտըեն նան էշին տարը էնքան պինըցնում ա, վըեր հա̀լա̀ ինգյո̀ւմ ըն: Կլո̀խ ըն յոր օնում քյինա̀մ, հըռանում: Ո̀ւրա̀նց կըլխու վըեր մին քանի ամըես ապրում ըն, քյուքանում ըն, ըսկսում ըստըեղ-ընդըեղ շռռ կյա̀լը:

Մին օր էլ էշը վըեր լա̀վ ըրածում ա, քյեփը քյուքըցնում, օղտըեն ասում ա.- Երք ասըելըս կյամ ա: Օղտը թա՝ սուս ըրա, ծենըտ կըտրըե, սա̀ըտ ըսկըննական ըն, կյա̀ն մըեզ էլլա տանըեն պեռնըեն: Էշը թա՝ չէ՛, վըեր չէ՛, երք ասըելըս կյամ ա: Ասում ա, ըսկսում զռռալը: Վըեր էրկան զռռամ ա,

տահանց տարը էշին սմսը ըսկանում ա, կյամ ճոխտըեն էլ տանում նորըմինմն պինըցնում, սհւրթմն անա յել լափ հմլմ քցհւմ:

Էտ հմլմ ինգյմծ վըխտըրնըեն օղտը նան էշը մեհետ հըղեննի բիրմդի քյինմմ ին: Մին կյետ ա պըտահում: Էշն էնքան ա ինհւմ թհւլմցած, վըեր կարում չի կյետավն անց կենա: Օղտը էշին ամսում ա.- Եք քեզ շիլմկըեմ, անց կըցընեմ: Էշը թա՝ կարըել չըս: Օղտը թա՝ պեն չօնըես, եք եր իլ շելմկըս: Էշը քյինմմ ա օղտըեն շելմկը եր ինհւմ, օղտը կյետավն անց ա կըցնում: Կածանը մին պեցհւր քըերծավ ար անց կենում: Օղտը էշին շիլմկած տանում ա, վըեր հըսնում ա քըերծըեն պտոկը, ասում ա.-Պար կյմլըս կյամ ա: Էշը թա՝ չէ՛, չէ՛, թող ըստըեղավ անց կենանք, նոր: Օղտը թա՝ չէ՛, վըեր չէ՛, պար կյմլըս կյամ ա, պիտի պար կյամ: Համ ասում ա, համ ըսկսում պար կյմլը, ճոխտը բիրմդի թուլ ըն ինհւմ, ինգյհւմ կյետը:

### 81.ՎԱՆՔ ՇԻՆՈՂԵՆ ՌԸԽԵՆ ՅԻՇԵՑԵՔՅ

Աղվըեսը, կյհւլը, մինգյել եզնը ըխպըրանում ըն: Եզնը կալն ար թակում, աղվըեսը վըխճըրնեն նան էծերն ար պահում, կյհւլն էլ վանք ար շինում: Եզնը հւրմն պենր լավ անում ար, կալը թկելան ետը տերմանը քամում, ցորենը ճոկում, աղվըեսն էլ տանում ար վըեխճարը նան էծերը ծմակումն ըրչերեն նան կյհւլերեն նհետ օտում, կյամ:

Մին օր աղվըեսը կյամ ա եզանը կոշտը, ասում. - Եզն ախպըեր, քեզ տերմանն ա հարկավըեր, ինձ ցորենը, եք տերմանը տու եր կալ, ցորենն ինձ տո: Եզնը թա՝ չէ՛, տի ըխպըրոթուն չի ինիլ, եք ցորենն էլ, տերմանն էլ հալալ կես անենքյ: Աղվըեսը թա՝ դե վըեր տի յա, եք քյինանք մին քանի ախսախկալ մարթ պիրինքյ, հըրցընենքյ, տըեսնանք՝ հի՞նչ ըն ասում: Եզնը չերանը էտ շները հըվաքած ա ինհւմ , չըփարեն տա կեն կյողը կըցըրած: Աղվըեսը վար կյհւլին նհետ կյամ ա, շները չըփարեն տա կան տհւս ըն տըեռնում, տահանք փախճում ըն, քյինմմ «վանքը»: Վար տըեղ ըն հսնում, աղվեսը կյհւլին ասում ա. - Դե վանքումըտ տըեղ ըրա, ես էլ նի մննեմ: Կյհւլն ասում ա՝ կաց հմլմ ես նի մննեմ, ետնան: Կլհւխը նի յա քցհւմ, վըեննեըը մնամ ա տուսումը. աղվըեսը թա՝ վանք շինողեն ռըխեն յիշեցեքյ:

82.ԴՈ՛ԻՉ ԿԱՑ...

Օցը նան աղվըեսը ըխպըրանում ըն: Օցը կլո՛խ ա ինգյո՛ւմ, վար պերա՛ծ եկամուտեն շատը բիդի աղվըեսն ա քյինա՛մ, աղվըեսը շատ ա բիդի ո՛ւրա՛ն ծիքյ տամ: Օցն ո՛ւրա՛ն մտկումն ասում ա. - Ըղվըեսեն կծըլական ըմ: Աղ-վըեսը կլխու վա ինգյո՛ւմ, օցեն մուտանում, ասում.-Հենց ա մտկումըտ պեն ինի՞: Օցը ջողուբը տամ չի: Աղվըեսը ասում ա. -Օ՛ց ախպըեր, կլո՛խըտ մըեկնե, պահե պաչիմ, նոր ինձ կծում ըս, կծե: Օցը կլո՛խը մըեկնում ա, աղվըեսը օցեն հախռում ա, պկան կըծում, ըսպանում: Օցը վար ըստակում ա, մըտակվում ա, դո՛ւզվո՛ւմ: Աղվըեսը թա՝ օց ախպըեր, դո՛ւզ կացե՛, հատե տի դո՛ւզ…

83.ԼՈ՛ԻՎՈԹՈՒՆԸ ՄԻՇՏ ԿԸՄՆԱ

Մին թաքավըերու բաղին մաչին ծառան ճոժկը քցա՛ծ ա իլա՛լ, խոխան մաշին նի կապած: Էտ ճոժկեն մաչին միշտ խոխա յար ինո՛ւմ, շոնն էլ յիրա՛ն դարաղուլ ընելիս: Շանը լա՛վ եշում ին, լա՛վ պահում, հենց վըեր մծանում ա, թակում ըն տըեն անում:

Շոնը կլո՛խ ա յոր օնում, քյինամ: Քյինամ ա, քյինամ, մին ծմակում կյո՛ւլին պտահում: Կյո՛ւլը հըցընում ա, թա էտ հի՞նչ ա հա՛լըտ, էտ խե տի՞ յըս, ասե տըեսնամ՝ քեզ հի՞նչ ա պըտահալ: Շոնը կլո՛խը եկածը ամմեն հինչ նաղլ ա անում: Կյո՛ւլն ասում ա.-Ես քու ըովըհաթըտ պիցըրցըննական ըմ: Մսլըհաթ ըն անում, վըեր շոնը ճոժկան մոտե մին քոլու տակե կյողլը կենա, կյո՛ւլը քյինա՛ խոխան կյուղանա, շոնն էլ քոլեն տական տո՛ւս կյա՛, ըսկսե հաչի, կյո՛ւլը խոխան վըեր քցի, փախճի: Տի յէլ անում ըն:

Վըեր կյո՛ւլը խոխան կյուղանում ա, հղե ինո՛ւմ, շոնն էլ քոլեն տական տո՛ւս ա կյամ ըսկսում հաչիլը, կյո՛ւլը խոխան թողում ա, փախճում: Թաքավըերեն մարթիքյը սաղ հըվաքվում ըն, շանը փռնում ըսկսում պըչ-պըչորելը, թա մունք քու դաղիրըտ գյիդացալ չընք, քեզ կըլխընըերես յիրա՛ յընք պըհըլական: Տրանա ետը էլլա ըսկսում ըն առաչվա մնան շանը լա՛վ պահելը:

## 84. ՕՑԵՆ ՎԸԵՐ ՏԻՆԻՍ ԾՈՒՑՈՒՄԸՏ, ԹԸՔՑՆԵՍ, ԵՏ ԿԸՏԵՌՆԱ ՔԵԶ ԿԸԾԵ

Մին մարթ հըղցավը քյինա̈լիս մին սառած օց ա պըտահում, մեխկ ա կյամ, յոր ա օնում տինում ծուցումը, թըքըցընում, օցը մխըրե օշը կըլո̈խն ա իըվաքում, օզում ա, վըեր էտ մարթին կըծե։ Էտ մարթը օցեն շատ ա ղաչանք-պըղատանք անում, ասում ա.- Պա ես քեզ հըղեցը տեսե սառած, հա̈լա̈ ինգյա̈ծ, քեզ կուրցըրած, ես քեզ լո̈ւվոթուն ըրե, եր կալի տիրի ծուցումըս, երկան պըհեցե, քեզ թըքըցրե, հանցու տու լա̈վ ինիս, մեհենգյ ես քեզ հինչ ը՞մ ըրալ, վըեր տու օզում ըս ինձ կըծես ըսպանես։ Օցը թա՝ չէ՛, վըեր չէ՛, հիշքան օզում ըս ղաչանք-պըղատանք ըրա, մին ա, ես քեզ պիտի կըծեմ-ըսպանեմ, ըրկուվըննանուն անա երը փիս պեն չի կա էս ըխշարքումըս, ըրկուվըննանուն լո̈ւվոթուն ընելի չի, մղափո̈ւն ա, վըեր էս լո̈ւս ըխշարքումըս նա ապրե, չէ՛, վըեր չէ՛, նըհախ տըեղն ըս տու ինձ ասում, թա ինձ ըզադե, մին ա քեզ պիտի կծեմ, աղու տամ, ըսպանեմ։

Էտ մարթը ճարը կտրած, ասում ա.- Դե վըեր տու իմ ըրած լո̈ւվութունեն տեղակ ինձ օզում ըս կծես, աղու տաս, ըսպանես, քյինա̈նք մին քանի օրիշ մարթ, հեյվան յա օրիշ պեն կըպըտահե, կըհըրցնենքյ, թա վըեր նահանք կասեն ես մեղավըեր ըմ, էն վախտը ինձ կըկըծես, ըսպանես, թա չէ, էլլա ես իմ հըղես կըքյինա̈մ, տու՝ քունը։ Օցը համաձայնվում ա՝ վըեր տըեսնում ա մարթը շատ ա ղաչանք անում, միլըմիշ կյամ, էլ կարում չի աթկազ անե, ասում ա.-Քյինա̈նք, բայց մին ա, հինչ էլ օզում ա ինի, ես քեզ կըծըլական ըմ ըսպանեմ, թողեմ ըստեղ, հղե ինիմ։ Մարթն ասում ա.-Լա̈վ, հինչ վըեր ա, հինչ կանես, կանես,հա̈լա̈ քյինանք հըրցնենքյ, ետնան։

Դե մարթին հույս ա իլա̈լ, վըեր հղեցը մին օրիշ հեյվան, ղուշ, զազան պըտահե, նահանց անա հըրցընեն, ըսըլական ըն էտ մարթը քեզ վըեչ մին պեն չի ըրալ, քեզ սառած տըեղան, քեզ մահա ըզադալ ա, հոր ը՞ս տրան փիսոթուն անում, հինչու հե՞տե յըս օզում տրան ըսպանես, տա վըեչ մին մեխկ էլա օնե վուչ։

Էտ մտկավը տահանք հղե յըն ինո̈ւմ, քյինա̈մ։ Շատ ըն քյինա̈մ, թա խրեզյ, հղեցը մին չուրացած տանձի ծառ ա պըտահում։ Էտ ծառեն նհետ էտ մարթը նաղլ ա անում, վըեր ինքյը հղեննի քյինա̈լիս իստի-իստի պեն ա պըտահալ՝ օցեն տեսալ ա մին փոսու մաչի սառած, վըեր ինգյա̈ծ, թամամ նա̈փա̈սը կտրած, էն ա իլա̈լ մըռնելիս, ո̈ւրա̈ն մեխկն ա եկալ, եր ա կալալ

տիրա̀լ ծուցումը, մին խիլլա̀ ծուցումը պահալ, թըքցրալ, մխըրե ետ կյա, մեռնե վուչ: Ետնան թըքընալան ետը ետ ա տըեռալ, ուզեցալ ա ինձ կըծե ըսպանե, հիշքան խնթրալ ըմ, ղաչանք-պըղատանք ըմ ըրալ, վըեր ինձ պեց թողե քյինա̀մ իմ դա̀րդիս կենամ, պեց չի թողալ, ճարըս կըտրած նորից ըմ ղաչանք-պըղատանք ըրալ, հիշքան ասալ ըմ, նա վըեննը իվիլի յա պըն-դըցրալ, ասալ՝ չէ՛, վըեր չէ՛, ես քեզ պիտի կըծեմ, ըսպանեմ: Մինգյել ասալ ըմ՝ դե վըեր օզում ըս ինձ անտեղի տեղն ըսպանես, քյինա̀նք մին հեյվան, կազան յա օրիշ պեն կինի, հըրցնենքյ, ետնան, հղե յընք իլա̀լ եկալ, ըստեղ հենց քեզ ընք պըտահալ, հասե՛, հինչ վըեր նաղլ ըրե, պենը խտի յա իլա̀լ, ես մեղավեր ը՞մ, վըեր սրան մահա ըզադալ ըմ, իմ ըրած լո̀ւվըթունեն տեղն օզում ա կծե, ինձ ըսպանե:

Ծառը տըեղ ետ ա տըեռնում, ասում. - Իտի յէլ հարկավեր ա իլա̀լ, ըրկուվընանուն հեչ լո̀ւվոթուն ընելի չի, ես էսքան տարվա ծառ ըմ, հա̀լա̀ վըեր ջա̀հիլ ըմ իլա̀լ, տակըս պա̀հա̀վ տալիս ըն իլա̀լ, ճիրիլիս-քըղինելիս ըն իլա̀լ, հանցու լա̀վ բար տամ. ես էլ պարտք չըմ մնացալ, մինին էրկու լո̀ւվոթուն ըմ ըրալ, հիշքան օժըս պատալ ա մըեծ-մըեծ, իլլա̀մա -իլլա̀մա տանձ ըմ տուվալ ո̀ւրա̀նց, մին խոսկավ քախծր բարըս կերալ ըն, թանձր շուքես տակեն պարանց ինգյա̀լ, քոն իլա̀լ, շոքըս էլ պիմբա̀կավ ըն իլա̀լ յոր ունելիս, մեհենգյ պըռավալ ըմ, հա̀լա̀ ինգյա̀լ, էլ ինձ միա̀լ չըն քցո̀ւմ, պենու տըեղ չըն օզում տինին, էն վախտը վըեր բոլ բար ըմ իլա̀լ տալիս, լա̀վ ըմ իլա̀լ, վըեր պըռավալ ըմ, էլ կարում չըմ բար յոր օնեմ, փիսացա̀լ ըմ, էլ ինձ վըեչ եշում ըն, վըեչ ինի, թողալ ըն անդար-ընդերու, հա̀լա̀ կացենն էլ յոր ըն օնում, կյամ սաղ օրը ինձ վըեր թակում, խոխեքյն էլ մին տեղան ըն ինձ միշտ քըրըպրանուկ անում, տրա հետե յըմ ասում, վըեր հիսանեն աստուծ չօնե, անաստված զատ ա, ես լափ փո̀ւշմանալ ըմ, վըեր էնքան լո̀ւվոթուն ըմ ըրալ, սոտ ա, պիտի հիշքան կարում ըս, փիսոթուն անես, թա չէ, լոք ա տամ, եր ինմ կըլո̀խտ, կծե ըսպանե տրան, օգ ախպեր, տի ել հարկավեր ա, ըրկուվընանանուն լո̀ւվոթուն ընելի չի, կծե, կծե, թող սըերտըս հուվանա, թա չէ վըեր սաղ կենա, էտ էլ ա նահանց մնան ըննական:

Ծառը վըեր տի յա ասում, օգը մարթին ասում ա.- Տեսե՞ր, հո̀ւր անա յէլ հըրցնենքյ էտ ըն ըսըլական, ըստեղ կըծեմ, ըսպանեմ: Մարթը վըեր տըեսնում ա՝ էլ թա̀հրը չի կա, օգը պիտի ո̀ւրա̀ն կծե ըսպանե, ասում ա. - Դե լա̀վ, մին ա, ինձ կծելը կծըլական ըս, քըզանա վըեչ մին պեն չի քյինա̀մ,

քյինա̀նք մին օրիշ պեն էլ կըպըտահե, նրանա յել կըհըրցնենքյ, ետնան տու վըս գյո̀ւղո̀ւմ: Օցը թա՝ չէ՛, վըեր չէ՛, քեզ հենց ըստեղ պիտի կծեմ ըսպանեմ, վըեր սըերտըս հուվանա: Մարթը նորից ա օցեն ղաչանք անում, թա դե լավ է՛, մխըրե էլ քյինա̀նք, մին օրիշ պեն կըպըտահե, նրանա ել կըհըրցնենքյ, ետնան: Մարթը վըեր շատ ղաչանք ա անում, օցը թա՝ դե լա̀վ, վըեր ասում ըս, էս դո̀նում էլ քյինա̀նք:

Հղե յըն ինո̀ւմ, նորըմինա̀ն քյինա̀մ: Քյինա̀մ ըն, քյինա̀մ, շատ ըն քյինա̀մ, թա խրեգյ, տեսնում ըն մին բըյանա դո̀ւզում մին պըռաված, մաշկը յարալու, ջիդո տըեռած ծի ըրըծելիս: Մարթը մըտկումն ասում ա՝ էս ա վըեր կա, սա հա̀լբա̀թ մին խոսկ կասե, ինձ ըզադել տա էս ցավան:

Էտ մարթը վըեր ծիյին էլ ա կլխավն անց կացածը նաղլ անում, ծին մին ղաթում օզում ա թա օցեն ասե՝ լա̀վ է, մեխկ ա, հա̀լբա̀թ խուխատար կինի, պեց թողե քյինա̀, մինգյել վըեր ո̀ւրա̀ն տարը մըետն ա քցո̀ւմ, սըրտեն դաղերը եր ա ինո̀ւմ, ետ ա տըեռնում օցեն ասում.-Հիշքան մտածում ըմ, ըխշարքես իրեսեն մարթին անա երը փիս պեն չի կա, վըեչ լո̀ւվոթուն կըգյիդա, վըեչ ա̀մա̀գյ, վըեչ էլ մին օրիշ պեն. քանի տարե ես իմ տըեռնը հետե պեն ըմ ըրալ, փադ ըմ կըրալ, ճո̀ւր ըմ կըրալ, դա̀նը պեռնալ ըն ճեղաց տարալ, խոտն ըմ մաշկես տիզ տուվալ, պերալ տոն, մինգյել թա̀րքյիս նստալ ըն դա̀՛, հա դա̀, քշեր-ցիրեկ քշա̀լ, քափ ու քըրտնունքում կորալ ըմ, հինչ վըեր ըրալ ըմ լոխ ո̀ւրա̀նց հետե, ամմա վրեչ մին կարքեն կյումում ըն ինձ պահալ, վըեչ կարքեն տակըս քյիրա̀լ-թիմըզցրալ ըն, յա էլ մըրթըվարի տերման, խոտ յա կյա̀րի տուվալ, կերածըս էլ միշտ ըշկըրներեն ուրվացալ ա, միշտ ըշկըրներեն իշեղան կախ իլա̀ծ ըմ իլա̀լ, էտ էլ հա̀լա̀ խրեգյ ըն իլա̀լ գյիդա̀լիս, մինգյել սաղ օրը սրան-նրան ինձ քըրեհավ տալիս ըն իլա̀լ, ինձանավ փող ըշխըդիլիս, փող թուփ ընելիս, վըեր զըխկըվեն, մին խոսկավ սաղ օրը ինձ չըրչըրելիս ըն իլա̀լ, փորըս էլ միշտ սոված ըն իլա̀լ պըհելիս, կարքեն ապուռ չըն իլա̀լ տալիս, վըեր օտեմ, մեհենգյ վըեր պըռավալ ըմ, լափ հա̀լա̀ ինգյա̀լ, վըեննըս վըեննավըս ա ինգյո̀ւմ, էլ կարում չըմ ծմակը փադու քյինա̀մ, յա ճեղացր դա̀ն տանեմ, հա̀նդա̀ խոտ կրեմ, յա էլ կալում լծվեմ կալ թակեմ, մաշկես ըն եկալ, ինձ պեց թողալ, անդարընդերու քցա̀լ էս դո̀ւզերը, էս ա հիշքան վախտ ա ես ըստեղեքյ, հասե՛ տեսնում ը՞ս, մաշկես յարան էլ հա̀լա̀ լո̀ւվացալ չի, էնքան անսովիստ ըն իլա̀լ ինձ պինըցնելիս, մեհենգյ ես հինչ ա՞սեմ, կըկա՞րեմ ասեմ թա մեխկ ա,

պեց թողէ քյինա̈, տահանց ցեղեն մեխկը կյա̈լի չի, հեչ նամուս, ինսափ պեն չօնեն, վըեր օզում ըս կծես, աղու տաս ըսպանես էտ մարթին, տի յէլ հարկավեր ա, կծէ, կծէ, թող ջանըս դինջա̈նա̈, մեխկը չի կյա̈ս:

Օցը վըեր օզում ա թա մարթին կծե ըսպանե, մարթը չոքում ա, ըսկըսում լա̈ց ինիլը, ասում ա.-Դէ լիհա̈ վըեր ինձ մեխկը չըս կյա̈մ, լիհա̈ քյո̈րփա̈ խուխոցըս մեխկը եք, իրըսնեն տափեն կըմնա, եթիմ, անհա̈ր կըմըծանան, մին խըրեգյ տեղ էլ քյինա̈նք, բա̈լքյի մին օրիշ պեն էլ ա պըտահում, նրանա յէլ կըհըրցնենքյ, նա հինչ վըեր կասէ, ինդի յէլ կանես: Օցը թա՝ չէ՛, վըեր չէ՛, ա̈մա̈լ չի կյալ, զուր տըեղը լա̈ց մի ինիլ, սուտըստ ըրտասունք մի թափել, քեզ ապրելը, կյանք տըեսնալը, խոխա պահել մըծըցնելը մղափո̈ւն ա, տի պեները քըզետէ չի, վըեր ասալ ըմ, տու պիտի ըղուվով ինգյիս, մըեռնես:

Մարթը վըեր տեսնում ա՝ ախեր էլ իսկի թա̈հրը չի կա տրանա ըզըդվելի հետէ, եա ա տըեռնում օցեն ասում.-Դէ վըեր իմ ըրած լո̈ւվու-թունեն տըեղ ինչ պեց չըս թողում, լիհա̈ էնքան խաթիր էլ չօնե՞մ, վըեր մխըրէ յէլ քյինա̈նք, բա̈լքյի մին օրիշ պեն ա պըտահում, նրանա յէլ հըրցընենքյ:

Մարթը վըեր տի յա ասում, օցն ասում ա.-Դէ լավ, վըեր շատ ըս ղաչանք անում, քյինանք:

Նորից ըն հղէ ինո̈ւմ, քյինա̈մ: Մին խիլլա̈ տըեղ վըեր քյինա̈մ ըն, եշում ըն տըեսնում՝ մին լափ շատ պըռավուծ, մազերը վըեր թափած, հա̈լա̈ ինգյա̈ծ շոն, ըտեղեքյ զոռավ շոռ ա կյամ: Էտ մարթը եա ա տըեռնում ո̈ւրա̈ն կլխավն անց կացածը շանն էլ նաղլ անում: Շոնը զոռավ կլո̈խը պիցըրցնում ա, աշկերը չռում, անջուկ օնում: Վըեր անջուկ ա օնում պըրծնում, ասում ա. - Հա՛, տի յէլ հարկավեր ա, վըեր ինձ թա̈հր ինի, ես տրան զիլբըզիլբա̈ կանեմ, տըեսնում ը՞ս, վըեր էս ըմ պըռավուծ, լափ հա̈լա̈ ինգյա̈ծ, կարում չըմ, թա չէ, գյո̈ւղո̈ւմ ըս իլի հինչ կանեմ: Համ ասում ա, համ էլ ըսկսում կլո̈խը եկածը նաղլ անելը. «Ջա̈հիլ վըխտես վըեր վըերըսկանը ծիյըվուրան ըմ իլա̈լ վըեր քըշիլիս, արչն ան կյո̈ւլը պո̈ւնան տո̈ւս ունելիս, հիյվանեն կյողերը հղըցեն կեսան փըխճըցընելիս, էն վըխտերքեն ես իմ տըեռնր հետէ շատ լա̈վ ըմ իլա̈լ: Ինձ միշտ վըխճըրներեն նհետ դրկելիս ըն իլա̈լ սարը, վըրըսկանեն նհետ՝ ծմակը, ո̈ւրո̈ւզյո̈ւնն էլ հըյաթումը, էն ցորտ տըեղը մին զըեռ ժինջիլ պըկաս ընելիս, դըրբըզեն տական կըպելիս, մին խըրեգյ ճիրա̈լի

լակ յա մին խուխու կերած մըսու վըեսկուռ ըն իլա̀լ առաչըս քըցիլիս, ըստիբիլիս, թա սաղ քշերր հաչի, հա հաչի: Ես էլ մինչև լո̀ւս հիչիլիս ըմ իլա̀լ, քշերավն էլ սոված-ծարավ նորըմինա̀ն հիյվանեն յա վըխճարեն նիետ սար ու չոլ քյինա̀լիս, էս կյողեն բուսը պահե տըեռնը դույուղ ըրա, էս ղըչաղեն հետան պրծե ծին խըրնըցըրու փըխճըցրու, էս կյո̀ւլին յա ըղվեսին պըկան փռնե պըճղե տիր ընդեղ, վերչը, ըրածըս ըշկըրնեն քուռըցնե, վըեր քուռըցրավվուչ, մեհենգյ վըեր պըռավալ ըմ, մազերըս էլ լոխ թափ տուվալ, կըռքընես էլ վըեր ա տըեռալ, էլ վըեչ կարում ըմ հաչիմ, վըեչ էլ կըծեմ, էլ ինձ տըըրոթուն չըն անում, մաշկես ըն եկալ, հըյաթան տո̀ւս քցա̀լ, էտ հերիքյ չի, հա̀լա̀ խուխոցն էլ սուվըրցնում ըն, սաղ օրը հետաս քարավ ըն տամ, ալաբաշ-ալաբաշ ծեն տամ, յա էլ հետաս խանձող ըն յիրա անում, վըեր սաբավ իլած թո̀ւլքյըս էլ էրին ինձանավ ծիծաղեն, մազաղ անեն, յա էլ մին խըեգյ վըետած ջա̀մղա̀կ ըն շըպրտում, հանցու օտըեմ, ըստակեմ, լեշըս տանեն քաշ-քաշ անեն, վըեր սիրտըըրնեն հուվանա: Գյո̀ւղո̀ւմ չըմ, թա ես տահանց հինչ փիսոթուն ըմ ըրալ, ըշկըրնեն հանալ ը՞մ, վըեր քշեր-ցիրեկ ո̀ւրա̀նց մո̀ւլքյն ու ապրանքը կյողա-ղըչաղա պահալ ըմ, կյո̀ւլ-կյեզան խռեգյ տուվալ, հանցու վըեր կյան վուչ ո̀ւրա̀նց էլ ո̀ւրա̀նց ըպրանքեն նիետ կյուղանան տանեն»:

Էտքանը շոնն ասում ա պրծնում, ետնան օցեն տըեռնում, թա՝ կծե, մարթին աստուծ չօնե, տի յէլ հարկավեր ա, կծե, թող հոքին տո̀ւս կյա:

Օցը նորից ա ետ տեռնում մարթին ասում.- Տըեսե՞ր, էտ էլ շոնր, վըեր ամենաշատն ա մարթին հավաղարիմ, պա մեհե՞նգյ հինչ կասես:

Մարթը նորըմինա̀ն ըսկսում ա օցեն ղաչանք անելը, օցը թա չէ՛, վըեր չէ՛, էլ կարել չըմ խա̀թրա̀վըըտ քյինա̀մ, էլ քեզ վըեչ մին փրկութուն չի կա, պիտի կծեմ ըսպանեմ: Մարթը վըեր տեսնում ա էլ օրիշ յոն չի կա, ասում ա. - Դե լա̀վ, էս մին դո̀նո̀ւմն էլ ինձ անջուկ կալ, ետնան հինչ կինի, կինի, էլ նըրանա ետը տու վըս զյո̀ւղո̀ւմ, քու սովիստըըտ: Օցը թա՝ սովիստ-մովիստ զյո̀ւղո̀ւմ չըմ, պիտի կծեմ: Մարթը թա՝ լա̀վ, մխըրե յէլ քյինա̀նք, էլլա կըկըրծես, դե վըեր ինձ ըսպընըական ըս, ըսպընըական ըս, էս դո̀նո̀ւմն էլ խոսկես անջուկ կալ, էլլա հինչ օզում ըս, ինդի յել ըրա: Օցը թա՝ դե լա̀վ, էս դո̀նո̀ւմն էլ անջուկ կալի, բայց զյիդա̀, վըեր սա վերչինն ա, էլ վըեչ մին տըեղ քյինըա̀կան չընք: Մարթը թա՝ լա̀վ, քյինա̀լ չընք, հա̀լա̀ մեհենգյ հղե ինինքյ, մին խըեգյ էլ քյինա̀նք:

Հղե յըն ինո՞ւմ, քյինա՜մ: Մին խիլլա՜ տըեղ վըեր քյինա՜մ ըն, ըռըչնեն մին աղվես ա տո՞ւս կյամ: Աղվեսը վըեր պըտահում ա, էտ մարթը էլլա ըսկսում ա դիրդըհան ինիլը: Վըեր լոխ նաղլ ա անում, ըսկսում օցեն անա տիժըրռ-թուն անելը՝ թա ինքյն ո՞ւրա՜ն ըրած լո՞ւվոթունը գյիդա՜ցալ չի, աղվեսն էլ ա մարթին անա կյենգյատ անում, ասում սաղ օրը վըըսկըննեն շըները եր կալած, ո՞ւրա՜ն հետան ըն շոռ կյամ, ըշկըրնեն միշտ ո՞ւրա՜ն մորթուն յիրա յա մնացած ինո՞ւմ, էլ վըեչ սովիստ օնեն, վըեչ պեն, էլ ասում չըն, թա ախեր սա էլ ա ըստուծեն ըստեղծածը, սա յէլ խո՞ւրդա՜ ճոտեր օնե, լիհա՜ մին քանի կըպեկու հետե ծիքյ ըն տամ մուրթըհան անում: Համ ասում ա, համ էլ օցեն ասում. - Կծե՛, օ՛ց ախպեր, տահանց տի յէլ հարկավըեր ա, թա չէ ըխշար-քումըս էլ հեյվան, էլ վըեչ մին շունչ չըն թողել, վըեր սաղ կենա: Իտի ըսելան ետը ետնան աղվեսը ետ ա տըեռնում, թա՝ ախեր հավատըս կյամ չի, թա օցը հո՞ւնց կըկարե ինգյի փոսեն մաչը, ծըլվըծալ անե, վըեր մարթը ընդեղան նըան տո՞ւս օնե, հա՜լա՜ մին նորից նի մըտե հանե՛ ընդեղ, հըըցեն դըաղեն մին փոս կա, նի մըտե փոսը, տըեսնամ տըա ըռեխը հինչ ա՞, վըեր ընդեղան քեզ տո՞ւս օնե տինի ծուցումը, թըքցընե: Վըեր տի յա ասում, մարթին սըերտը մխըըե կյամ ա տըեղը: Օցն էլ ասում ա. - Խե չը՞մ կարել, հենց առե մեհենգյ նի կըմըննեմ, կըտեսնաք:

Օցը վըեր նի յա մննում փոսը, ծըլվըծալ անում, թա նշանց տա հունց ա իլա՜լ, աղվեսը մարթին աշկավ ա անում: Վըեր աշկավ ա անում, մարթը մին զըեռ քար յոր ա օնում օցեն կլխեն կյամ, ըսպանում:

Ըտեղ մարթը վըեր օցեն ըսպանում ա պըրծնում, աղվեսը ետ ա տըեռնում, մարթին ասում. - Դե ես քեզ լո՞ւվոթուն ըրե, կյանքըտ ըզըդեցե օցեն ծեռքան, միհենգյ քըզանա վըեչ մին պեն չըմ օզում, լիհա՜ էրկու հավ տո, օտըեմ: Մարթը թա լա՜վ, վըեր կըքյինա՜մ շենը, հավերը յոր կօնեմ, կյամ ըստեղ:

Էտ մարթը տըանա ետը տըեղատ քյինա՜մ ա շենը, շենին շները հվաքած կյամ, վըեր ըղվեսին փռնե: Աղվեսը վըեր հըռըցանա եշում ա տըեսում համին էտ մարթն ա շները հվաքած կյամ ո՞ւրա՜ն հետան, փախճում ա, նի մննում մին քոլ: Էտ մարթը շները հետան ըրած կյամ ա շոռ կյամ ըղվեսին քթենում, փռնում խեխտում, ետնան թա. « Ծան անդար, էտ չորս շիհա՜նուց մորթետ եր կալած հիշտեղ ը՞ս օզում քյինաս, զյո՞ւղո՞ւմ չը՞ս, վըեր ծըեռքաս կարել չըս պըրծնես»: Ըստեղ աղվեսը մետն ա քցո՞ւմ

օցեն ասածը, թա հինչու հետե էրկու վըննանուն լո̈ւվոթուն ընելի չի, իտի ըսելիս խեխտվում ա, էտ մարթը տրան յոր ա օնում, տանում մաշկում, մորթեն տուս օնո̈ւմ:

## 85.ՄԱՍՏՈՒՆ ՕՑԸ

Մին թաքավըրէր մեհետ մին արազ ա տըեսնում, ո̈ւրա̈ն ռըհա̈թին, ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրավը դույուղ ա անում, վըէր հու գյիդա̈ ըրազումըս հինչ ըմ տըեհալ, հիշքան վըեսկե, փուլ վըէր օզըե, տըլաան ըմ, յա վըեղես կեսն ըմ տըլաան:

Թաքավըրեն վիթանումը վըէրքան խըելունք մարթիքյ կին, հըվըքվե-ցեն ո̈ւրա̈ն պալատը: Ամմըեն մինը մին պեն ա ասում, յա ղորթ կինի, յա սուտ: Վըեչ մինը կըրեցավ վուչ ղորթ ասըե: Թաքավըրեն քըղաքան հեռու մին մարթ ա ինո̈ւմ ըպրելիս ո̈ւրա̈ն կնգանավը. էս մարթին կնեգյը մին օր ո̈ւրա̈ն մարթին ափաթը կըտրում ա՝ թա տու վըս, վըէր տու վըս, պիտի քյինաս մին պեն էլ տու ասըես, յա ղորթ տո̈ւս կըկյա, յա սուտ:

Էտ մարթը ճարը կըտրած էր ա կեննում հղե ինո̈ւմ բիդի թաքավըրեն պալատը: Մահիս ամըեսն ար, օցեր տո̈ւս կյալիս վախտը: Վըէր հղե յա ինո̈ւմ ղըռըխմիշ իլա̈ծ քյինա̈մ, հղըցեն քըշտան մին օց ծեն ա տամ.- Ախպըէր, հիշտեղ ը՞ս քյինա̈մ, մին մուտաց տըեսնամ: Էտ մարթը վըխ-վըխելավ մուտանում ա, ըսկսում նաղլ անըել, հինչ վըէր պըտահալ ա: Օցն էս մարթին ահում ա.- Վըէր քյինա̈ս թաքավըրեն կոշտը ո̈ւրա̈ն արազը նաղլ ընելի հետե, կահես, վըէր թաքավըրեն ապրած կենա, ըրազումըտ տըեհալ ըս երգյինքումը թո̈ւվա̈նգյը սարած, վըեխճարը նան կյո̈ւլը ո̈ւրո̈ւր նիըետ կըռն ընելիս, ամմա դե ըհելան ետը հինչ վըէր տա, կըպիրիս ինձ նիըետ կես անըես: Էս մարթը շունուրհակալ ահեց, ուրխացած հղե իլա̈վ բիդի թաքավըրեն պալատը: Թաքավըրը վըէր տրան ծեն տուվավ ո̈ւրա̈ն կոշտը, տա թա՝ թաքավըրեն ապրած կենա, տու ըրազումըտ տըեհալ ըս երգյինքյումը թո̈ւվա̈նգյը սարած, վըեխճարը նան կյո̈ւլը ո̈ւրո̈ւր նիըետ կըռն ըն անում: Թաքավըրեն ո̈ւրա̈ն նուքյըըներեն դույուղ արավ, թա վըեսկուս սանդողը պերեքյ, հիշքան վըէր օզում ա, թող յոր օնըե: Էս մարթն էլ դե աշկը ծակ ասե, իլի, վըէրքան կըկարե հղեննի տանե, յոր ա օնում հղըցավը հունց քյինա̈ամ, վըէր օցը տըեհնա վուչ:

Ախըըը, թըքընթաքուն հըսնում ա տոն: Էտ թաքավըրըտ, ախեր դե, մին արազ էլ ա տըեհնում, էտ մարթը մնամ ա կրակեն մաչն ինգյա̈ծ,

գյո̀ւղո̀ւմ ա, վըէր ո̀ւրա̀ն ըն ծեն տըլական, օցըէն կոշտն էլ քյինա̀լի իրես չօնըէ։

Էլլա հա̀մա̀ն մարթիքյը հըվաքվում ըն թաքավըէրեն պալատը՝ ո̀ւրա̀ն տըեհած արազն ըսելի հետե։

Վըէչ մինը վըէր կարում չի դո̀ւզ ասըէ, էտ մարթին ըն դույուղ անում. տա յել ճարը կըտրած եր ա կենում հղէ ինո̀ւմ, օզում ա թըքընթաքուն հենց քյինա̀, վըէր օցին տըեհնա վուչ։ Հղեննի քյինա̀լիս՝ հրաշկավ ար, թա հինչավ ար, էտ օցըէն սա̀սը ըսկանում ա.- Թաքուն միլ քյինա̀լ, իստի եք, պեն օնըէմ ըսելի։

Ախըրը ջանը տո̀ղ ինգյած քյինա̀մ ա բիղի օցը. օցը թա՝ վըէր քյինա̀ս, կահես՝ թաքավըէրն ապրած կենա, ըրազումըտ տըեհալ ըս վըխճարը նան կյո̀ւլը երգյինքումը մին տըեղ ըրըծելիս։

Էտ մարթը եր ա կենում հա̀մա̀ն հղըցավը քյինա̀մ բիղի թաքավըէրը։ Հինչ վըէր օցն ահալ ա, ինդի յել ահում ա։ Թաքավըէրը սո̀ւրթա̀ վըխտեն մնան վըեսկուն սընդուղնեն պեց անըէլ ա տամ, թա՝ հիշքան վըեսկէ օզում ա, թող յոր օնըէ, տանե։ Հիշքան վըեսկէ կարում ա, յոր ա օնում, էլլա սո̀ւրթա̀ մնան օզում ա օցըէն անա թաքուն քյինա̀, ամմա դե օցը տըեսնում ա հըռըցանա, ծեն տամ.-Իստի եք, վախումիլ։ Էտ մարթը վըխվըխելավ քյինա̀մ ա բիղի օցը, ղաչանք անում, թա թող ծըեռքես վըեսկեն քըշտիտ կենա, քյինա̀մ սո̀ւրթա̀ դո̀ւնո̀ւմեն պերա̀ծն էլ պիրիմ։ Եր ա կենում, քյինամ, հիշքան վըէր վըեսկէ կա, լոխ պիրում օցըէն կոշտը։ Օցն ահում ա.- Ախպըէր, ախեր դե վըեսկեն հինշիս ա՞ հա̀ջա̀թ, ես քու մըրթոթունըտ ըմ փորցում. տար, հիշքան վըէր վըեսկէ յըս պերալ, ինձ հա̀ջա̀թ չի, վըէղեն տակեն հիշքան վըէր լա̀վ- լա̀վ տըեղեր կա, լոխ իմն ա, օտըէլըս էլ վըէղ ա, վըեսկեն իմ հինչիս ա՞ հա̀ջա̀թ, ամմա էն մին դո̀նո̀ւմն էլ վըէր մին պեն փոռըէս, տի ղա̀լա̀թ չանես։

## 86.ՕՑԵՆ ԽՈՍԿԸ

Օցը քյինա̈մ ա մին մարթու բաղում պո̈ւն տինո̈ւմ, ամեն օր մին վըեսկե տո̈ւս օնում, տինո̈ւմ պո̈ւնին ըռաչին: Էտ մարթը ամեն օր կյամ ա վըեսկեն յոր օնում, ըստուծեն փառք տամ, օցեն էլ էրկան ումբուր օզում, թողում, քյինա̈մ:

Մին տըռնան ետը տա էնքան հըրուստանում ա, վըեր օզում ա քյինա̈ Մեքկա, հաջի տըեռնա: Քյինա̈լիս տղեն թափշուր ա անում, թա վըեր ամեն օր քյինա̈ս վըեսկեն յոր օնես, օցեն քյեփեն նի չի կյա̈ս:

Հա̈րը վըեր հըղե յա ինո̈ւմ, տղան մին քանի օր քյինա̈մ ա պո̈ւնին ըռաշան վըեսկեն յոր օնում, մինգյել մտածում ա, թա իստի ընելավ հի՞ք պիտի հրուստանամ, հա̈զիր էն ա օցեն ըսպանեմ, պո̈ւնը քա̈նդիմ, վըեսկին լոխ մին դո̈ւնո̈ւմանց տո̈ւս տամ: Լիհա̈ վըեր միակը եր կալած քյինա̈մ ա բիդի պո̈ւնը, պո̈ւնին դըլդումը վըեննը կենում, օցը տո̈ւս ա կյամ, կըլխեն օզում ա թա թխե, հա̈քյվին ա նի կյամ, հա̈քյին կտրվում ա, օցը չա̈շմիշ ա ինո̈ւմ, լոք տամ տղեն վըեննան կծում, աղուն ջանավը հընցրցնում, ըսպանում: Հա̈րը խաբարն ըսկանում ա, կյամ: Համ տղենան ա ինգյո̈ւմ, համ վըեսկան:

Մին քանի տարե վըեր անց ա կենում, էտ պենն էլ քյո̈ւհնա̈նում ա, հարը քյինա̈մ ա օցեն ղաչանք-պղատանք անում, թա հինչու իլա̈լ ա̈, իլա̈լ ա̈, եք բիրիշինքյ: Օցը թա՝ չե՛, վըեշ տու կըկարես քու տղետ մըննատ քցիս, վըեշ էլ ես՝ իմ հա̈քյիս: Տու քըզետե, ես՝ ինձետե:

## 87.ԸՐԿՈՒՎԸՆՆԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾ ՉԻ ԻՆԻԼ

Մին մարթ քյինա̈մ ա տըեսնում մին օց կրակումը իրվիլիս: Ծըեռքեն թորբան քյինդիրա̈ն կապում ա, թող անում կրակեն մաչը, օցը քցում թորբան, տո̈ւս օնում: Տրանա ետը օցն օզում ա էտ մարթին կծե: Տա թա՝ պա էտ էլ իմ վերչին լո̈ւվոթունըս ա՞: Օցը թա չէ՛, վըեր չէ՛, պիտի քեզ կծեմ, ըսպանեմ, ըրկուվըննանուն աստուծ չօնե: Մարթը թա՝ ես քեզ փիս պեն չըմ ըրալ, կրական տո̈ւս ըմ կալալ վըեր տո̈ւս կալած չինի, միհե արտեն էրվալ իր, մոխեր տըեռալ: Օցը թա՝ քյինա̈նք մին քանի հոքու անա հըրցընենքյ, վըեր ըսեցեն պեց թող, պեց ըմ թուղըլական, թա չէ, կծըլական ըմ: Մարթը թա՝ հա՛:

Հղե յըն ինո̈ւմ, քյինա̈մ: Մին խիլլա̈ վըեր հըռանում ըն, եզնն ա

պըտահում: Օցը եզանը հըցընում ա. - Էս մարթին կծեմ ըսպանե՞մ, թա պէց թողեմ: Եզնը՝ թա լիհնա մարթը չի՞ ինձ էս օրը քցնալ, վիզըս ջղո շինալ, կծե՛, ըսպանե՛, ըրկուվըննանուն աստուծ չօնե:

Ետնան վըեր քյինամ ըն, էշն ա պըտահում: Էշին անա յէլ վըեր հըցընում ըն, տա թա՝ մարթին աստուծ չօնե, նա յա մաշկըս ջղո ըրալ, կծե՛, ըսպա՛նե:

Մին խիլլա յէլ վըեր քյինամ ըն, աղվըեսն ա պըտահում: Ըղվըեսին էլ վըեր հըցընում ըն, մարթին թաքուն ասում ա.- Վըեր վըերսկանը կյա, իմ քյեցած կըծանես տըեղակ օրիշ կածան նշանց տաս, ես քեզ օցան ըզըղըլական ըմ: Մարթն ասում ա՝ լավ: Աղվըեսը օցեն հըցընում ա, թա՝ էտ մարթը քեզ կրական հունց ա՞ տոլս կալալ, օցն ասում ա.-Քյինդիրան կապած թորբան թող ա ըրալ կրակեն մաչը, նի յըմ մտալ թորբան, ծիքյ ա տուվալ, տոլս կալալ: Աղվըեսը թա հունց ըս նի մտալ, դե մին նշանց տո, տըեսնամ: Օցը սաքավ օզում ա թա նշանց տա, նի յա մննում թորբան, աղվըեսը մարթին աշկավ ա անում, վըեր ոըեխը քուղավ կապէ: Տա թուրբեն ոըեխը դնստին կապում ա, քարը յոր օնում յիրա կյամ, օցեն ըսպանում:

Աղվըեսը վըեր հղե յա իննում քյինամ, վըերսկանը կյամա քյեցած տըեղն էտ մարթին անա հըցընում, տա մաննը թուշ ա օնում, նշանց տամ: Նշանց տուված տըեղավը վըերսկանը քյինամ ա ըղվըեսին քթեննում, թոլվանգյը յիրա անում, վըեր քցոլմ: Էտ մարթը մուտանում ա, եշում տըեսնում աղվըեսը փըլըփալի ընելիս: Լիհնա տի հոքուն յիրա մարթին տըեսնում ա, թա պա դոլզ չը՞ն ասալ, վըեր ըրկուվըննանուն աստուծ չօնե:

## 88.ԼԻՎՈԹՈՒՆ ԸՆՈՂԵՆ ՎԵՐՋԸ

Ընում ա, չնոլմ մին մարթ: Էտ մարթը մին ծոլն-ծմեռնը օր հղցավը քյընոլմ վախտը տեսնըմ ա, վեր մին օխծը սառած, վեր ընգած: Օխծը շատ ա խընթրում էտ մարթին, վեր ցորտ ա, ինձ էս ցուրտան ըզադե: Էս մարթը օխծը յոր ա օնոլմ տնոլմ ծուցումը: Մին խիլլա քյնիլից ետավ օխծը լավ թքանըմ ա: Թքանըմ ա թա չէ, մարթին պկան փռնում ա, վեր ըսպանե: Էս մարթը շատ դաչանք ա անըմ, վեր ոլրան ըսպանե վէչ: Օխծը ասըմ ա.- Լա՛վ, քյնի քյնինքյ, մին օրիշը կպտահե կիրցնինքյ, հինչ վեր կասե, ինդի կանինքյ: Մին խիլլա քյնիլուց ետը մին էշ ա պտահըմ: Էս մարթը ասըմ ա. - Էշ ախպեր, էս օխծը սառած փդացած ա ըլնալ, խղճացալ ըմ, տրնալ

ծուցումըս, մհենգյ թքացալ ա, օգում ա ինձ ըսպանե. մհենգյ լիվըթունը կոխ ա տամ, հինչ ա՞նինքյ, վեր լավ ինի, ըսպանե՞ ինձ, թա չէ: Էշը բաղասխա-նըմ ա.-Հա՛, թող ըսպանե, մարթին խղճալ չըն: Ես լավ, ջա̈հիլ էշ վխտես միշտ պեռնալ ըն, մաշկիս նստալ ըն, ամմա մհենգյ պըռավալ ըմ, ինձ եշըմ չըն և պերա̈լ ըն էս բյաբան դո̈ւզո̈ւմը պեց թողալ, վեչ ուտիլի կա, վեչ խմիլի, մին կյո̈ւլ էլա կավեչ, վեր կյա̈ ինձ օտե, հոքիս ըզադե:

Էշին ասած խոսկանը եար մարթը օխծան խնթրում ա, վեր մին օրիշը քթենան և ընդրանա էլ հըցնին: Միկա էլ քյնո̈ւմ ըն, մին լղար կավ ա պտահըմ: Էս մարթը կվեն հըցնում ա. - Կավ քույրիկ, էս օխծին ըզադալ ըմ, մհենգյ լիվըթունըս կուրցնում ա և օգում ա ինձ ըսպանե, հինչ կա՞սիս, ըսպանե՞, թա պահե: Կավը ասըմ ա.- Հա̈լա̈ ըսպանած էլ բիդար, ընդրա համար, վեր ես ջա̈հիլ վխտիս էրկու քթեչ կաթն ըմ տվալ, մհենգյ պռավալ ըմ, լղարալ և հա̈լա̈ մեսս էլ ուտելի չի, հատե՛, պերալ ըն ըստեղ պեց թողալ, տրոթուն չըն անըմ:

Մարթը նորն ա խնթրում, վեր մին օրիշն էլ քթենա̈ն, նրան էլ հըցնին: Օխծը ասըմ ա՝ լա̈վ կինի: Շատ ըն քյնո̈ւմ , խրեգյ ըն քյնո̈ւմ, մին աղվես ա ջհո̈ւմ. Էս մարթը ո̈ւրա̈ն դարդը մին-մին նաղլ ա անըմ ինդի, հունցու էշին և կվեն ա պատմալ: Աղվեսը ասըմ ա. - Ա՛յ մարթ, էտ օխծը հիշտեղ ա՞ ըլա̈լ: Մարթը ասըմ ա.-Էն ա ըլալ էս պիծի քյակեն մաչին պլո̈րված, սառած-փղա̈ցած, հղըցը վեր ընգած: Աղվեսը ասըմ ա.- Սուտ կինի, էտ մեծ օխծը էտ պիծի քյակըմը տղվարվել չի, թող նի մննե քյակը, տեսնամ աշկավս և սուդս անիմ: Աղվեսն ասըմ ա թա չէ, օխծը նի յա մննում քյակը: Նի յա մննում թա չէ, աղվեսը մարթին ասըմ ա. - Արա ճելլ ըրա քյակեն պիրա̈նը կապե: Մարթը քյակին պիրա̈նը կապում ա: Աղվեսը մարթին ասըմ ա.- Արա՛, այ սարսաղ, հետե մահակը վերցրու, թակե ըսպանե: Մարթը մահակը յոր ա օնում, օխծին թակըմ, ըսպանըմ: Ըսպանըմ ա թա չէ, մարթը աղվեսին ասըմ ա. - Աղվես ախպե՛ր, քեզ հինչ լիվըթուն անիմ, վեր ինձ էս կրական ըզդեցեր: Աղվեսը բաղասխանըմ ա.- Քզանա վեչ մին պեն օգում չըմ, միայն հանե՛, իմ պո̈ւնըս էն քոլին տակեն խոր ծակն ա, վեր կարիս, միկա հաց, վեսկեռ պեր քցի ծակեն առաչը, ես տո̈ւս կկյամ կօտիմ, յոլա քյնիմ մինչև ծո̈ւնը հա̈լի, էլլհա կքյնիմ, հավա պենա̈ կճարիմ, ապրիմ:

Մարթը միկա քյնո̈ւմ ա, տեսնըմ մին օվչի թո̈ւվա̈նգյը ծերքեն, թազին հետան կյամ ա: Էտ մարթը ասըմ ա. - Արա օվչի, հանե՛ էն քոլեն տակեն

ծակըմը մին աղվես կա, քյնի մին թոխուր էլ, միկա քաքուռ էլ պէր, թոխրավը քանդի, քաքուռն էլ ծակեն մաչին մոլ տոք, մին լավ աղվես կա, փռնէ, ամմա վեր փռնիս մորթեն մաշկիս ծախիս, հանց ըրա մին պեն էլ ինձ տաս: Էս օվչին հըրցնում ա.- Էտ հինչ ա՞ղվես ա, վեր իտի տեղը լա̀վ գյո̀ւղո̀ւմ ըս: Էս նայինսափը ըսկզբան մինչև վերչը հինչ վեր ըլա̀լ ա, օվչուն պատմում ա:

Էս պատմածը օվչին ըսկանըմ ա թա չէ, ասըմ ա.- Ես կարել չըմ էտքան լիվոթուն անողեն, կյանք ըզդողեն ըսպանիմ, ամմա վեր տու էտչանք լիվոթուն կուրցնող ըս, քեզ կարող ըմ ըղվեսին ա̀վա̀զ սաթկացնեմ: Ասըմ ա պըծնում, թո̀ւվա̀նգյը փորեն օնում, խփում սաթկացնում:

89.ԽԸԵԼՈՒՆՔ ՀԱՌՀՆԸ

Մին մարթու, մինգյել մին կնգան չորս տղա յա ինո̀ւմ, չուրսըքանին էլ փսակում ըն, մին քանի տարե բիրա̀դի ապրում ըն, ետնան էլ օզում ըն, վըէր ճոկվեն, ճոկ-ճոկ ապրեն: Տրա հետե մին ո̀ւրո̀ւլգյո̀ւն տնըցեքյ հըվաքվում ըն, մսլըհաթ անում: Ախպերքն ան հառհները ամեքյա մին պեն ըն ասում, պատրունն էլ վըէր օզում ա թա խոսե, կուձուր հառհնը ասում ա.- Ապա, թող մին պեն էլ ես ասեմ: Պատրունը՝ թա ասե: Տա ասում ա.- Էսքան տարե բիրա̀դի ապրալ ընք, թող մին տարե յէլ ապրենքյ, մենակ թա տանը հինչ վըէր տո̀ւրո̀ւր կյա̀, իմ խուսկավս ինի, վըէր փիս ինի, հա̀շեվ կանենքյ, թա մին տարե յէլ ընք բիրա̀դի ապրալ: Նրանա ետը մինգյել լափ հա̀շեվ ըրեքյ, թա էտ մին տարեն էլ տո̀ւրմո̀ւմ ըք անց կըցըրալ: Պատրունն ասում ա. - Լա̀վ, թող քու ասածը ինի:

Էքյսի օրան ըսկած, էտ հառհնը ամմեն մինին ո̀ւրա̀ն պենին յիրա̀ յա տինո̀ւմ, լոխ ամեքյա ո̀ւրա̀նց պենը ճինա̀նչո̀ւմ ըն, հետան քյինա̀մ, իսկ ո̀ւրո̀ւլգյո̀ւնը կյա̀լիս ամեքյա մին պեն պիտի տոն պիրին: Հառհնը ասում ա.-Հու վըէր մին փաղ, մին չոփ, մին քար, մին տաշեղ, յա մին օրիշ պեն չի պիրի, միակը յօր ըմ ուննական, կլխավը թխեմ:

Ամմեն ո̀ւրո̀ւլգյո̀ւն տոն կյա̀լիս լոխ ամեքյա մին պեն ին պիրո̀ւմ: Մին օր էտ հառհնեն նշանածը միննան ինգյո̀ւմ ա, վըէչ մին պեն պիրո̀ւմ չի: Վըէր կյամ ա տանան մուտանում, բո̀ւրդան եշում ա, տըեսնում ծըեռքը տերտակ, ինքյն ո̀ւրա̀ն ասում ա, վըէր փա̀լա̀քյա̀նավը պիցրա̀նամ, կնեգյս միակը յոր ա ուննական, կըլխավս նի հըսցնէ: Ետ ա տըեռնում քյինա̀մ, վըէր մին պեն

քըթենա̀ պիրի տոն, քըթենո̀ւմ չի: Բո̀ւրդան եշում ա, տըեսնում մոտե ծառավը քցած մին ըստակած լոկ. յոր ա օնում միակավը քցո̀ւմ, վըխվըխե-լավ տանան մուտանում: Կնեգյը վըեր տըեսնում ա, ասում ա.- Պեր, էտ էլ հարկավըեր կըկյա̀: Էտ լոկը տանում ա հըյաթումը վըեր քցո̀ւմ:

Ուրերան մին օր թաքավըերեն կնեգյը քյինա̀մ ա վըեր մոտէ կյետումը լըղանա: Ո̀ւրա̀ն զինյա̀թը (արդուզարդը) կյա̀րմո̀ւր յըլլեխում կապում ա, տինո̀ւմ մին քոլու տակե, շորերը հանում, նի մննում կյետը: Էտ վախտը մին դուզղուն երգյինքյա̀վը թռչո̀ւմ ար: Ղուզղունը եշում ա, տըեսնում մին քոլու տակե մին կյա̀րմո̀ւր պեն ա ուրված: Քըշանում ա յոր օնում, ճա̀նգյը քցո̀ւմ, քյինա̀մ: Թաքավըերեն կնեգյը լըղանում ա պըծնում, կյետան տո̀ւս կյամ, շորերը կյենում, քոլեն եշում, տըեսնում զինյա̀թը կա վուչ: Տերտա̀կ քյինա̀մ ա տոն, թաքավըերեն ամմեն հինչ ասում: Թաքավըերն ո̀ւրա̀ն երգյիրավը մին խաբար ա անում, իմաստուն մարթուցը հըվաքում, մսլը-հաթ անում, խորհուրթ հըցընում, թա հի՞նչ անեն, վըեր զինյա̀թը քըթենա̀ն: Տու մի ասել դուզղունն էտ զինյա̀թը եր կալած, էտ ծառէն կլխավը թռչո̀ւմ ա, վըեր եշում ա տըեսնում լոկը ծառավը քըցա̀ծ, մուտանում ա, էտ զինյա̀թը վըեր քցո̀ւմ, լոկը յոր օնում, քյինամ: Էտ կուճուր հառհնը վըսկեղանը յոր ա օնում, տանում տոն: Երգյիրին իմաստուն մարթուցը մսլըհաթը վըեր տահանց էլ ա հսնում, էտ հառհնը ո̀ւրա̀ն պըտրուննեն ասում ա.-Քյինա̀ թաքավըերեն կոշտը, ասե կնզանտ զինյա̀թեն տըեղը կուճուր հառհնս ա զյո̀ւղո̀ւմ: Պատրունը վըխվըխելավ քյինա̀մ ա թաքավըերեն կոշտը, վըխվըխելավ էտ խոսկերքն ասում: Թաքավըերն ո̀ւրա̀ն մարթուցն ասում ա.- Էտ հառհընեն ծեն տուվեքյ, թող կյա̀: Հառհնը վըսկեղանը պիրո̀ւմ ա, տամ թաքավըերեն: Թաքավըերը հըցընում ա, թա էտ հունց ա՞ ինգյալ ծըեռքըտ, տա ամմեն հինչ նաղլ ա անում: Իմաստուն մարթիքյն ասում ըն.-Կարող ա պըտահի, դուզղունը շատ հեռու վա տըեսնում, կյա̀րմո̀ւր յալլեխը հըռըցանա տըեսալ ա, զյիղա̀ցալ ա թա ջա̀մղա̀ք ա, եր ա կալալ, բայց ջիմղա̀քու վըետ չի եկալ, ծառեն կլխավը անց կընալիս վախտը լոկան ջիմղըքավըետ ա եկալ, յալլեխը վըեր ա քցալ, լոկը եր կալալ, թռչա̀լ, քյեցա̀լ: Թաքավըերն էտ հառհնեն հըցընում ա, թա հինչ լիվո՞թուն ըս օզում անեմ: Հառհնը ասում ա.-Թաքավըերն ապրած կենա, վըեր վըեչ մին լիվոթուե էլլա անես վուչ, պեն չըմ ասել: Թաքավըերը հառհնեն ան պտրուննեն լա̀վ վըսկեղան, խազնա յա տամ, հղե տինո̀ւմ, տահանց օխտը պորտեն էլ

խարջա-բորջա ըզադում։ Էտ վըեսկավը լա̀վ պըլըտնե յըն շինո̀ւմ, լա̀վ ապրուստ ըստեղծում, պատրունը թա պա ես քե մատաղ, ա կուճուր հառհնը, մեհենգյ մին տարե չէ, լափ մինչեվ վերչ լոխ բիրա̀դի յընք ըպրըլական, օրաս եռը էս տանը մըեծը տու վըս, հինչ վըեր ասես, լոխ քու խուսկավտ ընք քյիննա̀կան։

## 90.Ո̀ՒԼԱ̀ՄԸ

Մին մարթ էնքան վըխլըկոտ ա ինո̀ւմ, վըեր կարում չի, թա մենակ տանան տո̀ւս կյա։ Ամեն քշըրհանա, ամեն ո̀ւրո̀ւգո̀ւն, կնեգյն ար տրան տո̀ւս օնում, տանում տոռնը, ետ պիրո̀ւմ։ Մին ո̀ւրո̀ւգո̀ւն էլ էտ մարթը կնգանը քշտին թա պա՝ հինչ լա̀վ լո̀ւսնո̀ւնգյա̀, քյարվան կտրելի քշեր ա յե՜ ... կնեգյը, թա վըեղըս կըլխետ, կարում չըս թա տանան մենակ տո̀ւս կյա̀ս, քյարվան կտրող ը՞ս տըեռալ։ Համ ասում ա, համ տոռնը քըլլում, տրան թողում տռանը։ Մարթը հիշքան ղաչանք-պղատանք ա անում, թա տոռնը պեց ըրա, կնեգյը պեց չի անում։ Տա թա՝ դե վըեր պեց չըս անում, մին ծո̀ւ, մինգյել մին քյենդիր տո, ես հղե յըմ ինո̀ւմ, շենա̀ն տո̀ւս ըմ կյամ, քյինամ օրիշ տըեղ։

Կնեգյը ծո̀ւն նան քյենդիրը տամ ա տրան, տա հղե յա ինո̀ւմ, քյինա̀մ։ Շատ ա քյինա̀մ, թա խրեգյ, մին ճրո̀ւ ղրաղ ա տո̀ւս կյամ. տըեղ մին մըեծ կորե յա ինո̀ւմ, փըռնում ա, տինո̀ւմ ծուցումը, հղե ինո̀ւմ։ Մին խիլլա̀ էլ վըեր քյինա̀մ ա, տըեսնում ա մին մըեծ ղարաղամա ծոխ ա պիցըրա̀նո̀ւմ։ Նի յա մննում ղարաղամը, տըեսնում օխտը օշափ, մին մըեծ ըզղան տիրած ըռըչներեն, կրակեն տակն ըն տամ, վըեր իփի, ոտեն։ Տհանցա մինը ծըեռքը տանում ա բիդի յախան, մին մըեծ վիչիլ տո̀ւս օնում, ուշըփներեն նշանց տամ, թա տուք էլ տո̀ւս կալիքյ, տըեսնանք հո̀ւր վիչիլ ա մըեծ։ Լոխ վըեր տո̀ւս ըն օնում, էտ տղան էլ ծուցեն կորեն ա տո̀ւս օնում, թա սա յէլ իմ վիչիլն ա։ Ուշըփնեն լոխ սրտաճանք ըն ինո̀ւմ։ Տրանա եռը էն օշափը ծիքյ ա տամ կուռնըտական մին մազ պուկում, թա եկեյ տըեսնանք հո̀ւր մազ ա լօխճընան մըեծ։ Լոխ վըեր ծիքյ ըն տամ ո̀ւրա̀նց մազերը պուկոտում, էտ տղան էլ քյենդիրը տո̀ւս ա օնում թա էս էլ իմ մազն ա։ Ուշըփնեն նորըմինա̀ն վախում ըն, ասում ըն սա մըեզ լոխճինին կուտըրըլական ա։ Ետնան քյինա̀մ ըն փադու։ Ո̀ւլա̀մն ասում ա.- Պերեքյ էն մըեծ քյենդիրը ծըռերավը տանք, պուկոտենքյ, տանենքյ։ Պիրո̀ւմ ըն ծմակեն մաչին մին խիլլա̀ տըեղ քյինդիրա̀վ կըպոտում, վըեր տանեն, նորից ուշըփներան մինը

թա՝ էս մըեզ լոխճին կուտուրուլական ա, պա հինչ ա՞նենքյ: Վըեր ծըռերան մին քանինը պուկոտում ըն տանում, տահանք մսլըհաթ ըն անում, վըեր օղտը վըեսկավ պեռնեն, տան ըտըրան, հղե տինին, վըեր ուրա̀նց ըսպանե վուչ: Ուլա̀մը վըեր օղտերը վըեսկավ պեռնած քյինա̀մ ա ուրա̀նց շենը, ուշըփներեն մինն էլ ա նհետը քյինա̀մ: Վըեր տանան մուտանում ա, ծեն ա տամ, թա՝ ա՛ կնեգյ, տոռնը պեց ըրա, օղտերը վըեսկավ պեռնած կյամ ըմ: Էտ վախտը դերը տըղերքատ մոտե յա ինում, ըսկանում ա, եշում, տըեսնում օշափն էլ ուլա̀մին նհետ, ամմեն հինչ կլի̀խ ա ինգյում, պեցուր սասավ թա՝ էս ամենավըխլըկոտ մարթն ա, հունց ա՞ քյացալ էսքան վըեսկեն ուղտերեն պեռնալ, պերալ: Օշափը կլխու վա ինգյում, վըեր տա ուրա̀նց քմական եկալ, օգում ա ուլա̀մեն ըսպանե, վըեսկեն յօր օնե տանե, ուլա̀մը կնգանը թա՝ տենակը պեր, ուշափեն մորթենքյ: Ուշափեն աշկը վըեր հա̀լա̀ առաչ ա ուլա̀մին անա վըխեցած ինում, նորից ա վախում, սրտաճանք տըեռնում, օղտերն ան վըեսկեն թողում ա, փախճում: Ուլա̀մին կնեգյը ուրխացած տոռնը պեց ա անում, վըեսկեն ուղտերան վըեր օնում, ըսկսում մըեծ-մըեծ պալատնե շինիլը: Ուլա̀մը տըեռնում ա շատ մըեծ, հարուստ մարթ:

## 91.ԴԵՐԻՆ ԱՂՈՏԿԸ

Մին անգրագետ դեր ա ինում մին շենում: Մին օր էջմիածնան մին վարթաբեդ ա կյամ , վըեր տըեսնա, թա տա հունց ա մըեռալ թաղում, հըրսանեքյ անում, աղոտկ անում: Դերը վարթաբեդին նհետ քյինա̀մ ա ժուղովուրթը հըվաքում, ասում.- Ա՛ ժուղովուրթ, գյուղում ը՞ք հինչ կա: Ժուղովուրթն ասում ըն.-Չէ՛, գյուղում չընք: Դերն ասում ա. - Դե վըեր գյուղում չըք, քյեցեքյ ծեր պենին: Տահանք եռ ըն տըեռնում, քյինա̀մ:

Էքյսի օրը նորից ըն ժուղովուրթեն հըվաքում, էլլա դերը հըրցնում ա. - Ա՛ ժուղովուրթ, գյուղում ը՞ք՝ հինչ կա: Հըվաքված մարթիքյ ասում ըն.-Հա՛, գյուղում ընք: Դերն ասում ա.- Դե վըեր գյուղում ըք, էլ հինչ ա՞սեմ, քյեցեքյ: Ժողովուրթը քյինա̀մ ըն:

Մին օր անց կացած, վըեր վըրթաբեդը նան դերը նորից ըն ժուղովուր-թը հըվաքում, էս դհնում սահանք պայմանավորվում ըն, վըեր դերը թա էլլա էտ պենը հըրցնե, կեսն ասեն գյուղում ընք, կեսն էլ ասեն գյուղում չընք: Իտի յէլ անում ըն:

Էքյսի օրը վըեր ժուղովուրթը հըվաքվում ըն, դերը նորից ա հըրցընում, թա գյո̈ւղո̈ւմ ը՞ք հինչ կա: Կեսն ասում ըն գյո̈ւղո̈ւմ ընք, էն մին կեսն էլ ասում ըն՝ գյո̈ւղո̈ւմ չընք: Էս դո̈նո̈ւմը դերը ետ ա տըեռնում, ասում.-Հու գյո̈ւղո̈ւմ չի, թող քյինա գյո̈ւղո̈ղ մարթուցն անա հըրցնէ: Իտի ասում ա, թողում քյինա̈մ:

Էն մին օրն էլ ժուղովուրթը վըեր հըվաքվում ըն, դերն ըսկըսում ա աղոտկ անելը: Դե էլ տառ չի ճինա̈նչո̈ւմ, վըեր սաղմոս յա շարական կա̈րթի, ըսկսում ա ինքյն ո̈ւրա̈ն խոսելը, քթեն տակեն մըռմըռամ ա, ասում.
- Երգյինքավը մին դուշ ա քյինա̈մ՝ տեղեն ա, տեղեն ա, ալելույա, ալելույա́...

Վըեր դերը նորից ա ասում՝ տեղեն ա, տեղեն ա, վըրթաբեղն էլ ետ ա տըեռնում ասում.-Իստի ժուղովուրթեն վըեր կաշին էլ մաշկեն, տեղեն ա, տեղեն ա...

## 92.ԹԱ ՀՈՒՆՑ ՄՈԼԼԱՆ ՔՅԻՆԱ̈Ց ԷՆ ԴՈՒՆՅԱՆ, ԵՏ ԵԿԱՎ

Մոլլա-Մա̈սրա̈դին (Նասրեդինը) քյինա̈մ ա ծմակը փեդ ընելի: Եր ա ինո̈ւմ ծառը, վեր փեդ անէ: Ըսկսում ա ներքևից կտրելը: Մին մարթ հըըցավը քյինա̈մ ար: Տեսավ, վեր Մոլլա-Մա̈սրա̈դինը ո̈ւրա̈նից քաշիցն ա կըտրում, ասում ա. - Ա́յ մարթ, եթե քաշիցն ըս կտրում, տու վեր ըս ինգյիլու, վնասվես: Տա պադասխանում ա, ասում ա.- Խե՞ բիդի վեր ինգյնիմ ծառից, էն ըմ ծառին յիրա̈: Ծառը կտրում ա, լիհա̈ քիչ ա մնամ, պարան ա կյամ, ինքյն էլ վեր ինգյո̈ւմ տակը: Տա մտածում ա, ասում ա.-էս մարթը իմաստուն ա, վեր գյիդա̈ց թա էս ծառան վեր ըմ ինգյիլա̈կան: Վազ ա տամ տրա հետան, ասում ա.- Ա́յ մարթ, վեր տու տի իմաստուն ըս, ասէ տեսնամ ես հի՞ք ըմ մըռնըլական: Տա բադասխանում ա, ասում ա.- Ես իմաստուն չըմ, հու չի՞ գյո̈ւղո̈ւմ, վեր ծառը տական կտրում ըս, պարան ա կյա̈լու: Ախրը վեր տա տրանա ծեռք չի կտրում, տա ասում ա,-Քանի է՞շ ըս պերալ, վեր փեդ անես: Տա բադասխանում ա, վեր օխտը էշ ա պերալ: Ասում ա.- Երբ վեր էշերըտ պեռնես, էն ա դիքյ կա, էն դիքյավը քյինալիս եթե էշերին բոլորի քըմական քամի տո̈ւս կյա̈, էն վախտը քու մահըտ ա:

Տա վըեր հդե յա ինո̈ւմ, դիքյավը քյինալիս վախտը էշերն ըսկըսում ըն պեց թողելը, գյո̈ւղո̈ւմ ա թա արտեն ո̈ւրա̈ն մահն ա, նի յա մննում մին ըղվեսու ծակ, կյո̈ւլերը կյամ ըն, ըսկսում տրա էշերն օտելը: Եշում ա,

տեսնում, վեր կյո՛ւլերն իշերեն օտում ըն, ասում ա,- Վա՛յ, Մոլլա-Մա՛ս-րա՛դինը սաղ ինի, կյո՛ւլերն իշերեն օտե՞ն:Մին չորս օր, հինգյ օր մնամ ա փոսումը, ջանըրզ ա տըեռնում, եշում ա տըեսնում մին քյարվան, ճորեքյը նան էշերը պեռնած, ճանապարավը քյինամ ըն: Կլո՛խը էտ ծակից հանում ա, եշում ա տըեսնում թա տա հի՞նչ քյարվան ա: Տեղ ճորենեն նան ծիյանը խրթնում ըն, պեռները վեր ածում: Էտ մարթուցան մինն ասում ա.- Ա՛րա, էս հինչ պըտահե՞ց, վեր ճորենեն նան ծիյանը խրթնեցեն, պեռներր վեր ըծեցեն: Տրանց հնգյերներից մինն ասում ա.- Ընդեղան մին կյո՛ւլո՛խ տո՛ւս եկը տեմաց, ճորենեն նրանա խրթնեցին: Հավաքվեցին տեղ, աղվեսին ծական մուլլեն տո՛ւս կալին: Ըսկսեցեն մին լա՛վ թակելը: Դե քանի օր ա հա՛լա՛ ինգյա՛ծ, տեղ սոված, մինգյել լա՛վ թակալ ըն, լափ ա հա՛լա՛ ինգյո՛ւմ, քյինա՛մ ա ո՛ւրա՛նց կյուղը: Տեղ ո՛ւրա՛ն հըրվաները ասում ըն.- Մոլլա քանի՞ օր ա իրնում չըս, հիշտեղ ը՞ս իլալ: Մոլլան ասում ա.- Էն դունյա յըմ իլա՛լ է՛, մեռած, էն ըմ իլա՛լ էն դունյա: Ասում ըն. - Էն դունյա հինչ կա՞, հինչ ը՞ս տեսալ էն դունյից: Մոլլան ասում ա.- Էն դունյա հեչ քյափուռը ճորե չի խըրթնըցնե, շատ ըն թակում նրա համար:

## 93.ՀԸԹԸՐՔԵՑՈՒՑ ՆԱՂԼԸ

Մին քանի հըթըրքեցե քյինա՛մ ըն փադու: Տահանց մին մարթ ա ջիհում: Էտ մարթին ծեն ըն տամ, ասում.- Եք տես մըեր կացեններան հո՛ւրն ա սոր: Էտ մարթը տահանց կացեննեն մին -մին յոր ա օնում, փորցում, ասում. - Էս մինը սոր ա: Մինգյել էն մինն ա յոր օնում, ասում. - Էս էլ ա սոր: Իտի ընելավ կացեննեն լոխ յոր ա օնում տինում ծիյին թարքյին, ծին չափ տամ, քշո՛ւմ, փախճում:

Հըրթըրքեցեքյ էտ ծիյին քոռակը փռնում ըն, կյիցըրներեն շորերը հանում յիրա տամ, վըեր քոռակը տակեն ըստակե: Էտ քոռակն էլ շորերը յոր ա օնում, փախճում, քյինա՛մ մորը հետան հըսնում: Սահանք թա՝ էս քոռակը խե՞ պիտի կարե փախճի, շուրըրնեւ լոխ յիրա յընք տուվալ: Մինգյել եշում ըն, տըեսնում դերն ո՛ւրա՛ն շորերը լոխ հանած, մենակ շալվարը կյեցը: Ասում ըն.-Հինչու ըրալ ա, լոխ դերն ա ըրալ, վըեր շալվարը հանած ինա՛ր քցա՛ծ քուռակեն յիրա, կարալ չար փախճի: Համ ասում ըն, համ փռնում դերին էնքան թակում, վըեր մըեռնում ա:

## 94.ԹԸՄԲԸԼ ԱԽՃԻԳՅԸ

Մին մարթու, մին էլ մին կնգան մի շատ թըմբըլ ախճիգյ ա ինո̈ւմ, էնքան թըմբըլ, համ էլ քուռուղուր, վըեր ծեռքավը վըեչ մին պեն չար կյամ, թա անե: Վերչը, մին սովդըքյարու կըլո̈խ կապում ըն, տրա նիետ փըսակում:

Մին օր էտ սովդաքյըրը քյինըմ ա բազար, օխտը փութ պեմբըկ պիրում տոն, տամ ո̈ւրըն կնգանը, վըեր կյիզի, մանե, թիլ պըղրաստե, հանցու տանե ծախե: Ինքյն էլ մին ամսավ քյինըմ ա օրիշ տըեղ: Սա դե ծեռքավը հինչ ա՞ր կյամ, վըեր հինչ անե, պեմբըկը տանը մին բուրջումը վըեր ա ածում, թողում ինդի, նի յէլ չի կյամ:

Մին օր էլ էտ հառհնը շփոթ ա իփում, վըեր օտե, էտ շփոթեն շատը օսերնըվեր վըեր ա ածում, շորերը վըեննան մինչև կըլո̈խը յըղտուտըցընում: Էտ վախտը սաղանոցը թաքավըերեն տղան էլ հիվընդացած ա ինո̈ւմ բուղազան, կարում չար, թա խոսե: Հիշտեղ տանում ըն, վըեր լո̈ւվըցընեն, վըեչ մին դոխտուր յա լողմանի վըեչ մին պեն կարում չըն անեն, տերտակըբոշ պիրո̈ւմ ըն տոն, հույսըրնեն-հըվըտնեն թամամ կտրած: Սաղանոցը թաքավըերեն տղան էտ հառհնեն տանը դրաղավը տընելիս վախտը վըեր տրան էտ հըլո̈ւմը տըեսնում չի՞, փորան փռնում ա, ծիծաղում: Էնքան ծիծաղում ա, վըեր լափ հըլըն ինգյում ա: Տա թունդ ծիծըղելիս վախտը բողազը պըտառվում ա, հիվընդութունն անց կենում: Սաղանեն տղան լո̈ւվանում ա, էլլա տըեռնում ամեն օրվա սաղանան:

Սաղանոցը թաքավըերն էտ վըեր ըսկանում ա, կյամ ա էտ կնգանը կոշտը, տրան նաղլ անում, վըեր ո̈ւրըն տղան խտի-խտի, բուղազան հիվընդացած ա իլըլ, հինչ մարթու կոշտ տարալ ըն, կըրեցալ չըն լո̈ւվըցընեն, մենակ ինքյն ա լո̈ւվըցըրալ: Օզում ա գյիդը, թա էտ կնեգյը հինչ լո̈ւվութուն ա օզում, վըեր սաղանոցը թաքավըերն անե: Էտ կնեգյն էլ ասում ա. - Վըեչ մին լո̈ւվութուն էլ օզում չըմ, մենակ լիհը մին օխտը փութ պեմբըկ ա մարթըս պերալ ինձ տուվալ, ասալ կյիզի, մանե, թիլ շինի, վըեր տանեմ բըզարումը ծախեմ, մեհենգյ էտքան պիմբըկան իմ կըլո̈խըս պեն չի տո̈ւս կյամ, թա օզում ըս ինձ լո̈ւվութուն անես, տար կյիզիլ տո, մանել տո, թող թիլ պըղրաստեն, պիրին ինձ տան: Դե հինչ կասես, վըեր էտ կնեգյը մարթին անա տո̈ւղտո̈ղում ա, ինքյն էլ կարում չի վըեչ մին պեն անե, մին քանի օրան ետն էլ մարթ կյիլական ա, ջողոբը պիտի տա: Սաղանոցը

թաքավըերն ասում ա.- էտ ա՞ մին մըեծ պեն, դե լիհա̀ մին օրիշ լա̀վ, թինգյա̀կան պեն, յա վըեսկե, արծաթ, փող օզե, հիշքան վըեր օզես, էտ լո̀ւվոթունը վըեր տու ինձ ըրալ ըս, իմ տղես լո̀ւվըցրալ, իմ ծեռքավըս ամմըեն հինչ կյամ ա, հինչ վյըեր ասես, կանեմ: Էտ կնեգյըն ասում ա.-Չէ՛, շնուրհակալ ըմ, օրիշ պեն օզում չըմ, լիհա̀ վըեր էտ պեմբա̀կն էլ կյիզիլ-մանել տաս, թիլ շինա̀ծ դարկես, էտ էլ ա բոլ: Վերչը, սաղանոցը թաքավըերն ո̀ւրա̀ն ասածն ա ասում, էտ կնեգյն էլ ո̀ւրա̀ն ասածը, սաղանոցը թաքավըերը տեսնում ա, վըեր էտ կնգանը կոխկը հաստ ա, խելքն էլ մխըրե տեղումը չի, ղաբուլ ա կենում, պեմբա̀կը տանում սաղանոցը կոշտը, կյիզիլ, մանել տալ տամ, թիլ ըն շինում, դարկում էտ կնգանը:

Տի վըեր մին քանի օրն էլ անց ա կենում, ո̀ւրա̀ն մարթին կյա̀լի վախտը լափ մուտանում ա, էտ կնեգյը պիմբա̀կան պըղրաստած թիլերը տանը մին բուրջումը կյո̀ւտո̀ւմ ա, թուփ-թուփ անում, տա̀րսո̀ւմ, վըեր սովդաքյա̀րը կյա̀ տանե բըզարումը ծախե, փող շինի: Տոնը-տեղն էլ լոխ սրփո̀ւմ ա, հըվաքում, ա̀մմըեն հինչ թամամ անում, գյիբենեն նան կըրպըտնեն էլ տանը մաչավը մըկնոտում, մին վըեթես էլ գյո̀ւղո̀ւմ չըմ հիշտըղա փըռնում, պիրում տինո̀ւմ խալիչին յիրա̀: Ախեր դե վըեթեսը խալիչին յիրա̀ կըկենա՞, ծըեզ ըմ հըրցնում, վըեր կընալի ինի, էն ա լիհա̀ միշտ էլ խալիչուցը յիրա̀ կինի իլի: Հիշքան էտ վըեթեսը տա տինո̀ւմ ա խալիչին յիրա̀, թուլուլ ա ինո̀ւմ, ինգյո̀ւմ տափը:

Վերչը, մին օր տրա մարթը օղտերը նան ծիյանքը պիռնոտած, ղրիբութունան կյամ ա: Վըեր կյամ ա տոն, կնգանը հըրցնում ա, թա պեմբա̀կը մանալ ը՞ս: Կնեգյը թա՝ հա՛, մանալ ըմ: Եշում ա տըեսնում տոնը-տեղը լոխ սիրփա̀ծ-թիմըզցրած, գյաբա̀-կարպետ տանավը սերուն-ղա̀շա̀նգյ մըեկնած, վըեթեսն էլ տիրած խալիչին յիրա̀: Սովդաքյա̀րը հըրցնում ա, թա պա սա՞ հու վա: Կնեգյն ասում ա.- Իմ մըրաքուր ա, էնքան պեմբա̀կ ա կյիզա̀լ ու մանալ, վըեր վըեթես ա տըեռալ:

## 95.ԱՄԵՔՅԱ ԵՐԵՍՈՒՆ ԿԱՊԵԿ ԷԼ ՉԻ ԻՆԳՅՈ̀ՒՄ

Երկու մոտե հնգըեր ըն ինո̀ւմ: Տհանցա մինը շատ պարտկ անող ա ինո̀ւմ, ըրած պարտկն էլ ետ տամ չար: Էն մինն էլ շատ բիդի ո̀ւրա̀ն քաշող ա ինո̀ւմ, կապեկն էլլա պեց չար թողում: Հունց ա պըտահում, վըեր էտ պարտկ սիրող հնգըերը տրանա մեհետ երեսուն կապեկ պարտկ ա յոր օնում: Մին քանի տարե յա անց կենում, տա հնգըերեն պարտկը տամ չի:Հնգըերն էլ շատ քյինա̀լա̀վ-կյա̀լա̀վ կարում չի ո̀ւրա̀ն պարտկը յոր օնե: Կյամ ա քսան տարեն կլխավն անց կենում,էլլա չի կարում իքյ օնե: Տա հարո̀ւր մընեթու ծախս ա անում, քյինա̀մ տրա տոն, մին լա̀վ օտում խմում, վերչումն էլլա ո̀ւրա̀ն երեսուն կապեկն օզում ա, հնգըերն ասում ա.- Խե յը՞ս ջափա քաշալ, ծախս ըրալ եկալ, տու քյինա̀ ծըեր տոն ես քու փողըտ կըպիրիմ: Նորից ա մին տարե կլխավը անց կենում, պարտկ յոր օնողն էլլա փողը տանում չի տա:

Պարտկ տվողն էլ քյինա̀մ ա տրա տան ըռաչին մին տոն շինում, ընդեղ կենում, հանցու միշտ հնգըերը տըեսնա, մըետը պահե, տանե ո̀ւրա̀ն պարտկը տա: Տա տըեսնում ա, վըեր հնգըերն ո̀ւրա̀ն պարտկն օզում չի տա, կնգանն ասում ա.- Ես սուտըսուտ մըռնըլական ըմ, տու վըել սուտըսուտ ինձիրա̀ լա̀ց կինիս, ամմեն հինչ ընելան ետրվըեր ինձ կըտանեք թաղեքյ, ինձնըհետ մին քանի օրվա ուտելի տես-տեն կըտինիս, հինգյիստիս ղաթավըն էլ մին ծակ թողես, հանցու վըեր օթ հաղ անե, մին քանի օր տըեղ կենամ, ետնան տըեսնամ հի՞նչ ըմ անում:

Սուտըսուտ մըռնելան ետը տրա կնեգյը սուտըսուտ լա̀ց ա ինո̀ւմ, վայ-վայ անում; Ժուղովուրթը վըեր լոխ հըվաքվում ըն, հնգըերն էլ ա կյա̀մ, դա̀ստին կլո̀խ ինգյո̀ւմ, վըեր տա մըեռալ չի, ըսկսում ա ինքյն էլ սուտըսուտ լա̀ց ընիլը, ետնան մտկումն ասում՝ ես սրան մին հունց քյա̀լա̀գյ պիտի կյամ, վըեր մինչև կյանքեն վերչը մննան քցիվուչ:

Վըեր ժուղովուրթը լոխ ըսկսում ըն լա̀ց ինիլը, էտ մըեռած տըղեն հնգըերն ասում ա. - Դե լա̀վ, թուղեցեքյ իմ հնգըերեւ վերչին պարտկըս տամ՝ ես իմ ծըեռքավըս լա̀վ լըղըցնըեմ: Ժուղովուրթն էլ ասում ըն. - Դե քու մոտե հնգըերըտ ա, հունցը սըրտավըտ ա, ինդի ըրա: Տա պիրում ա լա̀վ ճո̀ւր իփըցնըել տամ, հեռ ածում, «մըեռած» հնգըերեն թա՝ տըեղատ եր կաց, թա չէ, հեռ եկած ճո̀ւրը կըլխըետ ըմ ածում: Հնգերը սա̀ս չի անում: Տա ըսկըսում ա պըլթպըլթալիս ճիրավ հնգըերեն լըղըցնըելը, հնգըերեն էրում

ա, խրավում, սա զոռավ ո̈ւրա̈ն պահում ա, սա̈ս չի անում:

Տրան տանում ըն ո̈ւրա̈ն ուտըելի տես-տենին նիըետ թաղում: Հնգըերը գյո̈ւղո̈ւմ ա, վըեր հեռ ածած ճո̈ւր ըծըելան ետն էլ չի մըեռալ, բաղարաքյան ետը մի պա̈հ ա յոր օնում, քշերը քյինա̈մ հնգըերեն թաղած տըեղը մին ընգյո̈ւնավ ծակում, նի միննում կոշտը: Էտ վախտը քառասուն ղըչըղնե հինչ վըեր քյըրվանա վըեսկե թըլանած պիրում ըն, վըեր հենց ըտըեղ ճոթ անըեն: Վըեսկեն ածում ըն տահանց «կյիրիզմաննեն» յիրա̈, քառասուն տըեղ բըրբար փայ-փայ անում: Էտ ղըչըղնըերեն մըեծեն մին շատ սոր ու էրկան շաշկա յա ինո̈ւմ: Տահանց ասում ա.- էս սիաթըս շաշկան կուխըլական ըմ էս թա̈զզա̈ թաղած մըռըլին փորը, տըեսնամ հի՞շտըղավ ա տո̈ւս կյիլա̈կան:

Էտ վախտը ճոխտ հնգըերունքն էլ տակեն ըն խոսում՝ էն միևն ասում ա. - Երեսուն կապեկըս տո: Էտ ղըչըղնըեն ըսկանում ըն, գյո̈ւղո̈ւմ ըն թա մըռըլնըեն ո̈ւրա̈նց անա յըն վըեսկուն փայն օզում, վըեսկեն թողում ըն վըեր ածած, փախճում:

Էրկու հնգըերը տո̈ւս ըն կյամ վըեսկեղանը լոխ յոր օնում, նի միննում փոսը: Ծակած տըեղավն էլ լո̈ւսնինգյին շոխկը ինգյա̈լ ար ըտըեղ: Տահանք ըսկսում ըն լո̈ւսնինգյին շոխկըեն տակըեն վըեսկեն կես անըելը: Ճոթ անողը պըրտքատար հնգըերն ա ինում, էն կըլխան պարտկը տո̈ւս ա կյամ, հնգըերեն վըեսկեն երեսուն կըպեկավ պակաս տամ: Հնգըերն էլ կռվում ա. - Խե յը՞ս իմ վըեսկես պակաս տամ: Էտ վախտը ղըչըղնեն նորըմինան ըռիսկ ին ըրալ, եկալ, վըեր ո̈ւրա̈նց վըեսկեն յոր օնըեն: Տահանց ղըլմըղա-լըեն սա̈ան ըսկանում ըն, ղըչըղնըերեն մըեծն ասում ա. - Պա՛հ, տըես է՛, մըռըլնըեն հիշքան շատ ըն, վըեր էնքան վըեսկին ճոթ ըն ըրալ, ամեքյա երեսուն կապեկ էլ չի ինգյո̈ւմ:

96.ՀՈՒ՞ ԸՐԱՎ, ՀՈՒ՞ ՉԸՐԱՎ, ՊԸՐԿԸՓՈԽԱՆ ԿԸՆԵԳՅՆ ԸՐԱՎ

Մին աքյինչի մարթ ա ինհում, տա տարեն տասներկու ամըեն անում ար, անում, միշտ պակաս ար ապրում: Թա ցորեն ար վարում, կյարի հաց ար օտում, թա կյարի յար վարում, էլլա կյարի հաց ար օտում: Կյեցն էլ վըէչ մին լավ շոր կար, վըէչ էլ մին մարթու հետա հըսնում ար: Տենակը եկալ ար վըսկուտեն տեմ ինգյալ:

Ուրերան մին օր էլ էտ մարթը կնգանն ասում ա. - Ա՛ կնեգյ, հինչան ա՛, վըեր ըշխադում ըմ, ըշխադում, վըէչ մաղըեն կլոխն ա մին պեն ինգյհում, վըէչ էլ մաղըեն տակեն ա պեն ուրվամ, ցորեն ըմ վարում, կյարի հաց ըմ օտում, կյարի յըմ վարում, էլլա կյարի հաց ըմ օտում: Կնեգյն ասում ա. - Քու հար ապրե, էտ նրանա յա, վըեր քու քուր քըղաքումն հուրան լավ չի պահում, տրա հետե յել մըեր հացը կյարի յա տըեռնում, թա նըղանում ըս, քու քվոր անա նըղաց:

Մին օր էտ մարթը քյինամ ա քաղաք, նի միննում քվորը տոնը; Քուրը ախպորը վըեր տըեսնում ա, շատ ա ուրխանում, հըրցնում ա շենան, հուրան ըպրուստան, ըշխըդանքան; Ախպըերն ամմեն հինչ նաղլ ա անում, վըեր կնեգյն ասալա: Քուրն էտ վըեր ըսկանում ա, մաննը կծում ա, ասում. - Վըեր իտի յա, տղաս քըզնըհետ կըտանես շենը, հացտ ցորեն ա տըռնըլական; Էտ տղան էլ քըղաքումը քաչալ ըն իլալ ըսելիս:

Էրկու օրան ետն էտ մարթը քաչալը յոր ա օնում, կյամ շենը: Էտ օրան քաչալը նան հուրան դային բիրանի քյինամ ըն հանդ, բիրանի կյամ:

Մին օր էլ քաչալն հուրան դայուն նիըետ հանդ քյինալիս քամակ ա ինգյհում, քյինամ տանան մոտե կյողըը կեննում, տըեսնում քյուխվըեն տղան կյամ ա դայուն տոն, խիլա կեննում, տհուս կյամ : Տհուս կյալիս քըռըկնգանն ասում ա, - Սօր քյիննական ըմ հանդ, մխըրե վար կա ընելի, իմ եզանցըս մինին ճակատը սիպտակ ա, էն մինին փորեն տակն էլ ա սիպտակ, հըռըցանա վըեր տըեսնաս, գյիդա վըեր ես ըմ, կըկյաս:

Քաչալն էտ վըեր ըսկանում ա, վազ ա տամ հանդ, դայուն անա մին յալլեխ յոր օնում, եզանը ճակատը պըենդ կապում, էն մին եզանը փորեն տակավն էլ հուրան հալավն ա կապում: Դայուն վըէչ մին պեն չի ասում:

Քաչալը կեսօրան մոտե եշում ա, տըեսնամ քըռակենը ամմըեն հինչ յըլլըեխում կապած կյամ ա: Մարթը մնամ ա զարմացած, ասում ա. - Ա՛ կնեգյ, էտ վըե՞ր խաչա յա, վըեր մըզետե հաց ըս պերալ: Կնեգյն ասում ա.-

Դե հինչ ա՞նըեմ, քըղաքու սուվըերած տղա յա, պիտի օտըե, վըեր պեն անըե: Քաչալն ասում ա. - Իմ քըռակեն շնորքավ կնեգյ ա, տըես հավը հինչ լա՜վ էլ իփա՜լ ա, ամմա մըղափուն, վըեր ըրաղեն ըստըքանեն մինը միննան քցալ ա: Նստում ըն մին լավ օտում-խմում, եր կենում ըսկսում վար անըելը:

Քըռակենը վըեր տոն ա քյինա՜մ, քաչալը կարճ հըղըցավ քյինա՜մ ա պիցրա՜նո՜ւմ սուրփ ծառեն հըչեն ղաթը, մաչը նի միննում, ընդըեղան մենակ քըեթը տո՜ւս օնում: Քըռակենը կյամ ա ծառեն ըռաչին չոքում, աղոտկ անում, ասում. «Վա՛յ, ա քըթավուր սուրփ. իմ իրեսըս քու վըետանըտ տակը, տու քաչալն ան ո՜ւրա՜ն դա՜յուն տանըես, քյուխվըեն տղըեն պահես»: Քաչալը ծառեն հըչեն ղաթան սա՜ս ա անում. - Գո՛ւ, գո՛ւ, գո՛ւ...: Քըռակենը գյո՜ւղո՜ւմ ա, թա սուրփը ո՜ւրա՜ն ընգյո՜ւնեան ա, ասում ա.-Հա՛, իմ իրեսըս քու վըետանըտ տակը, մին մատաղ ըմ վիզավ օնում, վըեր քաչալը նան ո՜ւրա՜ն դա՜յին տանըես, հացըս կըհըլավե:

Քըռակենը քյինա՜մ ա տոն, քաչալը՝ դա՜յուն կոշտը:

Էն մին օրը քաչալը դա՜յո՜ւն ղարկում ա հա՜նդ, ինքյը քյինա՜մ տանը քըշտին կյողը կենում, տըեսնում քյուխվըեն տղան եկավ: Նի յա միննում տոն, քըռըկնգանն ասում. - Ա՛յ անաստված, ըրկե սոված մըեռալ ըմ, վըերդե՞ղ ըս իլա՜: Տա թա՝ անիծած քաչալն ինձ խափա՜լ ա: Ըսկսում ա նաղլ անըելը, հինչ վըեր եզանը յիրա՜ն տըեսալ ա: Քյուխվըեն տղան ասում ա. - Էս դո՜նո՜ւմը խնձո՜ր ուտըելավ քյիննակամ ըմ, խնձո՜րին քըչվըեն յիրա՜ կըկյաս:

Էքյսի օրը քյուխվըեն տղան խնձո՜ր ուտըելավ քյինա՜մ ա, քաչալն էլ հետան խնձորին քչնը հըվաքում ա, տանում ո՜ւրա՜նց հըղըցավը վըեր ըծելավ քյինա՜մ հա՜նդ: Քըռակենն էլ երկու յալլեխ կապած, խնձորին հետավը քյինա՜մ ա, հըսնում հա՜նդ: Քաչալը վըիր տըեսնում ա, ասում ա. - Արնըս վկա, իմ քըռակեն վըեսկե կնեգյ ա, ո՜ւրա՜ն պիտի տինիս քըշըոքեն մին թային յիրա՜, վըեսկեն էլ ածես էն մին թայը, ծիքյ տաս, ըրկոքան էլ յոր օնըես:

Քաչալն ո՜ւրա՜ն ծըեռքավը յըլլըխնեն պեց ա անում, տեսնում էս դո՜նո՜ւմ ճոխտն էլ լափ ամմըեն հինչա՜վ լիգյը: Դա՜յին նան տղան նստում ըն մին լավ օտում -խմում, եր կենում քյինա՜մ վարն անում:

Քըռակըենը վըեր տոն ա քյինա՜մ, քաչալը կարճ հըղըցավ հըսնում ա սուրփ ծառը, պիցրա՜նում հըչեն ղաթումը կյողը կենում, մենակ քըեթը

տո՛ւս օնում: Քըռակենը կյամ ա սուրփ ծառըեն տակեն չոքում, ըսկսում աղոտկ անըելը,- Վա՜յ, ա՛ քըթավուր սուրփ, տու քըչալեն ան ո՛ւրա՛ն դա՛յուն տանըես, քյուխվըեն տղըեն պահես: Քաչալը ծառեն ղաթան սա՛ս ա անում, - Գո՛ւ, գո՛ւ, գո՛ւ… Քըռակենը ղաչանք ա անում, ասում.- Ա՛ քըթավուր սուրփ, տու իմ աղոտկըս ըսկաց, քյուխվըեն տղըեն պահե:

Աղոտկան ետը քըռակենը քյինա՛մ ա տոն, քաչալը՝ հա՛նդ, դա՛յուն կոշտը:

Էն մին օրը քաչալը դա՛յուն հա՛նդ ա ղարկում, ինքյը տանը կյողըը կենում: Տըեսնում ա քյուխվըեն տղան եկավ: Քըռըկնգանը մուտանում ա, թա՝ այ անաստված, էրեգյ ինձ սոված ըսպընեցեր, պա քեզ հինչ ը՞մ ասալ: Տա քըչալեն օյինը լոխ նաղլ ա անում: Քյուխվըեն տղան ասում ա. - Սօր հանդ չըմ քյիննա՛կան, նըղացած ըմ, տըեղը քցի, պըանվըեմ, մխըրե դինջա՛նամ: Տա տըեղը քցո՛ւմ ա, քյուխվըեն տղան պըանվում ա, քունավ հընցնում:

Ետնան քըռակենը կյամ ա եղ ածում քթըվուրեն մաչը, տինո՛ւմ կըակեն, վըեր յըղըծու անըե, ինքյը քյինա՛մ ճո՛ւըը: Քաչալը կյողըը կացած տըեղան տո՛ւս ա կյամ, քթավուրը կըական յոր օնում, ղաղ իլած եղը պիրո՛ւմ ածում քյուխվըեն տղըեն պերա՛նը, էլլա կյողըը կենում:

Քըռակենը ճիրան կյամ ա, տըեսնում քյուխվըեն տղան եղը «խմալ ա» , մըեռալ: Մնամ ա չա՛շմիշ իլա՛ծ: Տես ա քյինա՛մ-կյամ, մազըերը քա՛նդո՛ւմ, տեն ա քյինա՛մ-կյամ, մազըերը քա՛նդո՛ւմ, ըսկսում լա՛ց ինիլը: Քաչալը նի յա մննում տոն, թա էտ հինչ ա՞, քռակեն, քյուխվըեն տղան մըեռալ ա, քարը փորեն, լա՛ց մի ինիլ, ես քշերը կտանեմ ո՛ւրա՛նց ղարաղամեն հո՛ւրթավը քցիմ մաժ ղոլ, ետ տըեռնամ: Քռակենը թա՝ դե տես իլի, տես հի՞նչ ըս անում:

Քաչալը քշերեն կեսին քյուխվըեն տըղեն մեյդը տանում ա ո՛ւրա՛նց հո՛ւրթավը քցո՛ւմ մաժ ղոլ, ետ տըեռնում, կյամ քըռըկնգանն ասում. - Տու մին մըեծ պարկու կաշվի փոխան կարել տո, վըեր կյենաս, մինչև ծույներըտ հըսնե, ետնանվըեր ըսկըսես լա՛ց ինիլն ու ծո՛ւյներըտ թակելը, պարկը պեցո՛ւր սա՛ս ա ըննական, լոխճան լա՛վ էլ քու լացիտ սա՛սն ա տո՛ւս կյիլա՛կան:

Քըռակենը մին մըեծ կաշվի պարկա փոխան ա կարում, կյենում: Փուխանեն ճոնդը կյամ ա հըսնում մինչև ծո՛ւյները:

Քշերավը շենումը գյո՛ւղո՛ւմ ըն, վըեր քյուխվըեն տըղեն ըսպանալ ըն, քշերեն կեսին հո՛ւրթավը քցա՛լ ղարաղամը: Մարթիքյ, կընանեքյ, լոխ կյամ ըն քյուխվըեն տոն, ըսկըսում լա՛ց ինիլը, էտ կնեգյն էլ ա քյինա՛մ, լա՛ց ինո՛ւմ, համ ծո՛ւյներըը թակում: Քաչալն էլ քինյա՛մ ա մին ղրաղ տըեղ վըեննը կենում, սա՛սը պեց թողում. « Հո՞ւ ըրա՛վ, հո՞ւ չըրա՛վ, պըրկըփոխան կնեգյն ըրավ»: « Հո՞ւ ըրա՛վ, հո՞ւ չըրա՛վ, պըրկըփոխան կնեգյն ըրավ»:

Լոխ եշում ըն տըեսնում պըրկըփոխան կնեգյն էտ ա, տրան փռնում ըն մին կյիժ ճորու հա՛քյվա կապում, ճորուն թակում, պեց թողում: Ճորեն ծառս ա ինո՛ւմ, վազ-վազ անում, սըրերավ-քուլերավ փըխճը-փախճի անում: Էտ կընգանը ծըեռքը պուկվում ա, ինգյո՛ւմ մին տըեղ, վըեննը պուկվում ա, ինգյո՛ւմ մին օրիշ տըեղ, կլո՛խը պուկվում ա, ինգյո՛ւմ մին օրիշ տըեղ, ջա՛մդակը շան փայ տըեռնում:

## 97.ՃԸՂԱՑԵՆ ՀԸՐՄԱՆԵՔՅԸ

Մին շենում մին դեր ա ինո՛ւմ: Էտ դերը մին կնգան նիըետ ա ինո՛ւմ: Մին օր դերն էտ կնգանը վըեր տըեսնում ա, ասում ա.- Ցավըտ տանըեմ, մունք ամմըեն տըեղ շոռ ընք եկալ, մնամ ա լիհա՛ մեհետ քյինանք քյո՛հնա՛ ճեղացը. էքյո՛ւծ ծա՛քյը-ծիքյիլին մխըրե տեսա-տենա յոր կօնըես, հունց կյա՛ս, վըեր մարթ չի տըեսնա: Տու մի աըեկ, էտ վախտը տաիանք վըեր խոսում ին, մին նըղարաչի տաիանց անա մոտե կյողըը կացած, անջուկ ար օնում:

Տա քըշերավ-քշըրիանա նըղարան յոր ա օնում, ո՛ւրա՛նց անա ճելլի կյամ նի մննում ճըղացըեն տաշտը, ընդըեղ տապառ անում:

Քշըրիանան դերը քյինա՛մ ա ճեղացը օրհնում, նրանա ետն էլ էն կնեգյն ա նի մննում: Հա՛լա՛ սո՛ւրթ-սո՛ւրթա հացըեն սուփրան քցո՛ւմ ըն, նստում մին լա՛վ օտում, ետնան դերն ասում ա.- Ամմըեն պեն ո՛ւրա՛ն տըեղն ա, մըեզ մընամ ա ըստըեղ մին լա՛վ հըրսանեքյ անըենքյ: Դերն ո՛ւրա՛ն սիրած կնգանը խտտում ա թա չէ նըղարաչին կուպըլնըեն տո՛ւս ա օնում, ըսկըսում նըղըրեն վըեր թակըելը: Նըղըրեն սա՛սը վըեր տո՛ւս ա կյամ, ճեղացն օզում ա թա տաիանց կըլխեն պարան կյա՛: Դերը նան էտ կնեգյը սուփրան թողում ըն քցած, փախճում:

Նըղարաչին նստում ա տաիանց թողած տես-տենը մին լավ օտում, սուփրան յոր օնում, քյինա՛մ շենը, տըեսնում դերը ժամըեն ըռաչին վըեննը

կացած: Դերին մուտանում ա, ասում. - Իմ հախըս իրեք մանեթ ա, տե՛ւս կալ տո: Դերն ասում ա.-Քու հինչի՞տ հախը: Նըղարաչին ասում ա. - Ծըեր հըրսանեքյը քյո՛հնա՛ ճըղացումը ես ըմ ըրալ, վըեր փողըս տաս վըեչ, քյիննա՛կան ըմ լոխճինին նաղլ անըեմ: Դերը տե՛ւս ա օնում տրան իրեք մանեթ տամ, ետնան ասում. - Տըես, քըզանա կըման վըեչ մին մարթ գյիդա վուչ...

## 98.ՍՈՒՎԸԾՈՒԹՈՒՆԸ ՋՈՒԼՈՒՄ ՊԵՆ Ա

Մին շենում մին շատ քյասիբ կնեգյ ա ինե՛ւմ ըպրելիս: Էտ կնգանը վընչ մին պեն չի ինե՛ւմ, մենակ մին մաղար տղա յա ինե՛ւմ: Տրա մարթը վըեր մըեռնում ա, տանը վըեչ մին պեն չի թողում: Մըրուտղա զոռավ կլխընեն պահում ին՝ օրն ըխշաղում ին, օրն օտում: Տահանց տանն էլ մենակ մին տաշտ կար, վըեր մաչին համ խմոր ին հունցում, համ հացը տինում մաչին, մին պեցուր տըեղա յէլ կախ ին տամ, վըեր յիտըետե հաց յոր օնըեն:

Քյասիբ մարթը վըեր գյիդավուչ թա հըրուստըննական ա, սըերտը կըճաքե:

Տահանք միշտ ումեդ ին տինե՛ւմ, վըեր պիտի լո՛ւվանան, իտի յէլ ուրըրնեն անց ին կըցնում:

Մին օր էլ էտ կնգանը տղան վըեր ա ինգյե՛ւմ, մըեռնում, մորը թողում չորս պատին ղաթումը: Խեղճ կնեգյն էնքան լա՛ց ա ինե՛ւմ, վըեր օզում ա թա մըեռնե: Հնգըեր-հըրևան կյամ ըն տրան ասում, «Հիշքան լա՛ց իլիր, բոլ ա, ծառան ճողնը վըեր կինգյի, լա՛ց ինիլավ քյեցածը կարել չըս ետ պիրիս, մըեր ծըեռքեն չի, աստված վըեր ուզեցալ ա, իտի յա ըըեռալ, թող վըեղը իրեսեն թիթև ինի, էլ ամմըեն հինչ անց ա կացալ»: Մարը թա՝ չէ, վըեր չէ, ես իմ տղաս կուրցընելան ետը էլ հունց ը՞մ ապրում: Ասում ա, տղըեն մեյդը խըտըտում, կարում չըն նըեստան պուկեն:

Վերչը, օխտը օր, օխտը քշեր մարը լա՛ց ա ինե՛ւմ, տըեսնում ա, վըեր սուվըծթունան պիրա՛նին ճիրերը քյինա՛մ ա, բո՛ւրդան աշկն ինգյե՛ւմ ա հացըեն տաշտըեն, էլ տիմա՛նում չի, ծըեռքը բիդի տաշտը մըեկնում ա, պեցե՛ւր ա ինե՛ւմ, կարում չի հաց յոր օնըե, ասում ա. - Դե վըեր մըռնըլական ըմ, հաց օտըեմ, քուշտանամ, ետնան, էլ խե յը՞մ տըընջվիլավ մըեռնում:

Տանը վըեչ մին պեն չի ինե՛ւմ, վըեր տա վըետանը տակեն տինի, պիցրա՛նա՛ տաշտան հաց յոր օնըե: Քշերեն կեսին տղըեն մեյդը կոխում ա,

պիցրա̀նո̀ւմ տաշտան հաց յոր օնում, օտում:

Սուվըծոթունը վըեր կա, վըեչ մին պեն չի հըրցնում, վըեչ մար, վըեչ տղա, վըեչ հա̀ր, վըեչ քուր, ախպըեր: Սուվըծոթունը զուլում պեն ա, դո̀ւշ-մանըտ տըեսնա վուչ:

99.ՄԱՐԹԻՆ ԿՅԻՐԵՋՄԱՆԸ ՔԱՆԴՈՂ ԿՆԵԳՅԸ

Մին մարթ ա ինո̀ւմ, մինգյել մին կնեգյ: Տահանք ո̀ւրո̀ւր շատ սիրիլիս ըն ինո̀ւմ: Մին օր պայման ըն կապում, վըեր ո̀ւրա̀նց անա մինը մըռնելան ետը էն մինը մինչև ո̀ւրա̀ն կյանքըեն վերչը իրփըվերի մնա:

Հունց ա պըտահում, մարթը ճեյլի յա մըեռնում: Կնեգյը տանում ա, հունցը կարքն ա, մարթին թաղում, կյիրըզմանեն յիրա̀ յէլ մին ըլաչուխ վըեր թողում, կոխկեն մին ըլաչուխ էլ ո̀ւրա̀ն հետե վըեր թողում, տակեն ուրուշու հետե չխարակ մանում, ո̀ւրա̀ն օրըեն հացըեն փողն ինքյ օնում, ըտըեղ էլ ապրում:

Էտ հինգյըստարանը հղըգա մոտե յա ինո̀ւմ, քյինող-կյըվողն էլ շատ:

Մին օր տըեղավ մին շատ հարուստ խոջա յա ո̀ւրա̀ն քյըրվանավն անց կենում: Խոջան ըտըեղ քյարվանը վըենն ա անում, մին քանի մարթ դարկում էտ կնգանը կոշտը, տահանց թափշուր անում, ասում.-Ըսեցեքյ, վըեր մըեր մըեծը ծեն ա տամ, վըեր ինքյը կյա̀ վուչ, ըսեցեքյ՝ ես քյինա̀մ ո̀ւրա̀ն կոշտը:

Տահանք քյինամ ըն կնգանը կոշտը, ասում, վըեր խոջան իստի պեն ա ասալ: Էտ կնեգյն ասում ա.-Ես վախտ չօնըեմ ո̀ւրա̀ն կոշտը քյինա̀լի, թա ես ըմ հարկավըեր, թող ինքյը կյա̀ իմ կոշտըս, տըեսնամ հի՞նչ ա ասում:

Խոջան քյինա̀մ ա կոշտը, կլո̀խ տամ, ետնան ասում.- Հըրցնելը համութ չինի, քու ըլաչուխետ կոխկե ըլաչուխը հո̀ւրն ա՞: Կնեգյն ասում ա.- Ընդըեղ իմ ղորմիցիքյը մարթըս ա թաղված, մունք իստի պայման ընք իլա̀լ կապած, էնքան ըստըեղ պիտի կենամ, վըեր մըեռնեմ, ինձ տանեն ո̀ւրա̀ն քշտին թաղըեն:

Խոջան ասում ա.-Ես մին հարուստ մարթ ըմ, կնեգյ չօնըեմ, իմ մո̀ւլքյըս, իլըծ-չիլա̀ծըս մինչև մըեր կյանքեն վըերչը մըեզ բոլ ա, տըեսնում ըմ, վըեր տու քու մարթիտ հետե լա̀վ կնեգյ ըս իլա̀լ, մըղափուն ա քու էտ ջա̀հիլ կյանքըտ, վըեր խըվըրցնում ըս, եք տու իմ կնեգյըս տըեռ, էսքան իլըծ-չիլա̀ծն էլ մըեզ կըմնա, ո̀ւրո̀ւշո̀ւ ծըեռք չի ինգյիլ:

Կնեգյը ղաբուլ ա անում, էտ խուջեն նիըետ փսակվում: Տրանա ետը խոջան ասում ա. - Թա ինձ սիրում ըս, քյինա մարթիտ կյիրեզմանը քանդի, մեյդը տո՛ւս կալ, քցի ծո՛րը: Կնեգյը քյինա՛մ ա պահի նան թոխուրը յոր օնում, մարթին կյիրեզմանը քա՛նդո՛ւմ, մեյդը տանում քցո՛ւմ ծո՛րը, կյամ խուջեն ասում.- Ասածըտ ըրալ ըմ: Խոջան ասում ա.- Վըեր տու քու անմեղ մարթիտ կյիրեզմանը քա՛նդա՛լ ըս, վըսկըռքնեն ծո՛րն աձալ, իմն էլ իտի կանըես, քըզ մնան կնեգյն ինձ հարկավըեր չի, տո՛ւս եք, քյինա:

## 100.ՄԱՐԹԻՆ ՀԱՎԱՏԱՐԻՄԸ ՇՈՆՆ Ա

Մին մարթու կնեգյ սիրա՛կան ա ինո՛ւմ պըհելիս: Մին օր կընեգյը ետ ա տըեռնում սիրըկանեն ասում.-Մինչև հի՞ք պիտի մունք թըքըն-թաքուն շոռ կյանք, սօր ես իմ մարթիս խա՛փիմ, ասըեմ քյինա՛մ ընք իմ հա՛րա՛նց տոն, հղեննի էսհինչ տըեղը շա՛մբուտան կըմուտանաս, ըսպանըես, ընղեղեքյ կըթաղենքյ, տրանա ետը փսակվենքյ, մինչև վերջ բիրա՛դի կապրենքյ: Սիրականը թա՝ լա՛վ:

Տրանա ետն էտ կնեգյը քյինա՛մ ա տոն, մարթին ասում.- Ըսկի գյո՛ւղո՛ւմ չըս թա հաներ օնըես, յա օնըես վուչ, սաբավ տու վըել նրա հետե փըեսա յը՞ս: Մարթը թա՝ քանի հե՞տե յըս ասալ եք քյինա՛նք իմ հա՛րա՛նց տոն, վըեր եկալ չըմ: Կնեգյը թա՝ դե էն վախտը քըզ նիըետ մին պա՛հ էլ եր կալ, վըեր բուստան են պենն ընելիս քյո՛մա՛գյ անըես:

Մարթը քյինա՛մ ա պա՛հը յոր օնում, մնացած տես-տենը հիզըրում, էքյսը քշերավ հղե յըն ինո՛ւմ, քյինա՛մ: Հղեննի մին խոր ձմակավ վըեր անց ըն կենում, մին շամբ տըեղա մուտանում, կնեգյը մարթին ասում ա. - Նըղացալ ըմ, նստենքյ միխըրե դինջա՛նանք: Մարթը թա՝ լա՛վ, էս փիս տըեղան տո՛ւս կյանք, էն դոլին կընստենքյ: Կնեգյը մարթին վիզա՛ն կախ ա ինո՛ւմ, թա՝ չէ՛, վըեր չէ, ես էլ կարում չըմ քյինա՛մ, նստե, դինջա՛նանք: Մարթը նըստում ա, կնեգյն էլ ա նստում: Էղ դարո՛ւմը կնգանը սիրականը շա՛մբին քմական տո՛ւս ա կյամ, տրան վըեր ա քցո՛ւմ, օզում ա վըեր ըսպանե: Լիհա՛ խրեգյ ա ինո՛ւմ մնացած, վըեր պկան փոնե խեխտի, տրա շոնը քմական թաքուն կյա՛լիս ա ինո՛ւմ, կյամ ա կնգանը սիրըկանեն էն փիս-փիս տըղերան փըռնում, խըղձըըցնում: Էտ մարթը ծըեռքեն պա՛հա՛վը թխում ա, տրա կլո՛խը լափուճ անում, եր կենում կնգանն էլ ըսպանում, ճոխտեն նի աձում շա՛մբը, ետ տըեռնում քյինա՛մ սուղումն ասում, վըեր

կնեգյըս ո̀ւրա̀ն սիրըկանեն նիըետ ուզեցալ ա ինձ ըսպանե, շոնըս հըսալ ա, ինձ քյո̀մա̀գյ ըրալ, ճոխտեն էլ ըսպանալ ըմ, պա̀հը, վըեր ծըեռքըս ըն տուվալ, հանցու ինձ տըղվարեն, ո̀ւրա̀նց հետե յա հարկավըեր եկալ:

Սուդումը տըեսնում ըն, վըեր տա դո̀ւզ ա ըրալ (հու վըեր էլ ինի, իտի կանե), պեց ըն թողում:

101.ԴԵՐԻՆ ՍԸՎԸՅՐԵՆ, ԴԻՐԸԿՆԳԱՆԸ ՍԻՊՏԸԿՅՐԵՆ

Մին շենում մին դեր ա ինո̀ւմ: Էտ դերին աշկը մին նոր փսակված թա̀զա̀ հառհնու փոնում ա: Հիբը վըեր էտ հառհնը ճո̀ւրն ա քյինա̀մ, էտ դերը տրա առաչը կտրում ա, աշկավ ա անում, մրքան փոնում, հա̀զո̀ւմ, հինչ վըեր պեն ա օզում հըսկըցնըե: Էտ հառհնն էլ քյինա̀մ ա տոն, ամմըեն հինչ մարթին ասում: Մըրթըկնեգյ մըսլըհաթ ըն անում, վըեր դերին քյա̀լա̀գյ կյա̀ն:

Էտ հառհնը նորըմինան ճո̀ւրը քյինա̀լիս դերը կյամ ա հըղըցըեն մաչակ տըեղը վըեննը կենում, հառհնը մուտանում ա, ասում. - Տեր հայր, մարթըս հա̀նդ ա քյեցալ, տանը մենակ ըմ մնացալ, թա օզում ըս ինձ նիըետ ինիս, մին լա̀վ պադրաստություն քաշի, քըզնիըետ էլ հենգյհա̀րո̀ւր մանեթ եր կալ, եք մըեր տոն: Դերն ասում ա.- Հիբ կյա՞մ: Հառհնը ասում ա.- Ո̀ւրո̀ւգյո̀ւ կըկյա̀ս:

Դերը վըեր քյինա̀մ ա տոն, հիզըրվում ա տես-տենը յոր օնում, վըեր ո̀ւրո̀ւգյո̀ւնը հըե ինի: Դիրա̀կենը կյամ ա էտ հառհնեն կոշտը, ըսկսում նիըետը քախծր զըո̀ւց անըելը: Հառհնեն հըրցնում ա, թա էտ հինչ ը՞ս օտում, վըեր էտքան դաշանգյ ըս, էտքան սիպտակ, հենց ըս լիհա̀ պեմբա̀կ ինիս: Էտ հառհնը ասում ա.- Դիրակեն, ես քըզանա սըև ըմ իլա̀լ, իմ մարթիս ծըեռքն ինձ ամմըեն օր նի յա կյամ, գյո̀ւղո̀ւմ չըմ հո՞ւնց ա նի կյամ, վըեր սիպտակում ըմ, թա օզում ըս ինձ մնան տու վըէլ սիպտակես, կըքյինա̀ս տոն, մին լա̀վ պադրաստություն կըքաշիս, քըզնիըետ էլ հազզար մանեթ փող կըպիրիս, ես իմ մարթիս կասըեմ, քեզ մին լավ կըղըշընգյցնե, կըտըեռնաս պիմբա̀կա էլ սիպտակ: Դիրակենը հըրցնում ա, թա՝ հիբ կյա̀մ, հառհնը ասում ա.- Էքյուծ ո̀ւրո̀ւգյո̀ւնը կըկյաս տոն, քեզ յիշըլական ըմ:

Հառհնը ճիրա̀ն կամ ա տոն, ո̀ւրո̀ւգյո̀ւնը դերը ծըեռքեն մին յալըեխ տեսավ-տենավ լիգյը կյամ ա էտ հառհնեն տոռնը թակում, հառհնը տոռնը պենում ա, դերը նի յա մննում, յալըեխը տինո̀ւմ ըստոլեն, հենգյհա̀րո̀ւր

մանեթն էլ տամ ո՛ւրա՛ն, հառհնը ճո՛ւր ա թըքցնում, դերին ասում.-Հա՛լա՛ սո՛ւրթա՛ մին լա՛վ լըղաց, ետնան բիրա՛դի հաց կընստենքյ։

Դերը շորերը հանում ա, նի մննում տըշտակեն մաչը՝ թա լըղանա, բո՛ւրդա՛ն տոռնը թակում ըն, հառհնը ասում ա. - Վա՛յ, մարթըս եկալ ա։ Դերն ասում ա. - Պա ես հինչ ա՞նըեմ։ Հառհնը դերին կըլխըեն սըև նոթ աածում, ջանը սուվըցնում, թողում մենակ սիպտիկի տալիս կըռքընեն նան աշկըերը, դերին պատին տակըեն վըեննը կըցընում, լամբը նի կըցնում, տինո՛ւմ կըլխըեն։ Էտ վախտը հառհնեն մարթը տոռնը պենում ա, նի մննում, ասում,- Ա՛ կնեգյ, հինչ լավ պադրաստություն ըս քաշալ, նստըէ մին լա՛վ օտըենքյ-խմըենքյ, քյեփ անըենքյ։

Մըրթըկնեգյ նստում ըն թա չէ, դիրակենը բո՛ւրդա՛ն նի յա մընում, ծըեռքեն մին կապած մըեծ յալլըեխ։ Հազզար մընեթին նիըետ յալլըեխը տինո՛ւմ ա ըստոլըեն, ասում.-Հունց ըրա, վըեր ես էլ կնգանըտ մնան դիշինգյանամ, իմ իրեսըս էլ ինդի սիպտակ ինի։ Տա դիրըկնգանը քաշում ա լամբըեն լուսին տակը, ո՛ւրա՛ն ասածն անում, ետնան էլ ասում.- Դիրակեն, մեհենգյ ըրխըյին քյինա՛ ծըեր տոն, համ դըշընգյացալ ըս, համ սիպտակալ…

Դիրա՛կենը քյինա՛մ ա ո՛ւրա՛նց տոն, տահանք մըրթըկնեգյ նստում ըն հաց օտում, ըստոլը հըվաքում։ Ետնան մարթն ասում ա, - Ա՛ կնեգյ, մննաս ինգյա՛լ ա քեզ հըրցնեմ, էն պատին տակըեն սըև պենը հինչ ա՞։ Հառհնը ասում ա, - Լամբըեն տակըեն տինիլի սարք ըմ բըզարան ինքյ կալալ, տըեղ չի կար, վըեր լամբը տինիմ, մեհենգյ տըես հո՞ւնց ա լա՛վ լո՛ւս տամ։ Մարթն ՛ասում ա.- Ա՛ կնեգյ, պա էն նըէ՞րքենը հինչ ա, կնեգյը թա՝ լամբըեն փիթիլքաշին ա։ Մարթն ասում ա.-Փիթիլքաշին լամբըեն յիրա՛ կինի՞, թա սարքըեն յիրա՛, տրա շինող ուստըեն հերն անիծած, քյինա՛մ ցակատը պիրիմ կտրըեմ, ո՛ւրա՛ն տըեղան տամ։

Մարթը վըեր տոռնը պենում ա, տո՛ւս կյամ թա քյինա՛ ցակատը պիրի, հառհնը դերին մուտանում ա, ասում.-Ճեղ ըրա փախըեր, թա չէ, մարթըս ցակատը ծըեռքեն էս սհաթըս կյիլա՛կան ա։

Դերը զոռավ ըտըեղատ տո՛ւս ա պըրծնում, սըվացած, քըրտնըենքում կորած, տըկլոր փախճում, կյամ ո՛ւրա՛նց տոն։ Դիրա՛կենը վըեր տըեսնում ա, ասում ա.- Վա՛յ, քուռանամ, էտ վըերդըե՞ղ ըս իլա՛լ։ Դերն ասում ա. - Սուս ըրա, մարթ զյիդա՛ վուչ, վըերդեղ քեզ սիպտըկցրալ ըն, ընդըեղ էլ ինձ սըվըցրալ ըն...

## 102.ԻՐԵՔ ՎԸԵՍԿԵ ՍԱՐ

Մին մարթու, մինգյել մին կնգան իրեք տղա յա ինո՜ւմ: Տղեքյը մըծանում ըն, փսակվում, հորը նան մորն անա ճոկվում, օրիշ տըեղ ապրում: Մըրթըկնեգյ պըռավում ըն, կարում չըն ո՜ւրա՜նց պահեն: Կնեգյը միշտ նըղսըրտվում ա, մարթն ասում ա.- Նըղսըրտվումիլ, դուլվումըս իրեք վըեսկե սար օնըեմ: Կնեգյը ամմեն հինչին տիմա՜նում ա, պըկըսոթունը լոխ տանում, մարթն էլ առաջվա մնան սըերտ ա տամ, ըրխըյին ընում :

Մին օր էտ հլիվուրեն սուղան ծեն ըն տամ, տա քյինա՜մ ա, տըեսնում ո՜ւրա՜ն իրեք տղեքյը սուղեն հըյաթումը վըեննը կացած, ո՜ւրա՜ն ըն եշում: Հըրցնում ա, թա էս հինչ խա՞բար ա, խեր ա՞ , թա՝ շառ: Տղեքյն ասում ըն. - Մըզեստե խեր ա, քըզեստե գյո՜ւղո՜ւմ չընք: Հա՜րը խոսում չի, նի յա միննում սուղը, սուղյան հլիվուրեն ասում ա, վըեր ո՜ւրա՜ն տղեքյը կյենգյատ ըն ըրալ, թա ճուկվելիս հա՜րն ո՜ւրա՜նց վըեսկան փայ չի տուվալ, ասում ըն իրեք վըեսկե սար օնըես, մեհենգյ լոխ պիտի կյիրվի, ասըե, տըեսնանք հի՞շտեղ ա քու վըեսկեստ: Հլիվուրն ասում ա.-Սուղն ապրած կենա, ես իմ վըեսկե սարերըս իմ տղորանցըս ըմ հաշն ըրալ, մեհենգյ պենա՜ն տո՜ւս ա կյամ, վըեր իրեք կտողնու քչն օնըեմ:

## 103.ՉԱ՜ՐՉՈ՜Ւ ԴԱ՜ՐԴԸ

Մին շենում մին շատ քյա՜սիբ մարթ ա ինո՜ւմ: Տա մին օր հա՜նղա՜ տոն կյա՜լիս եշում ա, տըեսնում խոխեքյը մին քարավ խաղ ըն անում: Խուխոցան մինն ասում ա,-Դա՜յի, դա՜յի, վեց ճուղուպուր տո, էս քարը քեզ տանք: Էտ մարթին ծըեռքեն էլ տասսը ճուղուպուր ա ինո՜ւմ, տըհանցա ճոկում ա վեց փոչ ճուղուպուր տամ խուխոցը, քարը յոր օնում, տանում տոն:

Էտ քարը քշերն իշեղ ար տամ: Էտ մարթն էլ ըսկի գյո՜ւղո՜ւմ չար, թա տա հինչ քար ա:

Մին օր հեռու տըեղա մին չա՜րչի յա կյամ էտ շենը, տրա տանն էտ քարը տըեսնամ ա, ասում.- Էրկու հազզար մանեթ տամ, ինձ տո: Էտ մարթը գյո՜ւղո՜ւմ ա թա տա ո՜ւրա՜ն անավ զարափաթ ա անում, ասում ա՝ հը՛, է՛, հը՛, ետնան էլ ծիծաղում: Չարչին գյո՜ւղո՜ւմ ա, թա փողը խրեգյ ա, տրա հետե յա ծիծաղում, ասում ա.- Դե լավ, իրեք հազզար մանեթ կըտամ: Էտ մարթը նորըմինան ա ասում՝ հը՛, է՛, հը՛, էլլա ծիծաղում: Չարչին էլլա

յա գյո̀ւղո̀ւմ, թա փողը խըեգյ ա, ասում ա.- Դե լավ, հենգյ հազզարը կըտամ: Էտ մարթն էս դոնում ծիծաղում չի, գյո̀ւղո̀ւմ ա, թա չարչին ո̀ւրա̀ն անավ մազաղ ա անում: Սա յէլ տըեսնում ա, վըեր խոսում չի, տո̀ւս ա օնում հենգյհազզար մանեթը, տամ ո̀ւրա̀ն, էտ անկյին քարը յոր օնում, տանում մին օրիշ տըեղ տասսը հազզար մընեթավ ծախում:

Չա̀րչին կյամ ա էլլա էտ շենը, օզում էն մարթին զարմացնե, քյինա̀մ ա, ասում.- Քըզանա ինքյ կալած քարն օրիշ տըեղ տասսը հազզար մընեթավ ըմ ծախալ: Տա յէլ ասում ա. - Ի՞նձ հինչ, ես տրան վեց փոչ ճուղուպուր ըմ տուվալ: Չա̀րչին էտ վըեր ըսկանում ա, դա̀ստին սըերտը ճաքում ա, մըեռնում:

## 104.ԽԸՆԸՄՈԹՈՒՆԸ ՆԱՆ ՊԸԼՈԹՈՒՆԸ

Մին տղա մին ըխճըկան յիրա̀ սիրահարվում ա: Ախճիգյը տղըեն ասում ա,- Ես շեփտին մին օրը խանում ըմ տըեռնում, թա ինձ հավան կըկենաս, քըզ նիըետ կըփսակվեմ: Տղան էլ ասում ա.- Ես շեփտին մին օրը պըլանում ըմ, թա ինձ հավան կըկենաս, ինձ նիըետ փսակվե:

Տահանք ո̀ւրո̀ւր նիըետ փսակվում ըն, ըսկսում բիրա̀դի ապրըելը: Մին օր մարթը ծմական փադ ա ճորուն պեռնում, պիրո̀ւմ: Կնզանը ծեն ա տամ, վըեր տո̀ւս կյա̀, ո̀ւրա̀ն քյո̀մա̀գյ անըե, փադը վըեր ածըեն, տըղվարեն: Կնեգյը տանան տո̀ւս չի կյամ: Մարթը նի յա մննում տոն, տըեսնում կնեգյը թախտըեն յիրա̀ առոք-փառոք պըրանված, օզում էլ չի տըեղան տո̀ւրո̀ւր կյա̀: Մարթը վըեր հըրցնում ա, թա էս հինչ խաբար ա, կնեգյն ասում ա. - Պա քեզ աս ալ չը՞մ, վըեր շեփտին մին օրը խանում ըմ տըեռնում, մեհենգյ անջուկ կալ, տըես հինչ ըմ ասում՝ քյինա̀մ ըս մըեր վըխճըրներան մինը մորթում, շենումը իիշքան մարթ կա, լոխճինին ծեն տամ, վըեր քյեփ անըենքյ: Մարթն ասում ա՝ լավ: Տո̀ւս ա կյամ փադը ճորան վըեր ածում, տահանց մաչան մին խո̀ւլխո̀ւլո̀ւտը ճոկում, յոր օնում, նի մննում տոն, կնզանն ըռաշին ըսկըսում կլո̀խը տըմբտըմբցնել, պըելու մնան սա̀սեր անըել, էտ խո̀ւլխո̀ւլ̀ո̀ւտ փադավը կնզանը մաշկեն նի հըսցընում, կնեգյը թախտան լոք ա տամ վըեր կյամ, լո̀ւզին տո̀ւս օնում, ղաչանք անում, ասում. - Էտ հինչ պենի՞ յըս, ա՛ մարթ: Մարթն էլ ասում ա.- Պա ես ասալ չը՞մ, վըեր շեփտին մին օրը պըլանում ըմ: Կընեգյը թա՝ եք ես իմ խընըմոթունըս թողըեմ, տու վըել քու պըլոթունըտ...

## 105.ՄԵԽԵՆ ԽԱՇՈՒՆ

Մին ուստա մին պըռավու հետե պեն ար անում: Հացըեն վախտը կյամ ա, ուստան սուվըծանում ա: Եշում ա, վըեր պառավը հաց շինի ծեն տա, պառավն էլ հաց չի շինում: Էտ ուստան մին կյիսկը մեխեր ա ճոկում, լուվանում, պըռավըեն հըրցնում, թա ղզղան օնըե՞ս: Պառավն ասում ա.-Հինչ ըս ա՞նում ղըզղանը: Ուստան ասում ա.-Օզում ըմ մեխու խաշու իփիմ: Պառավը չերը էտ ըսկացած չի իլա̂լ, վըեր մեխան խաշու կիփին: Ղզղանը տամ ա ո̂ւրա̂ն, ուստան նորից ա մեխերը լուվանում, ածում ղըզղանը ճո̂ւրը լսնում, տինո̂ւմ կրակեն:

Մին խիլլա̂ վըեր կենում ա, ուստան պըռավըեն հըրցնում ա, թա ծըեր տանը եղ կինի՞, պառավը թա՝ պա առանց եղ տոն կինի՞: Ուստան թա՝ ղե մխըրե եղ պեր: Պառավը եղեն պոլիգյը յոր ա օնում, պիրում տամ ուստըեն: Ուստան մին քանի քթո̂լ եղ ա տո̂ւս օնում, քցո̂ւմ ղզղանը: Մխըրե յել վըեր կենում ա, ուստան պըռավեն ասում ա.- Ծըեր տանը ծո̂ւ կինի՞: Պառավը թա՝ հա՛, կա: Ասում ա. - Դե վըեր կա, մին չորս-հենգյ ծո̂ւ պեր: Պառավը ծո̂ւն պիրո̂ւմ ա տամ ո̂ւրա̂ն, ուստան կուտրատում ա, ածում ղզղանը: Մխըրե յել վըեր կենում ա, ուստան ասում ա.- Ա՛ պառավ, թա մըես կա, մին քանի կուտուր մըես էլ պեր: Պառավը մըեսն էլ ա պիրո̂ւմ, տամ ո̂ւրա̂ն: Ուստան մըեսն էլ ա կըտորում, ածում ղզղանը: Մխըրե յել վըեր կենում ա, ուստան պըռավըեն ասում ա. - Ծըեր տանը սողան կինի՞: Պառավը սողանն էլ ա պիրո̂ւմ, ուստան կըտորում ա, ածում ղզղանը: Ետնան թա՝ ծըեր տանը տա̂խտեղ կինի՞, աղ կինի՞, էս կինի՞. էն կինի՞, վերչը, լոխ պըռավըեն անա ինքյ օնում, մին լավ մսա̂վ, ծո̂ւվավ, կընանչավ, տեսավ-տենավ խորագյ իփում, ետնան հաց էլ օզում, ղզղանը վըեր օնում, պըռավըեն ծեն տամ, թա՝ եք մեխու խաշու օտըենքյ: Պառավը թա՝ չէ, քըմմատաղ, ես կեռեքյ չօնըեմ մեխու խաշու ուտելի հետե, տու կեր:

Ուստան ղզղանան մեխերը տո̂ւս ա տամ, ածում ո̂ւրա̂ն թորբուն, նստում խորագյն օտում, պըռավըեն ասում.-Հինչ լավ իփալ ա մեխեն խաշուն:

## 106.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ԿՆԵԳՅԸ ՄԱՐԹԻՆ ԿՅԻԺԸՎՑՆՈՒՄ

Մին կնեգյ ո̈ւրա̈ն մարթին ասում ա.-Վըեր օզըեմ, քեզ կըկյիժըվցնըեմ: Մարթն ասում ա՝ կարել չըս:

Մին օր մարթը բըզարան ծո̈ւկուն ա ինքյ օնում, պիրո̈ւմ տոն: Կնեգյը ծո̈ւկունը ժարիտ ա անում, սիրըկանըեն նիըետ օտում, սիրըկանըեն պերա̈ծ մըեսն էլ իփո̈ւմ ա, տամ մարթին: Մարթն ասում ա. - Ա՛ կնեգյ, էս հինչ ը՞ս տամ ինձ: Կնեգյն էլ ասում ա.-Հինչ վըեր պերալ ըս, էն ըմ տամ: Մարթը սուս ա անում, մին օր էլ կնգանը փուրցելի հետե էլլա յա բըզարան ծո̈ւկուն ինքյ օնում, պիրում տոն, թիլավ կապում, պատալըկան կախ տամ: Տու մի ասել, էս կնգանը սիրականը էն ա ինո̈ւմ թախտափուշին տակըեն: Մին ծակ տըեղավ ծըեռքը քցո̈ւմ ա, ծիքյ տամ, ծո̈ւկունը կըլխըյեր տանում: Կնեգյը վյըեր նի յա միննում տոն, մարթը կըլխըյեր եշում ա, տըեսնում ծո̈ւկուն չի կա: Կնգանը հըրցնում ա, թա հոր ա՞ ծո̈ւկունը, մինգյել կըլխըյեր եշում ա, տըեսնում ծո̈ւկունը են ա ո̈ւրա̈ն տըեղան կախ իլա̈ծ: Կնեգյն ասում ա.-Հի՞նչ ծո̈ւկուն ա: Մարթը մին էլ ա եշում, տըեսնում ծո̈ւկուն չի կա: Կնեգյը մարթին թա՝ տու կյիժվալ ըս: Մարթը մնամ ա պերանը պեց կալած, կնգանը յիշիլիս: Կնեգյը վազ ա տամ բըլկոնըեն վըեննը կենում, ծեն տամ, ժուղովուրթը լոխ կըլխըեն հըվաքում, թա՝ հա՛յ-հարայ, եկեքյ քյո̈մագյ իլիքյ, մարթըս կյիժվալ ա, պա պատալըկըեն ծո̈ւկո՞ւն կինի, վըեր ասում ա էն ա կախ իլա̈ծ:

Հըվաքված մարթիքյ յիրա̈ յըն տըեռնում էտ մարթին կուռնըերը կըպո-տում, տանում քցո̈ւմ կյիժանուցը, մին հենգյ օր պահում, տըեսնում վըեր խըելքը տըեղն ա, պեց ըն թողում:

Մարթը կյամ ա տոն, պատալըկըեն եշում, տըեսնում ծո̈ւկունը մին կախ ա ինո̈ւմ, մին էլ կորչում, կնգանն ասում ա.- Աշկըես էլլա ծո̈ւկուն ա ուրվամ, քյա̈նղիրը պիրիլ տո, հենց ըմ նորըմինա̈ն կյիժըվիլիս ինիմ: Կընեգյը մարթին ասում ա.- Պա վըեր ասում ըմ քեզ կըկյիժըվցրնըեմ…

107.ՆՌՒՔՅԱՐԵՆ ՔՅԱԼԱԳՅԸ

Մին օր մին դերու հըրսնքա ծեն ըն տամ: Դերը կնգանն ասում ա.-Եք բիրձդի քյինձնք հըրսանեքյ: Դիրակենն էլ ասում ա.- Ես մխըրե հիվանդ ըմ, կարում չըմ կյամ, իմ տրեղ նոքյձրը քըզնըհետ տար, հինչ վըեր օտըես, իմ փայըս էլ յոր կօնըես, ուրձն անավ դարկես:

Դերը քյինձմ ա հըրսանեքյ, լավ օտում ա-խմում, քյեփը քյուքըցնում, դիրըկնգանը փայն էլ մին յըլլըեխում կապում , տամ նոքյձրեն, ասում. - Տար տո իմ սիրածես: Նոքյձրն էլ յալլըեխը պեց ա անում, հինչ վըեր մաչին կար, լոխ տամ դերին շանը:

Դերը հըրսընքան կյամ ա, քյեփը քյուքացած, օզում ա, վըեր կնգանը նիըետ մխըրե զարափաթ անըե, դիրակենը կըզնըվում ա, ասում.-Հինչ ա՞, տու կերալ ըս-խմալ, խրեզյ ա մնամ, թա տրաքըես, իմ փայըս խե չը՞ս դարկալ: Դերը նոքյձրեն ծեն ա տամ, հըրցնում.-Հինչ ը՞ս ըրալ յալլըեխը:

Նոքյձրն ասում ա.- Տուվալ ըմ քու սիրածըետ: Կնեզյը վըեր սիրածու անում ա ըսկանում, տըեղը թող-թող ա ինում, ասում ա.-Հա՞, մինզյել սիրած ը՞ս պահում: Համ ասում ա, համ տոռնը դերին իրեսեն յիրձ կյամ, նի մննում օրիշ օթաղ: Դերը նոքյձրին հըրցնում ա, թա իմ սիրածըս հու վա՞, վըեր ես զյուղում չըմ, յալլըեխն էլ տուվալ ըս ուրձն:

Նոքյձրն ասում ա.-Քու սիրածըտ մըեր Բողարն ա, թա օզում ըս փորցըես, քյինձ կընգանըտ մին կուճուր սիլլձ տո, տըես քեզ հինչ ա անում, ետնան քյինձ փաղը եր կալ, Բուղարըեն հիշքան օզում ըս թակե, տըես հո՞ւնց ա վըեններըտ լոուզ տըլական:

Դերը քյինձմ ա կնգանը մին կուճուր սիլլձ տամ, կնեզյը պերձնը պեց ա անում, ըսկըսում լալաջավահիր վըեր ածելը, վըններեն չմուշկնեն էլ յոր օնում, կոխում կյոտուն դաթը, տանան տուս կյամ, քյինձմ հձրձնց տոն:

Ետնան էլ քյինձմ ա շանը թակում, շոնը կյամ ա վըեններն ինգյուռւմ, ըսկըսում վըենները լուզ տալը, ասես լիհա դաչանք-պղատանք ա անում, վըեր ուրձն թակեվուչ: Դերը նոքյձրեն ասում ա.- Տու դուզ ըս ասալ, մեհենզյ կնեզյըս ինձձնա տուս ա եկալ, հունց ա՞նըեմ, վըեր կյձ տոն: Նոքյձրն ասում ա.- Ա՛ դեր, տու ինձ իրեք մանեթ տո, հունց անեմ, վըեր ինքյը ուրձն վըեննավը կյձ տոն:

Դերը նոքյձրին իրեք մանեթ ա տամ, նոքյձրը քյինձմ ա դիրըկնգանը հձրձնց թաղավն անց կենում, ամմեն հըյաթու քըշտավ քյինձլիս ծեն

տամ.- Հավ, վըեխճար, հո՞ւ օնըե, ինքյ ըմ օնում, մըեր դերը փսակվում ա, օզում ա հըրսանեքյ անըե:

Դիրծկենը տըեսնում ա, վըեր նո՛քյծրը խիլլծ հավեր ա ինքյ կալալ, չմուշկնեն վըներան հանում ա, կոխում կյոտեն, վազ տամ քյինծմ տոն, տոռնը մաչան կապում, դերին ասում.- Ղալաթ չի ըրալ, էս տոնը թծզա հառիընը կյծ, կըլո՛խը կըթողեմ ըստըեղ, էս տանը կնեգյը հծլծ ես ըմ:

## 108.ՄԱՐԹԻՆ ՇՈՐԱՎ ՉԸՆ ՃԻՆԾՆՉԻԼ

Մին հարուստ մարթու մին շատ դծշանգյ կնեգյ ա ինո՛ւմ: Մարթը տրա հետե միշտ թինգյծկան շորեր ա ինքյ օնում, ինքյը խուտուրու-մուտուրու կյենում: Մին օր էլ կնեգյն ո՛ւրծն ամենալավ շորերը կյենում ա, տո՛ւս կյամ հիլուն առաչը, մարթին ծեն տամ կոշտը, ասում.-Ա՛ մարթ, մին հիլուն մաչին եշի, ինձ էլ տըես, քեզ էլ, մունք ո՛ւրո՛ւր սազում ը՞նք, ո՛ւրո՛ւր լայաղ ը՞նք, թա՝ չէ: Մարթն ասում ա.- Ա՛ կնեգը, ես հինչ ըմ՞, տու մին թաքուհի յըս, ես՝ քո քշտիտ մին նո՛քյծր: Կնեգյն ասում ա. - Ես օրիշ պեն չըմ ասում, ասըելըս էն ա, վըեր ես քեզ լայաղ չըմ: Մարթը խոսում չի:

Մին օր էլ մարթը կյամ ա կնգանը կոշտը, ասում.- Դո՛ւքյծնը կնգան լծվ թինգյծկան շոր ա եկալ, դո՛ւքյծնչո՛ւն ասալ ըմ, վըեր պահե, հինչ էլ օզում ա ինի, պիտի վըխճըրնըեն լոխ ծախըեմ, ինքյ օնըեմ, վըեր կյինը տո՛ւս չի կյծ, տոնն էլ պիտի ծախըեմ, ես օզում ըմ, վըեր իմ կնեգյըս միշտ լավ շորու մաչի ինի, հանցու իմ աշկըես միշտ դծշծնգյ ուրվա: Կնեգյն ասում ա. - Վըեր իտի յա, թող մնա, կյըրվող տարըեն ինքյ կօնըենքյ: Մարթը թա՝ չէ, էտքան էրկան թողըել չըն, վըեր դո՛ւքյծնումը կենա, պիտի մեհենգյ ամմըեն հինչ ծախըեմ, ինքյ օնըեմ: Կնեգյը թա՝ չէ, այ մարթ, տոնն էլ վըեր ծախըես, մըզըրա կըծիծաղեն, տոնը թող կենա, վըխճըրներեն նիըետ իմ թինգյծկան շորըերը լոխ տար բըզարումը ծախե, ետ կյծլիս ինքյ կալ, եք: Մարթը թա՝ հա, իտի լծվ ա, տու ինձծնծ խըելունք ըս մտածում:

Կնեգյն ո՛ւրծն լծվ-լծվ շորըերը լոխ տամ ա մարթին, վըեր տանե ծախե, ինքյը մաշած, ճընթըռըմ շորեր ա կյենում, մարթին եշում, վըեր թազզա շորն ինքյ օնըե, պիրի: Մարթն էլ քյինծմ ա վըխճըխնըեն դարկում սարը, մենակ կնգանր շորըերը տանում ծախում, ո՛ւրծն հետե լծվ շորըեր, լծվ չերքյեզկա փափաղ ինքյ օնում, լծզգյո՛ւ փորմու դաման էլ կոխկան կապում, ծիյին յիրծ նստում, կյամ տոն: Կնեգյը ճինանչում չի: Մարթն

ասում ա.-Ա՛ կնեգյ, եք ո̈ւրո̈ւր կոխկե հա̈լա̈ մին վըեննը կենանք, տըեսնանք ո̈ւրո̈ւր սազո՞ւմ ընք, թա՝ չէ: Համ ասում ա, համ կնգանր կուռնան փռնում, պիրո̈ւմ հիլուն առաչը: Կնեգյը վըեր կոխկըեն մինգյել հիլուն մաչին եշում ա, մարթին ասում ա. - Տու ինձ լայաղ չըս, տու մին թաքավըեր ըս, ես՝ մին ա̈լա̈քյչի: Մարթը թա՝ դե վըեր ես քեզ լայաղ չըմ, փալազ-մալազըտ հըվաքե, տանաս տո̈ւս եք:

## 109.ԼԱԼԸԵԳՅԸ ՆԱՆ ՔԱՌԸ

Մին լալըեգյ մարթու էծեր կորչում ըն: Տա կյամ ա տըեսնում մին մարթ ո̈ւրա̈ն բոստանը պա̈հա̈վ ա տամ: Էտ մարթն էլ քառ ա ինո̈ւմ: Լալըեգյը խըռխըռալավ զոռավ ծեն ա տամ, վըեններավ- ծըեռքերավ տրան հըրց-նում, թա ըստըեղեքյ էծեր չը՞ս տըեսալ: Էտ քառը գյո̈ւղո̈ւմ ա թա տա ո̈ւրա̈ն պարյօր ա տամ, ինքյն էլ ա կլխավ անում: Վըեր կլխավ ա անում, լալըեգյը գյո̈ւղո̈ւմ ա, թա ասում ա՝ տըեսալ ըմ: Հըրցնում ա, թա վըե՞րդեղ ըս տըեսալ, քառը գյո̈ւղո̈ւմ ա, թա հըրցնում ա վըե՞րքան պիտի պա̈հիս: Քառը ծըեռքավ նշանց ա տամ խիլլա հեռու մին մըեծ քար: Լալըեգյը գյո̈ւղո̈ւմ ա թա ասում ա էծերն էն ըն մըեծ քարըեն դըլդումը:

Լալըեգյը քյինա̈մ ա տըեսնում էծերն էն ընգյո̈ւնին նըստոտած: Առաչն ա անում, պիրում: Տահանց մաչին մին պոզը կոտրած էծ ա ինո̈ւմ, տամ ա էտ քառըեն, ասում.- Էս ա մին շեբեթ ա՝ էծերըս կորած, էնքան շոռ ըմ եկալ, լափ վըննըիան ըմ իլա̈լ, վըեր տու իծերեւ տըեղը նշանց ըս տուվալ, էս մին էծը քեզ ըմ բախշում: Էտ քառն էլ գյո̈ւղո̈ւմ ա թա տա ասում ա էծիս պոզը տու վրս թըխալ-կոտրալ, ո̈ւրթո̈ւմնը-հավատ ա անում, ասում.- Ես քու էծերըտ հիշտեղ ը՞մ տըեսալ, վըեր թխըեմ պոզն էլ կոտրեմ: Լալըեգյը նորից ա ասում, թա էս էծը քեզ ըմ տամ, հինչ օգում ըս, ըրա, քառը նորըմինան ո̈ւրթո̈ւմնը -հավատ ա անում, ասում.- Տիյեր աստված, տուվըեր տու, ես քու էծիտ իրեսն էլ չըմ տըեսալ: Լալըեգյը ո̈ւրա̈նն ա ասում, քառը՝ ո̈ւրա̈նը, ո̈ւրո̈ւր կլոխ չըն ինգյո̈ւմ: Խըեգյ ա մնամ լիհա̈ կոև անըեն, եշում ըն, տեսնում մին դեր ա կյամ: Դերը դա̈ստին կլո̈խ ա ինգյո̈ւմ պենը հինչո̈ւմն ա, լըլըեգին ասում ա. - Պիտի տանես էտ պոզը կոտրած էծը մորթես, մատաղ անըես, վըեր էծերըտ քթա̈լ ըս, ինձետե յել փափուկ տըղերան լա̈վ փայ պիրիս, վըեր աղոտկ անըեմ, հանցու կյո̈ւլերը կյան վուչ նի միննըեն իծերիտ մաչը, փրթին:

## 110.ՍՈՏ ԸՍՈՂՆԵՐԵՆ ՆԱՂԸ

Մին թո՛ւնդ սոտ ասող մարթ ա ինո՛ւմ, տա մին օր քյինա՜մ ա Ըղդամըեն բազարը, նի միննում տըեղետ ըստալավոյը, տըեսնում մին քանի հայ բիննըինե մին ըստոլ ըն զանիտ ըրալ, նստոտալ։ Էտ մարթը թուշ քյինա՜մ ա տահանց քըշտին նստում։ Բիննըիներան մինն ասում ա. -Եկեքյ ամըեքյա մին սոտ ասըենքյ, հո՛ւր սոտ վըեր սազեվուչ, էս սուփըրեն խարջը քցինքյ ո՛ւրա՜ն վիզին։ Լոխ ասում ըն՝ հա։

Տահանք մըրթըկլոխ ամեքյա մին սոտ ըն ասում, ծիծաղում։ Տհանցա մինն ասում ա. «Մին օր մըեր շենումը հիշքան վըեր մարթ կար, հըվըքեցե, տարե մըեր սարը, էտ սարումն ինձ մին կարտուշկատըեղ ա ինո՛ւմ, ըտըեղ էտ տարեն մին մըեծ կարտոշկա յա ա՜մա՜լ կյամ, վեց-օխտը քյա՜նդիր ո՛ւրո՛ւր կցա յընք տամ, վըեր կարտուշկավը պատ ա կյամ։ Կասըեմ տըղեքյ, լոխ բիրա՜դի քշըեցեքյ։ Վըեր հը՛ չըրե՞նքյ, տըեսնամ կարտոշկան վըեղան պուք եկը։ Կարտոշկա, խե հինչ կարտո՞շկա, տասսը տարե Ըղդամըեն բոլ-բոլ հերիքյ կանըե»։

Բա՜ննա՜հն ո՛ւրա՜ն սոտը պըրծնում ա, հերթը հըսնում ա էտ մարթին։ Տա ասում ա. «Ես սոտ ասըելը գյիդալ չըմ, ամմա մին քանի տարե առաչ վըեր Բաքու ի, մոլոտաբոյ ըմ իլա՜լ, մին ղզղան ընք շինալ, էտ ղզղանեն մաչին օխտը ուստա յըն իլա՜լ պեն ընելիս, ո՛ւրո՛ւր սա՜ս ըսկընալիս չըն իլա՜լ»։

Տա վըեր պըրծնում ա, բիննըիներան մինն ասում ա.- Սոտը շան տղա յա, թա էտ բոյին ղզղան կինի՞։ Տա յել թա՝ պա վըեր ինիվուչ, ծըեր պուք տուված կարտոշկան հինչու մա՞չի պիտի իփիքյ։

## 111.ՀԸՌՀՆԵՐԵՆ ՈՒՄԵԴՆ ԻՆԳՅԱ՜Ծ ՊԱՏՐՈՒՆԸ

Մին մըեծ հլիվուր մարթ ա ինո՛ւմ։ Տրան ինո՛ւմ ա էրկու տղա։ Տղեքյը վըեր փսակվում ըն, տա ինգյո՛ւմ ա հըռհինըրեն ումեղը։ Մին օր էլ մըեծ հառհինը կուճուրեն ասում ա.- Խե հինչ ա՞ իլա՜լ, տանը պենը լոխ ես ըմ անում՝ լուվացը ես անըեմ, ճեղացը ես քյինամ, խմորը ես հունցըեմ, ես թխըեմ, մին պեն էլ տու ըրա իլի, լիհա՜ մեհետ ապուն կլոխն էլ չըս լուվանում։ Կուճի հառհինը մնացալ ա դուռնա կտրած, գյո՛ւղո՛ւմ չի, թա հինչ ասըե։ Հլիվուրն էլ տըեսնում ա, վըեր ինքյը քըեթ-քըեթ ա ինգյա՜լ, քանի վախտն ա, օզում ա ո՛ւրա՜ն կլխըեն ճարը տըեսնա։ Մըեծ հառհինը վըեր տանն ա մնամ, հլիվուրը տրա նիըետ կյեղծավըրոթուն ա անում, ասում

ա.- Տու իմ մըեծ հառհնն ըս, ես էլ մըեծ մարթ ըմ, վըեննես մինը կյիրըզմանումը, մըեր մըեծ տանձուն տակըեն էն ա մին մըեծ պոլիզյ վըեսկէ օնըեմ կյեղած, վըեր մըեռնեմ, էն վըեսկեն տո՞ւս կօնըես, ինձիրա՜, համ էլ պռավըեն յիրա՜ մին քար քցիս, մնացածը տու կըխարջիս, խուխատար ըս: Մըեծ հառհնը էս վըեր ըսկանում ա, օզում ա թա հլիվուրեն կլխավը պըտըպատ անըե: Կուճուր հառհնն էլ մնամ ա մա՜թա՜լ, զյո՞ւղո՞ւմչի թա պենը հինչումն ա: Տրանա ետը մըեծ հառհնը էս հլիվուրըեն լա՜վ ղուլլուղ ա անում:

Մին օր էլ կուճուր հառհնն ա տանը մնամ: Էտ հլիվուրը հինչ վըեր մըեծ հառհնեն ա ասած ինո՞ւմ, ինդի յէլ կուճուրեն ա ասում, թա մըեծ տանձուն տակըեն մին պոլիզյ վըեսկէ օնըեմ կյեղած, քեզ ըմ տըլական, հենց ըրա, վըեր մըեծ հառհնը զյիդա՜ վուչ:

Էտ հլիվուրըեն հառհները խաչավ-խըչըմանավ, պիմբակավ ըն յոր օնում, ո՞ւրա՜նց պիրըննըերեն պատառն էլ նրան տեմ օնում:

Մին օր էլ հլիվուրը հոքին տամ ա, մըեռնում: Հառհները հունցր վըեր կարքն ա, ազիզ-պիզիզ յոր ըն օնում, տանում թաղում, մին լա՜վ էլ բաղարաքյ անում, ժողովուրթեն հղե տհնում:

Մըեծ հառհնը կուճուրան թաքուն թեն ա յոր օնում քյինա՜մ մըեծ տանձուն տակը ետ-ետ անում, կուճի հառհնը էտ վըեր տըեսնում ա, ինքյն էլ ա քյինա՜մ տանձուն տակը, ասում.-Էտ հինչու վը՞ս շոռ կյամ, ապան պոլկըեն տըեղն ինձ էլ ա ասալ: Մըեծ հառհնը ասում ա.- Դե, վըեր քեզ էլ ա ասալ, պեր տո՞ւս օնըենքյ, կես անըենքյ:

Ճոխտ հառհնը տանձուն տակը քա՜նդո՞ւմ ըն, պոլիզյը փոսան տո՞ւս օնում, տըեսնում պոլկըեն ըռըխավը էն ա մին մըեծ սիրեկ քցած, թիլա՜վ պըենդ պընդըցրած: Մըեծ հառհնը ասում ա.- Էս պոլիզյը վըեր վըեսկավ լիզյն ինի, մըեզ եր էլ ա, վըեր էլ: Պոլկըեն ըռեխը պենում ըն, տըեսնում տերտակ, ամմա մաշին մին կյումաշու պոզ կա, պոզըեն ըռեխը փըլազավ լա՜վ  պընդըցրած: Կուճի հառհնը ասում ա.-Վըեր էս պոզավը մին վըեսկէ ինի, մըեզ եր էլ ա, վըեր էլ:

Պոզըեն պերանը պենում ըն, տըեսնում տերտակ, ամմա մաչին էն ա մին թոխտ կա: Մըեծ հառհնը էտ թոխտը տո՞ւս ա օնում, եշում, տըեսնում կյիրած. «Հու վըեր հառհնեն ումեղն ընզնե, էս պոզը նրա աշկումը տնզվըե»:

112.ԿՆԵԳՅՆ ՈՒՐԱ՞Ն ԿԼՈ՞ԽԸ ՎԸԵՐ Ա ԹԱԿՈՒՄ

Մին հարուստ մարթու մին շատ ղա՛շա՛նգյ կնեգյ ա ինո՞ւմ: Փըըկվելան ետը մարթն ամմըեն ո՞ւրո՞ւգյո՞ւն չերքյեզկան կյենում ա, ղա՛մա՛ն ղոբուրան տո՞ւս օնում, կնգանը յիրա՛ պըրծնում, ասում.-Քու հերն անիծած, տու հինչ պե՞ն օնըես մըեր տանը: Ղա՛մա՛ն պիրո՞ւմ ա կնգանը վիզին մուտըցնում, ետ տինո՞ւմ ղոբուրումը: Էտ պենը կնեգյն էլ ա անում, տրանա ետը քշերը մրթըկնեգյ ըն տըեռնում:

Մին օր էտ մարթը քյինա՛մ ա օրիշ տըեղ: Հա՛մին օրը մին հարուստ չա՛րչի յա կյամ տըեղ: Տա մին հիլի յա ինում ծըխելիս, հիլին էլ առաչ շատ թա՛նգյ ա իլա՛լ, շատ էլ տիժա՛ր ար ճարվում, հիզա՛րա՛նգը մին հարուստ մարթ ար կարում ծըեռքը քցի:

Էտ շենումը մին պառավ կնեգյ ա ինո՞ւմ: Տա կյամ ա էտ հառհնեն կոշտը, ասում, վըեր իստի մին չա՛րչի յա եկալ, մին լա՛վ հիլի յել ա պերալ: Էտ հառհնը քյինա՛մ ա չա՛րչո՞ւն կոշտը, չա՛րչին տրա յիրա՛ն ղա՛ստին սիրահարվում ա, պռավըեն ղրաղ ա քաշում, փող տամ, ասում, վըեր կլո՞խ պիրի, հանցու ո՞ւրո՞ւգյո՞ւնը քյինա՛ կոշտը:

Պառավը քյինա՛մ ա էտ հառհնեն կոշտը, ամմըեն հինչ ասում, տա ղաբուլ ա անում: Ո՞ւրո՞ւգյո՞ւնը չա՛րչին ծին տանում ա տրա կյուումումը կապում, ո՞ւրա՛ն ամմըեն հինչն էլ տանում ըտըեղ: Վըեր էտ կնեգյը չա՛րչո՞ւն տըեղը քցո՞ւմ ա, տո՞ւս ա կյամ, քյինա՛մ շորըերր փոխում, չերքյեզկան կյենում, ղա՛մա՛ն կապում, կյամ չա՛րչո՞ւն յիրա՛ պըրծնում, ղա՛մա՛ն տանում պկըեն տեմ անում, ասում.

-Քու հերն անիծած, հինչ օ՞նըես իմ տանըս: Էտ չա՛րչին գյո՞ւղո՞ւմ, թա կընգանն ախպըերն ա, տըեղան եր ա կենում, հալավ-վըտըշորած փախ-ճում, քըղաքան տո՞ւս կյամ, ո՞ւրա՛ն հարստությունն էլ լոխյ թողում ըտըեղ:

Չա՛րչին վըեր քըղաքան տո՞ւս ա կյամ, մին մարթու վա պըտահում: Էտ մարթը հըրցնում ա, թա հինչ ա՞ պըտահալ: Տա թա՝ ապրանք ը՞ս տանում էտ շենումը ծախըես, ետ տըեռ, տանըեսվուչ, տահանք ղունաղըեն տկլոր ըն տանան փըխճըցնում: Տա յել էն կնգանը մարթն ա ինո՞ւմ, ղա՛ստին գյո՞ւղո՞ւմ ա պենը հինչումն ա: Վըեր քյինա՛մ ա տոն, ո՞ւրո՞ւգյո՞ւնն ո՞ւրա՛ն շորըերր փուխըե-լան, ղա՛մա՛ն կըպըելան ան կնգանը վըխտըցնըելան ետը նի յա մննում տեղը, իրեսը հլո՞րո՞ւմ տեն, էլ կնգանը նիըետ խոսում չի: Չերը էտ էլ ո՞ւրա՛ն հունց պըհելիս ա իլա՛լ, վըեր սաբավ վըեչ մին պենա խաբար չօնե:

Կնեգյը տըեսնամ ա, վըեր մարթը նիըետը խոսում չի, տըեղան տո̀ւս ա կյամ, քյինա̀մ տռանը քմակըեն ճոխտ ծըռքերավ ո̀ւրա̀ն կլո̀խը վըեր թակում, ասում. - Էս հինչ ըխմըխո՞թուն ա, վըեր ես ըրե, մարթըս էլ ինձնիըետ խոսում չի: Մարթը կնգանը հետան տո̀ւս ա կյամ, կնգանը խոսկերքն անջուկ օնում, ետ կյամ, նի մննում տըեղը: Կնեգյն էլ ա կյամ նի մննում տըեղը, մարթն անջուկը տինում ա կնգանը կլխըեն, ասում. -Ախըր, է՞լ հինչ ըս ըրալ, դե, թակալ ա, թակալ, շո̀ւշա չըս, վըեր կոտըըես: Կնեգյը վըխելան մին էլ ա տո̀ւս կյամ տռռնը, տռանը քմական ասում.- Մատտաղ ինիմ քեզ, ա՛ կլո̀խ, մարթիս խաբար չի տաս, սխալվալ ըմ, սո̀ւրթա̀ յա իլա̀լ: Մարթը նորից ա կնգանը խոսկն անջուկ օնում, կյամ նի մննում տըեղը: Կնեգյը վըեր կյամ ա, նորըմինան ա անջուկը տինում կնգանը կլխըեն, ասում. - Ախըր է՞լ հինչ ա ըրալ, քեզ մատտաղ ա՞ ասալ, վըեչընչ, հա̀լա̀ սո̀ւրթա̀ յա, սխալվալ ա: Կնեգյը մնամ ա մարթին քշտին չա̀շմիշ իլա̀ծ, տուղտողուցը փռնած:

## 113.ՃՈՒՎԱՐԱՆԸ ԵՏ ՏԱՐ, ՔԵԶ ԷԼ Ա ՀԱՐԿԱՎԸԵՐ ԿՅԻԼԱ̀ԿԱՆ

Մին յիրգյիրում ա̀ղա̀թ ա իլա̀լ, վըեր մարթ մըծընալիս ա իլա̀լ, պըհելիս չըն իլա̀լ: Մին օր մին տղա հլիվուրած հորը ճուվըրանումը տիրա̀ծ տանում ար, վըեր քըերծավը վըեր քցի: Վըեր ճուվարանը շիլական վըեր ա օնում քըերծըեն պըտկան մուտըցնում, հա̀րը տղըեն ասում ա.-Բա՛լա ճուվա-րանը ետ տար, հարկավըեր ա կյիլա̀կան: Տղան մտածում ա, թա՝ իմ հա̀ր խե՞ իստի ասըեց: Խիլլա̀ վըեր մտածում ա, կլխու վա ինգյո̀ւմ, թա հա̀րը հինչ ա օզում ասըե: Ասում ա՝ օզում ա թաքավըերն ինձ կախ տա, օզում ա՝ պահե, իմ հոր ես տըննական ըմ տոն:

Տղան հորը տինում ա ճուվըրանըեն մաչին, խոտավ-պենավ ծասկում, շիլակում, ետ տանում տոն, թաքուն պահում:

Հունց ա պըտահում, մին օր մին զազան կյամ ա էտ շենին տակըեն ըխպրին չորս ո̀ւրո̀ւլգյո̀ւն ճըժ քաշում, ըխպրին կոխկըեն նստում, թողում չի ժուղովուրթը ճո̀ւր տանըեն:

Քանի օր ա անց կացալ, լոխ մնացալ ըն ծարավ: Մեհետ էլ էտ հլիվուրը տղըեն հըրցնում ա, թա՝ խե ճո̀ւր չի՞ կա: Տղան թա՝ իստի մին զազան եկալ ա ըխպրին չորս ո̀ւնգյո̀ւնավը ճըժ քաշալ, մաչին նստալ, թողում չի մարթ

մուտանա: Հլիվուրը թա՝ տրա առաչը առնըելը տիժա̈ր չի, էտ գազանը հունցը էլ ինի, քունավ ա հնցըննական, վըեր քունավ հնցընըե, էտ ճըժըեն չորս ո̈ւնգյո̈ւնավը իվիլի մըեծ ճըժ կըքաշիս, մին բոյահիլի յէլ էտ ճըժումը վըեննը կըցընըես, էտ գազանը վըեր զո̈ւրթնա̈նա, եր ա կըննական բիդի հիլին մուտանա, հիլուն մաչին ո̈ւրա̈ն մըչանք, հալա ո̈ւրա̈ն անա յէլ մըեծ գազան ա ուրվըկալական, վըխըլական ա, ախպո̈ւրը թողըե, փախճի:

Էտ տղան հորն ասածը անում ա:Գազանը քոն իլա̈ծ տըեղան վըեր եր ա կեննում բիդի հիլին եշում, սրտաճանք ա ինո̈ւմ, ախպո̈ւրը թողում ա, ծըլկում:

Ախպո̈ւրը պեննվում ա, ժուղովուրթը ըսկսում ըն ճո̈ւր տանըելը: Թաքավըերը հըրցըփորց ա անում, վըեր գյիդա̈, թա հու վա իլա̈լ էտ գազանըեն փըխճըցնողը: Լոխճին ծեն ա տամ, հըրցնում, վըեչ մինն էլ գյո̈ւղո̈ւմ չի: Էտ տղըեն վըեր ծեն ա տամ, տա ասում ա.

«Թաքավըերն ապրած կենա, օզում ըս ինձ կախ տռ, հինչ օզում ըս ըրա, դո̈ւզը պիտի ասեմ: Էն վըեր հրաման ըս տուվալ, վըեր մըեծ մարթուցը պահեքյ վուչ, իմ հա̈ր տիրա̈լ ըմ ճուվըրանումը, հանցու տանըեմ քըերծավը վըեր քցիմ, նա թա՝ բա՛լա ճուվարանը ետ տար, քըզ էլ ա հա̈ջա̈թ կյիլա̈կան: Էտ խոսկըեն դա̈րդա̈ն հորըս տիրա̈լ ըմ ճուվըրանումը, ետ պերալ տոն, մինչև մեհենգյ էլ թաքուն պահում ըմ: Էն ա հա̈լա̈ սաղ: Էտ գազանը փըխճըցնելի թա̈հրը ինքյն ա ինձ ասալ»:

## 114.ԻՆՉ ԿԱՂԼԻԳՅՆ ԷԼ Ա ԼԱՅԱՂ, ՔՈՌՆ ԷԼ

Մին մարթ տղեն հըցընում ա, թա խե՞ չըս փսակվում: Տղան թա՝ իմ հավան կացած ախճիգյը չըմ քթեննո̈ւմ: Հա̈րն ասում ա.- Դե եք քյինանք էսհինչ շենը՝ ըխճըկան շոռ կյանք, քթենանք:

Էքյսը հա̈ր ու տղա էշն ըռըչնեն քցա̈ծ քյինա̈մ ըն ասած տըեղը: Հենց վըեր հա̈րը էշը կյուման տուս քցած քշո̈ւմ ար բիդի հղեն, տղան լոք ա տամ էշին նստում, հորը փյադա քցում առաչը:

Շատ ըն քյինա̈մ, թա խրեգյ, էտ շենա̈ն վըեր մուտանում ըն, հա̈րը նղացած ա ինո̈ւմ, կարում չի քյինա̈, ասում ա.- Շենան մուտացալ ընք, տու ջա̈հիլ ըս, վըեր եք փյադա քյինա̈, ես եր ինիմ էշը, թա չէ, վըեր քեզ էշին յիրա̈ տըեսնան, ինձ էլ փյադա, ախճիգյ չըն տըլական: Տղան էշան վըեր ա կյամ, հա̈րն ա նստում: Նի յըն մննում շենը, քյինա̈մ մին հարուստ տոն: Էտ

տանը իրեք ախճիգյ ըն ինո̈ւմ։ Հա̈րը տըղեն թաքուն հրցընում ա, թա վըերե՞ն ըս հավան կենում, ասե։ Տղան, թա ախճիգյ օգողը տու վըս, տու վըս գյո̈ււղո̈ւմ։

Էտ իրեք ըխճըկորանցը մաչին կուճուրն ամենաղա̈շա̈նգյն ա ինո̈ւմ, բայց մխըրե կաղլիգյ, շոռ կյա̈լիս տըեղն էլ հունց անում ար, վըեր իսկի գյո̈ււղվում չար։

Ըխճըկանը յոր ըն օնում, տանում։ Հըղեննի տղան եշում ա, տըեսնում ըխճըկանը աշկեն մինը շիլդըբուղի յա ուրված։ Տղան հորը թա՝ հենց ա աշկը լա̈վ չինի տըսնալիս։ Հա̈րը խոսում չի։

Վըեր տանում ըն տոն, էքյսը ըխճըկանը ղարկում ըն ճո̈ւրը։ Ճիրան կյա̈լիս տանը բռաչի դիքյին ախճիգյը տեմ ա ինգյո̈ւմ, ըսկսում ճունչու-պունչի անելը։ Տղան հորը թա՝ հենց ա կաղլիգյ ինի։ Հա̈րը թա՝ աշկետ ա ուրված։

Տղան տըեսնում ա, վըեր իսկապես ախճիգյը համ կաղլիգյ ա, համ շիլդի։ Էքյսը պո̈ւրո̈ւմ ըն ըխճըկանը ասեղ տամ, թա տըեսնան կարում ա՞ թիլի։ Տեսեն, վըեր կարում չի։ Տղան հորը թա՝ պերած ախճիգյըդ համ կաղլիգյ ա, համ քոռ։ Հարը թա՝ ախճիգյը ես ըմ պերալ, ինձ կաղլիգյն էլ ա լայաղ, քոռն էլ։

## 115.ՀՈՒՆՑ ՊԵՆ ԸՐԱ, ՎԸԵՐ ՓՈՒՇՄԱՆԻՍ ՎՈՒՉ

Մին թաքավըեր տո̈ւս ա կյամ ո̈ւրա̈ն երգյիրը շոռ կյա̈լի, հազզար ու մին խոսկ ա ըսկանում, լա̈վ ու փիս պեներ ըն նաղլ անում, հու վըեր մինա̈ն մին փիս պեն ար ասում, էն փիս պեն ընողըեն կլո̈խը դա̈ստին կտրել ար տամ։ Սաղ երգյիրն էտ թաքավըերն ա̈րնավ ծասկում ա։

Մին օր էլ ո̈ւրա̈ն մարթոցը նըհետ վըեր շորերը փոխած տո̈ւս ա կյամ ո̈ւրա̈ն երգյիրը շոռ կյա̈լի, տըեսնում ա վըեր մարթիքյ ըստըեղ-ընդըեղ խոսում ըն, թա մըեր էս թաքավըերը հինչ ա՞ ըսկացալ։ Մեհետ էլ մին մըեծ մարթու ծեն ա տամ, թա՝ ա՛ հլիվուր, դողուրն ասըե, թաքավըերը էս լոխ դո̈ւզ ա՞ անում, թա չէ։ Էտ հլիվուրը թա՝ քեզ ճինանչում չըմ, գյո̈ւղո̈ւմ չըմ՝, թա հու վըս, հինչ ըս, վըեր կլո̈խըս էլ կտրըես, դո̈ւզը պիտի ասըեմ։ Սա թա՝ ես թաքավըերն ըմ։ Էտ հլիվուրն ասում ա.- Օգըմըս ինձ ըսպանե, հինչ օգում ըս ըրա, էս լոխ դո̈ւզ չըս անում, ամմըեն մարթու ըսածեն հվատում ըս, մինը դորթ ա ասում, մինը՝ սոտ, ամմըենաշատը սոտ ըն ասում, պիտի

հազզար հետ մտածես, լա̀վ տընդըղես, քու մարթուցը նհետ մըսլըհաթ անըես, տըեսնաս վըեր խոսկ կինի սոտ, վըերը՝ ղորթ, նոր էտ լոխ անըես:

Թաքավըերը ետ ա տըեռնում քյինա̀մ ու̀րա̀ն նա̀զիր-վեզիրին նհետ նստում-մտածում, թա հինչ պիտի անըեն: Սու̀րթ-սու̀րթան ու̀րա̀ն հրամանն ա ետ յոր օնում, տրանա ետն էլ փիս պեն ընողըեն անա յէլ վըեր պեն ար ըսկանում, ու̀րա̀ն մարթուցը հվաքում ար, մսլըհաթ անում, խըելք-խըելքու վըն տամ, նոր պատիժ տամ: Երգյիրն ըսկսում ա հինդարդվիլը, ա̀րու̀նը պըկասում ա:

Մին օր էլ թաքավըերը շորերը փոխած տու̀ւս ա կյամ, թա տըեսնա ու̀րա̀ն երգյիրումը հինչ կա, հինչ չի կա: Մուտանում ա մին քանի հըվաքված մարթու խոսըցընում, նահանք թա՝ մըեր թաքավըերը էս ա մեհենգյ երգյիրը կարքեն հինդիրտցրալ ա, առաչ մին ըռնախում զատ ար:

## 116.ԾԻ ԿՅՈՒՂՈՒՆՈՂԵՆ ՀԻՆԱՐԸ

Մին հարուստ խազային ու̀րա̀ն մին լա̀վ ծիյավ քյինամ ա բազարը, հիշտեղ վըեր ա կյամ, ծիյին կապը պեց չի թողում, մին տըեղա կապում չի, միշտ պըենդ փռնած ա պահում: Մին դոչճաղ ծի կյուղանող էլ տրա հետը կըտրած, բուս-բուս ա անում, վըեր ծին կյուղանա, կարում չի: Էտ մարթը ծին նստում ա, քյինամ ու̀րա̀նց տոն, ծի կյուղանողն էլ տրա հետան հըռաքաշ քյինամ ա: Խազայինը տանում ա ծին կյուման կապում, պիցրանում տոն, քունավ հընցնում: Ծի կյուղանողն էլ կենում ա վըեր լափ մթնում ա, կյումըեն տոռնը թաքուն պեց ա անում, նի մննում ծին տու̀ւս օնում, ետ տըեռնում, վըեր յիհա̀րն ան ջիլա̀վն էլ քթենա̀, եշում ա տըեսնում մին քյա̀ղիր կլխըյեր պիցըրանում ա, մին կնզան սա̀ս էլ թա՝ ծիքյ տո, լափ ծիքյ տո, խեխտի: Սա կըլու̀խ ա ինգյու̀ւմ, վըեր ըստըեղ մարթ ըն ըսպանում, ղա̀մա̀ն տու̀ւս ա օնում, թխում քյա̀նդիրը կտրում, պիցրա̀նում տիյեր, տըեսնում մինը խըռխըռցընում ա: Քյա̀նդիրը պկան ետ ա անում, ճիրա̀ն զիրավ տամ, տրան ետ պիրու̀մ, եշում, տըեսնում էտ ծիյատար խազայինը, կոխկեն էլ ու̀րա̀ն կնեգյն ան սիրականը: Քշերը տըեղ կենում ա, էքյսը տրան հըրցընում, թա զյու̀ղու̀մ ը՞ս քշերես հու վա իլա̀լ պոկըտ քյա̀նդիր քցու̀ը, քեզ խեխտողը: Տա թա՝ հի՞նչ քյա̀նդիր, հի՞նչ խեխտիլ, հի՞նչ պեն:

Ծի կյուղանողյը թա՝ քոն իլա̀ծ ըս իլա̀լ, վըեչ մին պեն գյիդացալ չըս, կնեգյտ ան ու̀րա̀ն սիրականը ուզեցալ ըն քեզ ըսպանեն, ես էլ եկած ըմ

իլա̈լ, վըեր ծիտ կյուղանամ, յիրա̈ն պըտահալ ըմ, թխալ քյա̈նդիրը կտրալ, քեզ ըզադալ: Էտ խազայինը թա՝ դե վըեր ծիյիս հետե յըս եկալ, ծիս քեզ փեշքյեշ ըմ անում: Տա թա՝ չէ, կնեգյըտ ինձ տո, տանեմ մին դրաղ տըեղ ըսպանեմ, քըզետե մին լա̈վ կնեգյ քթենամ, պիրիմ:

Տա էտ խազայինին կնեգյը յոր ա օնում, տանում մին ծո̈րո̈ւմ ըսպանում, քյինամ օրիշ տըեղա մին լա̈վ, ըբուռեն կնեգյ պիրո̈ւմ տրա հետե, ո̈ւրա̈նք ըխպըրանում ըն, միշտ քյինամ-կյամ:

## 117.ՄԱՐԹԸ ԿՆԳԱՆՆ ԸՍՊԱՆՈՒՄ Ա, ԹԱ̈ԶԱ̈ ԿՆԵԳՅ ՊԻՐՈ̈ՒՄ

Մին հարուստ խազային նո̈ւքյա̈րին նիետ ըխպըրացած ա ինո̈ւմ: Խոսկ տուված ա ինո̈ւմ, վըեր ո̈ւրա̈ն սաղ մո̈ւլքյը նիետը կես անե: Նո̈քյա̈րն էլ գյո̈ւղո̈ւմ ար, վըեր խազայինին կնեգյը մին քանի տարե յա, քյուխվըեն տղեն նիետ կապ օնե:

Մին օր էտ նո̈քյա̈րը խազայինին մուտանում ա, ասում.- Տու լա̈վ մարթ ըս, ամմա մին պեն կա, մղափո̈ւն, վըեր գյո̈ւղո̈ւմ չըս: Խազայինը թա՝ հինչ կա՞, հինչ ա՞ պըտահալ: Նո̈քյա̈րը թա՝ վախում ըմ ասեմ: Խազայինը թա՝ վախումել, ա՜սե: Նո̈քյա̈րը թա՝ կնեգյըտ քյոխվըեն տղըեն նիետ ա: Խազայինը թա՝ ես միանա քցիմ վըեր տասներկու օրավ օրիշ տըեղ ըմ քյինամ, ամմա հղըցըեն կեսան ետ ըմ տըռնըլական, տու վըել բուսը կըպահես, վըեր քյոխվըեն տղան կըկյա կնգանըս կոշտը, էն ըմ իննա̈կան էսիինչ տըեղը, կըկյաս դույուղ անըես: Նո̈քյա̈րը թա՝ լավ:

Խազայինը քյինամ ա կնգանն ասում,-Հըղըցըեն պրիպասը պըդրաստե, տասներկու օրավ օրիշ տըեղ ըմ քյիննա̈կան: Կնեգյը մտկումը ուրխանում ա, ըսկսում պադրաստություն տըեսնալը…

Մարթը տես-տենը յոր ունելան ետը ծիյավ քյինամ ա շենան տո̈ւս մին թաքուն տըեղ կենում, նո̈քյա̈րն էլ թաքուն եշում ա, տըեսնում խազայինին կնեգյը հավըերը մուրթոտեց, ըսկըսեց ժարիտ անելը, կյինին ինքյ կալավ, մըեծ ըստոլ սարքեց, մթնեն յիրա էլ քյուխվըեն տղան եկավ ըսկըսեցին օտըել-խմըելը, տա թաքուն քյինամ ա խազայինին կոշտը, ամմեն հինչ ասում:

Խազայինն էլ օրավ առաչ մին նկարչի յա իլա̈լ փռնած-պահած, յոր ա օնում, քյինամ ո̈ւրա̈ն տանը ագուշկեն տական թաքուն եշում, տըեսնում ո̈ւրա̈ն կնեգյը նան քյուխվըեն տղան պռոշտի ըրած: Հենց տի յէլ նկարել ա

տամ, նկարը յոր օնում պահում, նկարչուն փողը տամ, էտ ղարկում, ըտըեղ կյողլը կենում, եշում տըեսնում քյուխվըեն տղան տո՛ւս եկավ, քյինամա ո՛ւրա՛նց տոն: Հռաքաշ հետան քյինամ ա: Քյուխվըեն տղան հենց ո՛ւրա՛նց փալա՛քյա՛նա՛վը պիցրա՛նում ա, հսնում վերչին քարեն, մավզերը տո՛ւս ա օնում, ըսպանում, ինքյն էլ հղե հինում քյինամ պրիշ շիներքում տասներկու օր մլուշուլի անում, անցկըցընում:

Տասներկուինջի օրը խազայինը երա կենում, կյամ ո՛ւրա՛նց տոն: Կնեգյը կյամ ա մարթին կոլավն իգյո՛ւմ, սո՛ւլի-բո՛ւլի անում, թա՝ ա՛ մարթ, պա քու քյինա՛լի քշերը յիրա յըն ըրալ քյուխվըեն տղեն ըսպանալ, խեղճին գյո՛ւղո՛ւմ չըն, թա հու կինի ըսպանած, քու ըստըեղաս քյեցած օրատ մինչև միհենգյ քու կարոտըտ էնքանըմ քաշալ, վըեր կարել չըմ ասըեմ: Մարթը վըեր մինչև էտ կընգանն ա քյուխվըեն տղեն նկարը տո՛ւս կալած, տիրա՛ծ ա հինո՛ւմ ըստոլըեն, կնգանը աշկավն ա ինգյո՛ւմ: Կնեգյը եշում ա, եշում, թա վի՛յ աբալ, էս հու վը՞ն: Մարթը թա՝ ճինա՛նչում չը՞ս: Կնեգյը թա՝ չէ՛: Մարթը թա՝ լա՛վ եշի: Կնեգյը մեհետ էլ ա եշում, թա՝ լա՛վ, քաշի, ըռադ ըրա-կուրցուրու: Մարթը ըտեղ մավզերը տո՛ւս ա օնում, կնգանն էլ յիրա անում վըեր քցո՛ւմ, քյինամ մին լա՛վ կնեգյ պիրո՛ւմ, մո՛ւլքյն էլ նո՛քյա՛րին նհետ կես անում:

## 118.ՄԱՐԹ ՄԸՌՆԸՑՆՈՂ ԴԵՐԸ

Մին շենում մին դեր ա հինո՛ւմ, էտ դերն էլ պեն չի հինո՛ւմ գյիդա՛լիս, փորումը այիփպենու կուտուր չի հինո՛ւմ, մըեռալն էլ միշտ մենակ ար օրթնում, հանցու վըեր ժողովուրթը գյիզա՛ վուչ, վըեր օրթնելը գյո՛ւղո՛ւմ չի: Ժուղովուրթն էլ էտ պենը գյիդա՛լիս ըն հինո՛ւմ, մին մարթու պիրում ըն սուտըսուտ մըռնըցնում, տինո՛ւմ ղոթումը, վըեր տանեն տինին ժամումը, հանցու վըեր դերն օրթնե: Էտ մարթին էլ սուվըրցնում ըն, ասում ղոթումը տապուռ կըկենաս, վըեր տըեսնաս դերը հա՛դրա՛-բա՛դրա՛ խոսում ա, եր կըկենաս ղոթումը դիքյ նըստըես:

Էտ «մըեռալը» վըեր ղոթումը տիրա՛ծ տանում ըն ժամը, ժուղովուրթն էլ ժամըեն հըյաթումը թուփ տըեռած կենում ըն, վըեր դերը պըրծնէ, նոր ո՛ւրա՛նք նի մննըեն: Դերն էլ մին էրկու-իրեք խոսկ ա հինո՛ւմ գյիդա՛լիս՝ «ալելույա», «տեր ողորմյա», իտի մին քանի պեներ: Տահանք վըեր ասում ա, պըրծնում, էլ ըսելի պեն չի հինո՛ւմ, ըսկսում ա փուռվառը տես ու տեն տանել-պիրիլը, «մըեռալը» եր ա կենում ղոթումը դիքյ նըստում: Դերն էլ

միքրե ջանավ ա ինո՛ւմ, փուռվառը վըեր ա տինո՛ւմ, ճոխտ ծըեռքավ էտ մարթին պըկան փըռնում, խեխտում, ըսպանում, ղոթումը պըրընվցնում: Ետնան քյինա՛մ ա տո՛ւսո՛ւմը հըվաքված մարթուցը ասում.- Գյո՛ւղո՛ւմ չըմ, թա տուք հինչ տըեսակ ժուղովուրթ ըք, վըեր մըեռալը կարքըեն մըռնըցընում չըք, ետնան պիրո՛ւմ, մինչև մըռնըցըրե, հոքիս տո՛ւս եկու:

## 119.ԽԸԵԼՔԸ ՊԱԿԱՍ ՄԱՐԹԸ

Մին մարթ ա ինո՛ւմ, մինգյել մին կնեգյ: Կնեգյը մեհետ խորագյ ա իփո՛ւմ, աղը քցո՛ւմ: Խորագյը աղըե յա ինո՛ւմ: Մարթն ասում ա.- Մինգյել ես ըմ իփիլա՛կան: Կնգանան հըրցնում ա, թա՝ աղը հիշքան ը՞ն քցո՛ւմ: Կընեգյը կյիսկը տեմ ա անում, թա՝ էսքան:

Էքյսի օրը մարթը խորագյ ա իփո՛ւմ, մին կյիսկ աղ քցո՛ւմ մաչը, էլլա աղըե յա ինո՛ւմ: Կնեգյը տրան թակում ա, տանան տո՛ւս քցո՛ւմ: Տա փախճում ա, քյինա՛մ տըեսնում հղըցըեն տակըեն մին մարթ արտը վարած, սըերմը քցիլիս: Պարյոր ա տամ, ասում.-Հըզզարը մին տըեռնա: Էտ մարթը տրա յիրա՛ կըզնըրվում ա, ասում. - Շոն, շան տղա, պա էտ խոսկ ա՞, վըեր տու ըսըեցեր, պա հըմընչեցերվո՞ւչ: Տա թա՝ պա հինչ ա՞սըեմ: Էտ սըերմը շաղ տվողն ասում ա.-Կասըեն աստուծ բարաքյաթ տա, մինը հըզզար տըեռնա: Տա թա՝ լա՛վ, օրաս ետը իտի կասըեմ:

Հղըե յա ինո՛ւմ, քյինա՛մ, տըեսնում մին շեննու ղրաղավ մին դա՛ստա՛ մարթիքյ լա՛ց ինիլավ մըեռալ ըն տանում, վըեր թաղըեն: Տա էտ լա՛ց ինուղնըերեն մուտանում ա, ասում.-Աստուծ բա՛րա՛քյա՛թ տա, մինը հըզզար տըեռնա: Էտ մարթիքյն էլ կըզնըրվում ըն տրա յիրա՛, իրըսարանք տամ, թա՝ պա իստի վախտը իտի խոսկե կասըեն, վըեր տու ըսըեցեր: Տա թա՝ պա հինչ ասըե՞մ: Տահանք թա՝ կասըեն՝ էտ ինի, էլ վըեչ ինի, աստուծ իտի պենը միշտ հեռու պահըե ծըզանա: Տա թա՝ լա՛վ, օրաս ետը իտի կանըեմ:

Քյինա՛ամ ա տըեսնում մին տըեղ հըրսանըեքյ ըն անում՝ ժուղովուրթը հըվաքված, խմած, քյըփըրնըեն քյուքացած, պար կյա՛լիս վախտը տահանց մուտանում ա, ասում.- Էտ ինի, վըեչ ինի, աստուծ իտի պենը հեռու պահըե ծըզանա: Էտ մարթիքյը փռնում ըն տրան մին լա՛վ թակում, թա՝ շան քընծա՛հար, պա իստի ուրխութունըեն վախտը իտի խոսկը կասըե՞ն, վըեր տու վըս ասում: Էտ մարթը թա՝ պա հինչ ա՞սըեմ: Տահանք ասում ըն.- Կըմուտանան, ասըեն՝ շընըհավուր ինի, աստուծ ծըեզ միշտ ուրխոթուն

տա, կասըեն, ետնան էլ նի մննըեն պար կյըվուղնըերեն նիըետ պար կյա̈ն: Տա թա՝ լա̈վ, օրաս ետը իտի կանըեմ:

Քյինա̈մ ա տըեսնում մին հլիվուր մարթ ճորըեն պրո̈ւտո̈ւ ըմընոցավ պեռնած, ծմակըեն մաչավը տանում ա, վըեր ծախըե: Մուտանում ա, ասում.- Շընըհավուր ինի, աստուծ ծըեզ միշտ ուրխոթուն տա, ասում ա, ըսկսում նիըետն էլ պար կյա̈լը: Տա վըեր ծըեռքըերը պիցըրցնում ա պար կյամ, էտ ճորըեն խռհնում ա, տամ ծմըկնըերեն, ըմընեքյը լոխ կուտրատում: Էտ ճորուն տարը տրա յիրա̈ կըզնըրվում ա, ասում.-Էտ պեն ա՞, պա վըեր տու ըրըեր: Տա թա՝ հինչ ըրըե: Էտ հլիվուրն ասում ա. - Տըեսնում չը՞ս, վըեր էշը խըռհնըցրեր, տուվավ ծմըկնըերեն, ըմընեքյը լոխ կուտրատեց, ինձ ջիրմու տակ քցից: Տա թա՝ պա հինչ ընի՞: Էտ հլիվուրն ասում ա.- Կըմուտանան, պարյոր տան, ետնան էլ քյո̈մա̈գյ անըեն, ճորըեն նըեղ տըղըերան, շըմբո̈տան տո̈ւս օնըեն, պարի ճանապար աըեն, քյինա̈ն: Ասում ա. - Լա̈՛վ, օրաս ետը իտի կանըեմ:

Քյինա̈մ ա տըեսնում մին օրիշ մարթ ծմական փաղ շիլա̈կած, տանում ա տոն: Փաղը ծանղըր ա ինո̈ւմ: Մին տըեղ փաղը շիլա̈կըեն նստում ա, վըեր դինջա̈նա̈: Մուտանում ա, ասում.-Էս ճորուն պեռնը հի՛նչ ծանղր ա յե՛, քյո̈մա̈գյ անըեմ, ըստըեղաս տո̈ւս օնըեմ: Էտ մարթը շելակը վըեր ա տինում, ղաթան մին փաղ տո̈ւս օնում, տրան էնքան թակում, ո̈ւրա̈նա̈ն քյինըցնում, թողում ըտըեղ փըլըփալի ընըելիս, ինքյը փաղը շիլա̈կում, հղըե ինո̈ւմ:

## 120.ՄԱՐԹԸ ԿԸՃԻՆԱ̈ՆՉԻՆ, ՆՈՐ ԱՌԸՏՈՒՐ ԱՆԸԵՆ

Մին թաքավըեր միշտ տո̈ւս ար կյամ ո̈ւրա̈ն երգյիրր շոռ կյամ, թա տըեսնա ժուղովուրթը հունց ըն ապրում: Մին տան քշտավ անց կընալիս տըեսնում ա մին շատ քյա̈սիբ կնեգյ, միշտ օրախ, ըսելիս, խուսելիս: Ասում ա՝ հա̈լա̈ սրան մին վըեսկե յըմ տըլական, տըեսնամ հի՞նչ ա անում: Տո̈ւս ա օնում մին քանիհենգյ ըկնանե մուտանա տամ, քյինա̈մ: Էտ կնեգյը մուտըննեն ակներան ամմըեն դӧնում մինը տո̈ւս ա օնում, տանում ծախում: Մին ժուլիկ մարթ տրան խափում ա, միշտ իժան կյինա̈վ ինքյ օնում: Վերչը, վըեր մուտընըեն ակները էտ մարթին յիրա̈ լոխ մին-մին ծախում ա, ետնան էլ մուտանան ա ծախում, թաքավըերն էտ կնգանը տանը քշտավը նորից ա շըրերը փոխած անց կենում, տըեսնում էտ կնեգյն էլ առաչվա մնան ասում

-խոսում չի, էլ օրախ չի:

Թաքավըրը վըեր քյինա̈մ ա ն̈ւրա̈ն պալատը, թաքուն մարթիքյ ա ղարկում, վըեր քյինա̈ն գյիղա̈ն, թա պենը հինչումն ա: Թաքավըրեն մարթիքյը վըեր քյինա̈մ ըն տըեսնում, կյամ թաքավըրեն ասում, թա իստի մին ժուլիկ մարթ էտ կնգանը խա̈փա̈լ ա: Էտ մարթին ծեն ա տամ, կախ տալ տամ, էտ կնգանն էլ նորմինան փող, վըեսկե տամ, թա մեհենգյ մարթին կըճինա̈նչիս, նոր նիըետն առըտուր անըես:

121.ԹԱԿՐԵՆՔՅ ՕՏՐԵ՞ՆՔՅ, ՕՏՐԵ՞ՆՔՅ ԹԱԿՐԵՆՔՅ...

Մին շատ ըսկուպոյ մարթ ա ին̈ւմ՝ էնքան ըսկուպոյ, վըեր սաղ կյանքումը միհետե կոշտ փորավ հաց չի կերալ: Հինչ վըեր ըխշաղում ար, լոխ թուփ ար անում, շատ հըրուստանում:

Էտ մարթը մեհետ քյինա̈մ ա մին քաղաք, նի յա միննում ըստալավոյը, օզում ա վըեր մին աման խորագյ օտըե: Կյինը հըրցնում ա, ասում ըն՝ տասը կապեկ ա: Իրեք կապեկ ա տամ փայտոն նստում, քյինա̈մ կոխկե մին քաղաք, նի միննում ըստալավոյը, տեսնում համին խորագյը օթ կապեկ ա: Ըտըեղ էլ ա ասում՝ թանգյ ա: Նորից իրեք կապեկ ա տամ փայտոն նստում, քյինա̈մ մին օրիշ տըեղ, ըտըեղ օխտը կապեկ տամ, մին աման խորագյ օտում, ետ տըռնալիս մին մարթու տոն ղոնաղ ինգյն̈ւմ: Մարթը տանը չի ին̈ւմ: Մին խիլլա̈ վըեր կենում ըն, կյամ ա, հըրցնում,- Ա՛ կնեգյ, թակըենքյ օտըե՞նքյ, թա՝ օտըենքյ թակըենքյ: Կնեգյը թա՝ օտըենքյ թակըենքյ: Էտ մարթը մնամ ա տահանց իրըսներեն յիշիլիս: Գյն̈ւղն̈ւմ ա թա ն̈ւրա̈ն ըն ասում, օզում ա թա տն̈ւս կյա̈ փախճի, տնատարը թա՝ յավաշ տու մըեր ղոնաղն ըս, կարող ըս ըրխըյին կենաս, նըստե:

Տահանք հաց ըն օտում, պըծնում, ետնան մին կիրկիժ տն̈ւս օնում, ըսկըսում վըեր թակըելը: Էտ մարթը մնամ ա պերանը պեց: Ետնան հըրցնում ա, թա էս հինչ ա̈՞ղա̈թ ա ծըեր քըղաքումը: Կընեգյը թա՝ էս կիրկիժը իմ առաչվա մարթինն ա. տա շատ ըսկուպոյ մարթ ա իլա̈լ, հաց չի կերալ, թա քուշտանա, լոխ թուփ ա ըրալ, պահալ. էս տները, մն̈ւլքյը, հարստությունը լոխ ն̈ւրա̈ն թողածն ա, ինքյը կերալ չի, մըեռալ ա, լոխ թողալ ինձ, ես էլ տանը յիրա̈ մարթ ըմ պերալ, էս ա՝ իմ էրկուինջի մարթըս ա. մեհենգյ ն̈ւրա̈ն թաղալ ըմ, կիրկիժը պահալ, ամմըեն օր համ ն̈ւրա̈ն կիրկիժը վըեր ընք թակում, համ էլ թողածն օտում:

Էս մարթը տա վըեր ըսկանում ա, մաննը կծում ա. ճեյլի եր ա կենում քյինա՜մ ո՞ւրա՜նց քաղաքը, նի միննում բազարը, մին վըխճարու շախկա ինքյ օնում, նիըետն էլ մին քանի չեթվեռ կյինի, օրիշ շատ տես-տեն, մին համբալ փըռնում, ղարկում տոն, կնգանը փըսպարում, թա ամմըեն հինչ շինի, սարքե, էս ա կյամ ըմ: Էտ համբալը վըեր հսնում ա տրա տոն, փասպարքը կնգանն ասում, կնեգյը հըմբալըեն թա՝ էտ իմ մարթըս չի, հա՜լբա՜թ ուզեցալ ըս ո՞ւրո՞ւշո՞ւ տոն քյինա՜ս, շիլ ըս ինգյա՜լ, եկալ ըստըեղ: Համբալը թա՝ չէ, քու մարթըտ ա, էս էլ ո՞ւրա՜ն տոնն ա, ես հաստադ ըմ գյո՞ւղո՞ւմ, ո՞ւրա՜ն էլ ճինա՜նչո՞ւմ ըմ: Վերչը, կնգանը հըվըտցնում ա, պեռնը թողում ըտըեղ, ետ տըեռնում:

Մարթը վըեր կյամ ա տոն, կնեգյը հըրցնում ա, թա՝ էս տես-տենը տու վը՞ս ղարկալ: Մարթը թա՝ հա՛: Կնեգյը թա՝ պա ես էլ ասալ ըմ էս իմ մարթըս չի, օրիշ կինի: Մարթը թա՝ խե՞: Կնեգյը թա՝ պա էս ա քանե՞ տարե յա, ես քու կնեգյըտ ըմ, տու հա՜լա՜ միետե հաց չըս կերալ, վըեր քուշտանաս, մեհենգյ ես հունց հըվա՞տամ, վըեր տու իմ մարթըս ըս: Մարթը թա՝ ա՛ կնեգյ, պա ասել չը՞ս վըեր էսհինչ քըղաքումը խստի պեն ըմ տըեսալ, տրանա ետը ես հո՞ւր հե՞տե յըմ թուփ անում պահըեմ:

Տրանա ետն էտ մարթն ըսկսում ա լա՜վ օտըել-խմըելը, ամմըեն օր լա՜վ քյեփեր անըելը:

## 122.ԷԼ ԻՓԸՑՐԱԾ ԿՈՒՐԿԸՔԱՐԵՐԸ ԿԱՐԵԼ ՉԸՔ ԿԸԼԽԸՏԱԿԵՍ ՏԻՆԻՔՅ

Մին կնեգյ սիրա՜կան ա ինո՞ւմ պըհելիս: Մին օր էտ կնեգյը խոզին կըլո՞խը կուրկուտ ա քըցո՞ւմ, օզում ա թաքուն սիրըկանըեն հետե պահե: Էտ օրը ղիբո՞ւրո՞ւգյո՞ւն վախտը մին ղարիբ մարթ ա կյամ էտ կնգանը մարթին հըրցընում, թա ինձ ղոնաղ չը՞ք յոր օնըել: Մարթն օզում ա պահե, կնեգյը թողում չի: Մարթը կնգանը խաթիրը քըթենո՞ւմ ա, էտ ո՞ւրո՞ւգյո՞ւնը տրան ղոնաղ ըն պահում:

Էքյսը վըեր լոխ եր ըն կենում շուրըըեն կյենում, իրըսնըհին լուվանում, կնեգյն օզում ա մարթին նան ղունաղեն տանան տո՞ւս անե, հանցու վըեր ղզղանը կուրկուտավը կյեղե: Մարթը վըեր եր ա կենում, թա ա՛ կնեգյ սոված ըմ, մին պեն պեր օտըենքյ, կնեգյը թա հա՜լա՜ քյինա՜ ժամ, եք, ետնան...

Մարթը վըեր քյինն՛մ ա ժամ, կնեգյը կուրկուքարերը նի յա տամ ղզղանը, վըեր խփի: Ղոնաղը թա՝ էտ խո՛ւլխո՛ւլո՛ւտ կուրկուքարերը ղզղանն ըս նի տամ հինչ ա՞նըես: Էտ կնեգյը թա՝ նի յըմ տամ կըծցընըեմ, հանցու վըեր ո՛ւրո՛ւզյո՛ւ կըլխըտակըետ տինիմ...

Ղոնաղն էտ խոսկը վըեր ըսկանում ա, եր ա կենում տանան փախճում: Կնեգյը յոր ա օնում կուրկուտը ղզղանավը կյեղում: Մարթը կյամ ա, թա հո՞ր ա ղոնաղը: Կնեգյը թա՝ պա ո՛ւրո՛ւրգյո՛ւնը վըեր ասում ըմ պահումըել, հոր ը՞ս ասում, հաս միհենգյ կուրկուտըեն ղզղանը եր ա կալալ, փախալ: Մարթը թա՝ մին կուտուր հաց տո, վազ տամ հըսնըեմ, լիհա՛ մին խըեգյ էլ ես օտըեմ...

Մարթը հենց վըեր տանան տո՛ւս ա կյամ, կնեգյը սիրականը պիրում ա տոն:

Էտ մարթը վըեր շատ վազ տալավ քյինն՛մ ա, ղոնաղը հըռըցանա ուրվամ ա: Տա ծեն ա տամ, հացն էլ կըլխըյեր պիցըրցընում, թա վըեննը կաց լիհա՛ մին թիքյա էլ ես թաթախ անըեմ, օտըեմ: Ղոնաղն էլ թա՝ յիտացալ ըս, էլ իփըըցրած կուրկըքարերը կարել չըք կըլխըտակես տինիքյ:

## 123.ԴԵՐԸ ՆԱՆ ՏԸՎԱՐԱԾԸ

Մին տըվարած ա ինո՛ւմ, լոխճինին անա հախկը ինքյ ա օնում, դերին անա կարում չի ինքյ օնըե: Հինչ անում ա, դաչանք- պըղատանք ա անում, դերն ո՛ւրա՛ն հախկը տամ չի:

Մին օր ժուղովուրթը վըեր օզում ըն ժամումը հըվաքվըեն , դերն էլ քարոզ պիտի կա՛րթի, ճելլի քյինն՛մ ա ժամը, վըեր ժամն օրհնե: Տըվարածն էլ ճելլի կյամ ա նի միննում խորանը, դերը ժամն ուրհնելիս վըեր ասում ա՝ տեր ողորմյա, տըվարածը խուրանան թա՝ չեմ ողորմյա: Դերը գյո՛ւղո՛ւմ ա թա խոսողն աստված ա, ասում ա խե՞ չըս ողորմյա, տըվարածը թա՝ շորե-րըտ հանե, ողորմյամ: Դերը վըեր շորերը լոխ հանում ա, մնամ տըկլոր, նորից ա ասում՝ տեր ողորմյա, տըվարածը նորից թա՝ չեմ ողորմյա, դերը թա՝ խե՞ չըս ողորմյա, տըվարածը թա՝ կուռնըերըտ տիր քըմակետ, կյըվա-զանըտ էլ կուռնըերետ ղաթումը, ողորմյամ:

Դերը վըեր կուռնըերը քըմակեն խաչ ա անում, կյուվազանն էլ տինո՛ւմ ղաթումը, տըվարածը խուրանան տո՛ւս ա կյամ, ծըեռքեն սըզնե խո՛ւլխո՛ւ-լո՛ւտ միհակավը մեհետ դերին կըլխավը նի հըսցնում, դերին իրեսան

ձրհնը պըլթամ ա, ձրհնը վազ տալավ, կյուվազանն էլ մաշկեն խաչ ըրած կուռնըերեն դաթումը տիրձծ վըեր ա կյամ, վըեր փախճի: Վըեր քյինամ ա թա մղակավը տհւս կյա, կյուվազանը մղակեն կուխկերքեն նի յա կյամ, դերն իրեսեն յիրա վըեր ա ինգյում…

Վըեր եր ա կենում, իտի տըկլոր ժամեն կոխկավն օզում ա թա փախճի, մին պառավ տըեսնում ա, ասում.- Ա՛ դեր, ա՛ դեր, սօր ամսի քանի՞սն ա: Դերը թա՝ ամըես, ամըես, հինչ ամըես, սուրփըերը կըտաղալ ըն, մարթ ըն կրակ տամ, տու տհւս ըս եկալ ամըես ը՞ս հըրցնում:

## 124.Ա՛ ՀՆԳԸԵՐ, ԲԵՂԸՏ ՀԼՈՐԵ

Շահ-Աբբասն ըսկանում ա, վըեր հւրձն երգյիրումն էհինչ տըեղն իրեք կյող կա, հինչ անում ըն, անում չըն, տահանց կարում չըն փըռնըեն: Շահ-Աբբասը մըհետ շորերը փոխում ա, քյինամ տհւս կյամ էն քաղաքը, վըերդեղ էտ կյողերն ըն ապրում: Քյինձմ ա տահանց քթենհւմ, հըրցընում, թա ինձ ծըեզ հնգըեր չը՞ք անըել: Տահանք հըրցընում ըն, թա հինչ փիշա՞կու տար ըս, Շահ-Աբբասը թա՝ վըեչ մին պեն ծըեռքավըս կյամ չի, մենակ վըեր բեղերըս հլհրեմ, կախաղանու յիրձ յէլ մարթ ինի, պեց կըթողեն: Տահանք էլ թա՝ էտ լձվ փեշակ ա, մըեզ իտի մարթ ա հարկավըեր: Շահ-Աբբասը տահանց անա հըրցընում ա, թա՝ պա տո՞ւք հինչ փիշակու տար ըք, տըհանցա մինը թա՝ ես ամմըեն դուշու, ամմըեն հիյվանու, ամմըեն կյենթանու լհւզի գյհւղհւմ ըմ, հինչ էլ վըեր ասըեն, կլհխ կինգյիմ: Էն մինն էլ ասում ա.- Վըեր հիշքան պըենդ քըլլած տռներ ինի, իմ ըռաչիս պենվում ըն: Էն մին կյողն էլ ասում ա.-Ես լձվ մարթ ճինանչող ըմ, վըեր հձրհւր տարե առաչ էլ մին տըեղ տըեսած ինիմ, կըգյիդձմ հու վա:

Տահանք պայման ըն կապում, թա քյինձմ ընք Շահ-Աբբասեն կասը կտըրենքյ: Հղե յըն ինհւմ, քյինձմ: Վըեր հսնում ըն Շահ-Աբբասեն ամարաթը, դըրբըզան մոտանում, մին քանի շան թուլեքյ բիրձդի հձչհւմ ըն, մարն էլ մեհետ համփ ա անում, թուլեքյը սուս ըն անում: Շահ-Աբբասն ասում ա.- Էս լավ տըեռավ, հձլձ էտ ամմըեն հիյվանու, դուշու լհւզի գյհւղողեն հըրցընեմ, տըեսնամ էս շներեն լհւզին գյհւղհւմ ա՞: Տրան վըեր հըրցընում ա, թա էն շան թուլեքյը նան հւրձնց մարը հինչ խոսըեցին, նա թա՝ թուլեքյը ըստըեղաս-ընդեղան ըսեցեն կյողեր ըն կյամ խազնան տանեն, նահանց քավթառ մարը յիրձ պըրծավ, թա՝ ծինըրնետ կտըրեցեքյ, տարը նիըտնեն ա:

Շահ-Աբբասը մտկումր թա՝ պա՛, էս շներեն լո՛ւզին զիղա՛ց:

Տրանա ետը նի յըն միննում խըզնատոնը, քյիլիդնեն լոխ ո՛ւրա՛նց-ո՛ւրա՛նց պեց ըն ինո՛ւմ:

Խազնան տանում ըն մին հեռու տըեղ չորս փայ անում, Շահ-Աբբասն էլ ո՛ւրա՛ն փայը յոր ա օնում, ետ տըեռնում, քյինա՛մ պալատը, մին քանի մարթ ճոկում, տահանց ասում քյեցեքյ էսհինչ քաղաքումը, էսհինչ տըեղն իրեք կյոդեր ըն ապրում, փըռնեցեքյ, պերեքյ կախաղանեն կոշտը, մինչև վըեր ես կյամվոչ, կախ չի տաք:

Տահանք քյինա՛մ ըն էտ կյոդըերեն փռնում, պիրո՛ւմ կախաղանեն կոշտը, ժուղովուրթը հվաքում, էնքան կենում, վըեր Շահ-Աբբասը կյա:

Շահ-Աբբասը փըյտոնավ կյամ ա, լոխ հդե յըն տամ, կյոդերն էլ ո՛ւրա՛նք- ո՛ւրա՛նց մաչին թա՝ պա էս հինչ ա՞նենքյ, սրանա յըլ նըեղ տըեղ չի ինիլ: Էն մարթ ճինանչող հնգըերը թա՝ ծինըրնետ կտրեցեքյ, ըրխըյին կացեքյ, հանե մըեր հնգըերը փըյտոնավ կյամ ա, մըեզ ըզըղըլական ա: Շահ-Աբբասը վըեր ո՛ւրա՛ն շուրերավը, ո՛ւրա՛ն զենքերը կապած, թագը կլխըեն փըյտոնավը մուտանում ա, էն մարթ ճինանչող կյոդը ծեն ա տամ, ասում.- Ա՛ հնգըեր, սրանա յել նըեղ տըեղ չի ինիլ, մին բեղըտ հլո՛րե, մըեզ էս խըթան ըզադե: Շահ-Աբբասը քթըեն տակեն ծիծաղում ա, բեղը հլո՛րում, տահանց պեց ըն թողում, կյամ ըն Շահ-Աբբասեն կոշտը, տա թա՝ վըեսկեն ծըեզ հալալ ինի, քյեցեքյ, օրաս ետը ըխշըղեցեքյ, ըպրեցեքյ, էլ կյուղոթուն չանեքյ:

## 125.Ծ՛ՋՈ՛ՂԸ ՆԱՆ ՍԻՐԱ՛ԿԱՆԸ ԹԱԿ ԸՆ ՕՏՌԻՄ

Մին մարթ ա ինո՛ւմ, մին էլ մին կնեգյ: Էտ կնեգյը սիրա՛կանա ինո՛ւմ պըհելիս: Մարթն էլ ճըղասպան ար, քըշեր-ցիրեկ ճըղացումն ար կենում: Մին օր մին դիրո՛ւրո՛ւզյո՛ւն վախտ տահանց տռնավը մին ծ՛զո՛ղ ար անց կենում: Տա տըեսնում ա, վըեր մին կնեգյ ճիլըր-ճեղի նի յա միննում, տո՛ւս կյամ, հինչ վըեր դունըրխլեղու պադրաստություն ար տըեսնում: Էտ ծ՛զո՛ղը թա՝ քույրիկ, մըթեն ըմ ինգյա՛լ, քյինա՛լի տըեղ չօնըեմ, ինձ դոնադ չը՞ս պահել: Էտ կնեգյը թա՝ մարթըս տանը չի, կարել չըմ:

Ծ՛զո՛ղը քյինա՛մ ա մին դրադ տըեղ կըչոռ անում, եշում թա տըեսնա էտ կնեգյը է՞լ հինչ ա անում: Եշում ա, տըեսնում կնեգյը ճուռիգյը եր կալած քյինա՛մ ա վըեր կյինի պիրի: Էտ սուսուփուս եր ա կենում քյինամ պից-

իրանում տահանց տոն, մաչի ութաղավը նի միննում մին օրիշ օթաղ, ըտըեղ մին կախ տուված խընեցե յա ինիՙմ հարած, թանը վըեր ըծելու, տակըեն էլ թուրուն։ Տա նի յա միննում պատին կոխկըեն տիրած տախտըեն տանկը։ Վըեր մըթնում ա, էտ կնգանը սիրանկանն էլ ա կյամ նի միննում էտ օթաղը։ Մին խիլլա վըեր կենում ըն, էտ կնգանը մարթը ճըղացան կյամ ա, նըստում ա, վըեր հաց ոտըե։ Կնեգյը տես-տենը տինում ա ըռաչին, մարթն էլ եշում ա, տըեսնում շատը կոխկե օթաղն ա տանում։ Սիրանկանն էլ հինչու վըեր քյինամ ա առաչը, էն մըթնումը լոխ թըեփռում ա, ծզինն էլ տախտըեն տական ծըեռքը մըեկնում ա, սիրըկանըեն նըհետ ոտում։

Սիրանկանը սրթան կըլիխ չի ինգյիՙմ, մին վախտ էլ տըեսնում ա ըռըշկին տես-տենը ճելլի յա կըլխում։ Լավ եշում ա, տըեսնում մըթնումը տախտըեն տական մին ծըեռք բիդի ըստոլը պիցըրանիՙմ ա։ Լաղ ա անում յիրա պըրծըլնում, էտ ծըեռքան պըենդ փըռնում, ծզինը թա՝ խըելունք կաց, թա չէ, հարայ ըմ տըլական, ամմըեն հինչ ասըեմ։ Սիրանկանը թա՝ դե լավ, ղալաթ ըմ ըրալ, մին չինինքյ, էրկու ինինքյ։ Տահանք բիրադի ոտում ըն խըմում, թըեխմիշ ինիՙմ , կոխկըե ութաղումն էլ մըրթըկընեգյ շուրըրնեն հանում ըն, նի միննում տըղըրնեն, վըեր քոն ինին։

Սիրանկանն ան ծզինը վըեր շատ ոտում ըն, սիրանկանը թա՝ պա ես ծըրըվացալ ըմ, հինչ ա՞նենքյ։ Ծզինը թա՝ հանե, խընեցումը թան կա, ես խընեցան պահեմ, ըռըեխը կուլխուվըեր անըեմ, տու կյիսկըտ տըակըեն պահե, խըմե։

Ծզինը վըեր խընեցուն ըռըեխը կուլխուվըեր ա անում, հենց լիհա նոր վըեր տըռնալիս վախտը խընեցեն ծըեռքան տիՙս ա պըրծըլնում, ինգիՙմ թուրունը։ Կոխկըե ութաղումը մարթը թա՝ ա կնեգյ, էս հինչ սա՞ս ա, կնեգյը թա՝ կատուն կինի։ Մարթը թա՝ կատուն թուռնեն թըշշոցըեն նըհետ հինչ պեն օ՞նե։ Համ ասում ա, համ եր կենում մին փաղ յոր օնում, քյինամ սիրըկանըեն մըսեն ինիՙմ էնքան վըեր թակում, վըեր լափ ըսպըրնելու քըցիՙմ ա։ Էտ ծզինն էլ վազ ա տամ պիցըրանիՙմ հերթը, էշին փալանը ընդըեղան մոտե տիրած ա ինիՙմ, կըլխըեն տինիՙմ, տահանց յիրա թումփալի վըեր քըցիՙմ, վըեր շըղվըցնե, ինքյը փախճի։ Փալանը վըեր օզում ա վըեր քըցի, փըլանըեն քըմակեն ղուշխունն ինգյիՙմ ա տրա պոկը, նըհետը թումփալի վըեր ա ինգյիՙմ, տահանց յիրըններըեն ինգյիՙմ։ Էտ մարթը սիրըկանենն պեց ա թողում մինգյել տրան թակում, շընըսպանե

անում: Տըրան էլ պըրծնում ա, մինգլել կնգանը ըսկըսում տուրութակ անըելը: Իրըքանին էնքան թակում ա, վըեր վըսկուռնեն ալեր ա անում, թողում տըեղ վըեր տըեռած, ինքյը քյինա̈մ ճեղացը:

### 126.ԼՌԽ ՄԻՆ ԶԻԲԻԼ ՉԻ՞...

Մին օր շահը շորըերը փոխած, քյինա̈մ ա տըեսնում մին տըեղ իրեք ախպըեր վըեննը կացած, զրուց ըն անում: Մին թաքուն տըեղա անջուկ ա օնում: Մըեծ ախպըերն ասում ա. - Ես ըստուծանա կօզըեմ շահն ինձ էնքան փող տա, վըեր կարըեմ էրկու ըտըժանըե տոն շինիմ, մին քանի տարըե մըրթըվարի ապրըեմ: Մաշնակն էլ ասում ա.- Ես էլ ըստուծանա կօզըեմ, վըեր շահն ո̈ւրա̈ն կուճուր կնեգյը մենակ մին քշեր ինձ տա: Կուճուր ախպըերն էլ ասում ա.- Ես էլ ըստուծանա կօզըեմ, վըեր իմ լո̈ւզին մին արշին էրկան ինի:

Շահը ետ ա տըեռնում քյինա̈մ, էքյսի օրը ո̈ւրա̈ն շուրըերավը կյամ էտ իրեք ախպորցը կօշտը, ասում.- Ըրկըե հու հինչ խոսալ ա, վըեր դո̈ւզը չըսեցեքյ, ծըեզ լոխճինին էլ կախ ըմ տըլական: Մըեծ ախպըերն ասում ա, - Ես իստի պեն ըմ ասալ: Շահը թա՝ լա̈վ, քու ասածըտ ըրըե: Մաշնակը մխըրըե լո̈ւզին կապ ա ինգյո̈ւմ, բայց էլլա ասում ա, թա իստի յըմ ասալ: Շահը թա՝ լա̈վ, քու ասածըտ էլ ըրըե: Կուճուր ախպըերն էլ ասում ա.- Ես էլ ասալ ըմ ըստուծանա կօզըեմ, վըեր իմ լո̈ւզիս մին արշին էրկան ինի: Շահը թա՝ պա էտքան էրկան լո̈ւզին կախ տուված հինչ պիտի անըես: Տա ասում ա. - Մին փիս խոսկը մինչև մին ճունդան էն մին ճոնդը հըսնըելը կըփո̈ւշմանիմ, ետ տանըեմ ո̈ւրա̈ն տըեղը: Շահն էլ ասում ա.- Վըեր տու էտքան խըելունք ըս, եք քեզ տանըեմ իմ պալատըս վեզիրներըեն մըեծը տինիմ:

Տրանա ետը շահը տըեղատ ետ ա տըեռնում: Կուճուր ախպըերը ղաբուլ ա անում, քյինա̈մ շահը են պալատը, մըեծ ախպորն էլ շատ փող ա տամ, քյինա̈մ ա ո̈ւրա̈ն հետըե մըեծ տոն շինում, մաշնակ ախպորն էլ ղարկում ա կուճուր կնգանը կօշտը, փըսպարում, թա դե՝ իստի պեն կա, էս քշեր էտ տղան քշտիտ պիտի մնա:

Մաշնակ տղան վըեր քյինա̈մ ա շահըեն կնգանը կօշտը, կընեգյը պիրո̈ւմ ա մին քանի ծո̈ւ իփում, ճոկ-ճոկ ըռընգյնըե անում, տինո̈ւմ էտ տղըեն ըռաչին: Տղան կա̈րմո̈ւր ծո̈ւն կոտրում ա, մխըրըե օտում, թաքա-

վըերեն կնեգյը թա՝ էն մին էլ կոտրըէ կեր։ Տա էն մինն էլ ա կոտրում, վըեր միխըըէ օտում ա, թա՝ էն մինն էլ։ Վերչը, լոխճինին համն օնում ա, թաքավըերեն կնեգյն ասում ա.- Ծո՛ւվանցը համըեն մաչին թափավուտ կար։ Տղան թա՝ չէ՛։ Տրա կլխըեն թխում ա, ասում.- Շոն, շան տղա, վըեր թափավուտ չի կա, ուրիշին կնեգյը հունց կա՞րող ա քունան լա՛վ ինի, լոխ մին զիբիլ չի՞։ Նորից կլխըեն թխում ա, տոռնը պեց անում, հղէ անում։

## 127.ԽԸԵԼՔԸ ՄԸԵԾԵՆ ՆԱՆ ԿՈՒՃՈՒՐԸԵՆ ՅԻՐԱ՛ ՉԻ

Մին երգյիրու թաքավըեր պըռավում ա։ Գյո՛ւղո՛ւմ ա, վըեր ո՛ւրա՛ն մըռնըելանը ետը տղան կըրըլական չի երգյիրը կառավարէ, օզում ա տղըեն հետէ մին խըելունք հարթնը քթենա, հանցու տղըեն քյոմագյ անըէ։

Թաքավըերը շորըերը փոխում ա, քյինա՛մ սաղ երգյիրը շոռ կյամ, հըս-նում մին շեն, մին տան դոնաղ ինգյո՛ւմ, տըեսնում ժուղովուրթը հըվաքված, մըեռալ ըն տանում թաղըեն։ Տնատըեռնը հըրցնում ա, թա էն ինչ ա՞, տնատարը թա՝ մարթ ա մըեռալ, տանում ըն թաղըեն։ Թաքավըերը հըրցնում ա.- Յա՛նի լափ մըեռալ ա՞, թա խըրէ՞գյ ա մըեռալ։ Տնատարը թա՝ լափ մըեռնելն ան խըրեգյ մըէ՞ռնելը վըերն ա, մարթը նա՛փա՛սը կտրալ ա, մըեռալ, տըեռալ մին փադ։ Թաքավըերը խոսում չի։

Տնատարը վըեր քյինա՛մ ա էն մին օթաղը, ըխճըրկանը նիըէտ .ասում ա.- Գյո՛ւղո՛ւմ չըմ, հենց ա մըեր դոնաղը խըելքը տըեղը չինի, հըրցնում ա, թա էն մարթը լափ ա մըեռա՞լ, թա խըրէ՞գյ ա մըեռալ։ Ախճիգյն ասում ա.- Ապա, տա խըելունք մարթ ա, նա զյո՛ւղո՛ւմ ա ինչ ա հըրցնում, ասում ա՝ վըեր մըեռալ ա, խոխա-ըրախա թողալ ա՞, տանը ծոխը եր տանող կա՞, թա՝ չէ։

Թաքավըերն էտ խոսկըերքը լոխ ըսկանում ա, ասում՝ ըհ՛ը, քթա՛լ ըմ, մենակ էս ախճիգյը կըկարէ ինձա՛նա՛ ետը երգյիրըս կառավարէ, տղըես հետէ օզըեմ, տանըեմ։

Էքյսը վըեր ըտըեղատ հղէ յա ինո՛ւմ ո՛ւրա՛ն պալատը, մարթիքյ ա ղարկում, ասում՝ քյեցեքյ էսինչ շենումը իստի մին քյա՛սիբ մարթ կա, նրա ախճիգը ուզըեցեքյ, պերեքյ։

Թաքավըերեն մարթիքյը մին երկու օրան ետը լավ պադրաստությու-նավ կյամ ըն էտ մարթին տոն, ասում.- Թաքավըերը ղարկալ ա, վըեր կյանք քու ախճիգյըտ ո՛ւրա՛ն տղըեն հետէ օզըենքյ, տանըենքյ։ Էտ մարթն էլ

ասում ա.- Ա՜յ ջանըմ, մարթ չըք քթա՞լ, քյինաք նրանավ զարափաթ անըէքյ, պա էս հլիվուր հա՛լիս ես ը՞մ մնացալ, թաքավըերը հո՜ւ, է՞ս հու: Էս մարթիքյն ասում ըն.-Չէ՜, զարափաթ չընք անում, էն օրէն ծըեր տանը ղոնաղը թաքավըերն ա իլա՛լ, ըխճըկանըտ տըեսալ ա, հավան կացալ, ասում ա՝ շատ խըէլունք ախճիգյ ա, մեհենգյ եկալ օզըէնքյ, տանըէնքյ:

Վէրչը, էտ մարթին հըվըրտցնում ըն, ախճիգյը տանում թաքավըերէն պալատը, օխտը օր, օխտը քշէր հըսանէքյ անում, թաքավըերէն տըղէն նիըէտ փըսակում:

## 128.ՄՈՒԼԼԷՆ ՊԱՐ ԿՅԱԼԸ

Մին թազա փսակված տղա քյինա՛մ ա ղարիբութուն, վըէր ըշխշաղանք անըէ: Մին քըղաքում ծառայության ա մննում, փող ըխշաղում, տամ մուլլըէն, վըէր պահէ: Մոլլան էլ փողը տինո՛ւմ ա դո՛ւշակըէն տակըէն, պահում:

Վըէր կյամ ա էտ տըղէն տոն քյինա՛լի վախտը, քյինա՛մ ա մուլլըէն անա փողն օզում, մոլլան տամ չի: Տա շատ ա քյինա՛մ-կյամ, կարում չի մուլլըէն անա փող պուք տա: Քյինա՛մ ա մին խընումու կոշտ, դաչանք-պըղատանք անում, թա՝ խանում, մին թա՛հիր ըրա, մուլլըէն անա փողըս եր կալ, ինձ տո: Էտ խանումըն ո՛ւրա՛ն տըղէն ան նո՛ւքյա՛րին ծէն ա տամ, նո՛ւքյա՛րին ասում. - Մունք քյինա՛մ ընք մուլլէն կոշտը, ես ու իմ տղաս մին մըեծ յալլեխ փող ընք տանում տանք ո՛ւրա՛ն, ասըէնքյ պահէ, ինքյը (մուլլէն փող տված տղան[1]) էտ վախտը նի կըմննէ, ասէ՝ մոլլա, փողըս ինձ տո, վըէր շատը տըեսնա խըէգյը տըլական ա, տու վըէլ փողը հըմբըելիս վախտը նի կըմըննես, ասըես՝ աղան քյըըվանըէն նիըէտ եկալ ա, համ էլ կլխըես լէչա՛կը յոր օնըես ծըեռքէտ փռնըես, ըսկսես պար կյա՛լը, մունք էլ լոխ նի կըմննէնքյ, բիրա՛դի պար կյանք, մըեր փողն էլ յոր օնըէնքյ, կյանք: Նո՛քյա՛րը թա լավ:

Խանումը փողըերը տըղէն նիըէտ յըլլըեխում կապում ա, տանում տամ մուլլըէն: Սա վըէր օզում ա թա հըմբարըէ, էտ տղան նի յա մննում, ասում.- Մոլլա փողըս ինձ տո: Մոլլան էլ վըէր տըեսնում ա տրա փողը նոր պիրա՛ծէն քշտին շատ խըէգյ ա, ասում ա.-Հանէ գյիբին տակըէն, քյինա՛ եր կալ: Տա կարավաթըէն քցա՛ծ դո՛շակը պիցըըցնում ա, գյա՛բա՛ն էլ պիցըըցնում, ո՛ւրա՛ն փողը յոր օնում:

[1] *Ծանոթություն ասացողի:*

Խանումը ըսկսում ա փողըերը հըմբարըելը, վըեր ետնան էլ մոլլան հըմբարըե: Էտ վախտը նոքյարը նի յա միննում, ասում. - Խանում, աղան քյըրվանավը եկալ ա: Ասում ա, համ էլ խըընումըեն կլխըեն լեչակը յոր օնում, էրկու ծըեռքավ պեցո̈ւր փռնում, ըսկսում պար կյալը: Տա վըեր ըսկսում ա պար կյալը, խանումն էլ ա նի միննում նո̈ւքյա̈րին նիըետ պար կյամ: Ետնան խըընումըեն տղան ան ղարիբոթուն եկած տղան էլ ըն նի միննում, ըսկսում չորսավ պար կյա̈լը: Մոլլան վըեր տըեսնում ա լոխ պար ըն կյամ, ինքյն էլ ա նի միննում նիըտնըեն պար կյամ: Խանումը հըրցնում ա.- Մոլլա̈՛, իմ մարթըս եկալ ա, պար ըմ կյամ, էս տղըեն էլ հա̈րն ա եկալ, պար ա կյամ, սրա յել աղան ա եկալ, պար ա կյամ, նա յել կըրեցալ ա ո̈ւրա̈ն փողը քըզանա ինքյ օնըե, պար ա կյամ, պա տո՞ւ հինչու հետե յըս պար կյամ: Մոլլան էլ թա՝ ես էլ տըեսնում ըմ, վըեր ծըզմընան ժուլիկներու ծըեռք ըմ ինգյա̈լ, ինձ քյիլա̈գյո̈ւ մաչ ըք քցա̈լ, փողը ծըեռքաս ինքյ կալալ ըսկսալ պար կյա̈լը, ճարըս կտրած ըսկսալ ըմ ծըզնըհետ պար կյա̈լ:

## 129.ԽՈԽԱ ՊԻՐՈՂ ԿԱ̈ՓԻՆ

Մին շենում մին մարթ ա ինո̈ւմ, անումը Կա̈փի: Տա մին սո̈ւրո̈ւ կնեգյ ա անում, վըեչ մինն էլլա ապրում չի: Մին իրփըվերի տատմար օզում ա տրան քյա̈լա̈գյ կյա: Ասում ա՝ ես քյիննա̈կան ըմ Կա̈փուն:

Մարթ ըն մաչ քցո̈ւմ, էտ տըտմարեն Կա̈փուն նիետ փսակում:

Կա̈փին ամեն օր քյինա̈մ ա հա̈նդ, կյամ, էտ կնեգյն էլ ամեն քշըրհանան նան ո̈ւրո̈ւլգյո̈ւնը թանավ ա իփո̈ւմ, տամ ո̈ւրա̈ն: Օրիշ պեն չար տամ ուտելի: Վերչը էտ խըեղճ մարթը էնքան ա թանավ օտում, վըեր փորը մըծանում ա, քթեն տեմ ինգո̈ւմ: Մին օր էլ հըրվանեն կնեգյը մին տղա յա պիրո̈ւմ, Կա̈փին քոն իլնա̈ծ վախտը քյինա̈մ ա էտ խոխան յոր օնում, պիրո̈ւմ տինո̈ւմ Կա̈փո̈ւն վըններեն ղաթումը:

Կա̈փին քունըտըեղա վըեր եր ա կենում, կնեգյը թա՝ ա՛ մարթ, լա̈վ ա տըեռալ, սաղ-սըլմաթ ըզադվալ ըս, խոխան էլ լա̈վ, ղա̈շա̈նդյ խոխա յա: Էտ մարթը մնամ ա չա̈շմիշ իլա̈ծ: Հըրվաները լոխ հերթավ կյամ ըն, Կա̈փա̈ն ըշկըլո̈ւսանք տամ, վըեր սաղ-սըլմաթ ըզադվալ ա, տղա յա պերա̈լ:

Խաբարը սաղ շենն ա ինգյո̈ւմ, թա Կա̈փին տղա յա պիրա̈լ: Լոխ կյամ ըն ըշկըլո̈ւսանք տամ: Կա̈փին շենան ծըեռք ա յոր օնում, փախճում քյինա̈մ մին հեռու քաղաք:

Անց ա կենում տասը, թա տասնըհենգյ տարե, Կյա̀փին շենը մետն ա քցո̀ւմ( վըեղը քախծր ա): Օզում ա կյա̀ շենը տըեսնա, քյինա̀: Կյամ ա, հա̀լյա̀ շենան խիլլյա̀  հեռու տըեսնում ա էրկու մարթ ո̀ւրա̀նց վըեղեն սահմանեն յիրա̀ կռված: Մինն ասում ա. - Իմ վըեղես սահմանն ըստեղավ ա, էն մինն էլ թա չէ՝ ըստեղավ ա: Վերչը, տըհանցա մինը թա՝ հա̀լյա̀ Կյա̀փին տղա պերա̀ծ տռնան առաչ ա իմ վըեղես սահմանը ըստեղավ իլյա̀լ, տու հինչ ը՞ս մըեծ-մըեծ խոսում:

Էս Կա̀փին վըեր ո̀ւրա̀ն խոխա պիրիլին անումը ըսկանում ա, հղըցեն կեսան ետ ա տըեռնում, փախճում, ետ քյինա̀մ քաղաքը:

130.ՀԱԽՆ Ա…

Մին կնեգյ սիրա̀կան ա ինո̀ւմ պիելիս: Մարթն էլ ճղասպան ար, քշեր-ցիրեկ ճըղացումն ար կենում: Մին օր, մին դիբրո̀ւգյո̀ւն վախտ տահանց տռնավը մին ծզո̀ղ ար անց կենում: Տա տըեսնում ա, վըեր մին կնեգյ ճիլլը-ճելլի նի յա մննում, տո̀ւս ա կյամ, հինչ վըեր դունըխլեղու պադրաստու-թյուն ա տըեսնում: Ծ̀զո̀ղը մուտանում ա էտ կնգանը, թա՝ քռ՛ւյրիկ, մթեն ա, քյինա̀լի տեղ չօնեմ, ինձ դոնաղ չը՞ս պահել: Տա թա՝ մարթըս տանը չի, կարել չըմ:

Ծ̀զո̀ղը քյինա̀մ ա մին դրադ տըեղ կչոռ անում, եշում, թա տըեսնա կնեգյը է՞լ հինչ ա անում: Եշում ա, տեսնում կնեգյր ճուռիգյը եր կալած քյինա̀մ ա, վըեր կյինի պիրի: Էտ ծզո̀ղը սուս ու փուս եր ա կենում, մըննում մին օրիշ օթաղ, տըեղ մին կախ տուված խնեցե կար հարած, թանը վըեր ըծելու, տակեն էլ թուրուն: Տա նի յա մննում պատին կոխկեն տիրա̀ծ թախտեն տակը: Վըեր մթնում ա, կնգանը սիրա̀կանն էլ ա կյամ նի մննում էտ օթաղը: Մին խիլլյա̀ վըեր կենում ըն, էտ կնգանը մարթը ճըղացան կյամ ա, նստում, վըեր հաց ոտե: Կնեգյը տես-տենը տինո̀ւմ ա մարթին ըռաչին, մարթն էլ եշում ա, տըեսնում կնեգյը շատը կոխկե օթաղն ա տանում: Սիրա̀կանն էլ հինչ վըեր տինմ ար առաչը, էն մթնումը լոխ թըեփռում ա, ծզո̀ղն էլ տախտեն տական ծըեռքը մըեկնում ա, սիրըկանեն նհետ ոտում:

Սիրա̀կանը սո̀ւրթա̀ն կլո̀խ չի ինգյո̀ւմ, մին վախտ էլ տըեսնամ ա ըռըշկին տես-տենը ճելլի յա կլխում: Լա̀վ նշում ա, տըեսնում մթնումը տախտեն տական մին ծըեռք բիդի ըստոլը պիցրա̀նում ա: Լաղ ա անում յիրա̀ պրծնում, էտ ծեռքան պըենդ փռնում: Ծ̀զո̀ղն էլ ո̀ւրա̀ն կուրցնում չի,

ասում ա-Խըելունք կաց, թա չէ, հա̀րա̀յ ըմ տըլական, ամեն հինչ ասեմ։ Սիրա̀կանը թա՝ դե լա̀վ, դա̀լա̀թ ըմ ըրալ, մին չինինքյ, էրկու ինինքյ։ Տահանք բիրա̀դի օտումըն-խմում, թըեխմիշ ինո̀ւմ, իսկ կոխկե ութաղումն էլ մըրթըկնեգյ շուրըրնեն հանում ըն, նի մըննում տղըննեն, վըեր քոն ինին։

Սիրա̀կանն ան ծ̀զո̀ղը վըեր շատ օտում ըն, սիրա̀կանը թա՝ ես ծըըվացալ ըմ, պա հինչ ա՞նենքյ։ Ծ̀զո̀ղն էլ ասում ա.-Հանե՛, խնեցումը թան կա, ես խընեցան պահեմ, ռըեխը կլխուվըեր անեմ, տու կյիսկըտ տակեն պահե, խմե։

Ծ̀զո̀ղը վըեր խնեցեն կուլխըվըեր ա անում, հենց լիհա̀ նոր վըեր տռնալիս վախտը խնեցեն ծըեռքան տո̀ւս ա պրծնում, ինգյնո̀ւմ թուրունը։ Կոխկե ութաղան մարթը թա՝ ա՛ կնեգյ, էս հի՞նչ սա̀ս ա։ Կնեգյն ասում ա՝ կատուն կինի։ Մարթը թա՝ կատուն թուռնեն թշշոցեն նհետ հինչ պե՞ն օնե։ Համ ասում ա, համ եր կենում մին փադ յոր օնում, քյինա̀մ սիրըկանեն մսեն ինո̀ւմ, էնքան վըեր թակում, վըեր լափ ըսպընելա քցո̀ւմ ա։ Էտ ծ̀զո̀ղն էլ վազ ա տամ պիցրա̀նո̀ւմ հերթը, էշին փալանը ընդեղան մոտե տիրա̀ծ ա ինո̀ւմ, կլխեն ա տինո̀ւմ, տահանց յիրա̀ թումփալի վըեր քցո̀ւմ, վըեր շղվըցնե, ինքյը փախճի, բայց փլանեն դուշխանը ինգյնո̀ւմ ա տրա պոկը, նհետը թումփալի վըեր ա ինգյո̀ւմ, տահանց յիրըններեն ինգյնո̀ւմ։ Էտ տնատարը սիրըկանեն պեց ա թողում, մեհենգյ էլ տրան թակում, շընըսպանե անում։ Տրանա յել վըեր պըրծնում ա, մեհենգյ էլ կնզանն ա ըսկսում տրութակ անելը։ Իրըքանեն հերթավ էնքան թակում ա, վըեր վըսկըռքնեն ա̀լեր ա անում, թողում տըղըրնեն վըեր տըեռած, ինքյը քյինա̀մ ճըեղացը։

### 131.ՔԹՈ̀ԼԻՆ ՄԻՆՆ ԻՄՆ Ա, ՊԱ ՄԻ՞ՆԸ ՀՈ̀ԻՐՆ Ա...

Մին մարթ օզում ա փսակվե։ Ասում ա.-Ես հունց կնեգյ պիտի օզեմ, վըեր հաց օտելը գյիդա̀վուչ։

Մին իրփըվերի կնեգյ տըեսնում ա, վըեր էս մարթը խըելքան թիթև ա, խաբարը հըսցնում ա տրան, թա էհինչ կնեգյը հաց չի օտում։

Էս մարթը, վըեր շատ էրկան տի մին կնզան շոռ եկած ա ինո̀ւմ, ուրխանում ա։ Ասում ա. - Էս ա, վըեր կա, օզածըս քըթա̀լ ըմ։

Տա էտ կնզանն օզում ա, պո̀ւրում տոն։ Կնեգյն էրկու տարե քյեփը տվածեն մնան թաքուն օտում ա-խմում, մին օր էլ ասում. - Պա սրա կլոխը թաղեմ, չերանը հի՞ք պիտի թըքընթաքուն օտեմ։ Սօր էլ նստըլական ըմ,

նիետն օտեմ: Հենց վըեր մարթը հմնդմ կյամ ա, տըեսնում ամանը քցմծ, էրկու քթոլ մաչին տընգա ծ, պլըշում ա, տես ու տեն եշում, ետնան էլ թա՝ էս քթոլին միննն իմն ա, պա էն մի՞նը հոււրն ա: Կնեգյը վըեչ տանում ա, վըեչ պոււրոււմ, թա՝ էն միննն էլ իմն ա: Մարթը թա՝ վըեր քուննն ա, ես էլ օզըմ չըմ ապրեմ: Հըըվաները հվաքվում ըն, տրան իրըսարանք տամ, թա՝ ա՛ տնաշին, համութ ա, պա օզում ըս մարթ ինի, վըեր հաց չօտե՞: Տա, թա՝ քթոլին մինը իմն ա, էն մի՞նը հոււրն ա: Կնեգյը էն ղըլան ասում աէ իմն ա: Մարթը թա՝ ես արտեն մըեռե: Պրանվում ա, թա մըեռնում ըմ, ինձ տարեքյ թըղեցեքյ: Հնգեր-հրեան նորըմինմն ըն թուփ տըեռնում , էտ մարթին օզում ըն խրատ տան, տա նորըմինմն թա՝ քթոլին միննն իմն ա, պա էն մի՞նը հոււրն ա: Կնեգյը թա՝ իմն ա: Էտ մարթը ասում ա. -Ես էլ եր կենողը չըմ, ինձ տարեքյ թըղեցեքյ:

Հըըվաները տըեսնում ըն, վըեր կարել չըն տրան կլոխ տինին, թողում ըն, քյինմմ ամեքյա ոււրմնց տոն: Էտ մարթը տըեսնում ա, վըեր քանի օր անց ա կենում, ոււրմն տանում չըն թաղեն, քյինմմ ա հինգյըստներումը ոււրմն հետե փոս կտրում, մաչին պրանվում, թա ես մըեռնում ըմ: Մարթիքյ նորըմինան ըն հըվաքվում, թա՝ ա՛ տնաշին, պա համութ, այիբ չըս ասում, տու սաղ- ըլմաթ մարթ, եկալ ըս նի մտալ փոսեն մաչը, թա ես ըմ, վըեր ես, մըեռնում ըմ, պա քեզ նամուս, աբուռ, հայա չօնե՞ս: Էտ մարթը թա՝ քթոլին մինը իմն ա, էն մի՞նը հոււրն ա: Կնեգյը էն ղըլան ասում ա.- Իմն ա: Տա ասում ա.-Դե վըեր քուննն ա, վըեղը կլխես ըծեցեքյ:

Թուփ տըեռած մարթիքյ վըեղը տրա կլխեն ըն ածում, թաղում, քյինմմ ոււրմնց տները:

## 132.ՄԻՇՏ ՔՅԵՓ ԱՆՈՂ ՄԸՐԹԸԿՆԵԳՅԸ

Մին թաքավըեր տոււս ա կյամ ոււրմն երգյիրը շոռ կյամ, թա տեսնա ժուղովուրթը հի՞նչ հմլոււմն ըն, հո՞ւնց ըն ապրում: Քշերեն կեսումը վըեր հըսնում ա ոււրմն քըղաքին ղրաղը, բոււրդմն մին սմս ա ընջուկավն ինգյոււմ: Մուտանում ա, փմնջմրմվը եշում, տեսնում մին մարթ մին տեփ ծըեռքեն թակում ա, կնեգյն էլ տկլոր թուռնեն մաչին պար ա կյամ: Տու մի ասիլ, տահանք շատ քյմսիբ ըն ինոււմ, տահանց իլմծ-չիլմծը մին ծըեռք շոր ա ինոււմ, մինգյել ետ տեփը: Մին ոււրոււլյոււն էտ մարթն ա շորը կյենում, ըստոլեն նստում, տեփը թակում, կնեգյը տկլոր նի յա մըննում թուռնումը

պար կյամ, էն մին ո̈ւրո̈ւգյո̈ւնն էլ կնեգյն ա շորերը կյենո̈ւմ, ըստոլեն նստում, տեփը թակում, մարթն ա տկլոր նի մըննում թուռնումը պար կյամ:

Ամեն օր տահանք քյեփ ըն անում, ուրխանում: Էտ թաքավըրերն ամեն ո̈ւրո̈ւգյո̈ւն կյամ ա եշում, զըրմացած հըռանում: Մին օր էտ մարթին ծեն ա տամ ո̈ւրա̈ն պալատը, մըեծ նա̈զիրին թա՝ տար վըեսկուն ամբարը պեց ըրա, հիշքան օժը պատում ա, թող յոր օնե: Էտ մարթը թա՝ թաքավըրերն ապրած կենա, շատ շնուրհակալ ըմ, վըեչ մին պենու էլ թամահ չօնեմ: Թաքավըրերն ասում ա՝ լիհա վըեր շատ կարես վուչ, ջուբերավըրտ մին եր կալ: Էտ մարթը ջուբերը վըեսկավ լըցնում ա, տանում տոն, թա՝ ա՛ կնեգյ, քըզետե խազնա յըմ պերա̈լ: Կնեգյն ասում ա.- Պա հի՞շտեղ տինինքյ, վըեր կյողերը կյան վուչ տանեն, մըեզ էլ մին վնաս տան: Վըեսկեն տինո̈ւմ ըն մին տեղ, ետնան էլ տո̈ւս օնում, տինո̈ւմ մին օրիշ տեղ, մի քանի օր տեղը փուխըրփոխ անում, տեփը ածելն ու պար կյա̈լն էլ մըննըրներան քցո̈ւմ:

Մին ո̈ւրո̈ւգյո̈ւն թաքավըրերն ասում ա. - Քյինա̈մ տեսնամ տահանք մեհենգյ հինչ ջուռա քյեփ ըն սարքալ: Քյինա̈մ ա, տեսնում էտ մարթին տանը վըեչ սա̈ս կա, վըեչ սեմո̈ւր: Նի յա մըննում տոն, տեսնում տահանց ունքըրմաչան աղուն կյա̈թո̈ւմ ա: Թաքավըրերը հըրցնում ա, թա հինչ ա՞ պըտահալ, տահանք բիրա̈դի, թա թաքավըրերն ապրած կենա, վըեսկետ օց ա տըեռալ, պըկըրներավս տուվալ, եք, տար, մըեզ ըզադե էս ցավան:

## 133.ԹԱՔԱՎԸՐԵՆ ԱԽՊՈՐԸ ԴԱՐԴԸ

Մին թաքավըեր շատ զուլում ա ինո̈ւմ: Տրան էլ մին խըելունք, իմաստուն ախպըեր ա ինո̈ւմ: Ախպըերը թաքավըեր տռնալան ետը սրա իրեսեն ծիծաղ չի ուրվամ: Ախպորը ընգյո̈ւնա̈ն ռըհա̈թին ըրած փիսոթուննեն քշերցիրեկ տրան տընջիլիս ըն ինո̈ւմ: Թաքավըերը ո̈ւրա̈ն ռըհա̈թին հվաքում ա, ասում. - Հու վըեր տըեսնա իմ ախպորը ծիծըղելիս, կյա̈ ինձ ասե, նրան ո̈ւրա̈ն շըրփկավը մին վըեսկե յըմ տլական:

Թաքավըրերեն ախպըերը հիշտեղ վըեր քյինա̈մ ար, շատ մարթիքյ հետան հըռաքաշ քյինա̈մ ին, տըեսնան ծիծաղում ա՞, թա՝ չէ: Մին քանի տարե տի հետան քյինա̈մ ըն, տըեսնում, վըեր ծիծաղում չի:

Մին օր էլ էս թաքավըրերեն ախպըերը քյինա̈մ ա բազար, օզում ա թա մըես ինքյ օնե, տըեսնում ա բզարումը մուրթոտած, խոզին ճոկ ա վըեննը ծակած՝ վըեննան կախ տուված, էծին՝ ճոկ, վըխճարեն, դնեն, լոխ ճոկ-ճոկ:

Տա կախ-կախ ըրած լիշերեն եշում ա, քթըեն տակեն ծիծաղում...

Խաբարը դ̀աստին հըսցնում ըն թաքավըրերեն, վըեր քու ախպըերը սօրե էսհինչ տըեղը ծիծ̀աղալ ա:

Թաքավըրերն ախպորը ծեն ա տամ, ըստիբում, վըեր ո̀ւր̀ան դ̀արդն ասե: Հըրցնում ա, թա պենը հինչումն ա՞, վըեր էսքան տարե ծիծ̀աղալ չըս՞

Վըեր շատ ըստիբում ա, ախպըերն էլ թա՝ հինչ կյե՞դեմ, յիշեցե տըեսե մսեն տըեղը ամեն մին հեյվան ճոկ-ճոկ ո̀ւր̀անց վընըներան ծակած, կ̀ախ տուված, ծիծըղեցե: Մըտըծըեցե, գյիդ̀ացե, վըեր մին օր էլ քու վըեննատ ըն ինդի ծըկըլական, կախ տան:

## 134.ՄՈՐԸ Լ̀ՈՒՋԻՆ

Խոխան խ̀ուրդը-մ̀ուրդ̀ պեներ ա իլ̀ալ կյուղընալիս: Մարն ըսելիս ա իլ̀ալ. - Բա'լա, էլ պեր: Խոխան էլլա յար կյուղանում-պ̀ուր̀ում, մարը միշտ թա՝ է՛լլա պեր: Խոխան քանի մըծանում ար, մըեծ-մըեծ պեներ ար կյուղանում պ̀ուր̀ում : Մարը ուրխանում ար, խուխեն էլլա ասում, թա՝ պեր:

Ախրը վերչը խոխան վըեր հսած-փսած տղամարթ ա տըեռնում, ըսկսում ա կով, ծի կյուղանալը: Մին օր էլ տրան փոնում ըն, վըեր տանեն կախ տան: Հենց վըեր քյ̀անդիրն օզում ըն քցին պոկը, տղան ասում ա. - Սըրտումըս մին մուրազ կա, թողեքյ տըեղ տամ, նոր ինձ հինչ օզում ըք, ըրեքյ: Հըրցնում ըն, թա հինչ ըս օզում, տղան ասում ա. - Օզում ըմ իմոր վերչին դ̀ն̀ումը տըեսնամ…

Մարը պ̀ուր̀ում ըն, վըեր օզում ա թա տղեն մուտանա կըլավն ինգյնի, տղան մորը թա՝ լ̀ուզիտ տ̀ուս կալ, լ̀ուզվատ պաչիմ... Մարը լ̀ուզին վըեր տ̀ուս ա օնում, տղան լ̀ուզվան հունց կծում ա, վըեր մարը օշը տանում ա, վըեր ինգյ̀ում-մըեռնում:

Տղան ասում ա.-Հինչ վըեր ըրալ ա, լոխ էս լ̀ուզին ա ըրալ:

## 135.ՍՈՒՐՓԵՆ ԽԱ̀ՓԻԼԸ

Էրկու ախպըէր ըրբան փաղավ լըցած, մին լէնջ տըեղավ կյա̀յլիս ըն իլա̀լ տոն: Ախպորը մինը ըրբեն յանան պահում ա, վըեր պարան չի կյա̀, էն մինն էլ ըրբան քշիլիս ա ինո̀ւմ: Վըեր տի յանան փըռնած շատ կյամ ըն մին սուրփա մուտանում, ըրբան քշո̀ղ ախպըէրն ասում ա.- Ա՛ սուրփ, իրեսըս վըետանըտ տակը, տու վըեր սաղ-սըլամաթ էս լէնջա̀վը մըեզ անցկըցնես, Թավար կյումաշը մուրթըլական ըմ, մատաղ անեմ: Էն մին ախպըէրը թա՝ պա ապան ղաբուլ կանե՞: Նա թա՝ ա՛ մըեռած, սուս կացե՛, խա̀փո̀ւմ ըմ, վըեր անց կենանք...

## 136.ՄԱՐԹԻՆ ԱՄԵՆԱՆԵՂ ՏԵՂԸ

Հա̀ր ու տղա լութկեն յիրա̀ ծովումը լըեղ ին տամ: Բո̀ւրղա̀ քամեն պիցրա̀նո̀ւմ ա, լոթկան տըկըըտիյեր անում, փշրոտում, տես ու տեն ցըրն տամ: Տահանք զոռավ մին տխտակու կացած, ըսկսում ըն ծուվեն յիրա̀ տես ու տեն քյինա̀լ: Տղան թա՝ ա՛ հա̀ր, տըեսնաս սրանա նըեղ տըեղ էլ կինի՞: Հա̀րը թա՝ հա՛, կինի: Տղան թա՝ հու կինի՞ սրանա նըեղ տըեղ: Հա̀րն ասում ա.- Էս սհաթըս մին օրիշ տըեղ օխտը-օթ հոքի ըստոլը քցա̀ծ, քյաբաբն ան կյինին վըեր տիրա̀ծ, կարում չըն օտեն, մին մարթ պիտի կյա̀, էն էլ յըտանում ա, կյամ չի: Սահանք էլ նրան ըն եշում: Էս մարթիքյն ավելի նեղ տըեղ ըն, քան մունք:

## 137.ԻՐԵՔ ՀԱՐՑ

Պարսկաստանեն թաքավըէրը ո̀ւրա̀ն քվորը իրեք տղորանցը ճոկ-ճոկ ծեն ա տամ ո̀ւրա̀ն կոշտը: Մըեծեն հըրցնում ա, թա՝ հինչն ա՞ ըխշարքումըս ամենաճելլի քյինո̀ղը: Մըեծ տղան թա՝ քու քյո̀հլա̀ն ծիտ ա: Թաքավըէրը ծըեռքը թափ ա տամ, թա՝ քըզանա պեն չի տո̀ւս կյա̀լ, քյինա̀:

Մըչնակեն ա ծեն տամ, տըրան էլ հըրցընում ա, թա ինչն ա՞ ըխշարքես ամենաքյոք պենը: Մաչնակ տղան թա՝ քու էրկու տըրեկան, կորմիտ ընելիս ղոչը:

Տըրան էլ ա ասում, թա՝ քըզանա պեն չի ինիլ:

Կուճուրը վըեր կյամ ա, հըրցնում ա, թա հինչն ա՞ ըխշարքես ամենաքախծր պենը: Կուճուր տղան ասում ա՝ շագալաթը: Թաքավըէրը տրանա յէլ ա ծըեռք յոր օնում, վըեչ մինին իրեսեն էլ եշում չի:

Հունց ա պըտահում, հմմին քըղաքումը մին քյմսիբ տղա յա ծնվում: Տա վըեր օխտը տըրեկան ա տըեռնում, քաղաքումն ըստեղ-ընդեղ ասում ա. - Թաքավըերն ըւրմն քըվորը տղորանցան ծըեռք քաշից զուտ էն հարցերեն պաղասխանը չտալի հետե, ես օզում ըմ քյինմմ էտ տղորանցն իրեսը պարզ անեմ: Խաբարը հըսնում ա թաքավըերեն մարթուցը, մինչև սենատը: Վերչը, սենատորնեն ասում ըն, թա թաքավըերը մըեզ խայտառակ կանե, լմվն էն ա, վըեր թաքավըերեն ասենքյվուչ, թա իստի տղա կա, վըեր օզում ա օխտը տարե առաչ քվորըտ տղորանցը տուված հարցերեն պաղասխանե:

Էտ տղան քյինմմ ա թաքավըերեն պալատը, տըռանը մուտանում ա, ըսկսում ա լաց ինիլը: Թաքավըերն ասում ա. - Տրան պերեքյ կոշտըս: Պըւրըւմ ըն տրա դմրդը հըրցընում, տղան թաքավըերեն ասում ա.- Քվորըտ տղորանցան զուր ըս ծըեռք քաշալ, ես նահանց տուված հըրցերեն պաղասխանը կարող ըմ տամ: Էն վըեր հըրցըրալ ըս թա ամենաճելլի քյինըղը հինչն ա, տա մարթին մըետկն ա, ամենաքյոքը վըեղն ա, ամենաքախծըրը՝ քոնը:

Թաքավըերը ըւրմն մարթուցը ծեն ա տամ, տըրան հունցը վըեր հարկավըեր ա, վըեսկավ, թինգյմկան քըրերավ-պենավ հըղե տինըւմ:

## 138.ԽՈՍԿԵՆ ՄԻՆԸ ՂՈՐԹ ԿԻՆԻ, ՄԻՆԸ՝ ՍՈՏ

Մին թաքավըեր տըւս ա կյամ ըւրմն երգյիրը շոռ կյամ, հազզար ու մին խոսկ ա ըսկանում, լմվ ու փիս պեներ ըն նաղլ անում, հու վըեր մինմն մին փիս պեն ար ասում, էն փիս պեն ընողեն կլըխր դմստին կտրել ար տամ: Սաղ երգյիրն էտ թաքավըերը առնավ ծասկում ա:

Մին օր էլ ըւրմն մարթուցը նիետ վըեր շորերը փոխած տըւս ա կյամ ըւրմն երգյիրը շոռ կյմլի, տըեսնում ա, վըեր մարթիքյ ըստըեղ-ընդըեղ խոսում ըն, թա մըեր էս թաքավըերը հինչ ա՞ ըսկացալ:

Մեհետ էլ մին մըեծ մարթու ծեն ա տամ, ասում. - Ա՛ հլիվուր, դողուրն ասե, թաքավըերը էս լոխ դըւզ ա՞ անում, թա չէ: Էտ հլիվուրն էլ ասում ա.- Քեզ ճինմնչըւմ չըմ, զյըւղըւմ չըմ, թա հու վը՞ս հինչը՞ս, վըեր կլըխըս էլ կտրես, դըւզը պիտի ասեմ: Սա թա՝ ես թաքավըերն ըմ: Էս հլիվուրը ասում ա.-Օզում ըս ինձ ըսպանե, հինչ օզում ըս ըրա, էս լոխ դըւզ չըս անում, ամեն մարթու ըսածու հըվատում ըս, մինը ղորթ ա ասում, մինը՝ սոտ,

ամենաշատը սոտ ըն ասում, պիտի հազզար հետ մտածես, լա̈վ տնտըղես, քու մարթուցտ նհետ մսլըհաթ անես, տըեսնաս վըե՞ր խոսկ կինի սոտ, վըերը ղորթ, նոր էտ լոխ անես:

Թաքավըերը ետ ա տըեռնում, քյինա̈մ ո̈ւրա̈ն նա̈զիր-վեզիրին նհետ նըստում, մտածում, թա հինչ պիտի անեն: Սո̈ւրթ-սո̈ւրթա̈ ո̈ւրա̈ն հրամանն ա ետ յոր օնում, տրանա ետն էլ փիս պեն ընողեն անա յել վըեր պեն ար ըսկանում, ո̈ւրա̈ն մարթուցը հըվաքում ար, մսլըհաթ անում, խըելք-խըելքու վըն տամ, նոր պատիժ տամ: Երգյիրը ըսկսում ա հնդարդվիլը, ա̈րո̈ւնը պըկասում ա:

Մին օր էտ թաքավըերը շորերը փոխած տո̈ւս ա կյամ, թա տըեսնա ո̈ւրա̈ն երգյիրումը հի՞նչ կա, հինչ չի կա: Մուտանում ա մին քանի հվաքված մարթու խուսըցնում, նահանք թա՝ էս ա մըեր թաքավըերը մեհենգյ երգյիրը կարքեն հինդըրտցրալ ա, առաչ մին ըռնախում պեն ա իլա̈լ:

## 139.ՓԱ̈ՐԻ

Մին մարթ ո̈ւրա̈ն կընգանան շատ զա̈հլան տարած ա ինո̈ւմ, օզում ա կըլխան ռաղ անե: Բիրա̈ղի հըներանց տոն քյինա̈լիս քըռե յա տամ, քըցո̈ւմ մին ճիրավըեր, ըռըխեն մին քար տինո̈ւմ, հըղե ինո̈ւմ:

Մին քանի օր վըեր կենում ա, տոն քյինա̈լիս ճիրըվըերեն քարը պիցըր-ցընում ա, եշում, թա տեսնա կնեգյը սաղ ա՞: Հենց վըեր քարը պիցըրցընում ա, տեսնում ա քարան կացած, կոչ եկած մին օց: Էտ օցը տըրա վըեններն ա ինգյո̈ւմ, ղաչանք-պըղատանք անում, վըեր ո̈ւրա̈ն ըզադե էտ կնզանն անա, ետնան էլ ասում.- Հինչ լիվոթուն ասես, կանեմ, թա̈քյի վըեր քըշտան ինձ տո̈ւս օնես (էտ կընգանը անումը Փա̈րի[1] յա ինո̈ւմ): Էտ մարթը օցեն տո̈ւս ա օնում, Փա̈րո̈ւն անա ըզադում: Օցը էտ մարթին ասում ա.- Քյիննա̈կան ըմ էսիինչ թաքավըերեն ըխճըկանը պկըավը տամ: Հու վըեր էլ կյա̈, պեց չըմ թուղըլական, տու վըեր կյա̈ս, ըխճըկանը պեց ըմ թուղըլական, հըռանամ: Էտ վախտը թաքավըերը քեզ մին սո̈ւրո̈ւ-պեռնը վըեսկե յա տըլական: Տըրանա ետը քյիննա̈կան ըմ մին օրիշ թաքավըերու ըխճըկան պըկավը տամ, քեզ հիշքան ղաչանք-պըղատանք անեն, ըստիբին, կյա̈ս վուչ կոշտըս: Թա վըեր շիլ ինգյիր, եկեր, քեզ կըծըլյական ըմ:

[1] *Ղարաբաղի շատ գյուղերում տարօրինակություններ ունեցող կանանց «Փարի»,«պել Փարի» կամ «կյիժ Փա̈րի» են անվանում:*

Էտ օցը քյինա̀մ ա տեղետ թաքավըրերեն ըխճըկանը պըկավը տամ, ախճիգյը ծանդր հիվընդանում ա: Շատ մարթիքյ ըն քյինա̀մ-կյա̀մ, կարում չըն թաքավըրերեն ըխճըկանը օցեն անա ըզատեն: Էտ մարթը քյինա̀մ ա, թա ես կըկարեմ: Հենց վըեր տա նի յա մըննում թաքավըրերեն ըխճըկանը օթաղը, օցը եր ա կենում տո̀ւս կյամ: Թաքավըրերը էտ մարթին օխտը պեռնը վըեսկե յա տամ, հըղե քիցո̀ւմ:

Մին քանի ամես վըեր անց ա կենում, օցը քյինա̀մ ա մին օր օրիշ թաքավըրըրու ըխճըկանը պըկավը տամ: Հիշան մարթ ըն ծեն տամ պո̀ւ-րո̀ւմ, կարում չըն ըզատեն: Խաբարը հըսնում ա էտ թաքավըրերեն, թա պա էսիինչ տեղը մին մարթ կա, վըեր էսիինչ թաքավըրերեն ըխճըկանը տի մին օցա ըզատալ ա: Էտ մարթին ծեն ըն տամ, տանում: Տա վըեր քյինա̀մ ա, օցը ասում ա.- Պա քեզ ասալ չը̑մ հիշքան էլ ծեն տան, կյա̀ս վուչ: Մեհենգյ հունց կա̑նես, վըեր սըրան պեց թողեմ, քեզ փըռնեմ: Էտ մարթը էլ թա՝ ես տըրա հետե չըմ եկալ, քու դարդատ ըմ եկալ, էս ա մին քանի օր ա, վըեր Փա̀րին ճիրըվըերան տուս ա եկալ, քեզ ա շոռ կյամ, տեղըտ գյիդացալ ա, թուշ ըստեղ ա կյամ, թա կարում ըս, կըլխետ ճարը տես: Էս օցը Փա̀րո̀ւն անումն ըսկանալն ան փախճիլը մին ա անում: Թաքավըրերեն ախճիգյը օցան ըզադվում ա, էս թաքավըրերն էլ ըստեղ էտ մարթին օխտը պեռնը վըեսկե տամ, հըղե քըցո̀ւմ:

## 140.Ո̀ՒՐԱ̀Ն ԹԱՐԻՓ ԱՆՈՂ ՄԱՐԹԸ

Մին մարթ, մինգյել մին կնեգյ ըն ինո̀ւմ մին շենո̀ւմ ըպրելիս: Էտ մարթը մին միակ ծըեռքեն քյինա̀մ ա ծմակը, կյամ, թա ղըչըղներեն իստի ըրե, ինդի ըրե, վըեր քյարվան ինի, լոխճինին կըթակեմ տեն անեմ, քյար-վանը կտրեմ, պիրիմ տոն: Կնեգյը տըեսնում ա, վըեր մարթը շատ ա ո̀ւրա̀ն տերտըկ-տերտակ խուսկերքավը զա̀հլա̀ն տանում, մին փութ ցորեն ա մարթին շելակը տամ, դարկում ճեղաց, ինքյն էլ շորերը փոխում, տղը-մարթու շորեր կյենո̀ւմ, քյինա̀մ տո̀ւս կյամ մարթին առաչը:

Մարթը ցորենն աղած, ճըղացան կյա̀լիս ա ինո̀ւմ: Կնեգյը վըեր առաչը կտրում ա, միակավ մեհետ նի հըսցընում, մարթին սուրփ-աստուծը կտրում ա: Մեհետ էլ էն մին ընգյո̀ւնին ա միակավ ծըեփում, դա̀նը ծըեռքան ինքյ օնում, ըոըշկտրողան հըսնում տոն:

Մարթը վըեր հըսնում ա տոն, լո̀ւզին պեն ա ինգյնո̀ւմ, ըսկըսում ա

փչիլը, թա չորս դաչաղ ինձիրա̀ տըեռեն, միակըս հունց յիրա̀ ըրե, վըեր դուլվան կացավ, վըեր ինգյա̀վ, էն մթնավը կորավ, դանն էլ վըեր տըեռավ, ցրև եկավ:

Կնեգյը վըեր միակն ան ա̀լրին պարկը տո̀ւս ա օնում առաչը, մարթին աշկերը մնամ ըն պեց:

141.ՊԸԵԼ ՈՒ ԽԸԵԼՈՒՆՔ ԱԽՊԵՐՔԸ

Էրկու ախպեր ըն ինո̀ւմ՝ մըեծը խելունք, կուճուրը՝ պըել: Էտ մըեծ ախպերը կուճուրեն միշտ պինըցընելիս ա ինո̀ւմ, ո̀ւրա̀ն փայ պենն էլ ար տըրան անել տամ:

Մին օր մըեծ ախպերը կյամ ա տոն, կուճուրեն թա՝ էքյո̀ւծ վըխճըրնեն ան էծերը տըննական ըս պահես:

Կուճուր ախպերը էքյսը վըխճըրնեն ան էծերը առաչն ա անում, տանում, վըեր պահե: Շատ ա տանում, թա խրեգյ, մին տանձի ծառ ա պըտահում: Եր ա ինո̀ւմ, վըեր թափե, վըխճըրնեն ան էծերը օտեն: Ծառը համ թափում ա, համ իծերան ան վըխճըրերեն ասում.- Հու վըեր ինձետե տանձ չպահե, մուրթըլական ըմ: Թըփելիս տանձը լոխ օտում ըն (էծերն ան վըխճըրնեն), մենակ մին չաթլակ տանձ ինգյո̀ւմ ա մըեծ դոչին կեռ պոզավը: Տա փըռնոտում ա վըխճըրնեն ան էծերը լոխ մուրթոտում, մենակ էտ դոչը պահում: Մըեծ ախպըերը կյամ ա, տեսնում սրո̀ւվեն սո̀ւնգյը տուված:

Էքյսը մըեծ ախպե́րը քյինա̀մ ա, վըեր ծըմական տանձ հըվաքե, կուճուրեն ասում ա. - Վըեր տո̀ւս կյաս հըյաթեն-պենին եշիս, տոռնը կըպահես, վըեր օրիշ մարթ նի չի մըննե: Տա մըեծ ախպորն ասածը թա̀րս ա ըսկանում, տոռնը կուրընգյիան ա անում պուկում, պահում: Շատ վըեր կենում ա, տեսնում ա, վըեր մըեծ ախպերը յըտանում ա, տոռնը շիլակում ա, քյինա̀մ մըեծ ախպորը քըթենո̀ւմ: Մըեծ ախպերն էլ իրեսեն մըխըրե խոսում ա, տըեսնում, վըեր ըսելավ պեն չի տո̀ւս կյըլա̀կան, սուս ա անում:

Էտ վախտը դըչըրնեն կյամ ըն տեղավ անց կենում: Տահանք կյողը կընալի օրիշ տեղ չըն քըթենո̀ւմ, եր ըն ինո̀ւմ մին պեցո̀ւր, տընջըրե ծառ: Մըեծ ախպերը կուճուրեն ասում ա.-Տոռնը վըեր քցի, տա խոսկը ընջուկեն քամակն ա քըցո̀ւմ, տոռնը շիլա̀կած եր ինո̀ւմ ծառը: Էտ դըչըրնեն էլ թա̀րսո̀ւ մնան կյամ ըն ծառեն տակեն վըեր կյամ, սուփրան քըցո̀ւմ, հաց օտում: Կուճուր ախպըերը մըեծեն ասում ա.- Ծեռքըս նըղացալ ա, տոռնը

վըեր ըմ քըցո̀ւմ: Մըեծը թա՝ վըեր վըեր քըցիս, կյիլա̀կան ըն մըեզ ըսպանեն: Կուճուրը անջուկ չի օնում, տոռնը թրումփալի վըեր ա քըցո̀ւմ թուշ տահանց սուփըրեն յիրա̀: Ղըչըղնեն վըխըլներան սըրտաճանք ըն ինո̀ւմ, ամեն հինչ թողում, փախճում:

Էրկու ախպերքը վըեր ըն կյամ, ըսկըսում տահանց թողած տես-տենր հըվաքելը: Մըեծ ախպերը փողն ու վըեսկեն ա հըվաքում, կուճուրը շորերն ան յուրղընղո̀շա̀կը: Օրը մթնում ա, կո̀ւճուր ախպերը շոր-շիրթ, յուրղընղո̀շա̀կ պեն լոխ տակն ա տամ, մին ծըեռք էլ յոր օնում, մաչին պըտատվում, քոն ինո̀ւմ: Մըեծ ախպերն էլ վըերքան ղաչանք-պըղատանք ա անում, վըեր մին ծըեռք ո̀ւրա̀ն տա, տամ չի:

Հենց վըեր լո̀ւսա̀նո̀ւմ ա, տա եր ա կենում, տեսնում մըեծ ախպերը մըեռած: Կըզնըվում ա, թա՝ հինչ ը՞ս կըռքընետ պեց ըրալ, ինձիրա̀ ծիծա̀-ղում: Կոխկեն թըխում ա, թա՝ եր կաց: Տեսնում ա, վըեր տեղան տո̀ւրո̀ւր չի կյամ, նոր կլխու վա ինգյմ, վըեր մըեռած ա: Էտ փախած ղըչյըղներեն ծիյանցան մինը փըռնում ա, քյա̀նղիրը յոր օնում, ախպորը ծիյին յիրա̀ նստըցնում, կըպկըպոտում, հունցը-վըեր մին սաղ մարթ: Ախպորը հըվա-քած վըեսկեղանը, փողը, տես-տենը լոխ ո̀ւրա̀ն հըվըքածեն նըհետ ղըչըղ-ներեն թողած ծիյանցը պիռնոտում ա, ինքյն էլ ախպորը ծիյին ջիլա̀վան փըռնում, պիռնոտած ծիյանքը քշո̀ւմ առաչ:

Խիլլա̀ տեղ վըեր քյինա̀մ ա, ծիյանքը սուվըծանում ըն, լոխ նի յա անում հըղըցեն կոխկե ղուրուղը, մին քոլու քըմակե կյողըը կենում: Էտ ղուրուղեն տարերը հըռըցանա եշում ըն, տեսնում մին մարթ ծիյին յիրա̀ «ըստած», մին սո̀ւրո̀ւ ծիյանք «ղուրուղն ըրած», ըրըծցնում ա: Հըռըցանա ծեն ըն տամ էտ մարթին, հայ-հույ անում, ուշունց տամ, թա էտ ծիյանքը խե՞ յըս նի ըրալ, ղուրղունեն փուչըցնում: Էտ ծիյին յիրա̀ մարթն էլ վըեչ սա̀ս ա անում, վըեչ էլ ծիյանքն ա տո̀ւս անում: Ամմեն մինը մին մըեծ մըհակ, մին փայա ծըռքըրներեն կյամ ըն տըրան թխում, «ըսպանում»: Էս կուճուր ախպերն էլ քոլեն քըմական տո̀ւս ա կյամ, սա̀սը քըցո̀ւմ էն դո̀ւզերը, թա՝ վա՛ա՛յ, ե՛կեքյ հըսեքյ, ախպորըս ըսպընեցեն: Տհանք յիրա̀ յըն տեռնում, տըրա խաթիրը քըթենո̀ւմ, մին քանի ծիյապեռնը վըեսկե էլ սըհանցա յա յոր օնում, պիռնոտած ծիյանքը քշո̀ւմ բիղի ո̀ւրա̀նց տոն: Հենց վըեր մարը տո̀ւս ա կյամ տղորանցն առաչը, մըեծ տըղեն մըեռած տեսնում, ծո̀ւյներեն վըեր թըկելավ ըսկըսում ա լաց ինիլը: Կուճուր տղան էլ թա՝ ա՛յա, ա՛յա, էնքան

վըեսկեն, էսքան փողը, ապրանքը լոխ ես ըմ պերա̈լ, ինքյն էլ ինձ քյո̈մա̈գյ ընելին տեղակ կըռքընեն ա պեց ըրալ, տըես մեհենգյ խելանքը ես ը՞մ, թա ինքյը։

142.ՀԱԼԱԼ ԱԽՊՈՐ ՏԸԵՂԸ ՎԸԵՉ ՄԻՆ ՊԵՆ ՏԱԼ ՉԻ

Էրկու ախպեր ո̈ւրո̈ւր նհետ լավ չըն ինո̈ւմ։ Տահանք քյինա̈մ ըն ամեքյա ո̈ւրա̈նց հետե ո̈ւրո̈ւշու նհետ ըխպըրանում։

Օխտը տարե յա անց կենում, էտ ախպերքն ո̈ւրո̈ւր անա խռավ։ Մին օր էտ ախպորցը մինը քշերեն կեսումը քյինա̈մ ա էն փըռնած ախպորը կոշտը, քունըտըեղա զո̈ւրթնըցնում, թա պա էսհինչ տըեղը մին մարթ ըմ ըսպանալ, կարում չըմ փըրտակեմ, եր կաց տըեսնանք հի՞նչ ընք անում։ Տա թա՝ քյինա̈ կորիր քու հերն էլ անիծած, քու ախպորն էլ, մարթը տու վըս ըսպանալ, ես պիտի՞ կյամ քու դա̈րդա̈տ խթու մաչ ինգյիմ։

Էտ մարթը քյինա̈մ ա ո̈ւրա̈ն իսկական ախպորը կոշտը, քունըտըեղա եր կըցընում, թա էսհինչ տըեղը մին մարթ ըմ ըսպանալ, կարում չըմ փըրտակեմ, եր կաց տըեսնանք հի՞նչ ընք անում։ Էտ իսկական ախպերը, թա հիշտեղ ըս թողալ ըսպանված մարթը։ Տա եր ա կենում, վըեր քյինա̈ ախպորը նհետ փըրտակե։ Քյինա̈մ ա, տըեսնում մին վըեխճար մորթած, շախկան կախ տուված։ Էն մինը թա՝ ա՛ ախպեր, էս ա իմ ըսպանած մարթը։ Մինչն մեհենգյ զյիդացալ ըմ, թա նա յա իմ իսկական ախպըերը, մեհենգյ զյիդացե, վըեր իսկական ախպորը տըեղը վըեչ մին պեն տալ չի։ Էս վըեխճարը քըզետե յըմ մորթալ, նստենքյ, օտենքյ, խմենքյ, քյեփ անենքյ։

143.ՄԱՐԹԻՆ ԹԵՎ ՏՎՈՂԸ ԿՆԵԳՅՆ Ա

Մին թաքավըեր շորերը փոխում ա, տո̈ւս կյամ ո̈ւրա̈ն երգյիրը վըեր շռռ կյա̈, տըեսնա հի՞նչ կա, հինչ չի կա։ Քյինա̈մ ա տըեսնում մին քըղաքում մըեծ շենք ըն շինո̈ւմ, շըտերեն նհետ մին մարթ պար կյա̈լավ պեն ընելիս։ Քար ար պիցըրցնում՝ պար կյա̈լավ ար անում, ցեխ ար կըրում՝ պար կյա̈լավ, ղում ար կըրում՝ պար կյա̈լավ։ Հինչ վըեր անում ար, լոխ պար կյա̈լավ։ Թաքավըերը հըրցըփորց ա անում, ասում ըն էն մըեծ-մըեծ քարերը վըեր չորս-հենգյ հոքի բիրա̈դի կարել չըն պիցըրցնեն, ինքյը մենակ ա պիցըր-ցընում, տա ո̈ւրա̈ն հնա̈րը չի, ո̈ւրա̈ն կնգանը հնա̈րն ա, կնեգյն ա, վըեր տրան թև ա տամ, օգում ա թա թռչի։ Էտ թաքավըերը մտկումն ասում ա

փուրցըլական ըմ, տըեսնամ դո՞ւզ ը՞ն ասում, թա՝ չէ: Քյինա՛մ ա մին պըռավու սուվըրցնում, թա քյինա՛ էտ կնգանն ասե թաքավըրը քեզ օզում ա: Պառավը քյինա՛մ ա ասում, էտ կնեգյն առաչ չեմուչում ա անում, մինգյել տըեսնում, վըեր թաքավըրերեն ըսածան տո՛ւս կյա՛լը տիժար ա, ասում ա՝ պա հի՞նչ միանա քցիմ: Թաքավըրը պըռավեն անավ էտ կնգանը փսպա- րում ա, թա սուտըսուտ հիվընդաց, տըեղըտ մըտե, ետնան կըմտածենքյ, մին միանա քթենանք:

Էտ կնեգյը սուտըսուտ հիվընդանում ա տըեղեն տակն ինգյո՛ւմ: Շատ ա կենում, թա խըեզյ, թաքավյըերը նորից ա քյինա՛մ էտ շենքին քշտավն անց կենում, տըեսնում էտ մարթը թո՛ւլո՛ւմո՛ւլ, ճլորված, մին կուճուր թըըշա ել չի կարում պիցըրցընե, տանե ուստեն տա: Թաքավըերն իսկապես կլխու վա ինգյո՛ւմ, վըեր մարթին թև տվողը կնեգյն ա:

Մին օր էտ մարթը քյինա՛մ ա տոն, տըեսնամ ո՛ւրա՛ն երեսուն տըռնը- վան կատուն ըստըկելան ետը նոր պերածը մոմռում ա: Ասում ա.-Չոռ, ա՛ անդար, մինչև քու խայաթըտ սուվերելը հոքիս տո՛ւս կըկյա՛: Էտ խոսկը կնեգյը վըեր ըսկանում ա, տըեղան լոք ա տամ, եր կենում, թա մինչև էն մինին խայաթը սուվերելը իմ հոքիս էլ տո՛ւս կըկյա: Մարթին կոլավն ա ինգյո՛ւմ, ամեն հինչ նաղլ անում, ետնան էլ թա օզում ա թաքավըեր չինի, հու օզում ա ինի, վըեչ մինն էլլա քու մին մազետ նհետ փոխել չըմ: Տըրանա ետը էտ մարթն ըսկսում ա էլլա առաչվա մնան ծանըըր քարեր պիցըրցնել, էլլա ինդի պար կյա՛լավ կործ անելը:

## 144.ՊԸԼԸՊՈՒՂՈՒՆ ԽՈՍԿԸ

Մելիքյ-Շահնազարեն վախտը Պըլըպուղուն անումը շատ ա եր ինո՛ւմ: Խաբարը հսնում ա ըխշարքես չորս ա՛նգյո՛ւնը, վըեր Ղարաբաղումը իստի մին խըելունք մարթ կա: Էտ վախտը օրիշ երգյիրա մին քանի շատ խելունք, իմաստուն մարթիքյ ըն կյամ Պըլըպուղուն կոշտը, վըեր փորցեն տեհնան դո՞ւզ ըն ասում, թա լիհա՛ Պըլըպուղուն անա քյո՛ւհեր ըն անում:

Պըլըպուղուն վըեր ծեն ըն տամ, էտ մարթիքյը Մելիքյ-Շահնազարեն նհետ նստած ըն ինո՛ւմ: Տհանցա մինը մին ճըժ ա քաշում, օզում ա Պըլըպուղուն ասե, վըեր էս սաղ ախշարքըս ա, լոխ ցամաք ա՞, թա ճո՛ւր էլ կա: Պըլըպուղին յոր ա օնում էտ ճըժեն մաչավը մին խա՛զ քաշում: Տահանք գյո՛ւղո՛ւմ ըն, թա Պըլըպուղին կլո՛խ ա ինգյալ, վըեր ախշարքըս մենակ

ցամաք չի, օրիշ շատ տըեղեր ճո̀ւր էլ կա, տրա հետե յել ճըժեն մաչավը խա̀զ ա քաշալ: Էտ մարթը մինգյել հափուռն ա չա̀նգյ ըրած կլխըյեր անում, սաբավ օզում ա Պըլըպուղուն խափի, վըեր ախշարքը պո̀ւլո̀ւր չի, փոս ա: Պըլըպուղին էլ հափուռն ա չա̀նգյ ըրած կլխուվըեր անում, տինո̀ւմ նրա հափըռեն յիրա̀, տա յել գյո̀ւղո̀ւմ ա, թա Պըլըպուղին կլո̀ւխ ա ինգյա̀լ, վըեր ո̀ւրա̀ն օզում ա խափի, ամմա դե գյո̀ւղո̀ւմ ա, վըեր ախշարքը պո̀ւլո̀ւր ա, տրա հետե յել ո̀ւրա̀ն հափուռը կլխավըեր ըրած չա̀նգյ ա ըրալ, տիրա̀լ նրա չա̀նգյ ըրած հափըռեն յիրա̀: Էտ մարթը մինգյել ո̀ւրա̀ն մին մանն ա ցեց օնում, էս դո̀նո̀ւմն էլ ա օզում Պըլըպուղուն խա̀փի, վըեր սաբավ թա յիրգյինքյումը ըխշարքես մին իշեղ անող կա: Պըլըպուղին էլ վըեր ո̀ւրա̀ն էրկու մանն ա ցեց օնում, տահանք գյո̀ւղո̀ւմ ըն, թա արտեն կլո̀ւխ ա ինգյա̀լ, վըեր յիրգյինքյումը մին իշեղ անող չի, էրկունն ա՝ իրիյնակն ան լո̀ւսնո̀ւնգյա̀ն:

Տահանք վըեր քյինա̀մ ըն, Մելիքյ-Շահնազարը Պըլըպուղուն ծեն ա տամ, հրցընում, թա նահանց քաշած ճըժան, չա̀նգյ ըրած հափըռան, ցեց կալած մաննան հի՞նչ կլո̀ւխ ինգյիր: Պըլըպուղին էլ ասում ա.-Ճըժը վըեր քաշից, ես գյիդա̀ցե, վըեր միժա̀հի յա նկարում, համել հրցնում, թա մաչին մենակ ուտելի պեն ա ինո̀ւ՞մ, թա խմելի յել ա ինո̀ւմ, ես էլ մաչավը խըզեցե, ըսեցե, վըեր մին ա̀նգյո̀ւնը ուտելի յա ինմ, մին ա̀նգյո̀ւնն էլ կյինի: Հափուռը վըեր չա̀նգյ ըրած կլխըյեր ըրավ, ասեց, վըեր մին կյեվաթ մածուն ինի, հու՞նց կըպահես, ես էլ իմ հափուռըս չա̀նգյ ըրե, տիրի ո̀ւրա̀ն հափռեն յիրա̀, տրանավ ես ըսեցե, վըեր կյըվաթեն ռըխեն օրիշ աման կըտինիմ, հանցու վըեր կատուն կյավուչ մածունն օտե: Մանն էլ վըեր ցեց կըցըրավ, օզում ար ասե, վըեր ես քու աշկետ մինը տո̀ւս կօնեմ, իմ էրկու մաննըս էլ վըեր ցեց կցըրե, ըսեցե ես էլ քու էրկու աշկըտ տո̀ւս կօնեմ:

## 145.ԾՈՒՅԵՆ ՔԱՐԸ

Մին մարթու կնեգյ մըեռնում ա, քյինա̀մ ա մին օրիշ կնեգյ պիրո̀ւմ: Էտ մարթին առաչվա կնգանան մին ախճիգյ ա ինո̀ւմ: Ախճիգյը վըեր մըծանում ա, փսակում ըն, մարթու տամ: Չերա̀նը պտըրունանց տոնը քյինա̀լը խորթ մարը մին քար ա տինո̀ւմ ըխճըկանը ծուցումը, թափշուր անում, թա հիբը վըեր էս քարը կըխոսե, տու վըել կըխոսես:

Ախճիգյը վըեր հառհին ա քյինա̀մ, վըեչ մինին նհետ խոսում չի: Մին էրկու տարե վըեր անց ա կենում, տնըցեքյ գյո̀ւղո̀ւմ ըն թա լալեգյ ա:

Քյինա̀մ ըն ըխճըկանը հա̀րա̀նց տոն, հրցընում, հա̀րն ան մարը ասում ըն.-Վըեր մարթու վընք տուվալ, խուսելիս ա իլա̀լ: Եա կյամ ըն ըխճըկանը նորըմինա̀ն խուսըցընում, խոսում չի: Վերչը, տրա նշանածն ասում ա.-Սա լավ հառին ա, պեց թուղելի չի, բայց ինձնըհետ խոսող կնեգյ էլ ա հարկավըեր: Տրան թողում ա տանը, ինքյը քյինա̀մ մին օրիշ կնեգյ էլ պիրո̀ւմ:

Թա̀զա̀ կնեգյը վըեր ծիյին յիրա̀ նստած կյամ ա տանը հայաթը, ծեն ա տամ, թա՝ ա՛ լալ եկած, քառ եկած հառինը, տանան տո̀ւս եք, ես կյամ ըմ: Էտ հառինը էլ կարում չի տիմա̀նա̀, կըզնըվում ա, խոսում, ասում.-Հա̀լա̀ ծիյան վըեր եք, ետնան խոսե: Մարթը թա վըեր քեզ լո̀ւզի յա իա̀լ, վըե՞ր օրվա հետե յըս պահալ: Կնեգյը քարը ծուցան տո̀ւս ա օնում, թա դե՝ իմար ա սա տիրա̀լ ծուցումըս, ասալ՝ հիբը վըեր տա կըխոսե, տու վըել կըխոսես: Մարթը էտ թա̀զա̀ պերա̀ծ հառինեն ծիյան էլ վըեր չի օնում, եա տանում ա թողում հա̀րա̀նց տանը, կյամ ո̀ւրա̀ն կնգանը տըրոթուն անում:

### 146. ԲԱԽՏՆ ԸՀԸԼՈ̀Ց ԿՕՋԵՆ

Մին շատ հարուստ մարթ ա ինո̀ւմ, մինգյել մին շատ քյա̀սիբ մարթ: Տըեղետ բա̀գյը էտ հարուստ մարթին ասում ա.- Տու շատ լա̀վ ըս ապրում, էն մարթն էլ քյա̀սիբ, հունց ըրա, վըեր էն էլ լա̀վ ապրե, տու վըել: Էտ հարուստը թա՝ թող նա ո̀ւրա̀ն բախտեն նիետ ինի, ես էլ՝ իմ, ես բախտը էս կլխան՝ ջըհըլո̀ց ըմ օզում: Էն քյա̀սիբն էլ ասում ա.-Ջըհըլո̀ց հունց էլ ինի, կապրեմ, ես բախտը էն կլխան՝ ըհըլո̀ց ըմ օզում: Բա̀գյը թա՝ էս քյա̀սիբն ավելի խըելունք ա մտածում:

Ժամանակ ա անց կենում, էտ հարուստը մըծանում ա, ամմեն հինչա̀ ինգյո̀ւմ, քյիսիբա̀նում, տըռնըտոռնը ինգյո̀ւմ, էտ քյա̀սիբն էլ ջահիլ վախտը ըխշադում ա, լա̀վ տոն-տըեղ, լա̀վ ապրուստ ըստեղծում, մըծացած վախտը լա̀վ, դինջ ապրում: Մին օր տա էն քյոհնա հըրուստեն պըտահում ա, թա պա քեզ ասալ չը՞մ, վըեր բախտը ըհըլոց կօզեն, ջիհիլոց հունց էլ ինի, կապրես:

## 147.ԷԼԼԱ ԷՆ ԱՌԱՉՎԱՆՆ ԱՍԵ...

Մին դեր ծանդր հիվնդանում ա: Մռնելա մոտե սըերտը ծո՛ւ վա օզում: Կնզանն ասում ա. - Մին ծո՛ւ իփի, օտեմ, էլլա մըեռնում ըմ, մըեռնեմ: Կնեզյը ծո՛ւն իփո՛ւմ ա, տամ մարթին: Մարթը ծո՛ւն օտում ա, մըեռնում: Կոխկե շիներքան քառասուն դեր ըն կյամ, վըեր տրան թաղեն: Շինա՛ցեքյ վըեր լոխ հըվաքվում ըն, դերին յիրա՛ լա՛ց ինո՛ւմ, կնեզյն էլ ա ըսկսում լա՛ց ինիլը՝ ասում ա.- Ա՛ մա՛րթ, վըեր մռնըլական իր, էն ծո՛ւն խե՞ կերեր, վըեր կերած չինիր, հավեն տակեն կըտինի, թոխսը կընստար, ճոտ տո՛ւս կըկյա՛ր, ճոտը կըմըծանար հավ կըտըեռնար, ծո՛ւ կածար ծո՛ւվանքը կըտինի հավեն տակեն, թոխսը նստըցնի, ճոտեր տո՛ւս կըկյին, էտ ճոտերն էլ կըմըծընին, հավեր տըռնին, էտ հավըերը ծո՛ւ կըծին, ծո՛ւվանքը հըվերեն տակեն կը-տինի, ճոտեր կըտըռնին, էտ ճոտերն էլ հավեր կըտըռնին, ճոտերըս կըշըտըընին, հավերըս կըշըտըընին, կըշըտըընին... Էտ քառասուն դերին մաչին մին քոռ էլ ա ինո՛ւմ, տա թա՝ դիրակեն, լա՛վ է՛, լա՛վ, օրիշ պեն ասե: Դիրակենր թա՝ հե՛ ա՛ քոռ դեր, հինչ ա՞սեմ, վըեր մռնըլական ար, ծո՛ւն հո՞ր կերավ, կերած չինա՛ր, թոխսը կըտինի, ճոտ տո՛ւս կըկյար, ճոտը կըմըծանար հավ տըեռնար, հավը ծո՛ւ կածար, ծո՛ւվանքը հավեն տակեն կըտինի, ճոտեր տո՛ւս կըկյին, ճոտերըս կըմըծընին հավեր տըռնին...

Դիրակենը վըեր հա՛մին սո՛ւքյն անում ա, ղաթումն էլ էտ դերին քոռ ինիլն ասում, քոռ դերն էլ թա՝ լա՛վ, լա՛վ, էլլա առաչվանն ասե:

## 148.ԽՈՍԿԸ ԸՍԵՑԵ ԿԸԱԿՆ ԻՆԳՅԻ

Թաքավըերը քյինա՛մ ա մին շեն.- Հու վըեր ամենամըեծ քյա՛նդիրը տո՛ւս օնե ամենալա՛վ հա՛նդին մըեկնե, էտ հա՛նդավը մին վըեղ ըմ տամ: Մին շատ քյա՛սիբ, հլիվուր մարթու մին քավթառ եզն ա իլա՛լ, էն էլ վըեր ա ինգյա՛լ, ըսատկալ: Տա էտ եզանը կաշին յոր ա օնում, շատ պերակ փոկ քաշում, քյինա՛մ թաքավըերեն կոշտը, ասում.- Թաքավըերն ապրած կենա, մխըրե փոկ օնեմ, վըեր պիրիմ փռնենքյ չափենք, նրանավ ա՛մա՛լ կըկյա: Թաքավըերը թա՝ հա՛:

Էտ հլիվուրը կզկած փոկը պիրո՛ւմ ա ետ տամ: Վըեր էրկու ճունդան փռնում ըն ծիքյ տամ, էտ շենին հինդերեն կեսը յոր ա օնում: Թաքավըերը գյո՛ւղո՛ւմ չար թա փոկն էտքան էրկան կինի:Տըեսնում ա, վըեր կըծեգյը քնդիլավ կլխում չի, ետ ա տըեռնում, թա՝ պա՛հ, քու փոկըտ անդար անեմ, ա հլիվուր, հիշքան մտակում ընք, էնքան ըրկընանում ա:

149.ԸՐԾԱԹԵ ԱՄԱՆԸ

Մին քըղաքում ո̀ւրա̀ն կնզանը նհետ մին հարուստ մարթ ար ըպրես: Տահանք սոնկսուզ ըն ինիս, միշտ էլ դիլխոր: Տահանց տանն էլ մին շատ քյա̀սիբ մարթ, մինզյել մին շատ քյա̀սիբ կնեգյ ին ըպրես: Էտ քյա̀սիբ մարթին ան կնզանը տանն ամմեն ո̀ւրո̀ւզյո̀ւն ուրխոթուն, ծիծաղ ար ինիս: Տնըտարերը շատ ըն զըմընաս, թա տահանք օրեն հացը զոռավ ըն քթինա̀ս, էս հինչա̀՞վ ըն ամմեն օր իստի ուրխոթուն ընես: Մին օր էտ մարթին կնզանը ծեն ըն տաս ո̀ւրա̀նց կոշտը, հրցընես, թա էտ հունց ա՞, վըեր մունք էսքան մո̀ւլքյին ան ըպրանքեն տրոթուն ընք ընես, էլլա միշտ դիլխոր ընք կընաս, տուք էտքան քյա̀սիբ, ամմեն օր ծըեր տանը ուրխոթուն, ծիծաղ ա ինիս: Էտ կնեգյը թա մին ըրծաթե ջամ օնենք, ես թկես ըմ, մարթըս ա պար կյաս, մինզյել թող ըմ ընես տաս մարթիս, մարթըս ա թըկես, ես ըմ պար կյաս, տի ուրըրնես ուրախ անց ընք կըցընես: Էտ մարթը թա՝ պա վըեր տի ա̀մա̀լ ա կյաս, ես լիհա̀ վըեսկե ջամ կըկարեմ ինքյ օնեմ: Տա քյիս ա մին վըեսկե ջամ ինքյ ունես, պիրիս: Ո̀ւրո̀ւզյո̀ւննեն մրթըկնեզյ ջամը թկես ըն, բայց ունքըմըչըրնեն էլլա ետ չի կյաս: Տրանա ետը կլխու վըն ինզյիս, վըեր էն կնզանն ասած ըրծաթե ջամը նահանց խոխան ա:

150.ՀԻՆՉ ԱՆԵՍ, ՔԵԶ ԿԱՆԵՍ

Մին թաքավըեր հրաման ա տամ, վար ամենալա̀վ զյա̀բա̀ կյուրծողեն ամենալա̀վ զյա̀բա̀ն քըթենան, պիրին տան ո̀ւրա̀ն: Թաքավըերեն մարթիքյը լոխ քյինա̀մ ըն շոռ կյամ, շոռ կյամ, կարում չըն քթենա̀ն: Մին ժուլիկ քյինա̀մ ա մին քյա̀սիբ մարթ քթենում, տու մի ասել, ամենալա̀վ զյա̀բա̀ կյործողն էլ տա յա ինո̀ւմ, օզում ա սրա զյա̀բա̀ն կյուղանա, տանե տա թաքավըերեն: Էտ քյա̀սիբն էլ կլո̀խ ա ինզյո̀ւմ, զյա̀բա̀ն պըենդ տըեղ պահում: Վերչը, տա մին օր զյա̀բա̀ն յոր ա օնում, տանում թաքավըերեն կոշտը, էտ ժուլիկն էլ նհետն ա քյինա̀մ: Թաքավըերեն մարթիքյը զյա̀բա̀ն քցո̀ւմ ըն ամենալա̀վ տըեղը: Թաքավըերն ասում ա.- Էս զյա̀բա̀ն կյործողեն թուղեցեքյ կյա̀ ո̀ւրա̀ն ասած տըեղը քցի: Էտ մարթին վար պիրում ըն, տա ասում ա. - Էտ զյա̀բա̀ն վըեչ մին տըեղ էլլա քցիքյվուչ, ետ ա տըեռնում, թաքավըերեն թա՝ կըպահես, վար տղատ մըեռնե, մաչին պըտատես: Թաքավըերը դա̀ստին հրաման ա տամ, վար էտ մարթին կլո̀խը կտրեն: Էտ ժուլիկը քյինա̀մ ա մուտանում, ասում թաքավըերն ապրած կենա, էտ մարթին ծըռքապենը լա̀վ, սըերտըն

էլ պարի յա, բայց լո̂ւզին չար ա, տրա հետե յել քյա̂սիբ ա ապրում, մին սո̂ւրո̂ւ խուխատար ա, մեխկ ա, պեց թուղեցեքյ, քյինա̂ ո̂ւրա̂ն խոխեքյը պահե: Էտ մարթին պեց ըն թողում, տրա խալաթը տամ էտ ժուլիկին: Գյա̂բա̂ կյործողն էլ տերտակ ետ ա տըեռնամ, քյինա̂մ տոն:

## 151.ԾԻՅԱՎ ԿԸԿՅԱ...

Մին մարթ քյնա̂մ ա մին կնգան կոշտ, թա էն դունյան ըմ կյամ, քու հա̂ր տըեսալ ըմ, ասալ ա սըղացալ ըմ, բայց շորեր չօնեմ, թող շորերըս դարկեն, կյենա̂մ, կյամ: Էտ կնեգյը յոր ա օնում ո̂ւրա̂ն մարթին շորերը դարկում: Էտ մարթն էլ շորերը շիլա̂կում ա, հղե ինո̂ւմ: Կնգանը մարթը կյամ ա տոն, կնեգյը իլվա̂ծ պենը նաղլ ա անում: Մարթը մաննը կծում ա, կլխու վա ինգյո̂ւմ, վըեր կնգանը քյա̂լա̂գյ ըն եկալ: Հըցընում ա, թա՝ հիշտըղա՞վ քյինա̂ց: Կնեգյը թա՝ էսհինչ հըղըցավը: Տա եր ա կենում, ծին յիհա̂րո̂ւմ, նստում, հղե ինո̂ւմ: Քյինա̂մ ա, քյինա̂մ, էն շորերը տանողը հըռըցանա ուրվամ ա: Ծին քշո̂ւմ ա, վըեր հըսնե: Էն մարթը դա̂ստին գյո̂ւղո̂ւմ ա պենը հինչումն ա, նի յա միննում հըղըցեն կոխկեն մին ճեղաց, մին քյո̂ւրքյ կլխեն քցո̂ւմ, շորերն ան իրեսը մխըրե ա̂լրո̂ւտ անում, տո̂ւս կյամ ծիյըվերերեն առաչը: Ծիյավուրը տրան հըցընում ա, թա ըստեղավ մարթ չի քյինա̂ա՞ց, տա թա՝ հենց էս սըհաթես նի մտավ ճեղացը: Էտ մարթը ծիյան վըեր ա կյամ նի միննում ճեղացը, վար շոռ կյա̂ քթենա̂, տա ծին նստում ա, հղե ինո̂ւմ: Էտ մարթը ճըղացան տո̂ւս ա կյամ, տըեսնում ծին կավուչ: Եր ա կենում տերտակ քյինա̂մ տոն, կնեգյը հըցընում ա, թա պա հոր ա՞ ծին, մարթը թա՝ քընծա̂հար, պա քու հա̂ր էն դունյան փըյադա յա՞ կյիլա̂կան:

## 152. ՔԵ ՅԸՄ ԱՍՈՒՄ...

Մին կնեգյ սիրա̂կան պհելիս ա ինո̂ւմ: Ո̂ւրո̂ւլգյո̂ւնն էտ կընգանը մարթն ան ըսկեսուրը տանն ըն ինո̂ւմ: Սիրա̂կանը կյամ ա կտրեն յիրա̂, հերթին քշտին վըեննը կենում, գյո̂ւղո̂ւմ չի թա հինչ անե, հիշտըղավ քյինա̂ տոն: Տա բո̂ւրդա̂ն կնգանն աշկավն ա ինգյո̂ւմ: Կնեգյը սոտ տըեղան տանդում ա, նի միննում տըեղը: Մարթն ան ըսկեսուրն էլ վըեր շուրըընեն հանում ըն, թա նի մըննեն տըղըրնեն, քոն ինին, տաքության մաչին մին երք ա ասում.

Տանդալ ըմ, տանդալ ըմ, տել ըմ ասում,
Կտրեն տղա, քե յըմ ասում,

Ե՜ք, ե՜ք, չալ կուվեն չաթուվավը եք,
Միակը պեց ըմ թողում,
Մո՛ւթնա՛վը սութ տո, ճելլի եք:

Մարթն առաչ մտածում ա, թա կնեզյը հիվանդ ա, հո՛ւշը կլխեն չի, գյո՛ւղո՛ւմ չի թա հի՞նչ ա ասում, մինգյել կլխու վա ինգյո՛ւմ, վըեր տանը հղեն ջուվարու նշանց ա տամ: Թաքուն բուսը պահում ա, եշում, տըեսնում մինը չաթուն կապած սո՛ւթնա՛վը սութ տալավ քշանում ա, վըեր բիդի տոն կյա: Մարթը կըլխու վա ինգյո՛ւմ, վըեր տա կնգանը սիրա՛կանն ա, փռնում ա սո՛ւթնա՛ն կըպոտում, մին փադ յոր օնում թակում, ըսպանում, ետնան էլ քյինա՛մ կնգանը տըեղան տո՛ւս օնում, ըսպանում, քցո՛ւմ սիրըկանեն կոշտը:

## 153.ՔԱՉԱԼԸ

Մին տղա կոխկե մին շենա՛ ախճիզյ ա օզում, նիշա՛նվում: Մին օր տա հղե յա ինո՛ւմ, վըեր քյինա՛ հներանց տոն: Հղեննի մին քաչալ ա պըտահում, հրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինա՛մ, տա ասում ա.-Քյինա՛մ ըմ հներանց: Քաչալն ասում ա.- Ես էլ ըմ կյամ: Էտ տղան թա քյինա՛նք: Քաչալը տրան սուվըրցընում ա, ասում ա.- Փըսացու վըս, քեզ ծանդր կըպահես, վըեր ըռըչներես հաց տինին, տու շատ օտեսվուչ, լոխ թաքուն կըքաշիս առաչըս: Էտ տղան թա՝ լավ: Վըեր քյինա՛մ ըն հներանց տոն, հինչ վըեր տինո՛ւմ ըն ըստոլեն, փըսացուն թաքուն քաշում ա քըչալեն առաչը: Ետնան քաչալը փըսցուվեն սուվըրցընում ա, թա ասե, թող մըեր տըեղը կտրեն կլխեն, հո՛ւրթան մոտե քըցին: Տի յել անում ըն:

Վըեր լոխ քունավ ըն հնցընում, քաչալը փըսցուվեն զո՛ւրթնըցընում ա, ասում.- Հո՛ւրթեն թուշավը, տանը մաչին էն ա լա՛վ եղ, մածուն, օրիշ շատ ուտելի պեներ կա, եք քեզ քյինդիրավ կապեմ, հո՛ւրթավը կախ տամ, քշաց առաչ եղը պոլիզյավը եր կալ պեր, ետնան էլ մնացած պեները: Փըսացուն թա՝ հա՜: Քաչալը տրան քյինդիրա՛ն կապում ա, հո՛ւրթա՛վը քըշըցընում, տա եղը յոր ա օնում, քաչալը քյինդիրա՛ն ծիքյ ա տամ, փըսըցուվեն տո՛ւս օնում, նորից քյինդիրա՛ն կապած քցո՛ւմ տոն: Քաչալը էտ եղեն մաչը ճո՛ւր ա ածում, խառնում, նորից քյինդիրա՛ն ծիքյ տամ, փըսըցուվեն մազնեն պոլիզը ծըեռքեն պիցիրցնում. Վըեր հսնում ա կեսը, քյինդիրին ճոնդը հղլակ ա անում, մին փադ քցո՛ւմ հղլակը, հո՛ւրթո՛ւմը պընդըցընում, փըսացուն թողում օթան կախ իլած, եղը հո՛ւրթա՛վը կլխեն ածում, ինքյը փախճում:

Հըռհնացուն քշեավ զո՞ւրթնա՞նո՞ւմ ա, կլխըյեր եշում, տըեսնում մինը հո՞ւրթա՞ն կախ իլած: Փըսացուն վըեննան մինչև կլո՞խը եղավ ծասկըված ա ինո՞ւմ, հըռհնացուն ճինա՞նչում չի, կլո՞խն ան ծո՞ւյները վըեր ա թակում, տընըհավա կըլխեն հըվաքում, թա հո՞ւրթա՞ն կախ իլա՞ծ սև սաղանա կա: Տընըցեքյ լոխ հըվաքվում ըն, հինչ անում ըն, վըեր սաղանան հո՞ւրթա՞վը տո՞ւս կյա՞, քյինա՞մ չի: Դերին ծեն ըն տամ, վըեր կյա կյա՞նձ կա՞րթի, հանցու սաղանան հո՞ւրթա՞վը տո՞ւս կյա քյինա՞: Դերը կյամ ա, հիշքան կյա՞նձ ա զյո՞ւղո՞ւմ, լոխ կա՞րթո՞ւմ ա, սաղանան քյինա՞մ չի: Ետնան տո՞ւս կյա՞լիս ասում ա.- Կըյեշիք տըեսնաք, թա սաղանան սիպտակ ինի, կըսպանեքյ, թա սև ինի, պեց կթողեքյ քյինա՞: Փըսացուն էտ խոսկը վըեր ըսկանում ա, ծըեռքեն մազնեն պոլիզյը հլո՞րո՞ւմ ա դերին կըլխեն ածում, դերը վըեննան մինչև կլո՞խը սիպտակում ա: Հըվաքված մարթիքյ յիրա՞ յըն տեռնում, ամեքյա մին փադ, մին քար ծըռքըրնեն օնում, վըեր թակում դերին ըսպանում: Փըսացուն էլ մին թա՞հրա՞վ քյինդիրա՞վը սութ-սութ ընելավ մխըրե պիցիրա՞նո՞ւմ ա, հո՞ւրթա՞վը տո՞ւս կյամ, փախճում քյինա՞մ ո՞ւրա՞նց շենը, ասում.- Ես էլ ընդըեղան ախճիզյ չըմ օզել:

## 154.ՀՂԵՆՆԻ ԿԸԿԱՆՉԻ…

Մին մարթ մին տան ղոնաղ ա ինզյո՞ւմ: Էտ մարթը վար նի յա մննում տոն, տնատըեռնը կնեզյը ղզղանը կրական յոր ա օնում, տախտեն տակեն կյեղում: Ղոնաղը տըեսնում ա, քշերեն կեսումը եր ա կենում, ասում ղզղանը պեց ըմ ըննական, տըեսնամ մաչին հինչ կա:

Տընըցեքյ լոխ քոն իլա՞ծ ըն ինո՞ւմ: Չուրըքթաթ քյինա՞մ ա ղզղանը պեց անում, եշում տըեսնում մին ղազ իփա՞ծ, մաչին: Ղազը տո՞ւս ա օնում, կոխում խուրջինին մին թան, չուրըքթաթ տալավ քյինա՞մ տաշտան հացը յոր օնում, տինո՞ւմ խուրջինին էն մին թայումը, թառան էլ մին վըերցակ փըռնում, կոխում խուրջինը, ղի տամ, տնատըեռնը քունըտըեղա երկըցը-նում, հըցընում, թա՝ ղազղալան վար ղազանղլան տո՞ւս եկավ նի մտավ խուրջինղալան, տու հի՞շքան իր: Տնատարը թա՝ էն վախտը ես հա՞լա՞ իլա՞ծ չի: Ղոնաղը թա՝ ես էն վախտը կարքեն տղա յի, չուրըքթաթ տալավ քյինա՞մ ի տաշտան հաց տուս օնում:

Ղոնաղը խուրջինն օսուքն ա քցում, հղե ինո՞ւմ: Տնատարն ասում ա. - Թոռն ը՞ս քյինա՞մ, վըերցակը հա՞լա՞ կանչալ շի, կաց կըլո՞ւսա՞նա, էլլա կըք-յինա՞ս: Ղոնաղը թա վըերցակ ա իլի, ըստըեղ կանչալ չի, հղեննի կըկանչի…

## 155.ԲԱՐԸ ԿԱՆԱՆՉ ԿԵՐԱՎ

Մին թաքավըրեր շորերը փոխած, ըՙւրա՛ն վեզիրին նհետ երգյիրը շոռ ա կյամ, թա տըեսնա ժուղովուրթը հի՞նչ պենի յըն, հու հի՞նչ ա անում, հո՞ւնց ըն ապրում: Մին օր քյինա՛մ ա տըեսնում մին մըեծ մարթ ըՙւրա՛ն հըյաթումը մին հունց ծառ ա տընգում, վըեր քառասուն տըռնան ետը պիտի բար տա: Թաքավըրերը մուտանում ա, կոզի շորերը փոխած ա ինըՙւմ, էտ մարթը ղա՛ստին ճինա՛նչըՙւմ ա: Տրան հրցընում ա, թա տու ումեղ օնե՞ս, թա քառասուն տարե ըպրըլական ըս, վըեր տրա բարն օտես: Էտ մարթը թա խե մունք հինչ վըեր օտում ընք, լոխ մըեր տնգած ծառեն բարն ա՞, մըեր պըպերեն տնգածն էլ ա նհետը: Թաքավըրերը ըՙւրա՛ն վեզիրին թա էս մարթը շատ խելունք խոսկ ասեց, սրան մին տըսսանուց վըեսկե տո: Վեզիրը տըՙւս ա օնում մին տըսսանուց վըեսկե տամ, էտ մարթը քթըեն տակեն ծիծաղում ա: Թաքավըրերը հրցընում ա, թա խե՞ ծիծըղեցեր, տա թա՝ օրիշնեն էս ծառը տնգում ըն, բարը քառասուն տըռնան ետը օտում, ես հա՛լա՛ նոր ըմ տընգում, բարը մեհենգյ կերե: Թաքավըրերը վեզիրին թա՝ էտ խոսկեն հետե մին վըեսկե էլ տո:

## 156.ՀԸՄԸՆՉՈՂԵՆ ԱԽՃԻԳՅ ՉԸՆ ՏԱԼ

Մին չտեսնված գեղեցկուհի վըեչ մին տղու հավան չար կենում, հու վըեր քյինա՛մ ար թա օզե, մին փոտ ար տինըՙւմ, ետ տամ: Տա ամենաշատ սիրիլիս չի իլա՛լ հըմաշկուտ տղորանցը: Վերչը, տղեքյը հըվաքվում ըն, մըլըհաթ անում, մին շատ ղա՛շա՛նգյ տղու լավ շորեր, թա՛զա՛ չերքյեզկա կյեց տամ, թըՙւվա՛նգյր ճիտը քցըՙւմ, պատրոնղաշին նան խանչալը կապում ղարկում, վըեր քյինա՛ էտ ըխճըկանն օզե, նհետն էլ սուվըրցընում, վըեր ըՙւրա՛ն ռիսկավ պահե, էն ախճիգյը հըմաշկուտ տղորանցը սիրում չի:

Էտ տղան ծին նստում ա, զենքերը կապած, ղամչին օթումը տըՙւրըՙւր տալավ քյինա՛մ հսնում ըխճըկանը տանն առաչը, սա՛սը պիցիրցրած, ըխճըկանը հորը ռիսկավ ծեն տամ: Հա՛րը տանը չի ինըՙւմ, ախճիգյն ա ակուշկան պեց անում, տղեն եշում: Տղան մինչև էտ ղամչին տիրա՛ծ ա ինըՙւմ չինըտակեն. ախճիգյը վըեր եշում ա, տա բըՙւրդան շաղվում ա, ղամշին ծըեռքան վըեր քցըՙւմ, ետնան թա՝ քու հար հիշտեղ ա քյեցալ: Ախճիգյը թա՝ քյեցալ ա ծմակը, խեչակ պիրի, վըեր տինի չինըտակետ:

## 157.ԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՁԱԽՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԲԵՐԻ

Մին թաքավըեր աsում ա.- Քյինա̈լ պիտիմ մին հունց ախշարք, վըեր ինձա̈նա̈ լավ ապրող չինի: Հղե յա ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ ա քյինա̈մ, թա խրեգյ մին հեռու տըեղ մին չոբան ա պտահում: Չոբանը տրան հրցընում ա, թա՝ հու վը՞ս, հինչ ը՞ս, հիշտեղ ը՞ս քյինա̈մ: Տա թա՝ ես էսհինչ երգյիրին թաքավըերն ըմ, քյինա̈մ ըմ հունց երգյիր, վըեր ընդեղ ինձա̈նա̈ լավ ապրող չինի: Տի վըեննը կացած զրո̈ւց ընելիս վախտը չուբանեն վըետանը քըեթը տափեն նի յա կյամ, մին վըեսկե յա տո̈ւս կյամ, կռանում ա յոր օնում: Մեհետ էլ վըեր տափեն քացի յա տամ, մին քանի վըեսկե յա տո̈ւս կյամ: Չոբանը թաքավըերեն աsում ա.-Հենց ա ըստեղ շատ վըեսկե ինի՞, քանդինքյ, տըեսնանք: Չոբանը հրցընում ա, թա վըեր վըեսկեն քթենանք, հունց պիտի՞ ճոթ անենքյ: Տա թա՝ դե ես թաքավըեր մարթ ըմ, տու՝ չոբան, իրեքը-չորսը ես յոր կօնեմ, մինը քեզ տամ: Չոբանը թա՝ դե հղետ քյինա̈, վըերդղեղ էլ հսնես, տու լավ օր չըս տըսնըլական:

## 158.ՏՈՆԸՍ ԿՈՒՐՑՐԱԼ ԸՄ

Մին մարթ հա̈նդա̈ էշավ կյամ ար շենը: Քշերեն կեսումը հըսնում ա տոն, կնգանը ձեն տամ, աsում՝ տոռնը պեց ըրա: Կնեգյը թա՝ էս ա մարթըս տանը, համ էլ դոնադ օնենքյ, կարել չըմ քեզ էլ դոնադ յոր օնեմ:

Էտ մարթը մտածում ա, մտածում, աsում. - Բա̈լի էս մըեր տոնը չի, հա̈լա̈ մին քյինա̈մ հըռըցանա նորից կյամ: Մին խիլլա̈ տըեղ քյինա̈մ ա, տանը թուշը յոր օնում, կյամ: Կյամ ա նորից պիցիրա̈նո̈ւմ բալկոնը, ձեն տամ, աsում՝ ա կնեգյ, տոռնը պեց ըրա: Կնեգյը թա՝ պա քեզ նոր չըսեցե՞ կորի, քյինա̈, մարթըս վըեր զյիղա̈, կյիլա̈կան և ճաշըտ իփի, փա̈սա̈փո̈ւսատ հըվաքե, ռադ իլ:

Էս մարթը նորից ա էրկան մտածում, ետնան թա՝ էս դուրթըդորթ մըեր տոնը չի, հա̈լա̈ քյինա̈մ դերին հրցընեմ, տըեսնամ հինչ ա աsում:

Տա քյինա̈մ ա դերին քունըտըեղա եր կըցընում, հետան քցո̈ւմ, պիրո̈ւմ: Վըեր պիցրանում ըն բալկոնը, դերը ձեն ա տամ, թա՝ «որթի՛, դուռը բաց»: Էտ կնգանը սիրա̈կանը տո̈ւս ա կյամ, միակը տռանը քըմական յոր օնում, դերին կլխավը մեհետ նի հըսցընում, ճղում, ըռնըփալալ անում: Դերը վըեննան մինչև կլո̈խ ըռնըթաթախ տըեռած, փելո̈նը հվաքում ա, տըեղատ փախճում, էտ մարթն էլ՝ նհետը: Վըեր խիլլա̈ հըռանում ըն, էտ մարթը թա՝

ա՛ դեր, էս հենց ար մըեր տոնը չինի: Դերը թա՝ ա՛ տնաշեն, էս իսկի մըեր շենը չի, ծըեր տոնը վըե՞րն ա:

## 159.ԹԱԼԱՆՈՂ ԹԱԳԱՎՈՐԻ, ԹԱԼԱՆՎԱԾ ԳՅՈՒՂԱՑՈՒ ԵՎ ԽԱԲՎԱԾ ՎԵԶԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մին թաքավըեր ո̈ւրա̈ն էրկու վեզիրին նհետ տո̈ւս ա կյամ էրգյիրը շոռ կյամ: Քյինա̈մ ա տըեսնում մին հլիվուր մարթ աղումնը մըեկնած, խոխան էլ խտտած, աղումնը պահում ա: Թաքավըերը վեզիրներեն նհետ էտ մարթին մուտանում ա, պարյօր տամ, ետնան թա՝ ա՛ հլիվուր, կյանքումըտ քանի՞ հետե յըս թըլանվալ: Էտ հլիվուրը թա՝ իրեք հետե: Մինգյել հլիվուրն ա հըրցրնում, թա՝ թաքավըերն ապրած կենա, կյանքումըտ քանի՞ հետե յըս թըլանալ: Թաքավըերը թա՝ էրկու հետե թալան ըմ ըրալ, պըդրաստվում ըմ մեհետ էլ անեմ: Մինգյել թաքավըերը հրցընում ա, թա վըեր էրկու դազ դարկեմ, կըկարե՞ս թեփռես: Հլիվուրն ասում ա.-Ես լիհա̈ տրա հարիփն ըմ, դարկե թեփռեմ: Թաքավըերը թա՝ լա̈վ: Հլիվուրեն թողում ըն տըեղ, քյինա̈մ:

Ժամանակ ա անց կենում, թաքավըերն էտ էրկու վեզիրին դարկում ա, թա քյեցեքյ էն հլիվուրեն խոսկերքը հրցըրեքյ, գյիդա̈ցեքյ հինչ ա ասալ, եկեքյ ինձ ըսեցեքյ:

Վեզիրնեն քյինա̈մ ըն հլիվուրեն կոշտը, հրցընում, թա էն տըռնեն վըեր եկալ ընք, թաքավըերը վըեր քեզ հրցրրալ ա, թա քանի՞ հետե յըս թըլանվալ, տու վըել ասալ ըս իրեք հետե, մեհենգյ օզում ընք գյիդա̈նք, թա՝ մարթ կյանքումը հի՞ր ա թըլանվում, հի՞ր ա թըլանում, ետնան դազերը հո՞ւնցըս թըեփռում: Հլիվուրը թա տի պեները մո̈ւյտա չըմ ասում, ամմեն մինին հետե հազզար մանեթ պիտի տաք, վըեր ասեմ: Դե թաքավըերեն հրամանն ա, կըկարեն, վըեր կադարենվուչ: Տո̈ւս ըն օնում հազզար մանեթ տամ, էտ հլիվուրն ասում ա. - Մարթ հիբը վըեր ախճիգյ ա մարթու տամ, էն վախտն էլ թըլանվում ա. ես իրեք ախճիգյ ըմ մարթու տուվալ, իրեք տոն ըմ նըհըտնեն տուվալ, իրեք հետե յել թըլանվալ ըմ: Վեզիրնեն թա՝ թըլանելը վըե՞րն ա, տա թա՝ տուվեքյ, ասեմ: Տահանք հազզար մանեթ էլ ըն տամ, հլիվուրն ասում ա. - Մարթ էն վախտն ա թլանում, վըեր տղա յա փըսակում: Թաքավըերը էրկու տղա յա փսակալ, էրկու տոն ա թըլանալ, մինն էլ պիտի փըսակե, վըեր մին տոն էլ թըլանե: Տահանք հազզար մանեթ էլ ըն տամ, հըցընում, թա՝ էն հի՞նչ դազեր ըն, վըեր թեփռում ըս: Հլիվուրը թա՝ էտ դազերը տուք ըք:

160.ԿՆՈՋ ՍԱՏԱՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մին մարթ տասներկու տարե շոռ ա կյամ, կնգան քյիլիգյնե հըվաքում, դիվթըրներումը կյիրոտում: Կյիրոտած կնգան քյիլիգյնեն լոխ մին օղտու պեռնը տըեռնում ա: Վըեր պեռնը ծընդըրանում ա, օզում ա ետ քյինա̈ տոն, հղեննի մին ըխպրո̈ւ դըրաղե վըենն ա կենում, թա միրե դինջա̈նա̈, ճո̈ւր խմե: Մին կնեգյ կյամ ա, վըեր էտ ըխպրան ճո̈ւր տանե, հրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինամ, էտ մարթն ասում ա.- Քյինա̈մ ըմ էնիհնչ շենը: Էտ կնեգյը թա՝ եք ո̈ւրո̈ւլգյո̈ւնը մըեր տանը կաց, էքյո̈ւծ եր կըկենաս, լավ քյինա̈ս: Տա թա՝ չէ՛, պիտի սօր հսնեմ տոն: Էտ կնեգյը վըեր շատ ասում ա քյինա̈նք, վերչը, ճարը կտրած քյինա̈մ ա:

Վըեր հսնում ըն տոն, կնեգյն էտ մարթին հրցընում ա, թա էտ օղտեն պեռնը հինչ ա՞, էտ մարթն ասում ա՝ կնգան քյիլիգյնե ա: Էտ կնեգյը թուրունն էրում ա, թա պիտի լոխ քու ծըեռքավտ նի ածես մաչը: Էտ մարթն ասում ա դոնաղ չըս պահում, քու գործըտ ա, տահանք խե՞ յըս օզում թուրանն ածես: Էտ կնեգյն ասում ա.-Էս սհաթըս ճըրճըրղըլական ըմ ժուղովուրթը լոխ կլխետ հըվաքեմ, ասեմ ինձիրա̈ սաթաշմիշ ա իլա̈լ Տա հըվատում չի: Օղտն առաջն ա քցո̈ւմ, վըեր քյինա̈: Կնեգյը ճղճղում ա, ծո̈ւյները թակում, ժուղովուրթը լոխ կլխեն հըվաքում, հրցընում ըն, թա հինչ ա՞ պըտահալ, տա թա վըեչինչ, իմ մրաքվոր տղան ա, տասներկու տարե ո̈ւրո̈ւր տըեսալ չընք, մեհենգյ բո̈ւրդա̈ն պըտըհեցենքյ, էլ տիմա-ցենքյվուչ, ուրխութունան ըսկսեցենքյ մըեզ կուրցընելը: Տահանք հըվա-տում ըն:

Ետնան մին թաքուն տըեղ էտ մարթին թա մեհենգյ խա̈փա̈լ ըմ, վըեր օղտեն պեռնը նի չածես թուրունը, ըսըլական ըմ ինձիրա̈ սաթաշմիշ ա իլա̈լ: Էտ մարթը թա՝ վա՜յ, ես քե մատաղ, օղտըս էլ մատաղ, օղտեն պեռնն էլ, լոխ նի կածես թուրունը, մենակ թա ինձ խայտառակ չանես:

Էտ մարթը տանում ա օղտեն պեռնը նի տամ թուրունը, էրում: Կնեգյը թա՝ պա վըեր տասներկու տըռնըվան ա̈մա̈գյըտ նի ըծեցեր թուրունը, մե-հենգյ հինչ ը՞ս ըննական: Տա թա՝ վախում ըմ ասեմ: Էտ կնեգյը թա՝ վա-խումիլ, ասե: Էտ մարթն ասում ա.- Վըեր սարն անց կենամ, հսնեմ տոն, քու էտ մին քյա̈լա̈գյըտ վըեր կյիրիմ, էն օղտեն պեռնան շըտընննական ա:

## 161.ՊԸԵԼԵՆ ԱՂՈՒՄՆԸ ԱՍՏՈՒԾ ԿԱՂԵ

Մին մարթու մին կյիժ կնեգյ ա ինո՞ւմ: Էտ մարթը կնգանան վըեր շատ զա՞հլա՞ն տանում ա, թակում ա, քցո՞ւմ ծմըկնեն: Կնեգյը մին օր ծմակումը մին վըեսկավ պեռնած օղտու վա պտահում: Առաչն ա քցո՞ւմ, պիրո՞ւմ տոն, մարթին ծեն տամ, թա՝ ա՛ մարթ, ա՛ մարթ, մին օղտ ըմ քթա՞լ, դուզն իստի յա, տուզն իստի[1]: Էտ մարթը քյինա՞մ ա օղտեն պեռնեն եշում, տըեսնում վըեսկե յա, ետնան կնգանը խա՞փո՞ւմ, թա՝ կարկուտ ա կյիլա՞կան, նի մըտ թուրունը, կլոխըտ ծասկեմ, վըեր թըչվիսվուչ: Կնգանը տինո՞ւմ ա թուռ-նումը, կլո՞խը մին ժեժտավ ծասկում, կոտը յիրա՞ ածում, հավերը յիրա՞ անում, ըսկսում ըն տըկտըկցնելավ օտելը: Կնեգյն էլ հվատում ա, թա կարկուտ ա կյամ, մարթը վըեսկեն կյեղում ա:

Ուղտատարը ուղտեն շոռ կյա՞լա՞վ, հրցըփորց ընելավ կյամ ա էտ մար-թին տոնը քթնո՞ւմ, էտ էլ թա՝ վըեչ օղտ ըմ տըեսալ, վըեչ վըեսկե: Տա էտ մարթին յախան պեց չի թողում, սուդի յա տամ, սուդան ծեն տալ տամ:

Մարթը վըեր օզում ա քյինա՞ սուդ, կնգանն ասում ա.- Տոնը-տոռնը լա՞վ կըպահես: Մարթը սուդումը մին քանի օր յըտանում ա, սուդը հա՞լա՞ պըծած չի ինո՞ւմ, վըեր կնեգյը տոռնը պուկում ա, խունջանավը կապում, շիլա՞կում, քյինա՞մ մարթին կոշտը: Սուդեն մարթիքյը էտ կնգանը վըեր տըեսնում ըն, ճինա՞նչո՞ւմ ըն: Մարթն էլ թա յանի տինին տարը ռիսկ կանե՞ պեն յոր օնե, վըեչ թաքուն օնեմ, վըեչ աշկար, լոխ էն ա դո՞ւզո՞ւմը: Էտ մարթին վըեր պիտի փոնին, նստըցընին, պեց ըն թողում, քյինա՞մ ա ո՞ւրա՞նց տոն: Մին քանի տարե վըեր անց ա կենում, էտ պենր քյո՞ւհնա՞նում ա, վըեսկեն կյեղած տըեղան տո՞ւս ա օնում, մըեծ-մըեծ տներ, պըլըտնե շինում, առոք-փառոք ապրում:

## 162.ԱՆԽԵԼՔ ՄԱՐԹԸ

Մին մարթ շատ քյա՞սիբ ա ինո՞ւմ ըպրելիս: Մին օր տա ասում ա քյիննա՞կան ըմ ըստուծեն կոշտը կյենզյա՞տ, ասըեմ խե՞ ինձ բախտ չըս տամ, քշեր-ցիրեկ անում ըմ, անում, էլլա քյա՞սիբ ըմ ապրում:

Հղե յա ինո՞ւմ, քյինա՞մ: Հղեննի մին կյուռկյուռալիս արչ ա պըտահում: Էտ մարթը հըրցնում ա, թա խե տի՞ յըս անում, արջն ասում ա. - Կլո՞խըս ցավում ա: Համ էլ հըրցնում ա, թա հիշտեղ ը՞ս քյինա՞մ, տա թա՝ քյինա՞մ ըմ

---
[1] *Ձեռքով ցույց է տալիս սապատն ու բեռը:*

ըստուծեն կոշտը կյենգյա̈տ, վըեր էսքան ըխշադում ըմ, ըխշադում, էլլա քյա̈սիբ ըմ մնամ: Արչն ասում ա.-Դէ վըեր քյինա̈ս ըստուծեն կոշտը, կասըես իստի մին արչ կլո̈խը միշտ ցըվելիս ա ինո̈ւմ, հինչ անե՞, վըեր ցավը կտըե: Տա թա՝ լա̈վ:

Հղե յա ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ ա քյինա̈մ, թա խըեգյ, մին վար անող մարթու վա պըտահում, պարյօր տամ: Էտ վար անողը հըրցընում ա, թա հիշտեղ ը՞ս քյինա̈մ, տա ասում ա.-Քյինա̈մ ըմ ըստուծեն կոշտը կյենգյա̈տ, վըեր իստի քշեր-ցիրեկ ըխշադում ըմ, էլլա քյա̈սիբ ըմ ապրում: Էտ վար անողը թա՝ դէ վըեր քյինա̈ս, կասըես իստի մին մարթ ասալ ա իմ արտումըս մին մըեծ տանձի ծառ կա, տրա չորս ա̈նգյո̈ւնը հիշքան սըերմ ըմ շաղ տամ, փսնում չի, գյո̈ւղո̈ւմ չըմ թա հինչ անըեմ: Տա թա՝ լավ: Խիլլա տըեղ վըեր քյինա̈մ ա, հըսնում ա մին շիա̈ր: Էտ շիա̈րին միյդանումը եշում ա, տըեսնում մին ծիյավուր մարթ բիդի ո̈ւրա̈ն կյամ ա, հըրցնում, թա իմ երգյիրումըս քեզ նոր ըմ տըեսնում, տու օրիշ երգյիրու մարթ ըս, ասե տըեսնամ հիշտեղ ը՞ս քյինա̈մ: Տա թա քյինա̈մ ըմ ըստուծեն կոշտը կյենգյա̈տ, վըեր էսքան ըխշադում ըմ, ինձ բախտ չի տամ, միշտ քյա̈սիբ ըմ ապրում: Էտ ծիյավուրն ասում ա. - Ես էս երգյիրին թաքավըերն ըմ, վըեր քյինա̈ս ըստուծեն կոշտը, կասես էսիինչ երգյիրին թաքավըերն ասալ ա չորս ընգյո̈ւնիս ինձա̈նա ուժեղ թաքավըեր չի կա, իմ զորքը, իմ զենքը, իմ կարողությունը լոխճընան շատ ա, էլլա ես միշտ կռվումը հախտվում ըմ, պենը հինչումն ա՞, հինչ անըեմ, վըեր հախտվըեմվուչ: Տա ասում ա.- Լա̈վ, կասեմ:

Հղե յա ինո̈ւմ, քյինա̈մ: Շատ վըեր քյինա̈մ ա, հըսնում ա մին հեռու տըեղ չորս ա̈նգյո̈ւնը լոխ թուխպըկալած, վըեր մաննըտ մարթու աշկ կոխըես, տըեսնալ չի: Թուխպեն մաչավը վըեր անց ա կենամ, քյինա̈մ ա տըեսնամ մին դրաղ տըեղ սիպտակ մըրքավ մին հլիվուր մարթ նստած: Պարյօր ա տամ, մուտանում: Էտ հլիվուրը հըրցնում ա, թա հիշտեղ ըս քյինա̈մ, տա ասում ա.- Քյինա̈մ ըմ ըստուծեն կոշտը կյենգյա̈տ: Հլիվուրն ասում ա.- Աստուծը հենց ես ըմ, ասե տըեսնամ հինչ կա: Էտ մարթն ասում ա.- Էս ա քանի տարե յա, քշեր-ցիրեկ ըխշադում ըմ, ըխշադում, էլլա քյա̈սիբ ըմ ապրում, ինձ բախտ չըս տամ, վըեր ես էլ լա̈վ ապրըեմ: Աստուծն ասում ա.-Քեզ բախտ տուվըե, քյինա̈: Էտ մարթը թա՝ պա հղեննի իստի մին արչ ա պըտահալ, տա յէլ ասալ ա արտումըս իստի մին տանձի կա,

հիշքան վարում ըմ, էտ տանձի ծառեն չորս ӑնգյո̆ւնը արտ չի փըսնում, էնիինչ շիհӑրումն էլ էտ երգյիրին թաքավըրը պըտահեց, ասեց իմ զորքը, իմ զենքը, իմ կարողությունը, իմ օժը լոխճընան շատ ա, էս ա քանի տարե յա հո̆ւր նիըետ կորն ըմ անում, լոխ ինձ հախտում ըն: Աստուծը թա՝ դե քյինӑլիս լոխճընան առաչ էտ թաքավըրերեն ըս պըտռիըլական, վըեր հըրցնե, կասես տու կնեգյ ըս, տրա հետե յըն լոխ քե հախտում, վըեր փսակվըես, մարթու քյինӑս, էն վախտը միշտ հըղտըլական ըս. ետնան էլ էն վար անող հլիվուրն ա պըտռիըլական, վըեր հըրցնե, կասես էն տանձի ծառեն տակըեն մին կարաս վըեսկե կա, էն վըեսկեն պիտի տո̆ւս օնըե, վըեր չորս ӑնգյո̆ւնը կընանչի, իսկ վըեր արչն էլ պըտահե, կասես թա էտ ընգյո̆ւններեն անխեյք ու քյӑսիբ մարթ պըտահե, փըռնե, օտըե:

Էտ մարթը ուրխացած հղե յա ինո̆ւմ, քյինӑմ: Առաչ թաքավըրերն ա պըտահում, հըրցնում ա, թա աստուծ հինչ ա ասալ, էտ մարթը թա՝ ասալ ա տու կնեգյ ըս, տրա հետե յըլ կոզի քու զորքըտ, օժըտ լոխճընան շատ ա, կարում չըս հախտըես, վըեր փըսակվըես , մարթու քյինӑս, լոխճինին հըխտըլական ըս: Տա յել ասում ա.- Դե էտ ա տու մարթ ըս իլի[1], եք ինձնըհետ փսակվե, տըեռ էս երգյիրին թաքավըրը, ես էլ թաքուհին, համ տու կըհըրուստանաս, համ էլ օրիշ թաքավըրերնե կարել չըն մըեր երգյիրը վըեննը տինին: Էտ մարթը թա՝ չէ՛, ես թայղի յըմ, աստուծ ինձ բախտ ա տուվալ, քյինӑմ ըմ:

Հղե յա ինո̆ւմ, քյինӑմ: Էն վար անողն էլ վըեր պըտահում ա, ասում ա.- Աստուծ ասալ ա էն տանձի ծառեն տակեն մին կարաս վըեսկե կա, պիտի տո̆ւս օնըես, վըեր ծառըեն չորս ӑնգյո̆ւնը կընանչի: Էտ վար անող մարթն ասում ա.-Եք քյո̆մӑգյ ըրա վըեսկեն տո̆ւս օնըենքյ, համ կես կանենքյ, համ էլ իմ արտըս կըկընանչի: Տա թա՝ չէ՛ ես թայղի յըմ, քյինӑմ ըմ, աստուծ ինձ բախտ ա տուվալ:

Հղե յա ինո̆ւմ, քյինӑմ: Արչն ա պըտահում, հըրցնում, թա՝ աստուծ քեզ հինչ ա՞ ասալ, տա թա աստուծ ինձ բախտ ա տուվալ, իստի մին վար անող ա պըտահալ, տրա արտեն մաչին էլ մին տանձի կա, տանձուն չորս ընգյո̆ւնին արտը կընանչում չի, աստուծ տրան էլ ասալ ա էտ տանձուն տակեն մին կարաս վըեսկե կա, տո̆ւս պիտի օնըես, վըեր արտը կընանչի, էտ մարթն էլ ինձ ասալ ա եք քյո̆մӑգյ ըրա վըեսկեն տուս օնըենքյ կես

[1] Լեռնայի Ղարաբաղում «մարթ» ասում են տղամարդուն (Ծ.Բ.):

անըենքյ, քյեցալ չըմ. էսհինչ երգյիրումն էլ իստի մին թաքավըեր ա պըտա-հալ, նա յէլ ասալ ա.-Ես լոխճընան շատ զորք օնըեմ, լոխճընան ուժեղ ըմ, համմա լոխ ինձ հախտում ըն, տրա կյենգյա̀տն էլ ըմ հըսցրալ ըստուծեն: Աստուծ տրան էլ ասալ ա.- տու կնեգյ ըս, տրա հետե յըս հախտվում, վըեր փսակվըես, մարթու քյինա̀ս, լոխճինին հըղտըլական ըս. էտ թաքավըերն[1] ինձ էլ ասալ ա եք տու ինձնիըետ փսակվե, էս երգյիրին թաքավըերը տըեռ, քյեցալ չըմ, ասալ ըմ աստուծ ինձ բախտ ա տուվալ, ինձ վըեչ մին պեն հարկավըեր չի: Արչը թա՝ պա ի՞նձ հինչ ա ասալ: Տա թա՝ քեզ էլ ասալ ա հիշտեղ վըեր անխըելք, քյա̀սիբ մարթ տըեսնաս, կըփըռնըես օտըես, կըլխետ ցավը կըտրըլական ա: Արչն ասում ա.- Հիշքան մտածում ըմ, քըզանա անխըելք մարթ չի պըտըհիըլական, լիհա էն ա փռնըեմ, քեզ օտըեմ: Համ ասում ա, համ փռնում, տրան վըեր մաշկում:

## 163.ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Մին քաչալ, մինգյել մին քոսակ ախպըեր ըն ինո̀ւմ: Տահանք շատ քյա̀սիբ ըն ապրում: Մսլըհաթ ըն անում, վըեր ախպորցը մինը տանը կենա, էն մինը քյինա̀ օրիշ տըեղ ծառայություն անե, փող ըխշաղի: Քոսակը տանը կենում ա, քաչալը քյինա̀մ ա կոխկե շենին մին հարուստ մարթու քշտի նո̀ւքյո̀ւրոթուն անում: Հենց սո̀ւրթա օրը էտ հարուստը պայման ա տինո̀ւմ, ասում ա.-Քեզ մին ճոխտ կյումաշ, մին կըեռ, մին էշ, մինգյել մին թազի յըմ տամ: Սաղ օրը թազին հիշքան տըեղ վազ տուվավ, էնքան տըեղը պիտի վարես, ո̀ւրո̀ւզյո̀ւնն էլ էշը պիտի թա̀մո̀ւզ, ծրտոտ չտըեռած փաղավ պեռ-նես, պիրիս տոն: Տու մի ասիլ, էտ երգյիրումն էլ շատ դուշեր կան, ծմըկներեն ան հինդերեն ծառերը լոխ ծրտոտ ըրած: Տըեղ թա̀մո̀ւզ փաղ քթենվալ չի: Էրկուինջի պայմանն էլ էն ա, վըեր տոն քյինա̀լա̀ն ետը կյու-մումը կապած կյումըշներեն էնքան տերման պիտի տա, վըեր կլխըենեն տիրմանավ ծասկվեն: Էտ քաչալը կյումուշնեն, կըեռը, թազին ան էշը յոր ա օնում, քյինա̀մ հա̀նդ: Կյումշնեն լծում ա, ըսկսում վար անելը, թազին էլ սաղ օրը էն հինդերեն վազ-վազ ա անում, սաղ օրը վարում ա, վարում, թազուն վազ տված տըեղերը կարում չի հսցընե: Ո̀ւրո̀ւզյո̀ւնն էլ շոռ ա կյամ, վյըեր թա̀մո̀ւզ, ծրտոտ չտըեռած փաղ քթենա̀, կտորե, էշին պեռնե պիրի տոն, կարում չի: Էշն առաչն ա քցում, տերտակ պիրո̀ւմ տոն, մինգյել

[1] Ղարաբաղի բարբառում «թաքուհի» (թագո̀ւհի) բառը շատ քիչ է գործածվում:

քյինա̀մ, թա կյումուշներեն տերման տա: Տերմանը ճովըրանավը ածում ա ախուռը, կյումըշներեն կլխընեն ծասկում, տահանք պուզըպտոկ ըն անում, կլխընեն տական տո̏ւս օնում: Մինչև կես քիշեր տա տերմանն ածում ա, ածում կարում չի կյումուշներեն կլխընեն ծասկե: Կզնված, տըեղ էլ պրանվում ա, քունավ հնցընում: Էքյսն էտ քաչալը քյինա̀մ ա խազայինին կոշտը, թա պայմանըտ կարում չըմ կատարեմ, ես քյինա̀մ ըմ մըեր տոն: Խազայինը թա քյինա̀: Տա քյինա̀մ ա քոսակ ախպորը կըլո̏խը եկածը նաղլ անում: Քոսակը թա դե մեհենգյ տու տանը կաց, մինգյել ես ըմ քյինա̀մ: Տա քըչալեն թողում ա տանը, քյինա̀մ հա̀մա̀ն հըրուստեն կոշտը: Էտ հարուստը տրան նո̏քյա̀ր ա յոր օնում, էլլա էն էրկու պայմանը տինո̏ւմ ըռաչին: Էքյսը քոսակը կյումուշնեն, կեռը, թազին ան էշը յոր ա օնում քյինա̀մ հա̀նդ, պրանվում, մինչև ո̏ւրո̏ւգյո̏ւնը քոն ինո̏ւմ, եր կենում լո̏ւծն ան սըմենեն կտորում, էշին պեռնում, տանում տոն: Խազայինը վըեր հրցընում ա, ասում՝ ա՛ տափը մտած, էտ հինչ ը՞ս ըրալ, տա թա՝ դե հինչ ա՞նեմ, հիշքան շոռ եկե, թա̀մո̏ւզ, ծրտոտ չտըեռած փադ չիլա̀վ, մենակ սա յար: Խազայինն էլ կարում չի խոսե: Մինգյել քյինա̀մ ա, վըեր էրկուինջի պայմանը կատարե: Տերմանն ածում ա ախուռը, կյումուշներեն կլխընեն կտորում ըխուռումը թաղում, տիրմանավ ծասկում: Տարը վըեր կյամ ա տի տըեսնում, խրեգյ ա մնամ թա կյիժվի, վըեր յիրա̀ յա պրծնում, հրցնում թա էտ հի՞նչ ըս ըրալ, տա թա՝ հիշքան տերմանն ածում ի, կլխընեն ծասկում, էլլա պըզըպտոկ ին անում, կլխընեն տական տո̏ւս օնում, տու վէլ ասալ ըս էնքան տերման տո, վըեր կլխընեն ծասկես, ես էլ ծըսկեցե: Խազայինը տեսնում ա, վըեր տա հա̀լա̀ շատ օյիննե պիտի ո̏ւրա̀ն կլխեն խաղ անե, օզում ա մին միանա քթենա̀, վըեր տըրանա ըզադվե: Քյինա̀մ ա պելուն կոշտը, վըեր տրա հետե մսլըհաթ անե, քոսակեն էլ ասում, վըեր տանը կենա, տոռնը պեց չի թողե, քիշերեն կեսեն էլ ճիրաքյավ քյինա̀ ո̏ւրա̀նց տանե տոն: Տահանք մրթըկնեգյ վըեր քյինա̀մ ըն պելո̏ւն տոն, քշերեն կեսին քոսակը տանը տոռնը կուրունգյհան ա անում, պուկում, ճիրա̀քյը ծըեռքն օնում, տոռնը շիլակում, քյինա̀մ տահանց հետան: Էտ վըեր տի տըեսնում ըն, լափ ըն պըլանում: Պելին ասում ա. -Էլ տրանա պրծնելի թա̀հրը չի կա, տոն-տըեղ թուղեցեքյ, կլո̏խ եր կալիքյ, փախեքյ, վըեր սաղ էլ պրծնեքյ, լա̀վ ա: Տահանք տոն-տըեղը թողում ըն, փախճում, քոսակն էլ հըտըրներան: Հսնում ըն ծովեն կոխ կեն մին պեցո̏ւր թումբ, տըեղ օքան վըեր թողում, նստոտում,վըեր

դինջյա̀նյա̀ն: Հաց ըն օտում, դինջյա̀նո̀ւմ, տըղըրնեն քցո̀ւմ, վըեր քոն ինին: Քիշերեն կեսին մըրթըկնեգյ մալըհաթ ըն անում, վըեր տրան քցին ծովը, քոսակը տապուռ ըրած ա ինո̀ւմ, սուտըստ քոն իլյա̀ծ, ըսկանում ա, հենց վըեր մարթը քունավ ա հնցընում, եր ա կեննում կնգանը նհետ խազայինին քցո̀ւմ ծովը, կնգանն ըսպանում, մարթին ճիրան տո̀ւս օնում, ծիյան կապում, կոխկե արտին մաչին պեց թողում: Ըրտատարը կյամ ա հըռուցանա ճղճղամ, ծեն տամ, թա՝ ա՛ ծիյավուր, էտ ծին խե յը՞ս արտը ըրըծցնում: «Ծիյավուրը» խոսում չի, նորից ա ծեն տամ,թա՝ ա՛ քնծահար քյնըհետ չը՞մ, հա̀լյա̀ ռեխըտ լայաղ օզում էլ չը՞ս ջողաբըս տաս: Տեսնում ա, վըեր ծիյավուրը ո̀ւրյա̀ն մըթատըեղ չի տինո̀ւմ, էտ ըրտատարը մին մըեծ փայա ծըեռքեն կյամ ատրա կլխեն թխում, քցո̀ւմ ծիյին տակը: Քոսակը կյողը կացած տըեղան տո̀ւս ա կյամ թա վա՛յ, ախպորըս ըսպընեցեն: Էտ ըրտատարն ան ո̀ւրյա̀ն պարիկամնեն կյամ ըն քուսակեն խաթիրը քթենո̀ւմ, թա՝ դե լյա̀վ, գյիդյա̀ցալ չընք, արտը ըրըծելիս ա իլալ, կզնված մարթա, թխալ ա, գյիդյա̀ցալ չի, թա տի կըտըեռնա: Պիրո̀ւմ ըն էտ քուսակեն մին քանի ծիյապեռնը ցորեն տամ, հիշտըըցնում: Քոսակն էլ պիրում ա էտ ցորենը, խազայինին իլըծ-չիլյա̀ծ վըեսկեն ան փողերը, սաղ հարստությունը տահանց պեռնել տամ, քինյա̀մ խազայինին տանը իլըծ-չիլյա̀ծն էլ հըվաքում, քշո̀ւմ թուշ ո̀ւրյա̀նց տոն, քաչալ ախպորը թա՝ հասե՛, իստի յըն ծառայություն անում, փող ըշխադում:

## 164.ԻՐԵՔ ԿՆԵԳՅ

Մին թաքավըեր իրեք կնեգյ ա ինո̀ւմ պըհելիս, իրեքան էլ թա̀մբա̀լ: Կնընուցան մինը կյող ա ինո̀ւմ, մինն աշկը տո̀ւս, էն մինն էլ լո̀ւզվանեգյ: Թաքավըերեն օրերն էլ միշտ դիլխոր ար անց կենում: Տըհանցա մոտե յէլ ո̀ւրյա̀ն կնգանը նհետ մին քյա̀սիբ մարթ ար ապրում, օրեն հացեն մո̀հտա̀ջ, բայց միշտ ուրախ: Էտ քյիսիբին կնեգյը համ շատ դոչճաղ ար, համ էլ զյափուզլուփ անող, երք ասող, խաղ ասող, պար կյըըվող: Մին խոսկավ ամմեն հինչ ծըեռքավը կյամ ար: Տրա մարթն էլ շատ ուրախ ար կենում: Խաբարը հսնում ա թաքավըերեն, թա քզանա մոտե իստի մին մարթ ա ապրում, ինքյը շատ քյա̀սիբ, բայց ամմեն օր ըսելիս, խուսելիս, միշտ ուրախ, օզում ա թա լիհա̀ թռչի: Թաքավըերն ասում աս.- Քյիննա̀կան ըմ էտ մարթին տըեսնամ: Տա քյինա̀մ ա տըեսնում էտ մարթը համ վար ա

անում, նհետն էլ պար կյամ, պատ շըրելիս համ քար ու ցեխ կըրում, նհետը պար կյամ, հինչ վըեր անում ա, լոխ պար կյա̈լավ: Հրցըփորց ա անում, ամմեն հինչ, տրան աււմ.-Իմ իրեք կնեգյս քեզ պիտի տամ, քու կնեգյտ յոր օնեմ: Էտ քյա̈սիբը թա՝ ա̈մա̈լ չի կյալ: Թաքավըերն աււմ ա. - Վըեր փոխես վուչ, կլո̈խտ կտրըլական ըմ: Էտ քյա̈սիբը ճարը կտրած, ո̈ւրա̈ն կնեգյը տամ ա, թաքավըերեն իրեք կնեգյը յոր օնում: Տա թաքավըերեն կնանեքյը տանում ա տոն, տանը մաչան կտրում, էրկու օթաղ շինում, ութաղեն մինին պատերը ծկոտում, մին քանի պըտըրիան պեց անում, հիշքան աման-չաման կա, պիրում էտ պըտըրիանները լըսնում, էն մին ութաղեն էլ էրկու մղակ ա անում, տհանցա խիլլա հեռու վել մին օրիշ օթաղ շինում:

Մեհետ տա ո̈ւրա̈ն կնանուցը յոր ա օնում, թա տանում ըմ կյետեն էն ղոլին լա̈վ տըեղեր կա, շոռ ածեմ: Կյետն էլ խիլլա̈ հեռու վա ինո̈ւմ: Վըեր հսնում ըն կյետեն, առաչ կյող կնգանն ա շիլա̈կում, վըեր անցկըցընէ: Հենց վըեր հսնում ա վարար, վժժոկ տըեղը, տա կնգանը հրցընում ա, թոբա՞, կնեգյը թա՝ սօրա ետ թոբա: Մարթը տրան անց ա կըցնում կյետեն էն ղոլը: Ետ ա տըեռնում, քյինա̈մ էն աշկը տո̈ւս կնգանը շիլա̈կում, պիրում կյետեն վարար տըեղը, հրցընում, թա՝ թոբա՞, կնեգյը թա՝ սօրա ետ թոբա: Տրան էլ ա կյետն անց կըցընում: Քյինա̈մ ա լո̈ւզվանե կնգանը շիլա̈կում, պիրում վարար տըեղը, հըրցընում, թա՝ թոբա՞, կնեգյը թա՝ հինչ ը՞ս աււմ է՛, վըեղս կըլխետ, քյո̈ւլվիս տու, ճելլ ըրա անց կըցըրու: Մարթը տրան շիլա̈-կան հլո̈րո̈ւմ ա, թումփալի քցո̈ւմ կյետը, էտ էրկու կնանուցը յոր օնում, քյինա̈մ տոն: Էն օթաղը, վըեր պատերը ծըկոտալ ա պըտըրիաննե շինա̈լ, աման-չըմանավ լըցալ, տամ ա կյող կնգանը, աււմ.- Ըմընեքյը, տեսը-տենը հիշքան օզում ըս, կյուղաց, մին պտըրիանան մինը տար, էն մինան էլ էն մինը: Էն մին օթաղն էլ, վըեր էրկու մղակ ա ինո̈ւմ պեցած, տամ ա էն մին կնգանը, աււմ. - Սիրա̈կան ըս պիրիլա̈կան, թա հի՞նչ ըս ըննական, տու վըս զյո̈ւղո̈ւմ, մին մղակավը օթաղըտ կըպիրիս, էն մինավը՝ հղե տինիս:

Տրանա ետը տահանք ո̈ւրա̈նց խըըյաթը թողում ըն, խըլունքանում, լա̈վ, ղոչճաղ կնանեքյ տըեռնում:

Մին օր էտ մարթն աււմ ա.-Քյիննա̈կան ըմ թաքավըերեն կոշտը, տըեսնամ կնեգյս նրա քշտին հո՞ւնց ա: Քյինա̈մ ա տըեսնում ո̈ւրա̈ն քյո̈հնա̈ կնեգյը թաքավըերեն քշտին թիմբըլա̈ցած, տըեռած մին ա̈լա̈նգյա̈: Թաքա-

վըերը տրան ասում ա.- Կնանեքյս ինձ տռ, կնեգյտ տար: Էտ քյա̀սիբը թա̀ կարել չըմ:

## 165.ՀԼԻՎՈՒՐԸ ՕՇԱՓՆԵՐԵՆ ՄԸԵԾ ԱԽՊԵՐՆ Ա ՏԵՌՆՈՒՄ

Մին պառավ կնեգյ ո̀ւրյա̀ն հըլներեն տո̀ւս ա քցո̀ւմ, ասում ա.- Քյնի, ես կարել չըմ քեզ եշիմ , քյնի կլո̀ւխդ պահե:

Էդ մարթը մին ծո̀ւ ա յոր օնում տնո̀ւմ ծոցումը, քյնո̀ւմ: Ճանապարհեն մին մազի քյա̀նդիր ա քթենո̀ւմ , մին էլ մին կորա տեսնում, յոր օնում տնո̀ւմ ծոցումը, քյնո̀ւմ: Վեր մթնում ա, մին տոն ա մտնում, վեր քշերը տեղ ապրի, էս տանը ուշափներ էլ են ինո̀ւմ, էս ուշափներան մինը ասում ա.

- Եկեքյ մին քար յոր օնինքյ, հփռներումըս հոփ տանք, հո̀ւր հոփ տված քարան ճո̀ւրը ծըլաց, նա տառնա մեր մեծ ախպերը:

Հու վեր քարը հոփ ա տամ, քարը հափռեն մաշին այլեր ա տեռնում, յա էլ փշոր-փշոր ա տեռնում, ամմա ճո̀ւր կաթո̀ւմ չի: Էտ հլնուրը, վեր ծո̀ւն հափռեն մաչին հոփ ա տամ, ճո̀ւրը ծըլամ ա: Ուշփներեն ռեխը պեց ա մնում: Ասում ըն, - Սա մեր մեծ ախպերն ա:

Ասում ըն դե վեր տի յա, լոխճին կուռնատական մին մազ պուք տանք, տեսնանք հո̀ւրն ա մեծ:

Ուշուփնեն իրանց կռնտական մին մազ ըն պուք տամ, վեր ամեն մինավը մին մարթ կախ ինի, կտրել չի. քցո̀ւմ ըն կրակը-էրում, էս հիլվերեն էլ ըն ասում. - Մըե́ծ ախպեր, դե քեզ տեսնանք:

Մըեծ ախպերը կռնտական մազի քյա̀նդիրը վեր տո̀ւս ա օնում, էլ զըրմանալու տեղ չի մնում, տա էլ ըն քցո̀ւմ կրակեն մաչը, տեսնում ըն, վեր օժավ ա: Ասում ըն. - Միենգյ ամեգյըս մին վիչիլ հանինքյ, տեսնանք հո̀ւրն ա մեծ: Օշափնեն հանում ըն, ասում. - Մեծ ախպեր, միենգյ տու հանե:

Մեծ ախպերը կորեն վեր հանում ա, սահանք լիա̀, ըրմանքան փաղըն տեռնում. էլ ճար չկա, դո̀ւզ, վեր հլիվերեն տնո̀ւմ ըն ո̀ւրյա̀նց մեծ ախպոր տեղ:

Ռավոտ քշերավ սահանք քյնո̀ւմ ըն քոլ, փաղ հվաքին պիրին:

Մեծ ախպերն ասում ա. - Թաքա ամեն օր եկած փաղի, քյա̀նդիրը պիրինքյ ծմակը, շիլա̀կինքյ տանինքյ:

Օշափնեն ասում ըն.-Չէ́ մըեծ ախպեր, քու փաղը հրկավեր չի:

Սահանք ամենքը մին շիլակ փաղ ըն անում, շիլա̀կում, մըեծ ախպորն

էլ ասում. - Դե տու եր իլ կլխեն նստե:

Օշափին ասում ա. - Մեծ ախպեր, էս հինչ թի՞թավ ըս:

Ասում ա. - Ախր, օժըս յրան չըմ քցո՛ւմ:

Ասում ա.-Հլա մին յրա՛ն քցի օժտ, տեսնամ:

Էս մեծ ախպոր ջըռումը մին բիզ ա ինո՛ւմ, տո՛ւս ա օնում խըզըտակեն բիզավ հոփ տամ, օշափին ասում ա. - Պա՛, պա՛, պա՛, պա՛, չէ, մեծ ախպեր, օժըտ եր կալ:

Ուշուփնեն մտածում ըն, թա հունց ա՞նին, վեր ըստանա ըզադվին: Պիրում ըն ահազին փող տամ, թա. - Մեծ ախպեր, տու քյնի քեզ հետե հունց օզում ըս, ինդի ապրե:

Հլնուրը փողը յոր ա օնում, կյամ պռավեն կոշտը, նրա հետ ապրում:

## 166.ԱՇԱՆՑԻՆԵՐԻ ՍՈՏԸ

Մեր շենումը մին մարթ ա ինո՛ւմ, անունը՝ Աթա, Բութանանց Աթա յըն ասում: Մըն էլ մին Լքսան ա ինո՛ւմ, Կպանանց Ալեքսան ըն ասում: Ըստրանք մին չեթվեր կյինա՛վ մարջ ըն կյամ, թա տեսնան՝ հու լա՛վ սոտ կասե:

Ալեքսանը ասում ա.- Օխտը ճոխտ կյումաշ օնիմ: Մին օր էս կյումշնեն կորալ ըն, շոռ ըմ եկալ, շոռ, քլեցալ, տեսալ մին սոյնու տակ շքուհան ինիլիս:

Աթան ասում ա,-Արա՛, էտ հի՞նչ սոտ ա: Մին վերցակ օնի, մին օր էս վրցակեն էրկու մափռաշ եմ պեռնալ, ես էլ մաչին նըստալ, մին մեշուկ ճղուպուր էլ առաչըս տիրա՛լ, մին չա՛քյո՛ւճ ծերքս եր կալալ, էս ճղուպուրեն էս վրցակեն կտարեն յրա՛ կոլտրելավ- օտելավ քյեցալ սարը: Քյինո՛ւմ ժամանակ քուլերեն տական մին ըլբաստրակ ա տո՛ւս կյամ: Միակը յրա՛ յըմ անում, էս ըլբստրակեն քմական մին կանվերտ ա վեր ըղնում, յար ըմ օնում կա՛րթո՛ւմ, տեսնում մաչին կլիրա՛ծ, վեր Ալեքսանենը սոտ ա, Աթա ա՛մո՛նը՝ դորթ: Մին չեթվեր կյինի ըմ տանում տերտա՛կ, խմում ընք, խմում, լիքը չեթվերը տոն ըմ պիրո՛ւմ:

167.ՄԱՐԹԸ ՆԱՆ ԿՆԵԳՅԸ

Ըլնՙլ ա չլնՙլ մին մարթ, մին կնեգյ: Էս մարթը քյնՙում ա հնՙնդին հոնձ անըմ, խոտ հարըմ, վար անըմ, իսկ կնեգյը տոնը պահըմ ա, խմոր ա անըմ, հավեն ձոտեն եշըմ ա և շատ հալալ-զուլալ ապրում ըն:

Մին օր մարթը հնՙնդնՙն նղացած կյամ ա տոն, կնեգյը մարթին վեննեըը լվանըմ ա, հաց տամ, չայ տամ, տեղը քցՙում և ասըմ.- Ա՛ մարթ, եր կաց քոն իլ, նղացած ըս: Մարթը կնգանը ասըմ ա.- Ա՛ կնեգյ, էս աստված յոր կոնե՞, վեր տու տանը դինջ նստիս, իսկ ես քյնիմ հնՙնդին չրչարվիմ: Կնեգյը ծծաղըմ ա և ասըմ.- Ա՛ մարթ, վեր իտի յա, տու կաց, տոնը պահե, իսկ ես քյնիմ հնՙնդըմը ըշխադիմ: Մարթը ռազի յա կենըմ:

Ըռավոտը կնեգյը եր ա կենըմ մարթուն հրցնում: Ա՛ մարթ, ես քյնՙում ըմ հնՙնդը, ասե տեսնամ հի՞նչ բիդի անիմ: Մարթը բաղասխանըմ ա.- Նորման քանըհենգյ խորթն ա, քյնի հնձի, էշը կես օրեն ձՙուր տոք, իսկ գործա կյնՙլիս պատառ խոտ պեր, վեր ՙուրՙուգյՙունը էշը օտե:

Էտ պայմանան ետը մարթն ա կնգանան հրցնում, թա բա ի՞նքյը հինչ բիդի անե: Կնեգյը մարթին ասըմ ա.-Էն ա միկա մածուն կա, խնեցեն ածե հարե, ձոտերին եշի, վեր չլղանը չտանե, համ էլ մին թուրուն հաց կթխիս: Մարթը համաձայնվում ա: Կնեգյը քյնՙում ա հնՙնդը, իսկ մարթը մնամ ա տանը: Էս մարթը հնՙլնՙ կնեգյը քյննՙլանը ետը մին երկու ստաքան արաղ ա խմում, խմորը խաշ անըմ, հավեն ձոտերը թիլնՙվ կպոտում և լոխ միստեղ կապում հավեն վտներան, նրա համար, վեր քշտան դրաղ չի կենան: Ետավ կյամ ա խմորը թա հունցե, մին էլ մտածըմ ա, ասըմ ա, կարող ըմ երկու գործը մին տեղ անել և ճելլի պրծնիմ, դինջ նստիմ:

Էս մարթը խնեցեն մաշկն ա կապում, չոքում ըսկսում խմորը հունցել, հանցու համ խնեցեն մաշկեն հարվե, համել խմորը հունցվե:

Էս թՙունդ գործեն վախտը հրևանը հարայ ա տամ, թա արա հե՜յ, Առաքել, ձոտերը չլղանը տարավ: Սան դեմնՙ չլղանը վեր մին ձոտա փռնալ ա, սաղ ձոտերը թուխսկանը նհետը տարալ ա: Էս մարթը թայդի տՙուս ա կյամ, վեր չլղանան ձոտերը խլի, մաշկեն կապած խնեցին տռանը պատեն նի յա կյամ կոտըրվում, շալվարը թանավ լսնում: Էս Առաքելը ձուտերեն հնՙշիրավը շաղվում ա, իսկ էս շաղված վախտը խռոկ կալած խոզը նի յա մըննում տոնը, ըսկսում տաշտին խմորը թնՙմՙուզ օտիլ: Էս մարթը տխուր, դիլխոր տռանը նստում ա մինչև մթենը:

Մթնում ա թա չէ, կնեգյը կյա̀մ ա և ասըմ.-Ա՛ մարթ, նորման քանըհենգյ խորթն ա, ես երեսունն ըմ հնձալ, էշը ճո̀ւր ըմ տվալ, լա̀վ կանաչ խոտ ըմ պերա̀լ, ճափկուն ըխպրա̀ն կոլան լցալ ըմ պերա̀լ, կա մին լավ խմէ, - ասըմ ա, կոլան տալիս ա մարթին: Ըտրանից ետը կնեգյը հրցնում ա.

- Ա՛ մարթ, խմորը հինչ հա՞լի յա:

Մարթը ասըմ ա. - Խմորը խոզան հրցրու.

- Իսկ խնեցի՞ն:

Մարթը ասըմ ա.- Խնեցեն պատան հրցրու.

Իսկ ճոտերեն պե՞նը չա̀ւղանան:

-Համ էլ ա՛ կնեգյ, կաց տոնտ պահէ, իսկ ես քյնիմ իմ գործիս:

## 168.ԴԱ̀ՐԶԻՆ

Ընո̀ւմ ա չնո̀ւմ, մին դա̀րզի յա ըլնո̀ւմ: Էս դա̀րզին վեր վածձուն տրեկա-նը թմամում ա, քշերը թաղըմը մին ծառ ա տեսնըմ և էտ ծառեն յրա̀ տեսնըմ ա հինչքան շորեր ա կարալ և էտ կարած շուրերան հիշքան կտոր ա կյուղացալ, լոխ էտ ծառան կախ-կախ ըրած: Դա̀րզեն վախըմ ա և մթկումը մտածըմ.-Հա̀լբա̀թ մծացալ ըմ, աստված ինձ սայաղլամիշ ա անում, վեր էլ շոր կրելիս նըեստա կյուղանամ վէչ:

Դա̀րզին տղեն առավոտը արազը նաղլ ա անըմ և ասըմ.- Բա՛լա, վեր մին էլ մո̀ւշտա̀րի կտոր պիրի շոր կրելու համար, տու ինձ կասիս՝ ա՛պա, ծառը:

Մին էրկու օրանը ետը մին հարուստ խոջա մարթ մին լավ ճոթ ա պո̀ւրո̀ւմ և խնթրում, վեր ո̀ւրա̀ն հետե մին չոխա, մին շալվար և մին պենճակ կտրել տա: Դա̀րզին վեր ճոթը աշկն ա ըղնում, աշկերը ծիլի-վիլի յա անըմ: Մին պատառ թաքուն կլտրում ա, կոխում գյա̀բին տակը: Տղեն աշկավն ա ըղնում, վեր հա̀րը կտորը կտրից, կոխից գյա̀բին տակը, ասից՝ ա՛պա, ծառը: Հա̀րը բաղասխանըմ ա տղեն. - Բա՛լա, սուս, էտ կտորան ծառեն ըլա̀լ չի:

## 169.ՊԱՌԱԿԻ ԲԱՂԸ

Ըլնչ ա չլնլ մին շենըմ մին հենգյ-վեց խուխատար մարթա ըլնլ: Էս խեղճ մարթին կնեգյը՝ Հերիքնազը, մեռնըմ ա: Էս գյուղացի մարթը օխնը, քռասունքը տամ ա պրծնում, քյնո՛ւմ ո՛ւրնանց շենին դերին կոշտը.- Օրթնի աղեր,- ասըմ ա, ծեռքը պաչըմ և աղո՛րը հրավերավը նստում: Դերը հրցնում ա.- Խեր ինի՞, ա՛ Քյնասպնր, բնլի մին դնրդ օնիս: Քյնասպնրը ասըմ ա. - Ա՛ դեր, տու գյո՛ւղո՛ւմ ըս, վեր Հերիքնազը ումբուրը քեզ բաշխից, և ես միենգյ օզում ըմ իմ քենե Գյո՛ւլխասը պիրիմ խոխեքյը յոլա տանե: Դերը ասըմ ա. - Ա Քյնասպնր, քենեն օզիլ չեն, համ մեխկ ա, համ էլ ջհառա փիս կինի, տոնտ-տեղտ խարաբա կմնա: Էս ճարը կտրած Քյնասպնրը ասըմ ա.-Ա՛ դեր, պռակըմը մին լնվ բաղ օնիմ, ընել կտամ, մին մարալ ճորե օնիմ, ընել կտամ, մին թաիրը ըրա գործս դո՛ւզո՛ւցրու:

Դերը բաղն ու ճորեն ըսկանըմ ա թա չէ, կնգանը ասըմ ա.- Կնփո՛ւն ախճիգյ, մին Եփրեմվերդին ինձ տռք: Կնեգյը Եփրեմվերդին տամ ա դերին, և դերը կյիրը պեց ա անըմ, ըսկսում կնրթիլը:

- Պռակեն բաղը,

Մարալ ճորեն,

Մեռնե կինը,

Առնե քենե՛ն:

Քյինի Քյնասպնր վերթի, հալալ ինի:

## 170.ԴՈՆԳՈԻՆՑ ՓԼԱՆՔՅՆՍՄՆՆՑ ՎԵՍԿԵՔՅՆՔՅՈ՛ՒԼ ԹԱՔԱՎԵՐԸ

Մին դո՛ւզ, տափլակ տեղ, մին շեն ա ինո՛ւմ: Էս շենին ժղովուրթը դոնգի յա ինո՛ւմ: Էս դոնգի ինիլան էլ լնվ չըն ապրում, շատ քյնսիբ ըն ինո՛ւմ: Էս շենին անուն չի ինո՛ւմ, միշտ ասըմ ըն «դոնգի փլանքյնսննց շենը»: Դոնգի փլանքյնսննց շենեն ամենախելունք մարդը դերն ա ինո՛ւմ: Էս դերը մին տոն ա շինո՛ւմ, կլխեն մին պուպուզտի տինո՛ւմ, անունն էլ ասում՝ Եխծե: Ժղովուրթը ռութանան քշերավ եր ա կենում, քյնո՛ւմ եխծեն, դերին ծերքը պաչում, մին պեն տինո՛ւմ դերին հափռեն մաչին, վեր դերը աղոթք անի, ո՛ւրնանց լնվ ապրուստ տա:

Մին ռութանա, մին քաչալ մարթ ա կյամ էս շենը, լին սո՛ւվթն պտհա-ծեն հրցնում ա.-Էս շենը դոնգի փլանքյնսննց շենն ա՞:

Ասում ա.-Հա՛, հինչ ը՞ս օզում:

Ասըմ ա.- Պեն չըմ օզում, շենին տեղը զյիդա՛լն ար ինձ հա՛ջա՛թ:

Քաչալը ծուցան մին հաց ա տո՛ւս օնում, շենին մաչեն կանչում.

- Ա՛ ժղովուրթ, էսհինչ տեղը աստված հաց ա թափում, հվաքող չկա, հու վեր տո՛ւզն ա, թող ճել անե, քյնի հվաքե:

Մին էլ տեսնում ա մեծ, պիծի, խոխա, ռախա մշո՛ւկնեն եր կալած, վազ ըն տամ: Քաչալն ասում ա,-էս ա վեր կա, սահանք փլանքյա՛սա՛նց դոնզե շինա՛ցեքյ ըն, վեր օզիմ, ես ըստեղ թաքավեր էլ կտեռնամ: Վազ ա տամ, ժղովուրթեն առաչը կտրում, թա՝ էլ քյնո՛ւմեքյ, բո՛ւրդա՛ն տո՛ւս ըք եկալ, ըստուծեն վըխճցրալ, փըխցըրալ: Ետ ըն տեռնում, կյամ:

Էլ էս քաչալը շենան տո՛ւս չի կյամ: Մտածում ա, հունց անե, վեր շենին դերը ինքյը տեռնա: Օզում ա դերին ըսպանե, վախում ա աստված եխծեն պճուխներան ո՛ւրա՛ն յիշիլիս ինի: Շնա՛ցիքյ էլ դերին շատ ըն սիրում: Քաչալը ըստիպված դերին նհետ ախպերություն ա անում:

Շատ ա անց կենում, թա խրեզյ, ժղովուրթը դերին կոշտը կյենզյատ ա քյնո՛ւմ, թա՝ Քաչալը մեզ խա՛փո՛ւմ ա:

Դերը վեր քչալեն ասում ա, քաչալը մաննը կծում ա, թա պահո՛, վեր ժղովուրթը կլխե յա ըղնում՝ պենս պո՛ւռթ ա, ուրեմն խլունքանում ըն, ապրելը տժեր կինի:

Մտածում ա, թա հունց անե, վեր դերին խելքը չափե, ետնան կործե ընցընե: Ժղովուրթեն նհետ եխծե յա նի մտնում, քյնո՛ւմ մուտանում, դերին կյիրքը պաչում, դերին հափռումը մին քարու կտոր տինո՛ւմ:

Դերը վեր տեսնում ա, ասում ա. - Ըշխարքես վերչը եկալ ա, ժղովուրթ հսեքյ էս մարթուն ըսպնեցեքյ: Քաչալը տեսնում ա, վեր պենը պուռթ ա, եխծան տո՛ւս ա կյամ, փախճում թուշ բիդի սարերը, ժղովուրթը՝ ետնան: Քաչալը փըխճիլիս եշում ա տեսնում մին սարու տո՛շում մին չոբան էծեր, վխճրնե յա պահում: Վազ ա տամ չուբանեն կոշտը, ասում.-Չոբան ախպեր, ժղովուրթը հետաս ա ընզյա՛լ, օզում ա, թա ինձ էս ըշխարքես թաքավերը շինի, ես էլ օզում չըմ, եք շուրուրնես փոխինքյ, տու թաքավեր տեռ, ես էլ՝ չոբան:

Լհա՛ վեր փոխում ըն, շինացեքյ տեղ ըն հսնում:

Քաչալն ասում ա. - Դե՛, չոբան ախպեր, փախեր, հունց ըրա, վեր քեզ փռնին: Շինա՛ցեքյ չուբանեն փռնում ըն, պերա՛նը, ծերքերը, վեններըը կա-

պում, գյո՛ւղո՛ւմ չին, թա հինչ անին։

Դերն ասում ա.- Տարեքյ կյետը քցեցեքյ, թող ճո՛ւրը քշե, տանե, մեր շենա՛ն թող հինչ տեղ օզում ա, տանե։

Տի էլ անում ըն, դինջա՛ցած տոն կյամ, վեր շենը ըզատվալ ա էտ քչալան։

Ո՛ւրո՛ւգյո՛ւնը վեր մին խրեգյ մըթնըժոռում ա, մին չոբան դոնգի փլանքյա՛սա՛նց շենին մաչավը «հեյ-հեյ» ընելավ մին սո՛ւրո՛ւ էծ ու վեխճար ա քշո՛ւմ։ Եշում ըն, տեսնում, վեր քաչալն ա։ Զրմանում ըն, հըրցընում, քաչալն ասում ա.-Պա ասել չը՞ք, վեր ինձ ճրին մաչը քցեցեքյ, եշիմ տեսնամ էնքան էծ ու վեխճար, վեչ ճոնղըն ա ուրվամ, վեչ էլ տուտը, բոլ ա հինչքան քյա՛սիբ ըպրեցեքյ, քյեցեքյ փռնեցեքյ, պերեքյ հու հինչքան օզում ա։

Դերին կանչում ըն մսլիաթ անին։

Դերն ու քաչալը վեր ո՛ւրո՛ւր պտահում ըն, քաչալն ասում ա.- Քարը հի՞նչ ըրեր։

Դերն ասում ա. - Հի՞նչ պիտ անիմ, քեզ նհետ մին տեղ քցեցե ճիրին մաչը։

Քաչալը ըստեղ էրկու ծերքավ ո՛ւրա՛ն կլխեն ա թխում, թա՝ պա՛հ, քու տոնը քանդվի վուչ, էս հի՞նչ պեն ար, վեր իմ կլխեն պերա՛ր։

Դերն ասում ա.-Հինչ ա՞ պտահալ։

Քաչալն ասում ա էդ քարը բոլյանտ ա իլա՛լ, էսիինչ թաքավերան ըմ կյուղացալ, ասալ ըմ՝ տըլական ըմ ըշխարքես ամենախելունք մարթուն։

Դերը ըստեղ մուրոքը սղալում ա, թա՝ պա տես է՛, ես էլ գյո՛ւղո՛ւմ ի, թա ինձ մասխարա յըս անում, պա միենգյ հինչ ա՞նինքյ։

Մուտանում ա, քչալեն ճկատան պաչում, ներղություն խընթրում, ժուղուվրթեն քամակն անում, բիդի կյետը քյնո՛ւմ։

Քաչալն ասում ա. - Դե վեր տի յա, շինա՛ցոնց կասիս, հունց վեր ինձ ըն կպոտալ, ինդի յէլ քեզ կպոտին, վեր խեխտվիս վուչ, ամմա պերա՛նտ թող պեց մնա։

Դերն ասում ա.-Հո՛ւրը էծ ու վեխճար ա հա՛ջա՛թ, բոլյանտ ա հա՛ջա՛թ, թող հետաս կյա՛։

Հինչքան տղամարթ կա շենումը, դերին հետան ըն տեռնում, քյինո՛ւմ կյետեն դրաղը։ Կյետեն դրաղեն դերին հրամանավը ո՛ւրա՛նց կպոտում ըն, հո՛ւնց վեր չուքանեն, վեննան, ծերքան փռնում, կյետը քցո՛ւմ։ Տու ասել մի,

էտ քցա̈ծ տեղը մին պիհիր ա ինո̈ւմ ցցված։ Էտ պիհիրը նի յա մննում դերին քամակը։ Դերը ճիրա̈ն կլո̈խրը տո̈ւս ա օնում, ժղուվուրթեն ասում.-Էծին պոզը փռնալ ում, հսեքյ։

Ամեգյը մին տեղան ո̈ւրա̈նց քցո̈ւմ ըն ճրին մաչը, լոխ խեխտվում։ Դոնգի փլանքլա̈ սա̈նց շենն էլ, դոնգի փլանքլա̈սա̈նց շենին կնանեքյն էլ մնում ըն քչալեն։ Քաչալն էլ էնքան ուրախանում ա, վեր կլխեն մազեր ա փսնում, տեռնում ա «դոնգունց փլանքյա̈սա̈նց վեսկեքյա̈քյո̈ւլ թաքավեր»։

171.ՔԱՉԱԼԸ

Ինո̈ւմ ա, չի ինո̈ւմ մին հայի շեն ա ինո̈ւմ Իրանեն քշտին։ Էդ շենումը մին քաչալ ա ո̈ւրա̈ն կնգան նհետ ըպրելիս ինո̈ւմ։ Սահանք շատ քյա̈սիբ ըն ինո̈ւմ։ Քչալեն խելքն էլ մին քիչ պակաս ա ինո̈ւմ ։

Մին օր քաչալը կնգյանը ասում ա.- Ա՛յ կնեգյ, դե վեր լոխ վար ըն անում, եք մունք էլ լոբի վարինքյ։

Կնեգյը ըստղաս ընդղան, սհանցա-նըհանցա մին խրեգյ լոբի ա օգում, ինքյ օնում։ Էտ տարին էլ արաշտ տարի յա ինո̈ւմ։ Սահանց բախտը պիրում ա, լա̈վ լոբի յա փռնում էտ տարի։

Քաչալն ասում ա.- Բա էս լոբին հիշտե՞ղ տանիմ, վեր թա̈նգյ ծախիմ ։

Ասում ա. - Տանինքյ Իրանեն շահեն յրա̈ ծախինքյ։

Էշը կանաչ լոբով պեռնում ըն, քյնո̈ւմ շահեն հայաթը, ծեն տամ. - Լոբի, լա̈վ լոբի։

Շահն ասում ա. - Էտ մզանավ տնազ ըն անում, էս վախտ լոբի չի ինիլ, քյեցեքյ պերեքյ, կլոխը կտրեցեքյ։

Վեզիրը քյնո̈ւմ ա, տեսնում, վեր իսկապես լոբի յա։ Կյամ ա շահեն ասում, վեր իսկապես կանանչ լոբի յա։ Կանչում ըն, քաչալը կյամ ա, շահը հրցնում ա, ասում ա.- Լոբին քանե՞ յըս տամ ։

Ասում ա.- Լոբուն կյինը մին զող վեսկե յա։

Շահը մտածում ա. «Թա տանք, կասի խա̈փա̈լ ում շահեն, թա տանք փուչ, կասի էնքան օժ չօնե, վեր լոբի ինքյ օնե»։

Շահը հրամայում ա, վեր քյնին վեսկեն պիրին, լոբին առնին։ Քաչալը լոբին տամ ա, մին զող վեսկեն յոր օնում, ետ վռվեռ կյամ բիդի ո̈ւրա̈նց շենը։

Քաչալը քյինիլա̈ն ետնը շահը շատ ա մտածում, վերջը վիզիրին կան-

չում ա, թա՝ էտ հայը մեզ խափալ ա, քյնի հետան հսեր, մին պեն ասե, վեր գյիդնվուչ, վեսկեն ինքյ կալ պեր:

Վեզիրն ասում ա.- Հինչ ասիմ:

Շահն ասում ա.- Հրցրու, թա երգյնքում հինչքա՞ն աստղեր կան:

Վեզիրն ասում ա. - Պա, բալի քթնի՞վ:

Շահն ասում ա. - Վեր քթնե, մին էլ հրցրու, թա ըշխարքես մաչ տեղը վե՞րն ա: Էտ էլ վեր քթենն, էս ա մին ծի, էս ծին մինին էրկու կյինով կծախիս, վեր դուզ մին գող վեսկե անե:

Վեզիրը ծին նստում ա, քյնում մին տեղ քչալեն ետնան հըսնում, կանչում ա. - Ա՛ քաչալ, մին պեն ասիմ, թա քթնր, վեսկեն քեզ հալալ, թա քթար վուչ, էտ վեսկեն ետ պիտի տաս, տանիմ թաքավերեն:

Քաչալն ասում ա. - Լավ, դե ասե:

Վեզիրն ասում ա. - Երգյնքյում հինչքան աստղեր կան:

Քաչալն ասում ա. - Պա, էդ լիս ես գյուղում ըմ, էս էշիս յրնի հինչքան մազ կա, էնքան էլ երգյնքյումը աստղեր կան:

Վեզիրն ասում ա. - Դե մին էլ ասե, ըշխարքես մաչ տեղը վերն ա՞ :

Քաչալը մին տեղ վենն ա կենում, ասում.-Հասե՛, ըշխարքես մաչ տեղը էս ա: Վեզիրն ասում ա.-Դե վեր տի յա, թաքավերեն ծին քեզ տամ, վեսկեն ինձ տռ:

Քաչալն ասում ա. - Պա թաքավերեն ծին ինձ տանել չի, մեր շենին հըղեն գյուղում չի, թող նստիմ տեսնամ, թա բիդի մեր շենը քյնի, էն վախտը ռազի կինիմ:

Քաչալը նստում ա թաքավերեն ծին, վեսկեն քցում թարքյավը, փեզիրն ասում ա.- Շատ հեռե քյնիս վուչ:

Քաչալը նստում ա ծին, չափ քցում, վեսկեն էլ թարքյեն կապած, հսնում ուրանց շենը:

Շնացիքյ հրցնում ըն.-Քաչալ, էտ ծին, վեսկեն հի՞նչ տեղա յա:

Քաչալն ասում ա. - Լոբին շահը յոր ա օնում, տեղը վեսկե յա տամ, ապրանք ա տամ, վեր մին պեռնը լոբի տանես, մին պեռնը վեսկե կպիրիս:

Եկող տարին ժողվուրթը ցանքսը թողած, եզները պեց ըն թողնում, ամեզյը մի թե եր կալած տափերը բշտի-բշտի ըն անում, լոբի վարում: Էդ տարի էլ օնգատն ա ընկած լավ լոբի յա ինում: Ժողվուրթը լոբին էշերեն, ծիյերեն, ձորոցը պեռնում, քյնում ըն շահեն տոռնը, կանչում.

- Ա՛յ լա̀վ լոբի՛, ա՛յ լա̀վ լոբի՛:

Վեր շահը լսում ա, շատ ա ինո̀ւմ քչալեն յրա̀ կզնված, հրամայում ա լոխճին կտորին: Շահի հրամանը կատարում ըն, բայց քաչալն ա օքտվում տրանա, նրա հետե, վեր շենին տերն ու տիրականը ինքյն ա մնում:

## 172.ԸԽԿԱԴԵՆ ԷԾԸ

Իլա̀լ ա, իլա̀լ չի, մին ախկատ կնեգյ ա իլա̀լ: Էդ կնգանը վեչ մին ապրուստ չի իլա̀լ: Էս ախկատ կնգանը մին էծ ա իլա̀լ: Սաղ տոն-տնամաչ էտ էծն ա իլա̀լ: Մին դո̀նո̀ւմ պտահում ա մին մարթու: Էս մարթը ծանոթ ա ինո̀ւմ, ինքյն էլ բազար քյինիյիս: Էտ մարթին էս կնեգյը ղաչանք ա անում, ասում.

- Վեր քյինո̀ւմ ես բազար, տար էծս ծախե, ինձ հետե մին հալավ էլ պեր, մին խըլեղ էլ, տասսը մանեթ փուլ էլ, էծըս էլ ետ պեր, ախպեր:

Էտ մարթը էծը յոր ա օնում, քյինո̀ւմ բազար: Քյինո̀ւմ տեղը հղցեն պըտահում ա մին խաղու ծխողու: Էտ խաղու ծախողն ասում ա. - Ախպեր, էտ էծը ծախու յա՞:

Ասում ա. - Հա:

Ասում ա. - Հի՞նչ տամ:

Ասում ա,- Մին փոր խաղու տո, քշտանամ, էծը քեզ տամ:

Ասում ա. -Հա՝, լա̀վ, կողքեն նստե, հինչքան օզում ըս, կեր:

Էս խաղու ծախողը տեսնում ա, վեր էծատարը հինչքան օտում ա, կշտանում չի, ասում ա.

- Ախպեր, եր կաց քյինի, կերած խաղուն էլ քեզ, էծն էլ, մինակ եր կաց քյինի:

Էծ ծախողը էծը յոր ա օնում, հայդա, քյինո̀ւմ: Քյինո̀ւմ ա մին հյաթում վեննը կենում, տնատերը մին կնեգյ ա ինո̀ւմ, տո̀ւս ա կյամ: Մթեն ա ինո̀ւմ, էծ ծախողը էս կնգանն ասում ա.

- Ա քուր, ղարիբ մարթ ըմ, մթեն ա, էս ո̀ւրո̀ւգյո̀ւն ինձ ղոնաղ պահե:

Էտ կնեգյը ասում ա.-Հիյաթաս տո̀ւս եկ, քյինի, կորե, տանս մարթ չկա, մարթըս քյեցալ ա ճեղաց, հո վա՞ զյո̀ւղո̀ւմ հիբ կկյա:

Էծ ծախողը ղաչանք ա անում. - Ա՛ քուր, ես քյե մատաղ, մթեն ա, թող էս հյաթեն մին բուրջումը կենամ:

Էծ ծախողը կլխու վա ըղնում, վեր էս կնեգյը սիրեկան օնե, ինըյն էլ

նրա հետե թխվածք ա թխում: Էծը յոր ա օնում, մթամ թա հյաթան քյինո՞ւմ ա, պայց թաքուն տոն ա մտնում, մի քյո՞ւնջում կյողըլ կենում: Էս կնեգյը եշում ա, տեսնում էծն ու իծատերը կան վուչ, ասում ա. - Թաղիմ կյլո՞խըտ, խրեգյ մնաց ամեն հինչ փոզմիշ անե:

Ծերքը ճկատեն տիրած, նա՛փասը փորը քցա՛ծ, ըսպասում ա սիրեկա- նեն: Մին էլ, ըիը, սիրեկանը կյամ ա: Կնեգյն ու սիրեկանը մտնում ըն տոն, սեղան-սուփրա քցո՞ւմ, թխվածք-մխվածք տնո՞ւմ, վեր օտին, կնգանը մարթը տռանը «չու» ա ասում: Կնեգյը ո՞ւրա՛ն կուրցունում ա, մին էլ հվաքում սե- ղան-սուփրան էլ նիետը, սիրեկանին էլ տանում ա պուժկին քըմակե պահում:

Մարթը էշին պեռնը յոր ա օնում, տինում քաշե ութաղումը, ինքյը պիցրա՛նո՞ւմ տոն մտնում: Պայց կնեգյը շատ շղվալան բիշին թողալ ա ըստոլեն: Մարթը նստում ա, թա հաց օտե, տեսնում ա, վեր բիշի կա, կնգանը հրցնում ա. - Էս հի՞նչ պեն ա՛, ա՛ կնեգյ:

Ա՛ մարթ, հաց ըմ թխալ, մեննս ընգավ, վեր շատ շո՞ւտվանից բիշի չըս կերալ, ըսեցե՝ մին բիշի թխիմ, մարթս կյա օտե, մեղք ա:

Էծ ծախողը կարում չի տիմա՛նա՛ էս սուտեն, էծի ականջը մին պենդ կծում ա, էս խեղճ էծը մին ջզյա՛րա՛վ մկկում ա: Մարթն ասում ա. - Ա՛ կնեգյ, էս հի՞նչ հրաշք ա, մին ծա՛պռին պեր տեսնանք էս հի՞նչ օյին ա: Կնեգյը կլխե յա ըղնում մին պիծի, պայց ճար չկա, ծա՛պռին յոր ա օնում, մարթն էլ մին փաղ, մտնում ըն էն մին օթաղը, տեսնում ընդեղ մին մարթ, մին էծ: Մարթը փաղը պիցրցնում ա, վեր թխե, էս էծ ծախողը ասում ա.- Ըսպասե, ախպեր, ես ըստուծու ղոնաղն ըմ, կնգանդ խնդրեցե, վեր էս քշեր ինձ պահե, օզից վուչ, ես էլ քշերվա կեսին թորը պիտի քյինիմ, թաքուն նի մտե էս տոնը, վեր թաքուն մնամ մինչև ռութանա. տեսա, վեր կնեգյտ սիրական ա պահում, կրացե վուչ տիմանամ: Թա հվատում չըս, լափ առե թուշին տանիմ մաննըս յրա՛ն տինիմ:

Մարթը թա՝ չէ, հվատում չըմ:

Էծ ծախողը էս մարթուն տանում ա պուժկին քմակեն պահած մարթուն նշանց տամ: Ծիքյ ըն տամ հանում, հրցնում.

- Տու հու վը՞ւ:Էս մարթը ծպտուն չի հանում: Էծ ծախողը լոխ նաղլ ա անում: Էծ ծախողն ու էտ կնգա մարթը թակում ըն համ սիրեկանին ըն ըսպանում, համ էլ՝ կնգանը: Վեր էրկուսավ ըն մնում, էս մարթը էծ ծխողեն հրցնում ա.

- Հախկըդ հի՞նչ պիտի տամ, ախպեր։

Ասում ա. - Ինձ վեչ մին պեն հարկավեր չի։ Էս էծը մին քյա̀սիբ կնգան ա, ասալ ա՝ տար ծախե, ինձ հետե մին հալավ պեր, մին խըլեղ, տասսը մանեթ փուլ, էծն էլ ետ պեր։

Էս էծ ծախողը էս մարթու կնգա հալավն էլ, խըլեղն էլ, մին էլ տասսը մանեթ փուլ ա յոր օնում, էծեն նհետ տանում տամ էս կնգանը, ասում.

- Տու ինձ շատ օքութ ըս տվալ. հինչ վեր կերալ ըմ՝ ինձ, հինչ վեր պերալ ըմ, քեզ հալալ։

Ըստուծանա իրեք խնձո̀ր ըղնե, մինը՝ քաթ ըսողեն, մինը՝ քաթը կյիրողեն, մինն էլ էս քաթը կրթո̀ղեն, շղարձ, շղարճ անինքյ, օտինքյ։

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.ԼՈ̀ւՍ ՆԱՆ ՄԹԵՆ ԱՇԽԱՐՔՆԵՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. հուլիսին, Ստեփանակերտում: Պատմել է Գրիշա Վահանյանը: Ասացողի մասին բանահավաքը թողել է սույն ծանոթությունը. «Վահանյան Գրիշան թոշակառու է, 55 տարեկան, կիսագրագետ:Մինչև 1951թ. ապրել է Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, 1952 թ. տեղափոխվել է Ստեփանակերտ:Այլ տեղեր չի բնակվել»:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

2.ՕԽՏԸ ԱԽՊՈՐ ՄԻՆ ՔՈԻՐԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. փետրվարին, Բաքու քաղաքում: Պատմել է Եկատերինա Հարությունյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքն ասացողի մասին թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Եկատերինա Հարությունյանը, Ստեփանակերտի շրջանի Խրամորթ գյուղից: Գիտե հրաշապատում շատ հեքիաթներ ու զրույցներ… Անգրագետ է, 87 տարեկան: Հեքիաթը լսել է գյուղում»:

3.ՕԽՏԸ ՔՈԻՐ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. փետրվարին, Բաքու քաղաքում: Պատմել է Եկատերինա Հարությունյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ.Առաքելյանի ֆոնդ:

4.ԿՈՌՆԸ ԿՏՐԱԾ ԱԽՃԻԳՅԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Աստղիկ Առաքելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

5.ԸԽՇԱՐՔԸԵՍ ԱՄԵՆԱՔԱԽԾԸՐ ՊԵՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Աստղիկ Առաքելյանը: Ծնվել է 1887 թ. Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Անգրագետ է, թոշակառու: Մինչև 1921 թ. ապրել է ծննդավայրում, 1922-1923 թթ. նույն շրջանի Ղշլաղ գյուղում, 1924-1959թ.՝ Դաշբուլաղում: Աշխատել է հիշյալ գյուղերի մետաքսագործարաններում, Դուշբուլաղի գորգագործական արտելում: 1960 թվականից ապրում էր Բաքվում: Ավելի շատ գիտե առած-ասացվածքներ...»:

### 6.ԹԱ ԽԵ ԾՈ՞ՒԿՆԵՐԸ ԾԻԾՂՈՒՏԵՑԵՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մարտին, Ստեփանակերտում : Պատմել է Գրիգոր Սարգսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 7.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ՉՈԲԱՆԸ ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ԸԽՃԸԿԱՆՆ ՕՋՈՒՄ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մարտին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 8.ԷՐԿՈՒ ԱԽՊԸԵՐ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտի շրջանի Բալլուջա գյուղում: Պատմել է նույն գյուղացի Վաղարշակ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 9.ԽՈՐԹ ԱԽՊՈՐ ԽՈՐԹ ՔՈՒՐԸ

Գրի է առել Քաջիկ Հարությունյանը 1964 թ. մայիսին, Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում: Ասացողն անհայտ է:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 10.ԸՇԽԱՐՔՈՒՄԸՍ ԱՄՄԸԵՆ ՀԻՆՉ Ո՞ՒՐԱ՞Ն ՏԸԵՂԱՎՆ Ա ՔՅԻՆԱ՞Մ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Փառանձեմ Ղազարյանը, բնիկ խնձրիստանցի, 42 տարեկան, կիսագրագետ, միշտ ապրել է գյուղում»:

11.ԼՈՂՄԱՆԻՆ ԴՌ̀ՐԴՌ̀Ի ՎԱ ԿՅԱՄ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Գևորգ Օհանյանը, բնիկ ստեփանակերտցի, 76 տարեկան, թոշակառու, կիսագրագետ: 1914-1924 թթ. ապրել է Բաքվում, մնացած տարիներին՝ Ստեփանակերտում»:

12.ԹԱ ՀՈՒՆՑ ԸՐԾԱԹԵ ՂԱ̀ՄԱ̀Ն ՓԱԴ ՏԸԵՌԱՎ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտում : Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Գասպարյան Շաբոն, բնիկ ղավախանցի (Մարտունու շրջան), արհեստավոր, մոտ 40 տարեկան, կիսագրագետ: Ապրում է Ստեփանակերտում»:

13.ԱՆԱՀԻՏ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմել է Հրաչյա Բեգլարյանը:Մոտ 35 տարեկան է, աշխատում է Ստեփանակերտի ժող. ստեղծագործության մարզային տանը, իբրև մեթոդիստ: Սովորում է Բաքվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետի հեռակա բաժնում: Բանահյուսական նյութեր հավաքելուց բացի, ստեղծագործում է: Ունի բանաստեղծությունների մի տպագիր ժողովածու:Հեքիաթում ուշագրավ է տնայնագործական ձևերով թելեր ներկելու, կողովներ գործելու սովորությունը, որոնք Ղարաբաղում ու նրա մոտակա հայկական բնակավայրերում պահպանվել էին մինչև վերջերս:

Պատմողը վկայում է, որ լսել է գրի ու գրականության հետ կապ չունեցող մեծ մարդկանցից:

### 14.ՀՈՐՆ ՈՒ ՄՈՐԸ ԾԱԽՈՂ ՏՂԱՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը հուլիսին, Ստեփանակերտում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Պատմել է Էդիկ Միրզոյանը:

### 15.ՇԵՆԸ ՎԸՐՑԱԿՈՒ ԿԱՊԱԾ ԸԽՃԸԿԱՆԸ ՆԱՂԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մարտին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմել է Փառանձեմ Ապրեսյանը: Անգրագետ է, մոտ 60 տարեկան: Ծնվել է Ստեփանակերտի շրջանի Բալլուջա գյուղում: 40 տարի առաջ ամուսնացել ու տեղափոխվել է Դաշբուլաղ, ուր ապրում է մինչև այսօր (այլ տեղեր չի ապրել):

Հետաքրքիր է հեքիաթը պատմելու առիթը: Մի քանի գյուղերում վատ տնտեսուհու մասին սովորաբար ասում են. «Տոնը վըրցակու վա կապալ» (ամեն ինչ վատնել է, ոչինչ չի թողել):Այսպես ասվում է նաև գյուղի վատ ղեկավարի մասին («Շենը վըրցակու վա կապալ»): Երբ մեկի նկատմամբ նույնը կրկնեցին, Փառանձեմը ինձ հարցրեց, թե՝ լսե՞լ եմ, արդյոք «Շենը վըրցակու կապած ըխճըկանը նաղլը»: Այս հեքիաթը շատ է տարածված ու շատերն են պատմում տարբեր փոփոխակներով, բայց դիտավորյալ ասացի, որ չեմ լսել: Սա էլ առիթ եղավ, որ նա սկսի պատմել ու պարզվեց, որ վերոհիշյալ դարձվածքը անմիջապես կապ ունի նույն հեքիաթի հետ»:

### 16.ՍՈՎԴԱՔՅԱՐԵՆ ՆԱՂԼԸ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1960թ. Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում, Աննա Մուսայելյանից: Բանահավաքը հեքիաթի առթիվ թողել է հետևյալ ծանոթությունը. «Այս հեքիաթը բազմիցս լսել եմ դեռ մանկուց»:

Առաջին անգամ պատմել է համագյուղացի Հերիք Բաբայանը (Քոռ Ըկուփանց Հերիքյը): Երբ նա սկսում էր պատմել, բոլորը հավաքվում էին և լարված ուշադրությամբ լսում: Ընդունված սովորության համաձայն, ձմեռվա երկար գիշերներին կանայք ու երեխաները (սակավ դեպքերում նաև տղամարդիկ) հավաքվում էին բակերում պատրաստված թոնրատները, տրեխ-

ները կամ կոշիկները հանում, նստում ու ոտքերը տաքացնելու համար գուլպաներով կախում թոնրի մեջ, սկսում պատմել ամեն մեկն իր իմացած հեքիաթը կամ զրույցը: Եվ իրար էին հաջորդում «Օխտը օշափ», «Զանգյի-զրանգյի» , «Պըել ախպըեր նան խըելունք ախպերը», «Թաքավըերեն իրեք տղան» , «Թաքավըերեն քառասուն տըղան», «Քաչալ ախպերը», «Իրեք քուր» հեքիաթները: Սրանց մի մասը հետագայում հաջողվեց գրի առնել, բայց մեծ մասը նույն ողջ մնացած կանանցից ոչ մեկը չկարողացավ վերհիշել: Հատկապես շատ էի ուզում նորից լսել ու գրի առնել «Սովդաքյարեն նաղըլ», բայց «Հերիքյ հասին» վաղուց արդեն տեղափոխվել է Սամարղանդ ու ապրում է այնտեղ: Երկար հարցուփորձից հետո պարզվեց, որ այդ հեքիաթը հիշում է Հերիքին հասակակից կանանցից մեկը՝ Աննա Մուսայելյանը, որը, հավանաբար, լսել է նրանից (նրանք իրար հետ շատ մոտ են եղել և աշխա-տել են միասին): Պատմողն ինքը չի հիշում, թե ումից է սովորել»:

## 17.ՇԱՀ-ՄՈՒՐԱԴԵՆ ՆԱՂԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Դաշբուլաղում : Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Գրիգոր (Կուքի) Աղաբալյանը (Դաշբուլաղ գյուղից), կոլտնտեսական, մոտ 60 տարեկան, կիսագրագետ: 10-ական թթ. մի քանի տարի ապրել է Բաքվում, մնացած տարիներին՝ գյուղում»:

## 18.ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՏՂԵՆ ՆԱՆ ՔԸՉԱԼԵՆ ՆԱՂԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թվականի օգոստոսին, Դաշբու-լաղում: Պատմել է Մովսես Առաքելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 19.ՄՈՒՆՔ ԻՎԻԼ ԸՆՔ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թվականի հուլիսին, Դաշբուլա-ղում: Պատմել է Աշոտ Ղահրամանյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

20.ՔՅԻՆԱ՛ ՀՈՒՆՑ ՏԵՂ, ԳՅՈ՛ՒԴՈ՛ՒՄ ՉԸՄ ՀԻՇՏԵՂ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1961թ. հուլիսին, Դաշբուլաղում: Պատմել է Լազր Կարապետյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

21.ՁԻՅՐԱ՛ՆԵՆ ՍԱՐՈՒՄԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. սեպտեմբերին, Ստեփանակերտի շրջանի Դահրավ գյուղում: Պատմել է Մովսես Ներսիսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

22.ՂԱԶԸԵՐ ՊԱՀՈՂ ՏՂԱՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963թ. սեպտեմբերին, Ստեփանակերտի շրջանի Դահրավ գյուղում: Պատմել է Մովսես Ներսիսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

23.ԼՈ՛ՒՎՈԹՈՒՆԸ ՄԸՆՆԱ ԻՆԳՅԻԼ ՉԻ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

24.ԴՈ՛ՒԼԳՅԱ՛ՐԻՆ ՏՂԱՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

25.ԸՆԿԵՐԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ, օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Խաչատրյան Բախշին:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

26.ՔԱՉԱԼ ԱԽՊԵՐԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Ուլուբաբ գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Մարգարյան Հայրապետը, 62 տարեկան, անգրագետ, կոլտնտեսական: Միշտ ապրել է Ուլուբաբ գյուղում»:

27.ՃԿՏԱԿՅԻՐԸ

Պատմել ու գրի է առել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի բնակիչ Աշոտ Առստամի Առստամյանը, 1967 թ. սեպտեմ-բերին, նույն գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Ա. Ղազիյանի ֆոնդ:

28.ԿՈՐԱԾԸ ԳՏՆՎԵՑ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Շիրին Բաբայանը, 47 տարեկան, բուժակ, աշխատում է Ստեփանակերտի շրջանի Ասկերան գյուղի հիվանդանոցում : Երկար տարիներ ապրել է Մարտակերաի շրջանի Առաջաձոր գյուղում և Ստեփանակերտում»:

29.ՀԱՍՏ ՈՒ ՊԵՐԱԿ ԼՈԽ ՄԻՆ ԿՅԻՆ Ա

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964թ. ապրիլին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

30.ԻՄԱՍՏՈՒՆ ԿՆԵԳՅԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մարտին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

31.ԼԻՎՈԹՈՒՆԸ ԿՈՐՉԻԼ ՉԻ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. մայիսին, Ստեփանակերտում: Պատմել է Գրիգոր Սարգսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

32.ԲԸՀԼՈՒԼԻ ԴԱՆԱՆԴԵՆ ԻՐԵՔ ԽՈՍԿԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Սիմոն Հարությունյանը՝ բնիկ շուշիքենդցի, 88 տարեկան, անգրագետ: Մինչև 1905 թ. ապրել է գյուղում, 1906-1908 թթ.՝ Բաքվում, 1909-1912 թթ.՝ Կարյագինոյում (այժմ՝ Ֆիզուլի): 1913 թ. նորից տեղափոխվել է Բաքու, 1919թ.՝ վերադարձել ծննդավայրը: 1945թ. բնակություն է հաստատել Ստեփանակերտում, ուր ապրում է մինչև այսօր»:

33.ԿՆԳԱՆԸ ՀԻՆԸՐԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Մովսես Առաքելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

34.ԻՐԵՔ ԽՈՍՔ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Ավանեսյան Միշան, կոլտնտեսական, 50 տարեկան, անգրագետ, բնակության մշտական տեղը եղել է Դաշբուլաղը»:

35.ԿՈՒՃՈՒՐ ՀԱՌԹՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ., մարտին, Ստեփանակերտում: Պատմել է Գրիգոր Սարգսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

36.ԻՐԵՔ ԿԸԼՈԽ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Ստեփանակերտում: Պատմել է Գրիգոր Սարգսյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

37.ՓԸՍԵՆ ՊԱՅՄԱՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. ապրիլին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

38.ՎԸԵՍԿԵ ԹՈԽԿԱՆ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է նույն գյուղացի Գրիգոր (Կուքի) Աղաբալյանը, մոտ 60 տարեկան, կիսագրագետ, աշխատում է կոլտնտեսությունում: 10-ական թվականներին կարճ ժամանակով ապրել է Բաքվում: Հետո վերադարձել ու ապրում է Դաշբուլաղում»:

39.ԿՅԵՏԵՆ ՊԵՐԱ՜Ծ ԽՆՁՈ՜ՐԻՆ ՆԱՂԼԸ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտում, Արշակ Բաղդասարյանից:

40.ՄԸԵԾ ԱԽՊԸԵՐԸ ՆԱՆ ԿՈՒՃՈՒՐ ԱԽՊԸԵՐԸ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտում, Արշակ Բաղդասարյանից:

41.ԹԱՔԱՎԸԵՐԵՆ ՊԱՅՄԱՆԸ

Գրառման ձեռագիրը պահպանվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ., Ստեփանակերտում: Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է ստեփանակերտցի Արշակ Բաղդասարյանը, 87 տարեկան, անգրագետ, եղել է որմնադիր, այժմ թոշակառու է: Ապրել է սկզբում Հադրութի շրջանի Պետրոսաշեն գյուղում, այնուհետև՝ Ստեփանակերտում:

Չնայած զառամյալ հասակին ու վատ տեսողությանը, Արշակ դային դեռ առույգ է: Երկու տարի առաջ ամուսնացել էր երկրորդ անգամ և բաժանվել, ուզում էր երրորդ անգամ ամուսնանալ:

Խոսում է բավականին դանդաղ, պարզ ու արտահայտիչ»:

## 42.ԻՍՏԻ ԿՆԵԳՅ ԷԼ Ա ԻՆՈ՞ՒՄ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962թ., Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Կարապետյան Ալեքսանդրը: Մոտ 50 տարեկան է, կիսագրագետ, բնակության հիմնական տեղը եղել է Դաշբուլաղը: Այժմ ապրում է Բաքվում»:

## 43.ՓԻՍԱ՞Ն ՓԻՍԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. սեպտեմբերին, Դաշբուլաղ գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Ղահրամանյան Միշան, 55 տարեկան, կիսագրագետ, ծառայող, միշտ ապրել է Դաշբուլաղ գյուղում»:

## 44.ՀԱԼԱԼ ՂՈՒԼԳՅԱ՞ՋԸ ՆԱՆ ՀԱՐԱՄ ՂՈՒԼԳՅԱ՞ՋԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Մարտակերտում: Պատմել է Գյուրջյան Նիկոլայը: Բանահավաքն ասացողի մասին տեղեկություններ չի թողել:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 45.ՃԻՐՀԵՂԵՂԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում:

Պատմել է Լուսիկ Գաբրիելյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 46.ԼՈՂՄԱՆԻՆ ՆԱՆ ՉՈԲԱՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Բաղարա գյուղում:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությանը. «Պատմել է Սարու Այդինյանը, 70-նն անց, կիսատառաճանաչ, աշխույժ ու զրուցասեր մարդ է: Սիրով հանձն առավ պատմել իր իմացած հեքիաթները, զրույցներն

ու առակները: Բնիկ Բաղարա գյուղացի է, մշտական բնակության վայրը եղել է ծննդավայրը: Վերջերս միայն տեղափոխվել է Բաքու և ապրում է այնտեղ»:

### 47.ԱՍՏՎԱԾ ՀԸՍՑԸՐՈՒՑ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Պատմել է նույն գյուղացի Աստղիկ Առաքելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 48.ԾԸՄԸՐՈՒԿԵՆ ՃՌ̀ԻՐԸ

Գրի է առել Մ. Առաքելյանը 1964 թ. փետրվարին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 49.ԱՍՏՎԱԾ ԸՆՈՂԱՑՆ Ա ՊԱՐՏԱԿԱՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. փետրվարին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 50.ՀԱՐՈՒՆ-ՂԱՐՈՒՆԵՆ ՆԱՂԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. փետրվարին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 51.ՄԱՐՄԻՆ ԱՇԿԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. հունվարին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 52.ԹԱ ՀՈՒՆՑ Ա ՔՅՈՌՕՂԼԻՆ ԽԱՆԸԵՆ ԸԽՃԸԿԱՆԸ ՓԸԽՃԸՑՆՈՒՄ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առել Մ. Առաքելյանը 1963 թ. Ստեփանակերտում, Արշակ Բաղդասարյանից:

## 53.ՎԱՆՔԵՆ ՔՅԸ̀ՄԸ̀ՆՉԸ̀Ն

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. աշնանը, Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը, «Պատմել է ուսուցիչ Հունան Մարտիրոսյանը, 1921 թ. ծնված, բնիկ վաղուհասցի, աշխատում է նույն գյուղի միջնակարգ դպրոցում: Պատմողը վկայում է, որ հեքիաթային տարրերով հարուստ այս ավանդությունը լայն տարածում չունի: Պատմվում է շրջակայքի մի քանի հայկական գյուղերում և ադրբեջանցի աշուղների մոտ: Ավանդությունն աշուղ Իմանին պատմել է աշուղ Ալասկյարը, սրան էլ մեկ ուրիշ աշուղ:

1962 թ. Աղջաքենդում եղած ժամանակ Մարտիրոսյան Հունանը հանդիպել է աշուղ Իմանին և խնդրել, որ որևէ բան պատմի Սայաթ-Նովայի մասին: Աշուղը հարցրել է, թե ղարաբաղցի Հարությունի մասին է խոսքը: Մարտիրսյանն ասել է, որ թիֆլիսեցի աշուղ Սայաթ-Նովայի մասին է ինքը հարցնում: Իմանը պնդել է, թե նա ղարաբաղցի է, հոր հետ ապրել է Մարտունու կողմերի մի գյուղում, 13-14 տարեկանում աստծո կամքով վերուստ նրան աշուղություն է տրվում ու այդ օրվանից տեղափոխվում է Թիֆլիս:

Այնուհետև աշուղ Իմանը պատմում է աշուղ Ալասկյարից լսած այս ավանդությունը Սայաթ-Նովայի մի քանի ադրբեջաներեն երգերի հետ միասին»:

## 54.ԸՍՏՈՒԾԱՆԱ ՏՈՒՎԱԾ ԸՌՈՒՋԻՆ...

Գրի է առնվել 1963 թ., Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է դաշբուլաղցի Միշա Ավանեսյանը՝ մոտ 50 տարեկան, կիսատառաճանաչ,

աշխատում է կոլտնտեսությունում: Մասնակցել է 1941-1945 թթ. պատերազմին: Գյուղից բացի, այլ տեղ չի ապրել»:

### 55.ՔՅՌՌՕՂԼԻՆ ՆԱՆ ԴԱ̀ՄՈ̀ԻՐՁՕՂԼԻՆ

Գրի է տռնվել 1963 թ., Ստեփանակերտում: Պատմել է նույն քաղաքի բնակիչ Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 56.ՔՅՌՌՕՂԼՈՒՆ ՍԼՎԵՆԸ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առնվել 1963 թ. օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Ուլուբաբ գյուղում, Արսեն Պետրոսյանից:

### 57.ՔՅՌՌՕՂԼԻՆ ՂԱՉԱՂ Ա ԻՆԳՅՈ̀ւՄ

Գրի է առել Մ. Առաքելյանը 1964 թ. հունվարին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 58.ԾՌՎԸ ՆԻ ՄՆՆՌՂԸ ՎԱԽԵԼ ՉԻ

Գրի է առել Մ. Առաքելյանը 1964 թ. մայիսին, Ստեփանակերտում: Պատմել է նույն քաղաքի բնակիչ Արշակ Բաղդասարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

### 59.ՕՎՉԻ ՓԻՐՌԻՄԵՆ ՃԸԿԸՏԱԿՅԻՐԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1961 թ. հուլիսին, Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Անդրեյ Լազարյանը, 80 տարեկան, անգրագետ, աշխատում է Դաշբուլաղի կոլտնտեսությունում: Բնակության հիմնական վայրը գյուղն է»:

### 60.ՄԱՐԹՆ Ո̀ւՐԱ̀Ն ԿՅԱՆՔԱՎԸ ՉԻ ԱՊՐՌԻՄ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1960 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Միշա (Միքայել) Գրիգորյանը: 1919 թ. ծնված, ուսուցիչ, աշխատում է Դաշբուլաղի յոթնամյա դպրոցում:Մշտական բնակության տեղը եղել է Դաշբուլաղը»:

## 61.ԻՍՏԻ ԵԼ ՉԻ ՄՆԱԼ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Առաքելյան Մովսեսը, 60 տարեկան, թոշակառու: Ամբողջ կյանքում միշտ շրջել է: Աշխատելով հողվարչության ԼՂ մարզային բաժնում որպես արոտների հսկիչ, միշտ առիթներ է ունեցել հանդիպելու տարբեր տարիքի ու զբաղմունքի հայ, ադրբեջանցի, քուրդ և այլ մարդկանց հետ: Վերջին մի քանի տարիներին ապրում է Դաշբուլաղում (բնիկ դաշբուլաղցի է)»:

## 62.ԻՄԱՍՏՈՒՆ ՂԱ̀ԶԱ̀Ր

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Պատմել է Միրզոյան Զաբելան:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 63.ԹԱ ՀՈ̀ԻՐ ՀԱՐԿԱՎՐԸԵՐ ԵԿԱՎ ՄԵԽԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Գասպարյան Կարոն, 50 տարեկան, կոլտնտեսական» միջնակարգ-մասնագիտական կրթությամբ: Ապրել է Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ, Ռև, Ուլուբաբ, Խանցք և Մարտակերտի շրջանի Ղազանչի գյուղերում: Կատարել է ուսուցչական աշխատանք»:

## 64.ԳՅՈ̀ԻԴՈ̀ԻՄ ԸՄ, ԳՅՈ̀ԻԴՈ̀ԻՄ ՉԸՄ ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. Օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Դանիելյան Սերգեյը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 65.ԱՆԴԱ՞ՐԴ ՄԱՐԴ ՉԻ ԿԱ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Մարտակերտում: Պատմել է Գյուրջյան Նիկոլայը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 66.ԴԱ՞ՐԴԵԻՆ ՆՀԵՏ ԴԱ՞ՐՄԱ՞ՆՆ ԷԼ ԿԱ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 67.ԱԽՔԱԴԸ ՀԱՋԻ ՏԸԵՌԱՎ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. Օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Դահրավ գյուղում: Պատմել է Ներսիսյան Մովսեսը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 68.ՀՈԳԵԱՌԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Դահրավ գյուղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Ներսիսյան Մովսեսը, 76 տարեկան, անգրագետ, աշխատում է կոլտնտեսությունում: Մինչև 1914 թ. ապրել է Դահրավ գյուղում, 1915-16 թթ.՝ Բաքվում, 1917-18 թթ. ծառայել է սկզբում ցարական, այնուհետև՝ Կարմիր բանակում: 1919 թ. տեղափոխվել է գյուղ, ուր ապրում է մինչև այժմ»:

## 69. ԻՐԵՔ ԿՈԼԱՆ

Պատմել ու գրի է առել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի բնակիչ Աշոտ Առստամի Առստամյանը 1967 թ. սեպտեմբերին, նույն գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Ա. Ղազյանի ֆոնդ:

70.ՄԱՐԹԸ ՆԱՆ ԱՐՉԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. օգոստոսին, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Պատմել է նույն գյուղի բնակչուհի Հայկա Միրզոյանը:

Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

71.ԱՂՎԸԵՍԸ ՆԱՆ ԿՅԸ̀ԻԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հունիսին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Պատմել է նույն գյուղացի Սարգիս Ղազարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

72.ԾԸՏԵՆ ՕՅԻՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մարտին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

73.ԷՐԿՈՒ ՏՈՆ ԲԻՐԱ̀ԴԻ ՔԱ̀ՆԴՎԻՑ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ.մարտին, Ստեփանակերտում: Պատմել է Արշակ Բաղդասարյանը: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

74.ՇՈՆՆ ՆԱՆ ԿՅԸ̀ԻԼԸ Ը̀ԻՐԸ̀ԻՐ ՆԸԵՏ ԽՈՍՈՒՄ ԻՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. հունիսին, Ստեփանակերտի շրջանի Բադարա գյուղում: Պատմել է նույն գյուղի բնակիչ Սարու Այդինյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

75.ՃՈՐՈՒՆ ՊԻՃԸ ՄԻՆ ՏԸԵՂ ԻՆԻԼ ՉԻ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. փետրվարին, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Պատմել է նույն գյուղացի Թալիշ Սաֆարյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 76.ԸՇԽԱՐՔԸԵՍ ՄԱՐԹԵՔՅՆ ԸՆ ՇԱ՞Տ, ԹԱ ԿՆԱՆԵՔՅԸ

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առնվել 1963 թ., Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմել է խնձրիստանցի Վարդան Բալայանը՝ մոտ 40 տարեկան, միջնակարգ կրթությամբ, աշխույժ ու կատակասեր տղամարդ: Միշտ ապրել է Խնձորիստանում : Աշխատում է գյուղի հիվանդանոցում: Գիտե բավականին շատ առակներ ու զրույցներ»:

## 77.ՎԸՐՅԱԿԸԵՆ ՇԵՆ ՔՅԻԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. ապրիլին, Ստեփանակերտում, Գրիգոր Սարգսյանից:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 78.ԿՅՈ̏ՒԼ ՆԱՆ ԲԱԽՐԱՆ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1964 թ. մայիսին, Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, նույն գյուղացի Միքայել Նազարյանից: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Պատմողի և գրառման հանգամանքների մասին բանահավաքը տեղեկություն չի թողել:

## 79.ԸՂՎԸԵՍԻՆ ՀԸՐՍԱՆԵՔՅԸ...

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ: Գրի է առնվել 1963 թ. ամռանը, Ստեփանակերտի շրջանի Խնձրիստան գյուղում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Թալիշ Սաֆարյանը՝ Ստեփանակերտի շրջանի Հիլիս գյուղից, 1877 թ. ծնված: Գրաճանաչ է: Ապրում է նույն շրջանի Խնձրիստան գյուղում: 1897թ. տեղափոխվել է Բաքու, այնտեղ մնացել մինչև 1910 թ.: 1911 թ. մեկնել է Պարսկաստան: 1917թ. վերադարձել է ծննդավայրը, 1923 թ. տեղափոխվել է հարևան Խնձրիստան գյուղը, ուր ապրում է մինչև այսօր:

Պատմել է նաև մի քանի փոքրիկ զրույցներ ու առակներ»:

80.ՕՂՏՐԵՆ ՊԱՐ ԿՅԱԼԸ

Գրի է առել Մ. Առաքելյանը 1964 թ. ամռանը, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմել է Շուրա Ահարոնյանը: Պատմողը բնիկ դաշբուլաղցի է, մոտ 40 տարեկան, 7-րդ դասարանի կրթությամբ: Վերջին մի քանի տարիներին ապրել է Բաքվում: Աշխատել է իբրև վարորդ:Այժմ չի աշխատում»:

81.ՎԱՆՔ ՇԻՆՈՂԵՆ ՌԸԽԵՆ ՅԻՇԵՑԵՔՅ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Մարտակերտում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքնլյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Խուդունց Արտեմը, 57 տարեկան, կոլտնտեսական, անգրագետ. Ապրել է միայն Մարտակերտում»:

82.ԴՌ̀ԻՋ ԿԱՅ...

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Մարտակերտում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Պետրոսյան Սերոբը, 63 տարեկան, թոշակառու, միջնակարգ կրթությամբ: Բնակվել է սկզբում Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում, 1914-1917 թթ.՝ Դերբենդում, 1947-1953 թթ.՝ Քյալբաջարում, 1954-1958 թթ.՝ Բարդայում, այնուհետև՝ Մարտակերտում: Աշխատել է վիճակագրական վարչությունում»:

83.ԼՌ̀ԻՎՌԹՌԻՆԸ ՄԻՇՏ ԿԸՄՆԱ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

84.ՕՑԵՆ ՎԸԵՐ ՏԻՆԻՍ ԾՈՒՑՈՒՄԸՏ, ԹԸՔՑՆԵՍ,
ԵՏ ԿԸՏԵՌՆԱ ՔԵԶ ԿԸԾԵ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

85.ՄԱՍՏՈՒՆ ՕՑԸ

Արտատպված է Կարո Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» գրքից (Երևան, 1966, էջ 265-266): Գրի է առել Միքայել Առաքել-յանը 1946 թ., Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Ասացողն անհայտ է, ձեռագիրը Մ. Առաքելյանը 1946 թ. հանձնել է Կ. Դավթյանին:

Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «1944-1946 թթ. սովորում էի Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտում: Մեր հայոց լեզվի դասընթացը կարդում էր Կարո Դավթյանը: Ուրիշ ուսանողների հետ ընկ. Դավթյանը ինձ ևս խնդրեց արձակուրդի ընթացքում բարբառային նմուշներ գրի առնել իմ ծննդավայրից՝ Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղից: Իմ գրի առած երկու հեքիաթները («Մաստուն օցը» և «Վըեսկուն կարասը») հանձնեցի ընկ. Դավթյանին: Նրանցից մեկը («Մաստուն օցը») 1966 թ. զետեղեց իր «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» գրքում: Այդ բանի համար շնորհակալություն հայտնելով իմ նախկին ուսուցչին, միաժամանակ պարտք եմ համարում հայտնել. անհասկանալի պատճառով գրքում փոփոխվել է իմ գրառած հեքիաթի բնագիրը. այժմ հեքիաթը տպագրվում է իր նախնական տեքստով»:

86.ՕՑԵՆ ԽՈՍԿԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1962 թ. հուլիսին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

87.ԸՐԿՈՒՎԸՆՆԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾ ՉԻ ԻՆԻԼ

Տպագրվում է առաջին անգամ: Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. սեպտեմբերին, Դաշբուլաղում: Պատմել է Սերգեյ Դանիելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

88.ԼԻՎՈԹՈԻՆ ԸՆՈՂԵՆ ՎԵՐՉԸ

Պատմել ու գրի է առել Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ղզղալա գյուղի բնակիչ Աշոտ Առստամի Առսատամյանը 1967 թ. սեպտեմբերին, նույն գյուղում:

Հեքիաթի գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Ա. Ղազիյանի ֆոնդ:

89.ԽԸԵԼՈԻՆՔ ՀԱՌՀՆԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. օգոստոսին, Դաշբուլաղում: Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Ներսեսյան Ներսեսը, Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղից, 80 տարեկան, թոշակառու, անգրագետ»:

90.ՌԻԼԱ̀ՄԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1963 թ. հուլիսին, Ստեփանակերտում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Վահանյան Գրիշան, թոշակառու, 55 տարեկան, կիսագրագետ: Մինչև 1951 թ. ապրել է Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, 1952 թ, տեղափոխվել է Ստեփանակերտ: Այլ տեղեր չի բնակվել»:

91.ԴԵՐԻՆ ԱՂՈՏԿԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. օգոստոսին, Դաշբուլաղ գյուղում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Վազգեն Ասրյանը, ուսուցիչ, բարձրագույն կրթությամբ, աշխատում է Դաշբուլաղի ութամյա դպրոցում»:

92.ԹԱ ՀՈԻՆՑ ՄՈԼԼԱՆ ՔՅԻՆԱ̀Յ ԷՆ ԴՈԻՆՅԱՆ, ԵՏ ԵԿԱՎ

Գրի է առել Մ. Առաքելյանը 1968 թ.օգոստոսին, Ստեփանակերտում: Բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց Պետրոսյան Եղիզարը: Բնիկ մարտակերտցի է, 1934-ից ապրում է Ստեփանակերտում: Մոտ 80 տարեկան է (1990 թ. ծնված): Մարտակերտից ու Ստեփանակերտից

բացի, ուրիշ տեղերում չի ապրել: Ասացողը բավականին հետաքրքրասեր մարդ է, ազատ ժամանակ զբաղվում է ընթերցանությամբ, (կիսագրագետ է): Նրան շատ են հետաքրքրում հատկապես Ղարաբաղի անցյալի հետ կապված պատմական դեպքերն ու իրադարձությունները: Պատմում է ոչ շատ բարձր ձայնով, ղարաբաղյան (մեծ մասամբ կոշտ) առոգանությամբ, բայց բարբառի ու գրական հայերենի հետ խառը (յուրահատուկ լեզվով), որը հատուկ է ղարաբաղցի՝ քաղաքաբնակ հայերին»:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 93.ՀԸԹԸՐՔԵՑՈՒՑ ՆԱՂԼԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. օգոստոսին, Ստեփանակերտում: Գրառման բնագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

Բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց Սիմոնյան Հարությունը (Ճուշիքենդ գյուղից): Մոտ 70 տարեկան է, անգրագետ: Չի հիշում, թե ումից է լսել: Ապրում է Ստեփանակերտում»:

## 94.ԹԱ̀ՄԲԱ̀Լ ԱԽՃԻԳՅԸ

Գրի է առել Միքայել Առաքելյանը 1968 թ. հուլիսին, Ստեփանակերտի շրջանի Դաշբուլաղ գյուղում: Պատմել է նույն գյուղացի Աստղիկ Առաքելյանը:

Գրառման ձեռագիրը պահվում է ԲԱ, Մ. Առաքելյանի ֆոնդ:

## 95.ԱՄԵՔՅԱ ԵՐԵՍՈՒՆ ԿԱՊԵԿ ԷԼ ՉԻ ԻՆԳՅՈ̀ւՄ

